ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

РАЗВИТИЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА В СОВЕТСКУЮ ЭПОХУ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1973

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա II 50748

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1973

4 Ap
Հ 21

Աշխատության մեջ հանգամանալից քննության են ենթարկված բոլոր այն միտումները, որոնք նկատելի են հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում։

Գրքում մանրամասնորեն ուսումնասիրված է հայոց լեզվի հնչյունական համակարգի, բառային կազմի, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքի զարգացումը։

Պատասխանատու խմբագիրներ
Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Գ. Գ. ՍԵՎԱԿ

$Հ \frac{0713-020}{703(02)-73}$ 49—68

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ հայ ժողովուրդը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջումից, այլև ձեռք բերեց պետականություն, ստացավ քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի զարգացման մեծ հնարավորություններ ու պայմաններ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անցել է շուրջ հինգ տասնամյակ։ Դա ժողովրդի ու նրա հոգևոր մշակույթի դարավոր պատմության մեջ մի փոքր պահ է, բայց այդ պահը շատ նշանակալից պատմական շրջան է և ուրույն ու կարևոր տեղ է գրավում հայ ժողովրդի կյանքում։ Ծգնաժամային օրեր ապրած հայոց լեզուն ոչ միայն շարունակեց հարատևել, այլև ծաղկեց, իր դարավոր գանձերին ավելացրեց նորերը, հարստացավ և հասավ զարգացման մի այնպիսի աստիճանի, որ վայել է մեծ անցյալ ունեցող և այսօրվա սոցիալիստական երկրի պետական լեզվին։

Համեմատաբար կարճ ժամանակում հայոց լեզվի արագ զարգացումն ու հարստացումը պետք է բացատրել երկու հիմնական պայմանով՝

1. Սոցիալիստական տնտեսության, գիտության ու կուլտուրայի ստեղծումով ու զարգացումով, հասարակական կյանքի վերափոխումով ու աննախադեպ ակտիվացումով. կուլտուրական կյանքից նշենք անգրագիտության վերացումն ու հանրակրթական դպրոցների մեծ ցանցի ստեղծումը, որոնցով ապահովվեց ամբողջ ժողովրդի գրագիտացումը, ավելի քան տասը բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնադրումը, մի քանի հրատարակչությունների ստեղծումը, որոնք մեր ժողովրդին ապահովեցին գեղարվեստական, գիտական, քաղաքական գրականությամբ, մամու-

լով, գիտությունների ակադեմիայի հիմնադրումը իր շուրջ երեսուն գիտահետազոտական ինստիտուտներով, թատրոնի ու արվեստի մյուս ճյուղերի աննախընթաց զարգացումը և կինոյի ու արվեստի որոշ ճյուղերի ստեղծումը, ռադիոյի, իսկ ավելի ուշ հեռուստատեսության ներթափանցումը մեր ժողովրդի կենցաղի մեջ և այլն։ Հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած այս պատմական վերափոխումներն ու տեղաշարժերը հանդիսացան այն հիմքը, որը էապես պայմանավորեց հայոց լեզվի հարստացումը, զարգացումը, ժողովրդականացումը։

2. Լեզվի, նրա նորմավորման, հարստացման ու զարգացման նկատմամբ ցուցաբերվող հոգատարությամբ ոչ միայն ուսումնագիտական կազմակերպությունների ու հիմնարկների, այլև պետության կողմից։ Հայերենը բարձրացավ պետական լեզվի աստիճանի, դարձավ նորաստեղծ Հայկական հանրապետության պետական լեզուն և որպես այդպիսին պաշտոնական լեզու է մեր կյանքի բոլոր բնագավառներում՝ պետական-քաղաքական, տնտեսական, գիտական, կուլտուրական, ուսումնական։

Ազգային լեզվի պատշաճ գնահատությունը, հասարակության կյանքում նրան այսպիսի մեծ տեղ տալը, նրա զարգացման նկատմամբ հոգատարությունը ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ստեղծման ու զարգացման լենինյան ազգային քաղաքականության վառ արտահայտություն են։ Սոցիալիստական կուլտուրայի ազգային ձևի լենինյան լուծումը մեծապես նպաստեց թե՛ լեզվի կատարելագործմանն ու զարգացմանը և թե՛ հենց կուլտուրայի սոցիալիստական բովանդակության ազատ, անկաշկանդ զարգացմանը, այն ժողովրդի բոլոր խավերին հասցնելուն և ժողովրդական զանգվածներին կուլտուրական հեղափոխության բոլոր բնագավառներում ներգրավելուն։ Ահա թե ինչու ազգային ձևի պատշաճ գնահատումն ու հարգումը եղել և մնում են որպես սկզբունքային հարց՝ կապված սոցիալիստական կուլտուրայի անշեղ զարգացման հետ։

Սոցիալիստական կուլտուրայի զարգացման գործում ազգային լեզվի դերի բարձր գնահատությամբ պետք է բացատրել մայրենի լեզվով գրագիտության տարածումը ամբողջ ժողովրդի բոլոր խավերի մեջ, հանրակրթական, բարձրագույն և ուսումնական այլ հաստատություններում ուսուցման ապահովումը և դրա հետ կապված բոլոր դասագրքերի (այդ թվում և բնական գիտությունների) ստեղծումը մայրենի լեզվով, առհասարակ մայրենի լեզվով հոծ գրակա-

նության ստեղծումը, մի շարք բնագավառների ազգային տերմիններ ստեղծումը՝ կապված հայերենի, որպես պետական լեզվի, հասարակական դերի ընդլայնման հետ և այլն, և այլն։

Նշված երկու գործոնները, որոնք աննախադեպ էին հայ ժողովրդի ամբողջ պատմության մեջ, ապահովեցին հայոց լեզվի բուռն զարգացումը վերջին 50-ամյակում։

Սովետական շրջանում հայոց լեզվի նվաճումները երկու կարգի են՝ 1. հասարակական դերի ընդլայնում, նոր գործառություններ (ֆունկցիաների) ձեռքբերում, 2. կառուցվածքային զարգացում։

Հայոց լեզվի հասարակական դերի ընդլայնման մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ թեև հայերենը նախասովետական շրջանում զարգացման բարձր աստիճանի հասած լեզու էր, որով ստեղծվել է բավականին հարուստ գեղարվեստական գրականություն, հրապարակախոսություն, բայց հայ հասարակական կյանքի հայտնի բնույթի պատճառով (պետականություն չունենալը, պաշտոնական շատ գործառություններ ռուսերենով կատարվելը, գիտության ու տեխնիկայի շատ ճյուղերի գոյություն չունենալը մեր իրականության մեջ և այլն) նախասովետական շրջանի հայերենը չուներ անհրաժեշտ տերմինաբանություն հասարակական-քաղաքական կյանքի, գիտության ու տեխնիկայի մի շարք բնագավառների վերաբերյալ։

Սովետական շրջանում հայոց լեզուն ձեռք բերեց նոր գործառություններ՝ սպասարկելու համար մեր քաղաքական, տնտեսական, գիտական ու կուլտուրական կյանքի այնպիսի բնագավառներ, ինչպիսին են՝ պետական-քաղաքական գործունեություն, դիվանագիտություն, իրավաբանություն, արդյունաբերություն իր տարբեր ճյուղերով, տեխնիկական գիտությունների մի շարք ճյուղեր, արվեստի նոր բնագավառներ (կինո, հեռուստատեսություն) և այլն[1]։ Այս հանգամանքով պետք է բացատրել այն իրողությունը, որ սովետական շրջանում տերմինաբանությունը դարձավ պետության հոգատարության առարկա և զարգացման մեծ թափ ստացավ։ Նշենք, որ առաջին անգամ սովետական շրջանում հրատարակվեցին այնպիսի տերմինաբանական բառարաններ, ինչպիսիք են՝ իրավա-

---

[1] Սովետական շրջանում հայոց լեզվի զարգացման հարցն առաջին անգամ ուսումնասիրել է ակադ. Գ. Սևակն իր «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» (1948) աշխատության մեջ։

բանական, ռազմական, ավտո-տրակտորային տեխնիկայի, տըն-տեսագիտական, երկաթուղային, շինարարական կառուցվածքների, պոլիտեխնիկական, առևտրա-հաշվապահական, մաթեմատիկական և այլն։ Ընդհանուր առմամբ սովետական շրջանում հրատարակվել են շուրջ երեսուն տերմինաբանական բառարաններ։

Տերմինաբանական բառարանների թեմաների թվարկումից իսկ երևում է, որ հայոց լեզվի հասարակական գործառության ընդլայնումը, ինքնին կարևոր նվաճում լինելով, միաժամանակ մեծ խթան է համապատասխան բնագավառների, իսկ վերջին հաշվով առհասարակ հայոց լեզվի բառապաշարի հարստացման գործում։ Իսկ սա նշանակում է, որ հայոց լեզվի սովետական շրջանում ունեցած վերոհիշյալ երկու կարգի նվաճումները սերտորեն կապված են միմյանց հետ և մասնավորապես հասարակական դերի ընդլայնումը մեծապես ազդում է նրա կառուցվածքային կողմի, հատկապես բառապաշարի հարստացման վրա։

Լեզվի կառուցվածքի տարբեր կողմերը հավասարապես չեն զարգանում։

Լեզվի ամենաարագ փոփոխվող կողմը, որ իր մեջ անմիջականորեն արտացոլում է հասարակության կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը, բառապաշարն է։ Սովետական շրջանում հայոց լեզուն հարստացել է բազմահազար բառերով, որոնք վերաբերում են մեր կյանքի տարբեր բնագավառներին։

Կյանքի սոցիալիստական վերափոխումը առաջ բերեց նոր երևույթներ, որոնք բառ-հասկացողությունների ձևով իրենց արտահայտությունը գտան լեզվի բառապաշարում։ Այդ բառերից են՝ կոլեկտիվացում, կոլտնտեսություն, սովխոզ, պլան, պլանավորում, պլանային (տնտեսություն), սովետ, սովետական, հնգամյակ, կոմերիտմիություն, կոմերիտական, ագիտացիա, ագիտատոր, քաղխմբակ, հարվածային, կուլտմասսայական, քաղդաստիարակչական, անտհաշվարկ և այլն։

Հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող շատ նոր հասկացություններ արտահայտվում են կայուն բառակապակցություններով, ինչպես՝ կոմունիստական շինարարություն, կոմունիստական բրիգադ, սովետական տնտեսություն, սոցիալիստական օրինականություն, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազա, քաղաքական զգոնություն, գաղափարական զինվածություն, հնգամյա պլան, ժողովրդական տնտեսություն, արտապլանային արտա-

դրանք. պետական անվտանգություն, կոլեկտիվ ղեկավարություն, արտադրական վարչություն և այլն:

Սովետական շրջանում հայոց լեզուն հարստացավ մեծ թվով այլ բառերով, որոնք վերաբերում են սոցիալիստական գյուղատնտեսությանը, արդյունաբերության ու տեխնիկայի տարբեր ճյուղերին, գիտության մի շարք բնագավառների, արվեստին, ռազմական գործին, սպորտին, տրանսպորտին, առևտրին, շինարարությանը և այլն: Բառապաշարի հարստացման այս տարբեր շերտերի մասին ընթերցողը կարող է կարդալ սույն աշխատության համապատասխան բաժնում.

Որպես հայոց լեզվի սովետական շրջանի համար բնորոշ երևույթ պետք է նշել, որ արագորեն աճում են այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք վերաբերում են միջազգային կյանքին. ինչպես՝ ՄԱԿ, նոտա, կոմյունիկե, անվտանգության կոմիտե, խաղաղության միջազգային շարժում, միավորված ազգեր, չեզոք երկրներ, ընդհանուր շուկա, սառը պատերազմ, ատոմազերծ գոտի, միջազգային մրցանակաբաշխություն, ապառազմականացված գոտի և այլն:

Հայերենի բառապաշարի այս շերտը հիմնականում նոր է և կապվում է սովետական շրջանի հետ: Ինչպես երևում է, այս կարգի հասկացությունները ավելի շատ բառակապակցություններով են արտահայտվում, քան թե բառերով: Ըստ որում, սա ընդհանուր երևույթ է և վերաբերում է ոչ միայն հայերենին, այլև ուրիշ լեզուների:

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանը բնորոշվում է ոչ միայն բառապաշարի հարստացումով, այլև վերջինիս միջոցների ու բառական նոր կազմությունների յուրահատկություններով: Իհարկե, կարճ ժամանակաընթացքում լեզվի բառային կազմի հարստացման միջոցների մեջ էական փոփոխություններ չեն կատարվում. այդպիսի փոփոխություններ բնականաբար չեն կատարվել նաև հայերենի զարգացման հետհեղափոխական շրջանում: Այստեղ խոսքը վերաբերում է բառապաշարի հարստացման միջոցների ու բառական նոր կազմությունների յուրահատկություններին: Հիշենք, որ ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման հիմնական միջոցներն են՝ ա) բառակազմություն, բ) փոխառություն: Բառապաշարի հարստացման գործում դեր ունեն նաև հայոց լեզվի հին շրջանից և այլ հատվածներից (հատկապես արևմտահայ գրական լեզվից, նվազ չափով նաև բարբառներից) վերցվող բառերը:

Այս միջոցները ընդհանրապես գործում էին նաև նախասովետական շրջանում։ Սակայն սովետական շրջանում սրանց մեջ դրսևորվեցին մի շարք յուրահատկություններ։ Նշենք դրանցից առավել բնորոշները։

1. Սովետական շրջանում հայոց լեզվի բառակազմությունը հարստացավ մի նոր, գործուն տեսակով՝ հապավումով։ Ճիշտ է, եղակի հապավումներ կարելի է ցույց տալ նախահեղափոխական շրջանի հայերենում, բայց դրանք մնում էին որպես հատուկենտ երևույթներ, ավելի շատ հարում էին սովորական բառակրճատումներին, և հապավումը իրավամբ չէր դիտվում որպես բառակազմության տեսակ։ Մինչդեռ սովետական կարգերի հաստատման հենց սկզբից հապավումը, որպես բառակազմության նոր եղանակ, արագորեն տարածվեց և հասավ մեծ չափերի։ Բարդության այս նոր տեսակի արագ տարածումը կապվում է նոր անվանումների բազմաբառության և խոսքի մեջ դրանք համառոտելու գործնական անհրաժեշտության հետ։ Այսպես, հայերենում առաջացան բազմաթիվ հապավումներ, որոնք բարդության տեսակ լինելով հանդերձ, էապես տարբերվում են նրանցից, տարբերվելով նաև իրարից։ Բարդության սովորական տեսակներից նրանք տարբերվում են նրանով, որ կազմվում են ոչ թե ամբողջական բառերի, այլ սրանց հապավված մասերի միացումով (որոշ հապավումներում բաղադրիչներից մեկը գործածվում է ամբողջական կերպով, առանց հապավվելու), իսկ իրարից տարբերվում են բաղադրիչների հապավման աստիճանով ու բնույթով։ Ինչպես՝ կենտկոմ, զինկոմ, պարտուս, սոցապ, զավար, ֆինբաժին, կոմերիտմիություն, պետպլան, քաղուսուցում, խնայդրամարկղ, արտգործմինիստրություն, ՍՍՀՄ, ՀՍՍՀ, բուհ, զագս և այլն։

2. Նորագույն շրջանի շատ փոխառյալ բառեր՝ ավելի կարճ ժամանակում են հարազատանում, մերվում ազգային բառապաշարի մեջ և ավելի հաճախակի են գործածվում բարդություններում՝ հանդես գալով հայերեն բաղադրիչների հետ, որի հետևանքով ստացվում են մեծ թվով բարդություններ հայ և օտար բաղադրիչների միացումով, ինչպես՝ էլեկտրացանց, տանկաշինություն, վագոնավար, տրակտորահարմար, ավտովերանորոգում, ավտովարորդ, սպորտհրապարակ, ֆուտբոլասեր, ռադիոհամերգ և այլն։

3. Հայոց լեզուն սովետական շրջանում մեծ չափով հարստացել է կայուն բառակապակցություններով, որոնք ունեն անվանողական արժեք։ Այսպիսի բառակապակցությունները բառական ինք-

նուրույն միավորների չափ հանդիսանում են լեզվի հարստության արտահայտություն, քանի որ դրանք ևս հասկացություն արտահայտող միավորներ են, անվանումներ։ Այդպիսիք են՝ պարտադիր ուսուցում, տեխնիկական անվտանգություն, սոցիալիստական աշխատանքի հերոս, տիեզերական թռիչք, երկարօրյա դասարան, հակաօդային պաշտպանություն, հեռանկարային պլան, պատանի բնասեր, արվեստի տասնօրյակ, հաշվողական կենտրոն, միջուկային զենք, հավաքովի կոնստրուկցիա, մեծ քիմիա, միջմայրցամաքային հրթիռ, մեքենա-տրակտորային կայան, հանրային հոտ, հեռաշար կուլտուրա, քառակուսի-բնային եղանակ և այլն։

Որ իրոք այս կարգի կայուն բառակապակցությունները լեզվի հարստության արտահայտություն են, իմաստային կողմով հարում են բարդություններին և արտահայտում համապատասխան հասկացություններ, երևում է թեկուզ այն փաստից, որ դրանք հաճախ վերածվում են բարդ բառի, և վերջիններս ունեն այն հաղորդակցական-անվանողական արժեքը, ինչ որ համապատասխան բառակապակցությունները։ Համմտ. կոլեկտիվ տնտեսություն և կոլտնտեսություն, բեռնատար ավտոմեքենա և բեռնավտո, բարձրագույն ուսումնական հաստատություն և բուհ, վերջնական հաշիվ և վերջնահաշիվ և այլն։

4. Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանի բնորոշ կողմերից է բառապատճենումը։ Բառապատճենումը հին երևույթ է, բայց անցյալում ուներ շատ սահմանափակ տարածում, ընդգրկում էր հատկապես նեղ մասնագիտական որոշ տերմիններ։ Վերջին տասնամյակներում այն տարածվեց շատ մեծ չափերով, ընդգրկեց ոչ միայն գիտության ու տեխնիկայի բոլոր բնագավառները, այլև դուրս եկավ տերմինաբանության սահմաններից ու տարածվեց բառապաշարի այլ շերտերի վրա ևս։ Խոսքը վերաբերում է այն մեծ քանակությամբ բառերին, որոնք կազմվել են հիմնականում ռուսերենի համապատասխան բառերի իմաստի ու բառակազմական միջոցների պատճենումով։ Բերենք մի քանի օրինակներ՝ *ինքնասպասարկում* (самообслуживание), *ինքնաթափ* (самосвал), *կիսաեզրափակիչ* (полуфинальный), *ռադիոսիրող* (радиолюбитель), *ռադիոբարձրախոս* (радиогромкоговоритель), *աշխօր* (трудодень), *հնգամյակ* (пятилетка), *գործիքաշինություն* (приборостроение), *հաստոցաշինություն* (станкостроение), *դաշտապաշտպան* (полезащитный), *տնտհաշվարկ* (хозрасчет), *ինքնագիր* (автограф), *հեռուստակենտրոն* (телецентр) և այլն։

Վերջապես գոյություն ունի պատճենման մի այլ տեսակ ևս, որի դեպքում բառակապակցության դիմաց կազմվում է համապատասխան բարդ բառ, ինչպես՝ верительная грамота—հավատարմագիր, книжная палата—գրապալատ, подоходный налог—եկամտահարկ, камера хранения—պահասենյակ, поле зрения—տեսադաշտ, почтовый ящик—փոստարկղ, судебная защита—դատապաշտպանություն և այլն։

Այլ լեզվի, տվյալ դեպքում ռուսերենի, բաղադրյալ բառերի պատճենումը հաճախ պատճառ է դառնում հայերենում բառակազմական որոշ համապատասխան միավորների ավելի ակտիվացման կամ նույնիսկ առաջացման։ Հենց այսպես, ռուսերենի համապատասխան միավորների (после և до) ազդեցությամբ ու նմանությամբ հայերենի հետ և մինչ բառերը սկսել են գործածվել իբրև բարդության առաջին բաղադրիչ՝ ժամանակի իմաստով՝ դրվելով մի շարք ածականների վրա. ինչպես՝ հետհոկտեմբերյան (послеоктябрьский), հետպատերազմյան (послевоенный), հետծննդաբերական (послеродовой), հետհեղափոխական (послереволюционный), հետշեշտային (послеударный), հետճաշյա (послеобеденный), մինչհոկտեմբերյան (дооктябрьский), մինչպատերազմյան (довоенный) և այլն։

5. Վերջին տասնամյակներում հայոց լեզվում առաջացած նոր բառերը. համեմատելով այլ լեզուների և մասնավորապես ռուսերենի համապատասխան բառերի հետ, նկատվում է մի նոր օրինաչափություն. այդ տարբեր լեզուներում առաջացող բառերի միջև առկա է իմաստային մեծ համապատասխանություն։

Որպեսզի հատկապես վերջին տասնամյակներում առաջացած այդ համապատասխանությունները ճիշտ հասկացվեն ու գնահատվեն, մի փոքր բացատրություն տանք հայերեն և ռուսերեն բառերի անցյալից եկող իմաստային անհամապատասխանությունների վերաբերյալ։ Այսպես, ռուսերեն наклонение բառի մեկ համարժեք բառ հայերենը չունի. դրա իմաստը կարելի է տալ հայերեն ա) թեքում և բ) եղանակ բառերով։ Բայց այս դեպքում էլ պետք է վերցնել երկու բառերի ոչ բոլոր իմաստները, քանի որ հայերենում թեքում բառը ունի այնպիսի տարբեր իմաստներ, որոնք ռուսերենում արտահայտվում են ա) перегиб, բ) флексия, գ) уклон բառերով։ Այս դեռ բոլորը չէ. наклонение բառի մյուս հայերեն բացատրությունը՝ եղանակ բառը, ևս իր ոչ բոլոր իմաստներով է համապատասխանում ռուսերեն այդ բառին, այլ միայն մեկով՝ քերական-

կան իմաստով (բայի եղանակ), մինչդեռ դրանից բացի նա ունի նաև այլ իմաստներ՝ ա) погода, բ) способ, прием, գ) мотив. Այս երեք իմաստներից мотив-ը հայերենի եղանակ բառին համապատասխանում է մեկ հայտնի իմաստով (երաժշտական), որից բացի նա արտահայտում է նաև ա) պատճառաբանություն, բ) շարժառիթ իմաստները և այլն, և այլն։

Այսպես կարելի է համարյա անվերջ շարունակել ցույց տալու համար մեր երկու լեզուների (և ոչ միայն դրանց) բառերի իմաստային բազմաթիվ անհամապատասխանությունները. Թե ինչպես հաճախ բառերը, տրամաբանության լեզվով ասած, իրար ծածկում են իմաստի միայն մի կողմով, իսկ այդ նույն բառերի մյուս իմաստը կամ իմաստները ծածկվում են այլ բառերով և այսպես շարունակ։ Սա չի նշանակում, թե մեր երկու լեզուների միջև անցյալում համապատասխանություններ չեն եղել։ Խոսքն այն մասին է, որ եթե անցյալից եկող քիչ համապատասխանությունները հիմնականում պատահական զուգադիպումներ են և քիչ չափով էլ ազդեցության հետևանք, ապա վերջին տասնամյակներում այդ համապատասխանությունները դարձել են ընդհանուր երևույթ ու բնորոշ։

Բառ-հասկացությունների իմաստային ճշգրիտ համապատասխանությունները ոչ միշտ է, որ պատճենումով են պայմանավորվում։ Այդ համապատասխանությունները հաճախ ստեղծվում ու պահպանվում են նաև ոչ պատճենման, այլ ազատ թարգմանությունների, ազատ կազմությունների դեպքում։ Այդպիսի բառերից են՝ արտադրամաս (цех), հարցազրույց (интервью), գործուղում (командировка), հիվանդասենյակ (палата), օդանավակայան (аэродром), օդաչու (лётчик) և այլն։

Հայերենի ու ռուսերենի (ինչպես և այլ լեզուների) բառերի իմաստային այսպիսի առավելագույն համապատասխանություններն ու ընդհանրությունները պայմանավորված են ընդհանուր սոցիալական հիմքով, ժողովուրդների և նրանց մշակույթի (հատկապես լեզվի) սերտ կապերով և մանավանդ ռուսաց լեզվի անմիջական ազդեցությամբ (թարգմանական գրականության, բանավոր խոսքի միջոցով) և այլն։

Սա միաժամանակ նշանակում է, որ լեզուների և մասնավորապես ռուսերենի ազդեցության ձևերը վերջին տասնամյակում բազմազան են դարձել։

6. Սովետական շրջանում արևելահայ գրական լեզվի փոփոխությունների հարցում յուրահատուկն այն է, որ դրանք կատար-

վում են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով։ Այնպես որ մեծ է ռուսաց լեզվի դերը հայերենի բառապաշարի հարստացման խնդրում։ Բերենք միայն մի քանի օրինակներ՝ տրակտոր, տրակտորիստ, պլան, բրիգադ, բրիգադիր, դիրեկտոր, էլեկտրիֆիկացիա, տուրնիր, մարզ, թենիս, տրոլեյբուս, էսկալացիա և այլն։

Փոխատու լեզուն, իհարկե, արտաքին գործոն է այս կամ այն լեզվի բառապաշարի հարստացման գործում։ Բայց այդ արտաքին գործոնը, այսպես ասած, անտարբեր կերպով բառ-հասկացություններ մատակարարող չէ, այն իր հնչյունական, բառակազմական ու այլ յուրահատկություններով ազդում է փոխառու լեզվի վրա, և դա հիմնականում ու սկզբնապես արտահայտվում է փոխառյալ բառերում, իսկ հետո այս կամ այն չափով նաև ոչ փոխառյալ բառերում։

Վերոհիշյալից բխում է, որ լեզվի, տվյալ դեպքում հայոց լեզվի համար, միևնույն չէ, թե որ լեզվից է կատարում փոխառություններ. այդ հանգամանքը, մանավանդ ժամանակի մեծ հատվածում, իր որոշ կնիքն է թողնում տվյալ լեզվի վրա։ Այնպես որ սովետական շրջանում արևելահայ գրական հայերենի՝ փոխառությունը ռուսերենից կատարելը և առհասարակ ռուսերենի ազդեցությունը ոչ միայն պետք է նշել որպես սոսկ պատմական իրողություն, այլև պետք է հաշվի առնել, որ այն կարևոր հետաքրքրություն է ներկայացնում նաև բուն լեզվական տեսակետից, ձևա-կառուցվածքային առումով։

7. Սովետական շրջանում, մասնավորապես վերջին տասնամյակներում, բառապաշարի բուն հարստացման պայմաններում բնականաբար զգալի չափով օգտագործվում են նաև հին հայերենի ընձեռած հնարավորություններն այդ հարցում. վերականգնվում են գրաբարյան որոշ բառեր, վերաիմաստավորվում, հաճախ գործածվում իբրև բաղադրյալ բառի կամ կապակցության բաղադրիչ։ Այսպես, հին հայերենում ունեինք հեռուստ բառը, որ նշանակում էր «հեռվից». սկսած հայերենի ամենավաղ շրջանից մինչև շուրջ մեկուկես տասնամյակ առաջ այս մակբայով ոչ մի բաղադրյալ բառ չէր կազմվել։ Բայց ահա վերջին տարիներին սովետական գիտության ու տեխնիկայի մի նոր ճյուղի առաջացման ու զարգացման հետևանքով ստեղծվեցին նոր սարքեր, առաջ եկան նոր երևույթներ, որոնք անվանելու համար հայերենում կազմվեցին բազմաթիվ բաղադրյալ բառեր հին հեռուստ բառի և այլ բաղադրիչի միացումով։ Այդ բառերի քանակը հասնում է տասնյակների. ինչպես՝ հեռուստաաշտարակ, հեռուստադիտող, հեռուստաընկալիչ,

հեռուստախցիկ, հեռուստածրագիր, հեռուստակայան, հեռուստակառավարում, հեռուստակենտրոն, հեռուստահաղորդում, հեռուստաղեկավարում, հեռուստամեխանիկա, հեռուստամեքենայացում, հեռուստաներկայացում, հեռուստաչափ, հեռուստաչափական, հեռուստաչափիչ, հեռուստասպեկտրաչափ, հեռուստավարություն, հեռուստատեսային, հեռուստատեսություն, հեռուստացանց, հեռուստացույց, հեռուստացուցային, լուսահեռուստատեսային, ռադիոհեռուստաչափիչ, ռադիոհեռուստատեսային և այլն: Մենք չենք անդրադառնում հեռուստատեսային տեխնիկայի նեղ մասնագիտական տերմիններին. բերված բառերը քաղել ենք «Սովետական Հայաստան» օրաթերթի հաղորդումներից ու գիտահանրամատչելի հոդվածներից:

Հին հայերենին հատուկ մի շարք միավորներ, որոնք ինչ-որ չափով գործածվում էին աշխարհաբարի զարգացման նախասովետական շրջանում, հատկապես ակտիվացան վերջին տասնամյակներում՝ տարբեր հարաբերությունների նրբությունները ճշգրտությամբ արտահայտելու անհրաժեշտությամբ: Այսպես, հայտնի է, որ նախդիրների առատությունը գրաբարի հատկանշական կողմերից է, ի տարբերություն որի աշխարհաբարը ետադրություններով է հարուստ: Այնուամենայնիվ գրաբարյան որոշ նախդիրներ գրական ճանապարհով մտան աշխարհաբարի մեջ, ուր դրանց գործածությունը նվազագույնի էր հասնում:

Վերջին երեք տասնամյակներում հին հայերենի նախդիրների գործածությունը նկատելիորեն ակտիվացել է. դրանք լայնորեն գործածվում են բազմաթիվ դարձվածներում, կապակցություններում: Դա երևում է թեկուզև Ի նախդիրի հետևյալ կիրառություններից՝ ի բարեգավաճումն, ի բարօրություն, ի բնե, ի գիտություն, ի դեմս, ի դեպ, ի դերև լինել, ի զարմանս, ի զեն, ի թիվս, ի լրումն, ի կատար ածել, ի կատարումն, ի հաճույս, ի հայտ բերել, ի հայտ գալ, ի հենուկս, ի հիշատակ, ի ղեկավարություն, ի մարտ, ի մի բերել, ի մի գալ, ի մի ժողովել (հավաքել), ի նկատի առնել (ունենալ), ի նշան, ի նշանավորումն, ի նպաստ, ի շահ, ի չիք դարձնել, ի պաշտոնե, ի պատասխան, ի պատիվ, ի սկզբանե, ի սրտե, ի սպաս դնել, ի վար, ի վեր, ի վնաս, ի տարբերություն, ի տես, ի ցույց դնել, ի փառս և այլն:

Ի նախդրի լայն տարածմանը, անշուշտ, որոշ չափով նպաստում է ռուսերենի ազդեցությունը. բանն այն է, որ ռուսերենի նախդրավոր մի շարք կապակցությունների իսկական համարժեքները

կարելի է տալ և թարգմանություններում տրվում է ի նախդրի համապատասխան կապակցություններով. Հմմտ. ի պատիվ— в честь, պատասխան—в ответ, ի նշանավորում—в ознаменование, ի դեմս—в лице, ի գիտություն—к сведению, ի կատարումն—в исполнение և այլն: Նախդիրների ակտիվացումը կապված է մի կողմից բառակազմի, մյուս կողմից քերականական կառուցվածքի հետ

Հայոց լեզվի քերականական կառուցվածքը սովետական շրջանում կրել է մի շարք փոփոխություններ: Դրանք իրենց բնույթով էապես տարբերվում են բառապաշարի փոփոխություններից: Քերականական փոփոխությունները տեղի են ունենում շատ դանդաղ, աստիճանաբար և ժամանակի փոքր հատվածում՝ աննկատելի կերպով: Եթե կարելի է ցույց տալ նոր բառերի առաջացման, առաջին գործածության որոշակի ժամանակը, ապա որոշել տվյալ քերականական իրակության առաջացման որոշակի ժամանակը պարզապես անկարելի է, ավելի ճիշտ այդպիսի խնդիր չի էլ կարող ծագել, քանի որ ի տարբերություն բառի, որը կարող է կազմվել միանգամից, հատուկ նպատակադրությամբ, քերականական ձևը կամ իմաստը չի կարող ստեղծվել միանգամից և հատուկ մտածված կերպով. քերականական ձևի և իմաստի փոփոխությունը տեղի է ունենում անհատների և նույնիսկ ամբողջ ժողովրդի ցանկությունից անկախ ու երկար ժամանակում: Նշենք նաև, որ քերականական փոփոխությունները, ի տարբերություն բառականի, կապ չունեն սոցիալ-տնտեսական վերափոխությունների հետ: Այլ բան է, որ այս կամ այն հասարակարգը, պատմական պայմանները կարող են նպաստավոր կամ աննպաստ լինել տվյալ լեզվի ընդհանուր, այդ թվում և քերականական կառուցվածքի զարգացման համար: Նշված պատճառներով քերականական փոփոխությունները քննելիս չի կարելի խիստ սահմանագիծ տանել սովետական և նախասովետական շրջանների միջև: Սովետական շրջանում կատարված կամ ավարտված շատ փոփոխություններ սկիզբ են առել նախասովետական շրջանում:

Հոլովումների համակարգում շարունակել է գործել նմանության օրենքը: Ի հոլովման աճող ազդեցությունը հատուկ է ժամանակակից հայերենի նաև անցյալի շրջաններին: Բայց վերջին տասնամյակներում այդ ազդեցությունը ավելի ուժեղացավ, ի հոլովումն ավելի ընդլայնեց իր ազդեցության ոլորտը, ընդարձակեց իր սահմանները՝ որոշ հոլովումներում մի շարք զուգահեռությունների և

գրաբարյան մի շարք ձևերի վերացման հաշվին։ Առհասարակ տարբեր հոլովումների ենթարկվող բառախմբերը սովետական շրջանում համեմատաբար ավելի են սահմանագծվել, թեև այժմ էլ կան հոլովումների զուգաձևություններ։

Նմանության օրենքը գործում է նաև խոնարհման համակարգում, ուր աստիճանաբար ստեղծվում են խոնարհման ձևերի կազմության ընդհանրություններ։

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում որոշակի փոփոխություններ են կատարվել նաև կապերի ու շաղկապների համակարգում, նրանց քերականական դերի ու հատկանիշների մեջ։ Նրանց կազմը համալրվել է այլ խոսքի մասերի պատկանող բառերի հաշվին, ինչպես և որոշ կայուն կապակցություններով։ Այս երևույթները բնականաբար իրենց համապատասխան անդրադարձումն են ունենում նախադասության ու բառակապակցության կառուցվածքի մեջ։ Որոշակիություն ու հստակություն առաջացավ հոդերի կիրառությունների և դրանց հետ կապված՝ առումների արտահայտության մեջ։ Ընդհանուր առմամբ նկատելի է, որ վերջին տասնամյակներում հայերենի քերականական կառուցվածքում գրական լեզվի նորմաներն ավելի են կայունացել, անմիօրինակություններն ու շեղումները նվազել են, տեղի են ունեցել քերականական իմաստների և կիրառությունների ճշգրտումներ։ Սա, իհարկե, ամենից առաջ լեզվի զարգացման ներքին օրենքների արդյունք է։ Պետք է նշել նաև, որ այդ նորմաների կայունացմանը նպաստել են քերականության դասագրքերը, քերականության ուսուցումը և առհասարակ գրագիտության, գրականության լայն տարածումը։

Ուշադրության արժանի են հայերենի բառերի կապակցելիության մեջ տեղի ունեցած փոփոխությունները վերջին տասնամյակներում։ Կապակցելիությունը նախադասության և բառակապակցության մեջ տվյալ բառի՝ այլ բառերի վրա դրվելու, նրանց հետ կապակցվելու հատկանիշն է։ Յուրաքանչյուր բառ այս տեսակետից ունի իր որոշակի հնարավորությունները, սահմանները՝ պայմանավորված իր իմաստով ու այլ հատկանիշներով։ Հաճախ մեծ չափերի են հասնում կապակցության հարցում վերջին տասնամյակներում կատարված տեղաշարժերը, որոնք պայմանավորված են բառիմաստի փոփոխությամբ, բնության ու հասարակական երևույթների խոր ճանաչումով և գիտության ու տեխնիկայի զարգացման շնորհիվ տարբեր երևույթների ներքին կապերի բացահայտումով կամ ստեղծումով, ինչպես և այլ լեզուների ազդեցությամբ։

II
A 50748

Այսպես, օդային ածականի կապակցելիությունը մի քանի տասնամյակ առաջ շատ սահմանափակ էր. այն կարող էր դրվել սակավաթիվ գոյականների վրա, որոնք են՝ տարածություն, հոսանք, համբույր։ Վերջին տասնամյակներում մեծ չափով աճեց օդային ածականի կապակցելիությունը՝ կապված օդային տարածության գիտա-տեխնիկական նվաճման հետ։ Եվ այսպես, օդային ածականը այժմ կապակցվում է անցյալում նրա հետ անկապակցելի շատ բառերի հետ, ինչպես՝ դեսանտ, երթուղի, կապ, հարձակում, մարտ, նավատորմ, պայթեցում, պաշտպանություն, սահման, տագնապ, տրանսպորտ, ուղի, բուժում, վաննա և այլն։

Թարգմանել, հաշվել, լուծել, վճռել, հայտնել, ցանել, հնձել և նման բայերով արտահայտված ստորոգյալների ենթակաների և այդ բայերի ենթակայական դերբայով արտահայտված որոշիչների որոշյալի դերում մի երկու տասնամյակ առաջ հայերենում կարող էին հանդես գալ միայն անձ ցույց տվող բառերը, իսկ այժմ իբրև այդպիսի ենթականեր ու որոշյալներ հանդես են գալիս նաև տարբեր մեքենաների ու սարքավորումների անուններ։ Ինչպես երևում է, այս երևույթը կապված է տեխնիկայի նվաճումների հետ։

Բառերի և բառաձևերի կապակցելիության փոփոխությունները, կարևոր լինելով ամենից առաջ նրանց շարահյուսական կիրառությունների ընդլայնման տեսակետից, հետաքրքրություն են ներկայացնում նաև նախադասության ու բառակապակցության կառուցվածքի տեղաշարժերի առումով։ Եվ եթե նկատի ունենանք, որ, ինչպես ասվեց վերը, բառերի կապակցելիության շատ տեղաշարժերի հիմքում ընկած են արտալեզվային պատճառներ, ապա հետաքրքրական արդյունքների կարող է հանգեցնել այդ արտալեզվայինի և լեզվայինի (մասնավորապես քերականականի) փոխհարաբերությունների ուսումնասիրումը։ Վերջապես այս հարցի ուսումնասիրումը կարևոր է լեզվի բառական ու քերականական փոփոխությունների փոխհարաբերության տեսակետից։

Որոշ տեղաշարժեր են կատարվել նաև ուղղախոսության մեջ։ Նշենք, որ հատկապես բարբառների, ինչպես և արևմտահայ գրական լեզվի ու ռուսերենի ազդեցությունների պայմաններում ժամանակակից գրական հայերենի ուղղախոսությունն ունի շատ անմիօրինակություններ ու տատանումներ։

Գրական հայերենը սովետական շրջանում ունի մի այլ կարևոր նվաճում ևս։ Դա ա՛յն է, որ եթե անցյալում նա հիմնականում մտավորականության նեղ շրջանի սեփականությունն էր, ապա այժմ

դարձել է համարյա մեր ամբողջ ժողովրդի սեփականությունը։ Թեև այս նվաճումը դեռևս չի հասել իր վերջնական ավարտին, այնուամենայնիվ հինգ տասնամյակում այդ երևույթը հաղթանակել է հնարավոր առավելագույն չափով։

Համեմատաբար կարճ ժամանակում մեր գրական լեզվի այս կարևոր նվաճումը պայմանավորված է ոչ միայն վերը թվարկված քաղաքական, հասարակական, կուլտուրական նպաստավոր պայմաններով ու կարևոր միջոցառումներով, այլև անհատի ու հասարակության փոխհարաբերության նոր բնույթով։ Անհատը մարդկային հասարակության ամբողջ պատմության ընթացքում երբեք այնքան սերտորեն կապված չի եղել հասարակության հետ, այնքան չի ապրել մարդկության կյանքով, որքան մեր հասարակության մեջ, մեր օրերում։ Այսօր յուրաքանչյուր անհատի կյանքը, գործունեությունը էապես պայմանավորված են հասարակության կյանքով, բառիս ամենալայն իմաստով։ Այդ հանգամանքը բարձրացնում է անհատի գործունեության հասարակական դերը, պայմանավորում նրա սերտ կապը հասարակության հետ՝ վերջինիս կառուցվածքի բոլոր մակարդակներում։ Մարդու գործունեության, հարաբերության ու հաղորդակցման այսպիսի բնույթը առաջադրում է գրական լեզվին տիրապետելու պահանջ, քանի որ տեղական բարբառները այս տեսակետից բնականաբար պիտանի չեն։

Չի կարելի կարծել, թե հայոց լեզվի զարգացումն ու մշակումը միշտ ընթացել են հարթ ուղիով, առանց դժվարությունների ու զիգզագների։ Այդպիսի դժվարություններ ու զիգզագներ եղել են ինչպես մեր հասարակական կյանքի մյուս, այնպես էլ լեզվի զարգացման բնագավառում։ Կարևորն այն է, որ սովետական շրջանում մեր լեզվական քաղաքականությունը ընդհանուր առմամբ եղել է առողջ ու պատճառաբանված և որոշ շրջաններում (20-ական, մասամբ 40-ական թվականներ) թույլ տրված տարերային և ոչ-տարերային շեղումները բնականաբար ժամանակի ընթացքում լեզուն ուղղել է, շտկել։

Մենք ասում ենք «բնականաբար», որովհետև այլ կերպ լինել չէր էլ կարող։ Լեզուն ունի իր զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, որոնք գործում են մարդկանց կամքից ու ցանկությունից անկախ։ Եվ նա համառորեն մերժում է այն ամենը, ինչ չի համապատասխանում իր էությանը, ոգուն, ինչի կարիքը ինքը չի զգում։ Լեզվի էության ու զարգացման այդ ներքին տրամաբանության ուժով գործածությունից դուրս մղվեցին ու հայերենի մեջ չմտան 20-ական թվականների հայ մամուլում պրոլետկուլտական տրամա-

դրություններով ռուսերեն գործածված այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ կրիզիս, ինիցիատիվա, ստատիստիկա, ֆակտոր, ագենտ, սապոն, զավոդ, պալտո, մաշինա և այլն, որոնց կարիքը հայերենը չէր զգում, քանի որ ուներ այդ բոլոր բառերի հայերեն հասկանալի, տարածված համարժեքները։ Այդ նույն հիմունքով ու պատճառով հայերենը մերժեց նաև ավելի ուշ շրջանում արհեստականորեն ներմուծված այլ բառեր։

Լեզվական քաղաքականությունը, հսկողությունն ու հոգատարությունը լեզվի նկատմամբ անհրաժեշտություն են, մանավանդ նրա բուռն զարգացման ու հարստացման արդի շրջանում։ Գրական լեզվի նորմաներին հետևելը, նրա զարգացման ու հարստացման հարցերում միասնական չափանիշով ղեկավարվելը առավել ևս անհրաժեշտ են դառնում՝ մի կողմից տասնյակ բարբառների, մյուս կողմից տարբեր լեզուների՝ ժամանակակից գրական հայերենի վրա ունեցած մշտական ազդեցության պայմաններում։ Միայն թե լեզվական քաղաքականությունը պետք է լինի խստորեն գիտական և բխի լեզվի հասարակական դերի ճիշտ գնահատումից, տվյալ լեզվի կառուցվածքային ու պատմական առանձնահատկություններից։

Սակայն խնդիրը միայն լեզվի հարստացման ու զարգացման գործում ընդհանուր դրույթների գիտական մշակումը չէ, թեև դա շատ կարևոր է իբրև տեսական ուղեցույց։ Անհրաժեշտ է բավարար չափով ծավալել լեզվաշինական աշխատանքներ, գործնականորեն մշակել ու լուծել լեզվի հարստացման ու զարգացման հետ կապված հարցերը։ Այս բնագավառում կնշենք երկու հիմնական թերություն՝ 1) այդ հարցերի մշակման ու լուծման խնդրում մենք ետ ենք մնում լեզվի զարգացման ընթացքից, 2) լեզվաշինական աշխատանքներում հաճախ անտեսում ենք լեզվի գործառության որոշ բնագավառներ, լեզուն ընդգրկում իր ոչ ամբողջ ծավալով, ոչ բոլոր կողմերով։

Ժամանակակից գրական հայերենի հետագա զարգացման ու հարստացման շահերը պահանջում են հաղթահարել այդ երկու կարգի թերությունները. ե՛լ ավելի մեծ ուշադրություն դարձնել լեզվաշինության, լեզվի նորմավորման հարցերին, գիտական հիմնավոր սկզբունքներով և առանց լեզվի զարգացման ընթացքից ետ մնալու հետևել նրա կառուցվածքի բոլոր կողմերին ու գործառության բոլոր ոլորտներին։

Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ա.

ԲԱՌԱԳԱՃԱՐ

Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆ

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ԲԱՌԱԲԱՐԴՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բավական դժվար է ամբողջությամբ ու ճշգրտությամբ ներկայացնել այն հսկայական փոփոխություններն ու տեղաշարժերը, որոնք կատարվել են լեզվի բառային կազմի մեջ այս կամ այն շըրջանում: Այդ բանը առավելապես վերաբերում է հայերենի սովետական շրջանի բառապաշարին, քանի որ. ա) հայոց լեզվի բառային կազմը սովետական շրջանում ունեցել է բուռն զարգացում, այն հարստացել է, համալրվել հազարավոր բառերով ու արտահայտություններով, բ) տակավին չունենք ո՛չ ըստ դարերի բառարաններ և ո՛չ էլ մեր գրողների ստեղծագործությունների լեզվի վերաբերյալ բավարար չափով մենագրություններ, որոնք, անշուշտ, կնպաստեին պարզելու մեզ հետաքրքրող բառերի ստեղծման ժամանակը և բառային կազմի հարստացումը տվյալ շրջանում:

Հայոց լեզուն աշխարհի զարգացած և հարուստ լեզուներից մեկն է: 19-րդ դարի երկրորդ կեսում և ընդհանրապես նախասովետական շրջանում ստեղծված հայ գեղարվեստական, գիտական ու հրապարակախոսական գրականությունն արդեն աչքի էր ընկնում լեզվական բարձր մշակույթով, բառապաշարի ճոխությամբ, հարստությամբ ու բազմակողմանիությամբ, լեզվաարտահայտչական միջոցների կատարելությամբ, բազմազանությամբ ու ճկունությամբ:

Սովետական իշխանության տարիներին է՛լ ավելի հարստացավ հայոց լեզուն, մասնավորապես հարստացավ ու համալրվեց հայոց լեզվի բառային կազմը, որ պայմանավորված էր ամենից առաջ

մեր կյանքի մեջ գիտության, տեխնիկայի, արտադրության, արվեստի, կուլտուրայի, սպորտի վերաբերյալ նորանոր հասկացությունների ներթափանցմամբ ու մասսայականացմամբ։ Ժողովրդա-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի անընդհատ զարգացումը, գիտության տարբեր բնագավառներում տեղի ունեցող բազմաթիվ ու բազմազան գյուտերն ու հայտնագործությունները, տեխնիկական ու արտադրական առաջընթացն ու նվաճումները իրենց հետ բերում են նոր բառեր ու արտահայտություններ, որոնք համալրում են մեր լեզվի բառապաշարը։

Բառային կազմի զարգացում ասելով պետք է հասկանալ ոչ միայն նոր բառերի ու տերմինների ավելացումը, այլև առհասարակ բառապաշարի մեջ տեղի ունեցող բոլոր կարգի փոփոխությունները. պասիվ գործածություն ունեցող որոշ բառերի ակտիվացումը, մի շարք բառերի՝ ակտիվ բառապաշարից դուրս մղվելը ու պասիվ բառապաշարի մեջ անցնելը և այլն։

Մեր պատմության հնագույն շրջանի հասկացություններ արտահայտող մի շարք բառեր՝ արքա, սպարապետ, մարզպան, հազարապետ, այրուձի, ուրհանդակ և այլն, լայնորեն գործածվեցին նաև սովետահայ պատմավիպասանների՝ Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ս. Խանզադյանի և այլոց ստեղծագործություններում։ Նոր շրջանում սակավ գործածական դարձան եկեղեցական և հին հասարակական հարաբերություններ արտահայտող մի շարք բառեր. օրինակ՝ ստրկան, ստրկատատուն, քյոխվա, գզիր, նահանգ, նահանգապետ, գավառ, գավառապետ, փոխարքա, թաղապետ, մուրհակ, ժամհար, կնունք, ժամերգություն, տիրացու, աղոթք, վարդապետ, աջահամբույր, պատարագ, մատաղ, հոգարարձու, երեցփոխ, կոռ, սկիհ և այլն։

Բառապաշարը, անմիջապես կապված լինելով մարդկային գործունեության և ընդհանրապես հասարակական կյանքի բոլոր բնագավառների հետ, արտացոլում է վերջիններիս մեջ կատարված տեղաշարժերն ու փոփոխությունները։ Այսպես՝ 20-ական թվականներին կազմվեցին մի շարք բառեր՝ կապված տնտեսական նոր քաղաքականության հետ։ Դրանցից են՝ պարենհարկ, պարենտուրք, պարենմասնատրում, շաբաթօրյակ, մասհանում, հնգամյակ և այլն։ Այդ շրջանում և հետագա տարիներին ստեղծվեցին նոր բառեր ու տերմիններ՝ կապված գիտության ու կուլտուրայի, հասարակական ու քաղաքական տարբեր բնագավառներում տեղի ունե-

ցած հսկայական փոփոխությունների հետ: Այսպես, օրինակ՝ մեքենատրակտորային (կայան), կոմբայնավար, ակումբավար, շարքացան, տրակտորահերկ, բրիգադավար, օղակավար, սիլոսահատ, էլեկտրակիթ, էլեկտրախուց և այլն:

Սովետական իշխանության օրոք, հատկապես հայրենական պատերազմի շրջանում, մեր լեզվի բառապաշարը համալրվեց ռազմական գործին վերաբերող բառերով: Դա պայմանավորված է ռազմական տեխնիկայի ու գիտության բուռն զարգացմամբ, ռազմական կյանքի մեջ տեղի ունեցած մեծ փոփոխություններով: Այդ բառերից են՝ զրահահար, ինքնընթաց (հրանոթ), ականածիգ, ականակիր, ականորս, ռմբակոծիչ, հրետանակոծություն, գաղապաստարան, ականապատում, ականազերծում, կրակահերթ, կրակամարտ, զորասյուն, հրթիռանետ, հեռահար, մարտակարգ, ռազմավար, տարբերանշան, դիտակետ, հրթիռաձիգ, հրետանատանկային և այլն:

Սովետական փուլում ճշտորոշվեցին մի շարք բառերի իմաստները: Այսպես՝ ականանետ բառը առաջ գործածվում էր երկու իմաստով. ա՛ ականանետի, այսինքն՝ ական նետող զենքի, և՛ այդ զենքը գործածողի, այսինքն՝ ականաձիգի: Հետագայում նա սկսում է կիրառվել միայն ական նետող զենքի իմաստով, իսկ զենքը գործածողի նշանակությամբ ստեղծվում է ականաձիգ բառը՝ հրաձիգ բառի նմանությամբ: Զորասյուն բառը սկզբում կիրառվում էր և՛ զորքի, և՛ տրանսպորտի միջոցների շարքը կամ շարային վիճակը արտահայտելու համար: Այժմ զորասյունը գործածվում է միայն զորքի կամ զորային միավորումների շարքը անվանելու համար, իսկ տրանսպորտի տեսակների ու միջոցների համար ստեղծվեց շարասյուն բառը (ավտոմոբիլների շարասյուն, սայլերի շարասյուն և այլն):

Վերջին մի քանի տարիների ընթացքում մեծ առաջընթաց կատարվեց տիեզերքի նվաճման բնագավառում: Հրթիռների օգնությամբ տիեզերք բարձրացան սովետական գիտնականների ջանքերով ստեղծված արբանյակները: Այդ կապակցությամբ երևան եկան մի շարք նոր սարքեր, երևույթներ, որոնք արտահայտվեցին նորակազմ բառերով: Դրանցից են՝ ամենագնաց (ՍՀ, 22/3—1970), տիեզերագնացություն (ՍՀ, 19/3—1965), տիեզերագիտություն (ՍՀ, 21/3—1965), հրթիռատար (ՍՀ, 20/6—1972), տիեզերանավ

(ՍՀ, 19/3—1965), տիեզերանվաճ (ՍՀ, 19/3—1965), տիեզերակայան (ՍՀ, 23/3—1965), աստղագնացություն (ՍՀ, 19/3—1965), լուսնագնացություն (ՍՀ, 19/3—1965), արբանյականավ (ՍՀ, 19/3—1965), տիեզերասավառնակ (ՍՀ, 25/2—1965), ձեռնակառավարում (ՍՀ, 24/3—1965), ջերմաճնշախցիկ (ՍՀ, 28/3—1965), աստղագրություն, արբանյականավախցիկ, տիեզերախույզ (ՍՀ, 24/3—1965), հրթիռաձիգ (ՍՀ, 19/11—1965), հեռակետ, մերձակետ, հեռահար և այլն։ Տիեզերագիտության զարգացմամբ առաջ եկան նաև մի շարք բառակապակցություններ. օրինակ՝ տիեզերական եղբայրներ (ՍՀ, 23/3—1965), տիեզերական բժշկություն (ՍՀ, 25/3—1965), աստղային եղբայրներ (ՍՀ, 23/3—1965) և այլն։

Միջուկային էներգիայի ու զենքի ստեղծման հետ երևան եկան մի շարք բառեր ու արտահայտություններ. ատոմանավ, ատոմագետ, ատոմազերծ (գոտի), ատոմային ռումբ, ատոմային էլեկտրակայան, միջուկազերծ (գոտի), միջուկային ռումբ, ստորերկրյա փորձարկում և այլն։

Հեռուստացույցը մեր կենցաղի մեջ մուտք գործեց վերջին տարիներին։ Նրա հետ կապված հասկացությունները արտահայտելու համար կազմվեցին նոր բառեր, օրինակ՝ հեռուստատեսություն, հեռուստահաղորդում, հեռուստադիտակ, հեռուստահաղորդիչ, հեռուստաչափիչ, հեռուստամեխանիկ, հեռուստաաշտարակ, հեռուստակենտրոն, հեռուստացանց և այլն։

Վերջապես՝ սպորտի զարգացման ու մասսայականացման հետ են կապվում՝ մարմնամարզիկ, ծանրամարտ, ծանրամարտիկ, հնգամարտ, մարզասրահ, մարզահրապարակ, մարզահանդես, մարզադաշտ (ստադիոն), մրցավեճ, մրցահերթ, զուգասահք, դահուկավազք և այլն։

Ինչպես երևում է բերված օրինակներից, հայոց լեզվի բառային կազմում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ՝ կապված հասարակական-քաղաքական կյանքի, գիտության, տեխնիկայի, արվեստի, սպորտի և այլ բնագավառներում կատարված տեղաշարժերի և նոր երևույթների ու հասկացությունների՝ մեր կյանքի մեջ ներթափանցման ու մասսայականացման հետ։

Հայոց լեզուն բառակերտության իր ճկունությամբ ու կատարելությամբ կարող է մրցել աշխարհի շատ լեզուների հետ։ Նա ունի բառակազմության չափազանց մեծ հնարավորություններ, որոնց շնորհիվ էլ հայերենը օրեցօր համալրում է իր բառապաշարը նորակերտ բառերով։ Սովետական շրջանում ստեղծված բառերի

քանակը տասնյակ հազարների է հասնում։ Դա ինքնին վկայում է հայերենի բառային կազմի աննախընթաց զարգացման մասին։

Մեր լեզվի բառային կազմի հարստացման հիմնական միջոցներն են բառաբարդությունը, ածանցումը և փոխառությունը։

Բառաբարդությունը բառակազմության այն եղանակն է, երբ երկու և ավելի բառերի կամ արմատների բաղադրությունից կազմվում են նոր բառեր։

Սովետական շրջանում նոր բառեր են կազմվել բարդության բոլոր տեսակներով՝ բառակրկնությամբ, բաղհյուսական, կցական, հարադրական և իսկական բարդություններով։

Անցնենք դրանց քննությանը։

2. ԲԱՌԱԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառակրկնությունը, որ բառակազմության ամենապարզ ձևն է, որոշ դեր ունի բառապաշարի հարստացման գործում։ Նրանով ոչ միայն բառիմաստի նրբերանգներ ու զանազան հարաբերություններ են դրսևորվում, այլև նոր բառեր են կերտվում։ Պետք է նկատել, սակայն, որ բառակրկնությունը, իբրև նոր բառեր կերտելու եղանակ, անցյալում ավելի լայն տարածում ուներ, քան այժմ։ Հայերենի զարգացման ներկա փուլում բառակազմության այդ եղանակը ավելի շատ ծառայում է բառիմաստի նոր հարաբերություններ ու նրբերանգներ դրսևորելուն, քան նոր բառեր կազմելուն։ Բառակրկնությունը հայերենում արտահայտվում է հին ու բազմազան ձևերով։ Կրկնությունը կատարվում է բառերի կամ արմատների միացմամբ։ Կրկնության ժամանակ տեղի են ունենում հնչյունափոխական տարբեր երևույթներ՝ հնչյունների անկում (կորուստ), հավելում, ձայնավորների ու բաղաձայնների փոփոխություն և այլն։ Օրինակ՝ բարբառ, կսկիծ, թուխ-մուխ, քաղցր-մեղցր, գույնզգույն, խառնիխուռն, բարձրաբերձ, առք-փառք, կաս-կարմիր, առատ-առատ, ամուր-ամուր, մեծ-մեծ և այլն։ Սրանք հիմնականում հին շրջանի կազմություններ են։ Կրկնավորները ավելի բնորոշ են բարբառներին, քան գրական լեզվին։

Վերջին շրջանում մեր լեզվում ակտիվ գործածություն ստացան նախասովետական շրջանի որոշ կրկնավորներ։ Այդպիսիններից

են՝ ծլեն-ծլեն (լինել) (ՍՀ, 19/2—1965), շուռումուռ (տալ) (ՍՀ, 17/4—1964), կեռ-մեռ (անել) (ՊՍ, ԱՋ, 123), խլմլել (Փարիզ-Բեյրութ ճանապարհին էլ խլմլում են մի քանի գրառումներ, ՍԿ, ՔՔ, 5), խնդմնդալ (Խնդմնդում էին «Օթել պարոնի» հավաքարարուհիները, ՍԿ, ՔՔ, 59), ճոխ-ճոխ, ծալեծալ, մեկիկ-մեկիկ, հալհլել, լիուլի և այլն: Հայերենում բառակրկնության ժամանակ, ինչպես հայտնի է, առաջին բաղադրիչի որոշ հնչյուններ կամ վանկեր դուրս են ընկնում (կրճատվում են) կամ հնչյունափոխվում և նոր հնչյուն, հատկապես մ, ս, փ է ավելացվում առաջին եզրում (երկրորդ բաղադրիչը մնում է անփոփոխ), օրինակ՝ կաս-կարմիր, թափ-թաց, լեփ-լեցուն և այլն: Սովետական շրջանում ակտիվացան հատկապես 1-ին եզրում փ հնչյունի ավելացմամբ կազմված կրկնավորները. օրինակ՝ դափ-դատարկ (ՊՍ, ԱՋ, 159), ճեփ-ճերմակ (...անհատնում եմ էգիկին նոր տարվա գիշերը նորափեսայի դերում... կողքին կարապի պես հարսնացուն՝ ոտից-գլուխ ճեփ-ճերմակ, ՍՀ, 3/1—1962), ճիփ-ճիշտ (...ունի կյանքի արժանավայել ընկերուհի և ճիփ-ճիշտ իր նման մի դստրիկ, Ս. գրակ., 1965, № 3, 36), սիփ-սիպտակ, սեփ-սև, շիփ-շիտակ և այլն:

Ժամանակակից հայերենում կան մի շարք կրկնավոր բայեր, որոնք գալով բարբառներից՝ գործածական են դարձյալ գրական հայերենում. օրինակ՝ բոթբթել (կամ բոթբոթել), գլգլել, դաղդղել, դողդողալ, թափթփել, խաբխբել, խաղխղել, խղբղել, ծալծլել, ծակծըկել, ծամծմել, ծեփծեփել (կամ ծեփծփել), ծռմռել, կապկպել, կցմցել, ճաքճքել, մաղմղել (նաև մաղմաղել), չափչփել, պաչպչել, ջոկջկել (կամ ջոկջոկել), սողսողալ, տաշտշել, փորփրել, քաշքշել, քմսել և այլն[1]:

Նշված բառերի մեջ նկատվում են ձայնավորների հետևյալ տեսակի փոփոխություններ. 1) ա ձայնավորի փոփոխություն երկրորդ եզրում (դաղդղել, թափթփել, խաղխղել), 2) ա ձայնավորի փոփոխություն բաղադրության առաջին և երկրորդ եզրում (խղբղել), 3) ո ձայնավորի փոփոխություն երկրորդ եզրում (բոթբթել, ջոկջկել, ցոլցլել, փորփրել, դողդղալ), 4) ե ձայնավորի փոփոխություն (ծեփծփել):

Որպես հատկապես վերջին տասնամյակներին հատուկ երևույթ պետք է նշել, որ հարադրական որոշ կրկնավորներ թեքվում են դեպի կցականությունը: Այսպես՝ ծուռ ու մուռ, սուս ու փուս, սուտ-

---

1 Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 144:

մուտ, լեփ-լեցուն և այլ կրկնավորներ արդեն շատ դեպքերում գրվում և արտասանվում են միասին (ծուռումուռ, սուտումուտ, սուսուփուս (ՍԿ, ՔՔ, 435), լեփլեցուն (ՊՍ, ԱՁ, 220)), այսինքն՝ վերածվում են կցական բարդության։

3. ԲԱՂՀՅՈՒՍԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԵՐ

Բառակրկնությամբ արտահայտված բարդություններից զգալիորեն տարբերվում են այն բարդությունները, որոնց բաղադրիչները համադաս հարաբերության մեջ են գտնվում, իսկ ամբողջ բարդությունը միաժամանակ դրսևորում է այդ բաղադրիչների նշանակությունը։ Բառաբարդության այս եղանակը գործուն է եղել հայերենի զարգացման նաև նախորդ շրջաններում։ Այսպես՝ նախահոկտեմբերյան շրջանից են գալիս մասսայական-քաղաքական (աշխատանք), ազգային-ազատագրական (պայքար), վարչա-տնտեսական (ղեկավարություն), գիտա-մանկավարժական (հետազոտություն), պատմա-համեմատական (լեզվաբանություն), նախնադարյան-համայնական (կարգեր) և այլ բարդությունները։

Սովետական փուլում դրանց գործածությունը լայն տարածում ստացավ։ Առաջ եկան ու տարածվեցին այդպիսի կազմությամբ շատ այլ բառեր, ինչպես՝ հրթիռա-ավիացիոն, հրթիռա-տիեզերական (տեխնիկա), հրթիռա-միջուկային (զենք), հաշվետու-ընտրական (ժողով), դրամա-իրային (վիճակախաղ), քառակուսի-բնային (ցանք), կոլտնտեսային-սովխոզային (վարչություն), ժողովրդա-դեմոկրատական (կարգեր), մարքսիստական-լենինյան (կուսակցություն), ուսումնա-փորձնական (հողամաս), ակումբա-գրադարանային (հիմնարկներ), քաղաքական-դաստիարակչական (աշխատանք), ագիտացիոն-մասսայական (աշխատանք), գիտա-աթեիստական (պրոպագանդա), կուլտուր-կենցաղային (սպասարկում), կուլտուր-լուսավորական (հիմնարկներ), կաթնա-ապրանքային (ֆերմա) և այլն։ Այս բարդությունները մեր լեզվի մեջ ստեղծվել են ռուսերենի պատճենումով։

Նկատի ունենալով այդ բարդությունների բաղադրիչների խոսքի մասային պատկանելությունը, դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի՝

1. Երկու հարաբերական ածականներից կազմված բարդություններ. այդպիսիք են՝ կոլտնտեսային-սովխոզային, մարքսիստական-լենինյան, քաղաքական-դաստիարակչական և այլն։

2. Որակական և հարաբերական ածականներից կազմված բարդություններ։ Օրինակ՝ բարի-դրացիական։

3. Բարդություններ, որոնք կազմված են հարաբերական ածականներից, սակայն ածականակերտ ածանցի կրճատվելու հետևանքով առաջին բաղադրիչը ստացել է գոյականական ձև։ Դրանք բավական տարածված են մեր լեզվում. օր.՝ դրամա-իրային, երկաթա-միջուկային, ակումբա-գրադարանային, ժողովրդա-դեմոկրատական, էլեկտրոնա-հաշվային, ուսումնա-փորձնական և այլն։

Պետք է նշել, որ հիշյալ բարդությունների երկրորդ բաղադրիչի -ային և -ական ածանցները վերաբերում են նաև առաջին բաղադրիչներին. այսպես՝ դրամա-իրային նշանակում է «դրամային (դրամական) և իրային», երկաթա-միջուկային նշանակում է «երկաթային և միջուկային», նույն ձևով էլ ժողովրդա-դեմոկրատական՝ «ժողովրդական և դեմոկրատական», էլեկտրոնա-հաշվային՝ «էլեկտրոնային և հաշվային» և այլն։ Այդ տեսակետից դրանք էական տարբերություն չեն հանդես բերում հարաբերական ածականներից կազմվածների նկատմամբ։

Հիշյալ բարդությունները փաստորեն նույն կազմությունն ունեն, ինչ երկու հարաբերական ածականներից բաղադրվածները, միայն այն տարբերությամբ, որ դրանց առաջին բաղադրիչների ածանցները կրճատվել են, որի հետևանքով էլ նրանք ստացել են գոյականական ձև։ Բարդությունից դուրս այդ բաղադրիչները, անշուշտ, գոյական են, իսկ տվյալ բաղադրությունների մեջ՝ ածական։ Դրանց խոսքի մասային իմաստը այս դեպքում դրսևորվում է երկրորդ բաղադրիչների աջակցությամբ ու նրանց շնորհիվ։

Գրական հայերենի արդի փուլին բնորոշ է բաղհյուսական բարդությունների՝ կցականի վերածվելու նկատելի միտում։ Վերջին մի քանի տասնամյակներում բաղհյուսական մի շարք բարդություններ կա՛մ արդեն վերածվել են կցականների, կա՛մ էլ գտնվում են այդ ընթացքում։ Այսպես՝ գիտա-հետազոտական, նյութա-տեխնիկական, գիտա-աթեիստական, ֆիզիկա-մաթեմատիկական, ակումբա-գրադարանային, ուսումնա-փորձնական, մեքենա-տրակտորային, ուսումնա-դաստիարակչական, ժողովրդա-տնտեսական, գիտա-տեխնիկական, ֆիզիկա-տեխնիկական և այլն բաղհյուսական բարդությունները մասնագիտական գրականության մեջ և հատկապես մամուլում այլևս իբրև բաղհյուսական բարդություն գրեթե չեն գործածվում, նրանք գրվում և արտասանվում են միասին,

ստանալով բառական մեկ շեշտ։ Կարճ ասած՝ նրանց բաղադրիչները չունեն անջատ-անջատ գրություն և այդպիսի արտասանություն։ Օրինակ՝ «Այս բաներն ամեն ինչից լավ են արտահայտում երկու երկրների բարեդրացիական հարաբերությունները...» (ՍՀ, 3/3—1965)։ «Արտադրանքի որակի հարցը.... դառնում է ժողովրդատնտեսական ամենակարևոր խնդիրներից մեկը» (ՍՀ, 3/3—1965)։ «Աշխատանքի հարուստ փորձ են կուտակել նաև գիտաաթեիստական և մանկավարժական գիտելիքների համալսարանները...» (ՍՀ, 11/3—1965)։ «Այդ բանը տեղի է ունենում գլխավորապես... նյութատեխնիկական մատակարարման խափանումների հետևանքով...» (ՍՀ, 3/3—1965)։ «...որոնք վկայում են գիտատեխնիկական բարձր մակարդակի մասին» (ՍՀ, 11/3—1965)։ «Նրա ապագան են էլեկտրատեխնիկական, հղկող հաստոցների, սարքաշինական գործարանները» (Ս. գրակ., 1965, № 3, 105)։ «Բագրատ Ղարիբջանյանի անունը կրող մեքենատրակտորային կայանը այն հեռավոր կամուրջն է, որ...» (Ս. գրակ., 1965, № 3, 105)։ «Նյութական պայմանները կապահովի ոչ միայն ֆիզիկատեխնիկական գիտությունների, այլև կենսաբանական ու ֆիզիկական գիտությունների ամբողջ կոմպլեքսի արագ զարգացման համար» (ՍՀ, 23/3—1965)։

Հայերենի բառապաշարի մեջ մուտք գործեցին այնպիսի բարդություններ, որոնք կազմված են երկու գոյականներից, ունեն թվական լրացում և արտահայտում են չափի կամ քանակի գաղափար։ Դրանցից են՝ մարդ-օր, մարդ-ժամ, մեքենա-օր, կիլովատ-ժամ, լիտր-վայրկյան, ստանոք-պարտոք և այլն։ Սրանք լայն տարածում ունեն հատկապես մամուլի լեզվում։ Օրինակ՝ «Բոլոր մեխանիկները միասին կատարում են 45 մարդ-ժամ զանազան նորոգման աշխատանք» (ՍՀ, 28/11—1964)։ «1000 ձվի արտադրության համար ծախսվում է 12 մարդ-օր» (ՍՀ, 13/3—1964)։ «Մեքենաների ընդհանուր պարապուրդները կազմել են 379 հազար մեքենա-ժամ» (ՍՀ, 3/11—1964)։ «...ծախսել ենք նախատեսվածից ավելի այսքան հազար կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, այսքան լիտր-վայրկյան ջուր» (ՍՀ, 17/4—1965)։

Ընդգծված բարդությունները, ինչպես տեսնում ենք, կազմված են երկու գոյականներից, որոնցից երկրորդը սովորաբար արտահայտում է ժամանակի, իսկ առաջինը՝ գործողություն կատարողի կամ չափի գաղափար։ Այլ կերպ՝ առաջին բաղադրիչը հանդես է գալիս չափի, իսկ երկրորդը՝ ժամանակի միավորի դերում։ Այսպես՝

12 մարդ-ժամ աշխատանք նշանակում է 12 մարդու մեկ ժամում կատարածը, **10 մեքենա-օր** աշխատանք նշանակում է 10 մեքենայի մեկ օրում կատարածը:

Թվական որոշիչը կարող է վերաբերել նաև ժամանակի միավորներին: Այսպես՝ **12 մարդ-ժամ** աշխատանք կարող է նշանակել նաև 12 ժամում մեկ մարդու կատարածը: Այս դեպքում ընդգծվում է ոչ թե ժամանակի միավորների (ժամերի, օրերի, վայրկյանների), այլ գործողություն կատարողների քանակը:

Արդի գրական հայերենի բառային կազմում հատուկ տեղ են գրավում այնպիսի բարդություններ, որոնք կազմված են համադաս բաղադրիչներից և իրենց մեջ խտացնում են նրանց իմաստները: Դրանք բառային մեկ միավորի արժեք ունեն և ըստ էության կցական են:

Բարդության այդ ձևը լայն տարածում ստացավ հատկապես վերջին տասնամյակներում: Այդպիսիք են՝ խորհրդակցություն-սեմինար, տեսուչ-կազմակերպիչ, հիվանդանոց-պոլիկլինիկա, հյուրանոց-ռեստորան, ցուցահանդես-դասախոսություն, տուն-թանգարան, համերգ-դասախոսություն և այլն:

Բնագրային օրինակներ. «Երեք օր Բաքվում շարունակվում էր... մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության աշխատողների **խորհրդակցություն-սեմինար**...» (ՍՀ, 29/3—1964): «Անցորդների ուշադրությունն է գրավում ինքնատիպ մի կիսակառույց. դա **հիվանդանոց-պոլիկլինիկայի** ապագա շենքն է» (Եր., 1964): «Մենք պետք է կատարելագործենք արտադրական վարչությունների, հատկապես **տեսուչ-կազմակերպիչների** աշխատանքը» (ՍՀ, 8/3—1964): «...ներկայացված էր Լենինգրադի ֆիլհարմոնիայի Մ. Ի. Գլինկայի անվան փոքր դահլիճում կայացած **համերգ-դասախոսություններում**» (ՍՀ, 15/3—1964): Այդպիսի բարդություններ են նաև՝ հուշաթանգարան-արհեստանոց (ՍՀ, 12/3—1964), տուն-հուշաթանգարան (ՍՀ, 9/6—1964), հյուրանոց-պանսիոնատ (Եր., 29/8—1964), ցուցահանդես-վաճառք (ՍՀ, 5/12—1964), տոնավաճառ-ցուցահանդես (ՍՀ, 14/2—1964), ցուցահանդես-տոնավաճառ (Եր., 19/8—1964), մանկապարտեզ-մանկամսուր (ՍՀ, 28/3—1964), մսուր-մանկապարտեզ (ՍՀ, 4/9—1964), պահարան-սառնարան (Եր., 12/5—1964), պահեստ-խանութ (Եր., 11/9—1964), սրճարան-տաղավար (Եր., 29/4—1964), դիմում-նամակ (ՍՀ, 20/12—1964), դիմում-գանգատ (ՍՀ, 12/6—1964), ակումբ-գրադարան (ՍՀ, 23/2—1965), թանգարան-ցուցահանդես (ՍՀ, 2/4—1965), սրճարան-խաշարան (Եր., 17/3—

1965), տիեզերագնաց-օդաչու (ՍՀ, 1913—1965), վագոն-ննջարան, սալոն-վագոն, վագոն-խանութ, վագոն-ռեստորան, խրճիթ-ընթերցարան, տուն-թանգարան, բուֆետ-ճաշարան և այլն։

Իմաստային տեսակետից նշված բարդությունները ունեն որոշ տարբերություններ։ Ելնելով այդ տարբերություններից, դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի։

1. Բարդություններ, որոնց բաղադրիչները իմաստով խիստ մոտ են և մերձավոր հասկացություններ են արտահայտում։ Այդպիսի բարդություններում երկու բաղադրիչների իմաստները համազոր են. օրինակ՝ խորհրդակցություն-սեմինար, տեսուչ-կազմակերպիչ, հիվանդանոց-պոլիկլինիկա, գրադարան-ընթերցարան, դիմում-նամակ, դիմում-գանգատ, մրցանակ-գավաթ, բուֆետ-ճաշարան և այլն։ Խորհրդակցություն-սեմինար բարդության մեջ հավասարապես դրսևորվում են և՛ խորհրդակցության, և՛ սեմինարի իմաստները։ Խորհրդակցություն-սեմինարը այն հավաքն է, որն ունի և՛ խորհրդակցության, և՛ սեմինարի բնույթ։ Նույն ձևով էլ տեսուչ-կազմակերպիչ բարդության մեջ միաժամանակ դրսևորվում են և՛ տեսուչի, և՛ կազմակերպչի իմաստները։ Տեսուչ-կազմակերպիչը այն անձն է, որը հսկում և կազմակերպում է այս կամ այն բնագավառի աշխատանքները։ Այդպես էլ գրադարան-ընթերցարան բարդության մեջ ընդգծվում են և՛ գրադարանի, և՛ ընթերցարանի իմաստները։ Դա այն հիմնարկն է, որը ընթերցողներին սպասարկում է համապատասխան գրականությամբ և ունի ընթերցասրահներ։ Հիվանդանոց-պոլիկլինիկան այն հիմնարկն է, որտեղ կատարվում է հիվանդների ստացիոնար և ոչ ստացիոնար բուժում։ Մսուր-մանկապարտեզ և մանկապարտեզ-մանկամսուր բարդություններում դրսևորվում են այդ երկու հիմնարկներին բնորոշ հատկանիշները և այլն։

Այս բարդություններին բնորոշ է նաև այն, որ նրա բաղադրիչներից մեկը իմաստային որոշ կողմերով ներառվում է մյուսի մեջ, որի հետևանքով էլ նրանց իմաստային կապն ու ընդհանրությունը ավելի են սերտանում։

2. Բարդություններ, որոնց բաղադրիչները հեռավոր կապի մեջ են գտնվում և 2-րդ բաղադրիչի դրսևորած իմաստը գերադասություն ունի առաջինի նկատմամբ։ Այստեղ իշխող իմաստը երկրորդ բաղադրիչինն է, առաջինը որոշ չափով լրացնող, պարզաբանող բնույթ ունի։ Այդպիսիք են՝ վագոն-խանութ, վագոն-ննջարան,

դպրոց-ռեստորան, տուն-հուշաթանգարան, վագոն-ռեստորան, տուն-թանգարան և այլն։

Հյուրանոց-ռեստորան բարդության մեջ շեշտվում է ռեստորանի գաղափարը, բայց միաժամանակ նշվում է, որ ռեստորանն ունի հյուրանոցային սպասարկում։ Այդպես նաև դպրոց-ռեստորան, վագոն-ռեստորան, վագոն-խանութ, վագոն-ննջարան, տուն-թանգարան, տուն-հուշաթանգարան, պահեստ-խանութ և այլ բարդություններում ընդգծվում է երկրորդ բաղադրիչի դրսևորած իմաստը։ Առաջին բաղադրիչները որոշում, պարզաբանում են երկրորդ բաղադրիչներին։

3. Բարդություններ, որոնց մեջ առաջին բաղադրիչի արտահայտած իմաստը զուգակցվում է երկրորդի դրսևորած հասկացությամբ. օրինակ՝ ցուցահանդես-դասախոսություն, համերգ-դասախոսություն, ցուցահանդես-տոնավաճառ (Եր., 19/8—1964), ցուցահանդես-վաճառք (ՍՀ, 5/12—1964) և այլն։ Հիշյալ բարդությունների մեջ իշխում է ցուցահանդեսի և համերգի իմաստը, որը զուգակցվում է դասախոսություն կամ վաճառք իմաստով։ Ցուցահանդես-դասախոսություն նշանակում է ցուցահանդես, որի դիտումը զուգակցվում է դասախոսությամբ, որը դիտելու ժամանակ տեղի է ունենում դասախոսություն։ Համերգ-դասախոսություն նշանակում է համերգ, որը զուգակցվում է համապատասխան դասախոսությամբ, այսինքն՝ համերգ, որի ժամանակ (սկզբում կամ ընթացքում) տեղի է ունենում դասախոսություն։ Ցուցահանդես-տոնավաճառ նշանակում է ցուցահանդես, որտեղ կատարվում է նաև ապրանքների վաճառք։ Նույն ձևով էլ ցուցահանդես-վաճառք նշանակում է առարկաների ցուցադրում, որը զուգակցվում է նրանց վաճառքով։

Այս տիպի բարդությունները, ինչպես նշվել է, մեր լեզվի մեջ մուտք են գործել հիմնականում սովետական շրջանում։ Հայերենի զարգացման արդի փուլին բնորոշ է դրանց ակտիվացման ու լայն տարածում ստանալու զգալի միտում։

4. ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԵՐ

Նորակերտ բառերի զգալի մասը կազմված է իսկական բարդությամբ։ Իսկական բարդությունը բառաբարդության այն տեսակն է, որի բաղադրիչները, որոնք արմատներ կամ բառեր են, բարդու-

թյան մեջ չեն պահպանում իրենց անկախ, ինքնուրույն իմաստները, բարդությունը ավելի լայն իմաստ է արտահայտում, քան նրա բաղադրիչները, այլև բարդության առաջին բաղադրիչը, իբրև կանոն, լինում է երկրորդի լրացումը: Կարճ ասած՝ իսկական բարդության բաղադրիչների միջև մթագնված է շարահյուսական կապը, և բարդության երկրորդ եզրը սովորաբար արտահայտում է հիմնական իմաստը:

Իսկական բարդությամբ կազմված բառերը կարելի է խմբավորել մի քանի եղանակով: Այսպես՝ մի դեպքում կարելի է հիմք ընդունել բաղադրիչների խոսքի մասային պատկանելությունը, օրինակ՝ ձյունաներմակ, լուսավարար, բերհառատ և այլն բարդությունները կազմված են գոյական և ածական բաղադրիչներից, իսկ ականաձիգ, դաշտահայաց, լուսաքաքախ և այլն բարդությունները՝ գոյականից և բայարմատից:

Մի այլ դեպքում կարելի է հիմք ընդունել ամբողջ բարդության խոսքի մասային պատկանելությունը. օրինակ՝ հրթիռանետ, նաշացանկ, մարդաբույծ և այլն բարդությունները գոյականի խոսքի մասային իմաստ ունեն, իսկ մեղրաշուրթ, հուզառատ, արևահամ և այլն բաղադրությունները՝ ածականի: Բարդությունների խմբավորման ժամանակ հիմք կարելի է ընդունել բաղադրիչներից որևէ մեկի փոխառյալ և ոչ փոխառյալ լինելը: Այսպես՝ բետոնապատ, ռադիոկենտրոն, ֆոտոժապավեն բարդ բառերի առաջին բաղադրիչը փոխառություն է, երկրորդը՝ բնիկ հայերեն, իսկ լայնէկրան, գունառեկլամ բառերի մեջ ընդհակառակն՝ առաջին բաղադրիչն է բնիկ հայերեն, երկրորդը՝ օտարազգի: Վերջապես, նորակազմ բառերը կարելի է խմբավորել ըստ գործածության ոլորտի:

Իսկական բարդությամբ կազմված բառերը խմբավորում ենք ըստ նրանց բաղադրիչների խոսքի մասային պատկանելության, ըստ գործածության ոլորտի և ըստ բաղադրիչների փոխառյալ ու ոչ փոխառյալ լինելու հատկանիշի[2]:

Հայերենում գոյականը, ածականը, դերանունը և այլն, բաղադրվելով միմյանց կամ այլ խոսքի մասերի հետ, կազմում են

---

2 Նշված բարդությունները չենք խմբավորում ըստ նրանց խոսքի մասային պատկանելության, քանի որ բառակազմական տեսակետից առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում:

բարդություններ։ Մեծ տարածում ունեն հատկապես երկու գոյականների, գոյականի և բայարմատի, ածականի և գոյականի բաղադրությամբ կազմված բարդ բառերը։ Նորակերտ բառերի մեջ քանակական տեսակետից աչքի են ընկնում գոյական բաղադրիչներից կազմվածները։

Գոյական բաղադրիչներից կազմված բարդություններ։ Հայերենի բառապաշարի մեջ զգալի տեղ են գրավում գոյական բաղադրիչներից կազմված բարդությունները։ Պետք է նկատել, որ սովետական փուլում գոյական բաղադրիչներով բարդությունները լայն տարածում ու ակտիվություն են ստանում։ Հիշյալ եղանակով նոր շրջանում կազմված բարդություններից են՝ ականազերծում (Եր., 13/6—1964), աշխարհաերթ (ՆՁ), ականապատում (ՍՀ, 26/5—1965), ազգահավաքում (ՍՀ, 13/3—1965), արեգնաբիբ (ՀՇ), արեգնաթագրն (ՆՁ, ԱԳ, 138), արյունավերք (ՀՇ), արևահամ (ԵՉ, ԸԵ, 48), արևափայլ (ԵՉ, ԸԵ, 473), արնահամ (ԵՉ, ԸԵ, 39), արծաթաձայն (ԵՉ, ԸԵ, 212), բրոնզաբազուկ (ՆՁ), գինեբուրմունք (ՊՍ, ԱՁ, 121), գիշերընկեր (Ավ., 25/2—1965), դաշտահանդես (ԳԹ, 29/11—1963), դեղամիջոց (ՍՀ, 24/11—1964), եղյամաշունչ (ՊՍ, ԱՁ, 115), երազաթև (ՆՁ), երկաթազգեստ (ՆՁ), երկաթազուն (ՆՁ), երկաթադեմ (ԵՉ, ԸԵ, 194), երկաթաթերթ (218), երկաթաթև (160), երկաթաքայլ (241), երգացավ (ՊՍ, ԱՁ, 179), խարույկահանդես (ԳԹ, 3/3—1961), կարգացուցակ (Սխ, ՄԳՄ, 177), կենսածով (ՆՁ), կենսահոսանք (Եր., 1959, № 227), կայծակնափայլ (ՑՎ, ՄԼ, 139), համճարալույս (ՀՇ, ՔՀ, 2, 225), հայապահպանություն (ՍԿ, ՔՔ, 124), հնչույթախումբ (ԷԱ, ԼՆ, 239), հրաթև (ԵՉ, ԸԵ, 167), հրասիրտ (24), ձյունամրրիկ (Սխ, ՄՍ, 819), ցավաժպիտ (ՍՁ, ՊԹ, 11), պողպատածայր (ՍՁ, ՊԹ, 161), ձյունագիշեր (ԵՉ, ԸԵ, 11), ճաշացանկ (Եր., № 70, 1960), ճաշացուցակ (Եր., № 288, 1959), մահուղի (ՊՍ, ԱՁ, 204), մահակնճիռ (ՀՇ), մեղրագիշեր (ՀՇ), մեղրատարի (ՀՇ), մեղրաշուրթ (ՀՇ, ՔՀ, 324), մեսրոպանիշ (Ս. գրակ., 1963, № 11, 70), ոսկեհուն (ԵՉ, ԸԵ, 240), ոսկեձայն (161), պայտակրունկ (ՍՁ, ԵԺ, 344), պարբերագիրք (ՍԿ, ՔՔ, 212), սենյակազգեստ (Եր., 23/2—1963)[3], սիրաշրշյուն (ՀՇ), վագրամռունչ (ՀՇ), վահագնափայլ (ՆՁ, ԱԳ, 125), տարեժողով (ՍՀ, 23/3—1965), տագնապասիրտ (ԵՉ, ԸԵ, 248), վարձութաշենք (ՍՀ, 2/8—1964), վա-

---

3 Գրական լեզվի մեջ գործածվում է նաև սենեկազգեստ ձևը (տե՛ս «Քաջ Շվեյկի արկած.», հ. 1, 1936, էջ 187)։

ճառասեղան (Եր., 27/5—1964), վաճառասրահ (Եր., 29/5—1964), ուսուցքագոյացում (ՍՀ, 21/3—1965), ուսուցքաբուժություն (ՍՀ, 21/3—1965) և այլն։

Գոյական բաղադրիչներով բարդությունների մեջ կան նաև անհաջող կազմություններ։ Այսպես՝ հանճարաշառաչ բառը, որ կազմել է Ն. Զարյանը, իմաստի հստակություն չունի։ Անհաջող կազմություն են նաև բույր բաղադրիչով կազմված վառոդաբույր (ՆՁ), դիակնաբույր (ՆՁ), ախրաբույր (ՀՇ) և այլն բարդությունները։ Դիակը և վառոդը չեն կարող բույր ունենալ։ Բույր բառի իմաստը սովորաբար հաճելի հոտի զգացողության հետ է կապվում։ Այդ բարդությունները արհեստական կազմություն են։ Անհաջող է նաև անասնաճոտ (ՍՀ, 5/12—1964) բարդությունը։ Ճոտը վերաբերում է թռչունների խմբին, ուստի ավելորդ է դառնում անասնաճոտ բառի ստեղծումը։

Երկու գոյականներից կազմված բարդությունների բաղադրիչները միացվում են կա՛մ հոդակապով, կա՛մ առանց դրան, մի բան, որ հատուկ է հայերենի բառակազմությանը։ Սակայն հարմար չէ միևնույն բարդության բաղադրիչները միացնել մերթ հոդակապով, մերթ առանց հոդակապի, դրանով ստեղծվում է անմիօրինակություն, որը չպետք է խրախուսվի։ Այսպես, այրմարդ (ԴԴ) և այրամարդ (ՆՁ, ՍԳ, 13), հոլովակուղի (Եր., 1960 թ., № 305), հոլովակուղի (ՍՀ, 1960, № 144)։

Գոյականից և բայարմատից կազմված բարդություններ: Գրական հայերենում լայն տարածում ունեն նաև գոյականից և բայարմատից բաղադրված բարդությունները։ Գոյականից և բայարմատից կազմված բարդությունների երկրորդ բաղադրիչը իսկական բարդության առանձնահատկության համաձայն, արտահայտելով բարդության հիմնական իմաստը, իրեն է ենթարկում առաջին բաղադրիչը, իբրև իր լրացում։ Այդ պատճառով էլ բարդությունը վերլուծելիս (բանդելիս) նրա սկզբի բաղադրիչը (գոյականը) ստանում է վերջինի (բայի) պահանջած հոլովը։ Ներքին հարաբերության տեսակետից բաղադրության գոյական մասը մթագընված կերպով արտահայտում է հոլովական տարբեր իմաստներ։

Այսպես՝ աշխարհասասան, ականանետ, ականակիր, գահատյաց և այլ բարդությունների գոյական բաղադրիչները ունեն հայցական հոլովի իմաստ, արեգնածին, գունազուրկ, ատոմազերծ, ամպրոպածին և այլ բարդությունների գոյական բաղադրիչները՝ բացառականի, արևազօծ, հայրենապարպալ, արյունամած բարդու-

թյունները՝ գործիականի, իսկ գիշերասույզ բարդության գոյական բաղադրիչը՝ ներգոյականի և այլն։ Գոյականից և բայարմատից են կազմված նաև գինեհարույց (ՊՍ, ԱՋ, 132), դաշտահայաց (ՍՋ, ՀԲ, 117), հայրենադարձ, մատատար (ՍՋ, ՊԹ, 522), ականդրիչ (Ն. տ., 403), հրթիռանետ, հրթիռաձիգ, նրգաստեղծ, աղգամեծար, աղփափոյու, հողմաերեր, երկաթաշեն, միջուկաղերծ, տագնապատանջ, ձողացատկ և այլն։

Գոյական և բայական բաղադրիչներով բարդությունները լայն տարածում ունեն մեր կյանքի բազմաթիվ բնագավառներում։ Դրանց մեծ մասը մտնում է գրական լեզվի ակտիվ բառապաշարի մեջ։

Գոյականից և բայարմատից բաղադրված բարդությունների մեջ կան նաև անհաջող կազմություններ. օրինակ՝ գոմաթաթախ (ՆՋՀ, 95), չարաթով (ՆՋ), ռազմաթով (ՆՋ), ոտնդիր (ՔԹ) և այլն։ Գոմով չի կարելի թաթախվել, չարությունը չի կարող թովել։

Նորակերտ բարդությունների մեջ նկատվում է նաև անմիօրինակություն, մի բան, որ խրախուսելի չէ։ Այսպես՝ «Երեկոյան Երևանը» գործածում էր շմշկասահ, իսկ «Հայաստանի ֆիզկուլտուրնիկը» և «Սովետական Հայաստանը»՝ շմշկասահք ձևը։ Մեր կարծիքով, շմշկասահք-ը, որ կազմվել է հեծանվավազք, մրցավազք և այլ բառերի նմանակությամբ, բավական հաջող է, այն իմաստի տեսակետից չի զիջում շմշկասահ ձևին։ «Հայաստանի ֆիզկուլտուրնիկը» ճիշտ է վարվում, որ նորակազմ բարդությունների երկրորդ բաղադրիչը հաճախ գոյականացնում է ք ածանցի միջոցով։ Այդպես են կազմված նաև զուգասահք, շմշկավազք և այլ բառերը։

Գոյականից և բայարմատից կամ բայահիմքից բաղադրված բարդությունների մեջ երբեմն առաջին բաղադրիչը հանդես է գալիս առանց -ություն ածանցի, որի պատճառով էլ թվում է, թե այն ոչ թե գոյական, այլ ածական է։ Օրինակ՝ ուրախահորդ (Եր,. 1962, № 298), տխրահույզ (...և սաներին ընդունեցին տխրահույզ սիրով, ՑՎ, ՄԼ, 112), չորադիմացկուն (ՍՀ, 5/3—1965) և այլն բարդությունների առաջին բաղադրիչները գոյականական իմաստ ունեն (ուրախություն, տխրություն, չորություն)։ Եվ իսկապես, ուրախահորդ նշանակում է ուրախության հորդելը, տխրահույզ՝ տխրությունից հուզված և այլն։

Գոյական և ածական բաղադրիչներով կազմված բարդություններ: Գոյական և ածական բաղադրիչներով նորաստեղծ բարդությունները գրական հայերենում քիչ են վերը քննված բարդությունների համեմատությամբ։ Թեև բարդության այդ եղանակը գործուն

է եղել նաև հայերենի զարգացման մինչսովետական շրջանում, սակայն հայերենի բառային կազմի մեջ այնուամենայնիվ սակավ են գոյական և ածական բաղադրիչներով բարդությունները։ Նշված բաղադրիչներով են կազմված տնամերձ, սահմանամերձ, արեգնամերձ (ՍՀ, 24/3—1965), արևաշեկ (ՆՁ), ատամախև (ՆՁ), թավշավառ (ՆՁ), լուսավարար (ՆՁ), կաթնաճերմակ (ԳԹ, 17/7—1964), հայաշխարհիկ (ՊՍ, ԱՁ, 8), ձյունաճերմակ (ՆՁ, ԱԳ, 92), ոսկեխարտյաշ (ՆՁ), վիշապաքաչ (ՆՁ, ԱԳ, 121), ցասմախառն (ՆՁ), խոռքառատ (ՍԿ, ՔՔ, 76), հուզառատ (ՊՍ, ԱՁ, 212), բևեռապինդ (ՍՁ, ՊԹ, 387), տոնօրյա (ՍԿ, ՅԿ, 220) և այլն։

Նկատենք, որ գոյական և ածական բաղադրիչներով կազմված բառերի մի զգալի մասը սակավ գործածական է բանավոր խոսակցական լեզվում։ Դրանց մի մասը լայն տարածում չունի նաև գեղարվեստական գրականության մեջ։ Դրանց մեջ կան նաև անհաջող կազմություններ. օրինակ՝ թուրքախավար (ՊՍ, ԱՁ, 14), իմաստախոր (Ս. արվ., № 12, 1957, 48), հողմակայուն (ՆՁ), շանթակայուն (ՆՁ), վարդականաչ (Եր., 6/4—1964), վշտագործ (ՀՇ) և այլն։

Ածական և գոյական բաղադրիչներով կազմված բարդություններ: Ածական և գոյական բաղադրիչներով բարդությունները բավական տարածված են գրական հայերենում։ Դրանց մի զգալի մասը նորաբանություն է։ Կան նաև այնպիսիները, որոնք նոր շրջանում են ակտիվ կիրառություն ձեռք բերել։ Հիշյալ եղանակով են կազմված՝ ահագնաթափ (ՆՁ, ԱԳ, 101), ահագնահասակ (ԳԹ, № 30, 1960), ահեղաշունչ (ՍՀ, 16/2—1965), աղնվախոհ, բարձրաձերպ (ՆՁ), բարձրախոհ (ԵՁ, ԸԵ, 269), քաղցրամեղրիկ (ՆՁՀ, 151), բարենպատակ (ՍՁ, ՊԹ, 469), գաղտնաժպիտ, գաղտնաշշուկ (ՀՇ), գանգրագիսակ (ՆՁ), գանգրասաղարթ (ԳԹ, 7/10—1964), դժնաձայն (ԵՁ, ԵԺ, 97), երկարաժամկետ (ՍՀ, 8/5—1964), լիաբերք (ԵՁ, ԸԵ, 284), լիահնչյուն (180), ծանրախոհ (231), ծանրականչ (ՊՍ, ԱՁ, 65), ճոխափայլ (ՍԿ, ՔՔ, 183), մեծամայր (ՍԿ, ՅԿ, 458), մեծաշուքթ (ՍԿ, ՔՔ, 252), մոլորաքայլ (ՊՍ, ԱՁ, 126), ճերմակգլուխ (ՔԹՊ), չարաժպիտ (ԴԴՎ, 70), կլորգլուխ (29), խորաթախիծ (44), նենգաժպիտ (ԴԴՎ), նրբահոնք (Եր., 31/3—1964), մեծաքանքար (ԵՁ, ԸԵ, 215), մանկաժպիտ (150), կարտերիզ (211), շորորաքայլ (ՍԿ, ՄՍ, 534), շքասենյակ (ՍՀ, № 80, 1960), շքասրահ (Ավ., № 30, 1960), շքեղահանդերձ (ԵՁ, ԵԺ, 291), վեհխարաքայլ (Ս. գրակ., № 11, 1960, 73), տրտմաթախիծ (ԵՁ, ԸԵ, 83),

տրտմաշերտ (Ս. գրակ., № 1, 1964, 83), տխրաբարբառ (ԵՉ, ԸՆ, 105), փափկաճաշակ (ՀՏ, ԳՓ, 219), տխրահանդերձ (ԵՉ, ԸՆ, 480), ուրախառիթ (ՍԿ, ՔՔ, 194), վիթխարամարմին (ՑՎ, ՄԼ, 149)։

Ածական և գոյական բաղադրիչներով են կազմված նաև առատաբուռն (ՆՉ, ԱԳ, 41), գեղաբազուկ (Ն. տ.), ծանրախավար (ՆՉ), ծանրահոգս (45), կապտամութ (ՆՉ), հսկայակույտ (75), ճոխազգեստ (63), մեծագունդ (ՆՉ), մեծահունչ (ՆՉ), մեծամբոխ (ՆՉ, ԱԳ, 75), մեծափաթիլ (ՆՉ), մեղմաթև (ՆՉ), մոլեգնատարափ (ՆՉ, ԱԳ, 89), մռայլատես (ՆՉ, ԱԳ, 104), չարառիթ (ՆՉ, ԱԳ, 14), պերճասյուն (ՆՉ, ԱԳ, 119), վիթխարաթափ (ՆՉ), վիթխարածավալ (ՆՉ), քաջամայր (ՆՉ) և այլն։

Գրական հայերենի բառապաշարի մեջ կան մեն *բաղադրիչով որոշ բարդություններ, որոնք կազմվել ու լայն տարածում են ստացել նոր շրջանում։ Դրանցից են՝ մենահամերգ (Եր., 7/5—1964), մենահնչույթ (ԷԱ, ԳՔ, 262), մենոլորտ (հնչույթ) (ԷԱ, ԳՔ, 213) և այլն։*

Նշված բաղադրիչներով բարդությունների մեջ կան մի քանի անհաջող օրինակներ. այսպես՝ տրտմաշերտ (Ս. գրակ., № 1, 1964, 83), գեղաերկինք (Ս. արվ., 1957), դառնաթով և այլն։

Ածականից և բայարմատից կազմված բարդություններ: *Ածականից և բայարմատից բաղադրված բառերը նույնպես գալիս են մեր լեզվի զարգացման հնագույն շրջանից։ Նոր շրջանում հիշյալ եղանակով ոչ միայն նոր բարդություններ ստեղծվեցին, այլև բավական ակտիվացան մինչև այդ կազմված որոշ բառեր։ Հիշյալ եղանակով կազմված բարդություններ են՝ ազատասլաց, ազատաթռիչ, ազատահաճ (ՆՉ, ԱԳ, 53), բարձրացատկ (Եր., 17/8—1964), դառնակեղ (ՆՉ), դժվարահաճ (ՍԿ, ՔՔ, 301), դժվարասորս (ՎԱ), դյուրավառ (ՍՀ, 4/6—1964), դյուրահաճ (Եր., 5/3—1961), թանձրանիստ (ՆՉ), ժանտահայաց (Ս. գրակ.), հեշտագրգիռ (ՍԽ, ՄՍ, 291), հեշտասահ (ՆՉ), հնարուխ (ՀՇ), մեծադղբաղ (ՆՉ), վեհասլաց (ՆՉ, ԱԳ), տխրահույզ սեր (ՑՎ, ՄԼ, 112), քաղցրաթով (ՆՉ), քնքշածոր լույս (ՑՎ, ՄԼ, 236), թեթևընթաց (ՔԹ), ծանրահայց (ԴԴՎ, 182) և այլն։*

Ածական բաղադրիչներով բարդություններ: *Ածական բաղադրիչներով բարդությունները նույնպես լայն տարածում ունեն արդի գրական հայերենում։ Դրանց մի զգալի մասը նոր շրջանի կազմություն է։ Կան և այնպիսիները, որոնք թեև գալիս են գրաբարյան շրջանից, բայց գրաբարի մահացումից հետո աստիճանաբար*

անցել են պասսիվ գործածության։ Դրանց մի մասը ակտիվ կիրառություն է ստացել հատկապես սովետական փուլում։

Ածական բաղադրիչներով բարդությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ նկատի ունենալով բաղադրիչների՝ իրար նկատմամբ ունեցած հարաբերությունը.

1. Բարդություններ, որոնց բաղադրիչները համադասական հարաբերության մեջ են գտնվում։

2. Բարդություններ, որոնց բաղադրիչները ստորադասական հարաբերության մեջ են գտնվում։

Համադասական հարաբերության մեջ են գտնվում հետևյալ բարդությունների ածական բաղադրիչները. ահագնավիթխար, գորշակապտավուն, դեղնակարմիր, դեղնասպիտակավուն, դեղնականաչավուն, թուլչագեղ (ՆԶ), խառնահոծ (ՆԶ), կարմրագորշ (ՑՎ, ՄԼ, 120), կարմրադեղին (ԴԴՎ), կարմրաշեկ (ՆԶ), հեզագեղ (ՆԶ), նրբամնաղուկ (ՀՍ, ՆԴԲ, 240), պերճագեղ (ՆԶ), վիթխարահզոր (ՍՀ, 15/4—1964), տխրամռայլ (ԳԹ, № 35, 1960), տխրուրախ (ՀՇ), տխրալալուկ (ՊՍ, ԱԶ, 211), քնքշահեղ (Թե ինչ է շրշում ուռին քնքշահեղ, ՇԹ, ՊՀ, 29), հեզաճկուն, ժանտադաժան, չարաժանտ (ԵՉ, ԸԵ, 481), մեծադժվար (473), վիթխարահսկա (270), հսկավիթխարի (274) և այլն։

Ստորադասական հարաբերության մեջ են գտնվում հետևյալ բարդությունների ածական բաղադրիչները. ահեղալուռ (ՀՇ), բարձրակիրթ (ՍՀ, 20/5—1964), դժվարահասկանալի[4] (Ս. դպր., 3/4—1964), դյուրամատչելի (ԽՀ, 5/1—1922), մանրաստույգ դիտող (Եր., 11/9—1964), քաջահայտ (ՆԶ, ԱԳ, 135), նրբակիրթ (ՑՎ, ՄԼ, 314), տոնօրյա (ՍՀ, 14/1—1972), նորօրյա (ՍՀ, 29/12—1965), հեզահնչուն (ՍԶ, ՊԹ, 559) և այլն։

Ածական բաղադրիչներով կազմված բարդությունների մեջ կան նաև անհաջող կազմություններ. օրինակ՝ մանրատոկուն, մանրաստույգ և այլն։

Դերանունից և այլ խոսքի մասերից բաղադրված բարդություններ: Հայերենում բավական տարածված են դերանվամբ և այլ խոսքի մասով բաղադրված բարդությունները։ Այսպես՝ հին շրջանի

---

4 Նախահոկտեմբերյան շրջանում հանդես էր գալիս իբրև հարադրություն (դժվար հասկանալի), արդի փուլում այն երբեմն գործածվում է որպես խսկական բարդություն (դժվարահասկանալի)։ Մեր լեզվի մեջ այժմ նկատվում է շատ հարադրական բարդությունների՝ համադրականի վերածվելու միտում։

կազմություններ են՝ ինքնաբավ, ինքնագիր, ինքնագյուտ, ինքնագլուխ, ինքնադատ, ինքնազարդ, ինքնալույր, ինքնախոս, ինքնակալ, ինքնածին, ինքնակործան, ինքնահաճ, ինքնահաս, ինքնահոժար, ինքնաշարժ, ինքնասաստ, ինքնասաց, ինքնաստեղծ, ինքնավարժ, ինքնիշխան և այլն։ Նշված բառերի մեծ մասը մտնում է արդի հայերենի ակտիվ բառապաշարի մեջ։ Դերանվամբ և այլ խոսքի մասերով բաղադրված բարդությունների մեջ որոշակի տեղ են գրավում սովետական փուլում կազմվածները։ Դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի՝ հիմք ընդունելով երկրորդ բաղադրիչների խոսքի մասային պատկանելությունը։

Դերանունից և բայարմատից բաղադրված բարդություններ: Հայերենի բառային կազմը համալրվեց նաև դերանվամբ և բայարմատով բաղադրված բարդ բառերով։ Դրանցից են՝ *ինքնագնաց* (ՍՀ, 16/2—1965), *ինքնաթափ* (ՍՀ, 14/5—1964), *ինքնաթուխ* (Շնքսպիր, Ալ, 1938, 155), *ինքնաթիռ*, *ինքնահիաց* (Եր., 9/5—1964), *ինքնանկար* (ՍՀ, 1965, № 2, 12), *ինքնասուզվ* (ԳԹ, 1959, № 23), *ինքնընթաց* (ՍՀ, 5/5—1964), *ինքնապաստան* (ՍԿ, ՔՔ, 302), *ինքնահոս*, *ինքնամեծար*, *այլամերժ* և այլն։

Դերանուն և գոյական բաղադրիչներով բարդություններ: Դերանունից և գոյականից բաղադրված բարդությունները նույնպես զգալի տեղ են բռնում հայերենի բառապաշարի մեջ։ Վերջին շրջանում ստեղծված բարդություններից են՝ *ինքնազատում*, *ինքնաարտահայտում* (ՍՀ, 20/2—1965), *ինքնահանգստացում* (Ցվ, Մլ, 800), *ինքնակառավարում* (ՍՀ, 23/4—1964), *ինքնակարգավորում* (ՍՀ, 2/9—1964), *ինքնակրկնում* (ԳԹ, № 10, 1960), *ինքնահսկում* (ՍՀ, № 206, 1963), *ինքնամերկացում* (ՍՀ, 9/2—1965), *ինքնայրում* (ՊՍ, ՄԱՄ, 94), *ինքնանեղում* (ՍՀ, 9/2—1965), *ինքնասպասարկում* (ՍՀ, 8/2—1964), *ինքնավիրահատում* (Եր., № 181, 1959), *ինքնավիրավորում* (Շվ. արկ., 69), *ինքնաժխտում* (Ցվ, Մլ, 340), *ինքնարդարացում* (ՍԶ, Եժ, 369), *ինքնամխիթարում* (Ցվ, Մլ, 689), *ինքնաուղղում* (ԼՏ, Եժ, 105), *ինքնաքննադատում* (ՍԿ, ՔՔ, 39), *ինքնագոհություն* (ՍՀ, 3/4—1965), *ինքներդություն* (ՍՀ, 9/2—1965), *ինքնօտարացում* (ՄՓՀ, 69), *ինքնակարեկցանք*, *ինքնաբնութագիր*, *ինքնաթմրկահարություն* և այլն։ Ինչպես տեսնում ենք, վերը նշված բարդությունների մեծ մասի երկրորդ բաղադրիչները բայանուններ են։

Թվականով և այլ խոսքի մասով կազմված բարդություններ: Գրական հայերենում բավական տարածված են նաև թվական բա-

ղադրիչով բարդությունները։ Դրանց մեծ մասը գալիս է մեր լեզվի զարգացման նախահոկտեմբերյան փուլից։ Այսպես, օրինակ՝ հազարամյա, հազարաձյուղ, եռաբարբառ, եռահյուս, եռաձայն, եռահարկ, երկձայն, երկմիտ, երկիմաստ, քառաթև, քառակողմ, յոթամյա, հարյուրամյա և այլն։

Վերջին տասնամյակներում մեր լեզվի բառային կազմի մեջ մտան թվական բաղադրիչով բազմաթիվ բառեր։ Այդ բարդություններից են՝ երկծրագիր (ՍՀ, 10/5—1964), երկհերթ (ՍՀ, 8/3—1964), երկհնչյուն (ԷԱ, ԳՔ, 264), երկտարեցի (ՍՀ, 28/3—1964), երկփակ (ԷԱ, ԳՔ, 262), երկամարտիկ (Հ. ֆիզկ., 5/1—1965), հազարաբաժիք (ՆԶ, ԸՆ, 257), հազարահունչ (ԱՎ, 10), հազարաբույր (ՊՍ, ԱԶ, 247), հազարերանգ (ՍՀ, № 185, 1960), եռահնչույթ (ԷԱ, ԳՔ, 262), եռերգություն, կրկներևույթ (Ս. արվ., № 7, 1963, 33), երկդիրքային (Եր., 30/12—1965), եռդիրքային (Եր., 30/12—1965), քառահնչույթ (ԷԱ, ԳՔ, 262), տասնամարտ, տասնամարտիկ, հնգամարտ, հնգամյակ և այլն։ Վերջին բարդությունները ստեղծվել են ռուսերեն համապատասխան բառերի պատճենումով։

Նշված բառերի ստեղծումը անշուշտ պայմանավորված է նոր հասկացությունների կամ երևույթների՝ մեր իրականության մեջ մուտք գործելով։ Այսպես՝ երկհնչույթ, եռահնչույթ, քառահնչույթ, երկփակ և այլն բառերը առաջ եկան լեզվաբանական գիտության զարգացման, իսկ երկամարտիկ, տասնամարտիկ, տասնամարտ, հնգամարտ, մարզադպրոց և այլն բառերը՝ սպորտի նոր ձևերի առաջացման ու մասսայականացման հետևանքով։

Մակբայով և այլ խոսքի մասով բաղադրված բարդություններ: Հայերենի բառային կազմում որոշակի տեղ են գրավում նաև մակբայով և այլ խոսքի մասով կազմված բարդությունները։ Դրանց մի զգալի մասը գալիս է մեր լեզվի հնագույն շրջանից։ Օրինակ՝ բազմաբորբոք, բազմանվագ, բազմաշարշար, մշտաբողբոջ, մշտաբորբոք, մշտազվարճ, մշտաշարշար և այլն։

Սովետական փուլում հայերենի բառապաշարը համալրվեց մակբայից և այլ խոսքի մասից բաղադրված նոր բարդություններով։ Այդ շրջանում ակտիվացան նաև մինչհոկտեմբերյան փուլից եկած որոշ բառեր։ Այդպիսիք են՝ սակավաղեն (ՍՋ, ՊԹ, 40), սակավապաշար (40), խստադաժան (ԴԴՎ, 18), հեռուստացույց (ՍՀ, 5/3—1966), մշտաթարմ (ՎԹ, 27), մշտառկա (ՊՍ, ԱԶ, 251), մշտահույզ (ՀԾ, ՔՀ, 451), մշտահունչ (ՊՍ, ԱԶ, 267), մշտարթուն (ՆԶ),

մշտուրախ (ՎԱ, ՍԱ, 112), մշտամրմուռ (ՀՇ), մշտափակ (ԴԴՎ, 76), մշտադժգոհ (ՆԶ), հանկարծագյուտ (ՆԶՀ, 351), հավերժաձայն (ՀՍ, 4/12—1965), հարաժպիտ, վաղաճերմակ և այլն:

Մակբայով և այլ խոսքի մասով նոր շրջանում կազմված բարդությունների մի զգալի մասը լայն տարածում չունի մեր լեզվի մեջ:

Բայարմատից և այլ խոսքի մասից բաղադրված բարդություններ: Բարդ բառերի կազմության այս եղանակը լայն տարածում չի ունեցել հայերենի զարգացման նախահոկտեմբերյան շրջանում: Այն գործուն չէ նաև այժմ:

Բայարմատով (կամ բայով) և այլ խոսքի մասով նորակազմ բարդությունները քիչ են: Դրանցից են՝ ելագիծ (Եր., 28/8—1964), ելանյութ (ՍՀ, 29/11—1964), իշխելասեր (Ս. արվ., 1961, № 2), 44), արգելավազք (ՍՀ, 20/10—1964), վառելագազ (ՍՀ, № 15, 1960), կանգնելատեղ (ՍԿ, ՔՔ, 71), անցախոս, անցագիր, անցաթուղթ, տեսարժան, հիշատակարժան, արգելարշավ և այլն:

Սրանց մի մասը լայն տարածում չունի արդի գրական հայերենում: Դրանցից են՝ արգելավազք, արգելարշավ, իշխելասեր և այլն:

Նոր բարդությունների կերտման գործում ավելի ակտիվ դեր են կատարում որոշ բառեր ու արմատներ. ինչպես՝ հեռ (հեռու, հեռուստ), լույս, լեռ, արև, հուր, արյուն (արն) և այլն: Սրանք հիմնականում հանդես են գալիս որպես առաջին բաղադրիչ: Օրինակ՝ հեռագիր, հեռագրատուն, հեռախոսափող, հեռախոսավար, հեռախոսակայան, հեռախոսացանց, հեռախոսագիր, հեռուստատես, հեռուստադիտակ, հեռուստացույց, հեռուստատեսություն, հեռուստաշտարակ (Եր., 24/3—1965), դրանց երևան գալը կամ լայն տարածում ստանալը պայմանավորված է հեռախոսի և հեռուստացույցի մեր կյանքի մեջ արմատավորմամբ և լայն մասսայականացմամբ:

Լեռ արմատով են բաղադրված լեռնասույզ, լեռնաշուշան, լեռնահով, լեռնաբյուրեղ, լեռնագագաթ, լեռնահայաստան (ԽՀ, 16/8—1921), լեռնաթամբ (ԳԹ, 4/12—1964), լեռնաղանգված (ՍՀ, 18/3—1964), լեռնադահուկ (ՍՀ, 13/10—1964) և այլն:

Լույս արմատով են կազմված՝ լուսաթաթախ (ՊՍ, ԱԶ, 42), լուսաժպիտ (ԳԹ, 29/1—1962), լուսերազ (ՆԶ), լուսավարար (ՆԶ), լուսասյուն (Եր., № 236, 1963), լուսառեկլամ (Եր., № 88, 1964), լուսապատճենահանում (Եր., 2/6—1964), լուսապերճ (Սրմ., 203),

լուսապատճեն (Եր., 2/6—1964), լուսաշ (Եր., 16/5—1964), լուսամփոփապահարան (Տնար., 1962), լուսամուտափակոց (Ավ., № 112, 1962), լուսամայր (ՆՁ, ԱԳ, 19), լուսահեռուստատեսային (ՍՀ, № 290, 1962), լուսահեռագիր (ՍՀ, 29/3—1964), լուսաճամադրություն (ՍՀ, 30/10—1964), լուսածփուն (Եր., 16/5—1964), լուսայգ (ՊՍ, ԱՁ, 9), լուսաղբյուր (ՀՇ, Բ, 1954, 93), լուսաթոր, լուսաբուժարան, լուսաբուժություն, լուսադիտում, լուսազդանշան, լուսամետ, լուսաքողարկում և այլն: **Հուր**, **արև**, **արյուն** (արն) բաղադրիչներով են կազմված հրաբոսոր, հրակամ, հրախոհ, հրաշշուկ, հրավարս, հրասիրտ, հրաքանքար, հրահզոր, հրաբույր, հրադեմ, հրաթև, հրասիրտ, արևակամ, արևազոծ, արևանիստ, արևառատ, արևափայլ, արևատենչ, արյունակամ, արյունավառ, արնաբաժան, արնաբույր, արնածարավ, արնակարմիր, արնակարոտ, արնահոտ, արնանիստ, արնավառ, արնացոլք և այլն[5]: Հիշյալ բառերը լայն տարածում ունեն հատկապես գեղարվեստական գրականության մեջ:

Գրական հայերենում լայն տարածում են ստացել նաև այն բարդությունները, որոնց երկրորդ եզրում հանդես են գալիս **տար**, **զերծ**, **մերձ**, **կիր**, **վար** և այլ բաղադրիչներ: Այսպես՝ **տար** բաղադրիչով են կազմված հետևյալ բարդությունները. արյունատար, ջրատար, գազատար, աշխատատար, առաջատար, ապրանքատար, փոստատար, ցրտատար, մարդատար, բեռնատար, պանելատար, հրթիռատար, բետոնատար, էլեկտրատար, լրագրատար և այլն:

Զերծ, **մերձ** և **կիր** բաղադրիչներով են կազմված՝ ատոմազերծ, միջուկազերծ, հրթիռազերծ, սանձազերծ, ամոթազերծ, վարակազերծ, մանրէազերծում (Եր., 9/3—1966), վնասազերծ, խոնավազերծ, կապազերծ, արեգնամերձ, երկնամերձ, տնամերձ, սահմանամերձ, աստղամերձ, ականակիր, դափնեկիր, մրցանակակիր, շքանշանակիր, տորպեդակիր, ավիակիր և այլն:

Վար բաղադրիչով են կազմված՝ օղակավար, բրիգադավար, ամբարձիչավար, մեքենավար, բուլդոզերավար, էքսկավատորավար, կոմբայնավար, կռունկավար, ռադիոհաղորդավար, ռադիոհանգույցավար, էլեկտրաքարշավար, ապարբարձիչավար, խմբավար, հեռախոսավար, ավտոկռունկավար, ականամեքենավար, խրճիթվար, ապարատավար, սեմինարավար և այլն:

---

5 Հուր, արև, արյուն (արն) բաղադրիչներով կազմված բարդությունների զգալի մասը վերցված է Ա. Մարությանի «Եղիշե Չարենցի չափածո ստեղծագործությունների բառարանը» (Երևան, 1965) անտիպ աշխատությունից:

5. ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Նոր շրջանում կազմված բարդությունները բավական շատ են մեր լեզվում։ Դրանք արտահայտում են մեր կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ հասկացություններ։

Հիմք ընդունելով նորաբանությունների գործածության ոլորտները, դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. Բառեր, որոնք արտահայտում են սոցիալիստական հարաբերությունների, հասարակական-քաղաքական կյանքի, մարքսիստական փիլիսոփայության, վարչա-տերիտորիալ միավորումների վերաբերյալ հասկացություններ: *Սոցիալիստական կարգերն ու հարաբերությունները, հասարակական-քաղաքական նոր երևույթները և այլն նոր բառերի ու տերմինների պահանջ դրեցին։ Կազմվեցին մի շարք բառեր, որոնք համալրեցին մեր լեզվի բառային կազմը, կամ էլ ակտիվ կիրառություն ստացան մինչսովետական շրջանի որոշ բառեր։ Դրանց մեջ զգալի են նաև բառաբարդությունները։ Օրինակ՝ ինքնաքննադատություն, հնգամյակ, առաջքաշում, աշխատուժ, աշխատատար, սպառարժեք, հասութաբեր, օղակավար, բրիգադավար, մնամերձ, երկարաժամկետ, արտադրահարաբերություն, արտադրաուժ, վաղակետ, ֆոնդահատուցում, ֆոնդազինվածություն, մասհանում և այլն։ Այս բառերի մի զգալի մասը գործածվում է հատկապես քաղաքական գրականության մեջ։*

2. Բառեր, որոնք արտահայտում են արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և տրանսպորտի վերաբերյալ հասկացություններ: *Սովետական կարգերի հաստատումն ու ամրապնդումը լայն հնարավորություններ ստեղծեցին արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության ու տրանսպորտի արագ վերակառուցման ու զարգացման համար։ Առաջ եկան արդյունաբերական նոր ճյուղեր ու ձեռնարկություններ, տրանսպորտի նոր միջոցներ, ստեղծվեցին արդյունաբերական, գյուղատնտեսական, շինարարական և փոխադրական աշխատանքներ կատարող մեքենաներ, գործիքներ, սարքեր, որոնք իրենց հետ բերեցին նոր հասկացություններ։ Դրանք արտահայտելու համար կազմվեցին բազմաթիվ բառեր ու տերմիններ։ Այդպիսիք են՝ ագրոմիջոցառում, ագրոքաղաք, ամբարձիչավար, ավտոկռունկ, ավտոբեռնափոխադրում, արագաչափ, արտադրատեսակ, արտադրամաս, բեռնաթափ,*

բրիգադիր, բուլդոզերավար, գազատար, գազաշինարար, դազգահաշինություն, դաշտապաշտպան, երկաթուղագիծ, էլեկտրազոդում, էլեկտրաեռակցում, էլեկտրաեռակցող, էլեկտրակիթ, էլեկտրամեքենա, էլեկտրասարք, էլեկտրասղոց, էլեկտրաքարշավար, էլեկտրափաթաթում, ինքնաթափ, ինքնաթիռ, լինոլեումապատում, խրձահավաք, կանգակայան (տաքսիների), կերահայթայթում, կիսանրբագեղմ, կոմբայնավար, կռունկավար, հաստոցաշինություն, ձվատվություն, մետաղահատ, մեքենատրակտորային, միջկոլտնտեսային, միկրոէմալապատում, նրբագեղմ, շարահնձիչ, շարքացան, պարկետապատում, սերմնաբուծություն, սերմնազտիչ, տեղակայում, տոհմաբուծական, տրակտորահավաք, տրակտորավար և այլն: Ինչպես տեսնում ենք, հիշյալ բառերը հիմնականում կապվում են գյուղատնտեսական տեխնիկայի, շինարարական ու արդյունաբերական կառույցների երևան գալու ու զարգացման հետ:

3. Բառեր, որոնք արտահայտում են ռազմական կյանքի վերաբերյալ հասկացություններ: Սովետական իշխանության օրոք մեր երկրում ստեղծվեց ռազմական հզոր տեխնիկա: Առաջ եկան ռազմական արդյունաբերության նոր ճյուղեր, ստեղծվեցին նոր սարքեր, զենքերի նորանոր տեսակներ, որոնք արտահայտելու համար կազմվեցին նոր բառեր: Սրանք զգալի չափով համալրեցին հայերենի բառային կազմը: Ռազմական կյանքին վերաբերող նոր բառեր են՝ ականակիր, ականանետ, ականորսիչ, ականապատում, ականաձիգ, ականորս, ականապերծում, հրթիռանետ, հրթիռաձիգ, հրթիռատար, ավիակիր, ավիագունդ, ավիատորպեդակիր, ատոմազերծ, ատոմանավ, տորպեդանավ, մարտագլխիկ, զրահահատ, կրակամարտ, կրակագիծ, ռմբակոծիչ, մոտոշարասյուն, հերոսամարտ, հրետանաականանետային և այլ բարդություններ:

4. Բառեր, որոնք արտահայտում են սպորտային հասկացություններ: Սպորտի զարգացումն ու մասսայականացումը, սպորտի նորանոր ձևերի առաջացումը նոր բառեր ստեղծելու պահանջ դրեցին: Կազմվեցին մի շարք բառեր սպորտային հասկացությունները արտահայտելու համար: Այդպիսիք են՝ հնգամարտ, տասնամարտ, տասնամարտիկ, մոտոբազմամարտ, բազմամրցում, ավտոբազմամարտ (ՍՀ, 7/8—1965), մարմնամարզիկ, ծանրամարտ, մրցահերթ (Հ. ֆիզկ., 27/8—1964), մրցասպարեզ (Եր., 2/4—1964), մրցավեճ (Եր., 10/6—1964), մրցաելույթ (Եր., 5/9—1964), մրցախաղ (Եր. 17/8—1964), մրցանիշ (Հ. ֆիզկ., 8/10—1964), մրցաշրջան (ՍՀ, 19/6—1964), մրցափուլ (ՍՀ, 14/11—

1964), զուգաթռիչք (Հ. ֆիզկ., 31/1—1958), դահուկուղի (Հ. ֆիզկ., 30/1—1965), դահուկացատկ (Հ. ֆիզկ., 5/1—1965), մարզավիճակ (ՍՀ, 27/2—1965), մարզադահլիճ (Եր., 15/5—1964), մարզահանդես (Եր., 4/5—1964), մարզաձև (Հ. ֆիզկ., 5/2—1964), մարզահրապարակ (ՍՀ, 8/8—1964), մարզասրահ (Եր., 21/5—1964), մարզաշտարակ (ՍՀ, 27/6—1963), մարզակումբ (ՍՀ, 8/8—1964), մարզախումբ (Եր., 17/12—1965), վազքադահուկ, վազքաչմուշկ, զուգասահք, չմշկասահ, մարզադաշտ, մարզասեր, զուգախաղ և այլն։

5. Բառեր, որոնք արտահայտում են արվեստի վերաբերյալ հասկացություններ: *Արվեստի բուռն զարգացումն ու ծաղկումը, նոր ճյուղերի երևան գալը իրենց հետ նոր հասկացություններ բերեցին։ Այդ հասկացությունների մի մասը արտահայտվեց բառաբարդությամբ։ Արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ հասկացություններ են դրսևորում հետևյալ բառաբարդությունները՝ հուշահամերգ, հանդիսատոն, փառատոն, մենահամերգ, մենակատար, մեներգիչ, հուշամրցանակ, համերգաբաժին, համերգաշար, համերգաշրջան, նվագավար, երկծրագիր, բազմածրագիր, նվագահանդես, երգահանդես, ինքնադիմանկար, ինքնանկար, դիմալուսանկար, կինոակնարկ, կինոժողովածու, լայնէկրան, ֆոտոժապավեն և այլն։*

6. Բառեր, որոնք արտահայտում են գիտության ու տեխնիկայի վերաբերյալ հասկացություններ: *Գիտության ու տեխնիկայի աննախընթաց զարգացումը, այդ բնագավառում կատարվող հայտնագործություններն ու գյուտերը, գիտության նորանոր ճյուղերի առաջացումը և այլն նոր բառերի ստեղծման պահանջ են դնում։ Այսպես՝ գիտության ու տեխնիկայի վերաբերյալ հասկացություններ են արտահայտում. ռադիոճառագայթ, ռադիոկենսաբանություն, տիեզերագիտություն, տիեզերանավ, տիեզերակայան, հեռակետ, մերձակետ, ատոմանավ, էլեկտրանավ, էլեկտրաբուժություն, հրթիռադերծ, հեռուստակայան, հեռուստակենտրոն, հեռուստացանց, հեռուստացույց, հեռուստախցիկ, հեռուստադիտող, ինքնակառավարում, ցնցումագիր, ձեռնակառավարում, ջերմաէլեկտրակայան, ապակեժապավեն, ջերմաէլեկտրակենտրոն, ապակեմանրաթել, ապակեթել, միկրոանջատիչ, ջերմաճնշախցիկ, շլյուզախցիկ, տիեզերասավառնակ, ռադիոհեռուստամետրիկ (ՍՀ, 11/3—1965), ֆոտոդիմագրություն (ՍՀ, 11/3—1965), ֆոտոէլեկտրոնային (ՍՀ, 11/3—1965), միկրոավտոբուս (ՍՀ, 16/10—1965), էլեկտրակապ, կիսահաղորդիչ, համայնապատկեր և այլն։*

7. Բառեր, որոնք գործածվում են հատկապես գեղարվեստական գրականության մեջ: *Հայերենի բառային կազմի հարստացման գործում բավական նշանակալից է մեր գրողների դերը։ Հայ դասական հեղինակները իրենց ստեղծագործություններով մեծապես նպաստել են մեր լեզվի մշակմանը, կատարելագործմանը ու բառային կազմի հարստացմանը։ Հազարավոր բառեր են կերտվել մեր գրողների կողմից, որոնցից շատերը լայն տարածում են ստացել ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև բանավոր խոսակցական լեզվում։*

Բավական շատ են նորաբանությունները նաև սովետահայ գեղարվեստական գրականության մեջ։ Այդ տեսակետից աչքի են ընկնում հատկապես Ե. Չարենցի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ն. Զարյանի, Ս. Խանզադյանի, Հ. Շիրազի, Գ. Մահարու, Պ. Սևակի, Ս. Կապուտիկյանի և այլոց ստեղծագործությունները։ Վերջին շրջանում կազմված բառերի մեջ զգալի տեղ են գրավում նաև բառաբարդությունները։ Այսպես, օրինակ՝ արևափայլ, արծաթաձայն, դափնեճյուղ, նոճեհասակ, երազաթև, երկաթաթև, ձյունամրրիկ, մեղրաշուրթ, փետրախռիվ, հարցումհայաց, լարաթրթիռ, ձյունաճերմակ, շորորաքայլ, ուրախառիթ, անուշօրոր, ինքնաարդարացում, հրեշտակադեմ, վահագնակերպ, կենսահորդ, հրաթև, արևատենչ և այլն։ Պետք է նկատել, սակայն, որ գրողների կողմից կերտված բառերի մի մասը շատ դեպքերում դուրս չի գալիս այս կամ այն ստեղծագործության շրջանակներից։ Դեռ ավելին. կան նորաբանություններ էլ, որոնք հաճախադեպ գործածություն չունեն նույնիսկ այն հեղինակների ստեղծագործություններում, որոնք կերտել են դրանք։ Այդպիսի բառերը բնորոշ էին հատկապես 20-ական թվականների պոեզիային։ Արհեստականորեն կերտված, քննություն չբռնած և գործածությունից արագ դուրս եկած բառերից են Վ. Ալազանի ստեղծած՝ հրաբխալոզունգ, հրաբխապոեզիա, հրաբխամարշ, հրաբխահրավեր, հրաբխապարագ, հրաբխամարտ, հրաբխաբեմ, հրաբխասիրտ, հրաբխասուր, հրաբխազգեստ, հրաբխակոչ և այլն[6]*։ Այդպիսիք են նաև Գ. Աբովի կերտած՝ սուզաշուրթ (աղջիկ), ջերմաժպիտ (ժպիտ), նյարդահուզիչ (ստինք), թիթեղաթափ (թևեր), գիպսասիրտ (ասպետ), էլեկտրալեզու և այլն*[7]*։*

---

6 Վ. Ալազան, *Հրաբխապոեզիա, 1923։*

7 Գ. Աբով, *«Միայն կինը», Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1919 և «Դանակը բկին», Մոսկվա, 1923։*

Մեր գրողների, գրականագետների, պարբերական մամուլի և հրատարակչությունների աշխատողների, թարգմանիչների և այլ անձանց կողմից ստեղծված բազմաթիվ հաջող բառերի կողքին կան նաև անհաջող, խիստ արհեստական բառակերտումներ։ Դրանք լայն տարածում ու գործածություն չունեն ոչ միայն բանավոր խոսակցական, այլև գեղարվեստական գրականության ու մամուլի լեզվում։ Բերենք միայն մի քանի օրինակներ. ամենակյանք (ԴԴԵ, 143), կինոտարի (ՍՀ, 31/3—1965), ռադիոկայծակ (ՆԶ), հնչյունահատիկ (ՍՀ, 4/12—1965), վրաերթ (Եր., 22/8—1964), քաշաճ (ՍՀ, 14/4—1964), սառցացեխ (ՔԹՊ), սոսկախառն (ՔԹՊ), ծնոտամորուս (ՔԹՊ) և այլն։

6. ՕՏԱՐ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց լեզվի բառային կազմում բավական շատ են փոխառյալ բաղադրիչով բարդությունները։ Ընդ որում, լայն տարածում ունեն այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչն է փոխառյալ։ Օր.՝ ագրոգիտություն, աերոկայան, ավիախումբ, բետոնապատ, բետոնատար, բետոնուղի, էքսկուրսավար (ՍԿ, ՔՔ, 152), սպորտանավ (Եր., № 89, 1959), սպորտահրապարակ (Ս. դպր., № 51, 1963), սպորտասեր (ՍՀ, 4/4—1965), սպորտաձև (ՍՀ, 24/2—1964), բետոնաշեն (ՍԿ, ՔՔ, 211), բետոնածածկ։ Այս բառերը հիմնականում նոր շրջանի կազմություն են։ Գրական հայերենում մեծ տարածում ունեն հատկապես այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչում հանդես են գալիս ագրո, ավիա, գազ, էլեկտր, էներգ(ա), կինո, միկրո, ռադիո, ֆոտո, մոտո բառերը կամ արմատները։

Քննենք նշված բաղադրիչներից յուրաքանչյուրով կազմված բարդությունները առանձին-առանձին։

1. Ագրո.— Այս բաղադրիչով բարդությունները հիմնականում դրսևորում են գյուղատնտեսության վերաբերյալ հասկացություններ։ Դրանցից են՝ ագրոեղանակ (ՍՀ, 2/6—1964), ագրոժամկետ (Ավ., № 140, 1959), ագրոկայան (ԽՀ, 3/6—1926), ագրոկանոն (ՍՀ, 15/4—1964), ագրոկենսաբանական (ՍՀ, 27/5—1964), ագրոմիջոցառում (ՍՀ, 5/6—1964), ագրոտեղամաս, ագրոքաղաք, ագրոցանց և այլն։

2. Ավիա.— Այս բաղադրիչով կազմված բարդ բառերը լայն կիրառություն ունեն մեր լեզվում։ Դրանք հիմնականում կապվում են օդագնացության զարգացման և մեր կյանքի մեջ նրա արմատա-

վորման հետ։ Ավիա փոխառյալ բառով են կերտված հետևյալ բարդությունները՝ ավիախումբ (ՍՀ, 27/11—1964), ավիաակումբ (Եր., 27/8—1964), ավիադպրոց (Եր., 27/8—1964), ավիաընկերություն (Եր., 25/3—1960), ավիակիր (ՍՀ, 20/5—1964), ավիափոստ (Եր., 1959, № 90), ավիաուղևոր (ՍՀ, 30/12—1964), ավիառումբ (ՍՀ, 16/12—1965), ավիագունդ (ՍՀ, 28/3—1965), ավիահետախուզություն, ավիանկարահանում, ավիափարոս, ավիաուղի, ավիահրահանգիչ, ավիազրահատանկային, ավիատորպեդակիր, ավիագիծ, ավիավարչություն և այլն։

3. Գազ.— Այս արմատական բառով կազմվել են մի շարք բարդություններ։ Գազի կենցաղային գործածությունը, որը մեր իրականության մեջ սկսվեց հիմնականում սովետական շրջանում, իր հետ բերեց մի շարք նոր հասկացություններ։ Դրանք արտահայտելու համար կազմվեցին նոր բառեր. օրինակ՝ գազասալիկ, գազասարք, գազախողովակաշար, գազամուղ, գազավառարան, գազախուց, գազահագեցում, գազահոսք, գազաշինարար, գազամաքրում, գազապահեստ, գազապարագա, գազապարատ, գազախցիկ, գազատագնապ, գազահալիչ, գազալուսավորություն, գազաորսիչ, գազաթափանց, գազանետ, գազայրիչ (Եր., 1960, № 29), գազայրոց (Եր., 1960, № 29), գազավառ (Եր., 17/8—1961), գազավառատուն (Եր., 1960, № 209), գազատար, գազօջախ և այլն։

Վերջին տասնամյակներում գազ արմատով կազմվեցին բազմաբաղադրիչ որոշ բարդություններ։ Դրանց մեջ կան այնպիսինները, որոնց առաջին և երկրորդ բաղադրիչները փոխառյալ են, վերջինը՝ հայերեն. օրինակ՝ գազատուրբինաքարշ (ՍՀ, 1959, № 242) և այլն։

Սխալ պետք է համարել ա հոդակապի փոխարեն ո-ի գործածությունը այդպիսի բարդություններում, ինչպես՝ «Գազատուրբաքարշը հզոր ջերմոցային քարշիչով գազային տուրբինով լոկոմոտիվ է» (Ավ., 1960, № 5), «Տրանսպորտային մեքենաշինության ասպարեզում... ստեղծել գազոտուրբաքարշեր» (ՍՀ, 1956, № 49)։

Բոլոր դեպքերում, երբ փոխառյալ բաղադրիչով բարդություն է ստեղծվում հայերեն բառերի կամ արմատների հետ նրա միացմամբ, և վերջինները տնեն անկախ կիրառություն լեզվի մեջ, պետք է գործածել ա հոդակապը, որը հարազատ է մեր լեզվի բառակազմությանը։

4. Էլեկտր.—Այս բաղադրիչով գրական լեզվում կազմվել են բազմաթիվ բառեր՝ կապված արդյունաբերության, գյուղատնտե-

ության և կենցաղի մեջ էլեկտրականության գործածման հետ։ Իհարկե, էլեկտրականության գործածությունը մեզ մոտ սկսվել է դեռևս մինչսովետական շրջանում, ուստի էլեկտր արմատով որոշ բառեր գալիս են այդ ժամանակից, սակայն էլեկտրականությունը լայնորեն թափանցեց մեր իրականության գրեթե բոլոր բնագավառները, հատկապես Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ Այդ կապակցությամբ երևան եկած նոր առարկաների ու երևույթների հասկացությունները բնականաբար նոր բառերի ստեղծման պահանջ դրեցին։ Մեր լեզվի բառակազմական հարուստ ու ճկուն միջոցներով կազմվեցին բազմաթիվ բառեր էլեկտր արմատով, որոնք համալրեցին հայերենի բառային կազմը։ Օրինակ՝ էլեկտրաապարատ (ՍՀ, 8/1—1965), էլեկտրաարդյունաբերություն (Եր., 6/3—1964), էլեկտրագնացք (Եր., 24/8—1964), էլեկտրաազդանշան (ՍՀ, 25/2—1965), էլեկտրազանգ (ՍՀ, 25/2—1961), էլեկտրաընկերություն (ՍՀ, 22/11—1964), էլեկտրաժամացույց (ՍՀ, 25/2—1965), էլեկտրահալ (Ս. գրակ., 1957, № 1, 122), էլեկտրահոսանքահաղորդիչ (Եր., 1964, № 50), էլեկտրահրակայուն (Եր., 7/5—1964), էլեկտրամետաղակերամիկա (Եր., 28/4—1964), էլեկտրաշարժաբեր (ՍՀ, 26/1—1961), էլեկտրառադիոարտադրամաս (ՍՀ, 1/4—1964), էլեկտրասառնարան (ՍՀ, 19/6—1964), էլեկտրասարքավորում (ՍՀ, 3/3—1965), էլեկտրատար (ՍՀ, 5/2—1965), էլեկտրաքարշ (ՍՀ, 13/12—1964), էլեկտրաքարշավար (ՍՀ, 22/5—1964), էլեկտրամեկուսիչ (ՍՀ, 26/3—1965), էլեկտրաամբարձիչ և այլն։

Էլեկտրականության գործածության շնորհիվ ձեռքով կամ այլ եղանակով կատարվող որոշ աշխատանքներ սկսեցին կատարվել էլեկտրականությամբ, որի հետևանքով ստեղծվեցին այդ աշխատանքները կամ դրանք կատարող գործիքները անվանող բառեր. օրինակ՝ էլեկտրախույզ (ՍՀ, 17/2—1955), էլեկտրակիթ (ՍՀ, 1960, № 10), էլեկտրասղոց (ՍՀ, 1960, № 216), էլեկտրասղոցարան (ՍՀ, 23/5—64 թ.), էլեկտրահովհար (ՍՀ, 1960, № 11), էլեկտրասայլակ (ՍՀ, 1/8—1964), էլեկտրավառարան (ՍՀ, 22/12—1964), էլեկտրակալսում, էլեկտրավար, էլեկտրահերկում, էլեկտրակտրում, էլեկտրանավ, էլեկտրագութան, էլեկտրաեռակցիչ և այլն։ Էլեկտրականությունը սկսեց կիրառվել նաև բժշկության մեջ ու այլ բնագավառներում, որի շնորհիվ ստեղծվեցին նոր բառեր. օրինակ՝ էլեկտրավիրաբուժություն (Եր., 1964, № 13), էլեկտրասրտագրություն

(ՍՀ, 1962, № 186), էլեկտրաջերմոց (ՍՀ, 3/4—1965), էլեկտրասրտագիր, էլեկտրաբուժարան, էլեկտրաբուժություն և այլն։

Վերջին տարիներին ստեղծվեցին եռակցում և եռակցող բառերը, որից էլ առաջ եկան էլեկտրաեռակցում և էլեկտրաեռակցող ձևերը։

Մամուլի լեզվում էլեկտրաեռակցում և էլեկտրաեռակցող ձևերին զուգահեռ գործածվում են նաև էլեկտրազոդում ու էլեկտրազոդող ձևերը նույն նշանակությամբ։ Ընդ որում «Սովետական Հայաստան» օրաթերթը հիմնականում գործածում է էլեկտրազոդում և էլեկտրազոդող, իսկ «Երեկոյան Երևանը»՝ էլեկտրաեռակցում և էլեկտրաեռակցող ձևերը։ Իմաստային տեսակետից վերջին ձևերը որոշ տարբերություն են հանդես բերում էլեկտրազոդում և էլեկտրազոդող բարդությունների նկատմամբ, ուստի նրանց գործածությունը պետք է ճշտորոշվի։ Եռակցումը сварка-ի համարժեքն է, իսկ զոդումը пайка-ի։ Այստեղից էլ ունենք եռակցող—сварщик և զոդող—паяльщик։

5. Էներգ(ա).— Հայոց լեզվի մեջ կան որոշ բառեր էներգ(ա) բաղադրիչով, օրինակ՝ էներգադինվածություն (ՍՀ, 4/6—1964), էներգամատակարարում (ՍՀ, 2/12—1964), էներգասնուցում (ՍՀ, 1959, № 236), էներգամեքենաշինական (Եր., 28/5—1964), էներգասնում (Եր., 8/5—1962) և այլն։ Սրանք հիմնականում նոր շրջանի կազմություններ են։

Էներգ(ա) բաղադրիչը երբեմն հայերեն բառերի հետ միացվում է ոչ թե ա, այլ ո կամ ե հոդակապով։ Այսպես, օրինակ՝ էներգոցանց (Եր., 27/6—1964), էներգենուցում (ՍՀ, 1959, № 243)։ Դա, անշուշտ, անհետևողականության արդյունք է։ Էներգ արմատը հայերեն բաղադրիչի հետ պետք է միացնել ա հոդակապով։

Կինո.— Այս փոխառյալ բառով կազմվել են բազմաթիվ բարդություններ գրական հայերենում։ Կինո բաղադրիչով բարդությունների ստեղծումը պայմանավորված էր մի կողմից կինոյի մասսայականացմամբ, մյուս կողմից՝ կինոարվեստի զարգացմամբ։ Կինո բաղադրիչով նոր շրջանում ստեղծվեցին կինոակնարկ (ՍՀ, 25/4—1964), կինոդասընթաց (Եր., 1960, № 199), կինոերկացանկ (ՍՀ, 2/12—1964), կինոհամաժողով (ՍՀ, 1963, № 167), կինոհամալսարան (ՍՀ, 18/3—1964), կինոմրցանակաբաշխություն (Եր., 1963, № 162), կինոփաստաթուղթ (Ավ., 20/6—1961), կինոժողովածու (ՍՀ, 27/2—1965), կինոցանց, կինոգիտություն, կինոարդյունաբերություն, կինոդերասան, կինոնկարահանում, կինո-

ժապավեն, կինոընկերություն, կինոերկ, կինոգործիչ, կինոսիրող, կինոաշխատող, կինոտարեգրություն, կինոամսագիր, կինոհանդիսատես և այլն։

Մեր մամուլում վերջին տարիներին ստեղծվեց կինոտարի բարդությունը, որը արհեստական է և անընդունելի («հանրագումարի կբերվեն անցած կինոտարվա արդյունքները»)։ Բարեբախտաբար ժամանակին գիտակցվեց այդ բառի ավելորդությունը և հանվեց գործածությունից։

7. Միկրո.— Գրական հայերենում գործածվում են միկրո բաղադրիչով որոշ բարդություններ։ Դրանք հիմնականում մասնագիտական բառեր կամ տերմիններ են։ Օրինակ՝ միկրոլուսանկար (Եր., № 4, 1960), միկրոճեղք (ՍՀ, 22/11—1964), միկրոշրջան (Եր., 20/5—1964), միկրոպատճենահանում (Եր., 1959, № 259), միկրոպարարտանյութ (ՍՀ, 11/3—1964), միկրոէլեկտրաշարժիչ (ՍՀ, 17/3—1964), միկրոանջատիչ (ՍՀ, 10/3—1965), միկրոէմալապատում (ՍՀ, 10/3—1965), միկրոլուսանկարչություն, միկրոկառուցվածք, միկրոաշխարհ (ՍՀ, 5/2—1966), միկրոքաղաք (ՍՀ, 5/2—1966) և այլն։ Սրանք լայն գործածություն են ստացել հատկապես վերջին տասնամյակներում։

8. Ռադիո.— Գրական հայերենում լայն տարածում ունեն ռադիո բաղադրիչով բարդությունները, որոնց մեծ մասը նորակազմ է։

Ռադիոն մեր կենցաղի մեջ մտավ ու լայն գործածություն ըստացավ հատկապես սովետական իշխանության տարիներին։ Նրա մուտքը ու տարածումը իրենց հետ բերեցին նոր երևույթներ ու հասկացություններ, որոնք արտահայտելու համար կազմվեցին բազմաթիվ բառեր։ Ստեղծված բառերի մեծ մասը անմիջապես կապվում է ռադիոյի, իբրև հաղորդակցման միջոցներից մեկի, մյուս մասը՝ գիտության որոշ ճյուղերի առաջացման ու զարգացման հետ։ Առաջին խմբի բարդություններից են՝ ռադիոկայան (ՍՀ, 7/6—1964), ռադիոելույթ (Սխ, ՄԳՄ, 502), ռադիոակումբ (ՍՀ, 7/6—1964), ռադիոբարձրախոս (Սխ, ՄԳՄ, 507), ռադիոխումբ (ՍՀ, 7/6—1964), ռադիոկետ (Եր., 7/5—1964), ռադիոհաղորդավար (Եր., 1960, № 36), ռադիոհանգույց (Եր., 24/6—1964), ռադիոկազմակերպություն (ՍՀ, 25/11—1964), ռադիոկենտրոն (ՍՀ, 7/5—1964), ռադիոլսող (ՍՀ, 14/5—1964), ռադիոդասախոսություն (ՍՀ, 8/5—1964), ռադիոազդականչ (ՍԿ, ՔՔ, 245), ռադիոունկնդիր (ՍՀ, 14/5—1964), ռադիոականջակալ (Առողջ., № 3, 1961, 37), ռադիոհաղորդիչ (ՍՀ, 5—1964), ռադիոէլեկտրակապ (ՍՀ, 7/2—1965), ռադիո-

հեռուստամետրիկ (ՍՀ, 11/3—1965), ռադիոհրահանգ (Եր., 1962, № 267), ռադիոհրաման, (ՍՀ, 4/4—1964), ռադիոսարքավորում (ՍՀ, 30/12—1964), ռադիոհամալսարան (ՍՀ, 4/4—1965), ռադիոմարզիկ (ՍՀ, 16/3—1965), ռադիոմեկնաբան (ՍՀ, № 105, 1959), ռադիոբեմադրություն (ՍՀ, 5/11—1962), ռադիոբեմականացում (ՍՀ, 5/11—1962), ռադիոգիր (ՍՀ, 15/1—1966), ռադիոհեռախոս (ՍՀ, 15/1—1966), ռադիոլրագիր, ռադիոհեռագրիչ, ռադիոթղթակից, ռադիոխոսակցություն և այլն։

Ռադիո բաղադրիչով մեր լեզվի մեջ կան որոշ բարդություններ, որոնք առավելապես վերաբերում են ռազմական գործին։ Այսպես, օրինակ՝ ռադիոազդանշան (ՍՀ, 30/4—1964), ռադիոկապ (Սխ, ՄԳՄ, 470), ռադիոփարոս, ռադիոտեղակայանք, ռադիոլուսարձակ, ռադիոզորամաս (ՍՀ, 10/3—1966), ռադիոհեռարձակում (ՍՀ, 31/3—1966), ռադիոհետազոտություն, ռադիոստորաբաժանում և այլն։

Գիտության նոր ճյուղերի առաջացման ու զարգացման հետ են կապվում ռադիոճառագայթ (ՍՀ, 19/2—1965), ռադիոաստղադիտակ (Եր., 1964, № 39), ռադիոհեռադիտակ (ՍՀ, 13/1—1964), ռադիոաստղագիտություն (Եր., 1960, № 256), ռադիոհեռուստաչափ (ՍՀ, 11/6—1964), ռադիոգիտելիք (ՍՀ, 7/6—1964), ռադիոկենսաբանություն (ՍՀ, 2/3—1966), ռադիոզգայնություն (ՍՀ, 2/3—1966), ռադիոգործ (ՍՀ, 3/3—1965), ռադիոչափություն (ՍՀ, 19/3—1964) և այլ բառեր։ Ռադիո բաղադրիչով են կերտված նաև ռադիոկայծակ (ՆԶ, 1, 50), ռադիոբազմամարտ բառերը, որոնք արհեստական են և անկենդան, հետևաբար՝ ոչ հանձնարարելի։

9. Ֆոտո.— Այս բաղադրիչով բառերի քանակը գրական հայերենում բավական շատ է։ Դրանք հիմնականում արտահայտում են լուսանկարչական առարկաների ու երևույթների հասկացություններ։ Ֆոտո բաղադրիչով բարդությունների մի զգալի մասը գալիս է նախասովետական շրջանից, բայց նրանք լայն կիրառություն են ստացել մեր օրերում։ Դա պայմանավորված է լուսանկարչական արվեստի զարգացմամբ և մեր կենցաղում ունեցած նրա դերի զգալի բարձրացմամբ։ Նոր կազմված կամ ակտիվացած բարդություններ են՝ ֆոտոտաղավար (Եր., 18/5—1964), ֆոտոժապավեն (ՍՀ, 24/5—1964), ֆոտոցուցահանդես (ՍՀ, 24/5—1964), ֆոտոցուցափեղկ (Եր., 14/5—1964), ֆոտոթերթ (Եր., 6/5—1964), ֆոտոթղթակից (ՍՀ, 14/5—1964), ֆոտոխցիկ (ՍՀ, 19/2—1965), ֆոտոհեռագիր (ՍՀ, 25/3—1964), ֆոտոհեռագրատուն (Եր., 1964, № 57), ֆոտոհատակագիծ (Եր., 1960, № 290), ֆոտոմեղադրանք (Եր., 13/6—

1964), ֆոտոդիմագրություն (ՍՀ, 4/2—1965), ֆոտոգործակալություն (ՍՀ, 5/11—1964), ֆոտոթուղթ (Գիտ. և տեխ., 1964, № 12, 23), ֆոտոփաստաթուղթ (Եր., 24/3—1965) և այլն։

Պետք է նկատել, որ ֆոտո բաղադրիչով կազմված որոշ բարդությունների զուգահեռ գործածվում են այնպիսի բարդություններ կամ կապակցություններ, որոնց բաղադրիչները հայերեն են. օրինակ՝ լուսահեռագիր, լուսանկարչական ժապավեն, լուսանկարչական թուղթ և այլն։

10. Մոտո.— Այս բաղադրիչով բարդ բառերի մեծ մասը նոր շրջանի կազմություն է։ Դրանք ակտիվ գործածություն ստացան հատկապես Հայրենական պատերազմի ժամանակ։ Այդ բարդություններից են՝ մոտոհետևակ (ՍՀ, 8/1—1944), մոտոնավակ (ՍՀ, 9/5—1944), մոտոհրաձգային (ՍՀ, 3/1—1944), մոտոշարասյուն (Ավ., 1959, № 56), մոտոքարշ (Եր., 1964, № 3), մոտոսայլակ (ՍՀ, 1959, № 107), մոտովազք (Հ. ֆիզկ., № 19, 1964), մոտոհեծանիվ (ՍՀ, 21/4—1965), մոտոբազմամարտ (մոտոբազմամարտը մեր երկրում համեմատաբար երիտասարդ սպորտաձև է, ՍՀ, 10/8—1965), մոտոբազմամարտիկ (Երևան են ժամանել Միութենական ռեսպուբլիկաների... ուժեղագույն մոտոբազմամարտիկները, ՍՀ, 10/8—1965), մոտովարորդ (ՍՀ, 10/8—1965)։

Մոտո բաղադրիչով են կազմված նաև մոտոսղոց, մոտոմրցում, մոտոմշակույթ, մոտոհետևակ, մոտոարշավ և այլն։

Մոտո բաղադրիչը որոշ բարդություններում հանդես է գալիս մոտոր ձևով նույն նշանակությամբ. այսպես՝ մոտորանավակ (Եր., 14/1—1961), մոտորաշինական (ՍՀ, 22/4—1964), մոտորավար, մոտորավագոն, մոտորակառք և այլն։

11. Տրակտոր.— Տրակտորը մեր իրականության մեջ մտավ հատկապես սովետական իշխանության հաստատման տարիներին։ Նա իր հետ բերեց նոր հասկացություններ, որոնք արտահայտելու համար կազմվեցին որոշ բարդություններ։ Այդպիսիք են՝ տրակտորահավաք (գործարան) (ՍՀ, 22/11—1964), տրակտորահարմար (ՍՀ, 12/3—1964), տրակտորադաշտավարական (ՍՀ, 14/5—1964), տրակտորաշինական, տրակտորաշինություն, տրակտորագութան, տրակտորահերկ, տրակտորավար, տրակտորավարձ և այլն։

Մինչև այժմ քննության առանք այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչն էր փոխառյալ։ Ստորև կքննենք այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչն է փոխառյալ։ Այս տիպի

բարդությունները առաջին խմբի համեմատությամբ սահմանափակ են հայերենում։

Հայերեն և փոխառյալ բաղադրիչներով կազմված բարդությունները արտահայտում են տրանսպորտային, շինարարական, սպորտային, գյուղատնտեսական և այլ հասկացություններ. օրինակ՝ ավտոանտեխնիկ (ՍՀ, 5/10—1964), անտառամասիվ (ՍՀ, 5/11—1964), անտառամելիորատիվ (ՍՀ, 4/6—1964), անտառապարկ (ՍՀ, 27/3—1964), ապակեպլաստիկա (ՍՀ, 9/4—1964), առագաստասպորտ (Հ. ֆիզկ., 26/9—1964), աստղաֆիզիկա (ՍՀ, 9/12—1964), բազմապրոբլեմ (ՍՀ, 6/1—1965), բազմատիրաժ (ՍՀ, 14/5—1964), բարձրավոլտ (ՍՀ, 8/3—1964), թռչնաֆերմա (ՍՀ, 6/9—1964), թունաքիմիկատ (ՍՀ, 5/3—1964), լայնէկրան (ՍՀ, 29/5—1964), լիամետրաժ (Եր., 5/5—1964), լուսառեկլամ (Եր., 1964, № 88), խոշորապանելային (Եր., 6/3—1964), կարճամետրաժ (ՍՀ, 10/3—1964), բազմասինթետիկ (Ազ., ՈԻԲ), մետաղակոնստրուկցիա (Եր., 11/9—1964), նավթամոտոր (ՍՀ, 11/6—1964), նավթաքիմիա (ՍՀ. 11/6—1964), պալարաբակտերիա (ՍՀ, 9/5—1963), ջերմառեժիմ (ՍՀ, 1960, № 294), ռազմատրանսպորտային (ՍՀ, 26/8—1964), սակավալիտրաժ (ՍՀ, 15/11—1963), սառցաբալետ (ՍՀ, 18/6—1964), սառցակոմբինատ (ՍՀ, 17/10—1964), սառցավագոն (ՍՀ, 1960, № 22), վազոմոտոր (Առողջ., 1961, № 2, 2), վառելագազ (ՍՀ, 1960, № 115), տուֆաբլոկ (ՍՀ, 12/3—1964), փոքրալիտրաժ (ՍՀ, 17/6—1964), փոքրատոննաժ (ՍՀ, 9/4—1964), արտագրապրոցես (ՍՀ, 28/1—1964), գունառեկլամ (ՍԿ, ԲՔ, 3), երկաթբետոնե (ՍՀ, 17/12—1965), այլև աշխատամեթոդ, ապրանքաբագաժ, բազմաֆազ, բեռնավտո, ինքնամասսաժ, փոքրակալիբր և այլն։ Սրանք հիմնականում ակտիվացել են սովետական շրջանում։

Վերոհիշյալ բարդությունների մեջ կան այնպիսիները, որոնց օտար բաղադրիչը ածանցավոր է (կարճամետրաժ, լիամետրաժ, փոքրալիտրաժ, փոքրատոննաժ, սակավալիտրաժ, անտառամելիորատիվ), կան և այնպիսիները, որոնց փոխառյալ բաղադրիչը ունի հայերեն ածանց. ռազմատրանսպորտային, երկաթբետոնե և այլն)։

Կաթսա *և* ագրեգատ *բառերով բարդություն կազմելիս որոշ օրաթերթեր գործածում են* ա *հոդակապը, որի հետևանքով առաջին բաղադրիչից հետո երևան է գալիս* յ *ձայնակապը. օրինակ՝ կաթսայագրեգատ։ Այլ թերթեր այդ բարդությունը գործածում են առանց հոդակապի, որի պատճառով մի վանկ կրճատվում է (կաթսաագրե-*

գատ)։ Նպատակահարմար է առանց հոդակապի գործածություն, քանի որ այդպես բարդությունը հեշտ է արտասանվում և մի վանկ շահվում է։

7. ԵՐԿՈՒՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր լեզվի բառային կազմում կան երկուսից ավելի բառերից կամ արմատներից բաղադրված բազմաթիվ բառեր։ Դրանց մեծ մասը նոր շրջանի կազմություն է։ Հայոց լեզվի զարգացման արդի փուլը աչքի է ընկնում երկուսից ավելի բառերից կամ արմատներից բաղադրված բարդությունների ակտիվացմամբ ու զարգացմամբ[8]։

Նոր շրջանի բարդություններ են՝ փործանկարահանում, էներգամեքենաշինական, ինքնաբեռնաթափ, էլեկտրաապակեմեկուսիչ, մրրկապատճենահան, ֆոտոցուցափեղկ, ֆոտոցուցահանդես, ռադիոհեռագրիչ, ջերմաէլեկտրակենտրոն, ջրագնդակախաղ, նավթագազաբերություն, նավթագազագոյացում, կինոձեռնարկատեր, ռադիոհանգույցավար, գազատուրբինաքարշ, էլեկտրապողպատաձուլում, հուշակրծքանշան, հեծանվահրապարակ, գունահրավառություն, ռադիոհեռախոս, էլեկտրասրտագրություն, էլեկտրաքարշավար, թերթաքարամշակում, աստղակողմնորոշում, միկրոպատճենահանում, ինքնակարգապահություն, թյուրականխագուշակում,

---

[8] Ա. Ա. Մուրվալյանը գտնում է, որ երկուսից ավելի բառերի կամ արմատների միացմամբ կազմված բարդ բառերը բնորոշ չեն հայերենին և շատ քիչ են պատահում։ Մեր կարծիքով Ա. Մուրվալյանի տեսակետը ճիշտ կարելի է համարել միայն հայերենի նախասովետական շրջանի վերաբերյալ, ուր իսկապես սակավադեպ են այդպիսի բարդությունները, մինչդեռ հիշյալ եղանակով բարդությունները հաճախադեպ են հայերենի զարգացման ներկա փուլում։

Տեղին է նշել, որ պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանը ընկնում է մի այլ ծայրահեղության մեջ, գտնելով, որ մի քանի բառերի (երկու, երեք, երբեմն նաև չորս) միացումը մեկ բառի մեջ հայերենում նույնպես սովորական է, ինչպես, օրինակ, գերմաներենում։ Նա միաժամանակ նշում է, որ այդ եղանակով կազմված բառերը հեշտությամբ ընկալվում են հասարակության բոլոր խավերի կողմից իբրև լիովին հասկանալի (*И. К. Кусикян*, Изменение в словарном составе литературного армянского языка советского пернода, 1964, стр. 34).

Նկատենք, որ 4 արմատներից բաղադրված բարդությունները մեր լեզվում չափազանց սահմանափակ են, իսկ 2-ից ավելի բառերից բարդվածները այնքան կենսունակ չեն, ինչպես գերմաներենում է։

ջերմաէլեկտրակայան, դիմալուսանկար, ավտոբեռնափոխադրում, ավտոշարասյուն, ավտոուղեգիր, կիլովոլտամպեր, նեյրովիրաբույժ, միկրոէմալապատում: Նշված բարդությունները փաստորեն ունեն երկու եզր, ինչպես երկու բառերի բաղադրությունից կազմված բարդությունների ժամանակ, ընդ որում, որոշ բարդությունների մեջ երկրորդ եզրն է երկու բառերի կամ արմատների միացումից կազմված լինում (որը իր հերթին կարող է բաժանվել բաղադրիչների), որոշ բարդությունների մեջ՝ առաջին եզրը: Այսպես՝ փորձանկարահանում, ինքնաբեռնաթափ, ինքնակարգապահություն, հուշակրծքանշան, գունահրավառություն, ռադիոհեռախոս, ֆոտոցուցափեղկ, էլեկտրապողպատաձուլում, ռադիոհեռագիր, էլեկտրասրտագրություն, աստղակողմնորոշում, միկրոէմալապատում, միկրոպատճենահանում և այլն բարդությունների առաջին եզրը պարզ է, իսկ երկրորդը՝ բաղադրյալ[9] (փորձ-նկարահանում, ինքն-բեռնաթափ, ինքն-կարգապահություն, հուշ-կրծքանշան, ռադիո-հեռախոս, ֆոտո-ցուցափեղկ, էլեկտրա-սրտագրություն, էլեկտրա-պողպատաձուլում, աստղ-կողմնորոշում, միկրո-էմալապատում, միկրո-պատճենահանում, ռադիո-հեռագիր, գույն-հրավառություն), իսկ ջրագնդակախաղ, փորագրանկար, ռադիոհանգույցավար, էլեկտրաքարշավար, ձեռագրացանկ և այլ բարդությունների առաջին եզրը բաղադրյալ է, իսկ երկրորդը՝ պարզ (ջրագնդակ-խաղ, փորագիր-նկար, ռադիոհանգույց-վար, էլեկտրաքարշ-վար, ձեռագիր-ցանկ):

Երկուսից ավելի բաղադրիչներից կազմված բարդությունների ակտիվացումը պայմանավորված է նոր հասկացությունների ու երևույթների առաջացման հետ, որոնց դրսևորման համար լեզուն իր ներքին հնարավորություններով ստեղծում է բազմաբաղադրիչ բարդություններ:

Բազմաբաղադրիչ բարդությունները լայն տարածում ունեն հատկապես մամուլի լեզվում ու մասնագիտական գրականության մեջ. օրինակ՝ «Այժմ արդեն սկսված են դերասանների փոռձանկառահանումները» (Եր., 21/3—1964): «...Ադրբեջանին անգնահատելի

---

9 Ա. Ա. Մուրվալյանը գտնում է, որ երկուսից ավելի բաղադրիչներ ունեցող բարդությունների առաջին եզրը սովորաբար բաղադրյալ է լինում, երկրորդը՝ պարզ (տե՛ս, Ա. Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 216): Այդ տեսակետը պետք է անպայման վերապահությամբ ընդունել, որովհետև, ինչպես նշվեց վերը, հաճախադեպ են այն բարդությունները, որոնց առաջին եզրը պարզ է, երկրորդը՝ բաղադրյալ:

օգնություն ցույց տվեցին քիմիական և էներգամեքենաշինական արդյունաբերության... պարզացման գործում» (Եր., 28/5—1964)։ «Հունգարական մասնագիտացված տաղավարներում ցուցադրված են նոր տիպի տրակտորներ, ինքնաբեռնաթափի մեքենաներ...» (Եր., 28/5—1964)։ «Արդեն Տալին են հասել հայկական կերպարվեստի, գրքերի ցուցահանդեսների և ֆոտոցուցահանդեսի էքսպոնատները» (Եր., 20/5—1964)։ «Այս գոտու հաղթող թիմը... կմասնակցի ռադիոհեռագրիչների ռեսպուբլիկական մրցումներին» (Եր., 2/4—1964)։ «Այն նախատեսված է ուսումնամարզական պարապմունքների, լողի, ջրացատկի և ջրագնդակախաղի մրցումների ու մարզումների համար» (Եր., 28/4—1964)։ «Ռադիոյով ընթերցում է այգու ռադիոհանգուցավարը» (Եր., 24/6—1964)։ «Դիմալուսանկարների համար առաջին մրցանակ շնորհվեց Անդրանիկ Քոչարին» (ՍՀ, 12/5—1964)։

Բազմաբաղադրիչ բարդություններ կազմելու գործում ակտիվ դեր է կատարում էլեկտր(ա) բաղադրիչը, որը հեշտությամբ միանալով որևէ բարդության հետ, ստեղծում է բազմաբաղադրիչ բարդություններ. օրինակ՝ «Ընդունարանում պատրաստեցին հիվանդի էլեկտրասրտագրությունը» (ՍՀ, 1962, № 286)։ «Շարք մտան մարտենյան ութ հալոց, էլեկտրապողպատաձուլման հինգ հալոց» (ՍՀ, 26/1—1961)։ «Նախատեսված է ծովերում և գետերի վրա վթարի էլեկտրաազդանշաններ արձակելու համար...» (ՍՀ, 25/2—1965)։ «էլեկտրամետաղակերամիկայի և կիսահաղորդիչների գործարանում յուրացվել է, այսպես կոչված, կառավարող դիոդների արտադրությունը» (Եր., 29/4—1964)։ «Սևանի էլեկտրաապակեմեկուսիչների գործարանի նոր արտադրամասում սկսեցին գործել 36 հաստոցներ...» (Եր., 29/5—1964), այլև էլեկտրամարշավար, էլեկտրամեքենաշինություն, էլեկտրաժամացույց և այլն։

Պետք է նկատել, որ էլեկտրա բաղադրիչով բարդությունների առաջին եզրը մեծ մասամբ պարզ է լինում, երկրորդը՝ բաղադրյալ։ Այստեղ որոշակի դեր է կատարում նաև առաջին բաղադրիչի կամ բառաձևի առանձին հասկացություն արտահայտելու հանգամանքը։ Ընդհանրապես, եթե բարդության երկրորդ և երրորդ բաղադրիչները միասին մեկ հասկացություն են արտահայտում, ապա առաջին եզրը պարզ է լինում, իսկ եթե առաջին և երկրորդ բաղադրիչներն են միասին մեկ հասկացություն արտահայտում, ապա երկրորդ եզրն է պարզ լինում։ Այսպես՝ միկրոէմալապատում. լուսահեռագիր, էլեկտրասրտագրություն, էլեկտրաազդանշան, էլեկ-

տրաժամացույց և այլ բարդությունների մեջ երկրորդ եզրը (էմալապատում, հեռագիր, սրտագրություն, աղդանշան, ժամացույց) բաղադրյալ է, առաջինը՝ պարզ, իսկ էլեկտրամարշալար, լուսամուտափակոց, լուսամուտագոգ և այլն բարդությունների մեջ առաջին եզրը (էլեկտրաբարշ, լուսամուտ) բաղադրյալ է, երկրորդը՝ պարզ։ Այստեղ էլեկտրամարշ և լուսամուտ բարդությունները, առանձին վերցրած, մեկ հասկացություն են դրսևորում։

Տ. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Գրական հայերենի բառային կազմում որոշ տեղ են գրավում բարբառային-ժողովրդական բառերը, որոնք հարստացրել են գրաբարի, միջին հայերենի և նոր գրական լեզվի բառապաշարը։ Այդ բառերը տարբեր չափով են համալրել մեր լեզվի բառապաշարը նրա զարգացման տարբեր շրջաններում։ Բարբառային-ժողովրդական բառերով հայերենի բառապաշարի համալրումը համեմատաբար նկատ չափով է տեղի ունենում ներկա փուլում։ Դա պայմանավորված է գրական լեզվից բարբառային տարբերությունների՝ նոր շրջանում ավելի արագ վերացմամբ։

Բարբառային-ժողովրդական բառերը, ինչպես նշվել է, գրական հայերենում այնքան էլ լայն տարածում չունեն։ Դրա պատճառներից մեկն էլ այն է, որ գրական հայերենի բառապաշարը իր հիմքով գրաբարյան է, մի բան, որ բարբառային ձև ունեցող բառերի համար դժվարություն է ստեղծում գրականի մեջ մտնելու։ Բարբառային-ժողովրդական բառերի՝ գրական հայերենում լայն գործածություն չստանալը մի կողմից էլ պայմանավորված է մամուլի, հրատարակչությունների աշխատողների և հատկապես մեր գրողների՝ բարբառային-ժողովրդական բառերի, ձևերի ու արտահայտությունների գործածության նկատմամբ ցուցաբերած մտավախությամբ։

Հայոց գրական լեզվի մեջ մտել են ժողովրդական-խոսակցական մի շարք բառեր ու արտահայտություններ։ Այսպես, գրական հայերենի բառային կազմի ժողովրդական-խոսակցական բառերից են՝ վազ տալ, շաղ տալ, շուռ տալ, վրա տալ, ծիծ տալ, գլուխ տալ, մեջ ընկնել, ծիծ ուտել, աչքով տալ, ձեռք բերել, ձեռք առնել, կպչեց անել (ԲՎ, 209) և այլ հարադրական բայերը, մեծ-մեծ, փունջ-փունջ, կարմիր-կարմիր, անուշ-անուշ, կուշտ-կուշտ, տատա-տատա, տաք-տաք, մանր-մանր և այլ կրկնավորները, ար-

ցունք, պոոշ, ճամփա, գիժ, բեխ, դազգահ բառերը, որոնք գրեթե նույնանիշ են գրաբարյան համապատասխան բառերին (արտասունք, շրթունք, ճանապարհ, խելառ, ընչացք, հաստոց), յար, ջան, մարալ, աղիզ, բլբուլ, աշուղ, չոբան, բոստան և այլն թուրք-պարսկական բարբառային փոխառությունները, էս, էդ, էն, արուն, ձուն, հեր, մեր, մորքուր բառերը, որոնք գրաբարյան երկհնչյունների դիմաց ունեն պարզ ձայնավորներ, օջախ, ալանի և այլ կենցաղային բառերը, որոնք չկային գրաբարում[10], այլև ճղճղալ (ԲՎ, էջ 194), քարթու (հաց) (ԲՎ, 194), աչքալուսանք, ջրահամ, թասակ, կուլա, բստրել, զոլ և այլն։ Սրանք հիմնականում նախասովետական շրջանից եկող բառեր են, որոնց մեծ մասը ակտիվ կիրառություն ունի նաև այժմ, հատկապես հարադրական բայերը, կրկնավորները և թուրք-պարսկական փոխառությունների մի զգալի մասը։

Սովետական իշխանության տարիներին, հատկապես նրա հաստատման սկզբնական շրջանում, որոշ չափով ակտիվացավ բարբառային-ժողովրդական բառերի ու արտահայտությունների գործածությունը, և գրական լեզվի մեջ մտան այդպիսի մի քանի փոխառություններ։ Այսպես, օրինակ՝ հուպ տալ, զուլալ, կոլոտ, հարսնատեր, էլի (կրկին, վերստին), էլ (ևս), էտ, էտել, էտոց, այգէտ (Եր., 1959, № 252), չմահավան, դահուկ, գլխահան անել, տաքլուխ, գլուխ տալ, աչքը ջուր կտրել, աչքածակ, ծալքատեղ, աղվեսահաչ, քնահարամ, թեժ և այլն։

Ժողովրդական-խոսակցական լեզվից գրականին անցան բազմաթիվ ոճեր, ասացվածքներ ու առածներ, որոնք կենդանություն, շունչ ու թարմություն հաղորդեցին նրան. օրինակ՝ ուղտի ականջում քնած լինել, տեղում ծանր նստել, լեզուն իրեն քաշել, ջանը դուրս գալ, ջուրը մտնողը անձրևից չի վախենա, մեկի հայհայն է, մյուսի՝ վայվայը, աչքից էլ ազատվեցինք, աչքացավանքից էլ, աղջիկը անկտրել ձմերուկ է։

Դեմիրճյանը ստեղծեց նոր առածներ ու ասացվածքներ, եղած ժողովրդականի նմանակությամբ. օր.՝ օրը պահանջով է, մենք նահանջով։ Գլխից էլ ազատվեցինք, գլխացավանքից էլ։ Ասպազան չկտրված ձմերուկ է և այլն[11]։

---

10 Բարբառային փոխառությունների հարցին անդրադարձել է նաև պրոֆ. Գ. Սևակը (Տե՛ս նրա «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», աշխատությունը)։

11 Այդ մասին տե՛ս, Վ. Նալբանդյան, Վարդանանք պատմավեպի լեզուն ու ոճը («Սովետական գրակ. և արվեստ», 1952, № 7)։

Բարբառային-ժողովրդական որոշ բառեր, որոնք մտել են գրական լեզվի մեջ, բաղադրվելով այլ բառերի հետ, կազմում են նոր բառեր, այսինքն՝ հանդես են գալիս բարդությունների մեջ։ Այսպես՝ դահուկ, էտ և դող բառերով են կազմված դահուկամրցում (Հ. ֆիզկ., 1962, № 25), դահուկասեր (Ն. տ.), դահուկավազք (Հ. ֆիզկ., 31/1—1958), դահուկացատկ (Հ. ֆիզկ., 5/1—1965), դահուկուղի (Հ. ֆիզկ., 30/1—1965), դահուկափայտ, լեռնադահուկ (ՍՀ, 13/10—1964), այգեէտ (ՍՀ, 21/3—1964)[12], դողէրոցք, ավտոդող և այլն բարդությունները։

9. ԳՐԱԲԱՐՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գրաբարը եղել է և մնում է մեր լեզվի հարստացման աղբյուրներից մեկը։ Սակայն գրաբարյան փոխառություն հասկացության տակ պետք է նկատի ունենալ ոչ թե գրաբարյան բոլոր բառերը կամ բառաձևերը, որոնք չկան բարբառներում կամ էլ կան, բայց հնչյունական տարբեր կազմով, այլ միայն նրանք, որոնք գրաբարից անցել են մեր լեզվի մեջ հետագայում և իրենց ստուգաբանությամբ կամ ձևաբանությամբ կապված են գրաբարի բառակազմական օրենքների հետ և հենց արտաքին ձևով մատնացույց են անում իրենց գրաբարյան լինելը։ Դրանցից են՝ սառուցյալ, հանգուցյալ, ննջեցյալ, անցյալ, մեռյալ, հիշյալ, հայոց, վրաց, պարսից, ռուսաց, առնական, քաջարի, քաջալերել, օրեցօր, տարեցտարի, ցտեսություն, հազիվ, խստիվ, պարոնայք, տիկնայք, հանձինս, ի դեմս, օրենսգետ, կենսաբեր, ընտանյոք, առոք-փառոք, կեցցե, ձայն բարբառո հանապատի, ոչ միայն հացիվ, այլև բանիվ, ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, գլուխ-գործոց, միով բանիվ, երկու չարյաց փոքրագույնը, հավուր պատշաճի, նմանը զնմանն սիրե, ի խորոց սրտի, լավ է կույր աչոք, քան կույր մտոք, տիկնայք փափկասունք հայոց աշխարհին և այլն բառերը, ոճերն, դարձվածքներն ու արտահայտությունները։

Սովետական փուլում հատկապես հայրենական պատերազմի շրջանում և նրանից հետո լայն գործածություն են ստանում գրա-

---

12 Այգեէտ բառի գրության հարցում անմիօրինակություն գոյություն ունի, «Երեկոյան Երևան» օրաթերթը գործածում է այգէտ ձևը, որը բառակազմական տեսակետից ճիշտ չէ, հետևաբար և ոչ հանձնարարելի։ Ընդունելի է «Սովետական Հայաստանի» գործած այգեէտ ձևը։

քարյան բազմաթիվ բառեր ու արտահայտություններ։ Դրանց ակտիվացումը և լայն տարածում ստանալը հիմնականում պայմանավորված էր պատմական դեպքերն ու երևույթները նկարագրող ըստեղծագործությունների երևան գալով։ Սովետահայ գեղարվեստական գրականության մեջ որոշ չափով ակտիվանում են գրաբարյան մի շարք բառեր։ Դրանցից են՝ բազմափորձ, բազմաբեղուն, բազմազարդ, բազմազբաղ, բազմալեզու, բազմաշնորհք, քաջակորով, արագոտն, գեղեցկոտն, լուսաբուխ, չարաղետ, պարետ, արկ, հեծան, հաստոց։ Պատմավեպերի մեջ ակտիվ գործածություն են ստանում նաև սուրհանդակ, տաղավար, ոստան, ոստանիկ, նախարար և այլ բառեր։ Ակտիվանում են գրաբարյան որոշ նախդիրներ ու շաղկապներ, հատկապես **զի** *և* **քանզի** *շաղկապները,* **ի**, **հանուն** *և այլ նախդիրները։ Այսպես՝ սովետահայ գեղարվեստական գրականության մեջ լայն տարածում են ստացել՝ ի հեճուկս, ի փառս, ի բարօրություն, ի զարմանս, ի պահպանություն, ի տնօրինություն, ի սեր, ի պատիվ, ի շնորհավորումն, ի տես, ի սպաս դնել, ի մի հավաքել, հանուն հայրենիքի, հանուն խաղաղության։ Գրաբարից արդի գրական հայերենի մեջ են մտել նաև ըստ իս, ըստ այնմ, հօգուտ, ի միջի այլոց, ի դեպ, ի մի հավաքել, հաճո է և այլ բառեր ու կապակցություններ։*

Վերջին տասնամյակներում բավական աշխուժացան նաև **մակ**, **գեր**, **թեր**, **ներ**, **արկ** *և այլ ածանցները։ Դրանցով բաղադրված բառերը լայն գործածություն ստացան հատկապես գիտական և տեխնիկական բնույթի ստեղծագործություններում, այլև մամուլի լեզվում։ Այսպես՝ ակտիվ գործածություն ունեն՝ գերհզոր, գերշահույթ, գերտումբ, գերաճում, գերբարձր (ՍՀ, 10/5—1964), գերադասել, գերագնահատել, գերազնիվ, գերերջանիկ, գերմաքուր, գերպայծառ, ներգրավել, ներթափանցել, ներդնել, ներծծել, թերակատարել, թերասնվել, թերագնահատել, մակագրել, մակաբերել, քննարկել, գործարկել, թվարկել, ջրարկում, սպասարկում, սպասարկել, գիտարկում (ՍՀ, 28/3—1965), խաղարկում (Եր., 8/2—1966) և այլ բառերը։*

10. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻՑ ՎԵՐՑՎԱԾ ԲԱՌԵՐ

Արևելահայ գրական լեզվի բառապաշարի հարստացման գործում որոշ դեր է կատարել արևմտահայերենը, որը տվել է որոշ բառեր ու տերմիններ արևելահայ գրական լեզվին։ Մեր մամուլը

հատկապես Նոր շրջանում սկսեց գործածել արևմտահայերենի բազմաթիվ բառեր։ Դրանցից են՝ խաչբառ, գոլաղդ, դիմահարդար, գոյամարտ, ընտրապայքար, մրցանիշ և այլն։

Մեր լեզվում կիրառություն ձեռք բերեցին նաև աշխարհամարտ (համաշխարհային պատերազմի իմաստով) և ազատամարտ (ազգային ազատագրության համար մղվող պայքարի իմաստով) բառերը։

Արևելահայ գրական լեզուն արևմտահայերենից վերցրեց նաև պարուսույց (բալետմեյստերի իմաստով), գետնուղի (մետրոյի իմաստով), նվագավար (դիրիժորի իմաստով), դերուսույց, հայտագիր (ծրագրի իմաստով) և այլ բառեր։ Բերենք բնագրային մի քանի օրինակներ. «Դերուսույց Ժորժ Սարգսյանը, որ... հետո ստանձնել էր թատերախմբի ղեկավարությունը, կրքով ու վարպետությամբ արտասանեց... մի մենախոսություն» (ՍԿ, ՔՔ, 276)։ «Նրա հայտագրերում կային Արամ Խաչատրյանը, Ալան Հովհաննեսը, Ռիչարդ Յարդումյանը...» (ԳԹ, 9/4—1965)։ «Ուզում էինք վերստին ըմբոշխնել ամենանուրբ արվեստի գեղեցկությունները, որ այնքան առատորեն հորդում էին նվագավարի ճիպոտից...» (ԳԹ, 9/4—1965)։

Արևմտահայերենից ենք վերցրել նաև գրոսաշրջիկ բառը, որը այժմ լայն տարածում է ստանում հատկապես մամուլի լեզվում։

Արևելահայ գրական լեզվում սկսել են գործածվել նաև նվագախմբեղես և երգախմբեղես արևմտահայերեն բառերը. օրինակ՝ «...արդեն սկսվել է Արա Կիրակոսյանի երգախմբեղեսը...» (ՍԿ, ՔՔ, 313), «...այստեղ՝ Երևանում նա ղեկավարեց իր նվագախմբեղեսները...» (ԳԹ, 9/4—1965)։ Պետք է նշել, որ համերգ բառին զուգահեռ երգախմբեղես և նվագախմբեղես բառերի գործածությունը նպատակահարմար չէ։

9. ՆՈՐ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ[13]

Հայերենի (և ոչ միայն հայերենի) բառային կազմի հարստացման գործում որոշակի դեր են կատարում բառակապակցությունները, որոնք ստեղծվելով այս կամ այն երևույթի հետ կապված

[13] Այս հարցը քննության է առնվել բանասիրական գիտությունների թեկնածու Տ. Հարությունյանի կողմից (Տե՛ս նրա «Սովետական շրջանում հայոց լեզվի մեջ առաջացած բառակապակցությունների մասին» հոդվածը, Պետհամալ. գիտ. աշխ., հ. 34, 1951)։

հասկացությունը արտահայտելու անհրաժեշտությամբ, որոշ չափով համալրում են բառապաշարը։

Այդպիսի բառակապակցությունները երկու և ավելի բառերի այնպիսի կապակցություններ են, որոնք հիմնականում կազմվում են հարադրության ձևով, ունեն անջատ գրություն, բայց մեկ իմաստ են արտահայտում։ Բառակապակցությունները բավական տարածում ունեն մեր լեզվում։ Դրանք ստեղծվել են հայերենի զարգացման տարբեր շրջաններում։ Բառակապակցությունները մեծ չափով ստեղծվեցին հատկապես սովետական շրջանում։ Դրանք կապված են մեր կյանքում առաջ եկած նոր երևույթների հետ։

Նոր բառակապակցություններ ստեղծելու գործում որոշակի դեր են կատարում հատկապես սոցիալիստական, սովետական, կարմիր և այլ բառերը։ Դրանք կապակցվելով այլ բառերի հետ և հանդես գալով իբրև որոշիչ, որոշյալին հաղորդում են նոր բովանդակություն. օրինակ՝ սովետական քաղաքացի, սովետական բանակ, սոցիալիստական պետություն, սոցիալիստական մրցություն, սոցիալիստական շինարարություն, կարմիր անկյուն, կարմիր հարսանիք, կարմիր տախտակ և այլն։

Մեր լեզվի մեջ մտան բազմաթիվ բառակապակցություններ՝ կապված փիլիսոփայության և քաղաքատնտեսության տարբեր հասկացությունների արտահայտման հետ. օրինակ՝ սպառողական արժեք, հավելյալ արժեք, ապրանքային ֆետիշիզմ, դիալեկտիկական մեթոդ, դիալեկտիկական մատերիալիզմ, դասակարգային պայքար, քաղաքական իրադրություն, պրոլետարիատի հեգեմոնիա, համաժողովրդական պետություն, պատմական մատերիալիզմ և այլն։ Սրանք հիմնականում ակտիվ կիրառություն ստացան սովետական շրջանում։ Նորաստեղծ բառակապակցություններ են նաև անվտանգ երթևեկության միամսյակ, գրքի միամսյակ, կուլտուր-շեֆական ձեռնարկումների միամսյակ, գրքի շաբաթ (Եր., 17/3—1965), կինոնկարների շաբաթ (Արևմտյան Բեռլինում անց է կացվում սովետական կինոնկարի շաբաթ, Եր., 17/3—1965), արվեստի շաբաթ (ՍՀ, 19/3—1965), այլև՝ թաղային լիազոր, թաղային կոմիտե, տեղամասային լիազոր, ժողովրդական ատենակալ և այլն։

Մարքսիստական գրականության տարածմամբ մեր լեզուն համալրվեց ոչ միայն նոր բառերով ու տերմիններով, այլև նոր արտահայտություններով ու բառակապակցություններով։ 20—30-ական թվականներին մեր լեզվի մեջ մտան համատարած էլեկտրիֆիկացում, համատարած կոլեկտիվացում, աջ թեքում, ձախ թե-

քում, հնգամյա պլան, պլանային տնտեսություն, մեքենա-տրակտորային կայան, բանվորա-գյուղացիական տեսչություն և այլն բառակապակցությունները։ Այդ շրջանում ակտիվացան մի շարք բառակապակցություններ. օրինակ՝ քաղաքական զգոնություն, քաղաքական հոտառություն, քաղաքական կուրություն, քաղաքական հեռատեսություն և այլն։

Սովետական կարգերի հաստատումով առաջ եկան բազմաթիվ բառակապակցություններ. այսպես՝ Սովետական իշխանություն, սովետական արդարադատություն, սովետական հայրենասիրություն, սովետական ապարատ, սովետական դեմոկրատիա, Սովետական Միություն, սովետական հանրապետություն, սովետական կարգեր, սովետական կառավարություն, սովետական հասարակարգ, սոցիալիստական համակեցություն, սոցիալիստական շինարարություն, սոցիալիստական լագեր, սոցիալիստական դեմոկրատիա, սոցիալիստական երկրներ, սոցիալիստական պարտավորություն, սոցիալիստական պետություն, սոցիալիստական մրցություն և այլն։ Վերջինիս նմանակությամբ կազմվեցին նոր բառակապակցություններ. օրինակ՝ նախատոնական մրցություն, նախընտրական մրցություն, նախամայիսյան մրցություն։ Ստեղծվեցին նաև հոկտեմբերյան կոչեր, մայիսյան կոչեր բառակապակցությունները։ Մրցության մեջ հաղթողներին խրախուսելու նպատակով ստեղծվեցին կարմիր տախտակ, պատվո տախտակ, փոխանցիկ դրոշ, պատվոգիրք (ՍՀ, 11/3—1965)։ Դրանց իմաստին հակառակ ստեղծվեց սև տախտակ կապակցությունը։ Այստեղից էլ առաջ եկան բարձրանալ սև տախտակին, բարձրանալ կարմիր տախտակին. բարձրանալ պատվո տախտակին արտահայտությունները։

Ընտրական սիստեմի մեջ տեղի ունեցած փոփոխությունները, նրա դեմոկրատացումն ու մասսայականացումը իրենց հետ բերեցին նոր հասկացություններ, որոնց դրսևորման համար առաջ եկան մի շարք բառակապակցություններ, որոնք համալրեցին մեր լեզվի բառային կազմը։ Դրանցից են՝ տեղամասային ընտրական հանձնաժողով, օկրուգային ընտրական հանձնաժողով, ընտրական օկրուգ, նախընտրական ժողով, նախընտրական կոմպանիա, դեպուտատության թեկնածու, կոմունիստների ու անկուսակցականների բլոկ, վստահված անձ, փակ գաղտնի քվեարկություն և այլն։

Կուլտուրական արժեքների փոխանակման ու ցուցադրման ճանապարհով սովետական ժողովուրդների փոխադարձ մերձեցումը հիանալի սովորույթ է դարձել։ Այդ կապակցությամբ առաջ են գա-

լիս նոր բառակապակցություններ. օրինակ՝ երաժշտության տանօրյակ (Հայաստանի արվեստասերներին սպասում է մեծ ու բերկրալի իրադարձություն՝ ռուսական սովետական երաժշտության տանօրյակը, ՍՀ, 11/4—1965), երաժշտական գարուն (Հետաքրքրական կլինի նաև անդրկովկասյան երաժշտական գարունը, ՍՀ, 11/4—1965), հայ արվեստի տանօրյակ, հայ արվեստի շաբաթ, էստրադային շաբաթ և այլն։

Տիեզերական թռիչքների հետ են կապվում մի շարք բառակապակցություններ, օր.՝ տիեզերական երթ (Յուրի Գագարինը պատմության մեջ առաջինը տիեզերական երթի է մեկնել, ՍՀ, 11/4—1965), տիեզերական տեխնիկա (Նախ և առաջ հարստացավ տիեզերական տեխնիկան, ՍՀ, 21/3—1965), տիեզերական բժշկություն (Տիեզերական բժշկությունը երևան է եկել վերջերս..., ՍՀ, 25/3—1965), երկնային դյուցազուններ (Իսկ այսօր սովետների երկրում ծնունդ է առել երկնային դյուցազունների համերաշխ համատեղությունը..., ՍՀ, 11/4—1965), այլև՝ տիեզերական հաղթանակ (ՍՀ, 11/4—1965), տիեզերական եղբայրներ (ՍՀ, 23/3—1965), աստղային եղբայրներ (ՍՀ, 23/3—1965), աստղային ուղերթ (ՍՀ, 24/3—1965), միջմոլորակային կայան (ՍՀ, 28/3—1965), տիեզերքի հերոսներ (ՍՀ, 11/4—1965), երկնային եղբայրներ (ՍՀ, 11/4—1965) և այլն։ Սովետական շրջանում ստեղծված բառակապակցություններ են նաև հարց ու պատասխանի երեկո (ՍՀ, 14/3—1965), ընթերցողների կոնֆերանս (ՍՀ, 14/3—1965), մանկավարժական ընթերցումներ, ստախանովյան շարժում, ստախանովյան հերթափոխ, արտադրության նորարար, ռացիոնալիզատորական առաջարկ և այլն։ Սրանց առաջացումը պայմանավորված է մեր կյանքի մեջ նոր երևույթների ու հասկացությունների ներթափանցմամբ։

Վերջերս առաջ եկան հարուստ հեկտար (ՍՀ, 5/3—1961) և հարուստ ֆերմա (ՍՀ, 14/6—1964) բառակապակցությունները։ Դրանք ստեղծվեցին հողի բերքատվության և անասունների կաթնատվության բարձրացումը արտահայտելու համար։ Քիմիայի բնագավառում ձեռք բերած առաջընթացը որակելու և նրա հետագա զարգացումը ու կյանքում ունենալիք հսկայական դերը բնութագրելու համար ստեղծվեց մեծ քիմիա բառակապակցությունը։ Վերջին շրջանում ստեղծվեցին նաև այլ բառակապակցություններ՝ խաղաղության համաշխարհային խորհուրդ, խաղաղության կոմիտե, խաղաղության մրցանակ, կուսակցական կյանքի լենինյան սկզբունքներ (ՍՀ, 25/3—1965), լենինյան ընթերցումներ (ՍՀ, 26/3—

1965), կուսակցական կյանքի լենինյան նորմաներ (ՍՀ, 4/12—1964), կոլեկտիվ ղեկավարության սկզբունք և այլն։

Հասարակական կարգով տարվող աշխատանքները մեր կյանքում արմատավորելու արտահայտություններից մեկն է հասարակական ասպիրանտուրա (ՍՀ, 30/12—1964) բառակապակցությունը։

Վերջին տարիներին գիտության, արվեստի ու գրականության նորություններին մարդկանց հաղորդակից դարձնելու, նրանց հոգևոր աճմանն ու դաստիարակությանը նպաստելու նպատակով հասարակական կարգով կազմակերպվեցին ժողովրդական մի շարք համալսարաններ։ Այդ կապակցությամբ առաջ եկան նոր բառակապակցություններ, օրինակ՝ ագրոքիմիայի ժողովրդական համալսարան (ՍՀ, 2/3—1965), ժողովուրդների բարեկամության համալսարան (ՍՀ, 2/3—1965), կուլտուրայի համալսարան (ՍՀ, 11/3—1965), կոմունիստական շինարարության ու պրակտիկայի համալսարան, ժողովրդական համալսարան և այլն։ Ստեղծվեցին նաև կուլտուրայի տուն (ՍՀ, 10/3—1965), կուլտուրայի պալատ (ՍՀ, 16/3—1965), կոմունիզմի մեծ կառուցումներ, դաշտապաշտպան անտառաշերտ, խոշորացված կոլտնտեսություն, կոմունիստական աշխատանքի բրիգադ, կոմերիտական երիտասարդական բրիգադ և այլն կապակցությունները։

Սովետական շրջանում կազմված բառակապակցություններ են նաև՝ հերոսուհի մայր, բազմազավակ մայր, ժողովրդական գրող (ՍՀ, 11/3—1965), ժողովրդական արտիստ (ՍՀ, 12/3—1965), ժողովրդական նկարիչ (ՍՀ, 12/3—1965), գիտության վաստակավոր գործիչ, արվեստի վաստակավոր գործիչ, վաստակավոր բժիշկ, վաստակավոր ուսուցիչ, վաստակավոր արտիստ, վաստակավոր իրավաբան, պետական մրցանակի դափնեկիր, լենինյան մրցանակի դափնեկիր, լենինյան մրցանակ, պետական մրցանակ, խաղաղության մրցանակ և այլն։ Նոր այլ կարգի բառակապակցություններ են՝ սառը պատերազմ, խաղաղ գոյակցություն, սպառազինությունների մրցավազք, միջազգային լարվածություն, իմպերիալիստական ագրեսիա, հայրենական պատերազմի վետերան և այլն։ Պատերազմի ժամանակ տարածվեցին սրբազան պատերազմ, սովետական հայրենասերներ, հայրենիքի դավաճան, ուխտադրուժ թշնամի, մարտական տեխնիկա, մարտական առաջադրանք, մարտական թռիչք, սև մահ և այլ բառակապակցություններ։ Բնագրային օրինակներ՝ «Գրոհային խումբն առաջադրանք ստացավ ոչնչացնել հակառակորդի մարտական տեխնիկան» (ՍՀ, 28/3—1965)։ «Մար-

տական առաջադրանքը կատարվեց բացառիկ հաջողությամբ» (ՍՀ, 28/3—1965)։ «Հարավային ռազմաճակատում Նելսոնը կատարեց 20 մարտական թռիչք» (ՍՀ, 28/3—1965)։

Սովետական շրջանում ստեղծվեցին նաև մի շարք կայուն բառակապակցություններ. օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպություն, Խաղաղության պաշտպանության կոմիտե, Սովետական Միություն, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն, Գերագույն սովետ, գերագույն դատարան, Մինիստրների սովետ, Սովետական Միության կոմունիստական կուսակցություն, Անվտանգության խորհուրդ, Գլխավոր ասամբլեա, Ժողովրդական տնտեսության խորհուրդ և այլն։ Սրանք հիմնականում արտահայտում են միջազգային կազմակերպությունները և մեր երկրի վարչա-կառավարական սիստեմը կամ նրա էությանը բնորոշ հիմնարկությունները։

Հայոց լեզվի զարգացման սովետական փուլում ստեղծվեցին նաև բայական արտահայտություններ, որոնք գործածական դարձան մեր իրականության բազմազան բնագավառներում. օրինակ՝ ով չի աշխատում, նա չի ուտում, լայն ճակատով պայքար ծավալել, կուլակաթափ անել, դիմակազերծ անել, դեմքը քողարկել, սովորել, աշխատել և ապրել կոմունիստաբար (ՍՀ, 5/11—1964), կոմունիստաբար աշխատել և ապրել (ՍՀ, 5/11—1964), արժանանալ կոմունիստական աշխատանքի բրիգադի կոչման (ՍՀ, 9/10—1964), դեպուտատը ժողովրդի ծառան է և այլն։

Հայրենական պատերազմի շրջանում մեր լեզվի մեջ մտան մի շարք արտահայտություններ՝ կապված պատերազմական իրադրության հետ։ Դրանցից են՝ ամեն ինչ ռազմաճակատին, մեր գործը արդար է, հաղթանակը մերը կլինի, ամրացնել թիկունքը, մահ գերմանական զավթիչներին, մոբիլիզացնել բոլոր ուժերը, մինչև ատամները զինված թշնամի և այլն։

Ինչպես տեսնում ենք, սովետական շրջանում ստեղծված բառակապակցություններն ու արտահայտությունները բավական շատ են մեր լեզվում։ Նրանց մեծագույն մասը ակտիվ գործածություն ունի մեր կյանքի տարբեր բնագավառներում։ Պետք է նկատել, սակայն, որ որոշ բառակապակցություններ, որոնք ակտիվ կիրառություն են ունեցել լեզվի զարգացման այս կամ այն փուլում, աստիճանաբար դուրս են եկել գործածությունից կամ էլ դարձել սակավ գործածական։ Օրինակ՝ կարմիր կնունք, կարմիր անկյուն, համատարած կոլեկտիվացում, նոր տնտեսական քաղաքականություն, ստախանովական շարժում և այլն։

Այսքանից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Լեզվի բառային կազմը, անմիջապես կապված լինելով հասարակական-քաղաքական կյանքի և առհասարակ մարդկային գործունեության բոլոր բնագավառների հետ, արտացոլում է վերջինիս մեջ կատարված փոփոխություններն ու տեղաշարժերը։ Այդ պատճառով էլ բառապաշարի մեջ ավելի շուտ և արագ են տեղի ունենում փոփոխությունները, քան քերականական կառուցվածքի մեջ։

2. Հայոց լեզուն սովետական շրջանում ապրել է աննախընթաց զարգացում ու վերելք, համալրվել է նրա բառային կազմը հազարավոր բառերով ու տերմիններով։ Բառապաշարի հարստացումը պայմանավորված է հասարակական-քաղաքական կյանքի, գիտության, տեխնիկայի, արվեստի, կուլտուրայի և այլ բնագավառներում կատարված մեծ փոփոխություններով։

3. Նոր բառեր են կերտվել բարդության բոլոր տեսակներով։ Ընդ որում, լայն տարածում են ստացել հատկապես բաղհյուսական և կցական բարդությամբ կազմված բառերը։ Ակտիվ կիրառություն են ստացել նաև գոյական բաղադրիչներով և գոյականից ու բայարմատից բաղադրված իսկական բարդությունները։ Նկատվում է բաղհյուսական բարդությունների՝ կցականի վերածվելու միտում։

4. Նոր բառերի ստեղծման գործում ակտիվ դեր են կատարում հատկապես լույս, լեռ, արև, ճույր, արյուն, ճեռ (հեռու, հեռուստ) հայերեն և ազրո, ավիա, գազ, էլեկտր, էներգ(ա), կինո, միկրո, ռադիո, ֆոտո, մոտո և այլ փոխառյալ բառերը կամ արմատները։ Լայն տարածում են ստացել նաև այն բարդությունները, որոնց մեջ որպես երկրորդ բաղադրիչ հանդես են գալիս տար, զեծ, մեծ, վար, կիր և այլ արմատներ։

5. Սովետական շրջանում ակտիվացան բազմաբաղադրիչ բարդությունները։ Բարդության այդ եղանակը լայն տարածում ստացավ հատկապես վերջին մի քանի տասնամյակներում։ Նոր շրջանի կազմություններ են՝ գունահրավառություն, էլեկտրապատկմնկուսիչ, էլեկտրապողպատաձուլում, էլեկտրասրտագրություն, էլեկտրաժամացույց, գազատուրբինաշինություն, ինքնաբեռնաթափ, լուսահեռագիր, լուսահեռուստատեսային, ջերմաէլեկտրակենտրոն և այլն։

6. Գրական հայերենի բառապաշարը համալրվել է նաև բարբառային-ժողովրդական, գրաբարյան և արևմտահայերենից կատարված փոխառություններով։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աբով, ԴԲ— Աբով, Դանակը բկին, Մոսկվա, 1923։
Աբով, Միայն կինը— Աբով, «Միայն կինը», Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1919։
ԱՂ, ՈՒԲ— Արարատ Ղարիբյան, Ուղղագրական բառարան։
Առողջ.— Առողջապահություն (ամսագիր)։
ԱՎ— Ազատ Վշտունի, Արևելքը հուր է հիմա, Ռոստով, 1927։
Ավ.— Ավանգարդ (լրագիր)։
ԲՎ— Բոգդան Վերդյան, Լեռների որդին, Երևան, 1962։
Գիտ. և տեխ.— Գիտություն և տեխնիկա (ամսագիր)։
ԳԹ— Գրական թերթ (լրագիր)։
ԴԴԲ— Դերենիկ Դեմիրճյան, Բանաստեղծություններ, Երևան, 1958։
ԴԴՎ— Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1954։
ԴԴ, 2— Դերենիկ Դեմիրճյան, Երկեր, հատ. 2, Երևան, 1956։
Եր.— Երեկոյան Երևան (օրաթերթ)։
ԵՉ, ԵԺ—Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1922։
ԵՉ, ԸԵ— Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954։
ԷԱ, ԳՔ— Էդվարդ Աղայան, Գրաբարի քերականություն, գիրք 1, Երևան, 1964։
ԷԱ, ԼՆ— Էդվարդ Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963։
ԼՏ, ԵԺ— Լ. Տոլստոյ, Երկերի ժողովածու, 1949։
ԽՀ— Խորհրդային Հայաստան (օրաթերթ)։
ՀՇ, ՔՀ— Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, գիրք 2, Երևան, 1958։
ՀՇ— Հովհաննես Շիրազ, Հատընտիր, Երևան, 1949։
ՀՇԲ— Հովհաննես Շիրազ, Բանաստեղծություններ, Երևան, 1954։
ՀՍ, ՆԴԲ— Համո Սահյան, Նաիրյան դալար բարդի, Երևան, 1958։
ՀՏ, ԳՓ— Հիպոլիտ Տեն, Գեղարվեստի փիլիսոփայություն, Երևան, 1963։
Հ. ֆիզկ.— Հայաստանի ֆիզկուլտուրնիկ (լրագիր)։
ՄՓՀ—Մարքսիստական փիլիսոփայության հիմունքներ, 1963։
ՆԶ, ԱԳ— Նաիրի Զարյան, Արա Գեղեցիկ, 1946։
ՆԶՀ— Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1960։
ՆԶ, ՊՊ— Նաիրի Զարյան, Պարոն Պետրոսն ու իր նախարարները, Երևան, 1958։
Շեքսպիր, ՌՋ— Շեքսպիր, Ռոմեո և Ջուլիետա։
Շեքսպիր, ԱԼ— Շեքսպիր, Արքա Լիր։
ՇԹ, ՊՀ— Շմավոն Թորոսյան, Պատանության հովտից, Երևան, 1963։
Շվ. արկ.— Քաջ Շվեյկի արկածները, 1936։
ՊՍ, ԱԶ— Պարույր Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1962։

ՊՍ, ՄԱՄ— Պարույր Սևակ, Մարդը ափի մեջ, Երևան, 1964։
Ս. Արվ.— Սովետական արվեստ (ամսագիր)։
Ս. գրակ.— Սովետական գրականություն (ամսագիր)։
Ս. դպր.— Սովետական դպրոց (լրագիր)։
ՍԶ, ՀԲ— Ստ. Զորյան, Հայոց բերդը, Երևան, 1959։
ՍԶ, ԵԺ— Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1960։
ՍԶ, ՊԹ— Ստ. Զորյան, Պապ թագավոր, Երևան, 1957։
ՍԿ, ՔՔ— Սիլվա Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են, Երևան, 1964։
ՍԿ, ՅԿ— Սիլվա Կապուտիկյան, Յոթ կայարաններ, Երևան, 1966։
ՍԽ, ՄԳՄ— Սերո Խանզադյան, Մեր գնդի մարդիկ, Երևան, 1953։
ՍԽ, ՄՍ— Սերո Խանզադյան, Մխիթար սպարապետ, Երևան, 1961։
ՍՀ— Սովետական Հայաստան (օրաթերթ)։
ՍՀ, ամս.— Սովետական Հայաստան (ամսագիր)։
Սրմ.— Սարմեն, Կենաց բաժակ։
ՎԱ, ՍԱ— Վախթանգ Անանյան, Սևանի ափին, Երևան, 1953։
ՎԱՀ— Վահրամ Ալազան, Հրարխապոեղիա, Երևան, 1923։
ՎԱԱ— Վահրամ Ալազան, Աշխատանքային. գիրք 1, Երևան, 1924։
ՎՎ, ԸԲ— Վաղարշ Վաղարշյան, Ընկերներս, բարեկամներս և ես, Երևան, 1959։
ՎՏ, ԵԺ— Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1925։
ՎԹԵ— Վ. Թոթովենց, Երկեր, 1957։
Սրմ.— Սարմեն, Կենաց բաժակ։
ՔԹՊ— Քրիստափոր Թափալցյան, Պատերազմ, հատոր 4, Երևան, 1965։
ՖՎ, ՄԼ— Ֆրանց Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964։

Ս. Ա. ԷԼՈՅԱՆ

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ԱԾԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ածանցումը հայոց լեզվի բառապաշարի հարստացման կարևոր միջոցներից մեկն է։ Որպես բառակազմության միջոց ածանցումը գալիս է մեր լեզվի զարգացման հնագույն շրջաններից

Հայոց լեզուն (և ոչ միայն հայոց լեզուն) իր զարգացման տարբեր շրջաններում հիմնականում չի փոփոխել իր բառակազմության հիմնական միջոցները, քանի որ լեզվի բառապաշարը զարգանալով միշտ չէ որ բառակազմության նորագույն միջոցներ է կիրառում. այն առաջին հերթին իր բառապաշարը համալրում և հարստացնում է սեփական բառակազմության միջոցներով։ Ինչ վերաբերում է հայերենի սովետական շրջանի ածանցավոր բառերի կազմությանը, ապա պետք է ասել, որ դա նույնպես իրացվում է մեր ածանցների հիմնական համակարգի միջոցով, այսինքն՝ եղած ածանցների ծավալմամբ ու դրա շնորհիվ նորանոր բառերի ընդգրկմամբ։ Այստեղ մեծ դեր է կատարում նաև ածանցների կենսունակությունը և բազմիմաստությունը (ածանցների իմաստների հարստությունն ու բազմազանությունը)։ Սակայն որքան էլ մեր լեզվի զարգացման ընթացքում ածանցների հիմնական համակարգը ընդհանուր առմամբ պահպանվում է և բառապաշարի զարգացումը ածանցավոր բառերով հիմնականում ընթանում է հայոց լեզվի եղած ածանցների ծավալմամբ ու զարգացմամբ, այնուամենայնիվ լեզվի զարգացման որոշակի ժամանակաշրջանում, մանավանդ, երբ այն կրող ժողովուրդը ապրում է պատմական, հասարակական ու սոցիալական մեծ տեղաշարժեր, գոյանում են նաև նոր ածանցներ (թեև սահմանափակ թվով). լինի դա սեփական բառարմատների իմաստի մթագնման և վերացականացման, թե փոխառյալ բառերի ա-

ծանցների իմաստների գիտակցման և առանձնացման շնորհիվ։ Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում ածանցավոր նորակերտ բառերի կազմությունը ընթանում է վերջածանցման և նախածանցման ճանապարհով, ըստ որում, ակնհայտ է, որ առյուծի բաժինն ընկնում է վերջածանցմանը։

1. ԱԾԱՆՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իբրև պատմական երևույթ լեզուն բնականաբար զարգացում և փոփոխություն է ապրում։ Լեզվի զարգացման և փոփոխության պատկերը արտացոլվում է նաև բառակազմության մեջ։ Լեզվի զարգացման տարբեր շրջաններում ածանցները տարբեր կիրառություններ են ունենում, այսպես՝ մի շարք ածանցներ առավել կենսունակ են դառնում կամ նոր են սկսում ծավալվել, մինչդեռ ուրիշները իմաստի մթագնում են ապրում, քարանում և դառնում մեռած ածանցներ։ Հին որակի տարրերի մահացումը, ինչ խոսք, որ լեզվի մեջ տեղի է ունենում ոչ միանգամից, այլ աստիճանաբար և դանդաղորեն։ Այսօր մեզ համար պարզ թվացող առաստաղ (առ+աստեղ), անդունդ (ան-դունդ), առողջ (առ-ողջ), զառամյալ (զ-առ-ամ-եալ), զարկ (զ-արկ), ցերեկ (ց-երեկ), սփոփել (ս-փոփ-ել) և այլ բառերը մեր լեզվի հնագույն շրջաններում եղել են բաղադրյալ կազմություններ։

Ա. ԱՆԿԵՆՍՈՒՆԱԿ ԵՎ ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱԾԱՆՑՆԵՐ

Ըստ կենսունակության աստիճանի կամ բառակազմական ակտիվության՝ ածանցները բաժանվում են երկու խմբի՝ անկենսունակ և կենսունակ:

ա) Անկենսունակ ածանցներ— Իր նախորդ էտապների (գրաբար, միջին հայերեն, նախասովետական աշխարհաբար) հետ համեմատած, հայերենի սովետական շրջանն ավելի հնարավորություն ունի սահմանազատելու այն ածանցները, որոնք իրենց իմաստներով հնացած կամ քարքարային են և ժամանակակից հայերենում այլևս բառակազմական ակտիվ դեր չունեն։ Նախասովետական հայերենին շատ ավելի էին հատուկ տարբեր բնույթի անմիօրինակություններ, կառուցվածքային որոշ երևույթների մեջ դեռևս բացակայում էր հստակ սահմանազատումը և այլն։ Դա բնականաբար վերաբերում է նաև կենսունակ և անկենսունակ բառակազմական

ածանցների տարբերակմանը: Սովետական շրջանի հայերենը, որ իբր առավելություն նախորդ շրջանների՝ պետական ընդհանուր գրական լեզու է, այդ բանին լիովին չհասավ: Բայցևայնպես նրա կեսդարյա զարգացման մեջ զգալիորեն սահմանազատվեցին ածանցների հիշյալ խմբերը և մի շարք ածանցներ ստացան դերի և իմաստի կայունացում: Այսպես՝ ժամանակակից հայերենն ուներ կոնկրետացնող, ընդհանրացնող բնույթի մի շարք ածանցներ, ինչպես՝ -ուրդ, -ույթ, -ույց, -ություն և այլն, որոնք բացի վերջինից սակավ կենսունակ ածանցներ էին: Հայագիտության մեծ երախտավոր պրոֆ. Մանուկ Աբեղյանը, որ մեծ ծառայություն է մատուցել նաև հայերենի սովետական շրջանի բառակազմությանը, իր նշանավոր «Հայոց լեզվի տեսություն» (Երևան, 1931) աշխատության մեջ, դեռևս -ույթ ածանցով նշում էր մի քանի բառեր (գրեթե այնքան, որքան -ուրդ, -ուստ ածանցներով): Եվ այդ թվականներին (30-ական) դա արդարև այդպես էր: Սակայն վերջին շրջանում (50-ական թվականներից սկսած) հենց մեր աչքի առջև հաղթանակեց կոնկրետության իմաստ արտահայտող -ույթ ածանցը և դարձավ կոնկրետացնող, առարկայացնող իմաստով շատ կենսունակ, մասամբ խլելով նաև -ուրդ և -ություն ածանց ունեցող բառերի մի քանի կիրառությունները (տես էջ 83, 84), մինչդեռ մյուսները մնացին կենսունակության նույն մակարդակի վրա՝ պահպանելով կոնկրետություն, ընդհանրություն արտահայտող մի քանի մասնավոր կամ նեղ իմաստներ:

Նույնը վերաբերում է նաև -գործ նորաստեղծ ածանցին (հմմտ. մոդելագործ, թունելագործ, գազագործ և այլն): Գործ արմատը վերացականանալով դարձավ «զբաղմունքի», «մի բան անողի» իմաստ արտահայտող ածանց և այս իմաստով այնքան ակտիվացավ, որ նույնիսկ իր ետևում թողեց դարձյալ սովետական շրջանում ակտիվացած -ող և -արար համանիշ ածանցները. սրանցից ունենալով այն առավելությունը, որ կարող է դրվել առավել շատ թվով հիմքերի վրա, քան վերոհիշյալ ածանցները:

Անկենսունակ ածանցներով սովորաբար նոր բառեր չեն կերտվում: Անկենսունակ ածանցները լինում են՝ գիտակցվող և քարացած: Գիտակցվող կամ կենդանի են այն ածանցները, որոնք ժամանակակից հայերենում դեռևս գործում են, պահպանված են բավական թվով կազմություններում (թեև մի քանի կազմություններում վաղուց ի վեր իմաստի մթագնում են ստացել և քարացել)

և ընդհանրապես նոր բառեր չեն կերտում[1]։ Սրանք գրաբարի, միջին հայերենի ու աշխարհաբարի համար ընդհանուր և մասամբ էլ բարբառներից մուտք գործած ածանցներն են, որոնք տարբեր չափով են գործածվում ժամանակակից հայերենում։

Դրանք են՝ **-աշ** (մատղաշ, թթվաշ), **-առ** (գետառ, կայտառ), **-ատակ** (հիշատակ, նահատակ), **-ար** (կերպար, տիպար), **-արդ** (խորանարդ, գմբեթարդ), **-աց** (դիմաց, կենաց), **-ափ** (սարսափ, տարափ), **-գար** (աշագար, գլխագար), **-դժ** (դժբախտ, դժգոհ), **-եմ** (խոհեմ, համեմ), **-եստ** (արվեստ, գովեստ), **-եք** (ամենուրեք, նշանդրեք), **-իլ** (կաթիլ, տեսիլ), **-իճ** (կապիճ, կավիճ), **-իվ** (առթիվ, դարիվ), **-իք** (արգասիք, գործիք, ընթրիք), **-կակ** ‖**-կեկ** ‖**-կիկ** (-իկ+ակ, -ուկ+ակ, -իկ+-յակ— մեծկակ, լայնկեկ, կարմրկեկ, պատանեկիկ, կանուխկեկ)[2], **-կեն** (ծակոտկեն, հյուսկեն, ցանցկեն), **-կուն** (դիմացկուն, խաղացկուն), **-ոտի** (հնոտի, ցնցոտի), **-որ** (բոլոր, գլոր), **-չեք** (ավետչեք, կարողչեք), **-վանդ** (արգավանդ, դարավանդ), **-ույկ** (գրքույկ, խարույկ), **-ույք** (կահույք, հաճույք), **-ուղ** (պտուղ, ցնցուղ), **-ուշ** (սրտառուշ, տեսուշ), **-ուռ** (միահամուռ, մրմուռ), **-ուստ** (ապրուստ, գալուստ) և այլն։

Այստեղ մենք չենք բերում լրիվ քարացած կամ գործածությունից լրիվ դուրս եկած ածանցները. ինչպես՝ **-անդ** (եռանդ), **-աստ** (զգաստ, իմաստ), **-նի** (գաղտնի), **-ունդ** (սնունդ, սերունդ), **-ախ** (ուրախ, հաճախ), **ան-** («վրա» նշանակությամբ. հմմտ.՝ անկողին, անձեռոց, անթեղ և այլն), **-ուր** (բլուր, թափուր, հանուր, մրուր) և այլն։ Սրանց թիվը բավական շատ է, և հիշյալ ածանցներով կազմված բառերը մեր բառային կազմում գործածվում են գերազանցապես իբրև սկզբնաձևեր, որոնցում ածանցները քարանալով ձուլվել են ածանցվող բառերին։

Քարացած ածանցներ են (բացի վերը բերվածներից) իմաստի մթագնում ստացած և քարացած վերջավորությունները՝ **-ամբ**, **-ավ** (ու), **-աց**, **-ից**, **-փնք** և այլն (հմմտ- բնավ, իրավ, կենաց, մասամբ, քրտինք և այլն), բաղադրական ածանցները (բնաձայնական բայերի ածանցները, սոսկածանցները, աճականները և այլն) և մի շարք հին նախդիրներ։ Սակայն սրանք քարացել են մեր լեզվի հնագույն շրջաններում և ժամանակակից հայերենին են անցել իրենց քարա-

---

[1] Այստեղ մենք նկատի ենք ունեցել ածանցների կենսունակության ընդհանուր մակարդակը միայն, քանի որ նույնիսկ անկենսունակ ածանցով էլ բացառաբար կարող է ստեղծվել մեկ—երկու բառ. (օրինակ՝ -արդ -ձվարդ, -ատի -մատաղատի» ԳԹ, 9/6—1965)։

[2] «Արշալույսին կանուխկեկ, Որշափ սիրեմ ոտքս մերկ» (ՊԴԲ, 26)։

ցած վիճակով։ Նման անկենսունակ ածանցները բնականաբար դուրս են մնում մեր ուսումնասիրության շրջանակից, քանի որ դրանց բառակազմական դերը լրիվ սպառվել է և դրանք ամբողջապես վերածվել են քարացած ածանցների։

բ) Կենսունակ ածանցներ — *Կենսունակ են համարվում այն ածանցները, որոնց շնորհիվ նոր բառային արժեքներ, նորանոր կազմություններ են ստեղծվում մեր լեզվում։ Ածանցների կիրառությունների մասին խոսելիս պետք է ընդհանրապես նկատի ունենալ այն, որ կենսունակ և անկենսունակ ածանցների մեծագույն մասը հիմնականում այդպիսին էր նաև հին հայերենում, այսպես՝ նախդիրների մի մասի իմաստի մթագնումը և քարացումը տեղի է ունեցել դեռևս գրաբարի ներսում (հմմտ. առաստաղ, առեղծուած, զառամնալ, առողջ և այլն), կամ այժմյան կենսունակ ածանցների մեծագույն մասը, ինչպես՝* **-ային, -ական, -բար, -ելի, -յան** *(եան),* **-պես, -վոր, -ություն** *(ութիւն),* **-ում** *(-ումն) և այլն, կենսունակ էր նաև հին հայերենում։ Բերենք ժամանակակից հայերենի կենսունակ ածանցների ցանկը.*

-Ալի *(ձանձրալի, նողկալի),* **-ակ** *(գետակ, դռնակ, լճակ),* **-ակի** *(եզակի, անցողակի, երկակի),* **-ական** *(անզուգական, հերոսական, հոգևորական),* **-ային** *(գծային, գարնանային, մարդկային),* **-ան** *(ծորան, կռան, կծան),* **ան-** *(անմիտ, անսեր),* **-անի** *(գեղանի, միակողմանի),* **-անոց** *(հիվանդանոց, զինանոց, հովանոց),* **-անք** *(սխրանք, տուգանք, երկմտանք),* **-արար** *(աղմկարար, գործարար, շինարար),* **-արան** *(բնակարան, ընթերցարան, լսարան),* **-արկ** *(փաստարկ, հիմնարկ, մեկնարկ),* **արտ-** *(արտաշնչել, արտացոլել),* **-ացի** *(խելացի, իրավացի, քաղաքացի),* **-ացու** *(հարսնացու, շորացու),* **-բար** *(գիտակցաբար, հերոսաբար),* **գեր-** *(գերհզոր, գերակատարել, գերարտադրել),* **-գին** *(կաթոգին, սրտագին),* **-գույն** *(լավագույն, բարձրագույն),* **-ելի** *(հայելի, սիրելի),* **-եղ** *(ահեղ, համեղ, հանճարեղ),* **-եղեն** *(ակնեղեն, քաղցրեղեն),* **-ենի** *(հայրենի, նշենի),* **-ի** *(աղի, կանաչի),* **-իկ** *(փոքրիկ, լավիկ),* **-ին** *(դյուրին, նըրբին),* **-իչ** *(բնակիչ, գրիչ, գործիչ),* **-լիկ** *(բկլիկ, կարճլիկ, չեկլիկ),* **-կոտ** *(ամաչկոտ, վախկոտ),* **հակ-** *(հակադարձ, հակաճառել),* **համ-** *(համամիտ, համակերպվել, համադաս)* **-հար** *(դալկահար, վշտահար),* **-մունք** *(ասմունք, վարմունք, ուսմունք),* **-յա** *(հնօրյա, երկաթյա, ընդհատակյա),* **-յակ** *(հոգյակ, հատորյակ, աշափնյակ, երկվորյակ),* **-յան** *(արևելյան, վեցթևյան, լենինյան),* **-յուն** *(սոսափյուն, դղրդյուն),* **նախ-** *(նախաշավիղ, նախալեզու, նախասեն-*

յակ), ներ- (ներածություն, ներանձնական, ներմուծել), -ոն (գործոն, կտրոն, մանրոն), -ովի (մտովի, յուրովի, ընկերովի), -ոտ (մրոտ, բրդոտ), -որեն (բնականորեն, վեհորեն), -որդ (անցորդ, ծանրորդ, մրցորդ, հավակնորդ, լողորդ), -ոց (ծակոց, շրխկոց, դրոշմոց), -պես (առանձնապես, մշտապես), -վածք (բանվածք, գործվածք, խառնվածք), -վետ (արդյունավետ, բուրավետ, շահավետ), վեր- (վերարտադրել, վերակառուցել, վերանորոգել), -վուն (կարմրավուն, սևավուն, երկարավուն), -ցի (լենինցի, երևանցի, սպարտակցի), -ություն (ամրություն, գրություն, լավություն), -ուհի (տիրուհի, հայուհի, չեմպիոնուհի, պատվիրակուհի), -ում (կառուցում, մտորում, խմորում), -ույթ (ձևույթ, դրույթ, կացույթ, հնչույթ), -ուն (գործուն, կայուն, արթուն), -ունք (ծաղկունք, սկզբունք), -ուտ (կաղնուտ, թեղուտ), -ուկ (բանուկ, մածուկ, տաքուկ), -ք (հոսք, միտք, ելք)։

Հիշյալ ածանցները թեև ընդհանուր առմամբ կենսունակ են և՛ նախասովետական, և՛ սովետական շրջանների հայերենի համար, սակայն դրանց կենսունակության աստիճանը միատեսակ չէ։ Ածանցների մի մասը ավելի նվազ կամ սակավ կենսունակ է, մյուսը՝ առավել կենսունակ։

Ածանցների կենսունակության պահպանումը կամ ակտիվացումը լեզվի զարգացման բոլոր շրջաններում միանգամայն բնական է, քանի որ չի կարող դադարել կամ սպառվել այդքան մեծ թվով բառեր կերտած ածանցների կենսունակությունը, երբ դրանցով է դրվել մեր բառային կազմի բավական մեծ թվով բառերի կազմավորման և զարգացման հիմքը։ Հետևաբար և արդի հայերենի ածանցավոր բառերի զարգացումը նույնպես ընդհանուր առմամբ միևնույն կենսունակ ածանցների բնական զարգացումն ու ծավալումն է, որ ընթանում է նորանոր բառերի, նոր տերմինների և նոր հասկացությունների կերտմամբ[3]։ Սակայն կենսունակ ածանցները շարունակաբար պահպանվելով և դուրս չգալով գործածությունից՝ իրենց զարգացման ընթացքում կենսունակության տարբեր աստիճաններ են ունենում. այսպես՝ որոշ ածանցներ իմաստի նեղացում և սահմանափակում են ապրում և աստիճանաբար դուրս գալիս գործածությունից՝ իրենց տեղը զիջելով այլ ածանցների, մի

3 Թեև հնարավոր է կենսունակ ածանցներով կազմված մեկ կամ մի քանի բառերի իմաստների հնացում կամ գործածությունից դուրս մղում, սակայն սա վերաբերում է տվյալ ածանցավոր կազմություններին միայն և ոչ՝ ածանցներին։

քանիսը սակավ կենսունակ կամ անկենսունակ լինելով, ընդհակառակն, սկսում են իմաստի աշխուժացում և առավել կենսունակություն ձեռք բերել, այլ ածանցներ նոր են սկսում ծավալվել և կենսունականալով՝ ընդգրկում առավել մեծ թվով կազմություններ և այլն։

Ածանցների կիրառությունների քննությունը, նրանց գործածության ոլորտների բացահայտումը, ինչպես նաև կենսունակ և ոչ կենսունակ տարրերի սահմանազատումը մեծապես կնպաստի հայոց լեզվի սովետական շրջանի ածանցների զարգացման պատկերը ճիշտ վերարտադրելուն և ներկայացնելուն։

Բ. ԻՄԱՍՏԻ ՆԵՂԱՑՈՒՄ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԱԾԱՆՑՆԵՐ

-ած. Այս ածանցով ժամանակակից հայերենին են անցել դեռևս գրաբարում գործածված **առեղծված, արարած, արարված, արկած, դիպված, զանգված, խորոված, կոտորած, հատած, հատված, հավելված, հոդված, վարկած, քերթված** գոյականները։

Հին հայերենից հետո այս ածանցը զարգացում չգտավ և դեռևս աշխարհաբարում (նոր հայերենում) գործածության մեջ մտավ սրանով և **-ք** ածանցով բաղադրված միևնույն նշանակությունն ունեցող **-վածք** ածանցը. ինչպես՝ գործվածք, գրվածք, իջվածք, խառնվածք, խոսվածք, հյուսվածք, պատմվածք և այլն։ Ժամանակակից հայերենում **-ած** ածանցը բառակազմության բնագավառից անցավ քերականության բնագավառը, դարձավ հարակատար դերբայի մասնիկ (հմմտ. գրած, նկարած, խառնված, երգած), որով և հիմնականում ավարտեց իր բառակազմական դերը։ Այժմ այս ածանցով նոր բառեր կարող են առաջանալ արդեն հարակատար դերբայի ածականական կիրառություններից միայն, ինչպես նախկինում կազմվել են **նշանած, սիրած** բառերը, որոնցում **-ած**-ը բառակազմական ածանց է։

Այսպիսով, ժամանակակից հայերենում դադարել է **-ած** ածանցով նոր բառերի կազմումը, և դրանք գոյանում են միայն հարակատար դերբայներով արտահայտված որոշիչների ածականական կիրառության և դրանց խոսքի մասային իմաստների փոխանցման ճանապարհով։

-ժեռ. Այս ածանցով կազմվել են **ամպաժեռ, դեղնաժեռ, կարմրաժեռ** (կարմրժեռ) **մթնաժեռ, հաղթաժեռ** (Նվ համբույրով մ՝

այն գիշեր, Կին մ՚ Իտալիան նվաճեց, Մարդ մը բուրգերն հաղթաժեռ, ԴՎ, 226) և այլ բառերը։ Սրանով հայերենի հին, միջին և նոր (աշխարհաբար) շրջաններում ավելի բառեր են կազմվել, քան սովետական շրջանում։ Այս ածանցը այժմ խիստ սահմանափակ կիրառություն ունի. նրան դուրս է մղել -վուն համանիշ ածանցը, որ ավելի կենսունակ է սովետական շրջանում։

-ժեռ ածանցը առավել գործածական է բարբառներում և ժամանակակից հայերենի արևմտահայ հատվածում։

Ապ- Հայերենի նախածանցներից (ան-, ապ-, դժ-, տ-, չ-) սովետական շրջանում ամենավենդանին և ամենակենսունակը աննախածանցն է, որ շատ կազմություններում արդեն դուրս է մղել ապ- ածանցին։ Ապ- ածանցով կազմված ապաշնորհ, ապարդյուն, ապերասան (երասան, սանձ չունեցող), ապերջանիկ, ապերախտ, ապիկար, ապուշ, ապօրինի բառերի կողքին սովետական շրջանում նոր բառեր չեն կազմվել, ընդհակառակը, սրանց հետ այսօր զուգահեռ ձևով գործածական են նաև դրանց ան- նախածանցավոր ձևերը. ինչպես՝ ապաբախտ—անբախտ, ապարդյուն—անարդյունք, ապաշնորհ—անշնորհք, ապարժան—անարժան (Կորավ վերջին հույսը փրկելու նրան ապարժան պատժից, ԼՏՀ, 398) և այլն։

Սակայն ապ- ժխտական նախածանցը, իբրև այդպիսին, դուրս գալով գործածությունից՝ կենսունակություն է ձեռք բերում այլ համանիշ իմաստով։ Այսպես, սովետական շրջանում կազմվել են ապ- նախածանցով մի շարք բառեր, որոնք թեև ընդհանուր առմամբ ժխտական իմաստ են արտահայտում, սակայն միաժամանակ ունեն նաև «հեռացնելու» իմաստը։ Այսպես՝ ապազգային, ապադասակարգային, ապակենտրոնացում, ապակողմնորոշում, ապամոնտաժել (մոնտաժային բոլոր աշխատանքները խոտան են, պետք է նորից ապամոնտաժվեն, ՍՀ, 25/6—1964), ապաճերոսացում, ապառեակավորում, ապախսկալացում (ՍՀ, 19/4—1968) և այլ բառերից առաջին երկուսը կոնկրետ ժխտական իմաստ ունեն (համմտ. ոչ ազգային, ոչ դասակարգային), իսկ մյուսներում ածանցը ընդհանուր ժխտական իմաստի հետ պարունակում է նաև տվյալ վիճակից «հեռացնելու, դուրս բերելու» իմաստը. այսպես՝ ապակենտրոնացում, ապամոնտաժում նշանակում է կենտրոնացման, մոնտաժային դրությունից հանել, դուրս բերել, նույնը և ապագաղութացում (ՍՍ, 19/12—1966), ապառազմականացնել (ՍՍ, 19/12—1969) և այլն։

-Պան. Դրվում էր մի շարք բառերի վրա և կազմում որևէ ըղ-

բաղմունքի կամ պաշտոնի իմաստ արտահայտող բառեր. ինչպես՝ այգեպան, բակապան, դրոգապան, դռնապան, խանութպան, ճնոցապան, ձիապան, ջորեպան, կառապան, պարտիզպան, սայլապան, ուղտապան *և այլն։ Սովետական շրջանում վերոհիշյալ ածանցավոր բառերի իմաստը հնացել է, և այդ բառերի մեծ մասը դուրս է եկել գործածությունից (սեփականատիրական հասկացությունների և* -պան *ածանցով արտահայտվող որոշ զբաղմունքների վերացման հետևանքով), և հիշյալ ածանցավոր բառերի հետ բնականաբար գործածությունից դուրս է մղվել նաև* -պան *ածանցը (հմմտ. սայլապան, ուղտապան, կառապան, խանութպան, ջորեպան, ձիապան և այլն)։ Այս ածանցի իմաստով այժմ ավելի կենսունակ են դարձել* -գործ *և* -արար *ածանցները։ Այժմ* -պան *ածանցով գործածվում են հատուկենտ բառեր. ինչպես՝* այգեպան, պարտիզպան, ճնոցապան, բուֆետապան *և այլն։*

–Ուրդ. *Հանդես է գալիս* արձակուրդ, անուրդ, ժողովուրդ, խառնուրդ, խորհուրդ, ճագուրդ, պարապուրդ *և այլ բառերում։ Սրանով կազմված մի շարք բառեր, ինչպես՝* ճամուրդ, ճավաֆուրդ[4], կացուրդ, կցուրդ, լսուրդ, նվագուրդ, դաշնուրդ[5] *և այլն, սովետական շրջանում դուրս եկան գործածությունից կամ փոխարինվեցին* -ույթ *ածանցով կազմված ձևերով. ինչպես՝* ճավաֆույթ, կացույթ, կցույթ *և այլն։*

Գ. ԻՄԱՍՏԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄ ԵՎ ԱՌԱՎԵԼ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱԾԱՆՑՆԵՐ

Հայերենի շատ ածանցներ հնում անկենսունակ կամ սակավ կենսունակ լինելով, սովետական շրջանում իմաստի աշխուժացում և կենսունակացում են ապրում։ Նման վերափոխություն կրած ածանցներից են.

–Ույթ. *Հայերենի սակավ կենսունակ ածանցներից էր. սրանով կազմվել էին՝ երեկույթ, երևույթ (մակերևույթ, աներևույթ), զայրույթ, ծածկույթ, կացույթ, հասույթ, հացկերույթ, ձանձրույթ, մշակույթ, նորույթ, ցերեկույթ և այլն։*

Այժմ -ույթ *ածանցը խիստ աշխուժացում է ապրում և գործ է ածվում բավական մեծ թվով կազմություններում։ Այս տեղի է ու-*

---

4 *Զուգահեռաբար կար նաև* ճավաֆույթ *ձևով։*

5 *Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 275։*

նենում, կարելի է ասել, երկու ճանապարհով: Առաջինը բխում է -ույթ ածանցի իմաստից: Այդ նրա առարկայացնող, կոնկրետացնող, գոյականակերտ իմաստն է, որով բայարմատներից ստեղծվում են «գործողության առարկայացված հասկացություն», «գործողության անուն» արտահայտող գոյականներ, իսկ գոյական անուններից՝ ընդհանրական, վերացական իմաստ ունեցող գոյականներ. ինչպես՝ բաղադրույթ, բառույթ (բառական միավոր)[6], դրույթ, ելույթ, ձևույթ, ձուլույթ (ձուլված նյութը. հմմտ. «Ամենաբարդ օպերացիաները, որոնցից կախված է կաղապարների ճշտությունը և ձուլույթների որակը, կատարում է ավելի փորձառու Վ. Կորսակինը», Եր., 5/10—1963), արժույթ[7], ճանույթ, ճառույթ[7], ճրնչույթ, վարձույթ, տիրույթ, փաթույթ[8] (փաթաթված իր, առարկա, հմմտ. «Նույն արտադրամասում 104 փաթույթ կտորեղեն վերամշակվեց», Եր., 11/12—1963) և այլն: Երկրորդ ճանապարհը -ություն բաղադրյալ ածանցի իմաստով, մասամբ նաև նրա փոխարեն գործածվելն է, որ հաճախ տեղի է ունենում -ույթ և -ություն ածանցների իմաստների տարբերակման հետևանքով. այսպես՝ ավանդույթ (ավանդություն բառի փոխարեն), մրցույթ, վերջույթ (գործածվում է վերջավորություն բառի ավելի նեղ և կոնկրետ նշանակություններով. ա) Օրգանիզմի վերջավորություն, հմմտ. «Նա ստացել է վերին վերջույթի կոտրվածք», Եր., 5/1—1961, բ) Գեղարվեստական երկի եզրափակող վերջաբանը՝ էպիլոգ)[9], վերջնակրկնույթ և այլն:

-Ություն ածանցի փոխարեն -ույթ-ի գործածության դեպքեր եղել են նաև նախասովետական հայերենում. այսպես՝ նորույթ բառը նորություն բառի իմաստով գործածվում էր դեռևս նախասովետական շրջանում, պարույթ՝ պարունակության փոխարեն (...և պարույթը ռուսական կուպրով ծեփված չվանե մը կրաղկանա, ԳՁ, 2, 221) և այլն:

---

6 Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 29, 43:

7 Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 52, 53:

8 Այս բառը ավանդված է դեռևս հին հայերենից, սկզբնապես նշանակել է «շարականի փաթաթված խաղը» (տե՛ս «Առձեռն բառարան հայերէն լեզուի», Վենետիկ, 1865, 803), իսկ հետո՝ ընդհանրապես փաթաթելը, որ այժմ բառիմաստի լրիվ փոփոխություն է կրել և նշանակում է ընդհանրապես փաթաթված որևէ առարկա:

9 Տե՛ս Գրականագիտական տերմինների համառոտ բառարան, Երևան, 1957, էջ 202:

-Արկ. մեր լեզվի նախասովետական շրջանում առավելապես հայտնի էր բայերի կազմության մեջ. ինչպես՝ առաջարկել, բանտարկել, ներարկել, խնկարկել, խուզարկել, ձեռնարկել, սակարկել, փորձարկել և այլն։ Սրանով կազմվում էին նաև գոյական անուններ, օրինակ՝ առաջարկ, գլխարկ, ձեռնարկ, պահանջարկ, ակնարկ, փաստարկ և այլն։

Սովետական շրջանում այս ածանցը նկատելիորեն ակտիվացել է և կազմում է բավական թվով նոր բառեր, որոնցում գերակշռում է ածանցի բայակերտ նշանակությունը. ինչպես՝ գանգատարկել, գործարկել, դիտարկել, բողարկել, լողարկում (Այդ լողարկումը շարունակվում է արդեն մոտ միլիոն տարի, ՍՆ, 4/3—1965), լցարկել (ՍՆ, 10/12—1965), կանոնարկել, մեկնարկ (ՀՑ, 7/6—1969), մեկնարկել (ՀՑ, 20/6—1968), շահարկել (ԳԹ, 3/12—1965), շեփարկյալ (Բանկոոպի շեփարկյալ Աղբաշ գյուղում հիմնված է կաշվի գործարան, ԽՀ, 4/2—1925), շոգեարկել (Հուլիսի հաշվին արդեն շոգեարկել են հազարավոր ցիստեռններ, ՍՆ, 21/7—1964), ջրարկել (Ճապոնական նավաշինարանում ջրարկվեց Սովետական Միության պատվերով կառուցված «Լենինգրադ» հեղուկանավը, ՍՆ, 28/7—1963), վանկարկել, վիճարկել, քննարկել և այլն։

-Որդ. Թեև նախասովետական հայերենում նույնպես կենսունակ էր, սակայն չուներ այնպիսի լայն ընդգրկում, ինչպիսին ունի այժմ։ Սրանով հայտնի էին բավականաչափ գոյական անուններ (գերազանցապես անձի իմաստ պարունակող), ինչպես՝ անկամորդ, առաջնորդ, անցորդ, գնորդ, գնդացրորդ, կցորդ, հակառակորդ, հետնորդ, ճանապարհորդ, մնացորդ, լողորդ, նավորդ, որսորդ, պահնորդ, ցանցորդ (ձկնորս) և այլն։ Այժմ այս ածանցով կազմվել են անձի իմաստ արտահայտող[10] բազմաթիվ նոր բառեր. ինչպես՝ դիտորդ, ղեկորդ, ճոպանորդ, վարորդ, հավաքորդ, փոխարինորդ, կրկնորդ (ՍՆ, 13/9—1969) և այլն։

-Որդ ածանցը վերջին տասնամյակի ընթացքում առավել աշխուժացավ հատկապես սպորտային տերմիններ կերտելու բնագավառում։ Նրանով կազմվեցին սպորտի որևէ ձևով զբաղվողի իմաստ արտահայտող մի շարք նոր բառեր. ինչպես՝ դահուկորդ, բեռնորդ, թիավարորդ, ծանրորդ, ձեռնագնդորդ (ՍՆ, 26/4—1965), ձիորդ, մուրճորդ (Համամիութենական ռեկորդ սահմանեց նաև

10 Այս իմաստով գործածվել է նաև պարապորդ գոյականը (Որևէ կամ ճամփու գնողներ էին կամ պարապորդներ, ԴԴ, 1, 240), որ անհաջող է և գործածություն չգտավ։

մուրճորդ Ռ. Կլիմը, ԵԵ, 19/9—1964), նետորդ *(ՀՅ, 8/4—1969)*, նիզականետորդ, մրճանետորդ *(ՀՅ, 1/5—1968)*, ջրագնդորդ, սուզորդ, վազորդ *(Օլիմպիական կրակը փոխանցվում է նաև հույն վազորդին, ՀՅ, 29/8—1964)*, ցատկորդ *(ձողացատկորդ, հեռացատկորդ, բարձրացատկորդ, ջրացատկորդ), հեծանվորդ և այլն։*

-Յակ. *սրանով կազմված են տարբեր իմաստ ունեցող բառեր. ինչպես՝ «նվազափաղաքշական» (հմմտ. ալյակ, հարսնյակ, հոգյակ, կղզյակ, պատանյակ և այլն), «որևէ կոնկրետ թվային ամբողջությամբ արտահայտվող ժամանակաշրջանի, առարկաների և մարդկանց որևէ խմբի» (հմմտ. երկամյակ, երկամսյակ, եռամսյակ, հնգամյակ, եռյակ, քառյակ, հնգյակ, վեցյակ և այլն)։ Կան նաև մի քանի գոյականներ, որոնք արդեն հեռացել են նվազափաղաքշական իմաստից. ինչպես՝* լուսնյակ, ոսպնյակ, *և այլն։ Նվազական և փաղաքշական իմաստ պարունակում են* -յակ *ածանցավոր այն բառերը, որոնք վերջանում են* -ի *արմատական ձայնավորով (հմմտ.՝* ալի(f), կղզի, պատանի, հոգի, որդի *և այլն), որը դեռևս շատ վաղուց* -ակ *վերջածանցի հետ բաղադրվելով կազմել է* -յակ *բաղադրյալ վերջածանցը։ Այնուհետև* -յակ *վերջածանցը կենսունականալով,* -ի *վերջնահնչյուն ունեցող բառերից բացի, դրվել է նաև այլ բառերի վրա, որոնք* -յակ *ածանցով արդեն նվազափաղաքշական իմաստ չեն ստանում։*

-Յակ *ածանցը ոչ նվազափաղաքշական իմաստով լայն գործածություն ստացավ սովետական շրջանում։*

Սրանով կազմվեցին ընդհանրացնող իմաստով մի շարք նոր բառեր. ինչպես՝ հատորյակ *(միհատորյակ, երկհատորյակ)*, շաբաթօրյակ, Աջափնյակ *(Հրազդանի աջ ափին բարձրացած նոր բնակելի շրջան)*, առափնյակ *(...Կստեղծվեն գեղեցիկ առափնյակներ, Եր., 29/11—1963)*, ձախափնյակ *(Ձյունապատ ձախափնյակում արդեն վեր է խոյանում ամբարտակը, ՍՀ, 1/2—1964)*, հնգօրյակ *(ԵԵ, 20/8—1967)*, լողուղյակ *(ՀՅ, 8/3—1968)*, վազքուղյակ *(Նա անխոնջ վազում էր վազքուղյակում*[11], *ՀՅ, 4/4—1964)։*

-Ցի. *հիմնականում տեղանվանական իմաստ ունի, որ շատ կազմություններում միաժամանակ ստանում է նաև ազգային պատկանելության իմաստ. ինչպես՝* հայաստանցի, ինդոնեզցի, անգլիացի, ֆրանսիացի, վրացի *և այլն։* -Ցի *ածանցը լայն գործածության մեջ մտավ դեռևս քաղաքական թվականներից՝* մոսկվացի, բեռլինցի,

---

11 *Բերված վերջին հինգ գոյականները կազմվել են վերջին տասնամյակներում։*

նայիրցի, կիպրոսցի, կուբացի, պրագացի, պեկինցի, էստոնացի, լիտվացի, համադասարանցի, համակուրսեցի և այլն։ -Ցի ածանցը սովետական շրջանում լայնորեն տարածվեց տեղանվանական իմաստով, ընդորում ոչ միայն սոսկ աշխարհագրական տեղանվան, այլև տեղանվան ավելի լայն, ավելի ընդհանրական իմաստներով (լինի դա որևէ հիմնարկ, թիմ, գործարան, ֆակուլտետ և այլն). Նրանով կազմվեցին որևէ տեղանվան պատկանողի իմաստով անձի բազմաթիվ հասարակ անուններ. ինչպես՝ կոմիտասցի (Կոմիտասի անվան կվարտետից), սպարտակցի (համանուն թիմից), կիրովցի (Կիրովի անվան գործարանից), թամանցի (համանուն գնդից), աբովյանցի (Աբովյանի անվան դպրոցից), հիդրոհաղորդակցի (համանուն գործարանից), սունդուկյանցի (Սունդուկյանի անվան թատրոնից), պոլիտեխնիկցի և այլն։

-Ցի ածանցը, լայն գործածության մեջ մտնելով, զգալիորեն դուրս է մղել -ացի ածանցին, որի հնչյունաիմաստային տարբերակըն է հանդիսանում։ -Ացի-ով դեռևս հնում կազմվել էին գավառացի, տեղացի, վրացի, քաղաքացի և այլ գոյականներ (որոնցում -ացի ածանցը առաջացել է հին հայերենի սեռական -աց և -ի վերջավորությունների ձուլումից և իմաստի մթագնումից)։ Սրա հետ ծագումով նույնը լինելով, -ցի (նաև -եցի) ածանցը, ինչպես նկատեցինք, սովետական շրջանում առավել գործուն է, քան -ացի կամ -եցի ածանցները։ Սա կարելի է բացատրել մասամբ նրանով, որ նախ՝ շատ տեղանուններ վերջանում են -ա ձայնավորով (հմմտ. Մոսկվա, Ռիգա, Պրագա, Էստոնիա, Լիտվա և այլն), ուր այլևս ավելորդ է դառնում -ացի ձևի -ա-ի կրկնությունը, որ ավելի է նպաստում -ցի ձևի տարածմանը։ Եվ հետո՝ այստեղ մասնավորապես դեր է կատարում նաև հայերենի սովետական շրջանում ածանցների հնչյունային կառուցվածքի կրճատման, կոնկրետացման տենդենցը։ Իսկ շատ կազմություններում հանդես եկող -ացի, -եցի ձևերում (ինչպես՝ ղարսեցի, մշեցի, վանեցի, կարպեցի, աթենացի, խորենացի և այլն) -ե, -ա ձայնավորները պարզապես կապող ձայնավորներ են։ Կարճ ասած՝ այժմ -ացի, -եցի և -ցի ձևերի մեջ զարգացման տենդենցը տանում է դեպի -ցի ձևը։

-Յա ||-ե. Խիստ հետաքրքիր և զիգզագներով է ընթացել -յա և -ե ածանցների կիրառությունը։ Լինելով ծագմամբ և իմաստով նույնը, վերոհիշյալ ածանցները զուգահեռաբար գործածվելով՝ կենսունակության տարբեր մակարդակներ են ունեցել և հայերենի զար-

դացման որևէ տասնամյակում կամ քսանամյակում նկատելի է դարձնել սրանցից մեկի կիրառության գերազանցությունը։ Հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում էլ համապատասխան կարելի էր գործածել և՛ երկաթե, և՛ երկաթյա, մետաղե և մետաղյա, ոսկե—ոսկյա, արծաթե—արծաթյա[12] և այլն։ Յուրաքանչյուր հեղինակ նախընտրել է հիշյալ ածանցներից որևէ մեկի գործածությունը, որ բոլորովին պատահական ընտրություն չէ, այլ բխում է հայերենի տվյալ էտապի, ինչպես և տվյալ հեղինակի լեզվի ոճական առանձնահատկություններից։ Այսպես, Րաֆֆու 90-ական թվականների ստեղծագործություններում գերազանցում է -յա ածանցի գործածությունը։ Նրա երկերի երկրորդ և հինգերորդ հատորներում (Երևան, 1958 և 1964) մասսայաբար հանդիպում ենք -յա ածանցով կազմված հարաբերական ածականների գործածության, ինչպես՝ արծաթյա (52), երկաթյա (10, 183), եղեգնյա (11), թավիշյա (8), թաղիքյա (178), կաղնյա (2-րդ հ., 627), մարմարյա (223), մորթյա (626), պղնձյա (91, 101, 26)[13], փայտյա (27, 116), փետուրյա (18), փղոսկրյա (189) և այլն։

Վ. Տերյանի քնարական ստեղծագործություններում շատ են հանդիպում -ե ածանցով կազմված ածականներ, որոնք արդեն ոճական արժեք են ստացել և բանաստեղծական մեծ տաղանդով ընտրըված փոխաբերություններ են։ Այսպես՝ լուսե, ոսկե, հրե (Քնքուշ դու, լուսե աղջիկ ես, Արտույտ ես, ոսկե թռչնակ ես,... Հրե դու, արևային դու, Մաքուր դու, լուսե հասմիկ ես, ՎՏ, Եժ, 1, 202), ձյունե, մարջանե (Որքան ձյունե թիթեռ.... Շուրթեր ալ մարջանե, ն. տ., 202) և այլն։

Եղիշե Չարենցը, որին շատ բանով է պարտական սովետահայ պոեզիայի զարգացումը, նոր կյանք և շունչ տվեց շատ ածանցավոր բառերի, որոնց մեծագույն մասը նորություն է հայերենի բառակազմության մեջ։ Ե. Չարենցը շատ էր սիրում գործածել -ե ածանցը (հատկապես փոխաբերական իմաստով ածականներ կերտելիս)։ Այսպես՝ երկաթե (Երակների պես երկաթե, Ամուր գրկած կուրծքը հողի, ԵՉ, «Պոեմներ», Պոլիս, 1923, 45), լուսե (Ինչքան էլ լուսե լինեիր, Ես անմիտ պատանի էի, Հորդում է ժպիտը լուսե, ն. տ.,

---

12 Այստեղ, իհարկե, նկատի ունենք -յա և -ե ածանցներով հարաբերական ածականներ կազմելու իմաստները և այդ կիրառությունները։

13 Թեև մասամբ հանդիպում է նաև պղնձե ձևը («Գյուղացիներն իրենց բոլոր պղնձե ամանները թափում են նրա մոտ», հ. 5, էջ 33)։

132, 94), նռե (Սրել ես քո կամքը հրն, ն. տ., 2, 69), մանե (Հե՜յ, ով է կոփել կուռ, Անդուլ այս խավարը՝ մահն շիրմաքարը, ԵՉ, ԵԺ, 2, 68), առնե (Ն. տ.) և այլն։

-Ե ածանցը գործածվում է նաև մեր լեզվի սովետական շրջանի 1950—60-ական թվականներին։ Այսպես՝ Գ. Մահարու 1964 թ. հրատարակած «Սև մարդը» պատմվածքում հանդիպում ենք գերազանցապես -ե ածանցի գործածության. ինչպես՝ բամբակե, բրդե, թիթեղե, ծխե, տախտակե և այլն։

Պետք է ասել, որ վերջին տասնամյակում զգալիորեն ծավալվել է -յա ածանցով կազմված ածականների գործածությունը։ Այս միտումը ակնհայտորեն երևում է ժամանակակից մամուլի էջերում. ինչպես՝ ապառաժյա, բրդյա, բամբակյա, ոսկյա, թղթյա, մագաղաթյա (Ահա եղած մագաղաթյա ու թղթյա ձեռագրերը, ԵԵ, 13/3—1964), նարնջյա (Խորախոր ձորեր, հրաբորբ նարնջյա արև, ԵԵ, 12/9—1964) և այլն։

Կան նաև հարաբերական ածականների -ե ածանցով ձևեր. ինչպես՝ վուշե, մորթե (և ոչ վուշյա, մորթյա), կապարե, անագե և այլն։

Այժմ մնում է մեզ ասել, թե որ հարաբերական ածականներն են լեզվի զարգացման այժմյան շրջանում ընդունում -ե ածանցը։ Այս մասին կարելի է ասել, որ սրանք հիմնականում հայերենի փոխառյալ հիմքերով կազմված ածականներն են, ինչպես՝ անագե, կապարե, բետոնե (երկաթբետոնե), բրոնզե, գրանիտե, գիպսե, կապրոնե, նեյլոնե, ցեմենտե, ռետինե և այլն, և միանգամայն անսովոր են անագյա, կապարյա, կապրոնյա, նեյլոնյա և այլն. թեև պետք է ասել, որ -յա ածանցը երբեմն դրվում է նաև փոխառյալ հիմքերի վրա՝ կազմելով ածական. ինչպես՝ երկաթբետոնյա[14] (Շուտով կավարտենք երկաթբետոնյա հենասյուների տեղադրումը, ԵԵ, 21/8—1963), ցեմենտյա (Մենք լցվել ենք ցեմենտյա խցիկն ու ուսերով հրում իրար, ԲՀ, ՍՉ, 275)։

-Յա ածանցի բառակազմական դերի ընդլայնումը բացատրվում է մասամբ նաև նրա բազմիմաստությամբ, այսպես՝ եթե -ե ածանցը մենիմաստ է և նրա կիրառության ոլորտը սահմանափակվում է միայն փոխառյալ հիմքերով և փոխաբերական իմաստով հարաբերական ածականների կազմությամբ, ապա այդպիսին չէ -յա

14 Այս բառի մեջ փոխառյալ է երկրորդ բաղադրիչը։

ածանցը, որ բազմիմաստ է[15] և կազմել է հատկանշային տարբեր իմաստներ ունեցող բառեր։

-Յա ածանցը կազմել է՝

ա) Ժամանակային իմաստ ունեցող մի շարք բառերից (տարի, օր, ամիս և այլն) ժամանակային իմաստ արտահայտող մի շարք բարդ ածականներ. ինչպես՝ ամենամյա[16], երկարամյա, հնգամյա, միամյա, միաժամանակյա, տասնամյա, հնամյա, մեկդարյա, մեկհերթյա, կեսդարյա, մեկամսյա, մեկօրյա, ամենօրյա, բազմօրյա, միջօրյա (միջօրյա վազքի նորման գերակատարվել է 17 կիլոմետրով, ՍՆ, 20/6—1964), կիրակնօրյա, հնօրյա, նորօրյա (ԳԹ, 9/4—1965), երկարօրյա, մեկօրյա և այլն։

բ) Տարածական իմաստ արտահայտող բառերից մի շարք բարդ ածականներ. ինչպես՝ գետափնյա, բացօթյա, ընդերկրյա (Այդ երազն ու ձգտումը նույնքան բնական են, ինչքան ընդերկրյա նկուղում բանտարկված մարդը..., ՍՀ, 29/11—1964), ընդջրյա (...Գիտնականներն այստեղ գտել են 190 տեսակ ընդջրյա բույսեր, ՍՆ, 13/4—1964), ընդհատակյա, ընդգետնյա, լճափնյա, լայնեզրյա, խորջրյա (...Բեռնատար նավերը Վոլգայից Բալթիկ ծովը կգնան խորջրյա Վոլգա-բալթիական ջրային նոր ուղիով, ՍՆ, 16/12—1963), ծովափնյա, մայրեզրյա, շուրջերկրյա, շուրջփարոսյա (...Շուրջփարոսյա հոսանքները նրանից ուժեղ էին դուրս եկել, ԳԹ, 3/6—1964), շուրջլուսնյա (ՍՆ, 20/7—1967), ստորերկրյա, վերջրյա (Վոտկինյան գէս-ի վերջրյա մասը կառուցված է սիլիկալցիտից, ՍՆ, 12/9—1964), վերգետնյա, ստորերկրյա, ստորջրյա, ստորգետնյա (Սակայն դրա փոխարեն ստորգետնյա ջրատարներ չկառուցվեցին, ՍՆ, 8/4—1964), շուրջտարյա (ՀՑ, 20/2—1969), օտարերկրյա և այլն։

գ) Տարբեր իմաստներ ունեցող բառերից չափի, գույնի և այլ հատկանիշներ արտահայտող բառեր. ինչպես՝ խոշորաչյա, հակոտնյա, հազարակնյա (Մ՛ի, անկամորդ ու մախանձ են Թշնամիներս հազարակնյա, ՀՇ, ՔՀ, 2, 18), կապուտաչյա, սևաչյա, տխուրաչյա (Ոսկեհանդերձ եկար և միգասքող, Տխուրաչյա աշուն, սիրած աշուն, ՎՏ, ԵԺ, 2, 15), հեզաչյա (Աստղեր տեսա հեզաչյա, ԱՎԻ, 1, 85), տնօրյա (Այսօր առավոտ նայեցիր դու ինձ, Այնպես մտե-

---

15 Այդպես էր նաև նախասովետական հայերենում։

16 Այս և հաջորդ էջում ընդգծված -յա ածանցավոր ածականների մեծ մասը նորակազմ է։

րիմ, այնպես տնօրյա, ՍԿ, ՄՃԿ, 82), նեղանձյա (ՍԱ, № 4, 1969, 39) և այլն։

-Արար. իմաստի աշխուժացում է ստացել սովետական շրջանում։ Սրանով նախկինում կազմվում էին քիչ թվով հատկանշային իմաստ արտահայտող բառեր. ինչպես՝ հաշտարար, կազմարար, կենսարար, տնարար, սփոփարար և այլն։ Այս ածանցով կազմված ածականների մեծ մասը մեր լեզվի նախասովետական շրջանում վերածվել է այդ հատկանիշները կրող անձի իմաստ արտահայտող բառերի, որ տեղի է ունեցել որոշիչի և որոշյալի կապակցության հիման վրա՝ որոշյալի կրճատմամբ. ընդորում որոշիչը խլել է նաև որոշյալի դերը և փոխանցվել գոյական անվան. ինչպես՝ արդյունարար, ածխարար (էգուց կուղարկեմ անտառը, էնտեղ ածխարարի մոտ ծառայեն, ՀԹ, թարգմ., 2, 323), մատակարար, տնտեսարար և այլն։ Եվ պատահական չէ, որ այս ածանցով կազմված բառերի մեծագույն մասը գրեթե հավասարապես ունի և՛ ածական, և՛ գոյական անվան խոսքի մասային իմաստ։ Սովետական շրջանում -արար ածանցը ծավալվեց հատկապես գոյականակերտ դերով, կազմելով մեծ մասամբ «որևէ զբաղմունք կամ պաշտոն ունեցողի, կրողի» իմաստ արտահայտող բառեր. օրինակ՝ գազութարար, խոտանարար, ձևարար, փորձարար և այլն։ Այս ածանցով կազմված նորարար, շինարար բառերը թեև կային նաև նախասովետական շրջանում, սակայն չունեին այնպիսի լայն գործածություն, ինչպիսին ունեն այժմ։

Դ. ՆՈՐ ԾԱՎԱԼՎԱԾ ԱԾԱՆՑՆԵՐ

Կան բավական թվով ածանցներ էլ, որ թեև առաջացել են մեր լեզվի հնագույն շրջաններում, սակայն լիակատար ծավալում են ստացել միայն սովետական շրջանում։ Այսպես՝ -ունակ ածանցով դեռևս գրաբարում հայտնի էին շարունակ, պարունակ (եւ), փառունակ և այլ բառերը։ Աշխարհաբարում կազմվեցին նաև պարզունակ, զոհունակ և այլ բառեր։ Սրանով սովետական շրջանում առաջացան մի շարք նոր կազմություններ. ինչպես՝ խոհունակ (ՏԵ, 15/3—1966), մանկունակ, պահունակ (...Եղել են տարձանակներ և փամփուշտների մի քանի պահունակ, ՏԵ, 24/9—1965), տխրունակ, տրտմունակ (Ու կտարածվի մի տրտում մշուշ... կապույտի ոսկու տրտմունակ մի հուշ, ԵՉ, ԵԺ, 1, 88) և այլն։ Այս ածանցի ծավալմանը նպաստեց թերևս սովետական շրջանում ստեղծված նույնանուն բա-

ղադրիչն ունեցող բազմաթիվ բարդ բառերի ստեղծումը, որոնց մեծ մասի մեջ այժմ էլ ունակ երկրորդ բաղադրիչը հակված է դեպի իմաստի մթագնում և մասնիկացում. այսպես՝ անցունակ, դիտունակ, թափանցունակ, թողունակ, կլունակ (ություն), մանևրունակ, մարտունակ, պաշտպանունակ, մեղսունակ, վճարունակ և այլ բառերում ունակ բաղադրիչը ինչ-որ չափով արդեն կորցրել է բարդության երկրորդ բաղադրիչի իմաստը, սակայն լիակատար չափով իմաստի մթագնում չի ստացել և դեռևս գտնվում է մասնիկացման կամ արմատից ածանցի անցման պրոցեսում։

Ածանցների կիրառությունների և նրանց գործադրման էական տեղաշարժերի կամ փոփոխությունների մասին խոսելիս թերևս անհրաժեշտ է նշել նաև ածանցների կենսունակության նվազման կամ, այսպես ասած, կենսունակազրկման մասին։ Սակայն պետք է ասել, որ կենսունակ ածանցների կիրառության մեջ սա առանձին որակ չի կազմում, քանի որ ընդհանրապես հազվադեպ են բուն կենսունակ ածանցների բառակազմական դերի նվազման դեպքեր։ Թեև, իհարկե, մեկ կամ մի քանի կազմության մեջ ածանցը կարող է դուրս մղվել այլ համանիշ ածանցների կողմից (մանավանդ եթե բազմիմաստ է), սակայն այս բառերի իմաստների հնացումը և դրանց գործածությունից դուրս մղումը բնավ չի ազդում կենսունակ ածանցների կենսունակության և ակտիվության վրա։

Այս իմաստով թերևս կարելի է խոսել -ացի ածանցի կենսունակության նվազման մասին, որ տեղի ունեցավ վերջինիս -ցի տարբերակի առավել կենսունակացման և ծավալման հաշվին (տե՛ս էջ 86)։ Ինչ վերաբերում է -ություն ածանցով կազմված մի քանի բառերի -ույթ ածանցով գործածությանը, ինչպես՝ ավանդություն—ավանդույթ, մրցություն—մրցույթ, նորություն—նորույթ, սովորություն—սովորույթ, վերջավորություն—վերջույթ և այլն, ապա սա բնավ չի ազդել -ություն ածանցի կենսունակության վրա։ -Ություն ածանցի կիրառության ոլորտի այս հարաբերական նեղացումը հիմնականում կապված է այն բանի հետ, որ սովետական շրջանում մեր լեզուն զգաց կոնկրետացնող կամ ընդհանրացնող ածանցի պահանջ, իսկ -ույթ ածանցը, որ ծագումով -ություն ածանցի առաջին բաղադրիչն է (-ույթ<-ույթ+-ին), առավել ամփոփող, կոնկրետացնող առարկայական իմաստ ունի, քան -ություն ածանցը, որով կազմվում են ավելի հավաքական-ընդհանրական իմաստ արտահայտող գոյականներ։ Սակայն այստեղ ածանցների

տարբերությունը սոսկ տեղի, ժամանակի խնայողության մեջ չէ, այլ այն, որ -ություն ածանցով կազմված ձևերի կողքին -ույթ ածանցով համանիշները արդեն իմաստի շատ նուրբ տարբերակում են ստացել. այսպես՝ այլևս նորույթ-ը չի նույնանում նորություն բառի հետ (թեև համանիշ կարող են լինել), պարբերույթը պարբերությունը չէ, ինչպես որ տարբեր են սովորույթը և սովորությունը, տերությունը և տիրույթը և այլն: Ինչպես տեսանք, -ություն ածանցը -ույթ ածանցին իր տեղը զիջում է միայն մի քանի կիրառություններում, իսկ ընդհանրապես նա արտադրողական ածանց է և կազմում է մեծ թվով ընդհանրական, վերացական իմաստ արտահայտող գոյական անուններ:

Իր ածանցային իմաստով ամփոփող, կոնկրետացնող իմաստ ունի նաև -անք գոյականակերտ ածանցը, որ դրվում է գերազանցապես բայարմատների ու բայահիմքերի վրա և արտահայտում գործողության առարկայացված, կոնկրետացված իմաստ. ինչպես՝ դյութանք, երազանք, զրկանք, խրախուսանք, հալածանք, հարմարանք, մարզանք և այլն: Այս իմաստի շնորհիվ է, որ -անք ածանցը մի քանի կազմություններում գործ է ածվում իբրև -ություն ածանցի համանիշ:

Ինչպես՝ բերկրություն-բերկրանք, սխրագործություն-սխրանք. տաժանակրություն, տաժանելիություն երկարահունչ բառերի փոխարեն՝ տաժանք, որ թեև անսովոր է, սակայն գործ է ածվում մեր պոեզիայի լեզվում. ինչպես՝ «Եվ ես մնացա տաժանքն առօրյա» (ԵՉ, ԵԺ, 1, 34): Այս ածանցով կազմված ավաղանք (ՊՍ, ՄԱՓ, 313), կայանք, տեղանք, ցուցանք[17] (Պատմում են հասարակ, պարզ լեզվով, առանց ցուցանքի, ՍՀ, 12/12—1965) բառերը նոր կիրառություն գտան:

Ամփոփելով «Ածանցների կիրառությունները» բաժինը՝ անհրաժեշտ է նշել, որ ընդհանրապես դժվար է ածանցները որոշակիորեն տեղավորել կենսունակ և անկենսունակ խմբերի մեջ, քանի որ ամենակենսունակ ածանցն անգամ մի քանի կազմություններում կարող է քարանալ և չգիտակցվել, և, ընդհակառակը, ամենաանկենսունակ ածանցներով էլ կարող են կազմվել մեկ կամ մի քանի

[17] Վերոհիշյալ բառերը կային մեր լեզվում (Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, 1944, հ. 1, էջ 291, հ. 2, էջ 377 և հ. 4, էջ 398, 492), կայանք նշանակում էր գույք, կարողություն (կայք ու կայանք), սակայն հնացած և անգործածական բառեր էին և նոր բառային իմաստներով գործածության մեջ մտան սովետական շրջանում:

նորակազմ ածանցավոր բառեր։ Այսպես՝ -արդ ածանցով պահպանված են ընդամենը խոռանարդ, վիմարդ, սեղանարդ, գմբեթարդ բառերը. նորակազմ է ձվարդ բառը (ОВАЛЬНЫЙ)։ -Զան ածանցով քիչ թվով բառեր են կազմվել. ինչպես՝ բազմազան, զանազան, հրաշազան, սրբազան և այլն, սակայն կազմվել է նաև գունազան բառը (Կանցնինք արևմտյան Պերլինի... գունազան և հոյակերտ շենքերու մեջեն, Զարթոնք, 13/11—1963)։ -Ացի ածանցի մակբայակերտ կիրառությամբ հայտնի էին մի քանի բառեր. ինչպես՝ հայացի, բերանացի, նշանացի, բառացի և այլն, սակայն վերջինիս նմանակությամբ կազմվեց նաև տողացի բառը (Ամեն ոք կարող է կատարել Թումանյանի հեքիաթների տողացի կամ բառացի թարգմանությունը, ԳԹ, 22/10—1965)։ -Պանակ ածանցով հայտնի էին ընդամենը ներկապանակ, գրապանակ, դրամապանակ և թղթապանակ բառերը, վերջին շրջանում կազմվեց տետրապանակ բառը։ -Ածո ածանցով ունեինք հանածո, ձուլածո, բրածո և այլն, կազմվեցին նոր դրածո, պեղածո (ԳԹ, 24/5—1968), կտրածո (Նա թերթերից կտրածոներ ուղարկեց, Թրգմ.)։

Նոր բառեր են կազմվում մեծ մասամբ նաև այն անկենսունակ ածանցներով, որոնք արդի գրական հայերենի համար են միայն անկենսունակ և հայերենի արևմտահայ հատվածում ու բարբառներում կենսունակ են։ Այսպես՝ -ուց ածանցով հայերենում կազմվել են բերնուց (բերանացի, հմմտ. Ավետարանեն հատվածներ բերնուց գիտեին, ԳԶ, 2, 161), դեղնուց, դնդղուց (Նրբավարտ մատներուն ծայրեն մինչև դնդղուց միսը բարձրացող նուրբ կաշին երևան կհաներ, ԳԶ, 1, 129), հնուց, մորուց, ճեղուց, ողնուց, սպիտակուց, վաղուց և այլն։ Սրանով կազմվել է (հավանաբար դեղնուց, սպիտակուց բառերի նմանակությամբ) կճպուց բառը (հմմտ. «Արդյոք ձեր նավի վայրէջքի ժամանակ կճպուցներ չըստացա՞ք», ՍՀ, 27/6—1963, կամ՝ «Միայն քթիս վրա կճպուց կա», ՍՀ, 20/6—1963)։

-Ուf. Այս ածանցը, որ արևմտահայերենում շատ ավելի կենսունակ է, քան ժամանակակից արևելահայ գրական լեզվում՝ կազմել է փինարբուf, գզվռտուf, խնդուf, խտղտուf, մտմտուf, փրնտռուf, փռսռտուf (Եվ ավելի հեռուն փոսրտուք մըն էր այլևս, ԳԶ, 1, 113) և այլն։ Սրանով կազմվել է նաև մզուf բառը—(Ազատանի կոլտնտեսականներն ստացան 52 հազար ցենտներ սիլոսանյութ և նույնքան մզուք, ՍՀ)։

Հետևաբար, ածանցներն ըստ գործածման դասակարգելիս,

նրանց այս կամ այն խմբի մեջ կարելի է տեղադրել միայն որոշ վերապահությամբ, նկատի ունենալով նրանց կիրառման ու գործածման ընդհանուր մակարդակը։

Ածանցների կիրառության փոփոխությունները սերտորեն կապված են նաև ածանցների իմաստների հետ, որովհետև վերջին հաշվով ածանցների իմաստների փոփոխություններն են, որ ազդում են ածանցների կենսունակության ակտիվացման կամ նվազման վրա։

2. ԱԾԱՆՑՆԵՐԻ ԿՐԱԾ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԸ

Վերևում մենք աշխատեցինք տալ հայերենի ածանցների կիրառությունների և իմաստային փոփոխությունների առավել նկատելի և էական տեղաշարժերը։ Մնացած էական փոփոխությունները կաշխատենք հնարավորին չափ քննել այս բաժնում՝ ձգտելով նորակերտ բառերի հետ պարզել, թե բազմիմաստ ածանցների ո՛ր իմաստներն են ավելի հակված ծավալվելու և որոնցո՛վ են ավելի շատ բառեր կազմվում։ Բերենք հայերենի ածանցների սովետական շրջանում կրած իմաստների փոփոխության օրինակներ։

-Ակ. բազմիմաստ ածանց է, որի ավելի տարածված իմաստը նվազափաղաքշականն է (երանգավորող). ինչպես՝ անտառակ, գավառակ, թռչնակ, լճակ, ծովակ, տնակ և այլն։ Սակայն այժմ -ակ ածանցը իր երանգավորող իմաստով քիչ է գործածական[18] և ավելի կենսունակ է առարկայացնող իմաստով, որով զանազան խոսքի մասերից (գոյականներից, բայերից, մակբայներից և այլն) կերտել և կերտում է մեծ թվով գոյականներ. ինչպես՝ ախորժակ, ազդակ, արգելակ, բռնակ, լծակ, խոյակ, էակ, ծորակ, կամակ, կրկնակ, կուտակ, հասակ, ճարակ, ներքնակ, որակ, պաղպաղակ, պղպջակ, վրիպակ, ցուցակ և այլն։ Կազմվել են նաև անձի հասարակ և հատուկ անուններ. ինչպես՝ բուժակ, գիտակ, գուշակ, հետևակ, հեծելակ, սուզակ, կատակերգակ, ողբերգակ և Աբեթնակ, Արծվնակ, Վարուժնակ, Ցոլակ և այլն։

Բացի գոյական անուններից -ակ ածանցով կազմվել են նաև հատկանշային իմաստ պարունակող բառեր (ածականներ). ինչպես՝

---

18 Այս իմաստով առավել գործածական է -իկ ածանցը։

քոլորակ, դժգունակ, խառնակ, կապուտակ, հաջողակ, ձախողակ, նմանակ և այլն։

–Ակ ածանցը սովետական շրջանում զարգացել է հիմնականում առարկայացնող իմաստով և մասնավորապես «որևէ գործիք, գործիքի մաս, սարք» իմաստներով, ինչպես՝ անկյունակ (Դրա համար էլ են մետաղյա անկյունակներ հարկավոր, ԵԵ, 9/9—1964), հոլովակ (Տպագրող սարքի հոլովակների տակից սպիտակ օձի նման դուրս է սողում թղթե ժապավենը, ԵԵ, 8/5—1963), ոստնակ (ոստնելու, թռչելու կետ), ոտնակ (հենվելու, ոտք դնելու տեղ. Տղան երկու ձեռքով քաշած պահեց լծակը և ոտքով սեղմեց ոտնակը, Ավ., 4/9—1964), բարձակ (բարձրանալու հարմարանք, ԵԵ, 2/11—1966), սեղմակ (...Հոսանքը վերցվում է փոխարկիչ ռեակտորի սեղմակներից, ՍՀ, 2/9—1964), փորակ (Մայրամասերում ունեն երեքական փորակներ, ԵԵ, 1/3—1965), քարշակ (էլեկտրականությամբ կամ ձեռքով քարշվող սայլակ), հարթակ, չափահենակ (Բոլոր դրոշմիչները պատրաստված էին առանց չափահենակի, ԵԵ, 7/5—1963) և այլն։

–Ական. ժամանակակից հայերենի ամենակենսունակ ածանցներից է։ Այն հանդես է գալիս հատկանշային իմաստով. արտահայտում է «վերաբերող, պատկանող (որևէ առարկայի, անձի, հաստատության, տարեթվի, ուղղության, կրոնի և այլն)» ու համանման իմաստներ և կերտում է գերազանցապես ածական անուններ. ինչպես՝ ազատագրական, անհատական, արմատական, անձնական, աշակերտական, բանական, բարոյական, գյուղական, դասական, երաժշտական, ժառանգական, ժողովրդական, հաղթական, համալսարանական, հիսունական, նյութական, փաստական և այլն։

–Ական ածականակերտ ածանցով հատկանշային նշանակությամբ մեծ թվով բառեր են կազմվում նաև սովետական շրջանում. ինչպես՝ գործիքաշինական, սարքաշինական, փորձառական, փորձարարական, նորարարական և այլն։ Այս ածանցով նաև գոյականներ են կազմվել ոչ միայն հայոց լեզվի նախորդ շրջաններում (օրինակ՝ ազգական, ազնվական, առևտրական, գաղթական, գիտնական, զորական, զինվորական, հանդիսական, մտավորական, շինական, վաճառական, օտարական, օգնական), այլև սովետական շրջանում. սրանց մեջ գերակշռում են փոխառյալ (սովետական շրջանում փոխառված) հիմքերով կազմվածները. ինչպես՝ կոլտըն-

---

19 Սրանք միաժամանակ ունեն նաև ածական անվան խոսքի մասային իմաստ։

տեսական, կոմերիտական, հիտլերական, էսէսական, ստախանովական, կուսակցական, ճամբարական, օսսական[19] *և այլն։ Որոշիչի և որոշյալի կապակցության հիման վրա վերջինիս երկու իմաստների և դերերի ձուլմամբ վերջին տասնամյակում* հավաքական *գոյականը ստացավ նոր՝ «հավաքական թիմ» իմաստը։*

-Ային. *Հայոց լեզվի գրեթե բոլոր շրջաններում (ինչպես և այժմյան) եղել է կենսունակ։ Այն հիմնականում հանդես է գալիս ածականակերտ նշանակությամբ։*

Այս ածանցով նույնպես խոսքի մասային փոխանցումով (որ ավելի մեծ չափեր է կրում սովետական շրջանում) կազմվել են անձի իմաստ արտահայտող մի շարք գոյականներ. ինչպես՝ բևեռային *(ռուսերենի* ПОЛЯРНИК *բառի պատճենումն է. հմմտ. «Սովետական բևեռայինները գիտական հեղթափոխի են կանգնել...», ՍՍ, 5/3—1964),* գետային *(Կալինինյան գետայիններն ստացան մարդատար «Զարյա—1» ջերմանավ, ՍՍ, 17/11—1966),* նավատային, կարգային, ծովային, հարվածային, ճանապարհային *(Գործադուլ են անում ճանապարհայինները, ՍՀ, 20/12—1964),* տրանսպորտային *(Անցած ժամանակաշրջանում լավ աշխատեցին մեր տրանսպորտայինները, ՍՍ, 29/5—1965) և այլն։ Վերջին երկու գոյականները կազմվել են ռուսերենի* ТРАНСПОРТНИК, ДОРОЖНИК *բառերի պատճենումով և* երկաքուղային *գոյականի նմանակությամբ։*

Ան.— *Հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններում եղել է ժխտական նախածանցներից ամենակենսունակը։*

Սակայն ան- *նախածանցը սովետական շրջանում հիմնականում ծավալվեց ոճական նոր առանձնահատուկ կիրառությամբ, որի շնորհիվ ստեղծվեցին հատկանշային իմաստ արտահայտող մի շարք բառեր։ Սրանք հատկանիշի արտահայտման իրենց յուրահատուկ եղանակով նորություններ են հայերենի բառակազմության մեջ։ Այս (և ոչ միայն այս) երևույթի ստեղծման հիմնաքարը հանդիսացավ Վ. Տերյանի պոեզիան, որի մեջ հանդիպում ենք* ան- *նախածանցի ոճական բազմաթիվ նոր կիրառություններ։*

Տերյանը գործածել է ան- *նախածանցով շատ բառեր, որոնք իրենց կազմությամբ և հատկանշային իմաստների դրսևորման յուրահատուկ եղանակով նորություն են հայերենի բառակազմության մեջ և սովետական շրջանի գեղարվեստական լեզվի մեջ բյուրեղացան Վահան Տերյանի հրաշալի պոեզիայի շնորհիվ։ Այսպես՝ Տերյանը տխուր բառի փոխարեն գործածում է* անխինդ, անուրախ,

[19] *Սրանք միաժամանակ ունեն նաև ածականի խոսքի մասային իմաստ։*

անարեգ բառերը («Այնպես անխինդ են և նման լացին, երգերն իմ երկրի», «Ջյունը ծաղկուն իմ անուրախ հյուղն է ծածկում», ՎՏ, ԵԺ, 1, 226, 269, «Ինձ տարեք այս երկրից անարեգ», ՎՏ, ԵԺ, 2, 65), ճիշտ, ճշմարիտ բառերի փոխարեն անսուտ յուրահատուկ կազմությունը (Եվ նա իմ առաջ բացեց իր գիրկը Անսուտ գգվանքով, Ն. տ., 137)։ Նույն բառը վարպետորեն գործածված է նաև Ե. Չարենցի պոեզիայում (Հմմտ. Կապույտում անսուտ խոսքեր են հոսում, ԵՉ, ԵԺ, 1, 73), գաղտնի, անձայն բառերի փոխարեն՝ անճնչյուն (Իմ սիրտը միշտ մի անանուն ցավ է տանջում, Անանց մի վիշտ խորը, թաքուն և անճնչյուն, ՎՏ, ԵԺ, 1, 114), մութ, խավար բառերի փոխարեն՝ անշող (Գիշերում այս անշող. Արդյոք կա՞ իրիկվա մոռացում, Ն. տ., 66) և այլն։

Տերյանը գործածել է նաև անտրիտուր բառը, որը հազվագյուտ գործածություն ունի (Հմմտ., «Ինչ ունեիր հուր ու մաքուր, Ողջը տվիր անտրիտուր», Ն. տ., 269)։

Հայերենի ժխտական մյուս նախածանցների (դժ-, ապ-, տ-, չ-) բառակազմական դերի մեջ սովետական շրջանում նկատելի տեղաշարժ չի եղել։

Հայերենի մյուս քամներեք ոչ ժխտական նախածանցներից (հունաբան դպրոցի ստեղծած) սովետական շրջանում բառեր կազմվել են հիմնականում արտ–, գեր–, ճակ–, ճամ–, մակ–, ներ–, վեր– և այլ ածանցներով։ Սրանք թեև հայերենի նախորդ շրջաններում ևս կենսունակ էին, սակայն առավել կենսունակություն ստացան մեր լեզվի սովետական շրջանում և ստեղծեցին բավական թվով նոր բառեր ու տերմիններ։ Հայերենի կենսունակ նախածանցներով նորակազմ կամ նոր գործածության մեջ դրված բառեր են հետևյալները.

Արտ– նախածանցով՝ արտազատվել, արտակենտրոն, արտավիժել (ծիծեռնակներից մեկը դեղին ծուխ է արտավիժում, ԳԹ, 31/12—1964), արտակոչվել (սպորտային տերմին է), արտաշխարհ (կուզե իր երջանկությունը բաժանել արտաշխարհի իր արյունակիցներում հետ, ՍՍ, 4/9—1962) և այլն։

Գեր-ով՝ գերարագ (ՍՀ, 25/6—1968), գերբարակ (Մեծ հետաքրքրություն, այսպես կոչված, գերբարակ ապակյա թելերը, ՍՍ, 19/3—1964), գերբույլ, գերխոր (Ավ., 21/1—1964), գերձայնային, գերճշգրիտ (Ձեռնարկության մեծ մասը մասնագիտացվում է գերճշգրիտ հաստոցների թողարկման համար, ՍՀ, 15/1—1965), գերգաղտնի (ՍՀ, 22/6—1965), գերիրական (ԳԹ, 4/11—1966), գեր-

լարում *(ՍՀ, 11/9—1960)*, գերհզոր *(Դա գերհզոր կռունկ էր, ՍՀ, 8/10—1964)*, գերհնչյունային, գերնոր *(ԵԵ, 2/1—1966)*, գերսեղմ *(Որքան էլ շնորհալի լինի հեղինակը, գերսեղմ ժամանակներում դժվար է արդյունքի հասնել, ՍԱ, № 4, 1963, 39)*, գերցածր *(ՍՀ, 17/2—1966)*, գերճեպընթաց *(ԵԵ, 5/1—1967)*, գերկարճալիք *և այլն։*

Համ-ով՝ համասարք, համապատկեր, համակառույց, համակողմանի, համալիր, համահարթում *(ԳԹ, 9/8—1968)*, համաշինարարական, համանախագահ *և այլն։*

Ներ- ներբջջային, ներարկիչ *(ШПРИЦ)*, ներտաշ *(Ներտաշ հաստոցների գործարան)*, ներբնակարանային, ներկուսակցական, ներփակ *(ԵԵ, 9/10—1964)*, ներհոսել *և այլն։*

Մնացած նախածանցներից մի քանիսը, ինչպես՝ առ-, ենթ-, ընդ-, ստոր-, մակ-, փոխ-, բաց- *և այլն, թեև համեմատաբար սակավ կենսունակ են, սակայն վերջին տասնամյակներում նկատելի է դառնում դրանց կենսունակացնելու և առավել լայն գործածության մեջ դնելու ձգտումը։ Սրանցով նոր բառեր են կազմվել, կարելի է ասել, հիմնականում նմանակության օրենքով. այսպես՝* ենթ- *նախածանցով կազմված* ենթակա, ենթադրել, ենթավարպետ *և այլ բառերի կողքին կազմվել են* ենթահանձնաժողով, ենթաբեմա, ենթատեքստ *(*ПОДТЕКСТ *բառի պատճենմամբ) բառերը,* ընդ- *նախածանցով՝* ընդհատակ, ընդվզել *բառերի նմանակությամբ՝* ընդջրյա, ընդծովյա *նոր բառերը,* ստոր- *նախածանցով՝* ստորագրություն *և այլ բառերի կողքին՝ նոր* ստորաճաշակ *(ցածր ճաշակ. Նկարչի վրձինն ու գրիչը երբեք չեն ծառայել* ստորաճաշակ *մարդկանց, ՍՀ, 19/12—1964),* ստորգետնյա *և այլն։* առ- *նախածանցով կազմվել են* առձայնույթ, առհարկի[20] *(Ձգտում էին ապացուցել, թե Թուրքիան* առհարկի *էր մասնակցում իմպերիալիստական պատերազմին, ԳԹ, 5/2—1965),* առմուտք (Առմուտքի *սանդուղքի վրա, Լուսայգի, ճամփան եմ պահել, Համո Սահյան, Հայաստանը երգերի մեջ, 39),* առգրավել, առձգում *(Իրականացվեցին տիեզերանավի կոշտ* առձգում *և նրանց էլեկտրական շղթաների միացում, ԵԵ, 25/1—1969),* մակ-*ով՝* մակնիշ *բառը,* փոխ- *նախածանցով՝* փոխնախագահ, փոխգործողություն, փոխհամաձայնություն, փոխայցելություն, փոխհրաձգություն, փոխներարկում,

---

20 *Այս և վերոհիշյալ նախածանցներով բերված բառերից մի քանիսը թերևս կային մեր լեզվում, սակայն չէին գործածվում, ինչպես՝* առինքնել, առլեցուն *և այլն, որոնք այժմ կյանքի են կոչվել։*

փոխներգործություն, փոխանջատիչ (*Մոտիկից ծանոթացան էլեկտրական հոսանքի նոր տիպի փոխանջատիչի արտադրության տեխնոլոգիային, ՍՍ, 20/3—1964*), փոխպայմանավորում և *այլն*։

Շարունակենք իմաստային փոփոխություն կրած մյուս վերջածանցների քննությունը։

-Արան. *հայերենի և՛ նախորդ, և՛ այժմյան շրջաններում կազմել է տեղի իմաստ արտահայտող բառեր և համանիշ է* -անոց *ածանցին. ինչպես՝ կայարան, ճաշարան, ննջարան, սառնարան և այլն։ Սրանով նոր կազմված բառեր են՝* առողջարան (*այժմ գործածվում է* санаторий *փոխառյալ բառի փոխարեն*), աբդուկարան, բուժարան (*Երբ բացեց Բուժարանը՝ տեսավ, որ կաշե ամանների մեծ մասը ճաքճքել են, ԳՄ, 8*), տապակարան (*Իրենց մշտական տապակարաններում ձուկ ու վայրի թռչուններ էին խփում, Ավ., 6/6—1963*)[21], սառնարան (ХОЛОДИЛЬНИК *բառի պատճենմամբ*) և *այլն*։

-Ացում. *հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում լայն գործածություն ստացավ փոխառյալ բայերի մեջ, նրանց բայահիմքերից կերտելով գործողության կամ պրոցեսի ատրկայացված իմաստ արտահայտող գոյականներ (բայանուններ). ինչպես՝* բոլշևիկացում, դեմոկրատացում, խորհրդայնացում, լիբերալացում, ռացիոնալացում *և այլն։ Այս ածանցով մեծ քանակությամբ գոյական անուններ ստեղծվեցին հատկապես վերջին շրջանում՝* կապված *քիմիայի և արդյունաբերության աննախընթաց վերելքի հետ։ Սրանք կազմվեցին գերազանցապես փոխառյալ հիմքերով. ինչպես՝* ավտոմատացում, նորմալացում, պոլիմերացում, ստանդարտացում, սիլոսացում, լեգալացում, մոդելացում (*ՍՍ, 21/12—1965*) ֆլոռացում, օքսիդացում *և այլն*։

-Ացում *ածանցով նոր գոյականներ են կազմվել նաև սեփական հիմքերով. ինչպես՝* բրբռացում (*արտադրական պրոցես, հմմտ. «էլեկտրամագնիսային հարուցիչը նրան բրբռացման է ենթարկում», ՍՍ, 5/10—1964*), փոշիացում (*ՍՍ, 4/2—1966*), օճառացում, պահածոյացում (*ՍՀ, 24/2—1970*), հանքայնացում (*ՍՍ, 30/6—1967*), հեղուկացում (*ՍՍ, 25/3—1968*), ամայացում (*Մենք պետք է զարգացնենք ամայացման տեխնիկան, ՍՀ, 21/6—1968*) *և այլն*։

---

21 Տապակարան *բառը աշխարհաբարում եղել է հազվադեպ գործածական բառ* (Տե՛ս Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան, հտ. 4, էջ 374*) *և նշանակել է «տապակելու անոթ», այժմ գործածվում է ընդհանրապես «տապակելու տեղ» իմաստով։*

-Գույն. Ժամանակակից հայերենում համարվում է ածականների գերադրական աստիճան արտահայտող ածանց (հմմտ. գեղեցիկ-գեղեցկագույն, խոշոր-խոշորագույն, դժվար-դժվարագույն, հզորագույն և այլն): Ժամանակակից հայերենի արդի էտապում այս ածանցը իմաստի և կիրառության նկատելի փոփոխություն է ձեռք բերել և մի քանի կազմություններում սկսում է գիտակցվել բառակազմական իմաստով, մոտավորապես այնպիսի նշանակությամբ, ինչպիսին ունի -վուն ածականակերտ ածանցը: Ուրեմն՝ իբրև ածանց -գույն-ը, առաջանալով հենց ածականի համեմատական աստիճան արտահայտելու նշանակությունից, սկսում է հեռանալ քերականական նշանակությունից և հանդես է գալիս միայն բառակազմական նշանակությամբ: Այստեղ արդեն դեր է կատարում այն հանգամանքը, որ -գույն ածանցը համեմատության աստիճան արտահայտելու հետ մեկտեղ միաժամանակ ունի նաև սաստկական երանգ, որ նպաստում է վերջինիս բառակազմական նշանակությամբ գործածվելուն: Այսպես՝ վերջերս մամուլում գործածված -գույն ածանցով շատ ածականներ ըմբռնվում են իբրև սովորական հատկանշային իմաստ արտահայտող ածականներ, ինչպես՝ «Իր աշխատանքի մեջ հմտացավ և լավագույն հավաքող-փականագործի համբավ վաստակեց» (ՍՆ, 5/10—1964), կամ՝ «Հին Հունաստանի շատ խոշորագույն գործիչներ, մտածողներ անմիջականորեն մասնակցում կամ ներկա էին լինում խաղերին» (ՀՖ, 29/9—1964): Սրանցում բերված -գույն ածանցով ածականները գերադրական աստիճանի իմաստ չեն արտահայտում: Սպորտային տերմինաբանության մեջ նույնիսկ գործածվում են թեթևագույն քաշ, ամենաթեթևագույն քաշ տերմինները, որոնցում գերադրական նշանակություն ունի միայն -ամենա- մասնիկով կազմվածը (հմմտ. Տոկիոյում փայլուն կերպով կարող են հանդես գալ Լոուգ եղբայրները (ամենաթեթևագույն և թեթևագույն քաշ, ՀՖ, 29/9—1964):

Ժամանակակից հայերենում -գույն ածանցը մեծապես գործ է ածվում իր քերականական իմաստով[22], առանձնապես, երբ ընդգծվում է խմբի մեջ ածականի համեմատության որևէ եզրը. այսպես՝ «Նա լավագույնն է դասարանում» կամ «Գործարանը խոշորագույնն է հանրապետությունում» և այլն:

-Իկ. ժամանակակից հայերենի կենսունակ և բազմիմաստ ա-

---

22 Թեև սրա կողքին արդեն հաճախ է հանդիպում նաև այս ածանցի միայն բառակազմական նշանակությամբ գործածությունը:

ծանցներից է, որ հիմնականում արտահայտում է նվազափաղաքշական իմաստ (համտ. գլխիկ, դնչիկ, լավիկ, նրբիկ, սիրունիկ և այլն, որոնք գործածական են նաև հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում)։ Այս ածանցով կազմում են նաև զուտ փաղաքշական իմաստ ունեցող ածականներ. ինչպես՝ ջերմիկ *(ԳԹ, 9/9—1966),* ալևորիկ *(Ալևորիկ մորս ծեծեց էն տղեն, Ջահել սրտես արուն ծծեց էն տղեն, ԵՁ, ԵԺ, 2, 283)։ Սովետական շրջանում կազմըվել են* -իկ *ածանցով մի շարք բառեր, որոնցում թեև մեծ մասամբ զգացվում է ածանցի նվազական իմաստը, սակայն դրանք առավել ինքնուրույն բառային արժեքներ են, քան* -իկ *ածանցով նվազափաղաքշական իմաստ ունեցող բառերը, այսպես՝ ռուսերենի անմիջական ազդեցությամբ և թարգմանությամբ* -իկ *ածանցով կազմված* ձյունանուշիկ *(*снегурочка=*կոնֆետ),* վագոնիկ *(*вагонетка*),* սալիկ *(*плитка*) և այլ բառերը այլևս միևնույն առարկաների նվազական տեսակները չեն ցույց տալիս, այլ նոր բառական իմաստ են արտահայտում։ Նույն նշանակությամբ կազմվել են* մարտագլխիկ *(Պիրսոնը բազմիցս համաձայնել է, որ կանադական զինվորների համար ձեռք բերեն ամերիկյան մարտագլխիկներ, ՍՀ, 10/5—1963),* լուսալամպիկ *(որևէ տեխնիկական սարքի մաս),* ջրատակառիկ *(ոչ թե ջրի փոքր տակառ է, այլ ջրի հավաքման որևէ անոթ),* բեղմնիկ *(բույսերի սերմի տեսակ, համտ. Եթե հողի մեջ լինում են գիշատիչ սերմերի բեղմնիկներ, դրանք սկսում են զարգանալ, ՍՀ, 24/9—1963) և այլն։*

*-*Իկ *ածանցը շատ կազմություններում գործածվել է նաև* -ող, -ած *դերբայական ածանցների նշանակությամբ. ինչպես՝* ազդեցիկ *(ազդող),* անառիկ, բռնազբոսիկ, ընթացիկ, թափանցիկ, ռազմիկ, վաղանցիկ, սլացիկ, տարափոխիկ *և այլն, որոնք, ինչպես նկատում ենք, գերազանցապես ածական անուններ են։*

Այս իմաստով ածականներ կազմվում են նաև այժմ (համտ. անշրանցիկ*), սակայն այստեղ կարևորն այն է, որ նրանց խոսքի մասային իմաստների փոխանցմամբ առաջանում են նաև գոյական անուններ, որ տեղի է ունենում մեծ մասամբ որոշիչի և որոշյալի կապակցության որոշյալի կրճատմամբ. ինչպես՝* առողջապահիկ *(առողջությունը պահպանող կանոն, միջոց),* ջրամղիկ *(Փչացել է ջրամղիկի էլեկտրաշարժիչը, ԵՆ, 26/6—1963)*[23] *և այլն։ Վերոհիշ-*

---

23 *Դրանք մեծ մասամբ ունեն և՛ ածական, և՛ գոյական անվան խոսքի մասային իմաստ։*

յալ իմաստով (դերբայական) նոր գործադրում և կիրառություն ստացավ մարզիկ բառը, որ հնում հազվադեպ գործածություն ուներ և նշանակում էր «կռվող զինվոր» (տե՛ս Ստ. Մալխ., ՀԲԲ, 2, 278)։ Մարզիկ բառը այժմ լայնորեն գործածվում է սպորտային տերմինաբանության մեջ և հավասարազոր է ֆիզկուլտուրնիկ-սպորտսմեն բառի նշանակությանը։ -Իկ նույնանուն ածանցով հայերենին են անցել մի շարք փոխառյալ բառեր. ինչպես՝ էներգետիկ, էլեկտրիկ, հիպերբոլիկ, միկրոսկոպիկ, կատեգորիկ, կատաստրոֆիկ և այլն, որոնցում գրեթե առանձնանում և գիտակցվում է -իկ ածանցի ածականակերտ իմաստը։ Սրա լավագույն վկայությունն է այն, որ -իկ ածանցով փոխառյալ հիմքերով կազմվել են նաև մոդայիկ, հումորիկ, լակոնիկ, կանոնիկ և այլ ածականներ, որոնց առաջացմանը անկասկած նպաստել է հայերենի նույնանուն համանիշ -իկ ածանցի գոյությունը. ինչպես՝ դարակազմիկ, կանխիկ, բացառիկ, գռեհիկ, տոհմիկ, աշխարհիկ, ջերմիկ (ԳԹ, 9/9—1966) և այլն։ Սակայն առայժմ դժվար է սրանց ընդհանրությունը հաստատող այլ փաստեր և վկայություններ բերել։ Դեռևս նախասովետական շրջանում հայերենին են անցել փոխառյալ արտիստիկ, պոետիկ, ֆանտաստիկ, ռոմանտիկ և այլ բառեր, որոնք -ական վերջածանց ստանալիս սկզբնապես թերևս սեփական -իկ ածանցից տարբերելու համար, և մասամբ հաջորդ -ական վերջածանցի ազդեցությամբ, գրվում և հնչվում էին -իքական ձևով, ինչպես՝ արտիստիքական (օրինակ վերցնելով այդ զարմանալի արտիստիքական բնավորությունից, ես սովորեցի ամեն տեղ որոնել երաժշտական գեղեցկություններ, Տարազ, № 1, 1915, 15), տեխնիքական (Ուժեղացնել գավառկոմների շտատները տեխնիքական աշխատավորներով, ԽՀ), լիրիքական, էպիքական, ֆանտաստիքական և այլն։ Վերոհիշյալ փոխառյալ մի քանի բառերում -իկ փոխառյալ ածանցը համանիշ է -ական ածանցին. ինչպես՝ խորեոգրաֆիկ-խորեոգրաֆիական, տիպիկ-տիպական և այլն։

-Իչ. սովետական շրջանում ծավալվեց հիմնականում իրի անունների կերտմամբ, որոնք նախասովետական շրջանում շատ սակավաթիվ էին։ Սա թերևս այն պատճառով, որ սովետական շրջանում -իչ ածանցը թե ժամանակային և թե իմաստային առումով ավելի է հեռացել ենթակայական դերբայ կերտելու իր երբեմնի արժեքից և այժմ կազմում է գործողություն կատարող առարկայի, իրի իմաստ արտահայտող բառեր։ Այս իմաստով -իչ ածանցը գործածվում է գերազանցապես տեխնիկական տերմիններ կերտելու

համար, արտահայտում է «գործիքի, մեքենայի, սարքավորման և դրանց որևէ մասի կամ բաղադրիչի, ինչպես նաև գործարանի» անվանումներ. ինչպես՝ ազդանշանիչ (Ես պատրաստել եմ էլեկտրական հոսանքի ազդանշանիչ, Ավ., 2/11—1965), ավտոբարձիչ, ավտոբեռնիչ (կա նաև ավտոբեռնիչների և ավտոբարձիչների գործարան), արգելափակիչ, բետոնախառնիչ, առբերիչ (ուղեղիկի առբերիչ ուղիները, ՍՀ, 16/12—1972), էլեկտրաշարժիչ (էլեկտրաշարժիչների գործարան), խառնիչ, ծեփիչ, կայունիչ (Լարվածության կայունիչը էլեկտրական այն սարքն է..., ՍՀ, 7/5—1963), կիսահաղորդիչ (կիսահաղորդիչների գործարան), կերպափոխիչ (Հաճախականության ուղղաձիգ կերպափոխիչը նախատեսված է արևադարձային գոտու համար, Ավ., 4/5—1967), կլանիչ, կցորդիչ (ՍՀ, 26/11—1965), հաշվիչ, մամլիչ, յուղահեղուկազտիչ, ներկատրորիչ, ջրնետիչ (Ջրնետիչ շարժիչը նոր ջերմանավի մեծ առավելությունն է, Ավ., 29/6—1963), ռադիոընդունիչ, ռետինախառնիչ, փոխանջատիչ, փոխարինիչ (ԵԵ, 6/4—1967), օդահավաքիչ, օդափոխիչ և այլն: Վերոհիշյալ իմաստով գոյականներ են կազմվել նաև այս և -արկ ածանցների համատեղ գործածությամբ. ինչպես՝ նվագարկիչ (ԵԵ, 29/10—1965), փոխարկիչ (Հնչյունային կոդը ընդունվում է հատուկ փոխարկիչներով, Ն. տ.) և այլն: Հայրենական մեծ պատերազմի օրերին այս ածանցով լայն գործածություն ստացան զավթիչ, հափշտակիչ, գիշատիչ և այլ հատկանշային իմաստ արտահայտող բառերը, որոնք գերմանական ֆաշիստներին բնորոշ ածականներ էին:

-Իչ ածանցը հանդես է եկել նաև -ող դերբայական ածանցի փոխարեն. սրանք թեև համանիշ են, բայց միշտ չէ, որ կարելի է փոխարինել մեկը մյուսով, և սրա անտեսումը հաճախ այս ածանցների սխալ գործածության տեղիք է տալիս. օրինակ՝ «Դա հայտնի էր Թիֆլիսում իբրև ամենալավ պարիչ» (Շիրվանզադե, 2, 1950, 165):

-Ող. ժամանակակից հայերենում հանդես է գալիս հիմնականում քերականության բնագավառում իբրև ենթակայական դերբայի ածանց: Սակայն ենթակայական դերբայներից շատերը խոսքի մասային իմաստների փոփոխություն են կրել և վերածվել գոյական անունների: Այսպես՝ դեռևս շատ վաղուց գրող, ծաղկող, ծնող, սիրող, ուսանող, քերթող բառերը վերածվել էին գոյական անունների: Այժմ էլ առաջնորդող, ասմունքող, աշխատող, ծառայող, կատարող, կառուցող, մտածող, լրագրող, վաճառող կազմությունները (որոնց մեծագույն մասը գոյականների է վերածվել սովետական շրջանում)

հավասարապես կարող են դիտվել և՛ իբրև գոյական, և՛ իբրև ածական անուններ։

Սովետական շրջանում, հատկապես ետպատերազմյան ժամանակաշրջանից սկսած, -ող ածանցով կազմված մի շարք դերբայներում ածանցը սկսեց ուղղակիորեն ըմբռնվել իբրև մասնագիտության կամ զբաղմունք ցույց տվող ածանց (հմմտ. -գործ). այսպես՝ գայլիկոնող, եռակցող (հմմտ. եռակցում), զոդող, հարդարող (Մենք այս շենքը հարդարողներին կհանձնենք ապրիլին, ԵՆ, 10/3—1964), կաղապարող, մամլող (Արտադրամասի պետը գովեստի ու դրվատանքի խոսքեր է ասում մամլողների ու դրոշմողների, կտրողների ու եզրաշրջողների մասին, ԵՆ, 24/11—1964), շտամպող, փրեզող և այլն։

-ՈՆ. սրանով կազմվել ու կազմվում են քիչ թվով նվազական իմաստ արտահայտող բառեր. ինչպես՝ աչոն (նվազական իմաստով), բրդոն, բերոն, մանրոն (մանր դրամ), կոճոն, կտրոն և այլն։

Մի երկու կազմությունում այս ածանցը ունի «գործողության միջոցի» իմաստ. ինչպես՝ գործոն, պարզոն (բարակ լաթ, որով մածուն կամ կաթ են քամում) և այլն։ Սովետական շրջանում այս ածանցով մի քանի նոր բառեր են կազմվել վերոհիշյալ երկու իմաստներով. ինչպես՝ թափոն (արտադրական պրոցեսից գոյացած մետաղյա ավելցուկ. Նրանք որոշեցին պղնձի փոշին ստանալ տեղում՝ կաբելի գործարանի պղնձյա լարերի թափոններից, ԵՆ, 13/3—1964), հաստոն (Երևանի ալյումինի գործարանի «700» մակնիշի հաստոնի վրա տեղակայվել է..., ԵՆ, 31/5—1968), ջարդոն (արտադրության որևէ պրոցեսից գոյացած մետաղի կամ ապակու մանրուք) և այլն։

-ՈՐԵՆ. մակբայակերտ կենսունակ ածանց է և կազմել ու այսօր էլ կազմում է մեծ թվով մակբայներ (գերազանցապես ածական անուններից)։ Սովետական շրջանում -որեն ածանցով նոր մակբայներ են կազմվել մեծ մասամբ գոյական հիմքերով. ինչպես՝ անրջորեն (Եվ զանգերը անրջորեն հորիզոնից-հորիզոն, օրհներգելով թող օրորեն հրաժեշտի երեկոն, ԵՉ, ԵԺ, 1, 295), մանկորեն (Դու մանկորեն ժպտացիր, չգտար, ն. տ., 103), կոմպլեքսորեն (ԵՆ, 16/12—1963), վարձկանորեն (...վարձկանորեն ոչնչացնում էր աֆրիկացիներին, ՍՀ, 15/11—1966), պրակտիկորեն և այլն։

-ՈՒԿ. կենսունակ բազմիմաստ ածանց է, ինչպես վերոհիշյալ -ակ և -իկ համանիշ ածանցները։

Սովետական շրջանում տարածում ունեցան այս ածանցով կազմված որոշ բառեր, ինչպես՝ ֆուկ, ջերմուկ (Տեղանուն և համանուն հանքային ջուրը), թավալուկ (Հազարավոր թավալուկների վրայով... հանքաքարը տանում են բաժանմունքները, ԵՆ, 21/10—1964), կաթուկ (Տերևների շրշյունից, եվ շփումից ուշաթափ Տանձը կաթուկ է տալիս, ԳԹ, 29/1—1965), չորուկ (Ծառի վրա ոչ մի չորուկ չէր թողնվում, ՍՀ, 30/4—1965) և այլն։

-Ուհի. սովետական շրջանում բառակազմական մեծ արժեք ձեռք բերեց։ Կարելի է ասել, որ կենսունակության չափով այժմ նրան թերևս կարող է հավասարվել միայն -գործ ածանցը։ Սովետական շրջանում այս ածանցի աննախընթաց ծավալումը և գործածության շրջանակների ընդլայնումը սերտորեն կապված է կնոջ աշխատանքային և հասարակական դերի ընդլայնման, նրա գործունեության հարուստ բովանդակության և նոր կյանքի հետ համընթաց քայլելու հետ։ Այժմ -ուհի ածանցով իգական սեռի անձնանուններ կարելի է կազմել գրեթե բոլոր անձնանուններից։ -Ուհի ածանցով նորակազմ բառեր են՝ ասպիրանտուհի, արձակագրուհի (ՍԿ, ՔՔ, 446), բուֆետապանուհի, դեսպանուհի (197), գուսանուհի (Դրանք բուն ժողովրդական երգեր են՝ դարերի ընթացքում ստեղծված հայ գուսանների և գուսանուհիների կողմից, ԳԹ, 25/10—1964), ասիստենտուհի, զրուցակցուհի (Ես կարող եմ ձեր ձեռքը գցել որևէ գեներալի,— ասում էր զրուցակցուհին, ԵՆ, 8/4—1965), թոռնուհի (ՍՀ, 27/2—1965), լաբորանտուհի, կապավորուհի, մանեկենուհի (ԳԹ, 22/10—1965), մարդասպանուհի, մրցակցուհի, չեմպիոնուհի, սադիստուհի, փարիզուհի (ՍԳ, 3/7—1965), ներկայացուցչուհի, շահուհի (ՍՀ, 8/9—1968) և այլն։

Այս ածանցով կազմվել են նաև շատ սպորտային նոր տերմիններ. ինչպես՝ լողորդուհի, մարզուհի, շախմատիստուհի, ձեռնագնդորդուհի, ջրացատկորդուհի, սպորտսմենուհի, բասկետբոլիստուհի, վոլեյբոլիստուհի և այլն։

-Ուհի ածանցը դրվում է նաև -ող և -գործ ածանցներով կազմված անձնանունների վրա՝ վերածելով դրանց իգական սեռի անձնանունների. ինչպես՝ մատուցողուհի, վաճառողուհի, պարողուհի[24], տեքստիլագործուհի, տրիկոտաժագործուհի, հրուշակագործուհի և այլն։

---

[24] Անհաջող. բառ. է. կազմվել է սովետական տարիների սկզբներին (հմմտ. «Խումբը բալետ համարյա չունի, եթե չհաշվենք իր հետ բերած երկու պարողուհիներին», ԽՀ, 1925), այժմ այդ իմաստով գործածական է պարուհի կազմությունը։

-Ուհի ածանցը ընդգրկել է նաև այնպիսի բառեր, որոնք առանձին վերցված անձնանուններ չեն և այդպիսին են դառնում -ուհի ածանցի շնորհիվ միայն. ինչպես՝ **հեռագրուհի** (Սմոլնիում աշխատում էի որպես հեռագրուհի, ՍՍ, 15/4—1965), **գերազանցուհի** (ԳԹ, 18/12—1964) և այլն։

-Ուհի ածանցը շատ կազմություններում համապատասխանում է ռուսերենի **-ка** և **-ница** ածանցներին, և վերոհիշյալ նորակազմ բառերից շատերը հանդիսանում են այս ածանցներով կազմված բառերի ուղղակի թարգմանությունը կամ պատճենումը։

-Ում. խիստ կենսունակ է «գործողության առարկայացված ըմբռնում» արտահայտող իմաստով, այն դրվում է գերազանցապես բայահիմքերի վրա և կազմում բայանուններ։ -Ում ածանցով կազմվել են արգելակում, բռնկում, զղջում, լուծում, կիրառում, ճռնչում, մոտեցում, ներշնչում, շարժում, սպասում և այլն։ Սրանով նոր կազմված գոյականներ են՝ **ավտոլվացում, բետոնացում, գայլիկոնում, եռակցում, էլեկտրազոդում, էլեկտրաձուլում, ձեռքսեղմում** (рукопожатие), **մոնտաժում, նիզականետում, սկավառականետում, սպիտակեցում, պարկետում, պարկետապատում, փնտրում** (Դյուցազններ ելան փնտրումի ճամփին, ՀՇ, ՔՀ, 2, 40) և այլն։

-Ուն. սովետական շրջանում կազմել է քիչ թվով նոր ածականներ. ինչպես՝ **դարձուն** (խառատային դարձուն հաստոց), **պրպտուն** (Պրպտուն երիտասարդը սեր ու ձգտում ուներ դեպի արվեստը, ՍՀ, 21/10—1964), **սայթաքուն** (Դրանց արանքից երևում էր մերկ, սայթաքուն գագաթը, ԲՀ, ՍԶ, 280) և այլն։

Ընդհանրապես նկատելի է, որ բառերի նորակազմ լինելը զգալի է դառնում, երբ առարկայական իմաստ ունեցող բառեր են կազմվում։

Սակայն կան հատկանշային իմաստ ունեցող մի շարք բառեր, որոնց նորակազմ լինելը ակնհայտ է. այսպես՝ հիշյալ ածանցով նորակազմ ածականներ են Եղիշե Չարենցի ստեղծագործություններում բերված մի շարք բառեր, որոնք իրենց հատկանշային յուրահատուկ իմաստով ստացել են ոճական արժեք և բնորոշ են միայն Չարենցի ստեղծագործության լեզվին. ինչպես՝ **արևուն** (Փռված էր նա՝ շառագունած, արևուն, ԵՉ, Պոեմներ, Պոլիս, 1923, 28). **Կրակուն** (Իմ ուղեղը բորբոք կրակուն, Ալ գծեր ծփծփուն, հուրհուր..., ԵՉ, ԵԺ, 1, 260), **ճախրուն** (Եվ չես ըմբռնում կարոտը ճախրուն, ն. տ., 282) և այլն։

-Ք. հայտնի է իր առարկայացնող, կոնկրետացնող նշանակությամբ։ Այն զանազան խոսքի մասերից կազմում է բացառապես գոյական անուններ։ Սրանով կազմվել են՝ արժանիք, գիրք, երկայնք, ելք, լայնք, թեք, խնամք, խորք, ծախք, հոսք, մուտք, ցանք, ցոլք և այլն։ Այս ածանցով հայտնի են նաև նորակազմ բառեր. ինչպես՝ եռք (հալման, եռացման պրոցես), թափք, կայանք (կայան բառից. նշանակում է արդյունաբերական խոշոր սարքավորման տեղ), հրայրք (Բրամսի կոնցերտը գերեց իր քնքուշ, հրայրքոտ զգացմունքներով, ՍՀ, 20/7—1964), սահք (Մանկան ճիչ է պոկվում ու դուրս թռչում՝ մի պահ ղադարեցնելով և լուսնի սահքը, և բարդիների ձգվածությունը, ԳԹ, 9/10—1964), ցայտք (Տղաների պատվարաթմբից ցայտքեր են թռչում, ԲՀ, ՍՁ, 125), քայլք (հնում նշանակում էր ընդհանրապես քայլելը, որ այժմ մասնավորվել է սպորտի մեջ իբրև «քայլելու առանձին ձև» նշանակությամբ. օրինակ՝ «Սպորտային քայլքի ճանաչված ներկայացուցիչ է Գրիգորի Պանիչկինը», ՀՖ, 13/10—1964) և այլն։

3. ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐ

Հայերենի բայածանցներից սովետական շրջանում գործածական են և՛ կերպածանցները, և՛ սեռային քերականական ածանցները. ինչպես՝ -ատ, -ոտ, -տ, -կոտ, -ավոր, -ցն (-ացն, -եցն), -վ և այլն։ Սակայն սրանցից ոչ բոլորն են ակտիվ նոր բայեր կերտելում։ Այսպես, բայի բազմակիության, կրկնության կամ սաստկության իմաստ արտահայտող ածանցներից -ատ, -ոտ, -տ, -կոտ ածանցները թեև գործում են, սակայն դրանցով նորակերտ բայեր համարյա չկան, և գործածական բայերի մեծ մասը գալիս է բարբառներից։

Սովորական են այս ածանցներով կազմված այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ կոտրատել, փետրատել, հուրհրատել, կոխոտել, կոտրտել, ճխլտել, գզլտել, փշրտել, թռչկոտել, ցատկոտել, պոկոտել և այլն։

Բացի սրանցից, ժամանակակից հայերենում գործածական են նաև բայական այլ ածանցներ, որոնք իրենց նշանակությամբ բազմապատկական-սաստկական կերպի գաղափար են արտահայտում։ Սրանք կազմությամբ բաղադրյալ ածանցներ են և հիմնականում մուտք են գործել հայերենի բարբառներից. ինչպես՝ -կրտ//-կոտ (կոխկրտել, քաշկռտել), -րտ (ծխրտալ, ջարդրտել), -շտ (խառնշտել,

հրմշտել և այլն), -ոտոր, -շտոր (խառնշտորել, շանգտորել), -վոտ (գզվոտել, կանչվոտել), -վտ (հոտվտալ, պահվտել և այլն), -տակ կարմրատակել, փայլատակել) և այլն։

Բազմապատկական բնույթի ածանց է նաև -կլտ բաղադրյալ ածանցը, որ թեև նույնպես քիչ թվով բայեր է կազմել, սակայն ավելի սովորական է, քան նախորդ ածանցները. ինչպես՝ բոցկլտալ, հեծկլտալ, կայծկլտալ։

Այս ածանցների գործածությունը վկայում է, որ ժամանակակից հայերենը կարիք է զգում բայածանցների, որ առանձնապես զգացվում է նման ածանցներով հարուստ ռուսերենից բայեր թարգմանելիս և նրանց նմանությամբ ու իմաստով հայերեն բայեր կազմելիս (հմմտ. бросать—выбросить—повыбрасывать, толкать вытолкать—повыталкивать, ломать—выломать—повыламливать և այլն)։

Վերոհիշյալ ածանցները, իհարկե, մասամբ ծածկելով այս բացը՝ իրենց հետ բերում են, սակայն, բարբառային երանգ և առավել գործածական են բանավոր խոսակցական լեզվում։

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում բառակազմական լայն դերով է հանդես գալիս -ցն պատճառական ածանցը։ Սրանով նոր բայեր են կազմվել գերազանցաբար փոխառյալ հիմքերով։ Այսպես՝ փոխառյալ հիմքերով նորակերտ բայեր են կոոպերացնել (кооперировать), կոորդինացնել (координировать), լիկվիդացնել (ликвидировать), մոբիլիզացնել (мобилизировать), էվակուացնել (эвакуировать), վուլկանացնել (Երևանի ավտոդողերի գործարանը... մշտական աշխատանքի է հրավիրում բանվորների՝ հավաքողներ և վուլկանացնողներ պատրաստելու համար, ԵՆ, 18/6—1965), օկուպացնել և այլն։

Այս բայերի հետ միաժամանակ հայերենը սովետական շրջանում փոխ է առել նաև դրանց անվանական ձևերը. ինչպես՝ կոոպերացիա, կոորդինացիա, լիկվիդացիա, մոբիլիզացիա, էվակուացիա, օկուպացիա[25] և այլն։ Այս փոխառյալ բառերի աց հնչյունախումբը, ինչպես տեսնում ենք, ձևով նույնանում է -ացն համանուն հնչյունախմբի հետ և, կարելի է ասել, թե այստեղ աց տարրը (-ացն ածանցի) մի տեսակ կիսափոխառյալ ածանց է դառնում, մանավանդ որ վերոհիշյալ բայերի -ացն ածանցը լրիվ պատճառական ածանց չէ, քանի որ կոոպերացնել, մոբիլիզացնել, էվակուացնել և

25 Այս մասին տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 141։ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, 1962, էջ 132։

այլ բայերը հայերենում չունեն իրենց բայական զուգահեռ անածանց ձևերը, որ կլիներ կոոպերել, կոորդինել, էվակուանալ և այլն, ինչպես ունեն ակտիվանալ, նորմալանալ, պասիվանալ և այլ բայերը (որոնց համապատասխան պատճառական բայաձևերն են ակտիվացնել, նորմալացնել, էվակուացնել և այլն)։

Նույն երևույթը հանդիպում ենք (փոքր-ինչ ավելի հեռացած) նաև մի շարք այլ բայերի մեջ. ինչպես՝ ավտոմատացնել, գալվանացնել, էկրանացնել, կարբոնացնել, կոլեկտիվացնել, կոնվեյերացնել, մոբիլիզացնել[26] *և այլն։*

Այստեղ դրությունը փոքր-ինչ փոխվում է նրանով, որ բերված բայերի համապատասխան փոխառյալ անվանական բառերում հանդես է գալիս -изация *ածանցը (որի համապատասխան բայաձևերն են ռուսերենում* -изовать ‖ -изировать *ածանցներով կազմըված բայերը. հմմտ.* галванизировать, экранизировать, коллектизизировать, мобилизировать *և այլն), այսինքն մի փոքր հեռանում և ավելի անողղակի է դառնում* -ացն *բայածանցի և վերոհիշյալ փոխառյալ բառերի անվանական հիմքերի* -աց *ածանցի* (изация) *համընկնումը։*

-Ացն բայածանցը վերոհիշյալ կազմությունների շնորհիվ հիմնավորվելով և տարածվելով՝ սկսում է ընդգրկել նաև այն փոխառյալ անվանական հիմքերը, որոնցում -աց հնչյունախմբի համընկնում չկա. այսպես՝ -ացն ածանցով բայեր են կազմվել նաև այնպիսի փոխառյալ բայահիմքերից, որոնց համապատասխան անվանական ձևերը փոխառյալ չեն. օրինակ՝ վիտամինացնել (витаминизировать *«Իսկ ո՞ր մեթոդը հնարավորություն կտա լայնորեն և էժան վիտամինացնել անասնակերը», ՍՀ, 1/9—1964),* ռաֆինացնել (рафинировать *«Նրանք տեղադրում են լրացուցիչ սարքավորումներ բուսական յուղը էմուլսիոն ճանապարհով ռաֆինացնելու համար», ՍՀ, 21/10—1954),* շամպայնացնել *(Համաձայն նոր տեխնոլոգիայի... գինենյութը շամպայնացվում է կարճ ժամանակում, ԽՆ, 29/5—1965) և այլն։* Շամպայնացնել *բայից կազմվել է նոր* շամպայնացում *(գինենյութի արդյունաբերության մեջ արդյունաբերական պրոցեսի անվանում է) բայանունը։* -Ացն *ածանցի այսօրինակ ակտիվացումը և կենսունակացումը նպաստել են վերջինիս բառակազմական դերի ընդլայնմանը նաև մեր սեփական (ոչ փոխառյալ) բայակազմության մեջ։*

---

26 *Սրանցից* ավտոմատացնել, էկրանացնել *բայերը սկզբնապես գործածական էին նաև* ավտոմատիզացնել, էկրանիզացնել *ձևերով (հմմտ.՝ մոբիլիզացնել)։*

-Բան. կազմում է անձի իմաստ արտահայտող մեծ թվով գոյականներ. ինչպես՝ **արվեստաբան, ախտաբան, երկրաբան, լեզվաբան, կենսաբան, հոգեբան, պատմաբան, սրտաբան, փաստաբան** և այլն, և համանիշ է «զբաղվողի, անողի» իմաստ արտահայտող **-գործ** ածանցին։ Սակայն մի շարք կազմություններում ստացել է բայակերտ ածանցի նշանակություն (բայ կազմելով -ել-ի հետ միասին). ինչպես՝ **լուսաբանել, փառաբանել, վատաբանել, գովաբանել, դատարկաբանել, կատակաբանել, սիրաբանել, պարզաբանել** և այլն։ Այս բայերի մեծ մասը կազմված է գոյական հիմքերով, որոնցից մի քանիսն են բայեր կազմում զուտ գոյական հիմքերով և -ել ածանցով (հմմտ. գովել, սիրել, պարզել, կատակել և այլն), իսկ մյուսները բայեր են կազմում -բան ածանցի շնորհիվ (չունենք՝ վատել, լուսել, փառել և այլն)։

-Ավոր. գործուն է եղել մեր լեզվի բոլոր շրջաններում։ Հայրենական մեծ պատերազմի տարիներին այս ածանցով գոյականակերտ նոր նշանակությամբ հանդես եկան **ավտոմատավոր, հրետանավոր, կապավոր, սակրավոր** բառերը։ Այս ածանցով նորակազմ ածականներ են **գնդիկավոր** (գրիչ), **ժամկետավոր** (ռուսերենի шариковая ручка, срочный բառերի թարգմանությամբ), **աշտարակավոր** (աշտարակավոր կոունկ), **ծիրանավոր** (Ծիրանավոր առավոտի նուրբ պատկերներն էին շարվում, Վխ, Գլ, 20), **ոսկեվոր** (Խաղաղ ոսկեվոր աշուն է, ԳԹ, 4/11—1966) և այլն։

Հայերենի զարգացման սովետական շրջանում, հատկապես վերջին տասնամյակներում, **-ավոր** ածանցը մեծ չափով ակտիվացավ բայակերտ նշանակությամբ։ Այս հանգամանքը նկատի առնելով **-ավոր** ածանցը կարելի է դասել բայածանցների շարքը[27]։

Այս ածանցը բայեր էր կազմում դեռևս անցյալում. ինչպես՝ **եղանակավորել, իմաստավորել, թևավորել, լուսավորել, հիմնավորել, ձևավորել, տեղավորել, չափավորել** և այլն։ Նշված բայերում **-ավոր** ածանցը ունի ոչ թե «որևէ բան ունեցողի» իմաստ, ինչպես վերոհիշյալ գոյական և ածական անուններում, այլ «որևէ բան տալու, օժտելու, հաղորդելու, դարձնելու» իմաստ. այսպես՝ **իմաստավորել, թևավորել, լուսավորել, լիցքավորել** բայերը արտահայտում են «իմաստավոր, թևավոր դարձնելու» իմաստները և ոչ թե «իմաստ, թև ունեցող» իմաստները։ Այս բայերից շատերը անմիջաբար կազ-

27 Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, 1962, էջ 132—134։ Է. Աղայան, Բայակազմությունը ժամանակակից հայերենում, «Տեղեկագիր» հասարակ. գիտ., 1963, № 5, էջ 25—26։

րվում են -ավոր ածանցով կազմված ածականներից (իհարկե, բոլոր դեպքերում -ել բայական մասնիկով). ինչպես՝ գլխավոր-գլխավորել, գունավոր-գունավորել, թևավոր-թևավորել, կանոնավոր-կանոնավորել, հովանավոր-հովանավորել, հիմնավոր-հիմնավորել, մասնավոր-մասնավորել, միավոր-միավորել, ձևավոր-ձևավորել, նշանավոր-նշանավորել և այլն։

Սակայն այս ածանցով կազմվել են նաև բազմաթիվ բայեր, որոնք համապատասխան ածականները չունեն ժամանակակից հայերենում. մի բան, որ նորից վկայում է -ավոր ածանցի բայակերտ նշանակության մասին, ինչպես՝ արմատավորել, ամրանավորել (ամրաններ դնել, դրանցով ամրացնել), ելևէջավորում (=ինտոնացիա, տե՛ս Է. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, 1964, էջ 271), դասավորել, կարգավորել, կազմավորել, կահավորել, ոճավորել, արկղավորել, պահեստավորել (Կոլտնտեսությունն անցյալ տարի 320 ց. ցորեն ու գարի պահեստավորեց, ՍՀ, 28/1—1965), ուժավորել (Սա էր ուժավորում հոգին, Վխ, Գ.Լ, 186), Հրահանգավորել (инструктировать)[28], տեսակավորել, տեղավորել, սարքավորել, վարկավորել[29] և այլն։

Մեծ թիվ են կազմում նաև այս ածանցով կազմված շատ ածականներ, որոնցով հնարավոր չէ վերոհիշյալ բառերի նմանությամբ համապատասխան բայեր կազմել։ Դրանցից են առաջավոր, երախտավոր, գործադուլավոր, խնդրավոր, հասակավոր, հանցավոր, հրեշավոր, մեղսավոր, մերձավոր և այլն։ Սրանք հիմնականում այն բառերն են, որոնք իրենց բառական իմաստներով գերազանցապես գործողի անուններ են և բառիմաստի փոփոխությամբ վերածվում են անձի իմաստ արտահայտող գոյական անունների։

Բայակերտ նշանակությամբ -ավոր ածանցը խիստ կենսունակ է փոխառյալ բառերից նորակազմ բառեր կերտելիս. ինչպես՝ ակտավորել, ավանսավորել, ատեստավորել, բազավորել (Ավիակրի վրա բազավորված են ռեակտիվ կործանիչներ, ԵԵ, 8/4—1965), բարիկադավորել (ԵԵ, 4/2—1960), մոդելավորել (ԵԵ, 26/3—1966), կոմպլեկտավորել, կոնսպեկտավորել, նորմավորել, պլանավորել,

---

28 Սրանցից ընդգծվածները նորակազմ են։

29 Այսպիսի բայեր կազմում էին նաև նախասովետական շրջանում. ինչպես՝ վախվորել (Մի ռեալիստ փոքրիկ տղա՝ դեմքի սառած ու վախվորած արտահայտությամբ, ԼՏՀ, էջ 263), որ այժմ էլ գործածական է. ինչպես՝ (Ընկան վախվորած՝ հույսն օրոցք դրած, ՀՇ, ՔՀ, գ. 2, 40), ուռուցվորել (մարդիկ սևանում ու ուռուցվորում են, ԽՀ, 29/1—1922)։

ֆինանսավորել, սիստեմավորել, ֆոնդավորել (ՍՍ, 31/1—1967) և այլն։

Վերոհիշյալ փոխառյալ բառերի մեջ թեև փոխառյալ են միայն բայական հիմքերը, սակայն հայերենի -ավոր ածանցը արտահայտում է ռուսերենի -ова ածանցի իմաստը (հմմտ. կոմպլեկտավորել—комплектировать, նորմավորել—нормировать), այնպես որ, ճիշտ է նկատել պրոֆ. Ա. Աբրահամյանը, որ «այս տիպի բայերի մեջ հայերենի -(ա)վոր ածանցը գործածվում է թարգմանաբար արտահայտելու փոխառվող բայերի -ова ածանցի և նրա տարբերակների իմաստները»[30]։ -Ավոր ածանցով կազմված բոլոր բայերը (և՛ հայերեն, և՛ փոխառյալ) օրինաչափորեն վերածվում են բայանունների. ինչպես՝ ամրանավորել-ամրանավորում, ագրեգատավորել-ագրեգատավորում, էկրանավորել-էկրանավորում, կոնսպեկտավորել-կոնսպեկտավորում, հնչյունավորել (Ֆիլմը հնչյունավորել և վերականգնել է Լևոն Իսահակյանը, ՍՍ, 27/11—1969), պահեստավորել-պահեստավորում և այլն։

-Վ. հանդես է գալիս քերականական դերով և կազմում է կրավորական սեռի բայեր ներգործական և պատճառական բայերից. ինչպես՝ նվիրել-նվիրվել, ջարդել-ջարդվել, խմել-խմվել, կարդացնել-կարդացվել, թռցնել-թռցվել, հիշեցնել-հիշեցվել, մոռացնել-մոռացվել և այլն։ Սակայն դեռևս աշխարհաբարում գործածական էին մի շարք կրավորաձև չեզոք բայեր, որոնցում -վ ածանցը քերականական նշանակություն չուներ և հանդես էր գալիս սոսկ բաղադրական-բայակազմական նշանակությամբ, այսինքն մասնակցում էր այդ բայերի ձևավորմանը, ինչպես՝ բնակվել, գժվել, գժտվել, գանգատվել, գունատվել, զբաղվել, զմայլվել, թաքնվել, համարձակվել, հաշտվել, հարկավորվել, հարձակվել, հանդարտվել, հուսահատվել, նմանվել, պարտվել, սխալվել, վախճանվել և այլն։

Նկատի առնելով հիշյալ բայերի կազմավորման գործում ունեցած -վ ածանցի մասնակցությունը, և այն, որ դրանք չեն կարող խոսքի մեջ գործածվել առանց վերջինիս, հիշյալ բայերի -վ, ինչպես և մի շարք պատճառաձև բայերի -ցն ածանցները (հմմտ. թաքցնել, իրացնել, լցնել, հատկացնել, հրամցնել, կասեցնել, յուրացնել, վերցնել և այլն) կոչվում են բաղադրական ածանցներ[31]։

Սակայն հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում -վ

30 Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 134։

31 Տե՛ս Ս. Էլոյան. Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 202։

ածանցը նկատելիորեն ընդարձակել է իր. բառակազմական դերը և մասնակցում է այլևս ոչ միայն չեզոք բայերի բայահիմքերի բաղադրությանը, ինչպես վերոհիշյալ բայերում, այլև բայեր է կերտում բազմաթիվ անվանական (գերազանցապես գոյականական) հիմքերից, որոնք միայն -ել բայակերտ մասնիկով չէին կարող ձևավորվել իբրև բայեր կամ ստանալ բայական տեսք. ինչպես՝ ալիքվել (Վիթխարի մի հորձանք ալիքվելով դեպի ինձ էր գալիս, ՍԿ, ՔՔ, 5), արտակորվել (սպորտային տերմին է), աղբյուրվել, երամվել, բռունցքվել (ԳԹ, 28/2—1964), հիմնարկվել (հիմնադրվել բայի իմաստով) և այլն։

-Վ ածանցը իր այս բայակերտ նշանակությամբ առանձնահատուկ է գեղարվեստական ստեղծագործության լեզվին և առավելապես պոեզիային, որտեղ գոյական հիմքերով կազմված շատ բայեր -վ ածանցով դարձել են առարկայական երևույթներից բխող գործողության պրոցեսի պատկերավոր արտահայտության միջոցներ և ստացել ոճական յուրահատուկ արժեք. ինչպես՝ ակունքվել (Ավ., 22/1—1972), գրաստվել (Նրանք, որ... գալարվում են, ծեծվում, գրաստվում, ԵՉ, Պոեմներ, Պոլիս, 1923, էջ 58), զսպանակվել և այլն։ Բառակազմական այս երևույթը, որ սկզբնապես լայն տարածում չուներ, այնուհետև հող գտավ և զգալիորեն տարածվեց մեր գեղարվեստական չափածո ստեղծագործություններում։ Եվ ահա վերջին տասնամյակում բայակազմության նման ոճական կիրառությունը որակ է կազմում սովետահայ պոեզիայի լեզվում, որ մասնավորապես դրսևորված է Հովհաննես Շիրազի քնարական բանաստեղծություններում. ինչպես՝ ամբոխվել, սանդուղքվել, աղեղվել (Սանդուղքվող կարոտս ոտքերիդ կարոտ, Աղեղվող կարոտս հոնքերիդ կարոտ, ՀՇ, ՔՀ, 2, 156), կամարվել (Հին Անիս է... վեր կամարվում ժայռաբար գմբեթվելով, ն. տ., 37), մոնումենտվել (Ասես Մեսրոպ Մաշտոցն ինքն է, Մոնումենտվում նոր արձանով, ն. տ.), ամրոցվել (Միշտ վեր ամրոցվիր ցավերի ընդդեմ, ՀՇ, ԳԹ, 26/6—1968) և այլն։

-Վ ածանցը երբեմնակի այս դերը կատարում է -ավոր բայակերտ ածանցի մասնակցությամբ. ինչպես՝ ալիքավորվել, աճավորվել, երկաթավորվել (Չարենց), խրամատավորվել և այլն։

-Ել. Ի վերջո բայակազմական հիմնական նշանակությամբ հանդես են գալիս -ել և -անալ (ան+ալ) բայական ածանցները (սրանց համեմատությամբ խիստ նվազ կենսունակ է -ալ մասնիկը), որոնք բայի խոնարհման կամ դերբայական համակարգում

գիտվում են իբրև վերջավորություններ, կամ մասնիկներ՝ նկատի ունենալով դրանց բայաձևերի համար իբրև սկզբնաձև կամ ելակետային ձև ծառայելու հանգամանքը։ Սրանք մեծ բառակազմական դեր են կատարել հատկապես սովետական շրջանի բայական բառապաշարի հարստացման գործում։ Սրանցով մեծ քանակությամբ բայեր են կազմվել զանազան խոսքի մասերից (առավելապես գոյական և ածական անուններից)։ Բերենք -ել ածանցով կազմված նորակազմ բայեր. ինչպես՝ աղբել (վաղուց է Ղշլաղեցին աղբում, պարարտացնում հողը, ԽՀ, 4/3—1925), ավերակել (Արյան մի նոր շիթ ավերակում է նրա դեմքը, ԳԹ, 26/2—1965), արևել (Հրաշք դառնաս՝ անդունդները արևես, ԵՉ, Եժ, 1, 21), արցունքել, արշալուսել, բահել (ՀՁ, 7/8—1968), բետոնել, բանաձևել, ելևէջել (ՍՍ, 29/5—1968), թևել, թրևել, ծիածանել, կարևորել (...Այնինչ մնացածը չի կարևորել, ՍՍ, 23/2—1965), կենսունակել (Բանդիտային կազմակերպությունը բավական կենսունակեց, ՍՍ, 26/3—1964), հավերժել (...Նրա ջերմաններում գարունն է հավերժում, ՍՍ, 16/4—1965), հարցուփորձել, հեղինակել, մարտել (Ինչով է տարբերվում ռինգի սովետական վարպետների մարտելու ձևը խաղացկներից կամ լեհերից, ՀՖ, 29/9—1964), մոդուլել, (ԳԹ, 24/12—1967), շեփորել, ռահվիրել (Պլացկարտը կռնկիս,— ասաց մի գյուղացի և ռահվիրեց դեպի այլ վագոն, ԴԴ, 1, 243), ռեկլամել, ռեպլիկել (ՍՀ, 19/11—1967), վայրէջքել (Վխ, ԳԼ, 60), վիպերգել, վրձնել, վերուվարել, պարկետել, պատգամել պրոտեզել, ստվերել, ուսել (Տղամարդիկ գերանդին ուսեցին ու բարձրացան սարը, ՍՀ, № 203, 1963), փաստել, փառոսել[32] և այլն։ -Ել ածանցով շատ նորակազմ բայեր ենք գտնում նաև Ե. Չարենցի պոեզիայում (գերազանցապես գոյականական հիմքերից), ինչպես՝ արևել, լուսել, հնչեղել, շեփորել և այլն։

-Անալ ածանցով կազմված մի շարք բայեր նոր են կամ ոճական նոր իմաստ են ստացել։ Սրանք հիմնականում գոյական հիմքերով կազմված բայեր են։ Այս եղանակով հնարավորություն է ընձեռվում շատ երևույթների արտահայտման համար պատկերավոր և բնորոշ բայաձևեր կերտել։ Այսպիսի բայերը ստացել են ոճական առանձնահատուկ կիրառություն, ըմբռնվում են իբրև

32 Բերված նորակազմ բայերից ոչ բոլորն են հաջող և հանձնարարելի. ինչպես՝ մարտել, ռեպլիկել։

գործողության պատկերման ոճական արտահայտություններ, որոնք միաժամանակ յուրահատուկ փոխաբերություններ են. այսպես՝ անրջանալ, առավոտանալ, սրբանալ *(Եվ չինչ մնաց քո աչքերում, իմ հոգում, Մի սրբացած, անրջացած ծիածան, ԵՉ, ԵԺ, 1, 94)*, բրոնզանալ, նյութանալ, աննյութանալ, մարմնանալ *(Աննյութացած ու նյութացած լուսավոր՝.... Դու մարմնանաս ու կրկին հրաշք դառնաս, ն. տ., 21)*, արմատանալ (Ս. Ղազարյան, *Հայոց լեզվի համառոտ պատմություն, 1964, 329)*, առասպելանալ, բանաստեղծանալ, ծովանալ *(Կա, ապրում ու ծովանում է Հայաստանը, ՍՀ, 29/11—1964)*, կոթողանալ *(Կոթողացած Բակունցն է նայում ժողովրդին, ԳԹ, 19/6—1964)*, հարսնանալ *(ՎԴ, էջ 17)*, մանկանալ *(Ինձ մի՜շտ թվում է՝ տեսնեմ թե քեզ, Դեմդ կվազեմ ես մանկացած, ՍԿ, ՄՃԿ, 84)*. մարդանալ *(Եվ ահա արքան մարդացավ գութից, ՀՇ, ՔՀ, 231)*, գառնանալ *(Գայլն էլ գառնացավ մանուկի փոխվեց, ն. տ., 232)*, վագրանալ *(Ու վագրացավ վշտից մի պահ վարդ հոգիս, ն. տ., 32)*, գարունանալ *(ԳէՄ, ՄԱ, 121)*, լազուրանալ *(ն. տ.)*, մայրանալ, մարդեղանալ *(Բարձրանում, կանգնում է մեր դեմ կենդանի մարդեղացած բանաստեղծը, ԳԹ, 31/12—1964)*, ստվերանալ *(Ստվերացած անց եմ կենում, Ննջավայր քո կիրճով, ԳԹ 26/2—1965)*, վարդանալ, օձանալ *(Ջրից կրակը փշշում էր կատաղած և օձանում դեպի վեր, ՍՏՋ, 2, 75)*, ֆաշիստանալ *(հարցն այստեղ ֆաշիստանալու համեմատաբար նեղ պրոբլեմը չէ, ԳԹ, 22/10—1965) և այլն։*

Բայահիմքի (անցյալ և պատճառական) ածանցները ընդհանրապես գործածվում են միայն բայերի կազմության մեջ և բայահիմքից անկախ չեն։ Դրանք բնականաբար պահպանվում են նաև բայահիմքերով բայանուններ կերտելիս. ինչպես՝ իրականացում, ծանուցում, հատուցում, կառուցում, ուսուցում, սլացում *և այլն։ Ինչպես հայտնի է,* -ում *գոյականակերտ վերջածանցով բայանուններ կազմվում են ընդհանրապես* -ալ *խոնարհման բայերից, սակայն վերջերս դրանց նմանակությամբ մի քանի բայեր են կազմվել նաև* -ել *խոնարհման բայերից, որ տվյալ բայերի համար գործող օրինաչափություն չէ և սխալ է, այսպես՝* հալեցում, սառեցում, ծլեցում *(ԵԵ, 27/1—1966) բայերի նմանակությամբ կազմվել է նոր* հնեցում *բայանունը, որ օրինաչափորեն պետք է տար* հնացում *(հնանալ բայից)։ Նորակազմ է նաև* թնդեցում *(Իսկ չոր և թրնդեցրած գինիների համար նախատեսվածից ավելի է գործածվել 13,6 հազար շիշ, ԵԵ, 29/5—1965) բառը։*

Բացի -ում գոյականակերտ ածանցից, բայահիմքերը գործածվում են նաև -իկ նվազափաղաքշական ածանցի հետ և կազմում հատկանշային իմաստ արտահայտող անուններ (ածականներ), ինչպես՝ ընթացիկ, թռուցիկ, ազդեցիկ, եռգեցիկ, ընկեցիկ, կառուցիկ, մուրացիկ, պայթուցիկ, սլացիկ, ցոլացիկ *(նորակազմ բառ է. «Դեռ այգաբացը թրթռում է բարդիների կատարին ու ցոլացիկ շողքեր նետում», ԳԹ, 5/5—1965),* ուռուցիկ *և այլն։*

4. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱԾԱՆՑՆԵՐ

Ժամանակակից հայերենի ածանցների ընդհանուր համակարգը նախասովետական շրջանի հետ համեմատած քիչ է փոխվել, քանի որ բոլորովին նոր ածանցները շատ քիչ են։ Սակայն դրա փոխարեն հայերենի սովետական շրջանի բառապաշարը շատ է հարստացել նորակազմ ածանցավոր բառերով։

Սովետական շրջանում առաջացած կամ նորագույն ածանց կարելի է դիտել հայերենի -գործ *կենսունակ ածանցը։*

Իբրև ածանց առաջանալով սովետական շրջանում՝ -գործ-ը *բառակազմական ակտիվ դեր է կատարում։ Այս արմատով այժմ էլ գործածական են* ասեղնագործ, զորգագործ, կտավագործ, ձեռագործ *և այլ բառեր, որոնցում* գործ *արմատը ունի «գործող, գործված» իմաստները (ասեղով, ձեռքով գործված. գորգ, կտավ գործող և այլն)։ Այս արմատով գործածվում են նաև մի շարք ածականներ և բայեր. ինչպես՝ հանցագործ, հմտագործ, հրաշագործ, հայտնագործել, մեծագործ, շահագործել, ստեղծագործել, սրբագործել և այլն։ Այս բառերի երկրորդ բաղադրիչը ածանց չէ և գործ է ածվում հիշյալ արմատի իսկական իմաստով։*

Սովետական շրջանում -գործ *ածանցը լայնորեն ծավալվեց «որևէ զբաղմունք, մասնագիտություն ունեցողի», «որևէ գործ անողի» իմաստներով՝ ընդգրկելով նաև մեծ թվով փոխառյալ բառեր։ Այս ածանցով նորակազմ բառերից են՝ ավտոդողագործ, ալյումինագործ, ասֆալտագործ, բետոնագործ, գազագործ, գործիքագործ, դաշտահագործ, երշիկագործ, էլեկտրալամպագործ, թունելագործ, լեռնագործ, լիմոնադագործ, խաղողագործ, ծխախոտագործ, ծխախոտագործ, ծաղկեգործ, կաուչուկագործ, կարելագործ, կահույքագործ, կաթսայագործ, կոնյակագործ, ճակնդեղագործ, մարմարագործ, մետաքսագործ, ներկագործ, պահածոյագործ, պանրագործ, պոմ-*

պագործ, ռետինագործ, տակառագործ, տեքստիլագործ, տրիկոտաժագործ, տուրբինագործ, ցեմենտագործ և այլն։

Գործ-ով բաղադրված մի շարք բառերում, ինչպես՝ ածխագործ (Րաֆֆի, ԵԺ, 2, 467), փինագործ (ն. տ., 5, 189), կլայեկագործ (ն. տ., 33), տարազագործ (ն. տ., 2, 235), ինչպես և գինեգործ, ատաղձագործ, փականագործ և այլն, գործ-ը «զբաղմունք, մասնագիտություն ունեցողի» իմաստով ըմբռնվում էր դեռևս նախասովետական շրջանում, սակայն նրա իմաստը այնքան չէր վերացականացել, որքան այժմ։

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում ածանցացման ճանապարհին է կանգնած վար արմատը, որ թեև դեռևս շատ նորակազմ բառերում գիտվում է իբրև բարդության երկրորդ բաղադրիչ, սակայն շատ մոտ է կանգնած նաև «զբաղմունք կամ մասնագիտություն» ցույց տվող վերոհիշյալ ածանցին. ինչպես՝ ապարատավար, բրիգադավար, բուլդոզերավար, էքսկավատորավար, կոմնկավար, մոտորավար (ԵԵ, 4/2—1966) և այլն։

5. ԱԾԱՆՑՆԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում փոխառյալ ածանցներ առաջանում են գերազանցապես փոխառյալ ածանցավոր բառերի ածանցների գիտակցման և առանձնացման ճանապարհով։ Այսպես՝ հնդեվրոպական լեզուների -իստ ածանցը հայերենին է անցել իրենով ածանցված մի շարք փոխառյալ բառերից. ինչպես՝ անարխիստ, ակտիվիստ, ալպինիստ, իդեալիստ, ինտերնացիոնալիստ, լենինիստ, մատերիալիստ, նացիոնալիստ, նացիստ, պրոպագանդիստ, կինոդոկումենտալիստ, մարաթոնիստ, տեռորիստ և այլն, որոնք հայերենին են անցել գերազանցապես ռուսերենի միջոցով։ Իբրև ածանց գիտակցվելով, -իստ-ը աստիճանաբար հարազատանում է հայերենի համար և անջատվելով փոխառյալ բառերից, դառնում է առանձին ինքնուրույն ածանց ու դրվում նաև հայերեն բառերի վրա. ինչպես՝ դաշնակիստ, մաուզերիստ, ճեմալիստ[33], բառիստ, դուդուկիստ, շաշկիստ և այլն։ Նույնը կարելի է ասել նաև -իզմ ածանցի մասին, որ գործածվում է աշխարհի մեծ թվով լեզու-

---

[33] Սրանք գործածական էին սովետական կարգերի առաջին տարիներին և այդ հասկացությունների վերացման հետ՝ աստիճանաբար դուրս եկան գործածությունից ու վերածվեցին հազվագյուտ գործածական բառերի։

ներում և լեզվաբանության մեջ իրավամբ համարվում է ինտերնացիոնալ ածանց։ Այս ածանցով հայերենին են անցել փոխառյալ կապիտալիզմ, իմպերիալիզմ, լենինիզմ, մարքսիզմ, մոդեռնիզմ, ռոմանտիզմ, տուրիզմ և այլ բառեր։ Սրանով դեռևս մեծ թվով բառեր չեն կազմվել հայերենում (հմմտ. դաշնակիզմ)։ Մի քանի բառեր կազմվել են բանավոր խոսակցական լեզվում։

Մի քանի կազմություններում թերևս փոխառյալ նորագույն ածանց կարելի է համարել -իտ ածանցը, որ գործ է ածվում միայն քիմիական նյութերի նոր անվանումներ կերտելիս։ Այսպես՝ մամուլում հաճախ ենք հանդիպում դունիտ, կվարցիտ, սիենիտ, սերպենտինիտ (քիմիական նյութերի անվանումներ են), գրաֆիտ, բենտոնիտ (կավի նոր տեսակ), սիլիկալցիտ (արհեստական քար), մոլիբդենիտ (արհեստական ծեփ), տեռազիտ, պեռլիտ (սպիտակամոխրագույն ապակյա նյութ) և այլ բառերին, որոնցում -իտ ածանցը փոխառյալ հիմքերով կազմել է նոր քիմիական նյութերի անվանումներ։ Սրանով վերջին տասնամյակում հայերեն արմատներով նույնպես կազմվել են նոր քիմիական նյութերի անուններ. օրինակ՝ արմենիտ (ԵԵ, 11/3—1966), երևանիտ (քիմիական նոր թել, որ գործածվում է նուրբ բրդյա գործվածքներ ստանալու համար), լոռենիտ (Լոռի տեղանունից, նոր քիմիկատ է, որ փոխարինեց տեքստոլիտին, ԵԵ, 1/2—1966), նաիրիտ, սևանիտ (ԵԵ, 2/11—1966) և այլն։

Նույն տիպի փոխառյալ նոր ածանց է նաև -ոն ածանցը, որ իր կենսունակությամբ դեռևս չի հասնում վերոհիշյալ -իտ ածանցին. սակայն արդեն գործածվում է փոխառյալ բառերով կազմված տեխնիկական տերմինաստեղծության մեջ. ինչպես՝ գանգլերոն, էլաստոն, ինտերֆերոն (Նոր հակավիրուսային միջոց, ՍՀ, 13/2—1968), պալիրոն (Նոր սպիտակեցնող հեղուկ, ԵԵ, 18/3—1967) և այլն։

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում ռուսերենից կամ ռուսերենի միջոցով փոխառյալ մի շարք բառերում սկսեցին առանձին կերպով գիտակցվել նաև -ֆիկացիա, -իզացիա ածանցները. ինչպես՝ գազիֆիկացիա, էլեկտրիֆիկացիա, հիդրոֆիկացիա, էկրանիզացիա, մոբիլիզացիա և այլն։ Սրանք այժմ գործածական են գազիֆիկացում, հիդրոֆիկացում, մոբիլիզացում, էլեկտրիֆիկացում, էկրանացում և այլ ձևերով։

Փոխառյալ որոշ բառերի հետ գործածվում են -տոր, -իանա և մասամբ -ատ, -իադա ածանցները. ինչպես՝ գեներատոր, մեխանիզատոր, ռացիոնալիզատոր, օպերատոր, լենինիանա, շեքսպիրիա-

նա (Մոսկվայից հետո հայ երգչուհու «Շեքսպիրիանան» ունկնդրեց Լենինգրադը, ՍՀ, 16/2—1965), դեկանատ, դիպլոմատ, ռեկտորատ, չեմպիոնատ, սպարտակիադա, օլիմպիադա և այլն։

6. ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱՆՑՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց լեզվի ածանցները միասին գործածվելիս հիմնականում հնչյունափոխության քիչ են ենթարկվում։

Քիչ են հնչյունափոխվում նաև նրանց հետ գործածվող բառարմատները կամ բառերի վերջնահնչյունները. ինչպես՝ արտադրողականություն, գիտակցականորեն, գրականություն, դպրոցական, խտրականություն, հեղափոխականացում և այլն, և այլն։

Հնչյունափոխությունները հիմնականում տեղի են ունեցել մեր լեզվի հնագույն շրջաններում. ինչպես՝ պատանի+ություն>պատանություն, ամայի+ություն>ամայություն (հմմտ. ամայացում), ոգի+ական>ոգեկան (հմմտ. հոգեկան), պատանի+ական>պատանեկան, ընտանի+ական>ընտանեկան և այլն, որոնց մասին հարկ չկա հանգամանորեն խոսելու այստեղ։

Հնչյունափոխական երևույթ է տեղի ունենում նաև -ային ածանցի և այլ վերջածանցների զուգահեռ գործածության դեպքում։ Բերենք մի քանի նորակազմ բառեր. ինչպես՝ ապրանքայնացում (ային+ացում, ԽՀ, 7/3—1925), երկաթուղայնական (ԽՀ, 8/6—1922), երգայնություն (ային+ություն), հարվածայնություն, կուլտուրայնություն (ային+ացում), միջազգայնական և այլն։

Հնչյունափոխական հետաքրքիր երևույթներ են տեղի ունեցել սովետական շրջանում նաև փոխառյալ բառերի և հայերենի ածանցների միջև։ Այսպես՝

ա) Երբ ա վերջնահնչյուն ունեցող փոխառյալ բառերի վրա ավելանում է նույն հնչյունով սկսվող ածանց, ապա երկու ա հնչյուններից մեկը սղվում է. ինչպես՝ երկսերիանոց (< երկսերիա+անոց, հմմտ. ...էկրանների վրա դիտեցեք երկսերիանոց նոր կինոնկար, ՍՍ, 5/2—1965), թեթևատլետիկա+ական>թեթևատլետիկական, Վարշավա+յան>վարշավյան, պոլիկլինիկա+ային>պոլիկլինիկային (Պոլիկլինիկային բուժսպասարկումը պետք է լինի շրջանային, տեղամասային, թաղային սկզբունքով, ՍՆ, 30/3—1965), տեխնոլոգիա+ական>տեխնոլոգիական[34] և այլն։

---

34 Նման հնչյունափոխական երևույթներ եղել են նաև հայերենի նախասովետական շրջանում փոխառված բառերի մեջ. ինչպես՝ սիմֆոնիական (Նիկոլաևը

բ) ա ձայնավորով (մասամբ նաև ո) վերջացող փոխառյալ բառերը հայերենի՝ ձայնավորով սկսվող ածանցների հետ գործածվելիս, ենթարկվում են հայերենի հնչյունական, ուղղագրական կանոններին, այսինքն միանում են ձայնակապով. ինչպես՝ դինամո+ական>դինամոյական, տորպեդո+ական>տորպեդոյական, մասսա+ական>մասսայական, մեքենա+ացում>մեքենայացում, պրոզա+իկ>պրոզայիկ և այլն:

գ) Մի քանի փոխառյալ բառեր հայերենի վերջածանցների հետ գործածվելիս վերականգնում են իրենց արմատական վերջնահնչյունները. մի բան, որ տվյալ բառերի ածանցազուրկ ձևերում հայերենում պահպանված չէ: Այսպես, ինչպես հայտնի է փոխառյալ բյուջե, պորտրե, սյուժե բառերը հայերենում վերջանում են ե հնչյունով, այսինքն, չեն պահպանել իրենց հնդեվրոպական ձևերի տ արմատական հնչյունը, որ ռուսերենում պահպանված է (հմմտ. бюджет, портрет, сюжет): Սրանք ստանալով -ային և -իստ վերջածանցները՝ վերականգնում են իրենց արմատական վերջնահընչյունը. ինչպես՝ բյուջետային, պորտրետիստ, սյուժետային և այլն:

հաճախ է բեմ դուրս եկել Թիֆլիսի բաժանմունքի սարքած սիմֆոնիական երեկույթներին, Տարազ, № 1, 1865, 15), կրիտիկական և այլն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավ. — Ավանգարդ (լրագիր)։
ԱվԻ — Ավետիք Իսահակյան, Երկեր, Երևան, 1958—1959։
ԲՀ, ՍՉ — Բաղիշ Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, Երևան, 1962։
ԳԶ — Գրիգոր Զոհրապ, Երկերի ժողովածու, հատ. 1—2, Երևան, 1962։
ԳէՄ — Գևորգ էմին, Մինչև այսօր, Երևան, 1959։
ԳԹ — Գրական թերթ (շաբաթաթերթ)։
ԴԴ — Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1955։
ԴՎ — Դանիել Վարուժան, Բանաստեղծություններ, Երևան, 1955։
ԳՄ — Գուրգեն Մահարի, Սև մարդը, Երևան, 1964։
ԵԵ — Երեկոյան Երևան (օրաթերթ)։
ԵՉ, ԵԺ — Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հատ. 1—2, Երևան, 1963։
Եր. — Երևան (օրաթերթ)։
ԼՏՀ — Լև Տոլստոյ, Հարություն, Թիֆլիս, 1911, Թիֆլիս, 1894։
ԽՀ — Խորհրդային Հայաստան (օրաթերթ)։
ՀԹ — Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 1—2, Երևան, 1958։
ՀՇ, ՔՀ — Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, Երևան, գիրք 1, 1958, գիրք 2, 1964։
ՀՁ — Հայրենիքի ձայն (շաբաթաթերթ)։
ՀՖ — Հայաստանի ֆիզկուլտուրնիկ (օրաթերթ)։
ՆԶ — Նաիրի Զարյան, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1962։
ՊԴԲ — Պետրոս Դուրյան, Բանաստեղծություններ, Վաղարշապատ, 1940։
ՊՍ, ՄԱՓ — Պարույր Սևակ, Մարդը ափի մեջ, Երևան, 1963։
ՌԶՑ — Ռուբեն Զարդարյան, Ցայգալույս, Երևան, 1959։
ՍԱ — Սովետական արվեստ (ամսագիր)։
ՍԴ — Սովետական դպրոց (շաբաթաթերթ)։
ՍԿ, ՄՃԿ — Սիլվա Կապուտիկյան, Մտորումներ ճանապարհի կեսին, Երևան, 1961։
ՍԿ, ՔՔ — Սիլվա Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են, Երևան, 1964։
ՍՀ — Սովետական Հայաստան (օրաթերթ)։
ՍԶ — Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, հատ. 1—2, 1960։
ՎԴ — Վահագն Դավթյան, Գինու երգը, Երևան, 1966։
ՎՏ, ԵԺ — Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 1—2, Երևան, 1960—1961։
ՎԽ, ԳԼ — Վիգեն Խեչումյան, Գիրք լինելության, Երևան, 1966։
ՖՎ, ՄԼ — Ֆրանց Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964։

Ս. Ա. ԷԼՈՅԱՆ

III. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հայոց լեզվի բառապաշարը սովետական շրջանում հարստացավ բառակազմության նոր տեսակով՝ հապավումներով (սկզբնապես կոչվեց նորագույն ճապավումներ)[1] կազմված շատ բառերով: Բարդության այս նորագույն տեսակը, որ եվրոպական լեզուներում մեծագույն չափերի էր հասել, հայերենում, ինչպես նաև ռուսերենում և Սովետական Միության այլ լեզուներում, փաստորեն զարգացում և ծավալում ստացավ միայն սովետական շրջանում:

Հապավումները այն բաղադրյալ բառերն են, որոնք ներկայացնում են մեկից ավելի բառերի կրճատված մասերի մեկ ամբողջություն. ինչպես՝ գիտկաբինետ, կուսկոմ, տեղկոմ և այլն: Բառերի այս կրճատված մասերը փոխարինում են համապատասխան ամբողջական բառերին և դրանց կրճատ ներկայացուցիչներն են:

Հապավումները հայերենում պատկանում են, կարելի է ասել, բառակազմության ամենաքիչ ուսումնասիրված տեսակների թվին: Այս մասին կա միայն պրոֆեսոր Գուրգեն Սևակի «Նորագույն հապավումները հայերենում» հիշյալ ուսումնասիրությունը, որ և հայերենի հապավումների, նրա տեսակների և կառուցվածքային առանձնահատկությունների գիտական վերլուծությունն է: Սակայն հայոց լեզվի բառապաշարը օրավուր համալրվում և հարստանում է նորանոր հապավումներով, որոնք հատկապես մեծ թիվ են կազմում վերջին երկու տասնամյակներում (նկատի ունենք հիմնարկձեռնարկությունների, զանազան կազմակերպությունների, նորաստեղծ պետությունների և հանրապետությունների տառային և վան-

---

1 *Տե՛ս Գ. Սևակ, Նորագույն հապավումները հայերենում, «Տեղեկագիր» հասարակական գիտ., Երևան 1947, № 5, էջ 55—67, այլև «Հայոց լեզվի դասընթաց», Երևան, 1955, էջ 182—198:*

կային հապավումներով կազմված անվանումները), հետևաբար հայերենի սովետական շրջանի զարգացման մասին ուսումնասիրությունը բնականաբար թերի կլիներ առանց վերջին տասնամյակներում գոյացած հապավումների, նրանց տեսակների ու բնույթի ուսումնասիրման։

Հապավումները բառակազմության մյուս տեսակներից հիմնականում տարբերվում են նախ և առաջ իրենց ծագման բնույթով, նրանով, որ առաջացել են գրավոր լեզվից, վերջինիս կրճատ գրությունից և դրանից հետո են միայն մտել ու տարածվել բանավոր լեզվում, մինչդեռ բարդությունները (հարադրական, կցական և իսկական) և ածանցավոր բառերը սկզբնապես առաջացել են բանավոր լեզվում և այնուհետև օրինաչափորեն տարածվել նաև գրավոր լեզվի մեջ։ Եվ հետո՝ եթե մյուս բաղադրյալ բառերը (բարդությունները և ածանցավոր բառերը) բաղադրված են հիմնական և երկրորդական ձևույթներից և բառերից, ապա հապավումների բաղադրիչները ձևույթային կարգի միավորներ չեն։ Իհարկե, սա չի վերաբերում վանկաբառային հապավումների վերջին բաղադրիչին, որը բառային միավոր է. ինչպես՝ քաղբյուրո, կուսկոմիտե, շինգրասենյակ և այլն։ Հապավման բաղադրիչները կազմված են վանկերից, բառամասերից և բառերի սկզբնահնչույթներից (սկզբնատառերից), որոնք առանձին վերցրած իմաստ չունեն։

Հապավումները բառակազմության իրենց յուրահատուկ ձևով տարբերվում են ժամանակակից հայերենի բառակազմության մյուս կանոնավոր եղանակներից, սակայն կազմված են բաղադրության հիմունքով և դասվում են բաղադրյալ բառերի շարքը։

Հապավումներ ստեղծելու փորձեր եղել են դեռևս հնում։ Մագաղաթի և թղթի պակասը ստիպել է մարդկանց բառերը կրճատելու ելք որոնել։ Եվ ահա նրանք բավարարվել են առավել գործածական բառերի կրճատումով. այսպես՝ աստված կրճատ գրում էին ա̅ծ, սուրբ=ս̅բ, և այլն=և̅ն, -ություն ածանցը՝ թ̅ն և այլն։

Այնուհետև, կապիտալիզմի արագ զարգացումը արդեն ոչ միայն թղթի, այլև ժամանակի խնայողության պահանջ էր դնում։ Տարբեր երկրներում միաժամանակ սկսեցին կրճատել զանազան պետությունների և այլ անուններ։

Սակայն հապավումները առավելապես զարգացան Սովետական Միությունում։ Սովետական Միության պետական, կուսակցական ապարատների, հիմնարկների, կազմակերպությունների ընդարձակ անվանումները (հմմտ. շրջժողկրթբաժվար) շատ հաճախ

էին գործածվում, բնականաբար ձգտում էին դեպի կրճատ գրություն և վերածվում հապավումների։ Եվ ահա ստեղծվեցին ու լայնորեն տարածվեցին մի շարք հապավումներ. ինչպես՝ Համկ(բ)Կ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն, ԼԿԵՄ (Լենինյան Կոմունիստական Երիտասարդական Միություն), լուսժողկոմատ (լուսավորության ժողովրդական կոմիսարիատ), ժողկոմխորհ (ժողովրդական կոմիսարների խորհուրդ) և այլն։

Հապավումները այնպիսի արագությամբ սկսեցին տարածվել, որ դեռևս Սովետական իշխանության գոյության առաջին տասնամյակում մամուլի և գրականության էջերը հեղեղվեցին անթիվ նորագույն հապավումներով, որոնցից շատերը անհասկանալի էին բնակչության մեծամասնության համար։ Հապավումների գործադրման այս ծայրահեղությունը, իհարկե, ժամանակին դատապարտվեց կառավարության ղեկավար մարմինների կողմից։ Այնուհետև հապավումների դերը մասամբ սահմանափակվեց ժողկոմատները մինիստրությունների վերանվանվելուց հետո, երբ մի շարք հապավումներ սկսեցին գործածվել լրիվ անվանումներով. այսպես՝ Արտգործժողկոմատը վերանվանվեց արտաքին գործերի մինիստրություն (նաև՝ արտգործմինիստրություն), լուսժողկոմատը՝ լուսավորության մինիստրություն և այլն։

Սակայն հապավումները իբրև բարդության նորագույն եղանակ երբեք դուրս չեկան գործածությունից, ընդհակառակը, աստիճանաբար նորմավորվեցին և իրենց բովանդակությամբ հասկանալի ու մատչելի դառնալով՝ դրսևորեցին նաև բառակազմական կայուն օրինաչափություններ։

Այսպես՝ հապավումները բառակազմության նախորդ տեսակների հետ ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ։ Բառակազմության մյուս ձևերը թեև նույնպես կազմված են առանձին բաղադրիչների համադրումից ինչպես և հապավումները, սակայն առաջիններում բաղադրիչների իմաստները պահպանված և հասկանալի են ու կարող են վերլուծվել նաև դրանց անծանոթ մարդկանց համար, մինչդեռ հապավումների բաղադրիչները համապատասխան բառերից մեխանիկորեն անջատված բաղադրիչներ են և անմատչելի ու անհասկանալի են բոլոր նրանց համար, ովքեր անծանոթ են դրանց կազմությանը։ Հապավման բաղադրիչները գերազանցապես համապատասխանում են վերցված կրճատված բառերի առաջին վանկերին կամ առաջին հնչույթներին ու հնչույթախմբերին։

Հապավումները իբրև բարդության նորագույն եղանակ իրենց յուրատեսակ կառուցվածքով մեծ հետաքրքրություն են ներկայացնում։

Հապավումների մեջ անհրաժեշտ է սահմանազատել կենդանի, գործածական և այսպես կոչված պատմական հապավումները։ Վերջիններս այն հապավումներն են, որոնք գործածվել են միայն պատմական նախորդ ժամանակաշրջանում և այժմ չեն գործածվում։ Դրանցից են՝ Առմենկոմ (1919 թ.— ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե), Ամերկոմ, Համկ(բ)Կ, հայարտուն (հայ արվեստների տուն), նէպ, չեկա, կոմինտերն, բանֆակ, բատրակկոմ, կինբաժին, հեղկոմ, Ալեքպոլ և այլն։

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հապավումները լինում են՝ վանկային, տառային, բառային և խառն։ Նախքան հապավումների տեսակներին անցնելը, մեկ առ մեկ քննենք հայերենի վանկային և բառային հապավման բաղադրիչները։

Դրանք են՝

Ագիտ[2]– (ագիտացիայի, ագիտացիոն)— ագիտկետ, ագիտբաժին.

Ագրո– (ագրոնոմիական)— ագրոֆակ, ագրոլաբորատորիա, ագրոխմբակ, ագրոտեխնիկա, ագրոմիջոցառում, ագրոքիմիա.

Անդր– (Անդրկովկասյան)— *Անդրկենտգործկոմ, *Անդրտրանսշին, Անդրերկաթուղի, *Անդրֆեդերացիա.

Աշխ–(աշխատանքի)— աշխղեկ, աշխօր.

–Աշխ– (աշխատողների)— լուսաշխ, *գեղաշխ, պետաշխնայդրամարկղ.

–Ապ– (ապահովագրություն)— պետապ, սոցապ.

Առ– (առողջապահություն)— առժողկոմատ, առբաժին, առկայան.

–Առ (առևտուր, առևտրական)— Հայառ, հացառ, Երառ, պետառ, սննդառ, տնտառ, Երպտուղբանջարառ, կոոպառ.

Ավտո–(ավտոմոբիլային, ավտոբուսային)— ավտոգրասենյակ, ավտոպարկ, ավտոբազա, ավտոկայան, ավտոդող, ավտոտրանսպորտ, ավտոճանապարհ.

---

2 Գծիկներով արտահայտում ենք հապավման բաղադրիչների ետադաս և նախադաս գործածությունները։

* Աստղանիշ ենք դնում բոլոր այն հապավումների կամ հապավման բաղադրիչների վրա, որոնք հնացած են։

-Արդ- (արդյունաբերություն, թյան)— արդֆինպլան, կոլտարդկոմբինատ, տեղարդ, շինարդ, գունարդշին, բազմարդ.
Արհ- (արհեստակցական)— արհկոմ, արհմիություն.
Արտ- (արտաքին)— արտժողկոմատ, արտգործմինիստրություն.
Բան- (բանվորական)—*բանֆերիտ, բանկոոպ, *բանֆակ, բանթղթակից, բանուժ, բանավան.
-Բաժ (բաժնի)— լուսբաժվար, կազմբաժվար, ժողկրթբաժվար.
Բուժ- (բուժական, բուժակների)— բուժանձնակազմ, բուժկետ, բուժսանմաս, բուժֆակ, բուժտեխնիկում, բուժմիավորում, բուժպրոֆիլակտիկ.
Բնակ- (բնակարանային)— բնակվարձ, բնակկառավարչություն, բնակվարձկոոպ, բնակշինկոոպ, բնակշին, բնակտնտեսություն, բնակմակերես.
Գազ- (գազի)— գազշինմոնտաժ, Հարավգազշին, Հայգազշին.
Գիտ- (գիտական)— գիտաշխատող, գիտկաբինետ, գիտհրատ, գիտխորհուրդ, գիտարշավ.
*Գեղ- (գեղարվեստի)— գեղֆոնդ, գեղաշխ.
Գյուղ- (գյուղի, գյուղական)— գյուղխորհուրդ, գյուղսովետ, գյուղկոոպ, Հայգյուղտրանս, գյուղերիտ.
Գյուղ- (գյուղատնտեսական)— գյուղինստիտուտ, գյուղբաժին, գյուղգործիքներ.
-Գործ- (գործերի)— արտգործմինիստրություն, *ներքգործժողկոմ.
Գործ- (գործադիր)— գործկոմ, շրջգործկոմ, կենտգործկոմ.
Գործ- (գործարանային)— գործուս, գործարհկոմ, ֆաբգործկոմ, ֆաբգործուս.
Գուն- (գունավոր)— գունարդշին.
Դաս- (դասարանի)— դասղեկ, դասվար.
Դիա- (դիալեկտիկական)— դիամատ.
Եվր- (Եվրոպա-Եվրոպայի)— Եվրատոմ, Եվրասիա.
Եր- (Երևանի)— Երավտոտրանս, Երարդաո, Երարդշին, Երզինաո, Երհացաո, Երմասնարդաո, Երքաղէլեկտրացանց, Երքաղկոոպաո, Երքաղմատ, Երքաղսովետ, Երքաղպլան, Երքաղվառելիքաո, Երքիմշին և այլն.
Զին- (զինվորական)— զինկոմ, զինկոմիսարիատ, զինաո.
Էլ- (էլեկտրական, -ություն)— էլցանց, էլտրեստ.
Էպիդ- (էպիդեմիական)— էպիդկայան. սանէպիդկայան.
Ժող- (ժողովրդական)— *ժողտնտխորհ, ժողկրթբաժին, ժողգործիքներ. *ժողկոմխորհ.

Լեն- *(Լենինականի)— Լենտեղարդ, Լենքաղկոմ.*
Լեն- *(լենինյան)— *Լենուղի, *լենկոմերիտմիություն.*
Լուս- *(լուսավորություն, -թյան)— *լուսբաժին, պարտլուսցանց.*
Խմբ- *(խմբագրական)— խմբկոլ, խմբհանձնաժողով.*
Խնայ- *(խնայողական)— խնայդրամարկղ.*
-Խորհ- *(խորհուրդ, -ային)— *անտխորհ, *ժողանտխորհ, խորհտընտեսություն, մանկխորհ.*
Կազմ- *(կազմակերպչական)— կազմբաժին, կազմկոմիտե, կազմխորհրդակցություն.*
Կենտ- *(կենտրոնական)— Կենտկոմ, կենտգործկոմ, կենտվարչություն, կենտվիճվար.*
Կիրով- *(Կիրովականի)— Կիրովշին, Կիրովշինարեստ.*
-Կոմ *(կոմիտե)— կենտկոմ, շրջկոմ, տեղկոմ.*
-Կոմ *(կոմիսար)— զինկոմ.*
Կոմ- *(կոմունիստական)— կոմինտերն, *կոմբջիջ, կոմկուս, *կոմալմանախ.*
Կոմուն- *(կոմունալ)— կոմունշին.*
-Կրթ- *(կրթություն)— ժողկրթբաժին.*
-Կուս- *(կուսակցություն-թյան)— կոմկուս, *համկոմկուս, կուսանդամ, կուսթեկնածու, կուսկազմակերպություն, կուսքարտուղար, կուսհամագումար, կուսլուսցանց.*
Կուլտ- *(կուլտուրական, կուլտուրայի)— կուլտկենցաղ, կուլտառ. կուլտապրանք, կուլտպրոպբաժին.*
Համ- *(համամիութենական)— Համկոմկուս, ՀամԼԿԵՄ և այլն.*
Հայ- *(Հայաստանի)— Հայարդմոնտաժ, Հայգաղշին, Հայգիրք, Հայգյուղտնտտեխնիկա, Հայզորդ, Հայէներգոցանցշին, Հայթռչնարդ, Հայկոշիկտռ, Հայկոոպ, Հայկուլտառ, Հայհագուստառ, Հայհիդրոէներգոշին, Հայմիձուկտռ, Հայշինտեխկազմ, Հայոսկերչառ, Հայպետհրատ, Հայպետնախագիծ, Հայջրմառ. Հայպետշին, Հայջրշին, Հայանտառ, Հայքիմարդշին, Հայֆիլհարմոնիա.*
Հրամ- *(հրամանատարական)— հրամկազմ.*
-Հրատ *(հրատարակչություն)— պետհրատ, *ուսմանկհրատ.*
Ճան- *(ճանապարհային)— ճանշինգրասենյակ, ճանշինկայան.*
Մանկ- *(մանկական)— մանկհրատ.*
Մանկ- *(մանկավարժական)— մանկխորհուրդ, մանկուսումնարան.*
-Մատ- *(մատակարարում-ման)— մատբաժին, քաղմատ.*
-Մատ *(մատերիալիզմ)— դիամատ, պատմատ.*

Մեթոդ- *(մեթոդական, մեթոդիկայի)— մեթոդկաբինետ, մեթոդբյուրո, մեթոդխորհուրդ.*

Մետ- *(մետաղների)— մետշին, գունմետշին.*

-Մետ- *(մետեորոլոգիական)— հիդրոմետծառայություն, մետբյուրո.*

-Շին- *(շինարարություն-ության)— հիդրոշին, մետշին, շինվարչություն, շինաղբ, շինմաս, շինտրեստ, շինբաժին, Հայշին, Հայշինտեխկազմ, ռետշին, Հայջրշին.*

Շրջ- *(շրջանային)— շրջսովետ, շրջկոմ, շրջսննդառ, շրջմիլբաժին.*

Պատ- *(պատմական)— պատմատ.*

Պատ- *(պատասխանատու)— պատքարտուղար, պատխմբագիր.*

***Պարտ-** *(պարտիական-իայի. տե՛ս կուս)— պարտաշխատող, պարտկոմ, պարտանդամ, պարտթեկնածու, պարտբյուրո, պարտքարտուղար, պարտշրջկոմ, պարտքաղկոմ, պարտլուսցանց և այլն.*

Պարտ- *(պարտադիր)— պարտուս.*

Պետ- *(պետական)— պետբանկ, պետապ, պետթատրոն, պետշին, պետպլան, պետառ, պետավտոտեսչություն, պետհամալսարան, պետառտեսչություն, պետվարկ.*

Պրոֆ- *(պրոֆեսիոնալ. տե՛ս արհ.)— պրոֆշարժում, պրոֆտեխնիկական, պրոֆտեխկրթություն.*

Ջոկ- *(ջոկատի)— ջոկվար.*

Սան- *(սանիտարական)— սանտեխմոնտաժ, սանհանգույց, սանմաս.*

Սոց- *(սոցիալական)— սոցապ, սոցդրություն.*

Սոց- *(սոցիալիստական)— սոցշինարարություն, սոցմրցում, սոցշարժում.*

Սպառ- *(սպառողական)— սպառկոոպ, շրջսպառմիություն.*

-Վար *(վարիչ, վարող)— բաժվար, ջոկվար, հոկվար, ուսմասվար, դասվար.*

Տեխ- *(տեխնիկական)— տեխմոնտաժ, սանտեխմոնտաժ, տեխմինիմում, տեխգրասենյակ.*

Տեղ- *(տեղական)— տեղարդ, տեղկոմ, տեղարդկոմբինատ.*

Տնտ- *(տնտեսական)— տնտառ, ժողտնտխորհ, տնտհաշվարկ.*

-Տրանս *(տրանսպորտ)— ավտոտրանս, քաղտրանս.*

Տուր- *(տուրիստական)— տուրբազա.*

Ուս- *(ուսումնական)— ուսմասվար.*

-Ուս *(ուսուցում)— պարտուս, ֆաբգործուս.*

Փոխ- *(փոխադարձ)— փոխօգկոմ (ԽՀ, 1925 թ.).*

Քաղ- *(քաղաքական)— քաղբաժին, քաղլուսցանց, քաղբյուրո, քաղշեկ.*

Քաղ- *(քաղաքի, -ային)— քաղարդ, քաղկոմ, քաղսովետ, քաղտրանս, քաղառբաժին, քաղկայան, քաղմատ, քաղվառելիքառ, քաղտեղեկանք.*

Քիմ- *(քիմիական)— քիմկոմբինատ, քիմռեակտիվ, քիմմաքրում, քիմշին, քիմներկում.*

Ֆաբ- *(ֆաբրիկայի)— ֆաբկոմ.*

-Ֆակ *(ֆակուլտետ)— բուժֆակ, *բանֆակ.*

Ֆին- *(ֆինանսական)— ֆինբաժին, ֆինժողկոմ, ֆինպլան.*

Ֆիզ- *(ֆիզիկա)— ֆիզմաթ.*

Ֆիզ- *(ֆիզիկական)— ֆիզկուլտ, ֆիզդաստիարակություն.*

Ինչպես տեսնում ենք, բերված են մոտ 100 հապավման բաղադրիչներ։ Այսինքն, պրոֆ. Սևակի բերած 70 բաղադրիչներին ավելացել է 30-ը[3], *ինչպես՝* արդ, ագրո, ագիտ, ավտո, գեղ, դաս, դիա, եվր, էպիդ, մատ, մետ, սան, տուր, ուս[4], ֆիմ *և այլն։*

Գործածությունից դուրս են եկել աշ *(աշակերտական, համտ. աշկոոպ, աշխորհուրդ),* բժ *(բժշկական, համտ. բժֆակ, բժինստիտուտ),* կին *(կանանց, համտ. կինբաժին),* հեռ *(հեռագրական, համտ. պոստհեռժողկոմատ),* հող *(հողագործական, համտ. հողժողկոմատ, հողբաժին),* ներք *(ներքգործժողկոմ, ներքառ),* ռայ *(ռայոնական—ռայկոմ, ռայսովետ)*[5], ուս *(ուսանողական—ուսկոոպ, ուսգործբյուրո),* պարտ *(պարտկոմ) և այլն։*

Հավասար և զուգահեռ գործածություն ունեն -պրոֆ *և* -արհ *բաղադրիչները։*

Ինչպես նկատելի է, հայերենի հապավման բաղադրիչների մեծագույն մասը նախադաս է, այսինքն դրվում է բառասկզբում և հանդես է գալիս իբրև լրացյալ՝ հաջորդ բաղադրիչների համար։ Նկատելի է նաև այն, որ բաղադրիչների մեծագույն մասը միավանկ է, և երկվանկ են ընդամենը մի քանիսը. ինչպես՝ հրատ, հրամ, բնակ, խնայ, ագրո, ավտո *և այլն։ Թե՛ միավանկ և թե՛ երկվանկ բաղադրիչները փոխարինում են պարզ, պարզ ածանցավոր և բարդ ու բարդ ածանցավոր բառերին. ինչպես՝* Եր—Երևանի, առ—առևտուր,

---

3 *Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի դասընթաց, Երևան, 1955, էջ 182—198։*

4 *Ուսումնական իմաստով (համտ. ուսմասվար և այլն)։*

5 *Փոխարինվել է հայերեն շրջ հապավումով։*

ապ—ապահովագրություն և այլն։ Հապավման բաղադրիչները իբրև կանոն վերջանում են բաղաձայն հնչյունով։ Այստեղ իշխում է բառերի կրճատ գրության ընդունված կանոնը՝ համաձայն որի բառի վերցվող բաղադրիչը վերջանում է բաղաձայնով։ Այսպես հայտնի են և արդեն սովորական են դարձել մի շարք կրճատումներ (համառոտագրություններ) ինչպես՝ պրոֆ. (պրոֆեսոր), թ. (թիվ), ընկ. (ընկեր), քաղ. (քաղաք), փ. (փողոց)։ Հայերենի հապավման բաղադրիչներից շատերը շեղվում են հայերենի վանկատման կանոնից և ընդգրկում նաև հաջորդ վանկի բաղաձայնը. ստեղծվում են կրկնակի բաղաձայն հնչյուններով բաղադրիչներ. ինչպես՝ մանկ (մանկավարժական), տնտ (տնտեսական), կրթ (կրթություն)[6], փոխանակ լինելու ման, տն, կր և այլն։

Հաճախ վանկաբառային հապավման առաջին բաղադրիչները համընկնում են բարդ բառերի առաջին բաղադրիչներին, որով նրանք արտաքուստ նմանվում են միմյանց. ինչպես՝ գյուղխորհուրդ, լուսբաժին, կանաչշին, բուժկետ, բուժմիավորում և այլն։ Սակայն այս նմանությունը արտաքուստ է միայն և սոսկ ձևական բնույթ է կրում։ Հապավումները բարդություններից տարբերվում են հիմնականում իրենց բովանդակությամբ և իմաստային առանձնահատկությամբ, քանի որ հապավման բաղադրիչները ունեն իրենց կայուն և անփոփոխ բառային ու քերականական կոնկրետ իմաստները, մինչդեռ իբրև արմատներ դրանք ունեն սոսկ ընդհանուր, քերականորեն չտարբերակված իմաստ, այսպես՝ լուս բաղադրիչը իբրև հապավում ունի միայն լուսավորություն իմաստը (հմմտ. լուսբաժին, լուսցանց), իսկ իբրև արմատ՝ լույսի, լուսավոր, լուսային, լուսատու, լուսավորող և այլն (հմմտ. լուսակերտ, լուսատեխնիկական, լուսահանդույց, լուսաքողարկում, լուսաճաճանչ, լուսապսակ և այլն)։ Հետևաբար, արտաքին հնչյունական նմանությունը երբեք հիմք չի տալիս մոտեցնելու կամ նույնացնելու դրանք, քանի որ հապավման և բարդության բաղադրիչները ըստ էության տարբեր են։ Կրճատվելով և կրելով ձևական փոփոխություն, հապավման բաղադրիչները ստանում են իրենց բառային ու քերականական ամրապնդված իմաստները և դրանով իսկ հեռանում արմատներից։

---

6 Սրանցում իբրև բացառություն գործում է միայն կրճատման կանոնը։

Ա. ՎԱՆԿԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հայերենում ամենատարածված հապավումները վանկային հապավումներն են, այսինքն այն հապավումները, որոնց բոլոր բաղադրիչները կազմված են վանկերից (գերազանցապես միավանկ)[7] և փոխարինում են համապատասխան լրիվ բառերին: Վանկային հապավումներից են. ագրո- (ագրոֆակ), Անդր- (*Անդրկենտգործկոմ, Անդրտրանսշին), աշխ- (աշխղեկ, աշխօր), -աշխ (լուսաշխ), -ապ (պետապ, սոցապ), առ- (առժողկոմատ), -առ (Հայառ, հացառ, Երառ, պետառ, սննդառ, տնտառ, կոոպառ և այլն), -արդ (տեղարդ, շինարդ, բաղմարդ, գունարդշին և այլն), արհ- (արհկոմ), արտ-(*արտժողկոմատ, արտգործկոմ, բան- (*բանկերխտ, բանկոոպ, *բանֆակ), բաժ (*լուսբաժվար, կազմբաժվար, ժողկրթբաժվար, *հողբաժվար), բուժ- (բուժսանմաս, բուժֆակ), բնակ- (բնակշին, բնակշինկոոպ), գիտ- (գիտհրատ), գլխ- (գլխտեխշին), գյուղ- (գյուղկոոպ, Հայգյուղտրանս), գործ- (գործկոմ, շրջգործկոմ, կենտգործկոմ), գործ- (գործուս, գործարհկոմ, ֆաբգործկոմ), գուն- (գունարդշին), դաս- (դասկոմ, դասղեկ, դասվար), դիա- (դիամատ), Եր- (Երարդառ, Երարդշին, Երմասնարդառ, Երքաղկոոպառ, Երքիմշին և այլն), զին- (զինկոմ, զինղեկ, զինառ), ժող- (ժողտնտխորհ), խմբ- (խմբկոլ), -խորհ (ժողտնտխորհ), կենտ- (Կենտկոմ, Կենտգործկոմ և այլն), -կոմ (Կենտկոմ, կուսկոմ, շրջկոմ, տեղկոմ), կոմ- (կոմկուս, *կոմբջիջ, կոմինտերն), կոմուն- (կոմունշին), -կրթ (ժողկրթբաժվար), կուլտ- (կուլտառ), կուս- (կուսկոմ, կուսբաղկոմ), Հայ- (Հայարդշին, Հայպետհրատ, Հայջրմատ, Հայտնտառ, Հայքիմարդշին ևլն), -հրատ (պետհրատ, ուսմանկհրատ, պետբուժհրատ), -մատ- (մատբաժին, քաղմատ, Հայջրմատ), մետ- (մետշին), -շին- (քաղշին, պետշին, ջրշին և այլն), շրջ- (շրջկոմ), պատ- (պատմատ), պետ- (պետապ, պետշին, պետառ), -վար (բաժվար, ջոկվար, հոկվար, դասվար, ուսմասվար), տեղ- (տեղարդ, տեղկոմ), տնտ- (տնտառ, ժողտնտխորհ, տնտմաս), քաղ- (քաղարդ, քաղկոմ, քաղտրանս, քաղմատ, քաղշին և այլն), -ֆակ (մանկֆակ, ֆիզֆակ, բուժֆակ և այլն):

---

[7] Այստեղ վանկատման կանոնի հետ միաժամանակ հավասարապես գործում է նաև կրճատման կանոնը, որովհետև բացի վանկային բաղադրիչներից (հմմտ. առ, բան, գործ), մեծապես գործածվում են նաև այն բաղադրիչները, որոնք կազմված են հապավվող բառերի առաջին վանկի և հաջորդ վանկի բաղաձայնի միացմամբ (հմմտ. աշխ, անդր, արդ, արտ, ժող, կրթ, լուս, շրջ և այլն):

Բ. ՏԱՌԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հապավման երկրորդ տեսակը տառայինն է, որ կազմվում է հապավվող բառերի սկզբնատառերով։ Հապավման այս տեսակը հայերենի համար համեմատաբար ավելի քիչ է բնորոշ, քան վանկային հապավումը, և եղած տառային հապավումների մեծագույն մասն էլ փոխառյալ է (ռուսերենից կամ ռուսերենի միջոցով)։

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանի սկզբներին շատ քիչ էին տառային հապավումները. ընդորում քիչ էին և՛ հայերեն բառերի կրճատումներից առաջացած և թե՛ փոխառյալ տառային հապավումները։ Վերջին երկու տասնամյակներում բառակազմության այս տեսակը զգալիորեն ակտիվացել է և նրանով կազմվել են բավական թվով բառեր։ Տառային հապավումների մեծագույն մասը գերազանցապես հատուկ բաղադրյալ անուն է և գրվում է մեծատառով։

Տառային հապավումներից մի քանիսը, ի տարբերություն վանկային հապավումների, վերածվել են հասարակ գոյականների. ինչպես՝ բուհ, նէպ, զէս և այլն։

Բերենք հայերենի տառային հապավումները։

ԱԴՆ— (Համագերմանական հեռագրական գործակալություն= գերմաներեն՝ Algemeiner Deütscher Nachrichtendienst).

ԱԷԿ— (Ատոմային էլեկտրակայան).

ԱՄՀ— (Արաբական Միացյալ Հանրապետություն).

ԱՊԽ— (Աշխատանքի պաշտպանության խորհուրդ).

ԱՊՆ—(Агентство печати новости).

ԱՕԿՍ— (Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերություն—Армянское общество дружбы и культурных связей с зарубежными странами).

ԲՈՒՀ— (բարձրագույն ուսումնական հաստատություն).

ԳԴՀ— (Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն).

ԳՖՀ— (Գերմանական Ֆեդերալ Հանրապետություն).

**ԴՕՍԱՎ*—(Всесоюзное добровольное общество содействия авиации СССР).

**ԴՕՍԱՐՄ*—(Всесоюзное добровольное общество содействия армии СССР).

ԴՕՍԱԱՖ—(Всесоюзное добровольное общество содействия армии, авиации и флоту СССР).

ԴՊԱ—(Ֆեդերալ Գերմանիայի հեռագրական գործակալություն, գերմ. Deutsche Presse Agentur).

ԶԱԳՍ—(запись актов гражданского состояния).

ԺԱՖ— (ֆրանսահայ երիտասարդական կազմակերպություն, հմմտ. ֆրանս. Jeunesse armenienne française).

ԿԺԴՀ— (Կորեական Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն).

ՀԱՀ— (Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն).

ՀԱՄԽ— (Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդ).

ՀԱՄԿԽ— (Համամիութենական արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ).

ՀԼԿԵՄ— (Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդության միություն).

ՀԹԸ— (Հայկական թատերական ընկերություն).

ՀԿԿ— (Հայաստանի կոմունիստական կուսակցություն)[8].

*ՀԿ(բ)Կ— (Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն).

*ՀԿՊՄ— (Հասարակական կարգի պահպանության մինիստրություն, տե՛ս ՆԳՄ).

*ՀՀԳ— (Հայաստանի հեռագրական գործակալություն):

*ՀՍԽՀ— (Հայկական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, տե՛ս ՀՍՍՀ).

ՀՍՍՀ— (Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն)[9].

*ՀՕԿ— (Հայաստանի օգնության կոմիտե).

ՀՕՊ— (հակաօդային պաշտպանություն).

ՄԱԿ— (Միավորված ազգերի կազմակերպություն).

ՄԽԱՏ—(Московский орденов Ленина и Трудового Красного знамени художественный академический театр СССР имени Горького).

ՄՕՊՐ—(Международная организация помощи борцам революции).

---

8 Այս, ինչպես և հանրապետություն, հեղափոխություն բառերը 1940 թվականից փոխարինվել էին համապատասխան փոխառյալ բառերով և, բնականաբար, դրանց հապավման բաղադրիչները ևս փոխառյալ էին. ինչպես՝ պարտբյուրո, պարտթեկնածու, պարտշրջկոմ, ՀԿՊ, ՍՍՌՄ, ԳԴՌ և այլն: Այժմ (սկսած 1966 թվականից) գործածվում են դարձյալ հայերեն բաղադրիչները:

9 Գործածական է նաև վանկատառային կամ բառատառային հապավմամբ. ինչպես՝ Հայկ. ՍՍՀ, Հայկական ՍՍՀ:

ՄՏԿ— (մեքենատրակտորային կայան).
ՄՕԿ— (Միջազգային օլիմպիական կոմիտե).
ՆԱՏՕ—(Հյուսիս-Ատլանտյան դաշինքի (պակտի) կազմակերպություն—անգլ. North Atlantic Treaty Organization—NATO).
ՆԵԱՏՕ—(Հյուսիս-Արևելյան Ասիայի դաշինքի միություն—հմմտ. անգլ. North-East Asia Treaty Organization—NEATO).
ՆԳՄ— (Ներքին գործերի մինիստրություն).
ՉԺՀ— (Չինական Ժողովրդական Հանրապետություն).
ՋԷԿ— (Ջերմաէլեկտրակայան).
ՌՍՖՍՀ— (Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն).
ՍԵԱՏՕ—Հարավ-Արևելյան Ասիայի դաշինքի կազմակերպություն —հմմտ. անգլ. Souh-East Asia Treaty organization—SEATO).
ՍԵՆՏՕ—(Կենտրոնական (դաշինքի) կազմակերպություն, անգլ. Central Treaty Organization—CENTO).
ՍՄԿԿ— (Սովետական Միության Կոմունիստական կուսակցություն).
ՊԱՊ— (պատրաստ աշխատանքի և պաշտպանության).
ՍՍ —(Հիտլերյան ֆաշիստական Գերմանիայի հատուկ նշանակության զորամաս—գերմ. Schutstaffeln—պահակային ջոկատ[10]։
ՎԴՀ— (Վիետնամի Դեմոկրատական Հանրապետություն).
ՏԱՍՍ—(Телеграфное агентство Советского Союза).
ՈՒԱՀ— (ուղղիչ աշխատանքային հիմնարկ).
ՈՒՍՍՀ— (Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն).
ՈՒԳԸ— (ուսանողական գիտական ընկերություն).
ՓԵԿ բաժին— (փողոցային երթևեկությունը կանոնավորող).
ՓՕԴ— (փոխադարձ օգնության դրամարկղ).
ՕԱՍ—(ֆր. Organisation de l'Armée Secrét—OAS—ֆրանսիական զինված գաղտնի կազմակերպություն, որ գործում էր Ֆրանսիայում և Ալժիրում)։

Մամուլում մեծ չափով գործածական են նաև տառային հապավումներով կազմված դեմոկրատական և զանազան այլ կուսակցությունների, ազատագրության շարժման և այլ անվանումներ. հմմտ.

---

10 Այս հապավումը ածանցվելիս և հոլովվելիս դառնում է վանկային հապավում. ինչպես՝ էսէսի, էսէսական և այլն։

ԼՄԲԿ— Լեհաստանի Միացյալ բանվորական կուսակցություն, ԱԺՇ— Անգոլայի ժողովրդական շարժում, ՀՍԲԿ— Հունգարիայի սոցիալիստական բանվորական կուսակցություն, ԳՍՄԿ— Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցություն, ինչպես նաև զանազան մեքենաների, տեխնիկական սարքավորումների փոխառյալ անվանումներ և այլն, որոնք անհասկանալի են մեր ժողովրդի մեծ մասի համար։ Սրանցից համեմատաբար ավելի հասկանալի և տարածված են ավտոմեքենաների և ինքնաթիռների անվանումներն արտահայտող տառային հապավումները, ինչպես՝ ԳԱԶ, ԶԻԼ, ԶԻՍ, ՏՈՒ, ԻԼ և այլն, որոնց կանդրադառնանք «Փոխառյալ հապավումները» բաժնում։

Գ. ԲԱՌԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հապավումների մի տեսակ կարելի է համարել նաև բառային հապավումները։ Սա չի առանձնացվել վանկային հապավումից և չի դիտվել իբրև հապավման առանձին տեսակ, քանի որ նախ՝ դրանցով կազմված բառերը սկզբնական շրջանում հատուկենտ էին և հետո՝ վերջին հաշվով դրանցում ևս որոշ վանկեր (վերջավորություն, ածանց) հապավված են։ Սակայն հապավումների տեխնիկայի վերջին տարիների կրած ծավալուն զարգացումը ստեղծեց մեծ թվով բառային հապավումներ, որոնք իրենց կազմությամբ և իմաստով առանձին որակ են կազմում և կարելի է առանձնացնել ու դիտել իբրև հապավման առանձին տեսակ։ Բառային հապավումները նրանք են, որոնց առաջին բաղադրիչները կրճատվելուց հետո էլ իրենց բառային տեսքը չեն կորցնում, ունեն բառային ինքնուրույն արժեք և ավարտվում են բառային բաղադրիչով. ինչպես՝ Երևաննախագիծինստիտուտ, անտառարդյունաբերություն, գյուղխորհուրդ *և այլն։ Բառային հապավումների առաջին բաղադրիչները գոյանում են գերազանցապես մասնիկավոր բառերի կրճատումներից, այսինքն լինում են բառահարաբերական կամ բառակազմական մասնիկներ ունեցող բառեր, որոնցում կրճատվում են միայն ածանցները և վերջավորությունները։*

Բառային հապավումները արտաքին կազմով առավել մոտ են կանգնած ածանցավոր կամ բարդ բառերին և իմաստային կողմով էլ առավել մատչելի են, քան վանկային հապավումները։ Վանկաբառային հապավման առաջին բաղադրիչները նույնպես կարող են

համընկնել արմատների և մասամբ էլ արմատական բառերի հետ և վերջանալ նաև ամբողջական բառային բաղադրիչներով (հմմտ. կազմկոմիտե, կազմխորհրդակցություն և այլն), սակայն այստեղ կրճատված են բառերի ծավալային համեմատաբար ավելի մեծ միավորներ (բարդության երկրորդ բաղադրիչներ, հաճախ նաև ածանցներով և վերջավորություններով) և հապավված ձևով քիչ են արտահայտում ամբողջ բառի բովանդակությունը, քան բառային հապավման բաղադրիչները:

Բառային հապավումներից են՝ անտառարդյունաբերություն (անտառային արդյունաբերություն), գյուղխորհուրդ (գյուղական խորհուրդ), գյուղթղթակից, Երևաննախագիծինստիտուտ, ծնողկոմիտե (ծնողների կոմիտե) ծնողխորհուրդ, կենցաղսպասարկում (կենցաղային սպասարկում), կենցաղկոմբինատ, մեթոդկաբինետ, յուղպանիրտրեստ, պարենջոկատ, սպորտակումբ, սպորտընկերություն, սպորտդպրոց, սպորտապրանք, սպորտհրապարակ, սպորտմիություն և այլն: Եվ կարելի է ասել, թե սրանք ընկած են իսկական բարդությունների և հապավումների միջին օղակում: Նրանցից մի քանիսը, ինչպես՝ սպորտակումբ, սպորտապրանք, սպորտդպրոց և այլն, առաջանալով հապավման հիմքի վրա, արդեն վերածվել են իսկական բարդության և հավասարապես կարող են դիտվել և՛ իբրև իսկական բարդություն, և՛ իբրև հապավում:

Հիշյալ հապավումներում կրճատման գաղափարը ավելի թույլ է, քան վանկային հապավումներում, այս պատճառով էլ սրանք ինչ-որ չափով մոտենում են և հակված են դեպի իսկական բարդությունները: Նման հապավումներ կարելի է համարել նաև ավտո հապավումով (հմմտ. ավտոտրանս) կազմված այն բառերը, որոնց երկրորդ բաղադրիչները լրիվ բառեր են. ինչպես՝ ավտոբազա, ավտոգրասենյակ, ավտոկայան, ավտոդող, ավտոճանապարհ, ավտոպարկ, ավտոտնտեսություն և այլն: Սրանցում թեև կրճատված է բարդության մոբիլ փոխառյալ բաղադրիչը, սակայն ավտո բաղադրիչը ստանձնել է նաև վերջինիս իմաստը և առավելապես գիտակցվում է իբրև պարզ բառ, քան հապավման բաղադրիչ:

Դ. ԽԱՌՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Խառն հապավման բաղադրիչները կարող են լինել տառեր և վանկեր, տառեր և բառեր կամ վանկեր և բառեր: Ըստ այդմ էլ խառն հապավումները լինում են՝ վանկաբառային, վանկատառային և տառաբառային:

ա) Վանկաբառային հապավումներ։ Վանկաբառային հապավումները բաղկացած են վանկային հապավումներից և բառերից։ Հապավման այս տեսակը նույնպես կենսունակ է մեր բառակազմության մեջ և իր կենսունակությամբ գրեթե չի զիջում վանկային հապավումներին։

Այստեղ իբրև վանկային հապավումներ հանդես են գալիս մեր թվարկած (էջ 126—130) վանկային հապավումների բաղադրիչները, որոնք կարող են լինել մեկ կամ մեկից ավելի։ Ընդորում վանկային հապավումները գերազանցապես առաջադաս գործածություն ունեն, իսկ բառերը կամ բառային բաղադրիչները՝ վերջադաս (մասամբ էլ միջադաս, եթե նրան դարձյալ հաջորդում է վանկային հապավում)։

Վանկաբառային հապավումներից են՝ ագիտբաժին, ագիտկետ, ագիտմիջոցառում, ագիտպրոպբաժին. ագրոխմբակ, ագրոլաբորատորիա, ագրոկանոն, ագրոցուցմունքներ, ագրոտեխնիկա, ագրոմիջոցառում, ագրոքիմիա, ագրոկլիմայական. ակայան, աբաժին. Անդրֆեդերացիա, Անդրերկաթուղի. արդկոմբինատ, արդֆինպլան, կուլտարդկոմբինատ. արհմիություն, արտգործմինիստրություն. բանուժ, բանթղթակից, բանգյուղթղթակից, բանավան. բնակկառավարչություն, բնակշինկոոպերատիվ, բնակվարձ, բնակտարածություն. բուժանձնակազմ, բուժաշխատող, բուժկետ, բուժհիմնարկ, բուժմիավորում, բուժսանմաս, բուժսարքավորում, բուժսպասարկում. գաղշինմոնտաժ. գիտաշխատող, գիտարշավախումբ, գիտկաբինետ, գիտխորհուրդ. Երքաղառևտուր, Երպտուղբանջարառ, Երավտոգրասենյակ, Երկանաչշին, Երքաղէլեկտրացանց, Երքաղտեղեկանք, Երտրանս. ժողգործիքներ, ժողստեղծագործություն, ժողդատարան. խնայդրամարկղ. կանաչշին, կանաչշինտրեստ. Կիրովշինտրեստ. կուլտկենցաղ, կուլտսպասարկում. Հայգիրք, Հայէլեկտրագործարան, Հայէներգոցանցշին, Հայմարմար, Հայջրտնտեսություն, Հայֆիլմ. հրամկազմ. շրջկենտրոն, շրջմիլբաժին, շրջսովետ. շինհրապարակ, շինմոնտաժային, շինվերանորոգում, շինտրեստ, շինվարչություն. պետաշխխնայդրամարկղ, պետբանկ, պետթատրոն, պետպլան, պետվարկ, պետօպերա. պրոֆմիություն, պրոֆանդամ. սոցապտեսուչ. տեղարդկոմբինատ, տուրբազա. տնտհաշվարկ. քաղլուսկաբինետ, քաղլուսցանց, քաղբաժին, քաղտեղեկանք. քիմկոմբինատ, քիմմաքրում և այլն։

բ) Վանկատառային հապավումները կազմվում են վանկային և տառային հապավումների միացումից։ Հապավումների այս տե-

սակը մեծ տարածում չունի։ Վանկատառային հապավումներով հայերենի կեսդարյա զարգացման ընթացքում կազմվել են ընդամենը մի քանի բառեր. ինչպես *ՀամԿ(բ)Կ— Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն, ՊԱՋԸ— պաշտպանության աջակցող ընկերություն, ՀԿԿ Կենտկոմ— Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտե, ՀԿԿ Քաղկոմ—Հայաստանի Կոմունիստական Կուսակցության քաղաքային Կոմիտե[11] և այլն։

գ) Տառաբառային կամ բառատառային հապավումներ: Հապավումների այս տեսակը նույնպես քիչ է տարածված, սակայն նախորդ տեսակի հետ համեմատած վերջին տարիներում նկատելի ակտիվություն է ցուցաբերում։ Այս բացատրվում է նրանով, որ վերջերս միտում է նկատվում տառային հապավման բաղադրիչներից մեկի կամ մի մասի բացման և դրա ամբողջական բառով կամ վանկային հապավմամբ արտահայտման, այսինքն տառային հապավումներից տառաբառային կամ բառատառային և մասամբ էլ վանկատառային հապավումների անցման։ Այսպես՝ տառային հապավման առաջին կամ վերջին բաղադրիչը կամ լրիվ է գրվում կամ՝ վանկային հապավմամբ. ստացվում է տառաբառային կամ բառատառային և վանկատառային հապավում. այսպես՝ ՀՍՍՀ ԳԱ— ՀՍՍՀ գիտությունների ակադեմիա, ՀՍՍՀ— Հայկ. ՍՍՀ կամ Հայկական ՍՍՀ, ՀՍԳՄ— ՀՍԳ Միություն և այլն։

Կան նաև զուտ բառատառային հիմքով կազմված հապավումներ՝ ինչպես՝ Միկրոգէս (ՍՀ, 9/4—1969), ՏաթՀԷկ, Տաթգէս, Դնեպրոգէս, ՔանաքեռՀէկ (Ավ., 4/5—1967), Աթարբեկյանգէս, Գյումուշգէս, Ձորագէս, Լենգէս, Որոտանգէս և այլն։

Վերջերս տեղի է ունեցել նաև բառատառային և վանկային հապավումների միացման բառակազմական հետաքրքրական երևույթ. այսպես՝ Երևանգէսշին, Տաթևգէսշին, Ձորագէսշին (ՍՀ, 19/3—1970) և այլն։

ե. ՁԵՂՉՈՒՄՈՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Վանկային և տառային հապավումներից մի քանիսի մեջ նկատվում է հապավման բաղադրիչներից մեկի պակաս, որ զգացվում է տվյալ հապավումները բացելիս։ Այսպիսի հապավումները

---

11 Վերջին երկուսը տառավանկային հապավումներ են։

պրոֆեսոր Գ. Սևակը անվանում է զեղչումով հապավումներ (նաև կրկնահապավումներ)[12]։ Այսպես՝ պրոֆանդամ հապավումը բացված կլինի՝ պրոֆեսիոնալ միության անդամ, այսինքն, զեղչված է միություն բաղադրիչը, լուսաշխ՝ բացված նշանակում է լուսավորության աշխատողների միություն, տուն (զեղչված են միություն կամ տուն բաղադրիչները), գլավլիտ՝ Главное управление по делам литературы и издательств պյժմ՝ Главное управление по охране военных и государственных тайн в печати և այլն։ Պետք է ասել, որ հայերենում զեղչումով հապավումները քիչ են և եղած հապավումների մի մասն էլ արդեն իսկ դուրս է եկել գործածությունից. ինչպես՝ գեղաշխ (գեղարվեստի աշխատողների միություն), գիտկոոպ (գիտական աշխատողների կոոպերատիվ), կիՆրաժին (կանանց մեջ տարվող աշխատանքի բաժին). զեղչված են՝ միություն, աշխատողների մեջ տարվող աշխատանքի բաղադրիչները։

Զեղչումով հապավումները հայերենում հիմնականում վանկային են և հատուկենտ են զեղչումով տառային հապավումները, ինչպես՝ ՄՈՊՐ (международная организация помощи борцам революции), որ փոխառյալ է ռուսերենից։ Զեղչումով հապավումները ավելի բնորոշ են ռուսաց լեզվին։

Զեղչումով հապավումներ են նաև այն հապավումները, որոնցում զեղչված է ոչ թե մեկ ամբողջ բառ կամ նրա կրճատված բաղադրիչը, այլ որևէ բառի միջին կամ վերջին մասերը և իբրև հապավման բաղադրիչ հանդես է գալիս տվյալ բառի բաղադրյալ հապավումը, այսպես՝ զինկոմատ (զինվորական կոմիսարիատ) բառի մեջ զեղչված է կոմիսարիատ բառի իսարի հնչյունախումբը և իբրև կոմիսարիատ բառի հապավված բաղադրիչ՝ հանդես է գալիս կրկնավանկ կոմատ բաղադրիչը (հմմտ. հողժողկոմատ, լուսժողկոմատ, արդժողկոմատ և այլն)։ Նմանօրինակ զեղչված հապավում է նաև կոլտնտեսական-ը։

Հապավումներն իրենց կեսդարյա զարգացման ընթացքում անշուշտ փոփոխություն կրել են. նրանց մեջ պատվում են այն հապավումները, որոնք այլևս գործածական չեն և կենդանի են միայն տվյալ շրջանի գրականության մեջ ու պատմական փաստաթղթե-

---

12 Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 191։

յում կամ փոխարինվել են այլ հապավումներով. այսպես՝ ժողկոմատ (ժողովրդական կոմիսարիատ), արդժողկոմատ (արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատ), ֆինժողկոմատ, Արմֆան, Անդրներքառժողկոմատ (Անդրկովկասի ներքին առևտրի ժողովրդական կոմիսարիատ), հողժողկոմատ, սոցապժողկոմատ, ռազմգործժողկոմատ (ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատ), առժողկոմատ, գավպարկոմ (գավառի պարենավորման կոմիտե), պարժողկոմ, գավգործկոմ, գավկոմ, գավքաղգործկոմ, գավհեղկոմ (գավառի հեղափոխական կոմիտե), հեղկոմ, փոխօգկոմ (փոխադարձ օգնության կոմիտե), պրոլետկուլտ, պրոլետկուլտականություն, նահանգկոմ, ՀՕՄ (Հայաստանի օգնության մարմին, խՀ, 29/1—1922), ՀՕԿ (Հայաստանի օգնության կոմիտե), ԲԳՏ (բանվորագյուղացիական տեսչություն), ՀԳԿ (Հայկական գործերի կոմիսարիատ), քաղմինիմում (քաղաքական մինիմում), քաղկոմիսար (քաղաքական գծով կոմիսար), կինոբաժին, երկժողկոմ և այլն։

Սրանց գործածությունից դուրս գալը պայմանավորված է համապատասխան օրգանների կամ կազմակերպությունների վերացման կամ դրանց վերանվանման հետ, որ հիմնականում տեղի ունեցավ 1936 թ. նոր սահմանադրության և մասամբ էլ ժողկոմատները մինիստրություններ վերանվանվելու կապակցությամբ։

2. ՓՈԽԱՌՅԱԼ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Երբ բառակազմության մյուս տեսակները (բարդությունները և ածանցումը), տարբերություններով հանդերձ, ընդհանուր են հիմնականում մոտ ազգակցություն ունեցող լեզուների համար, ապա բառակազմության այս տեսակը ընդհանուր է թերևս աշխարհի մեծ թվով լեզուների համար, ընդորում ոչ ազգակից և քերականական տարբեր կառուցվածք ունեցող լեզուների համար։ Լինելով բառակազմական ընդհանուր երևույթ, հապավումները գրեթե բոլոր լեզուներում ունեն փոխառյալ տարրեր։ Ժողովուրդների օրեցօր ծավալվող միջազգային, տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդումը բնականաբար պահանջ է դնում մեծ թվով հապավումների փոխառման, որ արտացոլվում է գիտական, տեխնիկական, քաղաքական գրականության ու մամուլի լեզվում։

Ժամանակակից հայերենը մեծ թվով հապավումներ է փոխառել։ Փոխառյալ հապավումները մենք բաժանում ենք երկու խմբ-

բի՝ ռուսերենից փոխառյալ հապավումներ և ռուսերենի միջնորդությամբ փոխառյալ հապավումներ։

Ա. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Ռուսերենից փոխառյալ հապավումները բաժանվում են երկու խմբի. ա) վանկային հապավումներ և բ) տառային հապավումներ։

Փոխառյալ վանկային հապավումներից են գլավլիտ, լիտֆոնդ (литературный фонд), կոլխոզ (коллективное хозяйство), կոլխոզնիկ, պրոֆկոմ (профсоюзный комитет), սովխոզ (советское хозяйство), ֆիզկուլտուրա (физическая культура), ունիվերմագ (универсальный магазин), դիամատ (диалектический материализм) և այլն։

Սրանցից կոլխոզ, կոլխոզնիկ և պրոֆկոմ բառերը ունեն հայերեն համապատասխան առավել տարածված համարժեքները (կոլտնտեսություն, կոլտնտեսական, արհկոմ) և հատուկ չեն գրական հայերենին։

Ռուսերենից փոխառյալ տառային հապավումներից են՝ ԱՊՆ, ԱԴՆ, *ԴՕՍԱՎ, *ԴՕՍԱՐՄ, ԴՕՍԱԱՖ, զագս, ՄՈՊՐ, ՄԽԱՏ, ՏԱՍՍ. նէպ, գէս և այլն։

Կան մի շարք փոխառյալ տառային հապավումներ էլ, որոնք զանազան ավտոմեքենաների, ինքնաթիռների և տեխնիկական սարքավորումների տիպերի անվանումներ են և կազմված են անձնանվանական կամ տեղանվանական հատուկ անունների կրճատմամբ և դրանց սկզբնատառերով, ինչպես՝ ԳԱԶ (Горьковский автомобильный завод, համմտ. ГАЗ—63, ГАЗ—51 և այլն), ԶԻԼ (Московский автомобильный завод имени И. А. Лихачева), ԻԼ—(Իլյուշին՝ ինքնաթիռի կոնստրուկտոր) համմտ. ԻԼ—18, ԻԼ—14, ԻԼ—21։ ՄԻԳ—(Միկոյան և Գուրևիչ՝ ինքնաթիռի կոնստրուկտորներ) համմտ. МИГ—3, МИГ—9, МИГ-—15 և այլն, ՏՈՒ—(Տուպոլև՝ ինքնաթիռի կոնստրուկտոր) համմտ. ՏՈՒ—114, ՏՈՒ—104, ՏՈՒ—110, ՖԷԴ—(ֆոտոապարատ Ֆելիքս Էդմոնդովիչ Դերժինսկի) համմտ. ՖԷԴ 2, ՖԷԴ 3 և այլն)։

Փոխառյալ տառային հապավումները ավելի շատ են, քան վանկային հապավումները։

Բ. ՌՈՒՍԵՐԵՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՌՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հայոց լեզվի բառապաշարը համալրվել և հարստացել է նաև այլ լեզուներից փոխառյալ և միջազգային լեզուներում համընդհանուր ճանաչում գտած մի շարք հապավումներով, որոնք հայերենին են անցել ռուսերենի միջոցով, ինչպես՝ մուլտֆիլմ, Եվրատոմ և այլն։

Ռուսերենի միջնորդությամբ փոխառյալ հապավումները գերազանցապես տառային հապավումներ են։ Դրանցից են. ԱԴՆ, ԴՊԱ, ՆԱՏՕ, ՆԵԱՏՕ, ՍԵՆՏՕ, ՕԱՍ և այլն։

Կան բավական թվով ռուսերենի միջնորդությամբ թափանցած փոխառյալ հապավումներ էլ, որ առավելապես գործածվում են մամուլում, սակայն այդ առայժմ մեր ուսումնասիրության խընդիրը չէ։ Ինչպես՝ ԴԵՖԱ (ԳԴՀ-ի կինոստուդիա — վերցված է գերմաներեն Deutsche Filmatelliener-ի կրճատումից), ՖԻՖԱ — (ֆուտբոլի միջազգային ֆեդերացիա — վերցված է ֆրանսերենից՝ Federation internationale de Football Association—FIFA), ԴՊԱ — (ԳՖՀ-ի հեռագրական գործակալությունը) և այլն։

Գ. ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Եթե փոխառյալ հապավումների ժամանակ ուղղակիորեն վերցվում են այլ լեզվի պատրաստի քերականական և շարահյուսական ձևերը և յուրացվում, ապա այդպես չեն պատճենումները։ Այստեղ ստեղծվում են պարզապես շատ թվով բառեր, տվյալ դեպքում հապավումներ՝ սեփական բառական և քերականական ձևերի ու միջոցների նյութական հիմքով, որոնց ստեղծման հիմնավորումը սակայն կամ նախատիպը գտնում ենք փոխատու լեզվում։ Պարզ է, որ պատճենվում է ոչ թե ինքը հապավումը, այլ նրա բացած բառակապակցությունը, որի կրճատումով առաջացել է հապավումը։

Պատճենումները լինում են և՛ վանկային, և՛ բառային, և՛ թե տառային հապավումներից։ Վանկային հապավումների պատճենումները հնարավոր են իհարկե մեծ մասամբ մոտ ազգակցություն ունեցող լեզուներում։ Հայերենը Սովետական Միության շատ լեզուների հետ ռուսերենից պատճենել է մեծ թվով վանկային և տառային հապավումներ։

Հայերենի՝ ռուսերենից պատճենած վանկային և տառային հապավումների բաղադրիչներից մի քանիսի բառային համարժեք-

ները նույնպես փոխառյալ են ռուսերենից, որ ավելի է նպաստում պատճենման արագ կազմավորմանը. ինչպես՝ շրջկոմ—райком, պետբանկ—госбанк, պետպլան—госплан, քաղկոմ—горком, կոոպառ—кооптоpг, կուլտառ—культторг, ՄՏԿ—МТС (машинотракторная станция), ՏՎԲ—ОТК (տեխնիկական վերահսկողության բաժին—отдел технического контроля), ՍՍՀՄ—СССР, ՍՄԿԿ—КПСС և այլն:

Հիշյալ պատճենումները ավելի շուտ կարելի է համարել ընդհանուր հապավումներ, քանի որ դրանց գոյացումը պայմանավորված է սովետական միության կուսակցական, արհեստակցական, տնտեսական և այլ օրգանների ու կազմակերպությունների միաժամանակյա ստեղծմամբ:

Մեծ թիվ են կազմում այն կապակցությունների տառային հապավումները, որոնք պատճենել ենք ռուսերենից կամ ռուսերենի միջնորդությամբ այլ լեզուների կապակցություններից: Այսպես՝ ԳԴՀ (Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն), ՄՕԿ (միջազգային օլիմպիական կոմիտե—международный олимпийский комитет—МОК, վերցված է ֆրանսերենի cio-comite international olimpigue կապակցության պատճենումից), ՄԱԿ (Միավորված ազգերի կազմակերպություն, ռուսերեն ООН—Организация Объединенных Наций, վերցված է անգլերենի UNO կապակցությունից՝ United Nations Organization) և այլն:

Հապավումների պատճենման ընթացքում հաշվի են առնվում նաև պատճենվող համապատասխան բաղադրիչների քանակը և խոսքի մասային պատկանելությունները: Ռուսերենի միջնորդությամբ կատարված տառային հապավումների պատճենումներ են նաև գրեթե բոլոր սովետական սոցիալիստական և այլ տիպի հանրապետությունների (ժողովրդական, ժողովրդադեմոկրատական և այլն) ու կուսակցությունների անվանումները, որոնք հիշյալ հանրապետությունների ու կուսակցությունների տառային հապավմամբ արտահայտվող անվանումների պատճենումներն են. ինչպես՝ ՄԱՀ (Միացյալ Արաբական Հանրապետություն—ռուսերենում ОАР), ԿԺԴՀ (Կորեական Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն), ՎԴՀ (Վիետնամի Դեմոկրատական Հանրապետություն—ВДР), ՉԺՀ—КНР (Չինական Ժողովրդական Հանրապետություն—Китайская Народная Республика), ՀՍՖՀ (Հարավսլավական Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետություն) և այլն:

3. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես տեսանք, հայերենում հապավման բաղադրիչների մեծ մասը կազմված է վանկային և տառային հապավումներից՝ վանկային հապավման գերակշռությամբ։ Ռուսերենում ընդհակառակը, թեև լայնորեն տարածված են և՛ վանկային, և՛ տառային հապավումները, սակայն գերակշռում են տառային հապավումները։ Քանի որ հապավումների տեխնիկան մեր լեզվում իր վրա մեծապես կրում է ռուսերենի ազդեցությունը, և մեծ թվով հապավումներ էլ ուղղակիորեն փոխ են առնվել ու պատճենվել են ռուսերենից, ուստի հապավումների կառուցվածքային առանձնահատկությունները քննելիս անհրաժեշտ ենք համարում մի քանի զուգահեռներ անցկացնել հայերենի և ռուսերենի հապավումների կառուցվածքների և դրանց առանձնահատուկ կողմերի միջև։

Տառային հապավումը, որ ավելի լայն տարածում ունի ռուսերենում, հայերենի համար բնորոշ չէ և հայերեն տառային հապավումների մեծագույն մասը, ինչպես տեսանք, փոխառյալ կամ պատճենված է։ Այստեղ հիմնականում դեր է կատարում այն հանգամանքը, որ հայերեն սեփական տառային հապավումներով բառակազմությունը ունի որոշ անհարմարություն։

Այսպես՝ ռուսերեն բաղաձայն հնչյունների անվանումները այս տեսակետից ավելի հարմար են և արտասանվելիս նույնիսկ միայն բաղաձայնով կազմված հնչյուններն էլ դառնում են վանկեր և բառային տեսք ստանում։ Ինչպես՝ КПСС (կապեէսէս), СССР (էսէսէսէռ), ЦК (ցեկա), ЛКСМ (էլկաէսէմ) և այլն, մինչդեռ հայերենի բաղաձայն հնչյունների անվանումները այս իմաստով հարմար և բարեհունչ չեն, որի հետևանքով և բաղաձայն տառային հապավումների բաղադրիչները վերածվում են միայն գաղտնավանկերի և բնականաբար ավելի անհարմար են դառնում թե՛ արտասանության և թե՛ բառային տեսք ստանալու տեսակետից։

Այս է թերևս պատճառը, որ ռուսերենի շատ տառային հապավումների դիմաց հայերենում ունենք վանկային հապավում՝ օրինակ՝ ЦК—Կենտկոմ, ОНО կամ РОНО—ժողկրթբաժին, շրջժողկրթբաժին և այլն, իսկ մի շարք տառային հապավումներ փոխանակ թարգմանելու կամ պատճենելու՝ ուղղակիորեն փոխ են առնվել ռուսերենից. ինչպես՝ նէպ, զագս, գէս, չեկա և այլն, որոնք ավելի մատչելի և ըմբռնելի են հապավված ձևով, քան դրանց

բացված ձևով: Այս տեսակետից հետաքրքիր է ռուսերենի միջնորդությամբ փոխառյալ գերմաներենի SS[14] հապավումը (ռուսերեն СС), որ հայերենում թեև գործածվում է (հմմտ. ՍՍ, ՍՍ-ի), սակայն ձայնավոր բաղադրիչ չունենալու պատճառով տարածված է նաև վանկային հապավմամբ՝ ինչպես՝ էսէս, որ ռուսերեն տառային հապավման անվանումն է և հիմնականում գործածական է ածանցավոր ձևով՝ ինչպես էսէսական:

Հայերենում հապավման հատկացուցիչ և որոշիչ բաղադրիչները առաջադաս են, քանի որ հատկացուցիչը և որոշիչը դրվում են իրենց հատկացյալից և որոշյալից առաջ, մինչդեռ այդպես չի ռուսերենում. այստեղ հատկացուցիչը ետադաս է և, բնականաբար, հապավված բաղադրիչներն էլ կլինեն ետադաս: Այս բանը երևում է վանկային և տառային միաժամանակ ստեղծված շատ հապավումների ռուսերեն և հայերեն տարբերակները համեմատելիս. այսպես՝ ժողտնտխորհ (ժողովրդական տնտեսության խորհուրդ) ռուսերենում լինում է совнархоз, առժողկոմ (առևտրի ժողովրդական կոմիսարիատ)—наркомторг, ժողկոմխորհ (ժողովրդական կոմիսարների խորհուրդ)—совнарком, լուսժողկոմ (լուսավորության ժողովրդական կոմիսարիատ)՝ наркомпрос (народный комисариат просвещения) և այլն: Ինչպես տեսնում ենք, հայերենում հատկացուցիչ բաղադրիչները նախադաս են (տնտեսության, առևտրի, կոմիսարների, լուսավորության), իսկ ռուսերենում՝ ետադաս: Այս պատճառով էլ վերոհիշյալ տիպի մի քանի վանկային հապավումներում հայերենը հնարավորություն ունի արտահայտելու կոմիսար և կոմիսարիատ բառերի հապավման բաղադրիչների իմաստները: Ինչպես՝ լուսժողկոմ, լուսժողկոմատ, առժողկոմ, առժողկոմատ և այլն: Մինչդեռ ռուսերենը հատկացուցչի ետադաս դիրքի պատճառով չունի այս հատկանիշը. այսպես՝ наркомпрос, наркомторг, наркомпищепром և այլն. կոմ բաղադրիչը կարող է ըմբռնվել և՛ կոմիսար, և՛ կոմիսարիատ: Այս տարբերությունը վերանում է, երբ հիշյալ հապավումները գործածվում են առանց հատկացուցիչների, օրինակ՝ нарком, наркомат և այլն:

Բացի այս, հայերենն ունի զուտ հատկացուցիչ—հատկացյալ բաղադրիչներով մի շարք վանկային հապավումներ, որոնք ռու-

14 Հիտլերյան Գերմանիայի հատուկ նշանակության զորամաս, գերմ. Schutstaffeln = SS = պահակային ջոկատ:

սերենում չկան[15]. այսպես լուսաշխ, լուսբաժին, կուսբեկնածու, կուսանդամ, պրոֆանդամ, արտգործմինիստրություն և այլն: Այնուհետև, հայերենի և ռուսերենի հատկացումների տարբեր դիրքի հետևանքով, գոյություն ունեցող միևնույն հապավումների հաջորդականությունը խախտվում է, այսպես՝ ՍՄԿԿ (Սովետական Միության կոմունիստական կուսակցություն) և КПСС (коммунистическая партия Советского Союза), ՍՍՀՄ և СССР և այլն:

Հապավումները կազմում են գոյականներ և ենթարկվում են հայերենի բառաթեքման և բառակազմության կանոններին: Նրանք մեծ մասամբ ենթարկվում են -ի հոլովման. այսպես ԳԴՀ-ի, ՍՍՀՄ-ի, ՋԺՌ-ի, կուսբյուրոյի, տեղկոմի, ջինկոմի, ունիվերմագի և այլն: Հապավումներով կազմվում են նաև բարդ և ածանցավոր բառեր. ինչպես՝ ֆիզմաթցի, հիդրոհաղորդակցի, ղագսավորվել, բուհական, բուհավարտ, էսէսական և այլն: Կարճ ասած՝ հապավումները ունեն բառակազմական գործունեության լայն ոլորտ:

Հետաքրքիր են հապավումների հնչյունական առանձնահատկությունները:

Եթե հայերենի բառակազմության մյուս տեսակները (բարդությունները և ածանցավոր բառերը) ենթարկվում են հայերենի հնչյունական օրենքներին, ապա այդպես չեն հապավումները: Սրանց բաղադրիչները և՛ նախադաս, և՛ ետադաս գործածությամբ չեն ենթարկվում հնչյունափոխական օրենքներին և մնում են նույն հնչյունակազմով, ինչպիսին կան կամ վերցվում են սկզբնապես իբրև հապավման բաղադրիչ. այսպես՝ լուս- բաղադրիչը (հմմտ. լուսբաժին, քաղլուսցանց) բառավերջում նույնպես մնում է անփոփոխ. ինչպես՝ ժողլուս, քաղլուս և այլն, մինչդեռ ըստ հայերենի հնչյունափոխական օրենքների՝ այն բառավերջում պետք է վերականգներ իր -յ- կիսաձայն հնչյունը և վերածվեր -ույ- երկհնչյունի, ինչպես լինում է բարդ բառերում, օրինակ՝ արշալույս և այլն: Նույնն է նաև շեն հապավումը, որ բառավերջում պետք է տար շին[16], ինչպես՝ Սևանշին, սակայն մնում է անփոփոխ (հմմտ.

15 Չկան բնականաբար իբրև հապավում, քանի որ դրանց իմաստները լրիվ բառակապակցություններով կան ռուսերենում:

16 Սա իբրև հապավում ստեղծվել էր հայոց լեզվի զարգացման սովետական շրջանի սկզբներին, ինչպես՝ Հիդրոշեն, սակայն սրանով այլ հապավումներ չկազմվեցին: Պատճառը թերևս -շին բաղադրիչի ունեցած լայն գործածությունն էր և մասամբ էլ շեն արմատի հետ շփոթելու հանգամանքը (հմմտ. Նիդրոշեն և Նորաշեն, Վարդաշեն, Դավիթաշեն և այլն):

քաղշին և այլն)։ Հետևաբար –լուս և –շին բաղադրիչները չեն վերցվում իբրև արմատներ, սրանք լուսավորություն, շինարարություն բառերի կրճատ ներկայացուցիչներն են, նրանցից անջատված առաջին բեկորները և ենթակա չեն հնչյունափոխության։

Վերջացնելով այս բաժինը, անհրաժեշտ է նշել, որ որքան էլ հապավումների տեխնիկան իբրև բառակազմական երևույթ իր արդի վիճակով հիմնականում փոխառյալ է (այն իմաստով, որ բոլոր լեզուներում նրանք գոյացել են գրեթե միաժամանակ և ունեն շատ ընդհանրություններ ու փոխառություններ, և հայերենում մեծապես իր վրա կրում է ռուսաց լեզվի ազդեցությունը), սակայն հապավումները ձուլվել են մեր լեզվին, ենթարկվել նրա բառակազմության օրենքներին, մարսվել նրա մեջ և ստացել համապատասխան ազգային ձև։ Հապավումները դարձել են հայերենի բառային կազմի զարգացման հիմնական միջոցներից մեկը։ Ինչ վերաբերում է ընդհանրապես սովետական շրջանի բառային կազմի հարստացման գործում ունեցած հապավումների դերին, ապա կարելի է ասել, որ հապավումները նույնքան ակտիվ են, որքան և բառակազմության նախորդ միջոցները (բարդությունները և ածանցավոր բառերը) և կերտել են մեծ թվով բառեր՝ մեծապես նպաստելով հայերենի սովետական շրջանի բառապաշարի հարստացմանն ու զարգացմանը։

Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆ

IV. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզուների բառային կազմի հարստացման գործում որոշակի դեր են կատարում փոխառությունները։

Օտար բառերի ու տերմինների ընդունումն ու գործածությունը անխուսափելի երևույթ է բոլոր լեզուների համար։ Չկա որևէ լեզու, որի բառապաշարի մեջ փոխառյալ բառեր չլինեն։ Եվ դա ինքնըստինքյան հասկանալի է։

Եթե փոխառյալ բառերը տեղ են գտնում լեզուների բառապաշարի մեջ նրանց զարգացման հին շրջաններում, երբ այնքան էլ սերտ չէին ժողովուրդների միջև եղած կապերն ու փոխհարաբերությունները, շփումներն ու մերձեցումները, ապա դրանք ավելի մեծ չափով են համալրում լեզուների բառային կազմը արդի պայմաններում, երբ տարբեր երկրների միջև ստեղծված են կուլտուրական, գիտական, տնտեսական և այլ կարգի կապեր, երբ դրանց միջև սովորական են դարձել փոխադարձ այցելություններն ու հանդիպումները, մերձեցումներն ու շփումները, միջազգային մասշտաբով ձեռնարկվող միջոցառումներն ու համագործակցությունները։ Այն ժողովուրդը, որը ցանկանում է առաջավոր մշակույթի բարձր մակարդակին հասնել, չի կարող իր լեզուն չհարստացնել փոխառյալ բառերով։ Ընդհանրապես «մաքուր» լեզուներ չկան և չեն եղել։ Այդպիսին է նաև հայերենը, որի 10772 արմատներից 4916-ը պրոֆ. Հ. Աճառյանի տվյալներով փոխառյալ է։ Օտար բառերի ընդունումն ու գործածությունը հատուկ է եղել հայերենի զարգացման բոլոր շրջաններին։ Այն ավելի ինտենսիվ կերպով է արտահայտվում արդի փուլում, մի բան, որ պայմանավորված է գիտության ու տեխնիկայի, կուլտուրայի ու արվեստի բուռն զարգացմամբ ու աննախընթաց վերելքով։ Պետք է նկատել, որ արևմտահայերենը այս տեսակետից որոշակի տարբերություն է հանդես

բերում արևելահայ գրական լեզվի նկատմամբ։ Նա խորշում է փոխառություններից և թարգմանում միջազգային ճանաչում գտած գիտական ու տեխնիկական գրեթե բոլոր բառերն ու տերմինները, հորինելով «հայացի» տերմիններ, որոնք շատ հաճախ թուլացնում կամ աղճատում են նրանց օտար համարժեքների իմաստն ու նշանակությունը։ Դա, իհարկե, պայմանավորված է արևմտահայության պատմական ճակատագրով, ստեղծված քաղաքական ու տընտեսական անբարենպաստ պայմաններով, ուրիշ ժողովուրդների հետ ձուլվելու վտանգի առկայությամբ։ Այլ ժողովուրդների հետ չձուլվելու համար արևմտահայությանն անհրաժեշտ էր պաշտպանել մայրենի լեզուն՝ ժողովրդի ազգային կերպարանքի հիմնական հատկանիշը։ Այդ բանի գիտակցումը ստիպում էր արևմտահայերին խուսափել ամեն տեսակի փոխառություններից, լեզուն անջրպետել նրա անաղարտությունն վնասող ամեն ինչից և պահպանել լեզվի մաքրությունն ու անարատ վիճակը։ Այդ միտումը, որ արևմտահայ գրական լեզվի մեջ վաղուց է արմատավորվել, գրեթե նույնությամբ շարունակվում է նաև մեր օրերում։

Արևելահայ լեզուն միշտ դիմել է ու դիմում է փոխառություններին։

Հայոց լեզվի մեջ բավական շատ են փոխառությունները։ Դրանք նորագույն շրջանում հիմնականում կատարվել են ռուսերենից կամ էլ նրա միջոցով։ Ի դեպ, նշենք, որ ռուսերենում, անգլերենում և այլ լեզուներում էլ հազարների է հասնում փոխառյալ բառերի քանակը։ Ռուսաց լեզվի մեջ 1866 թ. մի բառարանում 30 հազար փոխառյալ բառ է արձանագրված[1], իսկ անգլերեն լեզվի բառային կազմի մոտ 60—70 տոկոսը փոխառված է ուրիշ լեզուներից[2]։

Հեղափոխության նախօրյակին և սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին մեր լեզվի դռները լայնորեն բացվեցին օտարազգի բառերի առաջ, որի հետևանքով փոխառությունների մուտքը հայերենի մեջ մեծ չափերի հասավ։ Չկար որևէ սահմանափակություն ու արգելք օտար բառերի գործածության հարցում։ Այդ պատճառով էլ փոխառյալ անհարկի բառերի գործածությունը շատ սովորական երևույթ դարձավ։ Օտար բազմաթիվ բառեր սկսեցին գործածվել մեր լեզվի մեջ առանց անհրաժեշտության։ Դժբախտաբար այդ միտումը շարունակվեց շուրջ երեք

---

1 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 135։

2 «Коммунист», 1965, № 13, էջ 66։

տասնամյակ, որը անհարկի օտար բառերով մեր լեզուն խճողելու պատճառ հանդիսացավ։

Այսպես՝ 20-ական թվականներին մեր լեզվի մեջ ակտիվ գործածություն ստացան հետևյալ փոխառությունները. պրեզիդիում (ԽՀ[3], 29/5—1921), ինստրուկցիա (ԽՀ, 3/6—1921), իդեոլոգ (ԽՀ, 7/6—1921), դիպլոմատիա (ԽՀ, 17/6—1921), ֆրոնտ (ԽՀ, 19/6—1921), դոկումենտ (ԽՀ, 19/6—1921), ռեպերտուար (ԽՀ, 27/6—1921), ինստինկտ (ԽՀ, 3/7—1921), դիսցիպլինա (ԽՀ, 3/7—1921), թեորիա (ԽՀ, 7/7—1921), կոնյուկտուրա (ԽՀ, 9/7—1921), դիագնոզ (ԽՀ, 23/7—1921), կոնտրոլ (ԽՀ, 28/7—1921), վերշոկ (ԽՀ, 4/8—1921), գարնիզոն (ԽՀ, 22/8—1921), դեֆեկտ (ԽՀ, 21/9—1921), սեսիա (ԽՀ, 7/10—1921), կոնսուլ (ԽՀ, 11/10—1921), ամնիստիա (ԽՀ, 15/10—1921), էքսպեդիցիա (ԽՀ, 19/10—1921), չեկ (ԽՀ, 20/10—1921), ինիցիատիվա (ԽՀ, 26/10—1921), ինդիվիդուալ (ԽՀ, 28/10—1921), պրիմ (ԽՀ, 9/12—1921), պրիմիտիվ (ԽՀ, 1/1—1922), պրովինցիա (ԽՀ, 7/1—1922), պերիոդ (ԽՀ, 15/1—1922), կրիզիս (ԽՀ, 17/1—1922), ինստրուկտոր (ԽՀ, 26/1—1922), օֆիցեր (ԽՀ, 28/1—1922), ինֆորմացիա (ԽՀ, 29/1—1922), ռևիզիա (ԽՀ, 21/2—1922), կանդիդատ (ԽՀ, 3/2—1922), նարյադ (ԽՀ, 3/2—1922), պախմելիցա (ԽՀ, 3/2—1922), սոբես (ԽՀ, 3/2—1922), ստատիստիկա (ԽՀ, 5/2—1921), լակեյ (ԽՀ, 4/2—1922), դելեգատ (ԽՀ, 25/2—1922), ագենտ (ԽՀ, 2/4—1922), ֆորմա (ԽՀ, 12/4—1922), օբլիգացիա (ԽՀ, 12/4—1922), կասսա (ԽՀ, 27/4—1922), դոկումենտ (ԽՀ, 1/6—1922), պերիֆերիա (ԽՀ, 2/6—1922), կոմիսիա (ԽՀ, 9/6—1922), կլիենտ (ԽՀ, 23/6—1922) սկանդալ (ԽՀ, 16/7—1922), պանիկա (ԽՀ, 18/7—1922), ադվոկատուրա (ԽՀ, 30/8—1922), պրոդուկցիա (ԽՀ, 3/4—1926), տրադիցիա (ԽՀ, 3/4—1926), սապոն (ԽՀ, 3/4—1926), կուրսանտ (ԽՀ, 4/4—1926); պրեստիժ (ԽՀ, 7/5—1926), պրինցիպ (ԽՀ, 20/5—1926), իդիոտ (ԽՀ, 3/6—1926), օպոնենտ (ԽՀ, 25/6—1926), կվալիֆիկացիա (ԽՀ, 11/1—1927), սպեցիֆիկ (ԽՀ, 26/8—1927), զավոդ (ԽՀ, 2/3—1927) և այլն։ Օտար բառերի անհարկի գործածությունների հանդիպում ենք նաև այդ շրջանի գեղարվեստական գրականության մեջ։ Այսպես՝ զավոդ (ՎԱՀ, 21), ռաբոչի (ՎԱՀ, 10), էլեկտրապաժար (ՎԱՀ, 23), մուժիկ (ՎԱԱ, 8), պարավոզ (ՎԱԱ, 44), գազեթ (ՎԱԱ, 60), պլոշչադ (Աբով, ԴԲ, 40), պրոժեկտոր (Աբով, ԴԲ, 24), պրոսպեկտ, այլև բոչկա, կանալ, պալտո, պլանետ, էտաժ, ռեյս,

---

3 Այս գլխի համառոտագրությունների բացատրությունները տե՛ս էջ 80-ում։

մաշինա, ինտելիգենտ, աֆիշ, վեդրո, գուդոկ, սալիչկա, ռեցեպտ, ստրելոչնիկ և այլն։

Այսքանն էլ բավական է ցույց տալու, թե որքան անհարկի փոխառություններ մուտք գործեցին կամ ակտիվ գործածություն ստացան մեր լեզվի մեջ 20-ական թվականներին։

Ե. Չարենցը սկզբունքորեն դեմ էր անտեղի ու անհարկի օտար բառերի գործածությանը։ Գ. Աբովի «Դանակը բկին» բանաստեղծությունների ժողովածուի առթիվ գրած գրախոսության մեջ նա քննադատում է Աբովին ոչ տեղին փոխառություններ գործածելու համար։

«Փողոցը, խոշոր քաղաքի փողոցը,— գրում է նա,— դարձել է... «բուլա»։ Այսինքն պրովինցիալ քաղաքի քոսոտ փողոց, ուր այնքան հասկանալի է երեխաների այն հոգեբանությունը, որ եթե «պլոշչադ» ասեն հրապարակին— քոսոտ մեյդանը կդառնա խոշոր քաղաքի եռուն հրապարակ։ Կամ եթե դույլին «վեդրո» ասեն՝ կըստացվի իսկական խոշոր քաղաքի «խոսակցություն»— ինչո՞ւ վեդրո և ոչ դույլ, երբ այդ դույլը կա։ Հասկանալի է՝ «պրոպելլեր»— հայերենում «պրոպելլեր» չկա, ոչ միայն բառը, այլև ինքը չկա»[4]։

Չարենցը ճշտորեն նկատում է, որ պլոշչադ, վեդրո և այլ օտար բառերի գործածությունը ոչնչով չի նպաստում լեզվի հարըստացմանը, ընդհակառակը իջեցնում է լեզվի մակարդակը։

«Պլոշչադը»,— գրում է նա,— չի օգնի և ոչ էլ կօգնի «վեդրոն»։ Ընդհակառակը, հենց այդ բառերն են, որ ամենից առաջ հավասարեցնում են գործածողի լեզուն «բուլի» մակարդակին։ Իսկ սա Տերյանից և նրա հաջորդներից հետո ցած մակարդակ է»[5]։

Թեև Չարենցը հիմնականում ճիշտ էր կողմնորոշվում փոխառությունների հարցում, գտնելով, որ մեր լեզուն չպետք է խճողել անընդունելի փոխառություններով, սակայն նա իր ստեղծագործությունների մեջ գործածում է որոշ անհարկի փոխառություններ։ Օտարազգի բառերի ոչ տեղին գործածությունների հանդիպում ենք հատկապես նրա 20-ական թվականների ստեղծագործություններում։ Այդ և հետագա շրջանի Չարենցի գործածած անհարկի փոխառություններից են բոչկա, կանալ, պալտո, պլանետ, էտաժ, մաշինա և այլն։ Սա ոչ այնքան հեղինակի լեզվական ճաշակի արդյունք էր, որքան ժամանակաշրջանի։ Դա այն շրջանն էր, երբ պայքար էր ծավալվում անցյալից եկած ամեն ինչ ոչնչացնելու, նորը

4 «Նորք», 1923, № 2, էջ 240։

5 Նույն տեղում, էջ 241։

ստեղծելու համար, երբ անողոք կռիվ է հայտարարվում գրական բոլոր կարգի ժառանգությունների դեմ։ Դա ռապպականության արտահայտությունն էր գրականության ու արվեստի բնագավառում։ Այդ էր պատճառը, որ շատ հեղինակներ, հրաժարվելով մայրենի լեզվի բառերի ու ոճերի գործածություններից, թխում էին նորանոր բառեր կամ էլ դիմում փոխառությունների։

Օտարազգի բառերի մուտքը կամ ակտիվ կիրառությունը պայմանավորված էր նաև այլ հանգամանքներով։ Դրան որոշ չափով նպաստեց այն, որ նոր երևույթներն ու հասկացությունները ընդունելիս բավական ժամանակ չէր լինում դրանք լեզվի սեփական միջոցներով դրսևորելու, ուստի գերադասվում էր պատրաստի օտար բառերի ընդունումը ու գործածությունը։ Այստեղ որոշ դեր խաղաց նաև այդ ժամանակ մեր բառարանների պակասը։ Ինչպես նշվել է արդեն, 20-ական թվականներին միտում կար հայերեն պարզ ու հասկանալի բառերը փոխարինել օտար համարժեքներով։ Այդպիսի միտումներ նկատվում էին Գ. Սարվի, Ա. Վշտունու, Վ. Ալազանի և այլ հեղինակների մոտ։ Ահա թե ինչու այդ շրջանում մեր լեզվի մեջ առատորեն օգտագործվում էին թե՛ անհարկի փոխառություններ և թե՛ նորաթուխ բառեր, որոնց մեծ մասը իրավացիորեն մերժվեց հետագա տարիներին։ Այդ տեղի ունեցավ հատկապես 50-ական թվականներից սկսած։ Այդ ժամանակաշրջանից սկսեց սահմանափակվել նաև ոչ տեղին փոխառությունների մուտքը մեր լեզվի մեջ։

Անհարկի փոխառությունները ոչ միայն չեն նպաստում լեզվի բառային կազմի հարստացմանը, այլև փչացնում են լեզուն։ Վ. Ի. Լենինը դատապարտում էր օտար բառերի անտեղի գործածությունը։ Նա դեռ 1919 թ. «Ռուսաց լեզուն մաքրելու մասին» հոդվածում գրում էր. «Ռուսաց լեզուն մենք փչացնում ենք։ Օտար բառերը գործ ենք ածում առանց անհրաժեշտության։ Այդ բառերը սխալ ենք գործածում։ Ինչի՞ համար ասել «դեֆեկտներ» (дефекты), երբ կարելի է ասել թերություններ (недостатки) կամ պակասություններ (недочеты), կամ բացեր (пробелы)... Արդյոք ժամանակը չէ՞, որ մենք պատերազմ հայտարարենք օտար բառերի առանց անհրաժեշտության գործածությանը»[6]։

Փոխառությունների հարցում պետք է ելնել օտարազգի բառերի **անճարկի** գործածությանը պատերազմ հայտարարելու լենինյան դիրքերից։ Նման մոտեցմամբ հայերենը չէր խճողվի ժողո-

---

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, 1951, էջ 375։

վրդական լայն մասսաներին անհասկանալի բազմաթիվ օտար բառերով ու տերմիններով և ոչ էլ մեր ժողովրդին միանգամայն հասկանալի դարձած նոր կամ հին շրջանում ստեղծված բազմաթիվ բառեր կփոխարինվեին օտարազգի բառերով։

Ռուսաց լեզուն մեծ դեր է կատարել հայոց լեզվի զարգացման ու հարստացման գործում, տալով նրան բազմաթիվ բառեր ու արտահայտություններ։ Դեռևս նախասովետական շրջանում մեր լեզվի մեջ մտան բազմաթիվ փոխառյալ բառեր ու տերմիններ ռուսերենից կամ այլ լեզուներից ռուսերենի միջոցով, որոնց մեծ մասը մասսայականացավ հեղափոխական գործիչների գրավոր ու բանավոր խոսքի շնորհիվ։ Մեծ է այդ տեսակետից հատկապես Ստ. Շահումյանի դերը, որը ակտիվ գործածության մեջ մտցրեց մի շարք բառեր ու արտահայտություններ. օրինակ՝ անտագոնիզմ, սեպարատիզմ, սուվերեն, մետաֆիզիկ, դիալեկտիկ, դիալեկտիկական մեթոդ, ադմինիստրացիա, բյուրոկրատիա և այլն։ Սովետական շրջանում մեր լեզվի մեջ ոչ միայն նոր փոխառություններ մտան, այլև աշխուժացան մինչ այդ կատարված բազմաթիվ փոխառություններ։ Օրինակ՝ սովետ, բոլշևիկ, սովխոզ, ագրեգատ, ավտոբազա, ավտոտրանսպորտ, գեներատոր, էլևատոր, կինեմատոգրաֆիա, կինոֆիլմ, կինոօպերատոր, կոմբայն, ռադիոգրաֆիա, չեմպիոն, ռեկորդ, ստանդարտ, տանկ, տորպեդ և այլն։ Սրանք արտահայտում են սոցիալիստական նոր հարաբերությունների և գիտության ու տեխնիկայի զանազան երևույթների վերաբերյալ հասկացություններ։

Մեր լեզվում միանգամայն արդարացված փոխառություն է բոլշևիկ բառը, որը թեև ստեղծվել է նախասովետական շրջանում, բայց ակտիվ գործածություն է ձեռք բերել հատկապես հետհեղափոխական փուլում։ Այն չափազանց գործուն կիրառություն ունի նաև եվրոպական լեզուներում։ 1920 թ. մարտի 6-ին Մոսկվայի սովետի նիստում, 3-րդ Ինտերնացիոնալի տարեդարձին նվիրված իր ելույթում Լենինն ասել է. «Չնայած նրան, որ մենք կոմունիստական պարտիա ենք կոչվում, որ կոմունիստ անվանակոչումը գիտական է, համաեվրոպական, բայց նա Եվրոպայում և այլ երկրներում ավելի քիչ է տարածված, քան բոլշևիկ բառը[7]»։ Տեղին ու անհրաժեշտ փոխառություն է նաև սովետ բառը, որը լայն տարածում է ստացել մեր կյանքի բազմազան բնագավառներում։ Լենինը նշում է, որ սովետ բառը ամենատարածված բառերից մեկն

7 Լենին, Երկեր, հ. 30, 1950, էջ 392 (ռուս.)։

է։ Այն անգամ մյուս լեզուներում չի թարգմանվում, այլ ամենուրեք արտասանվում է ռուսերեն[8]։

Պրոֆ. Ս. Ղազարյանը ռուսաց լեզվից կատարված փոխառությունների կապակցությամբ իրավացիորեն նշում է, որ ռուսերենը համալրել է հայերենի բառային կազմը բազմաթիվ բառերով ու տերմիններով։ Սակայն նրա բերած բազմաթիվ տեղին փոխառությունների հետ թվարկվում են նաև այնպիսինները, որոնք ոչ միայն չէին կարող մտնել մեր լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ, այլև չէին կարող հարստացնել հայերենի բառապաշարը։ Այդպիսիք են՝ ուժին, վարենի, բազար, կլուբնիկա, լոդր, վեդրո, վերստ. վերբովկա, գուդոկ, անտրակտ, մասկարադ և այլն[9]։ Սրանք կարճ կյանք ունեցան գրական հայերենում և շուտով դուրս եկան գործածությունից։

2. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ

Փոխառյալ բառերը, ինչպես արդեն նշվել է, բավական շատ են մեր լեզվում։ Դրանց մեծ մասը ակտիվ կիրառություն ունի մեր իրականության տարբեր բնագավառներում՝ գիտության ու տեխնիկայի, արվեստի ու գրականության, տնտեսության ու արտադրության, քաղաքականության ու գաղափարախոսության, դիվանագիտության ու հասարակագիտության և այլն։

Հիմք ընդունելով փոխառյալ բառերի գործածության բնագավառները, դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. **Մարքսիստական փիլիսոփայության ուսմունքը, բանվորական շարժումը, քաղաքական կյանքը, սովետական կարգերը, սոցիալիստական հարաբերությունները, սրանց հետ կապված հասկացությունները և այլն արտահայտող փոխառություններ.**— Մարքսիստական փիլիսոփայության ուսմունքի տարածումը, սովետական կարգերի ու սոցիալիստական հարաբերությունների հաղթանակն ու ամրապնդումը մեր երկրում՝ բերեցին բազմաթիվ նոր հասկացություններ, որոնց մի մասը արտահայտվեց մեր լեզվի բառակազմական միջոցներով, մի մասն էլ մեր ժողովուրդը յուրացրեց, ընդունելով օտարազգի անվանումներ։ Այդ փոխառյալ բառերից են՝ ագիտացիա, ագիտատոր, դեպուտատ, դեմոկրատ, դե-

[8] Տե՛ս նույն տեղում։

[9] Ս. Ղազարյան, Ակնարկներ սովետական շրջանի հայոց լեզվի և մեր դպրոցներում հայերենի դասավանդման մասին («Սովետական մանկավարժ», 1940, № 10)։

մոկրատիա, էվոլյուցիա, ակտիվիստ, դիրեկտիվ, կոմունա, կոմիտե, կոմունար, կոմունիստ, կոմունիզմ, հեգեմոնիա, մարքսիզմ-լենինիզմ, մատերիալիզմ, մատերիալիստ, պրոպագանդա, սոցիալիզմ, դիալեկտիկա, դիկտատուրա, ավանգարդ, լիկվիդատոր, մաքսիմում, մինիմում, օպորտունիստ, սովետ, բրիգադ, բրիգադիր, դրուժիննիկ, մինիստր, պիոներ, բյուրո և այլն։

Այդ բառերը մեր լեզվին են անցել ռուսերենից կամ էլ ռուսերենի միջոցով։ Դրանք մեծ մասամբ նոր շրջանի փոխառություն են։

2. Փոխառություններ, որոնք արտահայտում են զինվորական կոչումներ, պաշտոններ, միավորումներ, հանդերձանք, ռազմական տեխնիկա, զենքերն ու նրանց տեսակները և ընդհանրապես ռազմական կյանքը.— *Ռազմական կյանքի վերաբերյալ փոխառությունները հիմնականում կատարվել են նոր շրջանում, հատկապես հայրենական պատերազմի տարիներին ու նրանից հետո։ Դրանք բավական շատ են և լայն տարածում ունեն մեր լեզվում։ Ռազմական կյանքը արտացոլող փոխառություններից են՝ եֆրեյտոր, սերժանտ, մայոր, գեներալ, գեներալիսիմուս, գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, մարշալ, դիվիզիա, պլացդարմ, պոլիգոն, կատյուշա, տանկ, ավիացիա, էսկադրիլյա, տակտիկա, ստրատեգիա, պրոպելլեր, պարաշյուտ, դեսանտ, դիվերսանտ, կորպուս, կոմունարկա, վալենկա, սանիտար, ավիաէսկադրիլյա, ավիակոնստրուկտոր և այլն։*

3. Փոխառություններ, որոնք արտահայտում են արվեստի և հատկապես կինոարվեստի վերաբերյալ հասկացություններ.— *Արվեստի բուռն ծաղկումն ու զարգացումը մեր իրականության մեջ տեղի ունեցավ հատկապես սովետական իշխանության հաստատումից հետո։ Արվեստի վերաբերյալ բազմաթիվ հասկացություններ մուտք գործեցին մեր կյանքի մեջ։ Դրանք իրենց հետ բերեցին համապատասխան բառեր ու տերմիններ, որոնք զգալի չափով համալրեցին հայոց լեզվի բառապաշարը։ Արվեստի վերաբերյալ հասկացություններ արտահայտող նոր բառերի մեջ որոշակի տեղ են գրավում փոխառությունները։ Այսպես, օրինակ՝ նատյուրմորտ, էսքիզ, էքսպոզիցիա, կոմպոզիցիա, օֆորտ, էրմիտաժ, ժանր, էտյուդ, գրաֆիկա, դոկումենտալ, կինոռեպորտյոր, կինոռեժիսոր, կինոմեխանիկ, կինոխրոնիկա, կինոլեկտորիում, կինոժուռնալիստ, կինոդոկումենտալիստ, կինոմատոգրաֆիստ և այլն։*

4. Երաժշտական հասկացություններ արտահայտող փոխառություններ.— *Երաժշտական արվեստի զարգացումը բնականորեն իր հետ բերեց նոր երևույթներ ու հասկացություններ։ Դրանք թափանցեցին նաև մեր կյանքի մեջ։ Մեր ժողովուրդը այդ նոր երևույթներն ու հասկացությունները ընդունելիս յուրացրեց դրանց մի մասի անվանումները, որով հայերենի մեջ մտան երաժշտական արվեստի վերաբերյալ բազմաթիվ փոխառություններ։ Օրինակ՝ ռապսոդիա, սիմֆոնիա, արիա, անսամբլ, բալետ, էտյուդ, լաուրեատ, լիբրետտո, կանտատա, կոնսերվատորիա, կվարտետ, կվինտետ, օրատորիա, նոտա, ռոմանս, սոպրանո, վալս, ֆոկստրոտ, վիրտուող, օպերա, ֆիլհարմոնիա, բալետմեյստեր, դիրիժոր, խորմեյստեր, կոնցերտմեյստեր, տոնմեյստեր և այլն։*

Պետք է նշել, որ վերջին տասնամյակում փոխառյալ բառերից մի քանիսին զուգահեռ սկսել են գործածվել դրանց հայերեն համարժեքները։ Այսպես, օրինակ՝ բալետմեյստեր—պարուսույց, դիրիժոր—նվագավար, խմբավար, կոնցերտմեյստեր—համերգավար, լաուրեատ—դափնեկիր և այլն։ Նկատվում է օտարազգի բառերը հայերեն (հատկապես արևմտահայերեն) համարժեքներով փոխարինելու միտումը։

Երաժշտական արվեստի վերաբերյալ փոխառությունները հիմնականում լայն կիրառություններ ստացան հատկապես սովետական իշխանության տարիներին։

5. Լուսանկարչական արվեստը արտահայտող փոխառություններ.— *Լուսանկարչական արվեստի բուռն զարգացումը և մեր կյանքի բազմաթիվ բնագավառներում ակտիվ գործածություն ձեռք բերելը իրենց հետ նոր հասկացություններ ու երևույթներ բերեցին, որոնց մի մասը մեր իրականության մեջ մտավ իրենց անվանումներով։ Դրանցից են՝ ֆոտոռեպորտյոր (ՍՀ, 20/10—1964), ֆոտոէլեմենտ (ՍՀ, 21/3—1964), ֆոտոսինթեզ (Եր., 20/6—1964), ֆոտոալբոմ (ՍՀ, 31/5—1964), ֆոտոժուռնալ (Եր., 20/6—1964), ֆոտոխրոնիկա (ՍՀ, 30/3—1965), ֆոտոմոնտաժ և այլն։ Սրանք լայն տարածում ստացան հատկապես ետհոկտեմբերյան շրջանում։*

6. Փոխառություններ, որոնք արտահայտում են ռադիոյի հետ կապված հասկացություններ.— *Հայերենի մեջ մտան նաև մի շարք բառեր՝ կապված մեր կյանքի տարբեր բնագավառներում ռադիոյի լայն կիրառություն ստանալու և ձեռք բերած վճռական նշանակության հետ։ Դրանց մեջ կան նաև փոխառություններ, ինչպես՝ ռա-*

դիոտելեսկոպ (Ավ. 25/12—1959), ռադիոխատեմ (ՍՀ, 26/4—1964), ռադիոպրոպագանդա (ՍՀ, 25/11—1964), ռադիոսպորտ (ՍՀ, 7/6—1964), ռադիոտրանսլյացիա (ՍՀ, 10/5—1964), ռադիոտրանսլյացիոն (ՍՀ, 10/5—1964), ռադիոֆեստիվալ (ՍՀ, 17/10—1964), ռադիոժուռնալ (ՍՀ, 14/5—1964), ռադիոլոկատոր (Եր., 27/8—1964) և այլն:

7. Տրանսպորտի միջոցների, զանազան աշխատանք կատարող մեքենաների և այլ հասկացություն արտահայտող փոխառություններ.— *Վերջին տասնամյակներում մեր իրականության մեջ սկսեցին կիրառվել տրանսպորտի նոր միջոցներ և զանազան աշխատանքներ կատարող մեքենաներ ու գործիքներ: Դրանց մուտքն ու գործածությունը իրենց հետ բերեցին նոր բառեր ու արտահայտություններ, որոնք հարստացրին հայերենի բառային կազմը: Այդ բառերի մեջ կան նաև փոխառություններ, որոնք մեր ժողովուրդը վերցրել է ռուսերենից կամ էլ նրա միջոցով: Տրանսպորտային և այլ հասկացություն արտահայտող փոխառությունները լայն տարածում ունեն մեր կյանքի մի շարք բնագավառներում. այսպես՝ ավտոբուս, տրոլեյբուս, տրամվայ, ավտոբազա, ավտոգարաժ, էքսկավատոր, բուլդոզեր, տրակտոր, մոտոցիկլետ, ավտոգրեյդեր և այլն:*

8. Փոխառություններ, որոնք արտահայտում են դիվանագիտական հասկացություններ.— *Հայոց լեզվի բառային կազմում զգալի տեղ են գրավում դիվանագիտական հասկացություններ արտահայտող բառերը: Դրանց մեջ կան թե՛ բնիկ հայերեն բառեր, թե՛ փոխառություններ: Դիվանագիտության վերաբերյալ բառերի մեծ մասը նոր շրջանից է գալիս: Դա պայմանավորված է մեր ժողովրդի ինքնուրույն պետականության ձեռք բերմամբ ու դիվանագիտական հարաբերությունների զարգացմամբ և ընդլայնմամբ: Դիվանագիտական հասկացություններ արտահայտող փոխառություններ են՝ անեքսիա, դեկլարացիա, դեմարկացիա, ուլտիմատում, դեմպինգ, կոալիցիա, կոմյունիկե, կոնֆլիկտ, նոտա, պրեսկոնֆերանս, պրովոկացիա, պակտ, սեպարատ, վետո, վիզա, ուլտիմատում և այլն: Այս փոխառությունները մեծ մասամբ նախասովետական շրջանից են գալիս, սակայն հայոց լեզվի մեջ ակտիվացել են հատկապես սովետական շրջանում: Դիվանագիտության վերաբերյալ փոխառությունների մի մասը ունի հայերեն համարժեքներ, որոնք հիմնականում ստեղծվելով վերջին մի քանի տասնամյակներում. գործածվում են միջազգային ձևերին զուգա-*

հեռաբար։ Այսպես՝ դեֆակտո—փաստորեն, ուլտիմատում—վերջնագիր, ինֆորմացիա—հաղորդում և այլն։

Վերը նշված ազգային ձևերը իմաստային տեսակետից, բառակազմությամբ և հասկանալիությամբ բոլորովին չեն զիջում փոխառյալ ձևերին, հետևաբար և նախընտրելի է նրանց գործածությունը։

9. Սպորտային հասկացություններ արտահայտող փոխառություններ.— Սպորտի զարգացումն ու մասսայականացումը, որ տեղի ունեցավ հատկապես սովետական կարգերի հաստատումից հետո, իրենց հետ բերեցին բազմաթիվ նոր հասկացություններ։ Դրանք մուտք գործեցին մեր կյանքի մեջ կա՛մ իրենց անվանումներով, կա՛մ էլ հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված բառերով։ Սպորտային մի շարք փոխառություններ, որոնք անցան մեր լեզվին, դարձան նրա անբաժանելի մասը և նպաստեցին հայերենի բառային կազմի հարստացմանն ու զարգացմանը։ Այդպիսիք են՝ ստադիոն, տուրնիր, ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, ցայտնոտ, սպորտ, թենիս, ռեկորդ, ֆեստիվալ, լիդեր, գրոսմեյստեր, ալպինիստ, ալպինիադա, ալպինիզմ, սպորտսմեն, չեմպիոն, հոկեյիստ, ռեկորդսմեն, ստարտ, կրոսվորդ, շտանգա, շտանգիստ, ակրոբատ, ֆիզկուլտուրնիկ, կրոս, էստաֆետա, մոդել, ավիամոդելիստ, ռադիոսպորտ և այլն։

Հիշյալ փոխառությունների մի մասը լայն տարածում ունի սպորտային գրականության մեջ։ Որոշ փոխառություններ աստիճանաբար տեղի են տալիս հայերեն համարժեքներին, որոնք թեև նոր են կազմվել, բայց լայն տարածում են ստացել և հասկանալիությամբ, իմաստային հստակությամբ ու բառակազմության ճկունությամբ առավելություն են հանդես բերում օտար համարժեքների նկատմամբ. օրինակ՝ ծանրամարտ—շտանգա, ծանրորդ—շտանգիստ, մրցանիշ—ռեկորդ, խաչբառ—կրոսվորդ, մրցանակակիր—ռեկորդսմեն, մարզիկ—սպորտսմեն, լեռնասպորտ—ալպինիզմ և այլն։

10. Գյուղատնտեսական կյանքն արտահայտող փոխառություններ.— Վերջին տասնամյակներում հայոց լեզվի բառապաշարը համալրվեց նաև գյուղատնտեսական կյանքի վերաբերյալ փոխառություններով։ Այդ փոխառությունները, որոնք հարստացրին հայերենի բառային կազմը, լայն գործածություն ստացան հատկապես 30-ական թվականներից սկսած։ Գյուղատնտեսական կյանքը արտացոլող փոխառություններից են՝ կոլխոզ, սովխոզ,

կուլտիվատոր, կուլտիվացիա, բրիգադ, բրիգադիր, տրակտոր, տրակտորիստ, ինկուբատոր, ագրոկուրս, ագրոտեխնիկ, ագրոնոմ, զոոտեխնիկ և այլն[10]*։ Հիշյալ փոխառությունների մի մասը ունի հայերեն համարժեքներ՝ ագրոնոմ—գյուղատնտես, զոոտեխնիկ—անասնաբույժ, կոլխոզ—կոլտնտեսություն և այլն։ Այժմ մեր լեզվի մեջ կայունացել են մայրենի լեզվի ձևերը։*

Ռուսերեն բրիգադա *բառը մեր լեզվում կայունացել է* բրիգադ *ձևով։ Դա նպատակահարմար է թե՛ արտասանության, թե՛ գրության տեսակետից։ Նախ՝ կարճ ձևը հեշտ է արտասանվում և գրըվում, ապա՝ խնայվում է մեկ վանկ թեքման ժամանակ (հմմտ. բրիգադ-բրիգադա, բրիգադի-բրիգադայի, բրիգադից-բրիգադայից, բրիգադով-բրիգադայով և այլն ձևերը)։ Պետք է նշել, որ* ա*-ով վերջավորվող փոխառյալ որոշ բառեր հայերենում կայունացել կամ կայունանում են առանց այդ վերջնահնչյունի։ Օրինակ՝ սիստեմա-սիստեմ, աֆիշա-աֆիշ, բրիգադա-բրիգադ, կատաստրոֆա-կատաստրոֆ, պոեմա-պոեմ, պիեսա-պիես, բալլադա-բալլադ, լեգենդա-լեգենդ և այլն։ Սրանց մի մասի կրճատ ձևերի կայունացումը տեղի է ունեցել սովետական շրջանում։*

11. Փոխառություններ, որոնք արտահայտում են ուտելիքի, հագուստի, զարդեղենի տեսակներ, արդուզարդի և այլ առարկաներ.— *Հայերենի բառային կազմը ժամանակի ընթացքում համալրվել է հիշյալ հասկացությունները արտահայտող փոխառություններով։*

Այդպիսի փոխառություններ են՝ շոկոլադ, կակաո, կոտլետ, բիտկի, բիֆշտեքս, քրիս, դրաժե, լանգետ, կարամել, կեֆիր, բորշ, ռուլետ, բուլկի, պոնչիկ, սելյոդկա, կվաս, կոմպոտ, մարմելադ, մակարոն, պելմեն, բիսկվիտ, պյուրե, սուպ, սոուս, վերմիշել, տրիկո, բոստոն, սատին, կովերկոտ, բատիստ, ինդիգո, մարկիզետ, բյազ, կեպի, բերետկա, սանդալ, պլաշչ, պուդրա, կրեմ, դուխի։ Սրանք մեր լեզվին են անցել ռուսերենից կամ նրա միջոցով։

12. Փոխառություններ, որոնք արտահայտում են գիտության ու տեխնիկայի զանազան ճյուղերի ու բնագավառների վերաբերյալ

---

[10] *Մի խմբի մեջ ընդգրկված բառերից շատերը կարող են մտնել և այլ խմբի մեջ, որովհետև տվյալ բառը կարող է արտահայտել տարբեր բնագավառների վերաբերյալ հասկացություններ, բացի դրանից, խմբավորումը կատարվել է որոշ պայմանականությամբ։*

հասկացություններ.— Գիտության բնագավառում անընդհատ կատարվող գյուտերն ու հայտնագործությունները, գիտության նորանոր ճյուղերի առաջացումն ու զարգացումը, տեխնիկայի վերելքն ու բուռն զարգացումը և դրանք կյանքի մեջ արմատավորելն ու գործածելը իրենց հետ նոր հասկացություններ են բերում: Այդ հասկացությունները ընդունելիս մեր ժողովուրդը հաճախ յուրացնում է նաև նրանց անվանումները: Դրանով մեր լեզվի մեջ մուտք են գործում նաև գիտական ու տեխնիկական բնույթի բազմաթիվ փոխառյալ բառեր ու արտահայտություններ:

Դրանց մի զգալի մասը փոխ է առնվել սովետական շրջանում, մի բան, որ պայմանավորված է այդ ժամանակաընթացքում գիտության ու տեխնիկայի աննախընթաց զարգացմամբ ու վերելքով: Գիտության ու տեխնիկայի վերաբերյալ փոխառությունների մի մասն էլ, որ անցյալում սակավադեպ գործածություն ուներ, այժմ հաճախադեպ կիրառություն է ստացել: Սովետական փուլում կատարված կամ լայն տարածում ու գործածություն ստացած փոխառություններից են՝ աստրոֆիզիկա (ՍՀ, 15/2—1964), ավտոտրանսֆորմատոր (ՍՀ, 21/10—1964), գազաբալոն (Եր., 13/1—1960), գազատուրբին (ՍՀ, 29/1—1958), էլեկտրաագրեգատ (ՍՀ, 28/4—1964), էլեկտրակարդիոգրամա (ՍՀ, 13/4—1961), էլեկտրառեակտիվ (ՍՀ, 19/12—1964), էլեկտրոնավոլտ (ՍՀ, 19/4—1957), էլեկտրոֆիզիոլոգիա (ՍՀ, 28/10—1964), մետալուրգիա (ՍՀ, 21/4—1965), էլեկտրաէներգիա (ՍՀ, 21/4—1965), տուրբին (ՍՀ, 21/4—1965), սինթետիկ (ՍՀ, 21/4—1965), ցեմենտ (ՍՀ, 21/4—1965), տուրբոգեներատոր (ՍՀ, 3/3—1965), միկրոէլեմենտ (ՍՀ, 4/3—1964), միկրոլիտրաժ (ՍՀ, 9/11—1959), պլաստմասսա (Եր., 13/6—1964), սեյսմոլոգիա (ՍՀ, 9/4—1964), սպեկտրոսկոպ (Եր., 18/7—1959), տրանսֆորմատոր (ՍՀ, 6/3—1964), տուրբառեակտիվ (ՍՀ, 7/10—1960), արմատուրա (ՍՀ, 10/4—1964), ռադիոէլեկտրոնիկա (ՍՀ, 19/3—1965), ռադիոֆիզիկա (Գիտ. և տեխ., 1964, № 12, էջ 11), ռադիոինժեներ (ՍՀ, 11/8—1965), ռադիոքիմիա, ռադիոակտիվ, ասպիրանտ, դիսերտացիա, ասիստենտ, պլանետարի, արբիտրաժ, բիբլիոգրաֆիա, էքսպրեսիա, ինտոնացիա, սատիրա և այլն:

Փոխառություններ են նաև գրական, փիլիսոփայական և այլ ուղղություններն ու հոսանքներն արտահայտող ռեալիզմ, ռոմանտիզմ, սենտիմենտալիզմ, ուրբանիզմ, կլասիցիզմ, ֆուտուրիզմ, ֆորմալիզմ, նիհիլիզմ, նատուրալիզմ, կոսմոպոլիտիզմ, կոնստրուկտիվիզմ, իմպրեսիոնիզմ, սուբյեկտիվիզմ, օբյեկտի-

վիզմ, սոցիոլոգիզմ, ուտոպիզմ, դուալիզմ, էկլեկտիզմ, մոդեռնիզմ և այլն։ Նշված փոխառությունների մի մասը նախահոկտեմբերյան շրջանից է գալիս, սակայն ակտիվ կիրառություն է ստացել հատկապես սովետական փուլում։

Հայոց լեզվի զարգացման սովետական փուլում մեր լեզվի բառային կազմը համալրվեց նաև բայական փոխառություններով, մի բան, որ նոր երևույթ էր հայերենի համար։ Բայական փոխառությունները, ի տարբերություն մյուս փոխառությունների, կազմված են օտար արմատներից՝ հայերեն ածանցներով. օրինակ՝ էվակուացնել, կոմբինացնել, մոբիլիզացնել, օկուպացնել, նորմալավորել, նորմալացնել և այլն։ Սրանց մի մասը կազմված է մեր լեզվի բառակազմական եղանակով, այսինքն՝ փոխառյալ արմատներին ավելացվել են հայերեն ածանցներ, ըստ որում այդ արմատները գործածական և հասկանալի են հայոց լեզվում, այսպես՝ նորմալ-նորմալացնել և այլն։ Բայական փոխառությունների մի մասն էլ թեև կազմված է հայերեն ածանցներով և օտար արմատներով, սակայն այդ արմատները հայերենում գործածական չեն բաղադրությունից առանձին։ Դրանք են՝ օկուպ, մոբիլիզ, էվակու, կոմբին։

Այդ արմատների իմաստների գիտակցումը նրանցով ստեղծված բաղադրությունների մեջ (կոմբինացիա, օկուպացիա, էվակուացիա) հիմք ծառայեց նոր բառերի կազմության համար։ Դրանով նոր դուռ բացվեց հայերենի բառակազմության, հատկապես բայաստեղծման գործում[11]։ Սա մեր լեզվի մեջ, ինչպես նշվել է, բոլորովին նոր երևույթ էր։ Դա հնարավորություն տվեց փոխառնելու նաև օտարազգի բայեր, մի բան, որից զուրկ է եղել հայոց լեզուն դարեր շարունակ։ Նոր շրջանում ստեղծվեցին կամ լայն գործածություն ու տարածում ստացան նաև կոորդինացիա, կոորդինացում, կոմբինացիա, կոմբինացում, էվակուացիա, էվակուացում, մոբիլիզացիա, մոբիլիզացում, նորմալացում, մոտորացում և այլ գոյականներ։ Սրանք, ինչպես տեսնում ենք, կազմված են կա՛մ փոխառյալ արմատներից ու վերջավորություններից, կա՛մ էլ օտարազգի արմատներից և հայերեն ածանցներից։

Վերը փոխառությունները խմբավորեցինք՝ նկատի ունենալով նրանց գործածության բնագավառները։ Ստորև փոխառություննե-

---

11 Տերմինաբանական կոմիտեն 1943 թ. հաստատեց և գործածության մեջ դրեց «Սովետական Հայաստան» օրաթերթում կիրառված այդ փոխառյալ բայերը (կոմբինացնել, էվակուացնել, օկուպացնել, մոբիլիզացնել, նորմալացնել, նորմալավորել, մոտորացնել)։

րը կոմբավորենք՝ նկատի առնելով նրանց ընդունման ժամանակ հայերեն համարժեքների առկայությունը։

Գրական հայերենի բառային կազմում որոշակի տեղ են գրավում այն փոխառությունները, որոնք ընդունելիս մեր լեզուն չի ունեցել դրանց հայերեն համարժեքները, օրինակ՝ սիմպոզիում, ցեխ և այլն։ Բավական շատ են այն փոխառությունները, որոնց ընդունման ժամանակ մեր լեզվում առկա են եղել դրանց հայերեն համարժեքները, օրինակ՝ դելեգատ, ադմիրալ, լիրիկա, պրոգրեսիվ և այլն։ Հիմք ընդունելով փոխառությունների ընդունման ժամանակ նրանց հայերեն համարժեքների առկայությունը, դրանք կարելի է բաժանել երկու խմբի։

1. Փոխառություններ, որոնք կատարվելիս մեր լեզվի մեջ առկա են եղել նրանց հայերեն համարժեքները։

2. Փոխառություններ, որոնք ընդունելիս մեր լեզվի մեջ չեն եղել դրանց ազգային համարժեքները։ Դրանք ստեղծվել են հետագա շրջանում։

Առաջին խմբի փոխառությունները բավական տարածված են հայերենում։ Դրանք մեր լեզվի մեջ մտել են տարբեր շրջաններում և տարբեր եղանակներով։ Ընդ որում, նրանց հայերեն համարժեքները պահպանել ու պահպանում են իրենց գործածությունը գրավոր և բանավոր խոսակցական լեզվում։ Դրանք իրենց ակտիվությամբ, կիրառության հաճախականությամբ չեն զիջում օտար բառերին։ Այժմ նրանք գործածվում են միջազգային ձևերին զուգահեռաբար։ Դեռ ավելին, մի տեսակ մրցության մեջ են նրանց հետ։ Այսպես, օրինակ՝ զուգահեռ գործածություն ունեն՝ գեղագիտություն—էսթետիկա, քնարերգություն—լիրիկա, թատերագիր—դրամատուրգ, թատերգություն—դրամատուրգիա, գաղափար—իդեա, գաղափարախոսություն—իդեոլոգիա, հաճոյախոսություն—կոմպլիմենտ, հասարակական—սոցիալական, փոխզիջում—կոմպրոմիս, հրատապ—ակտուալ, պատվիրակ—դելեգատ, գյուղատնտես—ագրոնոմ, ծովակալ—ադմիրալ, կատակերգություն—կոմեդիա և այլ ձևերը։

Պետք է նկատել, որ հայերեն համարժեքները արդեն արմատավորվել են մեր լեզվում, իսկ դրանց փոխառյալ համարժեքները արդեն դուրս են մղվել գործածությունից կամ դուրս մղվելու վրա են։

Առաջին խմբի փոխառություններից են նաև ռեսպուբլիկա, ռևոլյուցիա, պարտիա, սովետ, դելեգատ, սեսիա և կոնստիտուցիա բառերը։ Սրանք մեր լեզվի մեջ ունեին իրենց համարժեքները

(ճանրապետություն, ճեղափոխություն, կուսակցություն, խորճուրդ, ճատաշրջան, պատգամավոր, սաճմանադրություն), *որոնք լայն տարածում ունեն գրավոր և բանավոր խոսակցական լեզվում։*

Տերմինաբանական կոմիտեն 1940 թ. որոշում ընդունեց մայրենի լեզվի հիշյալ բառերը փոխարինել միջազգայինով։ Առաջարկվեց բոլոր հրատարակչություններին, պարբերական մամուլին, գիտահետազոտական հիմնարկներին, բուհերին պաշտոնական գործածության մեջ մտցնել ռեսպուբլիկա, ռևոլյուցիա, պարտիա, սովետ, սեսիա, դելեգատ *և* կոնստիտուցիա *բառերը։ Նույն թվի հոկտեմբերի 5-ի նիստում տերմինաբանական կոմիտեն պարզաբանում մտցրեց այդ տերմինների վերաբերյալ։ Այն է՝ «սովետ» բառը գործածել սովետական իշխանության պետական-վարչական օրգանները անվանելու համար, իսկ ուսումնական և այլ օրգանների խորհրդակցական հաստատությունները անվանակոչել «խորհուրդ» բառով (գիտական խորհուրդ, մանկավարժական խորհուրդ)։ Այնուհետև՝ հեղափոխել, հեղափոխություն բառերը պահել հայոց լեզվի մեջ իրենց սովորական առումով, իսկ հասարակական և պատմական իրադարձությունը նշելու համար գործածել ռևոլյուցիա տերմինը*[12]*։ Տերմինաբանական կոմիտեի այդ որոշումը բոլորովին էլ հիմնավորված չէր և իրավացիորեն դժգոհություն առաջ բերեց հայ մտավորականության շրջանում։*

Նկատի ունենալով բանավոր և գրավոր լեզվում ճանրապետություն, կուսակցություն, սաճմանադրություն, ճեղափոխություն *և* պատգամավոր *բառերի լայն գործածությունը՝ տերմինաբանական կոմիտեն 1966 թ. մայիսի 21-ի որոշմամբ վերականգնեց և պաշտոնական դարձրեց հիշյալ բառերի կիրառությունը։*

Դրանով տերմինաբանական կոմիտեն վերանայեց 1940 թ. իր որոշումը և շտկեց թույլ տրված սխալը։

Երկրորդ խմբի փոխառությունները նույնպես լայն տարածում ունեն մեր լեզվում։

Դրանք ընդունելիս հայերենը չի ունեցել իր համարժեքները։ Հետագայում այդ փոխառյալ բառերի դիմաց կա՛մ նոր բառեր են ստեղծել, կա՛մ մեր լեզվի հին շրջանում եղած բառը գործածել նոր իմաստով, կա՛մ էլ դիմել են արևմտահայ գրական լեզվին՝ վերցնելով բառերը իրենց ուղղակի իմաստով։ Դրանցից են՝ արտադրամաս, գիտաժողով, պարբերացում, աշխարճաժողով, ճյուրախաղ,

---

12 Ս. Ղազարյան, *Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երևան, 1945։*

ցուցանմուշ և այլն, որոնք փոխարինելու են գալիս փոխառյալ ցեխ, սիմպոզիում, պերիոդիզացիա, ֆորում, գաստրոլ, էքսպոնատ բառերին։ Հիշյալ փոխառությունների հայերեն համարժեքները սկսել են ակտիվ գործածություն ստանալ։ Այժմ դրանց մի մասը գործածվում է օտար ձևերին զուգահեռ (հյուրախաղ—գաստրոլ, պարբերացում—պերիոդիզացիա, ցուցանմուշ—էքսպոնատ)։ Մի մասն էլ լայն տարածում ստանալով, թուլացնում է փոխառյալ բառերի կիրառությունը, հետևաբար և նպաստում դրանց գործածությունից դուրս մղելուն։ Դրանցից են գիտաժողով և աշխարհաժողով բառերը։ Սրանք հաճախադեպ գործածություն ունեն գրական լեզվում։ Այսպես, օրինակ՝ «Այդ օրը բազմաթիվ գիտաժողովների ու սեկցիաների նիստերում լսվեցին ավելի քան 150 զեկուցում ու գիտական հաղորդում» (ՍՀ, 21/10—1964)։ «Կոնֆերանսի պատգամավորները ցանկացան իրենց հաջորդ գիտաժողովն անցկացնել 1965 թ. Երևանում» (ՍՀ, 26/9—1964)։ «...երիտասարդության և ուսանողների համերաշխության աշխարհաժողովը ավարտեց իր աշխատանքը» (ՍՀ, 26/9—1964)։ «Մենք՝ 126 երկրների տարբեր հայացքներ ունեցող ավելի քան 300 կազմակերպություններում միավորված բազմամիլիոն պատանիների ու աղջիկների պատվիրակներս, բարձրացրինք աշխարհաժողովի դրոշը, միասնության և համերաշխության դրոշը» (ՍՀ, 26/9—1964)։ Գիտաժողով ու աշխարհաժողով բառերի իմաստները լիովին հասկանալի են մեզ համար, բառակազմական տեսակետից՝ հարազատ մեր լեզվի ոգուն։ Գիտաժողով նշանակում է ժողով կամ հավաք, որտեղ քննվում է գիտական որևէ հարց։ Բառի կազմությունը ինքնին վկայում է այդ մասին։ Հասկանալի է այդ բարդության բաղադրիչներից յուրաքանչյուրի իմաստը թե՛ առանձին-առանձին վերցրած, թե՛ միասին առնված, իբրև բաղադրություն։ Աշխարհաժողով նշանակում է ժողով, գումարված համաշխարհային մասշտաբով, այսինքն՝ աշխարհի շատ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Այդ բառերի իմաստները կհասկանան հայերեն շատ թե քիչ իմացող բոլոր մարդիկ, իսկ նրանց օտար համարժեքների նշանակությունը հասկանալի կլինի միայն գիտական հասարակայնությանը, այն էլ ոչ բոլորին։

Բոլորովին նոր կազմություն է նաև արտադրամաս բառը, որը գործածությունից դուրս մղեց ցեխ փոխառյալ բառին։ Արտադրամաս բառը առավելություն ունի ցեխ բառի նկատմամբ։ Արտադրամաս բառի կազմությունը հարազատ է մեր լեզվին, իսկ իմաս-

տը՝ միանգամայն հասկանալի՝ հայերեն խոսողների համար։ Ահա թե ինչու այդ բառը կարճ ժամանակամիջոցում դարձավ ամենաակտիվ գործածություն ունեցող բառերից մեկը ոչ միայն գրական, այլև խոսակցական լեզվում։ Լայն տարածում ու կիրառություն են ստանում նաև ապոգեյ և պերիգեյ փոխառյալ բառերի համարժեքները՝ հեռակետը և մերձակետը։ Մինչև դրանց ստեղծումը գործածվում էին «մինիմալ հեռավորություն», «մաքսիմալ հեռավորություն», «առավելագույն հեռավորություն» (երկրից) նկարագրական ձևերը։ Հետո սկսեցին գործածել «նվազագույն հեռավորություն», «առավելագույն հեռավորություն» (երկրից) ձևերը։ Սրանք էլ հարմար չգտնելով, գործածեցին երկրամերձ և երկրահեռ բառերը։ Դրանց զուգահեռ սկսեցին գործածվել նաև հեռակետ և մերձակետ բառերը, որոնք բավական հաջող կազմություններ են և ճշտորեն արտահայտում են փոխառյալ ձևերի իմաստները։ Դրանք աստիճանաբար դուրս են մղում օտարալեզվի բառերի գործածությունը։ Ակտիվ գործածություն է ստանում նաև հարցազրույց բառը փոխառյալ ինտերվյու բառին զուգահեռ։

Մեր լեզվի մեջ գործածվող փոխառյալ որոշ բառեր, որոնք արտահայտում են սպորտային կամ երաժշտական հասկացություններ, աստիճանաբար դուրս են գալիս ակտիվ գործածությունից, տեղի տալով հայերեն համարժեքներին։ Այսպես, օրինակ՝ շտանգա, շտանգիստ, ռեկորդ, ռեկորդսմեն, սպորտսմեն, ֆեստիվալ, դիրիժոր, բալետմեյստեր, կոնցերտմեյստեր և այլն փոխառությունները ընդունելիս մեր լեզուն չի ունեցել դրանց համարժեքները։ Հետագայում ստեղծվել են այդպիսի ձևեր՝ ծանրամարտ, ծանրորդ, մրցանիշ, մրցանակակիր, մարզիկ, փառատոն, նվագավար, պարուսույց, համերգավար, որոնք փոխարինելու են գալիս միջազգային ձևերին։ Գործածության հաճախականության տեսակետից դրանց մի մասը գերազանցում է փոխառություններին (ծանրամարտ, մարզիկ), մի մասն էլ գրեթե հավասարապես կիրառվում է օտար ձևերին զուգահեռ (մրցանիշ, մրցանակակիր, համերգավար և այլն)։ Որոշ բառեր էլ նոր են ակտիվ գործածություն ձեռք բերում (նվագավար, փառատոն, պարուսույց)։

Ակտիվ կիրառություն է ձեռք բերում նաև զբոսաշրջիկ բառը, որը վերցրել ենք արևմտահայ գրական լեզվից։ Այն փոխարինելու է գալիս տուրիստ փոխառյալ բառին։ Այժմ տուրիստ և զբոսաշրջիկ համարժեքները գործածվում են զուգահեռաբար, բայց նկատելի է ազգային ձևի լայն տարածում ստանալու միտում։

Բացի դրանցից, օտար բառերին զուգահեռ մեր լեզվում գործածվում են այլ ազգային ձևեր։ Այսպես, օրինակ՝ սոլիստ-ին զուգահեռ գործածվում է մեներգիչ-ը *կամ* մենակատար-ը, կլասիկ-*ին զուգահեռ՝* դասական-ը, պակտ, լիկվիդացիա, բիբլիոգրաֆիա *ձևերին զուգահեռ՝* դաշնագիր, լուծարք, մատենագիտություն *ձևերը և այլն։*

Մայրենի ձևերի գործածությունը աստիճանաբար հանգեցնում է նրանց օտար համարժեքների ակտիվ կիրառությունից դուրս մղելուն։

3. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՆՄԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԵՐ, ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՃԵՐ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նշվել է, ռուսաց լեզուն եղել է և մնում է հայերենի հարստացման աղբյուրներից մեկը։ Դա արտահայտվել է ոչ միայն նրանով, որ նա բազմաթիվ բառեր ու տերմիններ է տվել մեր լեզվին, այլև նրանով, որ նրա միջոցով այլ լեզուներից կատարվել են բազմաթիվ փոխառություններ։ Դեռ ավելին. ռուսերենի ազդեցությամբ ստեղծվել են հազարավոր բառեր ու կապակցություններ, կամ անցյալից եկող շատ բառեր նոր իմաստ են ձեռք բերել։ Դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի։

1. Ռազմական կյանքն ու հանդերձանքն արտահայտող բառեր.— *Ռուսաց լեզվի ազդեցությամբ հայերենի բառակազմական եղանակներով կազմվեցին ռազմական կյանքի վերաբերյալ մի շարք բառեր. օրինակ՝ գիտանցք, գետանց, ծևանցել, ծևանցում, ծիկնանցել, ծիկնանցում, շրջանցել, շրջանցում, կրակահերթ, կրակամարտ, մարտակարգ, վայրասլաց, տորպեդակիր, փոխհրաձգություն, ականանետ, ականաձիգ, ականորս, ականակիր, զրահապատ, զրահագնացք, զրահամեքենա, օդաչու, օդագնաց, հակագազ, ձայնորսիչ, զորասյուն, համակենտրոնացում և այլն։ Սրանք հիմնականում նոր շրջանի կազմություն են և ակտիվ գործածություն ստացան Հայրենական պատերազմի տարիներին։*

2. Գյուղատնտեսական կյանքը և տնտեսական նոր հարաբերություններ արտահայտող բառեր.— *Սովետական կարգերի հաստատմամբ մեր իրականության մեջ առաջ եկան տնտեսական նոր*

հարաբերություններ և գյուղատնտեսական աշխատանքները կատարելու ու ղեկավարելու նոր եղանակներ։ Դրանք իրենց հետ բերեցին նոր հասկացություններ, որոնք ընդունեցինք, թարգմանելով դրանց մի մասի անվանումները։ Այդպիսով, ռուսերենի ազդեցությամբ հայերենի բառակազմական եղանակներով կազմվեցին գյուղատնտեսական կյանքի վերաբերյալ որոշ բառեր ու կապակցություններ, ինչպես և գոյություն ունեցող որոշ բառեր վերաիմաստավորվեցին։ Օրինակ՝ օղակ, օղակավար, մեքենատրակտորային կայան, կոլտնտեսություն, խրճիթավար, մենատնտես, փորձադաշտ, շարքացան, հարվածային, սերմազտիչ, պարենհարկ, պարենմասնատրում, տնտեսխորհուրդ և այլն։

3. Քաղաքական, հասարակական և այլ կարգի հասկացություններ արտահայտող բառեր.— *Ռուսերենի նմանակությամբ, հայերենի բառակազմությամբ ստեղծվեցին քաղաքական, հասարակական և այլ երևույթների վերաբերյալ որոշ բառեր, որոնք հարստացրին մեր լեզվի բառային կազմը։ Այդպիսի բառերից են՝ ինքնաքննադատություն, ինքնագիտակցություն, ինքնազարգացում, ինքնավարություն, ինքնարժեք, ինքնահոս, օրակարգ, ընդհատակյա, քվեաթերթ, վնասարարություն, հարցապնդում, ելույթ և այլն։ Սրանք լայն տարածում ունեն հատկապես քաղաքական գրականության մեջ և մամուլի լեզվում։*

4. Հաղորդակցության, կապի ու տրանսպորտի միջոցներ, արդյունաբերական կյանքն արտահայտող բառեր.— *Ռուսերենի նմանակությամբ կազմվեցին որոշ բառեր արդյունաբերության, տրանսպորտի միջոցների և այլնի վերաբերյալ։ Դրանք են՝ ինքնաշարժիչ, գծանավ, հնգամյակ, բնագիծ, գերծանրաբեռնվածություն, հեռախոսագրույց, հեռախոսացանց, հեռախոսալար, հեռախոսականչ, հեռագրագիծ, հեռագրատար, հեռագրալար, հեռագրասյուն, հեռագրացանց, լուսահեռագիր, լուսափորագրություն, էլեկտրաքարշ, ռադիոհեռագիր, հերթափոխ և այլն։ Սրանց մի զգալի մասը գալիս է մինչսովետական շրջանից, բայց ակտիվ գործածություն է ձեռք բերել ետհոկտեմբերյան փուլում։*

Ռուսաց լեզվի նմանակությամբ են կազմվել նաև ռադիոընդունիչ, ռադիոկայան, եռամարտ, ժամանակաչափ, գազաչափ, շքանշանակիր, տեսադաշտ, երկաթահատ, գազանետ, երկաթցեմենտ, հացեասեղան, կայարանասրահ, ընթերցադահլիճ, ստուգարք, հարցաթերթ և այլն։

Ռուսաց լեզվի ազդեցությամբ հայերենում կազմվել են նաև

որոշ բառակապակցություններ, ոճեր ու արտահայտություններ։ Ռուսերենի նմանակությամբ ստեղծված բառակապակցություններից, ոճերից ու արտահայտություններից են՝ պլանային տնտեսություն, պիոներական օղակ, պատի թերթ, տնային կալանք, օդային հարձակում, օդային տագնապ, ծովային բլոկադա, իրեղեն ապացույց, քարտային սիստեմ, ընթացիկ հաշիվ, ընտրական կամպանիա, ծանրության կենտրոն, հողային հարց, փակցային կրակ, պատժիչ ջոկատ, արգելիչ ջոկատ, հնգամյա պլան, կոմունիզմի կառուցումներ, դաշտապաշտպան անտառաշերտ, վաստակավոր գործիչ, խղճի ազատություն, մամուլի ազատություն, կոմունիստական աշխատանքի բրիգադ, կոմերիտական երիտասարդական բրիգադ, Սովետական Միության հերոս, Սոցիալիստական աշխատանքի հերոս, հարց հարուցել, հարց բարձրացնել, գործ հարուցել, հնարավորություն ունենալ, նկատի ունենալ, խըստիվ արգելվում է, հասնել և անցնել, հաշիվ տալ, բանը նրանում է և այլն։ Սրանք հիմնականում նոր շրջանում են լայն տարածում ստացել։

Հայոց լեզվի զարգացման սովետական փուլում ռուսերենի նմանակությամբ, մեր լեզվի բառակազմական միջոցներով ըստեղծվեցին նոր հարադրություններ, այսպես՝ պատասխանատվության ենթարկել, առաջ քաշել, պատժի ենթարկել, հաշվառման վերցնել, քննադատության ենթարկել, կասկածի ենթարկել, էվակուացիայի ենթարկել, հաշվի առնել, մեջ բերել, մրցության կանչել, եզրակացություն անել և այլն։

Պետք է նկատել, որ **ենթարկել** բայով կազմված որոշ հարադրություններ լայն տարածում չստացան։ Հիմնականում դրանց մի մասը այժմ կիրառվում է ոչ որպես հարադրական բարդություն, այսպես՝ պատժել, էվակուացնել, մոբիլիզացնել, քննադատել փոխանակ պատժի (էվակուացիայի, մոբիլիզացիայի, քննադատության) ենթարկել։

Հայերենում հարադրական բարդություններից կազմվում են կցական բարդություններ։ Այդ օրինաչափությունը գործուն է եղել մեր լեզվի զարգացման հին շրջանում։ Սովետական փուլում ռուսերենի ազդեցությամբ ավելի ինտենսիվությամբ է արտահայտվում հարադրական բարդությունների՝ կցականի վերածվելու միտում։ Այսքանից կարելի է անել մի քանի հետևություններ՝

1. Հայոց լեզվի բառապաշարը սովետական փուլում համալրվել է նաև փոխառություններով։ Փոխառյալ բազմաթիվ բառեր լայն

տարածում ու գործածություն ունեն ոչ միայն բանավոր խոսակցական լեզվում, այլև քաղաքական, գիտական, սպորտային, ռազմական և այլ գրականության մեջ։ Ակտիվ կիրառություն ունեն նաև այն փոխառությունները, որոնք արտահայտում են երաժշտության, լուսանկարչության, ռադիոյի, տրանսպորտի միջոցների, դիվանագիտության, գյուղատնտեսական կյանքի և այլ բնագավառների վերաբերող հասկացություններ։ Փոխառյալ բառերի մի զգալի մասը մտել է մեր լեզվի բառային կազմին և դարձել նրա հարազատ տարրը։

2. Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին և Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին օտարազգի բառերի մուտքը մեր լեզվի մեջ հսկայական չափերի հասավ։ Փոխառյալ բազմաթիվ բառեր սկսեցին գործածվել առանց անհրաժեշտության։ Չկար որևէ սահմանափակում ու արգելք այդ հարցում, որի պատճառով էլ բազմաթիվ անհարկի փոխառություններ թափանցեցին հայերենի մեջ։ Դա իհարկե, ուներ և իր օբյեկտիվ պատճառները։ Վերջին շրջանում անհարկի փոխառությունների մեծ մասը փոխարինվեց հայերեն համարժեքներով, սկսեց սահմանափակվել նաև անհարկի փոխառությունների մուտքը մեր լեզվի մեջ։ Առհասարակ նկատվում է փոխառյալ անհարկի բառերը ազգային համարժեքներով փոխարինելու և նոր երևույթներն ու հասկացությունները լեզվի սեփական միջոցներով դրսևորելու միտում։ Այժմ գիտաժողով, արտադրամաս, պարբերացում, հեռակետ, մերձակետ, ծանրամարտ, ծանրորդ, մարզիկ, մրցանիշ, մրցանակակիր, դասական, մենակատար և այլ բառեր լայն տարածում ու գործածություն են ստանում և աստիճանաբար դուրս մղում օտար համարժեքներին։

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

V. ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի նորաստեղծ հանրապետությունում գիտության, շինարարության, արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման հեռանկարները, նոր ուսումնական հաստատությունների, այդ թվում Երևանի համալսարանի ստեղծումը գիտատեխնիկական ծավալուն գրականության պահանջ էին առաջադրում, իսկ դա սերտորեն կապված էր հայերենի տերմինաշինության զարգացման հետ։

Սովետական Հայաստանի լեզվաբանները և տարբեր բնագավառների մասնագետներ ժամանակի պահանջների համեմատ հայալեզու տերմինների սահմանափակ ժառանգություն ստացան անցյալից։ Եղած հայերեն գիտական անվանումների զգալի մասը գալիս էր հայ հին մատենագրությունից և արևմտահայերենից։

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանի հատկանշական կողմերից մեկը եղավ տերմինաշինության մեծ վերելքը։

Հայերենի տերմինաշինություն կամ հայերենի գիտական անվանումների ստեղծում (կերտում) ամենից առաջ նշանակում է գիտական նոր հասկացությունների համար հայերեն համապատասխան գիտական անվանումների ստեղծում և գործածում, ներառյալ այլ լեզուներից եկող տերմինների դիմաց հայերեն անվանումների կերտումը կամ օտար անվանումներին հայկական ձևավորում տալը. այն բնավ չի նշանակում այլ լեզուների բառերը սոսկ մեսրոպատառ գրելն ու գործածելը, առանց բառակերտական որևէ աշխատանքի։ Այս վերջինը տերմինափոխառություն է, եթե կարելի է ասել, մաքուր վիճակում։

Ամեն լեզու ունի իր ներքին օրենքները և զարգացման օրինաչափությունները։ Մի լեզու օգտագործվելով գիտության տարբեր բնագավառներում՝ ունենում է այդ բնագավառներին համապատասխան ոճական տարբերակներ, որոնք ենթակա են համ-

ընդհանուր լեզվի բառակազմական-քերականական օրինաչափություններին։ Գիտական լեզուն հարստանում է՝ անընդհատ գիտական նորանոր ըմբռնումներ, հասկացություններ, մտածություններ արտահայտելու շնորհիվ։ Այդպիսիք արտահայտելու համար լեզուն գործածում է իր ունեցած միջոցները, իր ստորին ձևից գոյացնում է նոր լեզվամիջոցներ, նաև լեզվական փոխառություններ է կատարում այլ լեզուներից։ Երբ լեզուն լայնորեն կիրառվում է տարբեր բնագավառներում և կարողանում է արտահայտել ժամանակի նոր ու նորագույն հասկացությունները, մտքերը, առաջավոր գաղափարները, ուրեմն այն զարգանում է ու հարստանում կյանքին համընթաց։ Իսկ թե այդ նորն ու նորագույնը արտահայտելու համար լեզուն որքանով է օգտվում իր միջոցներից և որքան լեզվամիջոցներ է վերցնում ուրիշ լեզուներից, դա այնպիսի հարց է, որ առնչվում է ամեն մի լեզվի առանձնահատկությունների, զարգացման ներքին օրինաչափությունների, պատմական ավանդների հետ։ Կարևորը նորն ու նորագույնը, ժամանակի առաջավորը, զանազան մտքեր ու նրանց նրբերանգները արտահայտել կարողանալն է։

Հայոց լեզվի դարավոր զարգացման և մանավանդ նրա հարստացման սովետական շրջանի փաստերը ցույց են տալիս, որ հայ գրական լեզուն արտահայտել է ու արտահայտում է ժամանակի նոր ու նորագույն ըմբռնումներն ու մտածությունները, ու դրա համար օգտագործել է և օգտագործում է ամենից առաջ իր բազմազան միջոցները՝ բառապաշարային տարբեր շերտերը, դարձվածաբանությունը, բառակերտական մեծ հնարավորությունները, ինչպես և այլ լեզուներից փոխառյալ միջոցներ՝ բառեր և գիտական անվանումներ։ Մասնավորապես վերջինները՝ հաջողությամբ օգտագործվել և օգտագործվում են գիտության տարբեր բնագավառներում մասնագիտական մի շարք հասկացություններ արտահայտելու համար, ընդ որում, լեզվի զարգացման ընթացքում նրանց մի մասը փոխարինվում է սեփական ստորին ձևով և բառակազմությամբ գոյացող անվանումներով։

Ամեն մի լեզվի տերմինաշինության բնագավառում լեզվաբանները առաջնորդվում են այդ լեզվի օրենքներով, իսկ դրանց հակասող ամեն մի որոշում կամ հրահանգ և կամ անհատների անձնական հակումներից, ճաշակից բխող միջամտությունները միայն վնասակար կարող են լինել։

Ասենք նաև, որ տերմինաշինությունը, բառաշինության, լեզվաշինության մի բնագավառն է և խարսխվում է յուրաքանչյուր լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների վրա։

Տերմինը բառ է (օրինակ, դիտանցք, աստղաբույլ, մակբայ, կրծոսկր, տարր) կամ բառակապակցություն (օրինակ, հոսանքի ուժ, բարձր լարվածության հոսանք, փոքր ոլոք, խոսքի մաս), որ արտահայտում է գիտության, տեխնիկայի, մշակույթի, քաղաքականության որևէ բնագավառի գիտական հասկացությունը՝ ամենախիստ եզրերով։ Տերմին[1] հենց նշանակում է եզր, սահման։ Ամեն մի գիտության բնագավառի տերմինաբանություն այդ բնագավառի բաղկացուցիչ մասն է։

Սակայն անջրպետ չկա տերմինի, այսինքն՝ գիտական անվանման և սովորական բառի միջև։ Հազարավոր դեպքեր կան, երբ սովորական բառերը գիտության այս կամ այն բնագավառում դառնում են գիտական անվանումներ. օրինակ, օդ, ջուր, երկաթ, պղինձ, աղ, թթու հայերենի սովորական բառերից են, բայց քիմիայում նրանք գիտական անվանումներ են, տերմիններ. ոտք, մատ, աչք նույնպես հայերենի սովորական բառեր են, բայց կազմախոսության մեջ գիտական անվանումներ են, նրանք այդպիսիք կարող են դառնալ նաև այլ բնագավառներում (օրինակ, էլեկտրամագնիսական աչք, շարժաթևի մատ, հաստոցի ոտք և այլն)։ Մյուս կողմից, գիտության, տեխնիկայի որևէ բնագավառում գոյացած գիտական անվանումը կարող է դառնալ սովորական բառ՝ լեզվում շատ գործածվելով. այդպես ունենք, օրինակ, թթվածին, արբանյակ, մոլորակ, տիեզերանավ, հեռուստատեսություն և այլն, որոնք այժմ լայնորեն գործածվում են նաև ոչ գիտական լեզվում։

Ուրեմն մի լեզվի տերմինաշինությունը այդ լեզվի լեզվաշինության մի մասն է, և բնականաբար ենթարկվում է տվյալ լեզվի օրինաչափություններին։

Սովետական Հայաստանի նոր զարգացող գիտությանն ու մշակույթին օդի, ջրի պես պետք էր ճկուն ու բարձրորակ տերմինաշինություն, քանի որ ստեղծվում էր հայալեզու գիտական ու տեխնիկական գրականություն։ Պատահական չէ, որ հայերենի

---

[1] Տերմին լատիներեն բառը արևմտահայերենում բառացի թարգմանում են եզր և գործածում (կա նաև եզրաշինություն, եզրաբանություն և այլն)։ Արևելահայերենում եղել են գիտաբառ, արվեստաբառ, անվանում և այլ թարգմանություններ։

տերմինաշինության հարցը բազմիցս բարձրացվել է 20-ական թվականների սկզբներին և հետո։ Լուսժողկոմատի առջև հրատապ հարց էր դրվել լրջորեն զբաղվելու հայերեն անհրաժեշտ գիտական անվանումների ստեղծման գործով։ 1924 թվականին «Խորհրդային Հայաստանը» գրում էր. «Ներկայումս, երբ մեր լեզուն դադարել է միայն ռոմանտիկ լեզու լինելուց, երբ մեր նոր սերունդը սովորում է բոլոր գիտությունները մայրենի լեզվով, անհրաժեշտ է միօրինակություն ստեղծելու համար լուրջ ուշադրություն դարձնել գիտական տերմիններ մշակելու վրա»[2]։ Դասագրքերի մեծ կարիքը բավարարելու համար հեղինակները նախ անհրաժեշտ էր համարում լրջորեն կազմակերպել հայերենի տերմինաշինությունը և այդ նպատակով լուսժողկոմատին առաջարկում էր ստեղծել «գիտական և լեզվաբանական հանձնաժողով», որի առաջին նպատակը պետք է լիներ գիտական տերմինների մի բառարան կազմելը։

Քանական թվականներին հայերեն տերմինաբանական բառարաններ ստեղծելու պահանջը բազմաթիվ այլ առիթներով էլ է դրվել։

Հարց էր առաջանում նաև՝ ինչո՞վ սկսել գիտական անվանումների ստեղծումը՝ բառարաններ կազմելո՞վ, թե՞ հայալեզու դասագրքեր, գիտական աշխատություններ ստեղծելով ու թարգմանելով։ Բառարանում դնելու համար հնարված գիտական անվանումը երբեմն ավելի անկենսունակ էր լինում, քան գիտական լեզվի գործածության ժամանակ որևէ որոշակի բնագրի մեջ գործածելու համար ստեղծվածը։ Գիտական հարուստ գրականություն ունեցող ազգերի տերմինաշինության պատմությունը ցույց է տալիս, որ տերմինների կերտումը հիմնականում կատարվել է լեզուն գիտության ու մշակույթի տարբեր բնագավառներում գործածելիս, իսկ բառարանները մեծ մասամբ արձանագրել են ստեղծված տերմինները, բայց և հաճախ զգալիորեն նպաստել տերմինաշինության զարգացմանը։ Սովետական Հայաստանում տերմինաշինությունն ընթացավ այս երկու ուղիների միահյուսմամբ։

Ուշադրության արժանի է 20-ական թվականներին բնական գիտությունների, ինչպես նաև մաթեմատիկայի, գյուղատնտեսության, բժշկության վերաբերող հայերեն լեզվով ինքնուրույն և

---

2 Ի. Զամարյան. Գիտական հայկական տերմինների կարիքը, «Խորհրդային Հայաստան», 1924, № 290։

թարգմանական մի շարք լուրջ աշխատությունների երևան գալը, որը նկատելի ազդակ եղավ տերմինաշինության զարգացման համար։

Կարելի է հիշատակել հետևյալ աշխատությունները. Վ. Արծրունու «Մարդակազմություն» (Երևան, 1922—1925), Ա. Հակոբյանի «Ֆիզիկան» (Եր., 1922), Ի. Մեշչերսկու «Տեսական մեքանիկայի» Ա մասը Դ. Հակոբջանյանի թարգմանությամբ (Եր., 1923), Վ. Մրոչեկի «Ուղղագիծ եռանկյունաչափությունը» (Եր., 1922), Կ. Պոսսեի «Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվների դասընթացը» (Եր., 1923), երկուսն էլ թարգմանված Ս. Տոնյանի կողմից, Վ. Գատմոնի «Ֆիզիկայի հիմունքները» (Եր., 1923), Ռ. Գաբրիելյանի «Կենդանաբանությունը» (Եր., 1926), Ա. Գրոսգեյմի «Բույսերի կարգաբանությունը» (Եր., 1922), Ս. Ս. Աբովյանի «Կաթնատնտեսության» երկու հատորները (Եր., 1925, 1926), Ա. Տեր-Պողոսյանի «Ընդհանուր կենդանաբանությունը», Գ. Տեր-Հայրապետյանի «Ընդհանուր սաղմնաբանությունը» (Եր., 1922) և ուրիշներ։

Առհասարակ, նկատելի է, որ 1920-ական թվականներին հայերեն գիտական գրականության զարգացումը բավականաչափ արագ է ընթացել։ Ուշադրություն է գրավում հատկապես այն, որ 1920-ական թվականներին Հայաստանի գիտական, մասնագիտական ամբողջ գրականությունը ստեղծվում էր հայոց լեզվով, նույնիսկ հայերեն լավ չիմացող մասնագետների ուսումնասիրությունները լույս էին տեսնում հայերեն։ Անկասկած է, որ նման հանգամանքն արդեն պետք է կարևոր խթան հանդիսանար հայ տերմինաշինության զարգացման համար։

Հայերեն էին տպագրվում նաև բոլոր նեղ մասնագիտական հանդեսները։ Ամենից առաջ պետք է հիշատակել Երևանի համալսարանի «Գիտական տեղեկագիրը», որ սկսեց հրատարակվել 1925 թվականից։ Ուշագրավ երևույթ էր 1926—27 թվականներին լույս տեսնող «Բժշկական հանդեսը», Ա. Մելիք-Ադամյանի, Հ. Քեչեկի, Գ. Արեշյանի, Ք. Փիրումյանի և Ս. Մելիքյանի խմբագրությամբ։ Այս հանդեսներում տպագրված հոդվածների շնորհիվ տարբեր գիտությունների վերաբերող բազմաթիվ հայերեն նոր գիտական անվանումներ էին մտցվում շրջանառության մեջ։

Հայաստանի համար այն տարիներին շատ գործնական էին և հրատապ հատկապես գյուղատնտեսության գիտական զարգացման հարցերը, ուստի պատահական չէ, որ համեմատաբար ավելի

շատ էին լույս տեսնում հողագործության և անասնաբուծության վերաբերյալ ինքնուրույն և թարգմանական գրքեր ու հոդվածներ։ «Գյուղատնտեսական կյանք» հանդեսը մեծ դեր կատարեց հայերեն գյուղատնտեսական անվանումների կերտման, միասնականացման և տարածման գործում։ Տարբեր բնագավառների վերաբերյալ ստեղծվող գիտական գրականության մեջ լայնորեն օգտագործվում էին թե՛ անցյալից ժառանգված գիտական անվանումները և թե՛, մանավանդ, բազմաթիվ նորաստեղծ հայերեն տերմիններ։ Հեղինակների ու թարգմանիչների, ինչպես նաև գրախոսողների կողմից կատարվում էր տերմինաշինական եռանդուն աշխատանք։

Այսպիսով, ժամանակի զարգացող գիտությունների մակարդակին համապատասխանող հայալեզու գրականության ստեղծման ընթացքում արդեն առաջադրվում և լուծվում էին տերմինաշինության ոչ քիչ հարցեր։ Սրան պետք է ավելացնել հանրակրթական դպրոցներում, մասնագիտական ուսումնարաններում և համալսարանում դասերի ու դասախոսությունների ընթացքում կատարվող տերմինաշինական աշխատանքը։

Գիտական անվանումների այսպիսի, եթե կարելի է ասել, կիրառական, գործնական ստեղծումն ու զարգացումը ուներ իր դրական կողմը. այդ կերպ ստեղծված տերմինները իրոք որ շատ ավելի կենսունակ էին լինում, քան բառարանի համար ստեղծվածները։ Սակայն պետք է ասել, որ գիտական գրականության ստեղծման ընթացքում կատարվող տերմինաշինությունը ունենում էր նաև իր բացասական կողմերը. որոշ տարբերայնություն էր առաջ գալիս, որի հետևանքով գիտական տերմինաբանության մեջ տեղ էր գտնում անմիօրինականություն ու զուգահեռականություն (միևնույն հասկացության համար գործածվում էին մեկից ավելի բառեր)։

20-ական թվականներին հայերենի տերմինաշինության զարգացման մյուս գլխավոր ուղին ճյուղային բառարանների ստեղծման աշխատանքն էր։ Նախքան հեղափոխությունը կազմվել էին հայերեն ճյուղային տերմինաբանական մի շարք բառարաններ։ Հատկապես ուշադրության են գրավում անցյալի հայերեն բժշկական բառարանները, որոնցից մի քանի տասնյակ անուն պահպանվել է նաև միջնադարից (ձեռագիր)։ Ուշագրավ է նշել, որ Երևանում տպագրական գործի սկզբնավորման տարիներին հրատարակված գրքերից էր բժիշկ Լ. Տիգրանյանի «Բառարան բժշկական բույսերի» լատիներեն-հայերեն-ռուսերեն բառացանկը

(1885), ուր հեղինակը հավաքել էր ժողովրդի և գրականության մեջ գործածված մի շարք հայկական բժշկական անվանումներ։ Ավելի խոշոր բժշկական բառարաններ կազմել կամ թարգմանել են արևմտահայերը. հիշելի են Մ. Բեստընի աշխատության վենետիկյան երկու հրատարակությունները (1822 և 1832), բժշկական բառարաններով, Զ. Փափազյանի «Շտեմարան պիտանի գիտելեաց»-ի 1-ին հատորը (Կ. Պոլիս, 1909) և այլն։

Սակայն եղած բոլոր բժշկական այդ բառարանները ինչպես և առհասարակ անցյալում կազմված գիտական անվանումների մյուս բառարանները չէին կարող բավարարել Հայաստանում արագորեն զարգացող գիտության պահանջները։ Եվ Երևանում (մասամբ էլ Թիֆլիսում) իրար հետևից սկսեցին լույս ընծայվել հայերեն մի շարք մեծարժեք ճյուղային տերմինաբանական բառարաններ։

Հայաստան եկող գիտա-տեխնիկական գրականությունը հիմնականում ռուսերեն էր։ Հիմնարկներում, դատարաններում, երկաթուղում և այլուր գործածական լեզուն շատ տարիներ եղել էր ռուսերենը։ Ընդունված էին ռուսերեն մասնագիտական անվանումները։ Հայերենի տերմինաշինությունը հիմնականում սկսեց ընթանալ ռուսերենում եղած տերմինների դիմաց հայկականը դնելու ճանապարհով։ Ճյուղային տերմինաբանական բառարանագրությունն էլ, որ 20-ական թվականներից ուժեղ թափով սկսեց զարգանալ, նույնպես երկլեզվյան էր՝ ռուսերենից հայերեն։

1924 թվականին լույս տեսան տերմինաբանական երկու բառարաններ՝ մեկը իրավաբանական, մյուսը՝ բժշկական անվանումների։ Առաջինը կազմվել էր իրավաբանների և լեզվաբանների մի խմբի կողմից՝ Ա. Հովհաննիսյանի, Ս. Մալխասյանցի և Մ. Աբեղյանի գլխավորությամբ[3]. բառարանի մեջ, բացի հայերենում արդեն եղած (ինչպես գործածվող, այնպես էլ մոռացված) շատ անվանումներից, տեղ են գտել նաև մոտ 400 նորաստեղծ տերմիններ։ Այս բառարանի ունեցած դերը կարելի է հասկանալ, եթե հիշենք, որ դատավարությունը, ամբողջ գործավարությունը Հայաստանում նոր էր սկսել հայերեն տարվել, և հանրապետության բազմաթիվ հիմնարկներ, դատարաններ հայերեն շատ ու շատ անվանումների մեծ կարիք ունեին։

3 «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան», Երևան, 1924 (առաջին փորձնական հրատարակությունը եղել է 1919-ին, Թիֆլիսում)։

Նույն թվականին լույս տեսած մյուս բառարանը, որ վերաբերում է բժշկության բնագավառին, կազմել էր Վ. Արծրունին[4]։ Նա տարիների ընթացքում ճշտել էր բազմաթիվ հայերեն բժշկական անվանումներ, շատ օտար տերմինների հայկական տեսք էր տվել, ինչպես և ինքը հայերենի միջոցներով կազմել էր բավական թվով նոր անվանումներ։ Այս բառարանը, իր ոչ քիչ թերություններով հանդերձ, գիտական տեսակետից լավագույնն էր մինչև այդ եղած բոլոր հայ բժշկական բառարաններից և լուրջ օգնություն էր համալսարանի նորաստեղծ բժշկական ֆակուլտետին։

Այնուհետև, իրար հետևից հրատարակվեցին մի քանի ուրիշ արժեքավոր ճյուղային երկլեզվյան բառարաններ։ Դրանցից էր Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը» (Երևան, 1925), որի անհրաժեշտությունը շատ էր զգացվում Կարմիր բանակի հայկական զորամասերում հայերենի կիրառմանն անցնելու կապակցությամբ։ Այս բառարանի կարևոր արժանիքն այն է, որ հեղինակը ոչ միայն շատ հմուտ էր հայերենի բառագանձին առհասարակ, այլև բավական ժամանակ մասնակցել էր ռազմական գրքերի հայերեն թարգմանության գործին, խմբագրել էր այդ գրքերի մեծ մասը։ Թարգմանական աշխատանքների ժամանակ իր հավաքած նյութերի մի մասը Աբեղյանը օգտագործել էր բառարանի մեջ։ Այս պատճառով էլ բառարանում հանձնարարվող հայկական տերմինների զգալի մասը կիրառությունից էր մտել բառարան և զերծ էր արհեստականությունից։ Զուտ ռազմական տերմիններից բացի, բառարանում տեղ են գտել նաև հասարակական ու տեխնիկական գիտություններին վերաբերող ոչ քիչ անվանումներ։

1925 թվականին լույս տեսան նաև ուրիշ երկու բառարաններ, երկուսն էլ երկաթուղային անվանումների, մեկը Երևանում՝ ռուս-հայերեն[5], մյուսը Թիֆլիսում՝ հայ-ռուսերեն[6]։ Սրանց գլխավոր նպատակն էր նպաստել անդրկովկասյան երկաթուղու հայկական հատվածում հայալեզու անվանումների մուտքին և օգտագործմանը։

---

4 Վ. Արծրունի, Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան, Երևան, 1924 (երկրորդ լրացված հրատարակությունը եղել է 1956-ին)։

5 «Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների»։ Կազմ.՝ Ս. Մալխասյանց, Ն. Մամիկոնյան, Ն. Տեր-Միքայելյան, Լ. Տեր-Միքայելյան, Թիֆլիս, 1925։

6 «Հայ-ռուսերեն բառարան երկաթուղային տերմինների», Երևան, 1925։

1927-ին Երևանում լույս տեսավ առևտրա-հաշվապահական տերմինների մի բառարան[7], որը հիմնականում ուսումնական նպատակ ուներ։

1928-ին հրատարակվեց հեղինակների խմբի կողմից կազմված շինարարական կառուցվածքների ռուս-հայերեն բառարանը[8], որի հիմնական նպատակն էր՝ օգնել Երևանի համալսարանում մաթեմատիկական և տեխնիկական առարկաների հայերեն դասավանդմանը։ Բառարանը, չնայած իր անվանը (Շինարարական կառուցվածքների), ընդգրկում էր նաև մաթեմատիկայի և ֆիզիկայի բնագավառներին վերաբերող շատ անվանումներ։

Այն կարող էր օգտակար լինել նաև Հայաստանում սկսված շինարարական աշխատանքների մեջ հայկական անվանումների կիրառման գործում։

Այս բոլոր ճյուղային բառարանների դերը բավականին նկատելի եղավ։ Այսօր հայերեն գիտական լեզվում սովորական դարձած շատ անվանումներ ու բառեր հրապարակ եկան այդ բառարանների շնորհիվ։ Կարևոր էր այն, որ բոլոր այդ տերմինաբանական բառարանների հեղինակները փորձված, բազմահմուտ մասնագետներ էին, այդ թվում ժամանակի հայ ամենաանվանի լեզվաբանները։ Բառարանների մեջ ամենատարբեր աղբյուրներից՝ անցյալի բառարաններից, հայերեն ինքնուրույն և թարգմանական գիտական աշխատություններից, ժողովրդի կենդանի խոսքից բազմաթիվ բառեր էին հավաքված, իսկ հազարավոր գիտական անվանումներ էլ կազմված էին հեղինակների կողմից։

Չի կարելի ուշադրության չառնել բոլոր բառարանագիրների այն խոստովանությունը, որ նրանք մեծապես օգտվել են արևմտահայ բանասերների հավաքած ու ստեղծած գիտական բառամթերքից։ Այդ նորաստեղծ բառարանների նախաբաններում ասվում է, որ հեղինակների գլխավոր աղբյուրներն են եղել Մ. Քաջունու, Ս. Երեմյանի, Գ. Մենևիշյանի, Գ. Լուսինյանի և այլոց աշխատանքները։ Երախտավոր այդ լեզվաբանների աշխատություններից բազմաթիվ գիտական անվանումներ նույնությամբ անցել են նորաստեղծ բառարանները, և, որ ավելի կարևոր է, նոր

---

7 Ն. Տեր-Հովակիմյան, *Համառոտ ռուս-հայերեն բառարան առևտրա-հաշվապահական տերմինների*, Երևան, 1927։

8 Հ. Աճառյան, Հ. Զարզարյան, Դ. Հակոբջանյան, Ա. Տոնյան, Հ. Քաջազնունի, *Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների*, Երևան, 1928։

անվանումների կերտման ժամանակ բառարանների հեղինակները հաճախ են օգտվել արևմտահայ գիտնականների կիրառած տերմինակերտական հնարանքներից։ Օրինակ, Վ. Արծրունին, հետևելով արևմտահայերի օրինակին, մի շարք բժշկական անվանումներ է ստեղծել բորբ և տապ բառերի կցումով (բոճաբորբ, բոճատապ և այլն), Գ. Լուսինյանի օրինակով նա տերմիններ է ստեղծել հայերեն բառերին օտար մասնիկներ կցելով, ինչպես՝ մկան+ին (миозин) կաթն+ոզ (галиктоз), սրճ+ին (кофеин) և այլն։ Կան նաև ուրիշ շատ օրինակներ։

20-ական թվականներին հայ բառարանագիրների կողմից արևմտահայ մի շարք գիտնականների տերմինաշինական փորձի, նրանց թողած ժառանգության առատ օգտագործումը խոսում է ոչ միայն այդ փորձի ու ժառանգության մեծ արժանիքների, այլև հիշյալ գիտնականների տերմինաշինական ճիշտ ուղղության մասին։ Անշուշտ, փոքր չէ նաև նախասովետական շրջանի արևելահայ բանասերների տերմինաշինական աշխատանքի դերը. հատկապես նշելի է Հ. Դաղբաշյանի երկու բարձրարժեք բառարանների հարուստ բառամթերքի օգտագործումը այդ տարիներին։

Նորաստեղծ տերմինաբանական երկլեզվյան բառարաններում նրանց կազմողները անցյալի ժառանգությունը օգտագործում էին նպատակաորեն՝ ճշտելով գիտական անվանումների նշանակությունը, երբեմն նոր իմաստով գործածելով դրանք։ Ամեն դեպքում այդ բառարանները նոր որակ, նոր երևույթ էին հայ բառարանագրության մեջ։

Այդ երկլեզվյան բառարանների կազմման սկզբունքները մի շարք դեպքերում ընդհանուր էին։ Օրինակ, բոլոր բառարանների հեղինակները աշխատել են ոչ հայերեն յուրաքանչյուր անվանման դիմաց անպայման գտնել հայկականը (եղածը կամ նորաստեղծը), հայերենի հնարավորությունները սպառելուց հետո են նրանք դիմել այլալեզու տերմինների հայացմանը։ Բառարանագիրները միանգամայն առողջ և ճիշտ մոտեցմամբ բազմաթիվ հանրահայտ այլազգի անվանումների փոխարեն հայերենում օգտագործելու համար հանձնարարել են հայերեն անվանումներ, ինչպես՝ алгебра-ի դիմաց՝ հանրահաշիվ, геометрия-ի դիմաց՝ երկրաչափություն, тригонометрия-ի դիմաց՝ եռանկյունաչափություն, биология-ի դիմաց՝ կենսաբանություն, геология-ի դիմաց՝ երկրաբանություն, анатомия-ի դիմաց՝ մարդակազմություն[9],

9 Ավելի ճիշտ է մարմնակազմություն կամ՝ կազմախոսություն։

физиология-ի դիմաց՝ բնախոսություն, архитектура-ի դիմաց՝ ճարտարապետություն, артиллерия-ի դիմաց՝ հրետանի և այլն։

Ուշադրություն է գրավում այն, որ թարգմանված են մի շարք այնպիսի օտար անվանումներ, որոնք այժմ էլ արևելահայերենում ներկայացված են այլազգի բառերով։ Օրինակ, Իրավաբանական բառարանը аттестат-ի դիմաց տալիս է միայն վկայագիր, архив-ի դիմաց՝ միայն դիվան, герб-ի դիմաց միայն զինանշան, объект-ի դիմաց՝ միայն առարկա, объективный-ի դիմաց միայն առարկայական և այլն։

Մի շարք գրքերում էլ օտար բառը թարգմանելով հայերեն, որոշ հեղինակներ բառացանկի հայկական մասում իբրև երկրորդ բառ նշել են այդ օտար անվանման հայատառ նմուշը։ Այդպես, միևնույն իրավաբանական բառարանում, օրինակ, թարգմանված է банк-ը՝ դրամատուն, և միայն իբրև երկրորդ բառ բերված է օտար տերմինի հայատառ օրինակը (բանկ)։ Саботаж-ի դիմաց, բացի այդ բառի հայերեն տառադարձումից, տրված է նաև՝ նենգադուլ։ Ռազմական բառարանում термин-ի դիմաց գտնում ենք արվեստաբառ և եզր, իսկ авангард-ի դիմաց միայն՝ առաջապահ և այլն։ Այսպիսի օրինակները շատ են։

Այս բառարանների կարևոր արժանիքներից է նաև այն, որ նրանցում ճշտվել են անցյալում գործածվող բազմաթիվ բառերի իմաստներ, մասնավորվել, որոշակի են դարձվել նրանց իմաստային սահմանները, այսինքն՝ այդ բառերին տրվել է գիտական անվանման արժեք։ Վ. Արծրունու բառարանում, օրինակ, ճշտվել, գիտականորեն որոշակի են դարձվել հայերենում գործածվող այնպիսի բառերի իմաստային սահմանները, ինչպես՝ ոսկոր, ըմպան, կոկորդ, բուկ, կատիկ, մորթ, մաշկ, կաշի, փոստ, ջիղ, ազդր, զիստ, երկունք, իրան, պիսակ, խայտվածք, բիծ, խալ, նիշ և այլն։ Իմաստային սահմանների մասնավորմամբ ու ճշտմամբ հայերեն այս բառերը գիտական անվանման արժեք են ստացել։

Բառարաններում կան նաև հայերենում գործածելու համար հանձնարարվող փոխառյալ տերմիններ։ Բառարանները թերթելիս ուշադրություն է գրավում այն, որ հեղինակներն ամեն կերպ աշխատել են փոխառյալ գիտական անվանումները հարմարեցնել հայերենի արտասանության և բառակազմական կանոններին, այսինքն՝ հայացնել։ Օրինակ, ռուսերենում а կամ ка վերջույթներ ունեցող բոլոր տերմինները, չնչին բացառությամբ, բառարան-

ներում զերծ են այդ վերջույթներից։ Վ. Արծրունու բառարանում հանդիպում ենք ատոմ, պրոտոպլազմ, ֆորմ, գանգրեն *և այլ նմանօրինակ բառերի։ Մյուս բառարաններում գտնում ենք* алидада—ալիդադ, блинда—բլինդ *(«Ռազմ. բառար.»),* лигатура—լիգատուր, вагонетка—վագոնետ, дрезина—դրեզին, дюжина—դյուժին, джута—*ջուտ («Ռուս-հայ. երկաթուղ. բառար.»),* тонна—տոնն, молекула—մոլեկուլ, механика—մեխանիկ *(«Բառարան շինարար. կառուցվածքների») և այլն։*

Կան նաև տերմինների հայացման այլ ձևեր, այդպիսին է, օրինակ, օտար բառերին հայերենի բառակազմական մասնիկների կցումը։ Այսպես, Վ. Արծրունու բառարանում օտար արմատներից հայերեն բայամասնիկներով կազմվել են այսպիսի բայեր՝ ֆիկսել, վիբրել, զոնդել, պլոմբել *և այլն, կան նաև օտար արմատներով և հայերեն ածանցներով կազմված գոյականներ* (ֆիկսում, օպերում, պլոմբում *և այլն), ածականներ* (ատոմային, անեմիկ, օպերելի *և այլն)։*

Իհարկե, բառարաններում տեղ են գտել նաև օտար տերմինների չփոփոխված նմուշներ, ինչպես՝ ակտիվ, ակտ, ինտենսիվ, բանկիր *և այլն։*

Գրեթե բոլոր այս բառարանների առաջաբաններում հեղինակները օգտվողներին նախազգուշացնում են թերությունների մասին, ինչպես և այն մասին, որ դեռևս կյանքը շատ բան պետք է փոխի, ճշտի առաջարկվող գիտական անվանումների մեջ։

Հասկանալի է, որ հիշյալ տերմինաբանական բառարանները իրենց շատ արժանիքների հետ ունեն նաև բավականին թերություններ։ Ամենից առաջ նրանցում դրանցվել են որոշ անհաջող թարգմանություններ, ինչպես, օրինակ, «Երկաթուղային բառարանն» ունի Ավտոմոբիլի ճանգրվան (автогараж-*ի դիմաց),* ճանրամբիլ (автобус-*ի դիմաց) և ուրիշ անկենսունակ անվանումներ, «Ռազմական բառարանն» ունի* երկրաչափություն (геодезия), կանացույց (инвентарный список), այլերկրյա (иностранный), կառուղիչ (кондуктор), ապահաստիք (нештатный) *և այլն։*

Թերություն է նաև բառարաններից մի քանիսում դիտվող հոմանիշների առատությունը. երբեմն ռուսական մի տերմինի դիմաց հայերենի համար առաջարկվում են երկու, երեք և ավելի անվանումներ։ Օրինակ, «Իրավաբանական բառարանում» арест-*ի դիմաց կարդում ենք* ձերբակալություն, կալանավորում, կալանք,

արգելադրություն, արգելանք, наследник-ի դիմաց՝ ժառանգ, ժառանգորդ, нетто-ի դիմաց՝ զուտ քաշ, զուտ կշիռ, նետտո: «Շինարարական կառուցվածքների բառարանում»՝ анализ-ի դիմաց կան՝ անալիզ, վերլուծություն, վերլուծում, ветхий-ի դիմաց՝ քայքայվող, քայքայուն, гигроскопический-ի դիմաց՝ հիգրոսկոպական, խոնավամետ և այլն:

Ավելորդ հոմանիշներից շատ դեպքերում հմտորեն խուսափել են Մ. Աբեղյանը «Ռուս-հայերեն ռազմական բառարանում», ինչպես և «Երկաթուղային տերմինների ռուս-հայերեն բառարան» կազմողները: Օրինակ, նույն арест-ի դիմաց Աբեղյանի «Ռազմական բառարանում» միայն կալանք է դրված: Կամ՝ եթե, «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների» մեջ акведук-ի դիմաց տրված է ջրանցույց և ակվեդուկ, ապա «Ռազմական բառարանն» ունի միայն ջրանցույց:

Առանձին բառարանների մեջ միևնույն տերմինների անմիակերպություն է նկատվում: Օրինակ, նույն акведук-ի դիմաց «Բառարան երկաթուղային տերմինների»-ն մի բառ է դնում, բայց՝ ագուգա կամ այս բառարանը авиатор-ը թարգմանում է օդաչու, իսկ «Ռազմական բառարանը»՝ սավառնորդ: Նման օրինակները շատ են:

Կան նաև ոչ քիչ թվով, եթե կարելի է ասել, ոչ կենսունակ թարգմանություններ, ինչպես, օրինակ, «Ռազմական բառարանում» тир-ը թարգմանված է ձգարան: Թվում է, թե անհաջող բառ չէ (մանավանդ իր կարճությամբ), բայց ավելի կենսունակ եղավ հրաձգարանը: Նույն բառարանում авиация-ն թարգմանված է սավառնում, սավառնակում, որ հաջող չէ: «Ռուս-հայերեն երկաթուղային» և «Ռուս-հայերեն իրավաբանական» բառարանները լիարժեք չեն թարգմանում авария-ն նավավթար (ճիշտ կլիներ՝ վթար): Այս բառարաններից առաջինը армеец թարգմանում է զինվոր, որ սխալ է (ճիշտը՝ բանակային), «Բառարան շինարարական կառուցվածքների»-ն начертательная-ն թարգմանում է ձեվագրական, треугольник-ը՝ եռանկյուն, որ հաջող չեն (ճիշտ կլինեին՝ գծագրական և եռանկյունի): Այսպիսի օրինակներ էլ քիչ չեն, որոնց մի մասը, սակայն, դարձյալ հայերեն համապատասխան մասնագիտական գրականություն չլինելու կամ քիչ լինելու պատճառով է առաջացել:

Մի շարք տերմիններ էլ ուղղակի դուրս են մնացել բառարաններից: Օրինակ, «Բառարան շինարարական կառուցվածքների»-ն,

որ նաև մաթեմատիկական անվանումների բառարան է, չունի այնպիսի գլխաբառեր, ինչպես аксиома և теорема (բառարանը թեորեմ բառը տնի կապակցության մեջ, ինչպես՝ Պյութագորի թեորեմ):

Այնուհետև, որպես թերություն կարելի է նշել այն, որ բառարաններից մի երկուսի մեջ երբեմն ռուսերեն բառի դիմաց չի տրվում այն ժամանակ եղած հայկական անվանումը: Օրինակ, Վ. Արծրունին хирургия-ի կամ операция-ի դիմաց տվել է նույն այս օտար բառերը (հայատառ)՝ մերժելով հայերենում արդեն գործածված վիրաբուժություն-ը, վիրահատություն-ը, գործողություն-ը, իբրև երևույթը ճիշտ չարտահայտող անվանումներ:

Պետք է ասել, որ որոշ դեպքերում Վ. Արծրունին իրավացիորեն է մերժում արևմտահայերի որոշ բառացի թարգմանությունները: Օրինակ, histeria-ն բառացի թարգմանվել է արգանդախտ (հնում այդ հիվանդության պատճառը արգանդի ախտով են բացատրել), որ սխալ է արտահայտում անվանման նոր իմաստը, arteria-ն բառացի թարգմանել են շնչերակ (հնում կարծել են, թե օդ է անցնում երակով): Արծրունին վերջինը ճշտում է՝ զարկերակ և այլն: Սակայն, ցավոք, բառացի թարգմանությունների նկատմամբ Արծրունին երբեմն չափից ավելի խիստ է լինում՝ մոռանալով, որ ինչպես հունա-լատինական անվանումներից շատերը այժմ չեն հասկացվում բառացի, այնպես էլ նրանց հայկական մի շարք բառացի թարգմանությունները կարող են համապատասխան նոր իմաստներով գործածվել և բառացի չհասկացվել, այսինքն՝ տերմինի արժեք ստանալ: Օրինակ՝ Արծրունին մերժում է նաև паралич-ի դիմաց հայկական անդամալուծություն-ը, փոխարենը դնելով՝ լուծանք զույգ իմաստով ավելի համապատասխանող, բայց և բոլորովին անկենսունակ բառը (ընդ որում, մոռացության են տրվում այն ժամանակ արդեն паралич-ի իմաստով գործածվող կաթված, կաթվածահարություն անվանումները):

Կարելի է, իհարկե, 20-ական թվականներին հրատարակված տերմինաբանական բառարաններում ուրիշ թերություններ էլ գտնել, սակայն դրանք երկրորդական են նրանց կատարած դրական դերի համեմատությամբ:

Ընդհանրապես 20-ական թվականներին թե՛ տերմինաբանության հարցերի մասին եղած բանավոր ու գրավոր ելույթները, թե՛ նորաստեղծ մասնագիտական ինքնուրույն ու թարգմանական գրականության լեզվի փաստերը և՛ թե հրատարակվող տերմինա-

բանական բառարանների բնույթը ցույց են տալիս, որ հայերենի տերմինաշինությունը հիմնականում ճիշտ ուղիով էր սկսել իր ընթացքն ու զարգացումը։ Փաստն այն է, որ հայոց լեզուն հարստանում էր հարյուրավոր հայկական գիտական անվանումներով, մեծանում էր լեզվի բառապաշարը, ուստի և արտահայտչական հնարավորությունները։ Աստիճանաբար հաղթահարվում էր շատ տարիների ընթացքում արևելահայ մտավորականության որոշ մասի մեջ արմատացած հակումը դեպի օտար բառերը և քամահրանքը հայերեն անվանումների նկատմամբ։

Այդ ժամանակ, ինչպես և քիչ ուշ՝ 30-ական թվականներին, հայերենի տերմինաշինությունը եռանդուն մասնակցություն ցույց տվեցին հայոց լեզվի՝ ժամանակի նշանավոր մասնագետները՝ Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Ս. Մալխասյանցը, ինչպես և այլ բնագավառների խոշոր մասնագետներ։ Այս վերջիններից նշելի է Վ. Արծրունու աշխատանքը, որն իր բառարանը հրատարակելուց բացի, հանդես եկավ նաև բազմահատոր «Մարդակազմությամբ», ուր տեղ գտան հեղինակի կազմած բազմաթիվ հայերեն անվանումները (ուշագրավ է, որ հայերեն նորաստեղծ բժշկական անվանումների կողքին Արծրունին հաճախ տալիս էր նաև լատինական համարժեքը)։

Այնուհետև, հարկ է նշել Ա. Տոնյանի կատարած աշխատանքն այդ տարիներին մաթեմատիկական բազմաթիվ անվանումներ ստեղծելու ու ճշտելու ուղղությամբ։ Տոնյանը, բացի վերևում հիշատակված գրքերից, հայերեն թարգմանել է այլ աշխատություններ, այդ թվում Կիսելյովի հայտնի «Երկրաչափությունը»։ Տոնյանը իր թարգմանական աշխատանքին զուգընթաց կազմում էր մաթեմատիկական անվանումների բազմալեզու բառարան, ուր գնում էր ինչպես նախկինում եղած, այնպես էլ իր ժամանակի շրջանառության մեջ մտնող հայերեն անվանումները։ Բառարանը լույս տեսավ (որդու՝ Վ. Տոնյանի որոշ լրացումներով) բավական ուշ՝ 1965 թվականին[10]*։*

Տնտեսագիտական անվանումների ստեղծման և ճշտման գծով շնորհակալ աշխատանք է կատարել Թ. Ավդալբեգյանը, գլխավորապես Կ. Մարքսի «Կապիտալը» հայերեն թարգմանելիս։ Այդ թարգմանությունը ժամանակին բարձր գնահատվեց։

---

10 Ա. Տոնյան և Վ. Տոնյան, *Մաթեմատիկական տերմինների բառարան, Երևան, 1965։*

Ավդալբեգյանը թարգմանել է նաև այլ տնտեսագիտական երկեր և իր թարգմանական փորձի հիման վրա կազմել տնտեսագիտական անվանումների բառարան, որը, սակայն, նույնպես մեծ ուշացումով լույս տեսավ՝ 1964-ին[11]։

Լեզվաբանական անվանումների բնագավառում կարևոր աշխատանք կատարեցին Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը։ Թե՛ իրենց դասախոսությունների ընթացքում, թե՛ լեզվաբանական աշխատություններում նրանց (հատկապես Աբեղյանի) գործածած մի շարք անվանումներ մտան շրջանառության մեջ և այժմ հաստատ տեղ են գրավում հայ լեզվաբանական գրականության էջերում։

Գիտության ու մշակույթի տարբեր բնագավառների տերմինաշինության մեջ շատ ուրիշ երախտավորներ էլ իրենց լուրջ ավանդը մուծեցին 20—30-ական թվականներին։

10—15 տարվա ընթացքում արևելահայ գրական լեզվի տերմինաշինության բնագավառում ավելի շատ բան արվեց, քան ցարական Ռուսաստանի ամբողջ տիրապետության ժամանակաշրջանում։ Նշելի է այն եռանդը, ոգևորությունը, որով լեզվաբաններն ու տարբեր մասնագիտության մարդիկ ձեռնամուխ էին եղել գիտական անվանումների հայերեն բառագանձի հարստացմանը։

Սակայն չպետք է մոռանալ նաև, որ հայերենի տերմինաշինության զարգացման այս բեղմնավոր առաջընթացն ուներ նաև հակառակորդներ։ Հայերենի տերմինաշինության բնագավառում տարակարծությունները, իհարկե, հնից էին գալիս, և միշտ էլ նրանք գլխավորապես վերաբերել են օտար բառեր փոխառնելու չափին ու ձևերին։ Հայերենի զարգացման սովետական շրջանի սկզբում հետևողականորեն կիրառվում էր օտար տերմինները հնարավորին չափ հայկականով փոխարինելու կամ առնվազն հայացնելու սկզբունքը։ Հայերենի զարգացման կարևոր կողմերից մեկն էր դիտվում լեզուն օտարաբանություններից զտելը։ Ավելի ուշ, մանավանդ 30-ական թվականների կեսերից, նկատելի դարձավ նաև հակառակ մի հակում. սերը դեպի օտարաբանությունները, որ առկա էր որոշ մտավորականների մեջ դեռևս հնից։ Իրավացի էր Գ. Սևակը, երբ 1933-ին «Խորհրդային Հայաստան» թերթում գրում էր. «Օտար բառերի սերը հաճախ խանգարել է ազգային

11 Թ. Ավդալբեգյան, *Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան, Երևան, 1964։*

տերմինաշինության գործին»[12]։ Պահանջ էր զգացվում տերմինաշինության բնագավառում օտար և ազգային անվանումների նկատմամբ որոշակի, միասնական վերաբերմունքի։

Այնուհետև, տերմինաշինության բնագավառում սկսել էր իրեն ավելի լուրջ զգալ տալ միևնույն օտար տերմինների դիմաց հայերենում մեկից ավելի բառերի գործածումը, որ շփոթություններ էր ստեղծում ուսուցման և գիտական գրականության ստեղծման ընթացքում։ Այլ կերպ ասած, տերմինաշինության մեջ տարերայնությունը դեռևս մնում էր. երբեմն ամեն մի հեղինակ, թարգմանիչ, դասատու և դասախոս ինքը գիտական անվանում էր ստեղծում ու գործածում։ Ճիշտ էր նկատում Հ. Տաշյանը դեռևս 1926 թվականին. «Իրերը կհանգին այն կետին, որ եվրոպական գիտական եզրի մը համապատասխանող հայերենները հաճախ պեսպեսությամբ կերևան»[13]։

Վաղուց ի վեր հայ մտավոր կյանքում զգացվում էր մի այնպիսի կազմակերպության կարիք, որը կարողանար կանոնավորել ու ղեկավարել հայերենի տերմինաշինությունը, ինչպես և լեզվի զարգացման գլխավոր հարցերը։ Այդպիսի մի կենտրոն հնարավոր եղավ ունենալ Սովետական Հայաստանում։ Նախապես տերմինաշինության գործի ընդհանուր ղեկավարությունը դրված էր լուսժողկոմատի վրա։ Այնուհետև, երբ հարկ զգացվեց տերմինաշինության նկատմամբ ավելի ուժեղ հսկողություն սահմանելու, ստեղծվեց ՀԽՍՀ տերմինաբանական խորհուրդ, որը 1933-ին հրապարակեց իր անդրանիկ հրահանգը «Տերմինաշինարարության սկզբունքների մասին» վերնագրով[14]։ Հրահանգը հաստատված էր ՀԽՍՀ Կենտգործկոմի կողմից։ Այդ որոշման մեջ ասված էր. «...հրահանգի կիրառումը բոլոր պետական, հասարակական, գիտական և այլ հիմնարկների համար համարել պարտադիր»։ Հրահանգը ստորագրել էին խորհրդի անդամները՝ Դ. Սիմոնյան (նախագահ), Գ. Սևակ (գիտնական քարտուղար), Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Հ. Գյուլիքեվխյան, Ա. Ղարիբյան, Գ. Ղափանցյան, Ն. Ստեփանյան։

Այս հրահանգը բաղկացած էր երկու մասից՝ ա) տերմինակերտության և բ) տառադարձության։ Կարդալով առաջին մասը՝ չի կարելի անմիջապես չնկատել նրա, ընդհանուր առմամբ, առողջ

12 Գ. Սևակ, *Լեզվի բարձր որակի համար* («Խորհրդային Հայաստան», 1933, № 185)։

13 Հ. Տաշյան, *Բառախոսական դիտողություններ*, Վիեննա, 1926, էջ 3։

14 «Խորհրդային Հայաստան», 1933, № 185։

գիտական ոգին, հայերենի տերմինաշինության սկզբունքների ու հեռանկարների ճիշտ ըմբռնումը և հոգատարությունը հայոց լեզվի բառապաշարի զարգացման ու ճոխացման նկատամամբ։ Հրահանգն սկսվում էր այսպես. «Տերմինաշինության ժամանակ ղեկավարվել լեզվական հստակության (պուրիզմի) լենինյան դրույթով՝ խուսափելով օտարազգի բառերի անտեղի գործածությունից այն բոլոր դեպքերում, երբ հայերենում կան համապատասխան բառեր ու տերմիններ կամ այդպիսիները կարող են ստեղծվել հայոց լեզվի բառակազմության մեթոդներով, առանց աղճատելու բառի կամ տերմինի իմաստը»։ Այնուհետև, տրված են հինգ դեպքեր, երբ հնարավոր է համարվում հայերենում օգտագործել օտար գիտական անվանումներ ։ Անշուշտ, այսօր կարելի է հրահանգի այս կամ այն կետի, բերված որևէ օրինակի շուրջ վիճել, սակայն չի կարելի չնշել հրահանգի ընդհանուր ոգու, ուղղության ճշմարտությունը։

Որոշ ժամանակ անց տերմինաբանական խորհուրդը վերածվեց տերմինաբանական կոմիտեի, որն իր գործունեությունը շարունակում է նաև այսօր։

30-ական թվականներին արդեն ստեղծվել էին բնական գիտությունների գծով բավական թվով դպրոցական հայերեն դասագրքեր (թարգմանական և ինքնուրույն), հայերեն ավելի ու ավելի շատ էին հրատարակվում տեխնիկական, բժշկական և գյուղատնտեսական աշխատություններ։ Ակնառու էր այդ հրատարակությունների գիտական մակարդակի անընդհատ աճը, նորանոր անվանումների գործածությունը։ Հայերենի տերմինաշինության զարգացումը նկատելի էր նաև հասարակական-քաղաքական գրականության մեջ և մամուլում։ Թեև, պետք է ասել, որ մյուս կողմից էլ զգալի էին դառնում նաև չհիմնավորված հակումները, կապված լեզվում ազգային ձևերը օտար ձևերին ստորադասելու հին մտայնության հետ։ Ընդ որում, եվրոպական լեզուներից հայերենի մեջ թափանցող բառերը չթարգմանելու միտումով՝ այդ բառերին դարձյալ սկսեցին տալ «միջազգային» անունը։

1939 թվականի հոկտեմբերին տերմինաբանական կոմիտեն կայացրեց մի որոշում՝ «Գիտական և գիտատեխնիկական տերմինների մշակման սկզբունքները և նորմաները հայերենում» վերնագրով[15]։ Որոշման սկզբում կային այնպիսի ձևակերպումներ,

15 Ս. Ղազարյան, *Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների*, Երևան, 1945, էջ 7—11։

որոնք այն ժամանակ կարող էին օտարաբանությունների պաշտպանների կողմից մեկնաբանվել հօգուտ իրենց կարծիքների, սակայն նույն որոշման մեջ կային նաև առողջ, գիտական մի շարք սկզբունքներ. «...Կոմիտեն անհրաժեշտ է համարում,— ասված էր այնտեղ,— պայքարել այն փորձերի դեմ, որոնց նպատակն է հայերենում առկա միանգամայն ճիշտ և մատչելի տերմինները փոխարինել, այսպես կոչված, միջազգային տերմիններով, օրինակ՝ թանգարան—մուզեյ, գրադարան—բիբլիոտեկա, պարկուճ—գիլզա և այլն»։

«Միջազգային տերմինների» անունով հայերենի մեջ անհարկի օտարաբանությունները հիմնավորելու փորձերը ուժեղացան։ 1940 թվականի փետրվարի 12-ին «Խորհրդային Հայաստանը» տպագրեց «Հայոց լեզվի զարգացման հեռանկարների շուրջը» հոդվածը, Հովիկ Մելիքյան ստորագրությամբ[16]։ Հոդվածում պաշտպանվում էր կոլխոզ, կոնստիտուցիա, դելեգատ, կանդիդատ, ժուռնալ, ռայոն և այլ բառերի գործածությունը հայերենում և խստագույնս դատապարտվում նրանց թարգմանությունը։ Մերժվում էին հայերեն դասախոսություն, դասախոս, մտավորական և ուրիշ այսպիսի բառեր, պահանջ էր դրվում գործածել միայն լեկցիա, լեկտոր, ինտելիգենտ և այլն։ Սա, ինչպես կարելի է նկատել, տերմինաբանական կոմիտեի որոշումների իսկական մերժումն էր։ Այս անառողջ միտումների աշխուժացման հետևանքը եղավ տերմինաբանական կոմիտեի մի որոշումը, որը 1940 թվականի օգոստոսի 22-ին հաստատեց Հայկական ՍԽՀ լուսժողկոմատի կոլեգիան[17]։

Ընդհանրապես ճիշտ սկսված և մեծ վերելք ապրած հայերենի տերմինաշինության գործը և տերմինաբանական կոմիտեի նախապես վերցրած գիտական, հստակ ուղղությունը որոշ չափով վնասվեց գիտականորեն չհիմնավորված պահանջների պատճառով։ Այդ պահանջները հիմնականում հանգում էին այն դրույթին, որ պետք չէ եվրոպական լեզուներով եղած գիտական անվանումները թարգմանել հայերեն կամ, համենայն դեպս, պետք է հնարավորին չափ խուսափել նման թարգմանություններից։ Այս տեսակետի ամենամեծ վնասն այն էր, որ նրանով առաջնորդվելու դեպ-

---

16 «Խորհրդային Հայաստան», 1940, № 35։

17 «Խորհրդային Հայաստան», 1940, № 200։

քում անգործության կմատնվեր հայոց լեզվի տերմինաշինական, նաև բառակերտման «մեքենան»։ Փոխառությունների օգտագործումը հայերենում, անշուշտ, եղել էր և մնալու էր լեզվին անհրաժեշտ չափով (մերժելին փոխառությունների հարցում ցուցաբերված գիտականորեն չհիմնավորվող ծայրահեղություններն են)։

Հասկանալի է, որ հայերենի բուն գոյությունը, նրա օգտագործումը, իբրև հայ ժողովրդի հաղորդակցման միջոց, պետք է մերժեր հակագիտական պահանջները։ Եվ, իրոք, շուտով հայերենի տերմինաշինությունը սկսեց վերադառնալ ճիշտ ուղղությանը։ Դրան նպաստեց նաև սովետական լեզվաբանության մեջ տերմինաբանության տեսության զարգացումը։ Այս բնագավառում կարևոր նշանաձող էր 1959 թվականին Մոսկվայում գիտությունների ակադեմիայի կողմից կազմակերպված համամիութենական խորհրդակցությունը՝ նվիրված տերմինաբանության հարցերին։ Խորհրդակցությանը մասնակցում էին Միության 60 լեզուների մասնագետներ[18]։ Գլխավոր զեկուցումը կազմված էր տարբեր ազգության պատկանող վեց գիտնականների՝ Տ. Բերտագաևի, Յու. Դեշերիևի, Ի. Իսաևի, Վ. Լիտկինի, Ս. Հայդակովի, Ա. Շահիրովի կողմից։ Զեկուցման մեջ հեղինակները խոսելով տարբեր լեզուների տերմինաբանական պաշարի հարստացման մասին՝ հատկապես ընդգծում էին, որ ճիշտ չէ այդ բնագավառում բոլոր լեզուների նկատմամբ միևնույն մոտեցումն ունենալը, որ շատ կարևոր է ամեն լեզվի յուրահատկությունը հաշվի առնելը։ Զեկուցողները տարբերակում էին նորագիր և հնագիր լեզուները, առաջ էին քաշում վերջիններիս պատմական ավանդները հաշվի առնելու և եղած բառապաշարը, բառակերտման ունակությունները տերմինաշինության գործում լիովին օգտագործելու կարևորությունը։ Մասնավորապես հայերենի ու վրացերենի մասին զեկուցման մեջ ասված էր. «Բառաստեղծական հարուստ հնարավորությունները, պատմական ավանդները, որոնց արմատները հասնում են մինչև խոր հնություն, հնարավորություն են տալիս այդ երկու լեզուներին նոր անհրաժեշտ բառերն ու տերմինները ստեղծել իրենց վաղեմի բառապաշարի հիմքի վրա»[19]։

---

[18] Խորհրդակցության նյութերը տե՛ս „Вопросы терминологии“ (Материалы Всесоюзного терминологического совещания), Москва, АН СССР, 1961.

[19] Տե՛ս նշված գիրքը, էջ 15—16։

Տերմինաշինության գործում լեզուների ներքին հնարավորությունները մինչև վերջ օգտագործելու մասին իրենց ելույթներում խոսեցին շատերը, հիշենք երկուսին։ Գ. Տուրչանինովը (Լենինգրադ) առաջարկեց այսպիսի բանաձև. «Եթե հնարավորություն կա սեփական լեզվի միջոցներով ստեղծել հասկանալի և մատչելի տերմին, ապա ավելի լավ է խուսափել փոխառությունից»[20]։ Դ. Մակարաձեն (Թբիլիսի) նույն սկզբունքը ձևակերպեց այսպես. «Միայն այն դեպքում, երբ տվյալ լեզվի բոլոր հնարավորությունները սպառված են, իսկ նոր տերմինը այնուամենայնիվ գտնված չէ, կարելի է դիմել բառի փոխառության»[21]։

Այս սկզբունքը ընդհանուր հավանություն գտավ խորհրդակցությունում։

* *
*

Ուշադրություն է գրավում Հայրենական պատերազմի տարիներին հայկական լրագրերի ու ամսագրերի էջերում կատարված տերմինաշինական աշխատանքը։ Պատերազմի շրջանում հայ մամուլը պահանջ էր զգում մի շարք ռազմական ըմբռնումներ և հասկացություններ արտահայտել հայերեն։ Ռուսերենում գործածվող բազմաթիվ ռազմական անվանումներ ուղղակի անհնար էր հայոց լեզվի մեջ օգտագործել։ Եվ ահա հայ լրագրողները լեզվաբանների օգնությամբ դիմում են հայերենի տերմինակերտման ավանդական միջոցներին։ Պատերազմական այն տարիներին հայ մամուլում շրջանառության մեջ դրվեցին հայերեն արդեն եղած մի շարք ռազմական անվանումներ, հայերենի միջոցներով ստեղծվեցին նորերը, հայացվեցին օտար բառեր։ 1943 թվականին տերմինաբանական կոմիտեն հաստատեց «Սովետական Հայաստան» թերթում հաճախակի գործածվող մի շարք անվանումներ՝ այդ թերթի խմբագրության ներկայացրած նախագծով։ Գրեթե բոլոր այդ անվանումները կազմվել կամ իբրև տերմին գործածության մեջ էին մտել հայերենի տերմինաշինության ավանդական կանոններով և մեծ մասամբ հաջողված էին։ Ռազմական անվանումների ցանկում, օրինակ, կարդում ենք[22] ականանետ (миномет), ականածիգ

[20] Նշված գիրքը, էջ 153։

[21] Նշված գիրքը, էջ 161։

[22] Տե՛ս Ս. Ղազարյանի նշված գիրքը, էջ 53—55։ Ուշագրավ է գրքի հեղինակի բացատրությունը այդ տերմինների վերաբերյալ (էջ 43—53)։

(минометчик), ականորս (тральщик), ավտոմատավոր (автоматчик), գետանց (переправа), դիպում (попадание), դիտանցք (люк), զորաթիկունք (войсковой тыл), զրահահար (бронебойный, бронебойщик), ինքնագնաց (самоходный), կրակահերթ (очередь), տորպեդակիր (торпедоносец), փակոցային կրակ (заградительный огонь) և այլն։

Անվանումների մի մասը ստեղծվել է բառի իմաստը մասնավորելու փորձված եղանակով։ Օրինակ, ինքնագնաց շատ բան կարող է լինել, բայց «Սովետական Հայաստանը» այդ բառը բազմիցս գործածել է ռուսերեն самоходный (ая, ое) ածականի փոխարեն (самаходное орудие, самоходная пушка և այլն), և բառը ռազմական անվանման արժեք է ստացել։ Ականանետ և ականաձիգ անվանումներից առաջինը բազմիցս գործածվել է ական նետող զենքի, մյուսը՝ զենքը սպասարկող անձի իմաստով (վերջին դեպքում դեր է խաղացել ձիգ բաղադրիչը, որ հրաձիգ, հրձիգ բառերում անձի իմաստ է ձևավորում)։ Հիշյալ անվանումներից նորակազմ են կրակահերթ, ավտոմատավոր և տորպեդակիր բառերը. ընդ որում, առաջինը կազմվել է միայն հայերենի միջոցներով (իբրև իսկական բարդություն), մյուս երկուսը հայերեն և օտար բաղադրիչների միացմամբ (մեկը օտար փոխառյալ բառին հայերեն ածանցի կցումով, մյուսը՝ օտար։ և հայերեն բառերի միացմամբ)։

Տերմինաբանական կոմիտեի միևնույն որոշմամբ հաստատվել են նաև այլ բնագավառների մի շարք անվանումներ, որոնց մեջ, սակայն, կան տերմինաշինական ճիշտ գծից կատարված որոշ շեղումներ։ Օրինակ, հաստատված է իբրև հայերեն դեմոնստրացիա օտար բառը՝ նույն իմաստն ունեցող հայերեն ցույց և ցուցադրում բառերի հետ միասին։

Հաստատված անվանումների շարքում գտնում ենք նաև այլազգի բառերի հայացված մի քանի ձևեր, երբ օտար բառին հայկական բայածանց կցելով՝ ստեղծել են փոխառյալ բայեր, ինչպես՝ էվակուացնել, կոմբինացնել, մոբիլիզացնել և այլն։ Փոխառությունների այս եղանակը ժամանակին լեզվաբանների կողմից դիտվեց իբրև նորաբանություն[23], թեև դեռևս Վ. Արծրունու բժշկական բառարանում հանդիպում ենք նմանօրինակ բազմաթիվ կազմությունների։

---

23 Տե՛ս, օրինակ, Գ. Սևակ, Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը, Երևան, 1946, էջ 18—19, նաև՝ Ս. Ղազարյան, նշված գիրքը, էջ 49—50 և այլուր։

1945 թվականի հուլիսի 7-ին տերմինաբանական կոմիտեն հաստատեց դիվանագիտական անվանումների մի մեծ շարք, որ ներկայացրել էր ՀԽՍՀ արտգործժողկոմը։ Այդ բառացանկում կան հայերեն դիվանագիտական ավանդական շատ անվանումներ՝ ինչպես՝ գործակալ, հյուպատոս, ծածկագիր, դեսպան *և այլն, նույնիսկ նախկինում շատ քիչ գործածված այնպիսի անվանումներ, ինչպես* հայրենավտարում (экспатриация), փորձագետ (эксперт) *և այլն։ Ուշադրություն է գրավում նորակազմ* դեսպանորդ (посланник) *հաջող անվանումը։ Այստեղ ես գտնում ենք մի քանի անհարկի օտարաբանություններ (օրինակ,* կոնտրիբուցիա, ուլտիմատում *և այլն), որոնց հայերեն թարգմանությունները նախքան այդ եղել են* (ռազմատուգանք, վերջնագիր)։

* *
*

Նախապատերազմյան տարիների առաջին տասնամյակում ինչպես հասարակական, այնպես էլ բնական ու տեխնիկական գիտությունների գծով տերմինաշինության բնագավառում բավական գործ կատարվեց։ Հրատարակվեցին տարբեր գիտությունների նորագույն նվաճումներին վերաբերող աշխատություններ, ինչպես և դասագրքեր, որոնց մեջ օգտագործվեցին մի շարք նոր հայերեն գիտական անվանումներ։ Տպագրվեցին մի քանի բառարաններ։

Այս տարիներին, սակայն, բեղմնավոր տերմինաշինական աշխատանքի հետ հրապարակ հանվեցին նաև որոշ անճիշտ տեսակետներ։ Երբեմն, օրինակ, հարց էր դրվում հայերենում ոչ միայն օգտագործել օտար անհարկի տերմինները, այլև հրաժարվել նրանց հնարավոր հայկական ձևավորումից (գրել, օրինակ, ոչ թե թեորեմ, աքսյոմ, ֆրազ, բրիգադ, տոնն *և այլն, այլ՝* թեորեմա, աքսյոմա, ֆրազա, բրիգադա), *հրաժարվել հատուկ անունների հայկական ավանդական գրությունից և արտասանությունից (գրել, օրինակ, ոչ թե* Ճապոնիա, *այլ* Յապոնիա, *ոչ թե* Ճավա, *այլ՝* Յավա *և այլն)։*

Այս պահանջների մի մասը որոշ դեպքերում ընդունվեց (օրինակ, թեորեմա, բրիգադա *և ա-ով նման ձևերը), բայց ընդհանուր առմամբ լեզվի ներքին օրինաչափություններին հակառակ առաջարկները մերժվում էին հենց լեզվի կողմից, և հայերենի բառաշինության ճիշտ առաջընթացը շարունակվում էր։*

Վերջին քսան-քսանհինգ տարվա ընթացքում շարունակվում էին ստեղծվել գիտական անվանումների ճյուղային նոր բառարաններ: Լույս տեսան նաև արժեքավոր ընդհանուր բնույթի բառարաններ: Կարելի է հիշել՝ բուսաբանական[24], մարզական[25], ավտոտրակտորային[26], պոլիգրաֆիական և հրատարակչական[27], գրադարանային[28], պոլիտեխնիկական[29], լեզվաբանական[30] բառարանները: Բժշկական տերմինաբանությունը հարստացավ Մ. Աբեղյանի և Լ. Հովհաննիսյանի գլխավորությամբ կազմված բառարանի հրատարակությամբ և Վ. Արծրունու բառարանի բավականին լրացված վերահրատարակությամբ: Ռուսերենից թարգմանվեցին երաժշտական[31], գրականագիտական[32], տեխնիկական[33] և այլ տերմինների բառարաններ, հիմնականում դպրոցականների համար:

Ընդհանուր բնույթի բառարաններից, իհարկե, ամենակարևորը Ս. Մալխասյանցի քառահատոր «Հայերեն բացատրական բառարանն» էր, որ լույս տեսավ 1944—1945 թվականներին և շատ մեծ ավանդ եղավ հայ բառարանագրության ասպարեզում:

Նախքան այդ լույս էին տեսել նաև մի շարք ռուս-հայերեն ընդհանուր բառարաններ[34]: Հ. Դաղբաշյանի հրաշալի բառարան-

24 «Ռուս-հայերեն բուսաբանական տերմինների համառոտ բառարան», կազմեցին Ա. Արարատյան, Թ. Ծատուրյան, Թ. Քոչարյան, Երևան, 1941: Թ. Ծատուրյան. Բույսերի անունների լատիներեն-հայերեն-ռուսերեն բառարան, Երևան, 1962:

25 Ա. Հակոբյան Ռուս-հայերեն սպորտային համառոտ բառարան, Երևան, 1956:

26 Դ. Անտոնյան Ռուս-հայերեն ավտոտրակտորային տերմինների բառարան, Երևան, 1945:

27 Գ. Պարիս, Պոլիգրաֆիական և հրատարակչական տերմինների ռուս-հայերեն համառոտ բացատրական բառարան, Երևան, 1953:

28 Ա. Բարայան, Գրադարանային տերմինների բառարան, Երևան, 1950:

29 «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան», Երևան, 1957:

30 Մ. Հարությունյան, Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, Երևան, 1963:

31 Կ. Սեժենսկի, Երաժշտական տերմինների համառոտ բառարան, Երևան, 1953:

32 Լ. Տիմոֆեև և Ն. Վենգերով, Գրականագիտական տերմինների համառոտ բառարան, Երևան, 1957:

33 Ե. Պեշկով և Ն. Ցադեև, Դպրոցականի տեխնիկական բառարան, Երևան, 1961:

34 Ա. Սուքիասյանի հաշվումներով խորհրդային ժամանակաշրջանում լույս տեսած ռուս-հայերեն բոլոր բառարանները շուրջ 40 են, իսկ նախախորհրդային ողջ ժամանակաշրջանում՝ դրանից երկու անգամ պակաս (Տե՛ս Ա. Սուքիասյան,

ներից հետո այդ ուղղությամբ առաջին լուրջ գործը 1933—1935 թվականներին հրատարակված երկհատոր «Ռուս-հայերեն բառարանն»[35] էր, որի մեջ նորն ու արժեքավորը հայերեն գիտական անվանումների համեմատաբար ավելի մեծ քանակն էր, թեև շատ էին նաև չթարգմանված անվանումները (այսինքն՝ միևնույն բառերը իրար դիմաց գրված ռուսերեն և հայերեն տառերով)։ Դրանից հետո, 1941 թ. հրատարակված ռուս-հայերեն բառարանը, որ հատկացված էր դպրոցականների օգտագործմանը, շատ էր ծանրաբեռնված անհարկի օտար անվանումներով։ Համեմատաբար ավելի հաջող էր 1945 թ. լույս ընծայված «Ռուս-հայերեն բառարանը»։

Նտպատերազմյան տարիներին լույս ընծայված երկլեզվյան բառարաններից կարելի է հիշել 1947 թ. «Հայ-ռուսերեն բառարանը»[36], որը վերահրատարակվեց 1960-ին, ինչպես նաև 1958 թ. հրատարակված «Ռուս-հայերեն բառարանը»[37] (դպրոցականների համար)։ Ավելի կարևոր էր 1954—1958 թվականների ընթացքում հրատարակված քառահատոր «Ռուս-հայերեն բառարանը», որը թեև քննադատվեց անհարկի օտարաբանությունների և այլ թերությունների համար, բայց ամեն դեպքում նկատելի օգնություն էր հայ մտավորականությանը և սովորողներին, մանավանդ որ այնտեղ տեղ էին գտել գիտատեխնիկական բավականին շատ անվանումներ։

* *
*

Բառարանագրության զարգացմանը զուգահեռ վերջին երկու տասնամյակներում հայերենի տերմինաշինությունը նշանակալից առաջընթաց ապրեց նաև պարբերական մամուլի էջերում։

Բնական և կիրառական գիտությունների տարբեր ճյուղերում օրավուր կատարվող առաջընթացը, գիտության ու տեխնիկայի թափանցումը մարդկանց առօրյա կյանքի և կենցաղի մեջ նույնիսկ

Համառոտ ակնարկ սովետական շրջանի հայ-ռուսերեն ընդհանուր բառարանագրության, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1963, № 12։

35 «Ռուս-հայերեն նոր բառարան» (2 հատորով)։ Թ. Ավդալբեգյան, Պ. Սոտնիկյան, Ե. Տեր-Մինասյան, Վ. Փոթեյան։

36 Ա. Ղարիբյան, Ե. Տեր-Մինասյան, Մ. Գևորգյան, Հայ-ռուսերեն բառարան, Երևան, 1947։

37 Ռ. Մելքումյան և Տ. Կարապետյան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1958։

սովորական խոսակցության և ամենօրյա մամուլի լեզվի համար գիտական հարյուրավոր նոր անվանումների պահանջ են առաջացնում։ Հայախոս մարդը մայրենի լեզվով (գրավոր, թե բանավոր) ամեն օր պետք է տա իր կյանքի մեջ թափանցող բազմաթիվ առարկաների, երևույթների անուններ, որոնք, սակայն, նախապես ռուսերենի և եվրոպական այլ լեզուների բառերով ու միջոցներով են ստեղծված։ Спутник կամ sattelite, вертолет կամ helicoopter, телевизор, газопровод, холодильник, тепловоз, электричка, cosmetic կամ косметика, космонавт, просмотр, кризис, мирное сосуществование, монтаж, старт, мотор, полотер, пылесос և այլ տասնյակ ու հարյուրավոր բառեր են ներկայանում հայ ժողովրդին։ Ի՞նչ անել, վերցնե՞լ բոլոր օտար անվանումները և գործածե՞լ հայերենում, թարգմանե՞լ անխտիր ամեն ինչ հայերեն, թե՞ այդ բառերի ինչ-որ մասը թարգմանել, ինչ-որ մասը վերցնել։ Բայց ո՞ր մասը կամ վերցնելու դեպքում ի՞նչ ձևով օգտագործել դրանք հայերենի մեջ՝ նույնությամբ, թե՞ հայացված հնարավորին չափ։

Սրանք հարցեր են, որ ամեն օր, ամեն ժամ ծառանում են ոչ միայն գիտնականների, թարգմանիչների, ամենատարբեր մասնագիտության տեր մարդկանց առջև, այլև ամենից առաջ և ամենից հրատապ կարգով՝ հայ պարբերական մամուլի առօրյայում։ Բարեբախտաբար մամուլի շատ աշխատողներ ավելի ու ավելի ճիշտ են լուծում լեզվաշինական այդ հրատապ խնդիրները։ Սովետահայ մամուլի մեջ կատարվող տերմինաշինական աշխատանքի քննությունը հատկանշական պատկեր է բացում հայերեն գիտական անվանումների կիրառման և ստեղծման ամբողջ բնագավառի վերաբերմամբ։

Փորձի համար վերցնենք պատահական մի օրվա՝ մայիսի 15-ի նախասովետական (1910), սովետական շրջանի առաջին տարիների (1925) և 1965 թվականի լրագրերի համարները և ուշադրության առնենք նրանցում գործածված գիտական անվանումները։ Այդպիսի քննությունը և համեմատությունը կարող են մի մոտավոր պատկերացում տալ արևելահայ մամուլի մեջ գիտական անվանումների գործածման տարբեր տեղաշարժերի մասին, մանավանդ բացահայտել հայ տերմինաշինության զարգացման ընդհանուր հակումները։

Այդ քննությունն ու համեմատությունը ցույց են տալիս, որ երեք տարբեր ժամանակներում լույս տեսած արևելահայ թերթերի

տերմինագործածման բնագավառում կան ընդհանրություններ և տարբերություններ։ Առաջին ակնառու ընդհանրությունն այն է, որ բոլոր դեպքերում էլ գործածված են երեք տեսակ գիտական անվանումներ՝ ա) հայերեն[38] հին կամ նորակազմ (վերջիններս կազմված հայերենի միջոցներով), բ) օտար լեզուներից նույնությամբ փոխառված բառեր (որոնք հաճախ հոլովի, թվի և այլ հայերեն քերականական մասնիկներ են ունենում), գ) խառը կազմության, հայացված անվանումներ, այսինքն՝ հայերեն և օտար բառերի միացումով, օտար բառերին հայերեն ածանցների կցումով, հայերեն բառերին օտար ածանցների կցումով, օտար վերջավորությունների անկումով, օտար բառերից կազմված բարդությունների մեջ հայերենի հոդակապի գործածումով և այլ ձևերով հայացված բառեր։

Որպես նախասովետական մամուլի նմուշ վերցված «Մշակ» օրաթերթի 1910 թ. մայիսի 15-ի համարում կան հայերեն մի շարք անվանումներ, որոնք այժմ էլ օգտագործվում են։ Ինչպես, օրինակ, *բժշկական-մարմնակազմական*՝ վիրաբուժություն, մանկաբարձություն, թոքախտ, ժանտախտ, ջղեր, *այլ*՝ կանացի, աչքի, ներքին, նյարդային, միզասեռական հիվանդություններ, սրսկում, լվացում, դեղերի քսում (втирание), *իրավաբանական*՝ մահապատիժ, իրավաբան, իրավասություն, կալանավոր, ծանուցագիր, ապառիկ, կայք, *արվեստի և մշակույթի*՝ ցուցահանդես, դաշնամուր, գեղարվեստ, դերասան, լարանվագ, նկարիչ, ճարտարապետ. *բնագիտական-տեխնիկական*՝ կենդանաբանություն, գիսավոր աստղ, սրվակ, փական, շոգենավ, գնացք, կայարան, *այլ բնագավառների*՝ ձիարշավ, մարմնամարզություն, դրամատիկական ընկերություն, գրագիր, տնտեսում, տոնավաճառ, հատակագիծ, կահ-կարասի, կնիք, զեկուցագիր, հռետոր, գործակալություն, թղթակից և այլն։

«Մշակի» այդ համարի լեզվում բավական շատ են հայերեն այն անվանումները, որոնք այժմ այլևս չեն գործածվում, այսինքն՝ ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով գործածությունից դուրս են եկել։ Իմաստով անցյալի հետ կապված հայերեն որոշ անվանումներ էլ դուրս են մնացել լեզվի այսօրվա գործուն բառապաշարից հասարակարգի փոփոխման պատճառով։ Դրանցից

---

[38] Հայերեն անվանումներ կամ բառեր ասելով հիմնականում հասկանում ենք հայ մատենագրությամբ ավանդված այն բառերը, որոնք նկատելի չափով գործածվել են հայերենում և դարձել լեզվին հարազատ, ինչպես և նրանց ածանցմամբ ու բարդմամբ ստեղծված բառերը։

են՝ վանճապատական կալված, տերունական, ձեռնմխություն *(խղճի)*, հոգաբարձություն, տիրացու *և այլն: «Մշակի» այդ համարում եղած մի քանի հայերեն անվանումներ էլ այժմ փոխարինված են ուրիշ (կազմությամբ տարբեր) հայերեն բառերով, օրինակ,* պայթում *(այժմ՝* պայթյուն), վիպասանություն *(վեպի նշանակությամբ, այժմ՝* վեպ), ստորջրյա նավակ *(այժմ՝* սուզանավ), մորթու հիվանդություններ *(այժմ՝* մաշկի հիվանդություններ), այժմեություն *(ներկայումս՝* արդիականություն), սարքավորել *(կահավորելու իմաստով, այժմ՝* կահավորել, *իսկ* սարքավորել-*ը* монтаж *իմաստով է գործածվում)*, հայտագիր (смета *իմաստով այժմ՝* նախահաշիվ):

Ինչպես տեսնում ենք, բերված այս հայերեն բառերի ներկայումս չգործածվելը պատճառաբանված է:

«Մշակի» նույն համարում կան նաև խառը բնույթի (հայերեն և օտար լեզվամիջոցների միացումով կազմված) մի շարք անվանումներ, որոնք այժմ էլ գործածական են՝ արտիստական, ֆիզիկական, ֆինանսական, կուլտուրական, արիստոկրատական, սենատ *(հայացված է* ա-*ի անկումով)*, ավտոմատիկ, ֆանտաստիկ, կաուչուկե, օքսիդացրած, միստիկականություն, էլեկտրականություն, էլեկտրական, *նաև՝* պոստատուն *(որ այժմ փոխարինված է* փոստ *ձևով): Խառը բնույթի անվանումների մեջ հանդիպում են նաև այժմ չգործածվող բառեր, ինչպես՝* կերոսինային *(կերոսինային լամպ), որ այժմ* նավթի *կամ* նավթային *ձևերով է փոխարինված,* էմբլեմ, *որ ռուսերենից է առնված և հայացված՝* ա-*ի անկումով (լատինահունական ձևն էլ* ա-*ունի), իսկ այժմ փոխարինված է* խորհրդանշան *բառով և այլն:*

Թերթում էլ ավելի շատ են ամբողջովին փոխառյալ այն անվանումները, որոնք նույն ձևով այժմ էլ շարունակում են գործածվել, ինչպես՝ սեանս, պարոդիա, իմիտացիա, սյուրպրիզ, կոնֆետ, բուֆետ, բորսա, ֆաբրիկա, ասիստենտ, կլինիկա, ավտոմոբիլ, մինիստր, ֆրակցիա, կաբինետ, գերբ, գեներալ, սոցիալիստ, միտինգ, վագոն, մորֆի, քիմիա, պիես, լիմոնադ, սեմինարիա, սուբյեկտիվիստ, լիբերալ, տեխնիկ *(արդի իմաստով)*, օպերա, ալբոմ, պրոբլեմ, ֆելդշեր, խոլերա, դեպո, ֆիրմա:

Սակայն «Մշակի» համարում գործածված օտար անվանումների մեծ մասը այսօր դուրս է մնացել հայերենից, փոխարինվել հին կամ նոր հայերեն բառերով: Դրանցից են՝ պրոսպեկտ *(այժմ՝* պողոտա), օֆիցեր *(այժմ՝* սպա), բազար *(այժմ՝* շուկա),

տելեֆոն (այժմ՝ հեռախոս), գրուպպա (այժմ՝ խումբ), ամնիստիա (այժմ՝ ներում), գարանտիա (այժմ՝ երաշխիք), ֆորմուլա (այժմ՝ բանաձև), ռեցենզենտ (այժմ՝ գրախոս կամ գրախոսող), ռեպերտուար (այժմ՝ հայտագիր նաև ծրագիր, երգացանկ, նվագացանկ, խաղացանկ), յաշչիկ (այժմ՝ արկղ), մոտիվ (երաժշտական եղանակի իմաստով, այժմ՝ մեղեդի, եղանակ), սազանդար (այժմ՝ նվագածու), խոր (այժմ՝ երգչախումբ), մեդիցինա (այժմ՝ բժշկություն կամ բժշկագիտություն), պարալիչ (այժմ՝ կաթված, կաթվածահարություն նաև՝ անդամալուծություն), ֆաբրիկանտ (այժմ՝ գործարանատեր), պապիրոս (այժմ՝ գլանակ), պրիբոր (այժմ՝ սարք), սորտաման (այժմ՝ դրամապանակ) և այլն։

«Մշակի» համարում տեղ գտած մի շարք օտար անվանումներ էլ այսօր հայերենից դուրս մղվելու շրջան են ապրում, այսինքն՝ ավելի ու ավելի հաճախ մամուլում նրանց փոխարեն գործածվում են հայերեն համարժեքներ. դրանցից են՝ պորտրետ (դիմանկար), դուետ (զուգերգ), դիրիժյոր (նվագավար, երգավար), մասսաժիստ (մերսիչ, մերսող), տռումբուչկա (պահարանիկ), մարկա (փոստային, այժմ՝ նամականիշ, փոստանիշ), մարկա (գործարանային, այժմ՝ մակնիշ), բրելոկ (այժմ՝ մանրազարդ), բալ-մասկարադ (պարահանդես-դիմակահանդես կամ ուղղակի՝ դիմակահանդես), ինտենդանտական (համբարական), մարշրուտ (երթուղի) և այլն։

Եթե ամփոփենք 1910 թվականին «Մշակի» մի համարում գործածված տերմինների վերը արված համեմատությունը հայերենի տերմինագործածման արդի վիճակի հետ, ապա կտեսնենք, որ մի շարք հայկական, օտար և խառը անվանումներ ընդհանուր են 1910 թվականի և այսօրվա համար, որոշ անվանումներ էլ դուրս են ընկել հասարակարգի փոփոխման կապակցությամբ։ Սակայն ամենից ուշագրավն այն է, որ բազմաթիվ այլազգի անվանումներ այժմ փոխարինված են կամ փոխարինվում են հայկական անվանումներով։ «Մշակի» մի համարի օրինակով ներկայացված՝ նախասովետական շրջանի և ներկայիս հայ տերմինագործածման հիմնական տարբերությունը մնում է այն, որ անցյալի շատ ու շատ օտար տերմիններ այժմ փոխարինված են հայերեն բառերով։ Այս բանը մենք ստուգեցինք նաև «Մշակի», ինչպես և «Հորիզոնի» մի շարք այլ համարների լեզվի քննությամբ, և պատկերը միշտ էլ նույնն էր։

Կարևորն այս իրողության մեջ լեզվի հակումն է դեպի իր ներքին միջոցների ու հնարավորությունների բացահայտումն ու օգտագործումը։

Ուշագրավ տվյալներ են ստացվում նաև 1920-ական և 1960-ական թվականների սովետահայ մամուլի տերմինագործածման համեմատությունից: Այս դեպքում մենք հնարավորություն ենք ստանում դիտելու հայերենի տերմինաշինության զարգացումը միայն սովետական ժամանակաշրջանի ընթացքում:

Իբրև սովետահայ մամուլի սկզբնական տարիների նմուշ վերցված «Խորհրդային Հայաստան» թերթի 1925 թ. մայիսի 15-ի համարում (№ 109) նույնպես առկա են անվանումների վերոհիշյալ երեք տեսակները՝ հայկական, օտար-փոխառյալ և խառը: Սակայն այստեղ ուշադրություն է գրավում երկու հանգամանք. նախ այն, որ համեմատած անցյալի հայ լրագրերի հետ գիտական անվանումների քանակը թերթում զգալի չափով ավելացել է և ապա, որ անցյալից եկող բազմաթիվ անվանումների կողքին գործածված են նոր ժամանակների ծնունդ հանդիսացող ոչ քիչ անվանումներ: Երկու խոսք այս վերջինների մասին: Զուտ հայերեն այդ նոր անվանումների մեծ մասը նորաստեղծ բարդություններ են, կազմված իբրև նորագույն հապավումներ, ինչպես՝ կենտվինվար, լուսաշխ, ժողդատարան, կուսաշխատող, քաղգրագիտություն, քաղդաստիարակչական, քաղխմբակ, գավգործկոմ, շրջգործկոմ, գյուղխորհուրդ, ՓՕԿ, գյուղվարկային:

Հայերեն նոր անվանումների մի այլ մասը երկու բառից կազմված կապակցություններ են, ինչպես՝ խորհրդային արդարադատություն, Խորհրդային Միություն, մանկական գաղութ, արդյունաբերական հիմնարկներ, սակավունակ տնտեսություն, ուղղիչ տուն: Կան և հին բառերի իմաստի մասնավորմամբ առաջացած նոր անվանումներ, ինչպես, օրինակ, թեքում, չքավոր, ծառայող, անկուսակցական: Այս բառերը որոշակի տերմինի իմաստով են գործածված, այն է՝ չքավոր-ը իբրև 20-ական թվականների սովետական գյուղին հատուկ դասակարգ, ծառայող-ը իբրև սոցիալական դրություն նշանակող անվանում, անկուսակցական-ը իբրև կոմունիստական (և ոչ թե մի այլ) կուսակցության անդամ չհանդիսացող մարդ:

Կան նաև խառը կազմությամբ (հայ և օտար լեզվամիջոցներից, ինչպես և հայացված) նոր անվանումներ, ինչպես՝ գյուղբանկ, կոմկուս, լիկկայան, հիդրոշեն, բանկոոպ, ֆինբաժին, ապառքարտ, գավֆինբաժին, պետլուսկինո, ենթաշեֆ, հայգյուղկոոպ, առժողկոմատ, ժողկոմխորհ, կուլակային, բատրակուհի,

կոմունիստուհի, կոմերիտուհի, շեֆ բջիջ, ժողովրդական դեմոկրատիայի հանրապետություն:

Ինչ վերաբերում է նոր ժամանակների հետ կապված այն անվանումներին, որոնք ամբողջովին օտար են (նաև օտարաձև), ապա որքան էլ այդ զարմանալի թվա, նրանց քանակը բավական փոքր է: Թերթի քննվող համարում միայն մի քանի այդպիսի բառ կա՝ ագիտ-կոմպանիա, պիոներ (իհարկե, նոր, պատանի պիոներների կազմակերպության անդամի իմաստով), կոմֆրակցիա, ագիտկոմպանիա, ֆրոնտ (որևէ աշխատանքի ճակատ իմաստով, օրինակ՝ վառելափայտի ֆրոնտ), բոլշևիզացիա, միլիցիա (դարձյալ նոր իմաստով), տրյուկային (կինո) և այլն:

Ինչ խոսք, ավելի շատ են նախկինից եկող տարբեր բնույթի անվանումները[39]: Այս խմբի հայերեն անվանումներից են (ընդհանուր հասարակագիտական)՝ հեղափոխություն, հանրապետություն, կուսակցություն, պատգամավորություն, գործակալություն, արհմիություն, վիճակագրական, բանվոր, երաշխիք, չափանիշ, ճգնաժամ, կանոնադրություն, վիճաբանություններ (прения իմաստով), համագումար և այլն: Ընդհանրապես ակնառու է օտար բառերը թարգմանելու որոշակի ձգտումը, ընդ որում, օգտագործված են ամենաբազմազան աղբյուրներ՝ արևմտահայ և արևելահայ նախկին մամուլն ու գրականությունը, բառարանները և այլն: Նկատվում է նաև թերթի լեզվի նկատմամբ որոշ կարգապահության պահպանում:

Թերթում բավական շատ են անցյալից եկող դրամա-տնտեսագիտական հայերեն անվանումները, ինչպես՝ տուրք, հարկ, վարկ, կոպար, տուգանք, գանձում, պետական եկամուտ, ընթացիկ հաշիվ, դրամարկղ, հաշվապահ, տնտեսություն (экономика իմաստով), ռոճիկ (աշխատավարձի իմաստով), օրավարձ, ապառիկ, պարտատոմս, արժեթուղթ, եկամտային, միանվագ, ելմուտ, վիճակախաղ, արտադրական ուժեր, սպառում, մուրհակային գործառություններ, միջնորդային գործառություններ, փոխառություն,

---

39 Պետք է ասել, որ անցյալից եկող և նորամուտ ինչպես հայերեն, այնպես էլ օտար անվանումների տարբերումը որոշ դեպքերում կարող է ճիշտ չլինել. երբեմն շատ դժվար է որոշել անվանման գործածության սկիզբը: Օրինակ, «Խորհրդային Հայաստանի» ներկա համարում կա արդյունաբերական հիմնարկ անվանումը, մենք դա ենթադրաբար դրել ենք անցյալից եկող անվանումների մեջ, սակայն դրա համար այնպիսի լուրջ հիմնավորում չունենք, ինչպես, ասենք, նույն համարում գործածված տուրք, անդրի, համերգ, ապառիկ և ուրիշ անվանումների համար, որոնք անցյալից բազմիցս վկայված են:

փոխատվություն, գույք, ընթացիկ ծախսեր, բողոքարկված մուրհակ, հաշվեկշիռ, դրամագլուխ, ավանդներ, անուրդ. *իրավաբանական-դիվանագիտական, մշակույթի և կրթության բնագավառի անվանումներ՝* թանգարան, հավաքածու, անդրի, պատկեր *(գեղարվեստական)*, պատկերասրահ, համերգ, համալսարան, դասախոսություն. *գիտության, տեխնիկայի և երթևեկության բնագավառից.* արդյունաբերական հիմնարկ, մետաղարդյունաբերություն *(մետալուրգիա իմաստով)*, նավատորմ *(նաև՝* նավատորմիղ), խճուղի, կայարան *(երկաթուղային)* երկաթուղագիծ, երկաթուղային, փոխադրական միջոցներ, լողագնացություն *(նավարկության իմաստով)*, օդերևութաբանական, ջերմություն, ճնշում *(օդի)*, առավելագույն, նվազագույն *(ջերմության)*, մթնոլորտային տեղումներ, ամպամածություն. *գյուղատնտեսության վերաբերող՝* վարելահող, բամբակի ցանքսի տարածություն, էտոց, գյուղատնտեսական մշակույթներ, ծառատունկ, անասնաբուծություն *(նաև՝* անասնապահություն), խոզաբուծարան, աշնանացան, ծառապտուղ, բանջարանոց, շարքացան. *այլ կարգի անվանումներ՝* շուկա, գորգ, պահարան, թաղիք, երաշխիք, լիազոր, հրահանգիչ, կառավարիչ, թղթակից, նիստ, հիմնարկ *(նաև՝* հիմնարկություն), մանկատուն, կարգապահություն, վերարկու:

Ինչպես կարելի է տեսնել, բերված անվանումների մեջ կան այնպիսիները, որ կիրառություն են գտել լեզվի մաքրության, հայերենի տերմինաբանության նկատմամբ եղած հոգատարության պայմաններում: Առաջներում արևելահայ մամուլում հաճախ չէ, որ մաքսիմում*-ի փոխարեն գրում էին* առավելագույն, մինիմում*-ի փոխարեն՝* նվազագույն *և կամ* բյուստ*-ի փոխարեն՝* անդրի, կոլեկցիա*-յի փոխարեն՝* հավաքածու, լեկցիայի *փոխարեն* դասախոսություն *և այլն: Հասկանալի է, որ «Խորհրդային Հայաստանի» մեջ գործածված հիշյալ հայերեն բառերի կողքին արդեն տեղ չէին կարող ունենալ՝* յաշչիկ, գրուպպա, մեդիցինա *և նման աղաղակող օտարաբանություններ, որոնք գործածական էին նախկինում:*

«Խորհրդային Հայաստանի» այս համարում բավական շատ են նաև նախորդ տարիներից եկող տարբեր բնույթի օտար անվանումները, ինչպես՝ պացիֆիզմ, միլիտարիզմ, կապիտալիզմ, ռեվանշ, դեկլարացիա, ֆաբրիկա, ռեսուրս, սեզոն, վագոն, ֆոնդ *(թանգարանային)*, ֆոնդ *(հիմնարկների)*, էքսկուրսիա, դեկրետ, սեկցիա, շեֆ, ստաժ, կոոպերացիա, կոնֆլիկտ, կոմպանիա, պրակտիկա, օբյեկտիվ, սուբյեկտիվ, պլենում, օպոզիցիա, բլոկ, օպոր-

տունիզմ, տակտիկա, ստրատեգիա, դեմոկրատ, ֆրակցիա, բյուլետեն, ինտերնացիոնալ, պարտիզան, ֆեդերացիա, մոնարխիա (*թեև կա նաև՝* միապետություն), բալետ, բալետմեյստեր, ռեժիսյոր, սիմվոլ, մունդիր, սիտուացիա, պլյուս, պրիստավ, գլավնի, բարելյեֆ, կոեֆիցիենտ, ռեալիզացիա, սիստեմատիզացիա, վակխանալիա, լիկվիդացիա, ռեակցիա (*հետադիմության իմաստով*), դեսյատին, կոմիսիա, գրաֆ, բլուզ:

Թերթի համարում ավելի քիչ են անցյալից եկած խառը բնույթի անվանումները, դրանք գլխավորապես հայերենի միջոցներով ածանցվածներն են, ինչպես՝ կապիտալիստական, բանդիտական, սոցիալիստական, ակտիվություն *և այլն: Մի քանի դեպքում էլ օտար բառերը գործածվում են հայերենի հնչյունական առանձնահատկությանը առավել հարմար ձևերով, ինչպես՝* նորմ (*և ոչ թե* նորմա), կալբաս (*և ոչ թե* կալբասա), *այլև* կոնֆերանս, բյուջե (*թեև այս վերջինների զուգահեռ* կոնֆերենցիա, բյուջետ *ձևերը նույնպես գործածված են*):

Վերը բերված օտար բառերի գործածությունը նախասովետական մամուլում, ինչպես և գրքերի մեջ սովորական էր (ավելորդ չէ նշել, որ թվարկված այդ բառերի մեջ կան 1910 թվականի «Մշակի» վերոհիշյալ համարում օգտագործված մի շարք օտարաբանություններ, ինչպես՝ շեֆ, փաբրիկա, վագոն, ֆրակցիա, կոմպանիա, ռեժիսյոր *և այլն): Սակայն նկատելի է նաև, որ անցյալում հայերենի մեջ թափանցած բազմաթիվ նորագույն փոխառություններից «Խորհրդային Հայաստանում» ավելի շատ են տեղ գտել նոր կարգերի հետ կապված անվանումները, որոնք ինչ-որ չափով իրենց իմաստով էլ նորոգված են (ինչպես՝* կոոպերացիա, պրակտիկա, պլենում, ֆրակցիա *և այլն): Նախասովետական շրջանում գործածված մի քանի օտար անվանումներ էլ այստեղ փոխարինված են ուրիշ օտար բառերով (ինչպես* կինեմատոգրաֆ-*ը* կինո-*յով): Ուշադրություն է գրավում նաև այն, որ եթե «Մշակի» համարում* փաբրիկա *բառի հետ չենք գտնում* գործարան-*ի օգտագործումը, ապա այստեղ արդեն կա նաև* գործարան-*ը:*

Այժմ մի երկու համեմատություն էլ անենք «Խորհրդային Հայաստանի» 1925 թ. այս համարի մեջ գործածված անվանումների և հայերենի ներկայիս տերմինաբանության միջև: Նախ նկատվում է, որ 20-ական թվականների համար բնորոշ մի շարք նորաստեղծ հայերեն անվանումներ ներկայումս գործածական չեն, դրանցից են՝ լուսաշխ, կենտվիճվար, գյուղվարկային *և այլն: 20-ական*

թվականներին բնորոշ մի շարք երևույթների, հիմնարկների, ըմբռնումների վերացման հետ՝ նրանց անվանումներն էլ դուրս են մնացել լեզվի գործուն բառապաշարից: Այդ կարգի են նաև խաղկազմության անվանումներից լիկկայան, ճեղկոմ, բանկոոպ, չեֆբչիչ, ապառքարտ, գավֆինբաժին, բատրակուհի և այլն:

«Խորհրդային Հայաստանի» 1925 թ. հիշյալ համարում գործածված նախասովետական շրջանից եկող անվանումների համեմատումը այսօրվա տերմինագործածման հետ հետևյալ պատկերն է տալիս: Նախ՝ այդ խմբի անվանումներից մի քանիսը հանվել էին գործածությունից 1940 թ. որոշմամբ: Այնուհետև, ռոճիկ բառը 1925 թ. լրագրի քննված համարում ունի աշխատավարձ-ի նշանակություն, այժմ այդ իմաստով այն չի գործածվում, փոխարինվել է աշխատավարձ բառով, այսինքն՝ գտնվել է երևույթին ավելի համապատասխանող անվանում: Կան անվանումների այդպիսի ճշտման նաև այլ փաստեր, ինչպես, օրինակ, 1925 թ. թերթի համարում գործածված լողագնացություն-ը (նավերի) փոխարինվել է նավարկություն ավելի ճշգրիտ անվանմամբ, ծառապտուղ-ի փոխարեն ասվում է ուղղակի՝ պտուղ. արդյունաբերական հիմնարկություն-ը դարձել է արդյունաբերական ձեռնարկություն, ցանքսի տարածություն-ը՝ ցանքատարածություն և այլն:

Մի շարք այլ դեպքերում դիտվում է հայերեն գիտական անվանումների փոխարինում օտար բառերով, օրինակ, տնտեսություն բառը, որ թերթում օգտագործվում է ЭКОНОМИКА իմաստով, այժմ այդ իմաստով չի գործածվում, նրան փոխարինել է հիշյալ օտար բառը, հայերեն տառադարձված: Այնուհետև, գյուղատնտեսական մշակույթներ կապակցության փոխարեն այժմ գործածվում է գյուղատնտեսական կուլտուրաներ, մետաղարդյունաբերություն-ը փոխարինված է մետալուրգիա-ով: Այսպիսի փոխարինումները շատ քիչ են և ըստ երևույթին լուրջ արդարացում չունեն:

Համեմատությունը ցույց է տալիս, որ շատ ավելի մեծ են և լուրջ այն փոփոխությունները, որոնք տեղ են գտել նախասովետական շրջանից 20-ական թվականների հայերենին անցած օտար անվանումների մեջ: Նախ՝ 1925 թ. թերթի այդ համարում տեղ գտած այն օտար անվանումները, որոնք նախասովետական ժամանակների ու կարգերի արտահայտությունն են (ինչպես՝ պրիստավ, գլավնի, դեսյատին) հասկանալի պատճառով դուրս են մնացել այսօրվա հայերենի գործուն բառապաշարից: Ավելի շատ են այն օտար անվանումները, որոնք իմաստի տեսակետից մնացել են

արգիական, բայց փոխարինված են հին ու նոր հայերեն բառերով կամ աստիճանաբար փոխարինվում են: Դրանցից են, օրինակ սիտուացիա (այժմ՝ իրադրություն), ռեալիզացիա (այժմ՝ իրացում, իրացնել), կոմիսիա (այժմ՝ հանձնաժողով), մունդիր (այժմ նաև՝ համազգեստ), սիստեմատիզացիա (այժմ՝ դասակարգում), գրաֆ (այժմ կոմս), սիմվոլ (այժմ նաև՝ խորհրդանիշ), բարելյեֆ (այժմ՝ խորաքանդակ), լիկվիդացիա (այժմ՝ վերացում), էքսկուրսիա (արշավ, արշավախումբ), պրակտիկա (այժմ նաև՝ գործնական աշխատանք), օպպոզիցիա (այժմ երբեմն նաև՝ ընդդիմադիր ուժ կամ ուժեր), ռեակցիա (այժմ նաև՝ հետադիմություն, հետադիմական ուժեր) և այլն: Ինչպես դժվար չէ նկատել, այս դեպքում ևս ներկայի համեմատ 1925 թ. «Խորհրդային Հայաստանի» համարի մեջ գործածված բոլոր տեսակի անվանումներից ամենամեծ տեղաշարժը կատարվել է փոխառյալ անվանումների մեջ՝ և այն էլ դրանք աստիճանաբար հայկական անվանումներով փոխարինելու ուղղությամբ:

Նշենք նաև, որ թերթի համարում եղած հայացված բառերից այնպիսին, ինչպես կալբաս-ն է, այժմ գրավոր խոսքի մեջ երբեք չի հանդիպում (գործածվում է երշիկ), թեև նույն ձևը այժմ ավելի հաճախ փոխարինված է լինում հայերենին անսովոր ա-ով վերջացող տարբերակով, բայց և հայացված ձևն էլ կիրառվում է (օրինակ, «Լենինյան ուղիով» ամսագրում):

Երկու խոսք էլ ասենք «Խորհրդային Հայաստանի» հիշյալ համարում տեղ գտած զուգահեռ անվանումների մասին: Ինչպես նշել ենք, դրանցից են հայկական՝ նախատորմ և նախատորմիղ, անասնապահություն և անասնաբուծություն, հիմնարկ և հիմնարկություն: Պետք է ասել, որ այս զուգահեռականությունը մինչև այժմ էլ պահպանվել է, և միայն որոշ դեպքերում իմաստային երանգ է դրվում դրանց միջև (օրինակ՝ անասնապահության և անասնաբուծության միջև): Թերթում կան նաև այսպիսի զուգահեռություններ՝ կոնֆերանս-կոնֆերենցիա, բյուջե-բյուջետ, միապետական-մոնարխիստական, փույֆ-ինվենտար: Այժմ որոշակիորեն հաղթել են այս զուգահեռ անվանումներից առաջինները: Ինչ վերաբերում է գործարան և ֆաբրիկա բառերին, ապա ռուսերեն завод և фабрика զուգահեռներ չեն, յուրաքանչյուրն իր հատուկ կիրառությունն ունի, անցնելով հայերենի մեջ նրանք իրենց բառային իմաստով փաստորեն նույնանիշների արժեք են ստանում, իսկ նրանց կիրառման տարբերակումը ամբողջովին կախված է

մնում ռուսերենում ըստ ավանդույթի գոյացած կիրառական տարբերակումից։ Մի ժամանակ հաղթահարվեց այս անիմաստ զուգահեռականությունը, և բոլոր դեպքերում գործածվում էր միայն գործարան-ը, իսկ այժմ նորից անտեղի վերականգնվել է ֆաբրիկա-ն։

Որպես ժամանակակից հայ մամուլի տերմինագործածման օրինակ մենք վերցրել ենք 1965 թ. մայիսի 15-ի «Սովետական Հայաստան», «Երեկոյան Երևան» և «Ավանգարդ» թերթերի համարներում գործածված անվանումները։

Ամենից ավելի աչքի է ընկնում երեք թերթերի այս համարներում գիտության, տեխնիկայի, գյուղատնտեսության և մշակույթի ամենատարբեր բնագավառներին վերաբերող անվանումների ընդհանուր առատությունը, որ չի եղել նախասովետական, ինչպես և 1920-ական, 30-ական թվականների հայոց մամուլում։ Մի կողմից նկատելի է, որ գիտության և տեխնիկայի հարցերին ավելի շատ տեղ է տրվում մամուլում, իսկ մյուս կողմից ակնառու է այդ կարգի հոդվածների ավելի մասնագիտացված բնույթը։

Հետաքրքրական է, որ տարբեր բնագավառների վերաբերող գիտական անվանումների մի զգալի մասը նոր չէ, սակայն նորություն է նրանց մի մասի օգտագործումը հանրային ընթերցման ենթակա օրաթերթերում։ Եվ առհասարակ մամուլի լեզուն ավելի հագեցված է տարբեր գիտական անվանումներով, որոնք համեմատաբար ավելի մեծ տոկոս են կազմում լրագրերի ընդհանուր բառապաշարի մեջ։

Երեք լրագրերի 1965 թ. վերոհիշյալ համարներում քանակով ամենից շատ են նախորդ տարիներից եկող այնպիսի անվանումներ, որոնք ընդհանրապես շատ սովորական են հայ մամուլի լեզվում։ Պատկերացում տալու համար բերենք դրանցից մի քանիսը. արդյունաբերություն, գյուղատնտեսություն, արդիականություն, բանակռիվ, պայմանագիր, զինադադար, չեզոքություն, ինքնաթիռ, գնդակոծել, ապրանքափոխանակություն, ապրանքաշրջանառություն, ունկնդիր, դեսպան, դիվանագիտական հարաբերություններ, ինքնավարություն, նվագախումբ, մեղեդի, ջութակ, թավջութակ, դաշնամուր, տոնահանդես և շատ ուրիշներ, որոնց բոլորի թվարկումը ավելորդ է։

Թերթերի քննվող համարներում ուշադրության են գրավում այն հայկական անվանումները, որոնք դեռևս մի քանի տարի առաջ չէին հանդիպում սովետական հայ մամուլում կամ սակավ էին հանդիպում 1940 թվականի որոշումից հետո։ Երբ թերթում ենք

40-ական, ինչպես և 50-ական թվականների հայերեն լրագրերը, հաճախակի հանդիպում ենք այնպիսի բառերի, ինչպես՝ ժուռնալ, իդեոլոգիա, ռայոն, ֆոտո, մանյովրներ, կարիկատուրիստ, կոլխոզ, կոլխոզային, կոլխոզնիկ, դեկադա, շտատ, պրոֆմիություն, կաֆեդրա և այլն։ Իսկ այժմ ահա «Սովետական Հայաստանի» ներկա համարը հիշյալ բոլոր բառերի դիմաց ունի՝ ամսագիր, գաղափարախոսություն, տեսություն (մարքս-լենինյան), շրջան, լուսանկար, զորավարժություն, ծաղրանկարիչ, կոլտնտեսություն, կոլտնտեսային, կոլտնտեսական, տասնօրյակ, հաստիք, դարաշրջան, գաղափարական, արհմիություն, ամբիոն (ամբիոնի վարիչ)։

«Սովետական Հայաստանում» նեղ մասնագիտական անվանումներից սովորաբար ամենից շատ հանդիպում են գյուղատնտեսական տերմիններ. ներկա համարում այդ խմբից ունենք՝ բրդատվություն, կարճատվություն, բերքատվություն, բուսաբուծություն, խուզ, բրդակալում, ցեղայնություն, բտել, գիրություն, գիրացում, խամ ու խոպան հողեր, անասնակեր, ցանքատարածություն, ձմեռանոց, գլխաքանակ, խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր անասուններ և այլն։ Պետք է նկատել, որ այս անվանումներից մի քանիսը (ինչպես՝ բրդատվություն, բտել, բրդակալում, խամ ու խոպան հողեր) վերջին մեկ կամ երկու տասնամյակում են թափանցել մամուլի լեզվի մեջ։

Այլ մասնագիտությունների գծով համարում կան հեռուստատեսություն, հեռուստատեսային լուրեր, ջերմամիջուկային, լցանյութ, բնական լցանյութ, հրետանակոծում, բյուրեղային ցանց. պինդ մարմիններ, բեմահարթակ, խաղաղ գոյակցություն, անհատի պաշտամունք և այլ հայերեն անվանումներ, որոնք կա՛մ նորակազմ են, կա՛մ համեմատաբար նորաթափանց մամուլի լեզվում։

Խառը կամ հայացված անվանումներից են կինոնկար (կինոֆիլմ-ի փոխարեն), ռադիոկայան, անդրկովկասյան, պլանավորում, սոցիալիստական մրցություն, մինիստրություն, երկաթբետոնե, ուտոպիստական, ագրեսիվ, ալպյան արոտներ, ռադիոհաղորդում, էստրադային նվագախումբ, լեգենդար, օպերային թատրոն, պոլիգրաֆ արդյունաբերություն, մարիոնետային, էթիկական, մոբիլիզացնել և այլն, որոնցից մի քանիսը շատ սովորական են մամուլի լեզվի համար։

Խառը բնույթի առավել նոր անվանումներից են նեոգաղութարարություն, պասիվ սպառողականություն, սոցիալիստական համագործակցություն և այլն, որոնք տեղ են գտել թերթի համարում։

Ուշադրություն է գրավում այն, որ թեև մշակույթ բառը թերթում գործածված է, բայց այնտեղ կան նաև կուլտուրայի պալատ, կուլտուրայի տուն, կուլտուրական շինարարություն, շաքարեղեգի կուլտուրա, կերային կուլտուրաներ բաղադրյալ անվանումները, որոնց մեջ կուլտուրա և կուլտուրական բառերը լրագրում դեռևս ավելի են ընդունված, քան մշակույթ-ն ու մշակութային-ը։ Այդ պատճառով էլ թերթը կարծես խուսափում է մշակույթ հայերեն բառը ավելի ազատ ածանցելուց, մանավանդ սովորական դարձած կապակցությունների մեջ գործածելուց։ Դիտելի է, որ բերված օրինակներից առաջին երկուսում կուլտուրա բառը իբրև անվանման բաղադրիչ սոսկ մշակույթ իմաստ ունի, իսկ երրորդ դեպքում կուլտուրական-ը՝ մշակութային-ի։ Այդ նշանակությամբ մշակույթ-ը և մշակութային-ը այժմ լայնորեն օգտագործվում են։

Զորրորդ և հինգերորդ օրինակներում կուլտուրա-ն գյուղատնտեսական մշակույթի նշանակություն ունի։ Ինչպես տեսանք, 20-ական թվականներին մշակույթ բառը այդ իմաստով գործածվել է նույն լրագրի մեջ։

Այնուհետև, ներկա համարում կա նաև սպասարկման կուլտուրա անվանումը, ուր հասկանալի է, որ երկրորդ բաղադրիչը մշակույթով փոխարինելը սխալ է։

Այլ է հարցը մի շարք ուրիշ փոխառությունների, որոնք գործածված են «Սովետական Հայաստանում»։ Քննվող համարում այդպիսի անվանումներից են (խառը բնույթի), օրինակ, ռեակցիոն, կերամիկական, պրոֆեսիոնալ բառերը, որոնց դիմաց նույն թերթը ուրիշ համարներում գործածել է հետադիմական, խեցեգործական, մասնագիտական (կամ մասնագետ) որ նշանակում է, թե հնարավոր էր նաև ներկա համարում այս բառերն օգտագործել։

Համարում փոխառյալ անվանումների քանակը բավական զգալի է։ Իհարկե, ինչպես նույն թերթի տարբեր համարներում, այնպես էլ առհասարակ տարբեր ժամանակների արևելահայ լրագրերում փոխառյալ անվանումները տարբեր արժեքի են։ Դրանց մի մասը արևելահայերենում շատ գործածվելուց ավանդական են դիտվում։ Ներկա համարում այդպիսիներից շատերն են տեղ գտել, ինչպես՝ դեմոկրատիա, ինտերնացիոնալիզմ, մանիֆեստ, ավանտյուրզիմ, իմպերիալիզմ, պրոֆեսոր, սիմֆոնիա, պոեմ, օպերա, ալտ, ֆոն, ժանր, սուբյեկտիվ, ինստիտուտ, ասպիրանտուրա, տեխնիկա, տրանսպորտ, բետոն, ցեմենտ, պեմզա, պրոբլեմ, դիրեկտոր և այլն։

Սակայն Թերթի ներկա համարից դուրս գրված փոխառյալ անվանումների շարքը քննելիս ուշադրություն է գրավում մի այլ հանգամանք, այն, որ արևելահայերենում վաղուց սովորական, ավանդական դիտված անվանումներից շատերը, որոնք գործածված են «Սովետական Հայաստանի» այս համարում, միևնույն լրագրի ուրիշ համարներում, ինչպես և սովետահայ այլ պարբերականներում փոխարինվում են հայկական բառերով: Օրինակ, Թերթի քննվող համարում գործածված են նաև կոմպոզիտոր, արտիստ, լաուրեատ, տրադիցիա, ռեակցիա, սիստեմ, դեկորացիա, պոստ *(պաշտոնի իմաստով)*, ֆիլիալ, բազա, պակտ, պրեմիեր-մինիստր, կոնսերվատորիա, ինտերվենցիա, ասոցիացիա, դիսկուսիա:

«Սովետական Հայաստանի» այլ համարներում, ինչպես նաև «Ավանգարդ», «Երեկոյան Երևան», «Գրական Թերթ» լրագրերի և որոշ ամսագրերի տարբեր համարներում այս բառերի դիմաց համապատասխանաբար գործածվում են նաև՝ երգահան, արվեստագետ *(կամ՝* դերասան, *ըստ նշանակության)*, դափնեկիր, ավանդույթ, հետադիմություն, համակարգ, բեմազարդ, պաշտոն, բաժանմունք, հիմք *(կամ՝* հենակետ, *ըստ իմաստի)*, դաշնագիր *(կամ՝* համաձայնագիր), վարչապետ, երաժշտանոց, ներխուժում, միավորում, բանավեճ: *Իհարկե, անվանումների գործածությունը միշտ չէ, որ հաջող է լինում (երբեմն հանդիպում են սխալ թարգմանություններ), սակայն ընդհանուր առմամբ միանգամայն ակնառու է մամուլի լեզվում հայկական գիտա-հասարակական անվանումների քանակի տեսակարար կշռի հետևողական աճը: Օրինակ, նույն օրվա «Երեկոյան Երևան» և «Ավանգարդ» լրագրերի համարներում գտնում ենք ամենատարբեր բնագավառներին վերաբերող հետևյալ անվանումները.*

Արդյունաբերության տեխնիկայի բնագավառից՝ սալիկ, կիսահաղորդիչ, սարք, սարքաշինական գործարան, սպասքապահարան, ջերմադիմացկուն, մակնիշ, ապրանքանիշ, արտադրամաս, արտադրամասային, անձնակազմ, ջերմամատակարարում, խառատ, հարահոս գիծ, կառավարման վահան, ճշգրիտ մեքենաշինություն, խոպան, խարամ, փոսորակ *և այլն:*

Շինարարության և երթևեկության բնագավառներից՝ ծածկաթիթեղ, աշխղեկ, կավավազային, բնափայտ, շարժակազմ, ծանրաքարշային գնացք, ուղեմաս, մայրուղի, ջերմաքարշ, քարշակ, ինքնաթափ, բեռնատարողություն, գծամաս, օդանավակայան *(նաև* օդակայան), ավտովարորդ, ավտոսիրող *և այլն:*

Աստղագիտության և տիեզերագնացության բնագավառից՝ հրթիռ, արբանյակ, հեռուստալուսանկար, երկնաքարային գոյացում, ուղեծիր, տիեզերական ռմբակոծություն, լուսնային ապար *և այլն։*

Արվեստի և մարզական բնագավառներից՝ նվագացանկ, թավջութակահարուհի, երաժշտական կատակերգություն, երգչախումբ, դասական երաժշտություն, հավակնորդ, մարզադաշտ, մրցահրապարակ *և այլն։*

Այլ բնագավառներից՝ ոսկերչական ամրան, գնացուցակ, գանձարկղ, գանձապահուհի, կահույք, շահութաբեր, դեղամիջոց, օդաթափանց հող, ծառասունկ, ցրտադիմացկուն, տնկի, փորձնական հենակետ, ցուցանմուշ, դափնեկիր, այցելավայր, հավիտենական սառցակալում *և այլն։ Մենք չենք շարունակում այս թվարկումը, որովհետև այն չափազանց երկար կլինի, այնքան որ շատ են վերոհիշյալ երկու լրագրերի միայն մեկ օրվա համարների լեզվում տեղ գտած հայկական անվանումները։*

Վերը բերված գիտական անվանումների մի մասը, անշուշտ, նորաստեղծ է կամ նորամուտ արևելահայ մամուլի լեզվում։

«Սովետական Հայաստան», «Երեկոյան Երևան» և «Ավանգարդ» թերթերի մի շարք այլ օրերի համարներից մենք դուրս ենք գրել բազմաթիվ այլ անվանումներ, որոնք նորություն են արևելահայ մամուլում, իսկ նրանց մի մասն առհասարակ հայոց մամուլում։ Ընդհանրապես կարելի է այդպիսի տերմինների մի ամբողջ բառարան կազմել. ահա մի քանի բնորոշ նմուշներ՝ ստուգայց *(թղթակցական* ռեյդ*-ի փոխարեն),* բնակարանամուտ *(նաև՝* նորամուտ), լուսնէջք (прилунение), միտում *(*տենդենց*-ի փոխարեն),* նվագավար, *նաև՝* երգավար (դիրիժյոր*-ի փոխարեն),* բեմավար (ռեժիսյոր*-ի փոխարեն),* երգաբան (վոկալիստ*-ի դիմաց),* ձայներանգ (տեմբր*-ի դիմաց),* ձայնաշար (գամմա*-յի դիմաց),* ձայնատարողություն (ձայնային դիապազոն*-ի փոխարեն),* պարարվեստ (բալետ*-ի դիմաց),* կառուցիկություն (արխիտեկտոնիկա*-յի դիմաց),* գովազդ (ռեկլամ*-ի փոխարեն),* ազդ *կամ* հայտազդ (աֆիշի *փոխարեն),* բեռնարկղ (կոնտեյներ*-ի փոխարեն), նաև արդեն սովորական դարձած անվանումներ՝* հյուրախաղ, զբոսաշրջիկ, ձայնապնակ, նամականիշ *և այլն։*

Այս կարգի անվանումներ շատ են գործածվում նաև ուրիշ պարբերականներում, օրինակ, «Լենինյան ուղիով», «Գիտություն և տեխնիկա», «Սովետական Հայաստան», «Գարուն», «Սովետական մանկավարժ», ամսագրերում, «Հայրենիքի ձայն», «Հայաստանի

ֆիզկուլտուրնիկ», «Գրական թերթ», «Սովետական դպրոց» լրագրերում և այլն:

Իհարկե, քիչ չեն նաև այն դեպքերը, երբ տարբեր պարբերականներ միևնույն իմաստի համար հայերեն տարբեր բառ-անվանումներ կամ տարբեր բառաձևեր են օգտագործում. օրինակ, երբեմն նամականիշ-ի փոխարեն լինում է փոստանիշ, ձայնապրնակ-ի փոխարեն՝ ձայնապնակ կամ ձայնասկավառակ, պարարվեստ-ի փոխարեն՝ թատերապար և այլն, սակայն բոլոր պարբերականների համար ընդհանուր երևույթը մնում է այն, որ նեղ մասնագիտական աշխատություններին հատուկ հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական շատ ու շատ անվանումներ, այսօր առատորեն թափանցելով բազմատպաքանակ օրաթերթերի էջերը, հասկանալի են դառնում հարյուր հազարավորներին: Մամուլի լեզվում գիտական անվանումների առատությունը, նրանց քանակի օրավուր ավելացումը հասկանալի է, որ հայերենի տերմինագործածման բնագավառում յուրատեսակ թերությունների պատճառ է դառնում: Օրինակ, մի շարք նորաստեղծ հայկական անվանումներ դեռևս արհեստական են հնչում, զգալի է նաև անհարկի օտարաբանությունների դեռևս մեծ քանակը, կա տերմինագործածման անմիակերպություն տարբեր պարբերականների, ինչպես և միևնույն պարբերականի լեզվի մեջ և այլն:

Հայ մամուլի աշխատողները լուրջ ջանքեր են թափում հայերենի տերմինաշինության ուղղությամբ, ամեն օր նրանք հարկադրված են լինում նորանոր օտար անվանումներ թարգմանել, բառարաններում հարմար բառեր գտնել, այդպիսիք չլինելու դեպքում նրանք նոր բառեր են ստեղծում, հաճախ բառաստեղծական հրաշալի գյուտեր անում: Ինչ խոսք, որոշ դեպքերում հնարավոր չի լինում թարգմանել օտար տերմինները, երբեմն անհաջող է լինում թարգմանությունը: Օրինակ՝ «Ավանգարդի» և «Երեկոյան Երևանի» վերոհիշյալ համարներում գտնում ենք լայներ, գամմագլոբուլին, սկաֆանդր, գրունտ, կորպուսկուլ, պեկան, ստանդարտ, սիլիկատ, էսենցիա, բիսկվիտ, պեչենի, ռուլետ, կարամել և ուրիշ այսպիսի փոխառություններ, որոնք լավ կլիներ, եթե թարգմանվեին, բայց չէ՞ որ շատ դժվար է, հաճախ անհնար յուրաքանչյուր դեպքի համար բառարաններում հարմար անվանում գտնելը կամ հաջող բառաստեղծական գյուտ անելը: Ուստի իրավացի են թերթերը, երբ զգուշանում են բոլոր դեպքերում հաջող, թե անհաջող թարգմանություններ դնելուց:

Ընդհանուր առմամբ հաջող պետք է համարել նաև խառը կազմության այնպիսի նորաստեղծ անվանումների գործածությունը, ինչպես՝ ռադիոաստղագետ, ռադիոդիտարկում, միկրոպայթյուն, ջերմաէլեկտրակենտրոն, հիդրոհաղորդակ, ավտոպահեստամաս և այլն։

Առհասարակ կարևորը տերմինաշինության գործում ճիշտ ուղղություն վերցնելն է, այդ դեպքում, ինչպես բազմաթիվ փաստերով փորձն է ցույց տալիս, հաճախ այն, ինչ հնարավոր չի լինում թարգմանել այսօր, թարգմանվում է վաղը։

Կան այնպիսի դեպքեր էլ, երբ անհարկի օտարաբանությունը մամուլում տեղ է գտնում լրագրողների անփութության պատճառով։ Օրինակ՝ դեղամիջոց, մակնիշ գործածող «Երեկոյան Երևանը» այլ դեպքերում ունենում է պրեպարատ և մարկա, ինչպես նաև գործածում է և կոնստրուկցիա, իզոկոմբինատ, կոոպերացիա և այլ միանգամայն թարգմանելի բառեր։ Իսկ «Ավանգարդը» երբեմն օգտագործում է միներալ, սիստեմ, ֆիզիոլոգիա, հիպոթեզ, նովել, օբյեկտ, էսթետիկա, պրիզմ և այլ բառեր, որոնց հայերեն փոխարինիչները նույն «Ավանգարդում» գործածվում են։

Ամփոփելով հայ մամուլի լեզվի տերմինագործածման մեջ անցած 50 տարիների ընթացքում կատարված տեղաշարժերը կարելի է արձանագրել հետևյալը. ա) անցյալի համեմատ չափազանց մեծացել է հանրային ընթերցման պարբերական մամուլի լեզվում գործածվող գիտական անվանումների ընդհանուր քանակը։ Լրագրային խոսքը մեծապես հագեցել է գիտության, տեխնիկայի ու մշակույթի տարբեր բնագավառներին վերաբերող մասնագիտական անվանումներով, բ) անցյալում գործածվող շատ օտար անվանումներ փոխարինվել են հայկականով, գ) անցյալում գործածվող քիչ թվով հայկական անվանումներ փոխարինվել են օտար բառերով, դ) անցյալում օգտագործվող մի շարք հայերեն և օտար անվանումներ դուրս են եկել գործածությունից, որ արդյունք է հասարակական մտածողության մեջ կատարված տեղաշարժերի, ե) ստեղծվել և գործածության մեջ են դրվել բազմաթիվ նոր հայերեն անվանումներ, որոնք մեծ մասամբ արտացոլում են գիտության և տեխնիկայի բնագավառում տեղի ունեցած վերելքը, զ) նախկինում գործածվող որոշ հայերեն անվանումներ ճշգրտվել են՝ փոխարինվելով հայերեն այլ բառերով։

Հայերենի տերմինաշինության և տերմինագործածման մեջ կատարված տեղաշարժերը ճիշտ պատկերացնելու համար, ան-

շուշտ, բացի հանրային ընթերցման պարբերականներից պետք է նկատի ունենալ նաև զուտ մասնագիտական գրականությունը։ Մենք 1920-ական թվականներին և վերջին տասնամյակում լույս տեսած միևնույն մասնագիտությանը վերաբերող մի շարք աշխատությունների լեզուն համեմատեցինք իրար հետ[40]։

Քսանական թվականների սկզբին հատկանալի է, որ հայերեն գիտատեխնիկական գրականությունը տերմինագործածման տեսակետից հիմնականում նախասովետական մակարդակն ուներ, ուստի և այդ շրջանի և վերջին տասնամյակում ստեղծված գիտական-մասնագիտական գրականության համեմատումը կարող է մի մոտավոր պատկեր տալ հայերեն մասնագիտական գրականության մեջ տերմինագործածման բնագավառում տեղի ունեցած տեղաշարժերի մասին։

Պետք է ասել, որ այդ տեղաշարժերի ընդհանուր պատկերը հիմնականում համընկնում է վերը նկարագրվածին (պարբերական մամուլի)։ Ամենից առաջ նկատվում է գիտական անվանումների ընդհանուր մեծ աճը մասնագիտական գրականության լեզվում, ձգտումը գիտական մտքերը ավելի ստույգ ու ճշգրիտ հաղորդելու ընթերցողին։

Վերջին շրջանում հրատարակված գրքերի մեջ տեղ են գտել մի շարք հայերեն և խառը բնույթի անվանումներ, որոնք չկան 20-ական թվականների գրքերում։ Որպես նմուշ բերենք դրանցից մի քանիսը. հայերեն և խառը բնույթի, ֆիզիկայի ու աստղագիտության բնագավառից՝ գերհոսունություն, ջրաշիթային պոմպ, հոծ միջավայր, ջերմահագեցում, մոլեկուլյար փնջեր, մոլյար ծավալ, ներաթգուկներ, լուսատվություն, հոլ աստղեր, մանրալուսաչափ, դիտանցք, աստղակույտ, ռադիոհեռադիտակ, էլեկտրոնային թաղանթ, աստղամիջյան գազ, ռադիոարձագանք, հեռուստադիտում։ Անասնաբուծական անվանումներ՝ քաշան, զույգընտրություն,

---

40 Քննել և համեմատել ենք հետևյալ աշխատությունները. Ա. Հակոբյանի «Ֆիզիկան» (1922) Ս. Ֆրիշի և Ա. Տիմորևայի «Ընդհանուր ֆիզիկայի դասընթացի» Ա հատորի (1960 թ.), ինչպես և Ա. Պյորիշկինի և Վ. Կրաուկլիսի «Ֆիզիկայի դասընթացի» Ա մասի (1961 թ.) հետ, Հ. Հովհաննիսյանի «Համառոտ տիեզերագիտությունը» և Դ. Գրավեի «Ինչպես է սարքված տիեզերքը» գրքերը (երկուսն էլ 1926 թ.) վերջին տասնամյակում լույս տեսած հայերեն մի քանի տիեզերական գրքերի, այդ թվում Բ. Վորոնցով-Վելյամինովի «Ակնարկներ տիեզերքի մասին» թարգմանական գրքի հետ։ Վ. Խարչենկոյի «Հորթերի խնամքը» թարգմանական գրքույկը (1924 թ.) Ն. Մալաթյանի «Ինչպես ապահովել մատղաշների անկորուստ աճեցումը» գրքույկի (1963 թ.) հետ և այլն։

ոսկրակազմ, վարակամերժ, կարնածծակներ, հյութազատում, ծծակ և այլն:

Այս խմբի անվանումների մեծ մասը, որ վերջին 20 տարիներին է շրջանառության մեջ մտել, նորաստեղծ է: Այդպիսի բազմաթիվ անվանումների մուտքը գիտական գրականության լեզվի մեջ բացատրվում է մի կողմից գիտական մտածողությունը ավելի ճշգրիտ դարձնելու հակումով, մյուս կողմից՝ գիտության զարգացմանը զուգընթաց նոր ըմբռնումների առաջացումով:

Գիտական գրականության մեջ բավական շատ են նորամուտ օտար անվանումները: Դա հաճախ բացատրվում է նրանով, որ հայերենի տերմինաշինությունը չի հասցնում զարգանալ գիտության արագ առաջընթացի հետ: Բայց երբեմն էլ օտար գիտական անվանումների մուտքը տերմինաբանության բնագավառում եղած որոշ անփութության, նաև անհոգության և կամ մասնագետների ու թարգմանիչների գիտելիքների ու հմտության պակասի արդյունք է:

Ինչպես հանրային ընթերցման պարբերական մամուլում, այնպես էլ զուտ մասնագիտական գրականության մեջ նախապես օգտագործվող բազմաթիվ օտար գիտական անվանումներ ժամանակի ընթացքում աստիճանաբար փոխարինվել են հայերեն բառերով: Մեր համեմատած գրքերի օրինակով կարող ենք բերել այդ կարգի ոչ քիչ նմուշներ: Այսպես, 1920-ական թվականներին ֆիզիկային և աստղագիտությանը նվիրված հայերեն գրքերում գործածված են այնպիսի փոխառյալ գիտական անվանումներ, ինչպես՝ տրաեկտորիա, մախավիկ, պարալելոգրամմ, ատմոսֆերա, տեմպերատուրա, ֆորմուլա, տեօրետիկ, սիստեմ (արեգակնային), ֆազեր (լուսնի), բինոկլ, պանորամ, օրբիտ, աբսոլյուտ (զրո) և այլն: Այժմ դրանց փոխարեն գործածվում են՝ հետագիծ, թափանիվ, զուգահեռագիծ, մթնոլորտ, ջերմաստիճան, բանաձև, տեսական, համակարգություն (արեգակնային), փուլեր (լուսնի), երկդիտակ (կամ՝ դիտակ), համայնապատկեր, ուղեծիր, բացարձակ (զրո) հին կամ նորակազմ հայերեն բառերը:

Կան, իհարկե, նաև այնպիսի դեպքեր, երբ նախապես գործածված հայերեն անվանումները հետագայում փոխարինվել են օտար բառերով, բայց նման դեպքերը ինչպես մամուլի, այնպես էլ մասնագիտական գրականության լեզվում ավելի քիչ են, հաճախ՝ աննշան: Սա, իհարկե, չի նշանակում, թե օտարաբանությունները պակասում են, ոչ բնավ, նրանք ավելանում են, բայց նորամուտ օտար անվանումների հաշվին:

* *
*

Տերմինաշինության, հատկապես հայ տերմինաշինության կարևորագույն խնդիրներից է նաև ստեղծված գիտական անվանումների արմատավորումը լեզվի մեջ։ Օտար տերմինների դիմաց հայերեն բառեր գտնելը կամ ստեղծելը տերմինաշինության սկիզբն է միայն, շատ կարևոր է նրանց գործածելի դարձնելը, լեզվում արմատավորելը։ Այստեղից էլ ծագում է գիտա-տեխնիկական նորաստեղծ անվանումների կենսունակության հարցը։

Կարծիք կա, որ կենսունակ է լինում այն գիտական անվանումը, որը նախապես իր բառացի իմաստով առավել ճշգրտությամբ է արտահայտում անվանվող առարկայի, երևույթի բովանդակությունը։ Սա ընդհանրապես ճիշտ է, սակայն փաստերը միշտ չէ, որ հաստատում են այդ կարծիքը։ Բառիմաստով հասկացության էությունը ճշգրիտ բացահայտող բազմաթիվ կենսունակ անվանումների կողքին հաճախ նույնքան կենսունակ են լինում նաև այնպիսի անվանումներ, որոնց արտահայտած ուղղակի իմաստը ճիշտ չի բացահայտում անվանվող առարկան կամ երևույթը։ Грамматика, философия, филология, лирика և բազմաթիվ այլ անվանումների մեծ կենսունակությունը մի շարք լեզուներում բնավ էլ պայմանավորված չէ այն բանով, որ իբր նրանց ուղղակի իմաստը ճիշտ է բացահայտում անվանվող առարկան։ Նման ոչ քիչ անվանումների ու բառերի ստուգաբանական կամ ուղղակի (սկզբնական) իմաստը և անվանվող առարկան հաճախ շատ տարբեր են իրարից։ Գրադարանային հայերեն և ռուսերեն տերմինաբանության մեջ զարմանալիորեն կենսունակ են շիֆր և ինդեքս բառերը, որոնց ուղղակի իմաստը, սակայն, առնչություն չունի նրանց ցույց տված հասկացության հետ։ Լատիներեն ինդեքս բառը իր ուղղակի իմաստով նշանակում է ցուցակ, ցանկ, օժանդակ ցանկ, բայց ոչ բնավ գիտության կամ մշակույթի որևէ ճյուղ ցույց տվող պայմանական նշան, որ դրվում է գրադարանային գրքերի ու նրանց քարտերի վրա։ Շիֆր ֆրանսերեն բառը իր ուղղակի իմաստով նշանակում է թիվ, ծածկագիր, բայց ոչ գրքի կազմին կամ շապիկին գրվող նրա հասցեն, որով գիրքը դրվում է դարակի վրա։ Մինչդեռ հայերենում ու ռուսերենում (և մի քանի այլ լեզուներում) այս բառերը հենց այս վերջին իմաստներով են օգտագործվում։ Կա հայերեն դարականիշ անվանումը, որ շատ ճիշտ է արտահայ-

տում շիֆր կոչվածի իրական իմաստը, սակայն հայ գրադարանավարները սովորաբար չեն օգտագործում:

Կարևոր գործոններ են լեզվի մեջ սովորույթն ու ավանդականությունը, որոնց հաշվի առնելը շատ կարևոր է ճիշտ տերմինաշինության համար: Իսկ ինչպե՞ս են լեզվում մշակվում սովորույթը և ավանդականությունը: Մի եղանակով՝ բառերի և ձևերի շատ գործածությամբ: Բառը, գիտական անվանումը պետք է գործածել, որպեսզի այն կյանք առնի, կենդանանա:

Հիշենք, ինչպես էր Վ. Տերյանը 1914 թվականին մերժում նեծանիվ, վերարկու, կրկնակոշիկ, վառարան այն ժամանակ դեռևս անսովոր բառերը: Իսկ այժմ եթե մեկը վելոսիպեդ, պալտո, կալոշ կամ փեչ օգտագործի հայերեն խոսելիս, ապա բավականին անսովոր ու գռեհիկ կթվա:

Բոլոր, մեծ թե փոքր, քաղաքակիրթ ազգերի տերմինաբանության պատմությունը ցույց է տալիս, որ մեծ մասամբ արտադրության և գիտահետազոտական ամենօրյա աշխատանքում, գրավոր ու բանավոր մասնագիտական խոսքի մեջ են ստեղծվում, արմատավորվում և տարածվում ազգային գիտական անվանումները: Ըստ երևույթին, հայկական գիտա-տեխնիկական տերմինաբանության հետագա զարգացումը նույնպես ոչ քիչ չափով պայմանավորված է լինելու այդ կարգի հարցերի լուծումով: Երբ հայերենը ավելի շատ դառնա տեխնիկական ու գիտական փաստաթղթերի, քննարկումների, զեկուցումների, տեղեկատվությունների լեզու, սովետական գիտնականների մեծ ջանքերով ստեղծված հայերեն գիտա-տեխնիկական բազմաթիվ անվանումներ ավելի լայն օգտագործման մեջ կդրվեն, ավելի խոր կարմատավորվեն գրավոր և բանավոր խոսքում և, իհարկե, կստեղծվեն հազարավոր նորերը: Այլ խոսքով, մաթեմատիկայի, բնագիտության տարբեր ճյուղերի, տեխնիկայի, լեզվաբանության նորագույն հարցերին նվիրված հայերեն գրականությունը որքան մեծ ծավալ ստանա, այնքան ավելի շատ հող կստեղծվի հայերենի տերմինաբանության հետագա հարստացման ու զարգացման համար: Այս դեպքում, անշուշտ, անխուսափելի կլինի մի շարք նորագույն օտար գիտական անվանումների գործածությունը հայերենում:

Եվ այսպես, հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում տերմինաշինությունը եղել է հայերենի լեզվաշինության բաղկացուցիչ մասը և հիմնականում ընթացել է ըստ հայոց լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների: Շեղումները հաղթահար-

վել են և հաղթահարվում են ոչ գիտական տեսակետների մերժմամբ և լեզվական օրինաչափությունների ավելի խոր ուսումնասիրմամբ ու հաշվառմամբ։

Հայերենի զարգացման սովետական շրջանում հայ լեզվաբանների և գիտության, տեխնիկայի, մշակույթի տարբեր մասնագետների կողմից ստեղծվել են տերմինաբանական մեծարժեք բառարաններ, որոնք պարունակում են գիտական անվանումների հսկայական հարստություն, որը և պետք է լայնորեն օգտագործվի։ Էլ ավելի մեծ է այդ բառարանների դերը նոր գիտական անվանումների կերտման միջոցների, եղանակների որոնման ու հայտնաբերման գործում։ Այժմ ամենից կարևոր է դառնում ստեղծված տերմինաբանական հարստության և հայերենի տերմինաշինական ունակությունների լայն կիրառումը։

Պ. ԲԵԴԻՐՅԱՆ

VI. ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառիմաստի փոփոխությունները, բառակազմության և առհասարակ լեզվի մեջ նոր բառերի ավելացման կողքին, ամենազգայուն ձևով են արձագանքում ժողովրդի կյանքում տեղի ունեցած փոփոխություններին, մանավանդ երբ վերջիններս հաղթարշավի ելած դարաշրջանին հատուկ փոփոխություններ են: Գիտություն, տեխնիկա, հասարակական կառուցվածք, գիտելիքներ և գիտակցություն, գեղարվեստ և հրապարակախոսություն: Սրանց զարգացումը իր որոշակի կնիքն է դնում բառերի իմաստային կողմի զարգացման վրա, փոփոխություններ մտցնում նրանց արտահայտած հասկացությունների սահմանների, բառերի գործածության շրջանակների, ոճական-գեղագիտական արժեքի մեջ:

Վերցնենք զանգահարել (զանգել) *բառը:*

Ավ. Իսահակյանն իր «Ազատության զանգ»-ում (1903) բացականչում էր.

Ըմբոստ ոգինե՛ր, թև առե՛ք, հասե՛ք,
Եվ զանգահարեք ամո՛ւր, միհամո՛ւռ.
Զանգն ազատության զանգահարեցե՛ք
Կովկասի համար հանո՛ւր, ընդհանո՛ւր:

Իսկ Չարենցն իր «Ազգային երազ»-ում (1917—18) ասում էր.

Օ՜, ո՛չ մի ժամկոչ չի զանգել այսպես,
Թեկուզ հրդեհներ շատ է պատահել:

Այժմ զանգահարել, զանգել *ասելով պետք է հասկանալ «հեռախոսով զանգ տալ»:*

Ոչ հեռախոսն է զանգահարում,
Ոչ հեռագիր կա, ոչ էլ նամակ
(Համո Սահյան):

Մեր օրերում այնքան սերտորեն են կապված «զանգահարել» և «հեռախոս» հասկացությունները, որ երբ կարդում ենք Նար-Դոսի «Նոր հավը» պատմվածքի հետևյալ հատվածը՝

«— Դե՛, Մաշա, ի՞նչ ենք անում... ես սաստիկ քաղցած եմ։

— Զանգահարե՞մ։

— Զանգահարիր»,— մեզ մի պահ թվում է, թե Մաշան պիտի մոտենա հեռախոսին, բայց կարդում ենք ուրիշ բան. «Մաշան մի քայլ արեց դեպի զանգակը...»։ Չէ՞ որ դա... 1889 թվականն էր[1]*։*

Իր ժամանակին Գր. Զոհրապը գրում էր.

«Իրենց խոսակցությունը պարահանդեսի սովորական բանաձևով սկսավ.

— Աղեկ բազմություն կա այս գիշեր» («Պարահանդեսին վաղորդայնը», 1890)։

Դեմիրճյանն էլ «կրկնում էր».

«Կամ երբ մեկը զեղծում էր արել, և գյուղացիք խոսք էին անում կոոպերատիվը փակել՝ Մերկեն բանաձևում էր.

— Մի լվի համար կարպետը չեն վառի» («Մերկե», 1927)։

Այժմ **բանաձևել** *գործածական բառ չէ*[2]*, իսկ* **բանաձև** *կոչում ենք պետական մարմինների, կուսակցական և այլ հասարակական կազմակերպությունների կյանքին հատուկ գրագրությունը (համագումարի, կոնֆերանսի, ժողովի և այլն բանաձև)։*

Կարդում ենք Սուրեն Սպանդարյանին.

«Հարկավոր է բաց անել լայն ասպարեզ գյուղացիության ինքնագործունեության համար, զարգացնելով գյուղը քաղաքականապես» («Մեր դերը գյուղերում», 1906)։

Ինքնագործունեություն *այստեղ ունի «ինքնուրույն գործունեության» իմաստը։*

Կարդում ենք և Տերյանի՝ Լենինի «Պետություն և հեղափոխություն» թարգմանությունը[3]*։*

---

1 *Այնպիսի կապակցություններում, ինչպիսիք են՝ «...նախագահ ընկեր Մարութը, տեղից բարձրանալով, զանգահարեց...» (Ստ. Զորյան, Սպիտակ քաղաք, 1929), «Ու վեր կացավ Գարսևանն, ուժեղ զանգահարեց, Զանգը խփեց սեղանին ու ջղային գոռաց» (Ն. Զարյան, Ռուշանի Քարափը, 1931—32),— բառիմաստի «անսովորությունը» շփոթություն չի առաջացնում՝ միայն շնորհիվ կապակցության։*

2 *Դեմիրճյանական նորակազմությո՞ւն է։ Համենայն դեպս այստեղ արդեն կա նոր իմաստի երանգը։*

3 *Մոսկվա, 1920։*

«Այդ հատուկ հասարակական իշխանությունն անհրաժեշտ էր նրա համար, որ արդեն այն օրից, երբ հասարակությունը բաժանվել էր դասակարգերի՝ անհնար էր դարձել բնակչության ինքնագործ զինված կազմակերպությունը...»:

Կիրառությունը նույնն է:

Բայց ահա Աղասի Խանջյանի մոտ արդեն մի փոքր այլ է.

«...Նա (դպրոցը — Պ. Բ.) վարժեցնում է մանուկին ինքնագործունեության, գեղարվեստական գործունեության և ֆիզիկական ու մտավոր աշխատանքի համաչափ գործադրության» («Լուսավորության գործը Խորհրդային Հայաստանում», մարտ—ապրիլ, 1920):

Մեզանում վաղուց արդեն **ինքնագործունեությունն** ունի «գեղարվեստական ինքնագործունեություն» իմաստը, և բնական է, որ լենինյան երկի մեր օրերի թարգմանիչը պիտի աշխատեր հայերեն տեքստի համապատասխան հատվածը սահմանազատել **ինքնագործ** բառի նոր իմաստից և Տերյանի «բնակչության **ինքնագործ** զինված կազմակերպությունը» կապակցության փոխարեն գրեր «բնակչության **ինքնագործուն** կազմակերպություն»:

Վաղուց **արհեստ** և **արվեստ** բառերը այժմյան երկու իմաստներով էլ խառն գործ էին ածվում: Հմմտ. «...մի կտոր հացի համար ծառայում է փականագործի գծուծ արհեստով» (**Մուրացան**, Հասարակաց որդեգիրը, 1884): «Նա յուր ձայնը կմշակե և երգելու արհեստի մեջ կկատարելագործվի» (Ն. տ.): «Հենց այժմ բոլոր վերև ասվածը ի նկատի ունենալով, դպրոցներում պետք է մտցվի **ֆիզիկական աշխատանք**, բոլոր երեխաները, առանց դասակարգային խտրության, **իրենց** ընդունակությունների համապատասխան **արվեստներ** պետք է ուսումնասիրեն» (Ս. Սպանդարյան, Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան, 1906: Ընդգծումները հեղինակինն են)[4]:

Այժմ այդ բառերի իմաստները խիստ տարբերակված են, և դրանք նույնիսկ հոմանիշներ չի կարելի համարել:

2. ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՊՎԱԾ ՍՈՑԻԱԼ-ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՀԵՏ

Հինգ տասնյակ տարիները մեծ տեղաշարժեր են առաջ բերել բառերի իմաստային կողմի մեջ: Սովետական շրջանում մեր

4 Լեզվի «դասակարգայնության» տեսության տիրապետության տարիներին, ինչպես վկայում է հանգուցյալ պրոֆ. Հ. Կոսիկյանը, հին համարվող բառերի, ինչպես նաև հնացած իմաստների մեջբերումը դիտվում էր իբրև տուրք «հին հասա-

լեզվի բառապաշարի զարգացման մեջ ընդհանրապես և բառիմաստի փոփոխությունների մեջ մասնավորապես արտահայտվել է մեր ժամանակի ամենաբնորոշ գծերից մեկը՝ զարգացման մեծ թափը:

Եթե ոչ հասարակական կյանքի ու նրա հետ՝ լեզվի զարգացման մեծ թափով, ապա ինչո՞վ բացատրել այն, որ մեր լեզվի շատ բառերի իմաստափոխությունն ունեցել է ընդամենը 1—2 տասնամյակի կյանք, որից հետո նրանց ձեռք բերած նոր նշանակությունները մոռացության են տրվել (արդեն հնացել են), մնացել են միայն պատմական թեմաներով գրքերի մեջ:

Այսպես, օրինակ, արդեն իսկ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությանը նախորդած տարիներին կոմունիստների բերանում և կուսակցական մամուլում չքավոր (չքավորություն) բառը ձեռք էր բերել իմաստային նոր՝ սոցիալական երանգավորում (իմաստի նեղացմամբ). այն նշանակում էր ոչ միայն «չունեվոր», այլ նաև «չունևոր՝ ընչազուրկ՝ հողազուրկ գյուղացիների դասակարգ» (որ կոչված էր լինելու պրոլետարիատի դաշնակիցը հեղափոխության մեջ): Բառի այդ նոր իմաստը պահպանվեց ընդհուպ մինչև գյուղի համատարած կոլեկտիվացումը (այսինքն՝ մինչև գոյություն ունեցող շերտավորման վախճանը), որից հետո աստիճանաբար մոռացվեց (մնաց միայն գրքերում), և բառը վերադարձավ իր նախկին՝ լայն իմաստին: Այդ նույն ժամանակամիջոցում իմաստափոխված բառերից է և միջակ-ը, որը միջակ գյուղացի արտահայտության կրճատումից է առաջացել: Հմմտ.

Դիմել են արդեն մեր կոլեկտիվին
Տասը չքավոր ու յոթը միջակ:
Մեզ հետ է արդեն միջակ գյուղացին՝
Մաղաքանց Մուքոն ու Գարաս բիձան:
(Ն. Զարյան, Ռուշանի քարափը)

Նախահեղափոխական շրջանում էր, որ տարր (էլեմենտ) բառը ձեռք բերեց սուր սոցիալական բովանդակություն՝ «հասարակության տարր». «Մերկեն գյուղի անհանգիստ տարրն էր» (Դեմիրճյան, Մերկե), «Սպառկոոպի ապարատը տեղերում դեռևս խճողված է որոշ անհարազատ տարրերով» (Ա. Խանջյան, Կոոպերացիայի հերթական անելիքները գյուղում, 1929), «Փաստեր կան, որ

բակարգի տիրապետող լեզվին» (տե՛ս „Изменения в словарном составе литературного армянского языка советского периода“, Մոսկվա, 1964, էջ 114):

տեղերում այդ ապարատը սողոսկել են անհարազատ էլեմենտներ...» (Ն. տ.)։ Ավելին. բառի նման կիրառությունը ի վերջո հանգեցրեց բացասական իմաստի (**հակահեղափոխական տարր**), և նրանով որևէ մեկին հորջորջելը դարձավ վիրավորական. «—Էլեմենտ ա, կոնտրռևոլյուցիա ա անում» (**Դեմիրճյան**, Կրասնարմեյցը, 1926), «— Դե հոքիրն ինքը մութ էլեմենտ ա, —ասաց Սրապը, կամենալով Բենոյից ետ չմնալ գրափառ խոսելու մեջ» (**Ստ. Զորյան**, Վարդաձորի «կոմունը»), «...բայց Սերգոն իրեն այնքան վիրավորված էր զգում, որ ոչինչ լսել չէր ուզում. Նա առանձնապես վիրավորվել էր էլեմենտ բառից, որը նրան թվում էր հայհոյանք...» (Ն. տ.)։

Իսկ «**հակա՞**»-ն, որ **հակահեղափոխական** բառի կրճատ ձևն էր և ուներ նույնպես վիրավորական-հայհոյական իմաստ։

— Դու հակա մաքեր շատ մի տարածի,
Կուլակի դուդուկ, խոխական կուլակ։
— Կուլակն էլ դո՛ւ ես, «հական» էլ, լակո՛տ,
Որ հալածում ես ինձ պես միջակին։

(**Ն. Զարյան**, Ռուշանի Քարափը)

30-ական թվականներին **եռանկյունի** բառը ձեռք էր բերել մի նոր իմաստ՝ «եռյակ ղեկավարություն». «Գործարանի մուտքի տոմսերի ձևի հարցից սկսած մինչև դազգահների դասավորման խնդիրը «լծում է» «եռանկյունին» (**Ա. Խանջյան**, Նոր թափ և բարձր որակ կազմակերպչական և մասսայական աշխատանքներին, 1932)։ Այժմ այս բառը մնում է միայն որպես երկրաչափական մարմնի անուն։

20—30-ական թվականներին **խրճիթ** բառը խոսակցական լեզվում ձեռք էր բերել նոր իմաստ (**խրճիթ-ընթերցարան** հարադրական բարդության կրճատման հետևանքով)։ Հմմտ. «— Բայց այշի, մեզնից ո՞վ էր տեսել խրճիթ, գիր, ուսում, թատրոն, շարքացան, տրակտոր...» (**Դեմիրճյան**, Մերկե)։ Այս բառը նույնպես այժմ պահպանում է իր նախկին՝ լայն իմաստը։

Այսպես մենք նույնիսկ կարող ենք որոշել, թե պատմական ի՛նչ ժամանակահատված է արտացոլում այս կամ այն իմաստափոխությունը։ Օրինակ՝ որոշակի կերպով Հայրենական պատերազմի շրջանին է վերաբերում հետևյալ բառերի իմաստափոխությունը[5].

---

[5] Որոշ մասը պատճենումներ են ռուսերենից։

բազե — *խիզախ օդաչու*, սանրել — *մի տերիտորիա հոծ կրակի տակ առնել (հակառակորդից մաքրելու համար)*, լեզու — *թշնամու շարքերից կենդանի բռնված գերի*, անտառի մարդ(իկ) — *պարտիզան(ներ)*, Մեծ երկիր (հող) — *Հայրենիք (օկուպացված շրջաններում ապրող հայրենակիցների, այդ թվում նաև պարտիզանների տեսակետից)*, սև թուղթ — *մահազդ (նահատակված զինվորի)*, կործանիչ — *կործանիչ ինքնաթիռ (այս կապակցության կրճատումից)*, ճակատային — *ճակատային զինվոր (այս կապակցության կրճատումից)*[6]:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած «սառը» պատերազմի շրջանում է, որ հրձիգ *բառը ձեռք է բերել, հատկապես խոսակցական լեզվում, նոր՝ փոխաբերական նշանակություն (պատերազմի հրձիգ, պատերազմ հրահրող՝ նյութող), մինչդեռ առաջ այդ բառը հանդիպում էր «հրդեհող, հուր ձգող» ստուգաբանական իմաստով.*

...Ուզում եմ ջերմ կրծքիդ եռերը շոգ, հրձիգ,
Անհո՜ւն աստղեր սփռող երկրի անծայր հեռուն:
(Ե. Չարենց, *Աստղիկ, 1920*)

Շեփոր-մարմինն է ինձ կանչում խանդոտ հրձիգ (Ն. տ.)

Նույն, ետպատերազմյան տարիներին, ավելի կոնկրետ՝ 1946—48 թվականներին (այսինքն՝ զանգվածային հայրենադարձության շրջանին) է վերաբերում քարավան *բառի նոր իմաստը՝ «հայ հայրենադարձների քարավան» (այս իմաստը, հասկանալի պատճառներով, դեռ տարածված է. այլ կապակցություններում համարյա «գործ էլ չունի»). «Նա (Մայր Հայաստանը— Պ. Բ.) բացել է իր դռները, և աշխարհի բոլոր կողմերից ձգվում են դեպի նա տունդարձի մեծ ու փոքր քարավանները... Ընդամենը մի քանի օր առաջ տեղ հասան մի քանի նոր քարավաններ՝ ծերերով, երիտասարդներով, մանուկներով»[7] (Գ. Մահարի):*

Շուրջ 15 տարի է անցել այն ժամանակից, երբ արբանյակ *բառը զուգորդմամբ ձեռք բերեց մի նոր իմաստ* (СПУТНИК)*: Իսկ* աստղային եղբայր *արտահայտությունը, որ մի ժամանակ բանաստեղծի երևակայության ծնունդ պատկերավոր մի խոսք էր լոկ՝*

---

6 *Վերջին երկու բառերի մեջ* (կործանիչ, ճակատային) *իմաստափոխությունը տեղաշարժ է առաջ բերել նրանց նաև ձևաբանական արժեքի մեջ (ածական-գոյական): Այս մասին ավելի մանրամասն տե՛ս ստորև:*

7 *Օրինակի առաջին մասում* տունդարձի քարավան *կապակցությունը պարզ ցույց է տալիս* քարավան *բառի իմաստափոխության անցած ուղին:*

Ու սփրթնած դեմքից վրա — բռնկվող մի փայլ.
Այն արև՛ն է. այն արև՛ն է, աստղայի՛ն եղբայր
(Չարենց),—

մարդու տիեզերական թռիչքների մեր օրերում ձեռք է բերել միանգամայն իրական բովանդակություն...

Սովետական շրջանում հայերեն բառերի իմաստափոխությունների ասպարեզում մեծ դեր կատարեցին նաև հայ մարքսիստական հրապարակախոսության, գիտության, գրականության նախակարապետները:

Վիթխարի ճիգեր, լեզվաշինարարական տաղանդ էին պահանջվում Շահումյանից, Սպանդարյանից ու Կնունյանցից, Մյասնիկյանից ու Խանջյանից, Տերյանից ու Չարենցից, Մակինցյանից ու Յ. Խանդադյանից, Աբեղյանից և Ավդալբեկյանից, ժամանակի բոլշևիկյան և դեմոկրատական մամուլի աշխատակիցներից, գիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչներից, որպեսզի օգնեին մեր մայրենի լեզվին օրգանապես անելու-բարձրանալու քաղաքական և գիտական նոր հասկացությունների ատրճանին: Եվ բնական է, որ այս արագաթափ վերակառուցման շրջանում պիտի լինեին խայտաբղետություն, անորոշություններ:

Եթե ճասարակական բառի գործածությունը «անվճար» իմաստով Մուրացանի մոտ եզակի դեպք էր. «Ամեն տեղ նրան գլուխ են տալիս. ամեն տեղ մեծարում են, ամեն տեղից հրավիրում են, հասարակական (ձրիավար) պաշտոններ առաջարկում և այլ բազմաթիվ փառք ու պատիվներ են ընծայաբերում» («Ի՞նչ լայեղ է», 1885), ապա մարքսիստների լեզվում այն դարձավ նոր իմաստով երանգավորված սովորական արտահայտություն. «...գործնականապես խանգարել հասարակական աշխատանքների կազմակերպությունը — ահա թե ինչով է զբաղված Թիֆլիսի բուրժուական ինքնավարությունը» (Ս. Սպանդարյան, Քաղաքային ինքնավարությունը և պրոլետարիատը, 1906): Այստեղ է, որ, օրինակ, ատառ, գերեզմանափոր և շատ այլ բառեր դարձան քաղաքական լեզվի փոխաբերություններ. «...ժողովուրդը, այսինքն ավելի հեղափոխական լայն մասսաները, իրենց տարերային հոտառությամբ ըմբռնել են այսպես կոչված «ժողովրդական ներկայացուցչության» հակահեղափոխական ատառը...» (Ս. Սպանդարյան, Դումայի շուրջը, 1906), «...պրոլետարիատը —իր պատմությունից ճանաչված գերեզմանափորն է» (Ս. Սպանդարյան, Բանվորական պրոֆեսիոնալ միությունների մասին, 1906): Այս շրջանից է, որ մեր հա-

սարակագիտական բառապաշարի մեջ հաստատուն կերպով մուտք են գործել քանակը որակ է դառնում, տնտեսություն փոշիացնել, գիտակցություն բթացնել և նման շատ արտահայտություններ։

Այս՝ լեզվի մեջ այն «օրգանական աճի» սկիզբն է, որի մասին ակնարկում էր Պ. Մակինցյանը Լենինի «Պետություն և հեղափոխություն» երկի Տերյանի թարգմանության «Առաջաբանում»։ Եվ եթե Ս. Սպանդարյանը դեռ կազմ բառն էր գործածում քաղաքական կառուցվածք, քաղաքակարգ (քաղաքականակարգ) բառերի դիմաց[8], Ա. Խանջյանը, նրանից բավական հետո՝ ինքնածառայություն, առաջադրում, ելույթ՝ համապատասխանաբար ինքնասպասարկում, առաջարկություն, քանույց բառերի դիմաց[9],— ապա սրանք նույնպես (և սրանց նման շատերը) նույն օրգանական աճման գործընթացի նշաններն են։

3. ԲԱՌԻՄԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բառիմաստի փոփոխությունների ամենատարածված ձևը անցումն է, շրջումը, որի հոգեբանական հիմքը զուգորդումն է։ Իմաստի անցում տեղի է ունեցել մեր շատ բառերի մեջ։ Երակ բառը, օրինակ, զուգորդմամբ ստացել է «հանքի երակ» իմաստը, որի հիման վրա էլ, փոխաբերաբար, կազմվել է ոսկու երակ դարձվածքային արտահայտությունը։ Հմմտ.

Տեսնում եմ, տղաս, տեսնում եմ խորքից,
Որ այդ խորդուբորդ քո կեղևի տակ՝
Կան հանքեր հարուստ ու ոսկու երակ,
Բխում է խորքում մի զուլալ հոգի...
(Ս. Կապուտիկյան. Տղայիս)

---

8 «Ուտոպիստներ են նրանք, որոնք մտածում են խաղաղ էվոլյուցիայի կառչխության մասին՝ ֆեոդալիզմից դեպի բուրժուական դեմոկրատական կազմը անցնելիս» («Դարձյալ ամնիստիայի մասին», 1906)։

9 «...դրա համար էլ նոր դպրոցում որդեգրված է դպրոցական ինքնավարության սկզբունքը, մանուկների ինքնածառայության սկզբունքը սեփական կարիքների համար...» («Լուսավորության գործը Խորհրդային Ռուսաստանում»). «...ձեզ հետ միասին կոնկրետ առաջադրումներ պիտի անենք ազգային փոքրամասնությունների մեջ տարվող մեր աշխատանքները կանոնավոր հիմքերի վրա դնելու համար» («Ճառ ազգային փոքրամասնությունների աշխատողների խորհրդակցության բացմանը», 1928), «Արդեն այժմ գոյություն ունի անհամապատասխանություն մեր թեթև արդյունաբերության հումույթի և գյուղատնտեսության ապրանքային ելույթի միջև...» («Հայաստանի կոմկուսակցության հերթական խնդիրները», 1930)։

Հորիզոն — «երկրի ընդերքի պաշարի տեղադրություն». «...Արարատյան դաշտի ընդերքում հայտնաբերվել է գազաբեր մի քանի հորիզոն» («Ավանգարդ» թերթ), «Բնտխուսում, 524 մետր խորության վրա մենք հայտնաբերեցինք խմելու համեղ ջրի նոր ջրատար հորիզոն» («Երեկոյան Երևան» թերթ)։ Առաստաղ — «թռիչքի բարձրագույն սահման (օդագնացության մեջ)». «Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նախագծվել ու կառուցվել է սովետական ՄիԳ-1 նոր կործանիչը, որն այն ժամանակվա համար շատ մեծ արագություն ուներ՝ 650 կիլոմետր ժամում, իսկ առաստաղը հասնում էր 12 կիլոմետր բարձրության» («Ավանգարդ» թերթ)։ Օղակ— «1) պիոներական օղակ, 2) գյուղատնտեսական աշխատողների բրիգադի բաղկացուցիչ մաս», աշտարակ — «շինարարության մեջ օգտագործվող վերամբարձ հարմարանք», բջիջ— «կուսակցության փոքրագույն միավորը, սկզբնական կազմակերպությունը» (20—30-ական թվականներին), բաց թողնել— «1) վաճառքի հանել, 2) արտադրել, 3) (պահեստից) դուրս՝ օգտագործման տալ (մթերք, հումք, պիտույք և այլն)», թագավոր, արքա — «սպորտային այս կամ այն ձևի, մասնավորապես շախմատի գծով աշխարհի չեմպիոն», միջուկ— «ատոմի միջուկ» (որից՝ միջուկային), մսուր— «մանկամսուր», մեծ— «կատարյալ՝ զարգացման բարձր աստիճան ներկայացնող» (մեծ արվեստ, մեծ ֆիզիկա, մեծ ֆուտբոլ և այլն)[10]։

Ֆունկցիոնալ անցում. Ձայնագրել նշանակում էր «նոտագրել» (այլև «դաշնավորել»). «Նա սկսեց նվագել ու երգել մի սիրային պիես, որ բավականին ձայնագրված էր քաղցր և ազդող եղանակով...» (Նար-Դոս, Ճշմարիտ բարեկամը, 1886)։ Այժմ, ինչպես հայտնի է, այս բառի տարածված նշանակությունն է՝ «մագնիտաֆոնի ժապավենի վրա գրանցել (երաժշտություն, ձայնը և այլն)»։

Նույն ֆունկցիոնալ հիմունքով թիթեղ այժմ ձեռք է բերել «մետաղյա պլաստ» իմաստը. «Նրա (Հեմինգուեյի — Պ. Բ.) մարմնից 237 բեկոր հանեցին ու ծնկոսկրներից մեկը փոխարինեցին ալյումինե թիթեղով» («Ավանգարդ»)։

Հրթիռ — «վեր արձակված արկ՝ լուսավորության կամ ազդանշանի համար, թռչող ապարատ՝ ռեակտիվ շարժիչով»։ Կաբինետ մի ժամանակ նշանակում էր «առանձնարան (սրճարաններում և

10 Վերևում բերված օրինակների կապակցությամբ պետք է ասել, որ դրանց մեծ մասը նոր իմաստների կողքին պահում է և հինը։

ալլուր)», այժմ՝ «1) առանձնասենյակ, 2) աշխատասենյակ, 3) այս կամ այն առանձին առարկան պարապելու տեղ (ուսումնական հաստատություններում)»[11]։

Բառիմաստի ընդլայնում. *Սովետական շրջանում ընդլայնվել է շատ բառերի արտահայտած հասկացությունների շրջանակը։*

Արևելք *և* **արևմուտք** *բառերը, բացի աշխարհագրական կողմերից, այժմ արտահայտում են երկու՝ ավելի լայն հասկացություններ՝ «1) Արևելքի և Արևմուտքի երկրներ, 2) սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների երկրներ»,* **ճռետոր**՝ *«ճարտասան»— առհասարակ «ելույթ ունեցող (համագումարներում, ժողովներում)»,* **նկար**՝ *«1) գեղանկար, լուսանկար, 2) կինոնկար»,* **վազք** *(մարդու) — «մրցմանների ընթացք»,* **սերունդ** *(մարդկանց, կենդանիների) — նաև բույսերի,* **կալանք** *— «1) կալանավորություն, 2) ֆինանսական միջոցների «արգելք» (հմմտ. բանկում կալանք դնել այսինչ հիմնարկության միջոցների վրա),* **խուզել** *գրաբարում նշանակում էր «մազը կամ խոտը կտրել», ապա, նեղացմամբ՝ «ոչխարի, այծի բուրդը կտրել», այժմ, ընդլայնմամբ՝ «մազը կտրել» (*խուզել *փոխաբերաբար նշանակում է նաև «խիստ կրճատել». հմմտ. Նախատեսված գումարներն էլ խուզեցին)։ «Նեղացում — ընդլայնում» ճանապարհն է անցել նաև* **հաճախորդ** *բառը. «1) հաճախակի այցելող, 2) գնորդ, 3) այցելու։*

Հայերենում սովետական շրջանում ավելի մեծ տեղ է գտել նաև բառիմաստի նեղացումը։ Ինչո՞ւ։

Մեր նախնիներից մենք ժառանգություն ստացանք բազմահարուստ մի բառապաշար, որի մեջ հաղորդակցման համար կենսականորեն անհրաժեշտ հազարավոր բառերի կողքին կային նաև բազմաթիվ նույնանիշներ, հնացած կամ հնացող բառեր։ Ժամանակակից գրական լեզուն յուրովսանն օգտագործեց ու պահպանեց այդ հարստությունը. հին և հնացող շատ բառեր մասնավորեցրեց— դարձրեց տերմիններ, նույնանիշների զգալի մասը նրբիմաստավորեց— դարձրեց համանիշներ (իմաստով կամ կիրառությամբ), սահմանափակեց շատ բառերի գործածության ոլորտը, ոմանց ամրացրեց— պահեց առանձին կապակցությունների կազմում։

Խթան *գրաբարում նշանակում էր «խմելու գործիք»։ Սրանից, ֆունկցիոնալ անցմամբ, առաջ եկավ «կոշիկի խթան (հեծյալի)»*

---

[11] *Այստեղ վերապահում պետք է անել.* կաբինետ *բառի հիշյալ նոր իմաստները ոչ թե հայերենի ներսում զարգացման հետևանք են, այլ փոխառություններ։*

իմաստը, որից և փոխաբերաբար՝ «դրդիչ, արագացուցիչ»։ Այժմ այս բառը, նեղացմամբ, գործ է ածվում երրորդ իմաստով միայն (որից՝ խթանել), ուստի երկրորդ իմաստն արտահայտելու համար Գ. Մահարուն հարկ է եղել գործածել կոշկախթան բառը. «— Է՜խ, համեստությո՜ւն, համեստությո՜ւն, ինչո՞ւ դու միշտ հեռու ես փախչում զինվորական կոշկախթաններից...» («Սիրո, խանդի և Նիցցայի պարտիզպանների մասին», 1926), մինչդեռ այդ նույն ժամանակներում Ստ. Զորյանը դեռ խթան բառն էր օգտագործում երկրորդ իմաստով («...մի թուր, որ երկար էր սովորական թրերից ու ծայրը կեռ, այնպես, որ կանգնելիս կամ քայլելիս՝ կես արշին ետ էր մնում նրանից և հաճախ չրխկոցով դիպչում նրա աջ ոտի խթանին...» («Կապիտան Նրամ», 1920—27)[12]։

Զտում 20—30-ական թվականներին տարածվեց «կուսակցության շարքերի մաքրում» իմաստով։ Այսպես նաև՝ աշխատություն— «աշխատանք» (ավելի հին՝ «չարչարանք. ջանք»)— «գիտական աշխատանք», ցուցում՝ «ցույց տալը»[13]— «ի տնօրինություն տրվող հրահանգ», գումարտակ՝ «խումբ, բազմություն», նեղացմամբ՝ «զորքի բազմություն՝ բանակ», սրանից էլ նեղացմամբ՝ «զորքի որոշակի (փոքր) միավորում», օրապահիկ՝ «օրվա պարեն»— «գործուղման օրերին ապրուստի համար տրվող գումար»։

Ներկայիս բազմահազար տերմինները հարուստ նյութ են տալիս առանձին ուսումնասիրության համար։ Մենք բավարարվենք դրանց մասին մի քանի խոսք ասելով՝ իմաստափոխության տեսանկյունից։

Արդյունագործել (գրաբարում՝ «բուսցնել»), **արդյունագործ** (գրաբարում՝ «1) պտղաբեր, 2) երկրագործ»), **արդյունագործություն** արդի լեզվի մեջ իրենց գոյությամբ «պարտական են» այն բանին, որ դարձել են տնտեսագիտական տերմիններ՝ «արտադրության նախնական մի ձև» իմաստով (ի տարբերություն այժմյան արդյունաբերության[14]։ Այսպես իմաստի նեղացումով տնտեսագի-

12 Խթան բառը երրորդ իմաստով նախահեղափոխական շրջանում համարյա չէր հանդիպում. այդ նշանակությամբ ավելի հաճախադեպ էր դրդիչ. «...Ոչ մի էսթետիկական բան չկա, ոգևորության ոչ մի դրդիչ, երևակայության սնունդ տվող մի հանգամանք» (Հովհ. Հովհաննիսյան, Նամակ Մ. Բարխուդարյանին, 1912)։

13 Հմմտ. «Զարթնելով, առաջին պահ ես, հարևանիս ցուցումով, ճանաչում եմ գիշերը լացող կնոջը...» (Ստ. Զորյան, Կապիտան Նրամ)։

14 Հմմտ. «...Իրավի, բավական է մի թեթև հայացք ձգել այժմյան բուրժուական կազմի վրա, նկատելու համար, թե ինչ մեծ դեր է խաղում լեզուն հասարակական հարաբերությունների, առևտրի և արդյունագործության վերաբերմամբ» (Ս. Սպանդարյան, Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան»)։ Մինչև

տական տերմիններ են դարձել նաև՝ արտադրել* (վերարտադրել), արտադրություն* (վերարտադրություն), արտահանել* (-ություն*), ապրանք*, գին*. արժեք*, ներմուծել (-ություն), առաջարկ*, պահանջարկ. հանրային (սեփականություն), ավելցուկ, ձեռնարկություն*, մկրատ* և այլն[15]:

Կուսակցական կյանքի և քաղաքական տերմիններ. գիծ*, գլխավոր* գիծ, բանաձև*, որոշում*, ռեժիմ, նկատողություն*, զգուշացում, դիտողություն*, ի ցույց*, աջ*, ձախ*, բեքում (նաև բեքականական), չեզոքացնել, անկայուն (տարր), դռնբաց*, դռնփակ (գրբ. դռնափակք «դռան փակք»), նախագիծ*, շերտավորում, բանվոր, աշխատավոր* և այլն:

Մանկավարժության և ժողովրդական կրթության սիստեմի. հեռակա[16] (գրբ. ունել հեռակայութիւն), ուսուցում*, կրթություն*, դաստիարակություն*[17], դասախոսություն[18], ուսումնարան*[19] և այլն:

Հիշյալ տերմիններից շատերը պահպանել են նաև իրենց զուգահեռ իմաստը կամ իմաստները, բայց նրանց նշանակությունը նեղանում է բոլոր դեպքերում, հենց որ նրանք գործ են ածվում իբրև տերմիններ:

* *
*

Գրաբարը շատ հարուստ էր նույնանիշներով: Հայ հին մատենագրության ոսկեդարի լեզվի, նրա ոճական կառուցվածքի տեսակետից միանգամայն բնական է հնչում նույնանիշների առատ

վերջերս էլ ավագ սերնդի ներկայացուցիչները այս բառը գործ էին ածում «արդյունաբերություն» իմաստով (հմմտ. Մալխասյանցի բառարանը, ավելցուկ բառի տակ):

15 Աստղանիշով տրվում են գրաբարում այս կամ այն իմաստով վկայվածները:

16 Հմմտ. «Եվ զգում էին, հոգնած ու տխուր, Որ կընկնի՜, կընկնի՜ լույսը հեռակա Վերջին խավարի գիրկը ահավոր» (Ե. Չարենց, Երկեր, 1915—16), «...Ինչպես էլբրուսն է երևում լեռների մեջ հեռակա...» (Ն. Զարյան, Լանք, դարեր):

17 Արդի մանկավարժության մեջ այս բառերը տերմինաբանական նոր երանգավորում են ստացել:

18 Հմմտ. «Այդ բոլոր ժամանակ պարոն Մարությանը կանոնավորապես այցելում էր Լազարյանների տունը և դասախոսում էր Աննային» (Մուրացան, Անպատճառ իշխանուհի, 1886):

19 Հմմտ. «Եվ շատ անգամ, ի նկատի ունենալով հենց այդ ծախսը, բանվորը չէ ուղարկում իր երեխային ուսումնարան» Ս. Սպանդարյան, Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան):

գործածությունը, թեև, ըստ երևույթին, գրաբարի նույնանիշների հարստության արմատները գնում են նախագրային հայերենի պատմության խորքերը, դուրս են գալիս սոսկ ոճական նկատառումների շրջանակներից:

Այլ են մեր ժամանակները՝ ճշգրիտ գիտությունների և դատողությունների, ամենափոքր մասերի կտորակվող հասկացությունների և, միևնույն ժամանակ, ամենախոշոր ընդհանրացումների ծնունդ տվող, շրջապատող աշխարհի մասին մարդկանց խորախոր և հարաճուն գիտելիքների մեր ժամանակները:

Մենք հակված ենք սրանով բացատրելու այն ներուժ (ինտենսիվ) գործընթացը, որ տեղի է ունենում բառերի նրբիմաստավորման ասպարեզում մեր դարի սկզբներից, առանձնապես վերջին քառասնամյակում:

Կա «աշխատանք» ընդհանուր հասկացությունը, բայց աշխատանքը տարբեր է լինում, ունի տարբեր կողմեր, նույնիսկ տարբեր մեկնություններ: Ահա թե ինչու աշխատանք բառի կողքին մենք տեսնում ենք նրա համանիշները՝ գործ, պարապմունք (∠«գործ, զբաղմունք»[20]), զբաղմունք: Կամ՝ «կռվել» հասկացության բոլոր կողմերը չեն կարող արտահայտվել այդ մեկ հատիկ բառով. «օգնության են գալիս»՝ պայքարել, մարտնչել, գոտեմարտել, ճակատ տալ, մաքառել, կռվի բռնվել (մարտի բռնվել), կուրծքը դեմ անել, պայքարի ելնել... Սրանք ցույց են տալիս գործողության կատարման կա՛մ տարբեր եղանակներ (կռվել — կուրծքը դեմ անել), կա՛մ առանձին պահեր (կռվել — կռվի ելնել, մարտի բռնվել, պայքարի ելնել), կա՛մ էլ զուգակցվում են տարբեր հասկացություններ արտահայտող բառերի հետ, որովհետև՝ երեխաները կռվում են, դասակարգերը, մոնոպոլիաները, մարզիկները՝ պայքարում[21], թշնամիները՝ մարտնչում իրար հետ (կամ դեմ), ըմբիշները՝ գոտեմարտում, զորքերը՝ պատերազմում ու ճակատ տալիս, իսկ դժվարությունների դեմ արդեն՝ մաքառում են...

Ունենք երազ (ընդհանուր), անուրջ (քաղցր երազ), ցնորք

---

[20] Հմմտ. «...ուրեմն սիրենք այն գործը, այն զբաղմունքը, որ զորացնում է մեր մեջ կռովը — հոգեկան ուժը» (Մուրացան, Ջհաս է: Ընդգծումը հեղինակինն է):

[21] Տերյանն ասում էր դասակարգային կռիվ (Վ. Լենինի «Պետություն և հեղափոխություն» թարգմանության մեջ, էջ 10), իսկ Ա. Խանջյանը՝ արդեն դասակարգային պայքար («Մայիսյան ապստամբությունից դեպի Նոյեմբերյան հաղթանակը», 1935):

(անմաքուր երազ՝ նկրտում)[22], բայց ավելացրինք (ավելի ճիշտ կլինի ասել՝ ավելացրին արդեն նախահեղափոխական շրջանում) ուտոպիա՝ ցույց տալու համար հասարակության ապագային վերաբերող երազը, այն էլ ոչ ռեալ, անիրականանալի:

Համեմատենք հետևյալ օրինակները.

«Անալիզի ենթարկել այդ փորձը, նրանից տակտիկայի դաս առնել, վերաքննել դրա հիման վրա սեփական ծրագիրը — ահա թե ինչպես էր ըմբռնում Մարքսն իր անելիքը» (Վ. Ի. Լենին, Պետություն և հեղափոխություն, Տերյանի թարգմ., էջ 41—42): «Վերլուծել այդ փորձը, նրանից տակտիկայի դասեր քաղել, դրա հիման վրա վերանայել իր թեորիան — ահա՛ թե ինչպես էր դնում Մարքսն իր խնդիրը» (Նույն աշխատության նոր թարգմ., երկերի 4-րդ հրատարակություն, հատոր 25, էջ 534: Բոլոր ընդգծումները մերն են — Պ. Բ.):

Ընդգծված բառերի կիրառության համեմատությունը ակնբախ կերպով ցույց է տալիս այն տեղաշարժերը, որ առաջացել են դրանց իմաստների մեջ Տերյանից հետո, և թե ինչպես է նոր թարգմանիչը հատվածի հայերեն թարգմանության մեջ հաշվի առել հիշյալ բառերի ժամանակակից իմաստային և ոճական նրբությունները (թեև չհաշվենք «իր խնդիրը դնել» տառացի թարգմանությունը):

«Սակայն դառնանք Էնգելսի շարադրությանը» (Տերյանի թարգմ., էջ 14):

«Սակայն վերադառնանք Էնգելսի շարադրանքին» (Նոր թարգմ., էջ 501):

Իհարկե, մեր այսօրվա լեզվի տեսակետից երկրորդ ձևակերպումն է ճիշտ. դառնալ այժմ ավելի շատ վերացական բայ է՝ «վերածվել՝ փոխակերպվել» նշանակությամբ, իսկ շարադրություն արդեն տերմին է, որով կոչում ենք լեզվից գրավոր աշխատանքի մի տեսակը:

Այդպես է. այժմ արդեն ճաղբել ուրիշ է, քան ճաղբահարել[23]:

---

22 Նախահեղափոխական գրականության մեջ հանդիպում էր և դրական իմաստով: Այնուհետև, նկատի ունենանք, որ բառը նախորդներին համանիշ է իր իմաստներից մեկով:

23 Հմմտ. «Եվ Սալոմեն յուր սկսած գործերի մեջ երևան եկող դժվարություններն և արգելքները հաղթելու համար ամեն միջոց առձեռն (!) ուներ» (Մուրացան, Հարուստները զվարճանում են): «Տիկնոջ ձայնը կարծես նրան սթափեցրավ և յուր տկար ախոյանին հաղթահարելու համար մի նոր ուժ տվավ իրեն...» (Նար-Դոս): Այժմ մենք այդ բառերի տեղերը պարզապես կփոխենք:

նկատողությունն *այլ է*, դիտողությունը՝ *այլ*, *ուրիշ են*՝ խնդիր—խնդիրք[24], անցագիր — անձնագիր[25], տուգանք — տույժ[26], խնդիր—հարց (—պրոբլեմ)[27], աշխատավոր — աշխատող[28], պաշտպանել *(մի բանից)* — պահպանել *(եղածը)*, մերժել — ժխտել — հերքել — բացասել, սովորել — սերտել, տալ — մատուցել, գրադարան — մատենադարան, մրուր — տականք *(հասարակական)*, ապստամբություն — հեղափոխություն — խռովություն — խըլըրտում — հուզում, ծածուկ — ընդհատակյա, օգնել — օժանդակել, ցուցում — ցուցմունք, քաղաքական — քաղաքային...

Այժմ ասում ենք՝

ոչ թե...	...այլ
մարտական կանչ[29]	մարտական կոչ
ժողով հավաքել[30]	ժողով գումարել
«պատմության նոր գիտությամբ»	«պատմության բաց իմացությամբ»...

Մեր արդի գրական լեզվի համանիշների ամենաբնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ այստեղ այժմ ավելի շատ և ավելի հաճախ,

---

24 *Հմմտ. «Եվ Գեորգն անընդհատ դիմում էր մերթ սրան, մերթ նրան, խընդրում էր, աղաչում էր, բայց իզուր, ոչ որ նրան չլսեց. ոչ որ նրա խնդիրն ուշադրության չառավ»* (Մուրացան, *Հասարակաց որդեգիրը*):

25 *Հմմտ. «...ոստիկանությունը գործադուլներից խլելով անցագրերը, արտաքսում է նրանց Պետերբուրգից»* (Ս. Սպանդարյան, *Գործադուլների մասին, 1906*):

26 *Հմմտ. « — Բայց եթե կա մի մտածմունք, որ ինձ տանջում է, դա բոլորովին նոր է, հենց այսօրվանից. և նրա պատճառած տուգանքը հոգեկան զվարճություն է բերում ինձ...»* (Մուրացան, *Անպատճառ իշխանուհի*):

27 *Հմմտ. «Նա (Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը — Պ. Բ.) փորձում էր ընդդեմ դաշնակցական կառավարության՝ լուծել հողային խնդիրը»* (Ա. Խանջյան, *Մայիսյան ապստամբությունից մինչև Նոյեմբերյան հաղթանակը*): *Այժմ կասեին՝* ագրարային հարցը:

28 *Հմմտ. «...կուսակցության բոլոր աշխատավորները իրենց ամբողջ ջանքը պետք է գործ դնեն այդ ուղղությամբ»* (Ս. Սպանդարյան, *Բանվորական պրոֆեսիոնալ միությունների մասին*):

29 *Հմմտ. «Կոմունիստական ինտերնացիոնալի մարտական կանչին հատուկ ուշադրությամբ չեն կարող չհետևել այսօր Հայաստանի և գաղութահայ աշխատավորության լայն մասսաները»* (Ա. Խանջյան, *Կոմունիզմի մարտական ուժերի զորատեսը, 1929*): *Այժմ կասեինք* ստուգատեսը:

30 *Հմմտ. «...մենք հայերս տերտերներ, առաջնորդներ կընտրենք, ազգային ժողովներ կհավաքենք և այնտեղ կճառենք, անվերջ կճառենք հայոց ազգի փրկության մասին...»* (Ս. Սպանդարյան, *Հեղափոխությունը մի թաս ջրում, 1906*):

քան երբևէ, նրանց (համանիշների) եզրերում հանդես են գալիս փոխառյալ բառեր[31]։

Շատ նոր փոխառյալ բառեր կան մեր լեզվում այժմ, որ դարձել են հայերեն բառերի համանիշները, վաղուց տեղ են գրավել նրա բառապաշարի մեջ, դարձրել այն է՛լ ավելի հարուստ, ճոխ ու ճկուն. ինտերնացիոնալ (միջազգային[32]), հեգեմոն, լիդեր (առաջնորդ, պարագլուխ), [քաղաքական] մոմենտ (պահ), ռեալ (իրական), ֆաբրիկա (գործարան), ռեսուրս (աղբյուր), կուրս (ընթացք, դասընթաց. ուսանողների «դասարան»), ֆրազ (նախադասություն, խոսք), կոնֆլիկտ (բախում), մոդա (նորաձևություն, տարազ[33]), էսթետ (գեղագետ), ինստանցիա (տարածություն), վոկալ (ձայնային)...

Այստեղ բնորոշ է նաև այն, որ գրեթե առանց բացառության հիշյալ փոխառյալ համանիշները և նրանց նման շատ շատերը մեր լեզվին են անցել ռուսերենից կամ այլ լեզուներից, բայց նրա միջոցով։

4. ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ

Բառիմաստի զանազան փոփոխությունների հետևանքով զգալի տեղաշարժեր են կատարվել բառերի ձևաբանական արժեքի մեջ (տեղաշարժ խոսքիմասային իմաստի, բայերի սեռային նշանակության մեջ, սպասարկու նոր բառերի առաջացում և այլն)։ Այս մասին մեր լեզվի զանազան իրակությունների ուսումնասիրությանը նվիրված հոդվածներում ավելի մանրամասն կխոսվի։ Մենք բավարարվենք միայն ընդհանուր ակնարկով, ինչքանով որ այն առնչվում է մեր խնդրո առարկային։

Համեմատենք հետևյալ երկու հատվածները, որ վերցված են Ա. Խանջյանի «Գարնանացանի արդյունքները, բերքահավաքի կազմակերպման և կոլտնտեսությունների ամրացման մարտական խնդիրները» զեկուցումից (1933)։

31 Այս կարգի համանիշների մասին հանգամանալից խոսվում է պրոֆ. Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի զարգացման հիմնական փուլերը» (Երևան, 1948) աշխատության 4-րդ գլխում։

32 Ստ. Շահումյանը գրում էր. «Ներկա պատերազմի վերաբերմամբ նա (Ս. Սպանդարյանը — Պ. Բ.) պահպանել էր ամենայն հարազատությամբ իր միջազգային տեսակետը...»։

33 Հմմտ. «Գեղեցիկ հագնված տիկիններ, վերջին տարազով պճնված օրիորդներ, նրբաճաշակ երիտասարդներ — կոկված Փարիզի նորությանց համեմատ...» (Մուրացան, Հարուստները զվարճանում են)։

«Մենք տեսնում ենք, թե ինչպես մենատնտես գյուղացիները, միջակ գյուղացիները. փորձով համոզվելով կոլեկտիվ տնտեսությունների առավելությունների մեջ, ձգտում են կոլտնտեսություն մտնել: Միջակ գյուղացի մենատնտեսը մեզ մոտ ևս համոզված է, որ հաստատուն ապագա ունենալու միակ ելքը՝ կոլխոզ մտնելն է»:

«Իսկ ինչքան շուտ ազնիվ աշխատող մենատնտեսը կոլտնտեսություն մտնի, այնքան լավ իր համար» (ընդգծումներն ամենուրեք մերն են — Պ. Բ.):

Այստեղ մենք պարզ տեսնում ենք, թե ինչպես է մենատնտես բառը ածականից դարձել գոյական (քանի որ այդ ածականը վերաբերում էր բացառապես գյուղացուն, ուստի մի որոշ ժամանակ անց ավելորդ դիտվեց ամեն անգամ գյուղացի բառը կրկնելը):

Ն. Զարյանը «Հացավանում» (1937) գործ էր ածում տնամերձ (ած.) հողամաս կապակցությունը. «Ուրիշները պահանջում էին, որ նոր նախագահը հենց այդ վայրկյանին տնամերձ հողամաս հատկացնի իրենց»: Իսկ «Աղբյուրի մոտ» կատակերգության մեջ (1949) և այլուր՝ արդեն միայն տնամերձ (գոյ.). «Ոչի՛նչ. Գևորգ ջան, տնամերձս ուզում եմ մի քիչ ընդարձակել...»:

Կապակցության, այսպես ասած, կրճատման հետևանքով բառի նշանակության, նրա ձևաբանական արժեքի փոփոխության երևույթը մեր (և ոչ միայն մեր) լեզվում նոր չէ: Հիշենք, թեկուզ, ոտանավոր (ած.) ճերգված — ոտանավոր, մահամերձ (ած.) հիվանդ — մահամերձ[34] և շատ այլ օրինակներ (որոնք գալիս են հնից): Զգացվում է միայն, որ մեր օրերում այս երևույթը ոչ միայն շարունակվում է, այլև առավել ծավալուն բնույթ է ստանում: Հետևյալ մի քանի օրինակներում գոյական-որոշյալի կրճատման հետևանքով ածական-որոշիչը վեր է ածվել գոյականի[35], ականջակալ գլխարկ — ականջակալ[36], համատարած կոլեկտիվացում —

---

34 Հմմտ. «...չորս հազար ոտանավոր տունի մեջ երգել է Ֆաթիհի հաղթանակները և փառահեղ գործերը» (Ավ. Իսահակյան, Ֆաթիհ Սուլթան Մահմեդ, 1921): «Նրա դեմքն այժմ այնպես սառած, այնպես գունատ էր, որ կարծես մահամերձ հիվանդ լիներ» (Նար-Դոս, Պայքար, 1901—02):

35 Ձիավոր, միջակ, կործանիչ, ճակատային բառերի մասին արդեն խոսվել է:

36 Հմմտ. «Մի ժամ հետո եկավ քաղբաժնի նախագահ Մելիքը՝ իր սիբիրական, ականջակալ գլխարկով...» (Ստ. Զորյան. Հեղկոմի նախագահը. 1923):

համատարած[37], մատնաքաշ հաց — մատնաքաշ[38], հավաքական խումբ (*թիմ*) — հավաքական...

Ունենք նաև այլ կարգի կրճատումներ, ինչպես՝ մանկական մսուր — մսուր[39], գթության քույր[40] — քույր (բուժքույր), տաքության աստիճան — տաքություն[41], գիտությունների թեկնածու. կուսանդամության թեկնածու — թեկնածու, միլիցիայի բաժանմունք — բաժանմունք, գրականության, արվեստի տասնօրյակ — տասնօրյակ *և այլն։*

Բավական թվով բայեր մեր օրերում կա՛մ ամբողջովին փոխել են իրենց սեռային իմաստը, հետևաբար և խնդրառությունը, կա՛մ էլ նոր սեռային իմաստ են ձեռք բերել և այն համատեղելով նախկինի հետ՝ դարձել կրկնասեռ բայեր։

Կանգնել *բայը, օրինակ, ներգործականից չեզոք սեռին է անցել։ Այդպես են նաև՝* ճնշել[42], համակրել[43], խանգարել[44]։ *Ընդհա-*

---

37 «...որոշ տեղերում շրջանները համատարած դարձնելու նպատակով ճնշման և սպառնալիքի դիմելը՝ անհատական տնտեսությունները ջրից, ապրանքից զրկելու մասին...» (Ա. Խանջյան, Գյուղական ֆրոնտի հերթական խնդիրները, 1930)։ Ըստ երևույթին համատարած-ի նմանակությամբ էլ հարձակողական-ն էր գործ ածվում իբրև գոյական. «Խորհրդային Հայաստանի 11-րդ տարին կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարի հիման վրա սոցիալիզմի դիրքերի ամրացման, սոցիալիստական լայնածավալ, ընդհանուր հարձակողականի տարի հանդիսացավ» (Ա. Խանջյան, Դեպի նոր հաղթական մարտեր, 1931։ Տե՛ս նաև Ա. Խանջյան, Գործի վերածենք սեպտեմբերյան պլենումի որոշումները, 1932)։

38 Հմմտ. «...թխում է ամենարնտիր մատնաքաշ հացը...» (Ստ. Զորյան, Մի կյանքի պատմություն)։

39 Հմմտ. «...Երեխաներին կժողվեն մի տուն «Մանկական մսուր»...» (Ն. Զարյան, Ռուշանի Քարափը)։

40 Հմմտ. «Այստեղ Մելքոնը ծանոթացավ գթության քույր Լիզայի հետ» (Գ. Մահարի, Երգի և աշխատանքի լեզուն, 1933)։

41 Հմմտ. «Թոքերի բորբոքումը գնալով սաստկանում էր. օր-օրի վրա բարձրանում էր տաքության աստիճանը...» (Նար-Դոս, Պայքար)։

42 Հմմտ. « — Ո՞վ էր՝ հնչեց իմ հին սրտում Սիրո զմրուխտ մեղեդին...» (Ավ. Իսահակյան, Կեռասենին ծաղկեց կրկին..., 1914)։

43 Հմմտ. «...դուք, ինչպես տեսնում եմ, ի սրտե համակրում եք այդ գործը...» (Նար-Դոս, Մահը)։

44 Հմմտ. «...գործնականապես խանգարել հասարակական աշխատանքների կազմակերպությունը — ահա թե ինչով է զբաղված Թիֆլիսի բուրժուական ինքնավարությունը» (Ս. Սպանդարյան, Քաղաքային ինքնավարությունը և պրոլետարիատը), «...վնասարարության միջոցով խանգարում է կոլտնտեսությունների տնտեսական ամրացումը...» (Ա. Խանջյան, ՀԿ(բ)Պ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿ(բ)Պ 7-րդ համագումարում, 1930)։

կառակը, չեզոքից ներգործականին են անցել՝ հավանել[45], ձեռնարկել[46]...: Ս. Խանզադյանը դեռ դիմավորել բայն օգտագործում էր չեզոք սեռի իմաստով. «...ահա ինչ ծանրակշիռ նվաճումներ ձեռք բերեց Համամիութենական կոմունիստական կուսակցությունը հաշվետու շրջանում, որ իրավամբ կոչվում է մեծ բեկման շրջան (ընդգծումը հեղինակինն է — Պ. Բ.), որով և նա դիմավորում է իր առաջիկա XVI համագումարին»[47]:

Նայել բայը ևս, որ առաջ չեզոք սեռի իմաստով էր հանդես գալիս (գլխավորապես), այժմ ձեռք է բերել ներգործական սեռի բայի մի քանի նոր նշանակություններ՝[48] «դիտել» (նայել կինոնկարը), «նայելով թերթել» (նայել ալբոմը, գիրքը), «քննել» (նայել հիվանդին, վերքը, նախագիծը), «ստուգել» (նայել փաստաթղթերը, նյութերը), «զննել» (նայել տեղանքը)[49]:

Շատ բառերի ձևաբանական իմաստի մեջ տեղաշարժեր են եղել նաև այն բանի հետևանքով, որ քարացել է նրանց ուղիղ կամ այս կամ այն թեք ձևի նշանակությունը: Այսպիսով շատ «լի» բառեր դարձել են «դատարկ»[50]: Հատկապես առատ են այս ճանապարհով առաջացած նոր կապերը (կապական բառերը), ինչպես՝ ճանապարհով, ուղղությամբ, ձևով, պատճառով, նպատակով, չնայելով, չնայած, նայած, նայելով, ընթացքում, կապակցությամբ...: Անշուշտ վերոշարադրյալը ամենևին էլ չի նշանակում, թե նշված բառերը ամենուրեք հանդես են գալիս սոսկ իբրև կապեր: Ոչ. այս բառերի (գոյականներ, բայեր) մնացած ձևերը, իսկ երբեմն էլ հենց նշված ձևերը խոսքի մեջ շարունակում են գործածվել իրենց նյութական իմաստով:

---

45 Հմմտ. « — Այնպե՛ս, էլի, չե՞ս հասկանում. ուզում եմ ասել, հավանո՞ւմ ես նրա գեղեցկությանը, նրա շնորհքին, նրա...» (Մուրացան, Հարուստները զվարճանում են»): Հավանել չեզոք էր հատկապես «համաձայնել» իմաստով:

46 Հմմտ. «...ձեռնարկել է մեր քաղաքի նոր հատակագծին...» (Ստ. Զորյան, Սպիտակ քաղաք): Այստեղ իրեն զգալ է տալիս ստուգաբանական իմաստը:

47 «ՀԿ(բ)Պ Կենտկոմի հաշվետու զեկուցումը...»:

48 Բայիս ներգործական մի շարք իմաստներ (քննել, դիտել) եղել են և նախահեղափոխական շրջանում, բայց մեր օրերում դրանք ամրապնդվել են ու ստացել իմաստային ու կիրառության նոր երանգներ:

49 Բայերի սեռային իմաստի մեջ տեղաշարժերի, ինչպես նաև նրանց կրկնասեռության մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Ս. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962, էջ 681—722:

50 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ալ. Մարգարյան, Արդի հայերենի կապերը (Երևան, 1955) և Ս. Գ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում (Երևան, 1965, էջ 335—341):

Այժմ եղանակավորող բառեր ու արտահայտություններ են՝ առանձնապես[51], մասնավորապես, նույնպես (երբեմնի ցուցական դերանուն. այժմ նաև համադասական շաղկապի կիրառություն ունի), վերջին հաշվով, ինչ էլ որ լինի, այլ կերպ ասած, այսպես ասած, ըստ էության, այդ (Տ. Կուրղինյան, *Այդ մենք ենք գալիս*)։

Կան և խոսքիմասային իմաստի տեղաշարժի մասնակի դեպքեր, ինչպես՝ որոշ ածականի՝ համապատասխան իմաստով երկար օգտագործվելու հետևանքով անորոշ դերանվան վերածվելը, կամ որպես բառի՝ վերջնականապես իբրև կապ հաստատվելը (նախկինում հանդիպում էր նաև իբրև հարցական-հարաբերական դերանուն) և այլն։

5. ՆՈՐ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՈՐ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Մեր լեզվի բառապաշարի զարգացման ներկա վիճակի բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ **կայուն փոխաբերությունների** առատությունն է։

Փոխաբերությունը առհասարակ մարդկային լեզվամտածողության (և ոչ թե միայն պատկերավոր մտածողության) կարևոր հնարներից մեկն է։ Կայուն փոխաբերություններ մեր լեզվում վաղուց անտի գոյություն են ունեցել։ Ավելին։ Մենք ունենք փոխաբերության հիման վրա կազմված հնագույն բառեր, ինչպես՝ գայրանալ *(գ-այր-անալ)*, զարմանալ *(զ-արմ-անալ)*, աղեխարշ և այլն։

Ինչպես որ վայել է մեր սրընթաց ժամանակին, կայուն փոխաբերությունները այժմ դարձել են մեր լեզվի բառապաշարի արագ հարստացման ու ճոխացման կարևոր միջոցներից մեկը։

Ստորև բերում ենք բառերի մի համառոտ ցանկ, որոնք, ինչպես ասում են, «մեր աչքերի առաջ» են ձեռք բերել փոխաբերական կայուն նշանակություն[52]։

---

51 Հմմտ. «...միջին հարկում առանձնապես ապրում էր ինքն աղա Գրիգոր Մոսինչը Բարսեղի հետ...» (Նար-Դոս, Բարերար և որդեգիր, 1886), «...քեզ եմ դիմում առանձնապես իմ և ընդհանրապես հանձնաժողովի անդամների կողմից...» (Նույն, 1908 թ. նամակ)։

52 Տրվում են այդ նոր իմաստները միայն։

ահազանգել — «*ազդարարել (որևէ թերության, չարագործության են մասին)*»

աղ — «*հիմնական իմաստ. անհրաժեշտ բաղադրիչ*»[53]

աղմկել — «*սնապարծությամբ ուռճացնել*»

անարյուն — «*առանց զոհի՝ խաղաղ*» (*Հոկտեմբերյան հեղափոխությունը ամենաանարյուն հեղափոխությունն էր*)

անկյունաքար — «*հիմք, հիմնական բաղադրիչ*»

բացվել — «*1) զարգանալ՝ աճել, 2) սպորտային լավ մարզավիճակի մեջ մտնել*»

բեռնաթափել — (*հանձնարարությունների, դասերից են*)

գրասենյակային — «*ներփակված՝ կյանքից կտրված. բյուրոկրատական*»։ *Կա և* կաբինետային

գունազարդել — «*թերությունները կոծկելով՝ լավ կողմից ցույց տալ*»

դեղատոմս — (*բացասական*) «*որևէ խնդրի լուծման միջոց*» (պատրաստի դեղատոմս)

զարկերակ — «*գլխավոր իմաստ, տենդենց. կենսական օղակ*» (*դարի, կյանքի զարկերակը. գործարանի զարկերակը*)[54]

էլեկտրականանալ — «*լարվել՝ շիկանալ*»

ընդգծել — «*շեշտել՝ հատուկ սրությամբ դնել*»

խոց (*բզբկն.*)— «*հիվանդոտ՝ նեխած կողմ*» (հասարակության խոց)

ծանրաբեռն(ված)ություն— (*դասերով, հանձնարարություններով են*)

ծխածածկույթ — «*վատ կոծկող շղարշ*» (սուտ ծխածածկույթ)

կոծկել — «*(թերությունը) քողարկել, սվաղել*»

համահարթել — «*ամեն ինչ հավասարեցնել՝ զանց առնելով առանձնահատկությունները*»

ձգել — «*1. արհեստականորեն քաշել-հասցնել, 2. զգաստացնել*»

ճշալ (*խսկց.*)— «*պոռոտ լինել՝ խիստ աչքի ընկնել*» (Հեռվից-հեռու ճշում է)

մաղել — «*(շարքերը) նոսրացնել*»

մեխ(ը) — «*գլխավոր իմաստ(ը), գլխավոր օղակ(ը)*»

մոլախոտ (*սոցխոլ*). — «*հակահասարակական՝ պորտաբույծ տարր*»

շրջանցել — «*անտեսել՝ անգիտել. մի կողմ թողնել՝ խուսափելով*»

պատվաստել— «*ներարկել՝ մեկի մեջ (մի նոր բան) զարգացնել*»

---

53 *Հմմտ. «...և զթերին պատսպարել և խաւարեալսն լոյս և աղ և խրատիչ լինել, ըստ աստուածային կանոնին...» (Նարեկացի)։*

54 *Հմմտ. «...քամբակը երկրին (Եգիպտոսի—Պ. Բ.) չիղն է...» («Նաիրի» շաբաթաթերթ, Բեյրութ)։*

ջերմոցային — «կյանքից կտրված»
սակավարյուն — «նվազ՝ թույլ»[55]
սվաղել — «կոծկել»
սրել — «սուր կերպով դնել» (հարցը սրել)
տնարույս (արհմրհ.), — «նորաթուխ»[56]
ուղղագիծ — «ոչ-ճկուն» (ուղղագիծ քաղաքականություն վարել)
ուռճացնել «արհեստականորեն չափազանցել՝ ճոխացնել» (հաստիքները, թվերը ուռճացնել. թերությունները—)[57]

Շատ բառեր էլ, եթե առանձին վերցրած նոր փոխաբերության արժեք չունեն, ապա նորակազմ կայուն բառակապակցությունների մեջ լրացուցիչ երանգավորում են ստանում։ Ով իմանա ո՞ր ժամանակից ծռել բայն ունի «շեղել» փոխաբերական նշանակությունը, հոտառություն բառը՝ «զգացողություն»։ Սակայն այդ նույն բառերը հարցը ծռել, քաղաքական (գիտական, արվեստի) հոտառություն կայուն բառակապակցությունների մեջ փոխաբերության նոր երանգներով են հանդես գալիս։ Այսպես նաև՝ քաղաքական, սոցիալական աստառ, լուսավոր կետ (հուսադրող՝ լավատեսություն ներշնչող հանգամանք), լուսավոր կողմ (քղքկն.) «դրական գծեր արտացոլող». հակառակը՝ ստվերոտ կողմ, վերքն սպիանալ, պոչատ մանիֆեստ, — կոնստիտուցիա, արատավոր ոճ, դիրք բռնել, լիրիկական զեղում, տեխնիկան թամբել, զգոնությունը բթացնել, օդային կամուրջ, չեզոք գոտի (զոնա), պատերազմ սանձազերծել, բյուրոկրատական քաշքշուկ, խոր ընդհատակ անցնել...

Սրանց կողքին, փոխաբերության ճանապարհով սովետական շրջանում մեր լեզվի մեջ ավելացել են շատ նորանոր դարձվածքներ, ինչպես՝ կամուրջները այրել իր ետևից, դիմակը դեն նետել, քննադատության (չ)դիմանալ (խիստ արատավոր լինել, կոպիտ սխալներ պարունակել), որակ (չ)կազմել, (իր) դարն ապրել, սուրճի մրուրի մեջ գուշակություններ անել (բացատրական՝ «մտացածին բաներ հորինել»), վերքերը բուժել (պատերազմի), հաշված օրեր են մնացել մինչև..., սվիններով դիմավորել, ամբիոնից ճառ ասել (բացատրական՝ «դատարկ ֆրազներ արտասանել». «խոսել, բայց գործելու պատրաստակամություն չունենալ»), կլոր սեղանի շուրջ

55 «Սակավարյուն գյուղերում բաբախեց նոր մի երակ» (Ն. Զարյան, Ռուշանի Քարափը)։

56 «...մեծացնում է տնարույս եսասերների, գծուծ շահամոլների» («Երևան» օրաթերթ)։

57 Բերված այս փոխաբերությունների մեջ և շատ են պատճենումները։

հավաքվել (հստել), անցած էտապ է, սուր ծայրով ուղղված լինել *(մեկի, մի բանի)* դեմ, սառույցը կոտրվել, գաղափարական (մարտական) մկրտություն ստանալ...

Դարձվածքային կայուն կապակցություններ. մաշված խոսքեր, թնդանոթի միս, դանդաղ գործող ռումբ *(դավադրաբար սարքված խոչընդոտ)*, *(մոդայի)* վերջին ճիչ, *(տեխնիկայի, գիտության)* վերջին խոսք, հրանոթների փողերի տակ *(զենքի սպառնալիքի պայմաններում)*, «սպիտակ բիծ» *(1. չհայտնաբերված հողամաս աշխարհում, 2. փխբ. գիտության մեջ լուծում չստացած պրոբլեմ)*, ջունգլիների օրենք *(գայլային օրենք)*, ափի մեջ *(պարզորոշ տեսանելի)*...

Եթե ուշադիր հետևելու լինենք մեր լեզվի բառապաշարի զարգացման ընթացքին, կտեսնենք, որ հոմանիշների ամրացումը այս կամ այն դարձվածքի կամ կայուն կապակցության կազմում, դարձվածքների ու դարձվածքային արտահայտությունների (ինչպես նաև կայուն բառակապակցությունների)՝ ավելի առատ չափով կազմումը հայոց լեզվի բառապաշարի զարգացման ներքին նկատելի տ ե ն դ ե ն ց ն են:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԱՆԳՆԵՐ

Ե՛րգ իմ, դու եղել ես ու կմնաս կրկին
Նորի, լուսավորի պայծառ քնարերգուն,
Բայց և ստվե՛րը տես ու այպանիր ուժգին,
Օգնի՛ր մաքրել օդը փոշուց անգույն:

Սիլվա Կապուտիկյանի «Բանաստեղծի խոսքը» քերթվածից վերցված այս տողերի մեջ նոր, լուսավոր և ստվեր *հայկական հնագույն բառերը արտահայտում են իմաստային լրացուցիչ՝ ս ո ց ի ա լ ա կ ա ն ե ր ա ն գ.* նոր և լուսավոր *այստեղ նշանակում են «հասարակական նոր՝ լուսավոր կյանք (կամ կյանքի երևույթ)», իսկ* ստվեր՝ *«հասարակական կյանքի ստվերոտ կողմ»:*

Այդպես էլ հետևյալ քառատողի մեջ շերտավորում, անհաշտ և մերկացում *բառերն ունեն քաղաքական երանգավորում.*

Սրան սանահեր է, նրան՝ քավոր,
Մեկին՝ աներձագ, մյուսին՝ փեսացու:
Իսկ շերտավորման գրքում՝ չքավոր.
Ուրեմն պետք է անհաշտ մերկացում:

(Ն. Զարյան, *Ռուշանի Քարափը)*

Սոցիալիստական հեղափոխության հաստատման, հաղթանակի ու հաղթարշավի տարիներին, մեր սոցիալիստական երկրի ու ժողովրդի հիսնամյա բարգավաճման ընթացքում և նրա շնորհիվ անհամեմատ բարձրացել է լայն զանգվածների սոցիալ-դասակարգային գիտակցության մակարդակը: Այս հանգամանքը չէր կարող իր կնիքը չդնել ժողովրդի գործածած շատ բառերի իմաստային կողմի վրա, այնտեղ չմտցնել սոցիալական, երբեմն էլ դասակարգային երանգավորում:

Պետք էր միայն լսել, թե համատարած հեղափոխական տրամադրությամբ տոգորված տարիներին, ինչպես և, այսպես ասած, «պրոլետկուլտական» մտայնության տարիներին ժողովրդի բերանում հասարակական արհամարհանքի ինչպիսի՜ երանգավորումով էին հնչում բարեհաճել, շնորհ բերել, շնորհ անել, ժամանել, բազմել, մեծարգո, մեծապատիվ, հարգարժան, պատվարժան, վսեմափայլ տեր, նորին մեծություն և այլ բառեր ու արտահայտություններ, որոնք վերնախավի ներկայացուցիչների լեզվում սոսկ քաղաքավարական արտահայտություններ էին: Ապա բյուրոկրատ, չինովնիկ[58] աղա, խմբապետ, մաուզերիստ, խանութպան, պարոն, օրիորդ, տիկին, փափկասուն, փափկակենցաղ, ճարպոտ, հաստափոր և նման բառե՞րը: Այսօր էլ դրանց մեծ մասը շարունակում է օգտագործվել իմաստային նույն բացասական և արհամարհական երանգով:

Իմաստային սոցիալական, քաղաքական երանգավորում են ստացել նաև՝ սենյակային[59], հին[60], կարգ (հասարակական)[61],

---

58 Հմմտ. «Մնացածները մեծ մասամբ «պաշտոնյաներ» են (ընդգծումը մերն է — Պ. Բ.) և փոխանակ կոլտնտեսային բրիգադներում... աշխատանք տանելու և անկուսակցական կոլտնտեսականներին օրինակ հանդիսանալու, դեռ շարունակում են նստած մնալ այս կամ այն հիմնարկում, շատ անգամ տեխնիկական չընչին աշխատանքներ են տանում» (Ա. Խանջյան. Նոր թափ և բարձր որակ կազմակերպչական և մասսայական աշխատանքներին, 1932): «Փաստեր կան, որ տեղերում այդ ապարատը սողոսկել են անհարազատ էլեմենտներ, բյուրոկրատներ, չինովնիկներ...» (Ա. Խանջյան. Կուսակցության հերթական անելիքները գյուղում).

59 «...լեզվի մեջ էլ Դեմիրճյանն աչքով աչք չունի այն ամենի հետ, ինչ սենյակային է, կյանքի ժխորից մեկուսացած» («Սովետական Հայաստան» օրաթերթ):

60 «—Ուզում է, ամեն բան հնի պես ըլի: Էդ գնա՜ց, հոքիր ջան, գնա՜ց: Հիմի խորհրդային իշխանություն է, հասկանո՞ւմ ես...» (Ստ. Զորյան. Վարդածորի «կոմունը»):

61 «Բանվոր դասակարգի և այն կռվի համար, որ նա տանում է ներկա կապիտալիստական կարգի հիմքերի դեմ, ներկա բուրժուական կարգերի ամբողջության դեմ — չի օգնի ոչ դաշույնը և ոչ գնդակը» (Ս. Սպանդարյան, Կազմակերպությո՞ւն, թե բանի ում):

դեմք[62] (ազգային, քաղաքական), բաց[63] (*փոխ. — «Թերություն՝ կյանքում, աշխատանքում, անձնական վարքի մեջ»*), զարթոնք[64] (ազգային, քաղաքական), կազմակերպվել (*քաղաքականապես*)[65], շղթա, ճնշում (*քաղաքական*), տատանվող (*քաղաքականապես*)[66], կարմիր[67], առաջադեմ[68] (*հասարակական-քաղաքական առումով*), անհարազատ, անկայուն (տարր) *և այլն:*

Զգտումը դեպի հասարակական կյանքին գործուն մասնակցությունը պատճառ դարձավ, որ մենք բացասական երանգով օգտագործենք այնպիսի բառեր ու արտահայտություններ, ինչպիսիք են՝ ճառ, ճառել (ճառ ասել), ամբիոնից ճառ ասել, քարոզ կարդալ *և այլն:*

Գոյություն ուներ հարյուրամյակների ճանապարհ կտրած հայերեն գեղեցիկ մի բառ՝ դաշնակ, *նույնքան գեղեցիկ իմաստով՝ «ներդաշնակություն», հետագայում՝ «դաշնամուր»: «Դաշնակցություն» կուսակցության անդամները իրենց կոչեցին «դաշնակներ», և ահա ըստ երևույթին տխրահռչակ «անկախ հանրապետության» մասին թարմ հիշողությունն է, որ մեզ ոչ մի կերպ թույլ չի տալիս* դաշնակ *բառն օգտագործել որևէ այլ իմաստով (հմմտ. նաև* խմբապետ, մաուզերիստ *բառերի նշանակության բացասական երանգը):*

Քրիստոնեական գաղափարախոսության և եկեղեցու բաղ-

---

62 *«Կդիմես կենտրոն, տրակտոր կտան, կփոխվեն արագ գյուղն ու գյուղացին: Այո, պետք է մեզ որոշակի դեմք...» (*Ն. Զարյան, *Ռուշանի Քարափը): «Չենաց ամեն ինչ փոխվեց: Սաթոն դառավ դեմք. ֆիգուրա, որակ»* (Դ. Դեմիրճյան, *Սաթոն):*

63 *«Որպեսզի այսպես չանենք իմ ու քոն Ու էս բացերը արագ վերանան...»* (Ն. Զարյան, *Ռուշանի Քարափը):*

64 *«Երկաթե սալիկի վրա երեք անգամ զնգաց հերթապահ ավագի երկաթե գավազանիկը: Այս զարթոնքն է»* (Գ. Մահարի, *Սև մարդը, 1960): Սա բառիս ընդունված կիրառությունը չէ: Պարզ նկատվում է հեղինակի փորձը ռուսերեն* подъем *բառի հոմանիշն ստեղծելու:*

65 *«...ահա այդ Սաթոն հիմի քաղաքացի է, կազմակերպված մարդ...»* (Դ. Դեմիրճյան, *Սաթոն):*

66 *Բառս փոխաբերական՝ «երկմտող» իմաստը վաղուց ուներ. քաղաքական երանգն է նոր:*

67 *«Հեղափոխական» իմաստը վաղուց ուներ. «կոմունիստ (բոլշևիկ)» նշանակությունն է նոր:*

68 *Հմմտ. «...բոլորն էլ ասում էին, որ լավ է սովորում, առաջադեմ է»* (Ստ. Զորյան, *Գրադարանի աղջիկը, 1925): Բառս, սակայն, այս նշանակությամբ այժմ գործածական չէ. նրա համար ունենք* առաջավոր:

մադարյան տիրապետության շրջանում «հեթանոս» և «աշխարհիկ» շատ բառեր կրոնական ու սնոտիապաշտական «շապիկ հագան». հաղորդ(վ)ել — «սրբություն տալ (ստանալ)»[69], սեղան — «սուրբ սեղան (եկեղեցու խորանում)[70]», ճաշակել — «հաղորդվել»[71], շար — «շարք»[72], կարգ — «եկեղեցական աստիճան»[73], փոխ — «ժամերգության մի ձև»[74], թափոր — «եկեղեցական երթ» և այլն, և այլն:

Այժմ, երբ լայն զանգվածների՝ գիտությանը տիրապետելու և աշխարհն ու նրա բազմազան երևույթները ճշմարտացիորեն ըմբռնելու պրոցեսին զուգընթաց, մարդկանց ուղեղից դուրս են մղվում կրոնական ու սնոտիապաշտական գաղափարները և պատկերացումները,—հիշյալ կարգի բառերը արդեն պատռել են այդ «շապիկը» և մեզ դարձյալ ներկայանում են իրենց «երկրային» բովանդակությամբ:

Եվ եթե գրականության մեջ նրանք այնուամենայնիվ հանդիպում են իրենց հին իմաստով, ապա այդ մեծ մասամբ պատմական բովանդակություն ունեցող երկերում և ծառայում են ժամանակաշրջանի կոլորիտն ստեղծելու նպատակին: Հմմտ. « — Զըղվել եմ, չե՛մ կարողանում: Անիծի՛ր ինձ, տե՛ր հայր: Խաչս ծանր է» (Ս. Խանզադյան, Մխիթար սպարապետ), «Առաջ նա (քահանան — Պ. Բ.) «հովվելու» էր գնում նաև մոտակա Եղնոստ փոքրիկ գյուղը...» (Ստ. Զորյան, Վարդաձորի «կոմունը»):

Հաճախ էլ (մանավանդ վերջին շրջանում) իմաստային կրոնական երանգավորում ունեցող բառերը հեղինակների կողմից գործ են ածվում փոխաբերական նշանակությամբ, և դա բնագրին տալիս է ավելի մեծ արտահայտչականություն:

---

69 «Հիվանդին այս առավոտ հաղորդել էին...» (Դ. Դեմիրճյան, Տերտերը, 1916):

70 « — Դուն սեղանին էիր մոտեցե, աղոթք կէնեիր...» (Դ. Դեմիրճյան, Ավելորդը, 1916):

71 « — Ո՛վ է իմանում, ա՛յ տո. հանկարծ հիվանդանանք. ո՞նց պիտի տերտեր կանչենք ճաշակելու» (Ստ. Զորյան. Սպիտակ տան բնակիչները, 1916):

72 «...ծերերին թվում էր, թե ծառերի արանքում և թե պատերի տակ վըխտում են հազար շարք, հազար ավազակ» (Ն. տ.):

73 « — Դա լավ միջոց է, կարգս վկա» (Դ. Դեմիրճյան. Կամաց խոսեք..., 1915):

74 «Մեր հարսը, այսինքն՝ իմ նշանածը, ասում է, թե խեղճ քահանան, երբ դասումն (!) է երգում, փոխն է մնում, իսկ երբ փոխն է ասում, դասի (!) խոսքերն են մնում» (Ստ. Զորյան, Հազարարձուն, 1915):

Հմմտ. «Փողոցի մայթերի ակացիաները զգեստավորված, իրենց բուրվառներով խնկարկում էին գարնան գալուստը» (Դ. Դեմիրճյան, Խանութպան, 1920), «...Նշուլին անգիտակ՝ նա երկնից ոգին. Եվ կույր խնկարկեց պատրանքն իր ունայն...» (Հովհ. Շիրազ, Բիբլիական), «Հասա մինչև Յոանդատան, երգ ու տաղեր լսեցի — Սայաթ-Նովի ձիրքի նման երկնային ձիրք չտեսա» (Ե. Չարենց, Տաղարան, ԺԱ), «...Քո որոնածը աննյութեղեն էր, Իսկ ես հողեղեն, հողոտ, հողածին» (Հ. Սահյան, Ես այն եմ եղել), «Թո՛ղ որ իր հոր նման տգեղ լինի, ոչի՛նչ, Բայց թող աստղով լինի իր հոր նման» (Պ. Սևակ, Ուշացած իմ սեր), «Եվ ինչպե՞ս պատմեմ, որ տրված է ինձ պարգև մի վերին՝ Տրված է ե՞րգը...» (Ս. Կապուտիկյան, Երջանկության մասին), «Օ՜, բնություն իմ մայր, իմ արարիչ...» (Ս. Խարազյան, Աշուն), «Նա ի՞նչ հանցանք ուներ. Միայն երգել էր նա սրտանց Իր հարազատ Լեհաստանի արարչագործ հոգին...» (Ն. Զարյան, Միցկևիչ և Հիտլեր), «...Ելենան դրանք պահում է որպես մասունք, որպես հիշատակի առարկաներ» («Սովետ. Հայ.» օրաթերթ):

Արդի հայերենում հաճախ են գործածվում երկրպագու, նահատակ, մարտիրոսվել, ողջակիզվել, նախակարապետ, ուխտ, ուխտատեղի, սրբազան, սուրբ, առաքելություն, պատգամ, մեղք, մեղանչել, հոգապահուստ (խսկց.), կուռք, նշխար և նման այլ բառեր, որոնց այժմյան փոխաբերական իմաստն է միայն, որ մեզ աղոտ կերպով հիշեցնում է, թե մի ժամանակ դրանք ունեցել են կրոնական կամ սնոտիապաշտական իմաստային երանգ:

7. ԻՄԱՍՏԱՅԻՆ ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐ

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում բառիմաստի փոփոխությունների բնորոշ գծերից մեկն էլ ռուսերենից պ ա տ ճ ե ն ու մ ն ե ր ն ե ն:

Այստեղ մենք նկատի չունենք պատճենում-նորակազմությունները, ինչպիսիք են՝ սողանցք (лазейка), ենթատեքստ (подтекст), շոշափուկներ (щупальцы), հարվածային (ударный,-ник) և այլն:

Մենք նկատի ունենք այն երևույթը, երբ հինավուրց հայկական բառերը, ռուսաց լեզվի համապատասխան բառերի նշանակու-

թյունների ազդեցությամբ, ձեռք են բերում նոր իմաստներ։ Ահա բազմաթիվ օրինակներից մի քանիսը[75].

արմատական— *«ռադիկալ»*—радикальный

արքա*—*«խոշոր մոնոպոլիստ (նավթի, և այլն)». «չեմպիոն»* —(нефтяной, шахматный) король

բաժանել*—*«կիսել (կարծիքը...)»*—разделять

գիծ*—*«երկաթուղային ուղերթ»* (գիծ դուրս գալ[76]—выйти на линию)

գորշ* *(-ություն)—փոխ. «միջակ (-ություն)»*—серый (-ость)

գրոհայնություն—*«հախուռն մոտեցում (մի գործի, միջոցառման)»*—штурмовщина

դպրոց*—*«շկոլա»*—школа

ինքնահոս—*«ինքնիրեն թողնված՝ չղեկավարվող՝ ընթացք չտրվող»*—самотек

լսարան*—*«ունկնդիրներ» (հվքկն.)*—аудитория

խցան—*«ճանապարհների վրա երթևեկության միջոցների խառն կուտակում»*[77]—пробка

հեղինակություն—*«հեղինակավոր մարդ»*—авторитет[78]

ձև*—*(սպորտ.) «մարզավիճակ»*—(спортивная) форма

ճակատ—*«ասպարեզ՝ բնագավառ»*—фронт

մարտնչող*—*(գրքկն., փխ.) «ակտիվ՝ մարտական՝ պայքարող»*[79]—воюющий, воинственный

շոշափել*—*«դիպչել» (շահերը —), «... մասին խոսել» (հարց —)*—затрагивать

---

75 *Տրվում են պատճենված իմաստները։ Աստղանիշով առանձնացվում են գրաբարում այս կամ այն իմաստով վկայվածները։*

76 *Հմմտ. «Եթե դրսից մարդ է գալիս, անմիջապես ցույց եմ տալիս ուղեկցողներին գիծ ուղարկելու համար կազմված ցուցակը» («Սովետ. Հայ.» օրաթերթ)։*

77 *«Արևմտյան Եվրոպայի ճանապարհներին ավտոմոբիլային «խցանները» հասցնում են այն բանին, որ ավտոմեքենան մեծ քաղաքներում շարժվում է... կրիայի արագությամբ» («Երեկոյան Երևան» օրաթերթ, թրգմ.)։*

78 *Ինչպես այս, այնպես էլ շատ այլ դեպքերում (հմմտ.* король, школа, "бешеный„, форма, фронт, машина, механизм...) *ռուսերեն բառերն ու նրանց համապատասխան իմաստներն էլ կա՛մ փոխառություն են, կա՛մ պատճենում եվրոպական լեզուներից, բայց բոլոր դեպքերում մեր ներկայիս պատճենումները ռուսերենից են։*

79 *Անցել է արևմտահայերենին։ Հմմտ. «...բայց կարևորն, մեզի համար, այդ (սփյուռքահայ երիտասարդ—Գ. Բ.) սերունդներուն նախ ազգային լրիվ կրթություն ստանալն է, անոնց պատնիշվլին է առողջ, ստեղծագործ ու մարտնչող հայկականությամբ...» («Արարատ» լրագիր, Բեյրութ)։*

սալ*(իկ)—«որոշակի ձևի կտրվածք (երկաթի, տախտակի-քարի, շոկոլադի)»—плита, плитка

սառեցնել—«բանկում եղած օտարերկրյա միջոցների վրա կալանք դնել»—замораживать

վահան*—«բասկետբոլի սյուն»—щит

տեղերում—«ստորին օղակներում»—на местах

փոստ—«թղթակցություն» (հվքեն.)—почта[80].

Արդյոք նո՞ր երևույթ են իմաստի նման պատճենումները:

Ամենևին ոչ: Այդպիսի երևույթներ մեր (և ոչ միայն մեր) լեզվում վաղուց անտի եղել են: Այսպես՝ արաբերեն բեյթ (տուն) բառի իմաստներից մեկից է պատճենված հայերեն տուն-ը (ոտանավորի քառատող): Կամ՝ երբ Պարոնյանն ասում է՝ «Սեղանին վրա անուշադրի ոգի կա, բեր» («Ատամնաբույժն արևելյան»), ապա նա պատճենում է լատիներեն spiritus բառը («հոգի. ոգի», հետևաբար՝ «սպիրտ»): Տերյանն էլ այն, ինչ այժմ մենք կոչում ենք (տպագրական) մամուլ, անվանում է թերթ՝ ռուսերեն лист-ի հետևողությամբ. «...այժմ, ինչպես տեսնում ես, մենք 5—6 տպագր. թերթ ավելի ենք տպել և էլի իհարկե թերի է» (Նամակ Ն. Թումանյանին, 1916):

---

80 Բոլոր պարագաներում պատճենումների մուտքը մեկ ճանապարհ ունի՝ թարգմանությունը, թարգմանական գրականությունը: Չի կարելի, սակայն, ցավ ի սիրտ չնշել, որ շատ հաճախ այդ նույն թարգմանական գրականության միջոցով մեր լեզվի մեջ են թափանցում հայատառ բառեր, որոնք խորթ են նրա ոգուն, բառակազմական կանոններին, մեր լեզվամտածողությանն ընդհանրապես: Շատ լրագրներ «նորություն(ներ)» բառով են արտահայտում նաև «լուր» հասկացությունը (ֆր. nouvelles, անգլ. news, գերմ. Neues, ռուս., սրանցից պատճենված, новости), իսկ հայերենը՝ ոչ. նա ունի լուր բառը: Արդ, ինչո՞ւ «թարգմանել»՝ «Քրդստանում պատերազմական գործողությունների ավարտման նորությունը...»: Հայերենում կարդալ և արտասանել տարբեր գործողություններ են ցույց տալիս. Ինչո՞ւ ասել՝ «կարդում է Սուրեն Քոչարյանը» և ստվեր գցել տաղանդավոր ասմունքողի ֆենոմենալ հիշողության վրա: Ռուսերեն голод բառի դիմաց հայերենն ունի երկու համարյա տարբեր բառեր՝ քաղց, սով: Էլ ինչո՞ւ չօգտվել այս «բարիքներից» և գրել՝ «Պետրոգրադի, Մոսկվայի և արդյունաբերական մյուս քաղաքների վրա կախվել էր քաղցի սարսափելի սպառնալիքը...» («Ավանգարդ» լրագիր): Կամ՝ ի՞նչ պիտի հասկանան ընթերցող լայն զանգվածները... «ամերիկյան պրեզիդենտական ընտրությունների խռճանոց»-ից... Եվ, վերջապես, ո՞ւմ են պետք այնպիսի «թարգմանությունները», որոնց մեջ շատ բառեր թարգմանվող լեզվին քաջ տիրապետող մարդկանց են միայն հասկանալի:

Նոր ժամանակներում հայերեն բառերի իմաստափոխությունների մեր ուսումնասիրությունը որոշ իմաստով թերի կլիներ, եթե չխոսեինք այն մասին, թե ինչպե՛ս են արևելահայ գրական լեզվում տեղի ունեցած իմաստափոխությունները թափանցում արևմտահայ գրական լեզվի մեջ։

Սովետահայ բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը իր «Բեռլին-Վայմար» ուղեգրությունների մեջ, ի միջի այլոց, ասում է.

«Ես նկատեցի, որ հայոց լեզվի բնագավառում Սարոյանը վերջին հինգ տարում առաջադիմել է։ Սակավացել են Բիթլիսի բարբառի տարրերը և բառապաշարի մեջ նոր, ժամանակակից «սովետահայ» բառեր են հայտնվել։

— Կըսեն, թե ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՆԱՄ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԵՆ ինձի ընտրած են» (ընդգծումները հեղինակինն են)։

Ամենօրյա ռադիոհաղորդումներ, գրականություն, այդ թվում նաև մայրենի լեզվով դասագրքերի մեծաքանակ փոխանակություն, հաճախացած փոխայցելություններ, արտասահմանից մեզ մոտ եկած հայազգի երիտասարդների ուսուցում, ուսուցիչների վերապատրաստում, տեղական մամուլի առաքում,— ահա ոչ լրիվ թվարկումը այն կամուրջների, որոնցով մեր օրերում տեղի է ունենում արևելահայ և արևմտահայ գրական լեզուների տևական հաղորդակցումը, շփումը։ Նման պայմաններում զարմանալի կլիներ, եթե հայերեն բառերի՝ արևելահայերենում ապրած իմաստափոխությունները (ի թիվս այլ փոփոխությունների) չթափանցեին արևմտահայ գրական լեզվի մեջ[81]։

Բերենք մի քանի օրինակներ։

Բուխարեստի «Նոր կյանք» շաբաթաթերթի համարներից մեկում (31/5—1963) լույս տեսած միայն մի ակնարկի մեջ 4 բառ գտնում ենք արևելահայերենի իմաստով գործածված. ինքնագործ՝ «ոչ-պրոֆեսիոնալ՝ ինքնուս» («...պետք պիտի ըլլար այս աշխատավորները տեսնել բեմերու վրա՝ իբրև ինքնագործ դերակատարներ...»), ձեռնարկություն՝ «արդյունաբերական ձեռնարկություն», արտադրանք՝ «արդյունաբերական արդյունք» («Միջնադարյան տոհմանշան մը չէ այս, ոչ ալ կապիտալիստական ձեռնարկության մը պիտակը կամ որևէ արտադրանքի անունը»), միավոր՝ «մի

81 Ստիպողաբար իրեն շոշափելի ձևով զգալ է տալիս և հակառակ ազդեցությունը, որը նույնպես բնական է։

ցանցի մեկ օբյեկտ»[82] («...1959ին երևան եկավ արդյունաբերական նոր միավոր մը ևս Միներքուրա-Զուրի մեջ»):

Այսպես նաև՝ պատասխանատու՝ «պատասխանատու աշխատող՝ ղեկավար». «...իրենց կաշին փրկելու մտահոգությամբ դաշնակ պատասխանատուները վազեցին Թիֆլիս, թակեցին Անգլիս դեսպան Սարքսի և Մ. Նահանգներու դեսպան Մոզերի դռները ու օգնություն աղերսեցին» («Արարատ» լրագիր, Բեյրութ), մասնավոր՝ «մասնավոր սեփականատեր»[83]. «...անհատը ազատ չէ մյուս կառավարության բանակին ծառայելու, թեև այդ բանակն ալ արդեն մասնավորներու շահին կը ծառայե շատ անգամ» («Լրաբեր» թերթ, Նյու-Յորք), աշխատություն՝ «երկ՝ ստեղծագործություն». «Իր աշխատություններեն մեկին մեջ, Միհայիլ Սատովյանու կպատմե սարսափելի պատահարի մը մասին» («Նոր կյանք» լրագիր), կարգ՝ «հասարակական կառուցվածք». «Հայաստան կ՛ընդուներ խորհրդային կարգեր՝ կը դառնար անդամ խորհրդային Մեծ Միության...» («Արարատ» լրագիր), օդային դարպաս՝ «օդանավակայան». «...հայը բախտ կ՛ունենա ոտք դնելու Փարաքար գյուղի որթատունկ այգիներուն մեջ պառկած օդանավակայանին վրա, որը ոչ առանց հպարտության հայաստանցիները կը կոչեն— «Հայրենիքի օդային դարպասը»[84] («Արարատ» լրագիր), հանդիսանալ՝ վերացական բայ. «Գիտական այս վառ տենչը և ուշադիր աշխատանքը բացահայտված են հանձինս զանազան բաժանմունքներու սոցիալիստական մրցման մեջ առաջավոր հանդիսացած բազմաթիվ աշխատավորներու...»[85] («Նոր կյանք» լրագիր): Եվ այլն:

Ամփոփենք:

Բառիմաստի փոփոխությունները հայերենում՝ սովետական շրջանում հանդես են բերում հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

---

82 Հավանական է, որ այս բառի իմաստային զարգացումը անկախ լինի:

83 Իմաստային ինքնուրո՞ւյն զարգացում է:

84 Այս օրինակի մեջ պարզ երևում է ազդեցության անցման ուղին:

85 Այս հատվածում ուշադրություն դարձրեք նաև աշխատավոր բառի և սոցիալիստական մրցում կայուն բառակապակցության վրա, որոնք նույնպես կրում են արևելահայերենի ազդեցության կնիքը: Իսկ ուշադիր բառը գործ է ածված վաղեմի «ջանադիր» իմաստով:

* * *

ա) Բառիմաստի փոփոխությունների (ինչպես և առհասարակ բառապաշարի հարստացման) աննախադեպ արագություն, թափ (կապված բուն իսկ կյանքի հսկայաքայլ առաջընթացի հետ)։

բ) Բառիմաստի նեղացմամբ (մասնավորեցմամբ) բազմահարուստ տերմինոլոգիայի ստեղծում և այս նպատակով գրաբարի բառային հարստության օգտագործում։

գ) Աշխարհաբարի ժառանգած նույնանիշների, ինչպես նաև փոխառյալ հոմանիշների՝ լայնորեն տարածված նրբիմաստավորում և այս ճանապարհով լեզվի աննախընթաց հարստացում հոմանիշներով։

դ) Կայուն փոխաբերությունների առատություն։

ե) Փոխաբերության, ինչպես և բառերի գործածության սահմանափակումով նրանց՝ կապակցությունների մեջ ամրացնելու ճանապարհով դարձվածքների, դարձվածքային արտահայտությունների (և կայուն բառակապակցությունների) ներուժ առաջացում։

զ) Շատ բառերի նշանակության քաղաքական-սոցիալական երանգավորում։

է) Բառիմաստի կրոնական-սնոտիապաշտական շերտի վերացում։

ը) Ռուսերենից իմաստի պատճենումների առատություն։

Բ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Գ. Լ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել նաև քերականական կառուցվածքում։

Ձևաբանական կառուցվածքի և խոսքի մասերի համակարգում այդ փոփոխությունները հիմնականում արտահայտվում են որոշ հնացած քերականական ձևերի ու արտահայտությունների վերացմամբ, նոր ձևերի ու արտահայտությունների առաջացմամբ ու տարածմամբ, զուգահեռ շատ ձևերի վերացմամբ ու նրանցից մեկի արմատացմամբ։

Ստորև քննարկում ենք այն փոփոխություններն ու տեղաշարժերը, որոնք նկատվում են ձևաբանական կառուցվածքում։

1. ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

Լեզվի զարգացման սովետական փուլում հատկապես զգալի են այն փոփոխությունները, որ կատարվել են խոնարհման համակարգում։ Լեզուն, ձգտելով հասնել խոնարհման ձևերի միօրինակացման ու միասնականացման, մինչև, հնարավորության սահմաններում, հրաժարվել է զուգահեռ ձևերից, ընտրելով հատկապես այն ձևերը, որոնք համապատասխանում են տվյալ շրջանի լեզվական միտումներին։ Այդ փոփոխությունները հիմնականում վերաբերում են բայական լծորդություններին, չեզոք և կրավորակերպ չեզոք սեռի բայերի անցյալ կատարյալի կազմությանը, հնաձև կամ գրաբարատիպ բայերի վերացմանը, կրավորական

սեռի ներգործական հարակատարների գործածությունը, պատճառական բայերի անցյալ կատարյալի կազմությունը, հրամայական եղանակի հաստատական և ժխտական ձևերի կազմությունը, որոշ բայերի կրկնահիմք կատարյալի ձևերին և այլն:

Այժմ նկարագրենք նկատվող փոփոխությունները առանձին-առանձին:

Ա. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԿԱՆ ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Առաջին էական փոփոխությունը, որ նկատվում է արևելահայ գրական լեզվի բայական համակարգի զարգացման մեջ, դա լծորդությունների մեջ տեղի ունեցած տեղաշարժն է: Ինչպես գիտենք, հայ ազգային գրական լեզվի կազմավորման և հետագա զարգացման շրջանում արևելահայերենն ուներ երեք լծորդություն՝ ա, ե, ի: *Անշուշտ մենք այստեղ նկատի չենք կարող ունենալ* ու *լծորդության հատ ու կենտ բայերը, որոնց կարելի է երբեմն հանդիպել Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Րաֆֆու, Պ. Պռոշյանի և այլոց գործերում, քանի որ դրանք սոսկ վերապրուկային բնույթ են կրում: Ահա մի քանի օրինակ՝* պիտի առնունք, պիտի առնուլ, թողունք *և այլն.* «Թողունք *առանց ուշադրության այն սխալները, որովք շատ փարթամ է պ. Խուդաբաշևի գիրքը»* (Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1-ին, Երևան, 1945, էջ 475):*

Նախասովետական, հատկապես անցյալ դարի գրական աշխարհաբարում ու *լծորդության բայերը հիմնականում չեզոք սեռի էին: Նրանք հանդես էին գալիս ինչպես պարզ, այնպես էլ ածանցավոր կազմություններում (գերազանցապես կրավորական ածանցմամբ՝ կրավորական սեռի, կրավորակերպ չեզոքների և անդրադարձ ու փոխադարձ նշանակություն արտահայտող բայերի մեջ):*

Ու *լծորդությամբ կիրառված ներգործական սեռի բայերը սահմանափակ թիվ էին կազմում, ինչպես՝* գովիլ[1], կամին[1], ընդունինք, շանիլ, տանիլ, կառնիմ *և այլն: Օրինակներ՝ «Ոչ բնավ պիտի* ընդունինք *այս դրությունը» (Մ. Նալբանդյան)*[1]*: «Արժանավորու-*

[1] *Տե՛ս* Ս. Գալստյան. *Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Երևան, 1963, էջ 98:*

թյամբ չենք կարող շանիլ ազգի համակրությունը» (Մ. Նալբանդյան)[2]: «Բայց եթե ես քեզ բռնությամբ տանիմ» (Րաֆ., 8, 366): «Իշխանը բարեհաճեցավ ընդունիլ ինձ» (Րաֆ., 8, 384): «Եվ ես ում կառնիմ, կը գառեպընդվիմ...» (ԱԻ, ԸՆ, 42):

Ի լծորդության բայերից ամենաերկար հարատևեց ունիմ ձևը, որ գտնում ենք գործածված աշխարհաբարյան առաջին նմուշներից մինչև Իսահակյան ու Չարենց: Այժմ էլ, հին սերնդի մարդիկ ունեմ և լինեմ բայերը խոնարհում են ի լծորդով: Հետաքրքրական է Հ. Աճառյանի դիտողությունը այս առթիվ. «Այժմ անվերջ ասում են ու լսում ենք նույնիսկ ունեմ, ունես, ունի, լինեմ, լինես, լինի և այլն[3]»: Բազմավաստակ հայագետը այնպես էլ մինչև վերջ չընտելացավ ունեմ, ունես ձևերին:

Ի լծորդության չեզոք սեռի պարզ բայերը, որ անհամեմատ ավելի մեծ թիվ էին կազմում, համեմատաբար ավելի գործածական էին անցյալ դարի գրական աշխարհաբարում, քան այս դարի առաջին տասնամյակներում:

Արևելահայ աշխարհաբարի առաջին քերականության հեղինակ Ս. Պալասանյանը իլ վերջավորություն ունեցող պարզ բայերի ձևաբանական հատկանիշներից մեկը համարում է այն, որ դրանք (օրինակ՝ բնակիլ, ապրիլ, աշխատիլ) անցյալ կատարյալում խոնարհվում են եցայ ձևով (բնակեցայ, ապրեցայ, աշխատեցայ)[4]. այն, որ այդ բայերի անցյալ կատարյալը հաճախ հանդիպում է -եցի ձևով (աշխատեցի և այլն), նա համարում է արդյունք այն բանի, որ սովորական է եղել այդ բայերը (իմա ի լծորդության բայերը) առաջին խոնարհման բայերի պես եմ վերջավորել, ուստի և տացել են այդ խոնարհման անցյալ կատարյալի վերջավորությունները: Այսպես ուրեմն, անցյալ դարի 70-ական թվականներին (երբ առաջին անգամ լույս տեսավ հեղինակի քերականությունը) կանոնավոր և հանձնարարելի էին համարվում ի լծորդու-

---

2 Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք Ա, Երևան, 1962, էջ 303:

3 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, 1951, էջ 561:

4 Մենք, գտնելով հանդերձ, որ անցյալ կատարյալ ժամանակը այս ձևով կազմող բայերը ի լծորդության են, բայի լծորդությունը որոշելիս չենք հիմնվել միայն այս հատկանիշի վրա (խոսքը վերաբերում է այն բայերին, որոնց միայն անցյալ կատարյալի բայաձևով կամ լծորդությունը չդրսևորող ձևերով ենք հանդիպել գրականության մեջ), ենթադրելով, որ գուցե նմանակությամբ ե լծորդության բայերն էլ կարող էին խոնարհված լինել այս ձևով:

թյան բայերի անցյալ կատարյալի -եցայ, -եցար, եցաւ ձևերը[5]։ Նույնիսկ Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի քերականության» մեջ (Վաղարշապատ, 1906) դեռ ընդունում է ի լծորդությամբ խոնարհվող բայերի օրինական գոյությունը (թեև այդ շրջանում այդ բայերի թիվը բավականին նվազել էր)։ Նկատելի է սակայն, որ Մ. Աբեղյանը իր այդ գրքում գրում է. «Ի լծորդը բարբառային է. գրական լեզվի մեջ նրան սովորաբար փոխանակում է Ե: Օրինակ՝ աշխատիլ, խոսիլ, ծաղկիլ, մեռնիլ, հաջողիլ, համարվիլ և այլն սովորաբար ասվում և ավելի գրվում են աշխատել, խոսել, ծաղկել, մեռնել, հաջողել» (Ն. տ., 92)։ Մ. Աբեղյանը այդ նույն գրքում մերժում է -անալ սոսկածանցով վերջավորվող բայերի (խոստանալ) առանձնացումը որպես խոնարհման առանձին տեսակ (Ս. Պալասանյանը այդ կարգի բայերը չորրորդ խոնարհում է համարում)[6], քանի որ դրանք ալ խոնարհման բայերի սոսկածանցավոր տարատեսակն են։

Այժմ բերենք ի լծորդության բայերի բնագրային օրինակներ.

«Ես ոչինչ չպատասխանեցի նրան. միայն առաջարկեցի խմել մի բաժակ կոնյակ, եթե նա չկամեր սառչիլ ցրտից» (Րաֆ., 8, 470)։ «...Պետք է շարունակել ճանապարհորդությունը և իջևանին հասնիլ» (Րաֆ., 8, 319)։ «Միթե ես կարող եմ այդ արդար խրատանց հակառակիլ» (Մուր., 95)։ «...Տիկնականն ու քաղաքացին սկսան իրանց առանին գործերով զբաղիլ» (Մուր., 334)։ «...Հապաղիլն ավելի ցավ կարող է պատճառել քեզ» (Մուր., 344)։ «—Երանի նա մնար մինչև մեր մեկնիլը» (ԱԻ, ԱԷ, 308)։ «—Ասենք թե Անահիտը քեզ է սիրում, ես պիտի ուրա՞խ լինիմ» (ԱԻ, ԱԷ, 312)։

Այսպես նաև Մ. Նալբանդյանի գործերում հանդիպում ենք՝ երևիլ, ծլիլ, ծաղկիլ, լինիլ, ընկնիլ, վրդովիլ, փախիլ, ողորմիլ[7], այլ բայաձևեր՝ մեռնիմ (ԱԻ ԱԷ, 32), ապրին (42)[8], կորչիմ (ԱԻ, ԸՆ, 55), ընկնին (39), ապրինք (ԱԽԱ, 56), կկորչինք (ՏՔՀ, 109)։

5 Տե՛ս Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի (մասն Ա, Բ, Գ), չորրորդ տիպ, Տփխիս, 1894, էջ 158. Հարկ է նշել, որ առաջին և հետագա հրատարակության միջև ոչ մի տարբերություն չկա։

6 Անդ, էջ 161։

7 Նալբանդյանից բերված օրինակները քաղել ենք Ս. Գալստյանի աշխատությունից (էջ 98—99)։

8 Արդեն նշված հատորից այս օրինակներ բերելու դեպքում նշում ենք միայն էջը։

Հարկ է նշել, որ նույնիսկ անցյալ դարի գրական աշխարհաբարում ի լծորդության բայերը միշտ այդ լծորդությամբ չէին խոնարհվում: Հաճախ նույն հեղինակը նույնիսկ նույն էջում մինչև իսկ նույն բայը օգտագործում էր մերթ ի, մերթ ե լծորդությամբ: Դա լավագույն ապացույցն է այն բանի, որ անցյալ դարի վերջին տասնամյակներում անգամ ի լծորդության բայական համակարգի դիրքերը լրջորեն խարխլված էին: Բերենք մի երկու օրինակ՝ «—Տնաշեն, մի՞թե այնքան թույլ հիշողություն ունիս, որ մինչև անգամ ինձ էլ չես կարողանում մի անգամից հիշել: Բա-բա ես անում, կարծես զատիկի զառը լինիս... երևակայիր, որ միայն ակնոցից ճանաչեցի քեզ: Դեմքդ այնքան սպիտակել և քնքշացել է, որ կարծես աղջիկ լինես...» (ՆԴ, 10—11): «—Մի՞թե ուխտավորներն չլինեին, դուք չեք կարող ապրել. ցանեցեք, շատ ցանեցեք, և ձեր արդյունքով սովորեցեք ապրիլ» (Րաֆ., Տ, 329):

Աբեղյանն անշուշտ նկատել էր, որ չնայած քերականություններում ընդունված լինելուն, ի լծորդությունը գնալով զիջում է իր դիրքերը. «Ի լծորդն արևելյան աշխարհաբարում ներկա կամ ապառնի ժամանակի բոլոր դեմքերի մեջ (խոսքը ըղձական եղանակի մասին է — Գ. Գ.), բացի եզակի երրորդ դեմքից, սովորաբար փոխվում է Ե(Է) լծորդի, օրինակ՝ ծաղկեմ, ծաղկես, ծաղկի, ծաղկենք, ծաղկեք, ծաղկեն, համարվեմ, համարվես, համարվի, համարվենք, համարվեք, համարվեն, փախչեմ, փախչես, փախչի և այլն, փոխանակ՝ ծաղկիմ, ծաղկիս, ծաղկինք, ծաղկիք, ծաղկին, համարվիմ, համարվիս, համարվինք, համարվիք, համարվին, փախչիմ, փախչիս, փախչինք, փախչիք, փախչին» (Աբեղյան, 109): Նույնպիսի վերապահությամբ է խոսում հեղինակը ի լծորդության պարզ և կրավորական վ ածանցումով բայերի անցյալ կատարյալի խոնարհման մասին, նշելով, որ «Նրանք արևելյան աշխարհաբարում սովորաբար գնում են ի խոնարհման տակ, բայց կարող են և ա խոնարհման տակ ընկնել: Օրինակ՝ ծաղկիլ (ծաղկել). ծաղկեցա, ծաղկեցար... համարվեցա, համարվեցար կամ ծաղկեցի, ծաղկեցիր... համարվեցի, համարվեցիր... (Ն. տ.):

Այսպես ուրեմն, Ս. Պալասանյանից (1874 թ.) մինչև Աբեղյան (1906 թ.) արդեն նկատելիորեն թուլացել էին ի լծորդության բայերի դիրքերը. նրանք արդեն ըղձական (պայմանական, հարկադրական) եղանակի ապառնի և սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակներում սկսում էին խոնարհվել Ե լծորդության բայերի նման: Լեզվի զարգացման սովետական շրջանում

հիմնականում ավարտված էր այս պրոցեսը, և եթե այս կամ այն հեղինակի գործերում, մասնավորապես չափածոյում, հանդիպում ենք ի լծորդության բայերի գործածություններ, ապա դրանք վերապրուկային երևույթներ են՝ հաճախ լեզվական ավանդույթի, բարբառային ազդեցությունների կամ էլ ոճական նպատակադրումների հետևանք։ Այսպես, Ա. Իսահակյանի գործերում շատ ավելի երկար հարատևեց այս լծորդությունը, որը մասամբ արդյունք է նրա մայրենի բարբառի (Կարնո) կամ էլ գուցե արևմտահայերենի ազդեցության։ Մայրենի (Կարնո) բարբառի ազդեցությամբ պետք է բացատրել անշուշտ Տերյանի մոտ հանդիպող ի լծորդությամբ բայաձևերը (օրինակ՝ կկորչիք — ՏՔՀ, 109)։ Չարենցի վաղ շրջանի գործերում ևս կարելի է գտնել նման ձևեր (ունիս, լինիս, կորչին[9] և այլն)։

Նախասովետական, հատկապես անցյալ դարի գրական լեզվում ի լծորդը համեմատաբար ավելի լայն տարածում ուներ կրավորական վ ածանցումով (կրավորական և չեզոք սեռի) բայերի խոնարհման ձևերում։

Ինչպես գիտենք, գրաբարում ե լծորդության ներգործական սեռի բայերը կրավորական սեռով կիրառվելիս խոնարհվում էին ի լծորդության բայերի նման։ Սակայն քանի որ աշխարհաբարում վերացել էին ներգործաձև և կրավորաձև խոնարհումները, ապա անհրաժեշտ էր ձևաբանական որևէ ցուցիչի օգտագործումը ներգործական սեռի բայերի խոնարհումը կրավորականից տարբերակելու համար։ Այդ դերն ստանձնեց վ ածանցը, որ դեռ հայտնի էր միջին հայերենից։ Անցյալ դարի կեսերին այդ ածանցը դեռ օգտագործվում էր ի լծորդի հետ՝ միասնաբար ձևավորելով կրավորական սեռի և չեզոք սեռի որոշ բայերի խոնարհումները (օրինակ՝ պատժվիլ)։ Երբ արդեն վ ածանցը գիտակցվեց որպես կրավորականության և որոշ բայերի համար՝ չեզոքության ցուցիչ, ավելորդ էր դառնում ի լծորդի գործածությունը այդ նպատակի համար։ Եվ ահա, հետագայում, անցյալ դարի վերջերին և մանավանդ այս դարի սկզբներին, ի լծորդը սկսեց աստիճանաբար փոխարինվել ե-ով (օրինակ՝ պատժվել), իսկ ի լծորդության մի շարք բայերի

---

[9] Կորչին բառի մեջ ի լծորդի դրսևորումը կարող է պայմանավորված լինել նաև հանգով, ինչպես, օրինակ՝

Սպասում ենք կուլին վերջին
Եվ գիտենք-վերջին կռվում
Ձեր հետքերը պիտի կորչին (ԵԶ, եժ, 2, 1922, էջ 177)։

անցյալ կատարյալ ժամանակը սկսեց կազմվել ոչ թե ա, ար, ավ, անք. աք, ան կրավորաձև խոնարհման հատուկ վերջավորություններով, այլ ի. իր.— ինք. իք. ին վերջավորություններով (օրինակ՝ պատմվեցա, պատմվեցար, պատմվեցավ, պատմվեցանք, պատմվեցաք, պատմվեցան — պատմվեցի, պատմվեցիր, պատմվեց, պատմվեցինք, պատմվեցիք, պատմվեցին)։

Որպեսզի ցույց տանք, թե որքան աննպատակահարմար էր մի կողմից ներգործական, մյուս կողմից չեզոք կամ կրավորական սեռերի տարբերակումը միայն լծորդի միջոցով, կամ, ավելի ճիշտ, առանց վ ածանցի, բերենք մի օրինակ Մուրացանից.

«— Մինչև այս դու քո աշխատությունները կավարտես և կվերադառնաս գյուղ։

— Օ՜, իմ աշխատությունները չպիտի ավարտին, քանի որ...» (Մուր., 234)։

Նկատելի է, որ հեղինակը ի լծորդին սեռափոխիչ դեր է վերապահել, մինչդեռ մենք գիտենք, որ հենց այդ շրջանում ե և ի լծորդությունները արդեն խիստ սկսել էին շփոթվել, ուստի և սեռային տարբերակման դեր չէին կարող ունենալ, մանավանդ որ ի լծորդությամբ, ինչպես տեսանք, հանդիպում էին նաև ներգործական սեռի բայեր, իսկ ե լծորդությամբ չեզոք սեռի բայերը ես մեծ թիվ էին կազմում[10]։ Անցման այս վիճակում լծորդափոխության օգտագործմամբ բայական սեռ տարբերակելը ավելի քան անարդյունավետ և աննպատակահարմար էր, մանավանդ որ խոնարհման շատ ձևերում լծորդներն ընդհանրապես չէին հայտնվում (օրինակ՝ սահմանական եղանակի ներկա, անցյալի անկատար, ապառնի, անցյալի ապառնի, անցյալի վաղակատար և այլն), ուստի և շփոթը ավելի էր մեծանում. բերենք մի երկու օրինակ՝ «Դու հնազանդել ես քո սրտին» (Մուր., 233)։ «— Սեդա, ո՞վ ասաց քեզ, թե թագուհին ընկղմում է տխուր մտածմունքի մեջ» (Մուր., 9)։

Եթե նկատի ունենանք, որ երկրորդ օրինակում չեզոք սեռի նշանակությամբ կիրառված ընկղմել բայը կարող էր հանդես գալ նաև ներգործական սեռի (Երեխան քարը ընկղմում է ջրի մեջ) նշանակությամբ, ապա միանգամայն պարզ կդառնա վ ածանցի օգտագործման անհրաժեշտությունը։

---

10 Ժամանակակից հայերենի բայական լծորդների և լծորդությունների մասին հանգամանորեն խոսում է պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը իր «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ, գիրք Ա, էջ 298։

Պարզ է, որ այս ազդակների գոյության պայմաններում ի-ն լծորդությունը չէր կարող սեռատարբերակիչ նշանակություն պահպանել (խոսքը վերաբերում է գերազանցապես ներգործականին և չեզոքին, քանի որ կրավորականի համար տարածված էր վ+ի կառուցվածքը՝ սիր+վ+իլ), ուստի և զարմանալի չէ, որ այդ լծորդության մի շարք բայեր (օրինակ՝ զբաղիլ) սկսեցին գործածվել նախ վիլ (օրինակ՝ զբաղվիլ) և ապա վել (օրինակ՝ զբաղվել) ձևով (համեմատիր նաև՝ հարձակիլ> հարձակվիլ> հարձակվել, բնակիլ> բնակվիլ> բնակվել, համմարիլ> համմարվիլ> համմարվել, ավարտիլ> ավարտվիլ> ավարտվել. այդպես նաև սթափվիլ> սթափվել, օգտվիլ> օգտվել և այլն)։ Այս ճանապարհով առաջ գալով և տարածվեց բայական մի նոր խումբ, կրավորակերպ չեզոքների[11] խումբը, որը լեզվի զարգացման ավետական փուլում հանդես է գալիս բացառապես -վել ձևով։ Չեզոք սեռի բայերի մյուս, անհամեմատ ավելի մեծ խումբը ե լծորդության վերածվեց առանց վ ածանցի միջնորդության (ինչպես՝ պառկիլ — պառկել, կանգնիլ — կանգնել, աշխատիլ — աշխատել, խոսիլ — խոսել և այլն)։

Այժմ բերենք ի լծորդությամբ կիրառված մի քանի բայեր՝ վ ածանցումով՝ նկատվիլ (Րաֆ., 22), բացվիլ (18), հայտնվիլ (91), աքսորվիլ (48), բաժանվիլ (Րաֆ., 8, 319), կողոպտվիլ (329), պատժվին (384), նմանվիլ (Մուր., 127), այրվիլս (ԱԲԱէ, 310), կշարժվին (ՎՏ, եժ, 2, 302), կցնցվին (ՎՏ, եժ, 2, 361), կարմակերպվին (ՄՄ, եժ, 2, 64) և այլն։

Մենք համառոտակի խոսեցինք ի>ե լծորդափոխության մասին. այժմ մի երկու խոսք ե>ա լծորդափոխության մասնակի դեպքերի մասին։

Նախասովետական շրջանի, հատկապես անցյալ դարի որոշ հեղինակների մոտ հանդիպում ենք ե — ա լծորդական տատանումներով բայերի, որոնք զարգացման ներկա շրջանում հանդես են գալիս գերազանցապես ա լծորդությամբ. օրինակ՝ շշնջեցին, չերևեց (Մ. Նալբանդյան), երևեն (Ռ. Պատկանյան), ժպտելով, թվեին, մռնչելով (Րաֆֆի), շողշողել (Հ. Հովհաննիսյան), հագել, տրտնջել (Ծիրվանզադե), որսել և այլն[12]։

Կային նման լծորդական տատանումներ ունեցող բայեր.

---

11 Մեր նպատակից դուրս է զբաղվել վ ածանցումով չեզոք սեռի բայերի տարբերակների վերլուծությամբ։

12 Այս բայաձևերը քաղել ենք Ա. Աբրահամյանի նշված գրքից. էջ 314, 317։

որոնք ժամանակակից լեզվում հաստատված են գերազանցապես ե լծորդությամբ, ինչպես՝ թռչկոտալ, դուրդուրալ, փայլփլալ, հոսալ. «Մուխը հեղեղի պես ներս հոսաց» (Շիրվ., 378), հոսացին (374) և այլն։

Նար-Դոսի մոտ հանդիպող ժպտող ենթակայական դերբայը անշուշտ ժպտել ձևից է (համեմատիր ե խոնարհման բայերի ենթակայական դերբայի կազմությունները անորոշ դերբայի հիմքից՝ սիրել—սիր-ող — գնել — գն-ող և այլն), և ոչ՝ ժպտալ, քանի որ այս վերջին դեպքում կունենայինք ժպտացող (ինչպես կարդալ-կարդաց-կարդաց-ող)։ Նույն ժպտել ձևից է ժպիտի (ԶԶՆ) ըղձական ապառնին, քանի որ ժպտալ ձևից լինելու դեպքում կունենայինք ժպտա (հմմտ. կարդալ-կարդա)։

Ամփոփենք։ Արևելահայ գրական աշխարհաբարի ձևավորման, մասամբ նաև հետագա զարգացման շրջանում խոնարհման համակարգում առկա էին երեք լծորդություն՝ ա, ե, ի։

Ի լծորդության բայերը, վերը նշված պատճառներով, աստիճանաբար ձուլվեցին Ե լծորդության մեջ ինչպես լծորդի պարզ փոխանցմամբ (կանգնիլ> կանգնել, հանգչիլ> հանգչել, պառկիլ> պառկել), այնպես էլ վ ածանցի գործակցությամբ (հարձակիլ> հարձակվիլ> հարձակվել, բնակիլ> բնակվիլ> բնակվել, հրաժարիլ> հրաժարվիլ> հրաժարվել, վհատիլ> վհատվիլ> վհատվել)։

Լեզվի զարգացման սովետական շրջանում անցյալի երեք լծորդություններից մնացին միայն երկուսը՝ Ե և Ա լծորդությունները, ըստ որում Ա լծորդության բայերը Ե լծորդության բայերի կեսից էլ պակաս են և գերազանցապես չեզոք սեռի են։ Նկատելի է, որ նորակազմ բայերի գերակշիռ մասը, հատկապես երբ ներգործականության գաղափար է արտահայտվում, ձևավորվում է Ե լծորդությամբ։ Դա ժամանակակից հայերենի ընդհանուր միտումն է։

Բ. ԳՐԱԲԱՐԱՁԵՎ ԿԱՄ ՀՆԱՏԻՊ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Բայական լծորդությունների համակարգում տեղի ունեցած տեղաշարժերին զուգընթաց, որի հետևանքով լեզվի զարգացման սովետական շրջանում կայունացավ և ամրացավ բայական երկու լծորդություն (Ե և Ա), նկատվում է նաև այլ կարգի մի փոփոխություն. դա գրաբարաձև կամ հնատիպ, մասամբ էլ արևմտահայե-

րենի ազդեցությամբ գործածություն ստացած մի շարք բայաձևերի վերացումն է սովետական շրջանի գրական լեզվում։ Ինչպես հայտնի է, նախասովետական, հատկապես անցյալ դարի գրական լեզվում կարելի էր հանդիպել սոսկածանցավոր կամ պատճառական ածանցմամբ բայական այնպիսի ձևերի, որոնց ան ածանցը ա) կամ ընկել է (օրինակ՝ ապացուցանել>ապացուցել), բ) կամ էլ վերածվել ն սոսկածանցի (գտանել> գտնել). Հանդիպում են նաև այլ կարգի փոփոխություններ, ինչպես՝ նչ> չ (կորնչել> կորչել)։ Արևմտահայ լեզվի ազդեցությամբ կարելի է բացատրել մեծնալ, լայննալ ձևերի գործածությունը Ա. Իսահակյանի մոտ, որոնք արևելահայ գրական լեզվում ան սոսկածանցով են հանդես գալիս՝ մեծանալ, լայնանալ։

Հատկապես առատ էին գրաբարաձև կամ հնատիպ բայաձևերը արևելահայ գրական աշխարհաբարի կազմավորման վաղ շրջանում։ Սակայն հենց հյուսիսափայլյան շրջանում նկատելի էր հնաձև բայաձևերից հրաժարվելու միտումը։

Այժմ բերենք մի քանի օրինակներ՝ գտանվում էր (Րաֆ., 8, 321), լցուցանելու (327), չէին ցուցանում (483), թաքչել (Րաֆ., 22), կացուցանում (22) մատուցանել (39), հարուցանում էր (ՆԴ, 13), չգիտցավ (Շիրվ., 375), կառուցանել (ԱԻ, ԱԷ), տեսանող 79), ապացուցանում էր (ՎՏ, Եժ, 2, 218), փառահանում (ՍՋ, ՏՄ, 1, 123), գտանում են (ԵՋ, ՐՆ, 284), կորնչում էր (275), փակչել է (ՍՏՆ, 33) և այլն։

Նման ձևերի հանդիպում ենք ոչ միայն գեղարվեստական գրականության մեջ, այլև պարբերական մամուլում։ «Մշակի» նույնիսկ 1914 թ. համարներում հազվադեպ չէին գրաբարատիպ հիշյալ բայաձևերը, ինչպես կառուցանել, ապացուցանել և այլն։

Փաստերի քննությունը ցույց է տալիս, որ գրաբարատիպ կամ հնացած բայաձևերի գործածությունները, մանավանդ անցյալ դարի գրական աշխարհաբարում, հեղինակների անհատական լեզվաոճական առանձնահատկություններից բխող արտահայտություններ չեն, դրանք ավանդաբար փոխանցված վերապրուկային իրողություններ են արևելահայ գրական աշխարհաբարի կազմավորման շրջանում բավական տարածված, հետագայում, անցյալ դարի վերջերին, աստիճանաբար նվազած, սակայն դեռ լեզվի մեջ որոշ արմատներ պահած սոսկածանցավոր և պատճառական բայերի արդեն դատապարտման ենթարկված մի համակարգի, որն իսպառ վերացավ և անհետացավ միայն քսանական թվականներին։

Մենք անշուշտ չենք ժխտում այն հանգամանքը, որ որոշ հեղինակներ, հատկապես այս դարի առաջին քառորդում, կամ էլ նույնիսկ սովետական շրջանում, օգտագործել են կամ կարող են օգտագործել նման ձևեր սոսկ ոճական նպատակադրումներով, կամ էլ չափածոյում՝ հանգ ու վանկի համար, ինչպես Ե. Չարենցի մոտ հանդիպող մի երկու օրինակում.

Այն օրերում մեր տունը չկար խնդում,
Սուրճում էր *մթում մեր արահետ (ԵՉ, ԸԵ, 275):*

Ժողովրդի իմ անմա՛հ
Ձա՛յնն ես՝ դարե՛ր տարագիր—
Որ գոռանում ես *հիմա*
Ե՛վ ժողովուրդ, և՛ երկիր (ԵՉ. ԸԵ, 284):

Պատճառական բայերի -ցուցան *բաղադրիչը, որ բավական տարածված էր անցյալ դարի գրական աշխարհաբարում, փոխարինվեց* ցն *բաղադրիչով (անցուցանել-անցնել, երջանկացուցանել-երջանկացնել, մեկացուցանել-մեկացնել՝ անցնելով անշուշտ անցունել, երջանկացունել, մեկացունել միջնորդ ձևերի բովով, որտեղից արդեն* ու-*ի սղմամբ՝ անցնել, երջանկացնել, մեկացնել):*

Պատճառական բայերի մեկընդմիշտ հաստատված քառացանկ գոյություն չունի. նոր պատճառական բայերը ստեղծվում են-ըստ անհրաժեշտության. օրինակ՝ «Որոշվեց Արփա գետը հոսեցնել *գետի Սևան լիճը» (ՍՀ, 11/3 1965):*

*Եթե փորձենք պարզեցնել պատճառական բայերի կազմության բացատրությունը, ապա կարելի է ասել, որ կանոնավոր բայերի պատճառականները կազմվում են անցյալ կատարյալի հիմքի վրա ավելացնելով ն(ել) մասնիկը. օրինակ՝ սիրել-սիրեց-սիրեց-*ն*-ել. կարդալ-կարդաց-կարդաց*նել*. հասկանալ-հասկաց(ավ)-հասկաց-*ն*-ել. մոտենալ-մոտեց(ավ)-մոտեց-*ն*-ել:*

Իսկ ն, *չ սոսկածանց ունեցող բայերի պատճառականը կազմվում է անցյալ կատարյալի հիմքին ավելացնելով* ցն*(ել) ածանցը, ինչպես՝ հագնել-հագ(ավ)-հագ-*ցն*-ել. թռչել-թռ(ավ)-թռ-*ցն*-ել:*

Ինչպես տեսնում ենք, բոլոր դեպքերում էլ առկա է -ցն- *ածանցը՝* ե *կամ* ա *բնային ձայնավորների հետ (բացի* ն, *չ սոսկածանց ունեցող բայերից), թեև պատճառական բայերի կազմության մեր առաջարկած եղանակի մեջ այդ այնքան էլ չի ընդգծվում:*

Անշուշտ բարբառային կամ ժողովրդական լեզվի ազդեցության արդյունք է պատճառական ածանցման ժամանակ սկզբնաձև բայի ե լծորդի վերածումը ա-ի, որ հատկապես նկատելի է խոսակցական լեզվում։ Լծորդափոխված պատճառականի նման ձևեր երբեմն թափանցում են նույնիսկ գրավոր խոսքի մեջ. օրինակ՝ ամաչել-ամաչեց-ամաչեց-ն-ել, սակայն ունենք ամաչացրին (Մուր., 351), խրտնել-խրտնեց-ն-ել, սակայն խրտնացնող (ԵՆ, 29/3—1965). այսպես նաև՝ գինու շշերի պիտակների վրա կարդում ենք հնեցրած, մինչդեռ հնանալ բայի պատճառականը պիտի լինի հնացնել. որտեղից էլ հնացր կատարյալի հիմքից՝ հնացրած հարակատարը։

Գ. ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՅԵՐՈՎ

Լեզվի հարստացումը նոր բայական միավորներով նույնքան բնական ու օրինաչափ երևույթ է, որքան հնացած կամ հնատիպ բայաձևերի վերացումը լեզվից։ Նկատելի է, որ սովետական շրջանում, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, ստեղծվեցին ու տարածվեցին բավական մեծ քանակությամբ բայեր, որոնք դրսևորում են իմաստային բոլորովին նոր հարաբերություններ՝ կապված հասարակական-քաղաքական, տնտեսական ու կուլտուրական նոր հասկացությունների, ինչպես նաև գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների արտահայտման անհրաժեշտության հետ։

Նորակազմ բայերը գերազանցապես ձևավորվում են բայակազմական ներքին միջոցներով։ Որոշ դեպքերում լեզուն դիմում է նաև փոխառությունների, սակայն, իհարկե, ոչ փոխատու լեզվին հատուկ բայական ձևավորումով։

Համագրական եղանակով բայակազմությունը ներկա շրջանում հիմնականում կատարվում է անվանական խոսքի մասերից՝ գերազանցապես գոյականներից ու ածականներից՝ համապատասխան մասնիկավորումով։ Փաստերը ցույց են տալիս, որ այս երկու խոսքի մասերից գոյականն ավելի շատ է բայացվում, քան ածականը։ Բայացումը լեզվի զարգացման սովետական շրջանում գրեթե բացառապես իրականանում է -ել, -անալ վերջավորություններով*, սակայն սրանց մեջ -ել մասնիկը ավելի արդյունավետ է,

* Ալ մասնիկը լեզվի զարգացման ներկա շրջանում դադարել է բայակազմական արժեք ունենալուց, թեև նրան էլ խոսքի չի եղել հիշյալ դերը, ինչպես՝ խղճալ, կսկծալ, շողալ և այլն։

քան -անալ-ը։ Նկատելի է, որ -ել մասնիկը գոյականների հետ շատ ավելի է բաղադրվում, քան ածականների։ Զարմանալի չէ, որ նոր բայակազմությունների մեջ գոյականն ավելի մեծ կշիռ ունի, քան ածականը, քանի որ գիտա-տեխնիկական նորագույն նվաճումները, ինչպես նաև հասարակական-քաղաքական նոր երևույթների ու հասկացությունների երևան գալը բայական այնպիսի նորանոր գործողությունների արտահայտման պահանջ են առաջադրում, որոնք կարող են նշվել միայն այդ նվաճումները և նոր երևույթներն ու հասկացությունները անվանող գոյականների բայացմամբ։

Այժմ բերենք գոյականից կամ ածականից կազմված բայերի մի քանի օրինակներ՝ «Ավելացած արյան քանակը առողջ լյարդն ու փայծաղը պահեստում են իրենց մեջ» (ՍՍ, 28/8—1965)։ «Ցավոք այդ փորձերին առայժմ չեն դիմադրում ճապոնիայի կառավարող շրջանները, որոնք Հարավ-Արևելյան Ասիայում համերաշխում են ամերիկյան ագրեսիային» (ՍՀ, 3/9—1965)։ «—...Նույնիսկ չգիտես կարգին փամփուշտել։ Լավ նշան բռնեք» (ՅՀ, ՔՁՇԱ, 381)։ «Դեսպանատան թեկնածուներ են առաջադրվել Իրանից հայրենադարձվածներ Սարգիս Միրզոյանը, Սոֆիկ Գրիգորյանը և ուրիշներ» (ՍՀ, 3/12—1965)։ «Այժմ մեծ ուշադրություն է նվիրվում բռնցքամարտիկի մարտելու կուլտուրային» (17/7—1965)։ «Սրվանձտյանը ցանկել է 139 ձեռագիր» («Էջմիածին» ամսագիր, 1965, Բ, Գ, Գ, էջ 98)։

Այսպես նաև՝ վալսել (Ուիլյամ Սարոյան, Վեսլի Ջեկսոնի արկածները, Երևան, 1965, էջ 265), չարքիացնել (ՍՍ, 1/1—1965), արշալուսեց[13], մրճաշարված, մշուշել, փարոսում են, զանգում էր, լուսել, աղեղում էին, ամբոխել, կայծում էր, մոզաիկված էին. և այն, բոլորն էլ սովետական շրջանում կազմված բայեր։

Ի տարբերություն փոխառյալ գոյականների ուղիղ ձևերից դերբայական վերջավորությամբ կազմված բայերի, ինչպիսիք են՝ գիպս-գիպսել, ասֆալտ-ասֆալտել, մանևր-մանևրել, մոնտաժ-մոնտաժել, ցեմենտ-ցեմենտել, բետոն-բետոնել, հիպնոս-հիպնո-

---

13 Այս և այս պարբերության մեջ ընդգծված հաջորդ բայերը քաղված են Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության (գիրք Ա) «Բայական համադրական կազմությունները այլ խոսքի մասերից» ենթագլխից (էջ 48—70), ուր, ինչպես նաև հաջորդ ենթագլուխներում, հանգամանորեն քննարկվում են հայերենի բայակազմության հարցերը։

նել, մոդել–մոդելացնել (ԵՍ, 9/12—1965), քառասունական թվականների սկզբներին հայոց լեզվի բառապաշարում մուտք գործեցին նաև այնպիսի բայեր, որոնց անվանական մասը, բայական վերջավորությունն անջատելուց հետո, զուրկ էր բառական (տվյալ դեպքում գոյականական) ձևավորումից, ինչպես, օրինակ՝ էվակուացիա-էվակու-ացնել, օկուպացիա-օկուպ-ացնել, կոմբինացիա-կոմբին-ացնել, մոբիլիզացիա-մոբիլիզ-ացնել: Անշուշտ բայական հիշյալ ձևերի տարածմանը նպաստեց նաև այն, որ փոխատու ռուսերենն էլ ուներ նույն արմատից անվանական և բայական զույգ ձևեր, թեև հաճախ կազմության այլ եղանակներով արտահայտված (օրինակ՝ мобилизация—мобилизировать, оккупация—оккупировать և այլն): Ահա թե այս չորս բայերի մասին ինչ է ասում պրոֆ. Գուրգեն Սևակը. «Պետք է ասեմ, որ դրանցով մի նոր դուռ բացվեց մեր լեզվի բառակազմության և մասնավորապես բայափոխառության առաջ: Բանն այն է, որ հայոց լեզուն դարեր շարունակ զուրկ է եղել օտարալեզվի բայեր փոխառնելու կարողությունից և անհրաժեշտ դեպքերում դիմել է ու մինչև 1943 թ.[14] դիմում էր միայն նկարագրական կամ հարադրական միջոցին. այսպես, օրինակ՝ ասում էինք մոբիլիզացիայի ենթարկել, օկուպացիայի ենթարկել և այլն»[15]: Բայափոխառության այս տեխնիկան հետագայում տարածվեց նաև այլ բայերի վրա, ինչպես՝ կոորդինացնել, լիկվիդացնել, գազիֆիկացնել, էլեկտրիֆիկացնել, ռադիոֆիկացնել և այլն[16]:

Դ. ԲԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԿԱՏՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ

Լեզվի զարգացման սովետական և նախասովետական, հատկապես անցյալ դարի վերջերի խոնարհման համակարգի թռուցիկ համեմատությունն ու քննությունն անգամ բավական են համոզվելու համար, որ բայական ժամանակների կազմության մեջ ևս տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, որոնք վերաբերում

---

14 Երբ տերմինաբանական կոմիտեն որոշում ընդունեց հաստատել հիշյալ չորս բայերը:

15 Գուրգեն Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 141:

16 Այս մասին մանրամասն տես Ա. Աբրահամյանի նշված գրքում, էջ 126—136:

են ինչպես պարզ, այնպես էլ ածանցավոր բայերին։ Այդ փոփոխությունները կապված են անցյալ կատարյալ ժամանակի, հրամայական եղանակի, ըղձական եղանակի ապառնիի եղակի 3-րդ դեմքի, պայմանական եղանակի ժխտական ձևերի, ինչպես նաև որոշ չեզոք սեռի բայերի ձևավորման ու կազմության հետ։

ա) Սահմանական եղանակի բայաձևերի կազմության մեջ նկատվող փոփոխություններ

1) Անորոշ դերբայի հիմքից կազմվող բայաձևեր

Անորոշ դերբայի հիմքից *կազմվող պարզ բայերի դիմավոր և դերբայական ձևերի կազմության մեջ լուրջ փոփոխություններ չեն նկատվում։ Այս հիմքից կազմվող* ե *և* ա *խոնարհման բայերի անկատար, ապառնի դերբայները, ինչպես նաև* ե *խոնարհման բայերի* վաղակատար*, հարակատար* *և* ենթակայական* *դերբայները ձևաբանական ոչ մի փոփոխություն չեն կրել արևելահայ գրական աշխարհաբարի զարգացման մեջ ընդհուպ մինչև մեր օրերը. բնականաբար փոփոխություն չեն կրել նաև այս դերբայներով կազմվող սահմանական եղանակի ներկա անկատարը (սիրում եմ, կարդում եմ), անցյալի անկատար (սիրում էի, կարդում էի), ապառնի (սիրելու եմ, կարդալու եմ), անցյալի ապառնի (սիրելու էի, կարդալու էի),* ե *խոնարհման բայերի համար վաղակատար (սիրել եմ), անցյալի վաղակատար (սիրել էի), հարակատար (սիրած եմ), անցյալի հարակատար (սիրած էի) ժամանակները։*

Մենք այստեղ, անշուշտ, նկատի չունենք գրաբարաձև կամ հնատիպ բայաձևերի անորոշ դերբայի հիմքից կազմված անդեմ և դիմավոր ձևերը, քանի որ դրանք արդյունք են ոչ թե նշված ժամանակների կազմության մեջ նկատվող փոփոխությունների, այլ հենց այդ ժամանակների կազմության համար հիմք հանդիսացող բայաձևի (տվյալ դեպքում անորոշ դերբայի հիմքի) հնատիպության. օրինակ՝ հատուցան*ել*>հատուցան*ում էր,* ապացուցան*ել*>կապացուցան*եի,* վստահան*ալ*>վստահան*ում է.* տեսան*ել*>տեսան*ում եմ,* հարցան*ել*>հարցան*ում եմ,* զտան*ել*>զտան*ում է,* մատու–

* Ա *խոնարհման բայերը հիշյալ դերբայները կանոնավորապես կազմում էին և կազմում են անցյալ կատարյալի հիմքից։*

ցանել>մատուցանում է, լցուցանել>լցուցանելու և այլն: Ինչպես տեսնում ենք, հիշյալ ձևերը կանոնավորապես կազմված են անորոշ դերբայի հիմքից -ել-ի անջատումով՝ համապատասխան վերջավորությունների կցմամբ:

Հիշյալ բայաձևերի և նրանց բայահիմքերի փոփոխությունները բնականաբար առաջ բերեցին նոր բայաձևեր և բայահիմքեր[17], ինչպես՝ ճառուցել>ճառուցում էր, ապացուցել>ապացուցում էր. տեսնել>տեսնում եմ և այլն, և այլն: Փոփոխությունները, ինչպես տեսնում ենք, վերաբերում են բայաձևերին (ըստ այնմ և՝ բայահիմքերին) և ոչ թե դերբայական և դիմավոր ձևի բուն կազմությանը:

Դերբայների կազմության մեջ նկատելի միակ փոփոխությունը ժխտման դերբայի (սիրի, կարդա) ձևի կայունացումն է, որ նախասովետական շրջանի գրական լեզվում հանդիպում է նաև սիրիլ, կարդալ ձևերով (չեմ սիրիլ, չեմ կարդալ)[18]:

Նկատելի է, որ հարակատար և անցյալի հարակատար ժամանակները նախասովետական շրջանի, հատկապես անցյալ դարի գրական հայերենում շատ ավելի լայն կիրառություն են ունեցել, քան վերջին հիսունամյակում: Ներկայումս հիշյալ ժամանակների կիրառությունը սահմանափակվում է կրավորական սեռի բայերի, վ կրավորական ածանցումով որոշ բայերի և վիճակ ցույց տվող կամ գործողության մնայուն հետևանք արտահայտող մի շարք բայերի շրջանակներում:

Նախասովետական շրջանում, հատկապես անցյալ դարի գրական լեզվում, չեզոք սեռի բայերի խոնարհումը հիշյալ ժամանակներով սահմանափակված չէր այնպես, ինչպես ներկայումս[19]. ավելին, այդ շրջանում գործածական էին նաև ներգործական սեռի հարակատարի և անցյալի հարակատարի ձևերը, մի երևույթ, որ այժմ գրեթե վերացված է: Բերենք մի քանի օրինակներ.

Չեզոք սեռի բայերից՝

«...Ուխտավորների կոտորվելն պատահած էր ոչ այնքան հեռու մեզանից» (Րաֆ., 8, էջ 318): «— Գիտեմ, որ համալսարան

17 Հնացած բայաձևերի մասին մենք խոսել ենք համապատասխան բաժնում:

18 Այս մասին մանրամասն կխոսենք ժխտական խոնարհման բաժնում:

19 Մ. Աբեղյանը գործողության մնայուն հետևանք չնշող, կամ վիճակ չարտահայտող գնալ բայը որպես նմուշ խոնարհել է հարակատար և անցյալի հարակատար ժամանակներով. տե՛ս նրա «Աշխարհաբարի քերականության» 117 էջը:

էին գնացած[20]. *ավարտե՞լ ես» (ՆԳ, 18)*: *«Նրա մահվան* էր եկած» *(Մուր., 405)*:

Ներգործական սեռի բայերից՝

«— Այդ խրատ է, ես այդ մասին մինչև այսօր բան ոչինչ չեմ ասած»... *(Րաֆ., 8, 365)*: *«...Գավառները նորեն* գրաված էր» *(Մուր., 455)*:

Իսկական կապերից ի, ց, առ, ըստ, հանդերձ, հետև *գրաբարից* են մնացած *աշխարհաբարի մեջ* (Մ. Աբեղյան. *Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, 473)*:

Նկատելի է, որ ինչպես վերաբերյալ, այնպես էլ նախասովետական շրջանում տարածված ներգործական սեռի *և գործողության մնայուն հետևանք չարտահայտող չեզոք* սեռի *բայերի հարակատար ժամանակի բայաձևերի փոխարեն ներկայումս օգտագործվում են վաղակատար ժամանակի բայաձևերը. այսպես, վերևում բերված բայերի հարակատար և անցյալի հարակատար ժամանակների փոխարեն ներկայումս օգտագործվում են վաղակատարի համապատասխան ձևերը՝* պատմել էր. գնացել էին, եղել էր. չեմ ասել. արել է. գրավել էր, մտել են:

Անշուշտ վաղակատարի նշանակություն չեն արտահայտել, սակայն և այդ ժամանակով չեն փոխարինվել ներգործական և չեզոք սեռի բայերի հարակատարի այն բայաձևերը, որոնք անցյալներում գործածական էին նաև առանց վ *ածանցման. խոսքը վերաբերում է ներկայիս կրավորակերպ չեզոքներին և ներգործական սեռի այն բայերին, որոնք, նախադասության մեջ ներգործող անուղղակի խնդրի բացակայության կամ էլ նրա վերականգնման անհնարինության պատճառով, չեզոք սեռի արժեքով են հանդես գալիս, օրինակներ.*

«Սենյակի դռները ներսից փակած էին *և լուսամուտների ծիրանեգույն վարագույրները, զարդարած ծանր, ոսկեթել ծոպերով, ցած* էին թողած» *(Րաֆ., 26)*: *«Բարձրագիր սարավանդը, որի վրա* կառուցած էր *ամրոցը,* շրջապատած էր *բնության փառահեղ և ահարկու տեսարաններով» (Մուր., 3)*: *«Արքայադստեր դղյակը* կառուցած էր *բարձր դարավանդի վրա» (ԱԻ, ԱԷ, 25)*:

---

20 *Հարակատար և անցյալի հարակատար ժամանակների մասին խոսելիս մենք նկատի չունենք միայն պարզ բայերի անորոշ դերբայի հիմքից կազմված ձևերը. այստեղ մենք քննում ենք հարակատարի գործածության հարցը անկախ բայահիմքերի կազմությունից, թեև դա, որոշ իմաստով կիրառական հարց լինելով դուրս է մեր ուսումնասիրության բնագավառից:*

Այժմ հիշյալ բայաձևերը տարածված են կրավորական ածանցմամբ (փակված էին, ցած էին թողնված, կառուցված էր, շրջապատված էր)։ *Առանձին հեղինակների մոտ երբեմն հանդիպող ներգործական սեռի բայերի ներգործաձև հարակատարները սոսկ անցյալի վերապրուկ են և որակ չեն կազմում։ Բերենք մի երկու օրինակ ժամանակակից հեղինակներից՝ «...Արձակում էր այծեմաղ պարանը, որ գոտու փոխարեն* փաթաթած էր *մեջքին...» (ԱԲ, Ե, 373)։ «Սրանց վրա* անեղծագործած էին *ամեհի տայածներ» (Սխ, ՄՍ, 27)։*

Անորոշ դերբայի հիմքից կազմվող սոսկածանցավոր *և* պատճառական բայերի *դիմավոր և անդեմ ձևերի կազմության մեջ որևէ լուրջ փոփոխություն չի նկատվում։ Միակ նկատելի փոփոխությունը ժխտական դերբայի* (չեմ) մոտենա, հասկանա, մտնի, թռչի. հասկացնի, վախեցնի, մացնի *ձևերի գործածությունն է նախասովետական շրջանում տարածված* (չեմ) մոտենալ, հասկանալ, մտնիլ, թռչիլ. հասկացնիլ, վախեցնիլ, մացնիլ *ձևերի փոխարեն։*

Ամփոփենք։ *Անորոշ դերբայի հիմքից կազմվող պարզ, ինչպես նաև սոսկածանցավոր և պատճառական բայերի սահմանական եղանակի դիմավոր և անդեմ (դերբայական) բայաձևերի կազմության մեջ ըստ էության լուրջ փոփոխություններ տեղի չեն ունեցել, եթե նկատի չունենանք նախասովետական շրջանում բավական տարածված ժխտման դերբայի* (չեմ) սիրիլ. (չեմ) կարդալ *ձևերը, որոնք սովետական շրջանում փոխարինվեցին* չեմ սիրի. չեմ կարդա *ձևերով։ Ինչ վերաբերում է հարակատար և անցյալի հարակատար ժամանակների կազմությանը, ապա այստեղ ևս փոփոխություն չի նկատվում, քանի որ հարակատար դերբայի* ած *վերջավորությունը կանոնավորապես դրվել է անորոշի (գրել-* գր*ած,* գրվ*-ել-* գրվ*-ած) կամ անցյալ կատարյալի* (կարդաց*-ած* հասկաց*-ած,* վախեցր*-ած) հիմքերի վրա։*

2) Անցյալ կատարյալ հիմքից կազմվող բայաձևեր

Այս հիմքից են կազմվում բոլոր բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը, ա *խոնարհման բոլոր բայերի վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները,* ե *խոնարհման պատճառական և* ն, չ *սոսկածանց ունեցող բայերի վաղակատար և հարակատար դերբայները։*

Նախասովետական շրջանի համեմատությամբ փոփոխու-

թյունների է ենթարկվել կրավորական, մասամբ նաև չեզոք սեռի պարզ և կրավորական ածանցմամբ բայերի անցյալ կատարյալի կազմությունը. Ներգործական սեռի պարզ բայերը, չեզոք սեռի բայերի զգալի մասը, ինչպես նաև սոսկածանցավոր և պատճառական բայերը անցյալ կատարյալի կազմություններում նշանակալից փոփոխություններ չեն կրել: Հարկ է նշել, որ փոփոխությունների մի մասը արդյունք է անորոշ դերբայի բայաձևի հնաձև կազմության (օրինակ՝ հարուցանել, *որից* հարուցի):

Չեզոք սեռի պարզ բայերի անցյալ կատարյալ ժամանակի կազմության մեջ տեղի ունեցած փոփոխություններ: *Ինչպես գիտենք, նախասովետական շրջանի գրական լեզվում չեզոք սեռի շատ բայեր օգտագործվում էին* ի *լծորդությամբ. այդ բայերի մի մասն էլ հանդես էր գալիս* ի–ե *լծորդային տատանումներով, իսկ որոշ բայեր. թեև վկայված չէին* ի *լծորդությամբ, բայց անցյալ կատարյալը կազմում էին հիշյալ բայերի նման՝ գրաբարյան* ե *և* ի *լծորդության բայերի կրավորաձև խոնարհման օրինակով: Այս բայերի անցյալ կատարյալը կազմվում էր կատարյալի հիմքին ավելացնելով* ա, ար, ավ, անք, աք, ան: *Բերենք համապատասխան օրինակներ. Հյուսիսափայլյան շրջանից՝* պատահեցավ, հանդիպեցավ, մեռնեցավ, երևեցավ, ապրեցավ, թափառեցավ, աշխատեցավ, չպակասեցան, պարապեցան, համարձակեցան *և այլն*[21]. *Նկատի պետք է ունենալ, որ այս շրջանում հիմնականում այսպես էր կազմվում հիշյալ բայերի կատարյալը. Հետագայում, Րաֆֆու և Մուրացանի շրջանում, սկսեցին տարածվել ներգործաձև խոնարհման ձևերը՝* ի, իր, —, ինք, իք, ին *վերջավորություններով. սակայն լայն տարածում ուներ նաև կրավորաձև խոնարհումը. օրինակներ. Րաֆֆուց՝* կանգնեցա *(Րաֆ., 281),* բարեհաճեցավ *(384),* կարմրեցավ (35). *Մուրացանից՝* խաղաղեցան *(Մուր. 50)*:

Պետք է նկատել, որ չեզոք սեռի պարզ բայերի անցյալ կատարյալի կազմության վերոհիշյալ ձևերը աստիճանաբար նվազում են և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին արդեն նկատելի է այդ բայերի ներգործաձև խոնարհման գերակշռությունը: Սակայն այդուհանդերձ դեռ այդ ձևերը հանդիպում էին. այսպես, Իսահակյանը ունի հանդգնեցավ *(ԱԻ, ԱԷ, 112),* նստան *(176),* նստա *(290),* հանդիպեցա *(322)*:

---

21 *Այս օրինակները քաղել ենք Ս. Գալստյանի «Ակնարկներ աշխարհաբարի պատմության» (Երևան, 1963) աշխատությունից, էջ 103:*

Ինչպես տեսնում ենք, սկսալ, նստա. նստան ձևերում վերջավորությունները կատարյալի ցույական հիմքին չեն ավելացել, այլ ոչ ցույականի։ Նման կազմությունների հանդիպում ենք նաև այլ հեղինակների մոտ։

Լեզվի զարգացման սովետական շրջանում իսպառ վերացավ չեզոք սեռի պարզ բայերի կրավորաձև այս խոնարհումը, և ժամանակակից հայերենում, աննշան բացառություններով, այն էլ սոսկ որպես հնաբանություն ստեղծելու ոճական միջոց, ե խոնարհման պարզ բայերը կատարյալը կազմում են հետևյալ ձևով՝ ապրեցի. ապրեցիր, ապրեց, ապրեցինք. ապրեցիք, ապրեցին։

Կրավորական և կրավորակերպ չեզոք սեռի բայերի անցյալ կատարյալ ժամանակի կազմության մեջ տեղի ունեցած փոփոխություններ։ Անցյալ կատարյալի հիմքին ա. ար. ավ. անք. աք. ան վերջավորությունների համեմատ էր կազմվում նաև վերահիշյալ բայերի անցյալ կատարյալ ժամանակը։ Այս բայերը ևս գրական աշխարհաբարի կազմավորման շրջանում հիմնականում ի լծորդությամբ էին հանդես գալիս, մասամբ էլ ի–ե և վերջապես՝ հազվադեպ՝ նաև ե լծորդությամբ։ Սակայն սկսած 1870-ական թվականներից ե լծորդությունը սկսում է աստիճանաբար տարածվել, բայց անցյալ կատարյալի կազմությունը դեռ մեծ մասամբ շարունակվում է մնալ նախկինը՝ կրավորաձևը։ Հյուսիսափայլյան շրջանում գերադանցապես այս վերջին ձևով էր՝ շարժվեցավ, տպվեցավ, ուղարկվեցավ, բաժանվեցանք, վնովեցան, տեսնվեցան, մեղադրվեցան, կազմվեցան և այլն[22]։ Հիմնականում այսպես էր կազմվում կատարյալը նաև անցյալ դարի վերջերին. օրինակներ՝ Րաֆֆուց. ծածկվեցավ (Րաֆ. 17), հայտնվեցան (18), գրկվեցավ (20), սկսվեցան (22), լվացվեցավ (37), հագնվեցավ (39), բացվեցան (39), ցնցվեցավ (40), ստիպվեցա (Րաֆ., 8, 315), հետաքրքրվեցա (384), համաձայնվեցան (319), Մուրացանից՝ գրավվեցավ (11), ուղղվեցավ (13), ցնցվեցավ (26), հնազանդվեցավ (29), պատժվեցա (32), կատարվեցավ (33), փոխվեցավ (34), հենվեցավ (35), վրդովվեցա (118), բռնվեցավ (148), սառեցավ (364), համբուրվեցավ (374), գրգռվեցա (390), կախվեցավ (397), հիասթափվեցավ (406), բացվեցան (446) և այլն, և այլն։ Նկատելի է, որ Նար-Դոսի մոտ արդեն ներգործաձև խոնարհումն է իշխում. լսվեցին (ՆԴ, 173), բացվեց (174), բաժանվեցին (170) և այլն, թեև ունի գտնվեցա (178), գտնվեցանք (219) և նման ձևեր։

22 Նույն տեղում, էջ 103։

Անցյալ դարի վերջին և այս դարի առաջին երկու տասնամյակներում այս բայերը աստիճանաբար սկսում են խոնարհվել ներգործաձև, թեև դարձյալ հանդիպում ենք կրավորաձև խոնարհման, օրինակ՝ խեղդվեցավ (ՀԹՆ, 1, 21), ծավալվեցավ (37), վախճանվեցավ (ԱԻ, ԱԷ, 322), մարեցավ (ՀՀՆ), ապրեցա (ՀՀՆ) և այլն։

Լեզվի պարզացման սովետական շրջանում վերացան չեզոք և կրավորական ածանցումով պարզ բայերի անցյալ կատարյալ ժամանակի խոնարհումների մեջ նկատվող զուգահեռությունները. ներկայումս հիշյալ բայերը կանոնավորապես ստանում են ի, իր, ինք, իք, ին *վերջավորությունները, որոնք դրվում են անցյալ կատարյալի ցուցական հիմքի վրա. բերենք մի նմուշ՝ հայտնվեց*ի, *հայտնվեց*իր. *հայտնվեց, հայտնվեց*ինք. *հայտնվեց*իք. *հայտնվե*ցին: *Այժմ* ա. ար, ավ. անք. աք. ան *վերջավորություններով խոնարհվում են միայն* են. ան. ն. *չ սոսկածանց ունեցող բայերը և պարզ ու սոսկածանցավոր մի քանի անկանոն բայեր։*

Պատճառական բայերի անցյալ կատարյալ ժամանակի կազմության մեջ նկատվող փոփոխություններ: *Գրաբարաձև կամ հնատիպ պատճառական բայերի աստիճանական վերացմամբ լեզվից դուրս մղվեցին նաև հիշյալ բայերի անցյալ կատարյալի հիմքի և անցյալ կատարյալ ժամանակի հնաձև կազմությունները։ Այսպես, հյուսիսափայլյան շրջանից ունենք՝* ամրացուց. շապեցուց. չմացուց. վավերացուց, հառաջացուցին, հարցուցին, անեցուց. նստեցուցիր, նստեցուցած, կորուցինք, մերկացուցած, *շատ եմ* զզվեցուցել. հարցուցի, կանգնեցուցին, ոչնչացուց, վերջացուցի, անցուցի, դարձուցի *և այլն*[23] *Ինչպես տեսնում ենք, հիշյալ պատճառականները դեռ չունեն գրական աշխարհաբարի հետագա շրջանի համար բնորոշ* -ցր *կատարյալի հիմքային մասը (ամ*րացր*-եց, շապեց*ր*-եց և այլն), որի փոխարեն առկա է* ցուց *մասը (նստեց*ուց*-ի, հարցուց-ի)։ Վերջավորությունները, ինչպես դժվար չէ նկատել, նույնն են՝* ի. իր. —. ինք. իք. ին: *Յոթանասունական թվականներին, արդեն հենց Ս. Պալասանյանի մոտ, ընդունված էր պատճառականների* -ցր-*ով կատարյալի կազմությունը (հազց*րի. *հազցրիր, հազցրեց (հազցրուց), հազցրինք, հազցրիք, հազցրին)*[24] *նկատելի է սակայն, որ եզակի երրորդ դեմքը բերված է նաև* ուց *վերջավորությամբ, որ առատորեն գտնում ենք գործածված*

---

23 *Օրինակները քաղված են Ս. Գալստյանի «Ակնարկներ աշխարհաբարի պատմության» գրքից. էջ 100—102։*

24 Ս. Պալասանյան. *էջ 170։*

Րաֆֆու 70-ական թվականների գրած «Ճանապարհորդություն Պարսկաստանում» և «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս» գործերում. բերենք մի քանի օրինակներ՝ զգուշացրուց (Րաֆ., 8, 315), բնակեցրուց (317), հարցրուց (317, 505), կորցրուց (331), վազեցրուց (540), ավելացրուց (372). սակայն ի տարբերություն հյուսիսափայլյան շրջանի, -ուց վերջավորությունը այստեղ ավելացված է պատճառական բայերի -ցր- հիմքածանցի վրա: Հետագայում Րաֆֆու մոտ հիշյալ բայերի կատարյալները կազմվում են արդեն ժամանակակից լեզվի օրինաչափություններին համապատասխան։ «Սամվելում» միայն մի անգամ ենք հանդիպում լցուցին ձևին (Րաֆ., 230). տե՛ս նաև Մուրացան՝ դարձուց (Լչ 350)։

Անշուշտ արևմտահայերենը կամ կը ձյուղի բարբառները բիչ դեր չեն խաղացել -ուց- կազմությամբ պատճառական բայերի կատարյալների տարածման կամ գործածության հարցում. բերենք մի օրինակ Իսահակյանից՝

Նրանք իմ կյանքը երազ դարձուցին—
Կուսական մաքուր աչերդ անուշ.
Ցամաքած սիրտս նորից լացուցին.
Հոգիս վառեցին երգերով քնքուշ,— (ԱԻ, ԸՆ, 67)։

Արևմտահայերենի ազդեցությամբ պետք է բացատրել նաև պատճառական բայերի կատարյալի այնպիսի բայաձևերի գործածությունը 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների գրական լեզվում, ինչպիսիք են՝ կլլեցնել (ՆԴ, 91), սովեցնում (ԱԻ ԱԷ, 54), խաղցնելով (Գործ, 1917, № 3, էջ 16), դարձուցիր (ՀՀ, ՀՔԿ, 9) և այլն։

Անցյալ դարի գրական լեզվում հանդիպում ենք պատճառական բայերի խոնարհման մի այլ կազմություն ևս, որ Աբեղյանն էլ է նշում իր «Աշխարհաբարի քերականության» մեջ. «Մատուցանել, բուն՝ մատույց,— մատուցի, մատուցիր, մատուցեց, մատուցինք, մատուցիք, մատուցին»։ Այս բայերը ներկայումս հանդես են գալիս ոչ պատճառական խոնարհմամբ, անորոշ դերբայում էլ հիմնականում օգտագործվելով մատուցել ձևով՝ (մատուցեցի, մատուցեցիր...)։ Այս ձևով խոնարհված ենք գտնում նաև հարուցանել (այժմ հարուցել) և հասուցանել (այժմ հասուցել) բայերը։ Նկատելի է, որ այս կարգի բայերի եզակի 3-րդ դեմքը անցյալ դարի աշխարհաբարում հաճախ հանդիպում է նաև գրաբարյան ձևով՝ նա կառույց (Րաֆ., 185), մատույց (203)։ Պատճառականի

կատարյալի գրաբարյան ձևեր են նաև Մուրացանի մոտ հանդիպող կորուսիր *(285)*, կորուսի *(289)*, ճասուցի *(373)*, կացուցին *(214, 273) և այլն։*

Նկատելի է, որ զարթնել *բայի պատճառականը նախասովետական շրջանում, մասամբ նաև սովետական շրջանի առաջին տասնամյակներում կազմել են* զարթեց *հիմքից՝* զարթեցնել *(Մուր., 29, ՆԴ, 112). այստեղից էլ կանոնավոր կազմությամբ ստացել են կատարյալի* զարթեցր *հիմքը և այդ հիմքից անցյալ կատարյալ ժամանակի* զարթեցրեց *(Տիրվ., 374, ՀՍԱ, 29) կանոնավոր ձևը։ Սակայն հենց նախասովետական շրջանում զարթնել բայի* ն*-ն արդեն մասամբ չէր գիտակցվում որպես ոչ արմատական, հետևաբար և հենց նույն Տիրվանզադեի մոտ գտնում ենք կանոնավոր պարզ բայերի նմանակությամբ կազմված (հմմտ.՝ սիրել — սիրեց — սիրեցնել)* զարթնեցրեց (զարթնեցնել *անորոշ դերբայից՝ էջ 377) ձևը։ Այժմ կանոնավոր է համարվում* զարթնեցնել *ձևը, թեև սովետական շրջանում էլ հանդիպում ենք* զարթեցնել *բայի* զարթեց *հիմքից կազմված ձևերի. օրինակ՝* զարթեցրեք *(ՅՀ, ԲՁՏԱ—, էջ 116, 271)*, զարթեցնել *(ն. տ., էջ 146, 271)։*

Լեզվի զարգացման սովետական փուլում գործածությունից դուրս ընկան հնաձև կամ գրաբարատիպ պատճառական բայերը, որոնց հետ նաև անցյալ կատարյալի կազմության հին ձևերը. այժմ պատճառական բայերի անցյալ կատարյալի հիմքը կազմվում է անորոշ դերբայի բայահիմքի ն *հնչյունը* ր*-ով փոխարինելով, որի վրա ավելացնելով* ի, իր, եց, ինք, իք, ին *վերջավորությունները՝ ստանում ենք անցյալ կատարյալ ժամանակի բայաձևերը։ Այսպես՝*

վախեցն-ել — վախեցր-ի, իր, եց, ինք, իք, ին
հասկացն-ել — հասկացր-ի, իր, եց, ինք, իք, ին
փախցն-ել — փախցր-ի, իր, եց, ինք, իք, ին։

Դեռ Ս. Պալասանյանն ու Մ. Աբեղյանն են ժամանակին նկատել, որ սխալ են հագցրեցի, հագցրեցինք[25] *և փախցրեցի, փախցրեցիր... զարմացրեցի, զարմացրեցիր*[26]*... և նման կազմությունները։ Պատճառական ածանցմամբ բայերի անցյալ կատարյալի հիմքը անցյալ կատարյալ ժամանակի եզակի 3-րդ դեմքը ընդունելու և առաջին խոնարհման պարզ բայերի նմանակությամբ անցյալ կատարյալի* ի, իր, —, ինք, իք, ին *վերջավորությունները*

25 Ս. Պալասանյան, *էջ 170։*

26 Մ. Աբեղյան, *էջ 109։*

այդ հիմքի վրա ավելացնելու ձգտումը, որ նախասովետական շրջանում զգացվում էր հիմնականում խոսակցական լեզվում (այդ շրջանի դասական հեղինակների մոտ գրեթե չենք հանդիպում նման ձևերի), լեզվի զարգացման սովետական շրջանում մեծապես տարածվեց և այժմ բանավոր խոսքում գերակշռում է: Գրավոր խոսքում ևս այդ կազմությունները մեծ կշիռ ունեն և գնալով տարածվում են: Ակնհայտ է, որ կանոնավոր պարզ բայերի անցյալ կատարյալի կազմության եղանակը մեծապես նպաստում է այս ձևերի տարածմանը. Համեմատիր՝ սիրել, կարդալ, եզակի 3-րդ դեմք՝ սիրեց, կարդաց+ի, իր,—, ինք, իք, ին և հասկացնել, եզակի 3-րդ դեմք՝ հասկացրեց+ի, իր,—, ինք, իք, ին: Այժմ բերենք բնագրային մի քանի օրինակներ՝ հասցրեցինք (ՆՍԲ, 411), չհասցրեցի (ՍԿ, ՔԴՔ, 46), վերցրեցի (ն. տ., 46), մացրեցին (ՀՁ, 28/3—1964), հարցրեցին (ՀՁ, 5/1—1965), բարձրացրեցին (ՆՆ, 27/11—1965) և այլն:

Գրական լեզվի համար ոչ հանձնարարելի այս ձևերը աստիճանաբար հեղեղում են մեր բանավոր ու գրավոր խոսքը:

Սոսկածանցավոր բայերի անցյալ կատարյալի հիմքի և նրանից կազմվող բայաձևերի կազմության մեջ լուրջ փոփոխություններ չեն նկատվում: Նկատված տարբերությունները արդյունք են ոչ թե բուն բայաձևերի կազմության եղանակի (անենք՝ անցյալ կատարյալի հիմք+դերբայների ել, ած, ող կամ անցյալ կատարյալի ա, ար, ավ, անք, աք, ան վերջավորություններ), այլ սոսկածանցավոր բայերի անորոշ դերբայի հնացած ձևերից բխող սկզբնաձևերի, օրինակ՝ փիտնալ — փիտցա, փիտցող, խաղցնել — խաղցնող, պակսեցնել — պակսեցնող և այլն, որոնք մասամբ արևմտահայերենի ազդեցության արդյունք են:

Անցյալ կատարյալի հիմքի և նրանից կազմվող վաղակատար, ճարակատար ու ենթակայական դերբայների կազմության մեջ նկատելի փոփոխություններ չեն կատարվել: Հարակատար դերբայի ձևավորման մասին մենք արդեն խոսել ենք, ինչ վերաբերում է վաղակատար դերբային, ապա նկատելի է, որ նախասովետական շրջանում, գուցե թե արևմտահայերենի կամ կր ճյուղի բարբառների ազդեցությամբ, երբեմն հանդիպում ենք գրեր, վազեր ձևերի (անենք՝ գրեր է, վազեր է), որոնք սակայն սոսկ պատահական կիրառություններ են. սովետական շրջանում Շիրազի մոտ միայն երբեմն հանդիպում են նման ձևեր, այն էլ խոսքին բարբառային երանգ տալու նպատակով:

բ) Ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների բայաձևերի կազմության մեջ նկատվող փոփոխություններ

Անորոշ դերբայի հիմքից կազմվող պարզ, ինչպես նաև սոսկածանցավոր և պատճառական բայերի ըղձական եղանակի ապառնի ժամանակի բայաձևի կազմության մեջ նկատվող փոփոխությունները երկու բնույթի են՝ ա) լծորդափոխության հետ կապված և բ) լծորդափոխությունից անկախ:

ա) Ինչպես արդեն ասել ենք, նախասովետական, հատկապես անցյալ դարի վերջի գրական աշխարհաբարում որոշ գործածություն ունեին ի *լծորդության բայերը, որոնց ըղձական եղանակի*[27] *ապառնի ժամանակի բայաձևերը բնականաբար պահպանում էին* ի *լծորդը եզակի և հոգնակի բոլոր դեմքերում. այդ ժամանակի կազմության դեպքում, ինչպես գիտենք, անորոշ դերբայի* լ *վերջավորությունը փոխարինվում է* մ, ս, —, նք, ք, ն *դիմային վերջավորություններով՝ նստի-*լ, *նստի-*մ, *նստի-*ս. *նստի, նստ-*ինք, *նստի-*ք, *նստի-*ն: *Բավարարվենք մի քանի օրինակներով՝ Մուրացանից և Իսահակյանից. եթե* կհանեիս *(Մուր., 338), հուզվիմ, տանջվիմ (279), եթե համոզվիմ (342), պիտի խորասուզվիմ (401), կանանվինք (158), թող* մեռնիմ, կորչիմ *անհետ, անանուն (ԱԻԸԵ, 55):*

Ի լծորդության վերացմամբ բնականաբար գործածությունից դուրս եկան նաև հիշյալ եղանակի ապառնի ժամանակի ի *լծորդով խոնարհումները*[28], *և լեզվի զարգացման սովետական փուլում ըղձական (պայմանական, հարկադրական) եղանակի ապառնի ժամանակը կանոնավորապես (չհաշված առանձին՝ հատկապես հին սերնդի հեղինակների մոտ երբեմն հանդիպող* ի *լծորդով ապառնի բայաձևերը) հանդես է գալիս* ե *լծորդով (նստեմ, կնստեմ, պիտի, պետք է նստեմ և այլն):*

բ) Շատ ավելի երկար հարատևեցին և նույնիսկ մեր օրերի չափածո ստեղծագործություններում դեռ հանդիպում են ըղձական (պայմանական, հարկադրական) եղանակի ապառնի ժամանակի եզակի 3-րդ դեմքի ե *վերջավորությամբ բայաձևերը (սիրեմ, սիրես,* սիրե *և այլն): Ինչպես հայտնի է, նախասովետական շրջանի*

---

27 *Նաև պայմանական և հարկադրական:*

28 *Ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակի՝* ի *լծորդությամբ կիրառության օրինակներ բերել ենք նաև լծորդությունների բաժնում:*

լեզվում այս բայաձևը (սիրե) գործածվում էր թե ե, թե ի լծորդով՝ նույնիսկ ի լծորդության բայերի խոնարհման ձևերում (նստե, պառկե, հուզվե և այլն): Սակայն եթե անցյալ դարի գրական հուշարձաններում ե լծորդը գերակշռում էր (այդ պարզ երևում է փաստերի և այդ շրջանի քերականության դասագրքերի քննությունից), ապա 20-րդ դարի սկզբներում ե լծորդը հիշյալ բայաձևերում սկսում է տեղի տալ, իսկ 20-ական թվականներին նկատելի է արդեն ի-ի լուրջ գերակշռությունը, որը հետագայում վերածվեց բացարձակ գերակշռության, եթե մենք նկատի չունենանք որոշ հեղինակների չափածո ստեղծագործությունները:

Այժմ բերենք ե-ով վերջավորված եղակի 3-րդ դեմքի բայաձևերի օրինակներ. Րաֆֆուց՝ ուսումնասիրե (Րաֆ., 7), որ... շունչ առնե (18), կդնե. կպառնե (36), նա կսկսե (39), պետք է ուսումնասիրե, պետք է պատրաստե (7), պետք է վախեցնե (18). Ժխտական խոնարհմամբ՝ Շապուհի ձեռքը չընկնե, բերդում չաքսորե (Րաֆ., 249), ունի նաև խիստ հազվադեպ՝ ի լծորդությամբ. ի՞նչ կխոսի (Րաֆ., 36). Մուրացանից՝ դրդե (7), թող առնե (447), կմեղմե (16), կվշտակցե (7), պիտի դրավե (301), պիտի իշխե (342), Նար-Դոսից՝ հիասթափեցնե (23), հայանե (113), սիրաշահե (249), պիտի պատճառե (197), սակայն նաև՝ առի (31), շարժի (47). Շիրվանզադեից՝ վարե (371), լինե (69), պիտի անե (64), պիտի հաշտեցնե (65), պիտի պատասխանե (383), պիտի ծագե (408), կվճարե (84), կանե (166), կնշանակե (218), կարգիլե (270), մտածե (387), սակայն նաև՝ ապավի (381), պիտի շռայլի. կանցնի (166), կրծի (166). Տերյանից՝ ստեղծե (հտ. 2, 224), վճարե (232), լրացնե (237), անե (հտ. 3, 354), գոհացնե (541), կնշանակե (հտ. 2, 297), նա կուղարկե (հտ. 3, 142), պետք է փոխարինե (հտ. 2, 205), պետք է արտահայտե (205), պիտի բերե (213):

Նկատելի է, որ գուցե միայն Շիրվանզադեի մոտ է, որ ի-ով բայաձևերը գերակշռում են: Բերված մյուս հեղինակների, նույնիսկ Վ. Տերյանի գործերում ե-ով բայաձևերը ավելի մեծ կշիռ ունեն. բերենք մի նմուշ Տերյանից. «Բացի այդ պետք է հասարակական գործիչն ինքը ցրե անտարբերությունը և մեռածությունը և եռանդ, հետաքրքրություն և սեր ստեղծե դեպի իր գործը և չսպասե թե ահա հասարակությունը կգա և իր առատ գումարներով, գործակցությամբ և համակրությամբ, կյանք կմտցնե գործում» (ՎՏ, ԵԺ, 2, 224):

Նշված բայաձևերը ատատորեն գտնում ենք գործածված նաև

20-ական թվականներին. որպեսզի ուժերը կենտրոնացնե (Գործ, 1917 № 3, էջ 26), կքաշե (ԵԶ, ԵԺ, 2, 78), կվառե, կկապե (178), թացնե (248), վերջացնե (ՄՄ, ԵԺ, 2, 36): Հիմնականում ե-ն է գերակշռում նաև Զարյանի չափածո ստեղծագործություններում, մասնավորապես նախասովետական շրջանի՝ սիրե (ԵԶ, ԸԵ, 14), գամե (52), կառնե (87), պիտի օրորե (106), կվառե (147): Ավ. Իսահակյանի ստեղծագործություններում (թե չափածո, թե արձակ) ե-ով բայաձևերը գերակշռում են: Մեծ կշիռ ունեն այդ ձևերը նաև Շիրազի բանաստեղծությունում:

Այժմ բերենք մի քանի բնագրային նմուշներ.

Եվ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ խոխոջե,
Մի թարմություն եդեմային
Չորս բոլորքս տարածե (ՀՀԵ, 29):
Թող մեկն ու մեկը կյանքիդ վարդերից
Մի արցունքի պես մաքուր փուշ խրե՝
Թող այն փուշն իսկույն իմ աչքը խրվի՝
Թող աչքիս բոցը քո փշերն այրե... (ՇԲՀ, 211):

Նկատելի է, որ հաճախ նույն հատվածում հանդիպում ենք այդ բայաձևի երկու տարբերակներին. օրինակ՝ «—«Նրան» կասեմ, «նա» դեպի նման կմտնի մի ծակում, ականջ կդնե, հետո կգա, բոլորը կպատմե ինձ» (Բաֆ., 36), «Բոլոր էությամբ մի բան եմ տենչում,— որ Անահիտը միայն ինձ սիրե, միայն ինձ պատկանի...» (ԱԻ, ԱԷ, 317):

«Թող թշնամին տեսնե մեր սերը մերկ, թող նա լսի նորից արկերի զոռոց...» (ՆԶԵ, 1, 200):

Ամփոփենք: Լեզվի զարգացման սովետական փուլում ըղձական (պայմանական, հարկադրական) եղանակի ապառնի ժամանակի 3-րդ դեմքի ե ձևույթով բայաձևերը դուրս մղվեցին լեզվից. գիտա-քաղաքական, հրապարակախոսության, ինչպես նաև բանավոր լեզվում այժմ բացառապես ի ձևույթով բայաձևերն են օգտագործվում: Գեղարվեստական արձակում ևս, ինչպես փաստերն են ցույց տալիս, ե-ով ըղձականի բայաձևերը աստիճանաբար դադարեցին գործածվելուց և այժմ, որպես կանոն, ի-ով բայաձևերն են կիրառվում: Միայն չափածոյում է, որ որոշ հեղինակներ (Ն. Զարյան, Հ. Շիրազ և ուրիշներ) երբեմն օգտագործում են այդ

բայաձևերը, այն էլ կարծես սոսկ ավանդաբար, կարծես նախորդ շրջանի դասական բանաստեղծներից չանջրպետվելու, նրանց բանաստեղծագործությունների լեզվաոճական առանձնահատկություններին այս կամ այն չափով հարազատ մնալու ինչ-որ միտումով: Կարճ ասած, հիշյալ բայաձևը կարծես արդեն դառնում է ոճական միջոց՝ հնատիպություն, երբեմն նաև կարծեցյալ հանդիսավորություն արտահայտելու համար:

Նախասովետական շրջանի լեզվում միասնություն չի նկատվում նաև եղանակիչի գրության հարցում. այն ձայնավորներից առաջ սովորաբար գրվում էր կ'. իսկ բաղաձայններից առաջ՝ կը՝ առանձին գրությամբ (կը կարդամ, կը կարդաս..., կ'պատմեմ, կ'պատմես)[29]: Սակայն այդ եղանակիչը կարող էր և միասին գրվել (ինչպես՝ կըկարդամ, կըկարդաս): Հաճախ նույն հեղինակի մոտ հանդիպում ենք միասին և առանձին գրությամբ կը եղանակիչի գործածություն: Երբեմն այն հանդես էր գալիս կ ձևով՝ նույնիսկ բաղաձայններից առաջ: Այս խառնաշփոթությունը վերացավ լեզվի զարգացման սովետական շրջանում:

Թեև մեր թեմայից դուրս է, սակայն անհրաժեշտ ենք համարում հիշել, որ անցյալ դարի գրական լեզվում հաճախադեպ չէին պայմանական եղանակի կիրառությունները ըղձականի նշանակությամբ՝ երբ շաղկապով սկսվող երկրորդական նախադասությունների կառուցվածքում. օրինակներ՝

«Եթե նա կմիջնորդե ձեր մասին, ես դարձյալ կընդունեմ ձեզ իմ դրոշի տակ» (Մուր., 274): «— Թշվառականներ, եթե ամենքդ այդպես կփախչեք այնտեղից, իհարկե դուք չեք ունենալ» (Մուր., 300): «— Ախ ինչքան կուրախանամ ես, երբ մի անգամ ևս կտեսնեմ նրան» (Րաֆ., 419): «Այդ միջոցին իմ գլխում ծագեց մի միտք. եթե այդ ախպակը չհողանը կգտնե, մի փոսի մեջ կծածկե, հետո կվերադառնա ինձ լուր կբերե, թե չգտա, անցորդները տարել են, ես ի՞նչ կարող եմ ասել նրան» (Րաֆ., 8, էջ 549):

Այժմ ընդգծված պայմանական եղանակի ձևերի փոխարեն օգտագործվում են ըղձական եղանակի ձևերը:

Անշուշտ կը ճյուղի բարբառների կամ արևմտահայերենի ազդեցության արդյունք է վերոհիշյալ բայաձևերի գործածությունը սահմանականի ներկա կամ անցյալ ժամանակների նշանակությամբ.

29 Ա. Պալասանյան. Քերականություն մայրենի լեզվի, չորրորդ տիպ, Տփխիս, 1894, էջ 159, 164:

Դեպի անապատ հովմը կը սուրա,
Խոր լռության մեջ կանչնի կը մարի.
Դեղին քարերն իմ շիրմի վրա
Կը բուսնի մենակ տատասկը վայրի։
Եվ անապատում, և հավերժական
Անուրջում հոգիս կը լռե, կըզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կը գգվե տատասկին դժնյա... (ԱԻ, ԸՆ, 48)։

Եթե 1901 թ. գրված այս բանաստեղծության մեջ ավելի ընդգծված է արևմտահայերենի ազդեցությունը, քան հեղինակի մայրենի բարբառի, ապա հաջորդ օրինակներում առաջին հերթին այս վերջինի ազդեցությունն է շեշտվում. համեմատի՛ր Իսահակյանի և Շիրազի հետևյալ հատվածները՝

Այսօր ձեր տուն մեծ խնջույք կա.
Դու կը բուրես վարդի պես.
Չորս բոլորդ հարուստ աղա,
Դու կը փայլես աստղի պես։
Ձեր տան առաջ՝ ձյուն ու գիշեր.
Ախ, ես կանգնել կը դողամ.
Դու դահճի պես ու ես հագել,—
Այրող շողըն է իմ արյան...
(ԱԻ, ԸՆ, 45)։

Այս մարմարե սարերն ի վար,
Այս մարմարե քարերն ի վար,
Դուն ո՞ւր կիջնես կարկաչելով,
Դուն ո՞ւր կերթաս յար կանչելով
Ո՞ւմ պարտեզը կերթաս, իմ ջուր,
Իմ պղտիկ քուր,
Պատասխան տուր (ՇՔՀ, 154)։

Ավելորդ է ասել, որ լեզվի զարգացման սովետական փուլում ներկա ժամանակի նշանակությամբ այս կիրառությունները բացառապես հանդիպում են չափածոյում, այն էլ հիմնականում Շիրազի մոտ, որի մայրենի բարբառը, ինչպես ասել ենք, կը ճյուղի է։

Գրական աշխարհաբարի կազմավորման սկզբնական շրջանում (հատկապես հյուսիսափայլյան) հարկադրական եղանակի ձևավորման համար գործածվում էր պիտո է. պիտո էր եղանակիչը, թեև միաժամանակ գործածվում էին նաև պիտի, պետք է եղանա-

կիչները (ժխտականը՝ չէ պիտո, չպիտի, պետք չէ)։ Նկատելի է, որ պիտո է, պետք է ձևերին կարող էին հաջորդել թե ըղձականի բայաձևերը, թե անորոշ դերբայը (պիտո է դառնար, պետք է կարդամ. պիտո է գործ կատարել, պետք չէ մոռանալ, պետք է կարծել և այլն)[30]։

Հետագայում պիտո է ձևը դուրս մղվեց լեզվից և անցյալ դարի վերջին քառորդում գործածական էին պիտի, մասամբ նաև պետք է եղանակիչները[31], ըստ որում ժխտականի դեպքում ավելի ընդունված էին պիտի չկարդամ. պետք է չկարդամ ձևերը, թեև սակավ գործածական չէին նաև չպիտի կարդամ. չպետք է կարդամ կաղապարները[32]։ Սովետական շրջանում ավելի հաճախեցին դրանց գործածության ձևերը, և այժմ գրական լեզուն ընդունել է պիտի, մասամբ նաև պետք է եղանակիչները (պիտի կարդամ. պետք է կարդամ), իսկ ժխտականի դեպքում՝ չ մասնիկի գործածությունը եղանակիչի վրա՝ չպիտի կարդամ, չպետք է կարդամ. խրախուսելի չեն բանավոր խոսքում երբեմն հանդիպող պիտի չկարդա. պետք է չկարդա ձևերը։

գ) Խոնարհման ժխտական ձևերի կազմության մեջ նկատվող փոփոխություններ

Նախասովետական շրջանում, ինչպես վկայում է Մ. Աբեղյանը, «ներկա ժամանակների մեջ եմ օժանդակի բացասական երրորդ դեմքը՝ չէ, հաճախ ժողովրդական ձևով դառնում է չի. ինչպես՝ չէ ասում, չէ ասել. չէ ասելու դառնում են՝ չի ասում, չի ասել, չի ասելու»[33]։ Բերենք բնագրային օրինակներ՝ չէ կարելի (Րաֆ., 7), չէ դուրս եկել (7), չէ պատրաստվել (7), կարող չէ լինել (6), ինչու չէ եկել (Մուր., 395), չէ անօրինում (456), տեսնելու չէ (ՆԴ, 254), չէ եղել (ԱԻ, ԱԷ, 38), չէ գոհացնում (ՎՏ, ԵԺ, 2, 203), չէ կարող (206), չէ խնայում (310), չէ ուզում (ՀՀ, ՀՔԿ, 28), չէ հասկանում (ՄՄ, ԵԺ, 2, 78), պակաս չէ կարելի (ԱԶ, ՏՄ, 1, 40)։

Պետք է ասել, որ չի ձևի գերակշռությունը չէ-ի նկատմամբ

---

30 Ս. Գալստյան. Ակնարկներ աշխարհաբարի պատմության, էջ 110։

31 Մուրացանը գործածում է պիտի՝ պիտի գրավեն (301), պիտի իշխեն (342), պիտի պատրաստվեին (400), պիտի խորասուզվիմ (401), Րաֆֆին՝ պետք է. պետք է ուսումնասիրեն (Րաֆ., 7), պետք է պատրաստեն (7), պետք է փախցնեն (18)։

32 Մուրացանը ունի նույնիսկ չի պիտի համարձակեր ձևը (Մուր., 7)։

33 Տե՛ս Մ. Աբեղյան. էջ 133։

դեռ զգալի չէր 1914 թ. «Մշակի» համարներում, սակայն 1920 թ. համարներում դա արդեն զգացվում է։ Անշուշտ չի-ն, որ Աբեղյանը ժողովրդական ձև է համարել նույնիսկ 1906 թ., արագորեն ամրացրել իր դիրքերը և քսանական թվականներին այն, որպես հանձնարարելի և նախընտրելի գրական ձև, հաստատվեց թե բանավոր (ուր նա շատ ավելի վաղ էր տարածված) և թե գրավոր խոսքում։

Բոլորովին խրախուսելի չեն չի-ի կիրառությունները չէ-ի փոխարեն բաղադրյալ ստորոգյալի ժխտական ձևերի կազմություններում (մեծ չի, խելոք չի, ամուր չի, մարդ չի փոխանակ՝ մեծ չէ, խելոք չէ, ամուր չէ, մարդ չէ)։

Ամենալուրջ փոփոխությունը կատարվել է պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտական ձևերի կազմության մեջ. նախասովետական շրջանում հիմնականում ընդունված էին և ժամանակի գրական նորմաներին համապատասխան էին համարվում եմ օժանդակ բայի ժխտական ձևով և խոնարհվող բայի ել և ալ վերջավորություններով (չեմ վազել. չեմ կարդալ) կազմությունները. ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքում չէ-ի փոխարեն միշտ գործածվում էր չի. ինչպես՝

չեմ (չէի) գնալ, գրել
չես (չէիր) գնալ, գրել
չի (չէր) գնալ, գրել
չենք (չէինք) գնալ, գրել
չեք (չէիք) գնալ, գրել
չեն (չէին) գնալ, գրել

Սակայն դեռ Ս. Պալասանյանն էր իր ժամանակին նկատել, որ գավառական բարբառներում երբեմն լ տառը բաց է թողնվում. չեմ խոսի, չեմ ուշանա, չէի ասի, չէի գնա..., որ ոմանք գրավորի մեջ էլ են գործածում[34]։

1906 թ. Մ. Աբեղյանը նշում է. «Անորոշ դերբայի լ վերջավորությունը խոսակցական, երբեմն և գրական լեզվի մեջ հաճախ դուրս է ընկնում... օրինակ՝ չեմ գրի, չեմ խոսի, չեմ գնա, չեմ զարմանա»[35]։

Ահա այն ձևերը, որ «խոսակցական» կամ «գավառական» լեզվի ազդեցության արդյունք էին համարվում, մեկընդմիշտ որ-

---

34 Ս. Պալասանյան. էջ 168։

35 Մ. Աբեղյան. էջ 132։

դեգրվեցին գրական լեզվի կողմից, և այժմ պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտական խոնարհումը կայունացած է և բանավոր ու գրավոր խոսքում հանդես է գալիս միշտ նույն կազմությամբ՝ եմ օժանդակի բացասական ձևեր+գրի, կարդա, ժխտման դերբայներ (չեմ գրի, կարդա..., չէի գրի, կարդա...):

Հետաքրքրական է նշել, որ Րաֆֆին «Սամվելում» հիմնականում ներկայիս ձևով է կազմել պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների բացասականի ձևերը. օրինակ՝ չեմ մոռանա (Րաֆ., 29), չեն ճանաչի (29—30), չի բաց անի, չեմ թափի (52), մինչդեռ Մուրացանն ու Նար-Դոսը գերադասությունը գերազանցապես տվել են անորոշաձև ժխտման դերբային, ինչպես՝ չէր հայտնիլ (Մուր., 6), չէիր հաճիլ (8), չէի համարձակիլ (8), չէր խոսիլ (10), չէր նշմարիլ (22), չէի լինիլ (28), չեմ վրդովվիլ (33), չի գրգռիլ (128), չէին տանջվիլ (392), չի ընդունիլ (433), չի հեռացնիլ (433), չես ուրանալ (344) և այլն, չի թողնիլ (ՆԴ, 19), չեք նստիլ (22), չի ձանձրանալ (23), չէր կարողանալ (25), չէիք լալ (31), չի դադարիլ (43), չի շարժիլ (46), չի ցանկանալ (48), չի համաձայնիլ (84) և այլն, և այլն, չի վերցնիլ (Շիրվ., 90), չեմ գնալ (111), չի ունենալ (114), չեմ թույլ տալ (143), չեն հասկանալ (155), չես մենամարտիլ (191), չի համաձայնվիլ (236), չեմ գովիլ (239), չի լսիլ (382), չի դարձնիլ (ՀԹե, 1, 45), չեմ սիրիլ (46), չի կապվիլ (ՎՏ, Եժ, 3, 664), չէի ցանկալ (150): Պետք է ասել, որ նույն հեղինակը նույն գործում հաճախ երկու ձևն էլ գործածել է, հատկապես դա նկատելի է 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում: Արազին ունի չեն նկատիլ, չեն ներիլ (ԱՊ, 15)՝ 1915 թ. գրված պատմվածքներում, իսկ Ստ. Զորյանը՝ չէր համարձակվի. չէին փախենա (ԱԶՑ, 11)՝ 1916 թ. գրված պատմվածքներում: Զուգահեռ ձևերի կամ երկվության այս շրջանը տևում է մինչև քսանական թվականները. 1917 թ. դեռ գործածվում են չի տիրիլ, չի զիջիլ ժխտականները (ՀՀ, Հե, 10). Մ. Մանվելյանի մոտ արդեն 1917 թ. իշխում է ժխտման դերբայի նոր ձևով կիրառությունը՝ չէի զիջի (ՄՄ, Եժ, 2, 31): Չարենցի ստեղծագործություններում բոլորովին չենք հանդիպում անորոշաձև ժխտման դերբայների. Իսահակյանը ընդհանրապես խուսափել է այս հնաձև ժխտականից: Սովետական շրջանի առաջին մի քանի տարիներին դեռ երբեմն կարելի էր գտնել պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտական ձևերի

հնացած գործածություններ, սակայն սոսկ որպես ավանդաբար փոխանցված վերապրուկ։

Բերենք մի երկու օրինակ՝ «Ո՛չ մի մարդ... երբեք չէր առնիլ իր մանր-մունր երեխաներին և չէր գնալ տասնյակ վերստեր այս ցրտերին» (ՆԴ, 52)։ «Ես հավատացնում եմ ձեզ, չէ՛ զղջալ մեր բարեկամությունից» (ՆԴ, 167)։ «Ուր ահեղ կռվով չի մտնիլ արքան, Ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ» (ՀԹԵ, 2, 138)։

Կը ճյուղի բարբառներից թափանցած ձևեր են սիրեր, մնար ժխտման դերբայները, որոնք երբեմն-երբեմն հանդիպում են այս կամ այն գրողի գործերում. օրինակ՝ չի մնար (ԱԽԱ, 1917, 55)։

Լեզվի զարգացման սովետական փուլում ճշտվեցին և կանոնավորվեցին նաև ժխտական չ մասնիկի գործածությունները այս կամ այն բայաձևի հետ. որպես կանոն, նախասովետական շրջանում բաղաձայնով սկսվող բայաձևերից առաջ դրվում է չը, իսկ ձայնավորով սկսվողներից առաջ՝ չ։ Առաջին դեպքում թեև հանձնարարվում է չը-ն առանձին գրել (չը գրեի, չը տեսա), սակայն հաճախ ոչ միայն միասին էին գրում (չըգրեց, չըխոսեց)[36], այլև առանց ը տառի (չգրեց, չխոսեց)։ Ձայնավորից առաջ չ-ն նույնիսկ ապաթարցով էին գրում, որ Մ. Աբեղյանը ավելորդ նորաձևություն է համարում (չ՚եմ, չ՚ես, չ՚է, չ՚ուղարկեմ և այլն)[37]։ Մ. Պալասանյանը հանձնարարում է թե ձայնավորից, թե բաղաձայնից առաջ պարզապես չ օգտագործել (չխոսիմ, չեմ խոսում)[38]։

Բերենք մի քանի օրինակներ՝ չը հասկացավ (Գործ, 1917, № 3, էջ 5), չը թողնեն (6), չը պիտի մնան (12—13), չըզգաց (24), չը մեռնի (ԵՁԲ, 9), չըգիտեմ (52), չըգար (53), չըլսվի (ՀՀ ՀԵ, 8), չը կա (ԱԽԱ, 24) չըկար (25), չը մնա (44), չը մնաց (46), չըկայ (47) և այլն։

Ինչպես տեսնում ենք, հենց նույն հեղինակի գործում, հաճախ հենց նույն բայաձևում չը մասնիկը մերթ միասին է գրվել, մերթ առանձին։

Այս խառնակ վիճակը վերջնականապես կանոնավորվեց միայն սովետական շրջանում՝ վերահսկվող միասնական լեզվական քաղաքականության ընձեռած հնարավորության շնորհիվ։ Այժմ անկախ բայաձևի սկզբնատառի ձայնավոր թե բաղաձայն լինելուց, բայի խոնարհման ժխտական ձևերը կազմվում են չ մասնիկով՝ միասին գրությամբ (չխոսեմ, չերգեմ և այլն)։

---

36 Տե՛ս Մ. Աբեղյան, էջ 130։

37 Նույն տեղում, էջ 130։

38 Տե՛ս Մ. Պալասանյան, էջ 167, 168։

դ) Անկանոն բայերի խոնարհման մեջ տեղի ունեցած փոփոխություններ

Պարզ անկանոն բայերի խոնարհման մեջ նկատելի են հետևյալ փոփոխությունները. նախասովետական շրջանում ասել, տալ *բայերի անցյալ կատարյալ ժամանակը հավասարապես տարածված էր անցյալական և ցույական հիմքերով՝* ասի, ասիր, ասավ, ասինք, ասիք, ասին, ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին[39]. տվի, տվիր, տվավ, տվինք, տվիք, տվին, տվեցի, տվեցիր, տվեց, տվեցինք, տվեցիք, տվեցին[40]:

Այժմ ընդունված են և հանձնարարվում են ցույական հիմքերով կազմությունները: Նկատելի է, որ ասել *բայը* ե *լծորդության կանոնավոր բայերի նմանությամբ ժողովրդա-խոսակցական լեզվում գործածում են նաև ասեցի, ասեցիր, ասեց և այլն ձևերով, որոնք երբեմն թափանցում են նաև գրավոր խոսքի մեջ:*

Օրինակներ՝ տվավ (Մուր., 249, 446), ասեցիր (Րաֆ. 86), ասավ (ՆԴ, 244), տվինք (366), չասեց (Շիրվ., 261), տվի (ՀԹԵ, 1, 85), ասավ (85), ասիր (97), տվավ (ԱԻ, ԱԷ, 305), տվին (Գործ, 1917, № 37), տվին (ԱՉ, ՏՄ, 1, 245), ասի (ԳՄ, ԵՍ, 112, 126), տվին (150), ասինք (160), տվինք (175), տվիր (490), ասին (ՇՔՀ, 55, 197, 295):

Հարկ է նշել, որ եթե նախասովետական շրջանում անցյալական հիմքով կազմությունները չէին դիտվում որպես ոչ հանձնարարելի ձևեր, ապա այժմ դրանք խոսքին տալիս են ժողովրդա-խոսակցական երանգ:

Չարենցի մոտ ևս կրկնահիմք կատարյալները բավական առատ են՝ տվի–տվեցի, ասին–ասացին *նույնիսկ* ասեց: *Հետաքրքրական է, որ Նաիրի Զարյանի «Հատընտիրում», ինչպես ընդգծում է Մ. Ավագյանը*, մի քանի բայերի (ասել, անել, բերել, տալ)-*ավ *վերջավորությամբ անցյալական հիմքով կազմությունները ավելի են տարածված, քան ցույականով՝ ասավ, արավ, տվավ, բերավ—ասաց, արեց, տվեց, բերեց:*

---

39 *Տե՛ս* Ս. Պալասանյան, *էջ 172,* Ն. Տեր-Ղևոնդյան, *Մայրենի լեզվի քերականության տարրերը, 1-ին և 2-րդ մաս, Թիֆլիս, 1902, էջ 107,* Մ. Աբեղյան, *էջ 122:*

40 Ս. Պալասանյան, *էջ 173,* Մ. Աբեղյան, *էջ 121,* Ն. Տեր-Ղևոնդյան, *էջ 108:*

* Մ. Ավագյան, *Նաիրի Զարյանի ստեղծագործության լեզուն և ոճը, Երևան, 1961, էջ 196:*

Այսպես կրկնավոր էին նաև բերել, դնել, առնել, բաղնել բայերը, որոնք անցյալ կատարյալը կազմում էին բեր-բերեց, դր-դըրեց, առ-առեց, բաղ-բաղեց հիմքերից՝ բերի-բերեցի, դրի-դրեցի, առի-առեցի, թողի-թողեցի. սակայն եթե նախասովետական շըրջանում՝ հատկապես անցյալ դարի վերջերին գերակշռում էին առաջին ձևով կազմությունները (բերի, դրի, առի, թողի), ապա լեզվի զարգացման սովետական փուլում գերադասությունը տըրվում է ցոյական կազմություններին (բերեցի, դրեցի, առեցի, թողեցի). բոլորովին հնացած են անցյալի եզակի երրորդ դեմքի ավ-ով ձևերը՝ բերավ, դրավ, թողավ, առավ: Օրինակներ՝ բերավ (Մուր., 28), առավ (350), առին (396), բերավ (Րաֆ., 8, 317), բաց առի (ՆԴ, 325), սակայն ունի առեց (276), չթողիր (356), բերինք (ՎՏ, եժ, 2, 263), առավ (ԱԻ, Աէ, 249), բերին (272), թողի (ՄՄ, եժ, 2, 39), առիր (ԳԱ, եՍ, 497), դրի (149), չթողին (305), բերինք (ՇԲՀ, 198), առին (55), առիր (ՀՍԱ, 254), բերին (ԱԲՆ 1, 295):

Պարզ լալ և սոսկածանցավոր բանալ բայերը նախասովետական շրջանում տարածված էին անցոյական հիմքով՝ լացի, լացիր, լացավ, լացինք, լացիք, լացին. բացի, բացիր, բացավ, բացինք, բացիք, բացին:

Բերենք մի քանի օրինակներ՝ բացավ (Մուր., 401), բացին (ԱՉ, ՏՄ, 1, 28), բացիր (ԳՄ, եՍ, 204), բացի (501):

Նկատելի է սակայն, որ եզակի 3-րդ դեմքը հաճախ լացեց, բացեց ձևերով էր հանդես գալիս: Հարկ է նշել սակայն, որ այս բայերն էլ, լեզվի ընդհանուր միտումին համապատասխան, ձըգտում են ցոյական հիմքի. անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքից կազմված բացել, լացել ձևերը ժամանակակից հայերենին խորթ չեն, որոնցից կազմված բացեցի, բացեցիր..., լացեցի, լացեցիր... ձևերը խոսակցական լեզվից մուտք են գործում նաև գրավոր խոսքի մեջ:

Ժամանակակից հայերենում գործածությունից դուրս է եկել բառնալ բայի բարձա, բարձար, բարձավ, բարձանք, բարձաք, բարձան ձևերը, որոնց փոխարեն շատ ավելի տարածված և ընդունված են բարձ հիմքից կազմված բարձել բայի բարձեցի, բարձեցիր... ձևերը: Զարնել բայի զարկի, զարկիր, զարկավ, զարկինք, զարկիք, զարկին ձևերը ևս դուրս են եկել գործածությունից, փոխարինվելով զարկ հիմքից կազմված զարկել բայի զարկեցի, զարկեցիր... ձևերով:

Նախասովետական, հատկապես անցյալ դարի գրական լեզվում տանել և առնել բայերի կատարյալները հանդիպում էին նաև, թեև ոչ այնքան հաճախ, գուցե արևմտահայերենի կամ բարբառների ազդեցությամբ. տարի, տարիր, տարինք, տարիք, տարին և առի, առիր, առեց, առինք, առիք, առին ձևերով[41]. Հատկապես նկատելի է Րաֆֆու մոտ հանդիպող առեց ձևը. օրինակ՝ կանգ առեց (42), հանձն առեց (24), վեր առեց (30), առեց (36), նույնիսկ բարբառային առեցի ձևը (Րաֆ., 8, 465)։ Այժմ այդ բայերը տարածված են տարա, տարար, տարավ..., առա, առար, առավ... ձևերով, թեև բանավոր խոսքում, հատկապես ժողովրդա-խոսակցական լեզվում հիմա էլ կարելի է հանդիպել հնաձև գործածության։

Այժմ սոսկ ժողովրդական լեզվում են հանդիպում սկսել և նստել բայերի սկսա, սկսար, սկսավ..., նստա, նստար, նստավ... կատարյալի ձևերը, որոնք նախասովետական շրջանի գրական լեզվում բավական տարածված էին՝ սկսեցի..., նստեցի... ձևերին զուգահեռ[42]. օրինակներ՝ սկսա (Մուր., 40), սկսան (334, 121), նստան (Ա.Ի, Ա.Է, էջ 176), նստա (290), նստանք (319)։ Այսպես նաև ծնա, ծնար, ծնավ...։ Ժամանակակից գրական լեզուն այս ձևերի փոխարեն որդեգրել է ցոյական սկսեցի... նստեցի..., ծնեցի... ձևերը։ Հանել և ածել բայերի հանի, հանիր..., ածի, ածիր... ոչ ցոյական կատարյալները[43], որոնք նախասովետական շրջանում էլ լայն տարածում չունեին, ներկայիս գրական լեզվում իսպառ մերժված են և փոխարինված հանեցի, հանեցիր... ձևերով։

Սովետական փուլում գործածությունից լրիվ դուրս են եկել նաև սոսկածանցավոր որոշ բայերի -ավ վերջավորությամբ կատարյալները, ինչպես՝ լցրավ (Մուր., 28), վերցրավ (29), որոնք, պետք է ասել, նախասովետական շրջանում էլ լայն տարածում չունեին. այժմ սրանք փոխարինված են -եց վերջավորությամբ ձևերով՝ լցրեց, վերցրեց։

Հիմքափոխության միտում է նկատվում չ սոսկածանց ունեցող որոշ բայերում. ուռչել, սառչել բայերը լեզվի զարգացման ներկա շրջանում թեև անորոշ դերբայի հիմքը կազմում են ն, չ սոսկածանցավոր բայերի նման (ուռչ-, սառչ-, ուռչում են, սառչում են, ուռչեմ, սառչեմ և այլն), սակայն նկատելի է, որ բանավոր խոսքում հաճախ գործածվում է չ սոսկածանցի անկումով առա-

---

41 Տե՛ս Ա. Պալասանյան, էջ 173. Ն. Տեր-Ղևոնդյան, 108։

42 Ն. Տեր-Ղևոնդյան, էջ 108—109. Մ. Աբեղյան, էջ 122։

43 Տե՛ս Մ. Աբեղյան, էջ 122։

ջացած անորոշ դերբայի մի նոր տարբերակ՝ ուռել, սառել, որտեղից էլ ուռում եմ, սառում եմ, ուռեմ, սառեմ ձևերը: Հարկ է նշել, որ այս բայերի անցյալ կատարյալի հիմքը պետք է լիներ ուռ(ա)..., սառ(ա)... (համեմատիր փախչել-փախ(ա), թռչել-թռ(ա) և այլն), սակայն այս կանոնավոր ձևերը այժմ նույնիսկ բարբառային երանգ են ստացել, որոնց փոխարեն տարածվում են այդ նույն բայերի անցյալ կատարյալի ուռ, սառ- հիմքերից կազմված ուռել, սառել նոր բայաձևերը, որոնցից և լծորդության կանոնավոր պարզ բայերի օրինակով գոյանում և տարածվում են ուռեցի, ուռեցիր..., սառեցի, սառեցիր... կատարյալները (համեմատիր՝ սիրել-սիրեց-սիրեցի և այլն):

Հիմքափոխության այս տենդենցը, որ դարձյալ արդյունք է լեզվի միասնականության և միօրինակության հասնելու միտումին, կարող է և տարածվել չ սոսկածանց ունեցող այլ բայերի վրա: Նկատելի են նաև կպչել, թռչել և փախչել բայերի չ սոսկածանցի փոխարինման դեպքերը ն սոսկածանցով, որ դարձյալ միօրինականացման միտում է՝ ն սոսկածանցավոր բայերի նմանությամբ. օրինակ՝ բանավոր և երբեմն էլ գրավոր խոսքում հանդիպում ենք կպնել, թռնել, փախնել ձևերին, որոնց անցյալ կատարյալի հիմքը թեև անփոփոխ է մնում (կպչել—կպա, թռչել-թռա, փախչել-փախա և կպնել-կպա, թռնել-թռա, փախնել-փախա, ինչպես՝ գտնել-գտա), սակայն ներկայի հիմքը և նրանից կազմված ժամանակները չ-ի փոխարեն ն սոսկածանցով են լինում (կպնում եմ, թռնում եմ, փախնում եմ): Բերենք մի օրինակ՝

Բետոնը լցնելուց առաջ հատակամածը մաքուր պետք է լինի, որ ցեմենտն ամուր կպնի և Գետառի հարձակման փորձերը իզուր անցնեն (ԵԵ 2/10—1965):

Վերջին ժամանակներում նախատեսել, ներդրել բայերը ավելի հաճախակի են հանդիպում նախատեսնել, ներդնել ձևերով, որ խրախուսելի չէ. որպես կանոն, բարդության երկրորդ բաղադրիչները, մանավանդ երբ նրանք ն սոսկածանց ունեցող բայեր են, պետք է հանդես գան այդ բայերի կատարյալի հիմքով (-տեսել, -դրել և այլն) և խոնարհվեն և խոնարհման կանոնավոր պարզ բայերի նման. ուստի հանձնարարելի չեն նախատեսնում եմ, ներդնում է և նման ձևերը նախատեսում եմ, ներդրում եմ ձևերի փոխարեն: Հետաքրքրական է ճամրնկեց (ՍԿ, ՔԴՔ, 346) կանոնավոր կազմությունը, թեև ժամանակակից լեզվում ավելի տարածված է ճամրնկավ ձևը:

ե) Հրամայական եղանակի կազմության մեջ նկատվող փոփոխություններ

Հատկապես զգալի են հրամայական եղանակի դրական և ժխտական ձևերի կազմություններում նկատվող փոփոխությունները։

Այս եղանակի թե՛ դրականի, թե՛ ժխտականի (արգելականի) ձևերը այժմ էլ դեռ միասնականացած և կայունացած չեն։ Այստեղ հատկապես զգալի է ժողովրդական խոսակցական լեզվի ազդեցությունը, որի հետևանքով ստեղծվել են հրամայական եղանակի զուգահեռ ձևեր թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերի խոնարհման մեջ։

Եզակի հրամայականի կազմության մեջ նկատվող փոփոխություններ.— *1. Պարզ, ինչպես նաև կրավորական և բազմապատկական* Ե *խոնարհման բայերը եզակի հրամայականը կազմում են անորոշ դերբայի հիմքից՝* իր *վերջավորությամբ (ինչպես՝ գր-ել —գր-իր, պատրաստվ-ել—պատրաստվ-իր, թռչկոտ-ել—թռչկոտ-իր)։ Գերազանցապես այս ձևով էր կազմվում հրամայականը նաև նախասովետական շրջանի գրական աշխարհաբարում, թեև այս ձևերի կողքին քերականները նշում են նաև* գրե, ազատե, համարե *կազմությունները, որպես նույնիսկ ավելի նախընտրելի*[44]*։ Այս վերջին ձևերը, հակառակ քերականների ցանկության, ոչ մի տարածում չգտան և մնացին սոսկ որպես հազվադեպ և պատահական կիրառություններ։*

Նկատելի է սակայն, որ այժմ, խոսակցական լեզվում սկսում են լայնորեն տարածվել եզակի հրամայականի ի *վերջավորությամբ ձևերը (գրի, վազի, պահի և այլն)։ Ինչպես գիտենք, հրամայական եղանակը գերազանցապես հանդես է գալիս երկխոսություններում, ուր հաճախ հեղինակն ստիպված է լինում իր հերոսներին խոսեցնել այնպես, ինչպես նրանք կխոսեին առօրյա կյանքում, ուստի և գեղարվեստական գրականության*[45] *մեջ էլ են*

---

[44] *Տե՛ս* Ա. Պալասանյան, *էջ 155, 157 և* Մ. Աբեղյան, *էջ 177, ուր հեղինակները նախ բերում են* ազատե, համարե, գրե *ձևերը և ապա միայն* ազատիր, համարիր, *իսկ Աբեղյանը՝ նաև* ազատի *բարբառային ձևը։*

[45] *Նշելի է, որ հրամայականի ձևերը գրեթե բացառապես գործածվում են գեղարվեստական գրականության լեզվում. գիտա-քաղաքական, հրապարակախոսության և լրագրային լեզվում դրանց գործածությունը բնականաբար գրեթե բացառված է։*

մուտք գործել և գործում բանավոր խոսքում տարածված հրամայականի բայաձևերը, այդ թվում և եղակի հրամայականի ի վերջավորությամբ ձևերը: Դեռ 1906 թ. հրատարակած «Աշխարհաբարի քերականություն» դասագրքում Մ. Աբեղյանը նկատել է գրի ձևի գոյությունը. սակայն պիտի նշել, որ եթե նախասովետական շրջանի գեղարվեստական գրականության մեջ հազվադեպ ենք հանդիպում նման ձևերի, ապա արդի գրականության մեջ դրանք արդեն սկսում են որոշ չափով աշխուժանալ: իր վերջավորության փոխարեն ի-ի գործածությունը հատուկ է ոչ միայն ե խոնարհման պարզ, այլև կրավորական, բազմապատկական, սոսկածանցավոր բայերին:

Հովհ. Շիրազի մոտ հանդիպող կանչե, կարկաչե և նման ձևերը բարբառային են[46] և ոչ մի կապ չունեն Ս. Պալասանյանի ու Մ. Աբեղյանի մոտ հիշատակված գրե, ազատե, համարե ձևերի հետ, քանի որ վերջիններս կամ գրաբարյան եղակի հրամայականի եա երկբարբառի ամփոփման արդյունք են (սիր-եա—սիրե), կամ կը ճյուղի բարբառների եղակի հրամայականի ե վերջավորությամբ բայաձևերի գրականացման հետևանք, կամ էլ պարզապես արևմտահայերենի ազդեցության արդյունք: Այժմ բերենք մի օրինակ Շիրազից՝

Բեկի հարսնուկ, մի՛ ամաչե
Դուրս արի, դուրս, յայլը կանչե (ՇՔՀ, 68):

Ս. Խանզադյանի «Ազատության զանգ» բանաստեղծության մեջ հրամայականի հիշյալ բայաձևի գործածությունը պետք է համարել ոչ թե հեղինակի մայրենի բարբառի (Կարին) ազդեցության արդյունք, այլ պարզապես արևելահայերենի վաղ շրջանի հեղինակներից կամ արևմտահայերենից փոխ առնված ոճական մի միջոց, որով հանդիսավորություն կամ խրոխտություն է հաղորդվում բարբառային ոչ մի երանգ չունեցող այս մարտական բանաստեղծությանը. բերենք մի քառյակ.

Ազատության Զա՛նգ, դու վե՛հ ղողանջե՛
Կովկասյան վսե՛մ, վե՛ս բարձունքներից,
Ինչպես մրրի՛կ՝ շաչե՛, շառաչե՛,
Մինչև սիգապանծ ազատն Մասիս:

---

46 Ամենայն հավանականությամբ հեղինակի մայրենի բարբառի (Կարնո) ազդեցություն:

Այսպես, նույն բանաստեղծության մեջ հանդիպում ենք՝ ճըրö–չե, կոչե, գոչե, կանչե բայաձևերին։

Ս. խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականը ոչ մի փոփոխություն չի կրել։

2. Սոսկածանցավոր և պատճառական բայերի հրամայական եզանակի եզակի 2-րդ դեմքի կազմության մեջ ևս ոչ մի էական փոփոխություն չի նկատվում։

Ավելորդ չէ ասել, որ զաrբնել բայը ներկա շրջանում չի դիտակցվում որպես սոսկածանցավոր, հետևաբար նրա եզակի հրամայականը այժմ կազմվում է պարզ բայերի նման անորոշ դերբայի հիմքից՝ զաrբնի՛r, մինչդեռ նախասովետական շրջանում այն կազմվում էր սոսկածանցավոր բայերի նման՝ կատարյալի հիմքից, օրինակ՝ զաrբի՛r (ԵՉԹ)։

Հոգնակի հրամայականի կազմության մեջ նկատվող փոփոխություններ.— Թե պարզ և թե ածանցավոր բայերի հոգնակի հրամայականը կանոնավորապես կազմվում է՝ անցյալ կատարյալի հիմքի վրա ավելացնելով եք վերջավորությունը.

Պարզ բայեր— վազել-վազեցի-վազեցե՛ք։
խաղալ-խաղացի-խաղացե՛ք
սոսկածանցավոր բայեր— գտնել-գտա-գտե՛ք
փախչել-փախա-փախե՛ք
մոտենալ-մոտեցա-մոտեցե՛ք,
հասկանալ-հասկացա-հասկացե՛ք
պատճառական բայեր— մոտեցնել-մոտեցրի-մոտեցրե՛ք
հասկացնել-հասկացրի-հասկացրե՛ք
հագցնել-հագցրի-հագցրե՛ք

Նկատելի է, որ եթե սոսկածանցավոր բայերի հոգնակի հրամայականը մեր գրական լեզվում միշտ միօրինակ է եղել և զուգահեռ ձևեր չի ունեցել, ապա Ե խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը զուգահեռ բայաձևեր է ունեցել անցյալ կատարյալի հիմքից (վազեցե՛ք) և ներկայի հիմքից (վազե՛ք)։ Պետք է ասել սակայն, որ եթե նախասովետական շրջանի գրական լեզվում հոգնակի հրամայականի բայաձևերը գրեթե գերազանցապես կանոնավոր կազմությամբ էին (այսինքն անցյալ կատարյալի հիմքից), ապա վերջին մի քանի տասնամյակներում բանավոր խոսքից գրավոր լեզուն մուտք գործեցին ներկայի հիմքից կազմված բազմաթիվ ձևեր։ Ժողովրդա-խոսակցական լեզվում և ընդհանրապես

բանավոր խոսքում հիշյալ բայաձևերը արդեն որակ են կազմում և ավելի մեծ կշիռ ունեն իրենց գործածությամբ։ Այստեղ անշուշտ մեծ դեր է խաղում միօրինակության հարցը. չէ՞ որ եզակի հրամայականը ներկայի հիմքից է կազմվում. օրինակ՝ գրիր–գրեք, վազիր–վազեք: Բացի դրանից, հրամանը կարճ պետք է լինի, հատու, իսկ ներկայի հիմքից կազմված ձևերը, ինչպես գիտենք, մեկ վանկով կարճ են կատարյալի հիմքից կազմվածներից (վազեք-վազեցեք): Դեռ 1906 թ. Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի քերականություն» գրքույկում, շեղատառով, որպես ոչ հանձնարարելի, նշում է գրեք ձևը: Հետագայում, անշուշտ բանավոր խոսքի ազդեցությամբ, այս կարճ բայաձևերը մուտք գործեցին գրավոր լեզու. բերենք մի քանի օրինակ՝ կարդացեք (Գործ, 1917, № 3, էջ 6), նայեք (ՀՀ, Հե, 12), լսեք, հանեք, արձակեք (ՎԱՀ, 10, 12, 13):

Ընդհանրապես չափածոյում, հանգ ու վանկի համար, հաճախ են դիմում կարճ ձևերին. օրինակ՝

Է՜յ, հե՜յ, մոլեգնիր՛, խուլք բնության,
Դուր, երկրի խորքում նիրհող լավաներ,
ժայթքեցե՛ք, ժամն է ձեր ահագնության,
Դուր, զորքերիս հետ խուժե՛ք, անտառներ... (ՇՔՀ, 122):

Այժմ, գրավոր խոսքում, թեկուզ և արձակում, հոգնակի հրամայականի ներկայի հիմքից կազմված ձևերը ոչ թե հազվադեպ հանդիպող կամ պատահական կիրառություններ են, այլ արդեն տարածման միտում ներկայացնող գործածություններ. բերենք բնագրային մի քանի օրինակներ.

«— Խնդրեմ, նստե՛ք» (ՀՍԱ, 49): «— Սպասեք մեր հրամանին» (Սխ, ՄՍ, 343): «— Արկղի պրոբլեմը լուծեք, ընկեր դիրեկտոր, էնպես չի լինի,— գոչեց նա հեռվից» (ՍՀ, 1/4—1965): «— ... Շարունակեք թիավարել, դա ձեր գործն է» (ՋԼ, ԵԺ, 2, էջ 14): Այդպես նաև՝ կարդեք (ՍՀ, 28/3—1965), մասնակցե՛ք (ՀԹ, 6/1—1965), նայեք (Ավ., 29/10—1960), պատրաստեք, լսեք, բացեք, սովորեք, խոստովանեք (ՋԼ, ԵԺ, 2, 49, 61, 79, 251) և այլն:

Պատճառական բայերի հոգնակի հրամայականը հիմնականում տարածված է-գրեք ձևով (հագցրե՛ք). սակայն դեռ Ս. Պալասանյանն է նկատել 70-ական թվականներին, որ «կան գրողներ նույնպես հագցրեցի. հագցրեցինք և հրամ. հագցրեցեք» (էջ 170): Այս վերջին ձևով կազմությունները, որ արդյունք են անցյալ կա-

տարյալի հագցրեց-ի հիմքի առաջացման (եթե հագցր(ի)-ի փոխարեն հիմքը գիտակցվում է հագցրեց(ի), ապա հոգնակի հրամայականի եք վերջավորությունը, բնականաբար՝ հոգնակի հրամայականի կազմության կանոնին համապատասխան՝ ավելանում է հագցրեց կատարյալի հիմքի վրա՝ հագցրեց-եք), բավական տարածված են նաև մեր օրերում, սակայն առայժմ բարեբախտաբար բանավոր խոսքում։ Գրավոր խոսքում դրանք քիչ են հանդիպում, թեև հագցրեցի. հագցրեցիր կազմությամբ կատարյալները ավելի ու ավելի են թափանցում գեղարվեստական և հրապարակախոսության լեզվի մեջ։

Լեզվի զարգացման սովետական շրջանում որպես նորություն պետք է հիշել հիմնականում ռուսերենի ազդեցությամբ տարածվող անորոշ դերբայի կիրառությունը հրամայականի նշանակությամբ։

Առայժմ հիշյալ կիրառությունը տարածված է մասամբ թարգմանական (հատկապես ռուսերենի), մասամբ էլ Հայրենական մեծ պատերազմը արտացոլող գրականության մեջ. բերենք մի երկու օրինակ՝ «— Գրոտը բարձրացնե՛լ: Քաշե՛լ խարիսխը,— գոռաց Փիթը» (ՋԼ, ԵԺ, 1, 662)։ «— Սեկնիները Րանղե՛լ արա՛գ,— հրամայեց Ֆրիսկո Քիդը» (663)։

Լեզվի զարգացման սովետական փուլում աշխուժացան նաև անվանական հրամայականները. ինչպես գիտենք, հատու և կարուկ շեշտով արտասանված գոյականները, երբեմն նաև այլ խոսքի մասերը հրամայականի արժեք են ստանում՝ առանց թվային վերաբերության. օրինակ՝ «— Վիկտորիա,— կարգադրում է բժիշկը,— համար 33-ին կոմպրես, 12-ին՝ ջերմաչափ» (ԳՄ, ԵՍ, 488)։

Նման կիրառություններում հրամայական բայաձևերի գործածությունը (կոմպրես դի՛ր, ջերմաչափ դի՛ր) կարծես ավելի է թուլացնում հրամանի ուժը։ Այսպես՝ համապատասխան կոնտեքստներում հրամանի արժեք կարող են արտահայտել՝ կրա՛կ (բացեք), փամփո՛ւշտ (տվեք), ստո՛փ (կանգնեցեք), զգա՛ստ (կանգնիր, կանգնեցեք) դո՛ւրս (եկեք), ներս (եկեք) բառերը։

Հրամայական եղանակի ժխտական ձևերի (արգելականի) կազմության մեջ նկատվող փոփոխություններ.— Նախասովետական շրջանում հրամայական եղանակի ժխտականը, ինչպես Մ. Աբեղյանն է նշում, կազմվում էր հետևյալ կերպ. արգելականի եզակի 2-րդ դեմքի ր և հոգնակի երկրորդ դեմքի ք վերջավորու-

թյունները ավելացվում էին լծորդի վրա. Ե լծորդը եզակիում սովորաբար դառնում էր ի, իսկ ի լծորդը կարող էր և Ե-ի փոխվել. ահա Աբեղյանի օրինակները. եզակի՝ մի՛ կարդար, մի՛ զարմանար, մի՛ գրիր (գրեր), մի՛ խոսիր (խոսեր): Հոգնակի՝ մի՛ կարդաք, մի՛ զարմանաք, մի՛ գրեք, մի՛ խոսեք (խոսիք)[47]:

Սովետական շրջանում բնականաբար գործածությունից դուրս եկան ի լծորդության բայերի իՐ վերջավորությամբ հոգնակի արգելականը, որ Ս. Պալասանյանի դասագրքում միակ հանձնարարելի ձևն էր համարվում[48], մի qrեr, մի՛ խոսեr ձևերը, որոնք Մ. Աբեղյանն էլ դեռ այն ժամանակ նախընտրելի չէր համարում (բերում է փակագծերի մեջ)[49], ինչպես նաև ա լծորդության բայերի մի՛ կարդաr, մի՛ աղաr ձևերը, որոնք թեև նախասովետական շրջանի քերականություններում միակ հանձնարարելի ձևեր են համարվել, սակայն դրանց զուգահեռ, հատկապես խոսակցական լեզվում, ինչպես Մ. Աբեղյանն է նշում, գործածական են եղել նաև առանց r-ի ձևերը՝ մի՛ կարդա, մի՛ աղա, որոնք և լեզվի զարգացման սովետական փուլում ամրացան լեզվում (թե բանավոր, թե գրավոր) որպես միակ ընդունելի ձևեր: Այսպիսով, ժամանակակից գրական հայերենը որդեգրել է արգելականի կազմության հետևյալ եղանակը. եզակի արգելականը կազմվում է դրականի ձևերի վրա մի ավելացնելով (խոսի՛ր-մի՛ խոսիr, կարդա՛-մի՛ կարդա), իսկ հոգնակի արգելականը՝ անորոշ դերբայի լ-ի փոխարեն ավելացնելով f (խոսել-մի՛ խոսեք, կարդալ-մի՛ կարդաf):

Են, ան սոսկածանցավոր բայերի եզակի արգելականի՝ նախասովետական շրջանում տարածված մի՛ վախենար, մի՛ մոռենար[50] ձևերը թեև այժմ էլ նախընտրելի են համարվում[51], սակայն լեզվից աստիճանաբար դուրս են մղվում, փոխարինվելով մի՛ վախենա. մի՛ մոռենա ձևերով (զուգե ա լծորդության պարզ բայերի արգելականի նմանակությամբ՝ կարդալ-մի՛ կարդա), մասամբ նաև մի՛ վախեցիր. մի՛ մոռեցիր կազմություններով ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում:

Այժմ բերենք պարզ և ածանցավոր բայերի արգելականի մի

47 Մ. Աբեղյան. էջ 130:

48 Ս. Պալասանյան. էջ 167:

49 Մ. Աբեղյան. էջ 130:

50 մի՛ վախենալ. մի՛ մոռենալ ձևերին զուգահեռ. այս մասին քիչ հետո:

51 Տե՛ս Ա. Ղարիբյան. Դասագիրք 5—7 դասարանների համար. Երևան. 1964, էջ 238. 239:

քանի օրինակներ. նախասովետական շրջանի հեղինակներից՝ մի վախենար (ՆԴ, 167), մի նեղանար (ՆԴ, 57), մի՛ պարծենար (ՍԽՍ, 23), մի՛ բարկանար (Ն. տ., 84), մի՛ նեղանար (ՎՏ, ԵԺ, 3, 383)։ Հ. Թումանյանի մոտ հանդիպում ենք երկու ձևերին էլ՝ մի՛ վախենար (ՀԹԵ, 1, 220), մի՛ լար (20), մի՛ ջանար (45), մի՛ հավատա (79), մի՛ ժպտա (92)։ Սովետական շրջանից օրինակներ՝ մի՛ զարմանա (ՆԶ, ԵԺ, 1, 136), մի՛ վշտանա (Իէ, ՓՍ, 1, 72), միամիտ մի՛ ձևանա (Սխ, ՄՍ, 534), մի զարմանա (531), մի՛ գնա (298), մի՛ գրա (ՆԶ, ԵԺ, 1, 84) և այլն։

Հոգնակի արգելականի օրինակներ՝ մի՛ նեղանաք (ՆԴ, 160), մի՛ մոռանաք (Շիրվ., 339), մի՛ հեռանաք (Իէ, ՓՍ, 1, 106), մի՛ մոռանաք (Սխ, ՄՍ, 504) և այլն։

Ե լծորդության բայերի օրինակներ՝ մի՛ հարցնիր (Մուր., 26), մի՛ վրդովվիր (27), մի՛ սրոնիր (ՍԻ, ՐԵ, 60), մի՛ հուսահատվիր (Սխ, ՄՍ, 367), մի՛ սրտնեղվիր (287), մի՛ հուսահատվեք (ՆԴ, 329), մի՛ վարվեք (Շիրվ., 351), մի՛ խոսեք (ՋԼ, ԵԺ, 2, 136), մի՛ փակեք (Սխ, ՄՍ, 296) և այլն։

Պարզ բայերի եզակի հրամայականի կազմության նմանակությամբ հաճախ բանավոր խոսքում պարզ բայերի հոգնակի հրամայականն էլ կազմում են դրականի ձևերի վրա մի ավելացնելով (համեմատիր՝ խոսի՛ր-մի՛ խոսիր. որի նմանակությամբ՝ խոսեցե՛ք- մի՛ խոսեցե՛ք. կարդա՛-մի՛ կարդա՛. որի նմանակությամբ կարդացե՛ք-մի՛ կարդացեք)։ Այս վերջին ձևերն առայժմ հազվադեպ են մուտք գործում գրավոր խոսքի մեջ, սակայն նմանակության միտումը կարող է իր վճռական խոսքն ասել։ Այս ձևերի տարածմանը գուցե նպաստում են նաև են, ան սոսկածանց ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքով կազմված արգելականները. ինչպես գիտենք, են, ան, ինչպես նաև ն, չ սոսկածանց ունեցող բայերի թե եզակի և թե հոգնակի հրամայականները կազմվում են կատարյալի հիմքից.

մոտեն-ալ — մոտեց-իր, մոտեց-եք
հասկանալ — հասկաց-իր, հասկաց-եք
հասն-ել — հաս-իր, հաս-եք
թռչ-ել — թռ-իր, թռ-եք

Իսկ այս ձևերի եզակի և հոգնակի արգելականները թե՛ նախասովետական և թե՛ սովետական շրջանի գրական լեզվի նորմաների համաձայն պետք է կազմվեն անորոշի հիմքից՝ առաջին

երկու բայերի համար լ-ի փոխարեն ր (եզակի թվում) և Ք (հոգնակի թվում) ավելացնելով, իսկ վերջին երկու բայերի համար անորոշի հիմքին իր (եզակի) և եՔ (հոգնակի) վերջավորությունները ավելացնելով (մի՛ մոռնար—մի՛ մոռնաՔ. մի՛ հասկնար—մի՛ հասկնաՔ[52], մի՛ հանիր — մի՛ հանեՔ, մի՛ թողիր— մի՛ թողեՔ):

Կենդանի խոսակցական լեզուն, որն ընդհանրապես ձգտում է միօրինակության, այստեղ ընտրել է արգելականը կազմելու ավելի հեշտ միջոց՝ դրական ձևերի վրա պարզապես մի ավելացնելու միջոցը. առայժմ այդ միջոցը տարածվում է ԵՆ, ԱՆ սոսկածանց ունեցող բայերի վրա, որոնց արգելականները բանավոր խոսքում հիմնականում հանդես են գալիս կատարյալի հիմքով, ինչպես՝ մի՛ մոռեցիր — մի՛ մոռեցեՔ. մի՛ հասկացիր — մի՛ հասկացեՔ: Նկատելի է, որ այս ձևերը սկսել են թափանցել նաև գրավոր խոսքի մեջ. օրինակ՝ մի՛ մոռացեՔ (Ձլ, Եժ, 2, 272), մի՛ հեռացեՔ (275):

Այսպիսով խոսակցական լեզուն ընտրել է հրամայականի դրական և ժխտական ձևերի միահիմք կազմություն, որը մեծապես հեշտացրել է հրամայականի կազմության առանց այդ էլ բարդ համակարգը:

Խոսակցական լեզվում միօրինականացման միտումը նկատվում է նաև պատճառական բայերի արգելականի կազմության մեջ. այնտեղ էլ զգալի է հրամայականի դրական ձևերի վրա պարզապես մի ավելացնելու ձգտում, որով հրամայական եզակի դրական և բացասական ձևերը դարձյալ միահիմք են դառնում. այսպես՝ մոռեցրո՛ւ. հասկացրո՛ւ. բոցրո՛ւ. մոռեցրե՛Ք. հասկացրե՛Ք, բոցրե՛Ք հրամայականների արգելականը բանավոր խոսքում սկսում է օգտագործվել մի՛ մոռեցրու. մի՛ հասկացրու. մի՛ բոցրու. մի՛ մոռեցրեՔ. մի՛ հասկացրեՔ. մի՛ բոցրեՔ ձևերով, փոխանակ անորոշ դերբայի հիմքից կազմված մի՛ մոռեցնիր. մի՛ հասկացնիր, մի՛ բոցնիր, մի՛ մոռեցնեՔ. մի՛ հասկացնեՔ, մի՛ բոցնեՔ ձևերի[53]: Անշուշտ վերի ձևերի մուտքը գեղարվեստական գրականության մեջ կասկած չի հարուցում, քանի որ, ինչպես ասել ենք,

---

52 ԵՆ, ԱՆ սոսկածանց ունեցող բայերի եզակի և հոգնակի արգելականի նշված կազմությամբ օրինակներ արդեն բերել ենք:

53 Անորոշ դերբայի հիմքով կազմված պատճառական բայերի եզակի և հոգնակի արգելականի կանոնավոր և հանձնարարելի ձևերի օրինակներ՝ մի՛ բարձրացնիր (ՀԹե, 1, 45), մի՛ հարցնիր, (Մուր., 26), մի՛ մոլորեցնեՔ (Շիրվ., 195), մի՛ հիշեցնեՔ (ՀԹե, 1, 26), մի՛ հեշտացնեՔ (26) մի՛ հարցնեՔ (91), մի՛ կորցնեՔ (Ձլ, Եժ, 2, 40) և այլն:

երկախոսություններում միշտ էլ ընդունված է հերոսների լեզվական տիպականացման համար ժողովրդա-խոսակցական, նույնիսկ բարբառային ձևերի գործածությունը. օրինակ՝ «— Դե գցի՛ր, գցի՛ր մի՛ ուշացրու,— խստաձայն գոռաց Պետրֆիլդը» (ՋԼ, ԵԺ, 2, 679)։

Այսպիսով, լեզվի ընդհանուր ձգտումը պարզ է. արգելականները կազմել դրականի ձևի վրա պարզապես մի՛ ավելացնելով, որով հրամայական եղանակի այդ երկու ձևերը դառնում են միահիմք[54]։ Սակայն եթե նկատի ունենանք, որ հենց հրամայականի դրական ձևերի կազմությունն էլ միօրինակ չէ, որ այդ ձևերի մեջ էլ նկատելի են զուգահեռություններ, որոնք անպայման աստիճանաբար տարածվում են նաև արգելականի կազմության վրա (մի՛ + դրական ձև կառուցվածքի դեպքում), ապա պարզ կդառնա, թե որքան խառնաշփոթ վիճակ է ստեղծվում արգելականի կիրառություններում։

Մեզ մնում է խոսել նաև եզակի արգելականի կազմության մի եղանակի մասին, որ խիստ տարածված էր նախասովետական շրջանի դրական լեզվում։ Ահա թե ինչ է գրում այս մասին Մ. Աբեղյանը. «Արևելյան աշխարհաբարում արգելականի եզակի ր վերջավորությունը սովորաբար փոխվում է լ տառի, որ և խոսակցական լեզվի մեջ հաճախ դուրս է ընկնում։ Ե լծորդն այս դեպքում միշտ ի լծորդի է փոխվում. ինչպես՝ մի՛ կարդալ, մի՛ կարդա, մի՛ զարմանալ. մի՛ զարմանա, մի՛ գրիլ. մի՛ գրի, մի՛ փախչիլ. մի՛ փախչի» (էջ 131)։

Բերենք մի քանի օրինակներ՝ մի՛ մոռանալ (ՎՏ, ԵԺ, 3, 311), մի՛ անիլ (Շիրվ., 187), մի՛ նյարդայնանալ (ՄՄ, ԵԺ, 2, 58). Հատկապես շատ են հանդիպում այս ձևերը Հովհ. Թումանյանի գործերում։

Քսանական թվականների առաջին տարիներին դեռ կարելի էր հանդիպել արգելականի այս ձևերին (օրինակ. մի՛ զալ այստեղ— Ա.Պ, 43), սակայն հետագայում դրանք իսպառ վերացան։

Ժողովրդական լեզվի ազդեցության արդյունք են մի՛ք ձևով կազմությունները հոգնակի արգելականը նշելու համար. մի՛ք կարդալ, մի՛ք ասիլ, մի՛ք գնալ, որոնք նույնիսկ անցյալ դարի դրական լեզվի համար էլ անընդունելի էին։ Մեր օրերում այս ձևերը ան-

---

54 Դեռ Մ. Աբեղյանն է 1906 թ. նկատել և նշել, որ մի՛ գնացեք, մի՛ զարմացեք, մի՛ իջեք ձևերը անսովոր են (տե՛ս «Աշխ. քեր...», էջ 131)։

գործածական են։ Բարբառային լեզվի արդյունք է նաև Հովհ. Թումանյանի մոտ հանդիպող մի, մի՛ր արգելական մասնիկի հատուկ գործածությունը. ինչպես՝ ու՛ս, գոռգոռալ մի՛ (ՀԹԵ, 1, էջ 285), սպանիլ մի (294), փախիլ մի՛ր (302)։

Ժամանակակից հայերենի խոսակցական լեզվում էլ բավականին տարածված է մի՛ր մասնիկի գործածությունը՝ հոգնակի արգելականի համար, սակայն արդեն ոչ թե լ-ով բայաձևերի վրա (մի՛ մոտանալ, մի՛ սիրիլ), այլ առանց լ. օրինակ՝ «Իզուր անեղը մի՛ր սպասի» (ԵԶ, ԸԵ, 447)։ «Կացե՛ք, մի՛ր շտապի. զեկուցե՛ք» (ՀՍԱ, 271)։ «Ծառ մի՛ր պարծենա, որ վերևում եք դեռ» (ՇՔՀ, 295)։ «Անկին մի՛ր դնի ասմրի մեջ» (ՍՀ, 4/12—1965)։

Գրավոր խոսքում հազվադեպ հանդիպող այս ձևերը ժողովրդա-խոսակցական և բարբառային երանգ են տալիս խոսքին։

Բանավոր խոսքում, մասնավորապես ժողովրդա-խոսակցական լեզվում եզակի արգելականները, ճիշտ ինչպես եզակի դրական ձևերը, հանդես են գալիս ի վերջավորությամբ (վազի՛ — մի՛ վազի և այլն)։ ցավալի է, որ այս սխալ ձևերը ևս սկսել են մուտք գործել գեղարվեստական գրականության մեջ. այժմ ավելի հաճախ կարելի է լսել մի՛ վազի, մի՛ երգի, մի՛ պարի, մի՛ աղմկի քան մի՛ վազիր, մի՛ երգիր, մի՛ պարիր, մի՛ աղմկիր։

Բերենք մի երկու բնագրային օրինակ՝ Կարգը մի՛ խանգարի (ՀՍԱ, 333), մի՛ հարցնի (360), մի՛ սարքի (361)։

Արդեն սոսկ ոճական նպատակ է հետապնդում Շիրազի մոտ հանդիպող մի՛ երգե (ՇՔՀ, 68), մի՛ մարե (91), մի՛ կարկաչե (197) ձևերի գործածությունը (երգե՛, կանչե՛, մարե՛, կարկաչե՛ դրական ձևերին զուգահեռ)։ Ինչ խոսք, դրանք հազվադեպ կիրառություններ են և իրենց գործածականությամբ ու ունեցած կշռով բոլորովին նման չեն նախորդ ձևերին (մի՛ վազի և այլն), որոնց հանդիպում ենք նաև հենց նույն հեղինակի մոտ՝ մի՛ փնտրի (ՇՔՀ, 292)։

Սովետական շրջանում, անշուշտ ռուսերենի ազդեցությամբ, գոյացավ արգելականի նշանակություն արտահայտելու մի նոր միջոց՝ կազմված չ ժխտական մասնիկից և անորոշ դերբայից. չխոսե՛լ, չծխե՛լ, չաղմկե՛լ. այս ձևերի միակ առավելությունն այն է, որ հրամանը թվային որոշակիություն չի ստանում և անհրաժեշտության դեպքում կարող է վերաբերել ինչպես առանձին անձի, այնպես էլ ընդհանրապես բոլորին։

Արգելականի արժեք են ստանում նաև ըղձական եղանակի

ապառնի ժամանակի 2-րդ դեմքի ժխտական բայաձևերը, երբ հրամայական շեշտ են կրում, օրինակ՝ «— Չխոսե՛ս, Քարրի: Գիտեմ ինչ ես ասելու» (ՋԼ, ԸՆ, 2, 679)»:

Ինչպես երևում է հրամայական եղանակի դրական և բացասական ձևերի այս համառոտ քննությունից, նախասովետական շրջանի հրամայականի զուգահեռ շատ ձևեր մերժվելով լեզվի կողմից, սակայն, դրան զուգընթաց, սովետական շրջանի բանավոր և գրավոր խոսքում հանձնարարելի ձևերի կողքին երևան եկան բազմաթիվ նոր կազմություններ, որոնցից շատերը արդյունք են միօրինականացման և միասնականացման լեզվական միտումի. ինչպես միշտ է պատահում նման դեպքերում, հինն ու նորը, մահացողն ու կենսունակը առայժմ ապրում են կողք-կողքի, սակայն զգացվում է մի խուլ պայքար, հատկապես բանավոր խոսքում. տարածվող ձևերի և գրավոր խոսքում արմատացած ու ժամանակակից շրջանի համար հանձնարարելի համարվող ձևերի միջև: Ապագան ցույց կտա, թե ինչով կվերջանա այս մրցակցությունը. սակայն մի բան պարզ է, որ լեզուն ընդհանրապես ձգտում է եզակի և հոգնակի ձևերը նույն հիմքից կազմել. դա վերաբերում է հատկապես ե լծորդության պարզ, ինչպես նաև կրավորական և բազմապատկական կանոնավոր բայերին (սիրի՛ր-սիրե՛ք, գրի՛ր-գրե՛ք, շարժվի՛ր-շարժվե՛ք, թռչկոտի՛ր-թռչկոտե՛ք և այլն), քանի որ սոսկածանցավոր և պատճառական բայերի եզակի և հոգնակի հրամայականները արդեն նույն հիմքից են (հեռացի՛ր-հեռացե՛ք, մոտեցի՛ր-մոտեցե՛ք, թռի՛ր-թռե՛ք, գտի՛ր-գտե՛ք, հասկացրո՛ւ-հասկացրե՛ք, մոտեցրո՛ւ-մոտեցրե՛ք, փախցրո՛ւ-փախցրե՛ք): Մյուս կողմից, ինչպես ասել ենք, ընդհանուր ձգտում ենք նկատում արգելականները կազմել դրականի ձևերի վրա մի ավելացնելով, որով և դրական ու բացասական հրամայականների եզակի և հոգնակի ձևերը միահիմք են դառնում (գրի՛ր-գրե՛ք-մի՛ գրիր-մի՛ գրեք, հասկացի՛ր-հասկացե՛ք-մի՛ հասկացիր- մի՛ հասկացեք և այլն): Սա ընդհանուր միտում է. թե որքանով կիրականանա. ցույց կտա ապագան, սակայն այս ընդհանուր միտումին զուգահեռ գոյություն ունեն նաև այլ մոմենտներ՝ իր վերջավորության փոխարեն ի-ի գործածություն, ար վերջավորության փոխարեն ա-ի գործածություն, ժողովրդական-խոսակցական լեզվից և բարբառներից թափանցող ձևեր և այլն:

Անկանոն բայերի հրամայական եղանակի դրական և ժխտական ձևերի կազմության մեջ նկատվող փոփոխություններ: Հատ-

կապես բազմաձև են անկանոն բայերի հրամայական եղանակի դրական և բացասական խոնարհումները. այստեղ արդեն դժվար է միևնույն հաջորդականությամբ հանձնարարելի ձևերը նշել։

1. Գալ—ե՛կ—եկե՛ք, մի՛ գա(ր)— մի՛ գաք ձևերի կողքին հանդիպում ենք արի՛ (խոսակցական, սակայն գրավորում տարածված), մի՛ եկ, մի՛ եկեք ձևերին։

2. Լալ—լա՛ց—լացե՛ք. մի՛ լար—մի՛ լաք. Նկատելի է, որ այս բայի անցյալ կատարյալի լաց հիմքից կազմված է լացել բայը, որից էլ ունենք լացի՛ր (բարբառային), լացեցե՛ք. մի՛ լացեք ժողովրդա-խոսակցական կազմությունները, որոնցից վերջինը տարածված է նաև գրավոր խոսքում։ Բերենք մի օրինակ՝

Ինձ կոչ են անում, թե արի՛ պոետ,
Մեր վիշտը լացիր,
Մեզ ընկեր դարձիր (Հ. Հակոբյան, Ամբոխն
իմ աշխարհ)։

Լա՛ց ձևի փոխարեն հաճախ օգտագործվում է լաց եղիր հարադրությունը (լաց լինել բայից)։

3. Տալ—տո՛ւր—տվե՛ք, մի՛ տուր—մի՛ տվեք. մի՛ տար և մի՛ տաք արգելականները, որ նախասովետական շրջանում միակ հանձնարարելի ձևերն էին[55], այժմ գրեթե անգործածական են բանավոր խոսքում և մնում են միայն գրավորում, ենթակա լինելով աստիճանաբար դուրս մղվելու (մանավանդ մի՛ տար ձևը, որ այժմ գրեթե չի գործածվում). Ներկայումս սրանց փոխարինում են մի՛ տուր, մի՛ տվեք ձևերը, խոսակցական լեզվում նաև՝ մի՛ տա, մի՛ տու։ Բարբառային երանգ ունի տու դրականը. ինչ վերաբերում է տվեցե՛ք ձևին, ապա այն դեռ անցյալ դարի աշխարհաբարում էր հանդիպում[56], իսկ այժմ կարծես բանավոր խոսքում սկսում է աշխուժանալ։

4. Ասել—ասա՛—ասացե՛ք, մի՛ ասա—մի՛ ասեք. դրական ձևերից տարածված է նաև ասեք, որ գործածական էր նաև նախասովետական շրջանում (օրինակ՝ ասեք, ՆԴ, 244). ասի՛ր կազմությունը, որ գտնում ենք նաև նախասովետական շրջանում[57], ե խոնարհման կանոնավոր բայերի նմանակության արդյունք է. Նույնպես

55 Ա. Ղարիբյանի դպրոցական քերականությունում դրանք մինչև հիմա հանձնարարելի են համարվում. տե՛ս 1964 թ. հրատարակության 249 էջը, ուր մի՛ տա ձևին զուգահեռ հանձնարարվում է նաև մի՛ տա(ր) և մի՛ տաք։

56 Տե՛ս Ն. Տեր-Ղևոնդյանի նշված գիրքը, էջ 110։

57 Նույն տեղում, էջ 107։

և մի՛ տա՛ր արգելականը, որ օգտագործված է նաև Նար-Դոսի (ՆԴ., 375, 173, 108) և Մուրացանի մոտ (Մուր., 26): Տանեցե՛ք կազմությունը անցյալ կատարյալի տանեց ոչ հանձնարարելի հիմքից է առաջացել. «Էլ տանողն ո՞վ, ա՛յդ տանեցեք» (ՆԴ, 197), և խրախուսելի չէ նրա գործածությունը գրական լեզվում:

5. Բ ե ր ե լ — բե՛ր-բերե՛ք, մի՛ բեր-մի՛ բերեք. մի՛ բերիր ձևը, որ գտնում ենք հանձնարարված Ս. Պալասանյանի դասագրքում (էջ 172), այժմ մերժված է. ժողովրդական խոսակցական լեզվում գործածական է նաև բերեցե՛ք ձևը. բարբառային է մի՛ բերի (ՀԲՆ, I, 316):

6. Զ ա ր կ ե լ — զարնել բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված այս բայը ունի հետևյալ ձևերը՝ զա՛րկ-զարկե՛ք, մի՛ զարկ-մի՛ զարկեք. անմիջականորեն զարկել բայից կանոնավոր կազմությամբ ունենք նաև զարկի՛ր-զարկեցե՛ք, մի՛ զարկիր ձևերը:

7. Ո ւ տ ե լ — կե՛ր-կերե՛ք. արգելականը հանդիպում է թե կատարյալի հիմքով՝ մի՛ կեր-մի՛ կերեք, թե կանոնավոր կազմությամբ ներկայի հիմքով՝ մի՛ ուտիր-մի՛ ուտեք: Այսօր դժվար է նախընտրություն տալ այս ձևերից որևէ մեկին, թեև լեզվի միտումը միահիմք կազմության (տվյալ դեպքում կատարյալի) կողմն է:

Սոսկածանցավոր անկանոն բայերը ևս հրամայականի զուգահեռ բազմաթիվ ձևեր ունեն, հատկապես երբ զուգահեռ գործածվում են նույնահիմք գրական և արգելական ձևեր: Հովհ. Բարսեղյանը այս անկանոն բայերը բաժանում է չորս խմբի, ըստ այն հատկանիշի, թե ն սոսկածանց ունեցող այդ բայերը ինչպես են կազմում անցյալ կատարյալի հիմքը[58]: Մենք ևս կհետևենք այս բաժանմանը.

1. Ն-ի փոխարեն կատարյալի հիմքում ց կամ ձ ստացող բայեր.

ա) Բ ա ն ա լ — բա՛ց-բացե՛ք, մի՛ բանա-մի՛ բանաք. Հնացած է այժմ բացի՛ր ձևը, որ հանդիպում ենք նախասովետական շրջանում[59]: Բացեցե՛ք այսօր տարածված է միայն բանավոր խոսքում: Մի՛ բաց-մի՛ բացեք ձևերը նույնպես բանավոր խոսքում են տարածված, սակայն գեղարվեստական գրականության մեջ գնալով ավելի ու ավելի են հանդիպում:

---

58 Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 304—305:

59 Տե՛ս Ն. Տեր-Ղևոնդյան, էջ 108. անշուշտ բացել բայից կազմված հրամայականի ձև է, որն իր հերթին կազմված է բաց կատարյալի հիմքից (բաց-ել):

բ) Բ ա ռ ն ա լ-բարձի՛ր-բարձե՛ք. մի՛ բառնա-մի՛ բառնաք. Նկատելի է, որ այստեղ էլ զգացվում է մի՛ բարձիր-մի՛ բարձեք ձևերի աշխուժացումը բանավոր խոսքում՝ դարձյալ միահիմք կազմության ձգտումով պայմանավորված։

գ) Դ ա ռ ն ա լ-դարձի՛ր-դարձե՛ք. մի՛ դառնա-մի՛ դառնաք. այստեղ էլ սկսում է գերակշռել մի՛ դարձիր-մի՛ դարձեք ձևերը՝ առայժմ դուցե միայն բանավոր խոսքում։

Դառ հիմքից կազմված դառի՛ր-դառե՛ք, մի՛ դառիր-մի՛ դառեք ձևերը խիստ բարբառային են։

դ) Լ վ ա ն ա լ-լվա՛-լվացե՛ք, մի՛ լվանա-մի՛ լվանաք. նաև մի՛ լվա-մի՛ լվացեք։

ե) Վեր/կ ե ն ա լ-կա՛ց-կացե՛ք. մի՛ կենա-մի՛ կենաք. նաև մի՛ կաց-մի՛ կացեք։

Ինչպես տեսնում ենք, այս բայերի մեջ էլ խիստ նկատելի է հրամայականի դրական ձևերի վրա պարզապես մի ավելացնելու ձգտումը, որով այդ երկու ձևերը դառնում են միահիմք։

2. Ն-ի փոխարեն կատարյալի հիմքում ր ստացող բայեր.

ա) Ա ն ե լ-արա՛-արե՛ք. մի՛ անիր-մի՛ անեք. խիստ հնացած է արեցե՛ք ձևը, որ հանդիպում էր նախասովետական շրջանում[60]։ Բանավոր, մասամբ նաև գրավոր խոսքում տարածված են նաև մի՛ արա-մի՛ արեք ձևերը։

բ) Դ ն ե լ-դի՛ր-դրե՛ք. մի՛ դնիր-մի՛ դնեք. դեռ նախասովետական շրջանում հանդիպող դրեցե՛ք[61] ձևը խիստ տարածված է բանավոր խոսքում և բնականաբար մուտք է գործել գեղարվեստական գրականության մեջ։ Խոսակցական լեզվում գործածական են նաև մի՛ դիր-մի՛ դրեք ձևերը։

գ) Տ ա ն ե լ-տա՛ր-տարե՛ք. մի՛ տանիր-մի՛ տանեք. անգործածական է արդեն մի՛ տանիք իր լծորդության բայաձևը, որը որպես միակ հանձնարարելի ձև նշում է Ս. Ղազարյանը (էջ 173)։ Հավասարապես գործածական են նաև մի՛ տար-մի՛ տարեք ձևերը, դարձյալ, ինչպես նախորդ դեպքերում, մի+հրամայականի դրական ձև կառուցվածքով։

3. Կատարյալի հիմքը պարզապես ն սոսկածանցի անկումով կազմող բայեր.

ա) Ա ռ ն ե լ-ա՛ռ-առե՛ք. մի՛ առնիր-մի՛ առնեք. այլևս գործածական չէ Ս. Ղազարյանի մոտ նշված (էջ 173) մի՛ առներ ձևը։ Դրականի ձևերից կազմված՝ մի՛ առ-մի՛ առեք։

60 Ն. Տեր-Ղևոնդյան, էջ 107։

61 Նույն տեղում։

բ) Ե լ ն ե լ–ե՛լ–ելե՛ք, մի՛ ելնիր–մի՛ ելնեք. *տարածված են նաև* ելի՛ր *(«Ելի՛ր, ում կյանքը անիծել է») և* մի՛ ելնիր *ձևերը։*

գ) Թ ո ղ ն ե լ–թո՛ղ–թողե՛ք, մի՛ թողնիր–մի՛ թողնեք. *անօգտագործելի է* թողեցե՛ք *կազմությունը, որ հազվադեպ գտնում ենք գործածված անցյալ դարի աշխարհաբարում*[62]*։ Խիստ տարածված են նաև* մի՛ թող–մի՛ թողեք *կազմությունները։*

դ) Տ ե ս ն ե լ–տե՛ս–տեսե՛ք, մի՛ տեսնիր– մի՛ տեսնեք. *այս բայի վերաբերյալ ևս, ինչպես նախորդների, տարածված է կազմության* մի+դրական ձև *կառուցվածքը՝* մի՛ տես–մի՛ տեսեք:

ե. Լ ի ն ե լ–եղի՛ր–եղե՛ք, մի՛ լինիր, մի՛ լինեք. *սակայն հավասարապես տարածված է նաև* մի՛ եղիր–մի՛ եղեք:

Ինչպես նկատելի է, անկանոն բայերի արգելականները հավասարապես տարածված են մի+դրական *կառուցվածքով, մի կառուցվածք, որը, ինչպես տեսանք, տարածվում է նաև կանոնավոր (պարզ թեածանցավոր) բայերի վրա։*

Գիտենալ *բայը ունի հրամայականի բազմաթիվ ձևեր, որոնք գրեթե բոլորն էլ հնացած կամ անգործածական են. օրինակ՝* գիտեցի՛ր, գիտեցե՛ք *ձևերը, ինչպես նաև* գիտենալ *բայաձևի* գիտցի՛ր, գիտցե՛ք, մի՛ գիտնար, մի՛ գիտնաք *կազմությունները*[63]*։ Նկատելի է, որ ներկա շրջանում այս բայի հրամայականի բայաձևերը փոխարինվում են* իմանալ *բայի համապատասխան ձևերով՝* իմացի՛ր–իմացե՛ք, մի՛ իմանա(ր)– մի՛ իմանաք *կամ* մի՛ իմացիր–մի՛ իմացեք:

Պետք է նկատի ունենալ, որ բանավոր, մասամբ նաև գրավոր խոսքում այս անկանոն բայերի իր *վերջավորությունը կարող է փոխարինվել* ի*-ով կազմված ոչ հանձնարարելի ձևերով. օրինակ՝ «Ուշադրություն* մի՛ դարձնի *(*Զոֆյա Պոսմիշ, *Ուղևորուհին, Երևան, 1965, էջ 18)։*

Գործածությունից բոլորովին դուրս է եկել նախասովետական շրջանում տարածված մի+գրիլ, մի+կարդալ *կառուցվածքը՝ եղակի արգելականի արտահայտման համար։*

Ժողովրդա-խոսակցական լեզվում տարածված են լցնել *և* գցել *բայերի անկանոն* լից, գից *հրամայականները. բերենք մի օրինակ Իսահակյանից՝ «Գինի* լի՛ց, *սաքի, չեմ ասի, եթե չլցնես (ԱԻ, Աէ, 449)։*

62 Ն. Տեր-Ղևոնդյան, *էջ 108։*

63 *Հարկ է նշել, որ այս վերջին չորս ձևերը հանձնարարված են Ա. Ղարիբյանի «Հայոց լեզու» դասագրքում (Երևան, 1964, էջ 252)։*

Երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմության և գործածության մեջ նկատվող փոփոխություններ

Ժամանակակից հայերենում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են անկատար *(միայն* -ելիս, -ալիս *վերջավորություն ունեցող),* ճարակատար *և* ապառնի *դերբայներով և* լինել *բայի խոնարհված ձևերով։ Նկատելի է, որ երկրորդական բաղադրյալ ոչ բոլոր ժամանակներն են, որ հավասարապես կիրառվում են ժամանակակից գրական լեզվում, որի մեջ շատ հաճախ դրանք փոխարինվում են գլխավոր բաղադրյալ ժամանակներով։*

Այս ժամանակները սովորաբար գործածվում են պատմողական բնույթի գործերում՝ հեքիաթներում, պատմվածքներում և այլն, ուստի և նրանց գործածության ոլորտը սահմանափակ է։

Նախասովետական շրջանում, հատկապես անցյալ դարի գրական աշխարհաբարում գործածական էին նաև -ում *վերջավորությամբ անկատար դերբայով և* լինել *բայով կազմված ժամանակային ձևեր. այսպես, Մուրացանը կարծես նույնիսկ գերադասությունը տալիս է այս վերջին դերբայով կազմված ձևերին. «Այդ դեպքում, հարկավ, կզրախտանար իմ դուստրը, եթե նա* սիրում լիներ *արքայորդուն» (Մուր., 40)։ Հիշյալ ձևերի առկայությունն է անշուշտ պատճառը, որ Մ. Աբեղյանը 1906 թ. հրատարակած իր քերականության մեջ գրում է. «իսկ անկատար դերբայի երկու ձևն էլ կարող է վերցվել. բայց երբ խոնարհվող* լինել *բայը անկատար ներկա և անցյալ է,* -ում *վերջավորության կրկնություն չանելու համար առնվում է միայն* -լիս *վերջավորությունը. ինչպես՝* գնում կը լինի *կամ* գնալիս կը լինի. *բայց միայն* գնալիս է լինում *և ոչ* գնում է լինում» *(էջ 128)։*

Արդեն այս դարի առաջին տասնամյակներին խիստ նվազել էին այս դերբայով եղած կազմությունները, որոնց, անկախ լինել *բայի ձևից, փոխարինել էին* -ելիս, -ալիս *վերջավորություններով դերբայները (գնալիս կը լինի, գնալիս եմ եղել, գնալիս լինեմ, գնալիս լինեի, գնալիս կը լինեի, փոխանակ՝ գնում կը լինեի, գնում եմ եղել, գնում լինեմ, գնում լինեի, գնում կը լինեի ձևերի, որ գտնում ենք հավասարապես հանձնարարված Աբեղյանի հիշյալ գրքում։ Համեմատիր նաև Րաֆֆու մոտ օգտագործված* ապառում լիներ *(189)։*

Հետաքրքրական է նաև Նար-Դոսի մոտ հանդիպող հետևյալ օրինակը, ուր նույն նախադասության մեջ բայաձևերից մեկը -ում *վերջավորությամբ անկատար է, իսկ մյուսը՝* -ելիս. *«Այդ գիշեր*

ամեն բան խոստովանեց։ Ասաց, որ ինքն իբր թե տանջվում է եղել ինձ սիրելուց, բայց զսպել է եղել իրեն, որովհետև ինքը կնոջ սիրո համար չէ ծնված, այլ— իր թշվառ հայրենիքի համար» (ՆԴ, 321)։ Չենք կարծում, որ առաջին ձևում եղել արևմտահայերենի եղեր ձևի նմանությամբ լինի գործածված (տանջվում է եղեր=կտանջվի եղեր)։

Վ. Տերյանի և այլոց մոտ գործածական էր նաև պետք է, առած ձևը, որ այժմ փոխարինվել է պետք է ասել ձևով. «Պետք է ասած, որ ես շատ գոհ մնացի» (3, էջ 529)։

Նախասովետական շրջանում բավական տարածված էին նաև կամ. ունիմ բայերով կազմված երկրորդային բաղադրյալ ժամանակները. օրինակ՝ հագած ուներ (Բաֆ., 26), բռնած ուներ (37, 18, 65, 340), կապած ուներ (67), դրած ուներ (79, 340), երբ երեսը ծածկած էր ունենում (198), նկատած կա՞ք (ՆԴ, 17), մարդ պառկած կա (31), ձեր ձեռքը կապած ունիք (174)։

Հարկ է նաև նշել, որ հարակատար+ունեմ կառուցվածքը վաղակատարի նշանակություն է արտահայտում (հմմտ. նաև՝ ֆրանս. j'ai tenu «ես ունեմ բռնած» կառուցվածքը, որ նաև վաղակատարի նշանակություն է արտահայտում)։

Չարենցը և սովետական շրջանի այլ հեղինակներ ևս երբեմն կամ. ունեմ բայերով հիշյալ բայաձևերը գործածում են, սակայն ժամանակակից լեզվի նորմաներով դրանք դիտվում են որպես ժողովրդա-խոսակցական ձևեր։ Օրինակներ՝ «Եվ ձեռքին բռնած նա ունի մի հսկա արծաթյա տավիղ» (Չարենց)։ «Ակնոցներ ունի նա դրած» (Չարենց)։

Ե. ՍԵՌԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԵՎ ՍԵՌԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԴԵՊՔԵՐ

Լեզուների զարգացման պատմության մեջ միշտ էլ նկատվել և նկատվում են բայական սեռի տեղաշարժեր՝ կապված բայերի իմաստների և նրանց խնդրառության փոփոխությունների հետ։ Ինչ խոսք, որ բայասեռի տեղաշարժերը պահանջում են զարգացման ավելի երկարատև ժամանակաշրջան. այսպես, հին հայերենի (գրաբարի) մի շարք բայեր բոլորովին սեռափոխվել են ժամանակակից հայերենում. այդ փոփոխությունը մեծ մասամբ արդյունք է այն հանգամանքի, որ ժամանակակից հայերենում որոշ բայեր, կորցնելով իրենց նախկին իմաստները, բնականաբար կորցրել են նաև

այդ իմաստների հետ կապված բայական սեռը. օրինակ՝ գաղթել բայը գրաբարում, որպես ներգործական, ունեցել է «վտարել, դուրս քշել» իմաստները. այժմ, քանի որ գաղթել այս իմաստները չունի, չունի նաև ներգործական սեռի քերականական արժեք և հանդես է գալիս միմիայն չեզոք սեռով՝ «տեղահան լինել, գաղթել» նշանակություններով (որ գրաբարում էլ կար): Նահանջել բայը գրաբարում ներգործական սեռի է եղել և ունեցել է «ետ պահել, սանձել, դրդել, նվաճել» նշանակությունները. կորցնելով այս իմաստները և արտահայտելով «ետ կանգնել, հարկադրաբար ետ գալ» նշանակությունները, այս բայը ժամանակակից հայերենում դարձել է արդեն չեզոք:

Բայասեռի փոփոխություններ են կրել նաև սատկել, աշակերտել, բաբախել, բարգավաճել, կանգնել, ապավինել, արտաճանել, արտափայլել, զարշել, դալարել, ծառայել, ճողոպրել, սաճել, փայլել, որոնք գրաբարում լինելով կրկնասեռ, ժամանակակից հայերենում պահպանել են միայն չեզոքի նշանակությունը, իսկ դյութել, կանխել և այլն բայերը պահպանել են միայն ներգործականի նշանակությունը, կորցնելով հին հայերենի չեզոք սեռով իմաստները[64]:

Նախասովետական և սովետական շրջանների բայական սեռին վերաբերող փաստերի քննությունը ցույց է տալիս, որ սեռափոխության նման կտրուկ անցումները հատուկ չեն զարգացման անհամեմատ ավելի փոքր շրջան ընդգրկող արևելահայ գրական աշխարհաբարի համար: Այս փուլին ավելի բնորոշ է անցողիկ շրջաններին հատուկ սեռային զուգահեռ կիրառությունները՝ որոշ բայերի՝ չեզոքից ներգործական սեռին անցնելու ընդհանուր միտումով: Այս փուլում հատկապես նկատելի է զուգասեռ և կրկնասեռ բայերի տարածումը՝ առաջինների մեջ սեռերից մեկի (հիմնականում չեզոքի) անխուսափելի դատապարտման միտումով, երկրորդների մեջ՝ սեռերից մեկի (մեծ մասամբ ներգործականի) որոշ աշխուժացումով՝ պայմանավորված ներգործական սեռով դրսևորվող նոր իմաստների առաջացմամբ: Առաջինները (զուգասեռ բայերը) ընթանում են դեպի միասեռություն, երկրորդները՝ դեպի կրկնասեռության դիրքերի ամրապնդում՝ իմաստային երկփեղկումների հիմքի վրա:

Չեզոք սեռի բայեր, որ լեզվի զարգացման ներկա փուլում հակում են ցուցաբերում դեպի ներգործականություն— գերազանցել,

---

64 Տե՛ս Ա. Աբրահամյանի նշված գրքի 684—685 էջերը:

գրոհել. դիմավորել. ծափահարել. կարոտել. հակել. հուսալ. ձեռնարկել. ունկնդրել. սպասարկել. տենչալ: *Նկատելի է, որ այս բայերը իրենց արտահայտած գործողության բնույթով մոտենում են ներգործական սեռի բայերին. ահա թե ինչ է ասում այս կարգի բայերի մասին պրոֆ. Ա. Աբրահամյանը. «Սակայն դրանց մեջ (խոսքը չեզոք սեռի բայերի — Գ. Գ.) կան այնպիսիները, որոնք առաջադրում են անուղղակի խնդրի պահանջ: Այդ անուղղակի առարկայական բայերից տարբերվելով խնդիր պահանջողները բայական իմաստը ներկայացնում են իբրև ավելի դինամիկ բնույթի շարժման վերացարկում՝ բայական բառույթի միջոցով: Սրանով էլ պետք է բացատրել այն իրողությունը, որ չեզոք սեռի բայերի մեջ նկատվում է ներգործական դառնալու, ուստի և անանցողականից անցողականի վերածվելու բացահայտ միտում: Դա բխում է դրանց իմաստի առավել դինամիկ բնույթից»*[65]:

Այժմ բերենք մի քանի օրինակներ՝

Հայրենական մեծ պատերազմի տարիներին գրոհել *բայը* «штурмовать — *գրոհով գրավել» նշանակությամբ սկսեց կիրառվել ներգործական սեռով. այժմ այդ կիրառությունը շատ սովորական է.* «Գրոհել *տիեզերական հեռաստանները» (ՍՀ, 5/5—1965): «Դրոշը տանում է Սովետական Միության Հերոս, գնդապետ Կ. Յա. Սամսոնովը, որը ռայխստագը* գրոհած *գումարտակի հրամանատարն էր» (ՍՀ, 10/5—1965): «Գրոհով գրավել» նշանակությունը չունի, սակայն դարձյալ ներգործական է հետևյալ օրինակում՝ «Լուսաբացին թուրքերն սկսեցին* գրոհել *Հալիձորը» (Սև, ՄՍ, 639): Չեզոք սեռի օրինակ՝ «Բանտարկյալները թաքստոցներից հանեցին զենքերը և* գրոհեցին *մերձավոր պահակակետերի վրա» (ՍՀ, 27/1—1965):*

Ավելի ու ավելի են տարածվում գերազանցել *բայի ներգործական սեռով կիրառությունները. «...Այն 2, 2 միլիարդ ռուբլով* կգերազանցի... *1965 ֆինանսական տարվա ծախսերը» (ՍՀ, 27/1—1965):* «Չգերազանցելով *1964 թ. բյուջեի համապատասխան հատկացումները» (ՍՀ, 2/2—1965): Չեզոք սեռի օրինակներ՝ «Ստացվել է ամփոփերալ նոր սոսինձ, որը...* գերազանցում *է այդ նպատակով մինչև այժմ օգտագործվող բոլոր* նյութերին» *(ՍՀ, 6/3—1965): Նկատելի է սակայն, որ կարծես այս բայը ներգործական սեռով է կիրառվում ավելի հաճախ այն դեպքում, երբ նրա ուղիղ խնդիրը վերացական գոյական է, հաճախ բայանվամբ արտահայտված և ոչ*

---

65 Ա. Աբրահամյան, *էջ 686:*

թե շոշափելի առարկա, նյութ արտահայտող գոյական. Համեմատի՛ր նաև չեզոք սեռով՝ «Երիցյանի ստեղծագործական ուժը իր առաջնակարգ անթերի պայմաններով... կարող է գերազանցել աշխարհում այնքան հռչակված շվեյցարական համապատասխանները» (ՍՍ, 3/9—1965)։

Չեզոք սեռի բայերի՝ ներգործականին անցնելու կամ անցնելու միտում ցուցաբերելու խնդրում, բացի վերևում հիշված պատճառներից, պետք է թե դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ որոշ չեզոք սեռի բայեր (դիմավորել, ծափահարել, կարոտել, ունկնդրել և այլն), իրենց արտահայտած նշանակությամբ վերաբերելով հիմնականում անձերի, բնականաբար ստացել են տրական հոլովով անուղղակի խնդիրներ, և քանի որ անձ ցույց տվող գոյականների հայցական հոլովով արտահայտված ուղիղ խնդիրները նույնպես տրականաձև են լինում, ապա հիշյալ չեզոք սեռի բայերի տրականաձև անուղղակի խնդիրները գիտակցվել կամ դիտվել են որպես տրականաձև ուղիղ խնդիրներ, որի հետևանքով էլ այդ բայերը դիտվել են որպես ներգործական սեռի, և ըստ այնմ էլ իր ցույց տվող գոյականների դեպքում էլ պահանջել են հայցական հոլովով ուղիղ խնդիր։ Բերենք մի քանի օրինակներ. «Գոհար, Ձեր հայրենիքն եմ կարոտել» (Զվ, ՄԼՔՕ, 400)։ «Նոր տարին դիմավորենք նորանոր հաջողություններով»։ «Հայրենադարձների գնացքը դիմավորեցին հոծ բազմությամբ»։ «Ունկնդրելով այդ երգի մեղմող հառաչանքները, Քեյ Գայբրեյթը ակամա ցնցվեց» (ՉԼ, ՍԺ, 1, 151)։ Չեզոք սեռի գործածության մի օրինակ՝ «...Պետք է անել ամեն ինչ՝ նշված թերությունները վերացնելու, գարնանացանին կազմ ու պատրաստ դիմավորելու համար» (ՍՀ, 26/1—1965)։

Հետաքրքրական է ունկնդրել բայի «հետևել, մեկի խորհրդով շարժվել» նշանակությամբ կիրառությունը՝ լսել նմանօրինակ նշանակության նմանակությամբ. «Թուրքական կառավարությունը չունկնդրեց նրա խորհրդին» (ՍՍԹ, 269)։ Համեմատիր՝ «լսած լինել խորհուրդի» (Մուր., 358)։ Չեզոք սեռով արդեն նույնիսկ քիչ հնացած է հնչում հետևյալ կիրառությունը. «Դենիզն ագահաբար ունկնդրում էր ասոփկանների խոստովանություններին» (ԻԷ, ՓՍ, 2, 143)։

Լեզվի զարգացման ներկա փուլում արդեն նկատելի են ձեռնարկել բայի չեզոք սեռով գործածությունները։ Օրինակներ ներգործական սեռով կիրառությունների. «Բնակարանային անտեսության վարչությունը... ձեռնարկեց մի շարք միջոցառումներ» (ՍՍ, 20/2—1965)։ «Բարի ծառայությունների բյուրոն ձեռնարկել է մայրաքա-

ղաքի կոշիկի մաքրման կրպակների տեղադրման գործը» (ՍՍ, 22/2—1965)։ «...Մեծ գործ ես ձեռնարկել...» (Սև, ՄՍ, 461)։ Նկատելի է, որ կարծես չեզոք սեռով է հանդես գալիս այս բայը, երբ «ձեռք զարնել, սկսել, նախապատրաստվել» նշանակություններով է կիրառվում. օրինակ՝ Նաիրի Զարյանի «Հացավան» վեպում գործածված «Լևոնը նոր եռանդով ձեռնարկեց անտեսության վերականգնմանը» նախադասության մեջ կարծես ինչ-որ նման պատճառաբանությամբ է արդարանում վերականգնմանը անուղղակի խնդիրը, և այն հայցականով փոխարինելու դեպքում կարծես նախադասության իմաստային հստակությունը տուժում է. համեմատիր նաև՝ «Երիտթուրքերը ձեռնարկեցին հայկական հարցի լուծմանը» (ՊԲՀ, 1965, № 1, 25)։

Ընկել բայը այժմ հիմնականում հանդես է գալիս ներգործական սեռով, թեև նախասովետական շրջանում այն չեզոք սեռի էր. օրինակ՝ «Նրանք ընկում էին թշնամու շարժումը» (ՍՀ, 19/8—1964). չեզոք սեռի մի օրինակ՝ «Ընկում էին հայկական թաղերին» (ԳԹ, 16/4—1965)։ Գերապանցապես ներգործական սեռով կիրառություններ ունի նաև վերահսկել բայը, որ նախասովետական շրջանում դարձյալ չեզոք սեռի էր. բերենք չեզոք և ներգործական սեռերով կիրառությունների երկու օրինակ՝ «Անհրաժեշտ է մշտական աշխատանք կատարել կադրերի հետ, վերահսկել նրանց գործունեությանը...» (ՍՀ, 12/2—1965), «Այժմ ապստամբները վերահսկում են Կիվուի նահանգի մեծ մասը» (ՍՀ, 6/1—1964)։

Տենչալ բայը ևս, որ առաջներում չեզոք սեռի էր, այժմ նկատելիորեն ավելի շատ կիրառվում է ներգործական սեռով, քան չեզոք. օրինակ՝ «Պարզ է, որ ամեն մի թիմի երկրպագու անկեղծորեն նրա հաջողությունն է տենչում» (ՀԹ, 27/3—1965)։

Ծափահարել բայը, որ նախասովետական շրջանում գերազանցապես չեզոք սեռով էր կիրառվում, այժմ հիմնականում ներգործական է. «Ինչքան էլ խուսափեց, բայց երբ դահլիճն սկսեց ծափահարել մի արտիստի երգը, ես չդիմացա և նույնից հանդիսականներին» (Հ. Սիրաս. Արարատ, 1-ին մաս, 2)[66]։

Դեպի ներգործականություն է հակված նաև սպասարկել բայը, թեև այժմ էլ քիչ չեն չեզոք սեռի օրինակներ, ինչպես՝ «սպասարկելու է անասնապահական ֆերմաներին» (ՍՀ, 2/2—1965)։

66 Տե՛ս Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության «Սեռային տեղաշարժեր» գլուխը (էջ 694), ուր հանգամանորեն խոսվում է ժամանակակից հայերենի սեռային տեղաշարժերի և կրկնասեռության երևույթի մասին։

Հենց նախասովետական շրջանի լեզվում էլ հազվադեպ ենք հանդիպում հաղթահարել բայի չեզոք սեռով կիրառություններին, ինչպես՝ «Հաղթահարել ամեն բանի» (ՆԴ, հտ. 6, 1955, 609)։ Այժմ այս բայը բացառապես ներգործական սեռի է։

Այժմ բոլորովին անգործածական են մերկանալ բայի ներգործական սեռով կիրառությունները, որ հանդիպում ենք նախասովետական շրջանի լեզվում (օրինակ՝ «Ուխտեց չմերկանալ այս հագուստը» (Րաֆ., 526)։ Խիստ հազվադեպ են հանդիպում նաև կանգնել բայի ներգործական սեռով կիրառությունները «կանգնեցնել» նշանակությամբ, այն էլ հիմնականում Չարենցի մոտ. Օրինակ՝

...Որ հյուսիսի
Մտախոհի նման այս անտառներ
Իշխաններ են տարել արևանդել, հարբել,
Կախաղաններ կանգնել հարյուրներով (ԵԶ, ԸԵ, 183)։

Դրժել բայը, որ անցյալում, որպես չեզոք, մեծ մասամբ տրական հոլովով էր խնդիր ընդունում, այժմ միայն հայցական խնդիր է պահանջում։ Այդպես նաև ներել բայը. օրինակներ՝ «Կդրժեի քո երդման» (Մուր., 122, 272, 373)։ «Ներել... հանցանքին» (Ն. տ., 394). այժմ ասվում է կդրժեի քո երդումը. ներել... հանցանքը։

Ինչպես հին հայերենում, այնպես էլ արևելահայ գրական աշխարհաբարում ներգործական նշանակությամբ տարածված է եղել ցրել բայի ցրվել ձևը (ցրիվ-ից կազմված)։ Հետագայում, հատկապես լեզվի զարգացման սովետական շրջանում, ցրվել սկսեց գիտակցվել որպես կրավորական չեզոք, որից էլ, վ-ի անկումով տարածվեց ցրել ձևը՝ ներգործական նշանակությամբ։ Հետևաբար որպես սեռափոխության օրինակ չի կարող ծառայել Րաֆֆու մոտ հանդիպող հետևյալ գործածությունը՝ «Հալիձորի բերդի պաշարման ժամանակ մի բուռն քաջերով ցրվեց նա ոսոխների ավելի քան քսան հազար զինվոր» (Րաֆ., 187)։

Լեզվի զարգացման ներկա փուլում նկատվում է նաև հակառակ երևույթը. որոշ ներգործական սեռի բայեր հակում են ցուցաբերում կիրառվելու չեզոք սեռով. օրինակ՝ այցելել բայը, որ ներգործական է, ավելի ու ավելի հաճախ ենք հանդիպում չեզոք սեռի խնդրառությամբ. «Վաղ առավոտյան այցելեց Մարի Դյուպլեսիի գերեզմանին» (ԱՄ, ԵԴ, 359), «Մեր խմբի անդամներն այցելեցին Մանուշյանի գերեզմանին և ծաղիկներ դրեցին» (Ավ., 10.10—1965)։

Պրոֆ. Ա. Աբրահամյանը բերում է նաև ողջունել, ափսոսել (ափսոսալ), զզվել ներգործական սեռի բայերի օրինակներ ևս, որոնք սկսում են չեզոք սեռով էլ կիրառվել. «Ողջունել համագումարին» (Սով. Հայ.), «Ողջունենք նոր տարուն» (Ս. Վահունի), «Ողջունեցին արևին» (Մ. Թարգումյան), «Ափսոսում էր գալար ձյուղերին» (Ա. Բակունց), «Ափսոսացեք դուք մեր և ձեր բաղարջներին» (Ն. Զարյան), «Պատանի ծառերին եմ զզվում» (Հ. Սահյան) և այլն[67]։

Բացառված չէ, որ այս բայերի նման խնդրառությունը որոշ դեպքերում պայմանավորված լինի խնդիրների անձնավորմամբ. սակայն բոլոր դեպքերում, թեկուզ և այս հիմնավորվածությամբ, հիշյալ բայերը կարող են դիտվել որպես չեզոք և աստիճանաբար տարածվել չեզոք սեռի կիրառություններով։

Պատել բայը լինելով ներգործական, որոշ դեպքերում ցուցաբերում է չեզոք սեռին անցնելու հակում՝ «Ոչ թե մառախուղն է պատել սարերին, այլ սարերն է լողում մառախուղի մեջ» (Ավ., 5/10—1965)։ Գուցե այստեղ ևս դեր է խաղում այս բայի՝ անձ ցույց տվող գոյականների նկատմամբ ունեցած հոլովառությունը (համեմ.՝ մշուշը պատել է Սուրիկին)։

Պետք էր նշել, որ ժամանակակից հայերենում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ, հանդիպում ենք առարկա ցույց տվող գոյականների անձնավորման առատ և բացառիկ դեպքերի։ Հենց այս հանգամանքն էլ բացասաբար է անդրադառնում բայական սեռի և խնդրառության ճիշտ գործածությունների վրա։

Ժամանակակից հայերենում որոշ գոյականներ (պետություն, կառավարություն, խումբ, ջոկատ, պատվիրակություն, թիմ, երկիր և այլն) օգտագործվելով անձի առումով, հավասարապես հանդես են գալիս նաև իրի առումով. ահա այստեղ էլ նորից առաջանում է որոշ շփոթ։ Օրինակ, կասկած չի հարուցում թուլացնել պատճառական բայի ներգործական սեռի լինելը հետևյալ օրինակներում. «Իտալո-թուրքական ու բալկանյան առաջին պատերազմում կրած պարտությունները ծայրահեղորեն թուլացրին օսմանյան կայսրությունը» (ԵՍԹ, 128)։ Սակայն, քանի որ այս և այս կարգի գոյականները կարող են գործածվել նաև իրի առումով, որ կայսրություն բառը հանդես կգար «թուլացրին օսմանյան կայսրությանը» ձևով, ապա, եթե բայը պատճառական չլինելով՝ ընդգծված կերպով ներգործականություն չարտահայտեր (օրինակ՝ լիներ «քայքայեցին օս-

67 Ա. Աբրահամյան, 697—699։

մանյան կայսրության»). կարող էր ըմբռնվել որպես չեզոք։ Չէ՞ որ պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլորն են, որ ի վիճակի են խո-կույն անձի և իրի խնդիր առաջ քաշել և հարցը բառային լուծել, մանավանդ որ, ինչպես ասել ենք, այս հարցում եւ խիստ ծայրա-հեղ կիրառություններ կան։

Սեռային տեղաշարժերի հարցին սերտորեն առնչվում է կրկ-նասեռության երևույթը, որը հանգամանալից ուսումնասիրության է ենթարկված Ա. Աբրահամյանի կողմից[68]։ Պարզ է, որ երբ բայը սեռային զուգահեռ ձևերով է հանդես գալիս, ապա որոշ ժամանակ այն կրկնասեռ է դառնում, մինչև սեռերից որևէ մեկի վերջնական ամրածումն ու հաղթանակը։ Սակայն բոլոր բայերի մեջ չէ, որ լե-զուն միասեռության է ձգտում. կան որոշ բայեր, որոնք, իմաստա-յին մի նոր երանգի արտահայտման համար, ստանում են սեռա-յին լրացուցիչ առում ու կիրառություն. ահա հենց այս կարգի բա-յերն են, որ հետաքրքրություն են ներկայացնում մեզ համար։ Այս երևույթը վերաբերում է բացառապես ներգործական և չեզոք սեռի բայերին, քանի որ այդ բայերն են, որ հենց նույն սկզբնաձևային վիճակով կարող են նման առումներ ունենալ (կրավորական սեռը ունի իր հատուկ ձևավորումը)։ Անշուշտ մեր նպատակն է հիմ-նականում քննել սովետական շրջանում գոյացած կամ աշխուժա-ցած կրկնասեռության դեպքերը, մի բան, որ հաճախ շատ դժվար է բացահայտել նախասովետական շրջանի ամբողջ գրականության ծանոթանալու անհնարինության պատճառով։

Ապրել բայը, հիմնականում լինելով չեզոք, ունի նաև ներգոր-ծական սեռի կիրառություն՝ զգալ. կրել իմաստով, որ հատկապես աշխուժացավ և տարածվեց սովետական շրջանում։ Օրինակներ՝ «Վիրքը տանջալի կերպով ապրեց պատերազմը...» (Իէ, ՓԱ, 1, 90)։ «Ես զգացել, ապրել եմ նրա երազը» (ՍՏՆ, 13) «Նման ողբերգու-թյուն առաջին անգամ չէ, որ ապրում են» (ՍՀ, 22/5—1964)։

Անցնել բայի «սովորել, ուսումնասիրել» նշանակություններով ներգործական սեռի կիրառությունները ավելի ու ավելի են տարած-վում լեզվում։ Օրինակ՝ «Այդ դասն անցել ենք մի շաբաթ առաջ»։ «Անցկացնել» նշանակությամբ՝ «Ամերիկյան իմպերիալիստները անցնում են ամեն չափ ու սահման» (ՍՍ, 27/3—1965)։

---

68 Տե՛ս Ա. Աբրահամյան. «Կրկնասեռության երևույթը և կրկնասեռ բայերը ժամանակակից հայերենում» գլուխը («Բայը ժամանակակից հայերենում», գիրք առաջին, էջ 702)։

Իբրև կրկնասեռ ժամանակակից հայերենում հանդես են գալիս նաև աշխատել. լսել, խնայել. հոգալ, նայել. շանթել, սովորել, սպասել, ստել. ճչել. փչել բայերը. բերենք մի երկու օրինակ՝ «Երբեմն էլ նայում են (ներգործական՝ «դիտել», «քննել» իմաստով) մի հեղինակի սևագիր հատված» (ԳԹ, 22/1—1965)։ «Եվ նայում եմ (չեզոք) մենավոր աստղին, հոգիս լսում է (չեզոք) կախարդ նվագներին» (ԱԻ, ԱԷ, 71)։

«Կայծակը շանթեց (չեզոք) մոտակա լեռան կատարներին», բայց «վիրավորել, խոցել» նշանակությամբ ներգործական է, ուստի և հնացած է հետևյալ կիրառությունը. «Այդ խոսքերը կայծակի նման շանթում էին իշխանի սրտին» (Րաֆ., 283)։

Նայել բայը լինելով չեզոք, «քննել, զննել, դիտել» նշանակություններով ներգործական սեռով է կիրառվում՝ «Պարետը նայեց ժամացույցը» (ՅՀ, ՔՋՃԱ, 49, 302)։ «Նայում են բասկետբոլիստուհիների խաղը և զարմանում» (ՀԹ, 9/5—1964)։

Արդեն հնացած են լսել բայի չեզոք սեռի նշանակությամբ կիրառությունները՝ անուղղակի խնդիրների հետ, ինչպես՝ «լսում է... նվագներին» (ԱԻ, ԱԷ, 71)։ «Լսեց զանգակի ձայնին» (ն. տ., 108). «Լսում էինք... խրատին» (ն. տ., 384)։

Կան չեզոք սեռի մի շարք բայեր, որոնք իրենց արտահայտած իմաստի որոշ ակտիվացման հետևանքով զուգահեռաբար կիրառվում են ներգործական սեռով. օրինակ՝ բուրել, դոփել. հորդել, ճառագայթել. շնչել. տեղալ. ցայտել. ժայթքել և այլն[69]։ Այս բայերի ներգործական նշանակությամբ կիրառությունները մեծ մասամբ աշխուժացել են սովետական շրջանում. բերենք մի երկու օրինակ՝ «...Որոնց յուրաքանչյուր տողը ճառագայթում է (ներգործական) խնդություն» (ԵԵ, 29/9—1964)։ «Արևը շառագունել էր նրա գունատ դեմքը» (ՍՏՆ, 150)։

Անհագ վրեժի և՛ ըմբոստացման,
Ե՛վ բուռն ցասման բարբառը հնչե՛.
Ժողովուրդների անկա՛խ, ինքնիշխա՛ն
Դաշն ազատական խրոխտ ղողանջե՛.
...Մեզ ուժ և կորով, վրեժ որոտա՛ (ԱԻ, ԸԵ, 63)։

Իսկ քաղաքը ամբողջ դեռ քնել էր
Ու զառանցում էր մաուզերի կրակից։— (ԵՉ, ԸԵ, 127)

69 Այս մասին մանրամասն տե՛ս Ս. Աբրահամյան, էջ 708։

Մորս աչքերն էն լացել
Կոտորածների հայկական (ՇԹՀ, 86)։

Բակ է ճակատից ազատանք տաս՝
Անապատները մեզ կրխեն *(ՇԹՀ, 426)։*

Ժամանակակից հայերենում կան մի շարք այլ բայեր ևս, որոնք հանդիպում են մերթ ներգործական, մերթ չեզոք սեռով. օրինակ՝ խանգարել, խոչընդոտել, տիրել, տիրապետել, վնասել, համակրել, բավարարել, նետել, սատարել, հանդիպել *և այլն. այս բայերի նըման տատանումները միշտ չէ, որ արդարանում են իմաստային, խնդրառական և այլ գործոններով։ Օրինակներ՝ «Մեր աշխատանքին* խանգարում է *խմբարարի պակասը» (ՍԵ, 27/7—1965)։ «...Ձըգտեց ինչ գնով էլ լինի* խանգարել *առաջադիմական միջոցառումներին» (ՍԵ, 27/5—1965)։*

Բայց՝ «Նրա (խաղողի վազի) ամեն կողմ տարածվող ճյուղերը խանգարում են *մեքենայի շարժմանը» (ՍՀ, 5/6—1964)։*

Բավարարել *բայը լինելով ներգործական, հանդես է գալիս չեզոք սեռի նշանակությամբ, հատկապես երբ նրա խնդիրը առնչվում է իր ցույց տվող գոյականի հետ. օրինակ՝ «...Նա բավարարում է իր* ժամանակի պահանջներին, *մի ժամանակ, որ զուրկ էր կայսրության դարաշրջանի ազդեցիկ հանգուցալուծումներից» (ԱՄ, ԵԴ, 224), «...Որպեսզի բավարարի* վեպ-պիեսի *ներկայացրած* պահանջներին...» *(ն. տ., 231)։*

Համեմատիր նաև «Դյուման իր հերոսների միջոցով միամտորեն արտահայտելով սեփական խառնվածքը, բավարարել է *ժամանցի, ուժի և մեծահոգության այն* պահանջները, *որոնք հատուկ են բոլոր ժամանակներին և բոլոր երկրներին» (ն. տ. 235), ուր, ինչպես տեսնում ենք, հիշյալ բայն արդեն ներգործական սեռով է հանդես եկել. մի այլ օրինակ՝ «Ներկայումս արտադրվող երկաթբետոնե սյուների քանակը չի կարող* բավարարել *ռեսպուբլիկայի խաղողագործության պահանջները...» (ՍՀ, 15/5—1965)։*

Տիրապետել *բայը լինելով չեզոք, հանդիպում է նաև ներգործական սեռով. օրինակ՝ «Որքան կալվածներ* էին տիրապետում *վանքերը» (Րաֆ.)։ Այժմ այս խնդրառությունը հնացած է։ Չեզոք սեռի օրինակներ՝ «Դուք գեղեցիկ լեզվի* տիրապետեցիք» *(ՎՏ, ԵԺ, 3, 664), «Մարքսիզմ-լենինիզմին* տիրապետելը *յուրաքանչյուր կոմունիստի պարտքն է» (ՍՀ, 10/10—1965)։*

Տիրել *բայը, որ միշտ տրական հոլովով էր խնդիր վերցնում,*

սկսել է հայցական հոլովով էլ խնդիր պահանջել. նույնիսկ անցյալ դարում Րաֆֆին ունի ներգործական սեռով կիրառության օրինակ. «Տիրեց Թավրիզը և ուրիշ շատ քաղաքներ և հետո... Սարդարին ուղարկեց դեպի Երևանի կողմը։ Այդ վերջինը, տիրելով Նախիջևանը...» (Րաֆ., 10, 256)։

Ահա թե ինչ է ասում Հ. Աճառյանը այս բայի մասին. «Տիրել երկիրը» захватить землю. պետք է ասել «երկրին», հայերենում տիրել ըմբռնվում է ոչ թե իբրև «նվաճել», այլ «տեր դառնալ»։

Փոխարինել բայը ներգործական սեռի է, սակայն ունի նաև չեզոք սեռի նշանակություն ու կիրառություն, օրինակ՝ «Այս քարը ինձ համար կփոխարինի սեղանին»։

Համատեղել բայը հիմնականում լինելով չեզոք, որոշ դեպքերում կարող է ներգործականի նշանակություն արտահայտել, ինչպես. «Այդպիսի բայերը համապատասխան բայական թեքույթի մեջ միաժամանակ համատեղում են երկու սեռ՝ առաջ բերելով սեռային զուգահեռություն» (Ա. Աբրահամյան. Բայը ժամանակակից հայերենում, 1, էջ 703)։

Անսովոր է ընկել չեզոք սեռի բայի հետևյալ կիրառությունը ներգործականի նշանակությամբ. «Գրիպն այն կայծն է, որը կարող է ընկել տուբերկուլոզի հանգած օջախները» (ՍՀ, 5/2—1965)։

Խրախուսելի չեն նաև առարկել բայի ներգործական սեռով հանդիպող գործածությունները՝ «մերժել» նշանակությամբ, ինչպես՝ «Օրինակ, ոչ ոք չի առարկի այն բանի օգտակարությունը, որ տղաները և աղջիկները սպորտով պետք է պարապեն հատուկ մարզիչի հսկողության ներքո» (ՀԹ, 10/6—1965)։

Նկատելի է, որ համակրել չեզոք սեռի բայը ևս որոշ հակում է ցուցաբերում դեպի ներգործականություն. օրինակ՝ «Ես համակրում եմ նրա այդ սովետական քայլը»։ Արդեն նույնիսկ կարծես հնացած են հնչում Վ. Տերյանի մոտ հանդիպող հետևյալ կիրառությունները՝ չեզոք սեռի նշանակությամբ. «Համակրել... ձեզ» (ՎՏ, ԵԺ, 2, 223), «Նա շատ համակրեց մեր ձեռնարկությանը» (ն. տ., 3, 200)։ Այստեղ ևս նկատելի է այն երևույթը, որ գերազանցապես անձ ցույց տվող գոյականների հետ առնչվող չեզոք սեռի բայերը, ընդունելով տրականաձև անուղղակի խնդիր, իրենց խնդրի ձևաբանական դրսևորումով նույնացել են ներգործական սեռի բայերի հետ, որոնց ուղիղ խնդիրը նույնպես տրականաձև է, ուստի և սկսել են իր ցույց տվող գոյականների դեպքում էլ նրանց (ներգործական սեռի բայերին) նմանվել՝ պահանջելով հայցական հոլովով խնդիր։

Իմաստափոխության հիմքի վրա է առաջացել ընկնել չեզոք սեռի բայի ներգործական իմաստով կիրառությունը ժողովրդա-խոսակցական լեզվում՝ «տուժել, կորցնել, վնասվել» նշանակություններով, ինչպես «Նա 500 ռ. ընկավ»։

Բաժանորդագրվել բայը միակն է վ կրավորական ածանցմամբ բայերի մեջ, որ սրանից մի քանի տարի առաջ սխալմամբ սկսեց գործածվել ներգործական սեռով՝ ստանալով հայցական հոլովով ուղիղ խնդիր, սակայն հիմա, գիտակցվելով որպես կրավորակերպ չեզոք, կանոնավորապես տրական հոլովով խնդիր է ստանում. սխալ խնդրառության օրինակ՝ «Գյուղում շատ ու շատ է թերթեր ու ամսագրեր բաժանորդագրվողների թիվը» (ՍՀ, 17/11—1965)։

Լեզվի զարգացման ներկա փուլում որոշ բայեր սկսել են ձեռք բերել վերացական բայի կիրառություն։ Աշխատել բայը, որ հիմնականում չեզոք սեռի է, ստացել է նաև, ինչպես գիտենք, ներգործական սեռի նշանակություն (օրինակ՝ «Նա այսօր 10 ռ. է աշխատել»)։ Հանձնարարելի չեն այս բայի գործածությունները որպես վերացական բայ՝ որպես, իբրև կապերի զեղչման հետևանքով. օրինակ՝ «Նա ուսուցիչ էր աշխատում» (ՍՀ, 19/6—1965)։ «Այժմ աշխատում է անգլերենի դասատու» (Ավ., 27/3—1965)։ «Նա ավարտում է ֆիզկուլտուրայի ինստիտուտը և պետք է մարզիչ աշխատի» (ՀԳ, 16/12—1965)։

Հանդիպել չեզոք սեռի բայը երբեմն հանդես է գալիս ներգործական սեռով. օրինակ՝ «Վաթսունչորս տարի շարունակ Չերչիլի անունը միշտ կարելի էր հանդիպել անգլիական թերթերի էջերում» (ՍՀ, 26/1—1965)։

Չենք կարող չնշել, որ որոշ բայերի սեռափոխության կամ կրկնասեռության հարցում դեր ունի նաև ռուսերենը։ Դա հատկապես նկատելի է դառնում մամուլի թարգմանական նյութերին ծանոթանալիս։

Ավարտելու համար այս բաժինը, հարկ ենք համարում համառոտակի անդրադառնալ անորոշ դերբայի խնդրական կիրառություններին։ Նկատելի է, որ լեզվի զարգացման սովետական փուլում այս դերբայը ավելի ու ավելի է հոլովառական անհամաձայնություն ցուցաբերում իր գերադաս բայի նկատմամբ՝ հանդես գալով իր ուղիղ ձևով. օրինակներ՝ «...Որը հնարավորություն կտա ավելացնել արտադրանքի թողարկումը» (ՍՍ, 20/4—1964)։ «Մետաքսի կոմբինատի հիմնայի կոլեկտիվն ինձ ընդունեց հարազատի պես, նա ինձ օգնեց լավ ջուլհակուհի դառնալ» (ՍՍ, 12/2—1965)։ «Զգաց ինչ

գնով էլ լինի խանգարել առաջադիմական միջոցառումներին» (ԵԵ, 27/5—1965)։ «Ճեշտակի գրոհի շնորհիվ թշնամին անզոր էր դիմադրել» (ՍՀ, 4/1—1965)։ «Նա ջանք էր թափում պատասխանել» (ԳՄ, ԵՍ, 375)։

Այս օրինակներում անորոշ դերբայները պետք է տրական հոլովով լինեին։ Բացառական հոլովի անհամաձայնության դեպք՝ «Տեղի բրդական շեյխ Սալիհը հրաժարվեց այդ պահանջները բավարարել» (պետք է լիներ բավարարելուց— ԵՍԹ, 84)։ Ներգոյական հոլովի կիրառությունը նման դեպքերում ընդհանրապես անգործածական է, ինչպես՝ «Մոդը համառեց ինձ օգնել» (ՋԼ, ԵԺ, 3, 444)։

Հարկ է նշել, որ նման կիրառությունների տարածումը կարող է և ռուսերենի ազդեցության արդյունք լինել, որ, ինչպես գիտենք, անորոշ դերբայը հոլովական ձևեր չունի և որպես խնդիր հանդես է գալիս միշտ իր ուղիղ ձևով։

Անորոշ դերբայի հիշյալ կիրառությունները խորթ չէին նախասովետական շրջանի լեզվին (հմմտ.՝ «Նկատելով, որ իմ եվրոպական հագուստներս առիթ էին տալիս թուրքերին կարծել, թե ես ինկլիս եմ...» (Րաֆ., 8, 315), սակայն համեմատաբար ավելի քիչ էին տարածված։

Հետաքրքրական է, որ նկատվում է նաև հակառակ երևույթը, այսինքն ներգործական սեռի բայի անորոշ դերբայով արտահայտված խնդիրը գործածվում է ոչ թե ուղիղ ձևով (հայցական հոլովով), այլ տրական հոլովով, օրինակներ՝ «խնդրել պատասխանելու» (ՀԹ, 30/1—1965)։ «Թույլ չտալ միջուկային զենք ձեռք բերելու» (ՍՀ, 27/10—1964)։ «Վերջին ժամանակներս ծայրահեղ աջերը առանձնահատուկ համառությամբ սկսել են պահանջել հաստատելու... ծովային և օդային լիակատար բլոկադա» (ՍՀ, 10/3—1965)։ Այստեղ արդեն ոչ թե քերականական գործոններն են դեր խաղում, այլ որքան էլ զարմանալի է, ոճական. պարզապես խուսափել են անորոշ դերբայի կրկնությունից (խնդրել պատասխանել, թույլ չտալ ձեռք բերել, պահանջել հաստատել), ուստի և երկրորդ անորոշները օգտագործել են թեք հոլովով։

Ներկա փուլում աստիճանաբար նվազում են կամական բայ + ըղձական եղանակի ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմք կառուցվածքները, ինչպես՝ «Ուզեց երկիրն ազատի» (ԵՉ, ԵԺ, 2, 158), «Ուզեց կանչի. համոզի» (163), «Ուզում է պայքի» (ՎԱՀ, 4), որոնք այժմ միայն ժողովրդական բնույթի գործերում են հանդիպում։

2. ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀՈԼՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ՆԿԱՏՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ

Նկատվող փոփոխությունները հիմնականում հետևյալներն են.

1) Նախասովետական շրջանում տարածված եզակի և հոգնակի մի շարք հոլովաձևերի գործածությունից դուրս գալը.

2) Ի հոլովման ազդեցության ու տարածման ոլորտի խիստ մեծացումը, նույնիսկ այն աստիճանի, որ այլ հոլովումների պատկանող գոյականների մեծ մասը դրեթե միշտ զուգահեռաբար հանդես է գալիս կամ կարող է հանդես գալ ի հոլովմամբ, բացառությամբ -ություն վերջավորվող գոյականների, որոնք կանոնավորապես հոլովվում են ու հոլովմամբ: Ի հոլովման տարածման ոլորտը այնքան մեծ է, որ այլ հոլովումների պատկանող գոյականները կարելի է նույնիսկ ներկայացնել որպես այլաձև հոլովումների ենթարկվող «բացառություններ»:

Այժմ նկարագրենք այն փոփոխությունները, որոնց ենթարկվել է գոյականների հոլովման համակարգը լեզվի զարգացման սովետական փուլում:

Գրաբարի և բարբառների ազդեցությամբ նախասովետական շրջանի արևելահայ լեզվում զուգահեռաբար ու հոլովման են ենթարկվել դար. պահ. ժամ. առավոտ. շաբ. մահ, տարի, ամիս գոյականները[70]: Այժմ, բացի առաջին երկու գոյականներից, որոնք ենթարկվում են ի հոլովման, մյուսները հիմնականում հանդես են գալիս վա հոլովմամբ: Օրինակներ՝ դարու (Րաֆ., 9), պահուն (17, 19), շաբուն համար (375), առավոտու (ԱԻ, ԱԷ, 71), ժամու (Գործ, 1917, № 3, 17), առավոտուց (21) և այլն:

Նախասովետական շրջանում, ինչպես Մ. Աբեղյանն է վկայում («Աշխ. քեր.», էջ 144), ժողովրդական ձևով գործածվել են նաև լուսու. իշու ձևերը, որոնք այժմ ենթարկվում են ի հոլովման: Կաշի գոյականը ևս այժմ ընդունված է հոլովել կաշվի ձևով, թեև առաջներում հանձնարարելի էր կաշու ձևը (Մ. Աբեղյան, 143):

Լեզվի զարգացման սովետական շրջանում այլևս չենք հանդիպում ո(յ) հոլովմամբ գոյականների, որոնք, անշուշտ գրաբարի

---

70 Սրանցից առաջին չորսը գրաբարում ենթարկվել են ու հոլովման, իսկ վերջին երկուսը՝ ոյ՝ տարւ-ոյ. ամս-ոյ. ոյ -ու հնչյունափոխությամբ այս վերջին բառերը բարբառներում և ժողովրդական լեզվում դարձել են տարու. ամսու. որոնք և մուտք են գործել գրական լեզվում. շաբ բառը գրաբարում հանդես է եկել թե ի և թե ու հոլովմամբ:

ազդեցությամբ, բավական տարածված էին նախասովետական շըրջանում. օրինակ՝ որդվո (Մուր., 28), բնո (277), բարվո (277), ամոթո (295), հավատո (359), լուսո (460). լուսո (Ճիրվ., 373), հուսո (14). հարավո (ՀՀՆ, 19), բարվո (69), հոգվո (75), որդոց (66), թռչնոց (24), հավատո (104). մարդո (ՀԹՆ, 1, 47), մարդոց (12, 22, 32), ատամո (ՎՏ, ՆԺ, 2, 256) և այլն։ Այժմ այս գոյականների մի մասը ենթարկվում է ի հոլովման (հավատ, լույս. հույս, հարավ, թռչուն), մյուս մասը՝ ու։ Միայն սեր գոյականն է, որ, որպես բացառություն, ենթարկվում է այս հոլովման (սեր-սիրո), թեև նախասովետական շրջանում այն հոլովվել է նաև ու հոլովմամբ (սիրու)[71]. Նկատելի է, սակայն, որ որոշ ոճերի ու բառակապակցությունների մեջ պահպանվում են ո հոլովման ձևերը, ինչպես արտաքո կարգի, հավատո հանգանակ, ամոթո կնիք, պատվո պահակ և այլն։

Ամուսին, անկողին, մարդ գոյականները նախասովետական շրջանում հավասարապես տարածված էին նաև ի հոլովմամբ (Աբեղյան, 144)։ Օրինակներ՝ ամուսնին (Րաֆ., 153), անկողնի (ՆԴ, 36, ՍՁ, ՏՄ, 1, 46) և այլն։ Աղախին գոյականը ևս հանդիպում է աղախնին ձևով (Ճիրվ., 273)։ Սակայն այժմ հանձնարարելի են ու հոլովմամբ ձևերը։ Նկատելի է, որ գրաբարում մարդ և աղախին գոյականները ենթարկվել են ոյ հոլովման, իսկ անկողին, ամուսին գոյականները ոյ|ի հոլովման. ոյ>ու հնչյունափոխությամբ հիշյալ գոյականները այժմ ու հոլովման են ենթարկվում։

Ընկեր գոյականը գրաբարում ի հոլովման էր ենթարկվում. հյուսիսափայլյան շրջանում, ինչպես նաև հետագայում ընդհուպ մինչև Իսահակյան[72] և Շիրազ մենք հանդիպում ենք այս գոյականի ընկերի (տես ընկերի, ընկերից— ԱԻ, ԱԷ, 25 և ընկերիս— Շիրազ) և անձ ցույց տվող մի քանի այլ գոյականների (սիրոջ, քրոջ, աներոջ և այլն) նմանությամբ՝ ընկերոջ զուգահեռ ձևերին։ Նկատելի էր սակայն ընկերոջ ձևի որոշ գերակշռությունը, որը և հիմք հանդիսացավ հետագայում, լեզվի զարգացման սովետական փուլում, այն ընդունելու որպես հանձնարարելի։

Գրաբարում ն վերջնահնչյուն ունեցող ան հոլովման որոշ գոյականներ եզակի թեք (բացառական, գործիական) հոլովներում հանդես էին գալիս հաճախ այդ բաղաձայնով (մկնից, գառնից և

71 Տե՛ս Մ. Աբեղյան, էջ 311։

72 Ա. Իսահակյանի «Արձակ էջերում» հիմնականում ընկերի ձևն է իշխում։

այլն)[73]: Այժմ, որպես կանոն, այս ն վերջնահնչյունը վերականգնըվում է միայն հոգնակի հոլովաձևերում (բացառությամբ սերմ, անձ. մաս գոյականների): Սա անշուշտ բացատրվում է նրանով, որ այս գոյականների մի մասը (բուռ, գառ, լեռ, թոռ[74], ծունկ, փուռ և այլն), թեկուզ հենց նախասովետական շրջանում, սկսել էր հանդես գալ նաև ի հոլովմամբ[75], ինչպես՝ գառի, փռի, ծնկի. ուղղական+ի կազմության ազդեցությամբ և միօրինակություն ստեղծելու միտումով մյուս հոլովները ևս սկսում են կազմվել ուղղական+վերջավորություն (-վից, -ով և այլն) կառուցվածքով, որով աստիճանաբար թուլանում է այդ վերջնահնչյունի (ն) օգտագործման անհրաժեշտությունը. պետք է սակայն նշել, որ այս պրոցեսը հատկապես ուժեղացավ լեզվի զարգացման սովետական փուլում և այժմ միայն դուռ բառի մեջ է ն հանգը վերականգնվում (օրինակ՝ դուռ- դռան- դռ-ն-ից), սա էլ գուցե միայն այն պատճառով, որ դուռ գոյականը ի հոլովմամբ խիստ հազվադեպ է կիրառվել (հյուսիսափայլյան շրջանում գտնում ենք դուռխ[76], որ այդպես էլ չտարածվեց): Ներկա շրջանում է նաև, որ այս գոյականները ավելի ու ավելի են հակվում ի հոլովման, թեև, որպես կանոն, սրանք դեռ հանձնարարվում են ան հոլովմամբ:

Լեզվի զարգացման ներկա շրջանում գործածական չեն ան հոլովման պատկանող մանուկի և անունի հոլովաձևերը, որոնց գործածությունը այս դարի սկզբներին, մանկան և անվան ձևերին զուգահեռ, վկայում է նաև Մ. Աբեղյանը (էջ 147): Չեն օգտագործվում նաև խոսում և զգացում գոյականների խոսման և զգացման սեռականները (ՆԴ, 237 և 320), որոնց փոխարեն տարածված են խոսումի, զգացումի ձևերը: Հազվադեպ է հանդիպում ճանդումի (ԵՉ, ԵԺ, 2, էջ 52) ձևը՝ ճանդման փոխարեն: Հնացած է նաև ժողովրդյան (Մուր., 469) սեռականը, որն այժմ ի հոլովման տակ է ընկնում:

Ժամանակ ցույց տվող մի քանի բառեր գտնում ենք գործածված նաև ի հոլովմամբ, ինչպես՝ ցերեկի (Բաֆ., 19, ԵՉ, ԵԺ, 2, 67), երեկի (Աբեղյան, 149): Այժմ սրանք կանոնավորապես վա հոլովմամբ են հանդես գալիս:

Հարկ է նշել, որ նախասովետական շրջանում վա-ին հավա-

---

73 Տե՛ս Մ. Աբեղյան, էջ 145:

74 Համեմատիր թոռխ (ԱԻ, ԱԷ, 280):

75 Արդեն հնացած է հնչում ծնկան եկավ ձևը (Մուր., 401):

76 Տե՛ս Ս. Գալստյան, էջ 82:

սար օգտագործվել է նաև վան. ահա թե ինչ է գրում այդ մասին Մ. Աբեղյանը. «Այս հոլովման տրականը (հմմտ՝ սեռականը— Գ. Գ.) կազմվում է ուան (վան) վերջավորությամբ, որն ավելանում է ուղղականի վրա... Տրականի (հմմտ՝ սեռականի) վերջին ն բաղաձայնը հաճախ դուրս է ընկնում և տեղը գրում են ավելորդ անձայն յ» (էջ 148)։ Ս. Պալասանյանը ևս նշում է վա և վան վերջավորությունների գործածությունը այս հոլովման ժամանակ. «Ժամանակ ցույց տվող բառերը հոլովվում են երրորդ (հմմտ՝ ան, յան) հոլովման վրա, փոքր-ինչ փոփոխությամբ, այսինքն՝ սեռ. ուան (վան) կամ ուայ (վա), բացառ. ուանից (վանից), ոմանք նաև առաջին կանոնավոր հոլովման պես։ Այսպես անխտիր գործ է ածվում ամսի և ամսուան, շաբաթի և շաբաթուան... գիշերի և գիշերուան» (էջ 111)։ Նկատելի է, որ Մ. Աբեղյանը, մեջ բերելով այս հոլովման պատկանող գոյականները, նրանց սեռականները նշում է միայն ուան տարբերակով, առանց բերելու նաև ուայ-ով ձևերը. օրինակ՝ ժամուան, շաբաթուան, ամսուան, տարուան, առաւօտուան, կեսօրուան, իրիկուան... և այլն (էջ 148—149)։ Բերենք բնագրային մի օրինակ՝ «Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեք» (ՀԹ)։

Չարենցը հիշյալ ձևերի համար գրում է. «Ինչու օրվան և ոչ օրվա: Հայերենում օրվան չի կարելի ասել...»[77]։

Լեզվի զարգացման սովետական շրջանում պահպանվեցին միայն վա վերջավորությամբ սեռականները (վաղվա, այսօրվա և այլն). վան ձևով սեռականները այժմ դիտվում են որպես բարբառային։ Դադարեցին գործածվելուց աշունք, գարունք գոյականների բարբառային երանգ ունեցող աշունքվա(ն), գարունքվա(ն) հոլովաձևերը, որոնց փոխարեն տարածվեցին աշնան, գարնան ձևերը։ Գործածությունից դուրս եկավ օր գոյականի ավուր (Մուր., 413, 249) սեռականը։

Ներքին ո և արտաքին ոչ հոլովումները փոփոխություն չեն կրել։

Այժմ մի քանի խոսք բացառական, գործիական և ներգոյական հոլովների հոդառության մասին։ Նախասովետական շրջանում հիշյալ հոլովները կարող էին ինչպես անհոդ, այնպես էլ որոշիչ հոդով կիրառվել. ահա թե ինչ է գրում այս մասին Ս. Պալասանյանը.

---

77 Տե՛ս Ա. Մարությանի «Ե. Չարենցի չափածոյի քերականական կառուցվածքի մի քանի առանձնահատկությունների մասին» հոդվածը (Խ. Աբովյանի անվան Հայկական պետ. մանկ. ինստիտուտի Գիտական աշխատությունների ժողովածու, հայոց լեզվի բաժին, № 1, էջ 181)։

«...Գրավոր լեզվի մեջ բացառական, գործիական, ներգոյական հոլովները ավելի անհոդ են վարվում, քան թե հոդով...» (120)։ Նույնն է ասում նաև Աբեղյանը. «Ն/ը հոդը չի պահվում տրականի (իմա սեռականի) վրա. բացառականի, գործիականի ներգոյականի վրա կարելի է պահել և չպահել... օրինակ՝ քո պարտեզից(ը) հեռացանք, քո պարտեզով(ը) անցանք, քո պարտեզում(ը) կան...» (էջ 156)։ Նկատելի է, սակայն, որ գրավոր խոսքում համեմատաբար ավելի քիչ էին հիշյալ հոլովների հոդառության դեպքերը, քան, անշուշտ, բանավոր։ Այդուհանդերձ, դեռ մինչև լեզվի զարգացման սովետական փուլը հիշյալ հոլովների հոդառությունը լեզվական անհանձնարարելի ձև չէր համարվում և գործածական էր, ինչպես ասացինք, նույնիսկ գրավոր խոսքում։ Բերենք մի քանի օրինակներ՝ բոխարումը (ՍԴ, 354), վզովը (357), սրտումը (Բաց., 8, 239). Աղթամարա կղզումը (280), բակիցն (Գործ, 1917, № 3, 6) և այլն։

Քննարկվող շրջանում հիշյալ կիրառությունները դիտվում են արդեն որպես բարբառային և հազվադեպորեն գործածվում են միայն գեղարվեստական գրականության մեջ՝ ոճական նպատակներով (խոսքին բարբառային կամ ժողովրդական երանգ տալու համար)։ Մի երկու օրինակ. տնումը (ԵՉ, ԸԵ, 24), բռնցքովը (13), դաշտովը (18), հնումը (94). Ն. Զարյանից՝ կոկորդովը, չթովը, տեղիցը[78] և այլն։

Բարբառային երանգ ունեն նաև կին, մարդ գոյականների տրական-հայցական հոլովաձևերի որոշիչ հոդով կիրառությունները. օրինակ՝ մարդկանցը (Շիրվ., 86)։

Ինչպես գիտենք, արևելահայ գրական աշխարհաբարում ոչ բոլոր գոյականներն են, որ ներգոյական հոլով ունեն. Աբեղյանը նշում է, որ «...Անձի, վերացական, երբեմն և նյութեղենի անունները հաճախ ներգոյական հոլով չունեն, կամ ներգոյականը գործածական չէ» (էջ 139)։ Հիմնականում այսպես է նաև լեզվի զարգացման սովետական փուլում։ Սակայն վերջերս նկատվում է այնպիսի գոյականների ներգոյական հոլովով գործածություններ, որոնք առաջներում տարածված չէին. այսպես, –ություն վերջածանցով ներգոյականները, որ սովորական չէին նախասովետական շրջանում, այժմ սկսել են տարածվել. օրինակ՝ պատմությունում (ՀԶ,

---

78 Տե՛ս Մ. Ավագյան, Նաիրի Զարյանի ստեղծագործության լեզուն և ոճը, Երևան, 1961, էջ 192—193։

27/11—1965). շինարարությունում (ՍՀ, 6/1—1964), մեքենաշինությունում (ԵԽ, 20/4—1964), նախագահությունում (ՍՀ, 9/3—1965), պաշտպանությունում (Ավ., 27/3—1965), կոլտնտեսությունում, տարածությունում (ՀՁ, 12/4—1966) և այլն։

Թեև մեր նյութակից դուրս է, սակայն հարկ ենք համարում նշել, որ ներկա փուլում որոշ զարգացում են ապրել նաև հոլովների իմաստային կիրառությունները. այսպես, սեռական հոլովով արտահայտված գոյականները առանձին կամ բառակապակցություններով գործածություններում սկսել են անհամեմատ ավելի մեծ չափով հանդես գալ որոշիչային դերով. այս վերջին պաշտոնով սկսել են հաճախակի հանդես գալ նաև գործիական հոլովով արտահայտված գոյականները։ Բացառական հոլովով արտահայտված գոյականները ավելի շատ են խնդրական կիրառությամբ գործածվում, քան առաջներում. օրինակ՝ «Քաղաքացինե՛ր, հիշյալ իրերից *շահելու համար անհրաժեշտ է վաղօրոք գնել վիճակախաղի տոմսեր» (ԵԽ, 27/11—1965). բացառականով արտահայտված ենթակայի օրինակ. «Հակոբ Ասատրյանի միջոցով ստացվեցին նաև բանասեր-հայագետ-գիտնական Գարեգին Հովսեփյանի (կաթողիկոս) աշխատությունների* սևագրություններից...» *(ԳԹ, 26/11—1965)։*

Գրաբարյան կամ հնացած ու բարբառային մի քանի հոլովաձևերի վերացումը լեզվի զարգացման սովետական փուլում.— *Ներկա փուլում գործածությունից դուրս են եկել* անձ, մաս *գոյականների առաջներում հանդիպող* անձներ, մասներ *հոգնակիները*[79] *և* ն *հանգով թեք հոլովաձևերը. օրինակներ՝ մասներ (Րաֆ., 39), մասները (26), մասների (66, 369), մի մասնում (66), մասնով (384), անձներ (346), մասնից (Րաֆ., 8, 592). այսպես նաև* հարսները *ձեր (Գործ, 1917, № 3, 6), որ այժմ սովորական է ավելի առանց* ն *հանգի՝* հարսեր:

Գործածությունից դուրս են եկել կանայք, մարդիկ, տղամարդիկ *հոգնակի ուղղականի որոշիչ հոդով կիրառությունները, ինչպես՝ կանայքը (Րաֆ., 480, 23, 46), մարդիկը (90), տղամարդիկը (480). մարդիկը (ՀԹ, ԵԺ, 2, 26), կանայքն (Մուր., 207)։ Գործածական չեն նաև* մարդ *գոյականի* մարդիկներ *կրկնակի հոգնակին, որ հաճախակի հանդիպում ենք Րաֆֆու մոտ (օրինակ «Կայծեր» վեպում),*

---

79 *Տե՛ս* Ա. Պալասանյան, *էջ 109։ Գրաբարում* ն *հանգն ունեցող գոյականներից* մաս, եզ *և այլն մինչև հիմա հոգնակիում և նրա թեք ձևերում պահպանում են այդ* ն-*ն։*

մարդ ու կին գոյականների հոգնակի **մարդեր** ու **կիներ** ձևերը, ինչպես՝ *մարդեր (Բաֆ., 9, 483), տղամարդեր (Բաֆ., 30, 418), կիները (ԱԻ, ԱԷ, 292),* **անձ** *գոյականի կրկնակի հոգնակի* **անձինքներ** *ձևը, ինչպես՝* **անձինքներից** *(Բաֆ., 424)։*

Նախասովետական շրջանում հանդիպում ենք նաև **աղջկերք** *ձևին (Մուր., 469՝ ենթակայի դերով). այժմ այս ձևը օգտագործվում է սոսկ կոչականի դերում, իսկ մյուս հոլովաձևերով կիրառությունները ժողովրդա-խոսակցական երանգ ունեն։ Այժմ մերժված են նաև* **եղբարք, աղայք, տղայք** *ձևերը*[80]*, որոնք փոխարինված են* **եղբայրներ, աղաներ, տղաներ** *կանոնավոր ձևերով։* **Ձիաներ** *հոգնակին, որ բավական տարածված էր նախասովետական շրջանում (օրինակ՝ Բաֆ., 73, 322, 399. Գործ, 1917, № 3, էջ 15 և այլն), այժմ օգտագործվում է միայն բարբառախառն ժողովրդական լեզվում և փոխարինված է* **ձիեր** *կանոնավոր ձևով։ Հնացած և այժմ անգործածական են նաև* **-ունք** *վերջավորվող որոշ գոյականներ, ինչպես՝* **հարսունք** *(Մուր., 129),* **արքայազունք** *(ն. տ., 31)։ Ավելի ու ավելի են նվազում* **ի**-*ով վերջացող գոյականների* **ք**-*ով հոգնակիները, ինչպես* **հոգիք** *(Մուր., 440),* **որդիք** *(ՎՏ, ԵԺ, 2, 213) և այլն, որոնք նույնպես այժմ խորթ են գրական լեզվին։ Այլ է* **գյուղացիք, քաղաքացիք** *և ազգություն ցույց տվող* **գերմանացիք, ֆրանսիացիք, անգլիացիք** *և այլն հոգնակիների հարցը, որոնք սակայն, հանդիպում են միայն գեղարվեստական գրականության մեջ, այն էլ սահմանափակ գործածությամբ*[81]*. Նախասովետական շրջանում այս ձևերը տարածված էին նույնիսկ մամուլում, օրինակ* **գերմանացիք, ֆրանսիացիք** *(Գործ, 1917, № 3, 35)։*

Նախասովետական շրջանում տարածված էին **ոտք, ձեռք** *գոյականների* **ոտ, ձեռ** *ձևով գործածությունները. ոտով (Բաֆ., 10), ոտներից (Շիրվ., 378), ոտների (379), ոտ դնի (240), ձեռին (Բաֆ., 21), ձեռներին (Մուր., 12), ձեռին (15), ձեռը (353), ձեռները, ձեռներով (ՆԴ, 24), ձեռս (Շիրվ., 91), ձեռով (375), ձեռը (67), ձեռներս (ՎՏ, ԵԺ, 3, էջ 452), ձեռներին (Գործ, 1917, № 3, 8), ձեռիս (ԵՉ, ԵԺ, 2, էջ 46), ձեռներ (ՄՄ, ԵԺ), ձեռներով (ԱՉ, ՏՄ, 48) և այլն։ Նկատելի է սակայն, որ զուգահեռաբար գործածվել են նաև* **ձեռք, ոտք** *ձևերը. Շիրվանզադեի «Քաոսում» գերազանցապես գործածվում են* **ձեռ, ոտ** *ձևերը։ Այժմ դրանք համարվում են բար-*

80 *Տե՛ս* Մ. Աբեղյան, *էջ 154։*

81 *«Դաժան* թշնամիք *տիրել են երկրին մեր» (Շիրազ)։*

բառային և հենց այս երանգով էլ երբեմն հանդիպում են գեղարվեստական գրականության մեջ։

Ներկա փուլում դադարել են գործուն օրինաչափություն լինելուց տեղանունների ա և ո հոլովումները. հնից ունենք Նարեկա (վանք), Սևանա (լիճ), Վարագա (սուրբ խաչ), Վանա, Բագվա, Երևանա, սակայն այժմ այս հոլովմամբ նոր տեղանուններ չեն կազմվում։ Հնում տարածված էր նաև -իա վերջավորվող երկրների անունների -իո-ով սեռականները, ինչպես՝ Իտալիո, Գերմանիո, Նիկիո (ժողով), Անգլիո, Թուրքիո և այլն։ Այժմ այս տեղանունները կանոնավորապես ի հոլովման են ենթարկվում (Անգլիայի, Իտալիայի և այլն)։

Անձերի հատուկ անունները ևս, որ առաջներում հանդիպում էին նաև գրաբարյան հոլովաձևերով, այժմ բացառապես ենթարկվում են ի հոլովման (բացի մի քանի քարացած ձևերից՝ պարսից, ռուսաց, հունաց և այլն, որոնք գործածվում են հիմնականում պատմական բնույթի երկերում)։ Ժամանակակից պարսիկների և հույների վերաբերյալ այս ձևերը գործածական չեն։ Բոլորովին չեն օգտագործվում նաև անձերի անունների հոգնակի ուղղականի ք-ով հոլովաձևերը, ինչպես՝ Հույնք, Հրեայք և այլն, որոնք նույնպես տարածված էին նախասովետական շրջանում։ Դադարել են գործածվելուց նաև -ցիք վերջավորվող գոյականների -ցոց վերջավորությամբ հոգնակի սեռականները, ինչպես՝ քաղաքացոց, տնեցոց, երկրացոց, երևանցոց, ազուլեցոց[82]։

Ժամանակակից հայերենում սոսկ բարբառային երանգ է պահպանում ն-ով բացառականների գործածությունը, որ երբեմն հանդիպում ենք նաև սովետահայ բանաստեղծների մոտ։ Ճիշտ է, որ նախասովետական շրջանում էլ բացառականի այս հոլովաձևը տարածված չէր. բերենք մի երկու օրինակ՝ «— Ա՛ռ այդ ծրարը,— ասաց նա քնքշությամբ,— և կապիր թևիդ, դա ազատ կը պահե քեզ ամեն վտանգներեն» (Րաֆ., 8, 465)։ «Նա աստծուն փառք տալեն վերջը...» (374)։

Րաֆֆու վաղ շրջանի գործերում հաճախակի ենք հանդիպում նման կազմությամբ բացառականների. մի այլ օրինակ Թումանյանից՝ «Հովեն թե ծովեն» (ՀԹԵ, 1, 128)։

Ժամանակակից հեղինակներից՝ «Գիշերները սառը ու լուսին Վար կիջնեին երկնքեն» (ԱԻ, ԱԷ, 7)։ «Ես մեղավոր չէի, էն անիծ-

---

82 Տե՛ս Ս. Պալասանյան, էջ 115։

ված ընկերներս գլխե *հանեցին» (ԱԻ, ԱԷ, 266): «Բանն էն է, որ բռնենք մեր թշնամու* բկեն» *(ԵՉ, ԸԵ, 79): «Ջահել* սրտես *արուն ծծեց էն տղեն» (ԵՉ, ԸԵ, 114): «Իջնում ես հայոց* լեռներեն» *(ՆԶ, ԵԺ, 86): «Ու ձյուն կուզա, արյուն կուզա, սև ձյուն կուզա վարար՝* սրտես» *(ՇՔՀ, 31):*

Գործիականի ավ, իվ, ոք *վերջավորությունները ժամանակակից հայերենում պահպանվել են միայն սակավաթիվ բառերի մեջ, որոնք հիմնականում հանդես են գալիս այլ խոսքի մասի նշանակությամբ. այժմ հնացած են հնչում* կանխավ, դյուրավ, հավաստյավ, ստուգիվ, ճշմարտիվ, մեղմիվ. կարծյոք *գործիականի հոլովաձևերը*[83], *նույնպես և* ախորժանոք *(Մուր., 35, 127) ձևը:*

Ժամանակակից հայերենին խորթ է հոգնակի սեռականի ու վերջավորությունը, որ, արևմտահայերենի ազդեցությամբ, «երբեմն մտնում է արևելյան աշխարհաբարի մեջ»[84]*. օրինակ՝*

Եվ որոտա՛, զա՛նգ, և արթնացրու
Դարեվոր նիրհից Մասիսն ու Կազբեկ,
Թափ տո՛ւր թևերըդ, արծի՛վ լեռներո՛ւ,
Քընած առյուծնե՛ր, բաշերդ թոթվե՛ք (ԱԻ, ԸԵ, 63):

Ինչպես դժվար չէ նկատել, այստեղ հանգի համար է օգտագործված այս ձևը: Պետք է ասել, որ լեզվի զարգացման սովետական շրջանում խիստ հազվադեպ, այն էլ ոճական նպատակով է օգտագործվում հիշյալ հոգնակի սեռականը. մի օրինակ Նաիրի Զարյանից՝

Վեհ իդեալներու *ծիրանին արդեն*
Նետել են արնոտ կրունկների տակ,
Բռնել են ահեղ իրար կոկորդեն
Որպես ճիվաղներ մերկ ու այլանդակ (ՆԶԵ, 150):

Լեզվի զարգացման սովետական փուլում գործածությունից դուրս են եկել նաև -ություն *վերջածանցով վերջավորվող գոյականների և մի շարք այլ գոյականների հոգնակի սեռական—տրականի գրաբարյան կամ հնացած հոլովաձևերը. օրինակներ. Րաֆֆուց՝ վարանմանց (41), ծնողաց (44), լանչաց (98, 18), նախահարց (98). Մուրացանից՝ եղբարցդ (31, 129), իրավանց (95), զբոսա-*

83 *Տե՛ս* Մ. Աբեղյան, *էջ 154:*
84 *Նույն տեղում, էջ 141:*

սիրության (31), խռովության (32), նահատակության (33). աղջկանց (ՆԴ, 171), գյուղացոց (ՎՏ, ԽԺ, 2, 256), պետության («Գործ», 1917, № 3, 14). Թումանյանից՝ երկնից (ՀԹՆ, 1, 36), Մասյաց (70), լերանց (36), ոսկերացդ (50), քրիստոնեից (ՀԹՆ, 2, 20), միանձանց (20). Հ. Հովհաննիսյանից՝ ալյաց (18), արտասվաց (22), թռչնոց (24), որդոց (66), նախորդաց (93), իշխանաց (89) և այլն, և այլն։

Որպես կանոն, այս բոլոր ձևերը այժմ փոխարինված են **հոգնակի ուղղական+ի** կառուցվածքով, այլ կերպ ասած **-երի, -ների** վերջավորություններն են ավելանում եզակի ուղղականի վրա։

Նախասովետական, հատկապես անցյալ դարի գրական աշխարհաբարում այս ձևերը բավական տարածված էին և հանդիսանում էին գրապայքարի շրջանից մնացած ժառանգություն՝ գրաբարի հոլովական համակարգի ազդեցության տակ պահպանված։ Հետագայում, հոլովական ձևերի կայունացման ու համահարթման ժամանակ, գրաբարաձև և հնացած հոլովաձևերի գործածությունը աստիճանաբար նվազեց և լեզվի զարգացման սովետական շրջանում դրանք գրեթե դադարեցին գործածվելուց՝ հազվադեպորեն օգտագործվելով լեզվում, գերազանցապես չափածոյում, ոճական ու հանգավորման նպատակներով. այսպես, Չարենցի մոտ հանդիպում ենք նախնյաց, մանկանց, հայրենյաց, չարչարանաց, կամիվ, բանիվ, կամոք, Աստղկա և այլն ձևերի[85]. Ն. Զարյանի մոտ՝ մանկանց, ծաղկանց, որդոց, հայրենյաց և այլն[86]։ Նման, արդեն հնացած հոլովաձևերի հանդիպում ենք նաև այլ հեղինակների մոտ։

Գոյականների զուգահեռ հոլովումներ և զույգ հոլովաձևեր.— **Ի** հոլովման ազդեցությունն այնքան մեծ է ժամանակակից հայերենում, որ այլ հոլովումների պատկանող շատ գոյականներ հաճախ զուգահեռաբար կիրառվել են և այժմ էլ կիրառվում են նաև այս հոլովմամբ։ Պետք է նշել, որ զուգահեռ հոլովումները հատուկ են արևելահայ գրական լեզվին նրա զարգացման բոլոր փուլերում։

Այժմ քննենք այն դեպքերը, երբ տարբեր հոլովումների ենթարկվող գոյականները միաժամանակ հոլովվում են նաև **ի**, երբեմն նաև այլ հոլովմամբ։

Ժամանակակից հայերենում արդեն նկատելի է որոշակի միտում՝ ի-ով վերջավորվող օտարազգի հատուկ անունները **ի** հոլով-

85 Տե՛ս Ա. Մարության նշված հոդվածը, էջ 179։

86 Տե՛ս Մ. Ասլանյանի նշված գիրքը, էջ 188։

մամբ հոլովելու (Քեննեդիի, Ցանֆանինիի և այլն)։ Լեզվական այս միտումը չի տարածվում հասարակ անունների վրա, թեև երբեմն հանդիպում ենք ի-ով հոլովված գոյականների, ինչպես՝ այրիի (Շիրվ., 168), բարդիի (ԱԻ, ԱԷ, 54), ամուրիին (ՋԼ, ԵԺ, 1, 358), փոխանակ՝ այրու, բարդու, ամուրու։ Անշուշտ չինարու ձևը, որ հանդիպում ենք Ա. Բակունցի մոտ (Երկեր, 1, 1964, 295), ենթադրում է չինարի ուղղական՝ որպես ծառատեսակ և ոչ չինար ուղղական։

Կաշու-կաշվի զուգահեռ ձևերից հաղթել է կաշվի սեռականը։ Հետաքրքրական է որդվո–որդու–որդիի եռաձև հոլովման օրինակը, որոնցից հանձնարարվում է որդու։

Ժամանակ ցույց տվող գոյականները ևս, բացի վա հոլովումից, հաճախ ենթարկվում են նաև ի հոլովման։ Այս երևույթը, որ նկատելի էր նաև նախասովետական շրջանում, շարունակվում է նաև այժմ։ Հարկ է նշել սակայն, որ վա հոլովմամբ կարծես ավելի է ընդգծվում ժամանակի իմաստը. այս է անշուշտ պատճառը, որ ինչպես ակադ. Գ. Ղափանցյանն է նկատում, հաճախ տեղանուններն էլ են ժամանակի իմաստ ստանում (տես նրա բերած օրինակը՝ Նա իմ դիլիջանվա ծանոթն է)։ Համեմատիր նաև ճաշի-ճաշվա. առաջին ձևում ժամանակը չի շեշտվում, մինչդեռ երկրորդում՝ շեշտվում է. առաջի սեռականը տեղի նշանակությունն է ընդգծում, իսկ առաջվա՝ ժամանակի. ի հոլովմամբ հոլովվելիս շաբաթ գոյականը այլ նշանակություն է արտահայտում (համեմատիր էստոնական արվեստի շաբաթ), իսկ վա հոլովմամբ շաբաթ գոյականը հանդես է գալիս սոսկ ժամանակի նշանակությամբ. օրինակ՝ շաբաթի օրերին (ՍՀ, 20/9—1964) և շաբաթվա վերջին օրերին։ Այսպիսով, տարբեր հոլովումների ենթարկվելով, մի քանի գոյականներ փոխում են նույնիսկ իրենց իմաստը. համեմատիր նաև քույր-քույրի (բժշկական քույր իմաստով) և քույր-քրոջ՝ սովորական իմաստով։

Բերենք զուգահեռ հոլովման ենթարկվող գոյականների մի քանի օրինակներ. գիշերվա-գիշերի, օրվա-օրի. վա–ան հոլովմամբ՝ ձմեռվա-ձմռան, ամառվա-ամռան (հնացած է ամառին ձևը, Րաֆ., 10, 229) և այլն. վա–ու–ի հոլովմամբ՝ ամսվա-ամսու-ամսի։ Ժամանակակից հայերենում մահ գոյականը միակն է, որ ընդունում է վան վերջավորությամբ սեռական՝ մահվան. գործածվել է նաև մահու սեռականը, այժմ տարածվում է մահի։

Ոչ հոլովման պատկանող գոյականները ևս զերծ չեն ի հոլով-

ման ազդեցությունից. սկեսուր, տալ, աներ, ընկեր հաճախ հոլովվում են ի-ով. այս երևույթը նկատելի էր նաև նախասովետական շրջանում:

Հաճախ զուգահեռաբար ի հոլովմամբ են հանդես գալիս նաև ան, յան և ներքին ա հոլովման գոյականները (բացառություն են կազմում -ություն վերջավորվող գոյականները, որոնց սեռականը միշտ լինում է -ության). գառ, փուռ և նման գոյականների մասին արդեն խոսել ենք. ում վերջավորությամբ գոյականների օրինակներ՝ ուսման—ուսումի, հիացման—հիացումի, զգուշացման—զգուշացումի, միջոցառման—միջոցառումի. այլ դեպքեր՝ սյունի—սյան, ձյունի—ձյան, անկյունի—անկյան, արյունի—արյան, անունի—անվան, ծննդի—ծննդյան, գալուստի—գալստյան, կորուստի—կորստյան (համեմատիր՝ կորստի— ՍՀ, 1/4—1965 և կորստյան— ՀՑ, 20/2—1964): Այս վերջին երեք գոյականների համար ևս կարելի է ասել, որ ի հոլովմամբ կարծես ավելի է ընդգծվում նրանց առարկայական նշանակությունը, քան յան հոլովմամբ: Նկատելի է, որ ներկա շրջանում կարծես ավելի կենսունակ են վերջին յոթ գոյականների ի հոլովմամբ ձևերը: Այսպես, կարծես նույնիսկ հնացած է հնչում հետևյալ կիրառությունը՝ «Համառ պայքարում Ի. Բոլեսլավսկին, չնայած որակի կորստյանը, ոչ-ոքի արեց Ա. Գիպսլիսի հետ խաղացած պարտիան» (ՍՀ, 17/12—1964):

Հարկ է նշել, որ ներքին ո հոլովման սակավաթիվ գոյականներն են միայն, որ զուգահեռ այլ հոլովումների չեն ենթարկվում[87]:

Այժմ մի երկու խոսք բացառական և գործիական հոլովների ձևավորման մասին: Դեռ նախասովետական շրջանից նկատվում է միտում՝ հիշյալ հոլովների վերջավորությունները ավելացնել ուղղականի վրա՝ ի հոլովման գոյականի նման. այսպես՝ ու հոլովման ենթարկվող գոյականների բացառական հոլովի վերջավորությունն է -ուց. ապակի—ապակուց, սակայն երբեմն այս հոլովման տակ ընկնող գոյականների բացառականը կազմվում է ուղղական+ից ձևով. օրինակ՝ ապակիից (համեմատիր նաև՝ մաքիից— ՍՀ, 10/1—1966). այս ձևով են հոլովվում նաև անձի և տեղի հատուկ անունները՝ Թբիլիսիից, Ցանֆանինիից և այլն:

Գործիական հոլովը ներկայումս ավելի հաճախ է հանդիպում ուղղական+ով կառուցվածքով, ինչպես՝ գինի-ով (ԱԻ, ԱԷ, 341),

---

87 Քույր բառի մասին արդեն ասել ենք:

մինչդեռ, ինչպես գիտենք, բառավերջի ի-ն պետք է ընկներ (օրինակ՝ լորով). Համեմատիր նաև՝ «—Մեր ջան, ճամփա պիտի երթամ. բա ի՞նչ անեի, չէ՞ որ ձին մորակով չեն քշի, գառով կքշեն» (Ա.Ի, Ա.Է, 412)։

Արտաքին ան և ներքին ա հոլովման գոյականներից տուն բառն է, որ բացառական հոլովը երբեմն՝ ժողովրդական ոճով կազմում է սեռական-տրական+ից կառուցվածքով, ինչպես՝ տան-ից (Բ. Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, էջ 216)։ Մյուս գոյականների բացառականը միշտ կազմվում է ուղղական+ից կառուցվածքով։ Քիչ բարդ է գործիական հոլովի կազմությունը. -ում և -ություն ածանցներով վերջացող գոյականները գործիականը սովորաբար կազմում են գրաբարյան -ամբ, -յամբ կազմությունններով, ժամանակակից լեզվում, նախասովետականի համեմատությամբ, սկսել են ավելի ու ավելի հաճախակի հանդես գալ ուղղական+ով կառուցվածքով[88].գիտությունով, ուսումով, բնությունով, շարժումով, ուրախությունով, ձգտումով, կազմակերպումով և այլն։ Սակայն, սրանց զուգահեռ, ավելի տարածված ու սովորական են կազմակերպմամբ (ՍՀ, 2/1—1964), ձգտմամբ (ՍՀ, 4/2—1965), լիազորմամբ (ՍՀ, 7/2—1964) ձևերը։

Արյուն գոյականը լեզվում տարածված է արյունով և արյամբ ձևերով, վերջինս հիմնականում գրավոր խոսքում. «Կապված ենք մեր կյանքով, մեր զոհված ընկերների արյամբ...» (ՍՀ, 10/3—1965)։ Գալուստ գոյականը ավելի տարածված է գալուստով ձևով. գալստյամբ ձևը գրավոր խոսքում է միայն գործածվում՝ «Այս երեկո ես երջանիկ եմ քո գալստյամբ» (Շիրվ., 19)։ Նկատելի է, որ -ամբ, -յամբ կազմություններով գործիականները համեմատաբար ավելի շատ օգտագործվում են գրավոր խոսքում, քան բանավոր կամ ժողովրդա-խոսակցական լեզվում, իսկ -ով վերջավորությամբ գործիականները՝ ընդհակառակը։

Վա հոլովման որոշ գոյականներ բացառականը կազմում են թե ուղղական+ից, թե սեռական-տրական+ից կառուցվածքներով (ժամանակ+ից—ժամանակվան+ից, օր+ից—օրվան+ից, առավոտ+ից—առավոտվան+ից և այլն)[89]։

---

88 Մենք նկատի չունենք գրական աշխարհաբարի կազմավորման հյուսիսափայլյան շրջանը, երբ որոնումների այդ ժամանակաշրջանում հաճախ գերադասություն էր տրվում -ությունով ձևերին։

89 Նկատելի է, որ այս վերջին դեպքում է միայն, որ -վա հոլովակերտը հանդես է գալիս վան ձևով (բացի մանկան սեռականից)։

Սակայն կան մի շարք գոյականներ, որոնց բացառականը կարող է կազմվել միայն -վանից ձևով, ինչպես, էգուցվանից, երեկվանից, ցերեկվանից, այսօրվանից, վաղվանից, ճերվանից. ձմեռ, ամառ, անգամ գոյականները ձմեռից, ամառից, անգամից ձևով գործածվելիս կորցնում են շեշտված կերպով ժամանակ ցույց տալու կամ պարագայական դերով հանդես գալու նշանակությունը և ընդգծում են իրենց բուն առարկայական-գոյականական արժեքը. այս դեպքում արդեն հնարավոր չէ Երբվանի՞ց հարցը տալ, օրինակ՝ «Ռուսական ձմեռից նրանք սև փախագրվեցին մայիս» (ՍՀ, 11/1—1966), կամ՝ «Ես այս ամառից բավականություն չստացա», «երկու անգամից հաշողվեց» և այլն, ուր ընդգծված ձևերը հնարավոր չէ փոխարինել զուգահեռ հոլովման ձմեռվանից, ամառվանից, անգամվանից ձևերով։ Այս վերջինները շեշտում են ժամանակային-պարագայական նշանակությունը։

Առաջ գոյականը ժամանակի նշանակությամբ հոլովվում է առաջվանից[90] ձևով, իսկ տեղի նշանակությամբ՝ առաջից ձևով (համեմատիր նաև առաջվա և առաջի)։ Տարի գոյականի տարուց բացառականը, որ երբեմն հանդիպում է ընդարձակսատական գրականության մեջ, բարբառային է, ինչպես նույն գոյականի ու հոլովմամբ տարու սեռականը։ Այլ է նույն գոյականի առարկայական-գոյականական կիրառությունները այս հոլովաձևով, ինչպես՝ «Թուրքիայում կյանքի տևողությունը միջին հաշվով չի անցնում 33 տարուց» (ԵԵ, 2/1—1965), այստեղ արդեն հնարավոր չէ գործածել տարվանից բացառականը։ Ընդհանրապես պետք է նշել, որ առարկայական-խնդրական նշանակությամբ սովորական է ուղղական+ից կառուցվածքը. բերենք մի այլ օրինակ՝ «...Որոնց քսան կախաղաններ 1915 թվականի հունիսի 15-ին ճոճվեցին Պոլսի Բայազիդ հրապարակում, ապրիլի 24-ի եղեռական գիշերից շանթահար հայության քարացած հայացքի տակ» (ԿՍ, ԲԴՔ, 78)։

Ժամանակի նշանակություն արտահայտող վա հոլովման գոյականների զուգահեռ այս հոլովաձևերի մեջ իմաստային և կիրառական տարբերակում մտցնելն է ահա, մեր կարծիքով, այն զարգացումը, որ նկատվում է նախասովետական շրջանի համեմատությամբ, ուր դեռ այս երևույթը ակնառու չէր դրսևորվում։

Ո ներդրական հոլովման ենթարկվող գոյականների բացառական և գործիական հոլովները կանոնավորապես կազմվում են սե–

90 Հնացած և բարբառային է առաջուց ձևը. «Առաջուց վճռել էր» (ՆԴ, 170)։

ռական-տրական+ից, ով *կառուցվածքով (մորից, մորով)։ Հիմնականում այս կառուցվածքով են կազմում հիշյալ հոլովները և* ոչ *հոլովման ենթակա գոյականները (կին, տեր և այլն). սակայն* ընկեր, սկեսուր, տալ *գոյականները, որոնք ենթարկվում են նաև* ի *հոլովման, շատ հաճախ բացառական և գործիական հոլովները կազմում են* ուղղական+ից, ով *կառուցվածքով (ընկերով, ընկերից, տալից, սկեսուրով, սկեսուրից և այլն)։*

Ժամանակակից հայերենում անձ *գոյականի հոգնակի ուղղականը տարածված է և՛* անձեր, *և՛* անձինք *ձևերով (վերջինս ավելի հանդիսավոր կամ պաշտոնական լեզվում). հենց այս զուգահեռ ձևերից էլ ստացվում են զուգահեռ այլ հոլովաձևեր՝ անձերի—անձանց, անձերից—անձանցից, անձերով—անձանցով, սակայն նկատելի է, որ լեզուն ձգտում է առաջին ձևերին։*

Կայսր և դուստր *գոյականները ունեն* ի *և գրաբարյան հոլովմամբ սեռականներ՝ կայսրի—կայսեր, դուստրի—դստեր, որոնցից ավելի տարածված են դարձյալ առաջին ձևերը։*

Սեր *գոյականը, որ* ո *վերջադրական հոլովման միակ ներկայացուցիչն է*[91], *որոշյալ տրականում հոլովվում է* ի *հոլովմամբ, ինչպես՝* «Սերին *չի դիմանում և մեր աշխարհը» (Իէ, ՓԱ, 2, 173)։ Խիստ գրական է հնչում արդեն հնացած* սիրույն *հոլովաձևը. օրինակ՝ «Համիկի և Գուրգենի* սիրույն *խանգարում է խորհրդավոր մի բան, որը բացվում է հետագայում» (ԳԹ, 6/8—1965)։*

Եթե փորձելու լինենք համառոտակի ներկայացնել ժամանակակից հայերենի հոլովման համակարգի պատկերը, ապա կարելի է ասել, որ վա, ու, ան *մասամբ* ոչ *և ներքին* ա *հոլովումներին ենթարկվող շատ գոյականներ այժմ հավասարապես ընկնում են նաև* ի *հոլովման տակ. այս միտումը, որ նկատելի էր նաև նախասովետական շրջանում, այժմ ավելի ակնառու է դրսևորվում։*

3. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԿԱՏՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգնակիի կազմության հնացած շատ ձևերի վերացման մասին մենք արդեն խոսել ենք. այստեղ հիմնականում կխոսենք այն բարդ գոյականների հոգնակի թվի կազմության մեջ նկատվող տեղաշարժերի մասին, որոնց երկրորդ բաղադրիչը միավանկ բառ է։

---

91 Սուգ, լույս, լուր *և այլն այժմ միայն առանձին քարացած կապակցություններում են, որ դեռ* ո *հոլովմամբ են հանդես գալիս (սգո մեղեդի— ՍՀ, 24/1—1964).* Լուսո շող— *(Շիրվ., 14). սրանք այժմ հոլովվում են մեծ մասամբ* ի *հոլովմամբ։*

Որպես կանոն, թե անցյալի, թե ներկայի քերականները նշում են, որ երբ բարդ բառի միավանկ երկրորդ բաղադրիչը բարդության ժամանակ պահպանում է իր իմաստը, ապա նման բարդ բառերի հոգնակին կազմվում է -եր վերջավորությամբ[92]։ Հիմնականում այսպես է կազմվում ժամանակակից հայերենի հիշյալ բարդ գոյականների հոգնակի թիվը։ Սակայն լեզվում, հատկապես վերջին տասնամյակներում, բազմաթիվ նոր բարդ բառեր են կազմվել և միշտ չէ, որ նրանց հոգնակին համապատասխանում է նշված կանոնին. փորձենք պարզաբանել մեր միտքը։

ա) Բոլոր այն դեպքերում, երբ բարդ բառի երկրորդ բաղադրիչը դերբայական արժեք ունի՝ մեծ մասամբ գործողություն կատարողի, մասամբ նաև մի բան ունեցողի նշանակությամբ, հոգնակին կազմվում է -ներ վերջավորությամբ, ինչպես՝ մարդասեր-մարդասերներ (մարդ սիրող), ձկնորս-ձկնորսներ (ձուկ որսացող), փայտահատ-փայտահատներ (փայտ կտրող), պատմագիր-պատմագիրներ (պատմություն գրող) և այլն. ներ-ով են կազմում հոգնակին նաև որոշիչ-որոշյալի շարահյուսական արժեք ունեցող բարդությունները, ուր ունեցող դերբայի նշանակությունը զորությամբ է իմացվում՝ քարասիրտ-քարասիրտներ (քար սիրտ ունեցողներ), սպիտակամորթ-սպիտակամորթներ (սպիտակ մորթ ունեցողներ)։ Հիշյալ կանոնը վերջնականապես կայունացավ լեզվի զարգացման սովետական փուլում։ Այդ է պատճառը, որ ժամանակակից հայերենի համար արդեն անընդունելի են հոգնակի հետևյալ ձևերը, որ հանդիպում են նախասովետական շրջանում՝ ծրագիրներ (Մշակ, 1914, հունվ. 19, էջ 18), ձեռագիրներ (Մշակ, 1914, հունվ. 19, էջ 4), լրագիրներ (Մշակ, օգ. 21, էջ 1)։ Նշված գոյականների հոգնակին պետք է լիներ ծրագրեր, ձեռագրեր, լրագրեր. չէ՞ որ գիր բաղադրիչը բարդության մեջ, բացի գոյականական նշանակությունից, կարող է և դերբայական արժեք ունենալ (պատմագիր=գրող), իսկ քանի որ դերբայական նշանակություն ունեցողները -ներ վերջավորությամբ են կազմում հոգնակին, ապա հիշյալ գոյականները պետք է -եր-ով կազմեն, մանավանդ որ երկրորդ բաղադրիչը իր բուն նշանակությունից շատ չի հեռանում։

Սխալ կազմություն է զնդացրեր (Իչ, ՓԱ, 3, 47) հոգնակին, քանի որ երկրորդ բաղադրիչը (ցիր) դերբայական արժեք ունի (զըն-

92 Տե՛ս Մ. Աբեղյան, էջ 134—135, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 277, Ս. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք, 1956, էջ 94։

դակ գրող). պետք է լինի գնդացիրներ: Սխալ է նաև բիկնապաններ (Սխ, ՄՍ, 511) հոգնակին (Բիկունքը պանող), որ պետք է լինի բիկնապաններ:

բ) Երբ բարդ բառի երկրորդ բաղադրիչը գոյականական արժեք ունի և հիմնականում պահպանում է իր նշանակությունը բարդության մեջ, ապա բարդ գոյականը հոգնակին կազմում է -եր վերջավորությամբ. սևանողեր, անձրևաչրեր, պատակարզեր, ֆառաժայներ, զոռեմառեր, զորախաղեր, ձեռագրաբեյեր և այլն:

Կազմությամբ բարդ գոյականների աննախընթաց աճը, որ նկատվում է մեր օրերում, ստիպում է մեզ ճիշտ կողմնորոշվել նրանց հոգնակիների կազմության ժամանակ: Սակայն լեզվական ավանդույթը կամ բարդության երկրորդ բաղադրիչի իմաստի պահպանման վերաբերյալ կանոնը միշտ չէ, որ կարող են հարցը դրականապես լուծել: Հաճախ դժվար է լինում որոշել, պահպանե՞լ է երկրորդ բաղադրիչը (երբ այն գերբայական նշանակություն չունի) իր նշանակությունը թե ոչ. չէ՞ որ այս հարցում կարելի է տարբեր չափանիշներով առաջնորդվել. Եթե ձեռագիր բառի մեջ ընդունում ենք, որ գիր բաղադրիչը իր նշանակությունը պահպանում է, ուստի և ձեռագիր բառի հոգնակին -եր վերջավորությամբ ենք կազմում, ապա ինչո՞ւ չընդունել, որ մեր օգտագործած չափանիշ բառի մեջ էլ նիշ գոյականը պահպանում է իր նշանակությունը (գոնե այնքանով, որքանով գիր բաղադրիչը ձեռագիր բառի մեջ), մինչդեռ, ինչպես տեսնում ենք, այն հոգնակին կազմում է -ներ-ով՝ չափանիշներ: Ցուցանիշ բառը լեզվում տարածված է թե -եր, թե -ներ հոգնակիով, ինչպես՝ «Կոլեկտիվը բարձր ցուցանիշերով կատարեց ստանձնած պարտավորությունները» (ՍՍ, 7/1—1964): «Անցած հինգ ամիսների ցուցանիշները վկայում են այն մասին, որ» (Ն. տ.):

Ընդհանրապես դժվար է բարդությունների բաղադրիչների փոխհարաբերությունների մեջ թափանցել՝ որոշելու համար, թե բարդ գոյականների հոգնակին -եր-ով կազմել, թե՝ -ներ-ով: Ձեռագործներ (ՍԿ, ՔԴՔ) հոգնակին ըստ լեզվում գործող ներկա օրենքի իր այս ձևով ենթադրում է ձեռքով գործված բառակապակցությամբ արտահայտված շարահյուսական հարաբերություն, իսկ ձեռագործեր հոգնակին ենթադրում է ձեռքի գործ բառակապակցությամբ արտահայտված հարաբերություն:

Երբ բարդության երկրորդ բաղադրիչը այնպիսի միավանկ գոյական է, որ անկախ գործածություն չունի (ուստի և հոգնակիի

ավանդաբար գործածված ձև չունի), ապա նման բարդությունները իրենց հոգնակին կազմում են -ներ *վերջավորությամբ (անկախ այն բանից, թե երկրորդ բաղադրիչը պահպանո՞ւմ է իր իմաստը թե ոչ). օրինակ՝* խոտհարքներ *(ՍՀ, 16/4—1965),* կայազորներ *(ՍԿ, ՔԴՔ)։*

Լեզվական փաստերի քննությունը ցույց է տալիս, որ ներկա փուլում լեզուն կարծես ձգտում է հոգնակիների կազմության մեջ ևս միօրինակություն մտցնել, այսինքն եթե բառը բազմավանկ է, հոգնակին կազմել ներ-*ով (դա նկատվում է մասնավորապես նորակազմ բազմավանկ բառերում)։ Այս միտումը առայժմ արտահայտվում է բանավոր խոսքում, սակայն աստիճանաբար թափանցում է նաև գրավոր խոսքի մեջ. այժմ ունենք* խմբերգեր *(ԵԵ, 10/3—1965),* պահեստապետեր, *(ԵԵ, 31/3—1964),* քարհանքեր *(ՍՀ, 27/7—1965),* քարայրեր *և նման հոգնակիներ, որոնք ժողովրդական խոսքում ավելի տարածված են* -ներ *ձևով, համեմատիր նաև՝* վրանապետներ, սեղանապետներ, զինեպետներ (Ստ. Զորյան, *Պապ թագավոր, 1957, էջ 472)։*

Արկղ *գոյականը* աստղ, կայսր, եզր, վագր, կոճղ *գոյականների նման հոգնակին կազմում է* եր-*ով, սակայն բանավոր խոսքում հաճախ լսում ենք* արկղներ *հոգնակին, նույնը և* աղբարկղներ, տոմսարկղներ:

Այժմ ավելի շատ հանդիպում է անգղներ *հոգնակին, քան* անգղեր:

4. ԱՆՁԻ ԵՎ ԻՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՄԵՋ ՆԿԱՏԵԼԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր նպատակը չէ այստեղ մանրամասնորեն քննել անձի անունների հայցականից տրական հոլովաձևին անցնելու բոլոր պատճառներն ու պայմանները, սակայն ավելորդ չենք համարում նշել, որ անշուշտ որոշ բայերի խնդրառության տատանումները ևս նպաստել են տրականաձև հայցականի տարածմանը։

Ահա թե ինչ է գրում այս մասին Մ. Աբեղյանը. «Աշխարհաբարը... կորցնելով հին հայցականի հոլովական ձևը՝ սկսել է նախ ուղղականի ձևը,— որ եզակիում նույն է հայցականի ձևի հետ,— գործածել բոլոր դեպքերի համար նաև հայցականի նշանակությամբ։ Երկու հոլովի այս ձևական նույնացումից սակայն հաճախ խոսքի երկդիմություն է առաջ գալիս, որովհետև հայերենում հաստատուն

բառադասություն չկա և հայցականի զ, ինչպես և մյուս նախդիրները դուրս են ընկել լեզվից. «Տիգրանը տեսավ Վարդանը» խոսքի մեջ չի հասկացվում ենթական և կրող խնդիրը։ Այս երկդիմության առաջն առնելու համար արևելյան բարբառները հայցականի նշանակությամբ անձի անունների համար երբ որոշված են, սկսել են գործածել տրական հոլովը։ Այս փոխանակությունն անշուշտ սկսվել է դերանուններից, և գրաբարում արդեն տեսնում ենք դրա սկիզբն անձնական դերանունների մեջ՝ (զ)մեզ, (զ)քեզ, (զ)ձեզ, որոնց նմանությամբ ասվել են նաև ինձ, սրան, դրան, նրան և այլն, և ապա անձի անունները, երբ որոշված են։ Տրականի գործածությանը կրող խնդրի համար՝ անշուշտ աջակցել են և այն դեպքերը, որոնց մեջ գրաբարում արդեն մի շարք ներգործական բայեր՝ հաղթել, աղաչել, պաշտպանել և այլն տրական հոլովով են առնում իրենց կրող խնդիրը. բայց այս գործածությունն ընդհանրացել է ավելի այն պատճառով, որ տրականը ստացել է նաև հանդման հոլովի, այսինքն՝ հայցականի նշանակություն» («Աշխ. շար.», էջ 98—99)։

Այժմ նկարագրենք այն փոփոխությունները, որ նկատվում են անձի և իրի անունների հայցականի ձևավորման մեջ՝ լեզվի զարգացման նախասովետական և սովետական շրջաններում։

1. Լեզվի զարգացման սովետական շրջանում հիմնականում վերացան անձի որոշյալ անունների ուղղականաձև հայցականի գործածությունները, որ առատորեն գտնում ենք գործածված Աբովյանի, Նալբանդյանի և նույնիսկ ավելի ուշ՝ Պ. Պռոշյանի, Մուրացանի և այլոց մոտ, բերենք մի քանի օրինակներ. «Նորեն հիշեց թագուհին սիրահար զույգը*» (Մուր., 238)։ «Իմ բարեկամ Վասակ Իշխանը... ամեն ջանք գործ դնելով՝ հաշտեցրեց* թագավորը *յուր եղբոր և նրա աներոջ հետ» (Մուր., 116)։ «Անտոնինա Իվանովնան շարունակ դիտում էր* ամբոխը*» (Շիրվ., 309)։*

«Ասված պահի քո որդին*, Ոնց էր համը իմ ձագի» (ՀԹՆ, 1, 150)։ «Զարաբախտ կինը նահատակության ճանապարհի վրա կորցրել էր իր* ամուսինը *և երկու* զավակ*» (Ա.Ի, Ա.Է, 305)։*

Այժմ, ինչպես կանոն, անձի որոշյալ անունները միշտ տրականաձև հայցականով են հանդես գալիս։

Անձի հավաքական անունները, ինչպես նաև պետությունների, կազմակերպությունների և նման անունները ժամանակակից հայերենում սկսել են տրականաձև հայցականով գործածվել[93]*, թեև ներ-*

---

93 *Այս մասին տե՛ս Հ.* Պետրոսյան *Գոյականի ստեմները հայերենում, Երևան, 1960, էջ 163։*

կա դրությամբ, համապատասխան, ցույց և որոշ գերակշռությամբ, օգտագործվում են նաև այդ գոյականների ուղղականաձև հայցականները. օրինակներ՝ «Տերսիմի քրդերը իրենք տանում էին թուրքական տիրապետությունը» (ՆՍԹ, 261)։ «Միացյալ նահանգների կառավարությունը.... կազմակերպել, զինել և ֆինանսավորում է այդ՝ այսպես կոչված ազգա-քաղաքացիական խուճապը» (ՍՀ, 9/1—1965)։ «Պատրաստվում են մարդկությունը հրել համաշխարհային սպանդի մեջ» (ՍՀ, 10/5—1965)։ «Սովետական հսկան զարմացնում է աշխարհը» (ՍՀ, 18/6—1965)։ «Որ իրենք մի կերպ պահեն ժողովուրդը» (Սխ, ՄՍ, 673)։ Այսպես նաև՝ «Ոչնչացրել է գյուղի բնակչությունը» (Ավ., 23/2—1965)։ «Թիմը մարզում է Լ. Մակարյանը» (ՀՖ, 20/2—1964)։ «Առաջին տարին չէ, որ մենք ճանաչում ենք այդ ընտանիքը» (ՍՍ, 20/4--1964)։

Տրականաձև հայցականի օրինակներ. «Դու հովանավորում ես Այրիվանքի հռչակավոր և բազմամարդ ուխտին» (Մուր., 186)։ «ՄԱԿ-ը պաշտպանում է Անգլիային» (ՍՍ)։ «Կալիֆոռնիային մի շաբաթով զրկեցեք արհեստական ոռոգումից, և տարիներով հնարավոր չի լինի ուղղել այդ չարիքը» (Ի. Իլֆ և Եվ. Պետրով, Միհարկանի Ամերիկան, Եր., 1964, 405)։ «Ամերիկյան...ընկերությունը կողոպտում է Պերուին» (ՍՍ, 19/5—1965)։ «Նյու-Յորքի հասարակությունը շատ մեծ խանդավառությամբ ընդունեց մեր թատրոնին» (ՍՀ, 5/3—165)։ «Ես շատ եմ կարոտել մեր գյուղին» (ՍԳ, 1965, № 3, 56)։ «Սովետական պառլամենտական պատվիրակությանը գլխավորում է» (ՍՀ, 17/1—1964)։

Այսպես նաև՝ «Համախմբել ուժերին» («Հայ. ժող. պատմ.», հ. 2, 1965, էջ 113) «Կոտորում էին բնակչությանը» (ն. տ., էջ 214)։

Լեզվի զարգացման ներկա փուլում ժողովուրդ, մարդկություն, պետություն, մասսաներ, ղեկավարություն, կազմակերպություն և այլն, ինչպես նաև երկրների անունները, ինչպես տեսնում ենք, հավասարապես հանդես են գալիս թե ուղղականաձև, թե տրականաձև հայցականով՝ վերջինիս տարածման ակնհայտ միտումով։ Առայժմ այս կարգի գոյականների կրող խնդրի հոլովաձևը անորոշ վիճակում է՝ հաճախ կախված գրողի կամ խոսողի՝ հիշյալ գոյականները անձի կամ իրի առումով ընկալելու սուբյեկտիվ մոտեցումից։

2. Անձի անորոշ անունները նախասովետական, հատկապես գրական աշխարհաբարի կազմավորման շրջանում հիմնականում հանդես էին գալիս ուղղականաձև հայցականով. բերենք օրինակ-

ներ. «Նրա պահապանները սպանեցին մի հայ վաճառականի» (Բաֆ., 8, 321)։ «Այժմ նա փնտրում էր մի մտերիմ բարեկամ» (Մուր., 363)։ «Սմբատը նշմարեց մի մտերիմ տղամարդ...» (Շիրվ., 161)։

Թեև լեզվում նկատվում է անձի որոշյալ անունների նմանակությամբ անորոշ անունները ևս տրականաձև հայցականով գործածելու միտում, սակայն հենց լեզվի զարգացման սովետական շրջանի փաստերը ցույց են տալիս, որ այդ երևույթը դեռ հեռու է քիչ թե շատ գերակշիռ տարածում ունենալուց՝ հենց թեկուզ գրավոր խոսքում։ Բերենք մի քանի օրինակներ՝ «Սպանեցին մի կին» (Իէ, ՓԱ, 3, 99)։ «Նա Փարիզից կանչեց երկու սենատոր» (Իէ, ՓԱ, 1, 76)։ «Տեսան մի աղջիկ» (76)։ «Ոստիկաններ տեսնելով, բանվորները լռեցին» (Իէ, ՓԱ, 2, 142)։ «Սովետական Միությունը Հնդկաստան կգործուղի նավթի մի խումբ սովետական մասնագետներ» (ՍՀ)։ «Սովետական փորձառու մասնագետները կպատրաստեն մի խումբ հնդիկ մասնագետներ» (ՍՀ, 17/1—1964)։ «Այս միությունը հանդիսացել է ազգապահպանման օջախ, դաստիարակել բազմաթիվ երիտասարդ հայրենասերներ» (ՀԶ, 7/11—1965)։ «Մենք մտադիր ենք կրակագիծ դուրս բերել չորս հարձակվող» (ՀՖ, 27/3—1965)։

Ուղղականաձև հայցականով են գործածվում անձի անորոշ անունները մանավանդ այն դեպքում, երբ նրանք որևէ թվականի հետ թվական համաձայնության մեջ չգտնվող բազմակի որոշյալներ են, ինչպես՝ «Կառավարական զորքերը սպանել են Կոլումբիայի ավելի քան 100 երեխա, կին ու պառամյալ գյուղացի» (ԵԵ, 7/12—1965)։

Հաճախ նշանակություն ունի նաև կրող խնդրի դիրքը ստորոգյալի նկատմամբ. եթե այն նախադաս է, ապա ավելի շատ է հանդես գալիս ուղղականաձև, քան հետադաս լինելու դեպքում. օրինակ՝ նա մարդ ծեծեց, նա ուսուցիչ վարձեց և այլն։

Այժմ բերենք անձի անորոշ անունների տրականաձև հայցականի օրինակներ՝ «Այցելելով երաժշտական հաստատությունները, ես տեսա և լսեցի բազմաթիվ ընդունակ և շնորհալի երեխաների» (ԳԲ, 3/4—1964)։ «Կանչված ոստիկանները ձերբակալեցին ութ մարդու» (ՍՀ, 13/3—1965)։ Հավաքական գոյականի մի օրինակ՝ «...Որը...ղեկավարում էր բանդիտական մի խմբի» (ՍՀ, 26/6—1965)։

Կենդանիների որոշյալ անունները, ինչպես նկատել է Հ. Պետրոսյանը, ավելի շատ գործածված են ուղղականաձև հայցականով.

«Տավարը մեկ կողմ քշեցին» (Պողոսյան)։ «Աշխարը թարսն իմ հանդն է քաշել» (Թումանյան)։ «Կարմիր տղան արձակեց ձին սըրարշավ» (Իսահակյան)[94]։ «Հայրս իլոր ծախեց մեր կովը» (ՍԳ, 1965, № 3, 46)։

Բավական հաճախակի են նաև կենդանիների որոշյալ անունների տրականաձև հայցականի գործածությունները՝ կապված նըրանց անձնավորման սուբյեկտիվ մոմենտի հետ. «Լիլիթը հիացումով դիտում էր գեղանի կարապներին» (ԱԻ, ԱԼ, 175)։ «Մարդկային միտքը երկար տարիներ պրպտումներ է կատարում, թե արդյոք չի՞ կարելի խոշորացնել այդ փոքրիկ, հրաշագործ կենդանիներին» (ՍՀ, 12/1—1964)։

Թեև ժամանակակից հայերենում ընդունված է, որ իրի անունների հայցականը ուղղականաձև է դրվում և եղած շեղումներն էլ անձնավորման արդյունք են, բայց օրինակների բնույթը և մանավանդ բուն կանոնից շեղումների թիվը այնպիսին են, որ հարկ է հաշվել այն մտքի հետ, որ այս հարցում ժամանակակից հայերենը որոնումների մեջ է։ Գուցե թե լեզուն ձգտում է շնչավորի և անշունչի տարբերակմանը[95], չէ՞ որ կենդանիների որոշյալ անունների հաճախակի դարձող տրականաձև հայցականները միշտ անձնավորման սուբյեկտիվ մոմենտով չի կարելի բացատրել։ Սակայն այս դեպքում ինչպե՞ս բացատրել անձի անորոշ անունների ուղղականաձև հայցականի ոչ փոքր թիվ կազմող գործածությունները, կամ էլ իր ցույց տվող անունների տրականաձև հայցականի գործածությունները. Ճիշտ է, որոշ տենդենցներ նկատվում են այս վիճակից դուրս գալու համար, սակայն ներկա դրությամբ անձի և իրի որոշյալ և անորոշ անունների՝ կրող խնդրի դերով բազմազան ձևավորումները լուրջ դժվարություններ են ստեղծում լեզվում։ Մասամբ ճիշտ է Մ. Աբեղյանը, որ դեռ 1909 թվականին տպագրած «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» հոդվածում գրում է. «Ահա թե ինչ վիճակի մեջ է մեր սեռի խնդրի հայցականը ևս։ Դրա ձևը, ուղղական թե տրական, հաճախ կախված է բայից, դարձվածքից, խոսքի շրջումից, խոսելու եղանակից, և նույնիսկ երբեմն սեռի խնդիր եղող բառից։ Մի օտարազգի մարդ մեր բոլոր հոլովների բոլոր կիրառություններն էլ հեշտությամբ կսովորի, բայց սեռի խնդրի հայցականը նրան ամենամեծ դժվարությունը կպատճառի,

94 Տե՛ս Հ. Պետրոսյանի նշված գրքի 157 էջը։

95 Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի խնդրառության մասին («Տեղեկագիր», հաս. գիտ., 1955, № 3, էջ 48)։

որովհետև մի ընդհանուր և հաստատուն կանոն ասել անհնարին է, գոնե ես չեմ գտնում այդ կանոնը: Ասում ենք՝ նա ոչխարը մորթեց, էշը բշեց, ձին քշեց, բայց էշին, շանը, ծեծեց, նա ձիուն մտրակեց: Ամեն թեմ ունի իր առաջնորդը, բայց ես այս թեմի առաջնորդին չտեսա...: Նույնիսկ քերականությունն էլ, որքան և ընդարձակ լինի, չի կարող իր մեջ ամփոփել այս բոլոր կիրառությունները. դա իսկապես մի ընդարձակ բառարանի գործ է» (էջ 35):

Կենդանիների անորոշ անունների հայցականը սովորաբար ուղղականաձև է, ինչպես՝ «Հանկարծ նրանք ճանապարհի վրա... նկատում են խոշոր մի գայլ» (ՍՍ, 22/10—1965): Երբեմն սակայն հանդիպում են և տրականաձև հայցականներ, ինչպես՝ «Օ՜, այո՛,— ասաց Ցրոնանը— Փոքրուց շների շատ եմ սիրում (ՋԼ, ԵԺ, 1, 92):

Իրի որոշյալ անունները ևս երբեմն անձնավորվում են՝ գործածվելով տրականաձև հայցական հոլովով: Օրինակներ՝ «Ո՞վ չի սիրում արևին» (ՍՏՆ, 147): «Իրականությունը դուրս է մղում երազանքներին» (ՀԶ, 4/3—1965): «Հովը վարթնեցրել էր ծաղիկներին...» (ԱԻ, Աէ, 531): «Նա չխնայեց մինչև անգամ այն պատկառելի գերեզմաններին, բոլորը քանդել տվեց» (Րաֆ., 8, 496):

Տրականաձև հայցականով են գործածվում նաև իրի այն որոշյալ կամ անորոշ անունները կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասերը, որոնք փոխարինում են անձի անուններին:

Հարկ է նշել, որ տրականաձև հայցականի գործածությունը հաճախ պայմանավորված է խնդրառու բայի իմաստով. օրինակ՝ (մասնակցելու) թույլ տալ հարադրության նշանակությունն առնչվում է անձերի հետ, ուստի և պահանջում է տրականաձև հայցական. հենց այս հայցականով էլ, սակայն, ձևավորվել է նաև իրի անունը հետևյալ օրինակում՝ «Հատուկ հանձնաժողովը մրցանակաբաշխությանը մասնակցելու թույլ է տվել 11 ֆիլմերի» (ԳԹ, 27/8—1965):

Ամփոփենք. թեև լեզվի զարգացման սովետական շրջանում զգալիորեն ճշտվել են անձի և իրի որոշյալ և անորոշ անունների ձևավորման հարցերը (օրինակ՝ անձի որոշյալ անունների ուղղականաձև հայցականի վերացումը) և արդեն կարծես ուրվագծվում են որոշ լեզվական միտումներ, սակայն, ընդհանուր առմամբ դեռ կայունացված չէ անձի անորոշ անունների, հավաքական որոշ անունների, երկրների անունների հոլովական ձևավորումը (ուղղականաձև, թե տրականաձև). անձի անունների այս կամ այն հոլովաձևով հանդես գալը դեռ շատ անգամ կախված է սուբյեկտիվ մոմենտներից (անձի առումով ընկալելու թե իրի) և այլ գործոններից:

5. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԴԵՐ

Լեզվի զարգացման սովետական փուլում խոսքից վերացան սա, դա. նա *դերանունների թեք հոլովների հնացած ձևերը։ Մ. Աբեղյանը այս հարցի մասին գրում է.* «Սա, դա, նա *ցուցականները ունին նաև* ո *տառով ձևեր* սորա, դորա, նորա. սորանից, դորանից *և այլն.* սորանք, դորանք, նորանք *և այլն, որոնք հնացած են բացի սեռականից՝* սորա, դորա, նորա: *Այս դերանունների հոգնակին հոլովում են նաև* սոքա, դոքա, նոքա, սոցա, դոցա, նոցա, սոցանից, դոցանից, նոցանից, սոցանով, դոցանով, նոցանով, *որոնք այժմ պակաս գործածական են*»[96]։

Հիշյալ դերանունների որոշ հնացած հոլովաձևերի այս կամ այն չափով հանդիպում ենք երբեմն նաև XX դարի սկզբներին. օրինակներ. Րաֆֆուց՝ նորա (Րաֆ., 8, 42), նոցա (425), նորանով (326), նորանից (314), նոքա (Րաֆ., 9, 25), դորա (Րաֆ., 8, 317), դոքա (281), դոցա (Րաֆ., 9, 25). Մուրացանից՝ նորա (450). Հ. Հովհաննիսյանից՝ նորա (66), նորան (39), նոցանից (56), դոցա (66), նոքա (69). Հ. Թումանյանից՝ նորա (ՀԹԵ, 1, 34). Տերյանից՝ նորան, նորա (ՎՏ, ԵԺ, 2, 242), նոքա (212, 214), դոքա (218), նոցա (227), սոցա (241), նորան (ՀՀ, ՀԵ, 2), սոքա (ՀՀ, ՀՔԿ, 10), նոքա (ԵՉ, ԸԵ, 155), նոցա (ԵՉ, Ա.խ, 11) և այլն և այլն։ Նկատելի է սակայն, որ համեմատաբար ավելի տարածված էին նորա, նորան, նոքա, նոցա *հոլովաձևերը, քան մյուսները։ Այժմ հիշյալ դերանունները կանոնավորապես հոլովվում են* նրա, նրան, նրանից, նրանով, նրանում *(այսպես նաև* սրա... դրա... *և այլն) ձևերով։*

Նախասովետական շրջանում, հատկապես անցյալ դարի գրական աշխարհաբարում, ներկայումս ընդունված ձևերին զուգահեռ, խիստ տարածված էին նաև ինքը, իրենք *դերանունների* ա-*ով հոլովաձևերը՝* իրան, իրանից, իրանով, իրանում, իրանք, իրանց, իրանցից, իրանցով, իրանցում[97]: *Հազվադեպ չէին* իւր, իւրեան, իւրեանք, իւրեանց, իւրեանցից, իւրեանցով *ձևերը*[98]։ *Նամակներում և հոդվածներում գերազանցապես այս ձևերն է օգտագործում նաև Վ. Տերյանը՝ իրան (ՎՏ, ԵԺ, 2, 228), իրանց (252), իրանք (252),*

---

96 Մ. Աբեղյան, *էջ 159։*

97 *Ավելորդ չէ նշել, որ Ս. Պալասանյանն ու Ն. Տեր-Ղևոնդյանը իրենց քերականություններում միշտ այս ձևերն են ներկայացրել (էջ 135 և 92)։*

98 *Գրում ենք հին ուղղագրությամբ, քանի որ այս ձևերը նորով, բացառությամբ* իւր *(յուր) դերանվան, երբեք չեն գործածվել։*

իրանից (232) և այլն. իրան («Գործ», 1917, № 3, էջ 37), իրանք (9), իրանց (8) և այլն. իրան (ԵՉ, ԵԺ, 2, 79), իրանց (ՎԱՀ, 15), իրան (ՍՁՑ, 2, 10), իրանց (11)։ Հետաքրքրական է նշել, որ Նար-Դոսի «Մահը» և Շիրվանզադեի «Քաոս» վեպերում իշխում են ներ-կայիս ձևերը։ Վերոհիշյալ ձևերը հարատևեցին մինչև քսանական թվականները, և միայն դրանից հետո իսպառ դուրս մղվեցին. այժմ դրանք հանդիպում են միայն ժողովրդա-խոսակցական լեզվում։

Գրական լեզվից մերժված է նաև իրա հոլովաձևը, որ երբեմն հանդիպում ենք անցյալի հեղինակների մոտ՝ (Մուր., 10, ՎՏ, ԵԺ, 2, էջ 255, 257.ԵՉ, ԵԺ, 2, 79. ԱՁ, ՏՄ, 1, 119 և այլն)։ Շիրազը խոսքին ժողովրդական երանգ տալու համար հաճախ է դիմում այս ձևին։

Յուր ձևը ներկա շրջանում էլ է օգտագործվում, սակայն ոչ առաջվա հաճախականությամբ. նրա գործածությունը այժմ հիմ-նականում հեղինակային նախասիրության արդյունք է՝ հաճախ ոճական նպատակով։

Անշուշտ նախասովետական շրջանում էլ խրթխուսելի չէին իրեն գերանվան գործածությունը իր-ի փոխարեն՝ հատկացուցչի դերով։ Հատկապես շատ ենք հանդիպում այս կիրառությանը Հ. Թումանյանի մոտ. բերենք մի երկու օրինակ՝ «...Լուսթյան կնիքն իրեն շրթունքին...» (ՀԹԵ, 1, 113), «Հայ գյուղացին ցավեր ուներ, խեղդված իրեն խուլ խրճիթում» (90). Ա. Իսահակյանից՝ «Մինչև քսանսուն տարին Օհան-ամին ապրել էր իրեն պապերի գյուղում...» (ԱԻ, ԱԷ, 390)։ Այս մերժելի գործածությունը երբեմն հանդիպում ենք նաև ժամանակակից հեղինակների մոտ՝ գերազանցապես չա-փածոյում՝ հանգ ու չափի համար. օրինակներ Ն. Զարյանից՝

Այդ ժողովուրդն էր սև կապեկներով իրեն վերջին
Բարձրացրել նրան ավանդական մի քաղաքում (Հատընտիր, 60)։
Ամեն մի լեհ իրեն սրտի խորքում խոով
Իբրև ըմբոստ իշխալ կրում էր իր Միցկևիչին (Հատընտիր, 61)[99]։

Տեղն է նշել, որ չափածոյում անհամեմատ ավելի սատա են մերժված կամ ոչ խրթխուսելի քերականական ձևերի գործածու-թյունը՝ սոսկ հանգ ու չափի համար։ Ժամանակակից բանաստեղծ-ները պետք է նկատի ունենան, որ բանաստեղծության տեխնիկա-կան այս կամ այն կողմը ապահովելու համար չի կարելի վիջում-

99 Տե՛ս Մ. Ավագյանի նշված գիրքը, էջ 194։

ներ անել, քանի որ վրիպումները հետագայում տարածվում են և որակ կազմում։ Լեզվի ընդունված նորմաների խախտումը չի կարելի արդարացնել այն թեզով, թե լեզուն զարգանում է, հետևաբար նոր ձևերի մուտքը կամ գործածությունը լեզվի մեջ անխուսափելի են. այս թեզը սողանցք է բացում բազմաթիվ սխալ ձևերի ու կիրառությունների տարածման համար։ Չէ՞ որ տվյալ շրջանի լեզվական նորմաները հարգելու դեպքում կարելի էր խուսափել հրամայական եղանակի դրական ու բացասական շատ ձևերի զուգահեռ կիրառություններից, պատճառականների կատարյալների նոր տարածվող (բարձրացրեցին փոխ.՝ բարձրացրին) բայաձևից, որոշ գոյականների զուգահեռ հոլովումներից, դերանունների որոշ սխալ ձևերի գործածությունից, որոշ հոդերի (հատկապես չափածոյում) անտեղի բացթողումից կամ հավելումից և այլն, և այլն։

Նախասովետական շրջանում ես, դու, մենք, դուք անձնական դերանունների բացառական և գործիական հոլովները հանդիպում էին ինձնից-ինձանից, ինձնով-ինձանով, քեզնից-քեզանից, քեզնով-քեզանով, մեզնից-մեզանից, մեզնով-մեզանով, ձեզնից-ձեզանից, ձեզնով-ձեզանով զուգահեռ ձևերով։ Մեր նպատակը չէ այստեղ քննել առանձին հեղինակների նախասիրությունները այս հարցում (օրինակ՝ Նար-Դոսը «Մահը» վեպում նախընտրել է առաջին կարճ ձևերը), սակայն նկատելի է, որ Ս. Պալասանյանն ու Ն. Տեր-Ղևոնդյանը[100] գերադասություն տվել են երկրորդ՝ երկար ձևերին, մինչդեռ Մ. Աբեղյանը՝ կարճ, նշելով նաև, որ երկար ձևերը քիչ գործածական են[101]։ Եթե նախասովետական շրջանի համար միայն վիճակագրությամբ կարելի է որոշել այդ զուգահեռ ձևերի գերակշռության հարցը, ապա ներկա շրջանի համար կարելի է պնդել, որ կարճ ձևերը գերակշռում են, թեև անկարելի է գտնել որևէ հեղինակ, հատկապես բանաստեղծ, որ այդ երկու ձևերն էլ օգտագործած չլինի։ Բերենք մի օրինակ Նաիրի Զարյանի նույն բանաստեղծությունից.

Քեզնից կարոտ և հեռու (ՆԶ, ԵԺ, 1, 91)։
Ինձ բաժանել քեզանից (ՆԶ, ԵԺ, 1, 31)։

Ռուսական ոճ է ինքը դերանունը հոլովական համաձայնությամբ գործածել որևէ գոյականի շեշտման համար՝ «Նա վախենում

100 Տե՛ս համապատասխանաբար այդ հեղինակների քերականությունների 136 և 99 էջերը։

101 Մ. Աբեղյան, էջ 158։

էր Նաստասյա Ֆիլիպովնայից իրենից» (ԴԱ, 761)։ Հիշյալ դերանունը կարող է այս կիրառությամբ հանդես գալ միայն անձնական դերանունների հետ՝ ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս և այլն։ Դարձյալ խրախուսելի չեն ոսանրենի աղդեցությամբ տարածվող նրանում, դրանում հոլովաձևերի հետևյալ կիրառությունը՝ «Բանը նրանում է, որ...» (ՋԼ, ԽԺ, 2, 272). «Հարցը հենց դրանում է» (ՋԼ, ԽԺ, 3, 446)։

Դեռ նախասովետական շրջանի գրական լեզուն մերժել էր էս, էդ, էն և դրանցից կազմված այլ դերանունների (էսպես, էսպիսի և այլն) գործածությունը լեզվի մեջ։ Ներկայումս այս ձևերը օգտագործվում են սոսկ ոճական նպատակով՝ խոսքին ժողովրդական երանգ հաղորդելու միտումով։

Ներկա շրջանում խիստ հազվադեպ է ուղիղ խնդրի դերով հանդես գալիս այս դերանունը, ինչպես՝ «Գիտեմ, գիտեմ, որ դու «լավ տղերքի» նպատակով չպետք է ծառայես, այս գիտեմ։ Բայց դու ինձ այս ասա, սիրելի, ձերոնց հայտնե՞լ ես վճիռը» (ՆԴ, 105)։ Այժմ առաջին այս-ը կփոխարինվի այդ-ով, իսկ երկրորդը՝ այն-ով։ Զգուում է նկատվում նաև ենթակայի դերում այս-ը փոխարինել սա-ով. այդ է պատճառը, որ քիչ անսովոր է հնչում Նար-Դոսի հետևյալ օրինակը՝ «Վերջապես այս բանի նման չէ» (31)։ Պետք է եզրակացնել, որ այս-ը հակված է ածականական կիրառությունների։

Ժամանակակից փուլում խիստ նվազել են ուրիշի դերանվան կիրառությունները, որոնք այնքան առատորեն գտնում ենք գործածված Րաֆֆու և այլոց մոտ. այժմ այդ դերանվան փոխարեն տարածված է ինչպիսի-ն։ Հետաքրքրական է նաև նշել, որ եթե նախասովետական շրջանում հազվադեպ էին ինչպիսի, ուրիշի դերանունների փոխանվանական կիրառությունները հարաբերականի դերում, ապա այժմ, հատկապես գիտա-հրապարակախոսական և լրագրային լեզվում, հիշյալ կիրառությունները բավական լայն տարածում են գտել. օրինակ՝ «Բանակցությունների ընթացքում քննարկվեցին միջազգային այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպիսիք են պայքարը ամբողջ աշխարհի խաղաղության համար...» (ՍՀ, 3/3—1965), այսպես նաև՝ ուրիշիք, ինչպիսին, ուրիշին. ցուցական դերանուններից՝ այսպիսին, այնպիսին, այսպիսիք, այդպիսիք, այնպիսիք և այլն։ Մի երկու օրինակ ևս. «Լուսանկարները, եթե հաջողվի այդպիսիք ստանալ, 50 անգամ խոշոր կլինեն... Մարսի լուսանկարներից» (ՀՍ, 3/3—1965)։ «Մարդկանց հարաբերությունները... պետք

է այնպիսիՙ լինեն, որ չլինասեն մեկը մյուսին, չվիրավորեն մարդու հոգին» (ՍՀ, 21/1—1966)։

Նախասովետական շրջանում սովորական չէր նաև ոչ դերանվան հոգնակի ներգոյականի կիրառությունը որպես հարաբերական, ինչպես՝ «Այժմ Հայաստանում գործում են երկարօրյա 23 դպրոց և 113 խումբ, որոնցում սովորում են ավելի քան 8,5 հազար երեխա» (ՍԵ, 22/2—1965)։

Ո՞վ հարցական դերանվան բացառական և գործիական հոլովների ումի՞ց, ումո՞վ[102] ձևերի փոխարեն այժմ գրական լեզուն օգտագործում է ումի՞ց, ումո՞վ։

Իմաստա-կիրառական փոփոխություններ են կրել նաև բոլոր, ամեն որոշյալ դերանունները. նախասովետական շրջանում բոլոր դերանունը լայնորեն տարածված է եղել «ամբողջ» նշանակությամբ՝ եզակի որոշյալի հետ, ինչպես՝ բոլոր ավարը (Րաֆ. 10, 211), բոլոր ուշադրությունը (ՆԴ, 211), բոլոր իշխանությունը (ՎՏ, ԵԺ, 2, 361), բոլոր մարդկությունը (ՎՏ, ԵԺ, 2, 215), բոլոր եղեւությունը (Շիրվ., 165)։

Ամեն դերանունը առաջներում կիրառվել է նաև «բոլոր» նշանակությամբ՝ հոգնակի որոշյալի հետ. օրինակներ՝ «ամեն ասիական քաղաքներում» (Րաֆ., 8, 482), «ամեն երկրները» (Րաֆ., 8, 317), «նույնիսկ՝ ամեն մի դժերից» (Րաֆ., 51), ամեն գաղափարներ (Րաֆ., 175)։

Լեզվի զարգացման ներկա փուլում անսովոր են ոչինչ ժխտական դերանվան որոշիչային կիրառությունները, ինչպես՝ «ոչինչ առանձին բան» (Շիրվ., 279)։ Անշուշտ պատահական կիրառություն է հետևյալը՝ նույն նշանակությամբ. «Ոչինչ լավ բան չի խոստանում» (ՍԵ, 27/6—1965)։ Այժմ քիչ անսովոր է նաև ոչ մի դերանվան «որոշակի» նշանակությամբ գործածությունը, որ հանդիպում ենք հների մոտ (նա ինձ ոչ մի բան չասաց)։ Հնացած են նաև բոլոր և ամեն դերանունների հետևյալ կիրառությունները. «Նրա դեմքը կորցրել էր բոլորը, ինչ որ բնական էր ու մարդկային» (Շիրվ., 378), «Խայտառակ դեպքը հայտնի էր ամենին» (փոխ.՝ բոլորին, Շիրվ., 167)։

Այժմ մերժված է լեզվից իրար փոխադարձ դերանվան իրարու ձևը, որ երբեմն հանդիպում ենք նախասովետական շրջանի հեղինակների մոտ, ինչպես «իրարու հետ» (Շիրվ., 89), «ատամները աճից զարկվում էին իրարու» (Շիրվ., 380), «իրարու հասկացող»

---

[102] Տե՛ս Մ. Աբեղյան, էջ 160։

(Ծիրվ., 372) և այլն: Լեզվի զարգացման ներկա շրջանի համար սխալ պետք է համարել համանման հետևյալ գործածությունը՝ «Երակները... հատում են իրարու» (ԵԵ, 6/7—1965):

Հետաքրքրական փոփոխություն է կատարվել նա, նրանք դերանունների գործածության մեջ: Նախասովետական շրջանում այս դերանունները ազատորեն կարող էին հանդես գալ իր ցույց տվող կրող խնդրի դերով, ինչպես. «Դուք մեծ ծառայություն արած կլինեք հայոց գրականությանը, տպագրելով նրան» (Րաֆ., 10, 607): «—Ձեռքդ դիր ճակատիս վրա, շփի՛ր նրան, շա՛տ շփիր» (Րաֆ., 139): «...Վերադարձիր այժմեն իսկ, քանի Ոստիկանը բացակա է Դվինից և քանի իմ զորքերը չեն պաշարել նրան» (Մուր., 342): «Թող փիլիսոփաները տեսականորեն վճռեն դիլեմման, բայց Սըմբատն անզոր է նրան վճռելու» (Ծիրվ., 254): «Ով որ մի անգամ տեսել է այդ դեմքը, նա երբեք չի մոռանալ նրան» (ՎՏ, ԵԺ, 2, 370):

Այլ է մեր օրերում օգտագործված հետևյալ կիրառությունը, որ պարզապես անձի առման արդյունք է: «Հիմա ուրիշ է մեր քաղաքը, այն իսկապես որ քաղաք է՝ մեր ժամանակների հասկացողությամբ. մենք էլի առաջվա նման սիրում ենք նրան» (ԵԵ, 4/12—1965):

Այսպիսով, ներկա փուլում նրան դերանունը կարող է օգտագործվել միայն անձի առումով՝ ուղիղ կամ անուղղակի (տրական հոլովով) խնդրի դերով. իր ցույց տալու դեպքում ուղիղ խնդիրը այն ցուցականով է ձևավորվում:

Նույնպիսի իմաստա-կիրառական փոփոխություն է կրել նաև նրանք դերանունը, որ առաջներում օգտագործվում էր նաև իրի առումով: Հատկապես նկատելի է նրանց ձևի գործածությունը ուղիղ խնդրի դերով, որ այժմ փոխարինված է դրանք դերանվամբ. օրինակներ՝ «Հանցանքները շատ են, նրանց (այժմ՝ դրանք) թվել չեմ կարող» (Մուր., 401): «Քո խոսքերով դու այլևս չես նորոգիլ իմ ցավերը, այլ գուցե մեղմես նրանց» (այժմ՝ դրանք— Մուր., 26):

Հաճախ էլ այս կիրառությամբ օգտագործվում էր դրանց ձևը, ինչպես՝ «Ինչո՞ւ անպատվում եք սուրն ու երկաթը: Դե՛ն ձգեցեք դրանց» (այժմ՝ դրանք— Մուր., 270):

Փոփոխությունը երկու կարգի է. նախ՝ ներկայումս գործող նորմաների համաձայն իրի դեպքում պետք է օգտագործվեն այդ դերանունների ուղղականաձև հայցականները և ոչ տրականաձև, ինչպես վերի օրինակներում են, և երկրորդ՝ նրանք դերանունը իրի դեպքում այժմ ընդունված է փոխարինել դրանք դերանվամբ. բե-

բենք մի օրինակ՝ «Բայց հաջորդ երկու տարիներում ծավալվեց լարված պայքար, և շատ հանդիպումների ելքը կվճռվի դրանք շարունակելուց հետո» (ՍՍ, 27/3—1964)։

Համանման փոփոխություն է կրել նաև որոնք հարաբերական դերանունը, որ նախասովետական շրջանում կարող էր իր ցույց տալու դեպքում էլ տրականաձև հայցականով գործածվել, ինչպես՝ «Երկու կողմից բարձրանում էին Դարվա լեռնալանջերը, որոնց (այժմ որոնք) անմիջապես բռնած էին սյունեցիք» (Մուր., 256)։

Դեպի կապը, որ անձ ցույց տվող գոյականների դեպքում ուղղականաձև հայցական է պահանջում (դեպի երեխան), արդեն նա, նրանք դերանունների դեպքում էլ է ուղղականաձև հայցական պահանջում (ի տարբերություն առաջին և երկրորդ դեմքի մյուս անձնական դերանունների՝ դեպի ինձ, դեպի քեզ). ուստի այժմ քիչ խորթ է հնչում Ա. Իսահակյանի մոտ հանդիպող հետևյալ օրինակը՝ «Միտս լցվում է անհուն սիրով դեպի նրանց» (ԱԻ, ԱԷ, 283)։

Ավելորդ չէ նշել, որ ներկա փուլում սա, դա, սրանք, դրանք դերանունները գերազանցապես իրի առումով են գործածվում, իսկ անձի առումով գործածվելիս էլ արհամարհական կամ անարգական երանգ են արտահայտում (օրինակ՝ սրան կանչիր, դրան հեռացրու և այլն)։ Այս երևույթը ավելի ու ավելի է ընդգծվում։

Դերանվանական հոդեր. Լեզվի զարգացման սովետական փուլում ճշտվեցին որոշիչ հոդի կիրառության շատ դեպքեր, որ անցյալներում որոշակի չէին։ Նշենք մի քանի դեպքեր.

Նախասովետական, հատկապես անցյալ դարի գրական լեզվում գոյականը հաճախ ստանում էր ն որոշիչ հոդը, որ հին հայերենի ազդեցության արդյունք էր. օրինակներ՝ Այստեղ մրցում էին եկեղեցու և պետության միմյանց հակառակ շահերն: «Այստեղ մրցում էին հոգևոր և մարմնավոր իշխանություններն» (Րաֆ., 192)։ «Տեղի ունեցավ կատաղի ընդհարումն» (Մուր., 434)։ «Նրա փափագն շուտով կատարվեց» (Շիրվ., 178)։ «Ինչո՞վ կբացատրես այս հանելուկն, իմ սիրուն փիլիսոփա» (ՆԴ, 353)։ «Սիրում եմ մեղրամոմի դժգույն լույսն, խունկի հոտը» (ՆԴ, 354)։ Հարկ է նշել, որ նախասովետական շրջանում հաճախ խուսափում էին -ություն վերջածանցով վերջավորվող գոյականների տրական հոլովը որոշիչ հոդով օգտագործել, ինչպես՝ «Նրանց ուրախության մասնակցեցին բոլոր իշխանները» (Մուր., 447)։ «Հայոց իշխանները... փութացին Երազգավորս՝ ներկա լինելու թագավորի հուղարկավորու-

րյան» (Մուր., 402)։ «Հրավիրում են մասնակցելու խոսակցության» (ԱՊ, 18)։

Այժմ հիշյալ գոյականների տրականով ձևերը որոշիչ հոդով են կիրառվում։

Գուցե հանգ ու չափի համար է դարձյալ, սակայն նախասովետական շրջանի չափածոյում հաճախ հանդիպում ենք որոշյալ գոյականների անհոդ կիրառությունների. օրինակ՝ «Ողբում էր անբախտ յուր նախատագիր» (ՀՀՆ, 37)։ «Արտավա՛զդ, վերջ չունի հոգուդ տատապանք» (83)։ «Բայց դու մի հիշիր իմ դառն վիճակ» (86)։ «Նա հարավ կերթա, հյուսիս կթողնե, Շատ բան կտեսնե կովկասյան կողմեր» (Սմբատ Շահազիզ, Երկեր, 1947, էջ 159)։

Ներկա շրջանում, անշուշտ ավելի նվազ չափով, չափածոյում երբեմն հանդիպում ենք անհոդ կիրառությունների, ինչպես՝ «Այսօր ձեր տուն մեծ խնջույք կա» (ԱԻ, ԱԷ, 45)։ «Կերթամ յարիս տուն» (ՇՔՀ, 6)։ Անշուշտ մայրենի բարբառով (Վանի) են պայմանավորված Նաիրի Զարյանի մոտ հանդիպող որոշիչ հոդի սխալ կիրառությունները. «Հեղեղը հսկայական ծառը շպրտել էր կամուրջի մեջտեղ» («Հացավան», էջ 255)։

Ժողովրդական-խոսակցական լեզվի ազդեցության արդյունք է խնդրի պաշտոն ունեցող անորոշ դերբայի վրա որոշիչ հոդ դնելը, ինչպես՝ «Միստր Բրոնսոնը դադարեց իր քարտուղարին թելադրելը և շրջվեց» (ՋԼ, ԵԺ, 1, 686)։ «Նա շարունակեց աշխատելը»։

Ժամանակակից հայերենում ուղևորման հայցականը կամ շարժում, տեղափոխություն ցույց տվող բայերի հայցական հոլովով տեղի պարագան ստիճանաբար սկսում է հանդես գալ անհոդ գործածությամբ նաև այն դեպքերում, երբ որոշիչ կամ հատկացուցիչ ունեն, այսինքն որտեղ հոդի գործածությունը պարտադիր է. օրինակ՝ «Այդ երկիր ծովային հետևակի ստորաբաժանումներ ուղարկելուց անմիջապես հետո...» (ՍՍ, 18/3—1965)։ «Սովետական գինվորական պատվիրակությունը երեկ առավոտյան այցելեց Փարիզից 60 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մո քաղաքի գերեզմանատուն, որտեղ թաղված են ռուս զինվորներ» (ՍՍ, 11/5—1965)։ «...Թերթը գրել է Արևմտյան Եվրոպայի երկրներ ամերիկյան արդյունաբերա-ֆինանսական մոնոպոլիաների ներթափանցման մասին» (ՍՍ, 18/3—1965)։

Այս երևույթը մասամբ արդյունք է տեղի հատուկ անունների անհոդ գործածության՝ նման բայերի հետ։

Անշուշտ նախասովետական շրջանի համար էլ բնորոշ չէին

որոշիչ հոդի գործածությունները հետևյալ օրինակներում. «Պարսպի վրա եղողները թույլ չէին տալիս ոչ ոքին՝ պարսպի տակ գործելու» (Մուր., 424)։ «Այդ միջոցին փոքրիկ երիտասարդը ձեռքը տարավ դեպի արծաթյա քամարը, որից քարշ էր ընկած մի կարճ սուսերը» (Րաֆ., 79)։

Հետաքրքրական է ը հոդի մի կիրառություն, որը ուրվագծվեց և որոշակի դարձավ վերջին մի քանի տասնամյակներում. դա որոշիչ հոդի գործածությամբ ամբողջի, բոլորի գաղափար ակնարկելն է։ Համեմատիր հետևյալ օրինակները.

Ժողովին մասնակցում էին կառավարության անդամները։
Ժողովին մասնակցում էին կառավարության անդամներ։

Կամ՝

Նիստին ներկա էին հիմնարկի ղեկավար աշխատողները։
Նիստին ներկա էին հիմնարկի ղեկավար աշխատողներ։

Ավելորդ է ասել, որ որոշիչ հոդի կիրառությամբ ակնարկվում են բոլոր անդամների և աշխատողների մասնակցությունը կամ ներկայությունը, անհոդ կիրառությամբ՝ ոչ բոլորի մասնակցությունը կամ ներկայությունը։ Անորոշ առումով կարծես յուրօրինակ մասնական ենթակա է դրսևորվում։

6. ԱԾԱԿԱՆՆԵՐ

Քննարկվող շրջանում նկատելի է ածականների փոխանվանական կիրառությունների լայն տարածումը. խոսքը ոչ թե փոխանուն ածականների այն սովորական կիրառությունների մասին է (օրինակ՝ ես ունեմ սև և կարմիր մատիտներ. կարմիրը ավելի կարճ է), որ նախասովետական շրջանին էլ էր հատուկ, այլ այն կիրառությունների մասին, երբ այդ բովով անցնելիս ածականներն արդեն ձեռք են բերում գոյականի խոսքի մասային արժեք, և նրանցից շատերը անկախորեն՝ առանց կոնտեքստից կախման մեջ լինելու և նույնիսկ առանց փոխանուններին հատուկ հոդի, սկսում են հանդես գալ նաև որպես գոյական։ Գոյականական համակարգի հարստացման այս նոր եղանակը ազատում է մեզ երկարաբանությունից և հնարավորություն տալիս անհրաժեշտության դեպքում լեզուն համալրել նոր նշանակություններ արտահայտող գոյականներով։ Մենք չենք կարող ասել, որ այս երևույթը բացակայել է նախասովետական շրջանում (օրինակ՝ գուցե այդ շրջանից է լու-

լուսանկար պատկեր *կապակցությունից առաջացած* լուսանկար *գոյականը կամ* Երևան քաղաքից՝ Երևան *գոյականը և այլն), սակայն փոխանունների հիշյալ կիրառությունները մեծ թափ ու ծավալ ստացան հատկապես վերջին մի քանի տասնամյակներում. օրինակ՝* լուսամփոփ *լամպ*—լուսամփոփ, բեռնատար *ավտոմեքենա*—բեռնատար. մատնաչափ *հաց*—մատնաչափ. համաճարակ *հիվանդություն*—համաճարակ. վերադաս *մարմին*—վերադաս, տնամերձ *հողամաս*—տնամերձ *և այլն:*

Այսպես տարածվել են նաև կուսակցական, պարտիական, կոլտնտեսական, սովխոզական, հարվածային *և այլն: Նկատելի է, որ այս ձևերից շատերը չեն անցել* որոշիչ-որոշյալ *կառուցվածքի բովով (ասենք՝* կոլտնտեսական աշխատող, *որից հետո տարածվեր կամ առաջանար* կոլտնտեսական *գոյականը). որոշ գոյականների համար այդ պրոցեսը հենց ռուսերենում է կատարվել, իսկ մենք պատրաստի գոյականն ենք վերցրել: Կարծում ենք, որ այս ձևով է տարածվել մեզ մոտ նաև* հավաքական *գոյականը (ՍՍՀՄ ֆուտբոլի* հավաքականը *մեկնեց Բրազիլիա), որ անմիջականորեն թարգմանվել է* Сборная СССР по футболу *կառուցվածքից: Այստեղ նշանակություն չունի այն, որ թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում կարող ենք հանդիպել նաև (ՍՍՀՄ ֆուտբոլի)* հավաքական թիմը *որոշիչ-որոշյալ կապակցությունը: Կարևորն այն է, որ մենք ռուսերենից պատրաստի, արդեն գոյականացած փոխանուններ ենք թարգմանում և օգտագործում:*

Ավելորդ է անշուշտ նշել, որ փոխանվանական կիրառությունների մեծ մասում ածականները չեն վերածվում իմաստային անկախություն ձեռք բերած գոյականների, ինչպես՝ «ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և սովետական կառավարության շնորհավորականը» *(ՍՀ, 25/3—1965),* «Երրորդ միջազգայինը» *(ՀԳ 24/1—1965) և այլն: Սակայն շատ դեպքերում նկատում ենք, որ փոխանունը գոյականանալու ձգտում է ցուցաբերում, ինչպես՝* «Կոնգրեսականի *խոստովանությունը» (ՍՍ, 1/1—1965): «Սալամը շատ էր կապված ագայի հետ: Նա այժմ չկա, բանտում տանջամահ են արել: Ինձ մի քանի օր առաջ պատմեցին* մանրամասները» *(Ավ., 1/1—1965):*

Լեզվի զարգացման ներկա շրջանում նկատելի է նաև մեկ ուրիշ միտում, որից դեռ 1912 թվականին զգուշանում էր Մ. Աբեղյանը. «Վերջին ժամանակներս որակական ածականներից բար, պես *և մանավանդ* օրեն *բառերով բարդվում են նոր մակբայներ, որոնք*

խորթ են հայերենի համար։ Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ ամեն ածական եթե կարելի է անփոփոխ իբրև մակբայ գործածել, պետք է այդպես ևս գործածել, առանց կերպով բառի և առանց օրենք բառով բարդելու. օրինակ՝ «Նա քաջ կռվեց»։ «Խորձիկների հետ մանուկներին այդպես անմիտ չեն վարվում» («Հովիվ», 1910, № 9)։ «Կը տեսնենք զարմանալի ծանոթ պատկերը, որ անհուն կը զվարճացնէ մեզ բոլորիս» («Մշակ», 1909, № 46։) «Այո՛, Լևոն, հիանալի երգեց» (Շիրվ., Արտ.)։ Նա սարսափելի վախեցավ, փոխանակ՝ նա քաջ կերպով կամ քաջորեն կռվեց, նա սարսափելի կերպով կամ սարսափելիորեն վախեցավ, անմտորեն վարվել, անհունորեն զվարճացնել, հիանալի կերպով, հիանալիորեն երգեց» («Աշխ. շար.», էջ 122)։

Այժմ հենց Մ. Աբեղյանի կողմից չհանձնարարվող մակբայներն են ավելի շատ գործածվում, քան ածականական ձևերը. բոլոր դեպքերում ավելի թարգմանական, սակայն նաև մայրենի գրականության մեջ շարունակվում է հնարավորության դեպքում մակբայը ձևաբանորեն ածականից սահմանազատելու և տարբերակելու միտումը։

Երբեմն ռուսերենից փոխառյալ որոշ բառեր փոխառու լեզվում ունեցած իրենց շարահյուսական դերով մեխանիկորեն օգտագործվել են ժամանակակից հայերենում, ստեղծելով մեր լեզվին խորթ կապակցություններ, ինչպես՝ ռադիո և հեռուստատեսային ծրագրեր. «Նկատի ունենալով հիդրո և ջերմաէլեկտրատեխնիկական արդյունաբերական կառույցների կարևոր նշանակությունը» (Ավ., 23/3—1965) և այլն։ Ինչպես գիտենք, ածականները սովորաբար փոխ չեն առնվում, սակայն վերջին շրջանում ռուսերենի միջնորդությամբ տարածվեցին ռեզոլյուցիոն, ագիտացիոն, ամբուլատոր (բուժում) և այլ ածականներ։

Գերադրականի գույն մասնիկը, որ նախասովետական շրջանում էլ կենսունակ չէր, սկսեց ավելի ևս իր դիրքերը զիջել և հանդես գալ միմիայն որոշակի բառերի հետ՝ նույնիսկ հաճախ զրկվելով գերադրականի բուն նշանակությունից և հանդես գալով երբեմն բաղդատական աստիճանի արժեքով։ Այժմ ավելի հաճախ այն հանդես է գալիս լավագույն, գերագույն, մերձավորագույն, խոշորագույն, մեծագույն, նորագույն և նման մի քանի բառերի հետ։ Գերադրական ամենա մասնիկը, ընդհակառակը, խիստ կենսունակ է և կարող է հանդես գալ գրեթե բոլոր որակական ածականների և նույնիսկ հարաբերականների հետ։ Բայց արդեն ծայրահեղության

աստիճանի է հասնում նրա կիրառությունը հատկանիշ արտահայտող բայական այնպիսի հարադրության հետ, ինչպիսին աչքի ընկնող բայա-խնդրային կապակցությունն է, օրինակ՝ ամենաաչքիընկնող տեղում (ԴԱ, 678). Իհարկե, այս դեպքում հարադրությունը չէր կարելի անջատ գրությամբ ներկայացնել։

Հենց գույն մասնիկի իմաստի թուլացումն է պատճառը, որ վերջերս սկսեցին տարածվել գերադրականի կրկնակի մասնիկներով ձևեր (ամենա...գույն), ինչպես՝ ամենաբարձրագույն, ամենալավագույն, ամենաթեթևագույն (բռնցքամարտիկի ամենացածր քաշի համար, որին հաջորդում է թեթևագույն քաշը). գործածական են նաև ամենավատթարագույն, ամենակարճագույն, ամենադառնագույն, ամենաազնվագույն և նման ձևեր։ Բացառված չէ այն ենթադրությունը, որ այս ձևերից մի քանիսը կազմված լինեն ռուսերենի անմիջական ազդեցությամբ. գոնե այդպես է սպորտային ամենաթեթևագույն կազմությունը, որ ռուսերենի наилегчайший բառի թարգմանությունն է. համեմատիր նաև наилучший.

7. ԹՎԱԿԱՆՆԵՐ

Լեզվի զարգացման սովետական փուլում, ինչպես և կարելի էր սպասել, ճշտվեց և կայունացավ քանակական թվականների ուղղագրությունը, որ նախասովետական շրջանում միասնական չէր. այսպես՝ յոթ, ութ թվականները հանդիպում էին նաև յոթը, յոթն, ութը, ութն ձևերով (խոսքը չի վերաբերում ժամ գոյականի հետ ունեցած նրանց կիրառություններին՝ ժամը յոթն էր, ութն էր և այլն), ու-ով են գործածվել հիմնականում տասնումեկ, տասնուչորս, տասնուհինգ, տասնուվեց, տասնույոթ, տասնուինը թվականները (որոնք հաճախ հանդիպում են նաև և-ով, ինչպես՝ տասնևութ (Րաֆ., 26), քսան, երեսուն, քառասուն և այլ թվականների բոլոր բարդ ձևերը, ինչպես՝ քսանումեկ, քսանուչորս, քսանուերեք (Շիրվ.), վաթսունուհինգ (անդ., էջ 7) և այլն. այսպես նաև՝ նրանցից կազմված դասականները՝ տասնումեկերորդ, տասնուհինգերորդ[103], տասնուիններորդ (Շիրվ., 7)։ Նույնիսկ 1917 թ. «Գործ» ամսագրում (№ 3) հանդիպում ենք տասնուհինգ (էջ 12), տասնուվեց (էջ 13), տասնուերեք (էջ 14) և այլն։ Այժմ 7 և 8 թվականները գործածվում են յոթ, ութ ձևերով, նշված մյուս բարդ թվականները կազմվում

103 Տե՛ս Ս. Պալասանյան, էջ 131։

են առանց ու-ի կամ և-ի միջնորդության՝ տասնմեկ, տասնչորս, քսանհինգ և այլն։

Մեկ թվականը առաջներում հաճախակի հանդիպում էր մի ձևով՝ հատկապես փոխանվանական կիրառություններում, ինչպես՝ մին (Մուր., 7), ամեն մինը (13), մինին (277), փողոցներից մինում (Շիրվ., 413) և այլն։

Ինը թվականը, որ այժմ էլ ունի երկու ձև՝ ինը և ինն, առաջներում փոխանվանաբար գործածվելիս հանդիպում էր նաև ըննին ձևով (ՍԶ, ՏՄ, 1, 20)։

Քննարկվող փուլում հատկապես մեծ վարկ ստացավ կոտորակային թվականների գործածությունը՝ կապված ճշգրիտ գիտությունների զարգացման հետ։ Բազմապատկելիին թվականների փոխանվանական կիրառությունները, որոնց առավելությունը գիտա-տեխնիկական գրականության, հաշվետվությունների և թվերի հետ կապված գործերի մեջ անուրանալի է։

Սխալ են մեր օրերում երբեմն հանդիպող տասներորդ (փոխ.՝ տասներորդ) և ութներորդ (փոխ.՝ ութերորդ) ձևերը։

Ց. ՄԱԿԲԱՅՆԵՐ

Քննարկվող փուլում ժամանակակից հայերենը զգալիորեն հարստացավ -բար, -պես, -որեն ածանցներով կազմված մակբայներով։ Մեր նպատակից դուրս լինելով այս հարցի քննարկումը, բավարարվենք միայն մի քանի օրինակներով. կոմունիստաբար, լենինաբար. «Լենինաբար կազմակերպենք ընդունվող որոշումների կատարումը» (ՍՀ, 22/1—1965), աշակերտաբար, արմատավորապես, ֆինանսապես, գաղափարապես, քաղաքականապես, բոլշևիկորեն, կոմունիստորեն, կազմակերպորեն, գիտականորեն, տարածականորեն. «Հետագայում կշարունակվի այգու վերակառուցումը։ Այն կմեծանա տարածականորեն և կմիանա Կիրովի անվան մանկական զբոսայգուն» (ԵԵ, 24/3—1965) և այլն։

Ինչպես գիտենք, միայն սահմանափակ թվով ձևի մակբայներ կարող են գերադրական աստիճանով հանդես գալ, սակայն անպայման հոդով և նախադասության որոշակի կառուցվածքներում[104]. օրինակ՝ ամենաբարձրը նա է խոսում. այսպես նաև ամե–

104 Տե՛ս Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1965, 225։

նացածրը, ամենակամացը և այլն։ Սա յուրօրինակ կիսափոխանվանական, եթե կարելի է այդպես ասել, գործածություն է (համեմատիր նաև՝ ամենավերջինը հատով երրորդին)։ Նկատելի է սակայն, որ վերջերս ունեն ածանցով կազմված մակբայները սկսում են հանդես գալ գերադրական աստիճանով՝ բուն մակբայական գործածությամբ, ինչպես՝ «Ավելորդ չենք համարում մի փոքր ընդարձակ քաղվածքներ մեջ բերել գաղտնի խորհրդակցություններում մարդասպան հռետորների ճառերից, որտեղ ամենացինիկորեն հայ ժողովրդի բնաջնջման մասին էր խոսվում» (Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, 237)։

Նշմարվում է մի նոր երևույթ, որ հատուկ չէր նախասովետական շրջանին. Ետ, առաջ մակբայները այժմ յուրահատուկ նախածանցի դեր են կատարում՝ կցվելով բայանուններին, ինչպես՝ ետքաշում, առաջքաշում, առաջխաղացում. «Զորքերի ետքաշումը շարունակվում է» (ՍՀ, 8/6—1965)։

Լեզվի զարգացման սովետական փուլում լայն տարածում ըստացան մակբայների ածականական կիրառությունները՝ բայանունների վրա. խոսքը ոչ թե մի քանի մասնավոր դեպքերի մասին է, ինչպես՝ վերստին հանդիպում, կրկին հիշեցում և այլն, այլ այն մասին, որ լեզվում ստեղծվում է մի նոր օրինաչափություն, որով այս կամ այն բային լրացնող մակբայը (խոսքը հիմնականում ածանցավոր մակբայների մասին է (կարող է հիշյալ բայերից կազմըված բայանուններին էլ լրացնել. մեզ թվում է, որ այս երևույթի տարածումը մասամբ կապված է ռուսերենի համապատասխան կառուցվածքների հետ՝ թարգմանական ու լրագրային գրականության միջոցով. օրինակներ՝ «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության խորհրդի կոլեգիան մարտի 15-ին քննարկեց վառելիքի, էլեկտրական և ջերմային էներգիայի խնայողաբար ծախսման հարցը» (ՍՀ, 15/3—1965)։ «Սակայն այդ բառերի մեջ գործողության անմիջապես կատարման անսպասելիության իմաստը ավելի բնորոշ է...» (Ս. Աբրահամյան, Ժամ. հայերենի չթեքվող խոսքի մասերը, 1959, 88)։ «Ապրիլի 3-ին Հայոց-Ձորի Հիրձ գյուղում, իշխանի և նրա երեք ընկերների դավադրաբար սպանությամբ... վերջնականապես պարզվում է Ջևդեթի դիմակը» («Էջմիածին», 1965, Բ, Գ, Դ, 144)։ «Բայց ձեռքի տիրաբար մի շարժումով նա աղջկան ստիպեց լռել» (ՋԼ, ԵԺ, 3, 46)։

Այսպես նաև՝ իսպառ բնաջնջումից (ԳԹ, 3/3—1965), սենյակ-

ների հաճախակի օդափոխումը (ՍՀ, 5/2—1965), անարգել պարզացման մասին (ՍՀ, 28/8—1965), ավտոդողերի ժամանակին վերանորոգումով (ՍՆ, 24/2—1965)։

Զարգացման ներկա փուլում գործածությունից դուրս եկան նախասովետական շրջանում տարածված շատ մակբայներ և եղանակավորող բառեր, ինչպես՝ հակամայից (Րաֆ., 39), կարի (Րաֆ., 9, 23), հարկավ (Մուր., 40), այժմեն իսկ (342), անսպաս (329), հետի (336), նորեն (395), հանդիսաբար (471) և այլն։ Երբեմն նոր շրջանի պատմական վեպերում էլ են օգտագործվում այս մակբայներից մի քանիսը, սակայն սոսկ ոճական նպատակով։

Նկատելի է ինչ-որ անորոշ դերանվան մակբայական գործածության աշխուժացում, ինչպես՝ «Կանգնեցնում էր Ֆուրգոնը ծերունին, դժգոհ մրթմրթում էր ինչ-որ, բարձրացնում էր դիակը...» (ԳՄ, ՆՍ, 89)։

Հնացած են և այլևս չեն գործածվում փոքր բառի «բիչ» նշանակությամբ կիրառությունները, ինչպես՝ «Տաճկաստանցիք փոքր չօգտվեցին այդ մրցությունից» (Րաֆ., 9, 477)։

9. ԿԱՊԵՐ ԵՎ ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Սովետական շրջանում զգալիորեն համալրվել ու հարստացել նաև լեզվի կապական համակարգը[105]։ Լեզվի զարգացման նոր փուլում անհրաժեշտություն զգացվեց ստեղծելու, մշակելու կամ կատարելագործելու վարչա-դրասենյակային, իրավա-օրենսդրական, գիտա-տեխնիկական, հասարակական-քաղաքական ոլորտներին ու բնագավառներին սպասարկող լեզվա-ոճական ու արտահայտչական նոր միջոցներ։ Այս կապակցությամբ պահանջ զգացվեց կապական նոր հարաբերություններ արտահայտող բառերի. ճշտվեցին որոշ կապերի գործածությունները, տարածման ոլորտները, ոճական կիրառությունները. լեզվից դուրս մղվեցին որոշ հնացած կապեր, նրանց փոխարինեցին նորերը։ Անհրաժեշտություն զգացվեց կենդանացնելու կամ աշխուժացնելու գրաբարյան որոշ կապերի գործածությունները (ի, առ և այլն)։ Ծավալվող թարգմանական գրա-

105 Ժամանակակից հայերենի կապերի և կապական բառերի կիրառությունների մասին տե՛ս Ալ. Մարգարյան, Արդի հայերենի կապերը, Երևան, 1955, Վ. Առաքելյան. Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, Ս. Աբրահամյան. Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959։

կանությունը իր հետ բերեց կապական նոր բառեր ու կիրառություններ։ Կարճ ասած, տեղի ունեցավ կապական համակարգի հարմարեցում ու ծառայեցում լեզվի առջև կանգնած նոր խնդիրներին։ Զարմանալի չպետք է թվա, որ նկարագրված փոփոխությունները քիչ արտացոլվեցին գեղարվեստական գրականության լեզվում և հիմնականում վերաբերեցին գիտա-քաղաքական, վարչա-օրենսդրական, գիտա-տեխնիկական և հասարակական-քաղաքական ու հրապարակախոսության լեզվին։

Այժմ համառոտակի ներկայացնենք այդ փոփոխությունները.

Ա) Գործածությունից դուրս եկան վերա, քով(ը), վերաբերությամբ, վերաբերմամբ, ետ կապերն ու կապական բառերը, որոնք փոխարինվեցին վրա, մոտ, կողմ(ը), վերաբերյալ, հետո բառերով։

Վերա կապին հանդիպում ենք հյուսիսափայլյան շրջանից մինչև Թումանյան ու Իսահակյան. բերենք միայն մի օրինակ՝ «Հով սարերի վերա տեղ-տեղ» (ՀԹԵ, 1, 36)։ «Կրոնի վերաբերությամբ» (Րաֆ., 9, 447)։ «Այս ընտանիքի վերաբերմամբ» (Շիրվ., 205)։ «Հեղինակների վերաբերմամբ» (ՎՏ, ԵԺ, 2, 246)։ «Նամակն ստանալուց ետ» (Մուր., 121)։ «Քիչ ժամանակից ետ» (Մուր., 253)։ Զատ և չնայելով կապերը թեև երբեմն հանդիպում են մեր օրերում, սակայն սոսկ որպես անցյալի վերապրուկ. օրինակ՝ «Ժողովրդի պետքերը հողալուց զատ» (Մուր., 448). սակայն նաև Ա. Խանդաղյանի մոտ՝ «Ունենալուց զատ» (ԱԽ, ՄԱ, 461)։

Այժմ բերենք օրինակներ կապական կիրառություն ստացած կամ նման կիրառությունների աշխուժացում ապրած կապական բառերի.

Առընթեր— «Արևմտյան Բեռլինի դատարանին առընթեր դատախազությունը...» (ՍՀ, 23/2—1965)։ Նույնպիսի նոր աշխուժացած կապական կիրառություն ունի կից բառը։

Համաձայն— Թերթի հաղորդման համաձայն, գործակալության հաղորդման համաձայն, համաձայն քաղսովետի հրամանի։

Համապատասխան— «Երկրորդ համայնագրին համապատասխան, Սովետական Միությունը Հնդկաստան կգործուղի...» (ՍՀ)։

Ուղղությամբ— Այս, ինչպես նաև հոմանիշ գծով բառերի կապական կիրառությունները տարածվեցին հատկապես սովետական շրջանում. օրինակներ՝ «Բարելավելու ուղղությամբ» (ԵԵ, 10/2—1965)։ «Ապահովելու ուղղությամբ» (ՍՀ, 27/10—1964)։ «Կենսագործման ուղղությամբ» (ՍՀ, 5/1—1964)։ Նկատելի է, որ այս կապը հանդես է գալիս բացառապես անորոշ դերբայի կամ բայանունների

հետ (իհարկե, սեռական հոլովով) ի տարբերություն գծով *կապական բառի, որ կարող է և այլ գոյականների հետ կապվել։*

Կապակցությամբ— *«...Ագրեսիվ գործողությունների* կապակցությամբ... *ուղերձներ է հղել» (ՍՀ, 30/1—1966)։*

Կողմից— *«Մոսկվայի հայ ուսանողության* կողմից *դագաղին դրած էր մի արծաթյա պսակ» (ՎՏ, ԵԺ, 2, 208), «...Ամբողջ սովետական ժողովրդի* կողմից *ջերմ մարտական ողջույն հաղորդեց» (ՍՀ, 28/1—1966)։*

Նվիրված— *Նկատելի են մասնավորապես այս բառով կազմվող կապական կապակցության նոտագաս կիրառությունները, որ ռուսերենի ազդեցության արդյունք են. օրինակ՝ «Այսօր տեղի կունենա հանդիսավոր նիստ՝* նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-րդ տարեդարձին». *Հայերենին ավելի հարազատ է «Այսօր տեղի կունենա* Հայաստանում սովետական կարգերի հաստատման 45-րդ տարեդարձին նվիրված *նիստ»։*

Նպատակով— *Ներկա փուլում այս բառը սկսել է ավելի ու ավելի հաճախակի հանդես գալ* համար *կապի նշանակությամբ ու կիրառությամբ, ինչպես՝ «Ուսանողների հանգիստը հետաքրքիր ու բովանդակալից անցկացնելու* նպատակով» *(ԵԵ, 10/3—1965)։ «...Ինստիտուտի անդամների համար դասախոսություններ կարդալու* նպատակով» *(ԵԵ, 27/3—1964)։ Ինչ խոսք, որ* նպատակով *բառի կապական կիրառությունների աշխուժացման մեջ որոշ չափով դեր ունի նաև* համար *կապի կրկնությունից խուսափելու ոճական անհրաժեշտությունը (համեմատիր երկրորդ օրինակը)։*

Լեզվի զարգացման սովետական փուլում կապական կիրառություններ են ձեռք բերել կամ կապական կիրառությունների աշխուժացում են ստացել հետևյալ բառերը՝ հետևանքով, պատճառով, գործում, ասպարեզում, շուրջ(ը), դեպքում, ժամանակ, ընթացքում, ճանապարհով, ուղիով, միջոցով, ոգով, օգտին, հաշվին, բացառությամբ, սկսած, նայած, չնայած, զուգահեռ, զուգընթաց, հավասար, համահավասար, չհաշված և այլն։ Նկատելի է սակայն, որ թվարկված բառերը իրենց կապական կիրառությունների տեսակետից նույն հավասար աստիճանի վրա կանգնած չեն։ Ինչ խոսք, որ վերոհիշյալ բառերը առայժմ հանդես են գալիս հիմնականում իրենց խոսքի մասային հին նշանակություններով ու կիրառություններով և կապական դեր են կատարում միայն այն դեպքում, երբ այս կամ այն չափով վերանում են իրենց բուն նշանակությունից՝ արտահայտելով կապական հարաբերություններ։

Բավարարվենք մի քանի օրինակներով՝ «Կարծիքներ փոխանակել... Հրատապ պրոբլեմների շուրջ» (ՍՀ, 27/1—1965)։ «Վատ է վիճակը կադրերի տեխնիկական ուսուցման գործում» (ԵԵ, 4/11—1964)։ «Բարեկամության և բարիդրացիության ոգով» (ՍՀ, 25/3—1965)։ «Քվեարկելով ժողովրդական բլոկի թեկնածուների օգտին...» (Ավ., 25/3—1965)։ «Խանութում կատարված ստուգման ժամանակ» (ՍՀ, 23/1—1966)։ «Բայց և այնպես, նայած հանգամանքներին...» (ՀՁ, 27/1—1965)։

Ավելորդ չէ ասել, որ կապական համակարգում նկատվող փոփոխությունները վերաբերում են ոչ այնքան, գուցե ավելի ճիշտ կլինի ասել, ոչ թե ժամանակի, տարածական. ձևի, չափի հարաբերություն արտահայտող կապերին, այլ ավելի վերացական՝ վերաբերության, բացառման. հակառակ հիմունքի. հիմունքի ու պատճառի, նպատակի և նման նշանակություններ արտահայտող կապերին։ Դա հասկանալի է, քանի որ լեզվի զարգացման ներկայիս մակարդակը պահանջում է հենց նշված կապերի գործածությունը։

Ժամանակակից հայերենում զգալիորեն աշխուժացավ ի նախդիրը, որը, սակայն, կապական հարաբերություններ արտահայտելիս հիմնականում հանդես է գալիս իր կապի խնդրի հետ միասնաբար՝ «ի նշան բարեկամության» (ԵԵ, 20/4—1964), «ի զարգացումն ընդհանուր միութենական հիմունքների» (ՍՀ, 6/1—1964), «ի նշանավորումն Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի 20-ամյակի» (ՍՀ, 3/9—1965), «ի տարբերություն 1959 թ. նոյեմբերի ընտրությունների» (ՍՀ, 27/10—1964), «ի նշան բողոքի ընդդեմ թանկության աճի, ի պաշտպանություն քաղբանտարկյալներին ազատելու պահանջի» (ՍՀ, 10/3—1965), «ի կատարումն Տաշքենդի դեկլարացիայի» (ՍՀ, 14/1—1966), այսպես նաև՝ ի զարմանս, ի ցույց դնել, ի նպաստ, ի սպաս, ի դեմս և այլն։

Որոշ չափով վերակենդանացան նաև առ նախդրի կիրառությունները, հատկապես վարչա-գրասենյակային ոճում (առ 1-ը հունվարի, առ այն և այլն)։

Լեզվի զարգացման սովետական փուլում, հատկապես վերջին տասնամյակներում, սկսեցին տարածվել կապական մի քանի հարադրություններ, որոնք առաջներում չէին հանդիպում. օրինակ՝ «...Սայգոնի պատժիչների հետ համատեղ հակաժողովրդական պատերազմ են մղում» (ԵԵ, 18/3—1965)։ «Ընդհուպ մինչև ցարիզմի տապալումը» և այլն։

Հետաքրքրական է նշել, որ համաձայն և հակառակ կապերը

նախադաս կիրառվելիս ձգտում են որոշիչ հոդով խնդիր առնել, իսկ ետադաս կիրառվելիս՝ անհոդ. օրինակ՝ համաձայն գործող օրենքի. բայց գործող օրենքին համաձայն. հակառակ նրա կամքի, բայց նրա կամքին հակառակ: Նույն նշանակությունն են արտահայտում փոխանակ և փոխարեն կապերը, սակայն առաջինը միշտ նախադաս է կիրառվում, իսկ երկրորդը՝ ետադաս. օրինակ՝ թիմին բարոյական աջակցություն ցույց տալու փոխարեն, բայց փոխանակ թիմին բարոյական աջակցություն ցույց տալու:

Առաջ և առջև կապերը սկսում են կիրառական տարբերակում ստանալ. առաջ կապը այժմ աստիճանաբար ավելի սակավ է հանդես գալիս բուն տարածական հարաբերություն չարտահայտող կապակցություններում, ուր ավելի շատ գործածական է առջև կապը. օրինակ՝ «Սովխոզի ժողովրդական վերահսկիչներն իրենց առջև խնդիր են դրել...» (ՍՀ, 29/1—1966): «Հանդես են գալիս աշխատավորության առջև» (ՍՀ, 20/1—1965): «Միջնորդել ԳԱ նախագահության առջև...» և այլն: Այս հակումը նկատելի է հատկապես «Սովետական Հայաստան» օրաթերթում:

Մեր նպատակից դուրս է կապերի խնդրառության մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին խոսել (օրինակ՝ բացի կապը ներկայումս հազվադեպ է հայցական հոլովով խնդիր վերցնում, մինչդեռ նախասովետական լեզվում դա սովորական երևույթ էր): Հարկ ենք համարում սակայն նշել, որ կապերի և կապական բառերի ոչ ճիշտ կիրառությունները հազվադեպ չեն նաև մեր օրերում: Բերենք մի երկու օրինակ՝ «Ես, ինչպես քաղաքացի և քրիստոնյա, ամաչում եմ այդքան անբացատրելի ակտի համար» (ՍՀ, 4/2—1965). ինչպես գիտենք, այս բառը չի կարող փոխարինել որպես կապին մասնական բացահայտչի կապակցություններում: «Դիսերտացիայի հետ կարելի է ծանոթանալ...» (ՍՀ, 21/1—1966). երբ ծանոթանալ բայի խնդիրը իր է, այն պետք է տրական հոլովով օգտագործվի և ոչ թե հետ կապով: Շահագրգռվել բայը նկատմամբ կապով խնդիր չի կարող ընդունել, ինչպես հետևյալ օրինակում է՝ «...Կուբան շահագրգռված չէ հետագայում ևս ամերիկյան պետությունների կազմակերպություններում գտնվելու նկատմամբ» (ՍՀ, 16/2—1962):

Ավելորդ չենք համարում նշել, որ վերջին մի քանի տասնամյակներում ավելի ու ավելի լայն ծավալ են ստանում կապական ծավալուն կապակցությունները՝ հատկապես գոյականի լրացման դերում. օրինակ՝ «Անհրաժեշտ է վերանայել բաղային կոմիտեի

տերմինային բաժանման պարտականությունների և անելիքների վերաբերյալ *հարցերը» (ՍՆ, 3/3—1965)։*

Թարգմանական գրականության մեջ (լրագրային կամ հրապարակախոսական) այժմ նկատվում է կապերի ու կապական բառերի այնպիսի առատ գործածություն, նույնիսկ նույն նախադասության կառուցվածքում, որ ծանրանում է ոճը. օրինակ՝ «Իտալական ֆուտբոլի ֆեդերացիայի՝ դոպինգի դեմ *պայքարելու* մասին *հրատարակված որոշման* համաձայն, *Բերնարդինոյին պետք է ցմահ որակազրկեին» (ՀՁ, 11/4—1964)։*

10. ՇԱՂԿԱՊՆԵՐ

Լեզվի զարգացման սովետական փուլում զգալիորեն համալրվեց ու հարստացավ նաև շաղկապական համակարգը։

Նախ գործածությունից դուրս եկան անցյալում այս կամ այն չափով տարածված որոշ շաղկապներ, ինչպես՝ չնայելով որ, չնայելով, վասն զի, զի, որպես... նույնպես և, որպես,... այնպես էլ (և). որպես. *որոնք փոխարինվեցին* չնայած որ, չնայած, ինչպես... այնպես էլ, ինչպես... այնպես և, ինչպես *շաղկապներով. վերևում հիշված պատճառի շաղկապները ընդհանրապես դադարեցին օգտագործվելուց։ Ներկա փուլում ժամանակի նշանակություն չեն կարող արտահայտել* Խանի որ, այնինչ *շաղկապները, որոնցից առաջինը այժմ հանդես է գալիս միայն որպես պատճառի շաղկապ, իսկ երկրորդը՝ հակադրական։*

Բերենք մի երկու օրինակ՝ «Չնայելով *Բաղենյանի պարզ ու համառ նամակին, Շահյանին թվում էր, թե հենց իրենց հարաբերությունները չափազանց խճճվել են...» (ՆԴ, 231)։ «Ես շատ անգամ առիթ եմ ունեցել տեսնել* որպես *կաթոլիկ,* նույնպես *բողոքական հայերի հետ» (Րաֆ., 9, 477)։*

Քննարկվող շրջանում սկսեցին երևան գալ հակադրական-զուգադրական հարաբերություն արտահայտող բաղադրյալ շաղկապներ, որոնց կազմում հարաբերյալները ստորճանաբար ձուլվում են բուն շաղկապի հետ, ինչպես՝ այն ժամանակ, երբ..., այն դեպքում, երբ...:

Երե... ապա, ինչ վերաբերում է... ապա *շաղկապները ևս տարածում ստացան վերջին տասնամյակներում. օրինակներ՝ «Պատահում է, որ ցեղական լավագույն ցուլերի համար շատ ավելի բարձր գին են վճարում,* այն ժամանակ, երբ *միջակ կովն արժե 350—500*

դոլլար» (ԵԵ, 1957, № 190)։ «Եթե ըմբշամարտիկը դատավորի կանչից հետո չգա գորգի վրա, ապա նա ընդհանրապես զրկվում է մրցումներին մասնակցելուց, այն դեպքում, երբ առաջ նման պայմաններում ըմբշամարտիկին պարտություն էր հաշվվում» (ՀԹ, 27/2—1957)։ «Երբ խաղալու բոցավառ սերը Սիրանույշը ձեռք բերեց իր դեռահասության տարիներին... ապա հասունության շրջանում նրա մեջ արթնացավ գեղարվեստը» (ՍԳ, 1957, № 12, 37)[106]։

Ու շաղկապը սկսեց անհամեմատ ավելի հաճախ հանդես գալ բարդ նախադասության բաղադրիչ մասերի միջև, քան նախկինում, ուր այն գերազանցապես գործածվում էր համադաս անդամների կապակցման դերով։ Ճշտվեց նաև և, ու շաղկապների կիրառության մի դեպք ևս. նրանց համատեղ գործածության դեպքում և-ը ստանում է անջատող շաղկապի, իսկ ու-ն՝ միացնող շաղկապի նշանակություն[107]։ Ավելի տարածվեցին կրկնադիր շաղկապները, որոնցից ոչ...ոչ սկսեց հանդես գալ նաև ոչ...ոչ էլ ձևով։ Որպես նոր կիրառություն, կարելի է հիշել նաև էլ...էլ կրկնադիրը՝ հետևյալ բնույթի օրինակներում՝ «Նա ամեն ինչ կազմակերպում է. էլ կինո գնալ, էլ թատրոն, էլ հանդիպում, էլ զեկուցումներ» (Ավ., 15/11—1960)։ Տարածվեց մեկ...մեկ կրկնադիր շաղկապը, ավելի լայն գործածություն ստացան այլապես, միայն, միայն թե հակադրական շաղկապները։

Տարածվեցին երբ, որպեսզի շաղկապների կիրառությունները նաև բացատրական նշանակությամբ, ինչպես՝ «Ահա մի դեպք (իհարկե՝ ոչ եզակի), երբ ակնհայտը հրդեհի պատճառ է դառնում» (ԵԵ, 14/1—1959), «Զարմանալի և միանգամայն անհանդուրժելի է, երբ երեխաների համար նախատեսված դասագրքում... թույլ են տրվում լեզվա-ոճական սխալներ» (ԵԵ, 15/1—1959)։ «Սուրիկը խնդրեց, որպեսզի մենք էլ ներկա լինենք հավաքույթին». որպեսզի շաղկապի նշված, ինչպես նաև ենթակա, ուղիղ, ձևի պարագա երկրորդական նախադասությունների կապակցման դերով տարածված կիրառությունները ռուսերենի чтобы շաղկապի ազդեցության արդյունք են և խորթ են հայերենին։ Նոր են տարածվում նաև այն, որ շաղկապական հարադրության կիրառությունները, ինչպես՝ «Այն, որ նա այստեղ չէ, ես չեմ կասկածում»։ Ժամանակակից հայերենում որոշ հարաբերյալների և հարաբերականների ձուլմամբ բաղադրր-

106 Այս օրինակները քաղել ենք մեր «Շաղկապները ժամանակակից հայերենում» (Երևան, 1963) աշխատությունից, էջ 134, 139։

107 Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, 1948, էջ 184—185։

յալ նոր շաղկապներ կազմելու միտում է նկատվում, ինչպես՝ այն բանի համար, որ, այն պատճառով, որ, այն դեպքում, եթե, այնպես ինչպես, չնայած այն բանին որ, պայմանով որ և այլն (հակադրական այն ժամանակ, երբ, այն դեպքում, երբ շաղկապական հարադրությունների մասին արդեն խոսել ենք)։ Նկատելի է նաև այնքան որ, այնքան որքան, այնքանով որքանով (որ), որքանով (որ), այնքանով որ, որչափով որ շաղկապական հարադրությունների գործածությունը՝ պատճառի և հիմունքի նշանակություն արտահայտելու համար[108]։ Կապական կիրառությանը զուգահեռ սկսել է ավելի հաճախակի շաղկապական դերով հանդես գալ նախքան բառը։ Թեկուզ շաղկապով կապակցվող նախադասություններում ստորոգյալը սովորաբար ըղձական եղանակով է գործածվում, սակայն վերջերս նկատելի է սահմանականի կիրառության աշխուժացում՝ նույնիսկ հակադրական շաղկապների զուգադրությամբ, որով թեկուզ շաղկապը ստանում է թեև, թեպետ շաղկապների նշանակությունը. օրինակ՝ «Թեկուզ պարտեզը փոքր էր, ծառերը ծեր, մամռոտած փշակներով, բայց Ոսկանի համար աշխատանքն անպակաս էր» (ԱԲն, 432)։

Վերջերս ռուսերենի ազդեցությամբ տարածվում են եթե, որպեսզի, միայն թե շաղկապներով բարդ նախադասության այնպիսի սխալ կառուցվածքներ, որոնցում ստորադաս նախադասության մեջ դիմավոր բայի փոխարեն գործածվում է անորոշ դերբայը, ինչպես՝ «Արժե՞, արդյոք, նորից վատնել ահագին եռանդ ու ժամանակ, առողջություն փչացնել, որպեսզի նակատամարտ տալ 25 տարով փոքր մրցակցի հետ» (ՀՅ, 14/3—1961), «Հարկավոր է կալանավոր լինել, որպեսզի այդ հասկանալ» (ԽՁ, ԸԽ, 442)։ «Մաթեմատիկա... ես պատրաստ էի լեռներ շուռ տալ, Դաղբաշյան բառարան անգիր անել, փղեր կլլել, միայն թե գործ չունենալ այդ մաթեմատիկայի հետ» (ԳՄ, ԽՍ, 315)։ «Եթե նկատի ունենալ իմ խաղացած պարտիանները... ապա թերևս պետք է նշել» (ՀՅ, 20/1—1966)։

---

108 Ստորակետի առկայությունը հարաբերյալի և հարաբերականի միջև շատ անգամ ավանդաբար է պահպանվում. կարևորն այստեղ այն է, որ հարաբերյալը իր արտասանությամբ կամ արտաբերմամբ անջատվում է գլխավոր նախադասության կազմից (գրավոր խոսքում դա արտահայտվում է ստորակետով, որ դրվում է գլխավոր նախադասության և հարաբերյալի միջև), որով կորցնում է հարաբերյալի իր կախյալ շարահյուսական դերը՝ սերտ միասնություն կազմելով շաղկապական դեր կատարող հարաբերականի հետ։

Հարկ է վերջում նշել, որ լեզվի զարգացման սովետական փուլում նկատելիորեն ուրվագծվում և ճշտվում են որոշ շաղկապների կիրառությունները թե ոճական և թե գործածության ոլորտի (հրապարակախոսական, գեղարվեստական, գիտա-տեխնիկական, վարչա-օրենսդրական և այլն) տեսակետից։ Վերջին տասնամյակներում զգալիորեն աշխուժացան շաղկապների կիրառությունները լրագրային հոդվածների վերնագրերում։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲԵ— Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1955։
ԱԻ, ԱԷ— Ավետիք Իսահակյան, Արձակ էջեր, Երևան, 1963։
ԱԻ, ԸԵ— Ավետիք Իսահակյան, Ընտիր երկեր, Երևան—Մոսկվա, 1948։
ԱԽԱ— Աթաբեկ Խնկոյան, Առակներ, Թիֆլիս, 1917։
ԱՄ, ԵԴ— Ալեքսանդր Մորուա, Երեք Դյումա, Երևան, 1965։
ԱՊ— Արազի, Պատմվածքներ, Թիֆլիս, 1923։
ԳՄ, ԽՍ— Գուրգեն Մահարի, Երիտասարդության սեմին, Երևան, 1956։
ԴԱ— Ֆ. Մ. Դոստոևսկի, Ապուշը, Երևան, 1965։
ԵՉ, ԱԽ— Եղիշե Չարենց, Ամբոխները խելագարված, Թիֆլիս, 1919։
ԵՉԲ— Եղիշե Չարենց, Բանաստեղծություններ, Մոսկվա, 1917։
ԵՉ, ԵԺ — Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1922։
ԵՉ, ԸԵ— Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955։
ԵՍԹ— Երվանդ Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918 թթ., Երևան. 1964։
Իէ, ՓԱ, 1 (2—3)— Իլյա Էրենբուրգ, Փարիզի անկումը, հատ. 1, 2, 3, Երևան, 1944։
ՀԹԵ, 1— Հովհաննես Թումանյան, Երկեր, հատ. 1, Երևան, 1958։
ՀԹԵ, 2— Հովհաննես Թումանյան, Երկեր, հատ. 2, Երևան, 1958։
ՀԹ, ԵԺ, 2— Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1940։
ՀՀԵ— Հովհաննես Հովհաննիսյան, Երկեր, Երևան, 1959։
ՀՀ, ՀԵ— Հակոբ Հակոբյան, Հեղափոխական երգեր, Թիֆլիս, 1917։
ՀՀ, ՀՔԿ— Հակոբ Հակոբյան, Հիշատակին Քսանվեց կոմիսարների, Թիֆլիս, 1919։
ՀՍԱ— Հմայակ Սիրաս, Անահիտ, Երևան, 1964։
Մուր.— Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Երևան, 1957։
ՄՄ, ԵԺ— Միքայել Մանվելյան, Երկերի ժողովածու, հատ. 2, Թիֆլիս, 1917։
ՅՀ, ՔԶՇԱ— Յարոսլավ Հաշեկ, Քաջ զինվոր Շվեյկի արկածները, հատ. 2, Երևան, 1936։
ՆԴ— Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6 («Մահը»), Երևան, 1946։
ՆԶԵ, 1— Նաիրի Զարյան, Երկեր, հատ. 1, Երևան, 1945։
ՆԶ, ԵԺ— Նաիրի Զարյան, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1962։
ՇՔՀ— Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, Երևան, 1958։
Շիրվ.— Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4 («Քաոս»), Երևան, 1950։
ՋԼ, ԵԺ, 1 (2, 3)— Ջեկ Լոնդոն, Երկերի ժողովածու, հատ. 1, 2 և 3, Երևան, 1965։

ՍԶ, ՏՄ— Ստեփան Զորյան, Տխուր մարդիկ, հատ. 1. Թիֆլիս, 1918։
Սխ, ՄՍ— Սերո Խանզադյան, Մխիթար Սպարապետ, Երևան, 1964։
ՍԿ, ՔԴՔ— Սիլվա Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են, Երևան, 1964։
ՍՏՆ— Սողոմոն Տարոնցի, Նովելներ, Երևան 1962։
ՍԶՑ— Ստեփան Զորյան, Ցանկապատ (Պատմվածքներ, հատ. 2), 2-րդ հրատ., Երևան, 1962։
ՎԱՀ— Վահրամ Ալազան, Հրաբխապոեզիա, Երևան, 1923։
ՎՏ, ԵԺ, 2— Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1961։
ՎՏ, ԵԺ, 3— Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1963։
Րաֆ.— Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 7 («Սամվել»), Երևան, 1956։
Րաֆ., 8— Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 8, Երևան, 1963։
Րաֆ., 9— Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, Երևան, 1964։
Րաֆ., 10— Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1964։
ՖՎ, ՄԼՔՕ— Ֆրանց Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1965։

ԼՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐ

Ավ.— Ավանգարդ
ԳԹ— Գրական թերթ
ԵԵ— Երեկոյան Երևան
ՀՁ— Հայրենիքի ձայն
ՀՖ— Հայաստանի ֆիզկուլտուրնիկ
ՊԲՀ— Պատմա-բանասիրական հանդես
ՍԳ— Սովետական գրականություն
ՍՀ—Սովետական Հայաստան

Ռ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովետական շրջանում հայ ազգային լեզվի զարգացման գործում հիմնական դեր են կատարում երկու կարգի գործոններ, որոնցից մեկը հայոց լեզվի նկատմամբ ներքին է, իսկ մյուսը՝ արտաքին։ Արտաքին գործոնը մեր լեզվի զարգացման ներկա փուլի համար գերազանցապես ռուսաց լեզվի ազդեցությունն է։

Լեզվի շարահյուսական կառուցվածքի զարգացման վրա ներքին գործոնի համեմատությամբ արտաքին գործոնի ազդեցությունը չափազանց թույլ է։ Այս դրույթը առավել չափով վերաբերում է հայոց լեզվին, որը, ունենալով գրաբարի պես նախանմուշ, 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների մեր գեղարվեստական խոսքի վարպետների գրչի տակ քերականական ձևերի ու կապակցության միջոցների այնպիսի կատարելության հասավ, որ խորհրդային կարգերի հաստատման հենց առաջին օրերից համարյա բոլոր բնագավառներում կարողացավ գերազանց քննություն բռնել որպես պետականություն ստացած ժողովրդի հաղորդակցման միջոց։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր ազգային լեզվի զարգացման ներկա փուլում շարահյուսական կառուցվածքի մեջ նկատվող տեղաշարժները մեծ մասամբ իրենց ակունքներն ունեն նախախորհրդային շրջանի լեզվում։ Այդ բոլոր տեղաշարժներն էլ որպես զարգացման թույլ կամ համեմատաբար ուժեղ արտահայտված միտումներ իրենց զգալ են տալիս դեռևս 19-րդ դարի վերջերի հայ գրական լեզվում, իսկ զարգացման արդի փուլում նրանց մի մասը ներկայանում է որպես որոշակի ավարտի հասած

երևույթ, իսկ մյուս մասը տակավին գտնվում է լինելիության պրոցեսում։

Այս բոլոր դեպքերում շարահյուսական կառուցվածքում նկատվող տեղաշարժների համար վճռական և որոշիչը ներքին գործոնն է։ Իհարկե, արտաքին գործոնը ևս երբեմն որոշակի դեր է կատարում շարահյուսական կառուցվածքում նկատվող զարգացման որոշ միտումների ձևավորման գործում։ Սակայն արտաքին գործոնի դերը ավելի մեծ է ներքին գործոնի ազդեցությամբ առաջացած ու դրսևորված միտումներին ուղղություն տալու, նրանց հետագա տարածմանը նպաստելու կամ արգելք հանդիսանալու գործում։ Խորհրդային շրջանում հայ ազգային լեզվի շարահյուսական կառուցվածքում կատարված տեղաշարժները առաջին հերթին ընդգրկում են շարահյուսական կառուցվածքի այն բնագավառները, որոնք առավել սերտորեն են կապված կապակցվող բառերի իմաստի հետ և հաճախ կապակցվող բառերի իմաստափոխությանը արձագանքում են կապակցության փոփոխությամբ։ Այդպիսին է, օրինակ, բայիմաստի փոփոխության հետևանքով առաջացած խնդրառական փոփոխությունը։

Գիտության ու տեխնիկայի և հասարակական կյանքի զարգացման հետևանքով նոր հասկացությունների առաջացումը անպայմանորեն չի ենթադրում այդ հասկացությունները արտահայտող բառերի կապակցության նոր միջոցներ։ Սակայն հաճախ նոր առաջացած հասկացությունները ձևավորվում են ոչ թե առանձին բառերի, այլ բառերի զանազան շարահյուսական կապակցությունների միջոցով։ Այստեղից էլ բառակապակցության նոր ձևերի առաջացումը, որոշ պասիվ ձևերի ակտիվացումը, մի խոսքով՝ բառակապակցության բնագավառում կատարվող տեղաշարժները։

Մեր լեզվի զարգացման արդի փուլում փոփոխություններ են նկատվում նաև կապերի, ինչպես նաև մի շարք դերանունների շարահյուսական կիրառություններում և առանձին հոլովների որոշ կիրառական նշանակություններում։

Շարահյուսական կառուցվածքի զարգացումը հիմնականում ընթացել է կապակցության ձևերի քերականական իմաստների ճշտման, կոնկրետացման ու կայունացման, երկիմաստության վերացման, զույգ ձևերի ոճական, երբեմն նույնիսկ իմաստային տարբերակման ուղղությամբ։

2. ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԿԱՏՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարադասության բնագավառում տեղի ունեցած փոփոխություններից հատկանշական է հարցական և անուղղակի հարցական նախադասություններում բայի բաղադրյալ ժամանակով արտահայտված ստորոգյալի դերբայի և օժանդակ բայի դասավորությունը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի մեր գրական լեզվում հարցական և անուղղակի հարցական նախադասությունների բայի բաղադրյալ ժամանակով արտահայտված ստորոգյալի դերբայի և օժանդակ բայի շարադասությունը հարցական-հարաբերական բառից առաջ համեմատաբար ազատ էր, այսինքն՝ այդպիսի դեպքերում դերբայի և օժանդակ բայի շրջուն շարադասության կողքին չէր բացառվում նաև սովորական շարադասությունը՝ առանց շրջման. օրինակներ. «Ես տեսնում էի, թե որպիսի չարագուշակ թուխպ պըտըտվում է քո հայրենի երկրի վրա» (Րաֆ., 278): «Ի՞նչը ձանձրացրել էր սիրելի որդու լուսապայծառ ծաղկափթիթ կյանքը» (497): «Եթե այո, ինչո՞ւ ասում են, թե սիրո նույնիսկ դառնությունը հաճելի է» (Շիրվ., 286): «Շարահյուսությունը քերականության այն մասն է, որ սովորեցնում է, թե ինչպիսի բաղադրիչ մասերից և ինչպես կազմվում է խոսքը կամ նախադասությունը» (Մ. Աբեղյան. Աշխարհաբարի շարահյուսություն, էջ 1): Ինչպես հայտնի է, մեր օրերում այս կարգի նախադասությունների ստորոգյալի օժանդակ բայը գերազանցապես դրվում է դերբայից առաջ՝ սովորաբար անմիջապես հարելով հարցական-հարաբերական բառին, այսինքն՝ տեղի է ունենում դերբայի և օժանդակ բայի շրջում:

Ներկայիս նորմաների տեսակետից անսովոր է նաև օժանդակ բայի շարադասությունը ստորև բերվող օրինակներում. «Բայց սրտի և զգացմունքի դատողությունները խիստ հազիվ անգամ լինում են ուղիղ» (Րաֆ., 509): «Ես դեռ ոչ բոլորովին կազդուրվել եմ ճանապարհի հոգնածությունից...» (Րաֆ., 462):

Ինչպես կարելի է նկատել, նման կառուցվածքներում ևս այժմ գերազանցապես ընդունված է օժանդակ բայի շրջուն շարադասությունը: Որպես շարադասության բնագավառում կատարված քիչ թե շատ զգալի տեղաշարժ կարելի է նշել ետադաս որոշիչ դերբայական դարձվածի որոշ իմաստով աշխուժացող միտումը հատկապես լրագրային և հրապարակախոսական լեզվում՝ ռուսաց լեզվի ազդեցությամբ. օրինակ՝ «ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի որոշումը՝ ըն-

130—24

դունված 1964 թվականի փետրվարի 5-ին...» *(ՍՀ, 21/4—1964)*։ «*Հրապարակվեց կարևոր փաստաթուղթ*՝ նվիրված խաղաղության պաշտպանության շարժման ծավալմանը» *(ՍՀ, 21/4—1964)*։

Կարելի է նշել նաև մեր օրերում ետադաս հատկացուցիչի սահմանափակ կիրառությունները որոշ կայունացած բառակապակցություններում. «Օրգան ՀԿԿ Կենտկոմի...», «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք»։

Արդյունաբերական ու պարենային խանութներին, սրճարաններին պայմանական անուններ տալու կապակցությամբ վերջին ժամանակներում որոշ չափով աշխուժանում է սոսկ անվանողական դերով հանդես եկող ետադաս որոշիչի կիրառությունը, ինչպես՝ ունիվերմագ «Արաբկիր», գաստրոնոմ «Անուշ», սրճարան «Բարեկամություն» և այլն։

Նշելի է սակայն, որ և՛ ետադաս որոշիչ դերբայական դարձվածը, և՛ ետադաս հատկացուցիչը, և՛ ետադաս որոշիչը արդի հայերենում կարող են կիրառվել միայն այնպիսի դեպքերում, երբ նրանց գերադաս անդամը՝ որոշյալը կամ հատկացյալը, դրված է ուղիղ ձևով և իր հերթին չի ստորադասված մի այլ անդամի։ Օրինակ՝ «Տեղի ունեցավ երեկո՝ նվիրված բանաստեղծի ծննդյան հարյուրամյակին» նախադասության մեջ որոշիչ դերբայական դարձվածի ետադաս շարադասությունը հնարավոր է դարձել միայն շնորհիվ նրա որոշյալի (երեկո) ուղիղ ձևի։ Իսկ երբ այդ որոշյալը որպես մի այլ անդամի լրացում դնենք թեք ձևով, ապա անհրաժեշտ կլինի դերբայական դարձվածը դարձնել առաջադաս։ Այսպես՝ «Բանաստեղծին նվիրված երեկոյի բացմանը ներկա էին շատերը»։ Առանձնապես նշելի է գոյականների (մեծ մասամբ բայանուն գոյականների) խնդիրների նախադաս կիրառությունների հետզհետե աշխուժացումը։ Օրինակ՝ «Սվիտլիչնու մեթոդով *շաքարի ճակնդեղի* արտադրություն» *(ՍՀ, 25/4—1964)*։ «Հիվանդություններից *ու* վնասատուներից *բույսերի* պաշտպանության *միջոցներ*» *(Եր., 11/3—1964)*։

*Վկայված օրինակներում առկա են գոյականի առանց կապի, միայն հոլովով արտահայտված նախադաս խնդիրները։ Մեր ազգային լեզվի զարգացման արդի փուլում ավելի մեծ չափերով սկսում են տարածվել և իրենց կիրառությունների ոլորտները ընդարձակել կապով նախադաս խնդիրները գոյականների մոտ։ «*Կյանքի հետ *գիտա-հանրամատչելի պրոպագանդայի ամենասերտ* կապի *ան-*

հրաժեշտությունը...» (ՍՀ, 6/6—1964)։ «Խաղաղության համար պայքար»։ «Ապագայի նկատմամբ վախ» (Եր., 27/3—1964)։

Ժամանակակից հայերենի համար շարադասական տեսակետից բնորոշը և սովորականը նման դեպքերում գոյականի հետադաս խնդիրն է (և՛ կապով, և՛ առանց կապի), ինչպես. «Շաքարի ճակնդեղի արտադրություն Սվետլիչնու մեթոդով»։ «Բույսերի պաշտպանություն հիվանդություններից ու վնասատուներից»։ «Պայքար խաղաղության համար»։ «Վախ ապագայի նկատմամբ» և այլն։ Այս հարցում առկա է ռուսերենի անուղղակի ազդեցությունը։ Հայտնի է, որ ռուսերենը իր զարգացման արդի փուլում չափազանց հարուստ է և հետզհետե ավելի է հարստանում կապական-անվանական բառակապակցություններով, ինչպես՝ Задание на строительство, игры на первенство страны, библиотека на общественных началах, кукуруза на зерно, факты с цифрами, упор на индивидуальную работу, линия на мирное сосуществование, борьба в форме забастовок, операция на сердце *և այլն*[1]*։*

Ռուսերենի այս կարգի բառակապակցություններում լրացյալ գոյականը ազատ կերպով կարող է ենթարկվել հոլովական փոփոխության և բառահարաբերության մեջ մտնել նախադասության այլ անդամների հետ, ինչպես՝ борба за мир, *борьбы* за мир, *борьбе* за мир, *борьбу* за мир, *о борьбе* за мир, *այնինչ՝ հայերենում նույն կարգի բառակապակցությունների լրացյալ անդամը առաջադաս դիրքում մեծ մասամբ զրկվում է քերականական այդպիսի փոփոխության, հետևաբար նաև նախադասության այլ անդամների հետ բառահարաբերության մեջ մտնելու հնարավորությունից։ Այդ իսկ պատճառով հայերենը դիմում է գոյականի ու նրա խնդրի շարադասության փոփոխությանը՝ լեզվական արտահայտչական ավելի ընդարձակ հնարավորություններ ձեռք բերելու անհրաժեշտությունից։*

3. ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՂ ՁԵՎԵՐ

Բառակապակցության կառուցվածքում տեղի ունեցող տեղաշարժերից հիմնականում կարելի է նշել բառակապակցության իմաստային, ոճական, երբեմն ֆունկցիոնալ նոր խմբերի առաջացումը,

[1] *Տե՛ս Н. Ю. Шводова,* Об активных процессах в современном русском синтаксисе, „Вопросы языкознания", 1964, № 2, *էջ 4։*

բառակապակցության առկա ձևերի վերադասավորման՝ պարզեցման կամ բարդացման ուղիով նոր ձևերի գոյացումը, հաճախ նաև վաղուց գոյություն ունեցող և նոր առաջացած ձևերի, որպես շարահյուսական հոմանիշների, գոյակցությունը՝ որոշ դեպքերում այդ ձևերից մեկի ուժեղ կամ թույլ արտահայտված ակտիվացող միտումով։ Բացառված չէ նաև բառակապակցության այդպիսի զույգ ձևերի իմաստային ու ոճական, հազվադեպ դեպքերում նույնիսկ ֆունկցիոնալ տարբերակումը։ Անշուշտ, մեր օրերում բառակապակցության բնագավառում նոր ձևերի գոյացման, նրանց աշխուժացման ու տարածման, ինչպես նաև իմաստային ու ոճական նոր տարբերակների առանձնացման գործում մեծ է ռուսաց լեզվի ազդեցությունը։ Այնուամենայնիվ այս հարցում հիմնական և որոշող գործոնը պետք է համարել հայոց լեզվի շարահյուսական ներքին միջոցները։ Ուսումնասիրությունների ընթացքում մենք եկել ենք այն համոզման, որ ինչպես ընդհանրապես շարահյուսության, այնպես էլ բառակապակցության բնագավառում ներկայումս տեղի ունեցող տեղաշարժերի ճնշող մեծամասնության ակունքները կարելի է որոնել մեր լեզվի զարգացման նախախորհրդային շրջանում, որ բառակապակցության մեր օրերում աշխուժացող ձևերի զգալի մասը այս կամ այն ձևով կապվում է նախորդ շրջանի մեր լեզվական ավանդույթների հետ։

Ներկայումս տեղի է ունենում հայոց գրական լեզվի անվանական բառակապակցությունների զգալի աշխուժացում և ակտիվացում։

Անվանական բառակապակցության կառուցվածքում կատարվող փոփոխությունների, ինչպես նաև կառուցվածքային որոշ ձևերի աշխուժացման ու նոր ձևերի առաջացման գործում մեր գրական լեզվի զարգացման ներկա փուլում հսկայական դեր է կատարում բայանվան կիրառության աշխուժացումը գիտատեխնիկական, քաղաքական-հրապարակախոսական և լրագրային լեզվում։ Հանրահայտ է, որ բառակապակցության բնագավառում տեղի ունեցող տեղաշարժերի զգալի մասը բաժին է ընկնում գիտատեխնիկական, քաղաքական-հրապարակախոսական և լրագրային լեզվին։ Բառակապակցության կառուցվածքային նոր խմբերը հետզհետե կարող են ներթափանցել նաև գեղարվեստական գրականության մեջ։ Սակայն գեղարվեստական գրականության լեզուն, ավելի սերտորեն կապված լինելով լեզվի զարգացման նախորդ շրջանների ավանդույթներին, հիմնականում առավել պահպանողական է։ Այնինչ՝

լեզվի ֆունկցիոնալ այն բնագավառները, որոնք մեր բուռն զարգացող կյանքի հետ կապված են անմիջականորեն, դեպքերով ու հանգամանքներով, երևույթների բազմապիսի կապերով հարուստ մեր առօրյան արձանագրելիս չեն կարող բավարարվել գեղարվեստական գրականության «հանդարտ ու դյուրասահ» ոճով։ Հենց այստեղ է, որ ոճի հակիրճությունն ու սեղմությունը մղվում է առաջին պլանի վրա։

Ներկայումս մեր գրական լեզվում լայն տարածում են ստանում սեռական հոլովով այնպիսի գոյական որոշիչներ, որոնց իր հերթին նախորդում է որևէ ածական կամ թվական որոշիչ։ Օրինակ՝ «Լավ որակի ապրանք, տարբեր չափի ծածկոցներ, փոքր չափի առարկաներ» (Եր., 17/11—1964), «Վեցերորդ գումարման Գերագույն սովետ» (ՍՀ, 2/11—1964), «...Ամբողջ երկրագնդի բարի կամքի մարդիկ» (ՍՀ, 6/11—1964)։ «Կենցաղային անհրաժեշտության աշխատանքներ» (Ավ., 8/4—1965)։

Խոսքը վերաբերում է անվանական բառակապակցության այս ձևերի ոչ թե նոր երևույթ լինելուն, այլ նրանց անհամեմատ աշխուժացմանն ու հետզհետե իմաստային ու ոճական նորանոր ոլորտների ընդգրկմանը։

Քննարկվող կարգի բառակապակցությունների մի զգալի մասը որպես գիտատեխնիկական ու արտադրական կամ սպորտային տերմիններ, ռուսաց լեզվի շարահյուսական պատճենումներն են, ինչպես՝ կոմունիստական աշխատանքի բրիգադ, բարձր լարման հոսանք, բարձր հաճախականության հոսանք, սոցիալիստական համագործակցության երկրներ, բարձր արտադրողականության բրիգադ, ազատ ոճի լող, ամենաթեթև քաշի մարզիկ, թեթևագույն քաշի բռնցքամարտիկ, դասական ոճի ըմբշամարտ, հմուտ ձեռների խմբակ, միջին հեռավորության հրթիռներ և այլն։ Հենց բերված օրինակներից երևում է, որ նրանցից շատերը հետզհետե ձեռք են բերում կայուն կապակցությունների արժեք։ Բերված օրինակներից միաժամանակ երևում է, որ քննարկվող կարգի բառակապակցությունների մեծ մասում սեռականով լրացումը ունի ուղիղ խնդրային իմաստ։ Այդ իսկ պատճառով նման որոշ կապակցություններում առկա է լինում տեր բառը բայանվան ֆունկցիայով, որի մոտ բառակապակցության սեռականով լրացումը պարզ կերպով գիտակցվում է որպես խնդիր սեռական. հմմտ. «Բովանդակ աշխարհի բարի կամքի տեր մարդիկ» (ՍՀ, 21/4—1964)։

Ածական կամ թվական վերադրով սեռական որոշչի աշխուժա-

ցումն ու կիրառության ոլորտների ընդարձակումը տեղի է ունենում ոչ միայն ռուսաց լեզվից կատարվող շարահյուսական պատճենումների հետևանքով, այլև հենց մեր ազգային լեզվի անվանական բառակապակցության որոշ ետ զարգացող ձևերի հաշվին։ Մանուկ Աբեղյանը բերում է մեր լեզվի զարգացման նախասովետական շրջանին բնորոշ վերադրով ուղղական որոշիչի օրինակներ. հմմտ. «...Մի տեսակ գրիչ (միատեսակ). Նոր տեսակ երևույթ, ամեն տեսակ քաղաքականություն (ամենատեսակ)... Ոսկու գույն գինի (ոսկեգույն)։— Նա վարժվել է այդ ձև խոսակցությանը (Պռ.)։ Վերին աստիճան հիմարություն»[2]։

Փաստերը ցույց են տալիս, որ այս կարգի ուղղական որոշիչը, հետզհետե ետ զարգանալով, մեր օրերում դարձել է հնացած և անսովոր. նրա փոխարեն այժմ գործածական է վերադրով սեռական որոշիչը։

Շարադասության բաժնում ասվեց, որ հայոց լեզվի զարգացման արդի փուլում տարածվում է գոյականների առանց կապի և կապով խնդիրների առաջադաս կիրառությունը։ Նշվեց նաև, որ հայերենի համար ավելի օրինաչափական հանդիսացող գոյականի ետադաս խնդրի փոխարեն առաջադաս խնդրի կիրառումը բխում է լեզվական արտահայտչական հնարավորություններն ավելի ընդարձակելու անհրաժեշտությունից։

Այստեղ անհրաժեշտ է ավելացնել, որ շարադասական այդ փոփոխությունը իր հերթին ազդում է բառակապակցության բնույթի վրա։ Չնայած որ գոյականի և նրա ետադաս խնդրի միջև էլ քերականական տեսակետից գոյություն ունի որոշիչային հարաբերություն, բայց խնդրի առաջադաս դիրք գրավելը ավելի է ուժեղացնում այդ որոշիչային հարաբերությունը։ Օրինակ՝ «պայքար սոցիալիզմի համար» և «սոցիալիզմի համար պայքար» միայն շարադասությամբ տարբերվող բառակապակցություններից երկրորդում որոշիչային հարաբերությունը ավելի ուժեղ է, քանի որ այստեղ գոյականի կապով լրացումը միաժամանակ ընդունել է նաև որոշիչի շարադասություն։ Բառիս լայն իմաստով այդ որոշիչային քերականական հարաբերության ներսում առավել կամ նվազ չափով առկա են նպատակի, տարածական, վերաբերության, գործողության ձևի և այլ խնդրային ու պարագայական իմաստներ։

Իմաստային այդպիսի հարաբերությունը առավել ընդգծված

2 Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, 1965, էջ 408։

կերպով է հանդես գալիս այն դեպքում, երբ անվանական բառակապակցության գերադաս անդամը բայանուն է, որը, գոյականացած լինելով հանդերձ, հիմնականում պահպանում է բայի խնդրառական հատկանիշը. օրինակ՝ Հայկական ՍՍՌ կուրորտոլոգիայի և ֆիզիկական մեթոդներով բուժման ինստիտուտ: «Ֆիզիկական մեթոդներով բուժումը լայնորեն կիրառվում է բուժական կոմպլեքսում...» (Առողջ., 1961, № 6, էջ 9):

Բերված օրինակներում, ինչպես տեսնում ենք, «ֆիզիկական մեթոդներով բուժում» անվանական բառակապակցության գերադաս և ստորադաս բաղադրիչների միջև տրամաբանական տեսակետից առկա է գործողության ձևի պարագայական իմաստային հարաբերությունը: Սակայն, չնայած դրան, այդ նույն բաղադրիչների միջև եղած քերականական կապը ոչ այլ ինչ է, եթե ոչ որոշիչի և որոշյալի շարահյուսական հարաբերություն:

Ուստի միանգամայն նպատակահարմար է անվանական բառակապակցության այդպիսի ստորադաս բաղադրիչները անվանել խնդրային կամ պարագայական որոշիչներ[3]:

Պարագայական և խնդրային որոշիչները կառուցվածքային տեսակետից կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի. ա) պարագայի և խնդրի հոլովաձևերով հանդես եկող որոշիչներ, բ) կապական որոշիչներ:

Սկզբում քննության առնենք միայն հոլովներով՝ առանց կապի խնդրային ու պարագայական որոշիչներ ունեցող անվանական բառակապակցությունները:

Ներկայումս գիտատեխնիկական, քաղաքական-հրապարակախոսական և լրագրային լեզվում տարածում են ստանում անվանական բառակապակցության՝ բայի լրացական հոլովաձևերով արտահայտված ստորադաս բաղադրիչները, ըստ որում այդպիսի ստորադաս բաղադրիչները կարող են հանդես գալ այն հոլովաձևերով, որոնցով դրվում են պարագաներն ու խնդիրները: Ահա անվանական բառակապակցությունների այդպիսի ստորադաս բաղադրիչների օրինակներ՝ ըստ առանձին հոլովաձևերի:

Անվանական բառակապակցության տրական հոլովով ստորադաս բաղադրիչի օրինակներ. «Մարքսիզմ-լենինիզմին հավատարմություն», «Պետությանը մսի, կաթի վաճառք», «Ռեսպուբլիկայի ներքին գործերին Արևմտյան տերությունների շարունակվող զինված միջամտություն» (ՍՀ, 18/11—1964):

---

3 Պրոֆ. Գ. Սևակի տերմինն է:

Բացառական հոլովով օրինակներ՝ «Ներենակից մայրաքաղաքի պաշտպանության հարցեր» (ՍՀ, 6/11—64)։ «Հիվանդություններից ու վնասատուներից բույսերի պաշտպանության միջոցներ» (Եր., 11/3—1964)։ «Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմանագրեր» (Եր., 14/11—1964)։

Բացառական հոլովով սույն խնդրային որոշիչները իրենց բընույթով տարբերվում են նախախորհրդային շրջանի հայ ազգային լեզվում առկա «Խրիմի մորթուց գդակ», «կանաչ մահուդից կապան»[4] բացառականով որոշիչներից։ Մեր ազգային լեզվի նախորդ փուլին հատուկ այդ բացառական որոշիչը դերանվանցապես նյութի և ծագման բացառական է, խոսքի մասային տեսակետից համարժեք է ե (յա) ածանցով կազմված ածականներին, որոնք Մ. Աբեղյանի վկայությամբ «հաճախ իբրև սոսկ ածական են ըմբռնվում և ոչ իբրև բացառական»։ Իսկ մեր օրերում տարածվող բացառական որոշիչները խոսքի մասային տեսակետից բոլորովին էլ ածականի համարժեք լինել չեն կարող. նրանք շարահյուսական տեսակետից լինելով որոշիչներ, որպես բայանվան հարող անդամ, որպես բայական լրացում իմաստային-տրամաբանական տեսակետից լրիվ պահպանում են իրենց խնդրային նշանակությունը։

Գործիական հոլովով օրինակներ՝ «Քիլի և Համբուրգի համալսարանների դիպլոմով քաղաքական գիտությունների դոկտոր» (Եր., 2/10—1964)։ «Ստեղծվել է տանտալի կիրառմամբ ապարատ ակնային վիրաբուժության համար» (Եր., 27/3—1964)։ «Սվետլիչնու մեթոդով շաքարի ճակնդեղի արտադրություն» (ՍՀ, 25/4—1964)։ «Արտադրական ուսուցմամբ միջնակարգ դպրոցների կոլեկտիվները...» (ՍԳ, 23/8—1963)։ «12 կիլոմետր երկարությամբ գլխավոր կոյուղու կառուցում» (ՍՀ, 18/11—1964)։ «Պատվիրել 2000 տոննա ջրատարողությամբ երկու պահականավ, 1600 տոննա ջրատարողությամբ մի սուզանավ» (ՍՀ, 2/6—1964)։

Բերված օրինակներից երևում է, որ գործիական հոլովով դըրված բառը այդպիսի դերերում ոչ թե առանձին է հանդես գալիս որպես ստորադաս բաղադրիչ, այլ մեծ մասամբ իր լրացումների հետ միասին կազմում է մի լրացական կապակցություն։

Խնդրային և պարագայական որոշիչների շարքում առանձին հետաքրքրություն է ներկայացնում մամուլի և քաղաքական հրապարակախոսական լեզվում վերջին ժամանակներում տարածվող այսպես կոչված ներգոյականով պարագայական որոշիչը. հմմտ. «...Սովետական Միությունում ՀՍՖՀ-ի դեսպան ընկ. Դ. Դիգիչը»

4 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 449։

(ՍՀ, 27/9—1966)։ Անշուշտ հայոց լեզվի զարգացման արդի փուլի տեսակետից բառակապակցության այս ձևը ռուսերենի շարահյուսական պատճենում է՝ շարադասության փոփոխությամբ։ Բայց փաստերը վկայում են, որ բառակապակցության այսպիսի ձևերը ևս պատմականորեն անսովոր չեն հայերենին և իրենց նմուշներն ունեն մեր լեզվի զարգացման նախորդ շրջաններում։ Համեմատիր թեկուզ թևավոր խոսք դարձած գրաբարյան «Ջայն բարբառոյ յանապատի» արտահայտությունը, որը քննարկվող կարգի բառակապակցություններից տարբերվում է միայն գերադաս և ստորադաս անդամների շարադասությամբ։

Ներգոյականով պարագայական որոշիչ ունեցող անվանական բառակապակցությունների համար կառուցվածքային տեսակետից առանձնապես բնորոշ է այն, որ բառակապակցության գերադաս բաղադրիչը, բացի ներգոյական որոշիչից ունենում է նաև մի սեռական լրացում. օրինակ՝ «Լոնդոնում Արաբական Միացյալ հանրապետության դեսպան էլ-Կունին կդառնա ՄԱԿ-ում Արաբական հանրապետության մշտական ներկայացուցիչը» (ՍՀ, 27/3—1964)։

Հայտնի է, որ նման դեպքերում հայերենի համար քերականորեն ճիշտը տեղի սեռական գործածելն է՝ ներգոյականի փոխարեն։ Օրինակ՝ Լոնդոնում դեսպան, ՄԱԿ-ում ներկայացուցիչ բառակապակցությունների բուն հայկական ձևերն են Լոնդոնի դեսպան, ՄԱԿ-ի ներկայացուցիչ կապակցությունները. (հմմտ, դաշտի շուշան, անտառի ծաղիկ, Ամերիկայի նեգրեր և այլն)։ Սակայն, ինչպես նշվեց վերևում, քննարկվող կարգի բառակապակցություններում արդեն իսկ առկա է մի տեղանվան սեռականով լրացում, ուստի միևնույն գոյականի մոտ երկու տեղանունների հատկացուցիչ և տեղի սեռականների առկայությունը կառաջացնի իմաստի անորոշություն. հմմտ. Անգլիայի Հնդկաստանի դեսպան։

Այսպիսի երկիմաստությունից խուսափելու համար կարելի է, տեղի սեռականը թողնել նույնությամբ, իսկ սեռական հոլովով եղած մյուս ստորադաս բաղադրիչը վերածել ածականով որոշիչի. այսպես՝ Անգլիայի հնդկական դեսպան։ Սակայն, ինչպես հայտնի է, հասարակության քաղաքական ու տնտեսական կառուցվածքի զարգացման հետևանքով ներկայումս առաջացել են պետությունների ու միջազգային քաղաքական, դիվանագիտական հաստատությունների այնպիսի բաղադրյալ հատուկ անուններ, որոնցից առայժմ ածականներ չեն կազմվում. հմմտ. Հունգարական Ժողովրդական Ռեսպուբլիկա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Միաց-

յալ Ազգերի Կազմակերպություն և այլն: Ուստի այդպիսի հատուկ անունները անվանական բառակապակցություններում տեղի և տարածության նմանօրինակ հարաբերություններ արտահայտելիս դըրվում են ներգոյական հոլովով: Հայոց լեզվում հատկապես ծանր ոճ է ստեղծվում, երբ բնութագրվող կարգի բառակապակցություններում միաժամանակ առկա է լինում ներգոյական տեղի պարագա. Հմմտ.՝ «ՍՍՀՄ-ում Իտալիայի դեսպանը Երևանում» (Եր., 18/5—1965):

Այժմ մի քանի խոսք անվանական բառակապակցության այնպիսի ձևերի մասին, որոնց բաղադրիչների միջև եղած բառահարաբերությունը իրականանում է կապերի միջոցով: Բառակապակցության սույն ձևերում կապը և կապվող բառը միասնաբար հանդես են գալիս որպես մեծ մասամբ բայանվամբ կամ այս կամ այն չափով բայի հետ առնչակցվող գոյականով արտահայտված բաղադրիչի լրացում: Անվանական բառակապակցության այդպիսի լրացումները կարելի է անվանել կապական որոշիչներ: Մեր լեզվի զարգացման ներկա փուլում կապական որոշիչները կիրառության մեծ հաճախականություն ունեն հատկապես մամուլի, քաղաքական, հրապարակախոսական և գիտատեխնիկական գրականության մեջ: Կապական-անվանական բառակապակցություններ ստեղծելու գործում հատկապես ակտիվ դեր են կատարում համար, մասին, վերաբերյալ, նկատմամբ, հետ, կից. առընթեր, գծով ու մի շարք այլ կապեր: Օրինակներ.

«Կյանքի հետ գիտա-հանրամատչելի պրոպագանդայի ամենասերտ կապի անհրաժեշտություն...» (ՍՀ, 6/6—1964): «Պոտսդամի համաձայնագրերի անօրինականության մասին հայտարարություններ»: «Պաշտպանության մասին խոսակցություններ»: «Կրթության մասին փաստաթուղթ»: «Բարեկամության, փոխադարձ օգնության և աշխատակցության վերաբերյալ պայմանագիր»: «Խաղաղության համար պայքար»: «Ապագայի նկատմամբ վախ» (Եր., 27/3—1964): «Սոցիալիզմի համար բանվոր դասակարգի պայքար» (ՍՄԿԿ ծրագիր, 1961, էջ 12): «Կապիտալիզմից դեպի սոցիալիզմ մարդկության համաշխարհային պատմական շրջադարձ» (էջ 7): «Դեպի կոմունիզմ հասարակության անցման անխուսափելիություն» (էջ 7): «Հողի համար գյուղացիության պայքար» (12): Նոր բարոյականություն, նոր բնավորությունների մասին խոհեր (Եր., 29/9—1964): «Մարդկային օրգանիզմի վրա տիեզերական թռիչքի տարբեր գործոնների ազդեցություն» (3): «Զանզիբարի դեմ իմպերիալիզմի

դավեր» (Եր., 11/11—1964)։ «Կապիտալիզմի հետ խաղաղ տնտեսական մրցություն» (ՍՏ, 6/11—1964)։

Մեր գրական լեզվի զարգացման ներկա փուլում հատկապես ակտիվ են և լայն տարածում են ստանում անվանական բառակապակցության այնպիսի ձևերը, որոնցում մեկից ավելի (մեծ մասամբ երկու) ստորադաս անդամները (որոշիչ կամ հատկացուցիչ) հիմնականում հանդես են գալիս մեկ անդամի արժեքով, որպես շարահյուսական մեկ միավոր։ Բառակապակցության նման ձևերի կարելի է հանդիպել նաև նախասովետական շրջանի գրական լեզվում, հատկապես մամուլում. օրինակ՝ «Գրական-գեղարվեստական սալոն» (Մշակ, 5/1—1914)։ «Հոգևոր-բարոյական զարգացում» (Մշակ, 1/1—1914)։ «Հասարակական-գրական-ազգային գործունեություն» (Ն. տ.)։ «Համբուրգ-Ամերիկյան գծի շոգենավեր» (Մշակ, 19/4—1914)։

Ներկայումս բառակապակցության քննարկվող ձևերի համար բնորոշ է նրանց չափազանց աշխուժացումը, նրանց կազմից կիրառությունների նորանոր ոլորտների ընդգրկումը։ Զարգացման ներկա էտապի տեսակետից կարևոր է բառակապակցության քննարկվող ձևերի ներսում կառուցվածքային նորանոր տարբերակների գոյացումը, ինչպես նաև կապակցության բաղադրիչների միջև շարահյուսական ու իմաստային նորանոր հարաբերությունների առաջացումը։

Այստեղ նպատակահարմար է բառակապակցության հիշյալ ակտիվացող ձևերը քննության առնել ըստ նրանց կառուցվածքային բնորոշ գծերի՝ միաժամանակ ցույց տալով բառակապակցության բաղադրիչների միջև եղած շարահյուսական և իմաստային հարաբերությունները։

Բազմանդամ լրացումով անվանական բառակապակցությունները կառուցվածքային տեսակետից կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի.

1. Քննարկվող կարգի անվանական բառակապակցությունների՝ ներկայումս կիրառության բավականին ընդարձակ ոլորտ ունեցող այս առաջին խմբի համար կառուցվածքային տեսակետից բնորոշ է այն, որ նրա ստորադաս անդամի յուրաքանչյուր բաղադրիչի կախվածությունը բառակապակցության գերադաս (լրացյալ) անդամի նկատմամբ քերականորեն ձևավորված է— այսինքն՝ ստորադաս բաղադրիչի անդամներից երկուսն էլ ունեն կախվածության քերականական ցուցիչ։ Այդ իսկ պատճառով երկանդամ լրացումով ան-

վանական կապակցության կառուցվածքային այս խումբը կարելի է բաժանել երկու ենթախմբի.

ա) Երկանդամ լրացմամբ անվանական բառակապակցություններ, որոնց ստորադաս անդամի յուրաքանչյուր բաղադրիչի և գերադաս անդամի միջև գոյություն ունի հոլովական կախվածություն. ըստ որում ստորադաս անդամները մեծ մասամբ դրվում են սեռականով, բայց չի բացառվում նաև այլ հոլովների կիրառությունը. Համեմատիր Հրուշակեղենի-մակարոնի ֆաբրիկա (Եր., 14/11—1964), Երևանի լարի-ներկերի գործարան (ՍՀ, 18/11—1964), ռադիոֆիզիկայի-էլեկտրոնիկայի ինստիտուտ, բրդյա նուրբ գործվածքեղենի-մահուդի կոմբինատ (Եր., 8/2—1965), կաշվի-գալանտերեայի ֆաբրիկա, մորթի-մուշտակի ֆաբրիկա (Եր., 21/12—1964)։

Հարկ է նշել, որ կապակցության այսպիսի ձևերում լրացման բաղադրիչների միջև սովորաբար ստորադասության հարաբերությունը բացակայում է, այդ անդամները միմյանց նկատմամբ համազոր են, որպես համարժեք և կամ ու միավորիչ շաղկապներով կապակցություններին և միասին կախման մեջ են գտնվում կապակցության գերադաս անդամից։

բ) Երկրորդ ենթախմբի մեջ մտնում են այն կապակցությունները, որոնց ստորադաս անդամի յուրաքանչյուր բաղադրիչի կախման հարաբերությունը գերադաս անդամի նկատմամբ իրականացված է ոչ թե հոլովի, այլ ածականակերտ ածանցի միջոցով։

Ի տարբերություն վերը բնոլված ձևի՝ այս ենթախմբի մեջ մտնող բառակապակցությունների ստորադաս անդամների բաղադրիչների միջև չի բացառվում ստորադասական շարահյուսական հարաբերությունը, որի հետևանքով այս կարգի կապակցություններում առկա է լինում բառերի կամ համաստորադասություն, կամ երկրորդական կարգի ստորադասություն։

Ստորև տալիս ենք այնպիսի կապակցությունների օրինակներ, որտեղ ստորադաս անդամի բաղադրիչների միջև հիմնականում գոյություն ունի համաստորադասության հարաբերություն։

«Նյութական-կենցաղային դրություն» (ՍՄԿԿ 22-րդ համ. նյութ. 531)։ «Կոլտնտեսային-սովխոզային արտադրական վարչություն» (ՍՀ, 18/11—1964)։ «Անհատական-թիմային առաջնություն» (Եր., 14/11—1964)։ «Պարտիական-կառավարական պատվիրակություն» (ՍՀ, 24/4—1964)։ Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտ։ «Պարտիական-պետական պոստեր» (ԳՄ, ԼԶ, 49)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, տվյալ կապակցու-

թյունները հեշտությամբ կարող են վերածվել և կամ ու շաղկապով իրենց շարահյուսական համարժեքներին, այնինչ՝ այդպիսի շարահյուսական համանիշներով չեն կարող փոխարինվել նույն կառուցվածքն ունեցող այնպիսի բառակապակցություններ, որտեղ առկա է երկրորդական կարգի ստորադասություն՝ օրինակներ. «Փայտյա-տաշեղային սալեր», «երկրաբանական-հետախուզական աշխատանքներ» (Եր., 25/11—1964)։ «էլեկտրոնային-հաշվողական տեխնիկա» (ՍՀ, 29/1—1965)։ «Գրական-ստեղծագործական սարյանական աշխարհ...» (ԳՄ, ԼՁ, 466)։ «Բնակարանային-շինարարական կոոպերացիա» (ՍՄԿԿ 22-րդ համ. նյութեր, 531)։ «Համաշխարհային-պատմական հաղթանակ» (ՍՀ, 24/4—1964)։ Քաղաքական-դաստիարակչական աշխատանք։

Նշելի է, որ չի բացառվում կառուցվածքային խառը տիպի կիրառությունը, որի դեպքում կապակցության ստորադաս անդամի բաղադրիչներից մեկի կախման հարաբերությունը գերադաս անդամի նկատմամբ արտահայտված է հոլովով, իսկ մյուսինը՝ ածականակերտ ածանցով։ Հմմտ. «Հաշվապահական-հաշվառման մատյաններ» (ՍՀ, 18/11—1964)։

Նշենք, որ չնայած երկանդամ լրացումը հիմնականում ունի շարահյուսական մեկ միավորի արժեք, բայց այդ անդամներից յուրաքանչյուրը, քերականական ու խոսքի մասային տեսակետից լիակատար կերպով ձևավորված լինելով, դեռևս ամբողջովին պահպանում է իր բառային ու բառակազմական, իսկ մասամբ էլ շարահյուսական ինքնուրույնությունը։

2. Երկանդամ լրացումով անվանական բառակապակցության կառուցվածքային այս երկրորդ խումբը առաջինից տարբերվում է նրանով, որ այս դեպքում կապակցության ստորադաս անդամի միայն վերջին բաղադրիչն է ստանում շարահյուսական կախվածության քերականական ցուցիչ, իսկ առաջինը իր ուղիղ ձևով պարզապես հարում է նրան, ըստ որում այստեղ ևս, ինչպես առաջին խըմբում, որպես կախվածության քերականական ցուցիչ կարող է ծառայել կամ բառի հոլովական ձևը, կամ ածականակերտ ածանցը։ Հմմտ. «Տրամվայ-տրոլեյբուսի վարչություն», «կուլտուր-կենցաղային կարիքներ» (ՍՀ, 18/11—1964)։ «Կենցաղ-սպասարկման կոմբինատ», «Աշնան-ձմեռային սեզոն, աշնան-ձմեռային ասորտիմենտի... բազմատեսակ գործվածքեղեն, աշնան-ձմեռային լավագույն հագուս-

տեղին» (Եր., 14/11—1964)։ Գուլպա-տրիկոտաժի ֆաբրիկա, ջրմուղ-կոյուղու տրեստ, ձեթ-օճառի կոմբինատ։

Բերված օրինակներից երևում է, որ կառուցվածքային այս ձևում էլ բառակապակցության անդամների միջև հնարավոր են իմաստային ու շարահյուսական նույն հարաբերությունները, որոնց մասին խոսվեց վերևում։

Նկատելի է, սակայն, որ այս կարգի բառակապակցություններում շարահյուսական մեկ միավորի արժեքով հանդես եկող ստորադաս անդամի բաղադրիչների միջև եղած կապը՝ առաջին խմբի բառակապակցությունների համեմատությամբ առավել սերտ է։ Հենց այն հանգամանքը, որ ոչ թե ստորադաս բաղադրիչի անդամներից յուրաքանչյուրն է քերականորեն ձևավորվում որպես կախյալ անդամ, այլ որպես այդպիսին ձևավորվում է կախյալ բաղադրիչը ամբողջությամբ, թուլացնում է այդ բաղադրիչի առանձին անդամների ոչ միայն շարահյուսական, այլ որոշ չափով նաև բառային ու բառակազմական ինքնուրույն միավոր լինելու գիտակցումը։

Բոլորովին էլ չի բացառվում, որ այդ ինքնուրույնության թուլացումը նպաստի այդպիսի ստորադաս բաղադրիչների բառակազմական մեկ միավորի վերածվելուն, օրինակ՝ կուլտ-կենցաղային միջոցառում, բնակ-կենցաղային հանձնաժողով և այլն։ Համեմատիր հետևյալ օրինակը. «Երկրաբանական-հանքաբանական գիտություններ, երկրաբանա-հանքաբանական գիտություններ» (Եր., 3/2—1965)։

Ինչպես տեսանք, երկանդամ լրացումով անվանական բառակապակցության այս երկու ձևերը իրենց որոշ տարբերություններով հանդերձ, ունեն և կառուցվածքային նմանություններ, և, որ հատկապես կարևոր է, շարահյուսական ու իմաստային հարաբերությունների դրսևորման ընդհանրություններ, որի հետևանքով էլ ներկայումս այդ երկու ձևերի միջև տեղի են ունենում փոխանցումներ։

3. Քննարկվող կարգի բառակապակցությունների այս երրորդ խմբի համար կառուցվածքային տեսակետից բնորոշ է այն, որ նրա ստորադաս անդամի բաղադրիչներից և ոչ մեկը քերականորեն չի ձևավորված որպես կախյալ անդամ, և ամբողջ լրացումը իր ուղիղ ձևով հարում է կապակցության գերադաս բաղադրիչին։ Բառերի կապակցության այս ձևը կարելի է կոչել շարահարական բառակապակցություն։ Օրինակներ. «Թումանյան-Խուտոյան հանդիպումն ավարտվեց առաջինի օգտին։ Բաղալյան-Վերշինին խաղը

անդի չունեցավ» (ՀՁ, 9/5—1964)։ «Մեր կոլեկտիվը պարտավորվել էր ժամկետից երկու ամիս շուտ ավարտել Երևան—Մասիս Երկաթուղու *էլեկտրիֆիկացումը» (Եր., 30/4—1964)։*

Որո՞նք են այս կարգի բառակապակցությունների բնորոշ առանձնահատկությունները։

ա) Հիշյալ բառակապակցությունների կախյալ բաղադրիչը կարող է լինել ոչ միայն երկանդամ, այլ նաև բազմանդամ. հմմտ. «Սևան—Երևան—Լենինական երկաթուղագիծ» (ՍՀ, 3/10—1964)։ Բաքու—Թբիլիսի—Երևան ռադիոռելեային գիծ։ «Եկեք մտովին շրջենք Երևան—Ղափան—Գորիս—Շուշի երթուղային ճանապարհով» (ՀՁ, 25/10—1964)։

բ) Այս կարգի բառակապակցությունների լրացումների բաղադրիչների միջև եղած կապը այնքան սերտ է, որ միանգամայն բացառվում է այդպիսի լրացումների առանձին բաղադրիչների, որպես ինքնուրույն լրացումների կիրառությունը տվյալ լրացյալի մոտ։ Օրինակ՝ «Երգի-պարի անսամբլ» բառակապակցության մեջ Երգի-պարի *երկանդամ ստորադաս բաղադրիչի յուրաքանչյուր անդամը իր քերականական միևնույն ձևով կարող է առանձին հանդես գալ որպես գերադաս անդամի լրացում, այնինչ՝ ասենք, «Բոտվիննիկ—Պետրոսյան մատչը» բառակապակցության երկանդամ ստորադաս բաղադրիչի համար այդպիսի հնարավորությունը լրիվ բացառվում է։*

Նշված հանգամանքի բուն պատճառն այն է, որ, ասենք, «երգի-պարի անսամբլ» բառակապակցության մեջ ստորադաս անդամի յուրաքանչյուր բաղադրիչը ամբողջ կապակցությանը հաղորդում է լոկ իր բառական ու քերականական իմաստը, ստորադաս անդամի բաղադրիչների միջև սովորաբար իմաստային որևէ հարաբերություն գոյություն չունի, մինչդեռ շարահարական կապակցությունների լրացման բաղադրիչների միջև միշտ առկա է մի հավելյալ, «զորությամբ ըմբռնվող» իմաստային հարաբերություն։

Ստորադաս բաղադրիչի անդամների միջև եղած այդ «հավելյալ» իմաստային հարաբերության տեսակետից քննության ենթակա բառակապակցությունները հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջին խմբի բառակապակցությունների ստորադաս անդամի բաղադրիչների միջև գոյություն ունի փոխադարձ գործողության իմաստային հարաբերություն. օրինակ՝ «ՍՍՌՄ—Վենեսուելա մատչ» (Եր., 11/11—1964)։ «Գ. Գրիգորյան—Օհանյան, Հարությունյան—Համբարյան, Ծուղուրյան—Սորոկին հանդիպումնե-

րը...» (Եր., 30/4—1964)։ «Լարված հանդիպման ելքը կախված է Պ. Կերեսի—Լ. Շմիդ պարտիայի արդյունքից» (ՍՀ, 18/11—1964)։ Ինչպես երևում է բերված օրինակներից, այս կարգի բառակապակցությունների լրացման բաղադրիչների միջև եղած կապը համարժեք է հետ և միջև կապերով դերբայական դարձվածքներին կամ էլ այդ նույն անդամների սեռական հոլովաձևի և շաղկապով կապակցություններին. հմմտ. «Ուշադրության կենտրոնում էր տուրնիրի լիդերներ Կուանյշիկովի (Ղազախստան) և Լատիպովի (Ուզբեկստան) հանդիպումը» (ՀՁ, 9/5—1964)։ Երկրորդ խմբի բառակապակցությունների լրացական անդամի բաղադրիչների միջև առկա է տեղի և տարածության իմաստային հարաբերությունը. հմմտ. «Երևան—Մասիս էլեկտրիֆիկացված ուղեմաս» (Եր., 30/4—1964)։ «Մասիս—Հոկտեմբեր գծամաս... Երևան—Սևան երկաթգիծ» (ն. տ.)։ «Արփա—Սևան թունել» (Եր., 17/11—1964)։ «Սևան—Հրազդան կասկադ» (ն. տ.)։ «Բագրևան—Անի տեղամաս» (ՍՀ, 3/10—1964)։ «Դաղստան—Հայաստան նոր գազամուղ» (ՍՀ, 4/2—1965)։

Նկատվում է նաև, որ զուտ անվանողական որոշիչը կարող է որոշյալին միանալ և իր ուղիղ ձևով, այսինքն՝ շարահարությամբ, և բառահարաբերական ձևույթով՝ առաջ բերելով որոշակի տեղաշարժեր շարահյուսական համանիշների շարքերում։ Հմմտ. «Հաղթանակ» կոլտնտեսության և հանգստի զբոսայգի»։ «Երեկ Հաղթանակի զբոսայգում» (Եր., 30/4—1964)։

4. ԸՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՊԻ ՀԵՏԱԳԱ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ

19-րդ դարի վերջերի, մասամբ նաև 20-րդ դարի սկզբի և մեր գրական լեզվի զարգացման սովետական շրջանի լեզվական փաստերի համեմատությունը ցույց է տալիս, որ մեր օրերում նկատվում է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության քերականական կապի ուժեղացում, ըստ իմաստի կատարվող համաձայնության՝ բակառության զգալի սահմանափակում։

Իհարկե, բակառությունը ենթակայի և ստորոգյալի համաձայնության մեջ զգալի որակ չէր կազմում նաև նախասովետական շրջանում, սակայն մեր լեզվի զարգացման այդ փուլում նկատելի էին բակառության այնպիսի երևույթներ, որոնց խորհրդային շրջանում հիմնականում փոխարինել է համաձայնության քերականական կապը։

ա) Մեր լեզվի զարգացման նախասովետական շրջանում միատեսակ առարկաների խումբ, ամբողջություն, հավաքածու նշանակող մի շարք գոյական ենթակաների մոտ բոլորովին էլ անսովոր չէր հոգնակի ստորոգյալի գործածությունը։ Այդպիսի հավաքական գոյականներից առանձնապես նշելի են խումբ, ժողովուրդ, ամբոխ, բազմություն և այլն։

Հմմտ. «Նրանց բազմությունը իրենց ձողերով հեռվից պատկերացնում էին նավակների մի խումբ» (Րաֆ., 344). «Մանկահասակ սպասավորների մի սովար խումբ շքեղ կերպով հագնված ոտքի վրա ծառայում էին» (Րաֆ., 482)։ «Հռիփսիմյան կույսերի խումբը երկար պատսպարված էին Վաղարշապատի այգիների հնձաններում» (Րաֆ., 488)։

Ստորև բերվող օրինակում բազմություն հավաքական գոյականով արտահայտված միևնույն ենթակայի ստորոգյալներից մեկը դրված է եզակի, իսկ մյուսները՝ հոգնակի. «Բազմությունը խումբ-խումբ ներկայանում էր և, վայելելով տիկնոջ շնորհն ու քաղցրությունը դուրս էին գալիս կից սենյակը, ուր պիտի սպասեին» (Րաֆ., 558)։

Մանուկ Աբեղյանը նշում էր, որ բազմություն, խումբ, ժողովուրդ, զորք, ժամավոր, ուխտավոր, տասնյակ, շարք, քիչը և այլ հավաքական անուններով արտահայտված ենթակայի ստորոգյալը «կարող է նաև հոգնակի դրվել, գլխավորապես այն ժամանակ, երբ հավաքական անունն ունի հոգնակի սեռական կամ բացառական խնդիր, կամ երբ անվան ցույց տված բազմությունը մտածվում է ոչ թե միասնական նշանակությամբ իբրև մի միություն, այլ անջատական նշանակությամբ առանձին առանձին»[5]։ Ըստ այդմ նա այդ շրջանի լեզվի համար օրինաչափական էր համարում ստորև բերվող օրինակներում եղած համաձայնությունը. «Այս խնդիրների մեծ մասը[6] չլուծված մնացին: Մեր կյանքի խնդիրներից շատը քննված չեն, շատն էլ թեպետ քննվել, բայց տակավին անլուծանելի են մնացել»:

«Իմ օրովս վանքի բոլոր միաբանությունը լռության մեջ էին։ ...Ժամավորը դուրս եկան ու ցրվեցին իրենց տները։ Բազմությունը ձյունի նման իրար վրա թափվելով՝ ժամ են գալիս— Ուխտավորը

---

5 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 161։

6 Ընդգծումները մերն են։

արտասուքն աչքներին վանքի չորս կողմը պտույտ են գալիս.— Թամաշավորը վերև-ներքևից ձայն ձայնի տվին։ ...Ժողովուրդը սաղ ջուր կտրեցին...»[7]։

Չնայած որ այս կարգի համաձայնությունը հնում էլ բացառություն էր համարվում, սակայն դեռևս բավականաչափ կիրառելի էր։ Ենթակայի և ստորոգյալի համաձայնության սույն ձևը ներկայումս հիմնականում հնացած է, հետզհետե անսովոր է դառնում։ Եթե մեր օրերում գեղարվեստական խոսքի մեջ դեռևս կարելի է հանդիպել համաձայնության նմանօրինակ դեպքերի, ապա մամուլի գիտական ու քաղաքական գրականության լեզվում այն իր դիրքերը ամբողջությամբ զիջել է համաձայնության քերականական կարգին։

բ) Ներկայումս մեր գրական լեզվում գրաբարի Ք հոգնակերտ մասնիկով վերջացող բառերը[8] այլևս որպես հոգնակի չեն գիտակցվում, հետևաբար չեն կարող թելադրել հոգնակի ստորոգյալ[9]։ Սակայն նախասովետական շրջանի մեր մի շարք ստեղծագործողների երկերում այդպիսի բառերը գրաբարից եկող լեզվական ավանդույթով գործածվում են որպես հոգնակի, որի հետևանքով էլ համաձայնում են հոգնակի ստորոգյալի հետ, հմմտ. «Նրա տարիՔը վաղուց մոտեցել էին հիսունին...» (Րաֆ., 42)։ «ՇրջակայՔը արդեն ծածկված էին թանձր մթության մեջ...» (Րաֆ., 449)։ «Անտառի լռության մեջ... տարօրինակ ձայներ էին հանում մեր ձիերի ՔայլվածՔը» (Մուր.)։ «Ու ստինՔը սառնածային խաղում էին վեր ու վար» (ՀԹ, 163)։«ԱլիՔը կայտառ գնում են գալիս» (Հովհաննիսյան)։

Ենթակայի և ստորոգյալի նմանօրինակ համաձայնությունը ևս ներկայումս ամբողջովին հնացած և անսովոր է։ Այժմ հիշյալ կարգի գոյականները գերազանցապես եզակի են և համաձայնում են միայն եզակի ստորոգյալի հետ։

Ընդհանրապես նկատելի է, որ մեր գրական լեզվի զարգացման ներկա փուլին բնորոշ է ենթակայի և ստորոգյալի համաձայնության քերականական կարգի ուժեղացում, բացառության դեպքի սահմանափակում, համաձայնության գրաբարի քերականական ձևերից բխող որոշ ավանդույթների անհետացում։ Այժմ ինչպես գե-

7 Մ. Աբեղյան, *Աշխ. ժող.*, էջ 161—162։

8 *Բացառություն են կազմում* տիկնայՔ, պարոնայՔ *բարդված ձևերը։*

9 *Խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ հեղինակը որպես ոճական հնարանք Ք-ն օգտագործում է մեր այժմյան* եր *կամ* ներ *հոգնակիակերտ մասնիկի փոխարեն՝ դնելով այն կոնկրետացած և ինքնուրույն ու անկախ գործածություն ունեցող բառերի վրա, ինչպես՝ որդի-որդիք, գյուղացի-գյուղացիք։*

գեղարվեստական, ինչպես էլ քաղաքական-հրապարակախոսական, գիտատեխնիկական գրականության ու լրագրային լեզվում համարյա հազվագյուտ են բացառության երևույթները: Այս տեսակետից բացառություն չի կազմում նույնիսկ ռազմական շրջանի ավագ սերնդի գրողների մեծամասնությունը: Այսպես, օրինակ, Զարենցի չափածո երկերում համարյա դժվար է գտնել հոգնակի ստորոգյալի գործածության միատեսակ տարբերակների խումբ ցույց տվող հավաքական գոյականների մոտ: Այդպիսի դեպքերում նա համարյա միշտ կիրառում է եզակի ստորոգյալ. հմմտ. «Երկար տարիներ ժողովուրդը տառապեց» (ԵԶ, ԸՆ, 31): «Նորից ահեղ դղրդաց զանգերի խումբն ահագին» (30):

Որպես ենթակայի և ստորոգյալի համաձայնության քերականական կարգի ուժեղացում պետք է նշել նաև երկու և ավելի բարձր թվական որոշիչ ունեցող քերականորեն եզակի գոյականների եզակի ստորոգյալի հետ համաձայնելու վերջին ժամանակներում ուժեղացող միտումը: Իհարկե, ռազմական շրջանում բազմաթիվ են նաև նման դեպքերում հոգնակի ստորոգյալի գործածությունները, սակայն հատկապես վերջին շրջանում որոշակիորեն նկատելի է ուժեղ հակում դեպի եզակի ստորոգյալը. հմմտ. «Հանքագազի պայթյունի հետևանքով զոհվել էր 61 ածխահատ...» (Եր., 26/2—1965): «Հրապարակում հավաքվել էր մայրաքաղաքի ավելի քան 30 հազար բնակիչ» (ՍՀ, 24/4—1964): «Կոչը ստորագրեց 500 միլիոն մարդ» (ՍՀ, 21/4—1964): «Դիմումի տակ ստորագրեց 612 միլիոն մարդ» (Ն. տ.):

Իհարկե, ներկայումս էլ որոշ գրողներ ենթակայի և ստորոգյալի քերականական համաձայնությունից կատարվող շեղումները օգտագործում են որպես ոճական հնարանքներ, սակայն, պետք է նշել, որ ի վնաս լեզվի քերականական օրինաչափության սանձվող ոճական հնարանքը երբեք էլ խրախուսելի համարել չի կարելի: Ինչպես նշում է բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Առաքելյանը «խոսքի արտահայտչական այս հնարքը (քերականական համաձայնությունից կատարվող շեղումը— Ռ. Հ.) հնանում է և ժամանակին է աստիճանաբար նրանից հրաժարվելու»[10]:

Նկատելի է, որ մեր լեզվի զարգացման արդի շրջանում գրական լեզվի և բանավոր խոսքի անմիջական մերձեցման շնորհիվ վերջինում էլ աստիճանաբար սահմանափակվում են քերականական

10 Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, հ. 1. 1958, էջ 196:

համաձայնությունից կատարվող շեղումները և ուժեղանում է համաձայնության քերականական կապը։ Եթե նախասովետական շրջանում բանավոր խոսքում տարածված աչքերս մթնեց, ձեռքերս հոգնեց, ականջներս խլացավ, ոտքերս թրջվեց ձևերը անցնում էին գրական լեզվին, ապա մեր օրերում ուժեղ կերպով զգացվում է նույնիսկ առօրյա խոսակցությունների ժամանակ հնարավորության սահմաններում գրական լեզվի քերականական օրինաչափությունները անաղարտ պահպանելու միտում, որի հետևանքով բանավոր խոսակցության ժամանակ այժմ արդեն հաճախ լսում ենք՝ աչքերս մթնեցին, ձեռքերս հոգնեցին, ականջներս խլացան և այլն։

5. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԿԱՏՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննության ենթակա ժամանակաշրջանը չափազանց կարճ է հոլովական կիրառությունների կայուն ու որոշակի համակարգ ունեցող որևէ լեզվի, այդ թվում և հայերենի հոլովական հիմնական նշանակություններում էական տեղաշարժներ առաջացնելու համար։ Սակայն այդ կարճ ժամանակամիջոցում հոլովների երկրորդական կիրառությունների, նրանց իմաստային առումների բնագավառում տեղի են ունեցել հիշատակության արժանի որոշակի փոփոխություններ, ինչպիսիք են՝ հիմնականում որոշ հոլովների հարստացումը իմաստային նոր առումներով, նախկինում սահմանափակ որոշ կիրառությունների աշխուժացում, ինչպես նաև զարգացման նախորդ փուլի համար առավել կամ նվազ չափով բնորոշ մի շարք կիրառությունների սահմանափակում կամ վերացում։

Նկատելի է, որ հայերենի բոլոր հոլովները հավասարապես չեն ենթարկվել նշված փոփոխություններին։

Մեր լեզվի զարգացման խորհրդային շրջանում իմաստային նոր առումներով հարստանալու և իր որոշ կիրառություններն աշխուժացնելու տեսակետից սեռականը հայերենի հոլովական համակարգում գրավում է ուրույն տեղ։ Նշված հանգամանքում գլխավորապես մեծ դեր են խաղում միմյանց հետ փոխադարձաբար կապված երկու կարգի գործոններ, որոնցից մեկը հայոց լեզվի նկատմամբ արտաքին է, իսկ մյուսը՝ ներքին։

Արտաքին գործոնը, ինչպես ընդհանրապես հայերենի նկատմամբ, այնպես էլ տվյալ դեպքում, ռուսաց լեզվի խաղացած դերն ու նրա ազդեցությունն է։ Ռուսերենի մի շարք նախդրավոր կապակցությունների նշանակությունը հայերենում դրսևորվում է մեծ

մասամբ սեռական հոլովի միջոցով։ Այստեղից էլ մեր սեռական հոլովը հեռահեռև հարստանում է իմաստային այն բոլոր առումներով ու նրբություններով, որոնք հատուկ են ռուսերենի ավյալ նախդրավոր կապակցություններին։

Նրբքին գործոնը, որը մեր կարծիքով հիմնականը և որոշողն է տվյալ դեպքում, պայմանավորված է սեռական հոլովի դերով։ Սեռականը միակ հոլովն է, որ անմիջականորեն կարող է հարաբերել գոյականին, այսինքն՝ գոյականի միակ լրացական հոլովն է, այն դեպքում, երբ մյուս բոլոր հոլովները բայի լրացման հոլովներ են, այսինքն՝ հարաբերության մեջ են մտնում բայի հետ։ Այստեղից հետևում է, որ անվանական բառակապակցություններում առաջացող իմաստային առումներն ու նրբությունները մեծ մասամբ բաժին են ընկնում սեռականին։

Իսկ ներկայումս գիտա-տեխնիկական, քաղաքական-հրապարակախոսական և լրագրային լեզվի համար բնորոշ է անվանական բառակապակցությունների բուռն և աննախընթաց զարգացումը։ Առարկաների ու երևույթների միջև եղած կապերի նորանոր տեսակների հայտնաբերում, միջազգային քաղաքական-դիվանագիտական և կուլտուր-տնտեսական նորանոր մարմինների ստեղծում և նրանց միջև զանազան կապերի գոյացում և այլն. ահա անվանական բառակապակցությունների աշխուժացման պատճառները։ Սակայն անվանական բառակապակցության բուռն զարգացումը տարբեր լեզուներում քերականական տարբեր միջոցների զարգացման և աշխուժացման վրա միևնույն ձևով չի ներգործում։ Ռուսաց լեզվում, օրինակ, անվանական բառակապակցության ներկայիս աննախընթաց ակտիվացումը առաջ է բերում հիմնականում նախդիրների զգալի աշխուժացում։ Չնայած որ հայերենում ևս ռուսերենի ազդեցությամբ նախդրավոր-անվանական բառակապակցությունները հանդես են բերում աշխուժացման որոշ տենդենց, այստեղ անվանական բառակապակցության բուռն զարգացման հետևանքը հիմնականում լինում է սեռական հոլովի կիրառությունների աշխուժացումը։ Սեռական հոլովի կիրառական նշանակությունների ու իմաստային առումների այդպիսի զարգացման գործում չափազանց մեծ է բայանվան դործածության աշխուժացումը։ Բայանվան կողքին մեր սեռականը ձեռք է բերում պատճառի, նպատակի, տարածության և այլ իմաստային առումներ։

Մյուս կողմից բայանվան համատարած գործածությունը այսօր հենց պատճառ է դառնում խնդիր սեռականի կիրառության աշխուժացման։

Բայանվան կիրառության աշխուժացման, անվանական բառակապակցության բուռն զարգացման հետևանքը լինում է բազմիմաստ ու նույնիմաստ սեռականների հարադրումը, սեռականների կուտակումը քաղաքական-հրապարակախոսական, գիտատեխնիկական գրականությունների ու լրագրային լեզվում. հմմտ. «Առևտրի զարգացման ՄԱԿ-ի հանձնաժողովի Ժնևի կոնֆերանս»:

Սեռական հոլովի կիրառական նշանակությունների ու իմաստային առումների զարգացումը քննելիս նկատում ենք նաև հակառակ միտումներ՝ նախախորհրդային շրջանի հայ ազգային լեզվում սեռականին բնորոշ իմաստային որոշ առումների սահմանափակում կամ իսպառ վերացում:

Սեռական հոլովի ներկայումս հնացած կիրառություններից կարելի է նշել յուրաքանչյուր դերանվան և քանակական թվականների մոտ մասնական սեռականը: Համեմատիր այդպիսի կիրառությունները նախախորհրդային շրջանում: «Ճարմանդների յուրաքանչյուրի վրա փայլում էր մի խոշոր ակն» (Րաֆ., 38): «Որոնց յուրաքանչյուրը ներկայացնում էր մի-մի գավառ» (173): «Նայեց տեսավ ուղտերի մեկը չկա» (Ա.Ի, 223):

Սեռական հոլովի հնացած կիրառական նշանակություններից կարելի է նշել նաև խնդիր սեռականի գործածությունը անորոշ դերբայի մոտ: Նախասովետական շրջանի հայ գրական լեզվում խնդիր սեռականը կարող էր կիրառվել ոչ միայն բայանունների, այլև անորոշ դերբայի մոտ. հմմտ. «Նա չգիտեր, որ ինքն էր այն երկպառակության խնձորը, որի գրավելու համար այնքան մեծ կորուստներ եղան» (Րաֆ., 415): «Ամբողջ քաղաքի քարերը վերջանալուն մոտ է» (Մշակ, 10/11—1914): «Երկաթուղու մոտալուտ շինության սկսելու լուրը...» (Ն. տ.): «Հսկում են բերքի ժողովելու վրա» (Մշակ, 3/10—1920):

Մանուկ Աբեղյանը իր ժամանակի գրական լեզվի համար օրինաչափական է համարում խնդիր սեռականի (Աբեղյանի տերմինով՝ առարկայական սեռական) գործածությունը ոչ միայն բայանունների, այլ նաև դերբայների մոտ (համենայն դեպս, նա այդ մասին որևէ վերապահություն չի անում): Ահա թե ինչ է գրում նա:

«Սեռականը դրվելով դերբայների[11] և բայական անունների վրա՝ ցույց է տալիս այն առարկան, որին ինչպես մի խնդրի վերաբերում է գործողությունը. օրինակ՝

---

11 Ընդգծումը մերն է:

Ամեն բանի սկսակցները լավ չէ (Ս.— ամեն բան սկսակցները)։ Մինչև ճաշի վեր ունելը լուս կնստենք։— Բանվորը մինչև ժամի տալը կբանի (Գռ.)։ Երանի թե մարդու պակասը փողը լինի։ Փողի զանելը հեշտ է (Հովհ. Թում.)»[12]։

Պետք է նշել, որ մեր գրական լեզվում այժմ էլ երբեմն հանդիպում է խնդրի սեռականի գործածություն անորոշ դերբայի մոտ, հմմտ. «Պահեստային տնտեսության բարելավելը, նոր պահեստների կառուցելը հրատապ խնդիր է» (Եր., 14/11—1964)։

Խորհրդային շրջանի մեր ազգային լեզվի շարահյուսական կառուցվածքի զարգացման կարևոր նվաճումներից մեկը պետք է համարել ներգոյականի և տեղի հայցականի կիրառական նշանակությունների կայունացումը և կիրառությունների սահմանների ճշտումը։ 19-րդ դարի մեր ազգային լեզվում, ինչպես նաև 20-րդ դարի սկզբի մեր մի շարք գրողների երկերում բավականաչափ տարածված էր հատկապես հատուկ անունների հայցականի կիրառությունը ներգոյականի փոխարեն. «...Ես գտնվում էի Վարշավ» (Մուր., 4, 325)։ «Նորմանդիա, իր հայրենական հինավուրց դղյակում ապրում էր քաջահուշակ ասպետ Լանսելոն» (Ա.Ի, 162)։ «Նրանք մնացել էին Ռուսիա» (321)։

Նշենք, որ Իսահակյանից բերված օրինակները քաղված են նրա 1917 և 1922 թվականներին գրած երկերից։

Գործողության դադարում ցույց տվող բայերի մոտ հայցականի կիրառությունը նախասովետական շրջանի մեր լեզվին բնորոշ է եղել այնքան, որ Մ. Աբեղյանը հատուկ քննության է ենթարկում հայցականի այդ կիրառությունը՝ այն անվանելով «ներգոյական հայցական»։

Այդ նույն ժամանակաշրջանում չէր բացառվում նաև հասարակ անունների տեղի դադարման հայցականը. հմմտ. «Նա հագուստով պառկեց անկողին» (Շիրվ., 3, 103)։

Մեր լեզվի զարգացման ներկա փուլի համար ներգոյական հայցականը այլևս օրինաչափական չէ, չնայած այժմ էլ գեղարվեստական որոշ երկերում կարելի է հանդիպել տեղի դադարման հայցականի կիրառության. հմմտ. «Գնաց նորից տխուր ու լուռ՝ սիրտը հազար մուրազ ու սեր» (ՀՇ, ՔՀ, 224)։

Ներգոյականի և տեղի հայցականի կիրառության սահմանների անորոշության մի այլ դրսևորումն էլ այն էր, որ 19-րդ դարի մեր

---

12 Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 422։

որոշ գրողների, հատկապես Րաֆֆու երկերում հանդիպում էր նաև հակառակ երևույթը, այն է՝ ներգոյականի կիրառությունը շարժում ցույց տվող բայերի մոտ՝ փոխանակ հայցականի, հմմտ. «Նախքան քրիստոնեության մուտքը Հայաստանում...» (Րաֆ., 82)։ «Նա դևի նման կմտնի մի ծակում» (36)։ «Ուրեմն դուք շատ խոր չրափանցեցիf լեռնային կողմերում» (480)։ «Ահա հասարակությունը կգա և իր առատ գումարներով կյանք կմտցնե գործում» (ՎՏ, ԵԺ, 2, 224)։

Ներգոյականի նման կիրառությունները ներկայումս անսովոր են և անհանդուրժելի։ Այդ տեսակետից չափազանց խորթ է հնչում ընդունել բայի ներգոյականով խնդիրը Գ. Մահարու հետևյալ նախադասության մեջ. «Ո՞վ է համաձայն, ընկերներ, Լևոն Ցահրադյանին ընդունել պարտիայի շարfերում» (ԳՄ, ԼԶ, 388)։

Հնացած և գործածությունից դուրս եկած պետք է համարել նաև Մ. Աբեղյանի նշած՝ նպատակի հայցականի հետևյալ կարգի կիրառությունները. «Մյուս օրը Փարպի պիտի երթային ուխտ (ուխտի, ուխտ անելու)։— Նա առանց յուր քրոջ տեսություն գնալու հեռացավ (տեսության, տեսնելու)։— Հավաքվել էին նրանց թամաշա (թամաշի համար, մտիկ անելու)։ Ես իմ ծառաներին ուղարկել եմ ոչխարը, նրանք եկել են ձեր այգիքը գողություն (գողության)։ ...Նա գնաց ուրս... Մեկին տես գնալ»[13]։

Ներկայումս հնացած սույն նպատակի հայցականների կողքին Մ. Աբեղյանը բերում է նաև հետևյալ օրինակները. «Նրան կանչեցին նշանդրեf, բայց հարսանիք չկանչեցին (նշանդրեքի, հարսանիքի)։— Նա գնաց պատերազմ»[14]։

Նման օրինակներում նպատակի և տեղի ուղղության հայցականները միաձույլ են հանդես գալիս։ Այսպիսի հայցականները դեռևս գործածական են մեր լեզվի զարգացման արդի փուլում։

Մանուկ Աբեղյանը բերում է գործողության հանգման ժամանակը ցույց տվող հայցականի օրինակներ, ինչպես՝ «Բարով հասնենք այն օրը։ Բարով եկող տարի հասնենք։ Նա առավոտից իրիկուն աշխատում է։ Թե այսօրից էգուց իմ գլուխը մի բան գա, դրանք կլինեն մեղավոր. (Պռ.)»[15]։

Ժամանակի, ինչպես նաև նպատակի հայցականի նմանօրինակ կիրառությունները հատուկ են եղել այդ շրջանի խոսակցական լեզ-

---

13 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 415։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում, էջ 413—414։

վին և գրական լեզվում տարածում չեն ստացել։ Մեր օրերում գրական լեզվի խոսակցականի վրա ունեցած աննախընթաց ազդեցության շնորհիվ այդպիսի կիրառությունները դուրս են մղվում նաև կենդանի խոսակցական լեզվից։

Այստեղ անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել նաև ուղղականաձև և տրականաձև հայցականների գործածությունների վրա։ Նախասովետական շրջանից վկայված ունենք անձի անվան ուղղականաձև հայցականի՝ որոշ հեղինակների մոտ նույնիսկ զգալի որակ կազմող գործածություններ։ Խոսքն իհարկե, չի վերաբերում ոճական նպատակներով անձի անունը իրի առումով կիրառելու դեպքերին. հմմտ. «Մեղադրական գրեց ներքինապետին՝ այնպիսի անմեղ մարդը սպանելու համար» (Մուր., 44)։ «...Գնա և պատսպարիր քո Սանականույշը վերահաս վտանգներից» (82)։ «Վասակ իշխանը հաշտեցրեց թագավորը յուր եղբոր և նրա աներոջ հետ» (116)։ «Զարաբախտ կինը նահատակության ճանապարհի վրա կորցրել էր իր ամուսինը» (Ա.Ի, 305)։

Ինչպես կտեսնենք դերանունների շարահյուսական կիրառություններում կատարված փոփոխությունները քննելիս, նախասովետական շրջանի գրական լեզվում կար նաև հակառակ երևույթը, այն է՝ իրի անվանը փոխարինող ցուցական դերանունների տրականաձև հայցականի գործածությունները ուղիղ խնդրի պաշտոնով։

Մեր լեզվի զարգացման արդի փուլի համար այս երկու կարգի կիրառություններն էլ հնացած են և անսովոր, քանի որ այժմ անձի անուն ուղիղ խնդիրը գերազանցապես դրվում է տրականաձև հայցականով, իսկ իրի անունը՝ ուղղականաձև հայցականով՝ չհաշված առանձին դեպքերը։ Իսկ սա նշանակում է, որ հոլովների կիրառության ասպարեզում մեր լեզվի զարգացումը ընթացել է նաև ուղղականաձև և տրականաձև հայցականների կիրառության ոլորտների հետագա աստիճանական ճշգրտման ուղղությամբ։

Հոլովների կիրառական նշանակությունների մեջ կատարված տեղաշարժներից պետք է նշել նաև պատճառական բացառականի կիրառության հետզհետե թուլացող միտումը, որի հետևանքով աստիճանաբար նրան փոխարինելու են գալիս մասին, վերաբերյալ կապերով խնդիրները։ Հարկ է հիշատակել նաև նախախորհրդային շրջանում ևս քիչ գործածական սահմանափակման ներգոյականի կիրառության վերացումը մեր օրերում։ Ավարտելով հոլովների կիրառական նշանակություններում կատարված տեղաշարժերի այս համառոտ ակնարկը՝ կարևոր ենք համարում մատնանշել, որ

Մանուկ Աբեղյանը բերում է հոլովների այնպիսի կիրառություններ, որոնք տարածված են եղել նախախորհրդային շրջանի խոսակցական լեզվում։ Տարված լինելով բարբառային ձևերից՝ դրանցից շատերը մուտք չեն գործել իր ժամանակի գրական լեզվի մեջ։ Մեր լեզվի զարգացման խորհրդային շրջանում խոսակցական լեզվի վրա գրականի ունեցած աննախընթաց ազդեցության հետևանքով այդպիսի կիրառությունները աստիճանաբար վերանում են նաև կենդանի խոսակցական լեզվում և նրանց փոխարինելու են գալիս գրական լեզվի համարժեք ձևերը։

6. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԿԱՏՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր օրերում մասնակի փոփոխություններ են կատարվել մի շարք դերանունների շարահյուսական որոշ կիրառություններում։ Ուսումնասիրության արժանի այդ բոլոր փոփոխությունների համար հատկանշական է այն, որ մի շարք դերանուններ ներկայումս նրանց բնորոշ շարահյուսական կիրառություններից բացի, նախախորհրդային շրջանի մեր գրական լեզվում ունեցել են նաև այլ կարգի գործածություններ, որոնք հետզհետե ետ են զարգացել և այսօր միանգամայն խորթ և անսովոր են հնչում։ Հարկ է նշել սակայն, որ հենց նախախորհրդային շրջանում նկատվում է նման կիրառությունների որոշների աստիճանական սահմանափակման միտում, որը իր որոշակի ավարտին է հասնում մեր օրերում, չնայած որ, ինչպես կտեսնենք ստորև, խորհրդային շրջանի ավագ սերնդի որոշ ստեղծագործողների երկերում դեռևս կարելի է հանդիպել այդպիսի կիրառությունների։

Այժմ քննության առնենք այդ փոփոխությունները ըստ դերանունների տեսակների։ Ամենից առաջ անհրաժեշտ է կանգ առնել բոլոր, ամեն (ամեն մի), յուրաքանչյուր որոշյալ դերանունների շարահյուսական կիրառություններում նկատվող համեմատաբար ակնառու փոփոխությունների վրա։

Բոլոր որոշյալ դերանունը ներկայումս նրան բնորոշ հոգնակի որոշյալից բացի, նախախորհրդային շրջանում կարող էր առնել նաև եզակի թվով որոշյալ, որպիսի դեպքում նա սովորաբար գործածվում էր ամբողջ դերանվան իմաստով. օրինակ՝ «...Մահվան պատճառած բոլոր սարսափն ու վիշտը» (ՆԴՄ, 30)։ «Բոլոր ժամանակ նայում էր լուսամուտից» (24)։ «Բոլոր ժողովուրդը եկան և ծովի պես փակեցին նրա շուրջը» (113)։

Հատկանշական է, որ, ինչպես երևում է վկայակոչված օրինակներից, բոլոր դերանվան բերականորեն եզակի գոյական որոշյալը կարող է լինել ոչ միայն հավաքական անուն, այլև հավաքական իմաստ չունեցող որևէ բառ։

Ամեն որոշյալ դերանունը, ի հակադրություն բոլոր որոշյալ դերանվան, մեր արդի գրական և կենդանի խոսակցական լեզվում առնում է միայն եզակի թվով որոշյալ[16], այնինչ՝ նախախորհրդային շրջանում չէր բացառվում այդ դերանվան գործածությունը հոգնակի թվով որոշյալի մոտ. հմմտ. «Գյուղի ծերերը նրա խորհրդին են դիմում ամեն դժվար հանգամանքներում...» (ՂԱ, ԸՆ, 112)։ «Նա այդ ամեն ձևերին ու շարժումներին մի միտք, մի նշանակություն էր տալիս» (195)։ «Ամեն դռներից ու անկյուններից դահլիճի սրահը վազեցին տիկինները» (ԱԻ, 312)։ «Անահիտը ամեն օրերից գեղեցիկ էր այսօր» (318)։ Չնայած Իսահակյանից բերված օրինակները քաղված են նրա 1922 թվի գրած ստեղծագործություններից, սակայն հենց այդ շրջանում արդեն ամեն դերանվան նմանօրինակ կիրառությունը բավականին հնացած էր։

Անշուշտ, մեր գրական լեզվի զարգացման նախախորհրդային շրջանի համար ևս բնորոշը և օրինաչափականը բոլոր դերանունորոշիչի մոտ հոգնակի, իսկ ամեն-ի մոտ եզակի որոշյալի գործածությունն էր, սակայն այդ շրջանում բավականաչափ տարածված էին նաև հակառակ կիրառությունները որպես այդ օրինաչափություններից կատարվող շեղումներ։ Այդ նշանակում է, որ արդեն 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին մեր գրական լեզվում որոշակիորեն առկա էր բոլոր, ամեն, ամբողջ դերանունների իմաստային ու շարահյուսական կիրառությունների սահմանները՝ ճշտելու և կոնկրետացնելու լինելության պրոցեսում գտնվող ուժեղ արտահայտված միտումը, որը իր վերջնական ավարտին հասավ մեր լեզվի զարգացման արդի փուլում։ Ներկայումս բոլոր դերանվան մոտ հոգնակի, իսկ ամեն. ամեն մի դերանունների մոտ եզակի գոյական-որոշյալի կիրառությունը դարձել է բացառություն չճանաչող օրինաչափություն, ուստի և միանգամայն անսովոր և կատարելապես հնացած են հակառակ գործածությունները, որոնք հանդիպում են խորհրդային շրջանի ավագ սերնդի որոշ գրողների, հատկապես Դ. Դեմիրճյանի երկերում. հմմտ. «Հարկ է թղթի ու բոլոր ըմբոստության հանցանքը դցել Մամիկոնյանի և մյուս նա-

---

16 Տե՛ս Ս Գ. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, 1956, էջ 138։

խարարների ու Դենշապուհի վրա» (ԴԴ, 3, 199)։ «Բոլոր լուրը ճըշմարիտ է» (ԴԴ, 4, 263)։ «Տիկնոջը առաջ էլ հասել էր երկրի ամեն կողմերից ժողովրդի այդ հորջորջումը սպարապետին» (85)։ «Բայց միաժամանակ նրանց զորքերը ես գրավեր մեր գործի կողմը ամեն միջոցներով» (225)։

Փոփոխություններ են նկատվում նաև յուրաքանչյուր որոշյալ և մի քանի անորոշ դերանունների շարահյուսական կիրառություններում։ Նախախորհրդային շրջանում նշված դերանունները կարող էին անմիջականորեն հարաբերության մեջ մտնել մասնական սեռականի հետ՝ դառնալով նրա հատկացյալը, այնինչ՝ այժմ նրանք այդպիսի պաշտոնով կապվում են միայն մասնական բացառականի հետ, դառնում են մասնական բացառականի լրացյալ[17]։

Անցնենք ժխտական և անորոշ դերանունների շարահյուսական կիրառություններում նկատվող մասնակի փոփոխությունների շարադրմանը։

Նախախորհրդային շրջանում, ինչպես նաև խորհրդային շրջանի ավագ սերնդի որոշ գրողների երկերում, բավականաչափ տարածված էր ոչինչ ժխտական դերանվան որոշիչային կիրառությունը. հմմտ.՝ «Առանձին ոչինչ բան չէր սպասում կյանքից» (Շիրվ., 273)։ «Դեպի ամուսինը նա հենց սկզբից ոչինչ սեր չէր տածում» (ՆԴ, 2, 18)։ «Ոչինչ տարօրինակություն չէր ներկայացնում երևույթը» (Մշակ, 12/12—1920)։ «Ոչինչ բան գոյություն չուներ այլևս իրեն համար» (Ա.Ի, 191)։ «Ոչինչ բարի վախճանի հույս չունեմ» (ԴԴվ, 324, 1954)։ «Մեր մատենագրության մեջ ոչինչ հիշատակություն չկա ավերակների քաղաքի դրության մասին» (Լեո, Անի, 21)։

Ներկայումս ոչինչ դերանվան որոշիչային կիրառությունը չափազանց անսովոր է և հնացած։ Այժմ քննարկված իմաստային կիրառությամբ հանդես է գալիս ոչ մի ժխտական դերանունը, այն էլ միայն եզակի որոշյալի հետ։

Ինչ-որ անորոշ դերանունը՝ հակառակ ոչինչ ժխտական դերանվան, այժմ գերազանցապես ունի որոշիչային կիրառություն[18], այնինչ՝ դեռևս 20-րդ դարի սկզբում, նույնիսկ խորհրդային շրջանի ավագ սերնդի որոշ ստեղծագործողների երկերում, բազմաթիվ են այդ դերանվան կիրառությունները ենթակայի և ուղիղ խնդրի

17 Մանրամասն տե՛ս հոլովների կիրառությունների փոփոխություններին նվիրված բաժնում։

18 Ինչ-որ դերանունը ունի նաև այնպիսի կիրառություններ, որտեղ նա հանդես է գալիս եղանակավորող նշանակությամբ. հմմտ. Այսօր ինչ-որ վատ եմ զգում։

պաշտոնով, օրինակներ՝ «**Ինչ-որ** կատարվել էր այդ կողմերում» (Բաֆ., 260)։ «Ջաղունյանի և այդ զինվորականի միջև **ինչ-որ** կա» (ՆԴ, 2, 272)։ «Ուզում էր ելի, ըստ երևույթին, **ինչ-որ** հարցնել, բայց ձայնը չհպատակեց նրան» (ՆԴՄ, 597)։

Համեմատիր նաև **ինչ-որ** դերանվան նույնպիսի կիրառությունները խորհրդային շրջանի ավագ սերնդի գրողների մոտ. «Նա մոտենում էր այս ու այն քարին, կռանում, նայում, չափում, **ինչ-որ** գրում...» (Ա.Բ, 235)։ «Հետո հայրիկը հեռախոսով **ինչ-որ** խոսեց» (ԳՄ, ԼԶ, 206)։ «Քահանան նայեց հանգած պառավին, **ինչ-որ** աղոթեց» (ԱՏՆ, 75)։ «Ղարա-Մահմուդը **ինչ-որ** հայհոյեց» (69)։

Մեր գրական լեզվի նախախորհրդային շրջանից նույնպիսի շարահյուսական պաշտոնով, սակայն հազվագյուտ կիրառությամբ վկայված է նաև **ով-որ** դերանունը. հմմտ. «Տեսա մահճակալիս մոտ **ով-որ** նստած է» (ՆԴ, 4, 83)։ Ներկայումս ոչ միայն անսովոր և հնացած է **ով-որ** դերանվան նմանօրինակ կիրառությունը, այլև այդ անորոշ դերանունը ամբողջովին դուրս է եկել գործածությունից։

7. ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրառությունը որպես լեզվի շարահյուսական կառուցվածքի գործուն ու կենդանի բաղկացուցիչ տարր, ինչպես հայոց լեզվի զարգացման ամբողջ պատմական պրոցեսում, այնպես էլ նրա արդի խորհրդային փուլում, ենթարկվում է նկատելի փոփոխությունների, ապրում է իր աստիճանական զարգացումը։ Խնդրառությունը լեզվի շարահյուսական կառուցվածքի՝ բառիմաստի փոփոխության նկատմամբ առավել զգայուն, բառապաշարի մեջ կատարված որոշ տեղաշարժերի համեմատաբար հաճախ արձագանքող բնագավառն է։ Ճիշտ է, նոր առաջացող հասկացությունների հետևանքով բառապաշարում կատարված նույնիսկ զգալի տեղաշարժերը չեն կարող խախտել տվյալ լեզվի խնդրառական ընդհանուր համակարգը, սակայն նրանք կարող են իրենց դրոշմը դնել այդ նույն խնդրառական համակարգի այս կամ այն մասնակի երևույթների վրա։

Ներկայումս մեր լեզվի խնդրառության համակարգում նկատվող այդ տեղաշարժերը իրենց բնույթով չափազանց բազմազան են և բազմատեսակ. խնդրառու բառի հոլովառության փոփոխություն, խնդրառու բառի կապական խնդրի փոփոխություն, կապով խնդրի փոխարինում միայն հոլովով արտահայտված խնդրով և

ընդհակառակն, լեզվի զարգացման նախորդ փուլին բնորոշ խնդրառական որոշ ձևերի մերժում, պասսիվացած կամ որոշ ժամանակ գործածությունից դուրս եկած ձևերի աշխուժացում և այլն՝ ահա համառոտակի խնդրառության բնագավառում նկատվող հրնարավոր տեղաշարժները։

Խնդրառության բնագավառում նկատվող զարգացման որոշ միտումներ ձևավորվել են հենց խորհրդային շրջանում զարգացման արդի փուլին բնորոշ ներքին ու արտաքին մի շարք գործոնների երբեմն առանձին, երբեմն էլ համատեղ ազդեցությամբ։ Այդպիսին է, օրինակ, զոհել բայի խնդրառությունը։ Մեր լեզվի զարգացման նախախորհրդային շրջանում այս բայի խնդրառությունը գերազանցապես կապային կապակցական էր. նա առնում էր վրա կապով հանգման անուղղակի խնդիր։ Սակայն, ինչպես ցույց կտրվի ստորև, խորհրդային շրջանում, հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներից սկսած, այդ բայը ցուցաբերեց հայցականով խնդիր ընդունելու միտում։ Չնայած նման կարգի որոշ փաստերի առկայության՝ նկատվող խնդրառական փոփոխությունների ճնշող մեծամասնությունը կապված է մեր լեզվի զարգացման նախորդ՝ նախախորհրդային շրջանի հետ, իր ակունքներն ունի նույնիսկ անցյալ դարի վերջերի գրական լեզվում։ Խորհրդային շրջանի համար այս տեսակետից բնորոշ է այն, որ նախորդ փուլում սկիզբ առած խնդրառական այս կամ այն աննշան քանակական փոփոխությունը զարգացման միտումի և որակական փոփոխության է վերածվում մեր օրերում զարգացմանը ուղղություն տվող որոշ գործոնների ազդեցությամբ։ Համեմատությունները ցույց են տալիս, որ մեր լեզվի զարգացման նախընթաց շրջանում սկիզբ առած քանակական փոփոխությունները, խնդրառական այս կամ այն ուժեղ կամ թույլ արտահայտված միտումը արդի փուլում հիմնականում առաջանում է մի քանի հետևանք։

Զարգացման նախընթաց շրջանում խնդրառության բնագավառում նկատվող համեմատաբար թույլ արտահայտված միտումները, խորհրդային շրջանում աստիճանաբար ուժեղանալով, հետզհետե իշխող են դառնում, և նախկինում սկիզբ առած տեղաշարժը ուսումնասիրվող շրջանում վերջնականապես ավարտվում է։ Այսպիսի փոփոխության հետևանքով մեր օրերում ամբողջությամբ մերժվել են նախկինում գործածության լայն ոլորտ ունեցող խնդրառական մի շարք ձևեր։ Խնդրառական բնագավառում տեղի ունեցած այդպիսի փոփոխության լավագույն օրինակ է վրա կապով վերաբերու-

թյան անուղղակի խնդիրը ասացական և մտածական բայերի մոտ։ Ինչպես հայտնի է, նախախորհրդային շրջանի և՛ գրական, և՛ կենդանի խոսակցական լեզվում բավականին լայն տարածում ուներ ասացական և մտածական բայերի (ասել, խոսել, զրուցել, խորհել, մտածել և այլն) վրա կապով վերաբերության անուղղակի խնդիրը. հմմտ. «Իշխանը դարձյալ սկսավ Գոռի վրա մտածել» (Մուր., 3,11)։ «Ինչի՞ վրա եք ասում այդ (ՆԴ, 6, 31)։ «Ուղեղս մինչ այսօր չի դադարել նրա վրա խորհելուց» (ԱԻ, 336)։ «Մտածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ազատ խաղում էր հանդերում» (ՀԹ, 3, 44)։

Սակայն նկատելի է, որ դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին մեր գեղարվեստական գրականության ու մամուլի լեզվում արդեն զգացվում էր վրա կապով վերաբերության անուղղակի խնդրի գործածությունը աստիճանաբար սահմանափակելու և դրա հաշվին մասին կապով խնդրի կիրառությունը հետզհետե աշխուժացնելու միտումը։ Մեր լեզվի զարգացման նախորդ փուլում սկիզբ առած խնդրառական այդ տեղաշարժը իր վերջնական ավարտին է հասնում մեր օրերում։ Չնայած որ խորհրդային շրջանում ևս ավագ սերնդի որոշ ստեղծագործողների երկերում կարելի է հանդիպել վրա կապով վերաբերության անուղղակի խնդրի կիրառությունների, որպես լեզվական նախկին միջավայրի շարունակվող ազդեցության անխուսափելի հետևանք, սակայն ներկայումս այդ կարգի խնդիրը ամբողջությամբ դուրս է եկել գործածությունից։ Այժմ հայոց և գրական, և կենդանի խոսակցական լեզվում վերաբերության անուղղակի խնդիրը հիմնականում դրվում է մասին, շուրջ(ը), վերաբերյալ կապերով։

Մեր լեզվի խնդրառության բնագավառում կան նաև այնպիսի փոփոխություններ, որոնք նույնպես սկիզբ են առել զարգացման նախընթաց շրջանում որպես համեմատաբար թույլ միտումներ ու առավել կամ նվազ չափով աննշան քանակական փոփոխություններ և խորհրդային շրջանում վերածվել են զգալի որակի, սակայն, ի տարբերություն նախորդ կարգի տեղաշարժերի, վերջնական որոշակի ավարտի չեն հասել և գտնվում են լինելիության պրոցեսում։

Մոտավորապես այդպիսի վիճակ է ներկայացնում մեր ձեռնարկել բայի խնդրառական տեղաշարժը։ Այդ բայը նախախորհրդային շրջանի մեր գրական լեզվում հիմնականում ընդունում էր տրական հոլովով խնդիր։ Սակայն նրա մեջ եղած իմաստային երկփեղկումը իր հերթին բնականաբար չէր կարող չշոշափել խնդրառության բնագավառը և ձեռնարկել բայը հենց այդ շրջանում սկսել

և նախաձեռնել իմաստով երբեմն կարող էր պահանջել հայցականով խնդիր։ Նշելի է, սակայն, որ հիշյալ շրջանում ձեռնարկել բայը հայցականով խնդիրը չափազանց թույլ արտահայտված միտում էր, որը նույնիսկ լրիվ չէր ընդգրկում այն դեպքերը, երբ այդ բայը նշանակում էր սկսել։ Հետևյալ օրինակներից պարզ երևում է, թե ինչպես այդ բայը քննարկվող նշանակությամբ էլ հաճախ ընդունում էր տրականով խնդիր։

«Գործի ձեռնարկեց (իմա՝ գործել սկսեց— Ռ. Հ.) և մեր արտիլերիան» (Մշակ, 21/8—1914)։ «Պետք է ձեռնարկել (իմա սկսել— Ռ. Հ.) քննութեան» (Մշակ, 3/1—1914)։

Խորհրդային շրջանում քննարկվող բայի հայցականով խնդիրը աստիճանաբար սկսում է ընդգրկել ոչ միայն այն բոլոր դեպքերը, երբ այդ բայը հանդես է գալիս «սկսել» իմաստով, այլև նրա մյուս իմաստներով եղած կիրառությունները։ Խնդրառական այդ փոփոխությունը լինելով խնդրառու բայի մեջ եղած իմաստային տարբերակումների հետևանք՝ հետագայում միանգամայն անտարբեր է դառնում այդ իմաստային երկփեղկման հանդեպ։ Հետզհետե իշխող է դառնում քննարկվող բայի հայցականով խնդիրը, իսկ տրականով խնդիրը աստիճանաբար սկսում է ետ ղարգանալ։ Թեպետ 50-ական թվականներից սկսած ձեռնարկել բայի տրականով խնդրի կիրառությունների սահմանները խիստ սահմանափակվել են, սակայն դեռևս դժվար է այդ տեղաշարժը դիտել որպես վերջնական ավարտի հասած երևույթ։

Այս կարգի տեղաշարժների նշանակությունն այն է, որ որպես փոփոխության լինելիության պրոցեսի հետևանք երկար ժամանակ կողք-կողքի գոյակցում են խնդրառական զույգ ձևեր՝ մեկի կամ մյուսի հետզհետե աշխուժացող միտումով։ Երբեմն չի բացառվում այդ զույգ ձևերի իմաստային կամ ոճական հետագա տարբերակումը։

Ինչպես տեսնում ենք, թեպետ ձեռնարկել բայի խնդրառության մեջ կատարված տեղաշարժը դեռևս գտնվում է լինելիության պրոցեսում, սակայն արդեն իսկ իշխում է հայցականով խնդիրը, այսինքն՝ նախկինում սկիզբ առած միտումը արդեն որոշակիորեն դարձել է իշխող։ Սակայն կան նաև նախախորհրդային շրջանում առաջացած խնդրառական փոփոխության այնպիսի տենդենցներ, որոնք խորհրդային շրջանում ևս շարունակում են գործել, հարատևել, բայց այս կամ այն հակազդող գործոնի հետևանքով դեռևս իշխող չեն դարձել։ Դրա լավագույն օրինակն է ազդել բայի խընդ-

րառությունը։ Այդ բայը զարգացման նախախորհրդային շրջանում հիմնականում ընդունում էր վրա կապով անուղղակի խնդիր. Հմմտ. «Շվարած դրությունը սաստիկ ազդեց Մուշեղի վրա» (Րաֆ., 153)։ «Իմ աչքերի վրա սաստիկ վատ է ազդում կրակը» (466)։ «Աղաչանք պաղատանք չազդեցին նրա վրա» (ՂԱ, ԸԵ, 374)։ Սակայն պետք է նշել, որ հենց այդ շրջանում ձևավորվում էր այդ բայի խնդիրը օրինաչափորեն տրականով դնելու տենդենցը. Հմմտ. «...Մարդկանց անխիղճ արարքներն սաստկապես խորապես ազդում էին նրան» (ՆԴՄ, էջ 237)։ «Խոստովանությունդ ուրիշ կերպ չէր կարող ազդել ինձ» (335)։ «Նրա պատմությունը խիստ ազդել էր Շանյանին» (359)։ Անշուշտ, ազդել բայի տրականով խնդիրը Նար-Դոսի հնարանքը չէր։ Նա ձգտում էր կիրառել այդ բայի գրաբարյան խնդրառությունը։

Մեր լեզվի զարգացման խորհրդային շրջանում խնդրառական փոփոխության այդ նույն տենդենցը հետևողականորեն իր երկերում անց էր կացնում Դ. Դեմիրճյանը. Հմմտ. «Այս բանն ավելի ազդեց Վասակին» (ԴԴ, 3, 385)։ «Նրան ազդում էին մարգարեի կնոջ խորհրդավոր աչքերը...» (ԴԴՎ, 319)։ «Սա ավելի ազդեց մարդկանց» (ԴԴՎ, 360)։ «Նա ազդում էր մոգերին» (ԴԴ, 3, 178)։ Ազդել բայի, առանց կապի, տրականով խնդիրը կիրառվում է նաև մեր օրերում. Հմմտ. «Ջերմաստիճանի հանկարծակի և ուժեղ տատանումները ևս բացասաբար են ազդում բույսերի նորմալ աճին» (Եր., 16/12—1964)։ «Այդ անկեղծությունն էլ երկյուղ է ազդում Մացակին» (ՆԶՀ, 292)։ «...Նույն բառի երկու նման հնչյուններից մեկը մյուսին ազդելով՝ փոխում է նրա որակը» (Գուրգեն Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 95)։

Չնայած այս բոլորին, ազդել բայի տրականով խնդիրը որպես զարգացման տենդենց մեր օրերում դեռևս գերիշխող չի դարձել և կիրառության հաճախականությամբ զիջում է նույն բայի վրա կապով խնդրին՝ մանավանդ կենդանի խոսակցական լեզվում։

Ունենք նաև այնպիսի դեպքի օրինակ, երբ նախախորհրդային շրջանում սկիզբ առած խնդրառական փոփոխությունը խորհրդային շրջանում դադարել է զարգացման միտում լինելուց և տարածում չի գտել։

Մեր լեզվի զարգացման գործում իր որոշակի ավանդը մուծեց «Մշակ» թերթը բավականին հետևողական կերպով ձգտում էր ռուսաց լեզվի пользоваться բայի նմանակությամբ հայերենում քաղաքացիական իրավունք տալ օգտվել բայի գործիական խնդրին.

հմմտ. «...օգտվել է հարստահարության պտուղներով» (Մշակ, 18/1—1914)։ «Թույլ տալ ազատ օգտվելու մայրենի լեզվով և գրականությամբ» (Ն. տ.)։ «Օգտվում են մանկական աշխատանքով» (Ն. տ.)։ Առաջարկված խնդրառական հիշյալ փոփոխությունը սովետական շրջանում ամբողջությամբ մերժվեց։

Այսպիսով, մեր լեզվի զարգացման նախորդ շրջանում նկատվող խնդրառական այս կամ այն փոփոխությունը խորհրդային շրջանում կարող է ընթանալ երկու ուղղությամբ։ Այն կարող է կամ վերածվել զարգացման միտումի, ընդունվել ու գործածվել և կամ ընդունելություն ու պարարտ հող չգտնելով՝ մերժվել, հետագա զարգացում չստանալ և դուրս գալ գործածությունից։ Խորհրդային շրջանում զարգացման միտումի վերածված ու հետզհետե տարածվող խնդրառական փոփոխություններն իրենց հերթին կարող են լինել կամ արդեն որոշակի ավարտի հասած երևույթներ, կամ էլ դեռևս լինելիության ընթացքում գտնվող պրոցեսներ։

Այժմ անհրաժեշտ է համառոտ կերպով ցույց տալ, թե խնդրառական ինչ կարգի տեղաշարժներ են կատարվել մեր լեզվի զարգացման խորհրդային շրջանում և հնարավորության սահմաններում կանգ առնել այդպիսի փոփոխություններ առաջացնող պատճառների վրա։

Խնդրառության բնագավառում տեղի ունեցող բազմազան ու բազմատեսակ տեղաշարժները հիմնականում լինում են երկու կարգի՝ 1. խնդրառու բայի սեռային անցման հետ կապված խնդրառական փոփոխություն, 2. միևնույն (չեզոք) սեռի խնդրառու բայերի ներսում կատարվող խնդրառական փոփոխություն։

Առաջին կարգի տեղաշարժների ժամանակ խնդրառական փոփոխությունը կամ հանդես է գալիս որպես խնդրառու բայի սեռի փոփոխության հետևանք, կամ էլ հենց ինքը առաջ է բերում այդպիսի սեռային անցում։ Բայի սեռային անցումների հետ կապված խնդրառական այս փոփոխությունը, որի ընթացքում միևնույն խնդրառու բայի անուղղակի խնդիրը աստիճանաբար կարող է վերածվել ուղիղ խնդրի և ընդհակառակն, այսինքն՝ կարող է տեղի ունենալ քերականական անցում խնդիրների երկու հիմնական տեսակների միջև, այս կամ այն չափով՝ մեծ մասամբ կապված խնդրառու բայի անցողականության ու անանցողականության հետ, մանրամասն և բազմակողմանիորեն ուսումնասիրված է մասնագիտական գրականության մեջ։ Ելնելով սույն աշխատանքի բնույթից՝ մենք կաշխատենք ի մի բերել սեռային անցման հետ կապված

խնդրառական այն փոփոխությունները, որոնք հիմնականում կատարվել են մեր լեզվի զարգացման խորհրդային շրջանում՝ հայոց լեզվի նկատմամբ ներքին կամ արտաքին այս կամ այն գործոնի ազդեցությամբ՝ միաժամանակ ավելացնելով մեր կողմից նկատված փոփոխություններն ու շարադրելով մեր նկատառումները:

Մենք այստեղ հիմնականում կանգ կառնենք խնդրառու բայի սեռային անցման հետ կապված խնդրառական փոփոխությունների վրա, քանի որ միևնույն (չեզոք) սեռի խնդրառու բայերի ներսում կատարվող խնդրառական փոփոխությունների մասին այս կամ այն չափով խոսվում է կապերի և հոլովների կիրառություններին նվիրված բաժիններում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց լեզվի զարգացման արդի շրջանում առավել ուժեղ կերպով է դրսևորվում որոշ խնդրառու բայերի մոտ ուղիղ խնդրի աշխուժացման միտումը՝ ի հաշիվ անուղղակի խնդրի: Խնդրառության բնագավառում կատարվող այդպիսի փոփոխությունները տեղի են ունենում զանազան պատճառներով ու տարբեր հիմունքներով:

Անշուշտ, խնդրառական համակարգում տեղի ունեցող այս բարդ տեղաշարժերում հաճախ ձևաբանական ու շարահյուսական հիմունքները գործում են միասնաբար և երբեմն էլ միաձուլվում են: Սակայն դրանից բոլորովին էլ չի հետևում, որ խնդրառական կոնկրետ փոփոխությունը ուսումնասիրելիս հնարավոր չէ որոշել, թե տվյալ փոփոխության համար որ հիմունքն է որոշիչ դեր կատարել՝ շարահյուսակա՞նը, թե՞ ձևաբանականը:

Ահա մեկ օրինակ:

Նախասովետական շրջանում մեր գրական լեզվում կար գրել *բառից կազմված* գրվել *ներգործական բայը, որը բնականաբար ընդունում էր հայցական խնդիր. հմմտ. «Իշխանական աղախինները* կուտ էին գրվում *սիրելի թագուհիներին» (Րաֆ., 41)։ «*Ցրվեցէք *այդ անիծյալ պարսկական* բանակը*» (511)։ «Դու* կցրվես *պարսից* բանակը...*» (524)։ «Խեղճ մայրս... հոգի* տրամադրությունս գրվելու *համար ինձ ուժով ամառանոց ուղարկեց» (ԱԻ, 320)։*

Բայց քանի որ հիշյալ բայաձևը իր ձևաբանական կառուցվածքով կարող էր նույնանալ գրել *ներգործական բայից կազմված կրավորականի հետ (գրվել), ուստի այդ ձևը որպես ներգործական բայ աստիճանաբար դուրս եկավ գործածությունից:*

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում խնդրառական տեղաշարժի պատճառը խնդրառու բայի ձևաբանական կառուցվածքն է: Պարզ

է, որ խնդրառական այս կարգի տեղաշարժերի ուսումնասիրությունը հիմնականում պետք է կատարվի ձևաբանության շրջանակներում, ուստի և մենք դրանք քննարկման առարկա չենք դարձնում։

Այստեղ համառոտակի կանգ կառնենք մեծ մասամբ շարահյուսական հիմունքներով, գլխավորապես բառերի քերականական կապով պայմանավորված խնդրառական փոփոխությունների և դրանց պատճառների վրա։

Հայտնի է, որ խնդրառու բայի հետ ունեցած տրամաբանական ու շարահյուսական կապի սերտության աստիճանի տեսակետից առաջին տեղը բռնում է ուղիղ խնդիրը, առանց որի սովորաբար աներևակայելի է ներգործական սեռի բայի գործողության կատարումը։ Նկատելի է, սակայն, որ անուղղակի խնդիրների տեսակները իրենց խնդրառու բայի հետ ունեցած կապի սերտության տեսակետից միևնույն մակարդակի վրա չեն գտնվում։ Դրանց մեջ առավել ուժեղ է հանգման անուղղակի խնդրի պահանջը[19]*։ Ուստի պատահական չէ, որ այժմ, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները և մեր ձեռքի տակ եղած փաստերը, ուղիղ խնդիր ընդունելու հակում են հանդես բերում հիմնականում այն բայերը, որոնց մեջ «ակնհայտ է հանգման խնդրի պահանջը, որի ուժեղացումը վերածվում է ուղիղ խնդրի պահանջի՝ իր հետ բերելով անցողականության հատկանիշ»*[20]*։*

Նշելի է, որ ներկայումս որոշ խնդրառու բայերի հանգման անուղղակի խնդրի պահանջից ուղիղ խնդրի պահանջին անցնելու միտումը հիմնականում գտնվում է լինելիության պրոցեսում, չնայած, որ նկատելի են նաև որոշ ավարտի հասած փոփոխություններ։

Լինելիության պրոցեսում գտնվող խնդրառական այս կարգի փոփոխությունները լեզվի զարգացման տվյալ շրջանում պատճառ են դառնում որոշ խնդրառու բայերի կրկնասեռության[21]*։*

Ներկայումս նշված հիմունքով հանգման անուղղակի խնդրի պահանջից ուղիղ խնդրի պահանջի անցնելու հակում են ցուցաբերում **նայել, վերանայել** *բայերը. հմմտ. «Մամուլի կոմիտեն պարտավոր է* **վերանայել** *գրականության բոլոր տեսակների* **բովանդակությունը** *և* **ուղղությունը»** *(ՍՀ, 7/2—1964)։ «Յուրաքանչյուր տեղական...* **վերանայում է** *որոշակի մինիստրությունների* **աշխատան-**

19 *Այդ մասին մանրամասն տե՛ս* Ս. Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում, էջ 686—688։*

20 *Նույն տեղում, էջ 688։*

21 *Տե՛ս նույն տեղում, էջ 702—722։*

քը» (ՍՀ, 27/3—1964)։ «Ապստամբները վերահսկում են Կիվուի նահանգի մեծ մասը» (ՍՀ, 6/6—1964)։ «Բանակի քունը հսկող պահակներից շատերը նույնիսկ չէին հասցնում զգալ...» (Սխ, ՄՍ, 620)։

Ճիշտ նույնպիսի միտում է ցուցաբերում նախկինում գերազանցապես տրականով կամ վրա կապով հանդման անուղղակի խնդիր ընդունող գրոհել բայը։

«Մի խումբ ինքնաթիռներ առաջադրանք էին ստացել ֆիննական ծոցում գրոհել թշնամու քարավանը» (Ավ., 22/12—1964)։ «Ավագյանը որոշում է գրոհել հակառակորդի արքան» (Եր., 23/3—1964)։ «Ազուլիսցիները, սակայն, չէին գրոհում ամրապարիսպ վանքը» (Սխ, ՄՍ, 596)։ «Լուսաբացին թուրքերը սկսեցին գրոհել Հալիձորը» (639)։

Այս բայի սեռային փոփոխության մեջ, բացի վերոհիշյալ հիմունքից, ինչպես նշում է պրոֆ. Ա. Աբրահամյանը, որոշակի դեր է կատարել նաև ռուսերենի նույնիմաստ штурмовать բայի խնդրառությունը։

Նախկինում մեծ մասամբ տրականով հանդման անուղղակի խնդիր ընդունող մի շարք խնդրառու բայերի (ունկնդրել, սպասարկել, ձեռնարկել) ներկայումս ուղիղ խնդրի պահանջին հակվելու միտումը բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Դ. Առաքելյանը բացատրում է այդ բայերի, որպես բարդ բառերի ներսում խնդրառու բայի և ուղիղ խնդրի շարահյուսական կապի մթագնումով։ Եվ իսկապես, նշված բայերը բարդ բառեր են, որոնց երկրորդ բաղադրիչը անցողական բայ է։ Այդ բայերի մեջ ուղիղ խնդրի պահանջը միանգամայն թույլ, նույնիսկ աննշան կարող է լինել մինչև այն ժամանակ, քանի դեռ առաջին բաղադրիչը գիտակցվում է որպես ուղիղ խնդիր և բավարարում է բարդ բառի լրացյալ անդամի ուղիղ խնդրային պահանջը, իսկ բայը ամբողջությամբ պահանջում է հանդման խնդիր։ Սակայն հենց որ այդ բաղադրիչը դադարում է որպես ուղիղ խնդիր գիտակցվելուց, ամբողջ բարդ բառի, որպես խնդրառու բայի մեջ ուժեղանում է ուղիղ խնդրի պահանջը, որի համար պատրաստի նյութ է հանդիսանում նախկին հանդման անուղղակի խնդիրը։ Ահա և հիշյալ բառերի հայցական խնդրի օրինակներ. «Նրանք կունկնդրեն միջազգային կոմունիստական շարժման ձայնը» (ՍՀ, 11/4—1964), «...Կազմակերպված է 24 ժամյա վթարային ծառայություն՝ ջեռուցման ցանցը սպասարկելու համար» (Եր., 7/12—1964)։ «Խաղավերջում հյուրերը ձեռնարկեցին ակտիվ գործողություններ» (ՀԹ, 2/4—1964)։ «Մի շարք այլ պետություններ

Քայլեր ձեռնարկեցին 1964 թվականի իրենց ռազմական բյուջեները որոշ չափով կրճատելու ուղղությամբ» (ՍՀ, 21/4—1964)։ «Դու այս խառն ժամանակներում այդպիսի մի մեծ **գործ ես ձեռնարկել**» (Սև, ՄՍ, 461)։

Անհրաժեշտ է նշել, որ նախկինում գերազանցապես հանգման անուղղակի խնդիր ընդունող բայերի մեծ մասի մոտ ուղիղ խնդրի կիրառության աշխուժացումը որպես զարգացման միտում ներկայումս դեռևս որոշակի ավարտի չի հասել և հիմնականում գտնվում է լինելիության պրոցեսում, որը պատճառ է դառնում մեր օրերում խնդրառական զույգ ձևերի առկայության։ Խոսքը, իհարկե, չի վերաբերում խնդրառական այնպիսի զույգ ձևերի, որոնց առկայությունը պայմանավորված է խնդրառու բառի իմաստային տարբերակմամբ։ Հնարավոր է, որ խնդրառական այդպիսի զույգ ձևերից մի քանիսի առաջացման ժամանակ որոշակի դեր կատարած լինի խնդրառու բայի իմաստային տարբերակումը։ Չի բացառվում նաև ներկայումս գոյություն ունեցող խնդրառական այդ զույգ ձևերի մի մասի հետագա իմաստային կամ ոճական տարբերակումը։

Ահա և խնդրառական մի շարք այդպիսի զույգ ձևերի օրինակներ. «Մարդիկ պետք է **տիրապետեն** այդ **մեթոդներին**» (ՍՀ, 25/—4—1964)։ «Կմեծանա քիչ թե շատ, կխելոքանա և մեզ նման **կտիրապետի** նույն երգը բազում անգամ լսելու **արվեստին**» (ԳՄ, ԼՁ, 368)։ «Այդ **փորձն** ավելի լավ **տիրապետելուն** օգնող հանրամատչելի կինոֆիլմերի ստեղծումը...» (ՍՀ, 25/4—1964)։ «Սուսերամարտիկը կատարելապես պետք է **տիրապետի** իր **ուշադրությանը**» (ՀՅ, 12/1—1965)։ «Այդ բեկերը հիմա էլ մնում են և շարունակում են **տիրել** իրենց **հողերին**» (ԱԲ, 696)։ «Գաբրիելյանը **տիրել էր**... 4 սենյականոց **շենքին**...» (ՍՀ, 21/1—1965)։ «Իմպերիալիզմը այժմ **տիրում է** աշխարհի ոչ քիչ **մասը**» (ՍՀ, 16/4—1964)։ «**Խրախուսել** ֆուտբոլի հետագա **զարգացմանը**... (ՀՅ, 21/11—1964)։ «Ըստ աշխատանքի վարձատրման սկզբունքը... **խրախուսում է** աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի **բարձրացումը**» (ՍՄԿԿ 22-րդ համ. նյութերը, 1962, էջ 226)։ «Քայլերս ուղղեցի դեպի կայարան, **դիմավորելու** համար «Երևան—Թբիլիսի» **գնացքին**» (ԳՄ, ԼՁ)։ «...Հանդիսավոր պայմաններում **դիմավորեցին** նոր **տարին**» (Եր., 4/1—1960)։ «Այդ երկրների հակաժողովրդական շրջանները ձգտում են **խոչընդոտել** սոցիալիստական **առաջադիմությանը**» (ՍՄԿԿ 22-րդ համ. նյութերը, 1962, էջ 475)։ «Ժամանակին... ա-

պահվում է շինարարներին, որպեսզի ոչինչ չխոչընդոտի նրանց աշխատանքը» (Եր., 8/2—1965)։ «Խանգարում էր մեր ընդհանուր գործին» (ՍՀ, 29/1—1965)։ «Զգտում են խանգարել համաշխարհային ջերմամիջուկային պատերազմի սպառնալիքի դեմ ժողովուրդների պայքարին» (ՍՀ, 11/4—1964)։ «Դրանք խանգարում էին մեր առաջընթացը» (ՍՀ, 16/4—1964)։ «Բռնիր նրա պոչը, որպեսզի խանգարես նրա անարգել առաջացումը» (Սխ, ՄՍ, 409)։ «Մենք կգերազանցենք Ամերիկայի Միացյալ Նահանգներին, ինչպես նրանց արդեն գերազանցել ենք ինդուստրիայի կարևորագույն ճյուղերում» (ՍՀ, 11/4—1964)։ «Այն 2,2 միլիարդ դոլարով կգերազանցի... 1965 թ. ֆինանսական տարվա ծախսերը» (ՍՀ, 27/1—1965)։ «Փոխադարձ ապրանքամատակարարումների 1966—1969 թթ. ծավալը մոտավորապես 1,5 անգամ գերազանցում է 1962—1963 թթ. ապրանքաշրջանառությունը» (ՍՀ, 7/2—1964)։

Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, խնդրառական վերոհիշյալ զույգ ձևերի մեծ մասում իմաստային տարբերություն գոյություն չունի, երկու դեպքում էլ խնդրառու բայը հանդես է գալիս միևնույն իմաստով՝ նույնիսկ առանց սեռից բխող իմաստային տարբերության։ Այդ իսկ պատճառով, մեր կարծիքով, այդ կարգի բայերը պետք է տարբերել բուն կրկնասեռ բայերից. դրանք կարելի է կրկնասեռ համարել պայմանականորեն։ Խնդրառական այսպիսի զույգ ձևերը լայն տարածում և կիրառության մեծ հաճախականություն են ստացել խորհրդային փուլում, ուստի և այս կարգի կրկնասեռությունը մեր լեզվի զարգացման քննարկվող էտապի բնորոշ գծերից է։ Նման կարգի կրկնասեռ բայեր և խնդրառական նշված կարգի զույգ ձևեր մեր լեզվի զարգացման նախորդ փուլում չափազանց սակավ են։ Սրան հակառակ, նախահեղափոխական շրջանի մեր ազգային լեզվին ավելի բնորոշ էին բուն կրկնասեռ բայերը։ Բուն կրկնասեռ բայերի դեպքում խնդրի փոփոխությունը անհրաժեշտաբար ուղեկցվում է խնդրառու բայի իմաստային կամ առնըվազն սեռից բխող իմաստային տարբերությամբ. հմմտ. Նա քարեր է գահավիժում, քարերը գահավիժում են։

Բուն կրկնասեռ բայերի մոտ ոչ միայն բացառվում է խնդրառական զույգ ձևերի առկայությունը, այլև խնդիրների տարբերությունը առաջ է բերում բայական-անվանական բառակապակցության կամ նախադասության կառուցվածքի փոփոխություն։

Նախախորհրդային շրջանի այդպիսի կրկնասեռ բայերից էին ճնչել, աղմկել, գահավիժել, լալ, բխել, կանգնել, արածել, շանթել,

հարվածել և այլն։ Եթե նախկինում գերապանցապես չեզոք մի շարք բայերի մոտ ուղիղ խնդրի կիրառությունը հետզհետե ընդլայնվելով՝ մեր օրերում վերածվել է զարգացման միտումի, որը մեծ մասամբ դեռ լինելիության պրոցեսում գտնվող տեղաշարժ է, նշված կրկնասեռ բայերի մոտ, ընդհակառակը, ուղիղ խնդրի կիրառության ոլորտներն են աստիճանաբար սահմանափակվել, և ներկայումս այդ պրոցեսը արդեն հասել է վերջնական ավարտի։ Պետք է նշել, որ նշված բայերի մեծ մասի կրկնասեռությունը գալիս է գրաբարից, և 19-րդ դարի վերջերի, մանավանդ 20-րդ դարի սկզբների մեր գրական լեզվում արդեն նկատվում էր նրանց մոտ ուղիղ խնդրի կիրառության ոլորտների սահմանափակման միտումը։ Խորհրդային շրջանում այդ կարգի բայերի մոտ ուղիղ խնդրի գործածությունը միանգամայն խորթ է ու անսովոր և միայն բացառիկ դեպքերում կարող է արդարացում գտնել որպես գեղարվեստական առեղծվածության ոճական հնարանք. հմմտ. «Քո վայելքի համար են ծաղիկ բխում ծով ու հող։ Անապատները մեղր կբխեն: Ախ, ով գիտե, թե սարին դու գառներ ես արածել: Մորս աչքերն են լացել կոտորածները հայկական» (ՀՇ, ՔՀ, 1, 86, 265, 426)։ «Ով բամբակի դեզեր կանգնի» (ՀՇ, ՔՀ, 2, 310)։ «Պղնձե փողերը հնչեցին թաղման նվագը...» (ԱԲ, 1, 298)։ «Գերմանական դաշնամուրը թվաց, թե առեղծվել է միայն մահվան քայլերգ հնչելու» (ԲՎ, ԼՈ, 464)։

Այսպիսով, 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների մեր ազգային լեզվում սկիզբ առած մի շարք միտումներ խորհրդային շրջանում մեր լեզվի խնդրառության բնագավառում առաջ են բերել որոշ տեղաշարժեր, որոնց մի մասը դեռևս գտնվում է լինելիության պրոցեսում, իսկ մյուս մասը հասել է որոշակի ավարտի։ Խնդրառության բնագավառում կատարված այդպիսի տեղաշարժերից հատկանշական են նախկինում գերապանցապես չեզոք որոշ բայերի մոտ ուղիղ խնդրի պահանջի ուժեղացումը, հետևաբար խնդրառական զույգ ձևերի առաջացումը և ընդհակառակը՝ երբեմնի կրկնասեռ բայերի մոտ ուղիղ խնդրի պահանջի թուլացումը, կիրառության ոլորտի սահմանափակումը և վերացումը։ Խնդրառության բնագավառում նկատվող այս կարգի փոփոխությունների մասին խոսվում է հոլովների և կապերի կիրառություններում կատարված տեղաշարժերի կապակցությամբ։

8. ԿԱՊԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովետական շրջանում հայոց գրական լեզվի զարգացման ու կատարելագործման ցայտուն դրսևորումներից մեկն էլ ինչպես ընդհանրապես կապական համակարգում, այնպես էլ կապերի շարահյուսական կիրառություններում տեղի ունեցած փոփոխություններն են: Մի կողմ թողնելով նոր կապերի առաջացումն ու նախկինում կիրառվող որոշ կապերի գործածությունից դուրս գալը, անհրաժեշտ է նշել, որ մեր գրական լեզվի զարգացման մոտավորապես կես դար ընդգրկող քննարկվող ժամանակաշրջանում մի շարք կապեր այս կամ այն չափով իրենց վրա են կրել զարգացման կնիքը. բազմաթիվ կապեր մի կողմից ընդարձակել են իրենց գործածության ոլորտները՝ ձեռք են բերել իմաստային նոր նշանակություններ ու ոճական յուրահատուկ կիրառություններ, մյուս կողմից՝ կորցրել են նախկինում իրենց բնորոշ, բայց այժմ հնացած որոշ կիրառական նշանակություններ:

Մեր ծրագրի սահմաններից դուրս է մեկ առ մեկ առանձին կապերի ու կապական բառերի կրած բոլոր փոփոխությունների մանրամասն քննությունը: Ելնելով սույն աշխատության բնույթից ու նպատակներից՝ մենք կփորձենք նկարագրել կապերի կիրառություններում նկատվող փոփոխությունների հիմնական, գլխավոր ուղղությունները, զարգացման կարևոր տենդենցները՝ բերելով յուրաքանչյուր տվյալ կարգի փոփոխության համար բնորոշ մի քանի օրինակներ՝ առանց տվյալ տեղաշարժին ենթարկված բոլոր կապերի կիրառական փոփոխություններն ընդգրկելու հավակնության:

Հայոց գրական լեզվի զարգացման սովետական շրջանում կապական համակարգի համար ամենից առաջ բնորոշ է նոր կապերի ու կապական բառերի առաջացումը, ինչպես նաև զարգացման նախորդ շրջանում հազվադեպ կիրառվող, որոշ իմաստով նաև իմաստային ու ոճական համեմատաբար կայուն նշանակություն ու կիրառություն չունեցող մի շարք կապերի անհամեմատ աշխուժացումը, կիրառության ոլորտների հետագա աստիճանական ընդարձակումը՝ իմաստային նշանակությունների ու ոճական կիրառությունների ճշտման ու կայունացման միջոցով: Այդ տեսակետից առավել բնորոշ են նկատմամբ, կից, առընթեր, համապատասխան, շուրջ(ը), գծով, զուգընթաց, ուղղությամբ, կապակցությամբ *և այլ կապեր: Զարգացման քննարկվող շրջանում հայերենի* նկատմամբ *կապը,*

օրինակ, ոչ միայն աշխուժացել և անհամեմատ ընդարձակել է իր կիրառության ոլորտները, ոչ միայն ձեռք է բերել իմաստային նոր նշանակություններ ու ոճական նոր կիրառություններ, այլև, որ առավել կարևոր է, աճել ու կայունացրել է իր իմաստային ու ոճական կիրառության սահմանները: Նախախորհրդային շրջանում հաճախ որոշակի տարբերիչ սահման չկար մի կողմից՝ նկատմամբ, մյուս կողմից՝ մասին, շուրջը, վերաբերյալ, վերաբերմամբ կապերի միջև: Նկատմամբ կապը մեծ մասամբ կիրառվում էր նշված կապերի նշանակությամբ. հմմտ. «Ալբանիայի հարցի նկատմամբ Վենիզելոսն հայտնեց, որ...» (Մշակ, 27/2—1914): Ինչպես կտեսնենք ստորև, վերաբերյալ, մասին, վերաբերմամբ կապերն իրենց հերթին հաճախ կարող էին կիրառվել նկատմամբ կապի այժմյան նշանակությամբ: Այդ նշանակում է, որ նկատմամբ կապը որպես մեր նոր գրական լեզվի հողի վրա ձևավորվող կապ, նախախորհրդային շրջանում դեռևս չուներ իմաստային ու ոճական կիրառությունների այնպիսի կայուն ու որոշակի սահմաններ, որպիսին նա ձեռք բերեց զարգացման խորհրդային շրջանում: Ներկայումս այդ կապը կիրառական տեսակետից բնորոշ է նրանով, որ իր կապվող բառի հետ միասին դառնում է մի շարք բայանունների ու բայածականների (վերաբերմունք, հարգանք, սեր, խղճահարություն, մարդասիրություն, ատելություն, հաղթանակ, մեղմություն, վստահություն, անտարբեր, խիստ, անուշադիր և այլն, և այլն) խնդիր:

Մեր օրերում կիրառության հաճախականությամբ աչքի են ընկնում նաև կից, առընթեր, գծով, ուղղությամբ, կապակցությամբ կապերը: Դրանցից կից և առընթեր կապերը, ինչպես ցույց են տալիս փաստերը, մեծ մասամբ ունեն հոմանիշային կիրառություններ և առավելապես հանդես են գալիս անվանական բառակապակցություններում. օրինակ՝ «ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիա» (ՍՀ, 6/6—1964): «Բերթին առընթեր բանթղթակիցների դպրոց» (Եր., 14/11—1964): «ՄԱԿ-ին առընթեր ՍՍՌՄ մշտական ներկայացուցչություն» (ՍՀ, 11/11—1964):

Նույն ձևով որպես անվանական բառակապակցության բաղադրիչ կարող է հանդես գալ նաև մեր գրական լեզվում նոր ձևավորված գծով կապը, որը մեծ մասամբ արտահայտում է սահմանափակման նշանակություն՝ որոշելով, ասենք, պաշտոնի, կոչման և այլ բնագավառների սահմանները. հմմտ. «Շինարարության գծով

դիրեկտորի տեղակալ» (Եր., 21/12—1964)։ Շախմատի գծով չեմպիոն և այլն։

Մենք հատկապես կանգ առանք կից, առընթեր, գծով կապերի անվանական բառակապակցությունների բաղադրիչ դառնալու հատկանիշի վրա, քանի որ մեր օրերում դա ինչպես ընդհանրապես կապերի, այնպես էլ հիշյալ եռադրությունների կիրառական բնորոշ գծերից մեկն է։ Սակայն այդ չի նշանակում, թե նշված կապերը այժմ բայական-անվանական կապակցություններում հանդես չեն գալիս. հմմտ. «Նախատեսվում է «Գիտելիք» համամիութենական ընկերության վարչության առընթեր ստեղծել ժողովրդական համալսարանների աշխատանքի հատուկ խորհուրդ» (ՍՀ, 6/6—1964)։ «Մեր երկիրը ԱՄՆ-ից կանցնի նաև բնակչության մեկ շնչին ընկնող արդյունաբերական արտադրանքի գծով» (ՍՀ, 24/6—1964)։

Քննարկվող կապերի կիրառությունների աշխուժացման հարցում որոշակի դեր է կատարում ոճի ֆունկցիոնալ տարբերակումը. լեզվի զարգացման նախորդ շրջանի ավանդույթների հետ ավելի սերտորեն կապված գեղարվեստական գրականության լեզվում հիշյալ կապերը կիրառության ընդարձակ ոլորտ չունեն, հետևաբար՝ գեղարվեստական գրականության լեզուն այդ կապերի կիրառությունների աշխուժացման տեսակետից առայժմ չի կատարում այնպիսի խոշոր դեր, որպիսին հատուկ է քաղաքական-հրապարակախոսական, գիտատեխնիկական գրականության ու լրագրային լեզվին։

Կապական համակարգում կատարված բնորոշ տեղաշարժերից է նաև այն դեպքը, երբ հնանալ է սկսում ոչ թե կապը ամբողջությամբ վերցրած, այլ միայն նրա այս կամ այն իմաստային ու ոճական կիրառությունը։ Ստորև բերվող օրինակներում կապերի տվյալ կիրառությունների՝ խնդրառական ներկա օրինաչափությունների տեսակետից հնացած ու անսովոր լինելը ապացուցման կարիք չի զգում. հմմտ. «Նա զղջում էր իր արածների մասին» (Շիրվ., 285)։ «Ես այդ մասին մեծ հույս ունեմ» (Րաֆ., 418)։ «Վախենում էր նրա կյանքի մասին» (284)։ «Մարտիրոս հայրը կանգնած բեմում խոսում էր անմահության վրա» (ԲԱ., ԱԵԱԿ, 239)։ «Ես ամենևին չեմ մտածում Աշոտ Երկաթի վրա» (222)։ «Հոգատար եմ քո տոհմական անունն անաղարտ պահելու մասին» (Մուր., 119)։

Ինչպես հայտնի է, մեր լեզվի զարգացման քննարկվող շրջանի ամենատարածված և կիրառական նշանակություններով ամենահարուստ կապերից է վրա եռադրությունը։ Սակայն այդ հանգամանքը

բոլորովին էլ չի խանգարել նախկինում այդ կապին հատուկ որոշ կիրառությունների հետագա սահմանափակմանն ու անհետացմանը։ Ինդրառության բաժնում մենք արդեն խոսել ենք **վրա** կապի նախկինում տարածված իմաստային կիրառություններից մեկի, այն է՝ վերաբերության կամ պատճառական անուղղակի խնդրի կիրառական նշանակության սահմանափակման և հնացման մասին։ Հնացած է նաև այդ նույն կապի կիրառությունը հիմունքի նշանակությամբ, որը բերում է Մ. Աբեղյանը. «Ես նրա հրավերի վրա եկա։ Շները ոսկորի վրա (իմա համար— Ռ. Հ.) կռվեցին։ Ես այդ բանը քո պատվերի, հրամանի վրա արի»[22]։

Միանգամայն հնացած և անսովոր է նաև **վրա** կապի նախադրական գործածությունը հայցականից առաջ՝ մերձավոր ժամանակի նշանակությամբ. «Վրա հինգերորդ (հինգ) օրը կգա։ Վրա երկու ամառն էր գնում, որ մենք...» (Մուր.)[23]։

Հայոց լեզվի զարգացման արդի փուլում նախկինում իրենց հատուկ իմաստային ու ոճական որոշ կիրառություններից զրկվել են նաև այլ կապեր։ Այսօր միանգամայն հնացած և անսովոր է **առ** նախդրի գործածությունը ուղղորման և հանգման նշանակությամբ, ինչպես՝ «Հայոց ազգի սերն առ Անահիտ տիկինը։ Նրա սերն առ հայրենիքը... Ողորմած առ աղքատները...»[24]։ **Առ** նախդիրը հիշյալ նշանակությամբ այսօր կարող է կիրառվել լոկ որպես գեղարվեստական, ոճական հնարանք։

Այսօր մեր ականջին խորթ է հնչում նաև **համար** կապի կիրառությունը ասացական և մտածական բայերի մոտ վերաբերության նշանակությամբ. Հմմտ. «...Որպեսզի խորհրդակցեն իրանց անելիք օգնության **համար**» (Մուր., 70)։

Նշելի է, սակայն, որ ներկայումս չի բացառվում որոշ կապերի հնացած նշանակությամբ կիրառությունը գեղարվեստական գրականության մեջ որպես ոճական հնարանք. Հմմտ. «Եկել է մի նոր Ավարայրի ճակատամարտում հայ քաջերին ոգեշնչելու **ի մարտ**» (Ախ, ԿՄ, 312)։

Ինչպես տեսանք, մեր լեզվի զարգացման արդի փուլին բնորոշ է մի կողմից՝ մի շարք կապերի ու նրանց իմաստային ու ոճական որոշ կիրառությունների աշխուժացում, մյուս կողմից՝ զարգացման նախորդ շրջանում այս կամ այն չափով տարածված առան-

22 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն*, էջ 157։

23 Նույն տեղում։

24 Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 136։

ձին կապերը ամբողջությամբ վերցրած կապական կիրառությունների կամ էլ նրանց որոշ իմաստային նշանակությունների աստիճանական սահմանափակում և վերացում:

Ներկայումս կապական համակարգում նկատվող այս երկու տենդենցները, սակայն, իրարից անկախ գոյություն չունեն, նրանք այդ համակարգում կատարվող մեկ ընդհանուր տեղաշարժի, այն է՝ կապերի միջև տեղի ունեցող իմաստային նշանակությունների ու ոճական կիրառությունների փոխանցման հակադիր եզրերն են, բացասող և բացասվող տարրերը: Կապերի միջև տեղի ունեցող իմաստային նշանակությունների ու ոճական կիրառությունների փոխանցումը լեզվի բարեշրջության իրական դրսևորումներից մեկն է մեր օրերում:

Վերը մենք նշեցինք, որ զարգացման ընթացքում որոշ կապեր կամ ամբողջությամբ վերցրած կամ էլ իմաստային որոշ կիրառություններով արդեն հնացել են: Սակայն այդ կապերի և նրանց որոշ կիրառությունների հնացումը բոլորովին էլ չի նշանակում այդ կապերով արտահայտվող իմաստային նշանակությունների հնացում և վերացում: Դա նշանակում է միայն, որ իմաստային տվյալ նշանակություն, որպես բովանդակության համար տվյալ կապը հանդես է գալիս որպես հնացած ձև և այդ իմաստային նշանակությունը փոխանցվում է այլ կապի կամ կապերի, այսինքն՝ մտնում է լեզվական նոր ձևի մեջ: Այս եղանակով մեր օրերում տեղի է ունենում որոշ կապերի կիրառությունների աշխուժացում և գործածության ոլորտների ընդարձակում ի հաշիվ այլ կապերի:

Մեր ասածը պարզելու համար բերենք օրինակներ: «Միջնորդհանդիսանայրը նրա և հալածվող ժողովրդի **մեջ**» (Մուր., 225): «Անմեղ կռիվները, որ ծագում էին այդ երկու էակների **մեջ**» (Րաֆֆի): «Այդ պարոնների և իրան **մեջ** մի ընդհանուր բան կա» (ՀԹ, 6, 52): Բերված օրինակներից երևում է, որ մեր օրերում **մեջ** կապի նմանօրինակ կիրառությունը հնացած և շատ դեպքերում անսովոր է: **Մեջ** կապին նախկինում բնորոշ հիշյալ կիրառական նշանակությունը արդեն փոխանցվել է **միջև** կապին: Այս ձևով հետզհետե ճշտվում և առավել որոշակի ու կոնկրետ են դառնում մի շարք կապերի կիրառության սահմանները:

Համեմատիր նաև հետևյալը. «(Հայոց թագուհին) **խնամք էր տանում** Շապուհի քրոջ՝ Որմիզդուխտի **վրա**» (Րաֆ., 408): Ինչպես պարզ երևում է բերված օրինակից, այսօր խորթ և անսովոր է հընչում **վրա** կապի նմանօրինակ իմաստային առումով կիրառությունը:

Այդպիսի իմաստային նշանակությամբ այժմ կիրառվում է նկատմամբ *կապը։ Իսկ դա նշանակում է, որ* վրա *կապի նշված երբեմնի կիրառական այդ նշանակությունը փոխանցվել է* նկատմամբ *կապին։*

Մենք նշել ենք, որ հայոց լեզվի զարգացման քննարկվող շրջանում իր կիրառության ոլորտները անհամեմատ ընդարձակել է նկատմամբ *կապը։ Ավելորդ չի լինի այստեղ համառոտակի ցույց տալ, թե որ կապերի հաշվին է հատկապես տեղի ունենում հիշյալ կապի կիրառությունների ընդարձակումը։*

Նկատմամբ *կապը ներկայումս իր կիրառության շրջանակները ամենից առաջ ընդարձակում է արդեն ամբողջությամբ հնացած* վերաբերությամբ *և աստիճանաբար պասիվացող* վերաբերմամբ *կապերի երբեմնի կիրառական նշանակությունների հաշվին։ Համեմատենք հետևյալ օրինակները, որոնցում ընդգծված կապերը իրենց տվյալ իմաստային նշանակություններով լիովին համապատասխան են ներկայիս* նկատմամբ *կապին։ «Այն կրակը, որ այնպիսի կատաղությամբ վառվել էր նրա մեջ Պանի Ջդանեիչի* վերաբերմամբ...» *(ՆԴՄ, 569)։ «Քաղաքավարի չէր, եթե ոչ իմ, գոնե այս օրիորդի* վերաբերմամբ....» *(ՆԴ, 6, 180)։ «Մյուս եկեղեցիների* վերաբերմամբ *բավականացան մի թռուցիկ հաշվով» (Լեո, Անի, 23)։ «Նա միայն կատարում է իր պարտքը երեխաների* վերաբերմամբ» *(Շիրվ., էջ 170)։*

Վերաբերմամբ *կապի իմաստային նշանակության* նկատմամբ *կապին փոխանցվելու լավագույն ապացույց է հետևյալ օրինակը, որտեղ այդ երկու կապերն էլ հանդես են եկել միևնույն իմաստային նշանակությամբ, միևնույն բայական արտահայտության (անտարբեր գտնվել) պահանջով. «Անտարբեր թյուրքահայերի քաղաքական բախտի* վերաբերմամբ՝ *Նալբանդյանցն անտարբեր պիտի գտնվեր նաև հայերենի համազգային կոնսոլիդացման* նկատմամբ» *(Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը)։*

Նկատմամբ *կապը իր գործածության շրջանակները ընդարձակում է նաև ներկայումս կենսունակ մի շարք կապերի (դեպի, դեմ. հանդեպ, վրա) կիրառական նշանակությունների հաշվին։*

Փաստերը ցույց են տալիս, որ վերևում մեր կողմից թվարկված հնացած կապերի իմաստային նշանակությունները կամ նրանց հնացած կիրառությունները ներկայումս գերազանցապես փոխանցվել են այլ կենսունակ կապերի։ Այսպես՝ երբեմնի ետ *կապի կիրառական նշանակությունը ամբողջությամբ փոխանցվել է մեր* հետ

կապին, հետ կապի կիրառական նշանակությամբ այսօր հանդես է գալիս ի վեր կապը և հետզհետե կապի վերածվող սկսած հարակատար դերբայը[25]: Նույն ձևով՝ առ նախդիրին նախկինում բնորոշ ուղղության և հանգման իմաստային նշանակությունը այժմ փոխանցվել է դեպի, նկատմամբ, հանդեպ կապերին:

Կապերի միջև տեղի ունեցող իմաստային նշանակությունների ու ոճական կիրառությունների փոխանցումը, սակայն, ոչ թե միանգամից կատարվող գործողություն է, այլ համեմատաբար երկարատև ու աստիճանական մի պրոցես, որի ընթացքում և՛ ավելյալ կիրառական նշանակությունը վաղուց ի վեր ունեցող, և՛ այդ նույն գործառությամբ նոր հանդես գալ սկսող կապերը երկար ժամանակ լեզվի մեջ գոյակցում են իրար կողքի, որպես շարահյուսական հոմանիշներ: Այդ իսկ պատճառով ինչպես հայոց լեզվի պատմական զարգացման յուրաքանչյուր շրջանում, այնպես էլ նրա արդի փուլում նկատելի են կապերի միջև կիրառական նշանակությունների փոխանցման թե՛ որոշ ավարտի հասած, թե՛ դեռևս լինելիության պրոցեսում գտնվող երևույթներ: Մեր օրերում, օրինակ, արդեն որոշակի ավարտի է հասել ստացական և մտածական բայերի մոտ վրա և համար կապերին նախկինում բնորոշ վերաբերական կիրառական նշանակության փոխանցումը մասին կապին:

Կապերի միջև եղած կիրառական նշանակությունների փոխանցման վերջնական ավարտի հետևանքը լինում է նախկինում գոյություն ունեցող խնդրառական զույգ ձևերից մեկի տիրապետող դառնալը, հետևաբար շարահյուսական ավելյալ կրկնակի վերացումը զարգացման արդի շրջանում: Դրան հակառակ՝ կապերի միջև կիրառական նշանակությունների փոխանցման լինելիության պրոցեսում գտնվելու, միևնույն կիրառական նշանակությամբ հանդես եկող հին և նոր կապերի գոյակցության հետևանքով զարգացման արդի փուլում չափազանց աշխուժանում են զույգ ձևերն ու շարահյուսական կրկնակները: Ներկայումս, օրինակ, որպես այդպիսի կրկնակներ են հանդես գալիս նկատմամբ և հանդեպ կապերը՝ մեծ մասամբ առանց իմաստային ու ոճական տարբերակման. Հմմտ. «Մաշիան հարազատություն է զգում նրա հանդեպ» (ՀՔ, ՄՏՊ, 2, 244): «Արփիկը ինչ-որ հարազատ բան զգաց նրա նկատմամբ» (ԱԱ, ՈՎՄ, 414):

---

25 Տե՛ս Վ. Առաքելյան. Ժամանակակից հայերենի հոլովների ու հոլովական կապակցությունների իմաստային առումները, էջ 255:

Նկատմամբ կապը իմաստային նշանակություններով հարըստանում է նաև ի հաշիվ դեպի կապի, և քանի որ այդ կապերի միջև կիրառական նշանակությունների փոխանցումը ներկայումս դանդաղում է լինելիության պրոցեսում և որոշ ավարտի չի հասել, ուստի այդ կապերը ևս տվյալ գործածություններով հանդես են գալիս որպես շարահյուսական կրկնակներ. հմմտ. «Կարդում ես այդ նամակը ու խորին հարգանքով լցվում դեպի մարդը» (Ավ., 6/5—1965)։ «Իր նկատմամբ էլ հարգանք են ցույց տալիս» (ՀՔ, ՄՏՂ, 33)։ «Հարգանք Կարոյի նկատմամբ» (143)։

Մեր ուսումնասիրության նյութականներից դուրս է կապական համակարգում նկատվող շարահյուսական հոմանիշների ու կրկնակների մանրամասն քննությունը։ Նշենք միայն, որ հայոց գրական լեզվի զարգացման արդի փուլը չափազանց հարուստ է այդպիսի շարահյուսական կրկնակներով։ Համեմատիր առջև և առաջ կապերի նույնանիշային կիրառությունները ստորև բերվող օրինակներում «Շահումյանի շրջանի № 4 տնային կառավարչությունը... հարց չի բարձրացնում շրջսովետի գործկոմի առջև» (Եր., 3/2—1965)։ «Բնակարանային տնտեսության վարչության ղեկավարներն էլ հարց են հարուցել գործկոմի առաջ» (Ն. տ.)։

Այս կարգի շարահյուսական կրկնակները կամ պետք է աստիճանաբար ձեռք բերեն իմաստային ու ոճական տարբերակում, կամ պետք է նրանցից մեկը տիրապետող դառնա և մյուսը հետզհետե գործածությունից դուրս գա։ Առայժմ նկատելի է, որ այդ զույգ ձևերից նկատմամբ կապը խոսող հանրության ակտիվ բառապաշարում ավելի կենսունակ է, իսկ հանդեպ կապը գնալով ավելի է դառնում գրքային։

Կապերի միջև կիրառական նշանակությունների փոխանցման պրոցեսի անավարտության հետևանքով առաջացած շարահյուսական որոշ կրկնակների ներսում ներկայումս նկատելի են ոճական կիրառության տարբերակումներ։ Այսպես՝ հաղթանակ տանել բայական հարադրության խնդիրը կարող է դրվել և դեմ, և նկատմամբ կապերով։ Սակայն այդ երկու կապերը ներկայումս աստիճանաբար սկսում են տվյալ գործածության մեջ ձեռք բերել ոճական տարբերակում. դեմ կապը գերապանցապես գործածվում է այնպիսի դեպքերում, երբ գործողության օբյեկտը թշնամին է, իսկ երբ հաղթանակի օբյեկտը սպորտային հակառակորդն է, մեծ մասամբ կիրառվում է նկատմամբ կապը. հմմտ. «Համաշխարհային-պատմական հաղթանակ տանել... հիտլերիզմի միավորված ուժերի դեմ»

(ՍՀ, 24/4—1964)։ «Ռումինիայի վարպետ Վ. Չոկիլտյան հունգարացի Պ. Դելլի, իսկ հարավսլավացի գրոսմայստեր Բ. Իվկովը իր հայրենակից Մ. Մատյանովիչի նկատմամբ *տարան համոզիչ հաղթանակ» (Եր., 27/3—1964)։*

Մ ա ն. Հայրանակ տանել *բայական հարադրության խնդիրը մեր նախախորհրդային շրջանի գրողների մոտ դրվում էր նաև վրա կապով. հմմտ. «Հաղթանակ տարավ թշնամու վրա» (Մուր., 390)։*

Իմաստային նշանակությունների և ոճական կիրառություննների փոխանցումներ հնարավոր են ոչ միայն կապերի միջև, այլև կապերի և հոլովների միջև։ Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Դ. Առաքելյանը գտնում է, որ այս տեսակետից մեր նոր գրական լեզվին ավելի բնորոշ է կապերի գործածության ծավալի ընդարձակումը և կապով խնդիրների աշխուժացումը ի հաշիվ հոլովով արտահայտված խնդիրների։ Կապով խնդիրները միայն հոլովներով խնդիրների համեմատությամբ ավելի որոշ են, կոնկրետ, ցույց տալով ուղղությունը, առանձին տեղը, խնդրի որևէ հայտնի մասը և այլն։ Այս է պատճառը, որ մեր նոր գրական լեզում հետագայում ընդարձակեց կապերի գործածության ծավալը՝ միայն հոլովներով արտահայտված խնդիրների անորոշության, տարտամության և անկոնկրետության պատճառով։ Խնդրառության բնագավառում այս ուղղությամբ տեղի է ունենում երկու պրոցես, որ անընդհատ խորանում ու զարգանում է։ Մի կողմից՝ կապով խնդիրները իրենց ողջ կապակցությամբ ստանում են իմաստային ու ոճական առանձնահատուկ տարբերակումներ պարզ հոլովներով խընդիրների համեմատությամբ և մյուս կողմից՝ բռնում են նրանց տեղը՝ վերացնելով նրանց անորոշությունն ու տարտամությունը[26]*։*

Հեղինակը մեր նախասովետական շրջանի գեղարվեստական գրականությունից բերում է մի շարք բնորոշ օրինակներ, որոնց մեջ գործածված պարզ հոլովով խնդիրները մեր լեզվի զարգացման ներկա փուլի խնդրառական օրինաչափությունների տեսակետից մասամբ խորթ են ու հնացած և իրենց տեղը զիջել են կապով խնդիրներին։ Ահա այդ օրինակները. «Նա օգնում էր Բաղդասարին չթի կտորները բաց անելում ու ծալելում» (Շիրվ., 3, 436)։ «Փուլշատյանը ոտն է դրել վաթսունամյա կոչված պատկառելի տարիքին» (Մուր., 4, 45)։ «Թովմասը միայն կարող էր մտնել Թովմասի դրու-

---

26 Վ. Առաքելյան, *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական...*, էջ *181—182*։

130—27

թյունը և կարեկցել նրան» (Մուր., 300)։ «Նա էլ յուր տեսակետում մի օգուտ էր» (Մուր., 29)։ «Ես հասկանում եմ քեզ և լիովին մտնում քո դրությունը» (ՆԴ, 206)։ «Այս առավոտ մի քանի անգամ մարդ էր ուղարկել հարցնելու քո առողջությունը» (Ր, 3, 498)։ «Լավ մտածիր քո վարմունքը» (Ր, 3, 104)։ «Ամոթ է անգամ կասկածել նրանց հարաբերությունը» (Շիրվ., 3, 386)։[27]

Բերված օրինակներից, ինչպես և մեր ձեռքի տակ գտնվող այլ փաստերից երևում է, որ ներգոյականի (հատկապես սահմանափակման նշանակությամբ) և հայցականի նախկինում բնորոշ մի շարք կիրառությունների համեմատությամբ ներկայումս առավելությունը տրվում է մեջ կապով խնդրին։

Հոլովների կիրառական նշանակությունների մեջ կատարված փոփոխությունները քննության առնելիս մենք արդեն նշել ենք, որ այժմ մեր գրական լեզվում որոշակիորեն նկատվում է ասացական բայերի մոտ պատմական բացառականի կիրառության աստիճանական սահմանափակում և դրա հաշվին վերաբերության իմաստ արտահայտող կապերի գործածության հետագա աշխուժացում։

Մեր գրական լեզվի զարգացման ներկա փուլին հավասարապես բնորոշ է նաև հակառակ տենդենցը, այն է՝ կապերի անտեղի գործածությունների վերացում, մի շարք կապական խնդիրների փոխարկում պարզ հոլովական խնդիրներով, այսինքն՝ կապերի կիրառական որոշ նշանակությունների փոխանցում հոլովներին։ Խնդրառության բնագավառում կատարված տեղաշարժերի մասին խոսելիս մենք արդեն նշել ենք, որ գոռճել և ճոկել բայերի նախկինում գերազանցապես վրա կապով խնդրի դիմաց ներկայումս ունենք նաև առանց կապի հայցականով խնդիր։ Խնդրառության այդպիսի փոփոխությունը բնականաբար ուղեկցվում է խնդրառու բայի սեռային տեղաշարժով։

Ավելի տարածված են այն դեպքերը, երբ կապով խնդիրը փոխարինվում է միայն հոլովով արտահայտված խնդրով՝ առանց ուղեկցվելու խնդրառու բայի սեռային տեղաշարժով։ Ստորև բերվող օրինակներից երևում է, որ ընդգծված կապով խնդիրների փոխարեն ներկայումս գերադասություն է տրվում առանց կապի տրական հոլովով խնդրի. «Պառավը նայում էր յուր սնուցած սանիկի վրա...» (Րաֆ. 142)։ «Գիրքը շպրտեց հատակի վրա» (ՆԴ, Մ,

---

27 Նույն տեղում, էջ 192։

590, 1955)։ «Մինասյանը գլխարկն ու վերարկուն ձգեց աթոռի վրա» (ՆԴ, 6, 81)։

Մեր գրական լեզվի զարգացման սովետական շրջանում որպես կապերի շարադասության բնագավառում կատարվող տեղաշարժ հիշատակելի է ետադրությունների հետզհետե աշխուժացման ընդհանրապես աշխարհաբարին բնորոշ տենդենցը։ Ինչպես հայտնի է, գրաբարի նախադրությունների մի մասը աշխարհաբարում վերածվեց ետադրությունների։ Նախադրությունների հաշվին ետադրությունների աշխուժացման, նրանց կիրառության ոլորտների ընդարձակման տենդենցը իրեն զգալ է տալիս նաև մեր օրերում։ Մի կողմ թողնելով և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն ունեցող առանձին կապերի (համաձայն, համապատասխան, շնորհիվ և այլն) շարադասական կիրառություններում տեղի ունեցած քանակական փոփոխությունները՝ մեծ մասամբ հօգուտ ետադրական կիրառության, համառոտակի կանգ առնենք կապական համակարգում նկատվող շարադասական կիրառությունների որակական փոփոխությունների վրա։

Հայտնի է, որ մեր գրական լեզվում գործածության բավականաչափ ընդարձակ ոլորտ ունեցող բացի կապը առաջացել է սկզբնապես բացառական հոլովով խնդիր պահանջող բաց (հեռու) բառից և բացառականի ի նախդիրից։ Բացի ձևը գրաբարյան բացառականի հետ բնականորեն կարող էր միայն որպես նախադրություն կիրառվել։ Աշխարհաբարի բացառականի հետ ևս այդ կապը երկար ժամանակ կիրառվել է միայն որպես նախադրություն։ Մեր գրական լեզվի զարգացման նախախորհրդային շրջանում այդ կապի հազվադեպ ետադրական կիրառությունները համարվել են լեզվի գոյություն ունեցող նորմաներից կատարվող անթույլատրելի շեղումներ։ Ահա թե ինչ է ասում այդ մասին բազմավաստակ հայագետ Մ. Աբեղյանը.

«Սխալ է բացի նախադրությունն իբրև ետադրություն գործածելը՝ քեզնից բացի, սրանից բացի ևն, որ առաջացել է համանիշ չոկ, զատ և ավելի ժողովրդական լեզվի մեջ շատ գործածական թուրքական սավանի բառի ազդեցության տակ...»[28]։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, իսկապես, նախախորհրդային շրջանի մեր գրական լեզվում բացի կապի ետադրական կիրառությունը չափազանց սակավ էր և հեղինակների մեծ

28 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, էջ 145։

մասի գործերում խիստ բացակայում է։ Այդ կարգի կիրառություններ հազվադեպ են նաև սովետական շրջանի ավագ սերնդի գրողների երկերում։ Դ. Դեմիրճյանի «Վարդանանքում», օրինակ, մեզ հաջողվեց գտնել բացի կապի ետադաս կիրառության հետևյալ երկու օրինակները. «Վեհմիհրը իրեն ավելի էր շքեղացրել նման ըզգեստավորումից բացի նաև կարմիր նռնագույն կոշիկներով» (ԴԴՎ, 352)։ «Արտաշիր Սեպուհը... հրամանատար լինելուց բացի, հըսկում էր մյուս նախարարների զորագնդերին» (ԴԴՎ, 529)։

Բացի կապի նախախորհրդային շրջանում նկատվող հազվադեպ ետադրական կիրառությունները հետզհետե ընդարձակում են իրենց շրջանակները և վերածվում զարգացման տենդենցի մի կողմից՝ շնորհիվ այդ կապի կազմության հետադաս մթագնման, մյուս կողմից՝ ինչպես նշում է Մ. Աբեղյանը, զուտ և ջոկ բառերի անալոգիայով։ Այդ տենդենցի ներգործության հետևանքով խորհրդային շրջանում բացի կապի ետադրական գործածությունը այնքան է տարածվում, որ այսօր նույնիսկ դժվար է կիրառության հաճախականության տեսակետից առաջնությունը տալ այդ կապի նախադրական գործածությանը։ Ահա բացի կապի ետադրական կիրառությունների օրինակներ. «Դուք դրանից բացի ուրիշ բան չեք ասում» (ՎՏ, 3, 171)։ «Եվ այդ երկու ձայնից բացի չլսվեց ուրիշ ձայն» (ԱԲ, 590)։ «Խոհանոցում մեղանից բացի ոչ որ չկար» (658)։ «Յուր լեռներից բացի ոչինչ չի տեսել» (606)։ «Սաղ աշխարհը տեսել է, երեխիս ինձնից բացի» (ԱՍ, ՌՎՄ, 564)։ «Սեդայից բացի ինքն ուրիշ կին չէր կարող ճանաչել» (562)։

Անհրաժեշտ է նշել, որ բացի կապի ետադրական կիրառությունը մեր օրերում տարածում գտավ միայն բացառական խնդրի հետ։ Ինչպես կտեսնենք, նախախորհրդային շրջանի մեր գրական լեզվում, ինչպես նաև խորհրդային շրջանի ավագ սերնդի որոշ գրողների երկերում բացի կապը ընդունում էր նաև հայցականով խընդիր։ Բացի կապի այդպիսի կիրառությունը խորհրդային շրջանում զարգացում չունեցավ։

Նախախորհրդային շրջանի մեր գրական լեզվում կան նաև նկատմամբ կապի նախադաս կիրառություններ. հմմտ. «Բայց ես ցանկանում եմ մի խոսք ասել նկատմամբ մի հանգամանքի» (Մուր., ԸՆ, 1, 284)։ «Հարց ու փորձ արին տեսածների մասին և պարսկական բացատրություն տալ նկատմամբ եկեղեցու» (150)[29]։

---

29 Օրինակները բերում ենք Վ. Առաքելյանի գրքից, էջ 269։

Նկատմամբ կապի նախադաս այդ կիրառությունը հետագայում զարգացում չստացավ և մեր օրերում այդ կապը գերազանցապես ետադրություն է։

Մեր օրերում նկատելի են նաև որոշ տեղաշարժեր կապվող բառերի հոլովական կիրառություններում։ Նախախորհրդային շրջանի մեր գրական լեզվում, ինչպես նաև ավագ սերնդի սովետական հեղինակների, հատկապես Իսահակյանի, Դեմիրճյանի, Ակսել Բակունցի գործերում բավականաչափ լայն տարածում ունի բացի կապի կիրառությունը հայցական խնդրի մոտ։ Համեմատիր հետևյալ օրինակները.

«Քեզ համար, տիկին, մի այլ հույս չկա, բացի իմ մեծահոգությունը» (Րաֆ., 353)։ «Տեսնելու արժանի ոչինչ չուներ յուր շուրջը, բացի փոքրիկ բանջարանոցը» (Մուր., 4, 70)։ «Բացի սենյակներն այստեղ ամեն բան էժան է» (Հ. Թումանյան)։ «Բացի դիմադրությունը ոչ մի այլ ուղի չկա» (Դ. Դեմիրճյան)։ «Բոլոր իրերն իրենց կարճ և գորշ պատմությունն ունեին, բացի ծաղկամանը» (ԱԲ, 169)։ «Բացի հաղթելը ոչ մի այլ հնար չունենք» (Դ. Դեմիրճյան)։ Ներկայումս բացի կապի խնդիրը գերազանցապես դրվում է բացառականով, ուղիղ ձևով կարող են դրվել բացի կապի միայն այս, այդ, այն դերանուններով արտահայտված խնդիրները[30]։

Կապվող բառի հոլովական կիրառության փոփոխության համար կարևոր նշանակություն ունի կապի երբեմնի նյութական իմաստի հետագա մթագնումը։ Հայտնի է, որ մեր վերաբերյալ կապը վերաբերել բայի անցյալ դերբայն է։

19-րդ դարի վերջերի մեր գրական լեզվում դեռևս լիովին չէր մթագնվել այդ կապի նյութական իմաստը և, քանի որ վերաբերել բայը պահանջում էր տրական հոլովով հանդման անուղղակի խնդիր, ուստի վերաբերյալ կապի խնդիրն էլ երբեմն տրվում էր տրականով. հմմտ. «Տեսնելով այդ հաջողությունը, «բանավորը» սիրտ առավ «գլխավոր նպատակին» վերաբերյալ մյուս պատրաստությունները տեսնելու» (Մուր., 418)։ «Բայց վեհափառը, որին անհանգստացնում էր կղզուն վերաբերյալ ամեն էլ ու մուտ, դարձավ իսկույն դեպի վեհարան» (Ն. տ., 248)։

Վերաբերյալ կապի նյութական իմաստի հետագա մթագնման հետևանքը եղավ այն, որ նրա խնդրառությունը ևս հեռացավ վե-

30 Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, 1959, էջ 124—125։

րաբերել *բայի խնդրառությունից, և այսօր այդ կապի տրականով խնդրառությունը միանգամայն խորթ ու անսովոր է հնչում։ Այժմ գերազանցապես սեռականով են դրվում* **վերաբերյալ** *կապի ոչ միայն գոյականով, այլև 1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանուններով արտահայտված կապվող բառերը։*

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ— Ակսել Բակունց, *Երկեր, Երևան, 1964*։
Ախ, ԿՄ— Արշավիր Խաչատրյան, *Կրակների միջով, Երևան, 1964*։
Առողջ.— Առողջապահություն (ամսագիր)։
ԱՍ, ՈՎՄ— Անահիտ Սեկոյան, *Ոսկե վաղերի մեջ, Երևան, 1958*։
Ավ.— Ավանգարդ (լրագիր)։
ԲԱ, ԱՆ, ԱԿ— Բագրատ Այվազյան, *Աշոտ Երկաթ, Անիի կործանումը, Երևան, 1964*։
ԲՀ— Բաղիշ Հովսեփյան, *Սերմնացանները չվերադարձան, Երևան, 1962*։
ԲՎ, ԼՈ— Բոգդան Վերդյան, *Լեռների որդին, Երևան, 1962*։
ԳՄ, ԼՁ— Գուրգեն Մահարի, *Լռության ձայնը, Երևան, 1962*։
ԳՌ, Ջուղիթ— Գագիկ Ռշտունի, *Ջուղիթ, Երևան, 1965*։
ԴԴՎ— Դերենիկ Դեմիրճյան, *Վարդանանք, Երևան, 1954*։
ԵՉ, ԸԵ— Եղիշե Չարենց, *Ընտիր երկեր, Երևան, 1955*։
Եր.— Երեկոյան Երևան (օրաթերթ)։
ԱԻ— Ավետիք Իսահակյան, *Արձակ էջեր, Երևան, 1963*։
ՀԹ, 2— Հովհաննես Թումանյան, *Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1949*։
ՀԹ, 3— Հովհաննես Թումանյան, *Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1949*։
Հյուս.— Հյուսիսափայլ (ամսագիր)։
ՀՇ, ԵԺ— Հովհաննես Շիրազ, *Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1962*։
ՀՇ, ԸԵ— Հովհաննես Շիրազ, *Ընտիր երկեր, Երևան, 1955*։
ՀՇ, ՔՀ— Հովհաննես Շիրազ, *Քնար Հայաստանի, Երևան, 1958*։
ՀՔ, ՄՏԶ— Հրաչյա Քոչար, *Մեծ տան զավակները, հատ. 2, 1959*։
ՀՖ— Հայաստանի ֆիզկուլտուրնիկ (լրագիր)։
ՂԱ, ԸԵ— Ղազարոս Աղայան, *Ընտիր երկեր, Երևան, 1956*։
Մուր.— Մուրացան, *Գևորգ Մարզպետունի, Երևան, 1957*։
ՆԴՄ— Նար-Դոս, *Մահը, 1955*։
ՆԴ— Նար-Դոս, *Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1946*։
ՆԶՀ— Նաիրի Զարյան, *Հացավան, Երևան, 1947*։
Շիրվ.— Շիրվանզադե, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, Քաոս, Երևան, 1950*։
ՍԴ— Սովետական դպրոց (լրագիր)։
Սխ, ՄՍ— Սերո Խանզադյան, *Մխիթար Սպարապետ, Երևան, 1963*։
ՍՀ— Սովետական Հայաստան (օրաթերթ)։
ՍՏՆ— Սողոմոն Տարոնցի, *Նովելներ, Երևան, 1962*։
ՎՏ, ԵԺ— Վահան Տերյան, *Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1963*։
Րաֆ.— Րաֆֆի, *Երկերի ժողովածու, հատ. 7, Սամվել, Երևան, 1956*։

Գ

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ռ. Ա. ՂԱՐԱԳՅՈՒԼՅԱՆ

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ, ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց լեզուն առանձնապես մեծ վերելք ապրեց իր զարգացման սովետական փուլում։

Մի շարք նոր երևույթներ, արտասանական, ուղղախոսական, հնչյունափոխական նոր առանձնահատկություններ են դիտվում և հայերենի հնչյունական իրողություններում։ Հայերենում տեղ գտած հնչյունական փոփոխությունները հիմնականում պետք է բացատրել հայոց լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով։ Մի շարք երևույթներ պայմանավորված են արտաքին գործոններով։

Նոր առանձնահատկությունների այն մասը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին գործոններով, վերաբերում է արտասանական նոր ունակությունների առաջացմանը, հայերենի արտասանական բազայում տեղի ունեցած որոշ փոփոխություններին։ Այդ փոփոխությունները անխուսափելի էին ռուսաց լեզվի մասսայական տիրապետման և ռուսերենից հայերենի մեջ անցած բազմաթիվ փոխառյալ բառերի պատճառով։

Թեև ընդհանուր առմամբ փոխառյալ բառերը առավել կամ փոքր չափով հարմարվում են մայրենի լեզվի հնչյունական առանձնահատկություններին, բայց որոշ դեպքերում պատճառ են դառնում կամ խթան են հանդիսանում հնչյունական, արտասանական որոշ տեղաշարժերի։

Որո՞նք են այն նոր հնչյունական, արտասանական առանձնահատկությունները, որ առաջացել են հայերենում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում։

Հայոց լեզվին ընդհանուր առմամբ հատուկ չեն թե՛ բաղաձայնների և թե՛ ձայնավորների կուտակումները, այդ պատճառով գրության մեջ արտահայտվող բաղաձայնական կապակցությունները հեշտությամբ արտասանվում են ը ձայնավորով կազմվող դաղտնավանկի միջոցով, օր.՝ կտրտել *(կըտըրտել),* շպրտել *(շըպըրտել) և այլն, իսկ ձայնավորների միջև սովորաբար մտնում է ձայնակապ։*

Բառասկզբում շպ, շտ, զբ, զգ, սկ, սպ, ստ, սփ *և նման հնչյունակապակցություններից առաջ ը-ի արտասանությունը նախկինում անհրաժեշտություն էր։ Այդ ը-ն արտացոլվում էր և այժմ էլ շարունակում է արտացոլվել գրության մեջ տողադարձի ժամանակ, ինչպես՝* ըս-պասել, ըշ-տապել *և այլն։ Սակայն վերջին շրջանում որոշակիորեն նկատվում է, որ այդ կարգի բառերում նախահունչ ը-ի արտասանությունը զգալի կերպով թուլացել է և միտում կա այն բոլորովին չարտասանելու։*

Հայերենում այժմ լայն գործածություն ունեն ռուսերենից փոխառնված այդպիսի հնչյունակապակցություններով սկսվող բազմաթիվ բառեր, որոնք արտասանվում են առանց սկզբից լսվող ը-ի։ Օրինակ՝ սպորտ, սպիրտ, շտաբ, սկլերոզ, սկանդալ, սկաֆանդր, *մանավանդ անձնանունները՝* Սպարտակ, Շտրաուս, Սպինոզա, Ստրուվե *և այլն։*

Հայոց լեզվի մեջ մտած այս կարգի բազմաթիվ բառերը ոչ միայն չեն ենթարկվում հայերենի հնուց եկող օրինաչափությանը, այլև որոշ չափով ազդում են հայերեն համապատասխան բառերի արտասանության վրա։ Ներկայումս, օրինակ՝ շտեմարան, սկավառակ, սկիճ, սպիտակ, ստոր, զգոն *և նման բառերում սկզբի ը-ի արտասանությունը դարձել է անհաստատ։ Համենայն դեպս երիտասարդ և միջին սերնդի մոտ այդ երևույթը նկատվում է շատ որոշակիորեն[1]։ Այստեղ, անշուշտ, զգալի դեր է կատարում և գրային արտասանության (այսինքն՝ արտասանությունը այնպես, ինչպես գրված է) ընդհանուր միտումը։*

Սկզբնահունչ ը-ի պահպանմանը նպաստում է տողադարձի ժամանակ գրվող ը-ն, որը, ի դեպ, պետք է ասել, որ ոչ միայն բառասկզբում, այլև բառամիջում մի շարք դեպքերում շատ արհեստական է ստացվում, մանավանդ փոխառյալ բառերում։ Այնու-

---

[1] Պետք է ասել, որ արևմտահայերի արտասանության մեջ, որոնք ռուսերենի հետ սերտ շփում չունեն, այս տեղաշարժը չի դիտվում։

հետո, հայերենում բառասկզբի երկու բաղաձայնները չեն կարող միանալ առանց ձայնավորի։ Եթե գրությամբ ձայնավորը չի արտահայտվում, ապա արտասանության ժամանակ սկզբի երկու բաղաձայնների միջև մտնում է ը *(օր.՝* մ(ը)շակ, կ(ը)րոն):

Մեր լեզվում այժմ շատ տարածված է երկու բաղաձայնով սկսվող օտար բառերի արտասանությունը առանց միջանկյալ ը-*ի, օրինակ՝* կրոս, կրոն *(Ձեխ. դրամը), համմտ.* կ(ը)րոն), սխեմա, սխոլաստիկ, պրոգրես, պրոբլեմ, բլոկ, գրիպ *և այլն, այնպես, ինչպես ռուսերենում։ Ռուսերենում երկու և ավելի բաղաձայններով սկսվող բառերի արտասանությունը շատ սովորական երևույթ է, օրինակ՝* встреча, стрелять, спросить, брать *և այլն։*

Ռուսերենի միջոցով կատարված շատ փոխառյալ բառերում երեք և չորս բաղաձայնների հանդիպումները բառամիջում բավականին հաճախակի են, օրինակ՝ էքստազ, էքսպրոմտ, էլեկտրական, կոնսպեկտ, Ավստրալիա *և այլն, որոնց գրական արտասանությունը շեղվում է բաղաձայնական կուտակումները արտասանելու հայերենին հատուկ օրինաչափությունից*[2]*։*

Հայերենի համար սովորական չէին մի վանկի մեջ մտնող մի շարք հնչյունակապակցություններ, ինչպես՝ կտ, տկ, ցկ, գդ, դգ, բկ *և այլն, որոնք ռուսերենից արված նոր փոխառությունների պատճառով այժմ շատ սովորական են դարձել, օրինակ՝* էֆեկտ, օբյեկտ, ակտ, *ինչպես և նորաստեղծ՝* ցատկ *և այլն*[3]*։*

Հնում փոխառյալ բառերում ձայնավորների միջև հորանջից խուսափելու համար, որպես կանոն, մտնում էր որևէ ձայնակապ, օրինակ՝ փարավոն, Գեվորգ, Միքայել, Աբրահամ, օվազիս, *ղարավուլ և այլն։*

Այժմ, նոր փոխառություններում երկու և երեք ձայնավորային զուգորդումները առանց ձայնակապի շատ սովորական են և որևէ արտասանական դժվարություն չեն հարուցում, օրինակ՝ սկաուտ, աուլ, բոա, աորտա, Աուստերլից, կակաո *և այլն։ Դեռևս մի քանի տասնամյակ առաջ մենք գրում և արտասանում էինք* օվազիս, *(նաև՝* ովասիս)[4], *այժմ ռուսերենի նմանողությամբ գրում և արտասանում*

---

2 *Խոսակցական լեզվում երբեմն կարելի է լսել* ս(ը)խեմա, կոն(ը)սպեկտ, էք(ը)ստազ *և այլն, որը դիտվում է որպես ոչ օրինակելի արտասանություն։*

3 Էդ. Աղայան, *Գրաբարի քերականություն, հ. 1, գիրք Ա, Երևան, 1964, էջ 47։*

4 *Տե՛ս* Ս. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան։*

ենք՝ օազիս[5]: *Որոշ դեպքերում վ-ն հաստատուն չէ, օրինակ, գրում են Շաղ Ադնավուր և Շաղ Ադնաուր և այլն։*

Արտասանական մի շարք երևույթներ հայերենում պայմանավորված են ռուսերենի փափուկ բաղաձայնների ազդեցությամբ։ Ուշադրության է արժանի այն փաստը, որ համապատասխան հնչյունագրքերում դ, տ *բաղաձայններն այժմ շատ դեպքերում արտասանվում են ավելի ուժեղ քմայնացումով, քան պետք է արտասանվեին, դառնալով յ կիսաձայնի կողքին, ինչպես՝* մատյան, հավիտյան, արարատյան, առավոտյան, արևմտյան *և այլն։*

Բավականաչափ տարածում է ստացել դ-*ի և* տ-*ի քմայնացած արտասանությունը հատկապես* ի-*ից և* ե-*ից առաջ փոխառյալ բառերում, ինչպես՝* դիետա, դինամո, դիպլոմ, ակադեմիա, դիրեկցիա, պարտիական, տեխնիկական *և այլն։ Որոշ դեպքերում այդ բանը նկատելի է նույնիսկ հայերեն բնիկ բառերում, ինչպես՝* արդիական, դաստիարակել, տիեզերք *և այլն։ Վերջին երևույթը, իհարկե, խիստ սահմանափակ է։*

Հայերենի արտասանական օրինաչափությանը հակառակ՝ լ-*ն մի շարք հնչյունագրքերում (որևէ բաղաձայնից առաջ) ռուսերենի նմանողությամբ և հենց ռուսերենից փոխառյալ բառերում արտասանվում է փափուկ, օրինակ՝* ալբոմ, վալս, ալմանախ, բոլշևիկ, կուլտուրա *և այլն։*

Այնուհետև, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ընդհանուր առմամբ, շրթնող ը-*ի կամ գաղտնավանկի արտասանությունը հայերենում գնալով դառնում է ավելի անհստակ և թույլ։*

Գաղտնավանկի արտասանությունը հաստատուն չէ, օրինակ, հարցնել, վերցնել, կորցնել, դարձնել *և այլ բառերում*[6]*։*

Մի շարք բառերում կայուն չէ գաղտնավանկի դիրքը, օրինակ՝ պատժվել, ընկնվել, պճնվել, բռնկվել, հասնելի *և այլն։* Տարր, անդորր *բառերը, որ պետք է արտասանվեին* տարըր, անդորըր, *այժմ գերազանցապես արտասանվում են առանց* ը-*ի։* Ձեռնտու *բառը ոչ հազվադեպ արտասանվում է* ձեռնըտու *և այլն։*

---

5 *Ժողովրդական լեզվում երբեմն կարելի է լսել* կլոուն, ախտա, կակաո, *որոնք դիտվում են իբրև շեղում արտասանական նորմաներից։*

6 *Բառամիջում երկու և երեք բաղաձայններ ունեցող մի շարք բառերի գաղտնավանկի ոչ հաստատուն արտասանության փաստի մասին ասված է Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսության» մեջ (1965, էջ 94)։ Այժմ այդ երևույթն ավելի ակնհայտ է դարձել։*

Հայոց լեզվի զարգացման ներքին օրինաչափություններից բխող հնչյունական տեղաշարժերը հիմնականում վերաբերում են շեշտափոխական հնչյունափոխությանը, ինչպես և մի շարք բաղաձայնների գրության և հնչման տարբերություններում առաջացած փոփոխություններին։

Հայերենում ներկայումս ուժեղ հակում է դիտվում գրության և արտասանության միջև եղած տարբերությունների նվազման ուղղությամբ։

Առհասարակ հայերենի արտասանության զարգացման ընդհանուր միտումը տանում է դեպի առավել հստակություն և պարզություն։ Այս միտումը մեր կարծիքով գործում է և հայերենի հնչյունափոխության բնագավառում, որտեղ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում զգալի տեղաշարժեր են տեղի ունեցել։

2. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ*

Ա. ՇԵՇՏԱՓՈԽԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հայերենում շատ մեծ դեր են կատարել և ժառանգորդության ուժով շարունակում են պահպանվել շեշտի տեղափոխության հետևանքով առաջացած հնչյունափոխական երևույթները։

Հին հայերենում բառի աճման ժամանակ շեշտի տեղափոխության պատճառով առաջացած հնչյունափոխությունները և սղումը ընդգրկում էին ձայնավորների մի մասը՝ ու, ի, է, եա, ոյ *երկբարբառները և* եայ *եռաբարբառը։*

Միջին հայերենում հնչյունափոխության միտումը ավելի ուժեղանում է, հնչյունափոխական ոլորտի մեջ վերցվելով նաև մյուս ձայնավորները (ա, ե, ո) *և բոլոր երկբարբառները։*

Աշխարհաբար գրական լեզուն հնչյունական համակարգով և հնչյունափոխական երևույթներով շատ մոտ է կանգնած հայոց հին գրական լեզվին։ Վերջադիր շեշտը և հնչյունափոխական օրինաչափությունների մեծ մասը նոր հայերենը ժառանգել է գրաբարից։ Գրաբարից ժառանգվեցին մեծ քանակությամբ հնչյունափոխությամբ կազմված բարդ և ածանցավոր բառեր, որոնք պահպանվեցին և հիմք հանդիսացան հնչյունափոխությամբ կազմված նորանոր բառերի համար։

---

* *Այս բաժնում մենք կանգ ենք առնում հնչյունափոխական միայն այն երևույթների վրա, որոնք հատկանշական են հայոց լեզվի զարգացման վերջին մի քանի տասնամյակների համար։*

Հնչյունափոխական երևույթները պահպանվեցին և թերման մեջ, սակայն շատ ավելի փոքր չափերով, քան բառակազմության։ Դրա պատճառն այն է, որ հոլովումը և մանավանդ հոդնակին, աշխարհաբարում գրաբարի համեմատությամբ բոլորովին նոր կազմություն ունեն։ Բառի թեքման ժամանակ կատարվող հնչյունափոխությունը արդի գրական լեզվում մասամբ բոլորովին վերացել է, մասամբ՝ պահպանվել նույն կարգի բառերի միայն մի խմբում։ Այստեղ դեր են կատարել նաև մի շարք հանգամանքներ, ինչպես՝ տրվյալ բառի գործածության հաճախականությունը, հնչյունափոխության պատճառով իրար հանդիպող բաղաձայնների արտասանական դժվարությունները, հնչյունափոխությունից առաջացած բառաձևերի համընկնումները և այլն։

Տեշտի փոփոխության և շեշտի դիրքի հետ կապված բազմապիսի հնչյունափոխություններով շատ հարուստ են հայերենի բարբառները, որոնք չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել գրական հայերենի վրա։

Ժամանակակից հայերենի հնչյունափոխական մի շարք օրինաչափություններ նույնն են գրաբարի, միջին հայերենի և բարբառների հետ, սակայն, այդ երևույթներում և դրանց դրսևորման ձևերում կան զգալի տարբերություններ։

Ժամանակակից հայերենում վաղուց արդեն դադարել են գործելուց գրաբարի հնչյունափոխական օրենքները և դրանք շարունակում են գոյություն ունենալ միայն ավանդաբար, սովորության ուժով։ Դրա ապացույցն այն է, որ նոր շրջանում կատարված բազմաթիվ փոխառություններ այլևս չեն ենթարկվում այդ օրենքներին և գործածվում են առանց հնչյունափոխության, ինչպես, օրինակ՝ բինտ, մոլեկուլ, տուշ, յարուս և այլն[7]։

Մյուս կողմից արդեն մի շարք դեպքերում խախտվում է և ավանդությունը։ Շատ բառեր, հատկապես թեքման ժամանակ, սկսում են գործածվել առանց հնչյունափոխության։

Արևելահայ գրական լեզվի կազմավորման, մշակման ու կատարելագործման ճանապարհին հնչյունափոխական երևույթներում բնականաբար առաջացան մի շարք անցողիկ հատկանիշներ, երկվություններ, տարընթացություններ, որոնք բացատրվում են մեր

---

7 Ժողովրդախոսակցական լեզվում երբեմն հանդիպում են այսպիսի ձևեր, ինչպես՝ բինտ-բնտի, սուպ-սպի և այլն, որոնք երբեմն թափանցում են և գրականության մեջ (օրինակ՝ բրիգադրին զգուշացրեք, բրիգադրի պարտքն է, Հ. Մաթևոսյան, *Օգոստոս, 1967, էջ 133*)։

լեզվի կազմավորման ու զարգացման յուրահատկություններով։ Մի կողմից՝ գրաբարի օրենքները, մյուս կողմից՝ միջին հայերենի, աշխարհաբարի և բարբառների ներգործությունը, ինչպես և որոշ գրողների գիտակցական, բռնազբոսիկ և արհեստական ձևերի ներմուծումը, այս բնագավառում 19-րդ դարի վերջերին առաջացրել էին բավականաչափ մեծ անմիօրինակություններ։

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հանդես եկած Րաֆֆու, Պռոշյանի, Աղայանի, Մուրացանի, Թումանյանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Իսահակյանի, Տերյանի և մյուս գրողների ջանքերով ավելի ու ավելի է մշակվում, բարբառային ու գրաբարյան հնչյունական խորթ տարրերից զտվում ու հղկվում հայ գրական լեզուն։

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հայոց լեզվի հնչյունափոխական երևույթներում դիտվում է երկու հիմնական միտում։ Մի կողմից գրաբարի ազդեցությունը, որի պատճառով նըկատվում է հնչյունափոխությունը համատարած կերպով կիրառելու ձգտումը։ Այս միտումը առանձնապես բնորոշ է Մուրացանին, որի մոտ հանդիպում են, օրինակ՝ դահլճի, ակմբի, կրճի, կրճերից, լուսով, կուսի, զուգեց (զույգ արմատից), քաջարություն, պատնիշապատ և նման ձևեր։

Մյուս կողմից նկատելի է կենդանի խոսակցական լեզվի, մասամբ և արևմտահայերենի ազդեցությունը։ Այդ կողմնորոշումը բընորոշ է Րաֆֆուն, որի մոտ առանձնապես աչքի է ընկնում միավանկ բառերի անհնչյունափոխ թեքումը, ինչպես՝ կուրծքի, թուփի, խումբի, սունկի, շունչի, միսի, թուփեր, խումբեր, կուրծքեր և այլն։

Միավանկ բառերի անհնչյունափոխ հոգնակիի ձևեր կան և այլ գրողների մոտ։ Օրինակ՝ Իսահակյանը գրում է թուփեր, ցիցեր, ծունկեր, փունջեր և այլն, երբեմն նաև սեռականում՝ սուրի, ծունկի և այլն։

Գրաբարի ազդեցությունը նկատելի է և հետագա գրողների մոտ, բայց անշուշտ ավելի փոքր չափերով։ Օրինակ, Շիրվանզադեի մոտ հանդիպում են անզգուշութենով, գողութենից, ինչպես նաև՝ ժպտով, քմքի, ճանճղխի և նման ձևեր, Նար-Դոսի մոտ՝ ձմերկան, լուսի, լուսով, գործչին և այլն։

Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը և Ա. Իսահակյանը, ավելի մոտ կանգնած լինելով ժողովրդական կենդանի լեզվին, ընդհակառակն, օգտագործում են նաև ժողովրդական, բարբառային ձևեր, օրինակ՝ ըխտավոր, աշղի, մաշկներ, գլխներ, երեխի, գաթի, բերնի, ճակտի և այլն։

130—28

Բացի այս, պետք է ասել, որ առհասարակ այս շրջանին հատուկ էին և երկվությունը՝ զուգահեռ ձևերի առկայությունը, ինչպես և զանազան անկանոնություններն ու շեղումները, որ երևան են գալիս այդ շրջանի բոլոր գրողների մոտ։ Այսպես, օրինակ՝ շավղի և շավիղի, խիճեր և խճեր, ինչպես և՝ պտույտացնելով, ծույլացրել, այսպեսով (Րաֆֆի), ժողովրդին և ժողովուրդին, խորհրդի և խորհուրդի, թումբեր և թմբեր և այլն (Մուրացան), բախծի և բախիծի, ծաղկի և ծաղիկի (Իսահակյան)։ Թումանյանի մոտ նույնպես շատ կրկնակ ձևեր կան։ Օրինաչափություններից շեղվող ձևեր են հանդիպում և Շիրվանզադեի ու Նար-Դոսի մոտ։

Մեր լեզվի մշակման և կատարելագործման ճանապարհին աստիճանաբար կանոնավորվեցին և դուրս մղվեցին հայերեն աշխարհաբար գրական լեզվի օրինաչափություններից շեղվող շատ գրաբարյան կամ բարբառային հնչյունափոխական երևույթներ։ Ներկայումս ոչ մի գրող այլևս չի գործածում ձմերկի, ձմերկան, համբուրի, գլխներ, կուրծքի, կուրծքեր և նման ձևեր։

Սակայն հատկանշականն այն է, որ հնչյունափոխական երևույթներում երևան եկող երկվությունը, որից զերծ չէր նաև գրաբարը, ոչ միայն պահպանվել է մինչև օրս, այլև գնալով ավելի մեծ ծավալ է ընդունել։ Ընդհանուր միտումն այն է, որ հնչյունափոխվող ձևի կողքին երևան է գալիս նաև դրա անհնչյունափոխ տարբերակը, որը աստիճանաբար դուրս է մղում առաջինը, որոշ ժամանակ զուգահեռաբար գործածվելուց հետո։

Այդ երկվության մասին միշտ էլ հայտնվել են և հայտնվում են դժգոհություններ։

Ահա ինչ է գրում Դաղբաշյանը 20-րդ դարի սկզբներին թեքական ձևերի անկանոնության մասին. «Միևնույն հեղինակի մոտ մենք կարդում ենք սուրբ-սուրբի և սրբի, թուփ-թուփի և թփի, միս-միսի և մսի, բիբ-բիբի և բբի, իղձ-իղձի և ըղձի, իղձեր և ըղձեր, սերունդ-սերունդի և սերնդի, կես-կեսի և կիսի, սենյակ-սենյակի և սենեկի, լույս-լույսի և լուսի, համբույր-համբույրի և համբուրի»[8]։

Այդ երկվությունը առանձնապես ակնառու է ժամանակակից հայերենում, որտեղ առկա են բազմաթիվ զուգահեռ ձևեր, և՛ հնից եկողը՝ ավանդականը, և՛ նորը՝ զարգացողը, ինչպես, օրինակ՝ սերնդի և սերունդի, կամրջի և կամուրջի, ծաղկի և ծաղիկի, կոշկի և կոշիկի, նախրի և նախիրի, որոշչի և որոշիչի և այլն։

---

8 Հ. Դաղբաշյան, Արևելյան աշխարհաբարի քերականություն, մաս 1-ին, Ստուգաբանություն, Թիֆլիս, 1913, Առաջաբան։

Որո՞նք են այն հիմնական տեղաշարժերը, որոնք տեղի են ունեցել հայերենի հնչյունափոխության մեջ վերջին 40—50 տարիների ընթացքում։

ա) 20-ական թվականներին հնչյունափոխությամբ արտահայտվող հոլովական շատ ձևեր, ինչպես՝ պարտիզի, ժապավինի, լուսի, կուսի, մրճի, դքսի, թրքի, ռսի, տփի, անվի, մրրկի, պարսկի, ստրկի, երկսի, տրտնջի *և այլն, փոխարինվել են դրանց անհնչյունափոխ ձևերով՝* պարտեզի, ժապավենի, լույսի, կույսի, մուրճի, դուքսի, ռուսի, թուրքի, տուփի, անիվի, մրրիկի, պարսիկի, ստրուկի, երկուսի, տրտունջի *և այլն, սրանց համապատասխան նաև մյուս հոլովները։*

բ) Հոլովման մեջ երևան են եկել և կիրառության մեջ են մտել շատ կրկնակ ձևեր, օրինակ՝ սննդի–սնունդի, ծննդի–ծնունդի, հովտի–հովիտի, կապկի–կապիկի, շապկի–շապիկի, գեղեցկի–գեղեցիկի, շիրմի–շիրիմի, թախծի–թախիծի *և այլն։ Ընդ որում, որպես օրինաչափություն պետք է նշել, որ այդ փոփոխությունը ավելի շուտ տեղի է ունեցել բազմավանկ բառերում, քան միավանկ, քանի որ հնչյունափոխության ընդհանուր առմամբ ավելի շատ ենթակա են միավանկները։*

գ) Բառակազմության մեջ հնչյունափոխությամբ կազմված մի շարք ձևեր ժամանակակից հայոց լեզվի բառապաշարից դուրս են ընկել, ինչպես՝ պատնիշապատ, կիտադրություն, տիգավոր, անըրդային, թրքական, ռսական, հոբելենական, սենեկային, ժանեկավոր, վշաթել, խլրդաձև, թջաձուլարան *և այլն։*

դ) Երևան են եկել մի շարք բառակազմական կրկնակ ձևեր՝ հնչյունափոխությամբ և առանց հնչյունափոխության, ինչպես՝ քառասնական–քառասունական, հանդիսասրահ–հանդեսասրահ, Ներսիսյան–Ներսեսյան *և այլն։*

ե) Ավանդաբար հնչյունափոխվող արմատները բարդ և ածանցավոր նորաստեղծ բառերում հաճախ վերցվում են անհնչյունափոխ ձևով, ինչպես՝ լույսային, հանդեսաքարտ, զորահանդեսային, զույգամրացում, ռումբաձև, տիղմաբեր։

Բ. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայերենում բառի աճման ժամանակ շեշտը վերջին վանկի վրա տեղափոխվելու պատճառով հնչյունափոխության են ենթարկվում ե *(նախկին* է*),* ու, ի *ձայնավորները և* ույ

(նախկին ոյ), յա (նախկին եա, եայ), մասամբ նաև յու (նախկին իւ) երկհնչյունները։

Ռուսերենում ևս բառավերջի շեշտի տեղափոխությունը երբեմն պատճառ է դառնում սղման, օրինակ՝ белок-белка-белкообразный։ Բայց այս կարգի ձևերը ռուսերենում մասնակի բնույթ են կրում և օրինաչափությամբ հանդես չեն գալիս։

Հնչյունափոխական երևույթները, ինչպես արդեն նշել ենք, արդի հայերենում ժառանգորդական բնույթ ունեն և այլևս կենդանի ու գործուն չեն։

Ե ձայնավորի փոփոխությունը թեքման ժամանակ գրեթե վերացել է, պահպանվելով միայն բառակազմության մեջ։ Ու և ի ձայնավորների և երկհնչյունների թեքական հնչյունափոխությունները խիստ նվազել են և պահպանվել են միայն մի խումբ բառերի մեջ։ Հնչյունափոխվող բազմավանկ բառերը թեքման մեջ մեծ մասամբ ունեն նաև անհնչյունափոխ տարբերակներ։

Հնչյունափոխությունը մի շարք բարդ և ածանցավոր բառերում այնքան օրգանական է դարձել, որ երբեմն դրանց նախնական անհնչյունափոխ ձևերը դժվարությամբ են ընկալվում, ինչպես, օրինակ, սրբել, սրբիչ, դպրոց, ծրար, ծրագիր բառերում, որոնց հիմքում ընկած են սուրբ, դպիր, ծիր արմատները։

Գրաբարի մի շարք արմատներ արդի հայերենում պահպանվել են միայն բարդ և ածանցավոր բառերում հնչյունափոխված ձևով և քանի որ արմատական բառերը այժմ գործածական չեն, ապա դրանց հնչյունափոխությունը դժվարությամբ է ըմբռնվում։ Այսպես, օրինակ, կանուխ բառը այժմ արևելահայերեն գրական լեզվում գործածական չէ, բայց գրաբարյան այդ բառից մենք ունենք մեծ թվով բարդ և ածանցավոր կազմություններ, որտեղ ու-ի սղումը մթագնված է, ինչպես՝ կանխագուշակել, կանխատեսել, կանխել, կանխում, կանխակալ, կանխիկ և այլն։

Երբեմն բառերի հնչյունափոխված ձևերը լեզվում առաջացած անհրաժեշտության թելադրանքով իմաստային տարբերակման են ենթարկվում, ինչպես, օրինակ՝ գլուխավոր-գլխավոր, տերություն-տիրություն, հղանալ-հղիանալ և այլն։

Կցական բարդություններում հնչյունափոխման ենթակա բառերը մնում են անփոփոխ, որ բացատրվում է նրանց ունեցած կրկնակի շեշտով։ Օրինակ՝ կեսկատակ, լուծընկեց, խունկեղեգն, կուշտփոր, սիրտխառնուք, թուխմորուս և այլն։ Այս սկզբունքով կազմվում են նաև նոր բառեր, ինչպես՝ ընկույզկոտրիչ, կաղինկոտրիչ,

սիրտանոթային, թույլակոճոլային, ձույլարծաթային, թույլանդամ և այլն։

Բարդ և ածանցավոր բառերի վերջին բաղադրիչները եթե պահպանում են իրենց հիմնական իմաստը, ապա ենթակա են հնչյունափոխության, ինչպես՝ անձրևաջուր-անձրևաջրի, ծառաբուն-ծառաբնի, անքուն-անքնություն, հեռագիր-հեռագրական, նախագիծ-նախագծային և այլն, բայց՝ ջրմուղ-ջրմուղի, հացթուխ-հացթուխի, հրթիռ-հրթիռի և այլն։ Կան նաև բացառություններ, հատկապես ի ձայնավորի փոփոխության մեջ։

Որոշ դեպքերում չհնչյունափոխվելու պատճառ է դառնում երկու տարբեր բառերի հնչյունափոխված ձևերի համընկնումը, որով իմաստային շփոթություն կարող է առաջանալ։ Այդպիսի բառեր են, օրինակ՝ մուտք–միտք, նուշ-նիշ, հուն–հին, երկունք–երկինք, ծուծ–ծիծ, բուրք–բրիք, կարին–կարն և այլն։

Հոլովման մեջ հնչյունափոխությունը ընդհանուր առմամբ ավելի բնորոշ է սեռական հոլովին, մինչդեռ, օրինակ, բացառական և գործիական հոլովները ավելի պակաս չափով են ենթակա հնչյունափոխության։ Այսպես, օրինակ, ածխի, բայց՝ ածուխով, ածուխից և այլն (ածխով, ածխից ձևերը արհեստական են)։

Մեկից ավելի արմատից կազմված բարդ և ածանցավոր բառերը կարող են ունենալ երկու և երեք սղված հնչյուն, ինչպես, օրինակ՝ ածխածնազրկում, ծծմբաջրածնային, ջրածնաբբվային և այլն։

Առհասարակ եթե բառը հոլովման ժամանակ հնչյունափոխվում է, ապա բարդ և ածանցավոր ձևերում, մանավանդ բայական կազմություններում, եթե այդպիսիք կան, անպայմանորեն նույնպես հնչյունափոխվում է։ Բայց կան նաև հազվադեպ հանդիպող բացառություններ, օրինակ՝ Զանգու-Զանգվի, բայց զանգուամերձ (ԵՉ), երկինք-երկնքի, բայց երկինքոտված (ՀՍ)։

Բառերի զանազան ձևերում երևան եկող հնչյունափոխությունը ըստ ընդգրկման բնենլով՝ հնչյունափոխվող բառերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1) Բառեր, որոնք հնչյունափոխվում են բոլոր ձևերում, և՛ թեքական և՛ բառակազմական։ Սրանք մեծ մասամբ ու և ի ձայնավորներով միավանկ (փակ վանկ) բառեր են (ջուր-ջրի-ջրեր-ջրաման, սիրտ-սրտի-սրտեր-սրտաբուխ)։

2) Բառեր, որոնք հնչյունափոխվում են միայն բառակազմության մեջ, թեքման ժամանակ չեն հնչյունափոխվում։ Այս խմբի մեջ են մտնում բառավերջում (փակ վանկ) ե, յա, ույ, մասամբ

նաև ու և ի ունեցող բառերը, ինչպես, օրինակ՝ վրեժ-վրեժի-վրեժներ-վրիժառու, մատյան-մատյանի-մատյաններ-մատենադարան, գույն-գույնի-գույներ-գունավոր, լուր-լուրի-լուրեր-լրագիր, ճիչ-ճիչի-ճիչեր-ճչալ։

3) Բառեր, որոնք բառակազմության և հոլովման մեջ հնչյունափոխվում են, հոգնակիում՝ ոչ։ Դրանք գլխավորապես բառավերջի փակ վանկում ի և ու ունեցող բազմավանկ բառերն են, ինչպես՝ կռիվ-կռվի-կռիվներ-կռվարար, հաշիվ-հաշվի-հաշիվներ-հաշվապահ, գլուխ-գլխի-գլուխներ-գլխավոր. կատու-կատվի-կատուներ-կատվային։

4) Եվ վերջապես բառեր, որոնք կայուն կերպով հնչյունափոխվում են միայն բառակազմության մեջ, իսկ հոլովման ժամանակ հանդես են գալիս կրկնակ ձևերով, ինչպես՝ բջիջ-բջջի-բջիջի-բջջանյութ, ծաղիկ-ծաղկի-ծաղիկի-ծաղկման, բլուր-բլուրի-բլրակ, հովիտ-հովտի, հովիտի-հովտաշուշան։ Այս երևույթը վերաբերում է բոլոր փոփոխվող ձայնավորներին, բայց առանձնապես բնորոշ է բազմավանկ բառերին։

Այժմ առանձնակի քննենք յուրաքանչյուր ձայնավորի և երկհնչյունի կրած փոփոխությունները, ընդ որում նշենք, որ օրինակներ բերելիս մենք անհրաժեշտության դեպքում վերցրել ենք տվյալ երևույթին վերաբերող օրինակների մեծ մասը, որոշ դեպքերում՝ բոլորը, նաև հնչյունափոխության ծավալի մասին գաղափար տալու նպատակով։

ա) Ե (է) ձայնավորի հնչյունափոխությունը

Ե (հին ուղղագրությամբ՝ Է) ձայնավորը բառավերջի փակ վանկում մի շարք դեպքերում շեշտակորույս լինելով փոխվում է ի-ի, օրինակ՝ կես-կիսել, հանդես-հանդիսավոր։ Հին հայերենում այս հնչյունափոխությունը հատուկ էր և՛ հոլովմանը, և՛ բառակազմությանը, ընդ որում՝ տարածվում էր բոլոր նույն կարգի բառերի վրա, օրինակ՝ կէտ-կիտի-կիտասահման, կէս-կիսոյ-կիսակատար[9]։ Ե-ն նույն դեպքում մեծ մասամբ մնում էր անփոփոխ, ինչպես՝ ծեր-ծերոյ-ծերակոյտ և այլն։

Ե(Է)-ի հնչյունափոխությունը ավանդաբար մեզ հասնելով, ար-

---

9 Այս կանոնից շեղվող փոքրաթիվ բացառություններ կային միայն, ինչպես՝ աղէտ-աղէտի (կամ՝ աղիտի, աղետի)-աղէտաբեր։

դի հայերենում ձեռք է բերել մասնակի բնույթ։ Հոլովման մեջ այն վերացել է, բացառությամբ 2—3 բառի, ինչպես՝ սեր-սիրո, տեր-տիրոջ[10], մեջ-միջի։ Վերջինս հնչյունափոխվում է արդեն ոչ հաստատուն կերպով։

Մի քանի բառերում հնչյունափոխությունը հոլովման ժամանակ մինչև վերջին ժամանակներս դեռևս պատահում էր, ինչպես՝ կես, ծես, գես։ Ներկայումս ընդունված են դրանց անհնչյունափոխ ձևերը։

Այսպիսով, կարելի է ասել, որ ե-ի հնչյունափոխությունը հոլովման ժամանակ, բացառությամբ գրաբարյան հոլովաձևերով հանդես եկող սեր և տեր բառերի, ներկայումս վերացել է։

Այդ փոփոխությունը տեղի է ունեցել ոչ միանգամից, այլ աստիճանաբար նվազել է հոլովման ժամանակ հնչյունափոխվող բառերի թիվը։

20-րդ դարի առաջին քառորդում այդ հնչյունափոխությունը մասնակի կերպով դեռևս պահպանվում էր։ Այս շրջանի գեղարվեստական գրականության մեջ և մամուլում հաճախակի կարելի է հանդիպել այսպիսի ձևեր՝ ծիսի, ֆինու (ՇԿ, 1907), կիսում, կիսից (Ն-Դ, 1912), պարտիզում (ԱԻ, 1917), տարվա կիսին (ԽՀ, 1922), ճանդիսի ժամանակ, այդ ասպարիզում (Մարտ., 1924), նաև՝ ֆարտիզի, ժապավինի (Մլխս., ՀԲԲ) և այլն։

30-ական թվականների վերջերին թեև հազվադեպ, բայց դարձյալ նմանօրինակ ձևեր հանդիպում էին, ինչպես՝ այդ ասպարիզում, նկարչության ասպարիզում (ԽԱ, 1934—1936) և այլն։

Սակայն պետք է նշել, որ հոլովման մեջ հնչյունափոխված այսպիսի ձևերի կողքին դարիս սկզբներին արդեն երբեմն գործածվում էին և նրանց չհնչյունափոխված ձևերը, որոնք գնալով ավելի հաճախակի են դառնում և վերջ ի վերջո բոլորովին դուրս մղում նախնական ձևերը։ 40-ական թվականներին հազվադեպ հանդիպող հնչյունափոխված ձևերը արդեն հնացած էին համարվում, իսկ ներկայումս դրանք միանգամայն անգործածական են։

Բառակազմում շեշտի տակ գտնվող է-ն շեշտակորույս լինելով նույնպես ենթարկվել է հնչյունափոխության թե՛ հոլովման և թե՛ բառակազմության ժամանակ։ Հայերենում այդպիսի բառերի թիվը մեծ չէ։ Սակայն այստեղ ևս հոլովական հնչյունափոխված ձևերը

10 Գրականության մեջ հանդիպում են սեր և տեր բառերի նաև անհնչյունափոխ հոլովաձևերը, օր.՝ «Հանդիպեցի իմ սերին» (ԱԻ), «Մեծ տերից նամակ էր բերել» (Բաֆ.)։

տեղի են տվել անհնչյունափոխներին։ Այսպես, այժմ ընդունված է՝ էշ-էշի, էջ-էջի, էգ-էգի, մինչդեռ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» տրված են սեռականի հնչյունափոխված՝ իջի, իգի, իշի (նաև՝ էշի) ձևերը։ Այժմ կայունացել են անհնչյունափոխները։

Բառակազմության մեջ հնչյունափոխությունը մասամբ պահպանվել է, մասամբ՝ ոչ։ Օրինակ՝ էջ-իջատեղ-իջատում և էջատեղ-էջատում-էջանոց, էգ-իգական, բայց՝ էշ-իշանալ, իշավարի, նաև՝ էշանալ, էշավարի և այլն։

Բառավերջի ե-ն չեշտակրույս լինելով չի ենթարկվում հնչյունափոխության, ինչպես՝ րոպե-րոպեի-րոպեական, բազե-բազեի-բազեակիր։ Բառավերջի ե-ն բառակազմության ժամանակ մի շարք դեպքերում կարող է ընկնել, օրինակ՝ Հռիփսիմե-Հռիփսիմյան, Գայանե-Գայանյան։

Գոմեշ բառը միայն որպես բացառություն (անշուշտ բարբառների ազդեցությամբ) թե՛ հոլովման և թե՛ բառակազմության ժամանակ ե-ն բոլորովին սղում էր՝ գոմշի, գոմշից, գոմշին (Ն-Դ, 7, 221, ՀԹԵ, հ. 1, 390), գոմշաբեռան (Շ, 2, 35), գոմշատեր (ՀԹ), գոմշենի (ԱԻ), նաև ժամանակակից գրողների մոտ՝ գոմշակով (Սխ), գոմշուկ (ԽԴ)։ Այժմ թե՛ հոլովման, թե՛ բառակազմության մեջ տարածում են ստանում չսղվող ձևերը, օր.՝ գոմեշացու (ՆԶ) և այլն։

Ի՞նչն էր պատճառը, որ ե(է)-ի հնչյունափոխությունը հոլովման մեջ վերացավ։ Մեր կարծիքով այստեղ կարևոր դեր է կատարել այն հանգամանքը, որ այս կարգի բառերի հոգնակին կազմվել է առանց հնչյունափոխության, ասենք՝ ծես-ծեսեր, հանդես-հանդեսներ։ Որ այս հանգամանքը նշանակություն ունի հոլովական ձևերի կազմության համար, պարզորոշ կերպով երևում է ու և ի ձայնավորների հնչյունափոխության ժամանակ։ Համեմատենք, հետևյալ հոլովական և հոգնակի ձևերի կազմությունը՝ փուշ-փշի-փշեր, սուտ-ստի-ստեր, մուր-մրի-մրեր, գիծ-գծի-գծեր, լիճ-լճի-լճեր, քիթ-քթի-քթեր, որտեղ հնչյունափոխվում է և՛ հոգնակին, և՛ հոլովականը, բայց՝ լուր-լուրի-լուրեր, խութ-խութի-խութեր, ճիչ-ճիչի-ճիչեր, նիշ-նիշի-նիշեր, շիթ-շիթի-շիթեր և այլն։ Երբ հոգնակին առանց հնչյունափոխության է կազմվում, ապա հոլովական ձևերը ենթարկվում են հոգնակիի ազդեցությանը։ Այդ երևում է նաև այն ձևերից, որոնցում անհնչյունափոխ հոգնակիի առկայությամբ

հնչյունափոխված հոլովական ձևերի կողքին առաջացել են նաև չհնչյունափոխվածները, սկզբում գործածվել են զուգահեռաբար, այնուհետև հնչյունափոխվածը տեղի է տվել։ Օրինակ՝ դուքս-դքսի-դուքսի-դուքսեր (այժմ՝ դուքսի), մուրճ-մրճի-մուրճի-մուրճեր (այժմ՝ մուրճի), սունկ-սնկի-սունկի-սունկեր (այժմ՝ սունկի), թռչուն-թռչնի-թռչունի-թռչուններ (այժմ՝ թռչունի) և այլն։

Ե-ի հնչյունափոխությունը լավ է պահպանվել բառակազմության մեջ։ Այսպես՝ վեճ-վիճել, վեպ-վիպասան, դեղ-դիղել, կես-կիսատ, մեջ-միջին, վրեժ-վրիժառու, օրեն(ք)-օրինական, նվեր-նվիրել, մեգ-միգապատ, կեղ-կիղակետ, դեմ(ք)-դիմագիծ, տեր-տիրական, դեպ(ք)-դիպված, սեր-սիրավառ, սեզ-սիզավետ, սեգ-սիգաճեմ, շեկ-շիկահեր և այլն։

Այսպիսի շատ բառեր հենց հնչյունափոխված ձևով ժառանգվել են գրաբարից և այնուհետև, հնչյունափոխված արմատների օրինակով, կազմվել նորանոր բառեր. օրինակ՝ վիճարկել, իջվածք, ձիթաբլիթ, գիտնական։

Թեև հնչյունափոխությունը բառակազմության մեջ շատ ավելի հաստատուն է, քան թեքման մեջ, բայց և այնպես այս բնագավառում ևս վերջին մի քանի տասնամյակների ընթացքում որոշ տեղաշարժեր նկատելի են։

Այդ դրսևորվում է նախ և առաջ հնչյունափոխված արմատներով կազմված բազմաթիվ բառերի կողքին նույն արմատներով առանց հնչյունափոխության կազմված նոր բառերում։ Այսպես, օրինակ, ժապավեն բառից կան ժապավինագործ, ժապավինավոր, ժապավինաձև, ժապավինել և նմանօրինակ բառեր, մինչդեռ վերջին շրջանում, նախկինում անպայմանորեն հնչյունափոխվող ժապավեն արմատից նոր կազմվել են կամ առանց հնչյունափոխության օգտագործվում են ժապավենային, ժապավենաձև, ժապավենավոր բառերը։ Պարտեզ բառից հնից գալիս են պարտիզպան, Պարտիզունի և այլն, բայց այժմ ունենք պարտեզաշինություն, հանդես-հանդիսավոր, այժմ՝ հանդեսատուփ, հանդեսաքարտ, կոճղեզ-կոճղիզուկ, այժմ՝ կոճղեզային, էշ-իշամեղու, բայց այժմ՝ էշություն, էշավարի և այլն։

Մի շարք դեպքերում հնչյունափոխությամբ կազմված բառերի կողքին երևան են եկել նույն բառերի առանց հնչյունափոխության տարբերակները կամ զուգահեռները. օրինակ՝ անգիտություն-անգետություն, անգիտորեն-անգետորեն, անգիտաբար-անգետաբար, ձիթիչ-ձեթիչ, ձիթոտ-ձեթոտ, հանդիսասրահ-հանդեսասրահ, նաև

ազգանուններում՝ Ներսիսյան-Ներսեսյան, Թուրինյան-Թուրենյան, Հովհաննիսյան-Հովհաննեսյան, Մովսիսյան-Մովսեսյան *և այլն։ Զհնչյունափոխելու միտումը ներկայումս ակնառու է և գնալով ավելի լայն ծավալ է ստանում։ Այստեղ անհրաժեշտ է նաև նշել, որ միևնույն արմատից հնչյունափոխությամբ և առանց հնչյունափոխության կազմված բառեր կամ զուգահեռ ձևեր կային նաև գրաբարում, օրինակ՝* անօրինաբար, *բայց՝* անօրենություն, վիմատաշ և վեմատաշ *և այլն։ Սակայն գրաբարում այս կարգի ձևերը փոքրաթիվ բացառություններ են եղել միայն։ Ժամանակակից հայերենում նույնպես պահպանվել են հնից եկող այդ կարգի կազմություններ։*

Հազվադեպ գործածված, գրքային մի շարք բառերում հնչյունափոխությունը այժմ մեր ականջին խիստ խորթ է հնչում։ Այսպես, օրինակ, պատնեշ *բառից հնում կային* պատնիշապատ, պատնիշափակ *(ՄԳՄ, 463),* տեգ-*ից՝* տիգավոր *(Բաֆ, Ա, 590) բառերը։ Այսպիսի կազմությունները, կարելի է ասել, այժմ խիստ հնացած են և մոռացության են տրվել։ Ժամանակակից գրականության մեջ և մամուլում* պատնեշ *և* տեգ *բառերից բարդ և ածանցավոր նոր բառեր են կազմվում առանց հնչյունափոխության։ Օրինակ՝* պատնեշանալ *(ՆԶ),* պատնեշել *(ԱՄ),* պատնեշային *(մամուլ),* տեգարձակում *(ԱԻ),* տեգավոր *(Վխ),* տեգընբաց *(ՆԶ) և այլն։ Հնում* կետ *բառից կար* կիտայրություն, *նաև՝* կետայրություն։ *Այժմ գործածական չէ հնչյունափոխված ձևը։*

Ընդհանրապես հնչյունափոխության ենթակա է միայն նախկին է-ն, բայց մի քանի բառերում փոփոխության է ենթարկվում նաև ե-*ն, որը վերածվում է* ը-*ի, կամ բոլորովին սղվում։ Այդ երևույթը արդի հայերենում մասամբ ժառանգություն է գրաբարից, մասամբ ներմուծվել է բարբառներից։ Գրաբարում* ղ *և* ռ *բաղաձայններից առաջ* ե-*ն որոշ բառերում թե՛ հոլովման և թե՛ բառաբարդման և ածանցման ժամանակ սղվում էր, օրինակ՝ ասեղն-ասղան-ասղնագործ, ասղնանի և այլն, պճեղն-պճղան-պճղնավոր և այլն։ Բարբառներում* ե-*ի սղումը շատ ավելի տարածված է, օրինակ՝* ասղի, ցորնի, կորկի, ասղաման, ցորնատեր *և այլն։ Արդի գրական հայերենի մեջ մտել և գործածվում են* ասեղ-*ից և* ցորեն-*ից բարդված կամ ածանցված բավականաչափ մեծ թվով բառեր, որոնք կազմված են* ե-*ի սղումով և առանց սղման։ Նրանք, որոնք գրաբարից են ժառանգվել կամ բարբառներից են թափանցել գրական լեզվի մեջ,* ե-*ն սղում են. այն բառերը, որոնք կազմվել են աշխարհաբարի օրինա-*

չափության համաձայն, ե-ն չեն սղում: Այսպես, օրինակ՝ ասղանի, ասղնտուփ (ՄՄ), ասղնտել (ՎՏ), ասղնատել (ԽՀրաչ.), ասղարուր, ասղարույր (ՀԹ), ինչպես և՝ ասղաման, ասղահար, ասղաչափ, ասղավոր, ասղակար, ասղտել (բառարաններից)[11]: Մյուս կողմից ունենք՝ ասեղնագործություն (Րաֆ.), ասեղնագործել (ՀԹ, ԱԻ), ասեղանման (ՊՊ), ասեղն (ԳԶ) և այլն:

Այժմ գերազանցապես վերցվում է անհնչյունափոխ արմատը, օրինակ՝ ասեղնային (Վխ), ասեղնապատ (ՍԿ), ասեղնակար (ԳՄ), ասեղել (ԱՄ), ասեղնավոր, ասեղնատերև (ՀՌԲ) և այլն:

Ցորեն բառից ե-ի սղումով կազմված բոլոր բարդ և ածանցավոր բառերը, որոնք հանդիպում են գրականության մեջ, բարբառային ծագում ունեն: Դրանք, լայնորեն գործածվելով խոսակցական լեզվում, թափանցել են նաև գեղարվեստական գրականության մեջ, ինչպես՝ ցորնատեր (ՊՊ), ցորնահոր (ՂԱ), ցորնագույն (ՎՓ, ԱԲ), ցորնահոտ (ՆԶ), ինչպես և՝ ցորնաբեր, ցորնամորթ, ցորնահաց (բառարաններից): Ցորեն բառում ե-ը սղումը հազվադեպ հանդիպում է նաև հոլովման ժամանակ, օրինակ՝ ցորնի հատ (ԴԴ):

Ներկայումս ընդունելի են և գերազանցապես գործածական են ցորեն բառից կազմված բարդ և ածանցավոր առանց սղումի ձևերը, օրինակ՝ ցորենագույն (ԴԴ), ցորենատեր (ԱԲ), ցորենահասունկ (ՆԶ), ցորենեռանգ (Վխ), ցորենհատ, ցորենազգի, ցորենավահառ և այլն:

Ոչ հազվադեպ հանդիպում են և կորեկ-ից կազմված բարդություններ, որտեղ ե-ն սղված է, օրինակ՝ կորկախառն (ՊՊ), կորկահաց (Սխ), կորկաձավար (Սխ):

Գրականության մեջ հանդիպում են ե-ի հնչյունափոխությամբ կազմված մի շարք ձևեր, որոնք ակնհայտորեն բարբառային են, օրինակ՝ շողորքորթը բոխեց գնաց (Ա. Խնկ., «Սզռավն ու աղվեսը»), կորկի հատ (ՀԹ):

բ) Ու ձայնավորի հնչյունափոխությունը

Ժամանակակից հայերենում միավանկ (փակ) բառերում ու ձայնավորը շեշտակորույս լինելով վերածվում է ը-ի, ինչպես՝ սուր-սրի-սրեր-սրիչ, ջուր-ջրի-ջրեր-ջրառատ. երկու և ավելի վանկանի նույն կարգի բառերում ու-ն շեշտակորույս լինելով մեծ մասամբ

11 Բարբառային ձևերում ասեղն-ի վերջին ն-ն մեծ մասամբ ընկնում է:

բոլորովին սղվում է կամ փոխվում է ը-ի, օրինակ՝ պտուղ-պտղի-պտղաբեր, գլուխ-գլխի-գլխավոր, ծծումբ-ծծմբի-ծծմբային։

Ու ձայնավորով միավանկ (փակ) բառերի հնչյունափոխական երևույթները նկատի ունենալով՝ կարելի է դրանք խմբավորել։

Մի խումբ բառեր հաստատուն կերպով հնչյունափոխվում են բոլոր ձևերում, և՛ թեքման, և՛ բառաբարդման ու ածանցման ժամանակ։ Այսպես՝ փուշ-փշի-փշեր-փշալար, ցուրտ-ցրտի-ցրտեր-ցրտաշունչ, փունջ-փնջի-փնջեր-փնջային, սուրբ-սրբի-սրբեր-սրբատաշ, սուր-սրի-սրեր-սրածայր, սուտ-ստի-ստեր-ստախոս, ջուր-ջրի-ջրեր-ջրառատ, շունչ-շնչի-շնչեր-շնչավոր, մուր-մրի-մրեր-մրոտ, ծունկ-ծնկի-ծնկեր-(ծնկներ)-ծնկաչոք, ծուխ-ծխի-ծխեր-ծխախոտ, խուց-խցի-խցեր-խցավոր, թումբ-թմբի-թմբեր-թմբապատ, թուք-թքի-թքեր-թքագեղձ և այլն։

Եթե այս կարգի բառարմատներից կազմվում են բայեր, ապա նրանցում հնչյունափոխությունը պարտադիր է, օրինակ՝ սրել, սրբել, փնջել, ջրել և այլն։

Մի խումբ բառեր, մեծ մասամբ ածականներ կամ արմատներ, ներկայումս հնչյունափոխվում են միայն բառակազմության մեջ։ Այսպես՝ լուր-լուրի-լուրեր-լրագիր, կուռք-կուռքի-կուռքեր-կռապաշտ, խութ-խութի-խութեր-խթահարել, զուրկ-զուրկի-զուրկեր-զրկանք, մուգ-մուգի-մուգեր-մգանալ, կուշտ-կուշտի-կուշտեր-կշտանալ, զուսպ-զուսպի-զուսպեր-զսպանակ, լուրջ-լուրջի-լուրջեր-լրջամիտ, թուխ-թուխի-թուխեր-թխահեր, թունդ-թունդի-թունդեր-թնդալի, ցունց-ցնցել, մուղ-մղել, մուտ-մտնել, հունչ-հնչել, ծուփ-ծփալ, թուխ-թխել, թուրծ-թրծել և այլն։

Մի խումբ բառեր, որոնք հաստատուն կերպով հնչյունափոխվում են միայն բառաբարդման և ածանցման ժամանակ, թեքման մեջ ունեն զուգահեռ ձևեր՝ հնչյունափոխությամբ և առանց հնչյունափոխության։ Այսպես՝ կուտ-կտի-կուտի-կտեր-կուտեր, սուգ-սգի-սուգի-սուգեր-սգավոր, շուրթ-շրթի-շուրթի-շրթեր-շուրթեր-շրթներկ, բուք-բքի-բուքի-բքեր-բուքեր-բքաշունչ, թուղ-թղի-թուղի-թղեր-թուղեր-թղենի, սունկ-սնկի-սունկի-սնկեր-սունկեր-սնկային, խուրձ-խրձի-խուրձի-խրձեր-խուրձեր, քուրձ-քրձի-քուրձի-քուրձեր-քրձազգեստ, ռումբ-ռմբի-ռումբի-ռումբեր-ռմբակոծել, դուքս-դքսի-դուքսի-դուքսեր-դքսական, ցուլ-ցլի-ցուլի-ցուլեր-ցլամարտ, հունձ-հնձի-հունձի-հունձեր-հնձել, քուրմ-քրմի-քուրմի-քուրմեր-քրմապետ, սուրճ-սրճի-սուրճի-սուրճեր-սրճարան, բուրդ-բրդի-բուրդի-բրդեր-բուրդեր-բրդաձև և այլն։ Այս խմբում հոլովման մեջ բերված

հնչյունափոխությամբ կազմված մի շարք զուգահեռ ձևեր, որոնք դեռևս գործածական էին մի քանի տասնամյակ առաջ, այժմ արդեն հնացած են և գործածությունից մեծ մասամբ դուրս են եկել և եթե հանդիպում են, ապա շատ հազվադեպ, ինչպես՝ ումբի, ցլի, fրմի, դfսի, կտի, սրճի, շրթի, խլի, բրգի, ճճգի *և այլն։*

Այժմ գրեթե չկան այս կարգի այնպիսի բառեր, որոնք հնչյունափոխվեն հաստատուն կերպով հոլովման և բառակազմության ժամանակ, իսկ հոգնակիում չհնչյունափոխվեն։ Կան սակավաթիվ բացառություններ, օրինակ՝ հուր-հրի-հուրեր-հրաշեկ։

Մի խումբ բառեր, որոնք հնչյունափոխվել են 5—6 տասնամյակ առաջ և՛ բառակազմության, և՛ թեքման ժամանակ, այժմ հաստատապես չեն հնչյունափոխվում։ Դեռևս 20-ական թվականներին ավելի շատ գործածական էին հետևյալ ձևերը՝ տուփ-տփի-տփիկ, թուջ-թջի-թջաձուլարան, մուրճ-մրճի-մրճիկ, ռուս-ռսի-ռսական, թուրք-թրքի-թրքական[12]*։*

Ու ձայնավորով միավանկ (փակ վանկ) ոչ մեծ թվով բառեր միայն չեն ենթարկվում հնչյունափոխության, օրինակ՝ ճուշ, ճուճ, fուճf, մուտf, տուrf, fուrf, fուսպ, փուfս *և այլն։*

Վերջին փակ վանկում շեշտակիր ու *ունեցող բազմավանկ բառերը միավանկների համեմատությամբ հանդես են բերում որոշ տարբերություններ։*

Բազմավանկ բառերում, ի տարբերություն միավանկերի, ու-*ն սղվելով վեր է ածվում* ը-*ի, կամ բոլորովին ընկնում է։ Այստեղ նշանակություն ունի հաճախ այն, թե սղման պատճառով քանի բաղաձայն և ի՛նչ բաղաձայններ են իրար հանդիպում*[13]*։*

Նշենք, որ բազմավանկ բառերի հոգնակին որպես կանոն այժմ կազմվում է առանց հնչյունափոխության, այդ պատճառով հոգնակին այստեղ չենք քննի։ Հասկանալի է, որ ի տարբերություն միավանկների, չկան բազմավանկ այնպիսի բառեր, որոնք հնչյունափոխվեն բոլոր ձևերում։ Փոքրաթիվ բառեր միայն փոփոխություն են կրում և՛ հոլովման, և՛ բառակազմության ժամանակ։ Այսպես՝ գլուխ-գլխի-գլուխներ-գլխավոր, ժողովուրդ-ժողովրդի-ժողովուրդներ-ժողովրդական, կերակուր-կերակրի-կերակուրներ-կերակրա-

---

12 *Այս ձևը, որ այժմ խիստ հազվադեպ է հանդիպում (որ.՝ ԳԹ, 13/2—1965), հնացած է և մերժելի։*

13 *Մենք* ու-ը, ու-*գրո փոփոխությունը առանձին չենք խմբավորում, քանի որ մեզ այստեղ ավելի շատ հետաքրքրում են ոչ թե հնչյունափոխության տեսակները, այլ նրանցում առաջացած տեղաշարժերը։*

տեսակ, պանդուխտ-պանդխտի-պանդուխտներ-պանդխտություն, պտուղ-պտղի-պտուղներ-պտղատու: Առավել հաստատորեն հոլովման ժամանակ հնչյունափոխվում են գլուխ և ժողովուրդ բառերը, մյուսները թեև հազվադեպ, բայց կարող են թեքվել նաև առանց հնչյունափոխության: Դա ավելի հաճախ նկատելի է բանավոր խոսքում: Ժողովուրդ բառը 20-ական թվականներին հոլովվում էր ավելի շատ առանց հնչյունափոխության, օրինակ՝ ժողովուրդի գլխին, ժողովուրդին (Նխ, 25/10, 29/11—1920): Նույն տեղում կա նաև ժողովրդի, ժողովրդից և այլն: Մինչև 40-ական թվականները այս երկվությունը շարունակվում է, հետո ավելի հաճախանում է հնչյունափոխված ձևի գործածությունը: Այնուհետև չհնչյունափոխվածը տեղի է տալիս հնչյունափոխված ձևերին և ներկայումս բացառապես ընդունելի է այս բառի հնչյունափոխված ձևը: Ժողովուրդ բառի հոգնակիի կազմության մեջ հակառակ երևույթը տեղի ունեցավ: 20-ական թվականներին և նրանից հետո զուգահեռաբար գործածվող ժողովրդներ ձևը այժմ միանգամայն անգործածական է: Կայունացել է ժողովուրդներ-ը: Մի ժամանակ հանդիպում էին նաև մի քանի այլ բառերի հնչյունափոխված հոգնակիներ, ինչպես՝ անտառների գլխներից (ՀԹ)[14], կերակրներ (ՊՊ), սերնդներ և այլն, որոնք այժմ վերացել են:

Բազմավանկ բառերում ամենամեծ խումբն են կազմում այն բառերը, որոնք բառակազմության մեջ հնչյունափոխվելով, հոլովման մեջ հանդես են բերում երկվություն: Դրանցից մի մասի համար ավելի գործածական են հնչյունափոխվածները, մյուսների համար՝ անհնչյունափոխ ձևերը: Այստեղ մենք դրանք բերում ենք միատեղ: Այսպես՝ կամուրջ-կամրջի-կամուրջի-կամրջակ, ածուխ-ածխի-ածուխի-ածխածին, անասուն-անասնի-անասունի-անասնակեր, ծնունդ-ծննդի-ծնունդի-ծննդաբերական, սնունդ-սննդի-սնունդի-սննդարար, խորհուրդ-խորհրդի-խորհուրդի-խորհրդային, կորուստ-կորստի-կորուստի-կորստաբեր, բազուկ-բազկի-բազուկի-բազկատարած, պտուկ-պտկի-պտուկի-պտկաձև, կտուց-կտցի-կտուցի-կտցահարել, կրունկ-կրնկի-կրունկի-կրնկակոխ, ծծումբ-ծծմբի-ծծումբի-ծծմբաթթու, չմուշկ-չմշկի-չմուշկի-չմշկել, մածուն-մածնի-մածունի-մածնաթան, երկուս-երկսի-երկուսի-երկվություն, սարուկ-սարկի-սարուկի-սարկական, թռչուն-թռչնի-թռչունի-թռչնային, տեսուչ-տեսչի-տեսուչի-տեսչություն, մամուռ-մամռի-մամու-

[14] Այս ձևը, որ բարբառի ազդեցության հետևանք է, Թումանյանի մոտ հանդիպում է հազվադեպ: Ընդհանրապես նա գործածում է գլուխներ ձևը:

ափ-մամռակալել, բլուր-բլրի-բլուրի-բլրակ, ձմերուկ-ձմերկի-ձմերուկի-ձմերկանման և այլն։

Այս կարգի մի շարք հնչյունափոխված ձևեր, որոնք ընդունելի էին մի քանի տասնամյակ առաջ, այժմ կամ բոլորովին գործածությունից դուրս են եկել, ինչպես՝ ձմերկի, ակմբի, անասնի, ստրկի, երկսի, հարստի, փամփշտի, տրտնջի, փրփրի, ճպռի, շամփրի, անրջի, ապխտի, աղմկի, մասրի, անդնդի, կարկտի, տեսչի, շշնջի, վարնգի, օգտի, ըմբկի, դդմի, *կամ հանդիպում են հազվադեպ, ինչպես, օրինակ՝* բոշնի, պտկի, կորստի, մածնի, ծննդի, բլրի, բազկի, կրնկի, կննի *և կամ զուգահեռ գործածություն ունեն, օրինակ՝* կամրջի *և* կամուրջի, խորհրդի *և* խորհուրդի *և այլն։*

Մի խումբ բառեր հնչյունափոխվում են միայն բառակազմության մեջ։ Այս խմբի մեջ են մտնում նաև բոլոր այն բառերը, որոնք գրաբարի ան *հոլովման փոխարեն այժմ* ի *հոլովման ենթարկվելիս չեն հնչյունափոխվում։ Այսպես՝ փղձուկ-փղձուկի-փղձկալ, մանուկ-մանուկի-մանկական, աշուն-աշունի-աշնանային, ցնցուղ-ցնցուղի-ցնցղաքորք, հիսուն-հիսունի-հիսնամյակ (նաև՝ հիսունամյակ), ապուշ-ապուշի-ապշահար, սարսուռ-սարսուռի-սարսռալ, խոստում-խոստումի-խոստմնալից (նաև՝ խոստումնալից), կողոպուտ-կողոպուտի-կողոպտել, հանդուգն-հանդուգնի-հանդգնել, իմաստուն-իմաստունի-իմաստնանալ և այլն։*

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ մի շարք գոյականներ, ինչպես՝ փշուր, մրմուռ, ճողոպուր, *որոնք բարբառային բառեր են (գրաբ. փշրան, մրմռումն, ճողոպրումն), առեղծվել են հնչյունափոխված բառերի համաբանությամբ։ Այսինքն՝ ոչ թե* փշուր-*ն է* ու-*ի սղումով դարձել է* փշրել, *այլ* փշրել-*ից նման բառերի համաբանությամբ առաջացել է* փշուրը *(հմմտ.՝ մաքուր-մաքրել)։ Այս երևույթը վերաբերում է և մյուս հնչյունափոխվող ձայնավորներին։*

Վերջին փակ վանկում շեշտակիր ու *ունեցող բազմաթիվ բառեր չեն ենթարկվում հնչյունափոխության։ Դրանք մեծ մասամբ ունեն* ուկ, ուն, ուստ, ուտ, ում, ունք, ուց(ք), ուռ *վերջավորությունները։ Թվարկենք դրանցից մի մասը, ինչպես՝* սպունգ, դահուկ, սողուն, անուկ, խանութ, տզրուկ, ավելուկ, հեղուկ, սիրուն, ցողուն, աղուն, խոհուն, ավյուն, լպրծուն, երիցուկ, կարմրուկ, կնդրուկ, անանուխ, ուռուցք, աղջամուղջ, մնացուկ, պարկուճ, պնդուկ, պախուրց, շշուկ, նմուշ, նկուղ, նեցուկ, մատուռ, մրուր, մանրուկ, ճամպրուկ, ար-

ղուկ, այրուտ, այտուց, ակունք, քլունգ, հաճելուկ, ելուստ, հագուստ, թզուկ, ծերուկ, աշուղ, անուշ *և այլն։*

Համեմատելով վերջին փակ վանկում շեշտակիր ու ունեցող բազմավանկ բառերի թեքման ժամանակ հանդես բերած հնչյունափոխությունը միավանկ բառերի հնչյունափոխության հետ, տեսնում ենք, որ բազմավանկները ունեն հնչյունափոխական մի շարք առանձնահատկություններ։ Այսպես, եթե միավանկ բառերը գերազանցապես ենթակա են հնչյունափոխության, ապա բազմավանկ բառերում ընդհակառակը, ավելի փոքր մասն է ենթարկվում հնչյունափոխության։ Եթե հնչյունափոխվող միավանկ բառերի մի մասը հաստատուն կերպով շարունակում է հնչյունափոխվել բոլոր թեքական և բառակազմական ձևերում, ապա բազմավանկները այդպիսի հետևողականություն հանդես չեն բերում։

Բազմավանկ բառերի հոլովումը հնչյունափոխության տեսակետից ներկայումս բնութագրվում է ակնհայտ երկվությամբ, զուգահեռ ձևերի առկայությամբ։ Այդ երկվությունը թեև հատուկ է նաև մի շարք միավանկ բառերի, բայց առաջին հերթին բնորոշ է բազմավանկներին։

Այս տարբերությունը նախ և առաջ պետք է բացատրել նրանով, որ բազմավանկ բառերը ընդհանուր առմամբ որպես կանոն ավելի քիչ են ենթակա հնչյունափոխության, քան միավանկները։ Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը։ Ասացինք, որ որպես կանոն բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է առանց հնչյունափոխության։ Դրա հետևանքը եղել է այն, որ եզակիում ևս, հոլովման ժամանակ հնչյունափոխված գրաբարատիպ ձևերի կողքին առաջացել են նաև չհնչյունափոխված տարբերակներ, որոնք շատ դեպքերում աստիճանաբար դուրս են մղել նախնական ձևերը։ Նույն երևույթը դիտվում է և միավանկ բառերում։ Այնտեղ, որտեղ հոգնակին կազմվում է առանց հնչյունափոխության, անպայմանորեն եզակիում հոլովման ժամանակ առկա են զուգահեռ ձևեր (օր.՝ բուրդ-բրդի-բուրդի-բուրդեր, դուքս,դքսի,դուքսի-դուքսեր)։ Մինչդեռ եթե միավանկ բառի հոգնակին հնչյունափոխված է, ապա հոլովաձևը հնչյունափոխվում է կայուն կերպով, առանց տարբերակի (օր.՝ սուր-սրի-սրեր, ջուր-ջրի-ջրեր, սուտ-ստի-ստեր և այլն)։

Մի շարք բազմավանկ բառերի հոլովումը, որ 20-րդ դարի սկզբներին գերազանցապես հնչյունափոխությամբ էր կազմվում, աստիճանաբար տեղի է տալիս անհնչյունափոխ ձևերին։

Կարող ենք բազմաթիվ օրինակներ բերել գրականությու-

նից և բառարաններից (օր.՝ Դաղբաշյան, Մալխասյանց), որոնցում սեռական հոլովը տրված է հնչյունափոխությամբ. օրինակ՝ մամռի, աղմկի. անրջի. ապխտի. ճպռի, տրտնջի, բռշնի, ստրկի, երկսի, սերնդի. տեսչի. բամբռի և այլն։

Բայց արդյոք այդ շրջանում միմիայն հնչյունափոխ ձևե՞րն էին գործածական։ Անշուշտ՝ ոչ։ Հայերենի այդ երկվությունը գալիս է դեռևս աշխարհաբարի կազմավորման ժամանակներից[15], որը մեր դասական գրողների մոտ ստանում է այլևայլ դրսևորումներ, այնուհետև որոշ կանոնավորման ենթարկվում, բայց դարձյալ երկվությունը շարունակվում է։ Մեր օրերում այդ երկվությունը առանձնապես ակնհայտ է, բայց այն տարբերությամբ, որ եթե դարիս սկզբներին հանձնարարելի էին հնչյունափոխված հոլովական ձևերը, ապա վերջին 5—6 տասնամյակների ընթացքում տարածվել և ընդհանրացել են ավելի շատ հնչյունափոխվածները, կամ մեկը և մյուսը զուգահեռաբար գործածվում են։ Մյուս կողմից՝ մեծ թվով բառերի (հատկապես բազմավանկ) հնչյունափոխված ձևերը գործածությունից դուրս են եկել (օր.՝ ստրկի, երկսի, անրդի, ակմբի, տրտնջի, աղմկի, մրճի, սրճի և այլն)։

Նկատի ունենանք նաև մի հանգամանք։ Շատ բառեր գրության ժամանակ թեև ավանդության ուժով շարունակվում են բերվել հընչյունափոխված ձևերով, բայց բանավոր խոսքում այդ տեղաշարժը շատ ավելի ակնհայտ է։

Բերենք զուգահեռ գործածության մի քանի օրինակ։ Այսպես, օրինակ, միևնույն օրը (25/4—1964), «Սովետական Հայաստանը» գրում է բռշնի միս, «Ավանգարդը»՝ բռշունի միս, բլուրի վրա (ՆԶՀ, 266) և բլրի վրա (ՍՀ, 23/1—1964), կամուրջի վրայով, կամուրջից և մոտենալ կամրջին (ՆԶՀ, 257, 240, 236), կտրտի և կտրուտի (ՀՔ, ՄՏՁ, 596)։ Հանդիպում են նաև խորհրդի և խորհուրդի. ծննդի և ծնունդի, սերնդի և սերունդի և այլն։ Միևնույն հեղինակը հաճախ մեկ գրում է այսպես, մեկ այնպես։

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ շեշտակիր ու ձայնավոր ունեցող բառերի հոլովման ժամանակ հանդես եկած հնչյունափոխության մեջ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում առաջացել են նկատելի տեղաշարժեր, որ պետք է բացատրել հայերենի զարգացման ներքին օրինաչափություններով։ Կարևորը, նորը և զարգացողը այն է, որ շեշտի տեղափոխության պատճառով

[15] Հնչյունափոխությամբ և առանց հնչյունափոխության մի շարք զուգահեռ ձևեր եղել են նաև գրաբարում, օրինակ՝ կամուրջ բառը գրաբարում սեռականում ուներ կամրջի և կամուրջի ձևերը։

հոլովման ժամանակ առաջացած հնչյունափոխությունների շրջանակը հայերենում գնալով ավելի է փոքրանում, գնալով ավելի շատ բառեր են դուրս գալիս այդ շրջանակից և միանում չհնչյունափոխվող բառերի խմբին։

Բառաբարդման և ածանցման մեջ հնչյունափոխական երևույթները, որպես կանոն, ավելի պահպանողական են և կայուն, քան թեքման ժամանակ, որոնց պատճառների մասին մենք արդեն խոսել ենք։ Թեև այդ այդպես է, բայց երբ քննում ենք հնչյունափոխությունը բառակազմության մեջ, տեսնում ենք, որ այստեղ ևս վերջին ժամանակներս որոշ տեղաշարժեր նկատվում են։

Նախ և առաջ հնչյունափոխությամբ կազմված մի շարք բարդ և ածանցավոր հնից եկող բառերի կողքին երևան են եկել նույն բառերի անհնչյունափոխ տարբերակները, որոնք փոխարինել են հին ձևերին։ Այսպես՝ վշաբուծություն, վուշաբուծություն, վշաթել-վուշաթել, թջաձուլարան-թուջաձուլարան, բրդանման-բուրդանման, բրդաձև-բուրդաձև, ռմբաձև-ռումբաձև, բթանկյուն(ի)-բութանկյուն(ի), աճրդային-աճուրդային, աճրդատեղի-աճուրդատեղի, ռսական-ռուսական, ռսաբանություն-ռուսաբանություն, ռսերեն-ռուսերեն, թրքական-թուրքական, թրքերեն-թուրքերեն, ակմբային-ակումբային, ակմբավար(ուհի)-ակումբավար(ուհի), խլրդաձև-խլուրդաձև, խլրդային-խլուրդային, թրթնջկաթթու-թրթնջուկաթթու, ցասմնալի-ցասումնալի, կռցավոր-կռուցավոր, կռցաձև-կռուցաձև, խոստմնալից-խոստումնալից, մատռաձև-մատուռաձև և այլն։ Մի շարք թվականներ և թվականներով կազմված բառեր կամ փոխարինվել են նոր՝ անհնչյունափոխ ձևերով կամ զուգահեռ ձևեր ունեն։ Օրինակ՝ հիսնամյակ-հիսունամյակ, հիսնական-հիսունական, քառասնամյակ-քառասունամյակ, քառասնամյա-քառասունամյա, երեսնամյա(կ)-երեսունամյա(կ), երեսնօրյա-երեսունօրյա, երեսնոց-երեսունոց[16] *և այլն։*

Նկատելի է, որ մի շարք վերջածանցների դեպքում հաճախ վերցվում է անհնչյունափոխ արմատը։ Օրինակ՝ ություն *վերջածանցով՝* խախտություն, ծածկություն, բաժնություն, ային *ածանցով՝* բմբուկային, խխունջային, եղունգային, սունկային, զմուռսային, բուրգային, անուրջային, խլուրդային *և այլն,* իկ *ածանցով՝* կուզիկ, տուփիկ (տփիկ *ձևը ՀՍԲ-ում, 1960 թ.՝ արհեստական է),*

---

16 *Մի քանի անհնչյունափոխ այս կարգի բառեր նշված են նաև Մալխասյանցի ՀԲԲ-ում, որոնք մեծ մասամբ կազմվում են* Նորոց *և* անոց *ածանցներով։*

ճուտիկ. մուկիկ. ծուտիկ, սուլիկ, թուշիկ (*նաև՝* թշիկ), եղունգիկ *և այլն։*

Շատ օրինակներ կան, երբ հնչյունափոխման ենթակա արմատը նոր կազմություններում անհնչյունափոխ ձևով է։ Այսպես, օրինակ, փուշ *բառը հնում բառակազմության մեջ հանդես է գալիս միայն հնչյունափոխությամբ, ինչպես՝* փշաձև. փշարել *և այլն, ներկայումս* փուշ-*ով կազմված բոլոր բառերը վերցվում են առանց հնչյունափոխության, օրինակ՝* փուշազգի. փուշատերև. փուշարել *և այլն։ Նույնը վերաբերում է և* անուրդ *բառին, որից հնում կա* անրդատեղի. *այժմ՝* անուրդատուն. սնկաբարային-*ի կողքին այժմ՝* սունկավոր. սունկանման. սունկային. խխնջաձև. *այժմ՝* խխունջազեն. խխունջային. թմբկահար, *այժմ՝* թմբուկավոր. թմբուկային. եղնգավոր. *այժմ՝* եղունգային. եղունգանման. կարկտաբեր. *այժմ՝* կարկտախառն[17]. զմռսել. *այժմ՝* զմուռսային *և այլն։ Նշենք նաև, որ որոշ բառեր կամ արմատներ բառակազմության ժամանակ հնում էլ հնչյունափոխության տեսակետից կայուն չեն եղել և հանդես են բերել երկվություն։ Ինչպես, օրինակ,* շուրջ *բառից ունենք* շրջադարձ. շրջանցել[18]. շրջապատ. շրջափակել *և միաժամանակ՝* շուրջերկրյա. շուրջկալ. շուրջպար. շուրջընթաց *և այլն, կամ՝* թխազգեստ, թխամարմին *և* թուխամանուկ, թուխամազ *և այլն։*

Պետք է նշել նաև, որ մի շարք բառեր, որ գրաբարում չեն հնչյունափոխվել, հետագայում համաբանությամբ ենթարկվել են հնչյունափոխության։ Օրինակ՝ ձմեռուկ *բառը գրաբարում չի հնչյունափոխվել, մինչդեռ 20-րդ դարի սկզբներին հանդիպում է հնչյունափոխված ձևով՝* ձմերկաձև *(ՆԴՄ, էջ 43)։* Թուջ, մանուղ *բառերից, որ գրաբարից չեն ժառանգված, կազմվել են* թջաձուլարան, մանղագործարան *(Շ, ԵԼԺ, 2, 202) և նման բառեր։ Սակայն պետք է ասել, որ այս կարգի կազմությունները արհեստական լինելով, շատ շուտ տեղի տվեցին անհնչյունափոխ ձևերին։*

Հիմա էլ երբեմն կազմում են հնչյունափոխությամբ խիստ արհեստական բառեր, ինչպես, օրինակ՝ մագրանորից *(փոխանակ՝* մագուրանորից, *«Ոզնի», 1964, № 21, էջ 3),* թակճաբար *և այլն։*

Երբեմն նոր կազմությունների համար պատճառ է դառնում անհարմարությունը։ Օրինակ, թուրք *և* թրիք *բառերից հնչյունափո-*

---

17 *Դ. Դեմիրճյանի մոտ հանդիպում է* «կարկտեցին *նժույգները» արտահայտությունը։*

18 *Հանդիպում է նաև* շուրջանցել *ձևը (Մ. Արմեն, «Պատվիրեցին հանձնել ձեզ»)։*

խուլթյամբ կազմվել էին թրքաթաղ (թուրքի թաղ), թրքաժողով (թրիք ժողովող) բառերը, որ կարելի էր երկու իմաստով էլ հասկանալ և թրքանալ բառը, որ նույնպես նշանակում էր և՛ թուրք, և՛ թրիք դառնալ (Մլխս., ՀԲԲ): Այսպիսի զուգադիպումները ստեղծում էին որոշ անհարմարություն և իմաստների շփոթում: Այդ պատճառով թուրք բառը մի քանի տասնամյակ է ինչ սկսել է գործածվել առանց հնչյունափոխության, ինչպես՝ թուրքերեն, թուրքական, թուրքախոս և այլն (բացառությամբ թրքուհի բառի):

Շեշտակիր ու ձայնավորով սկսվող միավանկ բառերը թեքման կամ բառակազմության ժամանակ, երբ շեշտը տեղափոխվում է վերջին վանկի վրա, հնչյունափոխության չեն ենթարկվում, օրինակ՝ ուխտ-ուխտի-ուխտագնաց, ուժ-ուժի-ուժաչափ և այլն, բացառությամբ մի քանի բառակազմական ձևերի, որտեղ ու-ն փոխվում է ը-ի: Դրանք են՝ ունչ-ընչացք, ումպ-ըմպել-ըմպանակ, ունդ (հունդ)-ընդեղեն-ընդակեր: Գրականության մեջ հանդիպում են ուխտ բառից՝ ըխտավոր, ըխտավորներ (ՊՊ), որոնք բարբառային են:

Միավանկ բառերում վերջին ու-ն փոխվում է վ-ի և՛ թեքման, և՛ բառակազմության ժամանակ: Վերջին տարբերս նկատելի են և որոշ շեղումներ: Օրինակ՝ ձու-ձվի-ձվեր-ձվածեղ, լու-լվի-լվեր-լվախոտ, բայց՝ բու-բվի-բուի-բվեր-բուեր-բվիճակ, չու-չվի-չուի-չվեր-չուեր-չվացուցակ (հմմտ. նաև՝ օդաչուական, օդաչուություն):

Երկվանկ բառերում վերջին շեշտակրույս ու-ն փոխվում է վ-ի հոլովման և բառակազմության ժամանակ, իսկ հոգնակիում պահպանվում է անհնչյունափոխ արմատը: Օրինակ՝ կատու-կատվի-կատուներ-կատվային, թթու-թթվի-թթուներ-թթվություն, լեզու-լեզվի-լեզուներ-լեզվաբան, առու-առվի-առուներ-առվակ, ձիձու-ճիճվի-ճիճուներ-ճիճվային, կծու-կծվի,կծուներ-կծվություն, մեղու-մեղվի-մեղուներ-մեղվաբույծ, Զանգու-Զանգվի[19]:

Մի քանի բառ հնչյունափոխվում է միայն բառակազմության մեջ: Օրինակ՝ սրու-սրուի-սրուներ-սրվական, արու-արուի-արուներ-արվագետ: Գնչու բառը ընդհանրապես չի հնչյունափոխվում:

Երկուսից ավելի վանկանի ու-ով վերջացող բարդ և ածանցավոր բառերում ու-ն մեծ մասամբ այժմ պահպանվում է և՛ թեքման, և՛ բարդ, և՛ ածանցավոր ձևերում, եթե այդպիսիք կան: Օրինակ՝

---

19 Որպես հանդեսի անուն «Մեղու» և «Զանգու» բառերը թեքվելիս հաճախ չեն հնչյունափոխվում, օր.՝ «Մեղուի», «Մեղուից», «Զանգուի» և այլն:

օդաչու-օդաչուի-օդաչուական, ժողովածու-ժողովածուի, վաշխառու-վաշխառուի-վաշխառուական, հարսնացու-հարսնացուի, տեղեկատու-տեղեկատուի, հոգաբարձու-հոգաբարձուի, կապալառու-կապալառուի: Եղջերու *բառը միայն բառակազմության մեջ հանդես է գալիս* ու–վ *հնչյունափոխությամբ՝ եղջերու-եղջերուի-եղջերվաքաղ և այլն:*

Հին ուղղագրությամբ (մինչև 1922 թվականը) ու-ն *թեև ձայնավորներից առաջ արտասանվում էր* վ, *բայց գրվում էր* ու. *օրինակ՝ տուակ, երկուորեակ, կամ եղջերուաքաղ, բուէճ և այլն: Նույնը և սեռական հոլովում՝* բուի. լեզուի. կատուի. եղջերուի *և այլն: Նոր ուղղագրությամբ ինչպես բառամիջում, այնպես էլ սեռական հոլովում* ու-ի *փոխարեն սկսեց գրվել ամենուրեք* վ. *և՛ միավանկ, և՛ բազմավանկ բառերում, օրինակ՝* ձվի. կատվի. սերմացվի *(ԽՀ, 7/9—1922),* վերարկվի. հոգաբարձվի *(Ն—ԴՄ, 202, 84),* վաշխառվի. հարսնացվի. հոգաբարձվի *(Շ, 3, 131, 96, 114, 13)* ժողովածվի *(ՀՍԽՀ, ՀԳՍ, 1927),* եղջերվի. եղջերվով *(Րաֆ., ՀԹ), ինչպես և* Զարմանցվի. Կամարցվի. Սամանցվի. Ծանապվի *և այլն (ԽՀ, 1920)*[20]*: Ներկայումս* ու–վ *հնչյունափոխությունը պահպանվել է միայն միավանկ և երկվանկ բառերում, բազմավանկներում վերացել է:*

Մինչև 40-ական թվականները մեծ մասամբ ընդունված էին բազմավանկ բառերի հոլովական վի-*ով ձևերը, թեև հաճախ էլ հանդիպում են նաև առանց հնչյունափոխության (Օրինակ՝* ժողովածուի, *ԽՀ, 1936, № 2—5, էջ 45): Նշանակում է բազմավանկ բառերում (երկուսից ավելի վանկ ունեցող)* վ *արտասանությունը այդ շրջանում հաստատուն չէր և տատանվում էր* ու-ի *և* վ-ի *միջև:*

Այստեղ ևս չհնչյունափոխվելու ընդհանուր միտումը և բազմավանկ բառերի չհնչյունափոխվելու մասնավոր հակումը պատճառ դարձան, որ բազմավանկ բառերի հոլովական ձևերում վերջին ու-ն *փոփոխության չենթարկվի: Այդ փոփոխությունը այժմ արտահայտվում է և ուղղագրության մեջ:*

Մինչև վերջին մի քանի տարիները, ճիշտ է, հազվադեպ, բայց դեռևս կարելի էր հանդիպել ու–վ *հնչյունափոխության դեպքերի բազմավանկ բառերում: 1957 թվականին հրատարակված «Հայոց*

---

20 *Մի շարք օտար բառերի վերջում* ու-ն *մնում էր անփոփոխ, ինչպես՝* Ուրարտուի. կենգուրուի. Տաբուի *և այլն*

լեզվի քերականություն, ուղղագրություն և կետադրություն ուղե-ցույցում» և 1959 թ. «Դպրոցական ուղղագրական բառարանում» ու-ով վերջացող բազմավանկ շատ բառերի համար բերված են սեռական հոլովի կրկնակի ձևեր՝ ծաղրածուի-ծաղրածվի, պտղատուի-պտղատվի, թեկնածուի-թեկնածվի, օդաչուի-օդաչվի և այլն: Ներկայումս կարելի է հաստատապես ասել, որ վի-ով ձևերը արդեն իրոք հնացած են և այլևս ընդունելի չեն: Այժմ գրում և արտասանում ենք բացառապես պտղատուի, ժողովածուի, տեղեկատուի, օդաչուի, սերմացուի, հավարածուի, հարսնացուի, համապատասխանաբար՝ և մյուս հոլովները:

Նույնիսկ միավանկ բառերում, որ այդքան կայուն են, դարձյալ արդեն սկսել են որոշ տեղաշարժեր նկատվել: Օրինակ՝ չվի (ՎԱ, ՍԱ, էջ 57), բայց՝ չուից (ԳԹ, 13/11—1964, էջ 3), լսվեց բուի կռինչը (բեմական խոսքից):

Այսպիսով, բառավերջի շեշտակրույս ու-ի հնչյունափոխության մեջ թեքման ժամանակ այժմ հետևյալ վիճակը գոյություն ունի:

Միավանկները, որ թվով քիչ են, մասամբ կայուն կերպով հըն-չյունափոխվում են (ձու-ձվի), մասամբ հանդես են բերում տատանումներ (չու-չվի-չուի): Երկվանկ բառերը գերազանցապես հնչյունափոխվում են, բացառությամբ հոգնակի ձևերի: Բազմավանկները ներկայումս գերազանցապես չեն հնչյունափոխվում:

Ու-ով վերջացող բառերի բարդման կամ ածանցման ժամանակ դիտվում են հնչյունափոխական մի շարք երևույթներ: Այսպես՝ բազմավանկ բարդ բառերում -ություն վերջածանցից առաջ ու-ն սովորաբար ընկնում է: Օրինակ՝ ակնառու-ակնառություն, աչառու-աչառություն, խնդրառու-խնդրառություն, զանցառու-զանցառություն, խուզարկու-խուզարկություն, ահարկու-ահարկություն, ձեռնահասու-ձեռնահասություն, կապալառու-կապալառություն և այլն:

Ներկայումս նոր կազմվող բառերում դիտվում է վերջին ու-ն պահպանելու միտումը, օր.՝ օդաչու-օդաչուություն-օդաչուական:

Պարզ բառերը -ություն ածանցը ստանալով, վերջին ու-ն գը-ցում են, օրինակ՝ հլություն, լռություն (բայց՝ շինծուություն), կամ ու-ն փոխվում է վ-ի, օրինակ՝ կծվություն, բրվություն:

-Տու բաղադրիչով վերջացող բարդ բառերում վերջին ու-ն փոխվում է վ-ի: Օրինակ՝ կաթնատու-կաթնատվություն, փոխատու-փոխատվություն, հարկատու-հարկատվություն, լուսատու-լուսատվություն, պտղատու-պտղատվություն: -Անալ ածանցից առաջ ու-ն սո-

վորաբար պահպանվում է, ինչպես՝ հյու-հյուանոց, բարթու-ջարթուանոց, թթու-թթուանոց, կծու-կծուանոց և այլն: –Ական ածանցից առաջ ու-ն մի շարք դեպքերում ընկնում է, օրինակ՝ Ուրարտու-ուրարտական, ողբերգու-ողբերգական, արու-արական, նոր բառերում ու-ն պահպանվում է, օրինակ՝ օդաչու-օդաչուական:

գ) Ի ձայնավորի հնչյունափոխություն

Շեշտակիր ի ձայնավորը փակ վանկով վերջացող շատ բառերում շեշտի տեղափոխության պատճառով ենթարկվում է հնչյունափոխության: Միավանկ բառերում ի-ն փոխվում է ը-ի, օրինակ՝ սիրտ-սրտի-սրտեր-սրտաբուխ: Շատ բազմավանկ բառերում ի-ն մեծ մասամբ բոլորովին սղվում է, օրինակ՝ պանիր-պանրի-պանրագործարան, կամ մի շարք դեպքերում փոխվում է չգրվող ը-ի, օրինակ՝ երաժիշտ-երաժշտի-երաժշտական: Այս կանոնը վերաբերում է նաև բարդ կամ ածանցավոր բառերին, որոնց վերջին բաղադրիչը ի-ով (փակ վանկ) վերջացող բառ կամ արմատ է, օր.՝ դավադիր-դավադրություն, նախաճաշիկ-նախաճաշկի, ուղղամիտ-ուղղամտություն, արիասիրտ-արիասրտություն:

Գրաբարի այս համապարփակ օրենքը աշխարհաբարում մասնակի բնույթ ստացավ. աշխարհաբարին հատուկ մի շարք նոր երևույթների պատճառով բազմաթիվ բառեր դադարեցին հնչյունափոխվելուց (հիմնականում՝ բազմավանկ), հատկապես թեքման ժամանակ:

Սկսենք միավանկ բառերից:

Մի խումբ միավանկ բառեր հնչյունափոխվում են բոլոր ձևերում՝ և՛ թեքման, և՛ բառակազմության ժամանակ: Այսպես՝ գիծ-գծի-գծեր-գծավոր, սիրտ-սրտի-սրտեր-սրտառուչ, միրգ-մրգի-մրգեր-մրգաստան, լիճ-լճի-լճեր-լճակ, գիր-գրի-գրեր-գրավոր, բիծ-բծի-բծեր-բծավոր, բիզ-բզի-բզեր-բզել, թիվ-թվի-թվեր-թվական, լինդ-լնդի-լնդեր-լնդախտ, խիճ-խճի-խճեր-խճաքար, շիշ-շշի-շշեր-շշագործ, միս-մսի-մսեր-մսացու, կիր-կրի-կրեր-կրախառն, չիթ-չթի-չթեր-չթավոր, միտք-մտքի-մտքեր-մտավոր և այլն:

Միավանկ ածականները գոյականաբար կիրառվելիս (որ շատ հազվադեպ է պատահում) թեքման ժամանակ սովորաբար չեն հնչյունափոխվում, ինչպես՝ պիղծ-պիղծի-պիղծեր-պղծել, ձիգ-ձիգի-ձիգեր-ձգել, խիստ-խիստի-խիստեր-խստաշունչ, խիտ-խիտի-խի-

ռեր-ֆռանալ, ժիր-ժրի-ժրեր-ժրաջան, բիրտ-բրտի-բրտեր-բրտանալ (նաև՝ բիրտանալ) և այլն:

Մի խումբ բառերի թերումը, որ 5—6 տասնամյակ առաջ գրականության մեջ և բառարաններում (օր.՝ Դաղբ., ԼՀԲ, 1911) ներկայացված էր հնչյունափոխությամբ, այժմ կատարվում է առանց հնչյունափոխության: Այս խմբի բառերից քչերը ունեն բառակազմական ձևեր և, ընդհանրապես, դրանց մեծ մասը կենդանի լեզվում քիչ գործածական, գրքային բառեր են: Այսպես՝ կիրճ-կիրճի-կիրճեր, նիզ-նիզի-նիզեր, նիշ-նիշի-նիշեր-նշել, շիթ-շիթի-շիթեր, վիթ-վիթի-վիթեր, վիհ-վիհի-վիհեր, զիստ-զիստի-զիստեր-զստոսկր, խինդ-խինդի-խինդեր-խնդալի, ճիչ-ճիչի ճիչեր-ճչալ, ճիմ-ճիմի-ճիմեր, ցին-ցինի-ցիներ, ցիռ-ցիռի-ցիռեր, քիստ-քիստի-քիստեր, քիվ-քիվի-քիվեր: Սրանցով կազմված նորատեսք բառերում վերցվում է անհնչյունափոխ արմատը, օրինակ՝ կիրճային, քիստավոր, զիստավոր, շիվավոր, քիվապատ, քիվարար և այլն: Ի-ով միավանկ բառերից միայն 1—2-ը ունեն զուգահեռ ձևեր, այն էլ ներկայումս ավելի շատ գործածական են անհնչյունափոխ ձևերը, ինչպես՝ տիզմ-տղմի-տիզմի, հինգ-հնգի-հինգի-հինգով (ՋԴՔ, 170):

Ք-ով վերջացող միավանկ բառերը մեծ մասամբ չեն հնչյունափոխվում, ինչպես՝ ռիմք. դիրք. լիցք. հիմք. ձիրք (բայց, օրինակ, հմմտ. գիրք-գրքի, միտք-մտքի):

Մի խումբ բազմավանկ բառեր, որոնք վերջին փակ վանկում ունեն շեշտակիր ի, հոլովման և բառակազմության ժամանակ հատուկ կերպով արմատական հնչյունը սղում են: Այս կարգի բառերի հոգնակին որպես կանոն գրական լեզվում առանց հնչյունափոխության է կազմվում (բացառությամբ երկիր բառի): Այսպես՝ վճիռ-վճռի-վճռական, պատիվ-պատվի-պատվելի, պղինձ-պղնձի-պղնձաձույլ, ճահիճ-ճահճի-ճահճոտ, պատիժ-պատժի-պատժել, կշիռ-կշռի-կշռաչափ, կռիվ-կռվի-կռվարար, հաշիվ-հաշվի-հաշվապահ. մարմին-մարմնի-մարմնական, լուսին-լուսնի-լուսնային, սկիզբ-սկզբի-սկզբնական, բժիշկ-բժշկի-բժշկական, մահիճ-մահճի-մահճակալ և այլն:

Միայն մեկ բառ ներկայումս հոգնակին կազմում է սղումով՝ երկիր-երկրի-երկրներ-երկրաբան: 20-ական թվականներին և դրանցից առաջ կարելի է հանդիպել նաև երկիրներ ձևը (օրինակ՝ ՂԱԵ, 4, 421, Մարտ, № 60, 1924 Դաղբ. ՍԱԲ):

Մեծ թվով ի շեշտակիր ձայնավորով վերջացող (փակ վանկ) բառերի հոլովումը ներկայումս բնորոշվում է երկվությամբ՝ զու-

գաձև ձևերի առկայությամբ՝ սղումով և առանց սղման։ Այսպես՝ կոշիկ-կոշկի-կոշիկի-կոշկակար, ծաղիկ-ծաղկի-ծաղիկի-ծաղկավոր, ըմբիշ-ըմբշի-ըմբիշի-ըմբշամարտ, կապիկ-կապկի-կապիկի-կապկանման, շիրիմ-շիրմի-շիրիմի-շիրմաքար, ոճիր-ոճրի-ոճիրի-ոճրագործ, բջիջ-բջջի-բջիջի-բջջանյութ, պանիր-պանրի-պանիրի-պանրագործ, փոթորիկ-փոթորկի-փոթորիկի-փոթորկալի, կսկիծ-կսկծի-կսկիծի-կսկծալի, շապիկ-շապկի-շապիկի-շապկանման, թախիծ-թախծի-թախիծի-թախծալի, որոշիչ-որոշչի-որոշիչի-որոշչային (նաև՝ որոշիչային), հատկացուցիչ-հատկացուցչի-հատկացուցիչի-հատկացուցչային (նաև՝ հատկացուցիչային), բացահայտիչ-բացահայտչի-բացահայտիչի- կավիճ-կավճի-կավիճի-կավճոտ, երջանիկ-երջանկի-երջանիկի-երջանկավետ, գռեհիկ-գռեհկի-գռեհիկի-գռեհկանալ, կացին-կացնի-կացինի-կացնակոթ, երգիչ-երգչի-երգիչի-երգչախումբ, բնակիչ-բնակչի-բնակիչի-բնակչություն, գիշատիչ-գիշատչի-գիշատիչի, արճիճ-արճճի-արճիճի-արճճագույն, թավիշ-թավշի-թավիշի-թավշանման, գեղեցիկ[21]-գեղեցկի-գեղեցիկի-գեղեցկություն, մարգարիտ-մարգարտի-մարգարիտի-մարգարտաշար, շառավիղ-շառավղի-շառավիղի-շառավղային, Մասիս-Մասսի-Մասիսի և այլն։

Ինչպես տեսնում ենք, այս խումբը նախորդի համեմատությամբ շատ ավելի մեծ է, և գնալով այս կարգի բառերի թիվը մեծանում է ի հաշիվ նախորդի։

Նկատի առնենք նաև այն, որ մենք հարցի քննության համար հիմնականում հաշվի ենք առել գրավոր խոսքը և ոչ բանավորը, մինչդեռ լեզվական, մասնավորապես հնչյունական փոփոխությունները առհասարակ սկիզբ են առնում բանավոր խոսքում և հետո միայն արտացոլվում գրության մեջ։ Այդ հանգամանքը հաշվի առնելով, իրականում այս խումբը շատ ավելի մեծանում է։

Մենք կարող ենք կրկնակի ձևերի գործածության բազմաթիվ աղբյուրներ նշել, սակայն կարծում ենք, որ դրա անհրաժեշտությունը առանձնապես չի զգացվում, քանի որ այդ երևույթը խիստ ակնհայտ է և հատուկ հաստատման կարիք չունի։ Առանձին դեպքերում ոմանք կարող են գերապատվություն տալ այս կամ այն ձևին, հնչյունափոխվածին կամ չհնչյունափոխվածին, բայց փաստը մնում է փաստ, որ հնչյունափոխված ձևերը գնալով զիջում են անհնչյունափոխ ձևերին։ Այս բանը ավելի ակնառու է կենդանի,

---

21 Գեղեցիկ, Մարգարիտ բառերը որպես հատուկ անուն հոլովվելիս՝ չեն հնչյունափոխվում։

խոսակցական լեզվում: Գրելիս գրողը թերևս մտածում է գրի նախդրի, թե՞ նախդիրի, ծաղկի, թե՞ ծաղիկի, կաղկի, թե՞ կաղիկի, հովտի, թե՞ հովիտի: Եվ մտածելով, հաճախ գերապատվությունը տալիս է ավանդական ձևերին, բայց և միաժամանակ չկարողանալով հաղթահարել նորը, գրում է հաճախ մեկ այսպես, մեկ այնպես, մինչդեռ խոսելիս մեծ մասամբ գործածում է անհնչյունափոխ ձևերը:

Մի խումբ բազմավանկ բառեր, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդի սկզբներին հոլովման ժամանակ գերազանցապես հնչյունափոխվում էին, ներկայումս չեն հնչյունափոխվում, կամ եթե հնչյունափոխվում են, ապա խիստ բացառիկ դեպքերում: Բառակազմության մեջ ևս մի շարք դեպքերում առաջացել են նաև նոր անհնչյունափոխ ձևեր: Այսպես՝ կորիճ-կորճի-կորիճի, թրթիռ-թրթռի-թրթիռի-թրթռալ, շավիղ-շավղի-շավիղի, դահլիճ-դահլճի-դահլիճի, տավիղ-տավղի-տավիղի-տավղահար (և տավիղահար), ժպիտ-ժպտի-ժպիտի-ժպտադեմ, անիվ-անվի-անիվի-անվադարձ, կոճիկ-կոճկի-կոճիկային, կծիկ-կծկի-կծիկի-կծկել, կնճիթ-կնճթի-կնճիթի-կնճիթավոր, կնճիռ-կնճռի-կնճիռի-կնճռոտ, բրբիջ-բրբջի-բրբիջի-բրբջալ, կարիճ-կարճի-կարիճի, սրինգ-սրնգի-սրինգի-սրնգահար, ռամիկ-ռամկի-ռամիկի-ռամկական, մրրիկ-մրրկի-մրրիկի-մրրկաշունչ, ուղիղ-ուղղի-ուղիղի-ուղղամիտ, պարսիկ-պարսկի-պարսիկի-Պարսկաստան, քրտինք-քրտնքի-քրտինքի-քրտնաթոր:

-իչ վերջածանցով 2 և ավելի վանկից կազմված մի խումբ բառեր նույնպես այժմ հոլովման ժամանակ գերազանցապես չեն հնչյունափոխվում, օրինակ՝ մանիչ-մանչի-մանիչի, վարիչ-վարչի-վարիչի, փորձիչ-փորձչի-փորձիչի, զրպարտիչ-զրպարտչի-զրպարտիչի, սրբագրիչ-սրբագրչի-սրբագրիչի, գործիչ-գործչի-գործիչի, կարիչ-կարչի, բրիչ-բրչի-բրիչի: Դարիս սկզբներին հանդիպում են. օրինակ՝ **մանչի, հայհոյչի, փորձչի** *(ՄԳՄ),* **սրբագրչի, գործչի** *(Ն—Դ):*

-իչ վերջածանցով մի շարք բառեր հոլովման ժամանակ ունեն կրկնակի ձևեր:

-իչ վերջածանցով կազմված նորաստեղծ բառերը հոլովման ժամանակ սովորաբար չեն հնչյունափոխվում, օրինակ՝ **ամբարձիչ, հաշվիչ, ընդունիչ, մարզիչ**[22]**, զտիչ, սրիչ, ոռոգիչ, համարիչ, հրահանգիչ, եզրափակիչ** *և այլն:*

---

22 *Հանդիպում է* **մարզչի** *ձևը* (**Վ. Սարոյան.** *Մարդկային կատակերգություն, էջ 73), որը հանձնարարելի չէ:*

Ավանդաբար մեզ հասած մի շարք -իչ վերջածանցով բառեր կայուն կերպով հնչյունափոխվում են, ինչպես՝ գրիչ-գրչի, ուսուցիչ-ուսուցչի, լուսավորիչ-լուսավորչի, արարիչ-արարչի և այլն։

Երբեմն, վերջերս լույս տեսած բառարաններում կամ ձեռնարկներում սեռական հոլովի համար նշվում են այնպիսի ձևեր, որոնցում հնչյունափոխությունը կամ վաղուց հնացած է, կամ արհեստական, օրինակ՝ ձպտի. կարճի[23], ածլի. բռչի. ճրրդի. ամբարձչի. բրրդի *և այլն։ Այդպիսի ձևերը մեր կարծիքով այժմ ընդունելի չեն·*

-Ային *վերջածանցով կազմված ածականները որպես գոյական հոլովվելիս* ի-ն *պահում են, բառակազմության ժամանակ՝ ոչ։ Այսպես՝ երգայինն-երգայինի-երգայնություն, անայինն-անայինի-անայնական, շրթնայինն-շրթնայինի-շրթնայնանալ, սեզոնայինն-սեզոնայինի-սեզոնայնություն, հանրայինն-հանրայինի-հանրայնական և այլն։*

Նույնը վերաբերում է և -ին, -զին *վերջացող բառերին՝ արտաքին-արտաքինի-արտաքնապես, միասին-միասնական, պայմանգին-պայմանգնորեն, ցավագին-ցավագնաբար, կաթոգին-կաթոգնաբար և այլն։*

Փակ վանկում շեշտակիր -ի *ձայնավորով վերջացող մի շարք ածականներ և մակբայներ հնչյունափոխվում են միայն բառակազմության մեջ։ Օրինակ՝ թովիչ-թովչանք, ադնիվ-ազնվազույն, վերջին-վերջնական, կոպիտ-կոպտել, գեղին-գեղնել, կարմիր-կարմրել, հազիվ-հազվագյուտ, կրկին-կրկնել և այլն։*

Մի խումբ բազմավանկ բառերի վերջին բաղադրիչը եթե ունի գոյականի իմաստ, հնչյունափոխվում է հոլովման ժամանակ, ինչպես՝ շրջանագիծ-շրջանագծի, հեռագիր-հեռագրի, սակագին-սակագնի, լրագիր-լրագրի[24]։ Եթե երկրորդ բաղադրիչը չի պահպանում իր հիմնական իմաստը, այլ հանդես է գալիս ածանցային նշանակությամբ, ապա սովորաբար չի հնչյունափոխվում, ինչպես՝ հրձիգ-հրձիգի, հրթիռ-հրթիռի, ջրկիր-ջրկիրի, ինքնաթիռ-ինքնաթիռի և այլն։ Բայց պետք է ասել, որ կան նաև շատ բացառություններ, օրինակ՝ խմբագիր-խմբագրի, պատմագիր-պատմագրի, նորածին-նորածնի և այլն։

Այս կարգի բառերի հոգնակին կազմվում է հետևյալ ձևով։

---

23 Կարիճ *բառի սեռական հոլովը, որը համընկնում է* կարճ *բառի սեռականի հետ. վաղուց ի վեր դադարել է այդ ձևով գործածվելուց և ունի* կարիճի *ձևը։*

24 *Եթե այդպիսին հատուկ անուն է, ապա չի հնչյունափոխվում, օրինակ՝* Կապուտջիղ-Կապուտջիղի։

Եթե վերջին միավանկ բաղադրիչը ունի գոյականի իմաստ, ապա հոգնակիի կազմության ժամանակ սովորաբար հնչյունափոխվում է (ինչպես միավանկ բառերի հոգնակին), եթե՝ ոչ, ապա չի հնչյունափոխվում. օրինակ՝ ծրագիր-ծրագրեր, հեռագիր-հեռագրեր, երկաթուղագիծ-երկաթուղագծեր, նախագիծ-նախագծեր, լրագիր-լրագրեր, բայց՝ խմբագիր-խմբագիրներ, նորածին-նորածիններ, դրոշակակիր-դրոշակակիրներ և այլն:

Պետք է ասել, որ այս հարցում 20-ական թվականներին և դրանից էլ առաջ տիրում էր մեծ խառնաշփոթ: Այդ մասին Ղ. Աղայանը հայտնում է իր դժգոհությունը, ասելով, որ «գրում են երեք ձևով՝ լրագրեր, լրագիրներ և լրագրներ», միաժամանակ նշելով, որ իր կարծիքով ճիշտ է առաջինը:

Բերենք մի քանի օրինակ: Այսպես՝ բազեակրներ, զինակրներ *(Րաֆ., 3, 69, 171),* ծրագրներ *և* ծրագիրներ *(ՄԳՄ, 96, 361, 385;* ծրագիրներ, ձեռագիրներ *(ՄԱր., 1921, Մարտ., 23/9—1926),* ծրա-գրներ *(«Նոր խոսք», 25/10—1920, ԽՀ, 9/4—1922),* պատմագրներ, լրագիրներ *(Շ, ԵԼԺ, 2, 13, 304),* լրագիրներ, ձեռագիրներ *(Տեղ., ՀՍԽՀ, ԳՀԱ, 1927) և այլն:*

Այս հարցը բավականաչափ կանոնավորվել է վերջին մի քանի տասնամյակի ընթացքում, թեև դարձյալ առանձին դեպքերում շեղումներ հանդիպում են, օրինակ՝ լրագիրներ *(ԳԹ, 30/4—1965) և նույն տեղում նաև՝* լրագրներ:

Փակ վանկում ի *շեշտակիր ձայնավորով վերջացող բազմաթիվ բառեր հնչյունափոխության չեն ենթարկվում: Այսպես, օրինակ՝* իկ *և* իք *վերջավորությամբ բառերը մեծ մասամբ չեն հնչյունափոխվում, ինչպես՝* հատիկ, կուզիկ, յուրիկ, թոռնիկ, եզնիկ, թաթիկ, դրն-ջիկ, գլխիկ, բադիկ, բարձիկ, մոտիկ, եղնիկ, բշտիկ, վարտիք, հա-միկ, զամբիկ, տիկնիկ, ֆարնիկ, թռուցիկ, մունետիկ, գերազանցիկ, երշիկ, ալիք, տարիք, աղիք, բազրիք, տանիք, կարիք, հաստիք, անելիք, արգասիք, ընթրիք, գաղտնիք *և այլն:*

Չեն հնչյունափոխվում նաև մեծ թվով այլ բառեր, ինչպես՝ օձիք, սվին, ամիս, բալիդ, ծղրիդ, կապիլ, կարկին, հաշիշ, հարինգ, հյուսիս, շամիլ, սածիլ, պատին, ռետին, բլիթ, սամիթ, տորմիղ, մատիտ, *և այլն:*

Փակ վանկում շեշտակիր ի *ձայնավորով վերջացող բառերի բարդման և ածանցման ժամանակ հանդես եկած հնչյունափոխական երևույթներում ևս առաջացել են մի շարք նոր գծեր:*

Այս կարգի բառերում ևս, ինչպես մենք այդ տեսանք Ե *և* ու

ձայնավորների հնչյունափոխություն ընելիս, առաջացել են հին՝ հնչյունափոխությամբ կազմված ձևերի կողքին նորերը, որոնք արդեն դուրս են մղել կամ դուրս են մղում հին ձևերը։ Օրինակ՝ հինը՝ շառավղաձև, նորը՝ շառավիղաձև, շառավղային-շառավիղային, մանրակրկտություն-մանրակրկիտություն, կռճկային-կռճիկային, ստնքացավ-ստինքացավ, ստնքագեղձ-ստինքագեղձ, կնճթավոր-կնճիթավոր, ցուցչային-ցուցիչային, ռմբային-ռումբային, բրտանալ-բիրտանալ, բոբկանալ-բոբիկանալ, ժպրհություն-ժպիրհություն, խռկային-խռիկային, ճարպկություն-ճարպիկություն, ծլարձակում-ծիլարձակում, լպրշորեն-լպիրշորեն, կորզավոր-կորիզավոր և այլն։

Հնչյունափոխված բառերով և արմատներով երբեմն նոր բառեր են կազմվում առանց հնչյունափոխության, օրինակ՝ շիրմաքար, բայց՝ շիրիմական, շիրիմաբլրակ, խնդագին, բայց՝ խինդանման, ժպտադեմ, բայց՝ ժպիտանման, խրթնաբանություն, բայց՝ խրթինություն, բջջաթաղանթ, բայց՝ բջիջավոր, բջիջախտորոշում, բջիջիկ, արճճագույն, բայց՝ արճիճապատ, արճիճափայլ, արճիճային, երշկարան, բայց՝ երշիկագործարան, երշիկագործ, երշիկեղեն, մարգարտաբեր, բայց՝ մարգարիտահուռ, սնդկազոծում, բայց՝ սնդիկասյուն, սնդիկապատ, կռճկային, բայց՝ կռճիկասոսինձ, կռճիկաձև, կռճիկավոր, մաճկակալ և մաճիկաձև, աղմակույտ և տիղմաբեր։

Միավանկ բառերի սկզբնահնչյուն ի-ն *հնչյունափոխվում է միայն երեք բառում՝* ինձ *(հնում՝* ինծ*). որ թեքման ժամանակ մի քանի տասնամյակ առաջ (տե՛ս Մլիք., ՀԲՔ) դառնում էր* ընձի, ընձեր, *այժմ՝* ինձի, ինձեր, *բառակազմության մեջ՝* ընձուղտ, ընձենավոր, ընձառյուծ, իղձ, *որ առաջ թեքվում էր հնչյունափոխությամբ՝* ըղձի, ըղձեր, *իսկ այժմ՝* իղձի, իղձեր, *բառակազմության մեջ՝* ըղձալ, ըղձական *և այլն և* ինչ(ք), *որ թեքման մեջ* ի-ն *պահպանում է՝* ինչ(ք)ի, ինչ(ք)եր, *բառաբարդման և ածանցման ժամանակ փոխվում է* ը-*ի՝* ընչազուրկ, ընչաքաղց, անընչություն։ *Հ. Թումանյանի մոտ կա, օրինակ, «Բանն* ընչումն *է» ձևը (ՀԹԵ, 1. 389), որը բարբառային է։*

Նշված դեպքերում միավանկ բառերի սկզբնահնչյուն ի-ն *փոփոխության չի ենթարկվում, օրինակ՝ իր-իրի-իրեր-իրական, իժ-իժի-իժեր-իժային և այլն։*

Միավանկ բառերի վերջնահնչյուն ի-ն, *բառի աճման ժամանակ շեշտակրույս լինելով, փոփոխության չի ենթարկվում, օրինակ՝ ձի-ձու-ձիեր, ձիավոր, թի-թիի-թիեր-թիավարել։*

Բազմավանկ բառերի վերջին շեշտակիր ի *ձայնավորը, շեշտա-*

կորուստ լինելով, կրում է որոշ փոփոխություններ։ Մի շարք երկու և ավելի վանկանի բառերում շեշտակորույս վերջին ի-ն *բոլորովին դուրս է ընկնում թե՛ հոլովման և թե՛ բառակազմության ժամանակ։ Հոգնակին կազմվում է բազմավանկ բառերի կանոնով՝ առանց հնչյունափոխության։ Այսպես՝ կենդանի-կենդանու-կենդանական, խնձորի-խնձորու-խնձորային, հայելի-հայելու-հայելանման, կեչի-կեչու-կեչուտ, կաղնի-կաղնու-կաղնուտ, ծառուղի-ծառուղու-ծառուղային, ծերունի-ծերունու-ծերունական, լոբի-լոբու-լոբազգի, քամի-քամու-քամազաց, թշնամի-թշնամու-թշնամական և այլն*[25]

Մի շարք ածականների վերջին ի-ն *ընկնում է* -ական *և* -ություն *ածանցներից առաջ, օրինակ՝ բարի-բարություն (նաև՝ բարիություն), առաքինի-առաքինություն, պարգևի-պարգևություն (նաև՝ պարգևիություն), վաղեմի-վաղեմություն (նաև՝ վաղեմիություն), նախնի-նախնական, գաղտնի-գաղտնաբար, հայրենի-հայրենական, կատաղի-կատաղություն, փոքրոգի-փոքրոգություն։*

Ի*-ով վերջացող բազմավանկ բառերը ենթարկվելով* ի *հոլովման, որ ընդհանուր առմամբ հատուկ չէ նրանց,* ի-ն *պահում են։ Օրինակ՝ ապառնի-ապառնիի, ազավնի-ազավնիի և այլն։ Պետք է ասել, որ այս հարցում ևս որոշ ասեք կրկնակ ձևեր կան և միօրինակությունը բացակայում է։* Ի*-ով վերջացող շատ բառեր ենթարկվում են և՛* ու, *և՛* ի *հոլովման,* ու *հոլովման դեպքում՝ գցելով,* ի *հոլովման դեպքում՝ պահպանելով վերջին* ի-ն, *օրինակ՝* շաշկու *(ԵԵ, 20/5—1964) և* շաշկիի *(Ա, 19/5—1964) և այլն։ Քանի որ* ի *հոլովումը գնալով ավելի ծավալվում է, ապա դրան համապատասխան էլ վերջնահնչյուն* ի-ն *պահպանվում է։*

Այս հարցում հատկապես մեծ բազմազանություն է դիտվում հատուկ անուններում։ Օրինակ՝ Գորկի-Գորկու, Մայակովսկի-Մայակովսկու, Դունաևսկի-Դունաևսկու, Չայկովսկի-Չայկովսկու, բայց և՝ Ռոսինի-Ռոսինիի, Վերդի-Վերդիի, Իբարուրի-Իբարուրիի, Ջիլի-Ջիլիի, Անիի, Գառնիի, Մարիի և այլն։ Մի շարք անուններ, հատկապես հայկական, գործածվում են զուգահեռ ձևերով, ինչպես՝ Շամախու և Շամախիի, Արգնու (ԵԵ, 22/12—1964, ՍԳ, 1963, № 6, 15) և Արգնիի (ԵԵ, 18/5—1964), Թբիլիսու և Թբիլիսիի (այժմ վերջինն է ընդունված)։

Մի ժամանակ ի-ով *վերջացող եվրոպական անունները ևս ո-*

---

25 *Մի շարք դեպքերում գործիական հոլովում* ի-ն *պահպանվում է, օրինակ՝* թշնամիով, ծերունիով, կանաչիով *և այլն և կամ տատանվում՝ օրինակ՝* լոբով-լոբիով։

մանր ենթարկում էին ու հոլովման, ինչպես՝ Ռուսինու, Բելինու (ԽԱ, 1934, N 1, 18)։

Բառակազմության մեջ այս կարգի մի շարք բառեր երբեմն տարբեր հնչյունափոխական զուգաձևեր են հանդես բերում, որոնք գալիս են մեծ մասամբ հնից՝ գրաբարից։ Այսպես, օրինակ՝ գերի-գերություն, բայց՝ գերեվարություն, որդի-որդյակ (<որդեակ)-որդիական-որդեսեր, մոլի-մոլեգին-մոլություն, հոգի-հոգյակ (<հոգեակ)-հոգեզմայլ, ընտանի-ընտանեկան-ընտանություն և այլն։

Գրաբարում որպես կանոն -ություն *վերջածանցից առաջ վերջին* ի-ն *սովորաբար ընկնում էր։ Օրինակ՝* յղություն, գերություն, աղություն, արություն *և այլն։ Գրաբարում* արություն *բառի կողքին կար նաև* արիություն *ձևը, վերջին* ի-ի *պահպանումով, որը ըստ ՆՀԲ-ի վկայության, ուշ շրջանի կազմություն է։ Հետագայում բառավերջի* ի-ի *պահպանման երևույթը աշխարհաբարում տարածվեց և* ություն *վերջածանցից առաջ շատ բառերում վերջնահնչյուն* ի-ն *սկսեց պահպանվել, ինչպես՝* աղիություն, կանացիություն, հղիություն, անխորտակելիություն, վիթխարիություն, անկապտելիություն *և այլն։*

Գնալով այդ երևույթը զարգացավ։ Ներկայումս հատկապես ածականներից ություն *ածանցով նոր բառեր կազմելիս՝* ի-ն *որպես կանոն պահպանվում է, ինչպես՝* հավաստիություն, անցանելիություն, անդրժելիություն, լսելիություն, ընթեռնելիություն, հասկանալիություն, հուսալիություն, *ինչպես և՝* գյուղացիություն, չարչիություն *և այլն։*

Ություն *ածանցով կազմված մի շարք բառեր ունեն զուգահեռ ձևեր, բառավերջի* ի-ի *պահպանումով և առանց պահպանման. ընդորում* ի-ի *անկումով ձևերը ավելի հաճախ են անցյալին և մեծ մասամբ հնացած են։ Այսպես, օրինակ՝* անբերրություն-անբերրիություն, հավաստություն-հավաստիություն, խելացություն-խելացիություն, չարչություն-չարչիություն, խնամություն-խնամիություն, ընտանություն-ընտանիություն, անհունություն-անհունիություն, զազրելություն-զազրելիություն, դրացություն-դրացիություն *և այլն։*

Այս կարգի մի շարք կրկնակ ձևեր իմաստային տարբերակում են ստացել։ Ինչպես, օրինակ՝ հայտնություն (апокалипсис) *և* հայտնիություն (известность), խնամություն *(խոսակցական լեզվում՝ կողմնապահություն անելը, հատուկ վերաբերմունքը, նաև՝* խնամիություն) *և* խնամիություն *(խնամի լինելը, խնամիական ազ-*

դականություն): Իմաստի տարբերակում են ստացել նաև ճղանալ *և* ճղխանալ *ձևերը:*

Մի շարք վերջածանցներից առաջ (-անել, -աբար, -ական, -որեն, -ապես, -ացնել, -ացում) *բազմավանկ բառերի վերջին* ի-ն *մեծ մասամբ պահպանվում է: Ինչպես, օրինակ՝* արիանալ, բարիանալ, կղզիանալ, փոշիանալ, շոգիանալ, արիաբար, ոգիաբար, զազրելիաբար, զազրելիորեն, հասկանալիորեն, վիթխարիորեն, անժխտելիորեն, անդրժելիորեն, անզսպելիորեն, ոգիական, չարչիական, գյուղացիական, կղզիացում, արիացում, արիացնել *և այլն: Սակավաթիվ դեպքերում միայն վերոհիշյալ ածանցներից առաջ* ի-ն *ընկնում է: Օրինակ՝* թշնամաբար, թշնամորեն, թշնամական, կենդանական, եկեղեցական *և այլն: Մի ժամանակ (տե՛ս Մլիս., ՀԲԲ, Դաղբ., ԼԶՌ)*[26] *ընդունված էին* կանացանալ, խնամանալ, կանացաբար, հավաստապես *և նման ձևեր, որոնք այժմ մեծ մասամբ գործածական չեն: Այդպիսի ձևերի փոխարեն այժմ ընդունված են առանց վերջին* ի-*ի անկման ձևերը: Ներկայումս կան նաև այս կարգի բավականաչափ զուգահեռ ձևեր, որոնցում նորը և զարգացողը ընդհանուր առմամբ այն ձևերն են, որտեղ վերջնահնչյուն* ի-ն *պահպանված է: Ինչպես, օրինակ՝* գոլորշացում–գոլորշիացում, գոլորշանալ–գոլորշիանալ, հավաստանալ–հավաստիանալ, հավաստացնել–հավաստիացնել, հավաստապես–հավաստիապես, քաղքենական–քաղքենիական:

Բազմավանկ բառերի վերջնահնչյուն ի-ն *բառաբարդման ժամանակ միանալով հաջորդող* ա *հոդակապին վերածվում է* եա-*ի, վերջինս էլ՝* ե-*ի: Օրինակ՝* բարի *և* կամենալ *բառերից* ա *հոդակապով կազմվել է* բարեկամ *բառը,* գարի *և* ջուր-*ից՝* գարեջուր, *ինչպես և՝* ուղեգիր, հոգեզմայլ, շոգեմեքենա *(բայց՝ շոգիանալ),* մուր–բեպաշտ, կղզեբնակ, տարեմուտ, խեցեմորթ, հոռետես *և այլն:*

Վերջին ժամանակներս նորաստեղծ բառերում նկատվում է վերջին ի-ն ա-*ից առաջ պահպանելու միտում, օրինակ՝* նռնիազարդ, նռնիածածկ *և այլն:*

դ) ՈՒՅ երկհնչյունի հնչյունափոխություն

Արդի հայերենի մի շարք երկհնչյուններ (գրաբարում՝ երկբարբառներ), բառի աճման ժամանակ շեշտակորույս լինելով, ենթարկվում են որոշ փոփոխությունների:

---

26 *Այս բառարաններում վերջին* ի-*ի անկումով կազմված մի շարք բառեր հղվում են* ի-*ի պահպանումով ձևերին:*

Ույ (գրաբարում՝ ոյ) երկհնչյունը թեքման ժամանակ փոփոխություն չի կրում, բարդ և ածանցավոր բառերում վեր է ածվում պարզ ու-ի:

Այսպես՝ բույս-բուսական, հույս-հուսալի, գույն-գունավոր, թույն-թունալի, կույր-կուրանալ, բույր-բուրավետ, հույզ-հուզական, թույլ-թուլանալ, ծույլ-ծուլանալ, կույս-կուսական, զույժ-զուժել, կույտ-կուտակել, զգույշ-զգուշանալ, աշխույժ-աշխուժություն, բնույթ-բնութագիր, երևույթ-երևութային, զրույց-զրուցասեր, կառույց-կառուցել, հանգույց-հանգուցել, զեկույց-զեկուցել, հատույց-հատուցել, այտույց-այտուցվել, պաճույճ-պաճուճանք, հասույթ-հասութաբեր, մշակույթ-մշակութային և այլն:

Միայն նույն բառը (միավանկներից) ածանցումներում և բարդություններում փոփոխության չի ենթարկվում, ինչպես՝ նույնական, նույնանման, նույնություն և այլն: Քույր բառի հոլովական ձևերում ույ երկհնչյունը սղվում է ամբողջովին (քրոջ, քրոջից), սակայն բառակազմության մեջ պահպանվում է, ինչպես՝ քույրական, քույրախնամ:

Շեշտակիր ույ երկհնչյունով կազմվող մի շարք բառեր ածանցման և բառաբարդման ժամանակ մնում են անփոփոխ: Դրանք մեծ մասամբ ունեն ույկ, ույգ, ույք, ույթ վերջածանցները. ինչպես՝ մակույկ, խարույկ, գրքույկ, առույգ, նժույգ, պատրույգ, խնջույք, հաճույք, դրույք, պիտույք, կահույք, թեքույթ, ձևույթ, գրույթ, ավանդույթ, պարբերույթ, հավաքույթ, երեկույթ, զայրույթ, ճաշկերույթ, ելույթ, բայց և՝ հասույթ-հասութաբեր, մշակույթ-մշակութային[27]: Վերջին՝ սղումով կազմված ձևերն այնքան էլ կայուն չեն (երբեմն գործածում են նաև մշակույթային, հասույթաբեր ձևերը):

Կապույտ և պտույտ բառերը բառակազմության մեջ երևան են բերում երկվություն: Մի դեպքում ընկնում է միայն յ կիսաձայնը. ինչպես՝ կապուտակ, կապուտաչյա, պտուտակ, մյուս դեպքում՝ ամբողջ երկհնչյունը, ինչպես՝ կապտել, կապտավուն, պտտել և այլն.

Այս երևույթը բացատրվում է հետևյալ կերպ: Եթե յ-ի անկումով կազմված ձևերը ժառանգություն են գրաբարից, որտեղ ոյ-ը առանց բացառության դառնում էր ու (օրինակ, գր.՝ կապոյտ-կապուտոյ-կապուտագոյն, պտոյտ-պտուտի-պտուտեմ), ապա ույ-ի

27 Մի շարք բառեր, ինչպես՝ մշակույթ, շահույթ, կազմվել են նոր ժամանակներում, նմանօրինակ բառերի համաբանությամբ: Զեկույց, ուսույց բառերը նույնպես նոր են, որ կազմվել են հակադարձ կերպով զեկուց, ուսուց հիմքերից:

սղումով կազմված բառերը առաջացել են ժողովրդական կապուտ. պտուտ *հիմքից, որոնցից և ու-ի սղումով կազմվել են* կապտու-թյուն. կապտագույն. պտտել. պտտեցնել[28] *և այլն բառերը։ Նորա-կազմ բառերում երկու հիմքն էլ կա, ինչպես* պտտալծակ. պտտա-ճողմ. պտտիչ և պտուտաչափ. պտուտաթիվ. պտուտախառ. պտու-տախաղ *և այլն։ Գրականության մեջ հանդիպում են* պտույտավեցավ, պտույտացնելով. պտույտվում է, ծույլացրել *(Բաֆ. Ս, 250, 310, 227, Հ. 1, 608, 574),* ծուլություն *(Ն—ԴՄ, 289),* բնույթագիր *(ԽՀ, 10/9—1922, 6) և այլն ձևեր, որոնք օրինաչափ չեն։*

Սառույց *բառից կազմված բարդ և ածանցավոր ձևերը կազ-մըվել են ըստ ժողովրդական արտասանության* սառուց *հիմքից՝* սառցապատ. սառցակալել, սառցադաշտ *և այլն։ Հանդիպում է նաև սեռական հոլովի* սառցի *ձևը (Շ, ԵԼԺ, 3, 68), որը նույնպես օրի-նաչափ չէ։ Մի շարք բառեր արդեն նոր ժամանակների կազմու-թյուններ են, բայց դարձյալ համաբանությամբ կազմված են* սա-ռուց *հիմքով՝ ինչպես՝* սառցանավ. սառցակույտ. սառցակարկառ. սառցաշրջան. սառցարան. սառցատուն *և այլն։*

Շեշտակիր ու *երկհնչյունով կազմված մի շարք բառեր նա-խասովետական շրջանի գրականության մեջ և 20-ական, 30-ական թվականներին հաճախ գործածվում են առանց յ-ի։ Այդ երևույթը հատկապես դիտվում է հոլովական ձևերում, մանավանդ գործիա-կան հոլովում։ Այսպես, օրինակ՝* լույս *չծագած, լուսի* լուսով. *պայծառ* գունով *(Բաֆ. Ս, 295, 296, 79, 369, 451),* լուսի *առաջ,* լուսից *զրկվել,* լուսով. կուսի. արշալուսին. *երփներանգ* գունով. երկնագունի. երկգունյան *(ՄԳՄ, 13, 308, 29, 22, 242, 193, 142, 241),* լույս *չծագած,* վերջալուսի *դեմ,* յուսի *տակ (ՀԹՆ, 294, 382, 384),* լուսով. ընկուզի *(Ն—ԴՄ, 61, Շ, ԵԼԺ, 2, 10, 227, 32, 212) և այլն։ Այսպիսի ձևեր հանդիպում են նաև նույն ժամանակաշրջանի այլ գրողների մոտ։ Օրինակ՝* գրնուկով *(Դարբ. ԱԱՔ, 3), նույնիսկ հոգնակիում, օրինակ՝ կանաչակեզ* գուներով *(Վանց. ՊՔ, 65)։*

Լույս *բառի գործիական հոլովի յ-ով և առանց յ-ի ձևերն արև-մըտահայերենում այժմ կիրառական տարբերակում են ստացել։ Այսպես՝* լույսով *ողբել և* լուսով *եմ, որ կգար*[29]*։ Առաջ այդ տար-բերակումը դեռևս որոշակի չէր, երկու դեպքի համար էլ գերադան-ցապես գործածվում էր հնչյունափոխված ձևը։ Այսպես, օրինակ,*

[28] *Նույն սկզբունքով արևմտահայերենում* ցույց *արմատից ոմանք կազմում են* ցցնել. ցցուցի *և այլն։*

[29] *Արևմտահայերենում այդ տարբերակումը չկա։*

Րաֆֆու մոտ կա «Հաշտվել նրա հետ այն հուսով, որ...» (Ս, 340)։ Մուրացանի մոտ նույնը՝ այն հուսով, բարիքների հուսով (ԳՄ, 481, 209, 148), Շիրվանզադեի մոտ՝ կրկին այցելելու հուսով, այս հուսով (ԵԼԺ, 2, 43, 52), իսկ Գ. Աղայանի մոտ՝ ես հույսով եմ... (Ե, 4, 426) և այլն։

Այժմ որպես կանոն ույ երկհնչյունը թեքման ժամանակ մնում է անփոփոխ (լույսի, լույսից, լույսով, լույսեր և այլն)։

19-րդ դարի վերջերից սկսած ույ երկհնչյունով մի շարք բառեր հանդես են գալիս կրկնությամբ, ինչպես՝ ույժ-ուժ, անույշ-անուշ, բույն-բուն, մույգ-մուգ, անգույշ-անգուշ, աշխույժ-աշխուժ, բույթ-բութ, բույժ-բուժ՝ ըստ ավանդության և ըստ արտասանության[30], համապատասխանաբար նույն ձևով էին գրվում և դրանց թեքական ձևերը։ Ներկայումս դրանց մեծ մասի համար կայունացել է առանց յ-ի գրությունը։ Նույն կարգի մի քանի բառերում յ-ն երբեմն գրվում է, երբեմն՝ ոչ։ Եվ եթե գրվում էլ է, ապա մեծ մասամբ չի արտասանվում, ինչպես՝ բույն-բուն, տույժ-տուժ, աշխույժ-աշխուժ, անգույշ-անգուշ և այլն։ Այս երևույթը պետք է բացատրել մեր մի շարք բարբառների, հատկապես արարատյանի ազդեցությամբ, որտեղ ույ երկհնչյունը դառնում է ու, ինչպես՝ լույս-լուս, բույր-բուր և այլն։

Վերոհիշյալ բառերը ածանցվում և բարդվում են ույ չեշտակիր երկհնչյունով բառերի նման՝ անուշ-անուշաբույր, աշխու(յ)ժ-աշխուժություն, տու(յ)ժ-տուժել, անգու(յ)շ-անգուշություն, բույժ-բուժական, մուգ-մուգանալ։

Բուն (гнездо) բառը այլ իմաստ ունեցող մյուս երկու «բուն»-երից տարբերակվելու համար մի շարք գրքերում, հատկապես բառարաններում, դեռևս գրվում է բույն. թեև պետք է ասել, որ այդ ձևն արդեն հնացած է։ Առանց յ-ի՝ բուն հնչումը գալիս է աշխարհաբարի կազմավորման շրջանից, քանի որ և՛ թեքական ձևերում, և՛ բառակազմության մեջ հիմքը ոչ թե բույն է, այլ բուն, ինչպես՝ բնավեր, բնի, բներ (հմմտ. լույս-լուսի-լուսեր), հավաբուն (սեռ. հավաբնի) և այլն։ Հավաբույն ձևը արհեստական է։ Ավ. Իսահակյանը գործածում է բույնի միջից, բույնին ձևերը, բայց և՝ «չունի բուն, չունի քուն»։ Րաֆֆու մոտ կա հողնակին՝ բույների (ԵԼԺ, 1, 559), Մուրացանի մոտ՝ բուներով (ԳՄ, 348) ձևերը, որոնք այդ ժամանակի համար օրինաչափ չեն։

---

30 Նույն հիմունքով գրաբարի շոյտ, պոյտ, խոյլ բառերը աշխարհաբարում դարձել են շուտ, պուտ, խուլ:

Ներկայումս գրականության մեջ հանդիպում են և՛ բույն, և՛ բուն ձևերը:

Նույն հիմունքով բույթից *(<բոյթ) ունենք* բթամատ, ճկույթից *(<ճկոյթ)՝* ճկրամատ: *Պետք է ասել, որ այս կարգի փոփոխությունները բարբառային ազդեցության հետևանք են, որոնք մի շարք գրքերում թափանցել են և գրական լեզվի մեջ:*

Քնքուշ *բառը ոմանց մոտ շփոթության տեղիք է տալիս: Թեև գրաբարից ժառանգվել է հենց այդ ձևով, բայց մեր մի շարք գրողների մոտ գործածվել է* քնքույշ *ձևով նմանօրինակ բառերի համաբանությամբ: Այսպես, օրինակ,* քնքույշ *բանակալություն և սրանից համապատասխանաբար՝* քնքուշաբար *(Շ, ԵԼԺ, 2, 122, 316, 350 և 166), փոխանակ՝* քնքուշ, քնքշաբար:

Արդեն նշել ենք, որ բառակազմության մեջ ույ *երկհնչյունի յ-ն սովորաբար ընկնում է: Բայց պետք է ասել, որ այստեղ էլ որոշ անհետևողականություն կա: Օրինակ՝* գույն–գունային, *բայց հանդիպում է նաև* գույնային *ձևը: Կան զուգահեռ ձևերի այսպիսի դեպքեր՝* մշակութային–մշակույթային, *այժմ գերակշռում է առաջին ձևը:* Սնգուրած *և* սնգույրած, դաշունաձև *և* դաշույնաձև, աներևութանալ *և* աներևույթանալ, ժամացուցային *և* ժամացույցային:

Նորակազմ բառերում այժմ միտում է գրվում յ-ն պահպանելու, ինչպես, օրինակ՝ լույսային, պատույգաձև, պարույրաձև, ծածկույթապարանք, սամույրենի *(Մուրացանի մոտ՝* սամուրենի*),* հանգույցվել, հանգույցավոր *և այլն:*

ե) ՅԱ երկհնչյունի հնչյունափոխությունը

Յա *երկհնչյունը (գրաբարում՝* եա, եայ*) շեշտակորույս լինելով մի շարք բառերում փոխվում է* ե*-ի, ինչպես՝* սենյակ–սենեկապետ, մատյան–մատենադարան: *Գրաբարում այս երևույթը համապատասխան կանոն էր, ընդգրկում էր բոլոր նման բառերը և բացի այդ վերաբերում էր նաև թեքմանը: (Օրինակ՝* դղեակ–դղեկի–դղեկաձև, մանեակ–մանեկի–մանեկաձև *և այլն): Այս հնչյունափոխությունը ավանդաբար մեզ հասնելով պահպանվել է, այն էլ մասնակի կերպով, միայն բառակազմության մեջ, իսկ հոլովական ձևերում վերացել է: Այսպես՝* հեծյալ–հեծյալի–հեծելազոր, պատյան–պատյանի–պատենավոր, հավիտյան–հավիտենական, պատանյակ–պատանեկիկ, ատյան–ատենակալ, վայրկյան–վայրկենական, քրիստոնյա–քրիստոնեություն, մեհյան–մեհենագիր, առաքյալ–առաքելություն,

տեղյակ-տեղեկություն, անկյալ-անկելանոց, սարյակ-սարեկիկ, ժանյակ-ժանեկազարդ, գործունյա-գործունեություն, կյանք-կենսական, կատարյալ-կատարելություն և այլն:

Նախասովետական շրջանի գրողների մոտ և նույնիսկ մինչև 30-ական թվականները յա-ի հնչյունափոխությունը հոլովման մեջ սակավաթիվ դեպքերում դեռևս հանդիպում է: Օրինակ՝ մի երկու վայրկենի մեջ (ՄԳՄ, 34, 168, 169), մի վայրկենում (ՂԱ, ԸԵ, 254, 265, ԽԱ, 1936, № 8, 131), այդ վայրկենին, վայրկենի համար (ՀԲ, 2, 193, 71, 190, 199) և այլն: Ներկայումս կայուն կերպով գործածվում է անհնչյունափոխ ձևը:

Բառակազմության մեջ այժմ կարելի է ասել, որ յա-ն հնչյունափոխությունը սահմանափակվում է միայն հնից ավանդված մի խումբ բառերով: Սենեկային մանկլավիկ (Բաֆ. Ա, 29), մանեկաձև գոտիներով (ՄԳՄ, 22, 23) ձևերը այժմ հնացած են և ընդունելի չեն:

Հնից ավանդված հնչյունափոխված բառերին համարժեք նոր բառեր են ստեղծվել և այժմ էլ ստեղծվում են առանց հնչյունափոխության: Այսպես, օրինակ, մանյակ, ժանյակ բառերից կազմված մանեկաձև, ժանեկաձև, ժանեկազարդ, ժանեկավոր, ժանեկագործ և այլն հնից եկող բառերի կողքին ստեղծվել են և ավելի գործածական են մանյակաձև, ժանյակաձև, ժանյակազարդ, ժանյակավոր, ժանյակագործ և նման բառեր: Սենեկային, սենեկակից, սենեկաշարք բառերի փոխարեն այժմ գործածվում են սենյակային, դրասենյակային, սենյակակից, սենյակաշար(ք), նաև սենյակազգեստ, սենյակիկ և այլն: Նույնը կարելի է ասել և նոբելենական բառի վերաբերյալ, որի նոր համարժեքն է նոբելյանական ձևը:

Վայրկյան բառից նոր կազմված մի շարք բարդ և ածանցավոր ձևերում դարձյալ յա-ն պահպանվում է, ինչպես՝ վայրկյանացույց և վայրկյանապես, վայրկյանական, վայրկյանաբար, որոնք զուգահեռաբար երբեմն գործածվում են հնից ավանդված՝ վայրկենապես, վայրկենական, վայրկենաբար բառերի փոխարեն: Պատյան բառից կան հին պատենավոր, պատենակիր, պատենապինդ և այլն բառեր և նոր կազմված՝ պատյանավոր, պատյանազուրկ: Հեծյալ-հեծելազոր, հեծելազունդ, բայց՝ հեծյալուհի: Տեղյակ բառից ունենք տեղեկություն, տեղեկագիր, տեղեկանք բառերը և տեղյակություն (նաև՝ անտեղյակություն) նոր բառը: Վերջին անհնչյունափոխ ձևը բառային նոր արժեք է ստացել հակադրվելով տեղեկություն բառին:

Յա երկհնչյունի հնչյունափոխության վերաբերյալ ուշագրավ է

Մ. Աբեղյանի կարծիքը։ Նա գրում է. «Այս ձևափոխությունը նոր լեզվի մեջ կենդանի չէ, ուստի գրքայական հոլովման չավարտած մարդիկ սխալ կազմություններ են անում՝ ինչպես են՝ «գրասենյակային», «հոբելյանական» փոխանակ՝ «գրասենեկային», «հոբելենական» ձևերի[31]։

Այս կարծիքը հետաքրքրական է այն իմաստով, որ եթե 30-ական թվականներին մեր ականավոր լեզվաբանը գրում էր և ուրիշներին էլ հանձնարարում էր գրել գրասենեկային, հոբելենական և այլն, ապա այժմ հաստատապես կարելի է ասել, որ այդ ձևով այժմ ոչ միայն ոչ որ այլևս չի գրում, այլև դրանք համարվում են վաղուց հնացած։

գ) ՅՈՒ երկհնչյունի հնչյունափոխություն

Յու երկհնչյունի (գրաբար իւ) փոփոխությունը, բացառությամբ մի քանի բառերի, շեշտի տեղափոխությունից կախված չէ, և ունի քերականական նշանակություն, որն արտահայտվում է ություն վերջածանցով կազմված բառերի սեռական և մասամբ գործիական հոլովներում։ Օրինակ՝ գրություն-գրության-գրությամբ, միություն-միության-միությամբ, որտեղ յու-ն փոխվում է յա-ի (գրաբ. իւ> եա)։ Եթե այս կարգի բառերը ենթարկվում են ի հոլովման, ապա յու երկհնչյունը նույնությամբ պահպանվում է, ինչպես՝ անկյուն-անկյունի, սյուն-սյունի-սյունով և այլն։

Նախասովետական շրջանում և ապա 20-ական թվականներին հանդիպում են գրաբարի ազդեցությամբ կազմված մի շարք ձևեր, ինչպես՝ անզգուշութենով. գրութենից. գողութենով. խաբեբայութենով (Շ, Հ. 1, 47, 56, 60), կատակութենից ու հուսահատութենից քիչ էր մնում... (ՀԹԵ, 1, 293), մարդային ճնշութենեն զերծ լինելու (ԽՀ, 19/10—1921)[32] և այլն, որոնք հակասում էին աշխարհաբարի օրինաչափությանը։ Այժմ արևելահայերենում այսպիսի ձևերը անվերադարձ կերպով մոռացվել են և վերաբերում են միայն լեզվի պատմությանը։

Բառակազմության մեջ յու երկհնչյունը սովորաբար հնչյունափոխության չի ենթարկվում, բացառությամբ հնից ավանդված կամ հետագայում համաբանությամբ ստեղծված մի քանի բառերի,

31 Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն. 1931, էջ 203։

32 Գրված է ոչ արևմտահայերենով, որտեղ այժմ էլ գործածվում են ութենով. ութենից և նման ձևեր։

որոնցում յու-ն փոխվում է ե-ի, ինչպես՝ եղջյուր-եղջերավոր-եղջերագեղ-եղջերաթագանի, արյուն-արենակից-արենապարտ, միություն-միութենական:

Արյուն. ալյուր *բառերից բարբառային* արուն. ալուր *ձևերի հիմքի վրա կազմվել են մի շարք բարդ և ածանցավոր բառեր ու-ի սղումով, ինչպես, օրինակ՝* արնաքամ. արնառեր. արնառենչ. ալրաղաց. ալրապարախ *և այլն: Այս հիմունքով հայերենում կազմվել են բազմաթիվ բառեր, որոնցից շատերի համարժեքները կան նաև անհնչյունափոխ ձևով, ինչպես՝* արյունաքամ. արյունառենչ. ալյուրաղաց. ալյուրապարախ *և ուրիշ շատ բառեր, ինչպես՝* արյունարբու. արյունակից. արյունաբուխ. ալյուրատ *և այլն: Նորաստեղծ բառերը գերազանցապես առանց հնչյունափոխության են, օրինակ՝* արյունազեղում. արյունազրկում. արյունաթքում. ալյուրավաճառ *և այլն: Առհասարակ առավել ընդունելի են համարվում և հանձնարարվում են առանց հնչյունափոխության ձևերը:*

Ձյուն-*ից կազմված մի շարք բառերում հիմքը բարբառային* ձուն *ձևն է, որից ու-ի սղումով ունենք, օրինակ՝* ձնծաղիկ. ձնագունդ. ձնհալ *և անփոփոխ հիմքից, օրինակ՝* ձյունածածկ. ձյունազարդ. ձյունագագաթ:

Ճյուղ-*ից նույն հիմունքով կազմվել են բարբառային* ճղակոտոր. ճղակտրում. ճղակոտրում *բառերը և դրանց կողքին, գրական լեզվում նոր կազմված՝* ճյուղակոտորում. ճյուղավոր. ճյուղային. ճյուղապատ *և այլն:*

Է) Ա, Ո ձայնավորների հնչյունափոխություն

Ա, Ո ձայնավորները արդի գրական հայերենում շեշտի տեղափոխության պատճառով սովորաբար փոփոխության չեն կրում: Բայց և այնպես կան մի շարք բացառություններ: Մի քանի բառերում վերջին փակ վանկի ա ձայնավորը շեշտի տեղափոխության պատճառով սղվում դուրս է ընկնում: Այս երևույթը թեև շատ տարածված է մեր մի շարք բարբառներում, սակայն արդի հայերենում այդ կարգի բառերը խիստ սակավաթիվ են, և, բացի այդ, սղումը հանդես է գալիս այդ բառով կազմված ոչ բոլոր ձևերում:

Այդպիսի ձևերը մասամբ գրաբարյան են, մասամբ՝ բարբառներից թափանցած կազմություններ: Այսպես, օրինակ, ավանդվել է ամառ *բառի ա-ի սղումով սեռականը՝* ամռան, *բայց՝* ամառանոց. քաղաք-քաղքենի, *բայց՝* քաղաքական. կարճ-կրճատ (ա-ը), սուր-

բազան-սրբազնագույն. չինած-չինծու. ծիծաղ-ծիծղուն. ցամֆ-ցամֆած, անդադար-անդադրում *և այլն:* Կոնակ *բառի* ա-*ն ընկել է բայական* կոնկել *ձևում, թեքման մեջ և բացառական մյուս ձևերում պահպանվել՝* կոնակի. կոնակներ. կոնակավոր. կոնակագործ *և այլն:*

Շիտակ-*ից կրկնակի հնչյունափոխությամբ ունենք* չտկել. չըտ-կում *բառերը, որոնցում* ի-*ն փոխվել է* ը-*ի,* ա-*ն՝ բոլորովին ընկել:* Ա-*ի սղումով են կազմված նաև* խաբրիկ *(խաբար),* խելռել. խելըռ-տուկ. խելռուկ *(խելառ),* մադղաշ *(մատաղ),* ճակտկապ. ճակտոց *(ճակատ),* բերնիկ, բերնոց *(բերան) բառերը:*

Գրականության մեջ երբեմն հանդիպում են բերան *և* ճակատ *բառերի հոլովական՝ սղումով կազմված ձևերը, ինչպես՝* բերնի *(Ն—ԴՄ, 24), «վազեց գնաց* բերնի *ջուրը» (Ա. Խնկ. «Ազատն ու աղվեսը»).* բերնի *խոռոչ (ԳԴ, ԲԼ, 1939),* ճակտի *(Շ. ԵԼԺ, 4, 502, ԱԻ, 1, 36, 41...) և այլն: Գրական լեզվում այժմ այսպիսի ձևերից հրաժարվում են:* Բերներան *սղումով կազմված ձևը մտել է հայոց լեզվի բառապաշարի մեջ: Գրականության մեջ և խոսակցական լեզվում շատ գործածական է* ճամփա *բառի սեռական հոլովի վերջին* ա-*ի սղումով* ճամփի *ձևը, օրինակ՝* ճամփի *վրա,* ճամփի *կեսին (ՀԲ),* ճամփի *տանջանքից (ՎՏ) և այլն: Այժմ այդ ձևը հաճախակի է հանդիպում: Գրականության մեջ գործածվել են նաև* զուռնի, փեսի. գարի, երեխի, տղի, սատանի *և նման՝ բառավերջի* ա-*ի սղումով կազմված սեռականի ձևեր, որոնք այժմ մերժվում են որպես բարբառային:*

Այս երևույթը հատուկ է արարատյան բարբառին և այնտեղից էլ որոշ դեպքերում թափանցել է գրական լեզվի մեջ:

Շաբաթ *բառից վերջին* ա-*ի սղումով կազմվել են* երկուշաբթի *(գրաբարում՝* երկուշաբաթի). երեքշաբթի *և այլն ձևեր: Ունենք նաև՝* շաբաթապաս *և* շաբթապաս: *Ներկայումս նորաստեղծ բառերում վերցվում է անհնչյունափոխ հիմքը, ինչպես՝* շաբաթաթերթ. շաբաթօրյակ *և այլն:* Նոտագիր, նոտրգիր *բառերը նույնպես կազմված են* ա-*ի սղումով՝* նոտար-*ից:*

Բառավերջի փակ վանկի ո-*ն շեշտակորույս լինելով ընկնում է մի քանի բառերում, ինչպես՝* ոսկոր-ոսկրամոլ-ոսկրամոլություն. ոսկոր-ոսկրածուծ-ոսկրային:

Նորաստեղծ բառերը մեծ մասամբ կազմված են անհնչյունափոխ հիմքով, ինչպես, օրինակ՝ ոսկորաբույր, ոսկորադիտակ, ոսկորային, ոսկորացավ *և այլն:*

բ) Միջնաձայնի անկում

Մի շարք դեպքերում հնչյունի անկում է տեղի ունենում բառամիջում, անկախ բառի աճման պատճառով առաջացած շեշտի տեղափոխությունից:

Արդի հայերենում մի շարք բառերի միջին ձայնավորը սղվել կամ ավելի ճիշտ ընկել է: Այսպես, օրինակ, 20-րդ դարի սկզբներին ընդունված պակասորդ բառի փոխարեն այժմ տարածվել է պակսորդ ձևը, որտեղ 2-րդ ա-ն ընկել է: Համապատասխանաբար պակասորդայինը դարձել է պակսորդային: Զուգահեռաբար գործածում են նաև պակասել–պակսել, պակասեցնել–պակսեցնել ձևերը: Սղումով ձևերը ավելի գործածական են և դուրս են մղում նախնական ձևերը:

Մի քանի տասնամյակ առաջ գործածվող ավելել, կնեպել, բաղանիք (բաղանիս) բառերի փոխարեն այժմ ընդունված են միջին ձայնավորի սղումով՝ ավլել, կնպել, բաղնիք (բաղնիս) ձևերը: Համարել և համրել ձևերը իմաստային տարբերակում են ստացել: «Նրան համարում են լավ մասնագետ» և «Նա համրում է փողերը»: (Հմմտ. ռուս. считать): Որորան, ծածորակ բառերը 2-րդ ո-ի անկումով այժմ ստացել են օրրան, ծածրակ ձևերը: Հեղհեղուկ բառում երբեմն ընկնում է միջին հ-ն:

Պատառել բայը մի երեք-չորս տասնամյակ առաջ գործածական էր այժմյան պատռել իմաստով, իսկ պատռել ձևն այդ ժամանակներում ավելի շատ ուներ պայթելու, ճաքելու իմաստ (օրինակ՝ «Նա պատռում է ինձնից»): Այժմ պատառել ձևը բոլորովին դուրս է եկել գործածությունից: Սատակել բայը նույնպես գործածվում էր սատկել ձևի հետ միասին, ունենալով սատկել-ի համեմատությամբ գործածության լայն շրջանակներ: Այժմ այդ ձևը ևս դուրս է ընկել: Իմաստային տարբերակում են ստացել կոտորել և կոտրել, դադարել և դադրել ձևերը:

Ձայնավորի սղումը առանձնապես բնորոշ է կրկնավոր բայերին, ինչպես, օրինակ՝ կապկապել, կարկարել, բոռբոռալ, ջոկջոկել, դունդունալ, ծախծախել ձևերը դարձել են կապկպել, կարկրել, բոռբռալ, ջոկջկել, դունդնալ, ծախծխել, որոնցում ընկել է երկրորդ բաղադրիչի ձայնավորը:

Մի շարք դեպքերում ձայնավորները վերջնականապես չեն ընկել և երևան են եկել զուգահեռ ձևեր, ինչպես կապկապել–կապկպել,

կարկարել-կարկրել. *ընդ որում միասին ձայնավորի անկումով ձևերի գործածությունն է:*

Բառամիջի ձայնավորի սղման պատճառով գրաբարի գտանել. մտանել. ելանել. տեսանել. մեծացուցանել *և նման բայերի փոխարեն արդի հայերենում ունենք* գտնել. մտնել. ելնել. տեսնել. մեծացնել *ձևերը:*

20-րդ դարի սկզբներին, երբ շարունակվում էր հղկվել և կատարելագործվել հայոց աշխարհաբար լեզուն, գեղարվեստական գրականության մեջ դեռևս հանդիպում էին գրաբարյան այս կարգի բառեր, ինչպես՝ տեսանել, ելանել *և այլն, որոնք այժմ անվերադարձ կերպով ընկել են հնության գիրկը:*

բ) Չքվող *Ը* ձայնավորի փոփոխությունը

Բառավերջի գաղտնավանկի ր-*ն ածանցումների ու բարդությունների ժամանակ, ինչպես և հոլովական ձևերում ձայնավորից առաջ, արդի հայերենում ընկնում է, և գաղտնավանկը վերանում, օրինակ՝ ման(ը)ր-մանրի-մանրանալ, սան(ը)ր-սանրի-սանրել, քաղց(ը)ր-քաղցրի-քաղցրահամ, ազդ(ը)ր-ազդրի-ազդրացավ, ծաղ(ը)ր-ծաղրի-ծաղրել, կոճ(ը)ղ-կոճղի-կոճղարմատ, արկ(ը)ղ-արկղի-արկղիկ, հիմ(ը)ն-հիմնի-հիմնադրել, եղեռ(ը)ն-եղեռնի-եղեռնագործ: Նույնը վերաբերում է և* բարձր. բանձր. ժանր. ծանր. կարծր, կայտր. նոսր. տարր. համր. սատղ. անգղ. կոտղ *բառերին:*

Եթե ածանցումների և բարդության ժամանակ գաղտնավանկին հաջորդող բաղադրիչը սկսվում է բաղաձայնով, ապա գաղտնավանկը պահպանվում է, ինչպես՝ ակ(ը)նհայտ. ակ(ը)նբարբ, ակ(ը)նկալել, *բայց, համեմատիր՝* ակնարույժ. ակնախնձոր:

Արդյո՞ք ր-*ի անկումը և վերջին գաղտնավանկի վերացումը կարելի է դիտել որպես շեշտափոխական հնչյունափոխություն, ինչպես ոմանք կարծում են: Ճիշտ է, բառի աճման ժամանակ շեշտի տեղափոխություն կատարվում է, բայց ոչ թե գաղտնավանկից, որը որպես կանոն շեշտ չի կրում, այլ վերջնիթեր վանկից, որից շեշտը տեղափոխվում է դեպի վերջին վանկը:*

Բառավերջում գաղտնավանկ են կազմում բաղաձայն+ր. ղ. ն *հնչյունները: Այդ հնչյունների և նախորդող բաղաձայնների միջև պարտադիր կարգով մտնում է* ը *ձայնավորը, վերջին բաղաձայնի հետ կազմելով գաղտնավանկ: Գաղտնավանկը վերանում է, երբ բառի աճման հետևանքով վերջին հնչյունների դիրքը փոխվում է,*

այսինքն, երբ r, դ, ն բաղաձայններին հաջորդում է որևէ ձայնավոր, լինի թեքման ժամանակ, թե բառակազմության մեջ: Իսկ երբ բառի անման ժամանակ վերոհիշյալ հնչյուններին հաջորդում է բաղաձայն, ապա գաղտնավանկը պահպանվում է (օր. ակ(ը)նկալել): Այսպիսով՝ գաղտնավանկի գոյացման համար այստեղ կարևորը r, դ, ն բաղաձայնների առանձնահատկությունն է, որոնք պահանջում են որևէ հենարան ձայնավոր, իրենցից առաջ կամ իրենցից հետո:

Ինչ վերաբերում է շեշտին, ապա նրա տեղափոխությունը այս դեպքում առհասարակ որևէ դեր չի կատարում:

Վերցնենք, օրինակ, մետր, լիտր, կադր, ժանր, նեգր փոխառյալ բառերը, որոնցում վերջադիր r-ն նախորդող բաղաձայնի պատճառով արտասանվում է գաղտնավանկով, մինչդեռ բառի անման ժամանակ հաջորդ ձայնավորից առաջ գաղտնավանկը վերանում է, այսինքն՝ նախորդող ը-ն սղվում, ինչպես՝ մետ(ը)ր-մետրի-մետրաչափ, կադ(ը)ր-կադրի-կադրային և այլն: Ռուսերենում ես, թեև ը հնչյունը չի գիտակցվում, բայց հնչյունների դիրքին համապատասխան այն արտասանվում է, օրինակ՝ բառավերջի r-ից առաջ, ինչպես՝ литр, скафандр, жанр և այլն: Այդ տեսակետից վագր և тигр բառերի գր և гр հնչյունների արտասանության մեջ ը-ի հարցում մեր կարծիքով տարբերություն չկա: Երկուսն էլ արտասանվում են «գաղտնավանկով»: Սրանից բխում է այն եզրակացությունը, որ վերջին գաղտնավանկի ը-ի անկումը բառի անման ժամանակ ոչ թե հայերենին հատուկ հնչյունափոխական երևույթ է, այլ պայմանավորված է տվյալ հնչյունների, կոնկրետ r-ի, արտասանական առանձնահատկություններով:

Ի դեպ նշենք նաև, որ ռուսերենում բառի անման ժամանակ շեշտի դիրքը հաճախ մնում է անփոփոխ, ինչպես՝ ка́др-ка́дровый, жа́нр-жа́нровый, թեև «գաղտնավանկը» վերանում է:

դ) Ն վերջնահնչյունով կազմված գաղտնավանկի անկումը

Գրաբարի բառավերջի ն-ով գաղտնավանկը ժամանակակից հայերենում մեծ մասամբ ընկել է, որի հետքերը պահպանվել են բառակազմության մեջ: Գրաբարում ունենք ձուկն, սաղմն, մասն և այլն, որոնք վերջին գաղտնավանկի անկումով դարձել են ձուկ, սաղմ, մաս, բայց՝ ձկնորս, մասնաճյուղ, սաղմնային և այլն: Մի շարք դեպքերում ն-ն սղվել է նաև բառակազմության մեջ, ինչպես՝ սերմնացան, բայց՝ սերմացու, մասնավոր, բայց՝ մասային: Գաղա-

նավանկի անկումը բացատրվում է նախորդող վանկի վրա դրված ուժեղ շեշտով, որի պատճառով բառավերջը թույլ արտասանվելով սղվել է։ Բառավերջի ն-ի անկումը միանգամից տեղի չի ունեցել։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ պրոցեսը սկսված է եղել շատ վաղուց։ Դեռևս գրաբարում կային կրկնակ այնպիսի ձևեր, ինչպես՝ շրինդն-շրինդ, թակն-թակ, խուփն-խուփ, և այլն[33]։ Այդ պրոցեսը շարունակվել է, մինչև մեր դարի սկզբները, թեև մի շարք գրողներ ավանդության ուժով դեռևս 20-ական, 30-ական թվականներին էլ գործածում էին այդպիսի ձևեր։ Այսպես, օրինակ՝ ամառնային, ձմեռնային, բռնով, մասները (Բաֆ. Ա, 185, 612, 21), ձուկն բռնել, ձուկն աշխատել (ՀԹՆ, 2, 331), ձկնի, ճիգն թափել, ճիգն անել, մուրն է (Շ, ԵԼԺ, 2, 250, 263, 291, 212) և այլն։ Թվականների մեջ նույնպես մինչև 30-ական թվականները վերջին ն-ն ձայնավորով սկսվող բառերից առաջ դեռևս պահպանվում էր, օրինակ՝ յորն օր, տասն անգամ, բայց՝ յոր շաբաթ, տաս շաբաթ։

Ներկայումս վերջին ն-ն պահպանվում է սակավաթիվ բառերում միայն, ինչպես՝ այսինքն, ուրեմն, առնվազն, երբեմն, Վանազն, բյուրակն, ոզն, սանդ՛ն և այլն։ Վերջին երկու բառերը այդ ձևով արդեն հնացած են։ Որոշ դեպքերում պահպանվել է միայն ը-ն, ինչպես՝ խառը, սառը, ընդհակառակը (կամ ընդհակառակն), տասը (տասն), որ կայուն չէ, գործածվում է նաև տաս ձևով։

Մի շարք բարդ և ածանցավոր բառերում վերջին ն-ի պահպանումը կայուն չէ, ինչպես՝ ծագումնաբանական և ծագումաբանական, սաղմնային և սաղմային և այլն, որոնք այժմ զուգահեռաբար գործածվում են։

3. ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արդի գրական հայերենին հատուկ է ուժգնության շեշտը, որը դրվում է վերջին վանկի վրա։ Իր բնույթով այն կայուն շարժական է և բառի աճման դեպքում միշտ տեղափոխվում է վերջին վանկի վրա, շատ անգամ հնչյունափոխության պատճառ դառնալով։

Հայերենում բոլոր բառերն ունեն բառային շեշտ, բացառությամբ միավանկ սպասարկու բառերի, որոնք լինելով վերջահար կամ նախահար, արտասանական ամբողջություն են կազմում նախորդ կամ հաջորդ բառի հետ, օրինակ՝ բառ էությա՛ն, առ այսօ՛ր,

33 Ա. Այտընյան, Քննական քերականություն..., նախաշավիղ, էջ 73։

այնպե՛ս որ, *ամե՛ն* ինչ։ *Սովորաբար շեշտ չեն կրում և օժանդակ բայերը, եթե ժխտական չեն։ Հմմտ.՝ գնո՛ւմ եմ, չե՛մ գնում*[34]։

Բացի բառային շեշտից, որն արտահայտվում է ձայնի ուժգնությամբ, հայերենին, ինչպես և բոլոր լեզուներին, հատուկ է տրամաբանական շեշտը, որով նախադասության որևէ բառը հատուկ երանգով և բառային շեշտի առավել ուժգնությամբ է արտասանվում, իմաստային երանգավորում տալով նախադասությանը։ Օրինակ՝ ես վերցրի գի՛րքը (և ոչ տետրը) և ե՛ս վերցրի գիրքը (և ոչ մեկ ուրիշը) և այլն։ Տրամաբանական շեշտը խոսքին տալիս է հրատակություն և կենդանություն։

Հայերենին հատուկ է և քերականական շեշտը, որ դրվելով որոշ բառ— մասնիկների վրա արտահայտում է քերականական իմաստ։ Օրինակ՝ «Մի կարդա՛ այդ նամակը» և «Մի՛ կարդա այդ նամակը»։ Շեշտը այստեղ քերականական իմաստ է արտահայտում, քանի որ դրվելով մի *բառ-մասնիկի վրա փոխում է նախադասության իմաստը*[35]։

Ասացինք, որ հայերենին հատուկ է ուժգնության շեշտը, բայց մասնակի կերպով օգտագործվում է նաև երաժշտական շեշտ, որով հարցման, հիացումի, զարմանքի բնույթ է տրվում նախադասությանը։

Արդի հայերենի խոսքի արտահայտչականության հարցում անշուշտ մեծ դեր են կատարում զանազան հուզական ելևէջները (интонация)*, որոնք խոսքին հաղորդում են տարբեր երանգներ։*

Հայերենում նշվում են 7 գլխավոր ելևէջներ, որոնք խոսքին տալիս են տարբեր երանգներ ու բնույթ, ինչպես՝ հասարակ շեշտ, սուր շեշտ, հարցական շեշտ, բարձրացող շեշտ, իջնող շեշտ, իջնող բարձրացող շեշտ և բարձրացող իջնող շեշտ[36]։

Եթե նկատի ունենանք, որ այսպիսի ելևէջների բնույթը կարող է փոխվել՝ նաև կապված այն բանի հետ, թե որ վանկի վրա է այդ շեշտը դրվում, ապա հասկանալի կլինի, թե ինչպիսի հարուստ և բազմազան երանգավորումներ կարող է արտահայտել ելևէջավորումը հայերենում։

Ցավոք պետք է նշել, որ մեզ մոտ շեշտի և նրա հետ կապված մյուս հարցերը առհասարակ հատուկ ուսումնասիրության առարկա

---

34 *Հարցական նախադասության մեջ, հատկապես կենդանի խոսակցական լեզվում, շատ տարածված է օժանդակ բայի շեշտումը, օրինակ՝ Սեդան եկել է՞։ Դու գնում ե՞ս տուն։*

35 *Տե՛ս* Է. Աղայան, *Գրաբարի քերականություն, հ. 1, գիրք Ա, 1964, էջ 275։*

36 *Նույն տեղում, էջ 283։*

չեն դարձել, նամանավանդ փորձառական ուսումնասիրության։ Փորձառական տվյալների բացակայությունը խիստ դժվարացնում է հարցի քննությունը, մանավորապես այդ բնագավառում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում առաջացած փոփոխությունների տեսակետից։ Այնուամենայնիվ որոշ ուշագրավ երևույթների կցանկանայինք անդրադառնալ։

Ամենից ուշագրավը մեր կարծիքով այն է, որ բարբառային շեշտը և բարբառային ինտոնացիաները, որոնք լայնորեն օգտագործվում են կենդանի խոսակցական լեզվում, որոշ արտացոլում են գտել և արդի գրական հայերենի շեշտադրության մեջ։

Ժողովրդախոսակցական լեզվում հաճախ վերջադիր շեշտը չեն կրում կոչական բառերը, որոնցում շեշտը բացի վերջին վանկից կարող է ընկնել նաև մյուս վանկերի վրա։ Ինչպես, օրինակ՝ «Ռո՛ւ-բիկ, կարդա դասդ», «Նո՛ւնե, արի գրատախտակի մոտ», «Ընկե՛ր-ներ, շատ եք ուշանում», «Քաղա՛քացի, ճանապարհ տվեք», «Տոմ-սա՛վաճառ, մեկ տոմս, խնդրեմ»։

Կոչական բառերի և անունների ոչ կայուն շեշտի մասին նշել է Մ. Աբեղյանը։

Գրական լեզվին հատուկ շեշտադրության կողքին շատ տարածված է հարցական մի շարք նախադասություններում ձայնի բարձրացումը օժանդակ բայի վրա (եթե նախադասության մեջ հարցական բառ չկա), օրինակ՝ «Գայանը եկել է՞», «Հիմա է՞ր գնում», «Դուրսը անձրև է՞», «Գալիս ե՞ս տուն» և այլն։ Բնորոշ է այն, որ երբ հարցում արտահայտող ձայնի բարձրացումը կատարվում է օժանդակ բայի վրա, ապա նախորդ բառում շեշտվում է ոչ վերջին վանկը, օրինակ՝ Այս աթոռ Ա՛րմենն է՞ ջարդել։

Հարցումն առհասարակ կարող է արտահայտվել բազմազան երանգավորումներով, օրինակ՝ զարմանքի, պահանջի, թերահավատության, երկյուղի, դժգոհության, հիացմունքի, հեգնանքի, վստահության և այլն, ըստ որի փոխվում է ելևէջի որակը, երբեմն նաև դիրքը։ Հմմտ., օրինակ՝ Աշոտ վերադա՛րձավ. նա՞ (սպասվում է դրական պատասխան, կատարվածը հիշատակվում է հարցականի ձևով) և Աշոտ վերադարձա՞վ (սպասվում է անորոշ պատասխան)։

Մեծ տարածում ստացած ոչ վերջադիր շեշտադրությունը, անշուշտ, բարբառային շեշտադրության արտացոլումն է խոսակցական լեզվում, այն օրինակելի չէ, բայց կենդանի է ու սովորական։ Այդպիսի արտասանությունը մի շարք դեպքերում մեր կարծիքով դուրս է գալիս բարբառային արտասանության սահմաններից։

Նկատելի է, որ վերջադիր շեշտադրությունը մի շարք դեպքերում խոսքին տալիս է պաշտոնականություն, ինչպես և երբեմն խստության և կտրուկության երանգ:

Մի խումբ բառերում, որոնք մեծ մասամբ դերանվանական հարադրություններ են, բառային շեշտը հաճախ վերջին վանկի վրա չի դրվում, ինչպես՝ ո՛րևէ, ո՛վևէ, ի՛նչևէ, ե՛րբևէ, ո՛րևիցե, ե՛րբևիցե, ի՛նչևիցե, նա՛մանավանդ, գո՛նե, գո՛ւցե, մա՛նավանդ և այլն:

Ուշագրավ է այն, որ հայերենի բառային շեշտը վերջին ժամանակներս առհասարակ ավելի ուժեղ է արտահայտվում: Մեր լեզվաբաններից ոմանք, հատկապես Մ. Աբեղյանը, ընդգծել են, որ հայերեն գրական լեզուն և բարբառների մի մասը ունեն թույլ շեշտադրություն վերջին վանկի վրա: Արարատյան բարբառը համեմատաբար ավելի թույլ շեշտ ունի քան մյուս բարբառները, բայց ավելի ուժեղ, քան գրական լեզուն: Արդի գրական հայերենի բառային շեշտի ուժեղացման հիմնական պատճառը պետք է համարել բարբառի, հատկապես մայր արարատյան բարբառի ավելի ուժեղ շեշտադրության ազդեցությունը: Այս հարցում թերևս չի կարելի անտեսել և ռուսերենի շեշտադրության ազդեցությունը: Հայտնի է, որ ռուսերենի բառային շեշտը ընդհանրապես իր ուժգնությամբ ավելի ցայտուն է, քան հայերենինը, և ներկայումս, երբ ռուսաց լեզուն մեզ մոտ այդքան լայն տարածում և կիրառություն ունի, անշուշտ իր ուժեղ շեշտադրությամբ կարող էր նպաստել հայերենի բառային շեշտի ուժգնացմանը:

Այնուհետև, ներկայումս բավականաչափ ակնառու է մեկ երևույթ ևս: Այդ այն է, որ հայերենի երեք և ավելի վանկանի բառերը, հատկապես բարդերը, արտասանվում են երկու շեշտով, օրինակ՝ նա՛խագծայի՛ն, գա՛ղտնապահությո՛ւն, բա՛ցօթյա՛, մի՛ջսովխոզայի՛ն, մե՛րձմոսկովյա՛ն, օտա՛րերկրյա՛, բա՛րձրաստիճա՛ն, որոնցից գլխավորը սովորաբար դրվում է վերջնավանկի վրա (չհաշվելով ղաղտնավանկը), իսկ երկրորդականը՝ նախավանկի կամ առաջին բաղադրիչի վերջին վանկի վրա:

Օտար բառերի շեշտադրության հարցը տեղիք է տվել վիճաբանությունների և իրարամերժ կարծիքների երևան գալուն:

Լեզվաբաններից ոմանք, ինչպես հանգուցյալ ակադեմիկոս Գ. Ղափանցյանը, գտնում էին, որ փոխառյալ բառերի ոչ միայն ուղիղ, այլև թեք ձևերում պետք է պահպանել օտար շեշտադրությունը, այսպես՝ պրոֆե՛սոր, պրոֆե՛սորի և այլն, միայն բառակազմության մեջ օտար բառերը ենթարկել հայերենի շեշտադրությանը, օրինակ՝

լենինյա՛ն և այլն[37]։ Ոմանք գտնում էին, որ օտար շեշտադրությունը պետք է պահպանվի միայն ուղիղ ձևերում։ Եվ պետք է ասել, որ մինչև 50-ական թվականները հենց այսպիսի ուղղություն էլ տարվում էր։

Տերմինաբանական կոմիտեն քննության առավ այս հարցը և հիմք ընդունելով հայերենի շեշտադրական կանոնները միաձայն որոշումով մերժեց փոխառյալ բառերի նախավանկ շեշտի պահպանումը հայերենում և թույլատրելի համարեց այդպիսի շեշտի օգտագործումը բացառիկ դեպքերում, այն էլ միայն ուղիղ ձևերում, երբ խոսքը վերաբերում է շատ տարածված բառերին կամ հատուկ անուններին, ինչպես՝ Պու՛շկին, Լե՛րմոնտով, ռեսպու՛բլիկա, օ՛պերա և այլն։ Թեքական ձևերում փոխառյալ բառերը անհրաժեշտաբար վերադառնում են հայերենի վերջադիր շեշտը, ինչպես՝ Պուշկինի՛, Լերմոնտովի՛, ռեսպուբլիկայի՛, օպերայի՛, ինչպես և՝ ռեսպուբլիկանե՛ր, օպերանե՛ր և այլն[38]։

Մի շարք բառեր, հատկապես ռուսերենից փոխառյալ իա-ով վերջավորվող, ուղիղ ձևերում սովորաբար պահպանում են ռուսերենի շեշտը, օրինակ՝ պա՛րտիա, դիսկու՛սիա, դիսերտա՛ցիա, ռևոլյու՛ցիա, Ֆրա՛նսիա և այլն։

Ներկայումս, օտար բառերի շեշտադրության համար բնորոշ է այն, որ հայերենի վերջադիր շեշտադրությունը ընդհանրացել է փոխառյալ բառերում ևս։ Այդ բանը կասկած չի հարուցում լայն տարածում ստացած և ժողովրդի սեփականություն դարձած բառերում, ինչպես, օրինակ՝ տրակտո՛ր, կոմպրեսո՛ր, կորպու՛ս, դիրեկտո՛ր, ֆակտո՛ր, ֆիզիկո՛ս, անալի՛զ, ավտոբու՛ս, տրոլեյբու՛ս, սինթե՛զ, պլենու՛մ, ռեժի՛մ, սեկտո՛ր, թերմո՛ս, պրոֆեսո՛ր, ագիտատո՛ր, անգինա՛, մոտի՛վ, ռեզոնատո՛ր, կոմպոզիտո՛ր, շախմա՛տ, ռակետա՛, կարե՛լ և այլն, որոնցում բառային շեշտը դրվում է վերջին վանկի վրա։

Ի միջի այլոց ասենք, որ մի շարք դեպքերում, երբ փոխառյալ բառը նախավանկ շեշտադրությամբ է արտասանվում, ոչ թե ռուսերենի ազդեցության հետևանք է, ինչպես ոմանք կարծում են, այլ բարբառի, օրինակ, «մի՛տինգը վերջա՛ցել է՞»։

Օտար բառերի շեշտադրության հարցում 20-ական, 30-ական

---

[37] *Г. Капанцян.* К задачам строительства современного армянского языка. *ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1951, № 7։*

[38] *Նախագիծը կազմել է պրոֆ. Ա. Ղարիբյանը։ Հաստատվել է տերմինաբանական կոմիտեի 1957 թ. դեկտեմբերի նիստում։*

յիվականների համեմատությամբ զգալի բարելավում կա։ Այդ շրջանում հայերենի բառապաշարի մեջ մտած մեծ թվով օտար բառերի արտասանության մեջ միօրինակություն չկար շեշտադրության հարցում։ Մեծ մասամբ փոխառյալ բառերն արտասանվում էին օտար շեշտադրությամբ կամ աղավաղված շեշտադրությամբ։ Պետք է ասել, որ այդ հարցը որոշ ժամանակ խնդրահարույց մնաց. այնուհետև գերապատվությունը տրվեց օտար շեշտադրությանը, մինչև որ իրականության թելադրանքով պարտադրվեց որոշ վերապահումներով հետևել հայերենի շեշտադրության կանոններին։

Պետք է ուրախությամբ նշել, որ վերջին ժամանակներս շնորհիվ մեր հեղինակավոր լեզվաբանների հսկողության, օտար բառերի շեշտադրությունը գրականորեն կանոնավորվել է հատկապես ռադիոյի, հեռուստատեսության հաղորդումների և թատրոնի բեմադրվածքում։ Մի շարք օտար բառերի շեշտադրության հարցում դեռևս միօրինակությունը բացակայում է։ Օրինակ՝ օպերա, կուլտուրա, ռեպլիկա և այլն շեշտվում են և՛ ռուսական, և՛ հայերեն շեշտադրությամբ։ Պետք է ասել, որ այս հարցում հայերենի վիճակը բացառիկ չէ։ Ուրիշ լեզուներում էլ, ինչպես նաև ռուսերենում, մի շարք փոխառյալ բառերի շեշտադրությունը կայունացած և համընդհանուր բնույթ չի կրում։

Դ. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ[39]

Ուղղագրության խնդիրը եղել է հայերենի կնճռոտ կողմերից մեկը։ Աշխարհաբար գրական լեզուն, գրաբարի ուղղագրությունը ժառանգելով հանդերձ, իր նոր պահանջներն էր առաջադրում, որի պատճառով աշխարհաբարի ուղղագրության մեջ ստեղծվել էին չափազանց մեծ դժվարություններ։

---

39 Հայոց լեզվի առաջին այբուբենը, որը ստեղծվել է 5-րդ դարի սկզբներին Մեսրոպ Մաշտոցի կողմից, ուներ 36 տառ։ Միջին դարերում (13-րդ դար) ավելացվեցին օ և ֆ տառերը, որոնք ըստ կարգի դրվեցին վերջում։ Եւ շաղկապի երկու նշանագրերի միացումից առաջացվեց և կապգիրը, որը նույնպես մտավ այբուբենի մեջ, Ր-ից հետո։ Հայոց լեզվի այդ լրացված այբուբենը պահպանվեց մինչև 1922 թվականը, երբ ուղղագրական բարեփոխության համաձայն նրանից հանվեցին Է, օ և ւ տառերը։ Այբուբենը ստացավ հետևյալ պատկերը՝ ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, Ք, ֆ։ Հայկական այբուբենը նորից մասնակիորեն վերանայվեց 1940 թվականին. վերականգնվեցին Է, օ տառերը։ Այբուբենից դուրս մնացած ւ տառը պահպանվեց միայն ու գրի մեջ, որը բռնեց նրա տեղը այբբենական շարքում։ Այսպիսով, ներկայիս

Դեռևս գրաբարյան հին ձեռագրերում դիտվում են միևնույն բառի տարբեր գրություններ։

16-ից մինչև 19-րդ դարի սկզբները գրաբար լեզվով հրատարակված գրքերում ուղղագրական անկանոնությունները գնալով շատացան։

Դրությունը առանձնապես լրջացավ 19-րդ դարի կեսերից սկսած։ Այդ շրջանում, ինչպես ասում են, ուղղագրության մեջ տիրում էր կատարյալ քաոս։ «Որքան գրող, այնքան ուղղագրություն», այսպես էին բնորոշում ժամանակակիցները իրենց ուղղագրությունը։ Այդ տարիներին հրատարակվող թերթերը և ամսագրերը հետևում էին ուղղագրական տարբեր սկզբունքների։ Յուրաքանչյուր գրող կամ յուրաքանչյուր խմբագիր գրում էր այնպես, ինչպես ինքը ճիշտ էր համարում, կամ ինչպես որ ինքն էր հասկանում։

Այդ նույն վիճակն էր տիրում նաև դպրոցական դասագրքերում և ձեռնարկներում։ Միևնույն բառը մի քանի ուղղագրություն ուներ։ Առանձնապես մեծ խառնաշփոթություն էր տիրում ու, ւ, վ տառերի գործածության մեջ, քանի որ այդ տառերը արտասանական ընդհանրություններ ունեին։

Վիճակը հետզհետե ավելի լրջանում էր, խախտվել էին ավանդական ուղղագրության նորմաները։

Ուղղագրական տարբերությունները հիմնականում երևան էին գալիս հետևյալ կետերում.

1) ու, ւ և վ տառերը գործածում էին վ հնչյունը արտահայտելու համար, օրինակ՝ նուէր-նւէր-նվէր, խօսուում է-խօսվում է-խօսւում է։

2) Օ-ն և ո-ն գործածում էին մեկը մյուսի փոխարեն, օրինակ՝ ծնող-ծնօղ, թափոր-թափօր, ճոճել-ճօճել, քող-քօղ, շոշափել-շօշափել, մորուք-մօրուք և այլն։

3) Է-ն և Ե-ն գործածում էին մեկը մյուսի փոխարեն, օրինակ՝ ամեն-ամէն, գմբեթ-գմբէթ, երեկ-երէկ, հենց-հէնց, չեզոք-չէզոք, մեկ-մէկ, երբեք-երբէք և այլն։ Երկնակի գրություն ուներ անորոշ դերբայի ել վերջավորությունը, որ գրվում էր նաև էլ։

4) Վերջին համր յ-ն, ի տարբերություն ավանդական գրության, ոմանց կողմից բաց էր թողնվում, օրինակ՝ ընծայ-ընծա։

այբուբենը կազմված է 39 տառից և ունի հետևյալ պատկերը՝ ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ, ժ, ի. լ. խ. ծ, կ. հ, ձ. ղ. ճ. մ. յ, ն, շ. ո. չ. պ. ջ, ռ. ս, վ, տ. ր. ց. ու, փ, ք, և, օ, ֆ։

Այբբենական այս կարգը ընդունված է տերմինաբանական կոմիտեի 1946 թ. հոկտեմբերի 5-ի նիստում։

5) Բայերի ժխտական «չ» մասնիկը գրվում էր 4 ձևով՝ չբերել-չըբերել-չը բերել և չ՚ բերել։ Միօրինակություն չկար և «կ» մասնիկի գրության մեջ, որ գրում էին՝ կըբերեմ, կը բերեմ և կ՚բերեմ, կասեմ և կ՚ասեմ։

6) Ոմանք միացած էին գրում օժանդակ բայը, օրինակ՝ գրումեմ, գրումես, գրումէ։

7) Միօրինակություն չկար հարադրությունների գրության մեջ, գրում էին միասին և անջատ, օրինակ՝ ցույցտալ և ցույց տալ, վերածել և վեր ածել, ահուդող-ահ ու դող և այլն։

Բացի ուղղագրական սկզբունքային տարբերություններից դիտվում էին մի շարք այլ ուղղագրական թերություններ։

Զգալի թվով ուղղագրական տարբերակներ էին առաջացել բառի ավանդական գրության և արտասանության տարբերության հետևանքով։

1) պ, կ, տ, ծ, ճ բաղաձայնները մ-ից և ն-ից հետո արտասանվում էին ձայնեղ։ Այս երևույթը իր լիակատար արտացոլումն էր գտել և ուղղագրության մեջ, որի պատճառով լեզվում առաջացել էին բազմաթիվ ուղղագրական տարբերակներ, ինչպես՝ անկղ-անգղ, անծեղ-անձեղ, ցանկ-ցանգ, զանկ-զանգ, թանկ-թանգ, բանտ-բանդ, ժանկ-ժանգ, ղունտ-ղունդ, գնտակ-գնդակ, կենտրոն-կենդրոն, խնծոր-խնձոր, ընկույզ-ընգույզ, ընտանի-ընդանի, ճանճ-ճանջ, ընծայ-ընձայ, ըմպել-ըմբել, անկին-անգին, ընկճել-ընգճել, պանծալի-պանձալի և այլն։

2) Ուղղագրական մի շարք տարբերակներ էին առաջացել ձայնեղ բաղաձայնները խուլ արտասանելու հետևանքով, ինչպես՝ հեգ-հեք, բրդել-բրթել, թագուհի-թաքուհի, թակարդ-թակարթ, սաղարդ-սաղարթ, քերդող-քերթող, արձագանգ-արձագանք, ագաղաղ-աքաղաղ, անհեդեդ-անհեթեթ, ագցան-արքցան[40]։

3) Տարածված էր յ-ի և հ-ի գրության շփոթումը բառասկզբում, օրինակ՝ Յիսուս-Հիսուս նաև՝ Իսուս, յաղթել-հաղթել, Յակոբ-Հակոբ, յոլատակ-հոլատակ, յառաջ-հառաջ-առաջ և այլ։

4) Կիրառության մեջ էին դրափոխության, առնմանության և այլ պատճառներով առաջացած ուղղագրական տարբերակներ, ինչպես՝ դգալ-գդալ-քթալ, կարպետ-կապերտ, անբիծ-ամբիծ, անբարիշտ-ամբարիշտ-ամպարիշտ, արմուկ-արմունկ արտասուք-արտասունք։

---

40 Դեռևս միջին դարերից սկսած հանդիպում են այնպիսի սխալներ, որոնք արդյունք են պատմական ուղղագրության, ինչպես՝ մարթ. որփ. կարք. փոխանակ՝ մարդ. որբ. կարգ գրության։

Այսպիսով, թե՛ արևելահայ գրական լեզվի ուղղագրությունը և թե՛ արևմտահայերենինը, հիմնված լինելով գրաբարի ուղղագրության վրա, շատ կետերում արդեն խախտվել էր․

Ուղղագրական այսպիսի ծանր վիճակը մեծ անհանգստություն առաջ բերեց մտավորականության շրջանում։

Եվ ահա Պոլսում, իսկ դրանից հետո նաև Թիֆլիսում, հանդես են գալիս մի խումբ մտավորականներ, որոնք առաջ են քաշում մի շարք ուղղագրական բարելավումների ծրագրեր։

Հիշատակելի են Գր. Օսյանի «Առաջարկություն աշխարհաբար լեզվի վրա» (1851) և բժիշկ Ն. Ռուսինյանի «Ուղղախոսություն արդի հայ լեզվին» (1853) ուղղագրության հարցերին նվիրված աշխատությունները, որոնք թեև ժամանակին մեծ աղմուկ հանեցին, բայց ընդունելություն չգտան։

Այնուհետև արևմուտքում ժամանակավորապես դադարում են որոնումները ուղղագրական հարցի վերաբերյալ, և այս հարցերի նկատմամբ խիստ մեծ հետաքրքրություն են հանդես բերում արևելյան՝ Ռուսահայաստանի մտավորականները։

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ աշխարհաբար գրական լեզուն զարգացման նոր թափ առավ, և սրա հետ կապված՝ ուղղագրական բարեփոխումների անհրաժեշտությունը առանձնապես զգացվեց։

Այս շրջանում իր ուղղագրական բարեփոխությունների առաջարկություններով հանդես է գալիս Ստեփան Ստեփանեն, որը սովորել էր Մոսկվայում և պաշտպանում էր «Հյուսիսափայլի» ուղղագրական նորամուծությունները։

Ստեփանեի ուղղագրական բարեփոխությունների ծրագիրը գլխավորապես հիմնված էր արտասանության վրա։ Այսպես, նա բառասկզբում յ-ի փոխարեն գրում էր հ, *երբ արտասանվում էր* հ. *լայնորեն կիրառում էր* վեխագրությունը, *ջնջում էր բառավերջի համր յ-ն և այլն։ Ուղղագրական իր սիստեմը ստեղծելիս Ստեփանեն մեծ չափով հաշվի էր առել նախորդների փորձը։*

Ստեփանեի ուղղագրական նորամուծությունները ժամանակին մեծ աղմուկ բարձրացրին հայ ընթերցողների շրջանում։ Թեև հասարակական կարծիքի ճնշման տակ նա հրապարակորեն հրաժարվեց իր նորամուծությունից, բայց նրա առաջարկած ուղղագրական բարեփոխումներից մի քանիսը հետևողականորեն սկսեցին կիրառել մի շարք գրողներ, Գրիգոր Արծրունու «Մշակ» ամսագիրը և այլն։

1888 թվականին Ղազարոս Աղայանը իր խմբագրած «Աղբյուր» ամսագրում և իր դպրոցական դասագրքերում սկսում է կիրառել ուղղագրական մի նոր սիստեմ՝ այսպես կոչված ճյունագրությունը[41]: Կարճ ժամանակում ճյունագրությունը լայն տարածում ստացավ և ընդունվեց շատ շատերի կողմից, մասամբ էլ անցավ արևմտահայ գրականության մեջ:

20-րդ դարի սկզբներին ճյունագրության դեմ դուրս եկավ Ստ. Մալխասյանը, որը ի հակադրություն դրա, հրապարակ հանեց ուղղագրության իր նոր սիստեմը՝ այսպես կոչված վեվագրությունը[41ա]:

Ստ. Մալխասյանը իր տեսակետները շարադրում է «Մի հընչյունին մի գիր» գրքույկում, որը հրատարակվում է Թիֆլիսում 1910 թվականին:

Այդ օրերին ճյունագրության և վեվագրության վերաբերյալ մոտ 40 թեր ու դեմ հոդվածներ լույս տեսան: Այդ թեժ բանավեճին մասնակցում էին գրեթե բոլոր թերթերն ու ամսագրերը, ներառյալ և արևմտահայկականը:

Եթե վեվագրությունը գրեթե «Արարի» սահմաններից դուրս չէր գալիս, ապա դրա հակառակ՝ ճյունագրությունը ավելի ու ավելի էր տարածվում ու ընդհանրանում:

Այդ տարիներին եղան ուղղագրական մանրակրկիտ բարեփոխությունների մի շարք այլ առաջարկություններ ևս, որոնք հիմնականում առաջնորդվում էին մի հնչյունին մի գիր սկզբունքով:

Հայերենի ուղղագրության հարցերով մեծ չափով զբաղվում էր Մ. Աբեղյանը, որը այդ հարցերին նվիրված մի շարք աշխատանքներ էր լույս ընծայել:

Կարևոր է, օրինակ, «Հայոց լեզվի ուղղագրությունը» (1892 թ.)՝ ուղղագրական ընդարձակ բառացանկով: Այստեղ գիտականորեն վերլուծվում և պարզաբանվում են հայերենի ուղղագրության շատ հարցեր, «Աշխարհաբարի քերականությունը» (1906), որտեղ ընդարձակ բաժին է հատկացված ուղղագրության հարցերին: Աբեղյանը կազմել և հրատարակել է նաև մի շարք տարրական ուղղագրական ձեռնարկներ:

---

41 Ղ. Աղայանը ւ. այսինքն հյուն (=վյուն) էր գրում բոլոր այն դեպքերում, երբ ու-ն արտասանվում էր վ. օրինակ՝ ճեւր աստուած. այստեղից էլ՝ անվանումը:

41ա Վեվագրությունը, այսինքն՝ վ հնչյունը վ-ով՝ վեվ տառով արտահայտելու երևույթը, նույնպես նորություն չէր: Մալխասյանն առաջարկում էր ու և ւ տառերի փոխարեն, այնտեղ, որտեղ արտասանվում էր վ, գրել վ տառը, օր. զինվոր, ձվեր, գրվել, մինչդեռ ավանդական գրությունն էր զինուոր, ձուեր, գրուել:

Մ. Աբեղյանը հայերենի ուղղագրությունը ամուր հիմքերի վրա դնելու համար եռանդուն կերպով պայքարել է ընդհուպ մինչև 1922 թվականի ուղղագրական բարեփոխության անցկացումը։

1913 թվականին հայերենի ուղղագրության հեղհեղուկ վիճակը լուրջ անհանգստություն էր պատճառում։ Եղած անկանոնությունների վրա անընդհատ ավելանում էին նորերը։ Ամենուրեք տիրում էր կամայականությունը։ Մեծ անհրաժեշտություն էր զգացվում ընդհանուր համազգային համաձայնությամբ վերջ դնելու ստեղծված դրությանը և մշակելու բոլորի համար ընդունելի և պարտադիր ուղղագրական կանոններ։

1913 թվականին հայերենի ուղղագրության հեղհեղուկ վիճակը վերացնելու մի փորձ արվեց։ Այդ թվականին հայերեն գրերի գյուտի և տպագրության համազգային մեծ հոբելյանի առթիվ որոշվեց այդ խնդիրը լայնորեն քննության առնել։ Հայերենի ուղղագրության հարցի մասին զեկուցումը հանձնարարվեց Մանուկ Աբեղյանին, որը և նա կարդաց հոբելյանական հանդեսի ժամանակ 1913 թ. հոկտեմբերի 14-ին Էջմիածնում (տպվել է «Արարատ» ամսագրում, 1913, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 1047—1120. «Մեր ուղղագրության մասին» խորագրով)։

Պետք է ասել, որ հոբելյանական հանձնաժողովը ուղղագրության հարցերին պատշաճ ուշադրություն չցուցաբերեց, առհասարակ հարցը լավ նախապատրաստված չէր, և զեկուցումից հետո նույնիսկ մտքերի փոխանակություն տեղի չունեցավ։ Որոշվեց այդ հարցը քննության առնել Էջմիածնի հայագետների նեղ շրջանակներում։

Բայց վրա հասած պատերազմը ստիպեց ժամանակավորապես այս հարցերը մոռացության տալ։

Հայերենի ուղղագրության խնդիրն օրակարգի մեջ մտավ Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հենց առաջին տարվանից սկսած։ Եվ դա հասկանալի է, քանի որ Հայաստանի նոր կառավարության առջև խնդիր էր դրված՝ կարճ ժամանակամիջոցում վերացնել անգրագիտությունը երկրում, լուսավորության, դպրոցների և կրթական այլ հաստատությունների լայն ցանց ստեղծել։

Իսկ այս խնդիրների իրագործման հետ սերտորեն կապվում էր հայերենի ուղղագրության բարեփոխության հարցը։ Այդ պատճառով հայերենի ուղղագրության բարելավումը դարձավ Հայաստանի խորհրդային իշխանության հերթական խնդիրներից մեկը։

Հիմնականում նկատի էր առնվում այն, որ մեր ուղղագրությունը մեծ մասամբ հիմնված լինելով գրաբարի վրա, շատ բանով տարբերվում էր կենդանի, գրական-գործածական արտասանությունից, հետևաբար հեռանում էր գրության հնչական եղանակից։ Իսկ այս հանգամանքը մեծ չափով դժվարացնում էր գրագիտության ուսուցման գործը։

Այդ ժամանակ լուսավորության ժողովրդական կոմիսար Ա. Հովհաննիսյանի հանձնարարությամբ 1921 թվականի սկզբներին ուղղագրության հարցը սկսվեց քննարկվել բարեփոխության նախապատրաստության համար։ Հրավիրվեց մի համախորհուրդ, որտեղ այդ հարցի մասին՝ «Հայոց լեզվի ուղղագրության մեջ անելիք բարեփոխումները» զեկուցումով հանդես եկավ Մ. Աբեղյանը։ Այնուհետև Երևանի համալսարանի դասախոսներից կազմվեց մի հանձնաժողով, որի առջև կոմիսարիատի կողմից խնդիր դրվեց՝ 1) նախապատրաստել ռեֆորմը գիտականորեն ճիշտ և հիմնավորված. 2) այնպես անել, որ ռեֆորմը ընդունելի լինի հասարակության կողմից և տարածվի։

Աբեղյանի կողմից կազմվեց նաև մի լրացուցիչ զեկուցագիր, ուր նկատի էր առնված բարեփոխության հատկապես գործնական կողմը։

Հարցը բավականաչափ մանրամասն և բազմակողմանիորեն ուսումնասիրվեց համապատասխան մարմինների կողմից։

Բայց պետք է ասել, որ Մ. Աբեղյանի ուղղագրական բարեփոխության ծրագրի դեմ դուրս եկան բավականին մեծ թվով հակառակորդներ։ Զգալի թվով մտավորականներ, դրանց թվում և հայագետներ, գրողներ, դեմ էին ռեֆորմի այդպիսի ընդարձակ ծրագրին, որով լուրջ կերպով խախտվում էին ավանդական ուղղագրության նորմաները և համամիտ էին միայն մասնակի փոփոխությունների։ Թերահավատություն էին հայտնում այն բանի վերաբերյալ, թե ուղղագրական այդպիսի ընդարձակ ծավալով նորմուծությունները կարող են արմատավորվել։ Կային այնպիսիները, որոնք առհասարակ դեմ էին որևէ փոփոխության։

Այնուամենայնիվ կյանքը անխուսափելիորեն իր պահանջներն էր առաջադրում։ Ուղղագրության միօրինակացումը և պարզեցումը դարձել էր կենսական հարց։ Այդ պատճառով 1922 թվականի մարտի 4-ին Հայաստանի ժողկոմխորհը որոշում ընդունեց հայերենի ուղղագրության բարեփոխության մասին։

Բարեփոխության հիմքում ընկած էին հետևյալ ընդհանուր

սկզբունքները. 1) ուղղագրական բարեփոխությունը հիմնվում էր դպրոցական-գրական արտասանության վրա. 2) փոփոխությունը կատարվում էր այնպես, որ բացառությունները չլինեն և ըստ հնարավորին՝ փոքրաթիվ բառերի գրությունը տարբերվի ավանդական գրությունից. 3) փոփոխությունները հիմնավորվում էին և՛ հնչյունաբանական տեսակետից, և՛ պատմականորեն: Հաշվի էր առնվում ըստ կարելույն նաև ժողովրդական կենդանի արտասանությունը: Ուղղագրության փոփոխության հիմքում դրվում էր այն սկզբունքը, որ ամեն մի հնչյուն մեկ առանձին տառով պետք է արտահայտվի, և ամեն մի տառ միայն մեկ հնչյունի նշանագիր պետք է լինի: Բացի այդ, հաշվի էին առնված նաև մանկավարժական և աշխատանքի տնտեսման հարցերը:

Որո՞նք են 1922 թվականի ուղղագրական բարեփոխության կետերը:

1) Հայոց լեզվի այբուբենից հանվում էին է և օ տառերը, և դրանց փոխարեն գրվում է ե և ո և՛ բառամիջում, և՛ բառասկզբում, օրինակ՝ եշ, ոթևան, անորինական, անեական[42]:

2) Բառասկզբի ո-ն փոխարինվում էր վո և ե-ն՝ յե երկու տառերով, օրինակ՝ վորակ, վոչինչ, յերկիր, յերես.

Օժանդակ բայերից առաջ յ լսվելիս՝ գրվում էր, ինչպես՝ գնալու յեմ, բերելու յե, բայց՝ ասում եմ, գրում եմ:

3) ւ-ի և ու-ի փոխարեն գրվում էր վ, երբ արտասանվում էր վ. օրինակ՝ նուեր-նվեր, գաւաթ-գավաթ, աւազ-ավազ, կաւ-կավ:

4) Եա, եօ երկբարբառները փոխարինվում էին յա, յո երկհնչյուններով. օրինակ՝ սենեակ-սենյակ, մանեակ-մանյակ, եոթ-յոթ, արդեոք-արդյոք:

5) Իւ երկբարբառը փոխարինվում էր յու երկհնչյունով՝ արիւն-արյուն, հարիւր-հարյուր, գրութիւն-գրություն:

6) Ոյ հնչյունակապակցությունը ույ արտասանվելիս գրվում էր ույ, օրինակ՝ բոյս-բույս, լոյս-լույս: Ոյ-ը պահպանվում էր, երբ արտասանվում էր ոյ, օրինակ՝ խոյ, գոյ:

7) Բառասկզբի հ արտասանվող յ-ի փոխարեն գրվում էր հ. օրինակ՝ յատուկ-հատուկ, յարմար-հարմար (մոտ 100 բառ):

8) Բառավերջի անձայն յ-ն դուրս էր գցվում՝ ներքոյ-ներքո. ծառայ-ծառա:

42 Աբեղյանի հաշվումներով է-ով գրվում էր մոտ 100 բառ, օ-ով մոտ 120 բառ, այնպես որ դրանց փոխարինումը ե-ի և ո-ի, լեզվում մեծ դժվարություն չէր ստեղծում:

9) եա. եո. եի կից ձայնավորները ըստ արտասանության գրվում էին եյա. եյո. եյի և այլն, օրինակ՝ եյական, գրեյի[43]։

Նկատի ունենալով գրագետ մարդկանց նոր ուղղագրությանը վարժվելու դժվարությունը, Աբեղյանի առաջարկությամբ որոշվեց բարեփոխությունը անցկացնել աստիճանական կարգով։ Լրագրության, պաշտոնական գրություններում, գիտական և գեղարվեստական գրականության մեջ պարտադիր էր համարվում դեկրետով ընդունված փոփոխությունների մի մասը միայն։ Ռեֆորմն ամբողջովին կիրառության մեջ էր դրվում սկզբում միայն դպրոցներում։

Ավանդական ուղղագրությունից ժամանակավորապես թույլ էր տրվում պահպանել՝ ա) բառասկզբում օ *և* է *տառերի գրությունը* ո-*ի և* ե-*ի փոխարեն, բ)* եա. եո. իւ *գրությունը* յա. յո. յու-*ի փոխարեն, գ) բառասկզբում* ե-*ի և* ո-*ի գրությունը* յե-*ի և* վո-*ի փոխարեն։*

Բարեփոխությունն ամբողջությամբ կիրառման մեջ դրվեց 1922 թվականի հոկտեմբերի 2-ից, իսկ 1923 թվականի հունվարի 1-ից՝ այն պարտադիր դարձավ Խորհրդային Միության սահմաններում լույս տեսնող բոլոր հայատառ հրատարակությունների համար։

Պետք է ասել, որ Մ. Աբեղյանի առաջարկած ուղղագրական բարեփոխումներին ամբողջությամբ՝ ո՛չ բոլոր հայագետներն էին կողմնակից։ Հատկապես մեծ առարկություններ էր հարուցում է *և* օ *տառերի վտարումը հայերենի այբուբենից։ Բարեփոխության ամբողջական ծրագրին դեմ էին, օրինակ, Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանը, Լեոն, Հ. Թումանյանը և այլն։*

Ոմանք ընդհանրապես դեմ լինելով ուղղագրական բարեփոխության անցկացմանը, փորձում էին զանազան խոչընդոտներ և արգելքներ հարուցել։ Պատճառաբանում էին, որ իբր նոր ուղղագրությունը խոր հակասություններ կստեղծի հայության արևելյան և արևմտյան հատվածների միջև, որ նոր ուղղագրության պատճառով Խորհրդային Հայաստանի գրականությունն ու պարբերականները չեն կարդացվի և չեն տարածվի սփյուռքահայության մեջ, որի հետևանքով նրանք անհաղորդակից կմնան Խորհրդային Հայաստանի հաջողություններին և մեր երկրի մտավոր զարգացմանը, որ դրանով դաշնակցականների ձեռքը զենք կտրվի և այլն։ Այնուհետև պատճառաբանում էին, որ դպրոցական սերնդի կրթությու-

---

43 *Աբեղյանի առաջարկած այս փոփոխություններից բառավերջի անձայն* յ-*ի կրճատումը և* ու-*ի,* ւ-*ի փոխարեն* վ *գրելը այդ շրջանում արդեն շատերի կողմից կիրառվում էր։*

նը և դասավանդությունը խիստ կդժվարանա, քանի որ մեր գրական ժառանգությունը հին ուղղագրությամբ նոր սերնդի համար կդառնա անընթեռնելի և անճանաչելի։

Ուղղագրական բարեփոխությունը իրոք մեծ իրարանցում առաջացրեց առանձնապես արտասահմանյան հայության մեջ, առաջ եկան թեր և դեմ հոսանքներ։ Դեմ արտահայտվողները մեծ մասամբ հարցերին մոտենում էին ոչ գիտական-լեզվաբանական նկատառումներով։ Կղերա-պահպանողական մտայնության ներկայացուցիչ Վ. Հացունին, որը բարեփոխության ամենամեծ հակառակորդներից էր, նույնիսկ կոչ արեց Հայաստանի կառավարությանը հրաժարվելու անցկացված ռեֆորմից, պատճառաբանելով, որ իբր կառավարությունը իրավասու չէ այդպիսի հարց լուծելու։

Բարեփոխության պաշտպաններից էր Պոլսում պրոֆ. Ս. Խաչատրյանը, որը հետագայում (1927) մասնակցեց Երևանում կայացած ուղղագրական հարցերին նվիրված խորհրդակցությանը։

Ուղղագրական բարեփոխությանը դեմ դուրս եկան նաև խորհրդային Հայաստանի հակառակորդները՝ դաշնակցականները, որոնք հարցին մոտենում էին ոչ թե գիտականորեն, այլ ուղղակի քաղաքական նկատառումներով։ Այսպես, օրինակ, նրանցից մեկը այդ ժամանակ այսպիսի մի կանխագուշակում էր անում. «Հեղափոխության բերումով կաղճատվի հայերենը հայրենիքի մեջ. ուղղագրությունը կայլանդակվի, իսկ գրականությունը կդառնա ձանձրալիորեն միակողմանի»։

Այդ ժամանակներից անցել է արդեն 50 տարի և ժամանակը, ինչպես տեսնում ենք, բոլորովին հակառակն է ապացուցել։

Պետք է ասել, որ նոր ուղղագրությունը հեշտությամբ չարմատավորվեց։ Բարեփոխության կիրառման առաջին տարիներին երևան եկան բավականաչափ մեծ դժվարություններ, որոնք նույնիսկ լուրջ մտահոգություն պատճառեցին կառավարությանը և համապատասխան մարմիններին։

Մի կողմից հնից եկող բազմաթիվ ուղղագրական անմիակերպություններ, մյուս կողմից նոր ուղղագրության արմատավորման դժվարությունները տեղիք էին տալիս մամուլում, գրագրության և գրականության մեջ զգալի չափով սխալների երևան գալուն։ Ոմանք համառորեն շարունակում էին գրել հին ուղղագրությամբ, ոմանք հանդես էին բերում անհանդուրժելի կամայականություն, անփութություն՝ խառնելով հին և նոր ուղղագրությունները, ոմանք լավ չյուրացնելով նոր ուղղագրության կանոններն ամբողջությամբ,

ծայրահեղորեն կիրառում էին մի հնչյունին մի գիր սկզբունքը, այն տարածելով նաև բաղաձայնների վրա, որից առաջանում էին ուղղագրական մեծ աղավաղումներ։

Մենք թերթեցինք 1922 թվականի ապրիլ ամսվա «Խորհրդային Հայաստանը» (բարեփոխության որոշումից մեկ ամիս անց), որտեղ անմիջապես աչքի ընկան այսպիսի գրություններ՝ բնոյթ, հասոյթ, մէջ, եթէ, նայի, համենայն դէպս, վերոյիշյալ *և այլն՝ գրված հին ուղղագրությամբ։ Այնուհետև, հաճախակի կարելի էր հանդիպել* յերեկօ, յեթէ *և նման գրությունների, որոնցում խառնըված էին հին և նոր ուղղագրությունները։ Հաճախ օժանդակ բայը գրում էին յ-ով, երբ դրա կարիքը չկար, օրինակ՝* գրում յեն, խոսում յեն, Կարմիր բանակ յեն կանչվելու *(ԽՀ, 1/11—1922), կամ անհարկի կերպով յ էր ավելացվում բառերի մեջ, օրինակ՝* միյուս, առյերես, վերյելք, թեյորյա, ուչյոթա *և այլն։ Տատանվում էր մի շարք բառերի գրությունը, ինչպես՝* հրյա-հրեա-հրեյա, ովկյան-ովկիան, հեֆեար-հեֆիար- հեֆյար *և այլն։ Եվ շաղկապը ոմանք գրում էին ըստ հնչյունների՝* յեվ, *ոմանք՝* և:

Ստ. Մալխասյանը բերում է մի այսպիսի ուղագրության օրինակ, որ գործածում էր բարձրագույն կրթություն ունեցող մի անձնավորություն, տուրք տալով իր բարբառային արտասանությանը՝ թյերություն, իբրյեվ, արյեվյելյան, հարյեվան, ուղյեվոր, յերթյեվյեկություն *և այլն։*

Միօրինակություն չկար առանձնապես հատուկ անունների գրության մեջ։

Միայն Հովսեփ անունը բարեփոխության առաջին օրերին գրըվում էր տասնյակ գրությամբ, ինչպես՝ Հովսեփ, Հովսէփ, Հուսեփ, Հուսէփ, Հոսեփ, Հոսէփ, Հօվսեփ, Հօվսէփ, Հօւսեփ, Հօւսէփ, Հօսեփ, Հօսէփ, Յօվսեփ, Յովսէփ, Յուսեփ, Յուսէփ, Յոսեփ, Յոսէփ, Յօւսեփ, Յօսեփ, Յօսէփ:

Առհասարակ մեծ խառնաշփոթ կար տառադարձության մեջ[44]*։*

Եթե այս բոլորին գումարենք և արևմտահայերենի ազդեցության դրսևորումները (օրինակ՝ ոմանք գրում էին սպաննիչ, փետտել) և մանավանդ կրկնակի ուղղագրություն ունեցող բառերի բավականաչափ մեծ թիվը (օրինակ՝ կենտրոն-կենդրոն, գունտ-գունդ), որ ժառանգվել էր հնից, ապա պարզ է դառնում թե ինչպիսի ծանր

---

44 Տառադարձության մասին խոսվում է առանձին։

վիճակում էր գտնվում հայերենի ուղղագրությունը խորհրդային իշխանության առաջին տարիներին։

Ահա այս շրջանում է, որ շատերը հանդես են գալիս նորանոր առաջարկություններով։ Ստ. Մալխասյանը, օրինակ, առաջարկում էր վերանայել ուղղագրական ռեֆորմը, որոշ կետեր հանել, որոշ կետեր ավելացնել։ Նա առաջարկում էր փոփոխություն մտցնել նաև որոշ բաղաձայնների գրության մեջ (Մարտ., 19/12—1924 և № 252, 1923)։

Առաջարկություններ եղան նոր տառ հնարելու ու-ի համար, քանի որ այստեղ երկու տառով արտահայտվում էր մեկ հնչյուն, մի բան, որ հակասում էր ընդունված սկզբունքին (Ա. Աթայան, ԽՀ, 12/1—1924, Մալխասյան, Մարտ., 23/9—1926)։

Առաջարկություն եղավ նաև նոր նշանագրեր հնարելու բարբառային ա̈. ո̈ւ, ո̈ հնչյունների համար։ Այս կարծիքը պաշտպանում էր նաև Ստ. Մալխասյանը. (Մարտ., 19/12, № 291, 1924)։

Ոմանք այնքան հեռու էին գնում, որ պահանջում էին մի հնչյունին մի գիր սկզբունքը տարածել նաև բաղաձայնների վրա և ճշտորեն բառը գրել այնպես, ինչպես արտասանվում է, օրինակ՝ յեխպայր, յերփեք, կարք, առաչ և այլն։

Բայց ամենից արտառոցը լատինական այբուբենին անցնելու առաջարկությունն էր, որի պաշտպանությամբ հանդես եկավ Ա. Մակինցյանը։ Ա. Մակինցյանը այդ ժամանակ վարում էր լուսժողկոմի պաշտոնը։

1924 թվականի դեկտեմբերի 5-ին Թբիլիսիում հրատարակվող «Մարտակոչ» լրագրում լույս տեսավ «Լատինական գրի մասին»[45] հոդվածը Մակինցյանի հեղինակությամբ, որտեղ նա խոսում էր հայերի՝ լատինական գրին անցնելու նպատակահարմարության մասին։

Այդ նույն կարծիքը նա հայտնել էր դեռևս 1919 թվականին Մոսկվայում տեղի ունեցած Ռուսաստանի ոչ-ռուսական ազգերի կրթության գործիչների 1-ին համառուսական խորհրդակցության ժամանակ, դնելով ընդհանրապես Սովետական Միության բոլոր ժողովուրդների լատինական գիր ունենալու նպատակահարմարության հարցը։

Վերոհիշյալ հոդվածում Ա. Մակինցյանը հատկապես ընդգծում էր ազգերի, մանավանդ կովկասյան ժողովուրդների մերձեցման

45 Առաջին անգամ տպվել է «Заря востока»-ում։

կարևորությունը, որին մեծ չափով կնպաստեր նրա կարծիքով կովկասյան բոլոր ժողովուրդների համար լատինական այբուբենի ընդունումը։

Մակինցյանն առաջարկում է հիմք ընդունել Բոգդատիևի (Սերգեյ Բաղդասարյանի)՝ հայերենի համար հարմարեցրած լատինական այբուբենը („Латинский алфавит в применении к армянскому языку“), որը նա կազմել էր 1921 թվականին, ինչպես հայերենի, այնպես էլ մյուս լեզուների համար։

Մի կողմ թողնելով հայերենի 39 տառերը, որոնք ամենից լավ էին արտահայտում հայերենի հնչյունական համակարգը, Բոգդատիևը լատիներենի 25 տառերով, բազմաթիվ հնչյունատարբերակիչ նշանների օգնությամբ կազմել էր հայերենի համար այնպես կոչված մի այբուբեն, որը ավելի շատ մի յուրօրինակ գիտական տառադարձություն էր, բավականաչափ թերի կողմերով, քան այբուբեն։

Այդ մոտեցմամբ կազմված այբուբենը, հիմնավորապես սխալ էր և կիրառելի չէր առհասարակ որևէ լեզվի համար։

Մակինցյանը խիստ քննադատության ենթարկելով «Աբեղյանի ուղղագրությունը» և իր դայրույթից անմասն չպահելով նաև «Սահակ Մեսրոպյան անկյունավոր, տգեղ և աչքերի համար վնասակար այբուբենը», ինչպես արտահայտվում էր նա, գտնում էր, որ «Աբեղյանի ուղղագրությունը» մի անցողական աստիճան կհանդիսանա դեպի լատինական այբուբենը։ Նրա կարծիքով սկզբում պետք է թույլ տրվեր զուգահեռ օգտվել հայկական և լատինական այբուբեններից, մինչև որ լատինականը հաղթանակեր։

Այս տեսակետը, անշուշտ, սխալ էր և ամենայն իրավամբ չընդունվեց ու քննադատվեց։

Ստեղծված դրությունը, իհարկե, խիստ մտահոգիչ էր։ Կարիք էր զգացվում որոշ միջոցառումներ ձեռնարկելու և մեկընդմիշտ կանոնավորելու հայերենի ուղղագրության հարցը։

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նոր ուղղագրության որոշ կետերի շուրջը անհամաձայնություն կար նաև հայագետների շրջանում, 1926 թվականին լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կողմից այս հարցը նորից բարձրացվեց։ Առաջ քաշվեց նաև անտեսման սկզբունքը, որ 1922 թ. բարեփոխության ժամանակ հաշվի չէր առնվել։ Պահանջ էր զգացվում բարելավում մտցնելու նաև տառերի ձևի մեջ։ Ահա այս բոլոր խնդիրների քննությունը և լուծումը դրվեց գիտության և արվեստի ինստիտուտի առջև։

Լուսավորության ժողովրդական կոմիսար Մռավյանի կարգադրությամբ գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակագիտական և գեղարվեստական բաժինների 1926 թվականի հոկտեմբերի 17-ի միացյալ ժողովում ընտրվում է մի հանձնաժողով, որի անդամներն էին՝ Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Թ. Ավդալբեկյան, Առաքել Բաբախանյան (Լեո), Գ. Լևոնյան, Ա. Խաչատրյան (Պոլսից), Ստ. Կանայան, Ս. Հակոբյան, Գր. Ղափանցյան, Հ. Մանանդյան և Շիրվանզադե։ Հանձնաժողովն իր աշխատանքն սկսեց 1926 թ. հոկտեմբերի 21-ին և վերջացրեց 1927 թ. մայիսի 17-ին՝ ունենալով 25 նիստ[46]։ Թիֆլիսից հրավիրվում է նաև Ստ. Մալխասյանը վճռական ձայնի իրավունքով։ Կազմվում է նաև մանկավարժական ենթահանձնաժողով, որի կազմի մեջ են մտնում փորձված մանկավարժներ (Գ. Էդիլյան, Վ. Թոթովենց, Ս. Թորոսյան, Ստ. Լիսիցյան և ուրիշներ՝ 14 հոգի)։ Սրանց առջև խնդիր է դրվում պարզաբանելու նոր ուղղագրության դասավանդման հետ կապված դժվարությունները։

Այս խորհրդակցությունում դրված էր նաև տպագրական տառերի ձևի բարելավման, ինչպես և խնայողության ու տնտեսման խնդիրը։

Հանձնաժողովի նիստերում լսվում են 4 լեզվաբան անդամների՝ Աճառյանի, Խաչատրյանի, Ղափանցյանի և Մալխասյանի զեկուցումները ուղղագրության բարեփոխության շուրջը։

Զեկուցումների թեզիսներից կազմվում է մի համադրական աղյուսակ, որտեղ ցույց է տրվում բարեփոխության առանձին կետերի վերաբերյալ զեկուցողների արտահայտած կարծիքը՝ թեր կամ դեմ, ինչպես նաև նրանց արած նոր առաջարկությունները։ «Ուղղագրական առաջարկների համադրական աղյուսակը» ուղարկվում է հայաբնակ զանազան վայրեր և մի շարք անձանց անհատապես՝ կարծիքներ ստանալու նպատակով։

Հարցը քննության է առնվում ամենայն լրջությամբ և բազմակողմանիորեն Հայաստանի բոլոր նշանավոր հայագետների մասնակցությամբ։

Զեկուցումներում դրսևորված հիմնական առարկությունները վերաբերում էին մի քանի կետերի։

Ամենամեծ առարկությունը այն բանի վերաբերյալ էր, որ նոր

---

46 Մ. Աբեղյանը 1-ին նիստում հայտնում է իր հրաժարականը հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու մասին։

ուղղագրությամբ հայերենի այբուբենից դուրս էին ընկնում է և օ տառերը, որ բառասկզբում ե-ն և ո-ն փոխարինվում էին յե-ով և վո-ով։ Այնուհետև չորս ընկուցողներն էլ դեմ էին իւ երկբարբառը՝ յու-ի և եա-ն՝ յա-ի վերածելուն, ե-ից հետո՝ յ ձայնակապը ներմուծելուն։ Այս կետերին համամիտ էին հանձնաժողովի բոլոր անդամները։ Միասնական կարծիք կար այն բանում, որ բառամիջի է-ն և օ-ն պետք է փոխարինվեն ե-ով և ո-ով, բառասկզբի հ արտասանվող յ-ն պետք է գրել հ-ով, բառավերջի համր յ-ն՝ գցել, ոյ-ը, երբ արտասանվում է ույ, գրել ույ: Մնացած կետերում կային կարծիքների որոշ տարբերություններ, նոր, ոչ էական առաջարկություններ։ Օրինակ, Գ. Ղափանցյանն առաջարկում էր ւ տառը պահել իւ երկբարբառի մեջ և օտար բառերի ü հնչյունը տառադարձելու համար, իսկ ու-ի համար առաջարկում էր նոր տառ ստեղծել, ինչպես՝ V և այլն։

Ընկուցողները բոլորն էլ այն միասնական կարծիքը հայտնեցին, որ «Աբեղյանի ուղղագրությունը» խիստ ծայրահեղության է հասել՝ հիմք ընդունելով մի հնչյունին մի գիր սկզբունքը, որ 1500 տարվա պատմություն ունեցող այնպիսի մի գրի համար, ինչպիսին հայկականն է, անհրաժեշտ էր հաշվի առնել նաև ավանդության սկզբունքը:

Այս խորհրդակցությունում շոշափվեցին հայերենի ուղղագրության վերաբերյալ այլ հարցեր ևս։ Օրինակ՝ Աճառյանի առաջարկությամբ նկատի առնվեցին երկգրություն ունեցող բառերը, որոնք հայերենում բավականաչափ մեծ թիվ էին կազմում, ինչպես՝ բաղդ-բախտ, խնձույք-խնջույք, անույշ-անուշ, ույժ-ուժ, թաքնվել-թագնվել, փափագ-փափաք, ճիշտ-ճիշդ, ցատկել-ցատքել և այլն, որոշելով թողնել դրանցից մեկը։

Այնուհետև որոշ ուշադրություն դարձվեց և տառադարձության հարցերին, նշվեց տառադարձության անկայուն վիճակը և արվեցին մի շարք ընդունելի և անընդունելի առաջարկություններ։

Մի շարք առաջարկություններ և կարծիքներ ստացվեցին այլ քաղաքներից՝ Բաքվից, Լենինականից և դրսից՝ Ն. Մառից, Ն. Ադոնցից, Ա. Մեյեից, Վենետիկի Մխիթարյան միաբանությունից և այլն։

Հայերենի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխության վերաբերյալ եղած բոլոր առաջարկները քվեարկության դրվեցին հանձնաժողովում։

Միաձայն մերժվեց լատինական այբուբենին անցնելու՝ դրսից արված առաջարկությունը և որոշվեց հայերենի այբուբենը պահ-

պանել նույնությամբ, մտցնելով փոփոխություններ գեղարվեստական, տեխնիկական տեսակետից։

Հանձնաժողովը շատ լուրջ աշխատանք կատարեց բազմակողմանիորեն և լայն կերպով քննարկելով ու պարզաբանելով հայերենի ուղղագրության վերաբերյալ բազմաթիվ հարցեր։ Ճիշտ է, այդ աշխատանքը իր ժամանակին չհանգեց ցանկալի արդյունքների, բայց և այնպես լուսաբանվեցին շատ հարցեր, որոնք, թեև բավականաչափ մեծ ուշացումով, այնուամենայնիվ իրենց լուծումը հետագայում հիմնականում ստացան։

1922 թվականի ուղղագրական բարեփոխության մեջ որոշ փոփոխություն մտցվեց 1940 թվականի օգոստոսի 22-ի տերմինաբանական կոմիտեի որոշումով, որի նախագիծը ներկայացվել էր պրոֆ. Գ. Սևակի կողմից։

Տերմինաբանական կոմիտեն արձանագրեց, որ 1922 թվականին ընդունված նոր ուղղագրությունը առաջադիմական խոշոր քայլ էր մեր ավանդական ուղղագրության քարացած անկանոնությունների վերացման և մեր ազգաբնակչության լայնագույն զանգվածներին գրագետ դարձնելու գործի հեշտացման ուղղությամբ։

Այդ բարեփոխության նվաճումներն էին. 1) վերջին համր յ-ի վերացումը, 2) յ և վ հնչյունների գրության կայունացումը, 3) երկբարբառների վերացումը և այլն։ Միաժամանակ նշվեցին և նկատի առնվեցին 1922 թվականի բարեփոխության հետևյալ հիմնական թերությունները. 1) առանց անհրաժեշտության խախտվել էր հայկական ավանդական այբուբենը՝ որից դուրս էին ընկել Է և օ տառերը, 2) ստեղծվել էին տարբեր ուղղագրություններ միևնույն բառի համար տարբեր դիրքերում, օրինակ՝ առանձին գրվում էր վորակ, յերես, ածանցման դեպքում՝ անորակ, աներես և այլն, նույնը վերաբերում էր և օժանդակ բայի գրությանը՝ գրում եմ և գրելու յեմ։

Սովորողների մոտ առաջ եկան ուղղագրական նոր տիպի սըխալներ, հատկապես կապված վ և յ տառերի գործածության հետ, օրինակ՝ գրում էին վերյելք, առյերես, անվորոշ և այլն։

Բառասկզբում ե-ի փոխարեն՝ յե և ո-ի փոխարեն՝ վո գրելու և յ ձայնակապի անտեղի գործածության պատճառով (օրինակ՝ յելք, վոտք, եյի, եյին, սա յել. եյական և այլն) ստեղծվում էր յ. վ տառերի անհարկի կուտակում, որը հակասում էր խնայողության և տնտեսման սկզբունքին, մի հանգամանք, որին շատ կարևոր տեղ էր տրվում։ Առհասարակ յ ձայնակապի գործածության հարցում որոշակիություն չկար։ Պարզ չէր, օրինակ, ու-ից հետո յ ձայնա-

կարը պիտի գրվի, թե՝ ոչ։ Այդ պատճառով ոմանք գրում էին ուրու-յի, արույի, կենգուրայի և այլն, մյուսները՝ ուրուի, արուի, կենգուրուի։

Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով, 1940 թվականի օգոստոսի 22-ի մասնակի բարեփոխության մասին որոշումով հաստատվեցին ուղղագրական հետևյալ կանոնները։

1) Վերականգնվում են հայոց այբուբենի և գրության մեջ Է և Օ տառերը, գործածելով միայն բառասկզբի համար իբրև Է և Օ։

2) Ե և Ո տառերը բառասկզբում գործածվում են իբրև յե և վո։

Որպես բացառություն ով և ովքեր դերանունները գրվում են ո-ով։

3) Բարդ և ածանցավոր բառերում պահվում է ստուգաբանական գրությունը (օրինակ՝ անէրկյուղ, վայրէջք, անօրակ, անօգուտ)։

4) Յ ձայնակապը գործածվում է ա-ից և ո-ից հետո միայն։

5) Եմ օժանդակ բայի եզակի թվի 3-րդ դեմքը և անցյալ անկատարը գրվում է Է-ով, մյուս դեմքերը՝ Ե-ով։

Այժմ, երբ ուղղագրական բարեփոխությունից անցել է արդեն 51 տարի, կարելի է վստահորեն ասել, որ հայերենի 1922 թ. ուղղագրական բարեփոխությունը, չնայած իր որոշ ծայրահեղություններին, որոնք ուղղվեցին 1940 թվականի մասնակի բարեփոխությամբ, դրական մեծ դեր կատարեց, լիովին բռնելով ժամանակի քննությունը։

Այսպիսով, Հայաստանի խորհրդային կառավարության ձեռնարկած մի շարք միջոցառումների շնորհիվ հայերենի ուղղագրությունը խիստ անկայուն և խառնիճաղանջ վիճակից հանվեց, կարգավորվեց, կայունացվեց, հղկվեց և պետականորեն ու պաշտոնապես պարտադիր ճանաչվեց Սովետական Միության սահմաններում լույս տեսնող բոլոր հայատառ հրատարակությունների համար։

Ժողովրդական դեմոկրատական երկրների մի քանի հայկական գաղութներ իրենց հրատարակություններում, դասագրքերում, օրաթերթերում և այլն ներկայումս նույնպես կիրառում են խորհրդային Հայաստանի նոր ուղղագրությունը։ Նոր ուղղագրությամբ է տպվում, օրինակ, Սոֆիայում լույս տեսնող «Երևան» թերթը, Բուխարեստում տպագրվող «Նոր կյանքը» և այլն։

Թե ինչպիսին է հայերենի ուղղագրության վիճակը սփյուռքահայության այն շրջաններում, որոնցում շարունակվում է դեռևս պահպանվել հին ուղղագրությունը, այդ մասին շատ ցայտուն կերպով ասված է Բեյրութում լույս տեսնող «Զարթոնք» թերթում։

«Մինչ արևելահայերենը 1922 թվականի հիմնական փոփոխու-

թյամբ և 1940 թվականի մասնակի բարեփոխությամբ ունի դարձած է կայունացած և միաձև ուղղագրություն մը,— գրում է Հովվածաղիկը,— արևմտահայերենը կը շարունակի խարխափել անորոշության և երկընտրանքներու մեջ» (15/2—1964):

Արտասահմանում բնակվող շատ հայ մտավորականներ ձգտում են ունենալ մի միասնական հայերեն լեզու, միասնական ուղղագրությամբ և միասնական ուղղախոսությամբ:

Ահա ինչ է գրում այդ մասին Սոֆիայի մտավորականներից մեկը. «Մենք սփյուռքահայերս, հայ ժողովրդի հարազատ ու անբաժան մասն ենք, հետևաբար պետք է գրենք ու խոսենք այն լեզվով, որով գրում, խոսում և ստեղծագործում են Մայր Հայրենիքում: Պետականության ըմբռնումից և ազգային գիտակցության զգացումից զուրկ մարդիկ միայն կարող են այս սկզբունքին հակառակ լինել... Ժամանակն է, ուրեմն, որ սփյուռքահայությունը առավելապես գիտակցի այս ազգային ճշմարտությունը և անկեղծ սիրով իր աչքերն ու ուշքը դարձնի դեպի ծաղկող Մայր Հայրենիքի լեզվական և կուլտուրական հաղթական օջախները» («Երևան», Սոֆիա, 19/8—1957):

1933 թվականին կազմված հատուկ հանձնաժողովը, որն այնուհետև վերածվեց Հայկական ՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատին առընթեր հայերեն գրական լեզվի տերմինների և նորմաների կոմիտեի, նախապես որոշելով իր գործունեության սկզբունքները և նպատակները, միանգամից մեծ գործունեություն ծավալեց և կարճ ժամանակամիջոցում մի շարք անհրաժեշտ և կարևոր որոշումներ ընդունեց հայերենի տերմինաշինարարության, ուղղագրության և տառադարձության վերաբերյալ: Այդ որոշումները ուղեցույց հանդիսացան և կարգավորեցին լեզվաշինարարության բազմաթիվ հարցեր:

Տերմինաբանական կոմիտեն հատուկ ուշադրություն դարձրեց ժառանգաբար մեզ հասած երկտեսակ գրություն ունեցող մեծ թվով հայերեն բառերի վրա, ինչպես՝ տախտ-թախտ, ծածկ-ծածք, խաղալիք-խաղալիկ, թուխպ-թուղպ, հաչել-հաչել, պտունկ-պտունգ, փնտռել-փնտրել, խնձույք-խնջույք, ժանտ-ժանդ, անբարիշտ-ամբարիշտ, ամբիծ-անբիծ, անգլիերեն-անգլերեն, օվկյանոս-ովկիանոս, բաղդ-բախտ, բանդ-բանտ, Բագու-Բաքու և այլն, և այլն, ընդունելով համապատասխան որոշումներ[47]:

---

47 1940 և 1944 թվականների որոշումների նախագիծը ներկայացրել է Ա. Ղարիբյանը:

Տերմինաբանական կոմիտեն երկտեսակ գրություն ունեցող բառերից մեկն ու մեկը ընդունելիս (ներառյալ նաև փոխառությունները), նախապատվությունը տալիս էր այն ձևին, որը առավել տարածված էր և մոտ հայերեն կամ օտար բառի արտասանությանը, թեև որոշ դեպքերում գրությունը չէր համապատասխանում բառի ստուգաբանությանը (օրինակ՝ բացականչել, թախտ)։

Այնուհետև կանոնավորություն մտցվեց անջատ և միասին գրվող մի շարք հարադրությունների հարցում։ 19-րդ դարի վերջերին այդ կարգի բառերից շատերը գրվում էին առանձին, ինչպես՝ նույն իսկ, առ այժմ, այլ ևս, այլ և, երբ և է, ով և է, որ և է, ինքն ըստ ինքյան, այս և այլ, խառն ի խուռն, մեջ տեղ. նախ քան, մի թե, առ այժմ, երբ և իցե, մինչ դեռ, դեռ ևս, մի և նույն, որպես զի և այլն։

Նույնը վերաբերում է և ի նախդիրով կազմված բառերին, ինչպես՝ ի դեպ, ի դերև, ի վեր, ի վայր, ի վերջո, ի ծնե, ի հարկե, առ ի չգոյե և այլն։ 20-ական, 30-ական թվականներին այս կարգի հարադրությունների գրության հարցում կայուն սկզբունք չկար, գրում էին և՛ անջատ, և՛ միասին։

Տերմինաբանական կոմիտեի որոշումով հաստատվեց այսպիսի բառերի միասին կամ անջատ գրությունը։

Կարգավորվեց քսանից բարձր թվականների ուղղագրությունը։ Այդպիսի թվականները նույնպես չունեին հաստատուն գրություն, գրում էին միացած և անջատ կամ՝ գծիկով, օրինակ՝ քսան երկու, երեսուն մեկ և քսաներկու, երեսուն-մեկ, երեքհարյուր, երկու հարյուր։ Ընդունված էր նաև ու կամ և շաղկապով թվականների գրությունը, օրինակ՝ տասն և ութ, քսան ու հինգ և այլն, որոնք գրվում էին նաև միացած՝ տասնուչորս, տասնութ։ Որոշվեց բնական թվականներից երկանիշ թվերը գրել միասին (երեսունհինգ, երեսունվեց), իսկ ավելի բարձր թվերը՝ առանձին (երկու հարյուր հիսուն, երեք հազար)։

Ուշադրություն դարձվեց նաև ըն գաղտնավանկով վերջացող բառերի վրա, որոնք նույնպես հաստատուն գրություն չունեին, օրինակ՝ ձմեռն-ձմեռ, թոռն-թոռ, եղեգն-եղեգ, ներումն-ներում, բեռն-բեռ, կուռն-կուռ, բուռն-բուռ։ Որոշվեց, բացառությամբ այդ կարգի մի շարք բառերի, գրել առանց ն-ի՝ ձմեռ, թոռ, բեռ, կուռ, եղեգ, ներում, բուռ։

Կարգավորվեց «կ» եղանակիչի և «չ» ժխտականի գրությունը։ Այդ մասնիկները 4 տեսակ գրություն ունեին, օրինակ՝ կը մնա,

կըմնա, կ՛մնա և կմնա։ Նույն ձևով գրվում էր և «չ»-ն՝ չը մնա, չըմնա, չ՛մնա, չմնա։ Ձայնավորից առաջ «կ»-ն և «չ»-ն գրվում էին փշիկով, օրինակ՝ կ՛ենթարկվի, կ՛ընդունվի, կ՛առողջանա, չ՛ենթարկվի, չ՛ընդունվի, չ՛առողջանա և այլն։ Արմատավորվեց «կ» եղանակիչի և «չ» ժխտականի միացած գրությունը առանց փշիկի։

Հայերենի ուղղագրության կարգավորման գործում առանձնապես նշելի է պրոֆ. Ա. Ղարիբյանի մատուցած ծառայությունները։ Դեռևս 30-ական թվականներից սկսած նա կազմել և հրատարակել է մի շարք ուղղագրական համառոտ և ընդարձակ բառարաններ, որոնք մեծ դեր են կատարել հայերենի ուղղագրական թերությունները վերացնելու գործում։

Տերմինաբանական կոմիտեն իր գործունեության ընթացքում ուշադրություն դարձրեց նաև ուղղագրական առանձին հարցերի վրա։ Այսպես, օրինակ, ռուսերենի մեխանիկական ընդօրինակման հետևանքով, հայերենում տարածվել էին էլեկտր արմատով կազմված մի շարք բառերի սխալ ձևերը, ինչպես՝ էլեկտրոէներգիա, էլեկտրոտեխնիկա և դրանց համաբանությամբ կազմված՝ էլեկտրոցանց, էլեկտրոկայան և նման բառեր, որոնց կողքին զուգահեռաբար գործածվում էին նաև էլեկտրացանց, էլեկտրակայան՝ ա հոդակապով ձևերը։ Ելնելով հայերենի բառակազմական օրենքներից որոշվեց էլեկտր արմատից կազմված բոլոր այն բառերում, որոնցում բաղադրիչները գիտակցվում են որպես առանձին արմատներ, գրել ա հոդակապը, օրինակ՝ էլեկտրաէներգիա, էլեկտրամեխանիկա, էլեկտրասյուն, բայց՝ էլեկտրոլիզ, էլեկտրիֆիկացիա և այլն[48]։

Պետք է նշել, սակայն, որ այս հարցում միօրինակություն, այնուամենայնիվ, չհաստատվեց։ Տերմինաբանական կոմիտեի որոշումից հետո հրատարակված բառարաններում մի տեղ (ՌՀԲ. 1960) բերված է էլեկտրոմեխանիկա ձևը, մի այլ տեղ (Դպր. ուղղ. բառ., 1959)՝ էլեկտրամեխանիկա։ Կիրառության մեջ մնաց նոր սկզբունքը, այն է, եթե էլեկտր արմատով կազմված բառի 2-րդ բաղադրիչը հայերեն բառ կամ արմատ է (կամ դիտվում է որպես այդպիսին), ապա գրվում է ա հոդակապով, օրինակ՝ էլեկտրալուծույթ, էլեկտրաարդյունաբերական, էլեկտրալամպ, էլեկտրակարդիոգրամա, էլեկտրաստատիկա, էլեկտրատեխնիկա և այլն։

Բայց պետք է խոստովանել, որ այս արմատով կազմված նորաստեղծ բառերում (մի արմատ, որով անընդհատ նորանոր բա-

---

48 Որոշումն ընդունվել է տերմինաբանական կոմիտեի 1957 թ. ապրիլի նիստում։

ներ են կազմվում), մի շարք դեպքերում դարձյալ միօրինակությունը բացակայում է:

Երբեմն ընդունված ձևին հակառակ, մամուլում և գրականության մեջ տարածում է գտնում մեկ ուրիշը, որն այնուհետև օրինականացվում է: Այդպես պատահեց, օրինակ, բացականչել բառի հետ, որի համար ընդունված էր բացագանչել ձևը: Փոփոխություն կրեց և մի շարք հատուկ անունների ուղղագրությունը, կապված նրանց ստուգաբանական իմաստի մթագնման հետ, օրինակ՝ Ալլահվերդին դարձավ Ալավերդի, Ալլահվերդյանը՝ Ալավերդյան (ոմանք Աստվածատրյանը դարձրել են Ասծատրյան) և այլն:

Չնայած ձեռնարկված մի շարք միջոցառումներին, հայերենի ուղղագրության մեջ դեռևս շարունակում են պահպանվել մի շարք երկգրություն ունեցող բառեր, ինչպես, օրինակ՝ քամուկ-ջամուր, քսուկ-քսուք, Միսակ-Միսաք, Մանիակ-Մանյակ, բրազիլական-բրազիլիական, պոլինեզացի-պոլինեզիացի և այլն:

Հաստատուն չէ մի շարք բարդ բառերի անջատ կամ միացած գրությունը, որ բացատրվում է հարադիր բարդությունները կցականի վերածվելու ընդհանուր միտումով: Օրինակ՝ կարճուկտրուկ-կարճ ու կտրուկ, կուչուձիգ-կուչ ու ձիգ, մերթընդմերթ-մերթ ընդ մերթ, համենայնդեպս-համենայն դեպս, ծուռումուռ-ծուռ ու մուռ, սուսուփուս-սուս ու փուս, սուտումուտ-սուտ ու մուտ և այլն:

Աններելի է մեր մամուլում, հատկապես «Երեկոյան Երևան» օրաթերթում ոչ հազվադեպ նկատվող ուղղագրական (տառադարձականի մասին հետո) սխալները: Նշենք դրանցից մի քանիսը: Այսպես, օրինակ՝ 1964 թվականին (30/6) «Երեկոյան Երևանը» գրում է հաջել, երբ վաղուց ի վեր ընդունված է հաչել ձևը: Այնուհետև՝ խորազննին (22/4—1964), փոխանակ՝ խորազնին, աէրացիա (21/5—1964), աէրոլոգ (18/5—1964), փոխանակ՝ աերացիա, աերոլոգ, պոլիեթիլեն. փոխանակ՝ պոլիէթիլեն, պայթուն (17/6—1964), փոխանակ, պայթյուն, ձայնապանակ (16/11—1964), փոխանակ՝ ձայնապնակ, խարկված (ԳԹ, 13/11—1964), փոխանակ՝ խարակված, իննր (ԳԹ, 9/7—1965) և այլն:

* * *

Տողադարձի կանոնները, որ գալիս են հնուց, հիմնականում շարունակվում են պահպանվել: Դրանք գլխավորապես հետևյալներն են. երկու ձայնավորների միջև գտնված մի բաղաձայնը անցնում է հաջորդ վանկին (դա-ղան), երկու բաղաձայններից մեկը մնում

է, մյուսը անցնում է հաջորդ վանկին (կար-միր), երեք բաղաձայն-ներից երկուսը պահվում է, մեկն անցնում է հաջորդ վանկին (հանգ-չել):

Տողադարձի ժամանակ արտասանվող, բայց չգրվող ը-ն տողի վերջին կամ հաջորդ տողն անցած առաջին վանկում գրվում է, օրի-նակ՝ կը-տըրտել, վը-տանգավոր, մա-նըր, ճշգըրտ-ված *և այլն։*

Տողադարձի ժամանակ ը-ն գրվում է նաև զբ, զգ, շպ, շտ, սբ, սկ, սպ, ստ, սփ *և այլ՝ շփական ու պայթականի զուգորդությամբ սկսվող բառերից առաջ, այն դեպքում, երբ այդ հնչյունազուգորդու-թյունները չեն առանցվել հնչյունի սղումով. հմմտ., օրինակ,* ըս-տեղծել, ըս-կը-սել. *բայց՝* սը-տել, զը-տել:

Այս կարգի բառերը տողադարձելիս երբեմն ձևականորեն սկզբից ը է գրվում նաև այն դեպքերում, երբ նախորդ բառը ձայ-նավորով վերջանալու պատճառով ը-ն չի արտասանվում, օրինակ՝ նա ըս-պասեց, *կամ* մի ըս-տիպիր *և այլն։ Այսպիսի դեպքում ը-ի գործածությունը արհեստական է և մեր կարծիքով տեղին չէ։*

Անհասարակ պետք է ասել, որ տողադարձի ժամանակ ը-ի գրության հարցում նկատելի է չարաշահում։ Հաճախ հաշվի չառ-նելով բառի ճիշտ արտասանությունը, հատկապես 3 բաղաձայնի դեպքում, կամայական կերպով վանկատվում է, բառը և ը է գրվում այնտեղ, որտեղ այն ամենևին չի արտասանվում, այսինքն՝ այն-տեղ, որտեղ գաղտնավանկ չկա։ Բերենք մի քանի օրինակ, այս-պես՝ նըրն-վանք, նախա-ցրնել *(ԳԹ, 12/3—1965),* ձեռ-նըրտու *(Հայ. ժող. պատմ., 1962, 31),* բըռ-նըկված *(ՀՉ, 31/10—1965),* ֆըս-տըրմնելի *(ՍԳ, 1965, № 3, 65),* սըփ-յուռք *(ԳԹ, 9/7—1965),* ըս-փըյուռքի *(ԳԹ, 21/10—1965) և այլն։*

Երբ երեք կամ չորս բաղաձայններ հանդիպում են իրար, սո-վորաբար կազմվում է գաղտնավանկ, սակայն բոլոր բաղաձայն-ների միջև չէ, որ գաղտնավանկը կազմվում է, և կամայական ձևով չէ, որ կազմվում է։ Այս հանգամանքը տողադարձի ժամանակ հա-ճախ հաշվի չի առնվում։ Օրինակ՝ Մ(ը)կ(ը)րտիչ *բառում* մ, կ, ր *հնչյունների միջև կազմվում է 2 գաղտնավանկ, սակայն* նրնվանք *բառում* ն, ր, ն *հնչյունների միջև կազմվել է միայն մեկը՝* ն(ը)րն-վանք: *Գաղտնավանկ կազմելու համար, անշուշտ, նշանակություն ունի, թե ինչ բաղաձայններ և ձայնորդներ են իրար հանդիպում։ Այս-պես, օրինակ,* ր *ձայնորդը իրենից առաջ պարտադիր կերպով պա-հանջում է որևէ ձայնավոր (և կամ ը): Հասկանալի է, որ բառում այն չինելու դեպքում կազմվում է ը-ով գաղտնավանկ, և հակառակը՝*

ր-ից հետո վանկատվածք չի կազմվում, օրինակ՝ վարձ-կան. արկ-ղիկ. բարդ-ձել. ճիրճ-վանք և այլն։

Տողադարձի ժամանակ մեզ մոտ հաճախ հաշվի չի առնվում վանկատվածքի գոյությունը տվյալ բաղաձայնների ու ձայնորդնե-րի միջև, և ըստ տպագրական հարմարության գրվում է ը։

Այդ բանը առանձնապես նկատելի է փոխառյալ բառերում կամ օտար հատուկ անուններում, որոնցում տողադարձի ժամանակ ներ-կայումս ը-ն ազատորեն գործածվում է, օրինակ՝ Շե-քսպիր. Ավս-տրալիացի. մաս-շտաբ. էլեկ-տրական. էլեկ-տրակայանք. մինիս-տրություն (ԵԵ, 22/10—1965) և այլն, նույնիսկ բառա-սկզբում՝ ըս-լավոնական (ԳԹ, 27/8—1965), ըս-ցենար (ԳԹ, 2/9—սկզբում)՝ ըՍ-պարտակ և այլն։

Մենք գտնում ենք, որ բաղաձայնական կուտակումները ը-ի միջոցով արտասանելու հայերենի կանոնները չի կարելի տարածել օտար բառերի վրա, որոնցում բաղաձայնական այդպիսի կապակ-ցությունների արտասանությունը սովորական է։ Արդ, եթե տողա-դարձի ժամանակ մենք վանկատման հայերենի կանոնները տարա-ծում ենք օտար բառերի վրա էլ, ապա շատ դեպքերում լիովին աղավաղում ենք բառի արտասանությունը, արհեստական կեր-պով ավելացնելով ը-ով կազմված վանկերի թիվը, ինչպես՝ ըս-ցե-նար, Շե-քըս-պիր. մա-սըշ-տաբ. փոխանակ՝ սցե-նար. Շեքս-պիր. մասշ-տաբ և այլն։ Պետք է ասել, որ այս հարցում առհասարակ միօրինակությունը բացակայում է։

Դեռևս Մ. Աբեղյանը նշում էր տողադարձի ժամանակ բա-ռասկզբում ը-ով վանկ կազմելու անհարմարության մասին, ինչ-պես՝ ըշ-տապել. ըս-կըսել և այլն, խորհուրդ տալով գրել ուղղա-կիորեն առանց ը-ի՝ շտա-պել. սկը-սել. զգու-շանալ և այլն։

Ներկայումս, երբ սկզբնահունչ ը-ի արտասանությունը հասա-րակայնորեն պարտադիր չէ և գնալով ավելի է թուլանում, տողա-դարձի ժամանակ բառասկզբում ը գրելու հարցը մեր կարծիքով վերանայման անհրաժեշտություն է առնում։

Օտար բառերում հայերենի համար խորթ հնչյունական զուգոր-դությունների առկայությունը հաճախ ստիպում է մեզ փոխելու վանկաբաժանի տեղը և ոչ թե արհեստականորեն վանկատելու բա-ռը ըստ հայերենի կանոնների։ Այսպես, օրինակ, հայերենի համար խորթ են կտ. տկ. ցկ. գդ. բգ և այլն հնչյունական զուգորդություն-ները, որոնք մտնում են մի վանկի մեջ, այդ պատճառով էլեկտրա-կան բառը վանկատելիս՝ կ-ն և տ-ն ընկնում են տարբեր վանկերի մեջ՝ էլեկ-տրական և ոչ էլեկտ-րական։ Այստեղ տ և ր հնչյունների

միջև ը գրելու կամ արտասանելու ոչ մի հարկ չկա։ Նույն ձևով պետք է տողադարձ անել, օրինակ, Վիտեբսկի. Մեշկովսկի և նման բառերը և ոչ՝ Վիտեբս-կի. Մեշկովս-կի։

Առհասարակ օտար բառերի տողադարձը մեր կարծիքով չպետք է խստիվ համարեցնել հայերեն բառերի տողադարձին, ինչպես որ, օրինակ, օտար բառերի ուղղագրությունը հայերենում լիովին չի համապատասխանում հայերեն բառերի ուղղագրությանը։

Ս, դ, ն հոդերից առաջ արտասանվող ը-ն դրվում է, երբ հաջորդ բառն սկսվում է ձայնավորով, օրինակ՝ ուսա-նողն առաջ և ոչ՝ ուսանո-ղըն առաջ։ Նմանօրինակ տողադարձի դեպքեր նույնպես կարելի է հանդիպել։

Բարդության երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնից հետո արտասանվող ը-ն ըստ ընդունված կանոնի չպետք է գրել, օրինակ՝ լեռնա-բնակ, ան-կշիռ, բազմա-ճմուտ և այլն։ Բայց այս կանոնը նույնպես խախտվում է բավականին հաճախակի, օրինակ՝ չհա-նըրշան, բազմա-ճըմուտ և այլն։

Թեև ը-ն տողադարձի ժամանակ սովորաբար գործածվում է, բայց երբեմն էլ այն չի դրվում այնտեղ, որտեղ արտասանվում է։

Եթե երկու կամ երեք բաղաձայններից վերջինը ր, ռ, մ, ն, ղ է, ապա այս հնչյունները նախորդ բաղաձայններից արտասանությամբ չեն անջատվում և մնում են միևնույն վանկի մեջ, օրինակ՝ շաղա-կրատել, թան-ձրություն, աս-տղային և այլն։ Պետք է ասել, որ տողադարձի ժամանակ վանկատման երևույթները միշտ չէ, որ հաշվի են առնվում։

Առհասարակ տողադարձի հարցում, հատկապես կապված ը-ի գործածության հետ, դիտվում է մեծ ազատություն, որով հաճախ աղավաղվում է բառի ճիշտ արտասանությունը։

* * *

Հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնք տարբերակում են մեծատառերը և փոքրատառերը։ Մի շարք լեզուներ, ինչպես, օրինակ, վրացերենը, պարսկերենը, արաբերենը, առհասարակ մեծատառեր չունեն։ Տարբեր լեզուներում մեծատառերի գործածության տարբեր մոտեցում կա։ Օրինակ, գերմաներենում բոլոր գոյականները գրվում են մեծատառով։ Բայց մի շարք կանոններ ընդհանուր են մեծատառեր գործածող բոլոր լեզուների համար։ Օրինակ՝ նոր նախադասությունը, մեջ բերվող ուղղակի խոսքը, բանաստեղծական խոսքի ամեն մի տողը, հատուկ անունները մեծատառով սկսելը։

Մեծատառերը նպաստում են, որ գրավոր խոսքից օգտվելը պարզորոշ և դյուրըմբռնելի դառնա։

Հայերենում տարբեր ժամանակներում մեծատառերի գրության տարբեր մոտեցումներ են եղել։

Առաջներում մեծատառերի գործածությունը բավականաչափ ազատ էր։ Մեծատառով էին սկսում զանազան ցեղերի ու ժողովուրդների, ամեն տեսակի միությունների, կազմակերպությունների և հաստատությունների անվանումները։ Սովետական իշխանության առաջին տարիներին մեծատառերի գործածության սահմաններն ավելի ընդլայնվեցին։ Հատկապես այս շրջանում խիստ բնորոշ է մեծատառերի նկատմամբ ցուցաբերված ազատ և կամայական մոտեցումը։ Այդ շրջանում հաճախ մեծատառով էին գրում նույնիսկ սովորական կայուն բառակապակցությունները։ Բերենք մի քանի օրինակ. «Խորհրդային կարգերում գոյություն ունեն Ուղիղ տներ» (ԽՀ, 5/9—1922), «Օրինակելի Խորհրդային ապարատ» (ԽՀ, 9/9—1922), «Անդրկովկասյան դեմոկրատիա», «Հոբելյանական Հանձնաժողով», «Գրողների տուն»,, «Դեպոյի բանվորներ», «Շրջանառու ֆոնդեր», «Կուլտուրայի տան Թատերական խումբը» (ԽԱ, 1934, № 3, 19), «Նրա հետ պիտի կապվեն Տեխստիլ, Մսի կոմբինատի, Երկաթգծի ռուս բանվորները» (ԽԱ, 1936, № 1, 31), «Լոնդոնի միջազգային Ֆեստիվալ» (ԽԱ, 1936, № 36, 78) և այլն։

Մեծատառերի խիստ ազատ գործածություն կար պաշտոնական և դիվանագիտական փաստաթղթերում։

Մեծատառերը այնքան առատությամբ էին գործածվում, որ արդեն սկսել էին իրենց նշանակությունը կորցնել։ Տերմինաբանական կոմիտեն մի շարք որոշումներ ընդունեց մեծատառերի գործածությունը կանոնավորելու նպատակով։

Կարևոր է ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր տերմինաբանական կոմիտեի 1965 թվականի հունվարի 24-ի ընդունած որոշումը բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին[49]։

Եթե պարզ հատուկ անուններում մեծատառերի գործածությունը որևէ դժվարություն չէր հարուցում, ապա բաղադրյալ հատուկ անունների գրության մեջ ճշգրտված կանոնների բացակայության պատճառով ստեղծվել էին լուրջ դժվարություններ, մեծատառերի

[49] Նախագծի վերջնական օրինակը կազմել են Ա. Աբրահամյանը և Հ. Բարսեղյանը, խմբագրել է Գ. Սևակը։

գործածության չպատճառաբանված տարբերություններ և այլն. օրինակ՝ «Հերոսուհի մայր», «Սոցիալիստական աշխատանքի հերոս» գրվում էր մեծատառով, իսկ «Ժողովրդական արտիստ» «Գիտության վաստակավոր գործիչ» փոքրատառով։ Այս որոշումը նպատակ ուներ բաղադրյալ հատուկ անունների գրությունը հեշտացնել և միօրինակություն սահմանել։

Այս որոշմամբ զգալիորեն նեղացվեցին մեծատառերի գործածության շրջանակները և որոշակի կարգ սահմանվեց։

Բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով այն դեպքում միայն, երբ բաղադրյալ հատուկ անունը պետության, Սովետական Միության միութենական հանրապետության կամ ինքնավար մարզի անվանումն է, ինչպես և այն դեպքում, երբ լրացումից ու լրացյալից կազմված բաղադրյալ հատուկ անվան կամ անվանման լրացյալը առանձին վերցրած հատուկ անուն է, օրինակ՝ Սովետական Հայաստան, Միացյալ Նահանգներ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, Սահակ Պարթև, Նոր Արեշ և այլն։

Մինչ այդ, չպատճառաբանված կերպով հանրապետությունների անվանումների բոլոր բառերը գրվում էին մեծատառով, իսկ ինքնավար մարզը, օրինակ, գրվում էր փոքրատառով։ Մեծատառով էին գրվում նաև այնպիսի անվանումների բոլոր բաղադրիչները, ինչպիսիք են, օրինակ, Մեծ արջ, Հրո երկիր և այլն, որոնց երկրորդ բաղադրիչները գործածված են փոխաբերական իմաստով։ Նոր որոշմամբ միօրինակություն սահմանվեց և պարտադրվեց այդ կարգի բոլոր անվանումների միայն առաջին բաղադրիչը գրել մեծատառով։

Մեծատառով են գրվում նաև տառային հապավումների բոլոր բաղադրիչները (բացառությամբ մի քանի բառերի), օրինակ՝ ՍՄԿԿ, ԱՄՆ և այլն։

Մնացած բոլոր դեպքերում մեծատառով է գրվում բաղադրյալ հատուկ անվան միայն առաջին բաղադրիչը։

Եթե բաղադրյալ անվանումները տեղայնացված չեն, ապա դրանք դիտվում են որպես հասարակ անուններ և գրվում են փոքրատառով, օրինակ՝ լեզվի ինստիտուտ, լուսավորության մինիստրություն, պետական պատմական թանգարան և այլն։ Այս կարգի շատ անվանումներ մինչև վերջին որոշումը գրվում էին մեծատառով։

Անշուշտ մեծատառերի գործածության վերաբերյալ վերջին որոշումը պարզություն և կանոնավորություն մտցրեց այդ բնագա-

վարում։ Բայց պետք է ասել, որ դարձյալ ինչ-որ դժվարություններ դիտվում են։ Դա մեր կարծիքով հիմնականում վերաբերում է համառոտված բաղադրյալ անվանումների գրությանը։ Այդ կետը ինքնըստինքյան, իհարկե, հասկանալի է և ճիշտ է, բայց կոնտեքստում, երբ տվյալ հաստատության կամ կազմակերպության տեղայնացումը թեև չի հիշատակվում, բայց միանգամայն հասկանալի է, ապա նման դեպքերում մեզ թվում է, որ այդպիսի բաղադրյալ անվանումը փոքրատառով գրելն այնքան էլ նպատակահարմար չէ։

Թեև ընդհանուր առմամբ պարզ հատուկ անվանումների գրության հարցում դժվարություններ չկան, բայց այստեղ ևս նկատելի են կանոնների խախտման արտառոց դեպքեր։ Բերենք մեկ ակնառու օրինակ, երբ ծաղիկի կամ ծառի տեսակի անվանումը գրվում է մեծատառով։ Այսպես. «Կալա, Հերիկ (ճիշտ ձևն է հիրիկ), Վարդակակաչ, Հակինթ, Նրիցուկ, Վարդ, Հորտենզիա և այլ ծաղիկներ 3 օր մեկ, ինքնաթիռով թարմ վիճակում, Երևանից փոխադրվում են Մոսկվա» (ՍՍ, 25/4—1964), Սանդալի փայտ (ՍՍ, 21/9—1965) և այլն։

Ներկայումս հայերենի ուղղագրությունը ընդհանուր առմամբ ձեռք է բերել հաստատուն ու կայուն բնույթ, թեև տառադարձության մեջ հանդիպող տարաձևությունները ու անմիօրինակությունները հազվադեպ չեն։

Հայերենի տառադարձությունը, որը հայոց լեզվի ուղղագրության անբաժանելի և կարևոր մասն է կազմում, նույնպես վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ենթարկվել է էական տեղաշարժերի, որի վրա մենք կցանկանայինք առանձնակի կանգ առնել։

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի սկզբներին և մանավանդ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, հայոց լեզվի բառապաշարի մեջ օտար լեզուներից մուտք գործեցին բազմաթիվ նոր բառեր, որոնց հայերեն տառադարձությունը այդ շրջանում խիստ անկանոն բնույթ էր կրում։ Օտար բառերի հայերեն տառադարձության համար չկային միասնական և բոլորի համար ընդունելի սկզբունքներ։ Հայտնի չէր, թե ինչը պետք է նկատի ընդունել։ Ոմանք բառը գրում էին այնպես, ինչպես հնչվում է տվյալ օտար լեզվում, ուրիշները այնպես, ինչպես հնչվում է ռուսերենում, ոմանք նկատի էին ընդունում

օտար բառի գրությունը, ոմանք՝ ռուսաց լեզվինը: Այդ բոլորից տառադարձության մեջ ստեղծվել էր մի խառնաշփոթ վիճակ:

Եթե հաշվի առնենք նաև հայերենի արևմտյան համակարգի արևելյանից մեծ չափով տարբերվող տառադարձությունը, որի դրսևորումները շատ հաճախ երևան էին գալիս նաև Արևելյան Հայաստանում, ապա հասկանալի կդառնա, թե ինչպիսի անմխիթարական վիճակում էր գտնվում հայերենի տառադարձությունը 20-ական թվականներին: Այսպես, օրինակ, օտար արտասանությամբ գրում էին՝ Արտյուր. օպպորտյունիստ. օրիժինալ. էվոլյուցիոն, Սիմբոլ. ըստ ռուսերենի արտասանության՝ կամունա, կամունիստ, վագզալ, ըստ ռուսերենի գրության՝ բյուջետ. սյուժետ. Բելուջիստան. Ադրբեջան. խաոս. պաֆոս և այլն: Փարիզ, Բոստոն, Լագարդ, Ջենովա անվանումների կողքին արևմտահայերենի ազդեցությամբ գրում էին նաև Բարիզ, Պոստոն, Լաքարթ, Ճենովա և այլն: Երբեմն ավանդական տառադարձությունը մի կողմ թողնելով գրում էին նոր ձևով, օրինակ՝ Եգուիտ, փոխ.՝ Եգիպտ. Եգուիտական, փոխ.՝ Եգիպտական. Յապոնիա, փոխ.՝ Ճապոնիա:

Պետք է ասել, որ մինչև սովետական կարգերի հաստատումը և նոր ուղղագրության անցնելը, դեռևս 19-րդ դարի վերջերին հայոց լեզվի ուղղագրության հարցերը մշակելիս Մ. Աբեղյանը հատուկ ուշադրություն էր դարձրել նաև հայերենի տառադարձության վրա, մանրամասն քննելով և որոշելով օտար բառերը հայերեն տառադարձելու հնարավորություններն ու միջոցները և սահմանել որոշ կանոններ[50]: Այդ կանոնները, թեև մեծ չափով առնչվում էին հայերենի հին ուղղագրության կանոնների հետ և բնականաբար դրանց մի մասը ըստ նոր ուղղագրության կիրառելի չէր, այնուամենայնիվ Աբեղյանի մշակած տառադարձությունը ոչ միայն ժամանակին իր դերը կատարեց, այլև հիմք հանդիսացավ նոր ուղղագրության համեմատ տառադարձական կանոններ մշակելու գործում:

Տերմինաբանական կոմիտեն իր գործունեության առաջին իսկ օրերից սկսած՝ քննության առավ տառադարձության բնագավառում տիրող խառնակ վիճակը և մշակեց համապատասխան կանոններ: 1939 թվականին պրոֆ. Գ. Սևակի ներկայացրած նախագծի հիման վրա ընդունված որոշումը՝ «Ռուսերենի և օտար բառերի ու տերմինների տառադարձության նորմաների մասին», որով գիտականորեն հիմնավորված կերպով ճշտվում, միօրինակացվում և կամ օրենքի

50 Մ. Աբեղյան. *Հայոց լեզվի ուղղագրությունը, Թիֆլիս, 1892, էջ 43—50:*

ում էր արվում արդեն խիստ տարածված և արմատավորված տառադարձության ճիշտ ձևերին, խիստ կարևոր նշանակություն ունեցավ տառադարձության հարցերը բարելավելու գործում, որով վերջ տրվեցին մինչ այդ տառադարձության մեջ տիրող կամայականություններին: Հայերենի տառադարձության համար հիմք ընդունվեց փոխատու լեզվի արտասանության հարազատ մնալու սկզբունքը, որը ամենաճիշտ ելակետն էր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայերենը փոխառությունների մեծ մասը կատարում է ռուսերենից կամ ռուսերենի միջոցով, որոշվեց օտար բառերի տառադարձության հարցում ելակետ ընդունել ռուսականը, միաժամանակ, իհարկե, նկատի ունենալով և հայերենի ընձեռած հնարավորությունները: Հաշվի առնվեցին նաև ավանդաբար մեզ հասած օտար բառերի և նոր շրջանում կատարված փոխառությունների տառադարձության տարբերությունները:

Հայոց լեզվի պատմության տարբեր շրջաններում փոխառյալ բառերի հնչյունները հայերենում նույն ձևով չեն տառադարձվել: Դա ունի իր մի շարք պատճառները: Այսպես, օրինակ, մենք ունենք լատիներենից փոխառյալ կիտրոն, կենտրոն, կրկես, Կիկերոն, Սիկիլիա բառերը այն ժամանակներից, երբ լատիներենի c-ն այս բառերում արտասանվում էր որպես կ. հետագայում որոշ ձայնավորներից առաջ և այդ բառերում ևս c-ն սկսեց արտասանվել որպես ց, այդ պատճառով ռուսերենում դրանք ունեցան цитрус, центр, цирк, Цицерон, Сицилия ձևերը: Հայերենը սերտ հաղորդակցման մեջ մտնելով ռուսերենի հետ, նորից փոխ առավ цитрус բառը, այս անգամ ռուսերենի տառադարձությամբ և արդեն նոր իմաստով (ցիտրուսային բույսեր և այլն): Սիկիլիայի փոխարեն ընդունվեց Սիցիլիա ձևը, Կիկերոնի կողքին զուգահեռաբար կիրառության մեջ մտավ նաև Ցիցերոն ձևը:

Հայտնի է, որ հնում օտար l-ն հայերենում տառադարձվել է ղ-ով, քանի որ ղ տառով արտահայտված հնչյունը ավելի մոտ է եղել l հնչմանը, քան հայերենի լ տառով արտահայտված հնչյունը: Այդ պատճառով հին տառադարձությամբ ունենք Պաղեստին, Նեղոս, Սողոմոն, Պղատոն, Ապողոն, Աղեքսանդր, Անգղիա, աղփաբետ (алфавит) և այլն, որոնց մեծ մասում այժմ ղ տառով արտահայտված հնչյունի կրած փոփոխության համեմատ փոխվել է և տառադարձությունը: Ներկայումս մենք գրում ենք Պլատոն, Ապոլոն, Ալեքսանդր, Անգլիա: Մի քանի բառում ղ-ի ավանդական տառադարձությունը պահպանվել է, ինչպես՝ Պաղեստին, Նեղոս, Սողոմոն և այլն:

Հին հայերենում չկար ֆ հնչյունը, բնականաբար և դրան համապատասխան գրային նշանը, այդ պատճառով փոխառյալ բառերի ֆ-ն հայերեն տառադարձվում էր փ-ով։ Այդպիսի ավանդական տառադարձություն ունեն, օրինակ, փիլիսոփա, սոփեստ, փարավոն, Փյունիկիա, դելփին, սփինքս, ամփիթատրոն, Պոսփոր և այլն բառերը։ Հետագայում, երբ հայկական այբուբենում ֆ տառը թեև արդեն կար, մի շարք բառեր ավանդության ուժով դարձյալ գրում էին փ-ով, ինչպես՝ Ռափայել, Սոփիա և այլն։ Այս կարգի մի շարք բառերում սկզբում զուգահեռ ձևով սկսեց գործածվել և ֆ տառը, ինչպես՝ դելֆին, սֆինքս, ամֆիթատրոն, Ռաֆայել, Բոսֆոր և դելփին, սփինքս, ամփիթատրոն, Ռափայել, Պոսփոր և այլն, այնուհետև փ-ով ձևերը մոռացվեցին։

Ներկայումս բնականաբար օտար (f, ph) և ռուսերեն ф-ն, հայերեն տառադարձվում են համապատասխան ֆ տառով, օրինակ՝ ֆիլոլոգիա, ֆիլմ և այլն։

Հունարեն β-ն հայերենում հնում տառադարձվել է բ տառով, օրինակ՝ բարբարոս, Բարսեղ, Բաբելոն, Լիբանան, Բաքոս, Արաբիա, Եբրայեցի և այլն։ Այս ձևերը ավանդաբար պահպանվեցին մինչև օրս։ Բայց միջին դարերից սկսած, երբ փոխվեց հունարեն β-ի արտասանությունը, ապա հնչմանը համապատասխան այն սկսեցին տառադարձել վ-ով, օրինակ՝ Վասիլ (հմմտ. նախկին Բարսեղ), ռուսերեն վերահիշյալ հայերեն ձևերին համապատասխան՝ варвар, Вавилон, Ливан, Вакх, Аравия, еврей և այլն։

Հայերենի և ռուսերենի տառադարձական հնից եկող տարբերություններ կան նաև ռուսերենի ф և հայերենի թ տառերի վերաբերյալ։ Հունարենի Θ հնչյունը (th) հայերենում տառադարձվել է թ-ով, օրինակ՝ Թրակիա, Թեսալիա, Թեոդոր, Թեոդոսիա, Հուդիթ, Թեբե, Եթովպիա և այլն, մինչդեռ ռուսերենը՝ ф-ով, ինչպես՝ Фракия, Фессалия, Феодор, Феодосия, Иудиф, Фивы, Эфиопия և այլն։

Մի շարք բառերում պահպանվել է հունարեն ω (օմեգա) տառի հին տառադարձությունը, որը հունարենի o տառից տարբերակելու համար հայերենում հնում տառադարձում էին երկու տառով՝ ով, օրինակ՝ ովկիանոս, Թովմաս, Ովսաննա և այլն (հմմտ. океан, Томас, Осанна)։

Ներկայումս մենք հին լեզուներից անմիջականորեն փոխառություն այլևս չենք կատարում։

Այն, ինչ հնից ավանդաբար մեզ է հասել, այդ մենք մեծ մասամբ պահպանում ենք։ Ինչ վերաբերում է ուշ շրջանի փոխառու-

թյուններին, ասենք, 19-րդ դարի կեսերից սկսած և մանավանդ նորագույն փոփոխություններին, ապա դրանք գերազանցապես հայերենը կատարում է ռուսերենի միջոցով: Իսկ այդ նշանակում է, որ օտար բառերը իրենց ձևով և արտասանությամբ շատ դեպքերում ավելի մոտ են ռուսերենին, քան բուն օտար լեզվին:

Թեև օտար բառերը տառադարձելիս ելակետը հիմնականում համարվում է ռուսական բառաձևը, բայց և այնպես, հայերենը, ունենալով հնչյունական և դրան համապատասխան տառային ավելի լայն հնարավորություններ (հայերենն ունի ը, չ, ձ, ճ, ծ, փ, ք, թ, հ, ղ տառերը, որ ռուսերենում չկան), անհրաժեշտության դեպքում կարողանում է առավել ճշգրտորեն տառադարձել բուն փոխատու լեզվի հնչյունները:

Այսպես, օրինակ, Джорджоне, Гамильтон, Хиросима, Чабукиани, Церетели, Дагестан, Цхалтубо ռուսական ձևերի դիմաց հայերենում ունենք Ջորջոնե, Համիլտոն, Հիրոսիմա, Ճաբուկիանի, Ծերեթելի, Դաղստան, Ծղալտուբո ձևերը, որոնք ավելի հարազատ են արտացոլում բուն լեզվի արտասանությունը:

Կան դեպքեր, երբ մենք, ավանդական տառադարձությունը թողնելով, յուրացրել ենք ռուսական կամ ռուսականին ավելի մոտ ձևը, ինչպես՝ խինին (հին՝ քինին), Շվեյցարիա (հին՝ Զվիցերիա), լաբիրինթոս (հին՝ լաբյուրինթոս), Բոսֆոր (հին՝ Վոսփոր) և այլն:

Մի շարք անունների տառադարձությունը ժամանակի ընթացքում փոփոխվում է, ճշտվում: Օրինակ, մեկ-երկու տարի առաջ ընդունված էին Ճենովա, Լոս-Անժելոս, Վենեցուելա ձևերը, այժմ՝ Ջենովա, Լոս-Անջելոս, Վենեսուելա:

Այժմ առանձնակի կանգ առնենք տառադարձական մի շարք հարցերի վրա:

Սովետական իշխանության առաջին տարիներին, երբ հասարակական-քաղաքական իրադարձությունների հետ կապված՝ հայոց լեզվի բառապաշարի մեջ միանգամից մուտք գործեցին մեծ թվով նոր բառեր, առանձնապես մեծ անկանոնություն երևան եկավ կրկնակ բաղաձայնով բառերի գրության մեջ: Կրկնակ բաղաձայնը տառադարձում էին և՛ մեկ, և՛ երկու բաղաձայնով, ինչպես՝ մասսայական (*Նխ, 22/8—1923*) և մասայական (*ԽՀ, 7/9—1922*), մասսա և մասա (*Մարտ., 1924, № 63*), կոմմունիստ և կոմունիստ (*Նխ, 22/8—1922*), նովելլա (*ԽԱ, 1936, № 1, էջ 2*) և նովելա (*ԽԱ, 1934, № 7, 37*), ինչպես նաև՝ կոլլեկտիվ և կոլեկտիվ, տերրիտորիա և տերիտորիա, Ռոմեն Ռոլլան և Ռոմեն Ռոլան և այլն: Կարելի է այս կարգի շատ օրինակներ բերել, քանի որ մի դեպքում կամայական

կերպով նկատի էր առնվում օտար բառի ռուսական գրությունը, մյուս դեպքում՝ տվյալ բառի հայերեն արտասանությունը:

Այս հարցը կարգավորվեց 1939 թվականին, երբ տերմինաբանական կոմիտեն հատուկ որոշում ընդունեց օտարազգի և ռուսերեն բառերի կրկնակ բաղաձայնները (մմ, կկ, սս, լլ) *հայերեն համապատասխան մեկ տառով տառադարձելու մասին, օրինակ՝* կոմունիստ, կոլեկտիվ, կլասիկ, *բացառությամբ այն դեպքերի, երբ կրկնակ տառի հնչումը պարզ լսելի է, կամ արտասանվում է երկար, օրինակ՝* մասսա, վիլլա[51]: *Բառավերջի կրկնակ բաղաձայնը որոշվեց տառադարձել մեկ տառով, օրինակ՝* Բարբյուս:

Կանոնը ընդհանուր առմամբ թեև հասկանալի է, բայց պետք է ասել, որ բուն այս կանոնի դարձյալ լայն դուռ էր բացվում կրկնակ բաղաձայնների գործածության համար: Բանն այն է, որ օտար բառը հայերեն տառադարձելիս, մանավանդ, երբ այն անծանոթ բառ է, հաճախ դժվար է լինում որոշել, թե տվյալ բառի կրկնակ տառի հնչումը լսելի՞ է, կամ արտասանվում է երկա՞ր, թե՞ ոչ: Եվ ահա, քանի որ այդ կարգի բառերի հայերեն արտասանությունը պարզորոշ չէ, ստացվում է այնպես, որ նորից երևան են գալիս բառի կրկնակ և մեկ բաղաձայնով զուգահեռ ձևեր, ինչպես, օրինակ, հոլլանդերեն, հոլլանդական *և* հոլանդերեն, հոլանդական, ասսիմիլյացիա *և* ասիմիլյացիա, Մարիետտա *և* Մարիետա, դոլլար *և* դոլար, անտեննա *և* անտենա, պասսաժ *և* պասաժ *և այլն:*

Մեր ուղղագրական և այլ կարգի բառարաններում երբեմն նույնպես ընդունված սկզբունքը խախտվում է, օրինակ՝ բետա *(ճառագայթ) և* գամմա *(ճառագայթ):*

Դեռևս Մ. Աբեղյանը նշում էր, որ բառավերջի հնչյունը հայերենում երբեք չի կարելի կրկնել, ինչպես, օրինակ՝ Գրիմ, Ցիմմերման, պրոգրամ, Սկոտ *և ոչ՝* Գրիմմ, Ցիմմերմանն, պրոգրամմ, Սկոտտ[52]: *Այդպես ընդունվեց նաև տերմինաբանական կոմիտեի կողմից: Սակայն պետք է ասել, որ այս կետը ներկայումս խախտվում է մեծ չափով: Հատկապես այդ բանը նկատվում է հատուկ անուններում, ինչպես՝* Ռասկ, Օտտո, Շոտտ, Բոնն, Բոպպ *ինչպես և՝* բիլլ, բոսս, ֆինն, պնեվմոկոկկ *և այլն:*

Կրկնակ բաղաձայնների հաճախակի գործածություն է դիտ-

---

51 *Պետք է ասել, որ հները ևս առաջնորդվել են այդ սկզբունքով, օրինակ՝ գրել են* Թեսալիա, Ապոլոն, Թադեոս *(և ոչ՝* Թեսսալիա, Ապոլլոն, Թադդեոս, *բայց՝* Աննա, Փիլիպպոս:

52 Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի ուղղագրությունը, Թիֆլիս, 1892, էջ 51:*

վում և բառամիջում, դարձյալ հատկապես հատուկ անուններում՝ տեղանուններում և անձնանուններում, օրինակ՝ Հորրս, Միսսուրի, Համմոնդեր, Կասսել, Հեսսեն, Մասսաչուզեթս, Մալակկա, Դոլլինգեր, Ռոկկեյ, մեցցո-սոպրանո, Բոկկաչչո, դը Ֆիլիպպո և այլն, որոնք երբեմն գրվում են նաև մեկ բաղաձայնով։

Հայերենի ուղղագրության համապատասխան՝ առհասարակ կրկնակ բաղաձայնները պետք է օգտագործել շատ սահմանափակ չափերով, այնտեղ, որտեղ դրա անհրաժեշտությունը իրոք զգացվում է, այսինքն՝ որոշակիորեն արտասանվում կամ լսվում է կրկնակ հնչյուն, իսկ այդ բանի որոշելը նպատակահարմար է, որպեսզի վերապահվի միայն տերմինաբանական կոմիտեին, որը պարտավոր է առանձին բառացանկերով հաստատել և հրապարակել կրկնակ բաղաձայնով փոխառյալ բառերի գրությունը։

Ցանկալի է, որ այս հարցը վերանայվի և ավելի մանրամասնորեն մշակվի, նկատի առնելով բոլոր կրկնակ բաղաձայնների դեպքերը, ինչպես՝ ՆՆ, ՓՓ, ՍՍ, ՏՏ, ՄՄ, ԿԿ և այլն։

Ձայնավորների կրկնության հարցում որևէ տարաձայնություն չկա, պահպանվում է օտար բառերի ձայնավորների կրկնությունը նույնությամբ, ինչպես՝ կոոպերացիա, Հաագա և այլն, թեև երբեմն չի արտասանվում։

Մի քանի տասնամյակ առաջ զգալի տարբերություն կար ռուսերենի փափուկ Л-ի հնչյունի տառադարձության հարցում։ Ոմանք լ տառը փափուկ արտասանելու համար վրան դնում էին ապաթարց, օրինակ՝ վալ՚ս, ալ՚բոմ, կոլ՚տուրա[53], ոմանք հաշվի առնելով յ կիսաձայնի փափկացնող դերը և համապատասխան համարելով ռուսերենի МЯГКИЙ ЗНАК-ին, այն դնում էին լ-ից առաջ, երբեմն նույնիսկ լ-ից հետո։ Օրինակ՝ բոլշևիկ բառը գրում էին մի քանի ձևերով՝ բոյլշևիկ, բայլշևիկ, բալյշևիկ, բոլյշևիկ, բոլշևիկ, բալշևիկ (տե՛ս ԽՀ, 19/4—1930, որտեղ գրեթե բոլոր ձևերը կարելի է գտնել), ֆայլշ (ԽՍ, 1936, № 5, էջ 7), Կոմսոմոյլ (ԽՀ, 7/9—1922), նույն սկզբունքով գրում էին՝ կույլտուրա, կուլյտուրա, բայլզամ, բալյզամ, վալյս, Օյլգա, պայլտո, Էմայլ, մեդայլ, պորտֆելյ, ամայլգամ, շամպայն[54] և այլն։

---

[53] Ապաթարցով գրությունը ավելի շատ տարածված էր 19-րդ դարի վերջերին, իսկ 20-ական թվականներին ավելի ընդունված էր լ-ի փափկացումն արտահայտել յ կիսաձայնի միջոցով,

[54] Շամպայն բառը արմատավորվեց հենց այս ձևով։ Օտար փափուկ լ-ն և փափուկ ն-ն Մ. Աբեղյանը գրում և հանձնարարում էր գրել սկզբից յ դնելով։

Այս հարցում միօրինակություն մտավ ուղղագրական կոմիտեի որոշումից հետո (1939 թ.), ըստ որի պարտադրվում էր օտար և ռուսերեն փափուկ ль-ն հայերեն տառադարձել միայն լ-ով, առանց ապաթարցի կամ փափկացնող տառի, ինչպես՝ բոլշևիկ. կուլտուրա, վալս, ալբոմ: Ль-ի տառադարձությունը, իհարկե, չի արտահայտում ռուսական փափուկ, քմայնացած արտասանությունը, բայց այս դեպքում հնչյունատարբերիչ (դիակրիտիկ) նշանների դիմելը, ինչպես որ ոմանք առաջարկում էին, նույնպես նպատակահարմար չէր[55]:

Առհասարակ մի լեզվի բառերը մյուսով տառադարձելիս արտասանական որոշ տարբերությունները և շեղումները անխուսափելի են և սովորական: Այդպիսի դեպքերում սովորաբար չեն դիմում հնչյունատարբերիչ նշանների, այլ բավարարվում են տվյալ լեզվի այբբենական համակարգի ընձեռած հնարավորություններով: Հենց սրանով է գիտական տառադարձությունը առաջին հերթին տարբերվում սովորական տառադարձությունից:

Երկդրություն կար և ռուսերենի բաժանիչ փափուկ նշանով (разделительный мягкий знак) բառերի տառադարձության մեջ. այսպես, գրում էին՝ ֆեյլետոն (ԽՀ, 5/10—1922), ֆելիետոն (Մարտ., 1924, № 53, Նխ, 11/10—1922) և ֆելյետոն (ԽԱ, 1924, № 7, 37), Իլյիչ և Իլիչ (Ա, 7/1—1935), կինո-ատելյե և կինո-ատելյե (ԽԱ, 1934, № 1), բուլյոն և բուլիոն, բարյեր և բարիեր և այլն:

Այս կարգի բառերի ուղղագրության մեջ որոշ պարզություն մտցվեց ուղղագրական կոմիտեի կողմից 1940 և 1944 թվերին հաստատված երկդրություն ունեցող բառերի ճշգրտող ցանկերի շնորհիվ, ըստ այդ ցանկերի, որոնցում զետեղված էին միայն մի քանի այդօրինակ բառեր, հանձնարարվում էր գրել, օրինակ՝ ֆելիետոն, բուլիոն և ոչ՝ ֆելյետոն, բուլյոն և այլն:

Սակայն պետք է ասել, որ այդ հարցի վերաբերյալ կանոնի բացակայությունը պատճառ դարձավ, որպեսզի երկդրությունները դարձյալ շարունակվեն, ինչպես՝ Մոլյեր–Մոլիեր, պրեմյեր–պրեմիեր, ատելյե–ատելիե, կուրյոզ–կուրիոզ, Տոլյատի–Տոլիատի, կան–

---

55 Պրոֆ. Ղափանցյանը, օրինակ, առաջարկում էր ռուսերենի փափուկ լ-ն հայերեն տառադարձելիս կամ օգտագործել հայերենի վյուն տառը [ւ], վերականգնելով այն հայկական այբուբենի մեջ, կամ լ-ի վրա փշիկ դնել՝ լ՛: Այդ առաջարկությունը իրավամբ չընդունվեց (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1951, № 7):

յոն-կանիոն և այլն, մինչև որ 1957 թվականին պրոֆ. Ա. Ղարիբյանի ներկայացրած նախագծի հիման վրա որոշվեց ռուսերեն ье, օտար je-ն բոլոր դեպքերում տառադարձել իե-ով։ Օրինակ՝ Վիետնամ, ֆելիետոն, Մոլիեր, Պոլյոժիե և այլն։ Հակառակ որոշմանը շատ դեպքերում դարձյալ շարունակվում է գրվել յե, կամ ուղղակի՝ ե, օրինակ՝ ռելյեֆ (ԳԹ, 7/5—1965), կարերիստ (ԳԹ, 7/5—1965), ռելեֆ, բարելեֆ (ԳԹ, 7/5—1965), ատելյե (ՀԱ, 1965, № 8, 24), բարելյեֆ (ՍՍ, 22/10—1965) և այլն։

Միօրինակություն չկար նաև օտարազգի ö, ü հնչյունների տառադարձման հարցում, օրինակ՝ ռեժիսոր (ԽԱ, 1934, № 7, 29, 1936, № 1, 16) և ռեժիսյոր (ԽԱ, 1936, № 1, 4), դիրիժոր (ԽԱ, 1934, № 7, 29, Մարտ., 1924, № 58, 4) և դիրիժյոր։ Ընդունվեց յ-ով տառադարձությունը, թեև պետք է ասել, որ այս կարգի բառերի գրությունը մինչև օրս էլ դեռևս լիովին չի կայունացել։ Օրինակ՝ մի բառարանում տրված է ռեժիսյոր ձևը, մյուսում՝ ռեժիսոր, իսկ մամուլում և գրականության մեջ երկտեսակ գրության այսպիսի դեպքերը ավելի հաճախ են։

Ինչ վերաբերում է օտար je-ի տառադարձությանը, որը հիմնականում հանդիպում էր օբյեկտ և սուբյեկտ բառերում և սրանցից կազմված բարդ և ածանցական ձևերում, ապա. այստեղ ևս կրկնակ ձևեր էին գործածվում՝ սուբյեկտ-սուբեկտ, սուբյեկտիվիզմ-սուբեկտիվիզմ (ԽՀ, 3/4—1930, էջ 2—3)։ Նախապես ընդունվեց առանց յ-ի գրությունը, ապա ռուսական և օտար արտասանությանը մոտեցնելու նպատակով 1953 թվականի որոշմամբ մտցվեց ճշտում և պարտադրվեց գրել յ՝ օբյեկտ, սուբյեկտ։

Օտար la, lu և ռուսերենի ля, лю հնչյունակապակցությունները, որ 20-ական, 30-ական թվականներին տառադարձում էին և՛ որպես լյա, լյու, և՛ լա, լու, սկզբում որոշվեց տառադարձել վերջին ձևով, ինչպես՝ տրանսլացիա, ռևոլուցիա և այլն։ Սակայն պետք է ասել, որ այս որոշումը թերի լինելով ընդունելություն չգտավ և չարմատավորվեց։ Դրա պատճառն այն էր, որ լա, լու գրությունը շատ դեպքերում հենց այդպես էլ կոշտ արտասանվում էր, որով բավականաչափ աղավաղվում էր բառի խկական (փափուկ) հնչումը, մինչդեռ լ-ից հետո յ տառի գրությունը մոտեցնում էր բուն փոխատու լեզվի արտասանությանը։ Այդ պատճառով 1939 թվականին տերմինաբանական կոմիտեի ընդունած տառադարձության նորմաների մեջ 1953 թվականին մասնակի փոփոխություն մտցվեց և

որոշվեց ռուսերենի ЛЯ, ЛЮ-ի դիմաց հայերենում գրել լյա, լյու, ինչպես՝ լյապուս, ալյումին, լյումպեն և այլն[56]:

Ռուսերենից և ռուսերենի միջոցով փոխառված բառերում, հատկապես 20-ական թվականներից սկսած՝ ո-ի փոխարեն, շատ դեպքերում, ըստ ռուսերենի արտասանության գրվում էր ա, ինչպես՝ կանֆերենցիա, կամունիստ, կամունա (կամ կամմունիստ, կամմունա) և այլն: Այս երևույթը շատ տարածված էր, այդ պատճառով կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, բայց բավարարվենք մի քանիսը ըստ աղբյուրների նշելով. օրինակ՝ սավետական (Նև, 25/10—1920), կոմատրեադ (ԽՀ, 10/9—1922), կատլետ (ԽՀ, 1/4—1930), պրադուկցիա, Վարոնեժ (ԽՀ, 5/4—1930) և այլն: Ռուսերեն օ-ի դիմաց ըստ արտասանության ա գրելը ավելի տարածված էր ազգանուններում, ինչպես, օրինակ՝ Դաստաևսկի (ՍԶ, ԸՆ, 1955, 403), Պատյոմկին, Վարոնին, Կասսյոր, Վարաբյով, Կալատիլով, Զալատարյով, Կատլյարևսկի, Դաստիգաև (տե՛ս 1922 թ., Խորհրդային Հայաստան): Բայց պետք է ասել, որ ըստ ռուսական արտասանության գրությունը համատարած բնույթ չէր կրում, միաժամանակ գրում էին նաև ո-ով, օրինակ՝ կոմմունա, կոմմունիստ, Վորոնցով, Կոզլովսկի և այլն:

1939 թվականին տերմինաբանական կոմիտեի կողմից հայերենի տառադարձության նորմաները մշակելիս, այս հարցի վերաբերյալ որոշում չընդունվեց:

Երկտեսակ գրություն ունեցող բառերի՝ 1940 և 1944 թվականների ուղղագրական ցանկերում այս կարգի բառերը նույնպես նկատի չառնվեցին (բացառությամբ պոմիդոր բառի, որ հանձնարարվում էր գրել պամիդոր), և կարելի է ասել մի տեսակ կարծես այս հարցը ինքնահոսի մատնվեց: 40-ական թվականներից հետո ռուսերենի օ-ն ա-ով տառադարձելու դեպքերը գնալով նվազում են, թեև մի շարք բառեր շարունակվում են գրվել ա-ով, ինչպես՝ մանտյոր, ակարդեոն, կաստյում, կանֆետ, միկրաֆոն, սաքսաֆոն, պամիդոր, Մասկվա (նաև՝ Մոսկվա) և այլն:

Այս խնդրին տերմինաբանական կոմիտեն անդրադարձավ մեծ ուշացումով, երբ 1963 թվականին[57] հարցը վերջնականապես կարգավորելու և միօրինակություն սահմանելու նպատակով որոշվեց

56 Տերմինաբանական կոմիտեի որոշումից հետո հրատարակված ՀՌԲ-ում հետևողականորեն այս կանոնը չի կիրառված, օրինակ՝ սիմուլանտ, սիմուլացիա, լումպեն, նաև՝ կոմունիկե:

57 Նախագծերը կազմված են Հ. Բարսեղյանի կողմից:

ռուսերենի օ-ի փոխարեն ա գրելը և ա արտասանելը համարել ուղղագրական և արտասանական նորմաների խախտում: Նույն կանոնը տարածվում էր և հատուկ անունների գրության ու արտասանության վրա: Ներկայումս այս կարգի բառերի գրությունը համենայն դեպս, դարձել է հաստատուն և միօրինակ:

Մի ժամանակ անգլերենի օն, օր վերջավորությամբ բառերը (և հատուկ անունները) հայերենում երբեմն տառադարձում էին ըն, ըր-ով, օրինակ՝ Հերսըն, Վիլսըն, դիրեկտըր, լեկտըր (ԽՍ, 1934, N 1, 40) և այլն: Այսպիսի գրությունը տերմինաբանական կոմիտեի կողմից (1939 թ.) ամենայն իրավամբ մերժվեց, քանի որ հակասում էր հայերենի արտասանական օրինաչափություններին, և որոշվեց տառադարձել ըստ օտար գրության՝ Վիլսոն, Հերսոն, լեկտոր և այլն: Տերմինաբանական կոմիտեի 1963 թվականի որոշմամբ այս որոշումը վերահաստատվեց և լրացվեց:

Դարիս սկզբներին ռուսերեն р-ն (օտար r) բառասկզբում և հաճախ բառամիջում ընդունված էր տառադարձել հայերեն ր-ով, օրինակ՝ րեակցիա, րեֆորմ, րեֆերատ, Րուզվելտ, րոմանտիկա, րեժիմ, րուբլի, րիսկ, րեստորան, ժուրնալ, Արնոլդ, Կրիլով, Սարա-Բերնար, Բերլին, Բերն, տերոր (և տերրոր) և այլն[58]: Այնուհետև սրանց կողքին երևան եկան և ռ-ով տառադարձություններ: Երկու ձևերն էլ զուգահեռաբար գործածվեցին, մինչև որ առաջինները աստիճանաբար դուրս մղվեցին և տերմինաբանական կոմիտեի որոշմամբ (1939 թ.) ընդունելի համարվեց ռուսերեն р և օտար r-ով սկսվող բառերի հայերեն ռ-ով տառադարձությունը, ինչպես՝ ռեժիմ, ռեակցիա, ռիսկ, Կռիլով, Բեռլին և այլն:

Բառամիջում օտար r և ռուսերեն р-ի տառադարձման հարցում ներկայումս որոշ անկայունություն այնուամենայնիվ կա: Թեև ըստ կանոնի՝ բառամիջում ռ է գրվում միայն լ-ից և ն-ից առաջ, բայց հանդիպող շեղումները հազվադեպ չեն, օրինակ՝ Շռադեր, Շռումպֆ և հակառակը՝ տուրնե (ՍՍ, 14/10—1965), տուրնիր (ՍՍ), Կալիֆորնիա (ՍՍ), մինչդեռ «Ավանգարդը» գրում է Կալիֆոռնիա:

Փոխառյալ բառերի կրկնակի рр-ն սկզբում հայերեն էր տառադարձվում գրության սկզբունքով՝ երկու ր-ով՝ կորրեկտ, իրրիգացիա, տերրոր, սուրրոգատ, պերրոն, կատարր, Մարր և այլն: Այնուհետև երկու ր-ի փոխարեն սկսեցին մեծ մասամբ ռ գրել,

---

[58] Այս սկզբունքն է կիրառված, օրինակ, 1911 թվականին լույս տեսած Դաղբաշյանի «Լիակատար հայերեն-ռուսերեն բառարանում»:

որ ավելի մոտ էր արտահայտում օտար բառի արտասանությունը, օրինակ՝ կոռեկտ, տեռոր, պեռոն, ինֆլացիա, Մառ և այլն: Բայց, իհարկե, այս տառադարձությունը կայուն չէր, մինչև որ 1939 թվականի տերմինաբանական կոմիտեի որոշմամբ պարտադրվեց օտար երկու рр-ի փոխարեն գրել ռ, բացառությամբ այն դեպքերի, երբ կրկնակ рр-ին հաջորդում է ե կամ ի, օրինակ՝ территория, баррикада, որ հայերենում գրվում են մեկ ր-ով՝ տերիտորիա, բարիկադ: Հատուկ անուններում երկու рр-ն մեծ մասամբ պահպանվում է, օրինակ՝ Հարրի, Հարրիս:

Ավելորդ չէր լինի հիշել, որ հայերենի մի շարք բառեր էլ ենթարկվեցին ուղղագրական այսպիսի փոփոխության, ինչպես՝ երրակի–եռակի, երրօրյա–եռօրյա, երրյակ–եռյակ և այլն, հիմք ունենալով արտասանությունը[59]:

Մի շարք ֆրանսերեն փոխառություններ տառադարձվում էին և՛ ռուսերենի ձևով, և՛ ըստ ֆրանսիական արտասանության, օրինակ՝ սյուժետ և սյուժե (ֆր. sujet), բյուջետ–բյուդջետ–բյուջե (ֆր. budget), պորտրետ և պորտրե (ֆր. portrait) և այլն: Նախապես ընդունվեցին պորտրե, սյուժե, բյուջե ձևերը, որոնք որոշ տատանումներով արմատավորվեցին:

Այս կարգի բառերի տառադարձության հարցում մենք գերադասապես հետևել և հետևում ենք ռուսական տառադարձությանը, ինչպես, օրինակ, ունենք՝ իմունիտետ, պարիտետ և այլն: Բայց և ունենք, օրինակ՝ կոմիտե (ռուս. комитет), բյուջե (ռուս. бюджет), սյուժե:

Ֆրանսիական ձևերը ունեն այն անհարմարությունը, որ ածանցական ձևերից տարբերվում են, օրինակ՝ սյուժե, բայց՝ սյուժետային, բյուջետային, պորտրետային և այլն:

Օտարալեզու ch-ն ավանդական տառադարձությամբ արտահայտվել է հայերենում ք-ով, ինչպես ունենք հնից եկող՝ քիմիա, քլոր, քաոս, քամելեոն, Քրիստափոր, Քրիստոս, Արքիմեդ, Աքիլլես, քրեստոմատիա և այլն: 20-ական, 30-ական թվականներին ավանդական այս տառադարձությունը ոմանց կողմից խախտվում էր և գրում էին ըստ ռուսական տառադարձության՝ խաոս, խամելեոն, խրեստոմատիա և այլն: Այսպիսի խախտումները մասնակի բնույթ էին կրում և շուտով վերացան[60]:

59 Հնում տարր բառից առաջացած տառ ուղղագրական տարբերակը, բոլորովին այլ իմաստավորում է ստացել:

60 Մի քանի տասնամյակ առաջ ընդունված քինին բառի փոխարեն ռուսերենի ազդեցությամբ արմատավորվեց խինին ձևը:

Տերմինաբանական կոմիտեն անդրադառնալով այս հարցին, որոշեց օտարազգի ch-*ն շարունակել տառադարձել* ք-*ով, բացառությամբ (ինչպես ասված է ծանոթության մեջ) շատ տարածված մի քանի բառերի, ինչպես՝* խոլերա. սխեմա. մեխանիզմ *և այլն, որոնք ռուսերենի ազդեցությամբ այդպես են արտասանվել։*

Բայց պետք է նշել, որ այս հարցը կարիք ունի վերանայման։ Իրականությունը ցույց է տալիս, որ նոր փոխառություններում, որ մենք գերազանցապես կատարում ենք ռուսերենի միջոցով, օտար ch-*ն ռուսերենի ազդեցությամբ հայերենում ևս տառադարձվում է մեծ մասամբ* խ-*ով և ոչ՝* ք-*ով, օրինակ՝* սինխրոնիկ. սինխրոնիա, խրոնիկական. խրոնիկա. խրոնոմետր. խրոնիկլեր. խրոնոգրաֆ. խրոնոգրաֆիա. խրոմ. խրոմակաշի, արխիպուս, արխիվ. տեխնիկա *և այլն։ Մեր որոշ բառարաններում զետեղված են նաև* քրոնիկ. քրոնիկական. քրոնոմետր. քրոմ. քրոմոսֆերա *և նման մի քանի ձևեր (ՀՈԲ), բայց կարելի է ասել, որ վերջիններս գրեթե չեն օգտագործվում և չեն արտասանվում։*

Բավականաչափ բազմազանություն կա լատինագիր լեզուների k. t, p, *ռուսերենի* к, т, п *հնչյունների տառադարձության հարցում, որոնք հայերենում* կ. տ, պ-*ով արտահայտվելուց բացի հաճախ տառադարձվել են և այժմ էլ շատ դեպքերում տառադարձվում են նաև շնչեղ* ք. թ. փ. *տառերով։*

Տերմինաբանական կոմիտեն 1939 թվականի տառադարձության վերաբերյալ որոշման մեջ հստակ կետ ընդունեց այն մասին, որ լատինագիր լեզուների k, t, p *և ռուսերենի* к, т, п-*ն պետք է տառադարձել* կ. տ. պ-*ով, օրինակ՝* տերմին. պրոբլեմ։ Թ *տառով տառադարձվում է օտար* th-*ն։ Ի տարբերություն որոշման այս կետի, կան բազմաթիվ շեղումներ, որոնց մասին պետք է նշել։*

Ամենից շատ տարբերություններ են նկատվում տ-*ի և* թ-*ի հարցում։ Մամուլից և գրականությունից բազմաթիվ օրինակներ կարելի է բերել, որոնցում այս կանոնը խախտվում է և նորից, որ բոլորովին ցանկալի չէ, ստեղծվում են երկտեսակ գրությամբ բազմաթիվ փոխառյալ բառեր, օրինակ՝* տրոմբոզ-թրոմբոզ. ատլաս-աթլաս. Պորտուգալիա-Պորթուգալիա. պալեոլիտ-պալեոլիթ. նեոլիտ-նեոլիթ. պետրոլիտ-պեթրոլիթ. օնտոլոգիա-օնթոլոգիա. յակուտական-յակութական. Վատերլոո-Վաթերլոո. Վիլհելմ Տել. Վիլհելմ Թել. տորտ-թորթ. սատին-սաթին *և հակառակը, մի շարք բառեր, որ բուն բառում* th *ունենալու պատճառով պետք է տառադարձվեն* թ-*ով, դարձյալ գրվում են և՛* թ-*ով, և՛* տ-*ով, օրինակ՝*

թերմիդոր–տերմիդոր, աթլետիկա–ատլետիկա, թերապիա–տերապիա, արթրիտ–արտրիտ, պնևմոթորաքս–պնևմոտորաքս, պաթոլոգիա–պատոլոգիա, նևրասթենիա–նևրաստենիա, անթրացիտ–անտրացիտ *և այլն: Պետք է, սակայն, նշել, որ* th-*ի տառադարձության հարցում վերջերս նկատելի կանոնավորություն է մտել և խախտումները հազվադեպ են պատահում:*

Մի շարք փոխառյալ բառերում ավանդաբար գրվում է թ, *ինչպես՝* մազութ, լազարեթ, թունել (թոնել), փութ, Արթուր *և այլն:* t-*թ տառադարձությունը ավելի տարածված է անգլերեն փոխառություններում, քանի որ հայերենի* թ-*ն ավելի մոտ է անգլերենի* t-*ի շնչեղացած արտասանությանը: Այսպես մենք գրում ենք* թենիս *(բառարաններում կա նաև* տենիս *ձևը),* թայմ, թիմ, սիթի, Թոմ, Թոմսոն, Թեյլոր, Ուիթման, *բայց և՝* միտինգ, աուտ, բասկետբոլ, սկաուտ *և այլն:*

Նույնը վերաբերում է k-*ի տառադարձությանը:* k-*ն* կ-*ով կամ* ք-*ով տառադարձելու երկվությունը բնականորեն ավելի բնորոշ էր 20-րդ դարի սկզբներին և նույնիսկ շատ գրքերում այդ շրջանում գերապատվությունը տրվում էր* ք-*ին: Այստեղ պետք է նկատի ունենալ և օտար* que-*ի հարցը, որը զարտուղրին տառադարձվում էր հաճախ* ք-*ով, բայց նշենք, որ առհասարակ որևէ սկզբունք չէր պահպանվում: Օրինակ, գրում էին՝* ֆիզիքա, էսթետիքա, լիրիք, լիրիքա *և՝* ֆիզիկա, էսթետիկա, լիրիկ, լիրիկա: *Երբ* ка-*ով վերջավորվող բառերը ստանում էին ածականական ձևավորում, այդ* ք-*ով գրությունը գրեթե պարտադիր էր դառնում, ինչպես՝* ֆիզիքական, տեխնիքական, տրագիքական, պլաստիքական, տրոպիքական, լիրիքական, կոմիքական, կրիտիքական *(տե՛ս, օրինակ՝ Ն-ԴՄ, 37, 43, 143, 394, Շ, ԵԼԺ, 2, 286, Նև, 1920 և այլն), ինչպես և՝* տաքտիկա, էլեքտրոտեխնիկա, էլեքտրական *և այլն:*

Առհասարակ, պետք է ասել, որ տերմինաբանական կոմիտեի որոշման մեջ que-*ի հարցը, որ առնչվում է օտար* k-*ի հետ, անտեսված է, այն տառադարձվում է երբեմն* ք-*ով, երբեմն՝* կ-*ով, մինչդեռ լավ կլիներ դրանում պարզություն մտցնել:*

Բազմաթիվ տեղանունների և անձնանունների, երբեմն և հասարակ գոյականների k-*ն տառադարձվում է որպես* ք, *ինչպես՝* Քյոլն, Քյոնիգսբերգ, Քեմբրիջ, Քին, Քիչներ, Քենիա, Քովեյթ (Քուվեյթ), Քենեդի, Քենտերբերի, Քենտ, Քեմպ-Դեվիդ, Նյու-Յորք, Յորքշիր, Քեյփթաուն, Աքրա *և այլն, բայց և* Կիփլինգ, Կիպլինգ, կոկտեյլ, կրոս, վիսկի, կենգուրու:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, օտար շատ փոխառությունններում, մեծ մասամբ հատուկ անուններում t-ն, k-ն, ավելի հազվադեպ p-ն ներկայումս հայերենում տառադարձվում են որպես p, ք և փ։ Հաճախ երևան են գալիս և երկդրություններ, օրինակ՝ Թուլուզ–Տուլուզ, Մոնթան–Մոնտան, Էդիթ Փիաֆ–Էդիտ Պիաֆ, Սկոտ–Սքոտ, թայֆուն–տայֆուն և այլն։

Այդ տեսակետից անհրաժեշտություն է զգացվում տերմինաբանական կոմիտեի ընդունած որոշման այս կետը վերանայելու և ավելի մանրամասնելու, հաշվի առնելով նաև աֆրիկյան և հարավասիական լեզուների հարցը։

Օտար բառերի x, ks, նույնը և ռուսերենի кс հնչյունակապակցությունը 20-ական թվականներից առաջ և հետո էլ սովորաբար տառադարձվում էր կս-ով, ինչպես՝ տեկստիլ, էկսկուրսանտ, էկսպերտիզա (Մարտ., 1924, № 56, 59), էկստազ («Նոր կյանք», 25/10—1920) և այլն։ Այդ սկզբունքն է կիրառված նաև Դազբաշյանի Հայ-ռուսերեն բառարանում (1911 թ.)։ 30-ական թվականներին տարածվեցին նաև քս-ով ձևերը, օրինակ՝ տեքստիլ, էքսկավատոր (ԽՀ, 1930), մինչև որ տերմինաբանական կոմիտեի 1939 թվականի որոշումով պարտադրվեց օտար кс-ն բոլոր դեպքերում տառադարձել հայերենում որպես քս, օրինակ՝ Մարքս, բոքսիտ, տաքսի և այլն։ Բուն ռուսական բառերի кс-ն տառադարձվում է կս-ով, օրինակ՝ Ակսակով:

Պետք է ասել, որ այս վերապահումն այնքան էլ պատճառաբանված չէ, քանի որ кс-ն բոլոր դեպքերում արտասանվում է քս, նաև՝ Ակսակով բառում, բացի այդ ռուսական ուրիշ անուններ գրվում են քս-ով, ինչպես՝ Ալեքսեյ, Ալեքսեև և այլն։

Օտար h-ն, որը ռուսերենում տառադարձվում է г-ով կամ x-ով, հայերենում արտահայտվում է համապատասխան հ տառով, օրինակ՝ Համբուրգ (ռուս. Гамбург), Օհայո (ռուս. Огайо), Հաագա (ռուս. Гаага), հիմն (ռուս. гимн), Հերրիս (ռուս. Херрис)[61]։

Սակավաթիվ դեպքերում մեզ մոտ ռուսերենի ազդեցությամբ տարածվել է գ-ով տառադարձությունը, ինչպես՝ Պրագա (Praha, ռուս. Прага)[62], գերբ (լեհ. herb < գերմ. Erbe, ռուս. герб)։

Մի շարք դեպքերում փոխառյալ նոր բառերը կամ հատուկ

---

61 Ռուսերենում առաջ օտար h-ն ավելի շատ տառադարձվում էին х-ով, օրինակ՝ Хейне, Хюго, այժմ Гейне, Гюго.

62 Ներկայումս երբեմն հանդիպում է և Պրահա ձևը։

անունները նախապես ռուսերենի մեջ մուտք են գործում հենց ռուսերենի ձևով՝ գ-ով կամ խ-*ով և հետո միայն ճշտվում, օրինակ՝* խոկկեյ-հոկկեյ (հոկեյ). Խո-Շի-Մին—Հո-Շի-Մին, Խանոյ-Հանոյ. Յաշա Խեյֆեց-Յաշա Հեյֆեց, Տանխայ-Տանհայ, Գոնդուրաս-Հոնդուրաս, Գոլշտեյն-Հոլշտեյն *և այլն:*

Երբեմն սխալմամբ հ-*ով են տառադարձում և օտար* գ-*ն, ինչպես՝* Մանչեստր-Հարդյան, *փոխանակ՝* Մանչեստր-Գարդյան, Հերցեն. *փոխ.՝* Գերցեն, հուշարարի *(ԵԵ, 10/9—1965), փոխ.՝* գուշարարի:

Շախմատ *բառը բուն փոխատու լեզվում արտասանվում է* շահմատ, *բայց մեզ մոտ ռուսերենի ձևով արմատավորվել է* շախմատ *ձևը: Չարենցի մոտ հանդիպում ենք, օրինակ, այս բառի* հ-*ով տառադարձությունը, ինչպես՝* շահմատ, շահմատային, շահմատիստ *(ԸԵ, № 417, 418), բայց և՝* շախմատ *(417):*

Երբեմն օտար հ-*ն, որ կարող է հայերենում ճշտորեն արտացոլվել, ռուսերենի ազդեցությամբ անտեսվում է, օրինակ՝* Դելի. *հնդկական ձևն է* Դելհի, Բիրմինգամ, *փոխանակ՝* Բիրմինհամ: *Այժմ ոմանք գործածում են* Բիրմինհեմ *ձևը (ԳԲ, 25/7—1965): Հայերենում վերջին տարիներս ռուսերենի միջոցով փոխ է առնվել անգլերենի* hangar *բառը, որը հայերենում ռուսերենի նման ստացել է* անգար *(ռուս.* ангар) *ձևը, մինչդեռ պետք է լիներ* հանգար:

Անգլերենի w-*ն ընդունված որոշման համաձայն պետք է տառադարձել հայերենում* վ-*ով, օրինակ՝* Վաշինգտոն, վիսկի. Վիլյամ. Վիլսոն. Վայտեր. *բացառությամբ մի քանի տարածված անունների, ինչպես՝* Ուայլդ. Ուիթման, Ուոլ-ստրիտ. Ուելս: *Բայց պետք է ասել, որ մենք այժմ, հետևելով ռուսերենի տառադարձությանը,* w-*ն գերազանցապես տառադարձում ենք ոչ թե* վ-*ով, այլ ռուսական ձևով, օրինակ՝* Գոլդուոտեր (Goldwater). Ուիտնի (Witny). Դեյլի-ուորկեր. Ուոլլես. Հեմինգուեյ. Բոլդուին *և այլն: Նույնիսկ վաղուց արմատավորված* Վիլյամ *անունը՝* Վիլյամ Շեքսպիր, Վիլյամ Սարոյան. *վերջերս տառադարձում են* Ուիլյամ՝ Ուիլյամ Սարոյան *(«Վեսլի Ջեկսոնի արկածները», Երևան, 1965),* Ուիլյամ Ուեստմորլենդ *(ԵԵ, 22/11—1965),* Ուիլյամ Ֆոլկներ. *որ ոչնչով պատճառաբանված չէ:*

Այնուհետև. կցանկանայինք ուշադրություն հրավիրել տառադարձական առանձին հարցերի վրա, որոնցում բացակայում է պարզորոշությունը:

Անգլերենի a[æ]-*ն, որն արտասանվում է* ա-*ի նման և ռուսերե-*

նում սովորաբար տառադարձվում է e-ով, հայերենում արտահայտվում է ա-ով և է-ով: Պետք է պարզություն մտցնել, աշխատելով պահպանել միօրինակությունը:

Նույնը վերաբերում է և գերմաներենի ei հնչյունակապակցությանը, որը ռուսերենում սովորաբար տառադարձվում է ըստ գրության ей-ով, ինչպես՝ Лейпциг, Шлейхер, Рейхстаг, Бернштейн և այլն, իսկ հայերենում այ-ով՝ Լայպցիգ, Շլայխեր, Ռայխստագ, Բեռնշտայն և ռուսերենի ազդեցությամբ՝ նաև էյ-ով կամ զուգահեռաբար՝ այ-ով ու էյ-ով, օրինակ՝ խոռմեյստեր, զրոսմեյստեր, ցեյխհաուզ, ռայխստագ և ռեյխստագ, ռայխսվեր և ռեյխսվեր և այլն:

Տարընթացություն կա և գերմաներենի բառավերջի dt-ի (օրինակ՝ Schmidt) տառադարձության հարցում: Տարածված է վերջնատառի պահպանմամբ գրությունը, ինչպես՝ Շմիդտ, Հումբոլդտ, Շուխարդտ, Վունդտ, Նեյխարդտ և այլն, որը հայերենի համար խորթ է: Գրում են նաև Շմիդ և այլն: Ընդունելի է առանց վերջին տ-ի պահպանման ձևը:

Ֆրանսերենի de և le հոդը (և նախդիրը) տառադարձվում է և՛ ըստ գրության՝ դե, լե (ռուս. де, ле), և՛ որպես դը, լը, որ շատ մոտ է ֆրանսիական արտասանությանը: Օրինակ՝ le Grand-ը Գրան և լե Գրան, Բոդուեն դե Կուրտենե և Բոդուեն դը Կուրտենե, դը Գոլ և դե Գոլ, Էդուարդո դե Ֆիլիպպո (ՍՀ, 12/11—1965) և Էդուարդո դը Ֆիլիպպո (ԵԵ, 23/4—1965): Նպատակահարմար է ընդունել դը, լը ձևերը:

Անհրաժեշտ է, որ տերմինաբանական կոմիտեն անդրադառնա այս մասնավոր հարցերին և համապատասխան ուղղություն տա:

Դժվարություն է ներկայացնում ռուսերենի ы հնչյունի տառադարձությունը: 20-ական թվականներին այս հարցում ևս միօրինակություն չկար, գրում էին և՛ ը, և՛ ի. օրինակ՝ Յարըշկին (ԽՍ, 1936, № 8, 130), Բուլըշով (ԽՍ, 1936, № 2, 74) և Բուլիշով (ԽՍ, 1936, № 181): Առավել նպատակահարմար համարվեց ընդունել ы-ի տառադարձությունը, քանի որ հայերենի ը-ն ռուսերենի ы-ից շատ ավելի հեռու է, քան ի-ն, նշենք նաև, որ ի գրելով հաճախ արտասանում ենք ռուսերենի ы-ի նման (Բուլըշով ազգանունը մնաց որպես բացառություն):

Ռուսերենի ый վերջավորությունը տառադարձվում էր և՛ իյ-ով, և՛ ի-ով, օրինակ՝ Վասիլիյ, Գորկիյ, Ստանիսլավսկիյ և Վասիլի,

Գորկի, Ստանիսլավսկի։ *Տերմինաբանական կոմիտեն այստեղ ևս ճշգրտում մտցրեց և ընդունեց վերջին ձևը։*

Միօրինակություն չկար ռուսերենի жё, щё, шё, чё *հնչյունակապակցությունների հայերեն տառադարձության հարցում. գրում էին, օրինակ՝* Պուգաչև, Պուգաչով *և* Պուգաչյով. Լիխաչև, Լիխաչյով. Լիխաչով *և այլն։*

Ելնելով ռուսերենի արտասանությունից, տերմինաբանական կոմիտեն որոշեց այդ հնչյունակապակցությունները տառադարձել ժո, շչո, շո, չո, *այսինքն՝* Պուգաչով, Լիխաչով *և այլն։*

Պետք է ասել, որ թեև կանոնը շատ պարզ է ու որոշակի, այնուամենայնիվ ներկայումս խախտումները հազվադեպ չեն, օրինակ՝ Գորբաչևա *(ՍՀ, 22/8—1964),* Կազաչյոկ *(ՍՀ, 22/12—1964)։*

Օտար ua, ui, ue, eo, ea *և այլ երկբարբառները բառամիջում հայերենում հաստատուն տառադարձություն չունեին։ Ներկայումս էլ դրանում տատանումներ կան։*

ua-*ն հայերենում մի շարք դեպքերում արտասանվում է* վա *և երբեմն այդպես էլ գրվում է, օրինակ՝* Էկվադոր *և* Էկուադոր. Էդվարդ և Էդուարդ[63]*։ 30-ական թվականներին և դրանից էլ հետո հանդիպում էին* մավզերիստական *(ԽՀ, 19/4—1930),* բուրժվական *և նման ձևեր, ինչպես սխալմամբ գրում էին ըստ նոր ուղղագրության։* ui-*ն* վի *արտասանվելով նույնպես երբեմն գրվում է այդպես, օրինակ՝* բեդվին *և* բեդուին. ue-*ն՝* վե, *օրինակ՝* Սվեդիա–Սուեդիա։ eo-*ն՝* յո *և* ea-*ն՝* յա *արտասանությունը տեղիք է տալիս երկակի գրության, ինչպես՝* ամյոբա–ամեոբա, կոմպանյոն–կոմպանեոն, Խամելյոն–Խամելեոն *(կա նաև* Խամելիոն*),* Գյորգի *և* Գեորգի, բիլյարդ–բիլիարդ *և այլն։ Այն բառերը, որոնցում նշված հնչյունակապակցությունները հանգես չեն գալիս որպես երկհնչյուն, գրության տեսակետից որևէ դժվարություն չեն ներկայացնում, ինչպես՝* ակտուալ, լեգեոն, գալանտերեա *և այլն։*

Սկզբունքորեն մոտենալով խնդրին, մենք գտնում ենք, որ բոլոր այն բառերը, որոնք հաստատուն կերպով մտել են հայերենի բառապաշարի մեջ, թեև ունեն օտար ծագում (օրինակ՝ ամյոբա, ֆյոդալ, Խամելյոն *և այլն), պետք է ենթարկվեն հայերենի ուղղագրական օրինաչափություններին։*

Որոշ տատանումներ են դիտվում և օտար բառերում ա, ո *ձայ-*

---

63 *Եթե օտարերկրացու անուն է, ապա գրվում է* Էդուարդ, *եթե հայի է, գրվում է* Էդուարդ *կամ* Էդվարդ։

նավորներից հետո (երբ նրանց հաջորդում է ձայնավոր) յ ձայնակապը գրելու հարցում։ Երբեմն, երբ արտասանությունը խիստ կերպով թելադրում է, ա-ից և ո-ից հետո, ինչպես հայերեն ոչ փոխառյալ բառերում, գրում են ձայնակապ, օրինակ՝ արխայիկ, ստոյիկ, մոզայիկա, ռոմբոյիդ և այլն, թեև դա հակասում է օտար բառերի գրության ընդունված կանոնին։

20-ական, 30-ական թվականներին մեծ խառնաշփոթություն կար ռուսերենից վերցված а վերջավորությամբ բառերի վերջին հնչյունը հայերենում գրելու կամ չգրելու հարցում. և պետք է ասել, որ այդ հարցը մինչև օրս էլ դեռ չի կանոնավորվել։

Հեղափոխությունից առաջ և հետո մինչև 30-ական թվականները, առհասարակ միտումը այն էր, որ փոխառյալ բառերի վերջին ա-ն գցվի, օրինակ՝ գրում էին ֆուֆայկ, դրամ (Ն-ԴՄ, 38, 46), մուզիկ, դամ, վազ (Շ, ԵԼԺ, հ. 2, 212, 167, 211), բարոյական նորմեր (ԵՉ, ԸԵ, 405, 417), ինչպես և կոմուն, մոզայիկ, շտանգ, պուդր, տոնն, պրոպագանդ, սպարտակիադ, օլիմպիադ և այլն։ Գործածական էին, իհարկե, և լրիվ ձևերը։

Այս շրջանում գիտվում է առհասարակ փոխառյալ բառերի վերջավորությունների կրճատում, օրինակ՝ էպոպե, պյերե (ԵՉ, ԸԵ, 432, 433)։

Տերմինաբանական կոմիտեի որոշումը (1939 թ.), որով պարտադրվում էր, բացառությամբ մի շարք մասնավորականացած ձևերի, բառավերջի ա-ն պահել, զգալի կանոնավորություն մտցրեց այդ հարցում։ Բայց, ցավոք պետք է նշել, որ այժմ չկա մեկ ընդհանուր մոտեցում այս հարցի նկատմամբ։ Ներկայումս շատ բառեր կան, որ մեկ վերջին ա-ով են գրվում, մեկ՝ առանց ա-ի, օրինակ՝ թեորեմ-թեորեմա, կատաստրոֆ-կատաստրոֆա, բրիգադ-բրիգադա, ֆորմուլ-ֆորմուլա, ռեպլիկ-ռեպլիկա և այլն։

Այս երկվությունների մեծ մասամբ ընկնում է և մեր բառարանների վրա, որոնցում այդպիսի բավականաչափ զուգահեռ ձևեր կան։

Հակառակ տերմինաբանական կոմիտեի որոշման, այժմ նորից միտում է գիտվում բառավերջի ա-ն չպահպանելու։ Այդպիսի ուղղություն է վերցրել, օրինակ, «Ավանգարդ» թերթը։ Գրականության մեջ և մամուլում այդպիսի շատ ձևեր կարելի է հանդիպել։ Հենց միայն երաժշտական տերմիններից կարելի է բերել սյուիտ, ուվերտյուր, օպերետ, կանտատ, սերենադ, պարտիտուր և նման այլ օրինակներ, որոնք հանդիպում են նաև վերջին ա-ով։

Պետք է ասել, որ հայոց լեզվի ոգուն առհասարակ խորթ է վեր-ջին ա-ի պահպանումը և այդ պատճառով է, որ տերմինաբանական կոմիտեի որոշումը վերջին ա-ն պահպանելու մասին, մեր հասա-րակության կողմից չի ընդունվում և չի արմատավորվում: Այս հան-գամանքը անհրաժեշտ է հաշվի առնել:

Եթե ռուսերենից արված փոխառությունների տառադարձությու-նը ընդհանուր առմամբ կանոնավորվել է և ունի որոշակի կանոն-ներ, ապա այդ նույնը չի կարելի ասել հայերենից ռուսերեն կա-տարված տառադարձությունների մասին: Դրա պատճառը մասամբ պարզ է, քանի որ, եթե ռուսերենը հայերեն տառադարձելիս մեզ մոտ մասնակի դժվարություններ են առաջանում (օրինակ՝ փափուկ և կոշտ հնչյունների տառադարձությունը, ы-ի հարցը և այլն), ապա հայերենը ռուսերեն տառադարձելիս՝ այդ դժվարությունները բազ-մապատկվում են, հայերենի ջ, ձ, ղ, հ, փ, ր, ք, ճ, ծ, ը հնչյուննե-րի պատճառով, որոնք ռուսերենում չկան:

Մյուս կողմից, եթե նկատի ունենանք այն բացը, որ հայերենի վերոհիշյալ հնչյունների ռուսերեն տառադարձելու կանոնները վերջ-նականապես դեռևս չեն սահմանվել, ապա հասկանալի է, թե ինչ-պիսի դժվարություններ և տարատեսակություններ կարող են առա-ջանալ այդպիսի հնչյուններով բառերը ռուսերեն տառադարձելիս: Առհասարակ այս հարցում դիտվում է մեծ բազմազանություն: Այս-պես, օրինակ, միայն Հովհաննիսյան *ազգանունը ռուսերենում ունի տառադարձական բազմապիսի ձևեր, ինչպես՝* Оганесян, Оганнесян. Оганезян, Оганисян, Иоганесян, Иоганисян, Иоганнисян, Иоганисиан, Ианесян, Ианисян, Иоаннесян, Иоаннисян *և այլն:*

Հայերենի հ*-ն ռուսերեն տառադարձվում է երբեմն* г*-ով, եր-բեմն բաց է թողնվում, օրինակ՝* Нагапетян, Ваган, Шагинян, Грачя *և* Наапетян, Ваан, Шаинян, Рачя: *Ղ-ն տառադարձվում է* г*-ով* (Гарибян, Газарян), к*-ով* (Капланян, Казарян), *բառա-միջում՝* х*-ով* (Астхик, *նաև՝* Астгик):

Միօրինակություն չկա և ճ*-ի տառադարձության հարցում* (Аджемян, Ачемян):

Կան հայկական մի շարք ազգանուններ, որոնք ռուսերեն տա-ռադարձվելով, այնուհետև հայերենում գործածվում են հենց ռու-սական տառադարձությամբ, ինչպես, օրինակ՝ Սարկիսյան *(նաև՝* Սարկիսով), Դավիդյան, Ավանեսյան, Ավակիմյան, Կևորկով, Աս-ցատրյան, Կազրամանով *և այլն:*

Ներկայումս հայերենի տառադարձությունը անցյալի համեմատությամբ մեծ չափով բարելավվել և կանոնավորվել է, թեև, ինչպես տեսանք, զերծ չէ նաև որոշ բացերից:

Տառադարձական որոշ տարբերություններ, հատկապես հատուկ անուններում, գալիս են հենց ռուսերենի անկայուն տառադարձությունից, օրինակ՝ Болингер *և* Болинджер, Мáрчанд *և* Мáрчэнд *և այլն:*

Տառադարձական շատ սխալներ, հատկապես մեր մամուլում, երևան են գալիս անփութության և անուշադրության հետևանքով, օրինակ՝ ուղեգե. տակսի, ինդեկս. Նեյխարդտ. Իրլանդիա, շարլատան. անտոգոնիզմ. Հորն *և այլն, փոխանակ՝* ուղենե, տաքսի, ինդեքս. Նեյհարդ. Իռլանդիա, շառլատան. անտագոնիզմ. Հոռն *և այլն:*

Տերմինաբանական կոմիտեն մի շարք որոշումներով ճշգրտել և հաստատել է ռուսերենում և հայերենում տարբեր գրություն ունեցող բազմաթիվ աշխարհագրական անունների և պատմական անձնանունների տառադարձությունը, ռուսական և օտարազգի հատուկ անձնանունների շեշտադրությունը և այլն:

5. ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Արտասանական, ուղղախոսական միասնական նորմաների գոյությունը յուրաքանչյուր գրական լեզվի անհրաժեշտ պայմաններից մեկն է:

Բառերի ուղիղ արտասանությունը մեծ նշանակություն ունի խոսքը արագ և ճիշտ ըմբռնելու տեսակետից: Այժմ, երբ հրապարակային խոսքը լայնորեն կիրառվում է հասարակական վայրերում, ժողովներում, հանդիսավոր նիստերում, համագումարներում, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլն, ուղղախոսական նորմաները առանձնապես մեծ նշանակություն են ստանում:

Հենց սկզբից ասենք, որ հայոց լեզվի ուղղախոսության վրա իրենց կնիքն են դրել արտասանական մեծ զանազանություններով՝ արևելահայ և արևմտահայ երկու գրական լեզուների գոյությունը և մանավանդ 40-ին մոտ, հաճախ խիստ մեծ տարբերություններ ունեցող բարբառների առկայությունը:

Չնայած հայերենի ուղղախոսության մեջ ներկայումս տեղ գտած ակնբախ թերություններին, անժխտելի է, որ վերջին 40—50 տարիների ընթացքում, ժողովրդի կրթական մակարդակի բարձրաց-

մանր զուգընթաց հայերենի ուղղախոսության բնագավառում առաջացել են մեծ բարելավումներ։ Ուղղախոսական շատ երևույթներ կանոնավորվել են, ճշտվել և որոշակի դարձել։

Մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը հայերենը չուներ հասարակական այն դերը, որպիսին նա ձեռք բերեց Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ։ Չունենալով պետական լեզվի ֆունկցիա, բնական է, որ հայերենի համար չկային մշակվելու և կանոնավորվելու անհրաժեշտ նախադրյալներ և հնարավորություններ։ Խիստ անկանոն էր ուղղագրությունը։ Այսպես, օրինակ, գրում էին դժգոյն *և* տժգոյն, դժգոհ *և* տժգոհ, անհեթեթ *և* անհեթեղ, գունտ *և* գունդ, բանտ *և* բանդ *և այլն։ Պարզ է, որ ուղղագրական այսպիսի բազմաթիվ կրկնակ ձևերի գոյությունը խանգարում էր միասնական արտասանության հաստատմանը։ Բացի այդ, մինչև 1920 թիվը, հայերեն գրական լեզուն մեծ մասամբ կիրառվում էր միայն որպես գրավոր լեզու։ Գրական բանավոր խոսքին հայ ժողովրդի միայն մի փոքր մասն էր հաղորդակից լինում կամ առիթ ունենում ունկնդիր լինելու, այն էլ դեպքից դեպք։ Հասարակական զանազան միջոցառումները հազվադեպ էին և խիստ սահմանափակ թվով մարդկանց համար։ Հասկանալի է, որ այդ ժամանակ խոսք լինել չէր կարող ռադիոյի, կինոյի մասին, որոնք կենդանի խոսքի տարածման գործում անգնահատելի ծառայություն են մատուցում։*

Այսպիսով, գրական լեզվին տիրապետում էր հայ ժողովրդի մի փոքր մասը միայն, չունենալով ուղղախոսական միասնական նորմաներ։ Գրական բանավոր խոսքը այդ շրջանում միախառնված էր մեծ մասամբ որևէ բարբառի արտասանական առանձնահատկություններով։

Ահա ինչ է գրում 20-ական թվականներին մեր անվանի լեզվաբաններից մեկը՝ Գր. Ղափանցյանը, այդ շրջանի արտասանության մասին։ «Մեր բարբառները դեռ այնքան ուժեղ են, որ բոլոր «դպրոցականներիս» վրա դնում են իրենց ուժեղ կնիքը արտասանության տեսակետից, իսկ դպրոցական ուսուցիչներն էլ կամա թե ակամա պիտի շարունակեն առայժմ այդ գավառաբարբառային արտասանական ընթացքը»։ Այնուհետև, նույն տեղում նա գրում է. «Ո՞վ կարող է ասել, որ, օրինակ, մենք բոլորս միակերպ ենք արտասանում դիցուք թե այսպիսի մի նախադասություն. ամեն ան*գամ հորի մոտով անցնելիս մենք մեզ զգույշ ենք պահում կամ*

մենք գնալու չենք»[64] (Անհրաժեշտ տեղերն ընդգծված են Ղափանցյանի կողմից)։

Կասկածից վեր է, որ ներկայիս «գյուղացիականները» բերված նախադասությունները կարտասանեն միասնական արտասանությամբ։

Նախասովետական շրջանում միասնական ուղղախոսական նորմաների բացակայության պայմաններում գրական բանավոր խոսքում գերիշխում էր բարբառի երևանյան արտասանությունը։ Այդ շրջանում առհասարակ շատ տարածված էր պ, կ, տ, ծ, ճ բաղաձայնների ձայնեղ արտասանությունը ձայնորդ ն, մ, ր հնչյուններից հետո, ինչպես՝ ընդանիք, ընգիր, ամբ, ընձա, ևանճ, ընգեր և այլն։

Բարբառների ուժեղ ներգործությունը մեծ բազմազանություն էր մտցնում նաև շեշտադրության բնագավառում։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո տեղի ունեցած սոցիալական մեծ տեղաշարժերի շնորհիվ գրական լեզվին տիրապետողների կազմը փոփոխության ենթարկվեց։ Գրական լեզվին տիրապետեց նախ և առաջ նոր մտավորականությունը, որը ելել էր բանվորների և գյուղացիների ծոցից։ Նոր սերունդը կրթվեց և դաստիարակվեց սոցիալական նոր պայմաններում։ Քաղաքի և գյուղի կապը գնալով ավելի սերտ դարձավ, և ժողովրդական լայն մասսաները հաղորդակից եղան մեր երկրի մշակութային կյանքին։

Սովետական հասարակության լայն ցանցի տարածման, մինչև հեռավոր գյուղերը հասնող թատրոնների, կինոյի, գեղարվեստական ասմունքի, ռադիոյի և հասարակական-կուլտուրական այլ միջոցառումների շնորհիվ գրական լեզուն և նրա ուղղախոսությունը թափանցեցին ժողովրդական լայն մասսաների մեջ, աստիճանաբար հարթելով ու դուրս մղելով տեղային արտասանական առանձնահատկությունները։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կրթական ընդհանուր մակարդակի բարձրացման շնորհիվ բարբառները աստիճանաբար մղվեցին ետին պլան, բռնելով մահացման ուղին, իսկ գրական լեզուն, ընդհակառակը, գնալով ավելի լայն տարածում ստացավ, կուռ ու միասնական դարձավ թե՛ կառուցվածքով և թե՛ հնչական, արտասանական կողմով։

---

64 Գր. Ղափանցյան. *Արդի հայերենի ուղղագրության խնդիրը. «Տեղեկագիր», ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1927, էջ 64։*

Ինչպիսի՞ բնորոշ գծեր կամ տեղաշարժեր առաջացան հայերենի ուղղախոսության մեջ հայոց լեզվի զարգացման նոր փուլում:

Մենք կարծում ենք, որ այստեղ էական նշանակություն ունեն երկուսը[65]:

Առաջինն այն է, որ հայոց լեզուն իր զարգացման վերջին 40—50 տարիների ընթացքում մեծ չափով ազատագրվեց բարբառային արտասանական մի շարք երևույթներից:

Մյուս հատկանշական կողմն այն է, որ առհասարակ, վերջին շրջանում զարգացման մեծ թափ և ընդգրկում ստացավ գրային արտասանությունը:

Նախահեղափոխական շրջանում օրինաչափությամբ հանդես եկող բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների որոշակի դիրքերում կրած փոփոխությունը այժմ մի շարք դեպքերում բնութագրվում է սակավաթիվ օրինակներով: Այսպես, օրինակ, ղ-ից հետո ձ-ց հնչյունափոխության կանոնին այժմ ենթարկվում են ղեղձ, ղաղձ, մասամբ և՝ ղեղձանիկ բառերը, մինչդեռ մյուս այդ կարգի բառերը, ինչպես՝ խղձ, ատաղձ, մաղձ, բղձական, մղձավանջ, շնչահեղձ, փղձկալ, բաղձանք, գուղձ և այլն, մեծ մասամբ արտասանվում են ըստ գրության:

Ր-ից հետո բազմաթիվ բառերում ձ-ն՝ ց արտասանվելու փո-

---

65 Հայերենի մի քանի հնչյունների արտասանության մեջ որոշ, թերևս շատ թեթև, տեղաշարժ կատարվեց 1922 թվականի ուղղագրական բարեփոխությունից հետո: Այդ վերաբերում է 1-ին հերթին եա, եօ, իւ երկբարբառներին, որ արտասանվում էին յա, յո, յու երկհնչյուններին մոտ և այդպես էլ ըստ ռեֆորմի գրվեցին: Օրինակ՝ հրեայ, արդեօք, արիւն, անկիւն բառերը նոր ուղղագրությամբ գրվեցին հրյա, արդյոք, արյուն, որոնց արտասանությունը այնուհետև լիովին համապատասխանեց նրանց գրությանը:

Այնուհետև, ըստ 1922 թ. ուղղագրական ռեֆորմի՝ մի շարք բառերի բառասկզբի յ-ն գրվեց հ, արտասանությանը մոտեցնելու նպատակով, ինչպես՝ Յակոբ, յիսուն, յեղափոխություն և այլն գրվեցին Հակոբ, հիսուն, հեղափոխություն: Նոր ուղղագրությամբ հիշյալ բառերի հ-ն համապատասխանեց հայր, հաստ, Հայաստան բառերի բառասկզբի հ-ին: Որ յ-ն այդ դիրքում սկզբում հ-ից տարբեր հնչյուն է ունեցել, դրանում կասկած չկա, հետագայում բառասկզբի յ-ն արտասանությամբ մոտեցել է հ-ին, և, ինչպես պնդում էին ոմանք, դրանց թվում և բանասեր Հ. Հովհաննիսյանը, այդ շրջանում (20-ական թվականներին) նրանք որոշակիորեն տարբերել են բառասկզբի յ-ի արտասանությունը հ-ից:

Եթե բառասկզբի յ-ի և հ-ի արտասանական ինչ-որ նրբություն մինչև 20-ական թվականները գրական լեզվում դեռևս պահպանվել էր, ապա 1922 թվականի ուղղագրական բարեփոխությունից հետո այդ արտասանական տարբերությունը միանգամայն հարթվեց և վերացավ:

Նույնը կարելի է ասել և վ, ւ, և ու տառերով արտահայտվող վ հնչյունի մասին:

խարեն, այժմ արտասանվում է որպես ռ, օրինակ՝ արվարձան, բացարձակ, վերամբարձ, ուղերձ, մերձակա, անամերձ, մերձավոր, հերձել, հորձանք, լորձ, արձագանք և այլն:

Փաստ է, որ վերջին ժամանակներս բազմաթիվ բառեր հասարակության մեծամասնության կողմից, հակառակ ավանդական շնչեղ խուլ արտասանության՝ սկսել են արտասանվել գրության ձևով, ինչպես՝ հաջող, հաջողություն, աջակցել, միջոց, միջոցառում, ընդմիջում, եղջերավոր, երջանիկ, առողջություն, անջատ, օգոստոս, զուգահեռ, ընդհատել, մակարդակ, արդի, հրդեհ, հորդորել, ձերբակալել, ներբան: Հատկապես նորակազմ բառերը հակում ունեն արտասանվելու գրային ձևով, ինչպես՝ արգելավազք, զուգափայտեր, ներանցք, ամբարձիչ և այլն:

Ղ-ի՝ խ արտասանությունը շատ բառերում դարձել է անորոշ. օրինակ՝ կողք, շաղկապ, ճեղք, պղտոր, շղթա, ճողկալի, պաղպատ, խիղճ, բողկ, ատաղձ, գաղթ, փեղկ և այլն:

Ներկայումս ուղղախոսության համար խիստ հատկանշական է արտասանական տարբերակների առկայությունը, ինչպես՝ նվագել-նվաքել, իբր-իփր, արձակ-արցակ, ընդօրինակել-ընտօրինակել, միջին-միչին, միջազգային-միչազգային և այլն: Այս փոփոխման կամ շրջման երևույթը գտնվում է իր զարգացման պրոցեսում: Այդ պատճառով, եթե մի շարք բառերի նոր արտասանությունը արդեն կայունացել է, ապա շատերի համար չկա միակերպ արտասանություն:

Առհասարակ ներկայումս գրային արտասանության միտումը դրսևորվում է շատ ուժեղ կերպով և այն տարածվում է ոչ միայն ձայնեղ բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնների վրա: Այսպես, հայտնի է, որ հ-ն հայերենում բառամիջում և բառավերջում մի շարք դեպքերում թույլ է արտասանվում կամ բոլորովին չի արտասանվում, ինչպես՝ խորհուրդ, շնորհալի, շնորհավոր, շնորհակալ, խոնարհ, ընդհանուր, ընդհատել, ընդհակառակը, արհամարհել, աշխարհայացք, չնաշխարհիկ և այլն: Ահա այստեղ ևս գրային արտասանության համընդհանուր ձգտումը արդեն սկսել է որոշ դեր կատարել: Ներկայումս, հատկապես պաշտոնական ելույթների ժամանակ, գրական լեզվով խոսելիս շատերի մոտ բավականաչափ պարզորոշ կերպով այս կարգի բառերում հ-ն արտասանվում է:

Այնուհետև: Ինչպես հայտնի է փոխազդեցական հնչյունափոխության հետևանքով, մասնավորապես առնմանությամբ, մի շարք բառեր, օրինակ՝ բամբակ, Սմբատ, ամբիոն, ամբողջ, ամբար և

այլն, արտասանվում են բանբակ. Անբատ. անբիոն. անբողջ. անբար *և հակառակը՝ համեմատությամբ՝* անպետք. անբասիր. բաժանմունք. անբիծ. անփոխարինելի *բառերն արտասանվում են* ամպետք, ամբասիր. բաժամմունք. ամբիծ. ամփոխարինելի *և այլն: Սակայն նկատելի է, որ վերջին ժամանակներս այստեղ ևս միտում է դիտվում* մ-ն՝ մ, *և* ն-ն՝ ն *արտասանել, բան որ՝ ավելի շատ արտասանում ենք* անպատճառ. անպայման. *բան՝* ամպատճառ, ամպայման *կամ* ամբիոն. ամբողջ *և ոչ՝* անբիոն. անբողջ:

Բառասկզբի չգրվող, բայց արտասանվող ը-ն *(սկիզբ, գդալ և այլն) ներկայումս շատերի կողմից չի արտասանվում: Ռուսերենից փոխառյալ բառերի (և հենց ռուսերենի) ազդեցության հետ մեկտեղ այստեղ ևս դեր ունի նաև գրային արտասանության ձըգտումը:*

Այնուհետև: Նկատելի է, որ յ ձայնակապի արտասանությունը այնտեղ, որտեղ այն չի գրվում, շատերի մոտ զգալիորեն անորոշ է դարձել (այսինքն՝ ու. է, ի *ձայնավորներից հետո, երբ դրանց հաջորդում են ձայնավորներ), ինչպես, օրինակ՝* ռոպեական. բեական. միակ. միանալ. օդաչուական *և այլն: Նույնը դիտելի է մեր կարծիքով* գրելու եմ. սա է, նա էր *և այլն ձևերի մեջ: Այս երևույթը առավել ևս նկատելի է փոխառյալ բառերում, ինչպես, օրինակ՝* պոետ. պոեզիա. պիես. ռեալ. դիետա *և այլն:*

Գրային արտասանության ընդհանուր միտումը առանձնապես զգալի է բ. գ. դ. ձ. ջ *ձայնեղների վերաբերյալ, մի պրոցես, որ նոր չի սկսվել, բայց վերջին մի քանի տասնամյակների ընթացքում մեծ տարածում է ստացել:*

Գրային արտասանության հակումը և զարգացման ընթացքը նկատի ունենալով կարելի է կանխատեսել, որ մի 40—50 տարի հետո, գուցե և ավելի շուտ, գրության և արտասանության տարբերություն ունեցող արդեն միայն մի շարք բացառություններ կմնան լեզվում:

Այժմ, իհարկե, դժվար է ճշգրտորեն որոշել, թե ինչպիսին կլինեն մեր գրական լեզվի ուղղախոսական նորմաները ապագայում, բայց պարզորոշ կերպով երևում է, որ հայերեն գրական լեզվի զարգացումը ընթանում է մի կողմից՝ նեղ, բարբառային արտասանական երևույթներից լիովին ազատագրվելու, մյուս կողմից՝ արտասանությունը գրությանը մոտենալու ուղիով:

Չնայած հայոց լեզվի ուղղախոսության բնագավառում ձեռ

բերված անժխտելի նվաճումներին, ժամանակակից հայերենի ուղղախոսությանը բնորոշ են նաև մի շարք էական թերի կողմեր և խախտումներ, որ առաջանում են արևմտահայերենի, բարբառների և այլ լեզուների ազդեցությամբ:

Ա. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր ուղղախոսության արատներից է բարբառային արտասանությունը: Հայերենի համար ուղղախոսության այսպիսի թերությունը բավականաչափ ակնհայտ է: Հայերենի հարուստ և բազմազան բարբառները իրենց կնիքն են դնում հաճախ գրական հայերենի արտասանության վրա և խանգարում միասնական ուղղախոսությանը:

Ժամանակակից հայերենի ուղղախոսական խախտումներից ներկայումս աչքի են ընկնում առանձնապես արևմտահայկական հատվածի արտասանական առանձնահատկությունների դրսևորումները: Այժմ, երբ Սփյուռքից Սովետական Հայաստան են վերադարձել մեծ թվով հայեր, այդ երևույթը բավականաչափ զգալի է դարձել: Իհարկե, արևմտահայերենը բարբառ չէ, բայց նրա հնչյունական ուրույն առանձնահատկությունները, ըստ որի՝ ձայնեղ բաղաձայնները արտասանվում են շնչեղ խուլ և խուլերը՝ ձայնեղ, մեծ չափով հակասում են արևելահայերեն գրական լեզվի արտասանությանը, խախտելով նրա միասնական ուղղախոսությունը:

Ըստ արևմտահայկական արտասանության՝ բառի հնչական կերպարանքը հաճախ այնպես է փոփոխվում, որ դժվար չէ մի բառի փոխարեն մեկ այլ բառ հասկանալը: Այսպես, օրինակ, պատ. պար. դաս. գայլ. գլոր *բառերն արտասանվում են* բադ. բար. թաս. քայլ. քլոր, *որ արևելահայ արտասանությամբ բոլորովին այլ բան են նշանակում: Բացի այս երևույթներից, արևմտահայերենը ունի հնչական մի շարք այլ առանձնահատկություններ ևս, մանավանդ, հնչյունափոխության մեջ, ինչպես, օրինակ՝* չուրի քնալ. դունին մէջը *(ջրի գնալ, տան մեջ) և այլն, որոնք մեծ չափով տարբերվում են արևելյան հայերենի օրինաչափություններից:*

Արևմտահայկական արտասանությունը մեզ մոտ մի կողմից նվազում է, քանի որ այդ լեզվին կրողները աստիճանաբար յուրացնում են արևելահայերեն գրական լեզվի ուղղախոսությունը, մանավանդ երիտասարդները և մատաղ սերունդը, որոնց համար դա

որևէ դժվարություն չի ներկայացնում, մյուս կողմից՝ այդպիսի արտասանությունը շարունակում են զգացնել տալ հայրենադարձության նոր ալիքները։

Նշելի է, որ եթե մեր բարբառային արտասանական առանձին երևույթներ մասնակի տարածում են գտնում, ապա արևմտահայերենի հնչական առանձնահատկությունները որևէ չափով չեն ազդում կամ փոփոխում արևելահայերենի արտասանությունը։

Բացի արևմտահայկական արտասանությունից, մեզ մոտ առավել տարածված և զգալի են Կարնո (Լենինականի), Ղարաբաղի և Արարատյան բարբառի խոսվածքների հնչյունական առանձնահատկությունների դրսևորումները։ Նկատելի են նաև այդ բարբառների ազդեցությունները։ Այսպես, օրինակ, երբեմն կարելի է լսել այսպիսի արտահայտություններ, «կրրըմ տալիս էն ձեռը», «ընդանիքս տանեմ», «մի երգարացրու», «երգիրը կործանվեց», «փուշար դեբեցին», «սունչս կտրվեց», «ուղարկում ես», «սույմանն անցավ», «ձույն ա գալի», «սեյնակը մաքրեց», «էլեկտրական սույներ», «կաղնած մնացի», «կայնի գամ», «ունեամ», «հեռով», «դեռասան», «սեռունդ» և այլն։

Երբեմն կարելի է լսել, երբ բառն արտասանում են առանց հնչյունափոխության, որ ուղղախոսական կոպիտ սխալ է, օրինակ՝ ձուկից բույնավորվել. գույնավոր մատիտներ, միջանական տունս և այլն։

Սակայն ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ այսպիսի երևույթները, որոնք դեռևս զգալ են տալիս, նկատելիորեն նվազել են, հատկապես վերջին շրջանում և գնալով վերանում են։

Ներկայիս ուղղախոսության զգալի թերություններից է շեշտադրության մեջ առկա բազմազանությունը և անկայունությունը։ Խոսակցական լեզվում խիստ տարածված է բարբառային շեշտադրությունը, որը ոչ միայն ետին պլան չի մղվում, այլև գնալով տարածվում և թափանցում է գրական լեզվի մեջ։

Առօրյա խոսակցության ժամանակ և հաճախ նաև գրական լեզվով խոսելիս ոչ հազվադեպ արտահայտվում է բարբառային շեշտադրությունը։ Գրական հայերենի վերջադիր շեշտադրությունը սովորաբար պահվում է ընթերցման ժամանակ։

Գրային արտասանությունը, այսինքն բառերի հնչումը այնպես, ինչպես նրանք գրվում են, թեև ընդհանուր առմամբ ցանկալի և գրական երևույթ է, բայց և այնպես առայժմ ավանդական կայուն արտասանություն ունեցող մի շարք բառերի արտասանության խախտումը և գրության ձևով արտասանելը իրավամբ դիտվում է որպես ուղղախոսական նորմայի խախտում։

Գրային արտասանության խնդիրը հայերենի ուղղախոսության ներկայիս ամենաբարդ և կարելի է ասել շատ դեպքերում նույնիսկ անլուծելի խնդիրներից մեկն է։ Բանն այն է, որ հայերենում ներկայումս շատ ուժեղ կերպով գործում է բառերը գրության ձևով արտասանելու միտումը, և արդեն մի շարք բառեր վերացրել են իրենց նախնական արտասանությունը (օրինակ՝ օգոստոս, հրդեհ. հաջող *և այլն), իսկ բազմաթիվ բառեր էլ անհաստատ արտասանություն ունեն և երբեմն նույնիսկ դժվար է որոշել, թե դրանցից որը պետք է ճիշտ համարել, ավանդակա՞նը, թե՞ նորը՝ գրության համապատասխանը, տարածվածը և ընդհանուր առմամբ ցանկալին։*

Այս հարցում, պետք է ասել, որ կա մեծ տարընթացություն և հակառակ միտումներ։ Այդ տարբեր միտումները, որ շատ ցավալի է, դրսևորվում են նաև դպրոցական դասագրքերում և ձեռնարկներում։ Դպրոցական դասագրքերում գրության և արտասանության տարբերությունները հաճախ բացատրվում են բավականաչափ անորոշ կերպով, սահմանափակվում են մեկ-երկու օրինակով, մինչդեռ այդ կարգի մնացած բառերի արտասանությունը մնում է անորոշ։ Ավելի նպատակահարմար կլիներ դասագրքերում բերել հնարավորին չափ լրիվ բառացանկեր, նշելով ճիշտ արտասանությունը։

Կենդանի խոսակցական լեզվի հնչմանը հակառակ արտասանությունը ուղղախոսական նորմաների խախտում է և անշուշտ մերժելի է։ Այսպես, օրինակ, ոմանց մոտ կարելի է լսել, երբ կենդանի. կարդալ. արդեն. երբեմն. անգամ. դարձյալ. ճարել. Վարդանի. լյարդ *և նման բառերը արտասանում են արհեստական կերպով, այնպես, ինչպես գրվում են։ Ուղղախոսական այս թերությունը հանդես է գալիս ավելի շատ բարբառախոսների, ինչպես նաև ռուսական միջավայրում ապրած ու ռուսական կրթություն ստացած հայերի մոտ, որոնք հայերենի կենդանի խոսակցական հնչմանը մոտ կանգնած չլինելու պատճառով հաճախ բառերն արտասանում են այնպես, ինչպես գրվում են։*

Գ. ՓԱՓԿԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՄԱՅՆԱՑՎԱԾ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ ԱՅԼ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի ուղղախոսական թերություններից է փափկացված կամ քմայնացված արտասանությունը, որը հանդես է գալիս հատկապես փոխառյալ բառերում և երբեմն նաև ոչ փոխառյալ բառերում:

Այսպիսի արտասանությունը պայմանավորված է ռուսաց լեզվի քմայնացված կամ փափուկ արտասանության ազդեցությամբ: Սա ռուսերենի ազդեցությամբ առաջացած ամենատարածված և ամենաբնորոշ արտասանական առանձնահատկությունն է, երբ Ե, Ի ձայնավորներից առաջ դ-ն և տ-ն միջնալեզվային արտասանությամբ հնչվում են փափուկ՝ դ-ն՝ ձ-ի և տ-ն՝ ծ-ի նման, ինչպես, օրինակ՝ ձիրեկտոր, անծիպածիա, պոլիծեխնիկ, պրեզիձենտ, ակաձեմիա, ծելեվիզոր և այլն:

Այսպիսի փափկացված արտասանությունը ոմանք փոխառյալ բառերից բացի տարածում են և հայերեն բնիկ բառերի վրա, ինչպես՝ ածենակալ, ձիակ, դասծիարակել, արձիական, սնոծիապաշտ, ծիեզերք և այլն, կամ՝ Ծիգրան, Մարծիրոսյան, Ավեծիկ, որ ականջ ծակող թերություն է:

Ռուսական կրթություն ստացած կամ ռուսական միջավայրում ապրած շատ մարդկանց մոտ նկատվում է, տ-ից և դ-ից բացի այլ հնչյունների փափկացում ևս, որ միանգամայն խորթ է հայերենի արտասանության, ինչպես, օրինակ՝ Նյելյա, Նյինա, սյեկտոր, Սյիմա, Մանյերա և այլն: Երբեմն ռուսական ձևով կամ փափկացումով արտասանում են և հայերեն բառերը, ինչպես՝ տարբիեր, չիլ, Դառնյիկ, Անյիկ, ջանյիկս, արվիեստ և այլն:

Ռուսերենի ազդեցությամբ նկատվում է և բառավերջի լ-ի փափկացում, օրինակ՝ նորմալ, մորալ, ակտուալ, բայց այս երևույթը խիստ մասնակի է:

Հայերենում բաղաձայնները մեծ մասամբ արտասանվում են կոշտ, բայց երբ նրանց հաջորդում է յ կիսաձայնը, ապա բնականաբար նախորդ բաղաձայնները մասամբ քմայնանում են, օրինակ՝ պատյան, արդյոք, լուրյան և այլն:

Դիտելի է, որ տ-ն և դ-ն յ-ի զուգորդությամբ ներկայումս շատ դեպքերում արտասանվում են լրիվ քմայնացումով, օրինակ՝ մատյան, արդյունավետ, Կատյա, Վիտյա և այլն:

Մեծ տարածում է ստացել հատկապես բառավերջի ություն

ածանցի թ-ն լրիվ քմայնացումով արտասանելու երևույթը, երբ թ-ն գրեթե չի տարբերվում ց-ից:

Պրոֆ. Է. Աղայանը գտնում է, որ այս երևույթն առաջացել է սկզբում այնպիսի բառերում, որտեղ ց կա, ինչպես՝ խոսակցություն, մրցություն, մասնակցություն, և այնուհետև համաբանությամբ տարածվել նաև բոլոր ություն-ով վերջացող բառերի վրա[66]:

Պրոֆ. Աղայանի այս ենթադրությունը մեզ այնքան էլ հավանական չի թվում, քանի որ թյ հնչյունների զուգորդությունը այլ կարգի բառերում, օրինակ՝ թյուր, արդյունք, արդյոք (դ-ն արտասանվում է թ) նույնպես այդպիսի՝ ց-ին մոտ արտասանություն է ստանում:

Սակայն պետք է ասել, որ վերջին ժամանակներս ուղղախոսական այս թերության դեմ պայքարը դրական արդյունքներ է տվել և այժմ որոշակիորեն դրանում բեկում է նկատվում:

Ներկայումս և՛ հաղորդավարների, և՛ բեմական խոսքում, և՛ ընդհանրապես գրական մայրենի լեզվով խոսողների մոտ հաճախ կարելի է լսել ություն ածանցի և քմայնացման ենթակա մյուս հնչյունների ճիշտ արտասանությունը:

Առհասարակ ուրախալի է այն փաստը, որ մեր հասարակությունը, հատկապես վերջին շրջանում հանդես է բերում բավականաչափ աչալրջություն և գիտակցականություն, հեշտությամբ և առանց ափսոսանքի հրաժարվում է մեր լեզվի մեջ անհարկի կերպով մուտք գործած զանազան օտարաբանություններից և մեր լեզվին անհարազատ ու խորթ արտասանական հնչական մի շարք երևույթներից:

Ռուսերենում ր-ն ըստ դիրքի արտասանվում է փափուկ (օրինակ՝ ремень, Марина) և կոշտ (օրինակ՝ рота, опера): Ռուսերենի այս կանոնը, հատկապես ռուսախոս մարդկանց մոտ, երբեմն դրսևորվում է և հայերենում, ինչպես, դարձյալ ավելի շատ փոխառյալ բառերում, օրինակ՝ կիլոգռամ. առոմատ. դռամա. Վենեռա. ինչպես և հառուստ. դռական. պառբեռական. Մառո. Առփիկ. Առամ Խաչատուռյան և դրա հակառակը՝ կրիվ. ձմերել և այլն:

Մի շարք գյուղերում ր-ն և ռ-ն մեկը մյուսի փոխարեն արտասանելու պատճառով աղավաղվում է բառերի իմաստը, քանի որ դրանք հայերենում, ի տարբերություն ռուսերենի, առանձին հնչույթներ լինելով, ունեն իմաստատարբերակիչ հատկանիշներ, ինչ-

66 Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1952, էջ 169:

պես՝ սեր–սեռ, դեր–դեռ, լուր–լուռ, համար–համառ, վարել–վառել *և այլն։ Օրինակ՝* վարել *բառի փոխարեն, երբ ասում են՝ «Սարգսյա*նը վառել *է ամբողջ գործերը» հասկացվում է, որ «Սարգսյանը այրել է ամբողջ գործերը»։* Ր-*ն՝* ռ *արտասանելու թերությունը առանձնապես ակներև է բեմական խոսքում։*

Այնուհետև, բավականաչափ տարածված է ռուսերենից փոխառյալ բառերում ռուսերենի նմանողությամբ ո-*ն՝* ա– *արտասանելու երևույթը, ինչպես, օրինակ,* Վալոդյա, կանֆետ, մանտյոր, ակարդեոն, կաստյում, Մասկվա, Վարաշիլով *և այլն, փոխանակ ըստ գրության* Վոլոդյա, կոնֆետ, մոնտյոր, ակորդեոն, կոստյում, Մոսկվա, Վորոշիլով *արտասանելու։*

Այսպիսի արտասանության տարածմանը մեծ չափով նպաստել է, անշուշտ, և սխալ գրությունը, այսինքն՝ ըստ ռուսական արտասանության՝ կանֆետ, պամիդոր *և այլն գրելը, որ ընդունված էր մինչև 50-ական թվականները։*

Պետք է ասել, որ ուղղախոսական այս թերության վրա մասնավորապես, լուրջ ուշադրություն դարձվեց միայն վերջին ժամանակներս, երբ տերմինաբանական կոմիտեի հատուկ որոշմամբ[67] *հայերենի նորագույն փոխառությունների գրության և արտասանության մեջ միանմանություն պահպանելու համար* օ (ո) *ձայնավորի՝* ա *կամ* ը *արտասանությունը համարվեց ընդունված արտասանական կանոնների խախտում և պահանջվեց գրել և արտասանել* օ (ո), *ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ անուններում։ Շատ ուրախալի է, որ սխալը ուղղվում է, բայց պետք է ասել, որ դրա ծանրությունը այսօր ընկած է միայն մեր ռադիոյի և հեռուստատեսության հաղորդավարների վրա։*

Ուղղախոսական զգալի թերություն է, երբ վերջավանկի ո-*ն արտասանվում է* ը, *ինչպես՝* սեկտըր, դիրեկտըր, պրոֆեսըր, ռեկտըր, Վիկտըր. *նաև հոգնակիում՝* ագիտատըրներ, պրոֆեսըրներ *և այլն։ Այս հարցում, անշուշտ, մեծ դեր է խաղում շեշտադրությունը, քանի որ նախավերջին վանկի վրա դրվող շեշտը նպաստում է, որ վերջահանգ* ո-*ն թույլ արտասանվելով վերածվի* ը-*ի, մինչդեռ հայերենին հատուկ վերջավանկ շեշտադրությունը ապահովում է և վերջավանկի ճիշտ արտասանությունը։*

Ուղղախոսական թերություն է նաև, երբ մի շարք փոխառյալ

---

67 Նախագիծը կազմել է Հ. Բարսեղյանը։ Հաստատվել է 1963 թ. հուլիսի նիստում։

բառերում ռուսերենի նմանողությամբ ե հնչյունի փոխարեն արտասանվում է ի, ինչպես, օրինակ՝ պինիցիլին, պիսիմիզմ, դիֆիցիտային, փոխանակ՝ պենիցիլին, պեսիմիզմ, դեֆիցիտային արտասանելու:

Առանձնապես ուշադրության արժանի է փոխառյալ բառերի շեշտադրության հարցը, որտեղ, չնայած տերմինաբանական կոմիտեի կայացրած որոշումներին, դիտվում է բավականաչափ մեծ տարընթացություն և անկայունություն:

Հատկապես աչքի է ընկնում փոխառյալ բառերի թեք ձևերի սխալ շեշտադրությունը, թեև որոշվել է, որ փոխառյալ բառերի թեքված ձևերը պետք է արտասանվեն հայերենին հատուկ վերջադիր շեշտադրությամբ: Պետք է ասել, որ այդ սխալից զերծ չեն մնում նույնիսկ հաղորդավարները և դերասանները: Շատ հաճախ կարելի է լսել, երբ արտասանում են պա՛րտիայի, կո՛րպուսի, ֆի՛զիկայի, մեխա՛նիկայի և այլն, փոխանակ, ինչպես ընդունված է, շեշտը վերջին վանկի վրա դնելու:

Փոխառյալ բառերի ուղիղ ձևերի շեշտադրությունը թեև չի կայունացել և նկատելի են տատանումներ, բայց և այնպես օտար բառերը ևս հայերենի վերջադիր շեշտադրությամբ արտասանելու միտումը այժմ ակնհայտ է: Մի բան որոշակի է, որ լայն տարածում ստացած կամ ամբողջ հայ ժողովրդի բովով անցած բառերում կայունացել է վերջավանկ շեշտադրությունը, ինչպես, օրինակ՝ ատո՛մ, շախմա՛տ, տրակտո՛ր, սիլո՛ս, միտի՛նգ, ավտոբո՛ւս, տրոլեյբո՛ւս, տերմի՛ն, կաբե՛լ և այլն:

Անհասարակ պետք է ասել, որ հատկապես օտար բառերը լեզուներում հաճախ անկայուն շեշտադրություն են ունենում: Այդպիսի շատ օրինակներ կան նաև ռուսերենում:

Բացի վերը հիշված թերություններից, հայերենում, հատկապես հայկական լրիվ կրթություն չստացած անձանց մոտ, երբեմն դիտվում են ուղղախոսական մի շարք ոչ ցանկալի երևույթներ, որոնք առաջանում են ավելի քաղաքակիրթ ներկայանալու ձգտումից: Դրանք արտասանական աղավաղումներ են, ավելորդ փափկացումներ և այլն: Այսպես, օրինակ, ոչ հազվադեպ կարելի է լսել, երբ արտասանում են համբյուր, համբյուրել, փոխանակ՝ համբույր, համբուրել, քնքույշ, փոխանակ՝ քնքուշ, ընտանյական, փոխանակ՝ ընտանեկան, ցյուրիմացություն, փոխանակ՝ թյուրիմացություն, գոնյա, փոխանակ՝ գոնե: Այստեղ կարելի էր բերել և անտեղի քմայնացման շատ օրինակներ, բայց դրա մասին մենք արդեն խոսել ենք:

Մի շարք ուղղախոսական, իհարկե ոչ տարածված, սխալներ են դիտվում՝ առաջացած փոխազդեցական հնչյունափոխության հետևանքով։ Այսպես, օրինակ, երբեմն կարելի է լսել, երբ արտասանում են ունդունել. ունդունակ. արտասավոր, ասեցեք. տրանվա, կոմինիստ(ական). մարմալադ *(և նույնիսկ՝* մալմալադ). *փոխանակ* ընդունել. ընդունակ. արտասովոր. ասացեք. տրամվայ. կոմունիստ(ական). մարմելադ *արտասանելու։ Հաճախ անհարկի կերպով զցում են բառավերջի հնչյունը, ինչպես՝* առաջի. վերջի. ուրեմ(ը). այսինք(ը). *փոխանակ* առաջին. վերջին, ուրեմն. այսինքն *արտասանելու. կամ ավելացվում է* ը. *օրինակ՝* ո՞ւմ(ը) տվեցիր. պետք(ը) կգա։

Ոմանց մոտ դիտվում են աղավաղումներ՝ առաջացած բաղարկության հետևանքով։ Այսպես, օրինակ, քանի որ վարք *բառի իմաստը ավելի մոտիկ է, քան* վարկ-*ինը,* վարկաբեկելը *հաճախ դարձնում են* վարքաբեկել, *նույն ձևով՝* այլասերվելը՝ այլասեռվել։ Տարկետումը *կապվելով* տարի *բառի հետ հաճախ արտասանվում է* տարեկետում. նախատեսելը՝ նախատեսնել. իրավամբը՝ իրավմամբ *և այլն։*

Ուղղախոսական որոշ հարցեր կարիք ունեն պարզաբանման։

Այսպես, օրինակ, բառամիջում բաղաձայնների և ձայնորդների կուտակումներում, հատկապես, երբ երեք և ավելի բաղաձայն ու ձայնորդ հնչյուններ հանդիպում են իրար, մի շարք դեպքերում ներկայումս գաղտնավանկը չունի հաստատուն կամ կայուն դիրք և հաստատուն արտասանություն։ Այսպիսի դեպքերում ոմանց կողմից գաղտնավանկը կազմվում է մի դիրքում, մյուսների՝ մեկ այլ։ Երբեմն կարող է նաև բոլորովին չարտասանվել, կամ արտասանվել այնտեղ, որտեղ պետք չէ։

Վերցնենք այդպիսի մի շարք բառեր, օրինակ՝ պատժվել. ընկճվել. պճնվել. բռնկվել, *որոնք արտասանվում են և՛ որպես* պատ(ը)ժվել. ընկ(ը)ճվել. պճն(ը)վել. բռն(ը)կվել. *և՛* պատժ(ը)վել. ընկճ(ը)վել. պճ(ը)նվել. բռ(ը)նկվել։

Մի շարք դեպքերում գաղտնավանկ է ավելացվում այնտեղ, որտեղ պետք չէ, օրինակ՝ ընկնել. կրկնել. պրկվել. նրճվել, տնտղել. քրտնել. խրտնել. փշրել *բառերը հաճախ արտասանվում են նաև* ընկ(ը)նել. կրկ(ը)նել. պրկ(ը)վել. նր(ը)ճվել, տնտ(ը)ղել. քրտ(ը)նել. խրտ(ը)նել. փշ(ը)րել։ *Կայուն չէ գաղտնավանկի դիրքը, օրինակ,* քստմնելի *բառում, որ արտասանվում է* քստ(ը)մնելի *և* քստմ(ը)նելի։

Ը-ի արտասանությունը անհաստատ բնույթ ունի մի շարք գերբերում, երբ որևէ ձայնավոր սղված է, օրինակ՝ ծամածություն և ծամած(ը)ություն, ածխածնի և ածխած(ը)նի, երդմնագրում և երդ(ը)մնագրում և այլն:

Պետք է ասել, որ հենց մեր լեզվաբանների շրջանում կատարված վիճակագրական թեթևակի փորձը վերոհիշյալ բառերի արտասանության հարցում, միասնական արդյունքի չհասցրեց, իսկ այդ նշանակում է, որ այստեղ իրոք որոշ անկայուն վիճակ գոյություն ունի:

Արտասանական որոշ տարբերություններ անշուշտ բխում են հայերենի հնչյունական զանազան զուգորդությունների բնույթից, որոնք դժբախտաբար դեռևս ուսումնասիրված չեն: Արտասանության հարցում հաճախ նշանակություն ունի բացի այն, թե քանի բաղաձայն և ձայնորդ են իրար հանդիպում, նաև այն, թե ինչպիսի բաղաձայններ և ձայնորդներ են հանդիպում: Համեմատենք, օրինակ, վերցնել. կորցնել. կերցնել. հասցնել բայերը: Առաջին երեք բայերում ունենք րցն հնչյունազուգորդությունը միևնույն շրջապատում, բայց արտասանու՞մ ենք միանման: Ոմանք ասում են՝ այո, ոմանք՝ ոչ: Համենայն դեպս մեծամասնությունը արտասանում է վերց-նել, բայց՝ կոր-ցը-նել, կեր-ցը-նել: Այստեղ թերևս որոշ դեր է կատարում նաև համաբանությունը: Հասցնել բայում ց-ից հետո շատ որոշակի կերպով կազմվում է գաղտնավանկ՝ հաս-ցը-նել, քանի որ ց-ն ս-ի հետ համատեղ չի արտասանվում: Ինչպե՞ս է արտասանվում պարծենալ բայը: Գաղտնավանկո՞վ, թե՞ առանց դրա: Սրանք հարցեր են, որ կարիք ունեն քննության ու պարզաբանման: Կամ, օրինակ, ո՞րն է գրաբար բառի ճիշտ արտասանությունը: Ուղղախոսական մի բառարանում տրված է գրափառ ձևը, շատերն արտասանում են այնպես, ինչպես գրվում է՝ գրաբար, ոմանք՝ գրափար կամ գրափառ: Որքանով է բ-ն արտասանելի ր-ից առաջ և այլն:

Ուղղախոսական որոշ թերություններ պայմանավորված են ուղղագրությամբ: Այսպես. շատ տարածված է «կը» եղանակիչի անճիշտ արտասանության երևույթը՝ ե-ով և ո-ով սկսվող բառերից առաջ, օրինակ՝ կողջունի-կը ողջունի, նույն ձևով՝ կը ոգևորվի, կը ոգեշնչի, կը ոչնչանա, կը ուռչի, կը ենթարկվի, կը երևա, որոնցում ո-ն և ե-ն, հակառակ ընդունված կանոնի, արտասանվում են վո և յե:

Նույնը կարելի է ասել «չը» ժխտականի մասին, օրինակ՝ չողջունի-չը ողջունի. նմանապես՝ չը ոչնչանա. չը ոգևորվի. չը ուռչի. չը ենթարկվի. չը երգի. չը երկարացնենք և այլն:

Հազվադեպ կարելի է լսել, այն էլ ակրատի ընթերցման մեջ նախապատրաստական հատուկ աշխատանք տանելուց հետո միայն, երբ արտասանում են շաղջամել. շոշնշանալ. կողջամն և այլն։ Պետք է ասել, որ այսպիսի, առանց վ կամ յ հնչյունի, արտասանությունը բավականաչափ ընդարձակ է տարածված։ Հմմտ. օրինակ, շաղբա. կողբա կամ այսպիսի նախադասություններ՝ չի երգում. բող չերգի. չի ուրշում. բող չուրշի։ Նման դեպքերում, երբ ե-ով և ո-ով սկսվող բառերը ունեն «կ» կամ «չ» մասնիկ, մեր կարծիքով դրանք պետք է արտասանել այնպես, ինչպես որ արտասանվում են ինքնուրույն գործածության դեպքում։

Այդպիսի բայերի թիվը մեծ չէ. այնպես, որ մեծ դժվարություն չի հարուցի։

Նույնպիսի անորոշություն կա նաև այն վանկային հապավումների արտասանության հարցում, երբ հապավման միջին բաղադրիչը սկսվում է ո-ով կամ ե-ով, օրինակ՝ հայոսկերշառ և այլն։

Պարզ չէ Խռաճերկու. Խռաճերեն և նման բառերի ճիշտ արտասանությունը։

Չնայած հայերենի ուղղախոսության բնագավառում դեռևս զգալի թերություններ գոյություն ունեն, բայց և այնպես չի կարելի չտեսնել, առանձնապես վերջին մի քանի տարիների ընթացքում, այդ բնագավառում տեղի ունեցած զգալի բարելավումները։ Առանձնապես նկատելի է ռադիոյի հաղորդավարների, ընդհանուր առմամբ իհարկե, կատարած լուրջ աշխատանքը այդ ուղղությամբ։ Մեր հեղինակավոր լեզվաբանների հսկողության տակ վերջին շրջանում զգալիորեն բարելավվել է նրանց լեզուն, հայերենի ուղղախոսական կանոնները ճշգրտորեն կիրառելու, լավ և մաքուր արտասանելու տեսակետից։

Հայոց լեզվի մշակույթի և ուղղախոսության բնագավառում մեծ ավանդ է ներդրել պրոֆ. Գ. Սևակը, որը հաճախակի հանդես է գալիս հայոց լեզվի մաքրությանը և ուղղախոսությանը նվիրված հոդվածներով և հրապարակային ելույթներով ու դասախոսություններով։

Ուղղախոսության գործում առանձնապես մեծ դեր ունի կատարելու թատրոնը, որը պետք է մեր օրինակելի դպրոցներից մեկը հանդիսանա։ Հայկական թատրոնը, հատկապես Սունդուկյանի անվան պետական թատրոնը, պետք է լինի այն կենտրոններից մեկը, որտեղ մշակվում են հայերենի արտասանական օրինաչափությունները։ Այստեղ պետք է գիտական հիմունքներով և ամե-

նույն բարեխղճությամբ մշակվեն և ճշգրտվեն բառերի արտասանությունը, շեշտադրությունը և ուղղախոսական այլ հարցեր։

Խիստ մեծ բաց է, որ մենք մինչև այժմ չունենք ուղղախոսական որևէ ուղեցույց կամ բառարան[68]։ Այդպիսի ձեռնարկի բացակայությունը նպաստում է, որ տարածվեն և խորանան զանազան սխալ և ոչ ցանկալի մի շարք հնչյունական երևույթներ, որոնք հակասում են մեր լեզվի արտասանական օրինաչափություններին։

Առհասարակ պետք է ասել, որ ուղղախոսության և խոսքի կուլտուրայի հարցերը մեզ մոտ միշտ չէ, որ լուրջ ուշադրության առարկա են դառնում համապատասխան մարմինների կողմից։ Պարբերաբար և ժամանակին ոչ ցանկալի արտասանական թերացումների դեմ հաճախ պայքար չի տարվում, այդ պատճառով երբեմն դրանք ինքնահոսի թողնվելով և խորանալով դառնում են անհաղթահարելի։

Մենք չունենք ուղղախոսության, խոսքի կուլտուրայի հարցերին նվիրված լուրջ գիտական ուսումնասիրություններ։

Շատ ցանկալի կլիներ, որ մեզ մոտ ևս, ինչպես այդ արվում է ՍՍՀՄ ԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտի կողմից, պրակներով պարբերաբար լույս տեսնեն խոսքի կուլտուրայի և ուղղախոսության առանձին հարցերին նվիրված ուսումնասիրություններ։

Անհրաժեշտ է ամենօրյա խնամք և ուշադրություն մաքուր և անաղարտ հայերենով խոսելու համար։

Սոցիալիստական հասարակության մեջ, որտեղ լայն մասսաները տիրապետում են ազգային մշակույթի բոլոր գանձերին, այդ թվում և գրական լեզվին, խոսքի կուլտուրայի և ուղղախոսության հարցերը ձեռք են բերում առանձնահատուկ նշանակություն։ Հասարակական նոր կարգը նպաստում է, որ զարգանան խոսքային հաղորդակցման նոր ձևեր։ Ներկայումս մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, գրականությունը, հնչյունային կինոն դարձել են լայն մասսաների սեփականություն և հիմնավորապես մտել են սովետական մարդու կենցաղի մեջ։ Այդ պարագաներում միանգամայն հասկանալի է ճշգրիտ, օրինակելի արտասանության, ուղղախոսական հաստատուն և միասնական նորմաների անհրաժեշտությունը։

---

68 Ուղղախոսական եղած բառարանները, որոնք տրված են «Դպրոցական ուղղագրական բառարաններում» (1956 թ. և 1959 թ.), որպես հավելված, խիստ համառոտ են և մի շարք դեպքերում ճշտորեն չեն արտացոլում զետեղված բառերի ներկայիս արտասանությունը։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա— *«Ավանգարդ» (օրաթերթ)*։
ԱԲ, Ե— Ակ. Բակունց. *Երկեր, Երևան, 1955*։
ԱԻ, ԱԷ— Ավ. Իսահակյան. *Արձակ էջեր, Երևան 1963*։
Ա. Խնկ., ԸԷ— Ար. Խնկոյան. *Ընտիր էջեր, Երևան, 1961*։
ԱՍ— Ան. Սահինյան։
ԳԹ— *«Գրական թերթ» (շաբաթաթերթ)*։
ԳԶ— Գր. Զոհրապ։
ԳՍ— Գեղ. Սարյան։
Գաղր., ԼՀԲ— Գաղրաշյան. *Լիակատար հայերեն ռուսերեն բառարան, Թիֆլիս, 1911*։
Գաղր., ԱԱՔ— Գաղրաշյան. *Արևելյան աշխարհաբարի քերականություն, մաս 1-ին, Ստուգաբանություն, Թիֆլիս, 1913*։
ԴԴ— Դեր. Դեմիրճյան։
ԵԵ— *«Երեկոյան Երևան» (օրաթերթ)*։
ԵՉ, ԸԵ— Ե. Չարենց. *Ընտիր երկեր. Երևան. 1955*։
ՋԴՔ— Ջ. Դարյան. *Քննություն, Երևան, 1953*։
ԽԱ— *«Խորհրդային արվեստ» (հանդես)*։
ԽԴ— Խ. Դաշտենց։
ԽՀ— *«Խորհրդային Հայաստան» (օրաթերթ)*։
Խ. Հրաչ.— Խ. Հրաչյան։
ՀԹ, ԵԼԺ— Հ. Թումանյան. *Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1940—1950*։
ՀԹԵ— Հ. Թումանյան. *Երկեր, Երևան, 1958*։
ՀԱ— *«Հայաստանի աշխատավորուհի» (հանդես)*։
ՀՁ— *«Հայրենիքի ձայն» (շաբաթաթերթ)*։
ՀՍ— Հ. Սահյան։
ՀՌԲ— *Հայ-ռուսերեն բառարան, Երևան, 1960*։
ՀՔ, ՄՏԶ— Հր. Քոչար. *Մեծ տան զավակները, Երևան, 1952*։
ՂԱԵ— Ղ. Աղայան. *Երկեր, Երևան, 1950*։
ՄԳՄ— Մուրացան. *Գևորգ Մարզպետունի, Երևան, 1957*։
ՄԵ— Մուրացան. *Երկեր, Երևան, 1945—1950*։
ՄԱ— Մկր. Արմեն։
ՄԱբ., Շ.— Մ. Աբեղյան. *Աշխարհաբարի շարահյուսություն, Թիֆլիս, 1912*։
Մարտ.— *«Մարտակոչ» (լրագիր)*։
Մլխս., ՀԲԲ— Ստ. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944—1945*։

ՄՄ — Միս. Մեծարենց:
ՆԴՄ — Նար-Դոս, *Մահը*, *Երևան*, *1955:*
ՆԶՀ — Ն. Զարյան. *Հացավան*, *Երևան*, *1960:*
Նխ — *«Նոր խոսք» (լրագիր):*
Շ, ԵԼԺ — Շիրվանզադե. *Երկերի լիակատար ժողովածու*, *Երևան*, *1950—1955:*
ՇԿ — Շ. Կուրղինյան:
ՊՊ — Պ. Պռոշյան:
ՋԼՊ — Գ. Ջահուկյան. *Լեզվաբանության պատմություն*, *հ. 1. 2*, *Երևան*, *1960—1962:*
ՍԳ — *«Սովետական գրականություն» (հանդես):*
Սխ — Ս. Խանզադյան:
ՍՀ — *«Սովետական Հայաստան» (օրաթերթ):*
ՍԿ, ՔԲ — Ս. Կապուտիկյան. *Քարավանները դեռ քայլում են*, *Երևան*, *1964:*
ՎՏԵ — Վ. Տերյան. *Երկեր*, *Երևան*, *1956:*
ՎԱ, ՍԱ — Վ. Անանյան. *Սևանի ափին*, *Երևան*, *1954:*
Վանց., ԳՔ — Գ. Վանցյան. *Գաամական քերականություն*, *Թիֆլիս*, *1855:*
ՎՓ — Վրթ. Փափազյան:
ՐՍ — Րաֆֆի. *Սամվել*, *Երևան*, *1957:*
Ր. ԵԺ — Րաֆֆի. *Երկերի ժողովածու*, *Երևան*, *1953—1955:*
ԱՂ, ՀԼՔՈՒ — Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, *Հայոց լեզվի քերականության*, *ուղղագրության*, *կետադրության ուղեցույց*, *Երևան*, *1957:*
Տեղ., ՀՍԽՀ, ԳՀԱ — *«Տեղեկագիր» ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի ուղղագրության և տառերի բարեփոխության հանձնաժողովի*, *Երևան*, *1927:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. Աբեղյան. *Հայոց լեզվի տեսություն*. Երևան, 1965։

Մ. Աբեղյան. *Աշխարհաբարի քերականություն*, Վաղարշապատ, 1906։

Մ. Աբեղյան. *Հայոց լեզվի ուղղագրությունը*, Թիֆլիս, 1892։

Մ. Աբեղյան, *Մեր ուղղագրության մասին*, «Արարատ», № 11—12, 1913։

Մ. Աբեղյան. *Ուղղագրության ռեֆորմը*, Երևան, 1925։

Մ. Աբեղյան, *Տարրական քերականություն*, Վաղարշապատ, 1913։

Մ. Աբեղյան. *Ռուս-հայերեն ռազմական բառարան*, Երևան, 1925։

Մ. Աբեղյան, Լ. Հովհաննիսյան, Ս. Տեր-Պողոսյան, *Լատին-ռուսերեն բժշկական բառարան*, Երևան, 1951։

Ս. Աբրահամյան. *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք 1-ին, Երևան, 1963։

Ս. Աբրահամյան. *Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը*, Երևան, 1959։

Ս. Աբրահամյան. *Արդի հայերենի դերանունները*, Երևան, 1956։

Էդ. Աղայան. *Լեզվաբանության ներածություն*, Երևան, 1963։

Էդ. Աղայան. Հ. Բարսեղյան. *Հայոց լեզու (միջնակարգ դպրոցի 5—7-րդ դասարանների համար)*, Երևան, 1966։

Գ. Աղայան, *Երկերի ժողովածու*, հ. 3, Երևան, 1963։

Գ. Աղայան. *Հայկական հնչյունների մասին*, Երկեր, հ. 4, Երևան, 1950։

Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Երևան, 1940, II մաս Երևան, 1951։

Գ. Անտոնյան, *Ռուս-հայերեն ավտոտրակտորային տերմինների բառարան*, Երևան, 1945։

Վ. Առաքելյան. *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները*, Երևան, 1957.

Վ. Առաքելյան. *Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն*, Երևան, 1955։

Վ. Առաքելյան. *Հայերենի խնդրառության մասին («Տեղեկագիր», հաս. գիտ., Երևան, 1955. № 3)*։

Մ. Ավագյան. *Նաիրի Զարյանի ստեղծագործության լեզուն և ոճը*, Երևան, 1961։

Թ. Ավդալբեկյան. *Ռուս-հայերեն անտառագիտական տերմինների բառարան*, Երևան, 1964։

Ա. Արարատյան, Թ. Մատուրյան, Թ. Քոչարյան, *Ռուս-հայերեն տերմինների համառոտ բառարան*, Երևան, 1941։

Վ. Արծրունի. *Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան*, Երևան, 1924։

Վ. Արծրունի. *Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկական տերմինների բառարան*, Երևան, 1956։

Բարագեան. *Ստաբարանութիւնք հայ լեզուին մէջ*, Բ տպագրութիւն, Գահիրէ, 1959։
Ա. Բաբայան. *Գրադարանային տերմինների բառարան*, Երևան, 1950։
Հ. Բարսեղյան. *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, 1953։
Հ. Բարսեղյան. *Տերմինաբանական ուղեցույց*, Երևան, 1964։
Ա. Բեկզադյան և Հ. Հակոբյան. *Անատոմիական միջազգային նոմենկլատուրա*, Երևան, 1962։
«Բազմավեպ» (ամսագիր) առանձին համարներ։
Ս. Գալստյան. *Ակնարկներ աշխարհաբարի պատմության*, Երևան, 1963։
Գ. Գասպարյան. *Սովետահայ բառարանագրությունը*, «Աշխատությունների ժողովածու ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, հ. 2, Երևան, 1947։
Գր. Գարեգինյան. *Շաղկապները ժամանակակից հայերենում*, Երևան, 1963։
Գաբրուշյան. *Արևելահայ աշխարհաբարի քերականություն*, մաս 1. Թիֆլիս, 1913։
Ա. Եղիազարյան. *Վերականգնել լենինյան նորմաները լեզվի հարցերում* (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1963, № 11)։
«Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտ. աշխ. ժողովածու», 1961, № 8։
Ս. Էլոյան. *Ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1963։
Յ. Թորոսեան, *Լեզուաշինութիւն*, Պէյրութ, 1964։
«Թումանյանը քննադատ», Երևան, 1939։
Վ. Ի. Լենին. *Երկեր*, հ. 30, 1951։
Ի. Մառուրյան. *Բույսերի անունների լատիներեն-հայերեն-ռուսերեն բառարան*, Երևան, 1962.
Խ. Կանայան. *Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն*, Երևան, 1940։
Հ. Կոստանյան. *Ակնարկներ վերջին տասնամյակի սովետահայ արձակի լեզվի և ոճի մասին*, Երևան, 1957։
Ա. Հակոբյան. *Ռուս-հայերեն սպորտային համառոտ բառարան*, Երևան, 1956։
«Հայ-ռուսերեն բառարան, երկաթուղային տերմինների», Թիֆլիս, 1925։
«Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները և ուսուցման մեթոդները», Երևան, 1935։
«Հանդես Ամսօրեայ» (առանձին համարներ)։
Մ. Հարությունյան. *Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան*, Երևան, 1963։
Տ. Հարությունյան. *Սովետական շրջանում հայոց լեզվի մեջ առաջացած բառակապակցությունների մասին (պետ. համալսարանի գիտ. աշխ., 1951, հ. 34)*։
ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտ. աշխ. ժողովածու, 1947—1948 թթ. (առանձին համարներ)։
ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1946—1965 թթ. (առանձին համարներ)։
Ս. Ղազարյան. *Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների*, Երևան, 1945։
Ս. Ղազարյան. *Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ*, Երևան, 1955։
Ս. Ղազարեան, *Հայ լեզուի ուղղագրութիւնը*, Թեհրան, 1926։
Ա. Ղարիբյան, *Հայոց լեզու, դասագիրք 5—7-րդ դաս. համար*, Երևան, 1964։
Ա. Ղարիբյան, *Դպրոցական ուղղագրական բառարան*, Երևան, 1956 և 1959։
Ա. Ղարիբյան, Գ. Շեկյան, *Դպրոցական ուղղագրական բառարան*, Երևան, 1965։
Ա. Ղարիբյան, Գ. Պարխս, *Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց*, Երևան, 1957։

Ա. Ղարիբյան, Ե. Տեր-Մինասյան, Մ. Գևորգյան, *Հայ-ռուսերեն բառարան*, Երևան, 1947։

Գր. Ղափանցյան, *Ընդհանուր լեզվաբանություն*, հ. 1, Երևան, 1939։

Ստ. Մալխասյան, *Մի հնչյունին մի գիր*, Թիֆլիս, 1910։

Ստ. Մալխասյանց *Հայերեն բացատրական բառարան*, հ. 1—4, Երևան 1944—1945։

Ալ. Մարգարյան, *Արդի հայերենի կապերը*, Երևան, 1955։

Աշ. Մարուրյան, *Եղիշե Չարենցի պոեզիայի լեզուն և ոճը (դիսերտացիոն աշխատանք, անտիպ)*, Երևան, 1965։

Ռ. Մելքումյան և Տ. Կարապետյան, *Ռուս-հայերեն բառարան*, Երևան, 1958։

Մենևիշյան, *Հայերեն լեզվի ուղղագրության խնդիրը*, Վիեննա, 1910։

«Մշակ» (առանձին համարներ)։

Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը*, Երևան, 1955։

Ս. Պալասանյան, *Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց*, Թիֆլիս, 1870։

Ս. Պալասանյան, *Քերականություն մայրենի լեզվի (մասն Ա, Բ, Գ)*, Տփխիս, 1894։

Գ. Պարխս, *Պոլիգրաֆիական և հրատարակչական տերմինների ռուս-հայերեն համառոտ բացատրական բառարան*, Երևան, 1953։

Ե. Պեշկով և Ն. Յաղեն, *Դպրոցականի տեխնիկական բառարան*, Երևան, 1961։

Հ. Պետրոսյան, *Գոյականի առումները հայերենում*, Երևան, 1960։

Մ. Ռոզենտալ և Պ. Յուդին, *Համառոտ փիլիսոփայական բառարան*, Երևան, 1940։

Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների։ Կազմեցին՝ Ս. Մալխասյանց, Ն. Մամիկոնյան, Ն. Տեր-Միքայելյան, Լ. Տեր-Միքայելյան, Թիֆլիս, 1925։

Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների։ Կազմեցին՝ Հ. Աճառյան, Հ. Զարզարյան, Գ. Հակոբջանյան, Ս. Տոնոյան, Հ. Քաջազնունի, Երևան, 1928։

Ռուս-հայերեն իրավաբանական բառարան։ Կազմեցին՝ Տ. Հովհաննիսյան, Ս. Մալխասյանց, Մ. Աբեղյան և ուրիշներ, Երևան, 1924։

Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան։ Կազմեցին՝ Տ. Հովհաննիսյան, Ս. Մալխասյանց, Մ. Աբեղյան և ուրիշներ, Թիֆլիս, 1919։

Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Երևան, 1957։

Ռուս-հայերեն ռազմական բառարան, Երևան, 1941։

Կ. Սեմենսկի, *Երաժշտական տերմինների համառոտ բառարան*, Երևան, 1953։

Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955։

Գ. Սևակ, *Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն*, Երևան, 1948։

Գ. Սևակ, *Հայոց լեզվի բառագանձը (Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխ., 1948, № 27)*։

«Սովետական գրականություն», 1957—1965 թթ. (առանձին համարներ)։

«Սովետական մանկավարժ», 1940—1965 թթ. (առանձին համարներ)։

Հ. Տաշյան, *Բառախոսական դիտողություններ*, Վիեննա, 1926։

«Տեղեկագիր» ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխության հանձնաժողովի, Երևան, 1927։

Մ. Տեր-Հովակիմյան, *Համառոտ ռուս-հայերեն բառարան առևտրա-հաշվապահական տերմինների*, Երևան, 1927։

Տեր-Ղևոնդյան, *Մայրենի լեզվի քերականության տարերքը, 4-րդ տպ., 1-ին և 2-րդ մաս, Թիֆլիս, 1902*։

Լ. Տիմոֆեև և Ն. Վենգերով. *Գրականագիտական տերմինների համառոտ բառարան*, Երևան, 1957։
Ա. Տոնոյան և Վ. Տոնոյան. *Մաթեմատիկական տերմինների բառարան*, Երևան, 1965։
Վ. Փորեչյան. *Ռուս-հայերեն աշխատանքային բառարան*, Երևան, 1931։
Հ. Օհանյան. *Ածական անուն ժամանակակից հայերենում*, Երևան, 1962։
Аванесов Р. И., Фонетика современного русского литературного языка, М., 1956.
Алексеев Д. И., Гозман И. Г., Сахаров Т. В. под руководством Д. И. Алексеева, Словарь сокращений русского языка, М., 1963.
Бодуэн де Куртенэ, Об общих причинах языковых изменений, Избранные произведения, т. I, М., 1963.
«Всесоюзная конференция, посвященная закономерностям развития литературных языков народов СССР в советскую эпоху», М., 1960.
«Грамматика русского языка», т. I, II, М., АН СССР, 1963.
Звегинцев В. А., Теоретические аспекты причинности языковых изменений (Новое в лингвистике, вып. I, М., 1960).
Звегинцев В. А., Очерки по общему языкознанию, М., 1962.
Кусикян И. К., Изменение в словарном составе литературного армянского языка советского периода, М., 1964.
«Развитие современного русского языка», М., АН СССР, 1963[1].

---

[1] *Սույն աշխատությունը հրատարակության է հանձնվել 1966 թ. դեկտեմբերին, և այդ պատճառով նրանում չեն արտացոլվել վերջին տարիների լեզվական որոշ նոր երևույթներ ու տեղաշարժեր, ինչպես և չեն օգտագործվել այդ շրջանում հրատարակված ուսումնասիրությունները։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն Ս. Գ. Աբրահամյան 5

Ա. ԲԱՌԱՊԱՇԱՐ

Բառապաշարի հարստացումը բառաբարդման միջոցով
(Հ. Մ. Օհանյան)

1. *Ընդհանուր դիտողություններ* 23
2. *Բառակրկնությամբ կազմված բարդություններ* 27
3. *Բաղհյուսական բարդությամբ կազմված բառեր* 29
4. *Իսկական բարդությամբ կազմված բառեր* 34
5. *Նորակազմ բարդությունների գործածության ոլորտները* . . . 46
6. *Օտար բաղադրիչներով կազմված բարդություններ* 50
7. *Երկուսից ավելի բաղադրիչներով կազմված բարդություններ* . . 58
8. *Բարբառային-ժողովրդական բառեր* 61
9. *Գրաբարյան փոխառությունները ժամանակակից հայերենում* . . 63
10. *Արևմտահայերենից վերցված բառեր* 64
11. *Նոր բառակապակցություններ ու արտահայտություններ* . . . 65
Համառոտագրություններ 72

Բառապաշարի հարստացումը ածանցման միջոցով
(Ս. Ա. Էլոյան)

1. *Ածանցների կիրառությունները* 75
Ա) Անկենսունակ և կենսունակ ածանցներ 76
Բ) Իմաստի նեղացում կամ սահմանափակում ստացած ածանցներ . 81
Գ) Իմաստի աշխուժացում և առավել կենսունակություն ստացած ածանցներ 83
Դ) Նոր ծավալված ածանցներ 91
2. *Ածանցների կրած իմաստային փոփոխությունները և նորակազմ բառերը* 95
3. *Բայածանցներ* 108
4. *Սովետական շրջանում առաջացած ածանցներ* 117
5. *Ածանցների փոխառությունները սովետական շրջանում* . . . 118
6. *Փոխառյալ բառերը և հայերենի ածանցների փոխհարաբերությունները* . 120
Համառոտագրություններ 122

Հապավումներ (Ս. Ա. Էլոյան) 123
1. Հապավումների տեսակները 126
Ա. Վանկային հապավումներ 132
Բ. Տառային հապավումներ 133
Գ. Բառային հապավումներ 136
Դ. Խառն հապավումներ 137
Ե. Զեղչումով հապավումներ 139
2. Փոխառյալ հապավումներ 141
Ա. Ռուսերենից փոխառյալ հապավումներ 142
Բ. Ռուսերենի միջնորդությամբ փոխառված հապավումներ . . 143
Գ. Պատճենումներից առաջացած հապավումներ 143
3. Հապավումների կառուցվածքային մի քանի առանձնահատկություններ . 145

Բառապաշարի հարստացումը փոխառության միջոցով
(Հ. Ա. Օհանյան)

1. Ընդհանուր դիտողություններ 149
2. Փոխառությունների խմբավորումը 155
3. Ռուսաց լեզվի նմանակությամբ կազմված բառեր, կապակցություններ, ոճեր և արտահայտություններ 167

Տերմինաշինություն (Ռ. Ա. Իշխանյան) 171

Բառիմաստի փոփոխություններ
(Պ. Բեդիրյան)

1. Ընդհանուր դիտողություններ 218
2. Բառիմաստի փոփոխությունը՝ կապված սոցիալ-պատմական տեղաշարժերի հետ 220
3. Բառիմաստի փոփոխության տեսակները 225
4. Իմաստափոխություն և ձևաբանական տեղաշարժեր 223
5. Նոր փոխաբերություններ, նոր դարձվածքներ 237
6. Սոցիալական և քաղաքական նոր երանգներ 240
7. Իմաստային պատճենումներ 244
8. Արևելահայերենից՝ արևմտահայերենին 247

Բ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ձևաբանական կառուցվածքի փոփոխություններ
(Գ. Լ. Գարեգինյան)

1. Խոնարհման համակարգում տեղի ունեցած փոփոխություններն ու տեղաշարժերը 253
Ա. Փոփոխություններ բայական լծորդությունների համակարգում . 254
Բ. Գրաբարաձև կամ հնատիպ բայաձևերի վերացումը . . . 261
Գ. Բայական համակարգի հարստացումը նորակազմ բայերով . . 264

Դ. Բայական եղանակների և ժամանակների կազմության մեջ նկատվող փոփոխություններ և տեղաշարժեր 266
Ե. Սեռային տեղաշարժեր և բառափոխության ու կրկնասեռության մասնակի դեպքեր 306
2. Հոլովման համակարգի և հոլովների ձևավորման մեջ նկատվող փոփոխություններ ու տեղաշարժեր 319
3. Գոյականների հոգնակի թվի կազմության մեջ նկատվող փոփոխություններ 333
4. Անձի և իրի քերականական կարգի մեջ նկատելի տեղաշարժեր և փոփոխություններ 336
5. Դերանուններ և դերանվանական հոդեր . . . . – . . 342
6. Ածականներ 350
7. Թվականներ 353
8. Մակբայներ 354
9. Կապեր և կապական բառեր 356
10. Շաղկապներ 361
Համառոտագրություններ 365

Շարահյուսական կառուցվածքի փոփոխություններ
(Ռ. Կ. Հովհաննիսյան)

1. Ընդհանուր դիտողություններ 367
2. Տարադասության բնագավառում նկատվող փոփոխություններ . . 369
3. Բառակապակցության ակտիվացող ձևեր 371
4. Ենթակայի և ստորոգյալի համաձայնության քերականական կարգի հետագա ուժեղացումը 384
5. Հոլովների կիրառական նշանակություններում նկատվող փոփոխություններ 388
6. Դերանունների շարահյուսական կիրառություններում նկատվող փոփոխություններ 394
7. Խնդրառության բնագավառում տեղի ունեցած փոփոխություններ . . 397
8. Կապերի շարահյուսական կիրառություններում տեղի ունեցած փոփոխություններ 409
Համառոտագրություններ 423

Դ. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հնչյունափոխական, ուղղագրական և ուղղախոսական փոփոխություններ
(Թ. Ա. Ղարագյուլյան)

1. Հայերենի արտասանական մի շարք առանձնահատկությունները և նրանցում տեղ գտած փոփոխությունները 427
2. Հնչյունափոխություն 431
Ա. Շեշտափոխական հնչյունափոխություն 431
Բ. Ձայնավորների և երկհնչյունների հնչյունափոխությունը . . 435
ա) Ե (Է) ձայնավորի հնչյունափոխությունը 438
բ) Ու ձայնավորի հնչյունափոխությունը 443
գ) Ի ձայնավորի հնչյունափոխությունը 455

դ) ՈՒՅ երկհնչյունի հնչյունափոխությունը 464
ե) ՅԱ երկհնչյունի հնչյունափոխությունը 468
զ) ՅՈՒ երկհնչյունի հնչյունափոխությունը 470
է) Ա, Ո ձայնավորների հնչյունափոխությունը 471
ը) Միջնահնչյունի անկում 473
թ) Ջրվող ը ձայնավորի փոփոխությունը 474
ժ) Ն վերջնահնչյունով կազմված գաղտնավանկի անկումը . . 475
3. Շեշտադրություն 476
4. Ուղղագրություն 481
Տառադարձություն 507
5. Ուղղախոսություն 527
Ա. Արևմտահայ և բարբառային արտասանություն . . . 533
Բ. Գրային արտասանություն 535
Գ. Փափկացված կամ թմրացված արտասանություն և ուղղախոսական այլ թերություններ 536
Համառոտագրություններ 544
Օգտագործված գրականություն 546

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Կազմը նկարիչ Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆԻ
Տեխն. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Կ. Խ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎՖ 05112 ԽՀԽ 1264 Հրատ. 3312 Պատվեր 130 Տպաքանակ 1500
Հանձնված է արտադրության 28/V 1970 թ., ստորագրված է տպագրության 12/IV 1973 թ., տպագր. 34,63 մամուլ, հրատ. 28,6 մամուլ, թուղթ № 1, $60 \times 90^1/_{16}$: Գինը 2 ռ. 22 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան,
Բարեկամության, 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220050748

A 11
50798